Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ»
1989

ԳՄԴ 84Հ1—4
Զ 768

Կազմող՝ Ա. Ս. Քիշոյան
Առաջաբանը՝ Կ. Ա. Դանիելյանի

Զորիապ Գ.
Զ 768 Երկեր։ /Նովելներ, վեպեր, հոդվածներ։ Առաջաբանը՝ Կ. Ա. Դանիելյանի.— Եր.։ Խորհրդ. գրող, 1989. 650 էջ։

Ժողովածուում զետեղված են հեղինակի բանաստեղծությունները, նովելները, վեպերը, ինչպես նաև քննադատական և հրապարակախոսական հոդվածները։

Զ 4702080106 / 705(01)89 67 89 ԳՄԴ 84Հ1—4

ISBN 5—550—00193—4

© «Խորհրդային գրող», կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1989

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Մորեգույն կոստյումը հագին, սև թիթեռնիկ փողկապով ու սպիտակ վերնաշապիկով, ծյունե բանկոնակի մեջ, գեր, կարճահասակ, աշխույժ մարդը, որի խնամքով հարդարված ալեխառն բեղերի ֆիշ վեր թեքվող կորությունը վստահություն ներշնչող և բարեկիրթ մի բան էր հաղորդում նրա ամբողջ արտաքինին, փնտրված մեկն էր Կ. Պոլսո դարասկզբին կազմակերպված հանրային հավաքույթներում, ուր աշխուժորեն քննարկվում էին օրվա դեպքերը, բարեգործական ձեռնարկումները, գրական ասուլիսներում հայտնված կարծիքները, թատերական ներկայացումները: Նա անցնում էր մարդկանց մեկ խմբից մյուսը, ամենածայրահեղ բարեկրթությամբ բարևում՝ հասկանալով մեծ մարդու թողած տպավորության ամբողջ ինքնամեծար արժեքը:

Զարմանքի և հիացումի կարկաչահոս գետերի միջով էր անցնում: Նա ազգի պարծանքն էր. նրան ճանաչում էին ոչ միայն հավաքվածները: 30 տարուց ավելի նա կանգնած էր պոլսահայության կյանքի կենտրոնում: 16 տարեկանից հանրային գործունեության մեջ ներված կրակոտ ու աշխույժ պատանին (այն ժամանակ Ասիական ընկերության տնօրենատենապետն էր), այժմ հասել էր մի համբավի ու դիրքի, որ շարժում էր անգամ տաճիկ բարձրաստիճան ազնվականների նախանձը: Նրան ճանաչում էին եվրոպական ու ռուսական դեսպանատներում, գիտեին անգամ Փարիզում:

30 տարվա մեջ իր հասարակական գործունեությամբ և գրական վաստակով (նրա ստեղծագործությունները սկսել էին թարգմանվել նաև թուրքերեն), հրապարակային կրակոտ ելույթներով, Պոլիսը տեղաշարժող դատավորություններում ձեռք բերած հաղթանակներով, մանավանդ դասախոսություններով, պերճախոսությամբ միշտ էլ աչքի ընկած ճառերով՝ թե՛ Ազգային ժողովում, թե՛ Օսմանյան մեջլիսում (նա խորքեր-

դարանի անդամ է ընտրվել դեռևս դարասկզբին), տարիքն առած, 50-ին մոտեցող, վայելած ու շատ բան տեսած գրողը, որ անցել էր կյանքի մեծ ճանապարհ, հիմա արդեն կարող էր զարմանալ իր հմտության վրա: Բնիկ ակնեցու զավակ, փաստաբանի գրագրի պաշտոնից հասավ մինչև Օսմանյան խորհրդարանի անդամի բարձրապատիվ աթոռը: Ունեցել է անգամ Թուրքիայի նախարարներից մեկը դառնալու մտադրություն... Սակայն նույն բախտին արժանացավ, ինչ իր ժողովուրդը՝ հրեշավոր սպանդի զոհը դառնալով:

* * *

Գրիգոր Զոհրապը ծնվել է 1861 թվականին Կ. Պոլսի Պեշիկթաշ թաղամասում: Հայրը՝ Զուխանի խանի մեջ սարաֆ էր (վաշխառու), բնիկ ակնեցի, մայրը՝ էֆթիկ հանումը բանիբուն ու խելացի մի կին՝ սերում էր Մալաթիացի (Անատոլիա) մի ընտանիքից: Արշակ Ալպոյաճյանը՝ Զոհրապի անդրանիկ կենսագիրը, դիտել է տալիս, թե առողջ մարմինն ու առողջ միտքը ժառանգություն էր, որ ստացել էր ծնողներից[1]: Նաև հաստատվում էր, որ Զոհրապը ինչ-որ ուներ հանդուգն, արկածախնդրական, հեշտախնդիր «... մեծագույն մասամբ արդյունքն են իր ժառանգական բնազդներուն»[2]:

Նախնական կրթությունը ստանում է հայրական հարկի տակ՝ հանձնելով Պեշիկթաշի Մուրուճյան վարժարանը՝ ավանդական ֆալախկայի ու պատվելիների շարաշուք հովանու ներքո:

1870-ին մեռնում է Խաչիկ էֆենդին: Մայրը շուտով երկրորդ անգամ ամուսնանում է մի նշանավոր փաստաբանի հետ, և Գրիգորիկը, մյուս եղբոր հետ, հայտնվում է Օրթա գյուղում, խորթ հոր շքեղ բնակարանում: Դեռահասներին տեղավորում են Օրթա գյուղի նշանավոր Թարգմանչաց վարժարանը, որը, դարձյալ ինչպես ասում է Ալպոյաճյանը, նշմարիտ ծաղկումի մեջ էր:

«Ուղևորություն մը հիշատակներուս մեջ» հուշագրական պատառիկներում, որ Զոհրապը տպագրեց, երբ ընդամենը 28 տարեկան էր, վերարտադրվում են մոտիկ անցյալի պատկերները, որ դրոշմվել էին հիշողության մեջ՝ անանց ու վառվռուն ընդգծումներով: Թե՛ Պեշիկթաշի, թե՛ Օրթա գյուղի վարժարաններում անցկացրած օրերը և դրանց հետ կապված տպավորությունները երիտասարդ Զոհրապին հրում էին խոստովանությունների, որոնք թանկ էին ոչ միայն իրեն մարդկային ապրումի դրսևորումներ, այլև ուրվագծում էին կենդանի, շարժուն կյանքը հայոց վարժարանների իրենց խեղճությամբ ու վայելչություններով, իրենց պատվելիներով, որոնք հայկաբանության ու կրոնագիտության իսկական մագիստրոսներ էին, խորունկ ու ծանր մարդիկ, ոժբախտ ու թշվառ մարդիկ՝ Ավետիս Պերպերյանից սկսած մինչև Հովսեփ Շիշմանյանը:

Զոհրապը հաղորդակից է դարձնում ընթերցողին այն ուրախությունների հետ, որն ապրել ու վայելել են դեռահասները գիտակցության ձևավորման շեմին, երբ յուրաքանչյուր արթնացող տաղանդ ձգտել է մեծամիտ ինքնահաստատման ու աշակերտական փառքի: Պատանեկան հիշատակներում Զոհրապը նույնքան տպավորիչ ու հրայրքոտ է, որքան գեղարվեստական պատկերներում: Այստեղ է երևի նա առաջին անգամ մտահղացել «Մանոթ դեմքերի» գաղափարը, որովհետև այստեղ է, որ առաջին անգամ երևան է հանում կերպարը բնութագծելու այն եղանակն ու ձևը, որ հետո նախընտրելի դարձավ դիմանկարների շարքում, որ ստեպ-ստեպ գրում ու տպագրում էր «Մասիսում»:

Առաջին գրական նախափորձերը վերաբերում են թարգմանչաց վարժարանում սովորելու տարիներին: «Գրիգորիկը,— վերհիշում է դասընկերներից մեկը՝ Տիգրան Արփիարյանը,— աշխարհաբարի հակումներ ուներ և կգրեր մանրիկ ոտանավորներ, հաջող շարադրություններ»[1]: Ընկերները նրան «պստիկ» էին կոչում. գնդիկ, մանրակազմ, վինասեր և եռանդուն բնավորություն էր. ջոկվում էր աշակերտների մեջ: Ուսուցիչները՝ Թ. Թերզյանը, Ա. Պերպերյանը, Հ. Շիշմանյանը սիրել են նրան ու վինել հետը, բավարարել «պստիկի» հարցասիրությունը:

1876 թվականին Զոհրապը ընդունվում է այդ ժամանակ Թուրքիայում գործող կրթական բարձրագույն միակ հաստատությունը՝ Կալաթա-Սերայի վարժարանը, որը բացվել էր դեռևս 1868 թվականին Ֆրանսիական կառավարության հովանավորությամբ և Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանի անմիջական հսկողությամբ: Ուսանում է երկրաչափական գործը: Սուր միտք ուներ, միանգամայն մաթեմատիկական էր տրամաբանությունը: Փայլուն կերպով ավարտեց այդ բաժինը:

18 տարեկան էր, բայց երկրաչափի պաշտոն գտնելը գրեթե անհնարին էր: Թեև տեղավորվեց շինարարության նախարարության մեջ, բայց ապարդյուն: Գործ չճարվեց: 1880-ին անցավ խորթ հոր՝ Ավետիս Յորտումյանի իրավաբանական գրասենյակը՝ գրագրի պաշտոնով և միա-

[1] *Բոլոր կենսագրական տվյալները քաղել ենք Գրիգոր Զոհրապի եղբայրական մահից 3—4 տարի հետո ստեղծված Արշակ Ա. Ալպոյաճյանի «Գրիգոր Զոհրապ» (իր կյանքը և իր գործը), Կ. Պոլիս, 1919, մեծարժեք աշխատությունից, էջ 226։*

[2] *Նույն տեղում, էջ 227։*

[1] *Ա. Ալպոյաճյան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 19—20, ըստ «Լույսի» (Կ. Պոլիս, 1908) թիվ 22-ի։*

ժամանակ սկսեց հանախել Կալաթա-Սերայի իրավագիտության բաժինը: Սակայն շուտով փակվում է վարժարանը՝ գիշավորապես իսլամ աշակերտներ չունենալու պատճառով[1]:

1881-ին Թուրքիայի դատական նախարարության հանձնարարությամբ բացվում է «Հուգուգի» վարժարանը, որի պատճառով էլ փակվում է Կալաթա-Սերայի բարձրագույն ուսումնարանը: Այս կրթական հաստատությունը ստեղծվել էր փաստաբան-իրավաբաններ պատրաստելու համար: Մեկ տարի հետո Զոհրապը տեղափոխվում է «Հուգուգի» վարժարանը և տվյալ ուսումնական տարի՝ թողնում է «Հուգուգը»: Հետագայում միայն էտրինե քաղաքում ճնշություն է հանձնում և ձեռք բերում փաստաբան-իրավաբանի վկայական:

Թեև Մաքրուճյաց և Թարգմանչաց վարժարաններում ուսանելու տարիներին են վերաբերում Զոհրապի առաջին գրչափորձերը («Այդ սերունդը ամբողջ արդեն հերքող էր»)[2], բայց և այնպես պատանի գրասերը գրական ասպարեզ է մտնում, երբ 1878-ին հանդիպում է «առևտրական կյանքե լրագրական ասպարեզ անցած» Նիկողայոս Թյուլպենճյանին և դառնում նրա հրատարակած «Լրագիր» օրաթերթի աշխատակիցը: Այդ ժամանակ ասպարեզի վրա էր, ինարկե, ազնվապետական հակումներ ունեցող պոլսահայ հարուստների հայտնի թերթը՝ «Մասիսը», որ խմբագրում ու հրատարակում էր Կարապետ Յուրուճյանը: Զոհրապը «1878-ի տեսնները պատանի մրն էր ու ջերմ հակառակորդ Մասիսին»[3]:

Գրական առաջին քայլերն անելիս նա դրսևորում է բնավորության այն չիտակությունը, ըմբոստությունը և վիճաբանելու հակված մարդու ինքնուրույնությունը, որ նրան հատկապես տարբերում էր մնացածներից՝ կրքոտ, համառ, պայքարող և անզիջում պահվածքով: «Զոհրապը,—դիտել է Ալպոյաճյանը,— վիճաբեր, մաքառող և ինքնատ նկարագիր մը ուներ»[4]:

17 տարեկան էր նա, երբ ոտք էր դնում գրական ասպարեզ: Մի քանի տարիների մեջ արդեն երիտասարդության սեմը անցած վաղվան պատանին դրսևորեց իրեն իբրև ազգի հանատագրով մտահոգ անհանգիստ ու նախաձեռնող անհատ:

1880-ական թվականների սկզբներին, երբ Զոհրապը մուտք էր գործում հրապարակագրության մեջ, սկսվել էր գրական այն շարժումը, որ

[1] *Այսպես օրինակ՝ 1875-ին վարժարանը ուներ 45 հայ, 2 իսլամ, 2 հրեա և 3 հույն ուսանող (տե՛ս Ալպոյաճյան, էջ 27—28),*

[2] *Ա. Ալպոյաճյան, էջ 32։*

[3] *Նույն տեղում, էջ 34։*

[4] *Նույն տեղում, էջ 37։*

ճախաձեռնել և առաջ էր տանում «Արեւելք», «Մասիս» և «Երկրագունտի» շուրջ համախմբված երիտասարդությունը, առաջնորդ ունենալով արդեն այդ ժամանակներ բավականաչափ հայտնի Արփիար Արփիարյանին: Զոհրապը շարժման մասնակիցներից և չափազանց արդյունավոր գործիչներից մեկն էր: Այս շրջանում նա արդեն ավարտում էր իրավաբանական կրթության հետ կապված գործերը և փորձում էր լրջորեն զբաղվել գրականությամբ:

1885 թվականին «Երկրագունտի» մեջ նա սկսում է տպագրել իր անդրանիկ վեպը՝ «Անհետացած սերունդ մը» վերնագրով: Վեպի շարունակությունը շուտով դադարեցվում է և այն վերսկսվում է տպագրվել 1886-ին՝ «Մասիսում»: 1887-ին հրատարակվում է առանձին գրքով: Փաստորեն «Անհետացած սերունդ մը» վեպը նորասկիզբ գրական ռեալիստական շարժման առաջնեկներից էր և կրում էր գրական հին ու նոր ուղղությունների ազդեցությունները:

1902-ին գրած «50 տարի առաջ» վերնագրի մեջ Զոհրապը իր «հեք վեպը» անվանում է «ռոմանթիկ նախափորձ մը», իսկ մի այլ առիթով նկատում, թե այն «ռոմանթիկ և բնապաշտ ձգտումներու հիմար խառնուրդ մրն է»[1]:

Գրողի ձեռագրումներում նշմարություն կա: Իրոք «Անհետացած սերունդ մը» վեպը գրված էր անփորձ գրչով. դեռ չէր հատկանշվում ինչպես ոճը, այնպես էլ գեղարվեստական տեսողության յուրօրինակությունը: Խառը և խճողված սյուժետագծերի ներսում չմշակված շատ բան կար՝ իրական հարաբերությունները կենդանագրելու մանրամասներից մինչև մարդկային բնավորությունների բնութագրումներ: Տեղ-տեղ ցոլաքում է Զոհրապի գրական տաղանդը և գեղարվեստական ջերմ շնչառության մեջ առնում ընթերցողին:

Զոհրապի գրական գործունեությունը բուռն վերելք է ապրում 1880-ական թվականների վերջերին և 1890-ականների սկզբներին: Առաջին նորավեպերը տպագրվում են «Արեւելք» օրաթերթում, իսկ ապա «Մասիսում»: Իր գրական ստեղծագործության հիմնական մասը ստեղծել է 1887—1893 թվականներին: Այս շրջանում է գրել երկրորդ վեպը («Նարդիկ») անավարտ, նորավեպերի մեծ մասը: Նույնպես այս տարիներին են վերաբերում հրապարակախոսական լավագույն ելույթները, «Մանոր դեմքեր» շարքի դիմանկարների ճնշող մեծամասնությունը:

Փաստորեն, իբրև գրող և հրապարակախոս Զոհրապը ճանաչվում է և առանձնանում ընդհանուր երթից 1887—1893 թվականներին: Հետա-

[1] *Ալպոյաճյան, էջ 56։*

գայում ևս, երկար լռությունից հետո՝ 1898-ից Զոհրապը նորից է երևում գրական ասպարեզում, այս անգամ իսկապես արդեն որպես ճանաչված ու վաստակած գրող և հասարակական գործիչ:

* * *

Զոհրապի գրական ստեղծագործությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ 1883—1893 և 1898—1908: Երկու տասնամյակում՝ ընդմիջված 1894—96 թվականների ծանր տարիների մղձավանջով ու ամլությամբ, նա ստեղծեց իր բոլոր լավագույն ստեղծագործությունները:

Առաջին նովելը, «Անհետացած սերունդ մը» անհաջող վեպից հետո, հրապարակում է Ա. Արփիարյանի խմբագրած «Արևելք» օրաթերթում («Վարդապետին մականունը»), իսկ այնուհետև «Կանանց բժիշկը», «Ներսես» և «Արմենիսա» նովելները 1888-ին՝ դարձյալ «Արևելքում» և ապա «Մասիսում»: Այսպես, Գ. Զոհրապը ընտրում էր նախասիրած ժանրը և նվաճում առաջին գեղարվեստական բնագծերը: Հետագայում, 1909 և 1911 թվականներին հրատարակած երեք ժողովածուներում («Խղճմտանքի ձայներ» (1909), «Կյանքը ինչպես որ է» (1911) և «Լուսցավեր» (1911) գրողը առաջին նովելներից միայն մեկը՝ «Արմենիսան» հարմար գտավ տեղադրել ժողովածուներում:

Արդեն առաջին նովելներում մեր առջև կանգնում է աշխարհը գեղարվեստորեն ընկալող, նրբամիտ ու սուր տեսողությամբ օժտված տաղանդավոր պատմողն ու նկարագրողը:

1888—89 թվականներին Զոհրապը «Մասիսում» և «Արևելքում» մի քանի նովելներ ևս հրատարակեց: «Այրին» վարպետորեն գծագրված նովելում գրողը անդրադառնում է այն երիտասարդների ճակատագրին, որոնք թողնում են հայրական գյուղը և ընտանիքը պահելու մտադրությամբ մեկնում մայրաքաղաք՝ Պոլիս:

«Այրին» նովելի գլխավոր խնդիրը, թվում է, պանդխտության երևույթի բարոյահոգեբանական որոշ կողմերի գնահատումն է, թեև նուրբ և, ինչպես հատուկ է իսկական արվեստագետներին, բացարձակապես ոսկերչական աշխատանք է կատարել ընթերցողին ճանաչել տալու համար այն իսկության գեղարվեստական խոր անդրադարձի արձագանքը մարդկանց հոգիներում, որն առնչվում է պանդիտությունը դատապարտող հայացքին: Մինչդեռ, ինչպես հայտնի է, Զոհրապը պանդխտության երևույթը չարիք չէր համարում. «Պանդխտությունը իմ թշնամիս չէ բնավ»,— գրում էր նա 1893-ին «Մասիսի» հարցազրույցներից մեկում[1]:

[1] *«Մասիս», 1893, 22-ը մայիսի։*

Մխիթար Աբբան «պանդուխտ մը» էր Վենետիկի մեջ», ինչպես որ ամբողջ ամիրայությունը, Պոլսո հայ վաճառականությունը «գավառացիներ ձևացած են»[1]: Զոհրապը ըստ երևույթին, բաժանում էր իր ուսուցչի՝ Հովսեփ Շիշմանյանի (Ծերենց) տեսակետները պանդխտության և գաղթականության մասին. «Գաղթականությունը մեր ազգը փրկող էն մեծ ազդակներեն մին եղած է անցյալին մեջ»,— կրկնում էր նա Ծերենցի կարծիքը :

Սակայն գեղարվեստական պատկերներում, նա, ըստ երևույթին, ավելի ճիշտ էր կողմնորոշվում վեր հանելով պանդխտություն կոչված սոցիալական երևույթի ծանր, հյուծող, դժբախտաբեր իսկությունը, ընթերցողին կռահել տալով *պանդուխտի* մարդկային ճակատագրի ձախող ու խեղված բնույթը:

Զոհրապը առաջին հերթին հանդես էր գալիս որպես ճշմարիտ արվեստագետ ճանաչել տալով մարդկանց բուն կյանքը, այդ կյանքի դժվարությունները և վայելքները: Հետևելով բնապաշտ դպրոցին, նա գրականություն էր բերում կյանքի իսկությունը, որ թաղված է երևույթների բուն էության մեջ: Նա մակերեսային դիտող չէր: Ամեն մի պատկեր ստեղծելիս մտանոգությունը և հրապարակայնորեն մտածելու, բարձրաձայն խոսելու սովորությունը դառնում էր գեղարվեստական հյուսվածքի մետաֆաթեյը. «Ամբողջ բարբերնիս կարոտ է վերաշինման. մեր մոլությունները նախ՝ ու հետո մեր առաքինությունները. վասնզի պետք է գիտնալ, որ առաքինություններն ալ պետք ունին ուղղվելու»[2]: Այստեղից էր սկսվում ամեն մի գեղարվեստական պատկերի կառուցումը: Նախնառաջ գտնում էր առաջադիմության հետ աղերսված ասելիքը և ապա նոր միայն ձևում գրելիքի պատառը: Ընդ որում՝ ինչպես ինքն է ասում, Զոպանյանի մասին, ախտաբանության ուսուցչի նման հիվանդի մերկ կուրծքը ծեծելով՝ բերկրանքի զգացմունքներ էր ունենում, երբ պարզում էր նրա «թաքուն գաղտնիքները և անտես վարակումները»[3]: Ավելին, նա գեղանկման էր ենթարկում ամեն ինչ՝ մոլությունն էլ, առաքինությունն էլ, չարն էլ, բարին էլ. նա դեմ էր տգեղությանը:

1891 թվականին «Հայրենիքում» սկսեց լույս տեսնել Զոհրապի նոր վեպը՝ «Նարդիկը»: Դժբախտաբար այն մնաց անավարտ: Հրատարակված հատվածներից երևում է, որ հինգ-վեց տարվա մեջ գրողը աճել էր,

[1] *«Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909 թիվ 17։ Ծերենցը «Արևելյան մամուլում (1876, № 1), համանման մի կարծիք էր հայտնել դեռևս 17 տարի առաջ։*

[2] *Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, 1962, հատոր 1, էջ 389։*

[3] *Գ. Զոհրապ, Գրականության մասին, էջ 110։*

հասունացել՝ ձեռք բերել հաստատուն ու ինքնատիպ ձեռագիր և, որ ամենակարևորն է, հասել իրապաշտ ոճի ինքնուրույն և հետևողական կիրառման:

Անավարտ վեպի հրատարակումից ուղիղ մեկ տարի հետո «Մասիսում» Զոհրապը հրատարակում է «Ճիտին պարտքը», որ այդ պահից սկսած ճանաչվում է որպես արևմտահայ նորավեպի գլուխգործոցներից մեկը: Գրողը հասավ կատարման դասական ավարտունության: «Ճիտին պարտքը» երկար ու անվերջանալի մի պատմություն էր սեփական աղջիկներին ինքշորեն սիրող ու այդ սիրո հունով դեպի սեփական կործանումը գնացող պարկեշտ ու խաղաղ մի մարդու ողբերգության մասին: Բայց այն ընդամենը մի քանի էջում է տեղավորված: Ո՞րն է դրա գաղտնիքը:

Զոհրապը այդպես է տեսնում աշխարհը: Արդեն նկատված է, որ գրողը նորավեպերում միշտ էլ ներկա է. նա անտարբեր նկարագրող չէ, և խոստովանություններն էլ ճշգրիտ բարգմանություններ են սեփական համոզմունքների:

«Անհավատարիմը» (գրված 1912-ին) նորավեպում նա պարզել է աշխարհը տեսնելու այն եղանակի ու դիրքորոշման կերպը, որ հատուկ է սեփական գեղարվեստական մտածողությանը. «Մեծ պատահարները,— գրել է նա,— զիս անտարբեր կթողուն. բայց մանր դեպքերը՝ շնչին ուրիշներու աչքին՝ լուրջ խորհրդակցություններու նյութ են ինձի»: Երևի ոչ ոք չէր կարող ստեղծագործական ոճի այսպիսի ճշգրիտ բնութագրություն տալ: Եվ իրոք, նրա նորավեպերը կառուցված են, թվում է, մանր դեպքերի հարուցած տպավորությունների բերումով: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ նա այդ «մանր դեպքերի» մեջ տեսնում է հանրությունից ընդունվածին *ներհակ* մի բարոյական, որ հենց իրենը՝ գրողինն է: Եվ նա որոնում ու գտնում էր համընդհանուր կեղծիքի ու ստի մեջ սուզվող ճշմարտության արդար ձևերը, ճիգ է անում և դուրս բերում նրա կենսուրախ ու հոգեզվարճ բարոյականը:

Զոհրապը մեծ պատահարների մեջ չէ, որ գտնում է կյանքի խորունկ իմաստը. շատ ավելի խորը և ճշգրիտ պատկերացում են տալիս նրա կարծիքով արտաքուստ սովորական, բայց ընդհանուրի հունով չընթացող մարդկային ապրումների ու գործողությունների ոլորտը, ուր անհնար մի միջադեպ կարող է աչքի առաջ բերել գեղեցկության ու ապրումի ամբողջ բազմազունեղ տարբերակներում ենթող աշխարհի իմաստությունը: Հենց այդ պատճառով էլ Զոհրապի նովելները անվերջորեն խորունկ բովանդակություն և լուսափայլ անկյուններ ունեն, հարստություններ, որոնց չի կարելի դիպչել միանգամից, և ոչ էլ սպառել թռուցիկ կենտրոնացումով: Նրա ստեղծագործություններում միշտ էլ ճշմարտության համար մղվող կռիվ կա, և Զոհրապը գնում է իրականության վերարտադրության սույն ճանապարհով: Հենց դրա շնորհիվ է, որ նրա պատկերները ստանում են շսպառվող բարոյական լիցքեր, և գեղեցիկը հարատևորեն պահպանելու մնայուն պաշարներ:

Հուսեփ աղայի ինքնասպանության փաստը Զոհրապին որպես գեղագետի ցնցել է, տեղահանել: Մարդ, որ անցնում է վերջին սահմանը՝ այլևս ապրել չկարողանալու համոզումով:

Զոհրապը իբրև արվեստագետ մղվում է բարդ խնդրի լուծման: Պետք է ընթերցողին համոզել Հուսեփ աղայի կործանման ճնարավորության և՛ բարոյական, և՛ մարդկային տառապանքի ամբողջ իսկությանը: Եվ նա գտնում է բարի ու նախադասության այն որակները, որոնք կենդանացնում ու շարժման մեջ են դնում կերպարները, հավատի, միանգամայն ապրված ու շարունակելիության մեջ բնականից ծավալվող զգայությունների ամբողջ բարդ համակարգը, իրադրության ճշգրիտ պատկերացումը՝ մանրամասներից մինչև հոգեբանական նուրբ զննումներն ու խորացումները:

Զոհրապի նովելներում տեղ են գտնում մտահոգություններ, որոնք կապվում են մարդկային հարաբերությունների բարոյական լիցքերի՝ ասածո հետ ունեցած հավատքով պայմանադրված վերաբերմունքի հետ («Խարիսխը» և «Մեղա, տեր»):

1883—93 տասնամյակում գրված նորավեպերից միայն մի քանիսն են այսպես ուղղակիորեն վերաբերում մարդկային ապրումի, հոգս ու կարիքի հոգեբանական տարածությանը: Մնացածը անմիջականորեն առնչվում է կնոջ և սիրո՝ մարդկային հարաբերությունների միջուկի, հիմնահենքի վերլուծություններին, հանաչմանը և խոր մեկնաբանումներին: Պոլսահայ գրական աշխարհը նրա ամեն մի նորավեպի հետ տակնուվրա էր լինում: Կյանքում ուներ իր հերոսների նախատիպերը, բայց նորավեպը այնպես էր կառուցում, որ շատ քչերը կարող էին կռահել ծանոթների կյանքից առնված դրվագները: Ինքն էլ շատ զգույշ և նրբանկատ էր այդ հարցում:

1880-ական թվականների վերջերից Զոհրապը տպագրում է կանացի սիրտն ու քմայքները մեկնաբանող առաջին սքանչելի նորավեպերը՝ «Արմենիսան», «Փոքրիկը», «Թեֆարիկը», «Առջի սեր առջի բարին», «Կատակը», «Ճոկոն», «Դիմակը», «Տալիլան»:

Առաջին անգամ հայ գրականության մեջ կինը գտնում էր իր գեղագետ՝ մեկնաբանին, արվեստագետի, որ հանաչում և հասկանում էր նրա բարի, նայվածքի, ժպիտի, ձեռքմեկնումի ու ձեռքսեղմումի, բուրատուփի, ժանյակի, կոստյումի, շրջազգեստի փոքրերի, սրտատրոփի ու հևոցի այն-

պես նուրբ ու չնկատվող գեղեցկությունները, որ նրան դարձնում էին այդ մեծ աշխարհի կախարդ գիտուններից մեկը:

Ընդհանրապես Զոհրապը հետևում էր «Սերը և բանականությունը հազվադեպ են ձեռ ձեռքի քայլում» հինավուրց ճշմարտությանը: Դրա համար այն արտակարգն ու արտասովորը, որ սիրո մեջ է գաղտնածածկված, նորավեպերի գրչի տակ կենդանացվում էր ամենաշքեղ փայլով կամ հոգևոր հարստությունների բովանդակ ծիածանագույնով:

1889-ին «Մասիսում» հրատարակված «Փոքրիկը» ուղղակի տակնուվրայեց պոլսահայ շրջանները: Սա առաջին նորավեպն էր, որտեղ երիտասարդ գրողը փորձել էր ի հայտ բերել կանացի սրտի իր խորագիտակությունը:

«Արմենիա» նորավեպում թերթվում են մի տարօրինակ սիրո պատմության էջերը: Երիտասարդը հունաբնակ մի կղզում հանդիպում է Արմենիային (Արմենուհուն) — այդպես էին նրան այստեղ բոլորը ճանաչում՝ մի անմատչելի սիրտ, թաքուն ու գաղտնի, անհպելի գանձի պես որոնվող մի ցանկություն: Երիտասարդին հաջողվում է մտերմանալ նրա հետ՝ իրեն ճշմարիտ կաթոլիկ ձևացնելով: «Արմենիա» անունցմե էր,— ասում է Զոհրապը,— որոնք ի՞նչ ազգե ըլլալուն հարցման անվհեր կպատասխանեն.

— Կաթոլիկ եմ»[1]:

Բացվում է երիտասարդի խաբեությունը:

Արմենիան սկսում է մարդկայնորեն հասկանալ սիրենկանի խաբեության արժեքը. անգամ առաքինություն համարում այն, որովհետև երիտասարդը իր հանդեպ ունեցած սիրո սաստկությունից էր հանցանք գործել: Հաշտվում է նրա հետ. «ես կաթոլիկությունը կեղծեր էի, ինքը լուսավորչականությունը իրապես ընդունեց, քանի որ միևնույն աստվածը կպաշտեինք»: Սերը հաղթահարեց դավանանքի նախապաշարումը, բայց հենց դրանով էլ ավարտվեց այն: Մտերմությունը երկար չտևեց, «բարեկամներ մնացինք միշտ,— խոստովանում է երիտասարդը,— բայց ոչ առջի սիրահարները»:

«Թեֆարիկ» նորավեպը մի միամիտ սիրո պատմության շուրջ է դառնում: Ամուսնուն կորցրած և շրջակա գյուղերից Պոլիս հասած դեռատի կինը, որ ծառայության է ընդունվում մի մեծահարուստի տանը, սիրահարվում է երիտասարդ տանտիրոջը՝ կրկնապատկելով հոգածությունն ու խնամքը նրա նկատմամբ, շրջապատելով նրան անհուն խանդաղատանքով, նվիրումի ծայրահեղ ու անձնուրաց դրսևորումներով:

[1] Գ. Զոհրապ, *Երկերի ժողովածու, Երևան, 1962, հատոր 1, էջ 162։*

Նորավեպի ողբերգական ավարտը ավելի է թանձրացնում ափսոսանքի ու խղճահարության այն զգացմունքները, որոնք ծնվում են անպաշտպան ու անմեղ այդ կնոջ պարզ ու շիտակ նվիրվածության, մաքրամաքուր սիրո ու առաքինության ներգործությունից:

Զոհրապը բժշկի նման է քննում իր հերոսների սիրտը: Նա կարողանում է լսել ամենանուրբ և ամենավտանգավոր սրտազարկերը: Միջամուխ լինելով ապրումի հարատև գաղտնի ու անկրկնելի գաղտնիքներին, գրողը բացում է մարդկային հոգու ու սրտի այն անկյունները, որոնց հետ երբեք չի կարելի առնչվել սովորական հպումով կամ խոստովանություններով: Արտակարգի ու աննկարագրելիի մեջ հայտնաբերվածը վերջին հաշվով այն է, ինչ այդ սերը պահում է մարդկայնորեն թանկ հավասարակշռության և երջանիկ անգիտության մեջ:

Օ՜, կնոջ սրտի քմայքներ... Զոհրապը կարողանում էր հասկանալ ու ճանաչել դրանք, և բացվում էին մի ամբողջ գաղտնի աշխարհի թաքուն գեղեցկությունները:

Թագուն տուտուն («Առջի սեր առջի բարի») արդեն խաղողի ճատիկի պես թոռոմելով՝ ավելի քաղցրացած, հնամենի ու ծեր մի կենդանություն, երեխաներով շրջապատված, խաղաղ, հանգիստ, լուռ, ամաչկոտ հեզությամբ թույլատրում է նրանցից համարձակներին բացել երիտասարդ օրերի իր սնդուկը և տեսնել այն աշխարհը, որտեղից եկել էր ինքը:

Զոհրապը սիրո մեջ նկատում է ծայրահեղությունները, ինչպես որ կյանքում որոնում ու գտնում է անսովորն ու անսպասելին, այդպես էլ մարդկային սրտերի հարաբերություններից հանում է այն, ինչ այդ անկրկնելին ու բացառիկը վերածում է մարդկայնորեն չափազանց հասկանալի ու հոգևոր համբերկնումի համար պարտադիր: Որպես գեղագետ Զոհրապը պարտադրում է հավատալ իր պատմություններին ոչ միայն գեղարվեստական կառույցի համամասնական պարտադիր և գեղեցկաշեն ամբողջություն ստեղծելով, այլև օժտելով այդ ամենը հոգեբանական խոր ու նուրբ դիտումների զարմանալի ազդեցումներից հյուսված գեղեցկություններով: Ոչ մի բան Զոհրապի կառույցներում դուրս չէ ընդհանուր ոճական այդ ընդգրկումից:

Դասական արվեստին հատուկ հարատևական մտահղացումները նորավեպի փոքր ու նեղ տարածություններում գտնում էին անվիճելիորեն վարպետ լուծումներ և, երբեմն, զարմանում ես, թե ինչպես է կարողանում գրողը հասնել կերպարների, զգացումների, մտքերի այդպիսի հորդահոս ու մանրամանդակ իրացումների՝ խստիվ պահպանելով չափի զգացումը (գեղագիտական համամասնության գլխավոր օրենքը) և

անվթար պահելով գեղարվեստական պատկերաշինության արտաքին տեսքը:

Լիքը, խորը, ազնիվ բնավորություն է Զոհրապը. ամեն մի նովել ապրված ու ասես հանելուկային դիպված է, որ գեղարվեստական երևակայության ընթացքի մեջ ձևավորվում ու դրսևորվում է իբրև օրինաչափորեն հասկանալի ու տիպական սոցիալ-հոգեբանական երևույթ: Ընդորում, նա բոլորովին էլ հետամուտ չէ ընդհանրականի տիպականացման: Նրա նախասիրությունը բացառիկն է, հազվադեպը, չկրկնվողը: Այս իրադրությունների գեղարվեստական պատկերման մեջ են, որ դրսևորվում են գրողի և մտածողի նրա ողջ ուժերը և շնորհները:

Բացառիկը բարդացնում է գրողի խնդիրը, դժվարացնում գեղարվեստական իրացումները: Բայց Զոհրապը հատկապես մղվում է եղելության կամ դիպվածի ընթացքով գեղարվեստական տարածք մտած բնավորությունների սուր, հազվադեպ պատահող, գրողին ուղղակի գեղարվեստական բարդությունների մեջ հետող փաստերը: Ասես թե դրանց հանաչման ու գեղարվեստական յուրացման մեջ է գրողի ստեղծագործական երջանկությունն ու առաքելությունը:

Փորձեցեք ի մի հավաքել նրա բոլոր նորավեպերի հում նյութը կամ այսպես ասած գրական տեսանելի բովանդակությունը: Ինչ խոսք, որ կհանդիպեք միևնույն սկզբունքին կամ նախասիրությանը. փոքր, աննշան թվացող եղելության մեջ հայտնաբերել աշխարհի շարժումը, կրքի, սիրո, տառապանքի, դժբախտության, երջանկության տարածքներում գտնել այն, ինչ թանկ է ու գեղեցիկ, նվիրական, երբեք կասկածի չենթարկվող անստգյուտ թանկություն (հարուստ և անձեռնմխելի զգայություններ), որով անկասկած յուրահանչյուր անհատ կապվում է մեծ կյանքի զարկերակային ռիթմի հետ:

Բժշկի մի խոստովանության մեջ («Տալիա») Զոհրապը կարողանում է իմաստասիրական խոր ակոսով մահվան առեղծվածի պատասխանը տալ՝ որպես ասածո ստեղծած փրկավետ «հականեխական» միջոցը մարդկային ցեղը առողջ ու առույգ պահելու համար, այստեղից գնալ-հասնել իր իսկ ձեռքով սիրած աղջկան վիրահատության միջոցին կյանքից զրկելու ողբերգական պատահականությունը ու չափել կորստի և սիրո արանքում ընկած մարդկային ափսոսանքի ու ցավի մեծությունը:

Սերվինազի պատմությունը («Մամայիդ բարև բրե») մանկական հիշատակների տաք ու անանց զգայություններով թաթախուն, երևան է հանում մաքրամաքուր և անօգնական մի մարդու բարոյական աշխարհի վեհությունը անգամ այն ժամանակ, երբ աչքի առաջ է տարիներով իդեալ դարձած սրտի թագուհու վատահամբավ կենցաղի ապացույցը:

Զոհրապը յուրահանչյուր բնավորություն ճանաչում է մոտիկից, ասես թափանցում է ամբողջ էության մեջ, վերակերպավորվելով ինչպես արտիստը, ունկնդիր է լինում և նրա սրտի ձայնին՝ ճիշտ ձևակերպելով յուրահանչյուր ապրումի բնական արձագանքը՝ մտորումների և զգայությունների բարդ շարժման մեջ: Իսկական արվեստագետի նմանն. նա կարողանում է թափանցել իր հերոսների հոգու խորքը, անիմանալի ու անտես ապրումների ենթագիտակցական շերտերը գնալ ու հետո այդ ամենը հավաքելով ստեղծել հերոսի հոգեբանական նշգրիտ բնութագիրը:

* * *

1894—95 թվականները զարհուրելի տարիներ էին արևմտահայերի համար: Մասսայական զանգվածային կոտորածները, որ ծայր առան 1894-ից շարունակվեցին մինչև 1896 թվականը: Մտավոր կյանքը Կ. Պոլսում գրեթե դադարեց: «Հայրենիքի» աշխատակիցները ցան ու ցիր եղած՝ փրկություն ու օթևան որոնեցին Եվրոպայում ու Եգիպտոսում: Սահմանն անցան Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Հրանտը (Մ. Կյուրճյան), Ա. Զուպանյանը, Եր. Օտյանը, Երուխանը, Տ. Արփիարյանը և ուրիշներ:

Մինչև 1898 թվականը, երբ արևմտահայությունը վերստին կարողացավ ինքն իրեն ժողովել և ոտքի կանգնել՝ հայ գրական կյանքը Պոլսում գրեթե մեռած էր: Բավական է ասել, որ 1896 թվականին Պոլսում լույս էր տեսնում միայն մեկ անուն հայերեն պարբերական: Հուսահատության և ազգային կորովի անկման այս շրջանում Զոհրապը բոլորովին հաշվել էր գրական ասպարեզից: Նա ավելի զբաղված էր փաստաբանական գործերով, կարևոր դատավարություններով:

Պոլսում Զոհրապը որպես իրավաբան-փաստաբան հայտնի էր մանավանդ օտարահպատակներին, քանի որ լավ տիրապետելով ֆրանսերենին, նա շատ հաճախ պաշտպանում էր նրանց գործերը Թուրքիայի առևտրական առաջին դատարանում:

Քչերին է հայտնի այն փաստը, որ Զոհրապը եղել է Ստամբուլի ռուսական դեսպանատան թարգմանիչ, իրավագետ-խորհրդականը և նենց օգտվելով այդ իրավունքից ռուս օտարահպատակների դատեր է վարել և ունեցել է Եվրոպա ազատորեն երթևեկելու իրավունք:

1908 թվականին պառլամենտական (մեպուսական) ընտրության համար օսմանյան սահմանադրական հայ ներկայացուցիչների ժողովում արտասանած մի ճառում Զոհրապը իր փաստաբանական գործունեությունից որոշ փաստեր է բերում: Պարզվում է, որ նա Թուրքիայի վճռաբեկ ատյանի առաջ պաշտպանել է Զեյթունցի հայերին (1896) և այն-

պիսի վճռականությամբ, որ ատյանը իսկույն փաստաբանին ձերբակալելու հրաման է արձակել: Բանտարկությունից ազատվել է «անուղղակի միջոցներով»: Պաշտպանել է նաև հայ, հույն, բուլղարացի քաղաքական ամբաստանյալներին: Մի բուլղար հեղափոխականի դատավարության ժամանակ արտասանած ճառի համար Իշթիպի գայմազամը (նահանգապետը) պահանջում է, որ Զոհրապը անմիջապես թողնի Պոլիսը:

* * *

1898-ի փետրվարից սկսում է հրատարակվել մեծ օրաթերթի վերածված «Մասիսը»՝ Զոհրապի խմբագրությամբ:

Այսպես, հնգամյա ընդմիջումից հետո գրական ասպարեզ էր վերադառնում պոլսահայ մտավորական զորեղ ուժերից մեկը և փորձում տեր կանգնել հայրենի գրականության:

«Մասիսի» 1898-ի փետրվարյան համարներից մեկում Զոհրապը հրատարակեց այդ տարեշրջանի իր առաջին նովելը՝ «Խնդուքը» վերնագրով: Նրբ խորը նայելու լինենք նովելի գեղարվեստական հյուսվածքում հյուղավորվող հոգեբանական զննումների ենթաբնագրային իմաստին, ապա, ըստ երևույթին, դժվար չէ կռահել գրողի մտադրությունը՝ հոգևոր շեղմամբ միայն բացատրելու այդ ժամանակները մարդկային ծիծաղի ու խնդուքի դրսևորման հնարավորությունը:

Զոհրապը ինչ-որ չափով ասես գնահատում է իննսնական թվականներին պոլսահայերին բաժին ընկած ճակատագիրը: Գրողը զգույշ էր և հեռատես: Նա հասկանում էր, թե ինչ երկրում է ապրում ինքը, և իր նովելները իսկապես կառուցում էր քաղաքական թեմատիկայից բոլորովին հեռու սյուժետային հորինվածքների վրա: Նրա գեղարվեստական պատառներում չկա որևէ վերաբերմունք ժամանակի քաղաքական կյանքի վերաբերմամբ, հայ-թուրք հարաբերությունների սրված ու արյունոտ հանգույցների բարդ հոգեբանական անդրադարձումների նկատմամբ: Դրա համար էլ ժամանակակիցները նկատել են, թե Զոհրապը գրականությունը «իր վայելքի մեկ միջոցն է» համարել (Վահան Թեքեյան), որ գրողը գրականությունը դիտել է ոչ թե իր հիմնական զբաղմունքը, այլ նրան հատկացրել է այն դերը, որ տղամարդը (ամուսնացած) բաժին է հանում իր սրտի ամենախորունկ ծալքերը նվաճած սիրուհուն: Եվ չնայած դրան, Զոհրապի գրականությունը լայն շունչ ու հնք ունի, պատմում է մարդկային հոգիների հանախ անտես տառապանքներից, ինչը որ գեղարվեստական պատկերը վերածում է զորեղ ու փիչ հանդիպող բացառիկ գեղարվեստական կառույցի և այդ պատճառով էլ երևում են զգացումային արտակարգ ու ներգործուն լիցքերով:

Զոհրապը, թվում է, երբեք չի քարոզում. նա օբյեկտիվորեն նկարագրանում է կյանքը, մարդկանց շարժումը. երբեմն նույնիսկ միջամտում է, իր տեսակետը հայտնում, բայց ոչ մի դեպքում չի պարտադրում սեփական կարծիքը: Նա, ճիշտ է, կողից դիտողի նման չի պահում իրեն, գեղարվեստական պատկերի ներսում իր անձն ու կարծիքները, անշուշտ, որոշիչ դեր ունեն: Բայց դա ռոմանտիկական ոճին հատուկ միջամտությունը չէ, որով քարոզչականություն է ձևոք բերում գրվածքը, մի տեսակ միտումնավոր ընդգծումներ, որոնք չեն բխում նկարագրված հարաբերությունների ռեալ, հնարավոր, նկուն ու մարդկայնորեն ճշմարիտ դասավորումներից, կապակցություններ, որ ռեալիստական ոճին են հատուկ: Զոհրապը ինքն էլ է քարոզում, երբեմն ընդգծում միտումնավոր ձևով, հրապարակային խորհրդածությունների դիմում (այդպիսի մի շերտ կա նրա գրեթե բոլոր նովելներում), բայց հենց սա էլ նրա ռեալիզմի յուրահատկությունն է:

Զոհրապը առաջարկում էր միացնել բոլոր ազգային ուժերը և միասնաբար հանդես գալ ազգի շահերի օգտին: Կ. Պոլսո հարուստ դասակարգը դեմ էր դրան . «1908 թվականին,— գրել է Ա. Ալպոյաճյանը,— պարտք համարած էր հայտնել, թե ինքը դաշնակցական չէր: Միայն կնարեր, թե՝ «եթե ըլլայի պիտի պարծենայի նաև այս հանգամանքով, հեղափոխական մտավորական մըն եմ միայն: Բայց աննկուն գրչի ու խոսքի մարդ մըն եմ»[1]: Ահա ամբողջ ճշմարտությունը:

Զոհրապի գրականությունը երբեք չի հարել կուսակցական համոզումների: Ալպոյաճյանի վկայությամբ 1909 թվականին Ազգային ժողովի մեջ Զոհրապը ասել է. «Ես հեղափոխական կուսակցությանց անդամ չեմ, այլ անոնց համակիրներեն և կպատկանեմ Պոլսո հայոց պուրժուազի դասակարգին՝ քիչ մը գրական դասակարգին»[2]: Սա միանգամայն ճիշտ խոստովանություն է: Գրողի տվյալ դասակարգին պատկանելը չի վճռում նրա հայացքների համակարգի բնույթը: Զոհրապը մնում է հասարակական վարի խավերի և մասամբ քաղքենիության համակիրն ու հայացքների կրողը: Նրա գեղարվեստական կերպավորումներում միշտ էլ երևում են սիրո ու խղճի ճանապարհներով անցած մարդկային ապրումի թավոտ խորքերը, հոգևոր ներանձնացման ու ինքնատեսության մարդասիրական ակունքներից սնվող խորհուրդները:

«Փոստալը» այն նովելներից է, որոնց վրա գրողը շատ է աշխատել՝ կանացի լավագույն տիպերից մեկը ստեղծելով:

Ստեղծելով Սուրբիկ հանրմի կեղծավոր, երեսպաշտ, անբարո այդ

[1] Ալպոյաճյան, *Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 198։*

[2] *Նույն տեղում։*

կնոջ կերպարը և հակադրելով այն բարի, խոնարհ, առաքինի Տիգրանուհուն, բնութագրումների զուգահեռներում գրողը կարողանում է ընթերցողին հասցնել հասարակության վերի և վարի խավերի տարբերությունների խոր անջրպետը, մարդկային տեսակետից բոլորովին միմյանց հակադրված երկու կանանց աշխարհընկալումների, մարդկայնության ու բարոյական չափանիշների խորը զանազանությունները:

Տիգրանուհին որպես հայ կնոջ առաքինի տիպար ավելի է բացվում, երբ իր գոյության ամբողջ իմաստը զավակի մեջ կենտրոնացրած ճանկարծ զրկվում է նրանից և որբևայրի կնոջ ամբողջ մտմտուքը կենտրոնացնում պստիկ ու թարմ հողաթումբին:

Զոհրապի կանանց կերպարները միանշանակ չեն բարոյական լիցքավորվածությամբ, բայց նրա համակրանքը ունեցող հերոսուհիների կենսագրականներում չի կարելի գտնել փաստեր, որոնք նրանց առաքինությունը կասկածի տակ դնեն: Այն գեղեցիկ ու հմայիչ կանայք, որ շարժել են նրա հետաքրքրությունը, բոլորը անխտիր մարդկային տեսակետից բարձր անձնավորություններ են, առաքինի ու զոհաբերող, սիրո մեջ անձնուրաց ու հետևողական:

«Մագդալինե» նորավեպի հերոսուհին՝ տասնչորսամյա հոսի նաշանով հագնվող, պարարտ ու ցանկահարույց փոքրոցի այդ աղջիկը, որ գծագրված է զարմանալի հյութեղ ու տպավորիչ ընդգծումներով և որը մարմինը ծախելով մեծ մոր, պզտիկ քրոջ ու եղբոր օրական հացն էր վաստակում, ջերմեռանդ ու մեղավոր աղջկա բարոյական մաքրությունն ուներ: Պանոց օրերին անպայման չէր խախտում որևէ կարգ, չէր պառկում այցելուների հետ, վերջին օրն էլ ծոմ էր պահում հաստատ գիտենալով, որ իր նմաններին չեն թողնում սրբության հաղորդությունն առնել:

1900-ական թվականների սկզբներին «Մագդալինեից» հետո Զոհրապը էլի մի քանի նորավեպեր հրատարակեց, վերջինը՝ «Անհավատարիմը», 1912-ին՝ «Ազատամարտում»:

Ամուսնական հավատարմության խնդիրը Զոհրապի շատ նորավեպերի ծալքերով է անցնում, եթե ոչ որպես հիմնական թեմա, ապա որպես մի հարց, որ յուրաքանչյուր անգամ իր վրա է առնում գրողի բարոյական պահանջների ու ազատամիտ կարծիքների ծանրությունը:

«Երջանիկ մահը» նորավեպը, օրինակ, հարցի գեղարվեստական լուծումը հանձնում է երկուստեք ճաշակած երջանկության փիլիսոփայական ավարտին՝ սիրած տղամարդու գրկում մեռնելու փափագին, որ իրականանում է կնոջ համար իրոք գերագույն մի պահի՝ պարահանդեսային վալսի գլխապտույտի միջով, արտատրոփի ու նվաղման, վայելքի ու ծայր երջանկության սահանքով դեպի կյանքի ավարտը գահավիժող սպառումը:

«Վերադարձը» նորավեպում Մաքրիկը (թեև վաղուց արդեն ամուսնացած) խոնարհ ու երկյուղարեկ բրթոռմով պահել է նախկին սիրո անդիմադրելի հմայքին մեհենական ելիրումի ուժը: Գոհ իր ամուսնությունից, Մաքրիկը սակայն հասկացել էր, որ այդ ամուսնությունը «գոհիկ» կապակցություններից մեկն էր, և որ անգամ պսակի օրհնությունը չէր կարողացել ո՛չ ազնվացնել և ո՛չ արդարացնել այն: Նավաբեկության ենթարկված գեղեցիկ հույսեր ու երազներ. ամենանվիրական զգացումներ ու սպասումներ, որ շրջանակվել են թանձր կարոտի արցունքներով և թրջել աղջկական բարձի մաքրությունը: Անկեղծ սիրո խոստովանության մեջ ամուսնացած պահին անգամ առաքինի մնացած ու կույս հոգիներ... Ու հիմա, 12 տարի հետո, թև-թևի անտառի լռության և գիշերային մութի միջով անցնելիս Մաքրիկը պահած ունի սիրո ուժգնությունն ու հավատարմությունը այն տղայի նկատմամբ, որ տարիներ առաջ լքել էր իրեն՝ երբեք չկարողանալով հասկանալ ունեցածի արժեքը:

Ամուսնուն բոլորանվեր զգացումներով շղթայված առաքինի կնոջ նախատագիրը հաստատում է Լ. Տոլստոյի այն միտքը, թե հոգու անձնատվությունը ավելի մեծ հանցանք է, քան մարմնինը («Անհավատարիմը»):

Զոհրապի նորավեպերը մեծ մասամբ հոգեբանական էյուդներ են... Նրա գեղարվեստական ջանքերը ուղղվում են դրանց հիմնավորումներին՝ զուտ մարդկային, զգայական ու բանական տեսակետից: Ընդ որում, նա հոգեբանական էյուդը կառուցում է լավ իմանալով ամեն մանրամասն. ճանաչելով ոչ միայն մարդկային տվյալ բնավորությունը, այլև իրադրությամբ պայմանավորված հերոսների պահվածքի, գործողությունների ամբողջ շարժուն և բազմաժխոր ծալքերը: Թերևս կարելի է մատնացույց անել մեկ-երկու նորավեպի (ինչպես «Անհավատարիմի» մեջ) մշակվածության անկատարությունը, բայց մնացած դեպքերում, նա հետևողական է իր որոնումներում՝ մարդկային զգացումները մինչև վերջ և ավարտուն գեղեցկությամբ արտահայտելու ջանքերում, կյանքի հանգամանքների միջով իսկությունը երևան բերելու մշտական լարված ու խոկուն մտադրությունների մեջ:

* * *

1908 թվականի հուլիսի 10-ին սուլթանական Թուրքիան թևակոխում էր իր պատմության անկյունադարձային շրջափուլերից մեկը: Իթթիհատը վը Թերաքը («Միություն և առաջադիմություն») բուրժուա-ազգայնական կուսակցությունը Թուրքիան սահմանադրական պետություն էր հռչակում՝ «ազատություն» և «իրավահավասարություն» շնորհում երկրում ապրող

բոլոր ազգերին ու ազգություններին: Միապետության մայրամուտը արյունոտ հրացոլով լուսավորում էր այն ճանապարհը, որ պիտի անցնեին երիտասարդ սահմանադրականները:

Այդ ժամանակ Զոհրապը գտնվում էր Փարիզում և մտադիր էր անցնել Եգիպտոս և հաստատվել այնտեղ[1], Թուրքական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո նա առանց այլևայլության մեկնում է Պոլիս, հավատալով, թե «... Թուրքիան ճշմարիտ սահմանադրության մը բարիքը վայելելու անակնկալ բախտը ունեցավ»[2]:

1914 թվականի սկզբներին վերջապես ասես թե հաղթանակով էր պսակվում Հայաստան (արևմտահայ գավառները) Եվրոպական կառավարիչ ուղարկելու հարցը: Հունվարին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև հայկական վերանորոգումների պայմանագիր ստորագրվեց: Ընդ որում, այս գործում վճռական մասնակցություն ուներ Գ. Զոհրապը: Լինելով ռուս դեսպանատան խորհրդատու-իրավագետը, նա օգնում էր ռուս դիվանագետներին գործը գլուխ բերելու համար: Արշակ Չոպանյանին գրած նամակում (13-ը հունվարի 1914) մանրամասն տեղեկություններ է հայտնում կնքած պայմանագրի մասին: Արդյունքը,— ինչպես գրում է Զոհրապը,— խիստ գոհացուցիչ է: Ինչպե՞ս լուծվեց այդ հարցը,— ոգևորությամբ հարցնում է գրողը,— ռուսական պետությանը հայոց պաշտպան դարձնելու ջանքերի շնորհիվ[3]: «Հարկավ, ատոր լծորդեցինք,— հավելում էր այնուհետև նա,— մյուս պետությանց համակրություններն ալ, բայց հիմը և իրականը ռուսական պետությունն էր և ատոր *շնորհիվ* (ընդգծումը Գ. Զ.-ինն է) ձեռք բերինք ամեն բան. ան է, որ այսօր էլ կխոստանա ապագային ավելի ընդարձակել և հաստատուն ձևի մը վերածել այսօր առնված statut-ն. մեր ողջամտության, Ռուսիո հանդեպ պահպանվելիք մեր մտերմական հարաբերության շնորհիվ այդ խոստումին իրագործումը պիտի ունենանք, թերևս շատ ավելի մոտիկ թվականի մը մեջ:

Սրանից հետո ազգի գործերը խոհեմությամբ և հեռատեսությամբ պետք է առաջ տարվեն՝ գալիք դժվարությունները նկատի առնելով,— հորդորում էր Զոհրապը[4]:

Չէր էլ կասկածում անգամ, որ գլխին կախված թուրքական յաթաղանը ուր որ է իջնելու էր ամենայն զորությամբ և վրեժխնդրական ցասումով:

Երևի այդ պայմանագիրը կնքվելուց հետո է որոշակիանում հայության բնաջնջման թուրքական ծրագիրը: Երեք ամիս անց ապրիլի 11-ի շաբաթում գիշերը Թուրքիայի ներքին գործոց նախարար ոճրապարտ Թալեաթը արձակում է հայերի ցեղասպանությունն սկսելու հրամանը: Պոլսո ամբողջ հայ մտավորականությունը մի գիշերում ձերբակալվում է և աքսորվում (աքսորի ճանապարհին բոլորն էլ հահատակվում են):

Զոհրապը վազում է ամենազոր նախարարի մոտ՝ փորձելով «շարժել անոր քարացած խիղճը»: Ի բնե երկչոտ ու կյանքի վայելքներից մեղմացած գրողը իր պերճախոսությամբ ողոքում էր շարագործի սիրտը, աղաչում դիպչել ամենանուրբ լարերին, աղաչել ու պաղատել զարհուրելի մարդուն: Բայց Թալեաթը լսում էր նրան թուրքական խանդոտ բավականությամբ՝ բերանի անկյուններում հավաքած ոճրի թույնը կուլ տալով:

Արդեն հուսահատ, ինչպես պատմում են ժամանակակիցները, Զոհրապը գերմարդկային ճիգով, այնուամենայնիվ, կարողանում է «պատնեշին վրա կենալ»:

— Պեյ էֆենտի, բայց պիտի գա օր մը, որ Ձենե հաշիվ պիտի պահանջվի:

— Ո՞վ պիտի պահանջի այդ հաշիվը:

— «Ես»,— կպատասխանե Զոհրապը[1]:

Ատ ևսը ետին դատակնիքը եղավ իր մահավճռին»[2]:

Եվ այդպես էլ է: Ինչպես պատմում է նույն Սերոբ Դավթյանը (մանկության ընկերներից մեկը), Զոհրապը հասկանում էր, թե ինչ ամպեր են կուտակվում իր գլխի վերև: Մտերիմներից մեկը՝ Մարքեն Հակոբյանը, աղաչում էր անմիջապես թողնել Պոլիսը և փախչել երկրից («անագին գումար ալ իր տրամադրության ներքև դնելով»)[3]: Զոհրապը սակայն մերժում է. «Ո՞ւր փախչիմ և ինչպե՞ս, որո՞ւ թողում այս անգլուխ ու անտեր ժողովուրդը: Չէ, փախչիլ չեմ կրնար, պետք է պարտքս է մինչև վերջ պատնեշին վրա կենալ»[4]:

Ձերբակալությունից առաջ նա հանդիպել է Հրանտ Ասատուրին: «Դիմաստվերների» մեջ, որ լույս տեսավ 1921-ին, նին ընկերն ու գրչակից

---

[1] *Արևմտահայ գրողների նամակների, Գրական ժառանգություն, գիրք 6, պրակ 1, Երևան, 1972, էջ 46։*

[2] *«Սուրհանդակ», Կ. Պոլիս, 1908, թիվ 56։*

[3] *Արևմտահայ գրողների նամակներ, Երևան, 1972, էջ 52։*

[4] *Նույն տեղում։*

---

[1] *Այդ հաշիվը Թալեաթից պահանջեցին. 1921-ին Բեռլինի փողոցներից մեկում Սողոմոն Թեհլերյանը ատրճանակի կրակոցով վերջ տվեց մարդակերի կյանքին։*

[2] *Էջեր ուղեվորին մը օրագրեն, Իզմիր, 1922, էջ ԺԼ։*

[3] *Նույն տեղում, էջ ԺԲ։*

[4] *Էջեր ուղեվորին մը օրագրեն, Իզմիր, 1922, էջ ԺԲ (Սերոբ Դավթյանի հուշերից)։*

մտերիմը Զոհրապին ներկայացրել է մարդկային նկարագրի մանրամասներում:

Ինչպես գրականության մեջ,— ասում է Հ. Ասատուրը,— այդպես էլ կյանքում «Զոհրապ խանդավառ գեղապաշտ մրն էր»[1]: Չէր կարողանում անտարբեր անցնել գեղեցիկի կողքով. ամեն ինչ, որն առնչված էր մարդկային տաղանդի ցոլացումի հետ «իր պաշտամունքին առական կըլլար միշտ»: Տան մեջ նա ապրում էր վայելելով գեղեցիկի ու նորաձևության բավականությունները: Կահ կարասին՝ նրբարվեստ ու նոխ, էդգար Շահինի կտավների հարևանությամբ, գեղահյուս գորգեր, թանկարժեք ու հազվագյուտ նաշի սպասներ: «Իր գեղոնները, իր կաղամարը, իր գրիչը արժեքավոր առարկաներ էին հանախ»[2]: Սիրում էր համադամ խորտիկներ, նաշի սեղանը միշտ զարդարված էր գեղահյուս ծաղիկներով: Սիրում էր շուտ-շուտ փոխել կահույքը՝ հետևելով նորաձևությանը: Հագնվում էր բացառիկ նաշակով ու գեղեցիկ. «Իր արդուզարդի համար մեծ գումարներ կծախսեր»[3]: Երբ տեղական դերձակներից գոհ չէր լինում, դիմում էր Փարիզի վարպետներին: Գերազույն հաճույք էր զգում կնոջ և աղջկա «արդուզարդին ուղղեցույց ըլլալ»: Ժապավենի երանգները, կիսազգեստի կամ իրանազգեստի կտրվածքը նրա նաշակով կամ ցուցումներով էր համաձայնեցվում:

Գեղապաշտ տանը, կենցաղում, մարդկանց մեջ, երաժշտություն լսելիս, ամեն տեղ, նա համակ ազնվական էր: Սիրում էր հայերեն բառերի օվկիանոսը և շատ հանախ էր ձեռքն առնում Փեշտիմալճյանի «սիրելի բառագիրքը»: Հայոց լեզուն նրա գրչի տակ ազնվանում էր՝ շողում գեղեցիկ լուսարձակումներով:

1915-ի մայիսի մի առավոտ, պատմում է Հրանտ Ասատուրը, «... Օսման Պեյի պարտեզին առաջ հանդիպեցի Զոհրապին»: Այս վերջին տանջվում էր: «Իր դեմքի տխուր արտահայտությունը զարմացուց ու մտահոգեցրեց: «Իր դեմքի տխուր արտահայտությունը զարմացուց ու մտահոգեցրեց: Բարեկամս չուներ իր սովորական կորովը, իր խորխոր ձեները, իր տիպական ձայնը»[4]: Սովորություն ուներ ճաշից առաջ զբոսնելու:

— Դեռ ես բավական ճամփա ունիմ, բայց, պիտի քալեմ մինչև տուն...

Նայեցա ետևեն որքան տեղ որ աչքովս կրցա հետևիլ իրեն: Ջղուտ քայլերով ու արագ շարժումներով կհեռանար...»[5]:

Այսպես, գնում-հեռանում էր նա՝ չպատկերացնելով, որ մարդկային դաժանությունը և անգթությունը հետևում են իրեն ճակատագրական անողոքությամբ:

Մայիսի 20-ին ձերբակալվեց ու ախտորվեց: Հալեպից դուրս գալիս հուլիսի կեսերին նահատակվեց քուրդ գազանի ձեռքով:

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

---

1 Հրանտ Ասատուր, *Դիմաստվերներ*, Կ. Պոլիս, 1921, էջ 241։

2 Նույն տեղում, էջ 242։

3 Նույն տեղում։

4 Հրանտ Ասատուր, *Դիմաստվերներ*, Կ. Պոլիս, 1921, էջ 250։

5 Նույն տեղում։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱՆՁ

Ոգի՞ մ'ես դու, պատրանք, ցընորք կամ երազ,
Որ վրդովես հոգվույս հանգիստն հանապազ,
Որպես շիրմացն ի ծառաստան մի թռչուն,
Ննջեցելոց ընդմիջե միշտ Մահու քուն։—

Թե չեմ խնդրեր զրկանքներուս հատուցում,
Ակնարկս ալ զուր տեղը խնդրե մոռացում,
Ամեն եզերք՝ ինչպես նավուն թափառիկ,
Հիշեցընե միշտ կորուսյալն հայրենիք։

Որպես ոգի մ'նավորդին աչք կը փակե,
Զամեն տեսած ափունս կարծե Իթակե,
Նույնպես և ես աչացս փայլող համեն լույս,
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհվույս։—

Իրիկվան դեմ, ես ինքնիրմես խույս տալով
Վազեմ երբեմն հոն ուր յուր վերջն առնու ծով,
Անդ զարևմուտ դիտեմ հնոց մը հանգույն.
Որպես հարգանք թռչնոց դառնան յուրյանց բույն.

Այնպես և շողք վերջալուսին անդ դառնան,
Երբ ըզմայլիմ անձայն ես հայս տեսարան,
Դու երևիս, և ես հարփվույն հետին լույս
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհվույս։—

Ի գիշերին երբ մութն հաշխարհ թևածե,
Երբ շունչ հովին, երբ երգ հովվին լրռած է,
Ու երբ կուսին աղոթքներուն հեշտալուր
Ունկրն կախեն զմայլած ոգիք ծովուն լուռ,
Աչքրս տրտում արկեալ երկնից անշեջ ջահ՝
Դիտեմ զընթաց նորին հեթեր հեզասահ.
Դու գաս, ու ես ի լուսնեկին թալուկ լույս
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհվույս։—

Կամիմ երբեմն սենեկիս մեջ միայնակ
Մոռնալ ջանալ սև օրերու հիշատակ,
Ու զսպելով հիմար սրտիս բաբախյուն,
Աչքերրս գոց, թաղված ի խոր լրռություն,
Լրսեմ, հոգվույս որպես ողբույն արձագանք
Վառարանին խոնավ փայտից հեծեծանք.
Դու գաս կրկին, ու ի կարմիր բոցույն լույս՝
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհվույս։—

Արշալույսին երբ փարատին թանձր ըստվերք,
Հառավոտյան զեփյուռ ցրվեն կուսին հերք,
Ու մյուեզզինն ի սրտառուչ երգին ձայն
Հաղորթս կոչե հավատացյալս ամենայն.
Ես ի տագնապ ցավոց գիշերը ողջույն
Այնքան հսկած, կանգնիմ հոտունս դողդոջուն՝
Դու գաս նորեն և ես հայգուն առջի լույս,
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհվույս։—

Այսպես սահին պատանության խենդ ավուրք
Ու ցուրտ քարին ներքև մարին սիրո հուրք,
Իսկ դու ոհ չե՞ս գար հոն ուր մարդը անհագ
Կը տանի հետն հավատ հույս սեր և փափագ.
Ու երեք ոտք հող կը բավե այն փառաց
Ույց տիեզերքն անգամ երբեք չէ բաված.
Եկուր, եկուր ու այս աչացս հետին լույս,
Վերջին անգամ ցույց տուր պատկեր, սիրուհվույս։

<1883>

Ի ՍՐՏԱԿՏՈՒՐ ՄԱՀ ՄՏԵՐՄԻՍ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Ընկերացանք իրեն ողբով, արցունքով,
Անոր ալ մինչ ընկերացանք շիրմին քով,
Ու մենք դարձանք միայնակ։
Իզուր կարծեմք ալ գեթ յուր սուգ պահել սև,
Ոչ արտասուք, ոչ ժըպիտ կա մշտատև,
Շա՜տ, թե պահեմք հիշատակ։

Մատյա՜ն սրգո, զոր մարդ կոչե Ապագա,
Որուն ամեն էջերն կարդալ կը բաղձա,
Ես քեզ վախեմ թղթատել.
Ինձ տրված չէր բարեգուշակ լինել բնավ
Եվ ոչ իսկ այժմ, ի սրտակցիս մահուն ցավ
Ուղղել գըլուխս անընտել։

«Ո՞վ կը կարծեր, ո՜վ Տեր». հարցո՜ւմ մը ահեղ,
Զոր շարունակ կարծեմք կրկնել վերջին հեղ,
Բայց ափսոս այս է բախտ մեր.
Որ Վաղն՝ անդեն աղետներով բեղմնավոր
Դարձյալ գոչել տա մեր սրտին սրգավոր,
«Ո՜վ Տեր, և զայս ո՞վ կարծեր»։

Ո՜հ, ո՞վ կարծեր, երբ մեք ըզշուրջ նույն հասակ,
Նույն խանդն ավյուն ունեինք, նույն ըզփափագ
Ու նույն իզձեր սրտաբուխ,
Թ'էր Միսաքին արև այսքան կարճատև,
Թե հողն հանգչեր պիտի հասակ բարեձև,
Ու զիս թողուր չոր գըլուխ։

Զըմեռն ամբողջ մահճին մեջն էր անցուցեր,
Բայց գարնան հետ դարձան կենաց նոր հույսեր
Յուր խուլ ցավին դեմ անբույժ,
Եվ երբ խաբված մեք սրտաթունդ ամենքնիս
Բըժըշկության հարցընեինք ավետիս,
Մեզ յուր մահվան տրվին գույժ։

Է՜հ, թող ծաղկունք ամեն գարնան դեռափթիթ
Որք զարդ դարձան դեռ նոր գոցված դամբանիդ
Թոռմին վաղիվ, ո՛ Միսաք,
Ու ետ դառնա, դառնա անդարձ ու անհետ
Այդ կարոտյալ գարունն քեզի մահավետ,
Որ դագաղիդ ետ պըսակ։

Ո՞վ չէր լըսած լեզուն ազատ ու արի
Եվ ո՞վ ճանչցած չէր սիրտն ազնիվ ու բարի
Հայրենասեր Միսաքին,
Նա կը մեռնի ու բարեկամք կարտասվեն,
Ու մտերմաց արտոսր, գիտեք թե իրեն
Մարգարիտներ են անգին։

Դու գացեր ես արդեն ցրտին հողուն տակ.
Ես հոս չանամ առնել քեզմե օրինակ,
Քեզմե, ո՛ իմս հարազատ.
Եվ այն աղոթն զոր շիրմիդ վրա կընեմ ես,
Խնդրե հերկնից որ Հայ մայրերն, Քո մոր պես
Շատ Միսաքներ ծընին, շատ։

<1883>

ՀՐԱԺԵՇՏ

Ոգջամբ երթ նա՛վ որ ճեղքելով բուռն ալիս,
Սիրտըս կուրծքես հափշտակած կը տանիս,
Ու ծովուն վրա իբրև շարժուն մի հրաբուխ
Լանջեդ՝ փրփուր, կուրծքեդ ժայթքած հուր ու մուխ
Ահա ետին կոհակներուն լեռնադեզ
Շատոնց ի վեր անհետացար աչքերես,
Մինչդեռ ակնարկս համառ կապույտն հայդ հեղուկ
Դեռ կուղեկցի քեզի ճամփադ հեղհեղուկ։

Իզուր կանգնած ժայռին վրրա բարձրադետ
Աղաչավոր կերկարեմ ձեռք ետևեդ,
Եվ կամ իզուր դեռ կորոնեմ ուշադիր
Գեթ այն ակոսն զոր ծովուն վրա ձրգեցիր.
Կամ թե ըստվերն հրպարտ կայմիդ երկնասլաց

Ուր արծվո պես պարզես թևեր մեծաբաց,
Ու ես շունչըս զսպած իզուր ականջ տամ
Անվույդ լըսել ձայնը վերջին մի անգամ։

Դո՛ւն ալ ողջամբ գընա՛, անսիրտ մըտերիմ,
Մոռցի՛ր երգումդ, մոռցիր հավետ ըզսերն իմ,
Սեր... զի՞նչ քան զայս պարմանուհվույն է ոճիր,
Մոռցի՛ր, գոչեն, այս սերն հիմար շուտ մոռցիր,
Մոռնա ուրեմն թող սիրտդ անզոր ու փափուկ,
Մինչդեռ՝ սիրույդ հիշատակ սիրտն հիմ ծածուկ,
Սրբանըվեր է միշտ, իբրև խաղաղիկ
Դամբանի մ'վրա ծըլած դժբախտ մի ծաղիկ։
Ե՛րթ, ու անջինջ պահե ճակատդ, սիրտըդ սառ,
Այն սիրո թույնն պահե շրթանցդ անըսպառ,
Եվ անըսպառ հուրն աչերուդ խաբեբա
Հորում մոգիչ աստված մ'անշուշտ թաքուն կա,
Բայց... է՞ր տրտմիս... երբոր ցնծաս մեկնելուդ,
Իբր անձրևոտ եթերն ամռան այն կապույտ,
Երբ ծիրանի գոտին կապես մեկ կողմեն,
Ջըլլա մյուսեն նենգոտ աչերդ արտասվեն։

Գընա՛, զի դու գետակն ես միշտ խուսափող,
Ես ամայի ափունք, անշարժ քար ու հող,
Քեզ սըլանալ պարտ է ու ինձ մընալ հոս,
Երթ, գեղուհիդ իմ, երթ ուրեմն ի Կիպրոս.
Այլ սիրուհվույս կարե՞մ մաղթել ես ինչ չար—
Է՜հ, թող հավետ շողա քու աստղդ պայծառ,
Իմըս խավար պատեն ամպեր թող նըսեմ,
Դու երջանիկ լեր, թող որ ես արտասվեմ։

<1884>

ՆԱՔԿԻՎԵՆ

Սրահ ընդարձակ, պատուհաններ փակ ու գոց.
Գետինը գորգ ու բազմոց մը ցած ու լայն,
Մերկ պատին վրա շրջանակով ոսկեզօծ՝
Արաբերեն խոսքերու շարք մը միայն։

Անկյունը՝ մարդ մը, աշխարհին պահող քեն,
Վայելելով իր Նարկիլեն, և ախորժ
Զգալով այս հեծկլտուքի նվագեն,
Եվ օդին մեջ ցընցող մուխեն թույլ ու գորշ։

Եվ իսկույն քե՛զ կը հիշեմ, երբ անխբռով
Կունկընդրես միշտ հառաչանքիս և կարծես
Հաճույք կզգաս, այդ մարդուն պես, դիտելով
Մուխը սըրտիս կրակին զոր դուն կարծարծես։

<1899>

* * *

Լուսնալու դեմ գիշեր մըն է լուռ ու տխուր.
Մութ մը վճիտ, լեցուն լույսե բիծերով,
Գիշեր հստակ, համեստ իղձի մը պես, ուր
Կը գծագրվի աշխարհ՝ տարտամ գիծերով։

Այս մութը չէ այրիին քողն, այլ աղվոր
Երևնալու համար հնարված թելը նուրբ.
Ընդնշմարել միայն տրվող շղարշը՝ որ
Կը ցուցընե դեմքերն ամեն գողտր ու սուրբ։

Ես ավելի կը սիրեմ մութն այս պայծառ
Անգաղտնապահ ցորեկներու լույսերեն.
Ինչպես կընոջ համակրությունն անբարբառ
Բացե ի բաց խոստովանած իր սերեն։

<1899>

ԱՆԹԱՆՈԹԸ

Փողոցին մեջ կերթար, կարծես կը սահեր,
Հուշիկ քայլով, դանդաղ, գրեթե շփացող,
Դեմքը կազե լաչակի մեջ կը պահեր,
Պատմուճան մը ուներ հովէն ծրփացող։

Աղվո՞ր, տգե՞ղ, ի՞նչ փույթ. բավեց որ մտքես
Մարմին մը տամ ես ուզածիս պես իրեն,
Վրդովիչ հով, պլրանք մը լուռ, վերջապե՞ս
Ամեն բաներն որոնց համար կը սիրեն։

Ու տարինե՞ր սրտիս խորը չանացի
Պահել զինքը մասունքի պես, և մե՛կուն
Չըսի անոր հրապույրները կանացի
Որ գիշերներս ըրին խռոված և անքուն։

Ի՞նչպես եղավ, ո՛վ երազի ծնունդ կին,
Որ ըստուգիվ մարմին առած, խրոխտ ու վեհ,
Դեռ անցյալ օր թատրոնի մը հոծ մուտքին՝
Չը ճանչցողի մը պես անցար իմ քովեն։

<1900>

ՁՅՈՒՆԸ

Ակնախրտիղ անբրծություն մը վերեն
Երկնից վրճիտ բարձրութենեն կիջնար վար,
Վարանելով, օրորվելով, ծուլորեն,
Քալվածքին պես կնոջ մը մարմնեղ և ըստվար։

Ու փողոցին մայթին վրա կը փըռեր
Ճերմակություն իրեն քընքուշ՝ ցեխին քով.
Ոտքերու տակ կը կոխկըրտվեր, կը լռեր,
Անտրտունջ միշտ ու քիչ մըն ալ հաճույքով։

Վերեն հիմա ձյունը առատ կը մաղվեր,
Հոժարակամ թողլով եթերը կապույտ.
Անձնամատույց կինն էր ան որ կը թաղվեր
Փոսի մը մեջ ցեխի, անհոգ ու անփույթ։

<1900>

ՎԱՌԵՐԸ

Կը վառեր ան գիշեր ցորեկ, ամեն օր
Սենյակիդ մեջ։ Գետնին գորգին վրա դուն
Ընկողմանած էիր կես քուն, կես արթուն,
Սրփռած շուրջդ մարմնիդ հրապույրը բոլոր։

Ու դրոնակեն՝ լույսը կրակին կը փայլեր
Տաքցընելով մորթդ կատվի պես մըսկոտ
Եվ մութին հետ շինելով ըստվերն այն աղոտ
Որ քու մըռայլ գեղեցկությանդ կը վայլեր։

Եվ տեսնելով մարմինդ լեցուն խոստումով,
Քեզ նայող բոցը այդ լուռ կրակին
Խելքը գլխեն գացածի պես, աղվոր կին,
Կը ցատկըռտեր հոս հոն հիմար ոստումով։

<1901>

ՀԱՐՅՈՒՄ

Խոստովանե՛, Տիկին, հիմա որ անցան
Մեր մրբրկոտ սիրուն վրրդով օրերը,
Հիմա որ ա՛լ անոնց հուշքը ցիրուցան
Անհետացան տարիներուն խորերը։

Հիմա որ քեզ փոխանակ «կյա՛նքս» ըսելու,
«Տիկի՛ն», կըսեմ, որ կը խոսիմ հետդ ու առանց
Դողի կարող եմ ձայնդ անուշ լըսելու,
Հիմա որ վրադ ո՛չ կիրք կզգամ, ո՛չ նախանձ։

Հիմա որ ճիշտ երեսունդ անցուկ՝ կը կենաս,
Շրքեղ արձա՛ն, միշտ ըզմայլիչ գիծերով,
Պաշտողներու խումբ մը շուրջդ կունենաս,
Ամբարտավան կո՛ւռք, մարմարե ծիծերով։

Ըսե՛ ինծի, կարոտը հին սերերնուս
Կանցնի՞ երբեմն ներսեդ, արագ ու թեթև,
Գինովցընող պաշտումներեդ կը զարթնո՞ւս
Անցյալին մեջ զարթումով մը կարճատև։

Անցյալն անոնք են որ մենե կը փախչին,
Էջեր գրքին որ ինքնիրեն կը գոցվին,
Էջեր միշտ գողտրը, բաներ անուշ ու շնչին,
Ուրկե սիրտն ալ շարյունիր, բայց... կը խոցվի։

<1901>

ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դուն լայն ճամփեդ գընա, ա՛ղվոր,
Ես կերթամ մութ արահետես,
Երջանիկ՝ այն համոզմամբ որ
Սրտով գոնե ինծի հետ ես։

Ու անխռով կայքես նըսեմ
Աչքրս հառած շավղիդ, ո՛վ իմ
Դալուկ լույսըս, պիտի սպասեմ
Քեզի որչափ որ ես ապրիմ։

Մեկ խնդիրք մը միայն. վերջին
Ժամուս կուզեմ որ մոտս ըլլաս,
Եվ երբ ամենքն ինե փախչին,
Դու գեթ անուշ դեմքդդ ցույց տաս։

Եվ ամեն փառքի փոխարեն,
Միայն պատկերդդ հստակ ու ջինջ
Հետրս տանիմ այս աշխարհեն
Զը հիշելով ուրիշ ոչինչ։

<1901>

ՈՉ ՈՔ

Դաշնակ մըն է հոգիս լեցուն
Նվագներով շատոնց լռած՝
Որ մատիդ ծայրը դպչելուն
Կը սարսըռա, կերգե հանկարծ։

Երգեր մոռցուկ, երգերս իմ հին,
Խոր քուներնին թողածի պես,
Որ շըփելով գոց աչվընին
Կանցնին կարգով ահա դեմես։

Նախ երգերը օրորոցիս
Որոնցմով մայրըս զիս մեծցուց.
Ու խոլ երգերն իմ փողոցիս
Զոր տակավին գիտեմ բերնուց։

Վերջը, սիրո երգերը որ
Կես մը իրավ, կես մը կատակ,
Նետեցի չորս դին ամեն օր,
Ծաղկանց նըման ոտքերու տակ։

Վերջը... վե՜րջը բոլոր զվարթ
Այդ երգերուն,— դադարը մեծ,
Լըռությունը, զոր մինչև ցարդ
Քենե զատ ո՜չ ոք չէ վըրդովեր։

<1901>

ԶԱՏԿԻ ԱՌԹԻՎ

Անկյուն մ'ունիմ սրտիս մեջ ուր՝
Կառանձնանամ ատեն ատեն,
Վերհիշումներ երբոր տըխուր
Երկրեն զիս պահ մը կանջատեն

Հոն՝ կը կենամ ես ծնրադիր
Ինչպես առաջքը խորանին,
Եվ ուր միայն կը ծաղկի իր
Կես սուգին մեջ եղրևանին։

Հոդ շարված են իրարու մոտ
Մութ փոսերը իմ իղձերուս,
Հիշատակներ՝ հիմա աղոտ,
Անուններ՝ զոր չըսեր լեզուս։

Խոլ տենչանքներ, թոչնք անհուն
Զոր ձեռքովըս տվի հողին,
Մեռելներ՝ որ ուրիշներուն
Պես հարության հույսը չունին։

<1902>

ՀՍԿՈՒՄ

Քակե՛ մազիդ խուրձը ոսկի օձերու
Որ պլլվին պարանոցիդ ձյունեղեն,
Ուսիդ, մեջքիդ փաթթվելով քեզ նեղեն
Մխիդ վրա իբրև քողք մը բոցերու։

Մերկ, խրոխտ, շքե՛ղ օթոցիդ վրա պառկե՛ դուն
Սև մետաքսե գուլպաներդդ պահելով,
Երազներ հյուսե՛, քնացիր դեմս անվրդով,
Ես ըսպասեմ այցահարի պես արթուն։

Կեցի՛ր այդպես որ իմ հոգվույս մեջ տրպեմ
Ցայտքը, էջքը, թավալումը գիծերուդ,
Հիշեմ տեղվանքն հոս հոն ցրված բիծերուդ,
Ինքզինքըս անով խաբեմ խաբխըբեմ։

<1908>

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակը թևես բրոնած կը տանի.
Եվ կուրորեն կը հետևիմ ես անոր,
Փըճացող հեք իղձերուս տեղ մեկ քանի,
Մեկ քանի հույս լույս դընելով ամեն օր։

Մերթ կը քալեմ գնացքով համր ու տարտամ,
Հորձանքին հետ մերթ կը վազեմ շուտափույթ,
Կընկրզմիմ և խկույն նորեն կը ծրփամ,
Կը ծրփամ, վերն է միշտ երկինքը կապույտ։

Փախչի՞լդ ինե, իրավունքդ է, ո՛վ սերդ իմ,
Ինչպես բոլոր երազներուս ծիրունի,
Թռչուններու խուճապ՝ որուն կը ժպտիմ,
Ժպիտով մը որ լացի շատ կը նմանի։

Եվ կամքով մը հզոր սիրուս հավասար,
Ես անտրտունջ կերթամ ճամփես զարտուղի,
Հիմա գոցված գիշերով թանձր ու ըստվար,
Թանձր ու ըստվար՝ վաղորդայնով մը հզի։

<1908>

ՏԱՐԱԿՈՒՅՍ

Տանքելներուդ փրփուրովը կը մըտնես
Երերալով՝ նավու մը պես այեհերձ,
Աչքերու մեջ ցանկություններ կը գըտնես,
Ու կը հրճվիս կնկան մը պես այլամերձ։

Մատուցումի մը պես կարծես կը ծրփան
Կոհակավետ մարմնիդ բոլոր գիծերը,
Ծրփանքով մը օձագալար խոլական,
Եվ կը զմայլին ապշած տղան ու ծերը։

Ամեն այրերն հորձանքիդ մեջ կը դառնան,
Ու կը փոխվին խելոքներն ալ խենթերու,
Սուրբերն անգամ խկույն վրադ աչք կը բառնան,
Հոսանքն ես դուն սարսուռներու, տենդերու։

Ըսե՛ շիտակ, թե որ սիրեցիր քիչ մը զիս,
Ո՞վ հասուն կին, որ խոնջենքը մարմնիդ մեջ
Տարիներուն դեմը կելլես, կընդվզիս,
Ձյունածաղի՞կ արդյոք կամ հո՞ւր ես անշեջ։

<1908>

ԵԿՈՒՐ

Երբոր օր մը ըզգաս պետքը,
Ձըզված՝ շուրջիդ կյանքեն շինծու,
Երջանկության փախչող հետքը
Անցյալին մեջ փընտրելու։

Որովհետև, ո՛վ դառնություն,
Ասկից վերջը աչքիդ՝ ծարիր
Պետք է դընես և անարյուն
Շրթունքներուդ՝ քիչ մը կարմիր։

Քալած ատենդ երբոր ճամփան,
Նայվածքդ ամենքը չը թողե,
Եվ զարմացած՝ չը փըսփըսան.
«Այս ազվոր կինն արդյոք ո՞վ է»։

Երբոր ներկան՝ ցուրտ ու ցամաք
Դառնա քեզի կամաց կամաց,
Կսկիծներով լեցվի համակ
Ապագադ ալ՝ մրոայլամած,

Եվ ուրանա խակ քեզ, ո՛վ իմ,
Կյա՛նքըս, աշխարհը համորեն,
Ես անցյալն եմ հավատարիմ,
Իմ գիրկիս մեջ եկո՛ւր նորեն։

<1908>

ՆՈՎԵԼՆԵՐ

ԽՂՃՄՏԱՆՔԻ ՁԱՅՆԵՐ

ՓՈՍՏԱԼ

Ա

Հաճի Տյուրիկը, սպասուհիներու միջնորդը, տասնհինգ օր աշխատելեն վերջ միայն հաջողեցավ ձեռք ձգել կեսարացի Ղազար էֆենտիի կնոջ, Սուրբիկ հանըմին, Քատրգյուղի ամենեն հարուստ տիկիններեն մեկուն, ուզած սպասուհին։

Հաճին, պարտիզակցի մը, ինքն ալ սպասուհի, ստնտու, լվացարար, խոհարար կին եղած էր ատենով, պարագային համեմատ։ Ծառայության ամեն աստիճաններեն անցեր էր մեկիկ մեկիկ, Պոլսո հայ տուներուն, անոնց կարծեցյալ պարկեշտություններուն մեջեն հանելով իր հիմակվան անկախ դիրքը։

Այդ տուներուն բոլորին մեջ, Հաճի Տյուրիկ, որ ան ատեն դեռ Ծրուսաղեմ գացած չըլլալուն համար՝ հաճի չէր, իբրև ճշմարիտ ու կատարյալ աղախին, աղաներեն մինչև սպասավորները ճանչցեր էր մոտեն, երբոր մեծ ու պզտիկ, գրեթե առանց բացառության, քիչ շատ զինքը սղմեր սղմըտկեր էին, հոս հոն, սենյակներուն մեջ, հանըմները տունը չեղած միջոցին, սանդուխին գլուխը, դուռներուն ետին, երբեմն խոհանոցներուն անկյունները։ Շատ մը տուներու մեջ իր տիրուհիներուն նախանձը շարժելու չափ ընդունելություն գտած էր առանց գանգատելու։

Շատ բան տեսած էր իր անձին վրա և ավելի շատ իրեն շուրջը, իր բարակի հետաքրքիր քիթովը, հոտվըտալով ամեն ապականությունները

և սուր ականջովը՝ դոներուն ետևեն ունկնդրելով կամացուկ մը ըսված խոսքերուն։

Եփուն կնիկ մըն էր արդեն, երբոր առած պախշիշներեն և ամսականեն ավելցուցած ստակովը Ծրուսաղեմ գնաց, ով գիտե ուխտի՞ թե մեղքերուն թողություն ուզելու համար։ Վերադարձին՝ Հաճի Տյուրիկ, սպասավորությունը թողուց, ինք իր գլխուն գործի սկսավ, ծանոթ տուներու համար կին ծառաներ գտնելու ձեռք զարկավ, թելլալ կնիկ եղավ։ Իսկույն հաջողեցավ այս գործին մեջ. պատրաստաբան ու զվարճախոս կին էր. էֆենտիներուն՝ վրան բաց կատակներ կ'ըներ. հանըմներուն՝ օրվան գայթակղությունները կբերեր։ Ամենքը գոհ էին իրմե. ամեն բանի հարմար սպասուհին ինքը միայն ճարել գիտեր։ Իր տեղավորած ծառաները տարիներով կկենային գտնված տեղերնին։ Մենծ տունները, հարուստի տունները, իրեն կդիմեին. անոնք որ իր հաճախորդներն էին՝ իր անունովը կպարծենային.

— Մեր թելլալը Հաճի Տյուրիկն է։

— Մերն ալ։

Հաճին Շփիկըլին կամ Պյուռկյուին պես բան մը կ'ըլլար հայ հանըմներուն համար։

Ասոր համար էր անշուշտ, որ Սուրբիկ հանըմ իրեն լուր ղրկեց երբոր իր տանը մեջ, հին օրվան Մարիամին քով, նոր սպասուհի մը ավելցնելու որոշում տվավ ու անոր ճշտեց այն հատկությունները, որ նոր գալիք աղախինեն կպահանջվեին։

— Ըռնտիկ մեկը ըլլալու է ամեն բանե առաջ. հո՛գ չէ թե որ սկիզբը ձեռքեն գործ չգա. հոս շուտով խզմեթը կսորվի. արդեն մեծ բան մըն ալ չունի ընելիք. տղուս՝ Օննիկին սենյակը պիտի շտկե, զգեստները մաքրե. սա ալ ըսեմ, որ աղջիկ զավակ չեմ ուզեր տանս մեջ։

Եվ վախնալով, որ գալիք սպասուհին Օննիկին սենյակը շտկելու, զգեստները մաքրելու սահմանելովը՝ պետք եղածեն ավելի բացահայտ կերպով իր դիտավորությունը հասկցուցած կ'ըլլա, իսկույն ավելցուց։

— Այլը երեսը բաց մեկը չեմ ուզեր հա՛, հաճի՛. դուն իմ ուզածը հասկցար, թե որ զիս գոհ ընես, ուզած թելլալշեֆդ եվելոքը կուտամ։

— Հասկցա, օղուլ։

Միջնորդը քիչեն շատ հասկցող կին էր. անմիջապես չորս դին ինկավ, հարցուց, փնտրեց, բայց գտնվածները Սուրբիկ հանըմին ուզած պայմանները լիովին չէին միացներ իրենց վրա։ Գեղեցիկ աղախիններ չէին պակսեր իր ձեռքին տակ, բայց ասոնց աչքերն ալ, երեսն ալ պետք եղածեն ավելի բացված էին ու Սուրբիկ հանըմին ծեր էրիկը՝ Ղազար

աղան գլխե հանելու չափ սատանա էին։ Հանրմին ուզածը միամիտ աղջիկ մըն էր և ասիկա Պոլսո մեջ դյուրին չեղավ գտնել։

Այն ատեն Հաճի Տյուրիկ հատուկ ճամփորդություն ըրավ. Իզմիտ, Պաղչեճիկ, Արսլանպեկ, Ատաբազար։ Վերջապես պըտտեցավ բոլոր այն գեղ տեղվանքը, որոնք սպասուհիներու արտածումը կ'ընեն. և ահա մեծ հոգնություններե վերջը, շորեքշաբթի օր մը ցորեկին, հաղթական մուտքով մը, Սուրբիկ հանըմին ներկայացուց իր գեղեն բերած սպասուհին, հազիվ տասնութը տարեկան կին մը, զոր նույն օրն իսկ միասին առեր բերեր էր Պաղչեճիկեն։

Սուրբիկ հանըմ գլխեն մինչև ոտքը զննեց նորեկը, որ դրան մոտ բարև բռնած կեցած էր. իր հագած պասմաե տձև շրջազգեստին հակառակ՝ իրոք խիստ շնորհալի գտավ զայն, քանի որ շուտով ամսականին վրա հարմարեցավ միջնորդին հետ. յոթը մեճիտ ամիսը և տարին երկու ձեռք նոր լաթ, բացի իր մեկդի նետածներեն զորս իր հոժարության համեմատ պիտի նվիրեր, եթե գոհ մնար անոր խզմեթեն։ Եվ անմիջապես սկսելու համար կոկիկ ու մաքուր շրջազգեստ մը հագցուց անոր, ճերմակ գոգնոց մը կապեց, գլխեն յազման հանեց և մազերը շտկել տվավ. այս համառոտ արդուզարդով աղախինը իր գեղեցկության բոլոր շքեղությանը մեջ երևաց։ Մեջքը բարակ չէր, բայց հասակին բարձրությանը և բարձերուն հարստությանը վայլած էր։ Զվածև, և իր գեղացի ըլլալուն հակառակ դեռ ճերմկոտիկ դեմքին վրա սև խոշոր աչքերը սովորաբար թարթիչներուն շուքին մեջ կպահվեին ու երբեմն միայն ընքվիներուն աղեղին տակ կխրախտային։ Բերանը՝ իր զմայլելի գիծերովը ու երկու դիի անկյունեն իբրև թե հատկապես վեր առնված, անդիմադրելի պչրանք մըն էր ինքնին, և մոռցնել կուտար պոկունքին անարյունությունը։

Ոչ ոք կիներուն չափ գեղեցկության ճաշակը ու հասկացողությունը ունի. գեղեցկությունը այն միակ ճշմարտությունն է, զոր կինը չի կրնար ուրանալ, նույնիսկ երբ իր թշնամիին վրա կգտնվի. շատ հեղ լսած եմ արամբի կնոջ մը վրա պատմված չարախոսություններու, բամբասանքին, իրավ կամ սուտ ամեն կերպ աղտեղությանց ամենեն տաք վայրկյանին՝ սա հայտնությունը, որուն խորին անկեղծությունը կզարմացնե զքեզ և պատմողին արդարասեր մեկը ըլլալուն համոզում գոյացնել կու տա։

— Ասոնք բոլորը իրավ են, բայց շուն կնիկը աղվոր է։

Սուրբիկ հանըմ հավնեցավ ուրեմն իր սպասուհիին, ապսպրեց, որ վրան գլուխը մաքուր պահե, աշխատությունը սահմանեց, վարքի քարքի խրատներ տվավ։

Հետո, իմանալով, որ հորմե, մորմե որբ ու նոր ամուսնացած էր Տիգրանուհին, Սուրբիկ հանըմ, որ Հիվանդանոցի խնամակալուհի էր ու իր ամուսնին պես սրբասեր ու աստվածավախ կնոջ համբավը կվայելեր, իր սովորական մեծախոսություններեն քիչ մը ջարդեց.

— Ես ծառաներս զավկի պես կնայիմ. ուրիշ տուներու մեջ անոնց հորի ջուր կխմցնեն, դուն աղեկ գիտես, հաճի՛. ես աղբյուրի ջուր կու տամ անոնց. խոհանոցին մեջ երբոր կերակուրները չօգտեն ձեզի, ինծի անպատճառ իմաց տուր. խոհարարը ծառաները զրկելու կ'ելլա, ատանկ բան չեմ սիրեր ես. սա ալ ըսեմ, որ կերակուրդ ուտելուդ պես խոհանոցին մեջ կենալու չես. էրիկմարդ ծառաներուն հետ պետք չէ որ խոսքի բռնվիս. հասկցա՞ր, աղջիկս. հիմա գնա՛, թող Մարի՛ամը գործդ ցուցնե քեզի։

Մեղր ու կաթ կվազեր բերնեն. Տիգրանուհին կատարյալ երանության մեջ զգաց ինքզինքը։

Բ

Հետևյալ առտուն կանուխ Տիգրանուհին արթնցավ։ Պատուհանեն եկող արևը ճիշտ իր անկողնին վրա կ'իյնար. կսփռվեր, իր հոլանի պարանոցին ու թևերուն սպիտակության վրա կճառագայթեր, բոլոր սենյակին մեջ ուրախություն մը կբերեր։ Երկու օրե ի վեր իր կյանքին մեջ պատահած փոփոխություններուն տակ ընդարմացած կմնար. անկողնին մեջ նստած, մտքովը ատոնց քաղվածքը կ'ըներ։

Գեղը, մորաքրոջ մը տանը մեջ ապրած էր ինքզինքը գիտնալեն ի վեր մինչև ամուսնացած օրը։ Մորը հիշատակը իր պզտիկ տարիքին մեջ շատ տարտամ կերպով մը կուգար մտքին առջև, ատեն անցնելով գույնը նետած, գիծերը եղծված հին լուսանկարի մը պես։ Հայրը բնավ ճանչցած չէր։ Այս մորաքրոջ տանը մեջ՝ կես մը աղախինի ու կես մը ազգականի պես կ'ապրեր, տատելով, ինչպես կ'ըսեր ինքը. իր ապրուստին բեռը զգալի չդարձնելու նպատակով։ Ու երջանիկ պիտի ըլլար հոդ ապրելուն, եթե մորաքրոջը երկու աղջիկները անտանելի չդարձնեին իր կյանքը։ Ի՞րն էր հանցանքը՝ եթե անոնցմե աղվոր էր ինքը։ Ապաքեն, այս աղվորությունը իր թշնամին եղած էր և անկեղծությամբ Տիգրանուհին կղղջար իր գեղեցկությանը համար։

Գեղին մեջ շատ մը տղաք իր ետևեն խնկած էին գիշեր ցորեկ, հասակին շքեղությանը, մինչև կռնակը հասնող խարտյաշ մազերուն գովեստը փսփսալով ականջն ի վար։ Ասոնց և ոչ մեկուն հավատացած էր,

բայց այս հետապնդումները՝ հանդարտ ջուրի մը մեջ նետված մանր քարերու պես, իր հանգիստը վրդովեր էին։ Մորաքրոջը աղջիկները իր վրա ամեն տեսակ չարախոսություններ տարածելու մեջ առաջիններեն էին։ Ահա այդ միջոցին էր, որ երիտասարդ բանվոր մը, իր օրական ապրուստը ճարելու հազիվհազ կարող մեկը, զինքը ամուսնության ուզելու ելեր էր։ Տիգրանուհին տասնութը տարու էր հիմա, ինչ որ գեղերու մեջ աղջիկներուն համար շատ առաջ գացած տարիք մըն է. հետո, իր մորաքրոջ տունեն ելլելու ստուգությունը կար, մորաքույրն ալ, զինքը ճամփելու փափագին մեջ, սիրով ընդուներ էր այս առաջարկությունը։ Եվ օրին մեկը հարս գացած էր տան մը մեջ, ուր իեծեն զատ անոր ծնողքը կային։ Մեծ բան մը չհասկցավ այս ամուսնութենեն. կարգվելեն ութ օր վերջը էրիկը լեռ գնաց իր գործին, ածուխ շինելու, ու ամիս մը վերջը օր մը միայն դարձավ կնոջը քով, հետևյալ օրը նորեն իր լեռը երթալու, աներևութանալու համար։ Հարսը հոս ալ կ'աշխատեր օրն ի բուն ու իր կյանքը, բևեռային օրերուն պես, երկարատև խավարի մը կնմաներ զոր ոչ մեկ լույսի ճառագայթ կուգա վայրկյան մը գեթ լուսավորել, ուրախացնել։

Հանկարծ օրին մեկն ալ իր էրիկը տուն բերին ոտքը կտրած, ամիսներով անգործության դատապարտված. ասիկա լրումը եղավ։ Ա՜հ, թե որ գոնե զավակ մը բերած ըլլար, հիմա ստնտվության կ'երթար Պոլիս, ստակ կվաստկեր ու տուն մը կրնար դնել, բայց այդ ալ չկար ու ասիկա՝ իր կեսուրը ու կեսրայրը հանցանքի մը պես կզարնեին իր երեսին։

Հաճի Տյուրիկ ճիշտ այդ ժամուն հասավ զինքը միասին Պոլիս տանելու համար։ Էրիկն ալ, մորաքույրն ալ, որ մոր տեղ կ'անցներ, հոժարեր էին ասոր. Տիգրանուհին ազատագրության պես բան մը կտեսներ հոդ։ Թելլալը՝ անոր ապագա հանրմին փառաբանությունը բերնեն չէր ձգեր։ Հարուստ մարդիկ, վերկիլի հանրմ, կաղանդին, ծնունդին, զատկին պախշիշ, կերուխումը առատ, աշխատությունը թեթև. սպասուհիի մը համար, ասկե ավելի ցանկալի տեղ չէր կրնար ըլլալ։

— Աղջի՛, օղո՛ւլ, չգտնված տուն է,— կ'ըսեր Հաճի Տյուրիկ։

Ա՜յնքան որ մորաքույրը պահ մը կմտածեր իր աղջիկներեն մեկը ղրկել Տիգրանուհիին տեղը։ Վերջապես որոշումը տվեր էին, և հետևյալ առտուն, դեռ չլուսցած, գիշերվան մութուն մեջ կառքը երկու կիները Պաղչեճիկեն իջեցուցեր, ծովեզերքը բերեր ձգեր էր, ճիշտ երբ արշալույսը կծագեր։

Տիգրանուհին հիմա այս մութեն դեպի լույս ուղևորությունը, ժամանումը միտքը կբերեր, բարի գուշակ մը կհամարեր իր կյանքին համար։ Իսկույն զմայլեր էր Իզմիրի ծովածոցին վրա, որ այգուն սրսկած

գեղին ոսկիի ցոլացումներեն, անշարժ կտարածվեր, կանուխ արթնալ շտապող ագռավ ու ծույլ կնկան մը պես։ Մինչև այդ տարիքը մուտանց չէր տեսեր ծովը ու այս պահուս, գեղին եռաթի խոշոր նավակի մեջ տեղավորված, իր պզտիկ պողչան քովիկը, այդ կապույտ տարածության վրա սահելուն կ'զբոսնուր ու անոր վրա պատմված ահավոր պատմություններուն չէր հավատար։ Իզմիր հասնելուն՝ հազիվ ատեն ունեցեր էին շոգեկառքը մտնել և իսկույն կայարանին աղմուկեն ու թոհուբոհեն զատվելով խոլ արշավ մը սկսեր էր. անդուլ, անդադար, ժամերով վագք մը, քերելով ծովեզերքը ձախեն, ու աջեն՝ սուրալով մութ մանիշակագույն հողերու մեջեն, որ մինչև Հերեքե այդ տեղի ցամաքը կկազմեն։ Հոս հոն, տեղ տեղ, կկենային ու Տիգրանուհին կկարծեր, որ հոգնություն առնելու համար էր ասիկա. ոմանք կձգեին շոգեկառքը, ոմանք նոր կմտնեին, և անմիջապես ճամփա կ'իյնային. հիմարական խոյացումը կսկսեր դեպի Պոլիս։ Ու կհիշեր վերջապես հասնելնին Հայտար Փաշա, Պոլիսը, Փերան զորս Հաճի Տյուրիկ մատովը իրեն ցուցուց հեռվեն և ասդին՝ Քասրգյուղ, իրենց գալիք տեղը, մաքուր փողոցներով, գեղեցիկ տուներով շինված քաղաքը, որուն վրա հիացավ։ Կայարանին մեջ կվախնար, որ բազմության մեջ չկորսվի. թևին տակի պզտիկ պողչան ուժով մը կսեղմեր, իր շփոթությանը մեջ մոռնալու վախով։ Հաճի Տյուրիկը քովն էր սակայն, ճարպիկ ու վարպետ առաջնորդ, որ ամեն դժվարությանց մեջ կքաշեր, կհաներ զինքը, մինչև որ հո՛ս, այս հարուստ տանը մեջ բերավ ու հանձնեց զինքը։ Հաճի Տյուրիկ պահապան ու զբաղավոր հրեշտակի մը մարմնացումն էր իր աչքին, որ Տիգրանուհին սրտին խորեն շնորհակալ կ'ըլլար անոր այս վայրկյանիս։

Եվ այս տունը՝ իր հարուստի բարբառող կահավորումին մեջ. երեք ծառա, որոնք իրենց աշխատության մեքենական ճշտությամբը զարմացուցեր էին զինքը. ծեր Մարիամը, որ ինչ ընելիքը պիտի սորվեցներ հոս տեղ. և մանավանդ անուշ լեզու հանրմ մը։ Միայն իրիկունը աղային լուրջ ու խոժոռ դեմքեն վախցավ քիչ մը. հետո անոր տղան, երիտասարդ մը, մարմնեղ, արյունոտ անձ մը. հորը ձևը, հորը լրջությունը։

Այս ամենը կարգով ամփոփեց շարեց մտքին մեջ ու խորունկ գոհունակություն մը զգաց. հետո, ցատկեց տեղեն շուտով, հագվեցավ, մազերը սանտրեց, պատեն կախված հայելիի մեծկակ կտորի մը մեջ նայեցավ. այն ատեն, առջի անգամ ըլլալով ուշադրությամբ դիտեց իր դեմքը, աղվոր ըլալուն հաճույքը զգաց ու վար իջավ։

Սուրբիկ հանրմին աղվոր պեսլեմեն ամենուն բերանն էր գեղին մեջ։ Աղաներն ալ, հանրմներն ալ Սուրբիկ հանրմը կշնորհավորեին։

Պզտիկ ու անգիտակից պշրանքով կհագվեր անիկա, իր հանրմին պատվերին համեմատ, ճերմակ մաքուր գոգնոց կապած առջին։ Իրիկունները, աշխատությունները լմննալեն ետքը, ամենեն վերի հարկը իր փոքրիկ սենյակը կ'երթար, պատուհանին առջև կնստեր, շոգենավեն եկողները դիտելու համար, մինչև որ վարեն կանչեին զինքը։

Տանը մեջ կ'սկսեր վարժվիլ. իր առած ամսականը ամբողջությամբը գեղ կղրկեր, էրկանը ձեռքը, ու գոհ էր այս կյանքեն։ Միայն երբեմն խուլ անհանգստությունը ուներ վտանգի մը զոր չէր տեսներ, ճիշտ ինչպես սենյակի մը մեջ ինքնիրենը նստած մեկը, նույնիսկ աչքը գոց պահուն, կ'զգա ուրիշի մը ներկայությունը, աչքը դեռ չբացած։

Այս վտանգը ավելի օդին մեջն էր, քան թե շոշափելի բան մը։ Չէր գիտեր հաստատ կերպով, թե ի՞նչ էր իրեն սպառնացող բանը, բայց զգույշ կենալու պետքը կ'զգար։

Այս Պոլսո մարդիկը, իրենց բոլոր քաղաքավար վարմունքին հակառակ, կնկան նայելու ձևեր մը ունեին, որ համբուրելու պես կդպչեր իր երեսին և իր նոր հարսի, գրեթե կույսի ամչկոտությունը կվիրավորեր ամեն վայրկյան։ Միմիայն իր կնոջական բնազդովը կ'զգար լուռ իզձերու հովը, որ իր շուրջը կ'ելլեր, կբարձրանար, երբոր էրիկմարդոց առջև գտնվեր, անուշ բերած կամ ջուր տված միջոցին։ Եվ, դեպի դուռ գարձած՝ սենյակեն դուրս ելլելուն, ամեն աչքերը իր վրա էին, իր հաղթ ու գեղեցկաշեն մարմնին վրա, որուն լեցուն գիծերը, իր քալվածքին համեմատ հազիվ թե նշմարելի շարժումով մը կխաղային։ Մինչև անգամ իր հագուստը ու կապուստը, շինականի և սպասուհիի պարզությամբ, և թերևս ատոր համար հրապուրիչ բան մը ուներ։

Այս ձգողության՝ Ղազար աղային տղան չդիմացավ երկար ատեն։

Մարմնեղ ու տարփասեր երիտասարդ մըն էր, հորը պես իր բոլոր իզձերը թաքուն պահելու սորված ու, ատոր համար, ա՛լ ավելի ինքնզինքը զսպելու անկարող, երբոր դիպվածով մինակ մնար սպասուհիին հետ։

Իր ծանր գլուխ տղու համբավին հակառակ, շուտով սկսավ կատակներ ընել Տիգրանուհիին հետ, փորձի ենթարկելով զայն, ջանալով հասկնալ դիմացինին ընդդիմության ուժը։ Երբեմն, իբրև թե անզգուշությամբ, անոր մարմնին կդպեր, ձեռքը բռնել կ'ուզեր։ Այն ատեն, Տիգրանուհին հասկցավ անոր միտքը ու ետ քաշվեցավ, առանց խուճապի, այն վախկոտներուն պես, որոնք ծանր-ծանր քալելով կնահանջեն, շինծու քաջությամբ և անփութությամբ մը ծածկելով իրենց ներսիդիի դողը, դիմացինին հարձակումը չփութացնելու նպատակով։

Անկե վերջը երիտասարդը բացեիբաց իր պահանջումները պարզեց անոր, այնքան ավելի բռնանալով, որքան վեց ամիսն ի վեր տեղ մերժումները զինքը ամեն ծայրահեղությանց տանելու աստիճանին հասցուցեր էին։ Առտու, իրիկուն, գիշեր, աշքկապուկի կամ պահվըտուքի պես բան մըն էր տանը մեջ. սենյակե սենյակ, անկյունե անկյուն հալածանք մը, որուն մեջ աղախինը, պարտավորված անոր մոտ գալու ամեն անգամ, որ խրզմեթ մը ապսպրեր իրեն, ինչ ընելիքը չէր գիտեր։

Վերջապես, հուսահատած, օրին մեկը հանրմին գնաց ամեն բան խոստովանելու։ Սուրբ ու առաքինի կին էր իր հանրմը, որուն գովեստը կ'ըներ քարոզիչ սրբազանը շատ անգամ եկեղեցվո բեմեն։ Ու իրեն պաշտպան մը գտնելու առաջադրությամբ, ցորեկ մը իր հանրմին հետ մինակ մնացած մեկ ատենին, վարանելով, կարմրելով ամեն բան հասկրցուց անոր։

Սուրբիկ հանրմ զարմացավ, չհավատաց նախ ասանկ բանի մը գոյությանը, թերևս Տիգրանուհին սխալած էր։ Հետո ըսավ, որ իրիկունը իր տղուն հետ պիտի խոսեր, բայց ավելցուց ժպտելով, որ այս բոլոր պատահածին հանցանքը Տիգրանուհիին գեղեցկությանն էր։

— Աղեկ սիրտ ունի տղաս, բայց էրիկմարդ է, գուն ալ այնքան աղվոր ես, որ չեմ զարմանար զքեզ սիրելուն։ Մարդ քեզի չի կրնալ դիմանալ։

Հաճի Տյուրիկ, որուն Տիգրանուհին հայտնած էր իր վիճակը, խնդաց իր վրան։

— Օղո՛ւլ,— ըսավ անոր,— էֆենտիդ տղան կսիրե կոր քեզի, ա՛լ ի՞նչ կ'ուզես։

Տիգրանուհին քիչ մը ատեն ալ շարունակեց պաշտպանել ինքզինքը անոր ձեռնարկություններուն դեմ, բայց կամաց-կամաց վարժվեցավ սիրո խոսքեր լսելու անկե։ Հանրմը այդ միջոցին շատ-շատ պարգև կուտար իրեն. ամսականին մոտ գումար մըն ալ ասանկով կ'առներ։ Տիգրանուհին կխոստովաներ ինքնիրենը, որ ասիկա միմիայն իր աշխատությանը համար չէր։ Հետո, բոլոր այս հետապնդումներուն, հալածանքներուն մեջ իր արյունն ալ կ'եռար, դող կ'ելլեր ու կսկսեր ինքն ալ փոխադարձ հաճույք մը զգալ այդ ամենեն։ Փախչիլ կձևացներ, բայց կձևացներ միայն ու կժպտեր։

Գիշեր մը Տիգրանուհին իր սենյակին մեջ գտավ իր երիտասարդ էֆենտին, պոռալ ուզեց, բայց վախցավ ձայն հանելու, աղաչեց.

— Ոտքդ պագնեմ, էֆենտիս, մեղք եմ։

Բայց էֆենտին կորովի էր և իր ուժին տակ զսպեց զինքը։

— Հանըմս, հանըմս ի՞նչ պիտի ըսե,— կ'ըսեր անիկա դողդղալով։

— Խե՜նթ,— պատասխանեց երիտասարդը անոր,— մայրս ինծի ըսավ, որ սենյակդ ես ու եկա քեզ գտա. մորմես բնավ մի՛ վախնար։

Ետ-ետ երթալով կինը պատին կոթնած էր, ալ զինքը գրկող պողպատե բազուկներուն մեջ անշարժ մնացած. հոս՝ դիմադրության ուժը կպակեր. գլուխը պատին դարձուցած ըլլալով, իր պարանոցին վրա կ'զգար համբույրներու կիզումը, ու Տիգրանուհին, անձնատուր ըլլալու մոտ ու անձնատուր ըլլալե առաջ իր արդարացումը կփնտրեր հիմա, մտածելով, որ ձեռքեն եկածը ըրեր էր ինքզինքը պաշտպանելու համար. ու հանցանքը իրը չէր՝ եթե չէր հաջողեր։ Անձնասպաններ կան, որոնք վերջին պահուն զղջալով հանդերձ, չեն կրնար իրենց որոշումեն ետ կենալ և տող մը գիրով իրենց մահը կբացատրեն, կ'արդարացնեն. Տիգրանուհիին ըրածն ալ ատ էր։

Դ

Երկու տարի տևեց այս կյանքը. ուզված աղախինն էր անիկա, որ էֆենտիին տղան Փերա, գեղ տեղվանք երթալեն վազ բերած էր։ Սուրբիկ հանըմ հարսի մը պես հիմա կհագվեցներ զայն, ու եկողին գացողին անոր գովեստը ընելե չէր դադրեր։

Օրին մեկը, սակայն, Տիգրանուհին հիվանդացավ. գլուխը կդառնար, սիրտը կխառնվեր. այս անհանգստությունը շարունակեց քանի մը օր, բայց սպասուհին վախեն բան մը չըսավ, բերանը չբացավ մեկու մը. քիչ մը ատեն անցավ ու ծոցվորության նշանները երթալով շեշտվեցան։ Տիգրանուհին շվարած էր, ինչ ըսելիքը, ինչ ընելիքը չէր գիտեր։ Մյուս ծառաները կ'սկսեին քիթերնուն տակեն խնդալ, կատակներ ընել, շարշարել զինքը։ Այդ միջոցին երիտասարդ էֆենտին իր մոտը չէր գար, ու տանը մեջ երեսը չէր նայեր։ Հանկարծ օր մըն ալ Սուրբիկ հանըմ զինքը ուշադրությամբ դիտեց, նայվածքով մը, որ կրակե պատմուճանի մը պես սպասուհիին գլխեն մինչև ոտքը շրջապատեց։

— Մո՜տ եկու, Տիգրանուհի,— ըսավ անոր բիրտ ձայնով մը։ Եվ տեսնելով անոր վարանիլը.

— Սա՜նկ, ավելի՛ մոտ։

Մոտենն՝ հզությունը ակներև էր. շատ մը կիներու պես Տիգրանուհին տգեղցեր էր. երեսին մորթը թուլցեր, կախվեր էր, փորը անշնորհ կերպով դուրս կցցվեր ու ամեն սիրտը զարնելուն՝ չափազանց մեծցած կուրծքին հարույցքը աչքի կզարներ իսկույն։

Այն ատեն բարկությենեն Սուրբիկ հանըմին խելքը գլխեն գնաց։

— Փոստա՜լ,— պոռաց անոր երեսն ի վեր,— փոստա՜լ, տունս անպատվեցիր, թե՛զ ճեհեճեմ եղի՛ր։

Մարիամ վեր վազեց հանըմին ձայնը լսելով։

— Հաճի Տյուրիկ կանչեցեք շուտ, սա շունը առնե տանի՛,— կպոռար հանըմը։

Երկու ժամ ետքը թելլալը գտան բերին ու բերանը փրփրելով Սուրբիկ հանըմ իր զայրույթը դուրս թափեց։

Կեղծավորությունը անանկ բան մըն է, որ երբեմն ու վերջվերջը անկեղծության հետ կշփոթվի և անկե չի տարբերիր, ինչպես որ սուխոսողներ կան, որոնք իրենց սուտին կհավատան։

Ասանկ ալ Սուրբիկ հանըմին բարկությունը շինծու բան մը չէր, անկեղծ էր. երբեք կարող չէր հիմա մտքեն անցընել, որ իր գիտությամբը, իր կամքովը, իր կարգադրությունովը ամեն բան եղած կատարված էր։ Իր բերնին մեջ ամեն վայրկյան հեղհեղվող պատիվ, պարկեշտություն բառերուն վարժությամբը՝ ցավագարի մը պես կպոռար, աղախինը, Հաճի Տյուրիկը ու բոլոր աշխարհը հանցավոր գտնելու կ'ելլեր։

— Հիմա՛, հիմա՛, փոստալը թող կորսվի երթա, վայրկյան մը չեմ ուզեր տունիս մեջ։

Այս եղավ իր վերջին խոսքը։

Թելլալը Տիգրանուհիին սենյակը ելավ, մահվան դողերու մեջ գտավ զայն. սաստիկ ջերմ եկած էր վրան, երեսները կարմրեր էին, մինչդեռ ակռաները իրարու կզարնվեին։

Միջնորդ կինը գթաց անոր. բան մը հարցնելու պետք չուներ. անցած դարձածը գիտեր. միայն հարցում մը.

— Քանի՞ ամսու ես, աղջի՛։

— Չեմ գիտեր,— մրմնջաց մյուսը։

Վար իջավ հանըմին քով, բայց անիկա նորեն սկսեր էր ձայնը բարձրացնել ու ջանքեր կ'ըներ իր զայրույթը ավելցնելու համար. շարունակ կհիշեր ասանկ աղքատ կին մը իբր սպասուհի իր տունը ընդունելով գործած բարիքը և ասոր փոխարեն, գտած ապերախտությունը. աս ազգը ասանկ էր միշտ. աղքատները ասանկ խայտառակ արարածներ էին բոլորն ալ. ու նստած տեղեն վեշը վեր կքաշեր, իբրև թե այս տիրմին չքսվելու համար։ Եվ հանկերգի մը նման, միևնույն նախատական բառը կուգար շուրթերուն վրա, թուքի մը պես.

— Փոստա՜՛լը, փոստա՜՛լը, ով գիտե՞ ո՞ր ծառաս գլխե հաներ է։

Այն ատեն Հաճին նեղացավ ա՛լ. ձեռքերը մեջքին դրավ ամբարտավան ձևով մը.

— Ինծի նայե՛, հանըմ, շտապկն ըսե՞մ, անիկա խեղճ կնիկ ծառա մըն է, դուն քու տղուդ խոսք հասկցնելու էիր. հիմա ալ ելե՛ր ծառայի հետ տեսնվեր է կ'ըսես. ասիկա մեղք է։

— Ի՞նչ, հիմա ալ տղո՞ւս վրա մուր պիտի քսեք. իմ տղաս ծառայի վրա չի թուքներ. բոլոր գեղին աղջիկները, կնիկները իրն են։

— Քու բոլոր գեղիդ մեջ ալ Տիգրանուհիին պես աղվոր մը չկա, հանըմ. դուն եկո՛ւր իմ խոսքս մտիկ ըրե, իմ գլխես շատ տաք ու պաղ անցած է. բան մըն է, որ եղեր է. ասիկա առնել անցնելու չէ։

Բայց մյուսը կհամառեր. չէր ընդուներ, որ իր զավակը տեսնված ըլլա Տիգրանուհիին հետ։

Ու վեճը երկարեցավ. երկուստեք բիրտ բառերով նախատինքներով լեցված վեճ, որուն մեջ ստորին ու աղտոտ դերը՝ թելլալ կնկանը դերը չէր։

Սուրբիկ հանըմ ուրիշ բանի չէր բաղձար, բայց միայն գայթակղությունը ավելի չտարածված մեյ մը դուրս նետել Տիգրանուհին։

Հաճին խորամանկ էր, զգաց ասիկա և ջանաց օգուտ քաղել անկե, սպասուհիին համար քանի մը ղրուշ ձեռք ձգելով.

— Ամեն բան ստակով կ'ըլլա։

— Անոր տալուս Հիվանդանոցին կու տամ,— կ'ըսեր Սուրբիկ հանըմ, կրկնելով այն խոսքը, զոր իրենց պարտքը վճարել չուզողները, հայտնի ավազակ մը չհամարվելու համար, սովորաբար կգործածեն մեր մեջ։

Ան ատեն Հաճին բերանը բացավ։

— Ինծի նայե, ձեր տղաքներուն էյլենեին համար տունը աղվոր պեսլեմե ուզողը փարա տալեն քաշվելու չէ, հասկցա՞ր, օղուլ։ Հիվանդանոցիդ ստակ տալուդ, տղուդ ծոցվոր ձգած աղքատ աղջիկին տուր. չունիկ չունևորիկ չեք, փառք աստուծո։ Աս աղջիկը տեղ մը չի կրնար աշխատիլ, զավակ պիտի բերե, ապրուստ չունի, գեղը հիվանդ էրկանը ղրկելու ստակ չունի։

Սուրբիկ հանըմ պոռաց, հայհոյեց, սակարկեց, և վերջիվերջո քսան ոսկի տվավ, բայց այն պայմանով, որ նույն վայրկյանին Հաճին առնե տանի Տիգրանուհին։ Ժամը տասներկուքը անցեր էր։ Ղազար էֆենտին ու տղան առն դարձեր էին վերջին շոգենավով և, դիմացի սենյակը նստած, առուտուրի վրա կխոսեին. տղան հորը դեմ բարև բռնած էր գրեթե, հնազանդ ու առաքինի զավկի պարկեշտությանը մեջ։

Այս ժամուն Քաղքայուղեն Պոլիս գալու շոգենավ չկար։ Հաճին պարտավորվեցավ, աղջիկը հեռը առած, նավակ մը վարձել Ղալաթիա անցնելու համար։

Աշունի իրիկուն մըն էր, ձմեռնամուտի մոտ։ Անձրև մը կուգար միօրինակ և անընդհատ, սև քողի մեջ պարփակելով ծովն ու ցամաքը։ Նավահանգիստին մեջ շոգենավերը անշարժ հսկաներու պես կեցեր էին իրենց խաչաձև կայմերովը, կարծես թե բարև բռնած։ Ծովեն՝ Ղալաթիան, ու ավելի բարձրը՝ Փերան, իրենց անհամար լույսերը կ'սկսեին մեկիկ մեկիկ վառել։

Ու սմքած՝ այս նավակին մեջ, իր փոքրիկ պողչան թևին տակ, Տիգրանուհին, կամքե ու գիտակցութենե զուրկ, ուշադրությամբ մտիկ կ'ըներ թիերուն ծովին մեջ մխրճվելու ձայնին, և հեռուն մութին մեջ վառվող բիծերը կդիտեր, երբոր, առաջին անգամ, իր զավկին խաղալը զգաց որովայնին մեջ։

Գյուղին մեջ Ղազար աղային տանը համար գայթակղություն մը չսեպվեցավ ասիկա. թեև ճշմարտությունը քիչ շատ իմացվեցավ, բայց ամենքը ըսին, որ Տիգրանուհին ծառաներեն մեկը գլխե հանելուն համար վռնտված էր։ Սուրբիկ հանըմին բարեպաշտությանը վրա այս առիթով ավելի շատ խոսվեցավ. անոր տանը բարոյականին համբավը քիչ մըն ալ ավելցավ կարծես։ Տղուն աղջիկ տալ ուզող կիները միաբերան գովեցին մայրն ալ, զավակն ալ։

— Փոստալին մեկն էր,— կ'ըսեին սպասուհիին համար,— ասանկ տան մը խրյմեքը չգիտցավ։

Առուտուրի մեջ Ղազար աղային հետ գործ ունեցողներն ալ միևնույն կարծիքեն էին։ Ղազար աղան, Սուրբիկ հանըմը կմեղքնային, անոնց ի գործ դրած բարիքին դեմ եղած ապերախտության վրա կզարմանային շարունակ։

— Աշխարհք է աս,— կկրկնեին գլուխնին երերցնելով։

Ե

Վրայեն չորս տարի անցեր էր, երբ այս պատմությունը իմացա ես բարեկամ տունի մը մեջ, ուր Տիգրանուհին կ'աշխատեր իբրև սպասուհի։

Միշտ աղվորիկ կին մըն էր, թեև տարիքին հակասող ծանրություն մը կար դեմքին վրա։

Հղության վերջին ամիսները, տղաքերքը Հաճի Տյուրիկին տանը մեջ եղեր անցեր էր, կայտառ, խնդումերես մանչ մը ձգելով իրեն, այն պահուն, ուր անդին գեղին մեջ էրիկը թոքատապի կմեռներ։

Մեծ ցավ մը չէր զգացեր Տիգրանուհին այս չճանչցած էրկանը մահեն. բայց նորեն թիկունք մը պակսած էր իրմեն այս մահով, որչափ ալ ենթադրական բան մը ըլլար ատիկա։ Ու ավելի մեծ սիրով մը փարած էր այս զավկին, որ հայր չունենալուն համար կրկնապես իրենն էր։

Ինքը աշխատելու ստիպված ըլլալուն, իր զավակը օտար կնոջ մը հանձնելու հարկադրված էր, և օրին մեկը անոր ալ հիվանդանալուն ալ բերին։ Վազեց գնաց, բայց մանկիկին վերջին ժամուն միայն հասավ. բժիշկ, դեղ օգուտ չբրին, ոչ ալ ս. մասունքը զոր Ամենափրկիչեն բերել տվավ. թոչունի մը պես առանց տրտունջի հոգին ավանդեց անիկա իր գիրկին մեջ։

Տիգրանուհին մարդ մարդասանք չուներ. Հաճի Տյուրիկն ալ գեղն էր այդ միջոցին. ինքն իր գլխուն պարտավորվեցավ մեռելաթաղի բոլոր ընչին ու ահավոր պատրաստությունները տեսնել։ Ինքը հագվեցուց, սազեց մանկիկը, ինչպես վերջեն կպատմեր լալով։ Հետո եկեղեցի գնաց փափագ հայտնելով, որ կարելի եղածին չափ շքեղ ըլլա հուղարկավորությունը։

— Մեղք ես, կնի՛կ, ստակ չունիս,— ըսին ժամեն։

Անիկա համառեցավ, ուզածնին վճարեց, շատ մը մոմեր վառել տվավ, պնդեց, որ երկու քահանա գտնվի արարողությանը. մանավանդ չուզեց, որ ճաղի մեջ դնեն իր զավակը, վախնալով, որ հողին մեջ չմսի անիկա. սնտուկ ապսպրեց, համոզված ըլլալով, որ անոր մեջ պիտի պատսպարվի պզտիկը։

Օր մը շարունակ ասոնցմով զբաղեցավ, ամեն բան իր ձեռքովը կարգի դրավ. ժամին մեջ ինքը մինակ էր և մինչև գերեզմանատուն, գլուխը բաց, ինքը մինակ հետևեցավ դագաղին։ Հո՛ն, իր աչքին տակ, տեղավորել տվավ զայն հողին մեջ ու ետ դարձավ իր ծառայած տունը, երկու օր բացակա մնալե ետքը։

Աչքերը ուռած էին լալեն, բայց գանգատի բառ մը չելավ բերնեն. գլուխը կախած, առաջվան պես աշխատության տվավ ինքզինքը։

Անկե վերջ իր բոլոր մտմտուքը, իր բոլոր առաջադրությունները այս պզտիկ հողակույտին հատկացան։ Ամսականեն ժողված առջի ստակովը՝ գերեզմանատան մեջ պզտիկ հող մը գնեց։

— Երկու հոգինոց հող մը,— ըսավ ցած ձայնով մը թաղականներուն։

Ստակը վճարեց և թուղթը ձեռքը բռնած իսկույն գերեզմանատուն վազեց, զավկին մարմինը հոն փոխադրել տալու համար։ Քիչ ատեն վերջը, պզտիկ պատով մը շրջափակել տվավ այդ պզտիկ հողը. վերջն ալ քար մը դնել տվավ անոր վրա։ Բոլոր վանտակածը հող կծախսեր.

ամեն ատեն նոր բան մը ուներ շինելիք, ավելցնելիք, գեղեցկացնելիք այդ տեղին մեջ։

Ու մեռելոցին օրերը, քանի հատ որ մեռելոցի օր կա տարվույն մեջ, մեծ ու պզտիկ, ցնծության օրեր էին իրեն համար։ Առատ կանուխ կ'ելլեր, իր այրի կնոջ արդուզարդը կ'ըներ, լուրջ ու հանգիստավոր արդուզարդ մը, ու ճամփա կ'իյնար դեպի գերեզմանատունը. պզտիկ տապանին քով շոքած՝ երկար բարակ ու ցած ձայնով կխոսեր իր զավկին հետ, անոր մանուկի բարբառովը։ Ամեն հեղուն տերտերին օրհնել կուտար գերեզմանը, հարուստե մը ավելի առատաձեռնությամբ տալով օրհնողներուն։

Դարձին՝ երանություն մը կար անոր դեմքին վրա։

— Ո՞ւր գացեր էիր, Տիգրանուհի՛,— կհարցնեին տնեցիները, իբրև թե չգիտնային անոր ո՛ւր երթալը։

— Հանը՛մ, զավկիս գացի,— կպատասխաներ ուրախությամբ։

<տող>

ՄԵՅՐԱՆ

Ա.

Բարձրահասակ, ձաղկահեր և արյունոտ աչքերով. արծվի սպառնացող քիթ մը, որ հոնքերեն ուղիղ ու պարկեշտ գիծով մը իջած պահուն, հանկարծ կզղջա կարծես, կանգ կ'առնե, կգալարվի, կնճիթ մը ձևացնելով հոն։ Եվ ամեն սոսկումները բերելու միացնելու համար այս պատկերին վրա՝ որպեսզի համապատասխանե իր տիրոջը ահարկու հոչակին, արածադեմ մարդ մը, որուն տեղ-տեղ չբուսնող պեխն ու մորուքը երեսին աղջամղջին սեությունը կմատնեն։

Այսպես կ'երևակայեի ոճրագործը, որուն երեսը չէի տեսած դեռ և զոր պաշտպանելու համար կրկին մարդասպանության մը ամբաստանության դեմ, կ'երթայի ահա ներկայանալ Իզմիտի եղեռնական ատյանին առջև։

Հայտար Փաշային շրգեկառքը կմեկնի՝ խոյանալով իր երկաթե զույգ գիծերուն վրա. մինչև Փենտիք ոչինչ կհետաքրքրե զիս. ծանոթ վայրեր ամենքն ալ։ Հետո մշակյալ դաշտերու, շեկ ու դեղին այգեստաններու մեջ կնստիմինք. խակ անկե անգին ծովեզերքը ձեռք կ'առնենք նորեն, շարունակ ծովեզերքը այսուհետև մինչև Իզմիտ։

Դեկտեմբերի ցուրտն ու բուքը կ'ընկերանան մեզի. և քուքիկնիս, ծո-

վին կանանչ երեսը կ'ուռի շարունակ. կփշտե ամեն կողմեն, անհամար պալարներով, որոնք մի առ մի կպայթին, իրենց վերքին ճերմակ թաքրախը ցուցնելով։

Զախերնիս՝ տարածվող սարահարթներուն հետ այգիները կշարունակվին մինչև վերջը, հողին գույները կփոխվին միայն, կմթնեան, կմուգանան, շեկը մանիշակի կդառնա, սգավոր մանիշակ մը։ Աջերնիս՝ ծոցին դեմի եզերքը ի տես կու գա, տարտամ ստվեր մը նախ, հետո ցամաքը ձևացնող լեռները իրենց պատովածքներովը, հովիտներովն ու սովորաբար լերկ կողերովը որոշ և հայտնի, որոնց ստորոտը տեղ-տեղ գյուղերը կճշտվին, արածող երամակներու պես։

Առաջին անգամն է որ Իզմիտ կ'երթամ. ուղևորությունը, ծովին ու ցամաքին այլազան տեսարանները չեն զբաղեցներ զիս, ո՛չ։ Ճամփա ելլելեն ի վեր գուցե տասներորդ անգամը ըլլալով կկարդամ ոճրին մանրամասնությունները պատմող պաշտոնագիրները։ Ոչ իսկ հույսի նշույլ մը. ամենեն անլուր ոճիրը և ամենեն անհերքելի ապացույցները. երկու պայթյուն և երկու դիակ մեջտեղը. մահարեր գնդակներեն մեկը, որ ճշտիվ կպատշաճի ամբաստանյալին հրացանին. նույնիսկ իր հայտարարությունները, որոնք անհավատալի միամտությամբ ամեն բան կխոստովանին։

Եվ ասոնց ամենուն վրա պատժական օրենքի հոդվածին կտրուկ—տառական անձուկ իմաստովը— տրամադրությունը, որուն կ'ակնարկե ամբաստանիչ ատյանին տեղեկագիրը և որ այս արյունալի եղերերգության վրա կպտտի, կսավառնի, օդին մեջ կախաղան մը ձևացնելով զոր ահա աչքիս առջև կտեսնեմ։

Ի՞նչ ընելու կ'երթամ Իզմիտ։

Պաշտպանողական սովորական հնարքները աչքե կ'անցնեմ մեկիկ-մեկիկ։ Ուրացո՞ւմ, կ'զգամ որ անօգուտ է։ Հիմարությա՞ն վերագրել ոճիրը, բոլոր հարցաքննությունները կհերքեն այս ձրի ու անմիտ առարկությունը։ Պատժական հոդվածին վրա խծբծա՞նք մը, բայց մարդասպանությունը այն հանցանքներեն չէ, որոնց սահմանը վեճ ու առարկություն կրնա հարուցանել. մարդասպանությունը կոշտ, բիրտ, հայտնի բան մըն է. դիակ մը և ահա ոճիրը։ Մեղմացուցիչ պարագա՞, բայց ոճրագործը ոստիկան մըն է։ Այո՛, մոռցա ըսելու որ այս կրկին մարդասպանը Սափանճայի ոստիկանության տասնապետն է։

Կխորհիմ որ զուր տեղը իմ փաստաբանի համբավս վտանգի կ'ենթարկեմ այս անկարելի պաշտպանությունը ստանձնելով։ Շոգեկառքին բոլոր արագությամբը— մեկ ժամու մեջ երեսուն մղոնի արագությամբ— ստույգ ու անկասկած պարտության մը դեմ կվազեմ։

Կխորհիմ ինքնիրենս թե ի՞նչ պիտի ըսեն իզմիտցիները իմ անհաջողությանս վրա. ահավասիկ պոլսեցի փաստաբան մը, որ Իզմիտի մեջ չի կրնար հանցավոր մը փրկել. իրենց ծաղրող ծիծաղներուն ձայնը կլսեմ ականջիս մեջ։

— Բայց ի՞նչ կարող էի ընել։

Մտիկ չեն ըներ ինծի. կխնդան, կմարին խնդալեն։

— Ծո՜, ադ տղա՜ն, Պոլսուն ապուքաթը։

Եվ իմ տատաս, այն որ զիս մեծցուցած էր գիրկին մեջ, Հաճի Մարիամը, որ այնչափ մեծ գաղափար մը ունի իմ ճարտարությանս վրա, ի՞նչ պատասխանե ամենուն, երբ այս դատը կորսնցուցած ետ դառնամ. մինչև այս վայրկյանը ինձմով լեցված այդ պարծուկ, անծալք ու անձնվեր սի՞րտն ալ կոտրած ու պարպած պիտի վերադառնամ ուրեմըն. ես որ իր անձուկ մտքին մեջ քաջարվեստ փաստաբանի մը անհպելի արձանն եմ, պիտի ցո՞ւյց տամ իմ կավակերտ շինվածքիս բոլոր տկարությունները ու բոլոր փշրանքները։

Անդիմադրելի մարմաջ մը կ'զգամ անշշուկ ետ դառնալու, աղմկալից ամոթահարութենե մը խուսափելու համար։ Շոգեկառքը կկենա։ Իզմիտ ենք ահա. ըռնակս կբացվի. ոստիկանության պաշտոնյա մը, որ ինծի կ'սպասե քարափին վրա, պայուսակս կ'առնե կտանի. մինչդեռ ես սրտադեղիս մեջ կվարանիմ իրեն հետևելու, կկանչեն զիս. կարելի չէ՞ որ ետ դառնամ։ Հարյուրապետն է որ դիմավորելու կու գա այս անգամ, հարյուրապետը, որ իր տասնապետը փրկելու համար ջանք չի խնայեր։

Վար կ'իջնեմ ականս, կհետևիմ իրեն, գլխիկոր ու մոլորած գաղափարներով։

Ի՞նչ ընելու եկա Իզմիտ։

Բ

Բանտը՝ ուր կ'երթամ ուղղակի իմ պաշտպանյալս տեսնելու համար, կառավարության շենքին դրան աջ կողմի մասն է։

Գալուստս իմացված է ամեն կողմ. հայեր, շերքեզներ անցած ճամփուս վրա ուշադիր կդիտեն զիս, չոճուխ մը որ փրկություն բերել կխոստանա Իզմիտի մեծագույն ոճրագործին։

Գլուխները կ'երերան, չեն հավատար, նորեն կհարցնեն իրարու.

— Ապուքա՞թ։

Բանտին դրան մեջ աղմուկը կմեծնա. բոլոր բանտարկյալները մեկեն տեսնել կփափագին Պոլսեն եկող փաստաբանը. կպնգեն, կպահանջեն։ Տեղի կուտամ անձիս համար ցույց տրված այս հետաքրքրության.

ներս կմտնեմ։ Թավարծի ձորձեր հագած մարդիկ, ամեն տարիքե ու ամեն հասակե, գիս կդիտեն, ճանչցողի աչքով, ոտքիս մինչև գլուխս, և գոհ կմնան տեսքիս, չեմ գիտեր ինչո՞ւ։ Համակրությունը կշահիմ այս մարդոց. ու հարցումները կտեղան չորս կողմեն։ Ամեն ոք իր ցավը և տեղը կբերե, ամբողջ հավաքածո մը, ցուցահանդես մը, ուր պատժական Օրինագիրքը կենդանի պատկերներով կդասախոսվի։ Հասածիս չափ կպատասխանեմ, կհուսադրեմ։ Բայց իմ մարդս չեմ տեսներ դեռ. կ'երևա, որ ոտքի շղթան քակելու զբաղած են և այս պատճառով կ'ուշանա։ Նորեն կպոռան իր անունը, զոր բանտին խուլ արձագանքը կկրկնե, կ'երկարացնե, կ'երկարացնե.

— Քրանտյո՜ւք... Քրանտյո՜ւք...

Քովիններս կմպտին իմ ապշությանս վրա և կբացատրեն թե այս տարօրինակ անունը չերքեզի պարզ անուն մըն է, անոնցմե, զորս շուրջս կլսեմ ամեն վայրկյան հորմեհետե Իզմիտ ոտք կոխած եմ։

Վերջապես Քրանտյուք կ'երևա, ա՜յս մարդը, իրա՞վ, ո՞րքան հեռու այն արհավրալից դեմքեն, զոր իմ երևակայությանս մեջ գծեր էի առաջուց. այս փոքրիկ նիհար, դալկադեմ մա՞ղրը, որ կնոջ մը ոտքերը, ձեռքերը ունի և պնգլիացի աղջկան մը կապույտ աչքերը. լայն ուսեր, որոնք կնեղանան իջնելով մեջքին, զոր բարակ կաշին գոտի մը կսեղմե. զինվորական համազգեստը չի կրեր. նայվածքը անուշ ու տխուր է. դեմքը պատող հյուծախտավորի դալուկը տեսնելով, կուրծքեն բխող չոր հազը լսելով, որ իր ամեն մեկ բառը կ'ընդհատե, Քոխ վայրկյան մը չպիտի վարաներ իր ներարկումը ընելու համար այս ազնվական հիվանդին փափուկ մորթին մեջ։

Կբացատրե ինծի իր գործած կրկին մարդասպանությունը՝ ճակատագրին հավատացողի մը համակերպությամբ։

— Այս է եղեր աստուծո կամքը։

Նորեն կդիտեմ ձեռքը, հիանալու համար մատերուն նրբության, անոնց տոհմիկ երկարության վրա, չկարենալով երբեք հավատալ, որ այդ մատերեն ելլե երկու մահ միանգամայն։

Քրանտյուք մեղմությամբ կշարունակե իր խոստովանությունը, հիմա որ բանտին վերատեսչին սենյակին մեջ առանձին ենք։

— Նյուշ ավազակ մըն էր,— կ'ըսե ինծի։

— Շատ լավ, բայց մյո՞ւսը։

— Մյուսը սիալմամբ էր. ես զինքը սպաննելու դիտավորություն չունեի. ճակատագի՞րը...

— Ինչե՞ն հայտնի էր որ Նյուշ ավազակ մըն էր. և հետո, դուն զայն ձերբակալելու պաշտոն ունեիր և ոչ սպաննելու։

Քրանտյուք առարկությանս չի պատասխաներ նախ. վերջը հարցումը կ'ուղղե ինծի.

— Ի՞նչ պիտի ընեն զիս։

— Չեմ գիտեր։

— Պիտի կախե՞ն։

— Ո՛չ, ո՛չ։

— Թիապարտությա՞ն պիտի դատապարտվիմ։

— Գուցե։

— Ճեյրա՞նը ի՞նչ պիտի ըլլա։

— Ո՞վ է Ճեյրանը։

— Նյուշին կինը։

— Քեզի՞ ի՞նչ ուրիշին կինը։

Երեսս կնայի զարմացած, չկրնալով մտքին մեջ սղմեցնել իմ հանդիմանությանս անպատեհ խստությունը, կարծելով, որ իր հարցման կարևորությունը չեմ ըմբռնած թերևս։ Եվ երկու ժամ տևող մեր խոսակցության մեջ այս հարցումը կու գա տարբեր ձևերով։ Մտերմությունեիս կ'ավելնա երթալով, և այն մութ սենյակին մեջ, ուր ատեն-ատեն իր տժգունած հիվանդի ու ջղային մարդու երեսը կկենդանանա, կգունավորի, կլսեմ իր ողորմելի կյանքին բոլոր պատմությունը։ Սերը՝ լեռներու վայրենության ու սրբության մեջ. հուժկու ու կատաղի կիրքը՝ քաղքին ոամիկ, տափակ ու կանացի ցանկություններուն հանդեպ. հողի այն ահագին զանգվածներուն ու կույտերուն պես, որոնք իրենց արհամարհանքին տակ քաղաքին հարթ ցածուկ մթնորինակությունը կ'ընկճեն, կճնշեն։

Գ

Քրանտյուք Տաղստանցի մըն էր Նյուշին պես։ Քով քովի մեծցեր էին լեռներու կողերուն վրա վազվռտելով շարունակ. բայց չափահասության տարիքին՝ մահացու թշնամիներ դարձեր էին հանկարծ իրարու դեմ, աղջկան մը սիրուն համար։

Հետո գաղթականությունը սկսեր էր դեպի Թուրքիա, անհատնում աղետներով լեցուն ուղևորությունը, ուղխինահոս գետի մը հորձանքին պես իր ջուրերուն հետ թավալելով, քշելով, տանելով ամբողջ ազգի մը բեկորները, արմատախիլ անտառի մը բոլոր ծառերը՝ ոստերը ու ճյուղերը միասին։

Հոս, Իզմիտի շրջակայքը նետեր էր հոսանքը զիրենք օսմանյան հողին վրա, որ հոծարակամ կ'որդեգրե այս վտարանդի ցեղերը։ Բայց

հայրենի երդիքին հիշատակը, լեռնային ու վայրենի կյանքի վարժությունը չի կրնար ի բաց թողվիլ վայրկյանի մը մեջ։ Եթե շատեր ընդունեցան պաշտպանությունը կառավարության, որ նախախնամության մը պես կհոգար զիրենք, գտնվեցան նաև ոմանք, որ վայրի անասուններու պես իրենց թափառական ու անհանդարտ գոյությունը պահեցին, ապատակներ դարձան, իրենց արյունալի շահատակությանց արձագանքովը լեցնելով այդ կողմերը։ Նյուշ ատոնց պարագլուխներեն մեկն էր. իր անունն ու սարսափը կծանրանար Սափանճայի ամբողջ գավառակին վրա։

Քրանտյուք անդին զինվոր կգրվեր ու ոստիկանական անձնվեր ծառայության մեջ տասնապետ կ'ըլլար։ Իրեն կ'իյնային միշտ ամենեն վտանգավոր ձեռնարկությունները, ավազակները ձերբակալելով դատարաններուն հանձնելու գործը։

Խուլ պայքար մը կար այս երկու մարդոց միջև, տասնապետին ու ավազակին, ատեն մը եղբոր չափ սիրով, հիմա մահու ատելությամբ զինված։ Այս փոսը, որ կբաժներ զիրենք, հիմա անհատակ վիհ մը, որ իրենց ոտքերուն տակ կբացվեր, կնոջ մը գործ էր. ամբողջ տարիներ նախանձով, հուսահատ սիրով պեղված անդունդ, զոր այս երկուքեն մեկուն դիակը միայն կրնար գոցել այսուհետև, անել կացություն մը, որ ճակատագրային, անխուսափելի բան մը ունի և որուն երկաթե շրջանակեն մարդ ողջ չելլեր դուրս։

Երկուստեք հնարքն ու քաջությունը կ'ելլեին մրցումի, գիշերներ լուսցնելով, սպասելով հրացանը ձեռվընին, իրարու ճամփուն վրա, թավուտի մը ետին պահվըտած, երկուքն ալ գիտնալով իրենց փոխադարձ ոխն ու քենը, լուր ղրկելով իրարու թե առջի հանդիպումին պիտի սպանեն զիրար, սպառնալիքներ նետելով իրարու, մինչև որ կապարի գնդակներ փոխանակեին։

Եվ կռիվը կշարունակեր ապարդյուն, հուսահատեցուցիչ, ավելի ևս գրգռելով իրենց պրկված ջիղերը, անընդհատ արշավանքին բոլոր հոգնությունովը ծանրացնելով — եթե տեղ կար դեռ — իրենց նախնական հակառակությունը, և մտքի ցասմնակոծ հալածում մը, պաշարում մը դարձնելով իրենց համար փոխադարձ մահու այս անդուլ, անշշուկ սպառնալիքը։

Դ

Իզմիտի եղեռնադատ ատյա՞նը։

Ատյան թող ըլլա, թե որ այս բառը աղէկ կհնչե։ Բայց իրոք պզտիկ սենյակ մը, մեր տուներուն պարկեշտ սենյակներեն մեկը, ուր դատական մարմինը կբազմի աթոռներու վրա և որուն դեմ, տեղին անձկության մեջ, ամբաստանող և ամբաստանյալ, վկա և ունկնդիր իրարու քով կշարվին։

Դատավարության ժամանակ լլսված անուններ ու լեզուներ կլսվին. Տաղստանի գավառաբարբառները զորս կթարգմանեն և որոնց հառաջ բերած շփոթություններեն, հակասություններեն կջանամ օգտվիլ։

Հարցաքննութենեն վերջը ոճիրին պարագաները կճշտվին ամբաստանագրին մեջ, դատական լեզվին հակիրճ ու անզգա պարբերություններովը։

Սափանճայի ոստիկանությունը կանխապես կ'իմանա Նյուշի այն գիշեր իր գյուղը դառնալը։ Քրանտյուք քանի մը հեծյալ ոստիկաններով առտվան դեմ կհասնի, կպաշարե ավազակին ապաստանած խրճիթը։ Գաղթականներուն գյուղը հրացանի ձայնով կ'արթննա. սխալմամբ մեկը կզարնվի և այս շփոթության մեջ ավազակը պատուհանեն կցատկե, կփախչի։ Կհալածեն Նյուշը, Քրանտյուք կհաջողի մոտենալ անոր անտառին մեջ ու կ'սպաննե զայն։

Այս ընթերցանությունը, շերքեզներուն ձայները պզտիկ սենյակը մահահոտ բուրումով մը կլեցնեն, և ես կ'երևակայեմ անտառը, որ չի կրնար փախստական զավկին ապաստան ընծայել այս անգամ. երկու ոսոխներուն մենամարտը, այն՝ որուն համար ժամադիրները եղած էին. մութին մեջ կռիվ մը. Կովկասեն մինչև Իզմիտ երկարող արկածներուն, շարունակելի հոդվածներուն վերջին բառը. տասը տարվան անցյալ մը, որ մեկ երկվայրկյանով մը կկտրի, կդադրի. կիրքերու հոծություն մը, որ կաթիլ մը արյան մեջ կլուծվի, կհալի. մրցումներու գռեհիկ վախճանը, քաղաքակրթության մեջը կամ դուրսը. երկուքին մեկի վերածումը։

Եվ համբզմամբ, խղճի մտոք ահա կձեռնարկեմ պաշտպանությանս դժվարին գործին, և, այս է մտքի մը զարմանալի հեղափոխությունը, որ վստահորեն կխոսիմ հիմա և ամբաստանյալին արձակվիլը կպահանջեմ։ Ավազակին սպաննությունը՝ ընկերության համար այնքան դառն կորուստ մը չէ, և վերջապես դժբախտ տասնապետը լուրջ ընդդիմության մը դեմ զենք գործածելու հարկադրված էր անշուշտ։ Այս պահուս ինքը պիտի ըլլար սպանյալը եթե չսպաններ։ Եվ ատյանին բարյացակամ տրամադրությունները տեսնելով կքաջալերվիմ, ու ոստիկանին անշուք ու անշշուկ կյանքը կպատմեմ անոնց. անփառունակ զինվորական, որ պատերազմի դաշտը ու անոր պատիվը չի տեսներ, բայց կտեսնե ամեն ժամ մահու վտանգը. որ գիշեր չունի. հանգիստ չունի, գոյություն չունի իրեն հատուկ, և որ ամեն զրկումի վրա կու գա հոս՝

ոտքը ձեռքը շղթայակապ հանելու իր դենդակ պարտականին նեղած որ ամբաստանությունը կտկարանա, ջուրը կ'իյնա։ Սխալմամբ ի գործ դրված մյուս սպանության ամբաստանությունը ձեռք կ'առնեմ և կհայտարարեմ, որ տանապետին ուիթամսյա բանտարկությունը կքավե այդ հանցանքը։

Ե

Դուրսն ենք. ես, մյուսը, ամենքս։ Ներսը կխորհրդակցին, կվիճին, թեր ու դեմ կարծիքներ կու տան։ Քրանտյուքի գլուխը վիզին վրա կ'ելարերա, աջ ու ահյակ կծռի. պիտի փրթի՞ արդյոք. երեսս կնայի պատարված ոչխարի մը նայվածքին բաղցրությամբը. այդ նայվածքը հարցումներ ունի, որոնց չեմ կարող պատասխանել. ես ալ տանապետը դողացնող հուզումներուն մասնակից եմ, հոս այս անկյունը քաշված, ու սրտատրոփ կ'սպասեմ։

Կես ժամ. ոչինչ դեռ. ներսը ձայներ կբարձրանան ու դիս սարսափով կհամակեն։ Կ'աղաչեմ. մի՛ ընեք. որի՞-հետ կխոսիմ։

Ժամ մը, ու կշարունակեն խորհրդակցիլ. ձայները կմեղմանան, չեն լսվիր ա՛լ, համաձայնած են. ինչի՞ վրա արդյոք։

Ու հանկարծ զանգակին ձայնը, սուր, ուժգին, սարսափելի հնչյուն մը, որ շունչս կկտրե մեկեն. տանապետին տժգույն դեմքը կկարմրի. ամենքը սենյակեն ներս կխուժեն ինծմե առաջ, անհամբեր, ա՛լ չհանդուրժելով սպասել։

Ես ալ կմտնեմ փեջապետ։ Ջնստած դեռ իր աթոռին վրա՝ նախագահը կվարանի. ամբաստանյալին ներկայությունը կստուգե, գեշ նշան։

Եվ դատավճիռը կկարդա, համառոտ պիտ մը, չորս տող, որ կյանքկամ մահ կբերե հետը։ Առջի պարբերություններեն դեռ բան չեմ հասկնար. գլուխս դեպի առաջ՝ բառերը ավելի շուտ լսելու հիմարական ջանքեր կ'ընեմ, շո՛ւտ, ավելի՛ շուտ, եզրակացո՛ւր։

Անձնապաշտպանությո՛ւն։ Փրկվա՛ծ ենք։

Բանտ կդառնանք նորեն, ցնծության աղաղակներու, ողջագուրումներու մեջ։ Քրանտյուք չի խոսիր, ձեռքս կբռնե կուլա ու սենյակին պատեն վար առնելով չերքեզի դաշույն մը, ինծի կնվիրե զայն։

Ի՞նչ ընեմ ես այդ դաշույնը։ Քրանտյուքի բազմավեպ կյանքին անբաժան ընկերը, հո՛ս, տան մը, սրահի մը կամ կարասիներուն մեջ՝ անվնաս զարդ մը, խաղալիք մը պիտի ըլլա այսուհետև։ Իր դաշույնի կյանքը վերջացած է. կիները ձեռքերին պիտի առնեն զայն երբեմն, չհասկնալով անոր լեզվեն, չըմբռնելով՝ իրենց աղկաղկ ու աշխարհիկ կիրքերուն անզորությանը մեջ՝ այս երկաթի կտորին՝ սիրո հետ ունեցած մշտնջենական խնամությունը և չտեսնելով այդ անզգա գործիքին մեջ՝ սուրը ու վայրենի տոչորումներու նախանձոտ պահապանը։

<1892>

ԹԵՖԱՐԻԿ

Ա.

Արսլան Պեկեն,— Իզմիտի շրջակա լեռներուն մեջ կորսված գյուղ մը,— եկավ մեր տունը գյուղացիի շալվարով, մազերը ժողված, առանց թել մը դուրս ձգելու, սև յազմային տակ. տգեղ երևալու, հրապույր չազդելու հաստատ ու բարբարոս կամք մը։

Գլխեն մինչև ոտքը զինքը ծածկող սևերուն մեջ՝ դեմքը, ճերմկոտիկ ավշային անարյուն կազմվածքի դեմք մը, վատառողջ ապիտակություն մը, ձյունի մաքուր ցոլացում մը ուներ, ցուրտ ու պաղ։

Աշխարհիկ արդուզարդե ու վայելչութենե այս խուսափումին մեջ,— իր նոր մեռած էրկանը հիշատակին նվիրված անձնազոհություն մը,— այս երիտասարդ կինը սփոփանք մը, գոհացում մը կգտներ, և ասով՝ ինքնիրենը անդրաշխարհային կապ մը կհորիներ, կձևացներ, գերեզմանեն անդին կեցող մեկու մը, բացակա, աներևույթ էակի մը հետ, դեռևս անոր հաճելի ըլլալու, անոր նախանձոտ կամքին հպատակելու տարտամ դիտավորությամբ։ Իր հագուստին այս կամավոր անշնորհքությունը տեսակ մը պչրանք կ'ըլլար՝ պահվըտած տեղեն զինքը դիտող ամուսնին հանդեպ, իբրև թե երիտասարդ այրին ըսել ուզեր անոր.

— Քեզի համար միայն փափագած եմ գեղեցիկ ըլլալ և ոչ ուրիշի։

Տանը մեջ՝ իր սպասուհիի պարտականությանը մեջ ամփոփված կին մըն էր, սակավախոս, միավանկ բառերով միայն պատասխանելով մեզի, երբ պատասխան տալը անհրաժեշտ դառնար։

Չէր խնդար, չէր ծիծաղեր. ու գիշերը ճաշեն վերջը իսկույն կ'առանձնանար իր խուցը, մերկ, անզարդ, խստակյաց ճգնավորի մենաստանին պես, ու հոն կնստեր ժամերով, ժամերով, գյուղը ձգած զավկին համար հյուսելով անհատնում գուլպաներու դույգեր։

Բ

Օրն ի բուն կ'աշխատեր, իր գործին հետամուտ, շալվարին ծալքերուն մեջ ճարպիկությամբ դառնալով, ավելու, մաքրելու, սրբելու հատակացված՝ գործունեությամբ մը, խնամոտ ու հոգածու, բազմոցին վրա թել մը, հայելիին վրա փոշի մը չձգելու չափ։

Իր բոլոր ջանքին հակառակ, իմ սենյակս միայն չկրցավ կարգի կանոնի բերել. օրը տասն անգամ կշտկեր ու տասն անգամ կ'ավրշոկեի իր բոլոր տանտիկին խնամքին արդյունքը. զգեստներս հոս կնետեի ու ճերմակեղեններս հոն, գիրքերս ցիրուցան բազմոցին վրա կամ գետինը անկյուն մը ձգված. և այս բոլորը հարյուր անգամ իր տեղը կդրվեր, ժամ մը վերջը առջի վիճակին վերադառնալու համար։ Մրցում մը կար կարծես իր անսպառ հոգածությանը ու իմ անկարգությանս մեջ։ Չէր գանձեր, եթե երբեք իր լռիկ մնջիկ աշխատության անօգուտ բազմապատկությունը գանգատ մը չէր ինքնին իմ տված նեղությանս համար. ա՛չ, չէ՛ր գանգատեր. ընդհակառակը, ա՛լ ավելի կհամառեր հիմա, իր համբերատարությամբը ամչցնելով զիս, և ներողամտության անհունությանը մեջ ծածկելով իմ անառակ որդիի անգթությունս։

Կ'զգայի որ վայելուչ չպիտի ըլլար կատակ ընել այս երիտասարդ սպասուհիին հետ. կհարգեի իր համր գործունեությունը, իր անկեղծ ուղը, ու եղբոր մը պես կխոսեի հետը ամեն անգամ, որ բան մը հրամայել պետք ըլլար, քաղցրությամբ, գրեթե գգվանքով.

— Քուզում Մարիա՛մ։

Գ

Մարիամ կկոչեինք զինքը։ Մայրս ուրիշ անուն չէր ընդուներ սպասուհիներու համար. իր բուն անունը Աշխեն էր և այս կրկնամկրտությունը որուն կ'ենթարկվեր ահա առաջին քայլեն, օտար տուն ծառայելու սկսածին պես, իր բոլոր անցյալին, իր գոյության, իր անհատականության ուրացման պես տպավորություն մը կթողուր իր վրա։ Ոչ իսկ կհարգեին իր անունը. օտարականներ՝ անփույթ անզգա կ'արտաքսեին զինքը իր եսեն դուրս. խոսելու նոր ձևեր, հագվելու նոր տարազներ կ'առաջարկեին իրեն, ապսպրելով իրեն թողուլ ինչ որ գյուղեն բերած էր հետը, անունեն սկսելով մինչև կոշիկները։

Եվ չէր հանդուրժեր այս նվաստացման. իր այդ անունը որուն չէին հավներ պոլսեցիք, Արսլանպեկի տզոց էն հաճելի անունն էր։ Իր ձևերը, զգեստը, շալվարը գյուղին մեջ ամենեն շնորհալի կինը հանդիսացուցեր էին զինքը մինչև այն ատեն, և ահա պետք կ'ըլլար իր վայելչության բոլոր հազթանակները ոտնակոխ ընել մի առ մի, անոնց ծիծաղելի ըլլալը խոստովանիլ։

Ես՝ երբեմն Աշխեն կ'անվանեի զինքը ու կվազեր կու գար ձայնիս, ձգելով ձեռքի գործը, բոլոր տնեցիներեն զիս գտնելով իր հոգեկան վիճակին գիտակից, պարծենալով, որ իր անունը պոլսեցի պատանիի մը համար սիրուն ու հաճելի կրնար թվիլ։

Ա՛լ կսկսեինք խոսիլ իրարու հետ. ես Արսլանպեկ մեռած էրկանը, գյուղը ձգած զավկին վրա տեղեկություն կ'ուզեի։

Մեղմիվ կպատասխաներ, սիրտը բանալով. վիրավոր, խոցված սիրտ մը որ սփոփվիլ չէր ուզեր, թերևս անոր համար, որ այդ խոցոտանքը տանելի բան մը, սովորություն մը, պետք մը դարձած էր զոր ի բաց թողուլը դժվարին պիտի ըլլար, ճիշտ ինչպես սիկառի վարժվող մեկը ծխելե ետ կենալ ուզեր օր մը։

Դ

Հիմա ա՛լ ավելի փույթ կտաներ սենյակիս, որուն պարտեզին նայող պատուհաններուն վրա՝ վարեն բարձրացող վարդենին՝ փոխն ի փոխ ճերմակ ու կարմիր ծաղկե մեհեվանդներ կհորիներ։

Ցորեկները իմ բացակայությանս կու գար հոն աշխատությունը վերջանալուն, մինակուկը հյուսելու իր անավարտելի գուլպաներուն շարքը, վարդերուն սաստիկ ու հեղձուցիչ հոտին մեջ։

Բարեկամական խրատներ կուտար ինծի, հնազանդ աղախինի ու սրտի մոտ անձի խրատներ, թուղթերս գետինները ձգելուս համար։

— Մեղք ես, էֆենտիս, աչքի լուս ես թափեր։

Աչքի լո՞ւյս միայն. եթե գիտնար թե սիրտը ինչե՞ր չէր հանձնած այդ փոշոտած ճմրթված թուղթի կտորներուն. եթե գիտնար որ պատանությունը՝ իր բոլոր անմեղությունը, երիտասարդությունը՝ իր բոլոր հավատքը թափած էր հոն ու, ատոնցմե դուրս, ստոյիկ տղա մը միայն ահա կմնար, հալոցե անցած մետաղի կտոր, որ իր նախնական վիճակին բոլոր պեսպիսությունը կորսնցուցած է, միաձույլ, անխառն, անողոք բան մը դառնալու համար. եթե գիտնար... Սպասուհին ուրիշ բան չէր գիտեր բայց եթե գիշերվան վերադարձիս, այն ժամուն ուր ամենքը կհանգչին, իմ աշխատելս ճերմակ էջի մը վրա ծռած, մաքուր սպիտակ թուղթ իմ սրտիս պես՝ որ հետզհետե կմրոտեր, կսևնար, կզարդարվեր, իբրև թե սևությունը ըլլար իր շքարը։

Եվ մեղքնալով զիս, ոտքին մատներուն վրա կքալեր առտուն, աղմուկ չընելով քովս, լավ մը իջեցնելով սենյակիս վարագույրները, պատրաստ ու արհեստական գիշեր մը ձևացնելով շուրջս, զիս քիչ մը ավելի քնացած տեսնելու բաղձանքով։

Արթննալուս ուռեցած աչքերով, հանդիմանությամբ լեցուն նայվածքը կքաղցրանար, ու կվազեր խոհանոց, նախաճաշիս պատրաստությամբը, քնատությանս կորուստը դարմանելու հաշիվով։

Ե

Երբեմն ալ մորս միջամտությանը կդիմեր զիս կարգի բերելու և առողջությանս հսկելու ստիպելու համար զիս։

— Հանրմս, ըսե՛ որ գիշերները շատ չնստի, հոգին չքակե գրելով։

— Դուն ալ գուլպա կշինես,— կ'ըսեի ծիծաղելով։

— Ես զավկիս համար կ'աշխատիմ, ես մյուխթաճ եմ։

Եվ անմիջապես իր ձայնը կփոխվեր, դեմքին սովորական թախիծը կ'ավելնար Արսլանպեկ եղած զավկին հիշատակին՝ ուրկե կարծես փանորամայի ձևով, անցյալին բոլոր դառնությունը, սուգը կու գար, կարգավ, մեկ մեկու ետևե, համբիչի մը հատիկներուն պես. իր ամուսնությունը հազիվ երկու տարի տևած, էրկանը հիվանդությունը, ունեցած չունեցածնուն սպառիլը հիվանդության ծախքերուն մեջ, գյուղը մնացած զավակը և վերջապես օտարի դուռ իյնալը, ինչպես կ'ըսեր իրը. այս ամենը կտեսնվեր իր տխուր նայվածքին մեջ, կգծագրվեր իր դեմքին թափանցիկ, արտահայտող մորթին վրա, իրարու ետևե, ամբողջ կառախումբ մը ցավերու, կսկիծներու, ու խոսակցությունը կդադրեր։

Հետո դիտողություն ընելու կարգը ինծի եկավ։

— Աշխեն, ա՛լ հանե՛ սա շալվարը։

Կ'ամչնար. շրջազգեստը՝ իր մատնանիշ ընող ձևերովը, խոստովանող՝ գրեթե անպատկառ բան մը ուներ իր երկչոտ աչքին։

— Կ'ամչնամ։

Կ'զգայի որ դիմադրությունը կթուլնար, իր տգեղ երևալու որոշումը կ'իյնար հազիվ թե քանի մը շաբաթ կանգուն մնալե ետքը, և իր հաստատամիտ գյուղացիի երկարող շեշտը «կ'ամչնամ» բառին վրա կմարեր կհատներ։

Զ

Շրջազգեստը հեղաշրջում մը բերավ ու վայլեց իրեն. նախ, բնավայրը, կլիման կորսնցնող մեկը դարձավ. մեջքը շատ նեղ եկավ իրեն ու փեշը շատ լայն. առջի օրերը չկրցավ շարժիլ. մասնավոր ուշադրություն մը կ'ըներ ծիծաղելի չըլլալու համար իր քալվածքին մեջ. չփակը՝ կուրծքին շնորհալի մանրամասնությունները ի հայտ բերելուն՝ ամենը իր լանջքին ականատես եղածի տպավորությունը կթողուր իրեն։

Իր գեղեցկությանը այս ծագումին առջև ամենքս ապշեր էինք. ինքը՝ իր աղվորության համար տրված վկայությունները լսելով՝ կկարմրեր, գլուխը ծռելով մեղմիվ ուսին վրա։

Ու քիչ-քիչ ավելի վայելուչ երևալու ջանք մը սկսավ ընել, զարթում մը եկավ իր սրտին մեջ. ինքն ալ գիտեր Պոլսի հանմներուն պես գեղեցիկ ըլլալ, այուս ընել. իր գյուղացիի պարզմտությամբը սպասուհիի դիրքին մեջ ունեցած պզտիկ միջոցներով՝ պշրանքով լեցուն արդուզարդ մը ուներ հիմա, միշտ մաքուր հագված ու սանտրված էր օրվան ամեն ժամուն, մութ կապույտ յագման, դեպի ետև շրջած, հազիվ թե կկենար պզտիկ սիրուն կապով մը ու կ'սպառնար ամեն վայրկյան վար սահիլ ուսին վրա, բոլորովին արձակելով անոր առատ մազերուն կոհակները. մինչդեռ մաս մը ճակտին, մինչև աչքերուն վրա կթափեր, կամա՞ թե ակամա, ու վարը, ծոծրակին քով, նուրբ աղվամազի թավիշ մը՝ մորթին կաթի ճերմակությունը ցույց կուտար իր նոր բուսած մարգագետնի մեղկ ու կակուղ խավերուն մեջեն։

Ու հոտեր կքսվեր, անծանոթ ու բոլորովին տարբեր մեր գիտցածներեն, հազիվ թե զգալի, որոնք իր մարմնին արտաբուրումը ըլլալ կթվեին. և այս շինական յուղազօծությունը մեր քաղքենիի հոտավորումներեն ավելի խորհրդավոր ու մեղկ ու ցանկացուցիչ բան մը ուներ։

Է

Այս արդուզարդի պերճանքը ու խռովիչ ձգտումները բոլոր ինծի համար էին. իր սրտի հին վերքերը սպիացած կթվեին հիմա բոլորովին ինձմով լեցուն այդ հոգվույն մեջ։

Իր սերը դողահար և շիկնոտ բան մըն էր, անձնուրացում մը ամբողջ, կատարյալ. անձնուրացում մը որ չի բարբառիր ու քեզի համար ըրած զոհողությունները երեսիդ չի զարներ ապերախտությունդ ցույց տալու համար. ո՛չ, գրեթե գաղտնի ու ծածուկ զգացում մը, որ իր սաստկությանը համար կ'ամչնա, կպահվտի, երկրաշարժ մը, որ հրա-

բուխի բոլոր սաստկությունը ունի առանց անոր աղմկալից ու բոցավառ արտահայտությունները ունենալու։

Բան մը չէր պահանջեր իր սիրույն փոխարեն, ոչ իսկ իմ սերս. իր բոլոր ուզածը թույլտվություն մըն էր հավիտյան զիս շրջապատելու իր անհուն խանդաղատանքովը, հսկելու վրաս, թող չտալով որ հիվանդանամ, իր խնամքներեն շինված տեսակ մը խանձարուրի մեջ ամփոփելով իմ բոլոր կյանքս ու շարժումներս, որպեսզի ցավ մը կամ վիշտ մը չունենամ երբեք։

Այսպես ամիս մը տևեց. գետինը կնստեր միշտ ծունկիս վրա թափելով իր սև մազերը, ածուխի կոտրտուքի պես փայլուն, ու ձեռքերուս գգվանքին տակ կհպարտանար, կ'ուռեր, փայփայանքե ախորժող կատվի մը պես։

Հետո ձանձրացա— քսան տարու էի այն ատեն ու անկեղծ սիրո մը հարգը չէի գիտեր— այս հովվերգութենեն, այս ազախնին անձնվիրությունը անտանելի լուծի մը ձևը կ'առներ քիչ-քիչ. փախչիլը անհնար էր իր խնամող խանդաղատանքեն. հիվանդանոցի մեջ գտնվելու պես բան մը կ'զգայի ու ազատությունս վերստանալու ապարդյուն ջանքեր կ'ընեի։

Բան մը չէր հասկնար իմ խուսափումներես. իր միամտությանը մեջ կխորհեր անշուշտ որ գեշություն մը ըրած չէր ու պատճառ մը չունեի իրմե երես պահելու. ու չէր գիտեր թե ճիշտ իր սիրույն մեծությունն էր, որ զիս կճնշեր այն ամառվան պայծառ օրերուն պես որոնց ջերմության ու անդորրությանը մեջ կխեղդվիս։

Չէր գիտեր խեղճը որ մեզի խաբեբա գգվանքներ, կեղծ հրապույրներ պետք են, խենթեցնելու համար մեզ սիրով. չէր հասկնար որ իր անմեղ անձնվիրությունը ձանձրություն պատճառե. բայց գիտեր, կ'ըզգար, որ կհեռանայի իրմե ու փորձ մը փորձել կու գար, վերջին ջանք մը՝ չխզելու մեր մտերմության կապերը։

Երբ սենյակս մտավ տեսա որ իր արդուզարդին բոլոր հրապույրները շեշտած, բազմապատկած էր այն օրը՝ հաճելի երևալու համար աչքիս։ Միշտ այն գեղեցիկ կինն էր բարձրահասակ ու ճերմկոտիկ, իր երերուն քալվածքովը, որ նազանքի կնմաներ. իր եղնիկի մեծ մեծ բացված աչքերուն մեջ տրամություն կար. բայց իրմե առաջ թեֆարիկի ուժգին հոտ մը ծավալեցավ օդին մեջ, ծանրատաղտուկ հոտ մը, որ շընչառությունը կ'արգիլեր։

Ի՞նչպես եղավ որ այս հեղձուցիչ բուրումը բավական եղավ ինծի ատելի դարձնելու այս կինը. պարզ բարուրանքի՞ մը պետք ունեի արդյոք ամեն հարաբերություն դադրեցնելու համար իրեն հետ, թե ոչ հին ատենի կանանց հատուկ այս յուղազօծումը իր շնորհներուն, իր արդուզարդին բոլոր շինծու կողմը, ծիծաղելի հանգամանքը երևան հանեց. չեմ գիտեր։ Թեֆարի՞կ. ուսկի՞ց գտավ թեֆարիկը. ու ինքը բերանը չբացած դեռ, ես պոռացի հեռվեն, բարբարոս ու վայրենի ձայնով մը.

— Ի՞նչ հոտ է ատ վրադ. գնա՛ լվացվե շուտով։

Բառ մը չկրցավ պատասխանել. դրան առջին գամված մնաց, չկըրնալով առաջ գալ, երեսս նայեցավ ապշած, չըմբռնելով, որ չնչին հանցանքի մը համար այսքան անողորմ գտնվիմ իրեն դեմ. վարանոտ կեցավ հոն, պատերազմի մեջ զարնված զինվորին պես, որ վիրավորվելեն ետքը դեռ քիչ մը ատեն կանգուն կկենա ու հանկարծ գետին կփռվի։

Ը

Ի՞նչ կ'ուզեք որ ձեզի ըսեմ ասկե ավելի. կ'ուզե՞ք անպատճառ լսել վերջին բառը այս միամիտ սիրո պատմության։

Շաբաթ մը հիվանդ պառկած էր իր խուցին մեջ, սաստիկ թոքատապով մը որուն ես էի միակ պատճառը. խոհանոցին մեջ գիշեր ատեն վերեն վար լվացվեր էր, ազատելու համար թեֆարիկի կպչուն հոտեն, իմ պատվերիս համաձայն. ու տոքթորը, բարեկամ մը քան թե բժիշկ մը, կզարմանար այս գյուղացիներուն տարօրինակ սովորություններուն վրա։

— Խե՞նթ է, ի՞նչ է այս կինը. խոհանոցին մեջ կլվացվի՞ն։

Չէի պատասխաներ և բժիշկը կհամառեր իր զարմանքին մեջ, ու իմ ալ կարծիքս առնել ուզելով, կկրկներ շարունակ։

— Ի՞նչ կ'ըսես, խենթ չէ՞։

Ես, մահվան վտանգին առջև ահաբեկ՝ իր կյանքը փրկել կխորհեի միայն։

— Պիտի ազատի՞, տոքթոր։

Ութը օր ամբողջ այս տագնապին մեջ անցուցի. հետո ապաքինությունը սկսավ, դանդաղ ա՛յնքան, որ նոր հիվանդության մը կնմաներ։

Հիմա երբ երթայի սենյակը որպիսությունը հարցնելու, իր անուշ նայվածքը դեռ անհուն գորովով կզեղուր. հանդիմանությամբ չէր նայեր երեսս, ու կարծես ա՛լ ավելի գոհ էր հիմա, անձնվիրության նոր ապացույցով մը ա՛լ ավելի երախտապարտ ընելուն զիս։ Առնելիքվոր ըլլալ կ'ուզեր այս կինը իր զոհողություններուն մեծությամբը, առնելիքվոր

մը, որ քաղցր խոսքի մը փոխարեն իր բոլոր պահանջը ներելու հոժար ու պատրաստ է։

Երբեք չխոսեցավ հետս այն օրվան դեպքին վրա զոր բոլորովին մոռցած էր կարծես. բայց իր տկարությունը կ'երկարեր ու չէր վերադառնար առջի ուժը։ Հյուծում մը կար, որ կ'սպառեր զինքը մեղմիվ, տակավ առ տակավ, ու բժիշկը գլուխը կ'երերցներ, չարագուշակ նշան, առաջուց գիտցված, գուշակված աղետի մը ներկա գտնվելու ձևով. թոքատապեն վերջի անխուսափելի ցավն էր այս նորեկ հիվանդությունը որ անընդհատ ջերմով ու բարակ քրտինքով մը կ'սկսի։

Թ

Մեռավ իր գյուղին մեջ ուր ղրկեցինք զինքը բժիշկին պատվերին համաձայն. մեռավ անհուն խղճի խայթ մը թողլով սրտիս որ ահավասիկ տասը տարի վերջը կթելադրե վարանող գրիչս, ու իմ կամքիս հակառակ առաջ կմղե զայն գրով պահելու անշահասեր, աննման սիրո մը դեմ ցուցված ապերախտությանս հիշատակը։

Ու կխորհիմ որ կյանքը լեցուն է այս կերպ աղետներով. իրար չհասկնալե առաջ եկած ցավեր որ անդարմանելի կ'ըլլան. անսպառ գորովներ հո՛ս հո՛ն թափված, անօգուտ ու ավելորդ դատվելով, և փճացնելով սերը զոր պետք էին ամուր ու տևական դարձնել. նպատակեն շեղած սպառումներ, իրարու չհամապատասխանող երթևեկ մը զոհողությանց, որոնք, փոխադարձ շրջլանուն համար կվատնվին ու խղճի տառապանքներով լեցուն հիշատակներ կթողուն միայն։

<1892>

ՍԱՌԱ

Ա

Այր ու կի՞ն, թե բույր ու եղբայր, չեմ գիտեր։

Երկուքն ալ մեղրամոմի գունատությունը ունին, որուն վրա շեկ ու գռուզ մազերնին ոսկի ցոլքեր կթողու. միևնույն դիմագիծը, երեսի միևնույն ձվաձևը, երկուքին վրա ալ նուրբ ու քնքուշ բան մը։

Շոգենավին մեջ ուր իմ մոտիկս նստած են, երիտասարդը վեր դարձուցած է փալթոին մուշտակավոր օձիքը ու հորը ինկած աչքերեն՝ նայվածքը անընպատակ կթափառի պատուհանեն դուրս, ծովուն վրա։ Չի խոսիր ու գլխու շարժումներով միայն կպատասխանե իր ընկերուհիին, առանց դիտելե դադրելու ծովը, որ իր բոլոր ուշադրությունը գրաված կթվի։

Անիկա, ընդհակառակը, առողջության խրոխտ արտահայտություն մը ունի. մեղրագույն բուրդե շրջազգեստ մը հագած է, իր բնական գույնին հետ՝ միօրինակություն մը կազմելու համար կարծես։ Նիհար ու բարձրահասակ կին մըն է, բարակ մեջքով ու տարօրինակ կերպով ուռուցիկ լանջքով մը, որուն դուրս ցցված երկու սուր անկյունները՝ իրենց հիմերուն վրա թավալած զույգ մը վրաններու տպավորությունը կթողուն։

Ամբարտավան նստվածք մը ունի որ կվայլե իրեն. ոտքը ոտքին վրա, էրիկ մարդու մը պես. պահ մը կհոգնի և ոտքին դիրքը կփոխե, ու մետաքսի շրշյուն մը կու գա պատմուճանին տակեն, ներդաշնակ ու փայփայող նվագի մը պես, բեհեզե հանդերձեղեններու ձայնը։

Այսպես նստած, գիրք մը կարդալու տված է ինքզինքը. էջերը կդարձնե հետզհետե տենդոտ ձևերով մը, երբեմն ընթերցումը կ'ընդհատե, հիվանդին բառ մը ըսելու, պարբերություն մը ցուցնելու համար. ժպտելով, ծիծաղելով իր մունջ բարեկամը խնդացնելու, անոր մոռյլամած ճակատը պատող տրտմությունը փարատելու հայտնի ջանքով մը։

Այս խնամոտ հոգածությունը այդ վես ու խիզախ կնոջ քով՝ հսկա ծառի մը վրա բացված փափուկ ծաղկի մը ներգործությունը կթողու ինծի։ Կ'զմայլիմ վրանին ու նորեն կհարցնեմ ինքնիրենս.

— Ա՞յր ու կին, թե քույր և եղբայր։

Բ

Փրինքիփոյի մեջ ճանչցա զիրենք, մեծահարուստ հրեա ընտանիքի մըն էին։ Էրիկը իր հորեղբորորդին էր ու անոր հիվանդագին վիճակը գիտնալով Սառա՝ ամուսնացեր էր հետը. երբեք ասիկա արգելք մը չէր նկատած իրենց ամուսնությանը։ Ի՞նչ փույթ, կրնային մեռնիլ. օր մը չէ նէ օր մը պիտի զատվեին աշխարհես. կ'արժեր հաշվի դնել ասիկա։ Սպանյոլի տաք արյունը կխաղար իր երակներուն մեջ. ու սիրո մեջ ալ նորեն հրեա շահախնդրի հանդուգն իմաստասիրությունն էր, որ ժառանգությամբ փոխանցվեր ու մտեր էր այս գեղեցիկ կնոջ հոգվույն մեջ։

Կարգվեր ու երջանիկ եղեր էին. բայց երթալով ա՛լ ավելի սաստկացեր էր այն մաշող հիվանդությունը, որ իր երիտասարդ ամուսինը կհատցներ։

— Ենայի՛ Էրկանդ,— ըսեր էին իրեն։

Իր ախտավարակ խառնվածքը չկրցավ երբեք հանդուրժել այս պատվերին. արտաքին ցուրտ ու անտարբեր երևույթին հակառակն էր ներսը ու երկու տարվան մեջ զիրենք այրող հուրը ճշմարիտ ավերումներ գործեր էր Էրկանը վիճակին վրա. օդափոխութենե՝ եթե ոչ բժշկություն՝ գեթ բարվոքում մը կ'ակնկալեին։ Ու հիվանդապահի մը պես կ'ընկերանար ահա իր ամուսնին, ամբողջ խնամքի, գուրգուրանքի մթնոլորտի մը մեջ պահելով զայն, ճիշտ ինչպես կանխահաս ծնունդով աշխարհ եկող երեխաները՝ արհեստական գաղջ մթնոլորտի մը մեջ կմեծցնեն։

Բայց փոքրիկ բարելավություն մը ամեն խոհեմություն մոռցընել կու տար իրենց ու նորեն անուղղա շռայլի մը վարքությամբ կվատնեին այս չնչին դրամագլուխը։ Հետո, զղջումը կու գար և հիվանդը վերստին կազդուրելու անդուլ աշխատությունը։

Աղեկ բարեկամ եղանք ամուսնին հետ ու շատ հեղ կ'երթայի իրենց տունը զոր Փլեդանայի կողմը ընտրած էին, հյուսիսեն փախչելով։ Պատուհանին քով իր լայն թիկնաթոռին մեջ ընկողմանած հիվանդին աչքը դուրսն էր. ի՞նչ կխորհեր արդյոք. կնոջը երեսը չնայելու տարտամ դիտավորություն մը կգուշակեի. դժգո՞հ էր անկե. անոր վրդովիչ ներկայությամբը՝ չէ՞ր նմաներ քիչ մը այն սնանկ խաղամոլին, որ ձեռքը գրպանը կդեգերի հիմա, ուրիշներուն ձգելով սեղանը, որուն ատենով բախտավոր գահերեցն էր։

Այո՛, ուրիշներուն պիտի թողուր այս կինը, իր սպասիչ հրապույրներովը, որ հիմա տարտամ կերպով մը կհիշեցներ ինծի այն հոյակապ ապարանքներեն մեկը, որուն տերը մեկնելու հարկադրված՝ կանխահոգ հեռատեսությամբ ինքը մեջը եղած ատենեն պիտակ մը փակցնե սա բառերով.

ԾԱԽՈՂԻ ՏՈՒՆ

Գ

Իր բազմաթիվ սիրողներուն մեջ ամենեն վեհերտը ես էի. համարձակները կային, ձեռներեցները, քծնողները, պահանջողները, ամբողջ հավաքածո մը, տեսակ մը սիրահարներու թանգարան։ Ինծի՝ վերջապահին մեջ ամենքն անկյուն մը միայն տրված էր. ոչ մեկուն համար հաշվի առնվելիք մրցակից մըն էի. ոչինչ ունեի Սառայի պես արտակարգ կնոջ մը առջև ընորհ գտնելու համար. իմ՝ աշխարհի որդոգած իմաստասերի խոկումներս անշուշտ իր ջիղերուն կդպչին ու անկապ խոսքերս, որոնք ցիր ու ցան մտածումներուս ցոլքերն էին, շահեկան բան մը չէին կրնար ըլլալ իրեն համար։

Անդին՝ իր շուրջը մարդիկ կային որ նրբամտության հեղեղներ կթափեին. հանճարեղ բառերով, անակնկալ պատրաստաբանություններով կխնդացնեին իր անտարբեր դիցուհիի դեմքը։ Ամենուն կ'ըսեր միշտ.

— Էրիկս հիվանդ է ու սիրտ չունիմ։

Ասով իմ սրտիս ա՛լ ավելի կմոտենար, վասն զի ես ալ կսիրեի այս հիվանդը։ Բանաստեղծի ու արվեստագետի խառնուրդ մը կար այս մարդուն վրա և ազնվական բան մը, որ համարում ու պատկառանք կ'ազդեր ինծի։ Եվ տեսնելով երիտասարդ կինը՝ հավատարիմ իր սիրույն ու անձնվիրությանը մեջ, իմ սերս ալ պարզապես հիացումի կփոխվեր ու անմոռուն կպաշտեի զինքը անմատչելի ու անհյութ արարածի մը պես։ Գոհ էի երես չտալուն համար զինքը շրջապատող մարդոց, որոնք անկարեկից կմտնեին այս տունը, իրենց փողկապին հանգույցը, շապիկին անբիծ սպիտակությունը ցուցնելով։

Սառա առաքինի կին մըն էր, աշխարհային երանութենեն իր արդար բաժինը առած ու վայելած կին մը՝ որ իր իրավունքեն ավելի չուզեր և գիտե իր սրտին ու իր մարմնին իշխել։

Այսպեսով իր բարոյական նկարագիրը մեծնալուն հետ՝ իմ պաշտումս ալ կ'ավելնար իր անձին համար. իր քալվածքը կճանչնայի ոտնաձայնեն. իր թաշկինակը կզանազանեի ծավալած հոտեն. իր փոքրիկ սովորությունները, բմահաճույքները զոց գիտեի վաղեմի բարեկամի մը պես։

Ու արգահատանքս հիվանդեն ավելի առողջին կ'երթար. մեղքցվելիքը այս մանկամարդ կինն էր, որ իր անսպառ գորովի գանձերը անտես թաղելու ու իր երիտասարդի իղձերը ու դողերը զսպելու արիությունը ցույց կու տար։

Դ

Հիվանդին վիճակը հետզհետե կծանրանար ու Սառայի անձնվիրությունը նույնքան ավելի մեծ կ'երևար աչքիս. հիմա դուրս չէր ելլեր Էրկանը սենյակեն. երբեմն ես ալ կգտնվեի հոն. բերանը բերնին կկենար մինչև վերջը, հիվանդի շնչառությունը խառնելով իրենին։ Այս չափազանց զոհողությունը ճշմարիտ խելագարության մը հանգելու վրա էր. Էրկանը հետ մեռնիլ կ'ուզեր անշուշտ. անդին ալ անոր հետ ըլլալ, ինչպես հոս եղած էր, և իր անհատնում վայելքները անոր պահել միայն։ Այո՛, այս էր իր գաղափարը։

Մնաս բարովի մը ատեն մինչև սանդուխին մոտ կ'ընկերանա ինծի ու առիթը բարեպատեհ կնկատեմ բառ մը ըսելու, զգուշացնելու համար զինքը։

— Վախկո՛տ,— պատասխանեց ինծի, ձեռքերս թոթվելով,— վախկո՛տ, այդպե՞ս երիտասարդ ես դուն։

Ամոթես ու զայրույթես դեղնեցա։

— Քու անձիդ համար միայն վախկոտ եմ, ըսի իրեն. տեսար որ ես այն հյուրերեն չեմ որ հիվանդեն կփախչին չպլըշկվելու համար. ես ամեն վայրկյան ամուսինիդ քովը գտնված եմ։ Եթե դուն չես փախչիր իրմե, այդ քու պարտքդ է արդեն, դուն անոր կինն ես, ե՞ս...

— Այդ կնոջը սիրողը,— մրմնջեց ականջս ի վար։

Ձեռքս չթողուց ու ես ծռեցա համբուրելու համար զիս բռնող մատները։

— Ո՛չ ըսավ հեռանալով, չ'ըլլար։

Հետո, տեսնելով ցաված դեմքս, մեղքցավ անշուշտ ու մատովը՝ խորհրդավոր նշան մը ընելով ավելցուց.

— Վերջը։

Ե՞րբ։

Իրիկվան՝ սրտատրոփ նորեն եկա։

— Վերջը,— ըսավ ինծի։

Ամեն նյութի վրա խոսեցանք. անիմաստ խոսքեր միայն ըսի կարծեմ. խելքս վրաս ըլլալու չէր. մեկնելու ժամուն կ'սպասեի ակնդետ. դուրս ելա։

— Վերջը, վերջը,— ըսավ նորեն Սառա ու ճամփու դրավ զիս։

Միշտ այսպես կ'ըսեր ինծի ու այս անդուլ հետաձգումը՝ մերժումի քաղաքավար ձև մը միայն նկատած էի։

Ամբողջ ամառը անցավ ասանկ ու ես ալ չէի հիշեցներ իրեն խոստումը. բայց ան չէր մոռնար ու ամեն առթիվ միևնույն բառը կու գար իր շրթունքին վրա։

— Վերջը։

Ե՞րբ արդյոք։

Ե

Վերջին վայրկյանները հիվանդին անուշ մրափի մը նմանեցան։ Մահը մեղմիվ եկավ, պայծառություն մը բերավ կարծես թե այս տժգույն դեմքին։ Գլուխը բարձին դրած, աչքերը կիսափակ՝ ճիշտ միևնույն մարդն էր որուն չորս ամիս առաջ շոգենավին մեջ հանդիպած էի։ Իր

ոտքի կարմրությամբ ցոլացող մաղն ու մորուքը պատուհանեն եկող առավան ճառագայթներուն տակ կխայտան կարծես ու անգո կյանքի մը պատրանքը դեռ կու տան երեսին։ Մեռավ. և ես գլխիկոր ու ապշած՝ առջի հեղ կտեսնեմ մահը հոս աչքիս առջև, հանդարտ, շքեղ, զրեթե հրապուրիչ։ Սավանի պես պարզվող ծովի երեսն է ան, մաքուր ու միօրինակ հանդարտությամբ մը ծածկելով պարապությունը։

Սարսափը չի բռներ զիս. արհավիրք չեմ զգար այս հրեա երիտասարդին տեսքին քով, այլ զարմանքով կլեցվիմ. ի՞նչ է այս պառկող մարդը։ Հարցո՞ւմ մըն է թե Պատասխան մը։ Հետո, անզգալաբար աչքերս կլեցվին. Սառա քովս է բայց չի լար. կկարծեմ, որ իր վիշտին մեծությունը կ'արգիլե զինքը արտասվելե, այն շատ լեցված ամաններուն պես, որոնք շրջելով չեն թափիր։

Սևեր հագած է որոնք իր մեղրամսի դեմքին անփայլ ճերմկությունը կցոլացնեն. քովս կու գա ու իր բուրումնավետ թաշկինակովը աչքերս կսրբե։

Այս վայրկյանիս, այս մահվան սենյակին մեջ բոլորովին մոռցած եմ զինքը. բայց ան՝ իր ներկայությունը հիշեցնել կու տա ինծի. ձեռքս կբռնե նորեն, ճիշտ ինչպես ամիսներ առաջ կեցուցած էր զիս մեկնելու ժամուս։ Կտեսնեմ որ աչքերը անսովոր փայլով մը կցոլան, մութի մեջ կատվի աչքերու վառելուն պես, դեղնորակ լույսով մը։

Իր քովը կնստեցնե զիս բռնի, ու ակնարկություն մը ընելով իմ առջի թախանձքներուս.

— Հիմա՛,— կ'ըսե հանկարծ։

Եվ այս սենյակին մեջ կբացատրե ինծի, իրավագետի մը պես փաստերով զինված, իր կյանքի ըմբռնումը ու պարտավորության գաղափարը։

Էրկանը հավատարիմ եղած էր ցորչափ կենդանի էր անիկա. մազի չափ չէր թերացած իր անձնվիրության ու պարտքին մեջ։ Ի՞նչ պետք թերանալու. չէ՞ր կրնար համբերել. անոր կյանքը՝ յուղը հատած պատրույգի մը պես՝ վայրկյանե վայրկյան շիջելու վրա էր. կրնա՞ր այնքան անսիրտ ըլլալ, որ անոր մարելուն չսպասելու չափ անհամբերություն ցույց տար. ո՛չ, անոր համար վերջը ըսած էր միշտ։

Ու ահա ասանկ կմեկներ իր պարտականությունները, թվաբանական հաշիվ մը լուծելու պես։

Տրամաբանություն կար իր խոսքերուն մեջ, բայց սիրտ չկար ու չեմ գիտեր ինչո՞ւ պարզապես ահարկու ու ռամիկ թվեցավ ինծի այս ըմբռնումը՝ որ ապաքեն բոլոր աշխարհի մարդոց սովորական ըմբռնումն է։

Լավագույն սեպեցի անոնք որ առանց հաշիվի կթերանան, քան թե անոնք որ Սառային պես, հաշիվներու շնորհիվ, անթերի կհանդիսանան մեր աչքին։

Քովիկնիս երկնցող այս դիակին մոտ այս դավանությունը վրդովեց, սարսափեցուց զիս։ Խղճիս ձայնը արթնցավ անժամանակ խոսող աքաղաղի մը պես, ու մերժեցի զինքը։

ՄԱԳԴԱՂԻՆԵ

Ա

Զարհուրելի կերպով շպարված ըլլալուն հակառակ՝ իր տասնյոթը տարու աղջկան շնորհը տակավին երեսին վրա էր։ Իր ծարուրած աչքերը մռայլ ցոլացումով մը կփայլեին, այնպես որ ակնարկը զքեզ շոշափելուն՝ թավիշի կակուղ հպումին տպավորությունը կձգեր մարմնիդ վրա։ Մազերը առատ ու շքեղ, դեղինի ներկված, ո՞վ գիտե՝ առեն չունենալուն կամ ուրիշ պատճառով մը՝ հարդարված չէին։ Արձակված թափված այսպես ուսին վրա՝ կարծես անոնց ծանրությամբ էր որ գլուխը դեպի հետ կծռեր քիչ մը։

Հոռի ճաշակով պոռչտող բան մըն էր արդուզարդը. կապույտ դիպակե փեշ մը, կարմիր մետաքսե վերիդիով մը ամբողջացած. ծանրագին կերպասներու սեր որ իր զրկված արարածի միամիտ վրիժառությունն էր տիկիններու դեմ։

Պարարտ ու շնորհալի կազմը այս կնոջ՝ անպատկառ կերպով հոլանի կուրծքն, շարունակ վար սահող սև գուլպաները շտկելու, տեղը բերելու համար ըրած հարատև ջանքեն կհայտնվեր։ Ինքն ալ ցանկահարույց կեցվածքի մը հրապույրները կ՚ավելցներ անոր վրա, գիտակից ու ջանադիր լրբությամբ մը։

Բ

Չորրորդ հարկի խցիկին կեսը կգրավեր իր անկողինը, լայն, խորունկ ու ընդարձակ, որ իր սավաններուն երկբայելի ճերմկությամբը՝ մտածել կու տար հոն առաջնորդվողը։ Այդ անկողնին վրա նետած նայվածքես գուշակելով իմ վարանքս՝ կհամոզեր զիս, վեր առնելով, մեկիկ-մեկիկ ցուցնելով վերմակը, բարձին երեսը դեռ նոր լվացված, կ՚ըսեր ինծի, լեզու թափելով ապրանքը քշել ուզող վաճառականի մը պես։ Ու

բռնի նստեցնելով զիս անկյունին պզտիկ սեղանին վրա, խնդալով տղու մը պես, գրկելով գլուխս, կ՚ավելցներ.

— Պագնեմ քեզի անգամ մը։

Նախահարձակը ինքը կ՚ըլլար, պզտիկ ձգելով իմ պատանի մարդու նոր սկսող հավակնությունները։

Վարժ աղջիկ մըն էր, որ իմ անփորձ տղու վեհերոտությունս փարատել կրնար իր գգվանքներուն համոզիչ ու շքեղ փաստերը մեջտեղ նետելով։

Իր մարմնին բուրումը՝ չեմ գիտեր ինչ լկող ու անուշ հոտ մը՝ մատուցումը կշեշտեր։

Այս տանը մեջ, կ՚ըսեր ինծի, ամենեն պզտիկը ես եմ. զատկին տասնյոթս պիտի լմնցնեմ։

Ճիշտ քովս նստած էր, կատվի մը պես պզտիկնալով, գրեթե սեղմվելով կուրծքիս վրա։

Հինգ վայրկյանի մեջ արդեն մտերմացած հետս՝ կհարցափորձեր զիս. ով ըլլալս հասկնալ կ՚ուզեր։

Եվ առանց սպասելու որ իմ պատմությունս ընեմ՝ ինքը իրեն կզրուցեր ինծի, հինգ բառով պատմվելիք սովորական ու խավարային պատմությունը իրենպեանները։

— Երկու տարի առաջ մայրիկս մեռավ,— այս «իկս»-ին մեջ անհուն գորովանք մը ու թախիծ մը կա.— հայրս չեմ ճանչնար. ինե երկու տարու պզտիկ քույր մը ու ավելի պզտիկ եղբայր մը ունիմ. մեյ մըն ալ մեծ մայր մը ունիմ. ասոնք են իմ բոլոր ազգականներս. քույրս ու եղբայրս դպրոց դրած եմ, ամենքը ես կպահեմ։

Այս վերջին բառին մեջ իր ընտանիքի տեր ու գլուխ եղող անձի պատասխանատվությունով լեցուն հպարտության շեշտը կդնե։

Ասկե դուրս իր քրոջը խոսքը հոս՝ ամոթով լեցուն այս մթնոլորտին մեջ՝ թող չիտար որ ըլլրվի. խատաբարտ ու աշալուրջ մոր մը ձևը կ՚առնե դեմս. կծիծաղիմ քիչ մը վրան, բայց կտեսնեմ որ խսկույն կխոժոռի իր աղմոր ճակատը։

Հետո, վախնալով որ զիս չարտրդցնե։

— Գոցենք այս խոսքերը,— կ՚ըսե ինծի։

Իր շրթունքը նորեն կփակվին իմ ինամներուս և իր մարմնին բոլոր բերը վրաս կծանրանա պահ մը։

Գ

Այն օրը այսքան եղավ մեր բոլոր ճանչվորությունը. իմ թախանձանքներս ասկե ավելի գոհացում չստացան։

— Ի՞նչպես կրնա ըլլալ, ավագ շաբաթով,— կ'ըսեր զարմացած,— դուն քրիստոնյա չե՞ս։

Իրոք ավագ շաբթվան մե՞ջն էինք։

Պահք կբռներ անիկա ու վերջին օրն ալ ծոմ պիտի պահեր։ Իր ջերմեռանդ ու մեղավոր աղջկան համոզումներուն տարօրինակ գիրկընդխառնումը կպարզեր ինծի։

— Ո՞ր օր սրբություն պիտի առնես,— հարցուց հանկարծ։

— Չեմ գիտեր աղեկ մը,— պատասխանեցի.— դո՞ւն ո՞ր օր պիտի առնես։

Երեսս նայեցավ ապշած՝ կարծես ասանկ անհարկի հարցում մը ուղղելուս համար։

— Հիշ մեզի հաղորդություն կուտա՞ն։

— Ինչո՞ւ չտան։

Քահանայի մը չափ գիտեր անիկա բոլոր կարգը կանոնը ասանկ բաներուն, ու քահանայե մը ավելի խստապահանջ էր ինքզինքին համար։

— Չեմ կրնար հաղորդություն առնել, քանի որ վերջը դարձյալ մեղք պիտի գործեմ,— կբացատրեր ինծի։— Ինչո՞վ պիտի ապրիմ ես. քույրս, եղբայրս, ծեր յայրս պիտի ապրեցնեմ. զղջումս սուտ զղջում մը պիտի ըլլա։

Այս պզտիկ սենյակին մեջ՝ արտասանված այս լուրջ խոսքերը ինծի մտածել կու տան։

Ամեն անոնց, կ'ըսեմ ինքնիրենս, որոնք իրենց ապրուստի բերմունքովը մեղք մը գործելու, սուտ մը խոսելու հարկին մեջ են, եթե եկեղեցին իր հաղորդությունը զլանար, ի՞նչ պիտի ըլլար ասոր վերջը, ո՞ր վաճառականը, ո՞ր խանութպանը, ո՞ր օրագրողը ու ո՞ր փաստաբանը, նույնիսկ ո՞ր եկեղեցականը հաղորդություն առնելու իրավունքը պիտի վայելեր. չէ՞ մի որ հետևյալ օրը իրենց առօրյա կյանքին պիտի վերադառնան անոնք։ Ոչ ոք սակայն մտքեն անցուցած է եկեղեցվո սուրբ խորհուրդներեն այս մարդիկը զրկել։

Աղջիկը կգրկեր, կհամբուրեր զիս անընդհատ։

— Քանի՞ տարու ես դուն,— կհարցնե ինծի։

— Քսան տարու։

Անձնատուր իր գգվանքներուն՝ մտքովս կշարունակեմ առարկություններուս երկար շարքը։ Եկեղեցին՝ իր արդի ձևին տակ իր զանազանություններուն ակներև անիրավությամբը, մարդկային բան թե երկնային հաստատություն մըն է. մարդոց բոլոր թյուր վճիռները հոն ալ կտիրապետեն ինչպես այլուր։

Աղջիկը վերջին համբույր մը կու տա։

— Ես ժամ պիտի երթամ,— կ'ըսե ինծի.— զատկին վերջը եկուր, բարեկամ ենք, չէ՞։ Գալուդ պես հոս զիս հարցուր։

Ու պշրանքով մը, որ մեջերնիս հաստատված համակրության օծումն էր, կպահանջե.

— Ուրիշի հետ չպիտի տեսնվիս, խոսք տո՛ւր։

Խոսք կու տամ, քսան տարու երիտասարդի խոսքս։

Անկե վերջը տարիի մը չափ սիրեցինք իրար։

Անուս, ռամիկ, բայց սրտի տեր աղջիկ մըն էր. իր սիրողներուն թիվը չկար. ամեն ազգե, տարիքե ու դասակարգե մարդիկ մոլորած՝ կու գային հոս. ալևորածները, ինչպես հազիվ պեխերը բուսած տղաքը, կու գային ամենքը իր սիրովը հափշտակված։

Բայց մանավանդ ստորին դասե մարդոց մեջ իր անունը, իր գեղեցկությունը նախճիրներ կգործեր։

Պատճառը այն էր գուցե, որ այս տարօրինակ աղջիկը ուղղամտություն մը ուներ իր վաճառիկ սիրույն մեջն ալ։

Իմ դեմս, երբոր քիչ մը ավելի մտերմացանք, իր տգիտությանը վրա կ'ամչնար, բայց երբե՛ք իր վիճակին համար։ Անհուն խնամքով ու գորովով մը իր պզտիկ քրոջ ու եղբորը վրա կշարունակեր հսկել հեռվեն, ծախելով շարունակ իր մարմնին ճոխությունները, առանց զոհողություն մը ըրած ըլլալու գաղափարը մտքեն մազի չափ անցընելու։

Դ

Բազմություն մը աղտոտ ու ստորին մարդոց կխռնվեր դրանը առջև գողեր, մարդասպաններ կային անոնց մեջ. ամենքը կհրմշտկեին իրար, առաջ անցնելու ջանքով մը, կլեցվեին իրարու վրա՝ հետաքրքիր։ Հետո ոստիկաններ եկան թուղթ ու կաղամար ձեռքերնին, կատարված ոճիրը արձանագրելու համար։

Քովիններուս հարցուցի այս հավաքումին պատճառը։

— Աղջիկ մը զարկին սա տանը մեջ,— ըսին ինծի։

Նախազգացումս որ բնավ չի խաբեր, զիս դող հանեց, միջոց մը

գտա ճեղքելու այս մարդերե ձեւացած պատնեշը։ Վեր վազեցի իսկույն, մեր չորրորդ հարկի պզտիկ խուցը. տնեցիները հոն հավաքվեր էին. բժիշկ մը վերջին պահուն եկած, անկողնին վրա ծռած էր։

Հոդ, այդ անկողնին վրա տարածված տեսա զինքը վերջին անգամ։ Իր սովորության հակառակ ամբողջ ճերմակներ հագած էր, ձյունաթույր ու շլացուցիչ. ու միայն լանջքին վրա ձախ կողմը շապիկը կարմրած էր պզտիկ բոլորակով մը, այդ անբծության վրա բացված վարդի մը պես։

Ձիս տեսնելուն ժպիտ մը դժվարավ գծագրվեցավ իր դեմքին վրա։ Բժիշկը անհույս վճռեց անոր վիճակը։ Ինքը հաղորդություն առնելու փափագ հայտնեց ու մեկ երկու հոգի ինկույն եկեղեցի վազեցին, բայց տերտերը մերժեց գալ։

Հետո մահը վրա հասավ. դանդաղ, հանդիսավոր ու մռայլ բանը, վերարկուն՝ ուր նախախնամությունը հոգածու ձեռքով փաթթեց բոլորեց այս աղջիկը, որուն՝ մարդոց ճղճիմ հաշիվները ու սխալ դատաստանը ամեն տիրտանք զրացեր էին աստուծո անունով։

Իր պզտիկ քրոջմեն ու եղբորմեն զատ ոչ ոք անոր անունը տվավ մեյ մըն ալ։

Ե

Այս հին դեպքը պատմելուս, անցյալները՝ բարձրատիճան եկեղեցական մը, աստվածաբան ու կենցաղագետ մարդ, մանրամասն հասկցուց ինձի կրոնական պատճառները այս զլացումին։ Հրապուրված աղջկան և պրոնիկին զանազանությունը ըրավ. տա պարագային մեջ եկեղեցին ասանկ կոնօրինե, ըսավ ինձի, տա մյուս պարագային մեջ ալ անանկ։ Բացատրություններ տվավ՝ որոնք նուրբ թվեցան ինձի. վկայություններ բերավ որոնց դեմ ըսելիք մը չգտա։ Իր փաստերը՝ բարբարոս ու վավերական՝ չմոդեցին զիս։

Ու միշտ աչքս առջեւն է մահիճը լայն ու խորունկ, որ սենյակին կեսը կգրավեր, լայն ու խորունկ, որուն մեջ՝ կարմիր վարդ մը կուրծքին՝ այն ազվոր կինը կընանար։

<1902>

ԱՅՐԻՆ

Ա

Գիշեր էր, նոյեմբերի տրտում ու խոնավ գիշեր, որուն մթությանը մեջ ընկղմված էր Փերայի մեծ Փողոցը իր քարաշեն ու բազմահարկ ապարանքներովը։ Փոշիի պես բարակ ու ասեղի պես սուր անձրև մը կու գար ու կլվար ամայի և թափուր քարահատակը։ Կալաթա Սերայի պահականոցին դեմ, երկու կառապան՝ հապաղած անցորդ մը գտնելե հուսաբեկ՝ ցուրտեն պատսպարվելու համար իրենց կառքին մեջ կմրափեին։ Մարդ չկար ու այդ ողմկալից փողոցի ժխորեն ուրիշ բան չէր մնացեր, բայց եթե առջի իրիկվընե ի վեր տեղացող անձրևին անընդհատ ձայնը իր հուսահատական միօրինակությամբը։ Հեռվե հեռու, ուղիղ ու լայն ճամփուն բոլոր երկայնությամբը, մութին մեջ կտեսնվեր շարք մը կարմիր ու արյունագույն կետերու՝ որոնք կազերուն տամուկ ու դողդոջուն լույսերն էին։

Քազինոները, ֆաֆե շանթանները և ուրիշ զբոսավայրերը շատոնց գոցված էին. անոնց տեղ, հոս՝ մսավաճառի, հոն՝ կաթնավաճառի խանութ մը իր դուռը կբանար, և մութուն ելլելու վարժվող այս խանութպաններու աշկերտները՝ դեռ նոր արթնցած, կես քուն, կես արթուն, կանթեղի լույսով գիշերեն կ'սկսեին իրենց օրական աշխատությունը։

Ձայն ձուն չկար դեռ ու գիշերապահը տասներկու կզարներ փողոցին հնչուն մայթին վրա։ Պատի մը տակ, մարդ մը՝ անշուշտ խաղատան մը մեջ ունեցածը չունեցածը կորսնցնելե ետքը, կծկտած էր լուսնալուն սպասելով, պառկելու տեղ մը գտնելե հուսակտուր, վասն զի այս հյուրընկալ փողոցը ստակ չունեցողներուն համար չէ։ Ցաղին անդին քուրջեր հավաքող մարդիկ, լապտեր մը ձեռքերնին, լռիկ ու գլխահակ, իրենց ուսի կողովը կլեցնեին։

Բայց հետզհետե մութը իր խստությունը կկորսնցներ. Կալաթա Սերայեն վար վաճառատուններուն մեջ ձայներ կլսվեին ու քիչ քիչ անցորդներ երևան կ'ելլեին փողոցին մեջ։ Բանջարեղեններով ու կաթի ամաններով բեռնավորված ձիեր հանդարտաքայլ կու գային, կ'անցնեին վիզերնուն կապված զանգակներուն ձայներովը արթնցնելով քարուկիր շենքերուն արձագանքը։

Հիմա ալ լուսնալու մոտ էր ու Փերայի տունները կճշտվեին ստվերամած հորիզոնին վրա. ձայները երթալով կշատնային. խանութներու երկաթե փեղկերը կշարժեին. կանուխ ելլող սպասավորներ, պահապան-

ներ, փեղկին մեջ բացված դռնակեն դուրս կ'ելլեին ու վաճառատունների առջևի սալաքարերը կմաքրեին խանութին ներսը ավելելե վերջը. բոկեղ, կաթ ու սալեպ վաճառողներ պոռալով կ'սկսեին իրենց առտվան առուտուրը, այդ ծառաներուն, բեռնակիրներուն ու պահապաններուն բերելով աժան գինով նախաճաշ մը. «բարի լույս»-եր կփոխանակվեին դրացի մարդոց մեջ։

Բ

Մութին հետ ելավ Մարտիրոս. խանութը ավլեց, առջի օրվնե անկարգ թողված տուփերն ու ծրարները տեղը դրավ, վաճառատան մեծ ապակին սրբեց ու երկաթյա փեղկերը բացավ։ Քիչ մը վերջը ա՛լ բոլորովին լուսցած էր, գործավորներ, արհեստավորներ, ամեն ազգե ու ամեն կարգե, Պոլիս կդիմեին ու Մեծ Փողոցը կզարթնուր, կշարժեր այս անցուդարձով. կամաց-կամաց խանութները կբացվեին, ապակիները կմաքրվեին, գրագիրներ իրենց պաշտոնին, կար կարող աղջիկներ իրենց գործին գլուխը կու գային։

Առտու էր։

Վեց ամսե ի վեր այս մաղազային մեջ կ'աշխատեր իր հորեղբորը տեղ, որ տասը տարի իբրև բեռնակիր ու պահապան ծառայելե վերջ հայրենիք վերադարձած էր, Մարտիրոսը թողլով իր տեղը։

Տասնինը տարու կար չկար. բարձրահասակ ու մենծ մենծի էր, ինչպես կ'ըսեին կիները, բայց իր թուխ ու գեղեցիկ դեմքը պատանության փափկությունը կպահեր առնական դրոշմը առնելով հանդերձ. սևահեր ու սևաչվի էր. քաղցր, վեհերոտ և տղայական բան մը ուներ իր նայվածքը. լայն ու դուրս ցցված կուրծքը իր հզոր ու հպարտ իրանին բոլոր առավելությունները ցույց կու տար։ Կապույտ շուխայե ձեռք մը հագուստ շինել տվեր էին իրեն, որ աղեկ կվայլեր իր կորովի ու առույգ մարմնին. ջլապինդ բազուկները հազվագյուտ ուժ մը պետք էին ունենալ, մինչդեռ կարճ ու ամփոփ փոխանին զանգապանը ազդերուն հարուստ ու բարեձև լեցունությունը կհաստատեր։

Փերայի մեջ նորություն մը եղավ այս նորեկ պահապանը. կիները հիացան ու սքանչացան այս երիտասարդին վրա, որուն ամչկոտ համեստությունը նոր ու կանանց համար միայն հասկնալի հրապույր մը կու տար իրեն։

Վաճառատան համար ձգողության պատճառ մը եղավ այս պատանի մարդը. ինքը միայն չհասկցավ այն հետաքրքիր ու մանրախույզ նայվածքները, որոնց ենթակա էր. ամենքը համակրելի կգտնեին զինքը ու չէին քաշվեր բացեիբաց իր երեսին ըսելու այնպիսի անհավատալի համարձակությամբ մը, որուն վրա կզարմանար։

— Ամուսնացա՞ծ ես,— կհարցնեին իրեն ամեն կողմե։ Ու հաստատական պատասխանին վրա, որը կցավեր, որը կծիծաղեր. այս պոլսեցի կիները կատակը կսիրեին. այնպիսի հիմար բաներ կտեսներ, որոնց վրա հազիվ իր խնդուքը կզսպեր։

Առանց բացորոշ բան մը գիտնալու, իր նրբամիտ դրսեցիի բնազդումովը կ'ըմբռներ սակայն, որ իր նպաստավոր ընդունելությունը ավելի վայելուչ մարմնին կպարտեր, քան թե իր աշխատությանը։

«Փենթան»-ի վաճառատան մեջ առջի օրերը Մարտիրոսի համար ապշության, զարմանքի ու սքանչացման օրեր եղան։

Այս բազմահարկ ու փառավոր շենը, իր հազար ու մեկ բաժանումներովը, օձապտույտ սանդուխներովը, ճոխությամբը, հաճախորդներու անընդհատ հոսանքով, պզտիկ, բայց երանելի քաղաքի մը ազդեցությունը ունեցավ իր վրա։

Առտվընե մինչև իրիկուն ասկիներու, մեճիտիեներու հնչյունն էր, որ կու գար դրան մոտ դրված սեղանին կողմեն, ուր հատուկ պաշտոնյա մը տոմարներու վրա ծռած՝ անհավատալի գումարներ ժողվելու միայն զբաղած էր։

Հաճախորդներ, մեծ մասամբ կիներ, համարձակ, երեսնին բաց, ամեն ազգե, գլխավորապես ֆրենկներ, մինչև անգամ թրքուհիներ ու հայուհիներ, շպարված ներկված, միշտ գեղեցիկ ու ա՛լ ավելի գեղեցիկ լինելու հետամուտ՝ կու գային անվերջանալի պահանջներով, վեճերով զբաղեցնելու բոլոր խանութը։

Ինքը՝ հոն կանգուն էր, շվարած, բան մը չհասկնալով այս տարօրինակ ու միջազգային լեզվեն զոր կխոսեին և այս առուծախեն, որուն օգտակարությունը չէր ըմբռներ։ Հետո ինքն ալ վարժվելով քիչ-քիչ այս բուրդե, մետաքսե, ասվիթե, շղարշե, թավիշե ծրարներուն, զորս մեկ օրեն մյուսը այս կանանց շրջազգեստը դարձած կտեսներ, տակավ առ տակավ հասկնալով այս ամենը, ֆրանսերեն բառեր շարունակ լսելով ու սորվելով։ Պարապ չէին թողուր զինքը խանութին մեջ, անընդհատ տարուբեր այս բոլոր նյութերուն մեջ, զորս մեկ տեղեն մյուսը կփոխադրեր մինչև իրիկուն։

Եվ գիշերը, երբ այս բոլոր ժխորը դադրեր ու մինակ մնար ընդարձակ խանութին մեջ, վարանոտ ու հետաքրքիր, կխառներ, կջանար հասկնալ իր շուրջի բոլոր նյութերը։

Հոս ֆիլտեֆոսե կամ մետաքսե կանացի գուլպաներ գույնզգույն, բանված, մինչև զիստը ամփոփելու չափ երկայն, որոնց ներդաշնակ

շրջագիծը՝ մարմնին ճշտությամբ պատկանելու համար ձևված էր. անդին ճերմակեղեններ՝ սպիտակ ու նուրբ վուշե, որոնց իր համբակ մրտքովը գործածության տեղ չէր գտներ. շապիկներ՝ երկար, լայն, թափանցիկ, փրփուր տանթելներով խառն, որոնք կուրծքը մերկ ձգելու քան թե ծածկելու համար պատրաստված էին. ուրիշ ճերմակեղեն հանդերձներ, կարվա՞ծ, թե կարվելիք, չէր գիտեր, վասն զի է՛ն անհրաժեշտ մասերը իրարմե անջատ ու բաց թողած կտեսնվեին. ավելի անդին գլխարկներ, թռչուններով կամ ծաղիկներով զարդարուն. կոշիկներ տարօրինակ ձևերով, ձեռնոցներ, պախճավանդներ, ծնրակապեր— այս վերջինները կճանչնար հայրենիքեն, և զորս երբեմն իր ծունկին վրա կփորձեր— վերջապես հազար խռովիչ ու հեշտավետ առարկաներ, մանավանդ գեղաբույր փոքրիկ ու զարդարուն շիշեր, որոնք իր դրսեցիի դյուրագրգիռ քիթին համար ամենեն ախորժելի էին։

Բայց վերի հարկը ա՛լ ավելի զարմանքներու կհանդիպեր. կար կարողներու սենյակին մեջ, մերկ, բոլորովին մերկ կին մը, ո՛չ, կանացի փայտաշեն մարմին մը, ճշմարիտ ու կենդանի կարծվելու չափ ճարտարությամբ շինված, իր զմայլած աչքին կպարզեր, հայտնի լրբությամբ մը, այն բոլոր թաքուն հրապույրները, որոնք իր նոր ամուսնացած երիտասարդի տենդագրգիռ արյունը կբորբոքեին։ Ու մինչև լույս չէր քնանար, կանանց մարմնին համար մտածված, երևակայված, ստեղծված այս բոլոր խոսուն և գրգռիչ նյութերեն շրջապատված, որոնց բոլորին վրա, իբրև հրաշալի աշխարհի մը մեջ, այդ մերկ կինը՝ սեգ, խրոխտ, բայց միանգամայն կարծես թե անձնատուր ըլլալու պատրաստ, կտիրեր իր մարմնին շլացուցիչ գեղովը։ Ու կանանց հատուկ, անոնց գաղտնիքներովը, հրապույրներովը լեցուն այս քաղաքին մեջ անզգա պահապան մնալու դատապարտված՝ այս երիտասարդը կուրտ աքաղաղի տարօրինակ դեր մը կատանար։

Գ

Հայրենիքը, Զարդար, իր մանկամարդ կինը, կսպասեր։ Իրենց սուրբ պսակեն ի վեր հազիվ մեկ երկու ամիս էրկանը երեսը տեսած էր, ու ստակ վաստկելու աննահանջելի հարկը՝ հեռավոր երկիրներ առաջնորդած էր զայն։

Կսիրե՞ր արդյոք այն երիտասարդը, որ իր ամուսինը եղած էր. այն կույր ու անտրտունջ հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կկազմե այդ կողմերը, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղի մնացած է. իրեն չէին հարցուցեր երբեք, թե կ'ուզե՞ր այն մարդը, զոր իրեն սահմանած էին. ինքն ալ չէր մտածեր անոր վրա. ո՛չ կատեր և ո՛չ կսիրեր զայն մինչև իր ամուսնության օրը։ Եվ ամուսնութենեն ետքը ա՛յնչափ քի՛չ ատեն անցուցած էր հետը, այնչափ մտերմութենե զուրկ, որ գրեթե պաշտոնական եղած էին իրենց հարաբերությունները՝ միևնույն հարկին տակ բնակվող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ։

Այդ նոր ընտանիքին մեջ, ուր կմտներ գլխավորապես ծառայության համար, ամենեն քիչ իր էրկանը կպատկաներ. վասն զի կեսրոջը, աներին, մյուս ազգականներուն սպասավորությունն էր իր ավագ պարտավորությունը։

Այս գեղի աղջիկը զորովի և սիրո անսպառ գանձեր ուներ սակայն իր սրտին խորը, որոնք մեկ բառով, մեկ գգվանքով թերևս պիտի հայտնվեին։ Բայց ավանդությունը կար իր աչքին առջև, իր ամուսնին հորեղբայրներուն կիները կային, նույն իսկ իր կեսուրը կար դեմը, Պոլիս գացող մնացող ամուսիններու սպասելով, տանը անհատնում հոգերուն ու աշխատությանցը մեջ մաշելով ծերացած կիներ, հիմա գրեթե պառավներ, ճիշտ իրեն պես, նոր հարսի պես լռիկ ու խոնարհ՝ այդ մարդոց քով, որոնք հանկարծ, երկարատև տարիներե ետքը, հիշեր էին, թե այդ դժբախտներուն ամուսիններն էին իրենք ու հայրենիք վերադարձեր էին, այլևս աննպատակ ու անօգուտ դարձած ամուսնական կյանքը շարունակելու։

Ահա այս հեք, աղեբեկ ու կորաքամակ օրինակները կային իր առջև, որոնք ստվերներու պես անխոս՝ իր շուրջը կդառնային, և Զարդար էրիկ կնկան ուրիշ տեսակը չէր երևակայած երբեք։

Զզարմացավ ուրեմն երբ կարգը էրկանը եկավ մեկնելու։ Իր մշտընջենապես կրավորական դերին մեջ գավառացի հայ կինը գանգատելու անգամ զորություն չունի. Պոլսեն թուղթ եկավ. հորեղբոր մը գալուստը իմացուցին ու Մարտիրոսի մեկնելու պատրաստությունները տեսան. հարսը՝ իր հոգածու ամուսինի պատրաստությամբը՝ երկու զույգ բուրդե գուլպա շինեց, մայրը ու մյուս ազգականները մեյ մեկ հիշատակ տվին ճամփորդին ու երկուշաբթի օրվան կարավանով մոտի գյուղեն Պոլիս գացող ուրիշ երիտասարդի մը՝ Խաչոյին հետ ճամփա դրին զայն։ Զարդար մինչև իրենց արտը, որ ճամփուն կողմն էր, մեկտեղ գնաց ու վերջի պահուն, երբ հրաժեշտի ողջույններ փոխանակվեցան, արցունքի փախստական կաթիլ մը սահեցավ ինկավ հարսին աչքեն երիտասարդին ձեռքին վրա, այնչափ ահա այս բաժանման բոլոր սրտահուզությունը։

Մարտիրոսի մեկնելեն ի վեր հարսը իր բաժինը առած էր տան աշխատութենեն ու իր տեղը կեսուրը հանգստյան կոչված. հաց եփել, կաթ կթել, ջուր ու փայտ բերել իրեն կ'իյնար միշտ, ու երիտասարդ կինը՝ ագարակի կենդանիներու հատուկ հեզությամբը իր ծառայությունը կկատարեր։

Դ

Փերայի Մեծ Փողոցին մեջ վաճառքի ահագին հակի մը անտանելի բեռին տակ ճնշված, քրտնաթոր, ճակատներուն երակները պայթելու չափ ուռած, հագուստին պատառուն, ցեխոտ, չորս բեռնակիրներ, մեկը ծերուկ, այս տառապանքներուն տակ ալեռրած, մյուս երեքը դեռ երիտասարդ, կ'անցնին հեալով։

— Խաշո՛,— պոռաց ձայն մը անոնցմե մեկուն։

Խաշո գլուխը դարձուց, մեծահարուստ վաճառատուն մը իր անունը տվող ձայնի տերը ճանչնալու համար։

Նոր լաթեր հագած գեղեցկանց երիտասարդ մը, կապույտ լոդիկին մեջեն ցույց տալով վահանաձև կուրծքը, ածիլված, մաքուր, ֆեսը աջ կողմ ծռած քիչ մը, իր փոխանին փոթերը շտկելու զբաղած, վաճառատան դրան մոտ կեցեր ու իրեն կձայներ։

Բեռնակիրները արդեն ուժասպառ վար դրին իրենց բեռը, բայց Թաղապետության շավուշները ընդդիմացան. Փերայի Մեծ Փողոցը հոգնություն առնելու տեղ չէր. բեռնակիրները շունչ առնել կ'ուզեին և շավուշները թող չէին տար։

— Օլմազ,— կ'ըսեր սպիտակ ժապավեններով զարդարված ու մեջքը սուր կապած կես-լեզու հույն պաշտոնյա մը, որ անոնց մեծը կթվեր։

Բեռնակիրները իրենց հայախառն թուրքերենով կբողոքեին.

— Պիզիմտե ճանիմիզ յո՞խ մի՛. պև մարդ աստուծո,— կգոչեր ծերուկը։

Գլխարկավոր անցորդներ կշրջապատեին զիրենք, կիները կանգ կ'առնեին՝ վեճին պատճառը իմանալու հետաքրքիր։ Ու բեռնակիրները կծռեին իրենց տաժանելի խաչին տակը մտնելու համար նորեն։

Աղքատությունը հարստության դեմ կանգ առնելու իրավունք չուներ։

Մարտիրոս իր չորս հեմշերիներուն հեռանալը տեսավ. ո՞ւր Խաշոն, ո՞ւր ինք. և սակայն միևնույն գեղեն էին գրեթե, միևնույն տարիքը ունեին և միասին մեկներ էին երկրեն. Խաշոն ալ կայտառ ու հաղթամարմին տղա մըն էր, իր նշանածը թողած, ինչպես որ ինքն ալ իր կինը ձգած էր՝ ստա՜կ, միշտ ստա՜կ, հավիտյան ստակ վաստկելու համար։

Ինքը Փերա էր ու Խաշոն Զալաթիա մնացեր էր. մեկը լեռան վրա, մյուսը ստորոտը, և կթվեր, թե երբեր այդ ստորոտեն վեր չպիտի կրնար ելլել։ Մարտիրոս այս բաղդատությունը կ'ըներ մտքեն։

Աղեկ շահ կար իր ծառայության մեջ ու աղեկ հաճույք. հայրենի տան աղքատիկ ու մթոլորտակ կյանքը՝ լուսուն ճեղքվելուն հետ անհետացող անհաճո և անկարելի երազի մը տպավորությունը կդառնար հետզհետե. այս բոլորովին իգական աշխարհին սեմեն, ուր հազիվ ոտք կկոխեր, ապագան փայլուն ու հիանալի կ'երևար. Ֆրանսերեն սորվիլ կսկսեր ահա ու մատամ կ'ըսեր տիկիններուն խոսած ատենը, վասն զի տիկիններուն հետ կխոսեր. շարունակ փոքր ու մեծ ծրարներ կտաներ անոնց տունը ու պախշիշ կ'առներ։

Հայտնի էր, որ քիչ շատ ամենուն հաճելի սպասավոր մըն էր։ Ֆրանսուհի մը՝ արևելքցիներուն այս կատարելագործյալ տիպարին սիրահար, ու մանավանդ փերացի հայ տիկին մը ամենեն անակնկալ կերպով իր փոքրիկ ծառայությունները կվարձատրեին, ու ինքը այս ներհակ, նախանձոտ ու ոսոխ հրապույրներուն մեջ կվարաներ իր դեռաբույս պեխերը շոյելով։

Ե

Հայ տիկինը հարուստ վաճառականի մը ամուսինն էր. շարունակ հոդացավե տանջվող էրիկեն զզված՝ մոռցեր էր, որ այս ծեր, բայց հարուստ մարդը աղքատությենեն դուրս հանած ու իրեն կին ըրած էր զինքը։

Այս հարստությունը՝ զոր ատեն մը աղքատության խոշորացույցովը տեսած էր՝ չէր փոխարիներ հիմա հիվանդոտ ու ալեռոր մարդու մը կինը ըլլալու դժբախտությունը և այս առուտուրեն՝ որ իր ամուսնությունն էր՝ պարագաներուն ներածին չափ՝ զզջումը հայտնած էր։

Անկախ, ինքնիշխան, իր անսահման ազատությունը ի՜նչ բանի գործածելու շվարած՝ այս կինը ամեն օր Փերայի խանութներուն մեջ թափառիկ, մեծածախ արդուզարդի մտմտուքով զբաղած, ոչ ոք գտած էր մինչև այն ատեն իր արտակարգ բնավորությանը հարմար։ Շուրջը դարձող երիտասարդները միշտ մեծարանքով ու փայփայանքով վայելեր էին զինքը և սակայն այս թույլ ու վատ եղանակը չէր իր տարփատենչ երազը։

Հանկարծ օր մը իր հաճախած խանութներեն մեկուն մեջ երիտասարդ մը տեսավ առույգ, գեղեցիկ ու կոպիտ, որ ճիշտ իր փնտրած առնական տիպարն էր. և այն վայրկյանեն ան եղավ իր միակ կիրքը։

Ալ չպակսեցավ այդ վաճառատունեն մանր մունր բաներ գնելու պատրվակով։ Անթիվ, անհամար ծրարներ կղրկեր տուն, զորս Մարտիրոս հոժարափութ կտաներ, ու երբ պատահեր, որ իր մեծաճոխ շրջազգեստը երիտասարդին դպեր, կամ դրամ տալու առթիվ իր քնքուշ ու փափուկ ձեռքը անոր լայն, ամուր ու ջղուտ ձեռքին հանդիպեր, սարսուռ մը կանցներ իր մորթին վրայեն։

Երբեմն տունը կգտնվեր ու մոռցված հանձնարարություն մը լսելու համար Մարտիրոս մինչև հանրմին երանավետ սենյակը կ'ելլեր։

Այսպես շարունակեց տիկինը ատեն մը, բայց հետո համբերությունը հատավ. վերջապես այդ գեղեցիկ համալը սեպելու մարդ չէր։ Բայց միշտ հնարամիտ ճարտարությամբ իր տեսակցությունները կարգադրեց այս դրսեցի տղուն հետ, որուն անփորձ պարզմտությունը իր տարփանքին սաստկությանը չափ մեծ էր։ Կզգար, որ հիմարություններ ընելու կարող էր անոր համար. ու թաղված գանձ մը գտնող ագահի մը պես իրեն միայն վերապահել ու հատկացնել կ'ուզեր զայն, մինչդեռ Մարտիրոս՝ որ իր լեռնցի մարդու բնությունը ձգելու ատեն ունեցած չէր, այս քաղաքի մարդոց ու կիներուն վրա հավասարապես կզարմանար։

Եվ այս զբոսանքներուն մեջ մոլորված, հայրենի տնակին մեջ թողած օրինավոր ամուսինը չէր հիշեր այլևս. այն արցունքով գրված տողերը զորս հեք կինը իր ձեռքը կհասցներ, անոր քարացած ու ապականած սիրտը շարժելու անկարող էին. ստակ կղրկեր, որչափ որ ուզեին, բայց դառնալու խոսք մտիկ չէր ըներ։

Ու ճեմշերիները, անդին, իրմե քայլ մը հեռու, խնայողությամբ ու զրկանքով ստակ հավաքած, մաս առ մաս կվերադառնային հայրենիք, սիլանուն խավուշմիշ ըլլալու։

Չ

Զմեռնամուտին, շրջակա գյուղերեն շատեր Պոլսեն դարձան եկան. ամուսիններ, նշանածներ ու աղջիկներ խնդացին. գյուղային ու ընտանեկան կյանքը իր բոլոր սուրբ ու մաքուր եռանդովը վերակենդանացավ։

Խաչոն այդ վերադարձողներեն էր. արտ մը ու զույգ մը եզ գնելու չափ ստակ ժողվեր ու եկեր էր. նշանած էր արդեն ու հարսնիքը չուշացուցին. Մարտիրոսի մեկ հորեղբայրը կնքահայր եղավ. ամենքը կսիրեին Խաչոն. ուրախության, տոնի օր մը եղավ հարսնիքին օրը։

Զարդար հոն էր. իրեն ալ ճիշտ վեց տարի առաջ այսպես ուրախությամբ տոներ էին հարսնիքը. դրացի ու գյուղացի եկեր էին, այո՛, ճիշտ այսօրվա պես հազար մաղթանքներ ընելու։ Բայց քանի մը օր վերջը էրիկը ձգեր գացեր էր զինքը ու ա՛լ չէր երևցեր, և իր առանձնությունն ու լքումը ամոթ մը կթվեր իրեն՝ այս ցնծահույզ բազմության մեջ։

Ետ դարձան. հետևյալ օրը իրենց ամայի տնակը բոլորովին մութ ու խավար երևցավ իր աչքին։

Գուցե տասներորդ անգամը ըլլալով սրտաբուխ ուխտով եկեղեցի վազեց ու տիրամոր պատկերին առջև արտասվելով իր խնդիրքը ըրավ. և տիրամայրը, արծաթե թագը գլխուն, ունկնդրեց իր սեցած ոսկեզօծ շրջանակեն, ինչպես շատերուն աղաչանքներուն էր ունկնդրած։

Ապա ձմեռը հասավ իր բոլոր սաստկությամբ, իբրև թե այս հայրենիք դարձողներուն հիշեցնելու համար, որ հարմար ժամանակին հասած էին հայրենի վառարանը։

Ու Պոլսեն լուրեր, տեղեկություններ կու տային գյուղ գյուղ անոնց վրա, որոնք այս աշնան չէին կրցած միասին դառնալ. Կարապետ հաջորդ տարին, իսկ Կիրակոս մյուսին պիտի դառնար։ Միայն Մարտիրոսի վերադարձին խոսքը չկար։ Հետո ձյուն ու սառույց ամեն կողմ, ամեն ոք իր տան մեջ փակված, և այսպես տարի մը ևս լրացավ։

Է

«Փենթան»-ի վայելչակազմ պահապանը աղեկ ճամփու մեջ էր։ Մոլությունն ու ապականությունը սահուն զառիվայր մըն է, որուն կեսին վրա կանգ առնել դժվար է։

Տարիները կ'անցնեին միշտ ու ինքը, Փերայի փողոցներուն մեջ կշրջեր թափառահաց, միշտ մաքուր հագված, ածիլված, սև պեխերը ոլորուն ու հնդիկ իշխանի մը պես պահելով իր հայրենի զգեստները, որոնք իրեն այնքան աղեկ կվայլեին։ Օր մը միայն, փորձի համար, եվրոպական զգեստներ հագած էր և այն օրը ոչ ոք երեսը նայեցավ։

Հիմա Փերայի ամեն սովորությանցը, զբոսանքներուն մոլությանցը տեղյակ մեկն էր. բավական ատենե ի վեր ահա կվարեր գեղեցիկ ու առույգ հսկա մարդու դերը։

Այս կյանքը չէր կրնար տևել այսպես. իր ազդած հրապույրը կսամկանար. առջի հետաքրքրությունը կնվազեր։

Նոր եկող պարզամիտ տղան չէր. բայց ի՞նչ օգուտ, հարուստ տիկ-

նանց համակրությունը՝ ծառերուն վրա կեցող թռչուններուն պես անհաստատ է։

Իր պաշտպանուհին ճամփած էր զինքը, ու խանութին մեջ հին օրերու վաստակին տասներորդը անգամ չուներ. մոտան անցնելը այդ վաճառատան մեջ գտնվող բոլոր նյութերուն ճակատագիրն էր, և ինքն ալ այդ նյութերեն մեկը եղած էր բավական ատեն։ Սակայն վստահ ու հանձնապաստան ձև մը ստացեր էր ու իր երիտասարդության ատենեն մնացած վարժությամբ մը, եթե ոչ տիկիններու, գեթ կար կարողներու կամ ասդին անդին տուներու մեջ աշխատող սպասուհիներու մոտ հարգի էր։

Հանկարծ հայրենիքեն թուղթ մը եկավ, որ բռնի կհիշեցներ իրեն մոռցած ու ոտնակոխ ըրած սրբազան պարտավորությունները. այն բարակ պահարանի մեջեն ելլող քառածալ թուղթի կտորը անխուսափելի պարսավ մըն էր ուսկից ակամա կ'ամշնար. այդ անզգա փոքրիկ սուրհանդակը ընտանի և անողոք մարդու կերպարանք կ'առներ և զինքը կհանդիմաներ։ Ո՞րքան արժանի էր այս հանդիմանությանց, այն ատեն կզղջար, ինքնիրեն որոշում կու տար, երկիր երթալու. վաղանցի՞կ ու անհաստատ որոշում, զոր գործադրելու ույժը կպակսեր իրեն։

Ու այսպես կհամոզվեր, որ Պոլիս մնալե ուրիշ միջոց չկար իրեն, ու ժամանակը կ'անցներ։

Օր մըն ալ զգաց, որ տարիքը առնելու վրա էր. սպիտակ թելեր կ'երևային մազերուն մեջ. հայելին՝ ավերած ցուցուց իր դեմքին գիծերը։ Զարմացավ. ի՞նչ շուտ. երկու օր մտածեց ասոր վրա, հետո դարձյալ շարունակեց իր ուղի ընթացքը։

Հարցնողներուն ա՛լ չէր ըսեր, որ ամուսնացած է. բավական ատենե ի վեր վաճառատունեն ալ ելած էր ու դրամի նեղություն ունեցավ։

Պարտիզակցի սպասուհի մը՝ վերջին մնացորդ իր նախկին հարաբերություններուն, ավելցուցած բոլոր ստակը, իր չորս հազար ղրուշը կուտար իրեն, եթե զինքը կնության առներ։

Մարտիրոս բեռնակրություն ընելու ույժ և կամք չուներ. գործ մը բռնել կ'ուզեր ու գործը առանց դրամագլխի չըլլար։ Ինքնիրեն ըսավ նաև, թե քանի որ երկիր չպիտի երթար, առանց կնոջ ապրիլը անկարելի էր։

Գաղտնի ու անձայն պսակվեցան, գողերու պես, առանց պատրիարքարանին լուր տալու, բարեկամ մը հրավիրելու. ոսկի մը տվին քահանային ու խնդիր չմնաց։ Այս եղավ իր վարած կյանքին վերջավորությունը։

Ը

Հայրենիքը իր կինը կսպասեր. ձմեռը ամառվան, ամառը ձմեռվան կհաջորդեր, ու տարիները կ'անցնեին անփույթ ու անտարբեր իր թախծալից ու սգավոր կյանքին համար։

Պոլսեն թուղթերը ցանցառ և ուշացած կու գային. փոլոսները չէին վճարվիր ա՛լ ու աները իր նամակներուն մեջ կսպառնար հարսը վռնտել երբոր երկրորդ փոլոսն ալ անվճար մնար. տանը մեջ ամենքը զինքը հանցավոր կբռնեին էրկանը անտարբեր ընթացքին համար։

Գացողները կշարունակեին Պոլսեն դառնալ, ու պատանիներ կ'երթային պանդխտության տառապանքներուն պակասը լեցնելու մայրաքաղաքին մեջ։ Ու թուղթերը կճամփեին գեղեն, բարևներե, ընտանյաց անդամներու ողջ առողջ ըլլալուն լուրեն և ստակ ղրկելու հավիտենական պահանջումեն բաղկացած։ Պատասխան չկար։ Հարսը՝ հիմա կատարյալ կին եղած՝ կրնար երբեմն անկյուն մը քաշված արտասվել։

Ամեն կիրամուտքի եկեղեցի կերթար. կիսակործան ու գյուղին տնակներուն պես հին ու սեցած եկեղեցի մը, ուր պզտիկուց ի վեր գացած էր և ուր իր պսակը օրհներ էին։

Հոն, սուրբերու պատկերներուն դեմ զորս լուռ, բայց անաչառ վկաներ կկարծեր իր ամուսնության, իր տառապանքը կպարզեր ու ջերմեռանդ աղոթքներովը, որոնք հանդիմանության պես բան մը կնշանակեին, պատասխանատու բռնել կ'ուզեր այս եկեղեցին իր խորհնովը, մասունքներովը, բոլոր սուրբերովը, իր կործանած հույսերուն համար։ Սակայն այս հավիտյան բացակա էրկանը համար ըրած աղոթքները չէին փոխեր իր ճակատագիրը։

Այն ատեն հարկ կ'ըլլար Գամոզվիլ, բոլորովին հույսը կտրել այս ամեն ժամ սպասված ու ամեն ժամ ի դերև եղած վերադարձեն։

Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չպիտի գար. բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամփած էր իր երիտասարդ էրիկը։ Հոն, կանգուն և առանձին, հեռուն տարածվող ընդարձակ ու հարթ դաշտին վրա պտտցնելով իր հետախույզ նայվածքը, Այրին դեռ կսպասեր։

<1888>

ԽԱՐԻՍԽԸ

Ա

Ոչ ոք իրեն չափ աստվածասեր ու աստվածավախ էր միանգամայն. կյանքի բոլոր երևույթները, բնության բոլոր գաղտնիքները աստուծո գաղափարովը կբացատրեր ու կհասկնար ինքը՝ խելացի կին մը սակայն։

Աղոթքը իր հոգվույն ամենեն անդիմադրելի պետքն էր, հորմեն մորմեն ժառանգած այս որոշյալ ժամերու աղոթելու սովորությունը զոր զավակներուն թողուլ կխորհեր։

Իր ամուսնության առջի օրեն, դեռ երիտասարդ կին ու աղքատացած մարդու աղջիկ, էրկանը փարթամ ու հարուստ տանը մեջ չէր կրցած համակրություն շահիլ, ու պարտավորված էր հյուրի մը պես, ավելորդ, ձանձրացուցիչ օտարականի մը նման, զգույշ ու անձայն մնալ, ոտքին մատներուն վրա կոխել։ Այն առեն ծամասիրությունը իր ճշմարիտ սփոփանքը եղած էր։

Այն գեղին, որ Սոֆիկ հանրմ հարս եկած էր, կսիրեր փոքրիկ եկեղեցին. պարտեզ մը կբաժներ իրենց տունը աստուծո տունեն։ Իր հարսանեկան սենյակին մեկ պատուհանեն կդիտեր ծովը ճշտաշարժ ու անհուն կապույտովը. մյուսեն՝ եկեղեցվույն կամարները, երկուստեք դուրս ցցված պահարաններով, որոնք շենքին երկայնքին հետ ամրակուռ ու քառակուսի խաչ մը կձևացնեին, իրրև անքույթ ու անշարժ խարիսխ մը, որուն իր ձեռքն էր փարիլ։

Իր ամուսնությունը, որով աշխարհի պայքարին մեջ կթեակոխեր, աստուծո բացորոշ կամքին վերագրած էր միշտ և այս անծանոթ տան ու կյանքին, նոր բացվող ապագային մեջ այս ուղեորությունը՝ ամենազոր էակի մը երաշխավորությանը տակ դրած էր։

Ուրիշներ՝ պարի, խրախճանության, զբոսանքներու համար կհագվեին. ինքը՝ կիրակի առտուները եկեղեցի երթալու, վերնատան իր հատուկ անկյունին մեջ կենալու աղոթելու համար փափրեր արդուզարդը, որուն մեջ ցույց կու տար ընտրանքով ու ճաշակով հագվող կնոջ բնական գերազանցությունը։

Գլխարկին, կոշիկին, շրջազգեստին բարեձևությանը զմայլողները հոն հանդիպած էին այս երիտասարդ կնոջը։ Մեծ պահքի չորեքշաբթի օրերը, ծնունդի և զատիկ տոները անպատում խնդության օրեր էին իրեն համար։ Էրիկ մարդիկ բակին մեջ, բանկալին քով կսլքտկային, կսպասեին, երբ բարձրագլուխ կհառաջանար, ժպտուն ու երջանիկ, փղոսկրե ծածկույթով աղոթագիրքը ձեռքը և ամփոփ շրջազգեստին եզերքեն ցույց տալով փոքրիկ կոշիկներուն ծայրը և հեշտաբույր հոտ մը ծավալելով շուրջը։

Երբեմն գավիթին մեջ կկենար, ջերմեռանդ խաչակնքումներովը, ծնրադրություններովը, մրմունջներովը զմայլեցնելով իր թաղեցիները և հատկապես այն ալրերը, որ աստուծո նվիրված այս գեղեցիկ կնկան հետամուտներն էին։

Բ

Այս էր իր հրապույրը, իր հաղթությունը, սուրբ, բոլորովին կրոնական բան մը, իր խանդավառ կնոջ մարմնական անձկությունները՝ քավության ու թողության գաղափարներու ուժովը զսպելով շարունակ։

Եվ սակայն հաշիվ մը կար այս աստվածասիրությանը մեջ։ Ատենով հարուստ, հետո չքավորության մատնված հոր մը զավակն էր։ Աղջիկ ատենեն երբ պասմա շրջազգեստի մը ա՛խը քաշած էր բոլոր ամառը, երբ իրենց աղքատիկ կարասիներուն նայելով, ճոխ ու զարդարուն սենյակի մը կարոտովը տանջված էր, երբեք հուսակտուր եղած չէր. կզգար, ինչուն չէր գիտեր թեև, որ այս չքավորությունը վաղանցիկ բան մըն էր, այս հինումին տունը վերջնական կայան մը չէր։ Կհիշեր, իբրև մշուշի մը մեջեն, իր մանկության օրերուն փարթամ վիճակը, բազմաթիվ սպասավորներով ընդարձակ ապարանքը, անհատնում սրահներով ու սենյակներով լեցուն, հեռանկար մը, որ կհրահրեր, կտոչորեր իր երիտասարդուհիի իղձերն ու տառապանքը։

Ու կխորհեր որ այս ամենը վերադարձնելու, իրականացնելու կարող մեկը, աղերսանքի ունկնդրող հազվագյուտ մեկը, քովը, մոտը, գըլխուն վրա էր, աստվա՜ծ։ Եվ իր ամուլ մնացող փափագներուն, փառասիրական ցնորքներուն սասակությանը չափ, աստուծո վրա իր հավատքը զորավոր ու հաստատ կդառնար։

Կհավատար, ոգովհետև անհրաժեշտ էր այդ հավատքը իր կարոտ ու զրկյալ հոգվույն։

Իսկ հիմա այնչափ ավելի որքան այդ պատանուհիի երազները՝ անհուսալի, ո՜հ, բոլորովին անհուսալի ամուսնությամբ մը ստուգության փոխված էին. և անկեղծ երախտագիտությամբ մը լեցված, ինքը զոհ ըլլալուն համար կարծելով որ ամենքն ալ պետք են զոհ ըլլալ, պարզամիտ և ակամա եռեռության մը բերմամբ, ինքն ալ փոխադարձապես պաշտպան կկանգներ իր աստուծուն ամեն կարգի թերահավատներու դեմ, որոնց շատնալը կգիտեր ցավով ու զարմանքով։ Կմաքառեր անկեղծ եռանդով մը, չզգալով իր փաստերուն տկարությունը։

Կծաղրեին զինքը, կխնդային իր անդրդվելի համոզմանը վրա. ամեն կերպ աղետներ, մահ, ավերում, հրդեհ, աղքատություն կթվեին իր առջև, համար պահանջելով այս ցավերու և անիծից աստուծմեն։ Ոմանք, հայհոյիչնե՞ր, անոր գոյությունը կ'ուրանային ու Սոֆիկ հանըմ, չկրնալով այս նախատինքներուն տոկալ, ոտքի կ'ելլեր ձեռնամած գոչելով.

— Անուշիկ աստվածս, աս ինչե՞ր պիտի լսեմ եղեր։

Ինքը բարիք միայն վայելած էր անկե, այդ մահերուն, ավերումներուն զոհ գացող անձերուն համար անշուշտ աստուծո արդարությունը այնպես տնօրինած էր, և այս պատուհասները առանց պատճառի չէին հարկավ։

Գ

Հիմա «վերադարձի վրա» կին մըն էր. բացորոշ ծերության մեջ թեակոխելե առաջ կիները երիտասարդության, թարմության հրապույր մը կվերստանան միշտ. Սոֆիկ հանըմ այդ վերջալույսի հրապույրովը կփայլեր, իր աղջկանը չէին փոխեր զինքը։ Դարձյալ առջի հավատացյալ կինն էր, թեև այն քսանհինգ տարիներուն, որոնք անծանոթ ու թշնամի հովե մը մղված ալիքներու պես եկեր անցեր էին, շատ կորուստներ տված էր։ Իր կրոնասիրությունը անդրդվելի մնացած էր սակայն այն հարատև ձախորդությանց մեջ զոր չըմբռնել կսկսեր։ Քանի մը տարվան մեջ չորս զավակներե երկուքը մահը առեր տարեր էր իր ձեռքեն և էրկանը հարստությենեն Ֆոնսոլյիտեի կորուստներու, հիմնահատակ փճացումին հիշատակը մնացած էր։

Ի՞նչ բանի համար արդյոք աստված կպատժեր զինքը. հետաքրքիր, անձկահույզ կքններ, կպրպտեր իր կյանքը, ուշադիր՝ սև բիծ մը, չար գաղափար մը չմոռնալու չափ. այս անվերջ հետախուզություններուն մեջ ոչինչ կգտներ՝ անընդհատ դժբախտությանց արժանանալու չափ կարևորություն ունեցող։ Կսարսափեր մանավանդ վերահաս աղքատութենեն։ Դժգոհ և անհանգիստ կմնար միտքը, զարմանալով այս բարեկամ աստուծուն իրեն դեմ բռնած տարօրինակ ընթացքին վրա։

Կ'աղոթեր, հարցումներով լեցուն աղոթքներ, իբր թե իր մտերմին երեսին ըսեր.

— Ի՞նչ պատճառով մեզի նեղացած եք։

Ի՞նչ կար անցած դարձած մեջերնին այսչափ գժտելու համար. և ընդունելի պատճառ մը գտնելե հուսաբեկ, հարյուր անգամ քավված ու թողության արժանացած մեղքերու վրա միտք հոգնեցնելե ձանձրացած, կ'առանձնանար իր սենյակը, առջի հարսանեկան սենյակը, և աչքին

առջև ցածուկ եկեղեցին իր քառաթև որմերով կտարածվեր, իր կամարներուն ուռնցքը կթավալեր օդին մեջ, հանդարտ ու անփույթ առջի օրվան պես։ Խարիսխը կշարունակեր վստահություն ներշնչել։

Հետո պզտիկ հաշտության թվական մը սկսավ աստուծո և իր տանը մեջ. առջինեկ զավակը եկավ հասավ, ճիշտ ժամանակին, վասն զի բոլորովին փճացած էին ալ. որքան աղոթա՞ծ պաղատած էր աստուծո այս սիրական զավկին համար, հիվանդոտ ու նիհար տղա մը։ Ամենը կգովեին այս երիտասարդը, որ կառավարական պաշտոնի կոչված՝ փայլուն ապագա մը կխոստանար։ Այն առեն Սոֆիկ հանըմ ինքզինքը մեղադրեց վայրկյան մը կասկածած ըլլալուն համար աստուծո անհուն գթությանը վրա. առտու իրիկուն իր եկեղեցին վազեց, մոմ վառելով խորանին ու բոլոր պատկերներուն առջև։

Շատ մը մարդիկ չտեսնել կձևացնեին իր ամուսինը՝ իմացած ըլլալով անոր դրամական վիճակը։ Հիմա զավկին հաջողությունը լսելով նորեն բարևել կ'սկսեին զինքը իբրև թե ճամփորդությենե մը վերադարձած ըլլար։

Եվ այս տեսած բարիքին փոխարեն, երախտիք ճանչցող անձի պարկեշտությամբ, Սոֆիկ հանըմ, որոշեց աստուծո տան պայծառությունը հոգ ու նպատակ ընել իրեն անկե ետքը։

Մեծ խորանին, պզտիկ խորանին, ավագ կամ լուր օրերու հատուկ, պարզ կամ ոսկեզօծ վարագույրներով, շանդիկներով, գորգերով, ձեռագործներով եկեղեցին զարդարեց։

Սուրբ մուրացկանությամբ տունե տուն կպտտեր, մեկուն աղջիկը նշանելու, մյուսին հիվանդը առողջացնելու խոստումով. ասոր, անոր, բարեկամ, ծանոթ կիներու ուխտ ընել կուտար ու նվեր կհավաքեր։ Իր եկեղեցվո սուրբին զորությանը ապաստանած, ամենուն սրտին բաղձանքը առաջուց կշնորհեր, և եկեղեցին կհոխանար այս կանացի բարեպաշտության արդյունքը եղող նվիրատվություններով. մինչդեռ իր մտքովը, այս ամեն ջանքերով տեսակ մը ապահովագին տված կ'ըլլար իր ընտանեկան հաջողությունը ապագա վտանգներե զերծ պահելու համար։

Դ

Երեք օրե ի վեր Սոֆիկ հանըմ իր տղուն անկողնին քով կհսկե. երիտասարդը պտույտի մեջ մսած՝ ծանր թոքատապե մը կտառապի։ Սոֆիկ հանըմ չի հասկնար այս նոր հարվածը. բժիշկները կու գան կ'եր-

թան գլուխին երերցնելով և իրենց ապիկարությունը, ուրիշ ամեն ատեն ծաղրելի, հիմա սպառնական ու ահարկու բան մը կնշանակեն։

Գրողա այս մարդոց երթևեկեն, կդողա անոնց խորհրդակցություններեն, վասն զի ասոնց խոսքը ի դերև հանելու կարող՝ մեկը չի տեսներ իր քովը։ Ու հիվանդին քնացած մեկ վայրկյանին, գիշեր թե ցորեկ, կվազե շնչասպառ իր եկեղեցին, իր սուրբին, իր աստուծուն, իր բժիշկին ոտքը, արցունքով ու պաղատանքով օգնություն հայցելու, մինչդեռ խորանին առջև կանթեղը կշարունակե պլպլալ միօրինակ հատնումներով, նվաղումներով։ Երբեմն, գիշեր ժամուն կվախնա կոսկա թանձր ստվերներեն որոնց մեջ, ոչ սուրբի, ոչ աստուծո պատկեր կրնա զանազանել, հապա անտեսանելի ոգիներ, որոնք, իր գլխուն, պատե պատ կվազվզեն ու եկեղեցիին պարապությունը աներևույթ բազմությամբ մը կլեցնեն։

Հիվանդին քով կծածկե իր տագնապները, որպեսզի ալ հայտնի համարձակ կգծագրվին իր դեմքին, իր ճակտին վրա. մազերը կ'ալևորին, և Սոֆիկ հանըմ, առանց ուղելու, առանց գիտնալու սեր հագնիլ կսկսի։

Հետո զավկին վիճակը ծանրանալուն հետ, փոխն ի փոխ աստուծո կամ մարդկանց ապավինելու վարանումներ, երկմտություններ կ'ունենա։ Կզգա որ աստված կ'ուշանա ու միանգամայն կզղջա այսպես խորհելով մեղք գործելուն համար։

Մահը իր միակ ապավենը եղող այս զավա՞կն ալ պիտի խլե արդյոք։ Սոֆիկ հանըմին սկնարկը կթափառի հեռուն տարածվող, փրփրացող ծովուն ու իր մոտի ամուր խաքսիին վրա. անիկա հիմա փրկության գաղափարը չարթնեցներ իր մտքին մեջ, այլ տոյգ նավաբեկության մը տպավորությունը կթողու։ Ի՞նչպես կըլլա, որ մինչև այս վայրկյանիս անոր մտքին վստահած ու ապրած է, իր բոլոր կյանքը գրած այդ հիման վրա, որ կ'երերա, կշարժի, կտատանի։

Մինչև վերջին վայրկյանին բաջությամբ ապառնեց իր զավկին քովը առուքան դեմ նորեն եկեղեցի գնաց, վերջին բացատրություն մը ուզելու համար. պարտեզեն անցավ, պահարանեն ներս սպրդեցավ. ոչ ոք. իր ծանոթ փոքրիկ եկեղեցին էր. այս գիշեր ժամուն մերկ, ցրտին ու ամայի պատերը միայն տեսավ շուրջը, սարսուռ մը կվազեր այս անզգա պատերուն վրա։

Խորանին առջև նվազկոտ լույսի մը նշույլովը տիրամոր դեմքը նշմարեց իր հաբատև ժպիտովը։ Սոֆիկ հանըմ ծնրադրեց աղոթելու համար ու բարձրաձայն խոսիլ սկսավ։

Կանթեղին ցոլացումը հոս հոն դողդոջուն լույս մը կնետեր, ու աղոթողին ստվերը նախ գետնիս, հետո վերնատան, հետո քարե կամարին, հետո սյուներուն վրա կտարուբերեր, կպտտցներ ու անոնց համեմատ կոտրտվելով կպատշաճեցներ։

Այսպես ժամերով կանթեղին վտիտ լույսը զբոսնեցավ անոր հետ, մինչդեռ կինը կբողոքեր զայրագին այս անարձագանք պատերը արթնցնելու, անոնցմե վերջնական խոսք մը առնելու ճիգով։ Հանկարծ ետին դարձավ, ճերմակ ներկված պատերուն վրա շուք մը տեսավ, իր շուքը, սև ու սգավոր իր ապագային պես, որ հիմակուց կպատկերանար, սիրելիներու գերեզմաններուն վրա ոստոստող վհուկի մը պես։

Անկե վերջը կանթեղին լույսը անհեթեթ նկար մը ձևացուց պատին վրա. այն երկաթե ձողեն, որ կամարին բացվածքը կմիացներ, չվանով կախված մարմնի մը, աստվածածնին դեմ լեզու հանող մարմնի մը տատանումը գծեց, միօրինակ և հեռդհեռե նվազող ճոճումով որ կշարունակվեր դեռ երբեր լուսարարը եկեղեցին բացավ այն առտուն։

<1890>

ՏԱԼԻԼԱ

Ա.

— Տոքթոր, կ'ըսեի իրեն...

Տոքթորը բարձրահասակ, ոսկրուտ ու նիհար մարդ մը, իմ դեմի սենյակիս վարձակալն էր, այն տանը մեջ ուր կբնակեի։

Կանուխեն— հազիվ հիսուն տարու կար— հանգստյան կոչեր էին զինքը, սրտի հիվանդության մը պատճառավ որդուն մահացու հանգամանքը հաստատված էր։

Իր մերձավոր մահվանը գիտակից այս մարդը՝ կավե արձանի մը անվրդով դեմքը ուներ ամեն ատեն։

Լյուքսանպուրի սրճարանին հաստատ հաճախորդներեն մեկն էր ու ամեն օր անխախտ կգտնեիր զինքը հոն, կես օրեն վերջը, աջ կողմի կարմիր թավիշե նստարանին վրա, քոնյաքի բաժակի մը առջև, «Տեպա»ի կամ «Թան»ի ընթերցման մեջ ընկղմած, չխոսելով մարդու հետ, չզիջանելով նայիլ փողոցը, անցուդարձին, ապրելու, գվարճանալու, վայելելու անձուկը ունեցող աշխարհին, իբրև մեկը՝ որուն ակնարկն ու ուշադրությունը մեծագույն վայելքներու ու վեհագույն աշխարհի մը վրա սևեռած ըլլային։

Ապահովապես, իր քաշված մարդու միայնությունը՝ մեզ շրջապատողներին շատ ավելի աննենգ ու հաստատ դեմքերով, անանց ու հավատարիմ պատկերներով շրջապատված էր։

Առանձնություն մը՝ համակ լեցված այն տեսիլներով, որոնց համար Սյուլլի Բրյուտոմ ըսած է՝

որ մնան միշտ

առանձնություն մը ըլլալե չի՞ դադրիր։

Այս մարդը իր նմաններուն պես ապրելե զզված ու նոր ծանոթություններու, դեպքերու համար վերջնապես փակված կթվեր։

Մենք՝ մեր սրտաբաց ու հետաքրքիր ձևով՝ ընդունելության այն մեծ դահլիճին կնմանինք ուր ամեն ոք կրնա գալ, ձեռք սեղմել, տեղ մը գրավել ու քիչ մը վերջը հեռանալ. դահլիճ՝ որ կլեցվի ու կպարպվի ամեն վայրկյան, ուր գույները, գիծերը ու հոտերը իրարու կխառնվին ու կշփոթվին միշտ։

Անիկա պզտիկ խուցն էր ուր մտերիմները միայն մուտք ունին, առաջուց ի վեր իրենց հատկացված տեղը կբռնեն ու միևնույն խոսքերը կկրկնեն երբեք խոսին. հիշատակներ՝ որոնք այս պզտիկ սենյակը կկահավորեն, կլեցնեն, կզարդարեն թանկագին գեղորներու պես, որոնց՝ աչքը վարժված է ալ ու գոց գիտե ամեն մեկուն դիրքն ու պատկերը։

Բ

Երեք ամիս շարունակ, ամեն հեղ, որ սանդուխին վրա կամ մեր դեմ դեմի սենյակները զատող սրահին մեջ հանդիպեցանք իրարու, բարև մը միայն փոխանակեցինք։

Հետո, օր մը— սաստիկ հազե մը կտանջվեի— խնդրեցի որ սենյակս գա. եկավ, դժկամակելով քիչ մը. բազկերակս չքննեց ու լեզուս չնայեցավ, այլ գրքատունս աչքե անցուց. դեղեր չտվավ։

— Խաբեբա ու սնոտի բաներ են այդ ամենը,— ըսավ ինծի.— հիվանդությունը իր շրջանը պիտի ընե։

Տարօրինակ բժիշկ։

Հաջորդ օրը նորեն եկավ. Վիքթոր Հյուկոյի հատոր մը ուներ ձեռքը. սնարիս քով նստավ ու առանց վիճակս հարցնելու «Ճին»երը կարդաց։ Մյուս օրը Լամարթինի «Ժիրոնտեններու պատմություն»ովը եկավ քովս։

Ինցա ու այնուհետև բարեկամ եղանք իրարու։

Առանձին, բոլորովին առանձին էր աշխարհիս վրա. ազգատան ու բարեկամ չուներ և ունենալու պետքը չէր զգացեր երբեք։

Կյուլհանեի շրջանը ավարտելեն ետքը, քսան տարի ամբողջ դուրսերը շրջած էր, լեռնահոլով ու սառուցիկ բարձունքներե մինչև արևակեզ անապատներու միայնությունը։

Ու կենդանդեր անտրտունջ, ընկեցիկ մանուկի մը պես, երթալով միշտ հոն ուր կդրկեին զինքը, վայրապար չտանջելով իր սիրտն ու միտքը անիրականալի փառասիրություններով, հանգիստ ու հանդարտ կյանքի պահանջումներով։

Ինքն էր որ կկոչվեր միշտ Միջագետքին մեջ երևցող ժանտախտին, Սուրիո մեջ երևան ելլող քոլերային դեմ առողջապահական միջոցները անմիջապես ձեռք առնելու։ Այս մահարաժամներուն մեջ թրծված, եփված մեկն էր, սկեպտիկ մարդ զոր բնությունը իր մեծագույն աղետներուն վարժեցուցած էր, անտարբեր դարձնելու ասոիճան։

Այսպես թափառած ու վտարանդի կյանքի վարժությամբ, հաստատուն կայանի մը, ծանոթ ու սիրելի շրջանակի մը կարոտը զգացած չէր երբեք. իր սրտին խանդաղատանքը՝ բույն չէր դրած տեղ մը, այլ ցրված թոթափած էր ամեն կողմ, ամեն տեղ, բզիկ-բզիկ եղած՝ իր անդդպ ուղևորությանը մեջ։

Քաջ վիրաբույժ էր. այսպես կ'ըսեին գոնե անոնք, որ ինձմե լավ կճանչային զինքը. բայց երբեք ամենափոքրիկ վիրաբուժական գործողության մը մասնակցիլը չէի լսած, թեև բժշկություն ի գործ կդներ մեր թաղին մեջ, ծույլ ու անտարբեր պաղարյունությամբ։

Գ

— Տոքթո՛ր,— կ'ըսեի իրեն,— քեզի համար կ'ըսեն որ քաջ վիրաբույժ ես. ինչո՞ւ արվեստդ ի գործ չես դներ։

Դեմ դեմի նստեր էինք Լյուքսանպուրի սրճարանին մեջ. ինքը՝ իր սովորական տեղը, ես՝ իր սեղանին դիմացը։

Հարցումս զինքը հանկարծակիի բերավ, տեսա, որ իր սովորական անխռով դեմքը այլայլեցավ, քունյաքի պզտիկ բաժակը զոր բերնին մոտեցուցած էր, դողաց ձեռքերուն մեջ։

Մարդ չկար մեզմե զատ։

— Ըսեմ քեզի թե ինչո՛ւ այլևս վիրաբուժություն չեմ ըներ,— պատասխանեց բժիշկը ինծի։

Այն ատեն, հիշատակները ամփոփող մեկու մը պես վայրկյան մը

կեցավ ու շտկվեցավ նստարանին վրա. իր շոր ու կորցած իրանը ուղղեց ու խոսիլ սկսավ։

Բժշկական վարժարանին հառաջադեմ շրջանավարտներեն եմ. ամբողջ պատանությունս, երիտասարդությանս մեկ մասը աննվեր ու լռին աշխատության մեջ անցած է։ Գիտությունը՝ իմ միակ ըղձանքս ու հաճույքս էր, այնքան որ ընկերներս կծաղրեին տարիքիս անպատշաճ այս անմեղությունը. հիմա որ բնավորությունները, խառնվածքները վերլուծելու կարող եմ, կտեսնեմ, որ միամիտ ու խանդավառ մեկն էի ես ու առջի դեմս ելլողը բոլորովին պիտի գրավեր, հրապուրեր զիս. երբեք ինքզինքս բանի մը մասնակի չեմ կրցած տալ. մարդիկ կան, որոնք հանչափս կոտորակներու կրնան վերածվիլ առանց պակսելու, տեսակ մը անուշ հոտի պես, որ կրնա ամեն կողմ տարածվիլ առանց իր քաղցրությունը, իր ույժը կորսնցնելու. այս մարդիկ կարող են ամեն առարկայե, զբոսանքե հաճույք զգալ. մեկու մը չեն կապվիր ու ամեն բան իրենցը կհամարեն. ասիկա տեսակ մը հոգեբանական ընկերություն է. ես անոնցմե չէի։

Առջի դեմս ելլողը Գիտությունը եղավ և զայն սիրեցի հոգվույս, տարիքիս բոլոր զորությամբը։

Երբոր վարժարանեն ելա, ուսյալ տղա մըն էի ու այսչափ միայն։ Այն ատեն ժանտախտը կճարակեր Սուրիո մեջ. հոն ղրկեցին զիս. երբեք չվախցա մահեն ու հիմա ալ չեմ վախնար։ Իրարու դեմ մաքառելու կոչված առջի օրեն՝ բարեկամ-թշնամիներ ենք որ կհարգենք, կճանչնանք իրար. բժիշկ մըն եմ ես ու այն՝ մեծագույն բժիշկն է. գիտության ստեղծած հականեխական դեղերուն դիմացը՝ մահն ալ՝ աստուծո ստեղծած հականեխականն է։ Կհավատամ որ մեծ ջարդերը, ահագին կոտորածները, որոնց վարժված եմ ականատես ըլլալու, պատերազմներու մեջ կամ մահացու հիվանդությանց ճարակած միջոցին, առողջարար պաշտոն մը, նախասահմանություն մը ունին։ Ժոզեֆ տը Մեթոի իմաստասիրության հավատացող մըն եմ. այս անունը կժպտեցնե՞ քեզ. ես իմաստասիրությունը կսիրեմ իբրև գերագույն բանաստեղծությունը. այն շոր ու ցամքած գիտնականներեն չեն, որոնց բոլոր հոգին ու զգայնությունը կաշկանդված են ֆորմյուլներու մեջ ու թռիչ չունին։

Դ

Դամասկոսի մեջ մարոնի աղջիկ մը սիրեցի. բայց սիրեցի հիացումով ու շլացումով։ Կույրի մը աչքերը բացվելուն պես բան մը զգացի. ա՞յս էր սերը։ Տալիլա— այս էր աղջկան անունը— ինքը կզարմանար վրաս. կարծեմ թե հարյուրապետի ոսկեզօծ համազգեստես, մայթերուն վրա ձգձգվող ու զարնվող սուրես ավելի հրապուրված էր քան ինձմե. թեթև, զբոսասեր մեկն էր, լուրջ խոսակցության մը և մեծ ըմբռնումներու անկարող։ Ես՝ իմ մտքիս մեջ՝ դինքը ամեն կատարելություններով օժտեր էի. սիրեցի զինքը, իր անունեն սկսելով մինչև ոտքին սիրուն շրփշրփները։

Տալիլա երկայն ծովածուփ մազեր ուներ, որոնք իր ոսկեզանգ գրվագներով շրջապատված փոքրիկ տիստեմեն դուրս կթափեին անհնազանդ և կամակ ցայտուցքներով. կարմիր չուխայե պզտիկ սեյմենին մեջ չսղմող լանջքը՝ նրբաթել կազի մը պարկեշտորեն կրկնված ծալքերով ու փրփուրներովը՝ գոգ առած առագաստի մը կնմաներ. իր շալվարը սև մետաքսե էր։

Արքենի հասակով, բարակամեջք աղջիկ մըն էր Տալիլան և իր հրապույրներուն գիտակցությունը ուներ. կ'երգեր և ուտի վրա նվագել գիտեր. իր մոտ, օթոցին վրա, իր ոտքին քովիկը անցուցած ժամերս, անխոսիկ անմռունչ վերացումներով՝ շնորհալի երազի մը հիշատակը ձգած են հոգվույս մեջ։

Բայց որքա՜ն անհաստատ սիրտ մը ու թեթև գլուխ մը. իր քաղցր նայվածքը՝ արևուն ճառագայթին պես՝ խտիր չէր դներ իրմով ապրողներուն մեջ ու ամենքն ալ հավասարապես իր լույսովը կ'ողողեր, ինչպես կ'ըսե Ֆրան տը Բոնբինյան։ Ես՝ նախանձոտ, հպարտ ու նեղսիրտ, չկրցա հանդուրժել ասոր. սրտմտեցա. Տալիլա զարմացավ. ի՞նչ կ'ելլեր ատկե. ձեռքս բռնեց ու համոզել ջանաց զիս. այնքան մարդիկ երջանիկ կ'ըլլային իր մեկ բառովը. կրնա՞ր այսքան չնչին բան մը զլանալ անոնց։

— Չե՞ս սիրեր գեղեցիկ կնոջ մը երեսը նայիլ երբոր փողոցը հանդիպիս,— հարցուց ինձի։

— Երբե՛ք,— ըսի իրեն խստությամբ։

Ե

Հինգ տարի վերջը. Հալեպի մեջ զորաբանակին կծառայեի. օր մը քրիստոնեի մը տունեն կանչեցին զիս վիրաբուժական գործողության մը համար։ Գետինը փռված անկողնին մեջ երիտասարդ կին մը տեսա։

— Տոքթո՛ր,— կանչեց իր անուշ ձայնովը։

Տալիլան էր։

Մոտեցա ու քննեցի խոցը։ Գրեթե սրտին վրա, ուտիչ վերք մըն

էր, որ իր գունդ ու կարմրած ցցունքովը՝ մարմնին անբիծ ճերմակութեանը վրա խոյացող գեղատիչ թռչունի մը գլխուն կնմաներ։

— Ի՞նչ պիտի ընես, տոբթո՛ր,— հարցուց հիվանդը աղերսարկու ձայնով։

— Մի՛ վախնար,— ըսի իրեն։

Բայց ան իր պաղատանքը ավելցուց. սենյակին մեջ լեցվող բազմութիւնը դուրս ելավ. մայրը ու ես միայնակ մնացինք իր քովը։ Տալիլա կշարունակեր լեզու թափել։

— Պիտի մեռնի՞մ, տոբթո՛ր։

— Ո՛չ, ո՛չ, հիմա կ'ազատիս։

Մայրը բացավ լանջքը ու ես նշտրակս կեղանկին մոտեցուցի։

— Անդի՛ն նայե։

— Քու ձեռքեդ թող մեռնիմ,— ըսավ Տալիլա մեղմիվ։

Դանակը դպավ... աստված իմ, ի՞նչ ըրավ ձեռքս, ի՞նչ ըրի ես, ինչպե՞ս, վրդովումս զոր կրցեր էի զսպել, ճնշեց զիս հանկարծ ու նշտրակս մոլորեցուց։ Երբեք չզիտցա. կտրված երակեն արյունը վտակի պես կհոսեր ու վրաս կցայտեր. դուրս վազեցի օգնութիւն ուզելու համար. ես որ վարպետ վիրաբույժ մըն եմ, ապիկար մարդասպան մը դարձած էի։ Հոսումը դադրեցնելու բոլոր հնարքներս ի դերև ելան։

Տալիլան իմ ձեռքս մեռավ, ճիշտ ինչպես որ գերագույն պշրանքի մը վայրկյանին փափաքած էր։

<1893>

ԿՑԱՆՔԸ ԻՆՉՊԵՍ ՈՐ Է

ՇԻՏԻՆ ՊԱՐՏՔԸ

Ա

Սև կաշիե մեծկակ պայուսակ մըն էր զոր առտու իրիկուն իր ձեռքը բռնած կ'երթար փողոցներեն։ Իր կյանքին անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիե պարկը, որով ամեն իրիկուն իր տան պիտույքը, հացն ու միսը կտաներ, կամ պտուղը իր երկու փոքրիկ զավակներուն, որոնք դրան առջևեն կբոլորվեին խոստմնալից ու խոստմնապահ այս պայուսակին շուրջը։

Այս մարդուն բոլոր հոգնաջան վաստակը ու քրտնաթոր գործունեությունը անոր մեջն էր, դանայան տակառ զոր կլեցներ շարունակ երեսուն տարիներե ի վեր առանց հաջողելու։ Իր կյանքի պայքարը հոն էր ամբողջ, ապրուստի խնդիր, օրական հացի խնդիր, որուն արհավիրքովը լեցուն էր միշտ այդ կաշիե պահարանը, իր մշտնջենական պարապութիւնամբը. իր ուրախութիւնները ու ցավերն ալ հոն էին, իր հիշատակներն ալ։ Աղեկ օրեր ու գեշ օրեր ուներ այդ տոպրակը. տիրոջը պես ճակատագիր մը հարափոփոխ, և անոր պես հոգի մըն ալ ուներ կարծես։ Ո՞վ էր տերը այս երկուքին մեջ. երեսուն տարի վերջը, երբ ձախորդութիւնը իր երկաթի շրջապտույտ օղակներով զինքը կպաշարեր, այս մարդը կհասկնար, որ այդ անզգա տոպրակը իր տերը եղած էր միշտ։

Բ

Հիմա միջակ հասակով, մորվոք, ալևորած մեկն էր Հուսեփ աղա որ վաճառականութենե, խանութպանութենե հետզհետե իջնելով, իջնելով առուտուրի միջնորդությամբ կ'ապրեր ալ, խանութե խանութ,

դուռնե դուռ տանելով պասմաի ու ճերմակեղենի մատուցումներու և պահանջումներու անհամաձայնելի ու հակառակորդ հավաքածոները։

Ո՞վ ըսեր էր որ աս երկուքին մեջ ներդաշնակություն մը կա. Հուսեփ աղան իզուր օրն ի բուն իր հաշտարարի դերը կկատարեր, ողոքիչ, համոզիչ փաստերով, առնողին ըսելով թե ապրանքը ասան էր այդ գինով, ու ծախողին՝ թե իր վաճառը պահանջած գինեն շատ պակաս կ'ըներ. ո՛չ. երկուքն ալ կհամառեին և Հուսեփ աղան հուսակտուր ձեռնթափ կ'ըլլար ա՛լ. առևտուրի տագնապը, զոր իր վաճառական եղած ատենեն այնքան լավ կճանչնար, նորեն իր վրա, իր համեստ միջնորդի ապրուստին վրա ալ կ'իջներ ու փճացնել կսպառնար զինքը։

Ո՜հ, թե որ մինակ ըլլար. ի՜նչ փույթ. բայց երկու աղջիկ զավակներ իրենց պատանության ամեն հրապույրներովը, ամեն պատրանքներովը իրեն կնայեին. առջի մանկուհիները չէին, այլ խելահաս պատանուհիներ կյանքի վայելքի արդար ու անմեղ ըղձանքներով, ակնկալություններով ծարավի։

Այս զավակները, իր բոլոր երջանկությունը, հիմա կճնշեին զինքը իրենց 14—15 տարու աղջիկան անմեղության ծպիտովը, որ հանդիմանությունով լեցուն կ'երևար իր հայրական աչքին։ Հանցավորի պես կմտներ ներս, զրկանքներու դատապարտված այս երկու հոգիներուն առջև, մեղավորի նման գլխիկոր կդառնար տուն, երեսին վրա միշտ պահելով զվարթության կեղծավոր երևույթը ու այս դիմայլակին տակ պարտկելով ապիկար ու շվարած մարդու կսիթը։

Գ

Սկյուտարի բարձունքին վրա՝ Իճատիյեի դռան է իրենց փոքրիկ տունը, ուր երկու հարյուր ղրուշ ամսական վարձով կբնակին երեքը, հայրը ու երկու աղջիկները, որոնց մայրը շատոնց մեռած է. փողոցի վրա նայող փոքրիկ սենյակին պատեն կախված երիտասարդ կնոջ պատկերը անոր է. էրկանը աղեկ օրերուն մեռած էր կուրծքի հիվանդությենե մը, որ պատկերին մեջ տեսնվող սպիտակ ու անարյուն երեսեն կզուշակվի։ Բայց իր հիշատակը կ'ապրի և օր շրջաբ որ իր խոսքը չընեն. գիշերները, երբ աղջիկները կքաշվին, ամուսինը կմնա դեռ իր վաղամեռիկ կնոջ պատկերին դեմը, անխոսուկ ու առանձին. ու իր ոսկեզօծ շրջանակեն նայող այդ անթարթ աչքերեն՝ աղքատացած վաճառականը քաջալերություն մը կ'ակնկալե, զեղեցիկ մյուս կողմեն սպասված զորավիգ մը։

Վասն զի բարոյական կորովը կտակի իրեն օր օրի. իր երբեմնի

նյութական դրամագլխին պես, հիմա կզգա որ սրտին քաջությունը կապառի ու կհատնի քիչ-քիչ։ Գեռ առուները իր դողդոջուն ձեռքին մեջն է պայուսակը, զոր առանց ամբողջապես լեցնելու կդառնա շատ հեղ. ու առուն, նավամատույցին վրա, այն վաճառականներուն քով՝ որոնք մուրացիկի մը ողորմություն տալու պես երբեմն գործ կուտան իրեն, կալբտկա, երբեմն կհամարձակի անոնց խոսքին խառնվիլ, կարծիք տալ, միշտ խոսողին նպաստավոր կարծիք մը։ Անոնց գծին վրա չի քալեր, այլ քիչ մը ետևեն, իր անբաժան պայուսակը ձեռքը, ու երբ պատահի, որ առուտուրի մեջ մեկ մը երեսեն վնաս մը կբեն այդ մարդիկը, ինք անոնցմե ավելի կզայրանա այդ մեկուն դեմ, խոբեբա ու խարգախ կկոչե զայն, որ իր վաճառականին, այդ պատվավոր մարդուն ապրանքները շորթած էր ու ստակները չէր ուզեր հատուցանել։ Ուրիշ ատեն՝ անոնց զվարթ վայրկյաններուն՝ կատակներով, փոքրիկ սիրուն պատմություններով կզվարճացներ, կխնդացներ զանոնք, հետևյալ օրվան համար պզտիկ գործ մը շնորհվելու սպասումով։

Ու վաճառականները կսիրեին այս պապա մարդը, որ ուրիշներու պես անտրես չէր ու իր միջնորդչեքը իրավունք մը պահանջելու եղանակով չէր ուզեր և առաջարկված ամեն զեղչի գլուխ կծուեր։

Դ

Պասմաի ջոջերը կքալեին տոտիկ-տոտիկ, ճամփուն վրա խոսելով, իրենց ծախելիք ապրանքներուն հոգերովը բեռնավորված ամենքն ալ։ Պարսիկ վաճառականները, գլխավոր հաճախորդները, աչքերնին կսկրտեին բանալ. թահացած ու գունաթափ կերպասներու, կշիռներն ու չափեն պակաս ամերիքանիներու վրա առջի շահերը չէին մնացած ա՛լ, և վաճառականները խնայողության նոր միջոցներ կխորհեին. մաքսեն ետը, գրասենյակի ծախքեն վերջը, միջնորդչեքները ծանր կթվեին իրենց։ Ի՜նչ հարկ միջնորդի, անձամբ չէի՞ն կրնար առնել կամ ծախել ապրանքները, այնուհետև, ուրիշ պատճառներ կուգային զորացնել այս որոշումը. միջնորդը միջնորդ մըն է վերջապես և ոչ ապրանքին տերը. ոչ անոր արժեքը կրնա բարձրացնել տիրոջը շափ և ոչ անոր հոգը տանիլ միշտ, ու Հուսեփ աղան որ ետևնուն կուգար, իր սեցած պայուսակը ձեռքը, կդողար հիմա։

— Հուսեփ աղա, քեզի համար չենք,— կ'ավելցնեին վաճառականները,— դուն մեր մարդն ես։

Շունչ կ'առներ խեղճ մարդը. բայց գործերը կգալանային, ավուրշքը շահիլը տարտանեի տատապանք մը կ'ըլլար ու պարտքերը կդիզվեին

շուրջը, գյուղը, շարշին, ամեն կողմ։ Հագուստը տակավին մաքուր կոկիկ էր ու իր արտաքին տեսքեն ոչ ոք պիտի գուշակեր իր զարհուրելի անկումը։

Ու պայուսակը կշարունակեր կրել ձեռքը, անօգուտ տարուբեր մը հիմա, բայց ամչնալով թողուլ, մեկդի նետել զայն, հուսահատությունը խոստովանիլ աշխարհքի առջև, վասն զի ի՞նչ պիտի ըսեր աշխարհք ձեռնունայն տեսնելով զինքը այսուհետև։

Հետո՝ ճարահատած՝ այն վաճառականեն որուն արբանյակն էր, երկու ոսկի փոխ ուզեց ու մերժողական պատասխան ստացավ. հինգ ոսկի պարտք ուներ. պետք էր նախ այդ պարտքը վճարել։ Այն իրիկունը իր պղինձե փոքրիկ ժամացույցը ծախեց երեսուն դրուշի ու պայուսակը մասամբ գոնե կրցավ լեցվիլ նորեն։

Ե

Տունը՝ ուրախ ու զվարթ էր. աղջիկները իր վիճակին վրա տեղեկություններ կ'ուզեին երբեմն. գուշակություններ, նախազգացումներ ունեին իրենց ներսիդին։

— Գործերը ինչպե՞ս են, հայրիկ,— կ'ըսեր անդրանիկը։

Ու կրտսերը՝ կապույտ աչվի, շուշանաթույր աղջիկ մը որ ճիշտ մորը պատկերն էր.

— Այսչափ ուշ մի մնար։

Հայրը կխնդար. ո՛չ, գործերը գեշ չէին երթար. աստուծով ասկե վերջը ավելի պիտի բացվեին։

— Վաղը կանուխ եկու, և մեզ պտտցնելու տար։ Ու ողորմելի հայրը կխոստանար, ամեն բան կխոստանար, կանուխ պիտի գար ու պտտցնելու պիտի տաներ այս հեք զրկյալ որբերը, որոնց էն աղվոր տարիները չքավորության մեջ կ'անցնեին. երևակայացեք ուղևորություն մը, որուն է՛ն գեղեցիկ տեսարանը թյունելի մը անցքը ըլլա, մութ ու քարակոփ պատեր, և որուն մյուս ծայրեն սպասված լույսի շառավիղը չտեսնես երբեք։

Եվ առտուն, կանուխ-կանուխ, առջի շոգենավով կ'երթար Պոլիս, իր ուժաթափ թևին տակ սեղմելով իր պարպված պայուսակը, այս հավիտենական թշնամին ու հավիտենական անկուշտը, որ չէր հագեցած երբեք երեսուն տարիե ի վեր. ու հոն, թևին տակը, խեղդելու պես կսեղմեր զայն, այդ պարպված փորը ու չքացնել կ'ուզեր։

Պոլիս գործ չկար. ժամացույցին ստակեն մնացորդը երթևեկության ծախքին մեջ սպառեցավ ու վայրկյան կմոտենար ահավոր արագությամբ

մը խոյանալով իր վրա, ուր վերջին երեսուն փարան Քուզկունճուքեն Պոլիս իջնելու, հույսի մը ետևեն վազելու ծախքը— վասն զի հիմա հույսի ետևեն երթալն ալ ծախքով է— պիտի հատներ։

Այն ատե՞ն. այս հարցումը զոր միտքը կ'ըներ, որուն պատասխանելու հարկեն չէր կրնար խուսափիլ, իր դեմը կ'ելլեր, խոշոր, հսկա տառերով կգրվեր օդին մեջ, ու իր առջևեն կքալեր իր նայվածքին փակչելով ամեն տեղ։

Զ

Ինչպե՞ս կ'ըլլա որ մարդ հացի մը ստակին կարոտը կքաշե կամ շոգենավի մի ստակը չվճարելուն համար կեցած տեղը կմնա գամված, անշարժ։

Հուսեփ աղան գիմա այս խնդիրները կհարուցաներ մտքին մեջ, լուծելու կջանար, և փողոցին մեջ քալելով, իր դատարկ պայուսակը զգալով, շոշափելով մատներուն տակ, իր տունը փոխադրված կզգար ինքզինքը հանկարծ, իր սիրուն զավակներուն քովիկը, և պահ մը վերացած՝ կմոռնար ինքզինքը, իր ավուր հացի կարոտ մուրացկանի դիրքը, վայրկյան մը գոնե, հարուստ ու ամենակարող ըլլալու համար. այդ փոքրիկ տունը կձգեր, ավելի ճոխ բնակություն մը տալու համար իր զավակներուն. նոր զգեստներ, գլխարկներ, անոնց երիտասարդի բոլոր պահանջումներեն ավելի՛ն, շատ ավելին կուտար, ու հրճվանքնին տեսնելով կբերկրեր։ Ի՜նչ դյուրին ու ի՜նչ դժվար երջանկություն։

Եվ ձեռքին տակ՝ պայուսակը իր կաշիի կոպիտ ու ծակոտկեն երեսովը կդողդղար, կ'արթնացներ զինքը, իրականության քով կքաշեր կբերեր, անոթի առնելիքվորի մը պես։

Հետո վերջին հնարքները սկսան ապրուստի. մանր ու արհավրալից բաներ. նորոգելու պատրվակով տունեն տարված ու չնչին գինով վաճառված կարասիներ. տնական պետքերը հոգալու համար նորե նոր՝ ամեն օր տարբեր խանութներու, ծախողներու դիմումներ. ապառիկ գնելու համար հաստատված մտերմություններ, բարեկամություններ. հետո շոգենավի տոմսակը ուրիշի ստակով առնելու համար ուրիշին քով սպասելներ. զուր ջանքեր բոլորն ալ՝ լեցնելու, ոհ, մասամբ գոնե լեցնելու համար իր պահանջող պայուսակը զոր բռնած կտանի դեռ, առանց պատճառը գիտնալու, առանց պետքի, անգիտակից շարժումով։

Է

Այն առտուն իր առջինեկ աղջիկը տվավ պայուսակը ձեռքը,— «Ծրեկվան պես միսը չմոռնաս. քիչ մըն ալ պտուղ բերես. պանիր ալ»։

Ու փախստական հորը ետևեն որ կ'աճապարեր հեռանալու, կշարունակեր իր շնչին խնդրանքներուն անհատնում շարքը։

Զառիվայրեն իր ընդոստ աճապարող քալվածքին հետ պայուսակը կ'երերար, պարապ որովայնի ձայներ, հեծկլտուքներ կհաներ։

Երեք մեթալիք տասնոցները զորս իր գրպանին մեջ հուսահատորեն կսեղմեր, չկորսնցնելու սարսափով, Պոլիս պիտի տանեին զինքը. ի՞նչպես պիտի վերադառնար իրիկունը. ու կզղջար, ո՞րքան կզղջար բնակելուն Սկյուտար ուր ոտքով չերթցվիր, ու չի բավեր բարի կամեցողություն կամ աշխարհիս մեծագույն քաջությունը ունենալ՝ նույնիսկ պարապ ձեռքով տուն դառնալու համար։

Շոգենավին մեջ ծանոթներե հեռու նստավ, ծայրը, հոն ուր մեվզի չկա, ոչլոտ մարդերու մոտիկ։ Լավ մը իր քովը տեղավորեց պայուսակը. խնամքով, հոգածու ձեռքով անոր փոթերը շտկեց։ Հետո անիվներուն փոֆ փոֆը իր ուշադրությունը գրավեց. այս եղանակը իր հետաքրքրությունը շարժեց. անիվները իրենց շրջանին մեջ, տեղ մը հասնելուն, միշտ վարանումի պես բան մը ունեին նոր շրջան մը սկսելե առաջ. ասով մասնավոր եղանակ մը կձևանար. փոֆ, փոֆ, փոֆ, փոֆ... փոֆ. մտքեն այս տարօրինակ նվագին կհետևեր, հաճույք մը կզգար։ Այդ վայրկյանին իր հոգվույն ու մտքին մեջ այդ խորհրդավոր ձայնեն զատ բան մը չկար. ո՞վ էր ինքը, ի՞նչ կփնտրեր այս շոգենավին մեջ. ո՞ւր պիտի երթար. չէր գիտեր, իրա՛վ որ չէր գիտեր։

Պոլիս իր վաճառականներուն հանդիպեցավ. խոժոռ ու դաժան դեմքեր գտավ միայն, որոնց տեսքը անգամ իր լեզուն պապանձեցուց. քաջությո՛ւն. ըսե սա երկաթե fացան խրոխտորեն բացող ու գոցող մարդուն, որ զավակներուդ ուտելիք տանիլ խոստացած ես այս իրիկուն. ո՛չ, չկրցավ ըսել։

Շուկան թափառեցավ առանց բան մը ըսելու մեկու մը. խանութներեն ներս նայեցավ քիչ մը. հետո, ոսկերիչներու կրպակներուն դեմը կեցավ քառորդ ժամի մը չափ, ադամանդե զարդերու վրա զմայլած. իր աղջիկներուն երբեք չէր կրցած հատ մը տալ առնցմե, ու հիշեց որ իր երկու աղջիկները կսպասեին իրեն։ Ժամը հարցուց։ Իրիկուն էր. այն ատեն վազել սկսավ. ուշ մնացեր էր. պարապ վարանումներու ու մեծսրտության ատեն չէր. հաց պետք էր ու պիտի ուզեր առջի դեմը ելլող

ծանոթեն։ Զարմա՜նք. ինքը որ այնքան շատ մարդ կճանչնար, անոնցմե մեկուն չէր հանդիպեր։ Սա դեմի կողմեն քալողը կճանչնար անշուշտ. ատենով իրեն մրցակից եղող վաճառական մըն էր, բայց շատոնց բարևը կտրած էին, իր աղքատանալեն ի վեր. սա մյուսը, որ արագ քայլերով իր քովեն անցավ հիմա, ան ալ կճանչնար, ատենով երաշխավոր ալ եղած էր անոր, բայց քանի մը օր առաջ մեճիտիե մը փոխ տալ մերժած էր և հիմա ալ փախչելու պես, երեսը պահելով իր քովեն կ'անցներ։ Ծերուկ մը, մինակ, բարևեց զինքը. իրմե ավելի դժբախտ մը։

Կամուրջը հասած կեցավ. չկրցավ անցնիլ. տասը փարա չուներ. այդ պահուն զգաց որ բան մը կպակսեր։ Ինքզինքը հարցուփորձեց ու պատճառը գտավ. պայուսակը մոռցեր էր տեղ մը. ետ դարձավ, վազեց, ի՞նչ ընելու համար։

Ը

Ծովուն վրա կծփար, կ'օրորվեր, կտատաներ, կոնակին վրա պառկած, բոլոր հառակովը ջուրին երեսը. գեր մարդ մըն էր ասիկա, մեծմեծ բացված, կարծես թե զարմացած աչքերով ու անթարթ, համառ նայվածքով մը դեպի երկինք՝ ուր լուսինը, իր տասնհինգին մեջ, արծաթե կլոր ու հոկա դրամի մը պես կփայլեր։

Ու մարդուն վզին սերտիվ կապված սև կաշիե պայուսակի մը մասը, ջուրեն դուրս մնացած, կծփար անոր հետ, ատեն-ատեն գլուխը սուզել տալով քիչ մը դեպի վար. հետո այդ գլուխը վեր կ'ելլեր իսկույն, ազատելու ճիգով մը պայուսակին ծանրութենեն։

Ծովին հայելիի պես արծաթած երեսին վրա՝ այս մարմինը, իր ճիտեն կախված պայուսակովը, մակույկը ետին ձգած նավու մը կնմաներ, հեռուն, խիստ հեռուն. ջուրին մեջ երկուքն ալ կապված էին ինչպես կյանքին մեջ ալ զատված չէին իրարմե։ Կապը անեղծ կմնար ամեն տեղ։ Քար լեցված այս կաշիե տոպրակը ալ պարպվելու վախ չուներ այսուհետև. հագեցած ու կշտացած փորն էր, գիրգ և ուռեցվորած. իր տեղը՝ մարդոց թևին տակը չէր ուր այդքան տարի ծալլված, սեղմված ու շնչահեղձ մնացած էր, ո՛չ. այդ պայուսակը՝ իր անողորմ համառությամբը, իր հուսահատեցուցիչ դատարկությամբը, մարդոց ճիտին պարտքը կմարմնացներ անշուշտ. իր ճշմարիտ տեղը, ուրեմն, անոր վզին վրա էր, ճիշտ հո՛ն ուր հաստատված էր հիմա։

Եվ երեսուն տարիե ի վեր, վտարվածի մը նման՝ որ առջի անգամ

իր բուն տեղը գտնելուն ու բազմելուն համար կ'ուրախանա, Ֆեյֆ կ'ընե, ծովուն ամեն ծփանքին հետ՝ պայուսակը իր կոպիտ մորթովը մարդուն երեսը կգգվեր ու կշոյեր։

<1892>

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ

Ա

Տոքթոր Վահանյան սովորական բժիշկ մը չէ. մարմնի հիվանդություններուն չափ ու, թերևս անոնցմե ավելի, հոգիի ցավերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկն է անիկա։ Իր ըմբռնումին ու դատողության չափ՝ իր ներողության սահմանը ընդարձակ է։ Գիտության ֆորմյուլներուն, կամ իր արհեստին մեքենական կիրառումին մեջ տափակցած ու չքացած միտք մը չէ։

Իր հմտության մեծությունը՝ չոր ու ցամաք ապառաժի զանգվածին չի նմանիր բնավ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երևույթը ունի։

Վաթսունի մոտ, մազը մորուքը ճերմկած, տկարակազմ բայց զվարթախոս մեկն է տոքթորը։

Մահվան դեմ՝ իր քառասուն տարվան բժիշկի մղած պայքարովը, մտերմություն մը հաստատած է կարծես անոր հետ. անոր ամեն դավերը ու խաղերը գիտե. անոր զարհուրելի, երբեմն հանկարծահաս ու երբեմն համեցող հարվածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է։

Իր խոսակցությունը օգտավետ դասերով, ուղիղ դիտողություններով ու իմաստուն խորհրդածություններով կվխտա։ Անձնական փորձառութենեն ու հիշատակներեն ընդելուզված պատմությունները հետաքրքրությամբ մտիկ կ'ըլլային։

Քատրգյուղի իր տանը մեջ իրիկուն մը ժողվվեր էինք, և մարդոց համար ամենեն հետաքրքրական հարցումը մեջտեղ նետվեցավ հանկարծ։ Ո՞րն էր հազար տեսակ մահերուն ամենեն քաղցրը, բժշկական ու հոգեբանական կրկին տեսակետով։

Հայտնված կարծիքներուն մեջ համաձայնություն չկար. առողջ ու կայտառ աղջիկ մը, որ Ռաֆայել կարդացեր էր և դալուկ ու նիհար կազմվածքի մը կտենչար, թոքախտի հյուծումն է, ըսավ, էն գեղեցիկ մահը. երիտասարդի մը կարծիքին նայելով՝ ռեվոլվերի գնտակն էր ուղեղին մեջ. ուրիշ մը՝ ծովահեղձ ըլլալը ամենեն քիչ տանջանք տվող վախճան մը ըլլալուն վրա պնդեց. քլորոֆորմը երկու կուսակից գտավ։

Բնության ու գիտության հնարած բոլոր միջոցները զատ-զատ քննվեցան ու քննադատվեցան. ամենքն ալ իրենց աղեկ ու գեշ կողմերը ունեին։

Տոքթորը ինքը, մտիկ կ'ըներ ամենուս, առանց բառ մը արտասանելու. վեճը կ'երկարեր ու համաձայնության մը գալե հեռու էինք։

— Ես,— ըսավ տոքթորը, խոսքերնիս կտրելով,— ամենեն քաղցր մահը տեսա, բայց չեմ կրնար պնդել, որ ամեն անգամ մարդս կրնա զայն իր ձեռքին տակ ունենալ. մեկ հատիկ մահն էր ասիկա զոր, իմ տեսած հազարավորներուս մեջեն, ոչ միայն ամենեն հեշտն էր կրնամ ըսել, այլ իրոք քաղցրն ու երջանիկն էր։

Պատմություն մը ուներ լեզվին ծայրը. խելոք կեցած տղոց պես մտիկ ըրինք զինքը։

Բ

Տասը տարի կա անկե ի վեր. բարեկենդանի գիշեր մը իմ դրացիներես մեկուն տանը մեջ երեկույթ մը կար. տիկին... անունը պետք չէ ձեզի, այնպես չէ՞, քառասունը հազիվ թևակոխեր էր, բայց երեսունհինգ տարու չէր ցուցներ վրայեն. այն շատ հավնված ու շատ սիրված կնիկներեն մեկն էր որոնց սերունդը հետզհետե պակսելու, անհետանալու վրա է մեր մեջ. իր մասին պատմված առասպելներու վրա ամենեն առաջ և ամենեն շատ խնդացողը ինքն էր։ Սուտ պարկեշտություններու, կեղծավոր կարմրություններու կինը չէր այն կինը. գլխեն մինչև ոտքը ամեն բան խիզախ ու համարձակ էր վրան։

— Աղվոր կուրծք մը չունեցողները միայն décolleté-ին թշնամի են,— կ'ըսեր խնդալով, և հոժարակամ կպարզեր իր լանջքին կոհակները քոռսեին բացվածքեն։

Էրիկը, ծերունի մը, հայր մը գրեթե տարիքով, հոր մը թույլտվությունները, ազատությունները թողած էր անոր։ Էն աղվոր երիտասարդները, էն շնորհքով մարդիկը իր շուրջն էին, թիթեռնիկներու պես դառնալով, երբեմն էրելով, մրկելով, իր ջերմ ու կիզիչ մթնոլորտին մեջ։

Բոլոր կիները չէին քաշեր զինքը. կնախանձեին, կշարախոսեին իր վրա. անոր համարձակ վարմունքը իրենց պարտկված մեղքերուն, իրենց շինծու ամոթխածությանը դեմ պայծառ արևի մը հալածիչ լույսին կնմաներ՝ խպնոտ ստվերներու վրա սփռված։

Ասոր հետ մեկտեղ, երբեք չէին պակսեր անոր տունեն, անոր երեկույթներեն, ուր էն աղվոր, էն զվարթ, էն նրբամիտ ընկերությունը գտնելուն ապահով էին։

Ատեն-ատեն վկայանշեին զիս այս տունեն, տիկնոջ համար որ մարելիքի պես տագնապներ կ'ունենար երբեմն։ Առջի քննութենես՝ սրտի հիվանդության մը հաստատ նշանները գտեր էի վրան, բայց զինքը չխռովելու համար բավականացեր էի ըսելով.

— Բան մը չեն ասեր, պարզ ջղային անհանգստություններ։

Գլխավոր բանը քիչ մը հանգարտ կյանք վարելու պետքն էր. այս եզավ իմ պատվիրած ալ. բայց ո՞վ մտիկ կ'ըներ ինծի։

Օր մը նեղացաս։

— Տիկին,— ըսի,— պարապ տեղը երթալ գալեն շեմ ախորժիր. քանի որ իմ պատվիրած բանս չեք ըներ, պետք չկա որ զիս կանչեք ուրիշ անգամ. ավելի հանգստավատար բժիշկի մը դիմեցեք, խնդրեմ։ Հիվանդս հասկցավ, և որովհետև մտքի ու սրտի տեր կին մըն էր, խոսքույն ներում խնդրեց այնպիսի քաղցր ու անուշ ձայնով մը, որուն դեմ կենալու էն քարսիրտ մարդն անգամ կարող չէր։

— Ձեր աղեկության համար է իմ պահանջումս. չեմ կրնար առողջության բոլոր կանոններուն հակառակ ձեր վարած կենցաղին ավերումները տեսնել և լուռ դիտել, չեմ կրնար ձեզ շարգիլել այս կյանքը շարունակելե։

— Օր մը ավելի՞ ապրելու համար, տոքթոռս,— պատասխանեց ինծի ժպտելով,— օր մը ավելի՞ տառապելու համար. և բռնելով ձեռքս, ստիպելով զիս որ քովը նստիմ, երբ ես մեկնելու կպատրաստվեի արդեն, շարունակեց.

— Դուք, բժիշկներ, կյանքը երկարացնելու աշխատող մարդիկ, կիներուն՝ այս հեք էակներուն կյանքը պահպանելու մի՞ աշխատիք, քանի որ չեք կրնար այդ կյանքը իր թարմության, իր գեղեցկության մեջ անայլայլ ու հաստատ պահել. ճերմկած թափած մազերու, փոթփոթած երեսի, թուլցած միսի մը ավելի կամ նվազ տեղությունը նշանակություն չունի. կինը իր երիտասարդության, իր հրապույրներուն մեջ կրնա՞ք վար դնել, կեցնել։ Ձե՞ք կրնար, թող տվեք ուրեմն որ երթա հոսկե. իր պաշտոնը, իր կոչումը ավարտած է ան. ի՞նչ, կպահանջես ձայնը մարած երգչին՝ որ սրահին վրա՞ կենա, մինչև որ սուլեն, ծաղրեն ու նախատեն զինքը. կինը ծիծաղ մըն է, պետք չէ որ լացի փոխվի։

Հիվանդությունը կասեցնար, հեղձամները կհաճախեին ու միշտ խուլ կմնար անիկա իմ խրատներուս, և իր զբոսանքի, հաճույքի կյանքը անխափան կշարունակեր։ Տարօրինակ, բայց թերևս ամենեն ուղիղ ըմբռնումն էր իրենը՝ աշխարհիս մեջ կնոջ մը դերին և կոչումին վրա։ Հույսը և Ուրախությունն էր ինքը և անձնուրաց այդիությամբ մը կբաշխեր իր կենդանությունը, իր շնորհքը, իր հրապույրը, երբոր ինքը պետք ուներ առանց։ Քովեն մանչուկ ծախող աղջիկին պես.

Elle mourait de l'hiver, en vendant le printemps.

Φ

Երեկույթը իր ամենեն ցնծահույզ վայրկյանին մեջն էր։ Շատ մը ազնիվ կիներ, շատ մը շնորհալի աղջիկներ, այնքան ալ երիտասարդ մարդիկ ու պատանիներ. լուռ ըղձանքներուն ծանրաբեռն մթնոլորտ մը, որուն մեջ՝ տանտիկինը իր հասակին ու արդուզարդին շքեղությամբը ամենեն զմայլելին կհանդիսանա։

Քովես՝ պզտիկ ձայն մը. ասանկ երեկույթներու սովորական շարախոսությունները, որոնց ամենեն թունավորները տանտիրուհույն դեմ կ'արձակվեին։

— Տեսեք, իր տիրած երիտասարդեն վայրկյան մը չի բաժնվիր. մարդ չի սեպեր ու կնիկը։

Երիտասարդը՝ տժգույն ու նիհար մեկն էր, զոր կիները իրարու ձեռքե կխլեին։ Իր վրդոված կյանքին կպարտեր այս ձգողությունը։ Ուրույնություն մը ուներ անիկա, և իրեն հատուկ դարշը կար իրեն պատկանող ամեն բանի մեջ։ Արհամարհոտ պզտիկ ժպիտ մը նուրբ ու սև պեխերուն ծայրը, կոպերը կտրած աչքեր, որոնք իր գիշերամոլ մարդու հոգնությունները կպատմեին. վեհ խրոխտություն մը, որ վաղաթարշամ երիտասարդությանը վրա ծավալած ծանրության պես բան մը կնմաներ, կարծես ուսումներու և հսկումներու մեջ խորասուզվող մարդու ծանրությունը։

Մտքի ու ճաշակի տեր մեկն էր։ Բրավագիտություն սորվելու համար Եվրոպա կեցած տարիներեն՝ միջակ վկայականով մը, բայց նրբացած իմացականությամբը վերադարձած էր հոս։ Համաբարանին սրահներեն ավելի՝ գեղեցիկ կիներու քով, միանգամայն՝ տաղանդավոր մարդոց և լավագույն ընկերությանց մեջ մտած ու ապրած էր, մտնելով փճացնելով ունեցածը և չունեցածը։ Հոս ոչ փաստաբան եղեր էր և ոչ դատավոր. անկեղծությամբ, քաջությամբ խոստովանած էր իր ապիկարությունը։

Ամեն ինչ չափավոր, գրեթե մեղմ էր իր վրա, իր ձայնը, իր շարժումները. բայց ատոր խորը կտեսնայիր անձնավստահ մարդու, կամ՝ ավելի ճիշտը ըսելու համար՝ իր գերազանցությունը գիտցող մարդու մը անխռով հանդարտությունը։

Աղջիկներու հետևեն չէր վազեր. երեխաներ անոնք՝ իր փորձ, գրեթե հայրական աչքին։ Զիջում մը, ստորնացում մը պիտի ըլլար իրեն համար խոովել կույսի մը մաքուր հոգին. այս կենցաղասեր մարդուն մեջ՝ ահա այս կերպ իր կյանքին հակասող ազնվություններ ալ կային։ Իր ասպետական, կռիվով, հարձակումով բերդ առնող մարդու համբավին և սովորությանցը հակառակ էր տեսլական սիրո մը հեռանկարովը աղջկան մը սրտեն ներս սպրդիլ. այս Ոդիսևսի միջոցները իրեն չէին պատշաճեր։

Զրուցվածին նայելով՝ տարիե մը ի վեր տիկին*** ի մտերիմն էր, ու ամենքը, իրենց բոլոր շարախոսությանց մեջ անգամ, այս երկուքին միջև ճշմարիտ ներդաշնակություն մը գտեր էին, որ երկուքին ալ սովորական էակներ չըլլալեն առաջ կուգար անշուշտ։

Դ

Հիմա կպարեին. այրերը իրենց պահանջումներուն անհամբերությունը բերելով հոս ալ, կիները իրենց անձնամատույց մեղկությունը. խոլական գիրկընդխառնումներու, վետվետումներու անընդհատ շարք մըն էր այս ամենը։

Վալսին՝ տիկինն ալ եկավ այն երիտասարդին հետ, որ իր խոսակիցը եղած էր գրեթե շարունակ, և պարողներուն մեջ այս եղավ էն շնորհալի զույգը։ Զմայլած կդիտեինք զիրենք. պար մը չէր այս, այլ շլացուցիչ բան մը. եթերային ու ցնորական սլացում մը, հափշտակություն մը, քերթված մը ամբողջ։

Մյուս պարողները իրենք ալ կանգ առեր էին այս զույգին շուրջը հիացած, հիացում, որուն մեջ նախանձը իր արդար բաժինը ուներ։

Հանկարծ, սայթաքումի պես բան մը պատահեցավ, կինը իր բոլոր ծանրությամբը վար իյնալու պես եղավ. երիտասարդը մեծ ճիգով հաջողեցավ իր գիրկին մեջ բռնել զայն։

— Ոտքը սահեցավ,— կ'ըսեին։

Ոչ, ավելի բան մըն էր, նվաղում մը ունեցեր էր։

— Հասե՛ք, տոքթոր,— պոռաց երիտասարդը։

Իսկույն քովը վազեցի ու երկուքիս բազմոցին վրա տեղավորեցինք զինքը. հազիվ կրցավ աչքերը բանալ. անմիջապես տեսա սրտի կաթվածի բոլոր նշանները։

Ընդհանուր տակնուվրայության մեջ՝ դեղ մը ապսպրելն անգամ անկարելի կդառնար. օտարականները հեռացուցինք, հյուրերը մեկիկ-մեկիկ մեկնեցան. բայց դեռ սանդուխներուն վրա անոնց ոտնաձայնը

չմարած, անիկա իր հոգին ավանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մեջ, նույնիսկ իր բույնին մեջ նետահար սպանված թռչունի մը պես, ժամանակ չձգելով, որ դեղ կամ դարման մը ընեմ։

Այս եղավ ահա իր վախճանը. կյանքին բոլոր երանությունները միացած խտացած էին այն երկվայրկյանին մեջ ուր կյանքը կթողուր. ասկե ավելի երջանիկ մահ մը կրնա՞ք երևակայել, պատրաստել, շինել ծեզի համար։

Հիվանդություններու, ցավերու մեջ չտառապեցավ. ծերությունը չփճացուց իր շնորհները. պաշտելի ու պաշտված կինը մնաց մինչև վերջի վայրկյանին ու ընդհանուր զմայլումով մը ողջունված, իր սիրած տղուն թևին վրայեն գնաց հեռացավ անիկա։ Բաժակի մը պես, որ կոչունքի մը սեղանին վրա, ցնծության մաղթանքներու, բախումներու մեջ կփշրվի, փոխանակ դուրսը սպասավորներու ձեռքով, լվացքի աղտոտ ջուրին մեջ օր մը կոտրելու անհետանալու, այս կինն ալ էն շնորհագեղ պատկերի մը մեջ գերագույն երջանկությունը զգացած ու պարգևած ժամուն անհետացավ։

<1900>

ԱՅԻՆԿԱ

Ա

Յոթարը Մահալլեին մեջ, բլուրի մը վրա մանառիկ և անձուկ փողոցներով շինված թաղ մը, կռիվը կսկսեր խուլ շշուկով մը, խուզարկության եկող դետերուն դեմ։

Կիներու բազմությունը կ'ավելնար շարունակ. անկյուններե, ծակերե, խորշերե կ'ելլեր հետզհետե ու կլեցվեր հին, փայտաշեն տան մը առջին, ուռուցիկ շալվարներու կոհակներով խափանելով անցուդարձը. հոծ, գրեթե միակտուր զանգված մը ահա՛, որուն մեջ Ռեժիի համազգեստին կարմիր երիզները կխառնվեին նուրբ արյունոտ ջիղերու սողոսկումներով։

Եվ այս կանացի խուժանին բողոքը կ'ելլեր դուրս, զսպված հառաչանքի մը պես բարձրանալով օդին՝ ամառ ցերեկվան մը հեղձուցիչ մթնոլորտին մեջ, ժխոր մը նախ, հետո ճշտվելով քիչ-քիչ, որուն մեջ բառ մը հստակ ու որոշ, ականջի կզարներ, անծանոթ լեզվի մը բառը զոր այս բազմության մեջ ամեն ոք կհասկնար, կկրկներ, իրարու երեսին

գնեցեր և զոր երկաթով փազոցին անձկությունը վիթխարի փոզի մը պես կտաներ, կհասցներ հեռուն, մինչև քաղաքը.

— Այինկա՜, այինկա՜։

Ռեժիի պաշտոնյաները կխորհրդակցեին բռնության դիմելե առաջ, չափելով այս ափարությամբ կազմված զորությունը զոր ահա պեղել, անցնիլ հարկ կ'ըլլար մինչև սա տունին մուտքը, ուր ծխախոտի մեծաքանակ մթերք մը կար պատրաստ, ինչպես որ իրենց իմացուցած էին կանխավ. և իրենց վարձատրության հաշիվով շահմոլի ջիղերնին կարկվեր, ու վրնին կգտայիր ու նոր ջանք մը կ'ընեին, ուսովնին ճամփա մը բռնելու, քայլ մը ավելի մոտենալու համար այդ գեմի դրան, ուրկե հազիվ տասը քայլ կբաժներ զիրենք։

Անոնք՝ բազմությունը ա՛լ ավելի կսեղմվեր, համբերությունը սպառելով, վերջ մը տալու պատրաստ զգացվելով երկուսանք. զայրույթը, հին ատելությունը՝ այս երկու տարրին մեջ, ավանդական, ճակատագրային բան մը երևան կ'ելլեր բիրտ անկեղծությամբ։

Ծխախոտի հին խուզարկություններու, գրավումներու հիշատակը կուգար արծարծել մշտնջենական հակառակությունը. կռիվներու մեջ տրված առնված վերքերու սպիները կբացվեին այս պահուս, իրենց շարավին հոտովը, թարմ արյունի բուրումովը զայրացնելով հատուցումի պետքը և կծու մարմաջը. հետո ամբողջ Յոթարը Մահալլեի մթերքը պահված էր այս խարխուլ տան մեջ, ամենուն հարստությունը, ամբողջ տարվան ապրուստը։ Եվ կհաշվեին մինչև հիմա իրենցմե գրավված ծխախոտներուն քանակությունը, որուն կսկիծը՝ ամեն մեկուն համար զատ-զատ, ծանր տուգանքներով, երկար բանտարկություններով սաստկացած էր։

Ամբոխեն՝ բերնե բերան խոսքեր, անցախոս բառեր կտահեին, կ'ըպրդեին ներս, պատվերներ, հրամաններ՝ փութալու, աճապարելու։

— Տո՜, Հակոբոս, տե՛ երեթա։

Ներսը կ'երթային, կշտապեին, ատնաձայներ, կահ կարասիներու, մթերված ապրանքներու փախադրության խուզ ջանքեր կլսվեին, վայրկենական տեղափոխություն տանիքներու վրա, առաստաղներուն տակեն. և նեղ փողոցին մեջ հիմա ծխախոտի ուժգին հոտ մը կծավալեր, այնքան որ Ռեժիին դիտերը՝ հուսահատ՝ այս բոլոր կիները ցրվելու և կողոպուտը չփախցնելու փորձությամբ կբռնվեին, մինչդեռ ոստիկանությունը, ամենեն ավելի հեռատես, օրինական ձևակերպությունները կկատարեր այդ տունը կոխելե առաջ։

Եվ ազազակը կբարձրանար ավելի ուժգին, կիզիչ արևին ակավա-

ռակեն իյնող հորդ ու ջերմ լույսին պես զայրացած, ազազակ մը՝ որուն մեջ առջի բառը կուգար, կդառնար. կվերադառնար շարունակ.

— Այինկա՜, այինկա՜։

Բ

Երկու եղբայրներուն մեջ Հակոբոս՝ այինկաճիներու մեծը՝ անդրանիկն էր. սևաչվի, սևահեր երիտասարդ, ամառ ձմեռ պահելով իր մեղրագույն ապայե փոթուռն ու շալվարը. հատ տոգուն կտավ, որ դաշույնի հարվածներու կդիմադրեր և զոր ցերեկները կպտտցներ Իզմիրի շարշուին մեջ, զորավոր մարդերու հատուկ դանդաղ ու ծույլ քալվածքով։

Լեռներու զավակ, իր գյուղացիի անձուկ միտքը բնավ չէր կրցած ըմբռնել Ռեժիի դրության նրբությունները. և իր բնական իրավունքին հենած՝ կկռվեր ահա տասը տարիներե ի վեր, ճակատաբաց՝ փոխանակ հանցավորի մը պես պահվտելու. այինկաճիներու համբավավոր պետն էր ու դյուցազնը այնքան արյունոտ ծեծկվուքներու։

Այս երիտասարդն էր որ վկայության համար կանչված, դատարանի մը առջև, իր արհեստը հարցված ատեն պատասխանած էր անփութորեն.

— Այինկաճի։

Հիմա ամենուն ծանոթ է ինք, զոր լերան մեջ ավազակը ու ճամփուն վրա ձիապանը կճանչնան, կսիրեն մեջքի դաշույնը, որուն երկաթը Պոլսեն եկած գնած է, Դամասկոսի դյուրաթեք երկաթ, վետվետող երանգներով, երբեք զուր տեղը փայլատակած չէ։ Ծառերը կճանչնան զայն, այնքան շատ իրենց կեղևին վրա Հ գիրը՝ իր երբեմնի դպրոցական կյանքեն մնացող միակ հիշատակը՝ փորագրված է, սրտնեղության, ձանձրույթի վայրկյաններուն մեջ։

Այս քաղքին շրջակայքը՝ ծխախոտի ամեն փոխադրություն իր աչալուրջ ու ճարտար պահպանության կհանձնվի ամեն ատեն. երբեք չի թողուր փախիր իր արիության վստահված ապրանքը. հնարքը ու քաջությունը կլծորդե փորձ ռազմագետի մը պես ու կհաջողի։

Հիմա պիտի նշանվի. ո՞վ զավակ կուտա այս լերան մարդուն. և սակայն մեկե ավելի աղջիկներ սրտատրոփ կսպասեն դուռը իր անցուդարձին, իրիկվան մութին։

— Բարև, Հակոբոս, ե՞րբ եկար։

— Երեկ գիշեր։

Միշտ գիշերը կուգար այս տղան. անորոշ ժամերով, անծանոթ, անկոխ ուղիներե զորս իրմե զատ ոչ ոք գիտեր, ոչ իսկ իր եղբայրը, Մա-

հակ՝ որ Ռեժիին կծառայե. ինքը ահավոր այինկաճիին կրտսերը՝ Ֆոլճի մը է հիմա լեցուն թոշակով, երիտասարդ կարիճ մը. բայց Յոթարը Մահալլեն, իր ազգականներուն թաղը չի ժպտիր իրեն. աղջիկները չեն սպասեր դուռը. էն տգեղը կծիծաղի իր վրան, և եղբորը նշանածը, Պերճուհին, չի բարևեր զինքը։

Ինչո՞ւ համար հանկարծ թողած է այս տղան իրենները, ատելությամբ զինվելու համար անոնց դեմ։

Եվ այս նեղ փողոցին մեջ, դեպի խարխուլ տունը, որ ճիշտ իր հայրենի տունն էր, ինքն էր ահա որ կ'առաջնորդեր Ռեժիին. և հանկարծակիի եկած ամենքն ալ, չհավատալով դեռ, կհարցնեին իրարու ականջն ի վար փսփսալով.

— Ծո, ո՞վ բերավ ասոնք, Սահա՞կը։

Գ

Սա դեմի ելևէջավոր գիծը, որ հորիզոնը կկտրե կկտրտե, որ իր ատամներով կխածնե երկինքը անսահման կապույտին մեջ՝ լեռներու շղթա մըն է դեպի հյուսիս վազող. իր ափափա կողերուն վրա տարածվող խիտ մթությունը, անթափանց սևությունը՝ անտառներունն է, աղջամղջային կանանչություն, որ գիշեր ատեն և լուսնի լուսով՝ թանձր հեղուկե լճի մը պես կփալփլի։

Ասդին՝ Իզմիտի ծովն է հետզհետե ամփոփված, նեղցած, սպառած, որուն տամուկ կապույտին մեջ լուսինը կ'իջնե վերեն, կթաթխվի առանց իր պայծառությունը, հստակությունը մազի չափ կորսնցնելու, և մանրուք ալիքներու տարուբերումին հետ կոտրտած հայելիի բեկորներ կձևացնե, որոնք իրարու կկցվին, իրարմե կհեռանան, կցրվին, նորեն միանալու ու նորեն բաժնվելու համար։

Հոս՝ քարահատակ ճամփուն վրա՝ ձիերու շարք մը կքալե հազիվ լսելի ոտնաձայնով մը, որ պայտերուն վրա փաթթված չուխայի կտորներով կմեղմանա, ամբողջ կարավան մը ծխախոտ փոխադրող շրջակա գեղերեն. ու տասնի չափ տղաք կուգան քովեն հետիոտն, հրացանը ուսերնուն կախած, ատրճանակը մեջքերնին։

Հիմա լուսնին լույսը կ'իջնա ասոնց գլխուն վրա շիտակ, լուսավորելով և մատնանիշ ընելով այինկաճիներուն խումբը, որ չի կրնար ինքզինքը պաշտպանել այս լույսի վտանգավոր ողողումին դեմ. և հուշիկ կքալեն ուղիտի մը նախազգացումով, ծառի խարշափյունին, տերևի մը կծկումին ուշադիր, անձկությամբ լեցված. հետո կվարժվին այս պայծառ լույսին, որ զվարթություն կբերե հետը, և կխոսակցին մեղմիվ.

— Քանի՞ օխա թյուրյուն վերուցին Մահալլեեն։

— Հարյուր քսան։

— Ո՞ւր է Հակոբոտը։

— Առջևեն կ'երթա։

Միշտ առջևեն կ'երթար, մինակուկը ամեն վտանգի դեմ, ձեռքը մեջքի դաշույնին բունին, խորհելով իր եղբոր հետ հավանական հանդիպումին ճամփու մը վրա, ու այս գաղափարին՝ զգալով կսկիծ մը, սուր ցավ մը, որ սիրտը կլեցներ, կոկորդեն կբռներ և շնչահեղձ կ'ըներ զինքը։

Պահ մը կմտածեր թողուլ այս կյանքը, այս մշտնջենական վտանգի արհեստը, որ հիմա եղբայրասպան հանդիպումներու զարհուրանքով կլեցվեր, որ իր նշանածը հարս չեղած, զայն այրի թողուլ կ'սպառնար ամեն վայրկյան. և գլուխը կախ կ'երթար, մոռնալով կարավանը, որ կհետևեր իրեն, որուն պահպանության հոգը իր պզտիկ դաշույնին և իր մեծ սրտին վստահած էին։

Անտառը կմտներ. ու լուսինն ալ կխոնարհեր կ'իջներ իր բարձրութենեն անտառին ծոցը, ծառերուն սաղարթներուն երկարող վտիտ ընձյուղներուն վրա, որոնք իր սկավառակին մեջ, կմխվեին, կարծես հոն անձնասպան ըլլալու համար նետվելով անտառին սուր ծայրերուն վրա, որոնք զինքը պիտի գիշատեին։

Հեռուն՝ լեռներեն իջնող ջուր մը երիզուտ ավազանի մը մեջեն վազելով կխոխոջեր. գորտեր կկոկոային, խռովելով գիշերվան լռությունը։

Առջի օրվան կորուստին կխորհեր պահ մըն ալ, կխորհեր գրավված ծխախոտին զոր չէին կրցած փախցնել, և միտքը եղբորը կ'երթար ու ձեռքը՝ մութին մեջ ուժգին կսեղմեր դաշույնին կոթը։

Դ

Առջի իրիկվան դեմ Սահակ Պերճուհին տեսավ եկեղեցիեն վար, Մեյտանին մեջ. ու քովը գնաց փախչելու ատեն չթողլով անոր.

— Սրդողա՞ծ ես հետս։

— Ե՞ս։

— Բարևս ինչո՞ւ չառիր, բարևը աստուծո է։

Աղջիկը չխոսեցավ և հեռանալ ուզեց։

— Կեցի՛ր, ատեն մը կսիրեիր զիս, եղբորս հետ չնշանված դեռ, կհիշե՞ս աղբյուրին քով խոսածները։

— Ես եղբորդ նշանածն եմ, մի՛ խոսիր հետս, ես այինկաճիի աղջիկ եմ։

Սահակ ձեռքը բռնել ուզեց ու աղջիկը քաշվեցավ ետ։

— Այդչա՞փ գեշ մարդ եմ ես... Եթե գիտնայիր որ մեկ խոսքովդ սիրտս կբանամ սա դանակով. իմ սերս ամուր է աս երկաթին պես. քուկդ... ծառի մը ոստին պես ամեն դի կծռի. պզտիկ եղբորմեն մեծ եղբորը, Սահակեն Հակոբոսին կդառնա։

Պերճուհի թեղուց որ ձեռքը բռնե. իր առջի բաբեկամին ձայնը կշարժեր զինքը. տեսավ որ արցունքի կաթիլ մը կգլորեր անոր արևակեզ այտին՝ մրոտած պերճեշտին վրա.

— Ո՞վ ըսավ որ ֆոլճի ըլլաս։

— Քեզի համար։

— Ես այինկաճիի աղջիկ եմ։

Ու քիչ-քիչ, իրիկնամուտին ստվերներուն մեջ մտերմացան նորեն. մշուշը պատեց իրենց առջի սիրույն վերադարձը. հետո Սահակ մեկնիլ ուզեց ու աղջիկը չթողուց այս անգամ։

— Կեցի՛ր, տե, քիչիկ մըն ալ։

Կեցան, չկրնալով համոզվիլ որ հարկ էր իրար թողուլ. անցորդները պիտի գայթակղեին տեսնելով այս ժամուն այինկաճիին նշանածը սա ֆոլճիին քով. վախցան ու զատվեցան իրարմե։

Հիմա գեպի լեռը կ'երթար դեռ հմայված, կրելով հրապույրը իր առջի սիրած աղջկան, որ եղբորը նշանածը եղած էր. այս հինգ վայրկյանի խոռակցութենեն վերարծարծված իր սերը կզարհուրեցներ զինքը։ Քաղքին զատիվայր տունները հեռվեն թավալգլոր կործանումի մը տպավորությունը թողուցին իր վրա։ Ճամփան շարունակեց անտառին մեջ մխվելով հետզհետե. այս ծառերը իր պատանության, ուրախ զվարթ օրերու հիշատակները կ'արթնցնեին մտքին մեջ։ Եվ անտառին վեհաշուք խաղաղությունը բարկացուց զինքը. վերեն՝ տերևներու բացվածքեն արծաթ շառավիղներ կթափանցեին ներս, կ'իջնային գետնի դալարիքին ու մամուռներուն վրա, ուղղաբերձ լուսանյութ ծառի անթիվ կոճղերու պես. ձևացնելով երկու անտառ մեջ մեջի անցած, մեկը որ հողեն կբուսներ ստվերամած գոռոզ մազերու պես, ու մյուսը՝ երկինքեն եկող անհամար շողերու՝ որ ադամանդե սանտրի մը նման անոր մեջ կմխվեր։

Եվ փոխն ի փոխ այս մութ ու լույս, կարծր ու աննյութ գիծերու շարքը, որոնց մեջ կքալեր հիմա, իր կյանքին անհաթիր ճամփուն կնմաներ ճիշտ. քանի մը ժամ առաջվան տեսակցությունը Պերճուհիին հետ՝ վերջին լուսավոր գիծն էր ուրկե անդին համակ աղջամուղջը կտիրեր. եղբորդ նշանա՞ծը, վաղը գուցե անո՞ր կինը... Իր միտքը պատող խավարը ա՛լ ավելի կթանձրանար ու չլսեց կամ լսել չուզեց ձայնը որ խորեն, հեռվեն պոռաց.

— Մի՛ գար առաջ։

Ինքը շարունակեց հառաջանալ, անփույթ, անտարբեր, ծիծաղելով այս մութեն եկող հրամանին վրա։ Հանկարծ ձայնը որոտաց նորեն սուր, կտրուկ.

— Կե՛լմե։

Անտառը կրկնեց հրամանը, թավ, հաստ ձայնով, ջանալով արթնցնել Սահակը, իրեն ապառնացող վտանգին անփույթ։ Հետո ավելի ուժգին ձայն մը, զոր Սահակ ճանչցավ, եղբորը ձայնը.

— Կրա՛կ։

Հրացանները պայթեցան տասը մեկեն, գնդակները սուլեցին իրենց կարմիր շավիզներով ծակծկելով շուրջի մթությունը։ Սահակ կեցավ ծառի մը բունին կթթնած, խազամուծ մարդու մը խոնջեներով, դիտելով այս գնդակի թափթփուքները, որ իր շորս դին ինկան ու զվարճացուցին զինքը։ Մեռնի՛լ. վախցա՞ծ էր երբեք մեռնելե, և եղբորմեն եկող այս հարվածները փրկության մահ մը կխոստանային իրեն. անոր ձեռքեն մեռնի՛լ. ի՞նչ հաճույք։

— Կրա՛կ,— հրամայեց այինկաճիին ձայնը, կրկնվելով, երկարելով անտառին խուլ ու մութ խորշերուն մեջ։

Ի՞նչ հաճույք եղբորը գնդակին հանդիպիլ, ու Պերճուհին...

Եվ գետին ինկավ Սահակ, կուրծքեն զարնված։

Ե

Ռեժին ամսական թոշակ հատկացուց Սահակի ընտանիքին, այինկաճիներու հետ կռվի մեջ մեռնելուն համար, թոշակ մը զոր Հակոբոս կստանա տարիե մը ի վեր, հորմեհետե մայրը մեռավ տղուն կսկիծեն։

Պերճուհին սևեր հագնող աղջիկ մըն է որ չամուսնանար. իր նշանը ետ եզավ առանց պատճառը հասկցվելու։

<1892>

ԴԻՄԱԿԸ

Ա

Արշակ Յաղբճյան, որ պարահանգեսին էն տաք միջոցին, միտքը ուրիշ տեղ եղող մարդու մը պես աննպատակ և անուշադիր կպտրտեր, հանկարծ թևի մը շոշափումը զգաց իր թևին տակ. վարգագույն տամինո մըն էր հասակագեղ, որ կ'ըսեր իրեն.

— Ինչո՞ւ չեք պարեր։

— Ձեմ ախորժիր։

— Ձեզի պես երիտասա՜րդ մը...

— Պարելը տարիքի հետ գործ չունի. տեսնեք՝ նա ալևոր մարդը որ վալս կդառնա պատանիի մը աշխույժով։

Ու երիտասարդը իր ընկերուհին դիտեց ոտքի պզտիկ կոշիկեն մինչև դիմակը, բեհեզի պատառ մը՝ որուն շիկնոտ երանգը դեմքին չծածկված մասին վրա կշարունակվեր. իր մեծաշեն գեղեցկությանը հակառակ, մանուկի ձեռքեր ուներ և մինչև արմունկը հասնող ճերմակ ձեռնոցները կհիշեցնեին Պեշիկթաշլյանի երգած ձյունաթույր թաթիկը։

Կուրծքը, զոր տոմինոյին մեջքը սեղմող մետաքսյա գոտին դուրս կցայտեցներ, զույգ մը ըմբոստ նժույգի գլուխներու պես, քարակարկառ արձանի մը լանջքին խոստումը ու գաղափարը կուտար, խոստում, զոր հիմա իրարու դպող թևերուն մեջ սողոսկող սարսուռը կշեշտեր։

Տոմինոն անձնավստահ մեկու մը պես թող կուտար առանց տրտընջալու, որ զինքը երկարորեն դիտեն, քննեն ու գնահատեն, գիտնալով, որ վերջիվերջո նպաստավոր պիտի ըլլա եզրակացությունը իրեն։

Բ

— Կսիրե՞ս զիս։

— Այն ատեն միայն կրնամ ըսել երբոր դիմակդ վար առնես։

— Անկարելի է այդ։

— Գնա՜ քովես ուրեմն։

Կվռնտեր. առանց քաղաքավար դարձվածներ փնտրելու, Արշակ կ'ուզեր այս կինը, որ իր ցանկազարթույց ընկերությամբ եկած էր ընդմիջելու իր գաղափարի, խոկումի մարդու պտույտը պարասրահին մեջ։ Ինքը կասկար այն կիներեն, որ մունջ ու անխոսիկ մատուցում մը կկրեն կարծես հրապուրիչ և ուշադրություն հրավիրող շարժումներնուն մեջ։ Կվախնար անոնցմե. ինքը, լուրջ ու պարկեշտ տղա, սիրո հաճույքն ալ անոր պարկեշտ, գրեթե առաքինի հանգամանքին մեջ կփնտրեր։

Այնպես կհավատար, թե այն կինը միայն կարող պիտի ըլլար սիրել որ զինքը մերժեր մինչև վերջը. այս տոմինոյին պես իր գիրկը նետվող կիներեն խորշած էր միշտ. զինքը չսիրող կինն էր, որ իր իտեալ սիրուհին պիտի ըլլար։ Սերը՝ իր աչքին՝ տառապանքի մեջ էր միայն, այնպես որ դժբախտ ըլլալով կարծես երջանիկ պիտի ըլլար։

Իրոք ալ այնպես էր այս երիտասարդ երազատեսը. այն հազար ու մեկ կիներեն որոնց կրնար սիրտը շահիլ, և ոչ մեկին կապված էր. իր բարեկեցիկ վիճակովը երբեք չէր խորհած ամուսնության, և ոչ ալ այն վաղանցիկ հաճույքի ժամերուն, որոնցմե իր տարեկիցները չէին կրնար անցնիլ. ողորմելի մարդիկ՝ որոնք կազմ ու պատրաստ երանություններով կբավականանային։

Ինքը կշրջեր փողոցները, դժվարահաճ արվեստագետի մը պես

Որ աչքն ի դարան և քիթն ի քամի,

ինչպես կ'ըսեր Ռուսինյան, կամ որսորդի մը պես, որ արյունարբու վագրի մը հանդիպելու երազովը երջանիկ կ'ըլլա։ Այսպես կույս ու մաքուր մնացած էր իր սիրտը, սպասելով հազվագյուտ կերպով հրապուրիչ ու նույնքան անմատչելի կնոջ մը երևումին։ Թեև ճիշտ քսանմեկ տարու էր հիմա, կապույտ, անուշ աչքերով, երկուքի ճեղքված երկար, շագանակագույն մազերով ու ազնվական երևույթով երիտասարդ մը։

Գ

Այդ ըղձացած կինը ճանչցած էր օր մը. փողոցը հանդիպած էր երբեմն. սիգաճեմ ու խրոխտ կին մըն էր, նայվածք մը անգամ չշնորհելով բոլոր կանգ առնողներուն, բարև բռնողներուն իր ճամփուն վրա. մեկ հեղ, երկու հեղ ու քիչ-քիչ անտեղիտալի պետք մը դարձած էր անզգալաբար հետևիլ անոր ամեն կողմ։

Եվ հետաքրքրվելով՝ հետը տեսնվելու, տունը երթալու առիթը փընտրած ու գտած էր. իրեն պես դեռ քանինե՜ր կուգային հոդ, անմատչելի կուռքի մը առջև ծխող սպառող երիտասարդի սրտեր, բռնված այն անմոռնչ հրապույրեն, որ տիկնոջ խստահայաց, բայց նշուլագեղ աչքերուն մեջ կկարդացվեր։

Առաքինի կնիկ մըն էր, որուն կրնայիր ժամերով խոսիլ կամ հետը առանձին մնալ առանց մոռնալու թե իր ամուսնին հավատարիմ մեկն էր այս բարակամեջք ու առույգաբարձ գեղանի կինը, որ իր թիկնաթոռին մեջ մարմնակործան կ'ունկնդրեր քեզի, վառարանին դուռնեն ցոլացիկ լույսին նայելով միշտ։

Դեղնած դեմքով տղաք կուգային երերուն քալվածքով, այս տաքուկ սրահին մեջ, որ կարծես հիվանդանոց մըն էր տառապյալներու, որոնք ներս կմտնեին գիշերվան ճաշեն ետքը թեթև հազով մը ընդմիջված բարևով, հոս՝ այս ջերմոցին գաղջ օդին մեջ կազդուրվելու, այս

կնոջ տաք ու խոնավ նայվածքեն, անոր այրեցյալ դոտինեն իբրև թե կենդանություն փնտրելու համար։

Ու փալթոնին հանած, իրենց հագուստին վայելչությանը մեջ կպարտեին նիհար իրանները ցցվող ոսկերոտիքը, ու ձյունաթույր մաքուր շապիկի պարանոցին մեջ՝ վիզերնին, վտիտ, երկարած, մոթվելու ոչխարի սիրահոժար պատրաստականությամբ։

Դ

Այս կինը ահա կսիրեր երկու տարեն ի վեր, անոր համար որ անկե չէր կրցած սիրվիլ. իր երազը կ'իրագործվեր ու երջանիկ էր. ճիշտ իր ուզած անգութ ու գեղեցիկ կինն էր դեմինը։ Հիմա առանց քաշվելու, երկու տարիեն ի վեր հաստատված համաձակությամբ մը կ'ըսեր անոր.

— Անկեղծապես շնորհակալ եմ զիս չսիրելուդ. եթե սիրեիր՝ շատոնց քեզ ձգած փախած էի. բայց տես, որ այդ սիրտն ու խոժոռ դեմքը պահելով կապեցիր զիս։

Ու կինը կպատասխաներ ծանրությամբ, առանց երեսը նայելու, անթարթ ակնարկով մը դիտելով վառարանին դռնակեն ցոլացող կարմիր բոցը.

— Շատ կվախնամ, որ մինչև վերջը այդպես կապված մնաս։

— Ուրեմն երբեք զիս չսի՞տի սիրեսս

— Թնավ։

— Ոչ իսկ պզտիկ համբո՞ւյր մը։

— Մատիս ծայրեն անգամ չեմ տար։

Հետո խոսակցությունը կփոխվեր. երբեմն պեղիկ կիրաղային կամ ընթերցում մը կ'ըներ Արշակ, որովհետև այս կինը աղվոր ընթերցումները կսիրեր, ու աչքը գոց, բոլորովին ընկողմանած իր աթոռին խորը, անուշ երազի մը մեջ կորսված՝ պես կ'ունկնդրեր անոր ժամերով։

Կեսգիշերին կմեկներ, տխուր ու երջանիկ միխանգամայն այս սիրով, որ ստվերի մը պես անշոշափելի էր։

Այս էր երիտասարդին բոլոր կյանքը. անկե զատ որևէ կին չէր զբաղեցուցած զինքը, ու պարահանդեսին մեջ պատած պահուն գեռ այդ կնոջ պատկերովը լեցված էր սիրտը, երբ վարդե տոմինան, առանց իր հոժարությունը առնելու, թևը կմտներ ու տիրաբար կքաշեր կտաներ զինքը ուզած կողմը։

Տոմինոն կբռնանար։

Ամբողջ մաքմինեն՝ մանիշակի զգլխիչ բուրում մը կծավալեր, չընչին կանխավճար այն ամեն թաքուն հրապույրներուն զորս այս հսկա վարդի թերթը կպահեր իր ծոցին մեջ։

Պզտիկ խուցի մը մեջ նստեր էին քով քովի, ու տոմինոն՝ վաստակաբեկ կհենուր իրեն, մինչդեռ վերը՝ պարասրահը կգոռար, կթնդար ցնծության թափերով, որպես թե քաջալերեր վերեն իրենց վարանող երիտասարդությունը։ Ջերմությունը՝ անոր թևին դպած տեղը կ'ավելնար, այրուցի մը կփոխվեր հոն, երիտասարդին շնչառությունը կդժվարացներ, անոր անտարբերությունը կվրդովեր։

Քունյաքի փոքրիկ բաժակները կպարպեին մեղմիվ, քամելով վերջին կաթիլը ու չուզելով կարծես բաժակը զատել բերաններուն. ամեն մեկ ումպին՝ մտածումներ կուգային իրենց միտքը, զորս կուլ կուտային անոր մեջի հեղուկին պես։ Ու երկուքն ալ արբած այս լռին առանձնությենեն, տաքեն, մանիշակի հոտեն, չէին խոսեր՝ ա՛լ հեղգացած, առջի ընդհարումին իյնալու, կործանելու պատրաստ կավե արձաններու նման, կորսնցնելով դիմադրության ուժը։

Վերը՝ աղմուկը կ'ավելնար, կսաստկանար, ոտքերու տրոփյունը՝ թատրոնին երկաթե ձեղունը կցնցեր տեղեն, երաժշտության ձայները պատերեն կ'անցնեին, խուլցած, անհասկնալի եղանակներով, որ իրենց ականջին մեջ քզզային։

— Դիմակդ վար առ,— կ'ըսեր Արշակ։

— Երբե՛ք։

Մի՛ գուցե տգեղ ու տարիքոտ կին մը ըլլար որ ամչնար երեսը ցույց տալու, հուսախաբ չընելու համար զինքը. բայց ամեն ինչ կհերքեր այս ենթադրությունը։ Աթոռին մեջ ընկողմանած էր բազկարձակ ու վայելչապանծ, ու հեքոտ կուրծքեն երկար, խուլ հառաչանք մը դուրս կթռեր։

Ո՞վ էր այս կինը։ Երեսը տեսնելու հուսահատ փորձ մը բրավ, բրոնի վար առնել ուզելով դիմակը։

Տոմինոն ցատկեց ոտքի ելավ, ուղիղ, գրեթե սպառնալից.

— Երբե՛ք, հասկցա՞ր։

Խրոխտ ու կտրուկ կերպով կխոսեր միշտ, փոխելով, սքողելով իր ձայնը. ու տեսնելով որ երիտասարդը կտառապեր, անուշությամբ ավելցուց.

— Պիտի զղջաս, գիտեմ որ պիտի զղջաս զիս ճանչնալուդ։ Ենթադրե որ սիրած կինդ եմ ես։

Արդյո՞ք։

Վերը՝ երաժշտությունը, աղմուկը, պարերը կշարունակեին։

Զ

Այնպես ենթադրեց. այս քարուկիր, մութ ու գեղ խցիկը հեծեծանքներ լսեց, արցունքներ տեսավ, բայց մինչև վերջը չտեսավ այդ պատրվակին տակ պահվըտող երեսը։ Բաժնվեցան, խռոված մարդոց պես իրարմե դժգոհ։

Հետևյալ գիշերը, երբ Արշակ իր բարեկամուհիին սրահեն ներս մտավ վարանեցավ. հանկարծ տարակույս մը ծնավ ու մեծցավ իր սրտին մեջ. հետախուզող ակնարկը իր դիմացինին աչքին մեջեն մինչև սրտին խորը թափանցեց՝ կարդալու համար հոն։ Արդյո՞ք. շփոթած՝ կեցավ պահ մը, մինչդեռ տան տիկինը իր աթոռին մեջ ընկողմանած կմընար պարտասուն, աչքերը սևեռած միշտ վառարանեն ցայտող բոցին, որուն նշույլները կերպասներուն վրա կխաղային. կրակը ու լույսը այդ վառարանին խորեն կուգային տաքցնել ու զբոսցնել զինքը, ու փույթ չէր ըներ թե ո՞ւրկե էին անոր մեջ խանձող, տոչորող փայտերը։ Արշակ չհամարձակեցավ ուղղակի հարցում մը ընել, բայց սովորական պեզիկի խաղին ատեն, մանիշակի հոտ մը առավ ծանր, խնկաբույր, առջի գիշերվան պես ու չկրցավ ինքզինքը զսպել։

Արդյո՞ք։

— Ի՞նչպես ատեն անցուցիր երեկ գիշեր, տիկի՜ն։

— Միս մինակ, դուն ալ մոռցար զիս։

— Եթե գիտնայի՜ր... պարահանդեսին մեջ մեկը կար, որ ա՜յնքան կնմաներ քեզի։

— Իրա՞վ։

— Մինչև վերջը անոր հետն էի։

— Զիս կարծելով, այնպես չէ՞, բայց երեսը տեսար անշուշտ։

— Ո՜չ, չկրցա տեսնել, և այս վայրկյանիս իսկ կկարծեմ, որ դուն էիր թերևս։

Տիկինը խնդաց սիրուն քահքահով մը։ Հետո.

— Այսպես եք դուք՝ էրիկ մարդիկ ամենքդ ալ,— ըսավ,— դիմակի կտոր մը և ահա սիրածնիդ ու չսիրածնիդ զանազանելու անկարող կ'ըլլաք. դիմակ մը ու անոր մեջ ամեն գեղեցիկ կտեսնեք. բայց կիները

այնպես չեն. ամեն ծպտումի տակ միշտ կճանչնան իրենց սիրած անձը, որովհետև սիրտով կսիրեն անոնք, մինչդեռ դուք աչքով կսիրեք միայն, և աչքը խաբելե դյուրին բան չկա։

Խոստովանությո՞ւն մըն էր այս թե հերքում մը։

<1893>

ԺԱՄԻՆ ԲԱԿԸ

Ա

Նոր ճեղքված էր լույսը երբոր տերտերը ճամփա ինկավ ժամ երթալու համար. ոչ ոք կար փողոցներուն մեջ ու համատարած լռությունը, որ հազիվ փարատվող գիշերեն կուգար, քահանային ոտնաձայնը հատիկ-հատիկ կլսեցներ։

Զառիվեր մը կ'ելլեր, վասն զի ժամը, ամուր ու ցած շենք մը որ հոսկե կտեսնվեր, վերը՝ գեղին բարձունքին վրա էր։ Հևալով կքալեր հովանոցի մը կոթնելով, սև թիպեթե ու քիչ մը գույն կորսնցուցած աղքատի հովանոց՝ որ գավազանի տեղ կծառայեր։

Երեսուն տարիե ի վեր միևնույն համաչափ քայլերով կ'ելլեր այս փողոցեն վեր, այն ճշտությամբ, որով արևը կծագեր, իր սիրական ժամը՝ իր աստուծուն քովը փութալու համար։

Երբոր դուռը հասավ, վայրկյան մը կեցավ լիաթոք շունչ մը առնելու համար ու նայվածքը շուրջը պտտցուց անգամ մը։

Իր աչքին առջև պարզվող այս հուլիսի առտուն շլացուց զինքը։

Վոսփորը կ'երևար, կ'ընդհատվեր հանկարծ, նորեն կսկսեր, կդառնար, կգայարեր, տիտանյան օձի մը պես, երկու դիեն բարձրացող բլուրներուն մեջ։

Արևին ձգած լուսավոր շավիղը անհամար ադամանդներու սփռում մըն էր հոն, ավելի մութցնելով կարծես ծովին թավիշի կապույտը։

Ծովեզերքին մոտ՝ այն կողմեն ուրկե կնայեր քահանան՝ այս ադամանդները մեկ-մեկ կզանազանվեին, այնքա՜ն մեծ էին. երթալով հետզհետե կպզտիկնային՝ բայց ավելի մերձենալով իրարու։ Եվ ավելի հեռուն՝ փոսրտուք մըն էր այլևս, լուսաճաճանչ փոշիներու տարածություն մը, որ միապաղաղ մակարդակ մը կձևացներ, դյութական փողփողումի մեջ անշարժացած։

Սովին մեջտեղը այս հյուլեները կ'երերտկային շարունակ, ձևերնին, դիրքերնին, լուսերնին կփոխեին, իրարու առջև կվազեին, իրարմե խույս կուտային անհնարին ու խոլական ոստումներով, արշավներով, համեցումներով, այս կապույտ անջրպետին վրա ակնախտիղ պար մը շինելով։

Ցամաքին վրա առավոտը ոչ նվազ հիացուցիչ էր. լեռները իրենց գալարիքը ու նոր հերկված հողերուն կարմիր ուռեցքները քովե քով կարգով կտարածեին։ Անդին՝ ածուներու անդաստաններն էին զուգահեռական գիծերու անհատնում շարքերով, ու ավելի հեռուն, հորիզոնին վրա, ծառերու հոծ խումբ մը, կանանչներու ամեն վառ երանգները մեկտեղ բերած, այն կանանչեն որ դեղինին կմոտենա, մինչև այն որ սևին հետ կշփոթվի։ Այս կանանչության վրա մերթ պզտիկ սարսուռ մը կվազեր, ու իսկույն կանանչ ու համբ կոհակներու ծփացում մը կտեսնվեր։

Գետինը, խոտերուն վրա, գիշերվընե մնացած ցողը ճշդիանար արևին շերմութենեն։

Ձան ձուն ու շարժում չկար գեղին մեջ։ Բյուրեղի հստակության մը և չեմ գիտեր ի՞նչ տեսակ ապասումի մեջ էր կարծես իր բոլորտիքը։

Հետո ճերմակ ամպերու ծվեններ երկինքին լուրթ բեհեղին վրա երևցան. թեթև հով մը եկավ։ Քանի մը եզներ քնաշրջիկի քալվածքով մը անցան. կաթնավաճառ մը իր պղինձե ամաններուն ազմուկովը լռությունը վրդովեց։

Եկեղեցին կես խավարի մեջ էր՝ պատուհանին երկաթ փեղկերը բացված չըլլալուն. երբոր ավագերեցը ներս մտավ, պահարանին մեջ շուրջառ մը ձգեց ուսին վրա, խալփախը սև գդակի մը հետ փոխեց ու խորանին առջև կանգ առավ։ Իսկույն արծաթ թագը գլուխը դրած աստվածածին մը իր հինցած ոսկեզօծ շրջանակեն նայվածքը իրեն ուղղեց. ապաքեն այս եկեղեցվույն մեջ գրվեալն ի վեր ամեն եկողին կնայեր ան միևնույն անստույգ ու անվրդով նայվածքովը։ Քահանան երեսը խաչակնքեց։

— Հանուն Հաբ և որդվա և հոգվույն սրբո...

Թավ ձայնը թնդաց այս պարապության մեջ ու արձագանքը կրկնեց.

— Եվ հոգվույն սրբո...

Լուսարարը փեղկերը բանալու եկավ ու հարուցած աղմուկը եկեղեցվույն անդորրությունը խանգարեց։

Բ

Տեր Աբրահամ այն հազվագյուտ ծերունիներեն էր որոնք իրենց կենդանությենեն՝ մարդկային կապերը թոթափելով՝ կանխահաս մուտքով մը բարձրագույն աշխարհի մը մեջ կթևակոխեն, ուրկե կիրքերը ու ակնկալությունները վտարված են ի սպառ։ Տեսակ մը անդրնացում է տասիկա։

Մահվան մեծավորությունը այս հրաշքը կգործե շատերու վրա. հրաշք, որ կյանքի վերադարձին իսկույն կ'աներևութանա։

Տեր Աբրահամ մեծ իմացականություն մը չուներ, բայց իր հիշողությունը կարծես նոր ավյունով, և այն համեմատությամբ, որով իր մյուս զգայարանքը տկարացել էին, զորացած կթվեր՝ մարելու մոտ կանթեղի մը վերջին ցոլքին պես։

Իր երիտասարդությունը ու պատանությունը լեցնող է՞ն կարևոր եղելություններուն հստակ վերհուշումը ուներ, որ կարծես իր հիմակվան կյանքին պարապությունը մոռցնելու կծառայեր այս պահուն։

Նախ՝ իր համեստ դաստիարակի սկզբնավորությունը, սկզբնավորություն, որ վերջ մըն է եղեր միանգամայն, մասն դի երբեք այդ համեստությենեն թիզ մը վեր չէր կրցած ելլել, հազիվ ձեռքը մինչև բերանը հասցնելով, նույնիսկ հիմա, որ քսան տարվան ավագերեց մըն է ահավասիկ։

Շատ լավ կհիշեր այն ատենի աղաները, ամիրաներ ամենքն ալ, մեծ մասը սարաֆներ, ոչ ուսյալ հարկավ, ոչ ալ կրթյալ մինչև անգամ, որոնց դիմացը փեշը փեշին բերելու ստիպված էր ամեն վայրկյան։ Բայց ատոր քով հատկություններ, որոնք վճռապես պատիվանք կ'ազդեին և նժարը դեպի համակրության կողմը կ'թեքեցնեին։

Անոնցմե մեկուն մանավանդ՝ Սեղբոսյան Մինրտիչ աղային, որ ճիշտ այդ եկեղեցին կառուցած էր իր ծախքովը՝ դեմքը աչքին առջևն էր, նիհար, բարձրահասակ, երեսացող քայլվածքով մարդ մը, որ սրտմտության մը վայրկյանին դպրոցեն վանտեր էր գինքը։

Պետրոս պատվելին, այս էր իր աշխարհական անունը, տուն դարձեր էր այն իրիկուն, ամոթեն ու դողեն գունատած։ Իզուր իր հեք կինը, իր զավակները միացեր էին մխիթարելու համար գինքը ու չզգացնելու աղետին մեծությունը։ Հազիվ ամիս մը կար ավագ օրերուն, ու հեռվեն գալուստը զատական տոնին՝ հիմա այրացավեր այս ընտանիքին վրա ահավոր ու սպառնացող խոցոտումի մը պես կթվեր իր աչքին, ու չքավորության դատապարտված իր գոյության բոլոր դառնությունները երևան հանելու հատուկ դիտավորությամբ պատրաստված փորձություն մը։

Հաջորդ օրը դպրոց չկար. պզտիկ լաճերու անտանելի խաժամուժը իր գլուխը չցավցուց այլևս, բայց աղմուկին վարժությունը ուներ ու զրկանք մը եղավ ասիկա իրեն։ Հետո ապրուստի ուրիշ միջոց մը գտնելեն հուսահատեցավ։

Ավագ շաբթուն քանի մը բարեկամներ եկան գտան զինքը. իր վիճակը հարցուցին. մեկը՝ խորհուրդ մը հղացավ. թե որ պատվելին խոնարհ, շատ խոնարհ լեզվով մը խնդրագիր մը ուղղեր աղային, կամ ինքը անձամբ անոր տունը երթար գործած պակասությանց ներում խնդրելու։

Իսկույն համոզվեցավ ասոր ու գիշերը լուսցուց գրելով. սրբագրեց ու ավրեց իր աղերսագիրը։ Առտուն նորեն չհավնեցավ իր ոճին. ո՛չ, գթություն հրավիրելու համար պետք եղած բառերը գտած չէր. ու թե որ մերժումի մը ենթարկվե՞ր, երևակայեցեք անգամ մը, փճացում՝ իրեն և իրեններուն. գրավը՝ որ իր գրչին ծայրին կապված էր՝ ապշեցուցիչ համեմատություններ կ'առներ։

Նվազ տենդոտ ժամվան մը հետաձգեց այս անիծած թուղթին գրությունը։ Հանկարծ իրարանցում մը ելավ տանը մեջ. կինը, տղաքը դուրը վազեր էին։ Աղան ինքն էր որ սանդուխներեն վեր կ'ելլեր իր սովորական ծանր ու երերացող քալվածքովը. պատվելին վազեց, դիմավորեց. հավտա՞ր թե չհավտար տեսածին. ի՞նչ դիտավորությամբ եկած էր։ Աղան հարցնելու ատեն չթողուց, քաշեց համբուրեց ու ճակտին տարավ հեք դաստիարակին վտիտ ու դողդոջուն ձեռքը։

— Պատվելի՛, ներե գործած հանցանքիս,— ըսավ մեղմ ձայնով, ասանկ բեռ մը ուրտիս վրա՝ ասանկ օրերու մեջ չուզեցի պահել, շատ կ'աղաչեմ որ ներես ինծի. որոշեցի որ ես քու ոտքդ գամ։

Պատվելին հազիվ կրցավ ըսել.

— Ես խոնարհ ծառանիդ եմ միշտ. պակասությունը իմս էր։

— Այս ժամեն դպրոցը քուկդ է նորեն. գրագիրս քեզի հազար ղրուշ պիտի բերե որ զատական ծախքերդ հոգաս. բայց կ'աղաչեմ, որ սրտիդ մեջ ինծի դեմ ոխ չպահես. հրաման տո՛ւր որ երթամ հաղորդվիմ։

Ո՞խ չպահել, հրամա՞ն տալ, ինքը, որ պարզապես աղային ոտքը ձեռքը համբուրելու անդիմադրելի փորձությունը ուներ միայն։

Երբոր Սեղբոսյան Մկրտիչ աղան մեռավ, ինքը քահանա ձեռնադրված էր արդեն։

Շա՜տ ասանկ մանրավեպեր զորս կրկին և կրկին կպատմեր հարմար առիթներու մեջ, իրեն հատուկ զվարթ ոճով մը։ Գեղացիները բոլորն ալ գիտեին Մկրտիչ ամիրային պատվելիին մինչև ոտքը գալը և ձեռքը պագնելը։

Գ

Թաղական խորհուրդին մեջ կարևոր նիստ կար այն կիրակի առտուն. թաղականները ամենքը ներկա էին։ Ցած ձայնով կատարված կարծիքի փոխանակության մը մեջ ատենապետը մեկ-երկու շրսավ. առաջարկությունը ընդունելու կողմը եղավ։

— Ես անկեղծ կերպով իմ կարծիքս զուրցեմ... ես ժամը թաղելու կողմն եմ. ասանկ ատեն մը հարյուր հիսուն ոսկին կարևոր գումար մըն է. զանգակատունը փլչելու վրա է. ուրիշ շատ մըն ալ նորոգություններ կան. այո՛, գումար մըն է, անկեղծությամբ ըսեմ։

Միշտ անկեղծությամբ կխոսեր այս մարդը. իր թաղականի ու հաշվի մարդու կրկին խղճմտանքը հաշտ էին իրարու հետ. իրոք այս աղքատ ժամուն համար հարյուր հիսուն ոսկին շատ մը օգուտներ պիտի ընծայեր. մյուս կողմեն տարտամ ու խուլ բան մը իր ներսիդիեն կ'ըսեր որ ինքն ալ իր կարգին օր մը պզտիկ գումարով մը ժամու մը մեջ պիտի կրնար թաղվիլ. ինչո՞ւ չէ. մեծ ճարտարարվեստը ամեն բան ածանցուցած էր այս դարուն մեջ. եկեղեցին ալ պատվո և անմահության գիները իջեցնելու էր։

Մեռելին տերերը խորհրդարանին մեջ պատվո տեղը բազմեր էին։ Թաղական մը ննջեցյալին ժամու մեջ թաղվելուն դեմ առարկություն ըրավ. ասիկա փորձ խանութպանի հնարք մըն էր. միտքը հիսուն ոսկի մը էվել փրցնել էր միայն։

— Շիտակը ես ձեզի համակարծիք չեմ, ատենապետ էֆենտի. հանգուցյալը, աստված լուսավորե հոգին, աղեկ մարդ էր. մեռնող մարդուն վրա գեշ չզուրցվիր. բայց շատ թշնամիներ ուներ. թե որ ջինքը եկեղեցվույն մեջ թաղենք, ղմեզ իրավամբ պիտի քննադատեն. տված դրամն ալ շատ չնչին է. չարժեր։

Ատենադպիրը, որ հաշտության կողմն էր միշտ, միջամտեց.

— Հարյուր ոսկի ևս տան և ամեն բան լմննա. ես պատասխանատվությունը վրաս կ'առնեմ։

Կարծես ուսերը կծռեին այս բեռին ծանրությանը ներքև։

Ան ատեն բուն սակարկությունը սկսավ ալ. թեր ու դեմ ամեն փաստերը, առարկությունները մեջտեղ հանվեցան. մեռելին տերերն ալ բո-

լորովին անմիտ չէին, բազդատություններ, հաշիվներ կ'ընեին, երբեք կանոնի վրա հիմնվելով։

— Ի՞նչ տվավ Նիկողոս էֆենտին մայր եկեղեցվո մեջ թաղվելու համար. եթե մայր եկեղեցվո մեջ թաղվելու համար հինգ հարյուր ոսկի տրվի, այս ձեր մոռցված մատուռի՞ն ինչ կ'իյնա. հիսուն ոսկին ալ շատ է։

Բայց թաղականները եկեղեցվո շահը դյուրավ լքող չէին. ուրիշ զենքերու դիմեցին խոկույն։ Հանգուցյալին կյանքն ալ՝ խոսքը մեջերնին՝ շատ մաքուր չէր. ու պատմություններ՝ անպատվված ու վոնտված կույսերու, ընդունված և չվերադարձված ավանդներու, սուտ երդումներու՝ դուրս թափվեցան։ Ահագին դեզ մը կբարձրանար հիմակ ու հազար տնտակ խարդախություններու աշտարակ մը կոպտանար մինչև երկինքը հասնիլ։

Վեճը դառնացեր էր. հանուն կրոնի ու բարոյականի պայքարը կմղվեր, ու մեռելին տերերը հայտնի կերպով կ'ընկճվեին։

Ու խորհրդարանին մեջ, այս ուիթ-սասը մարդիկը հավաքված՝ մարդկության էն նվիրական զգացումները կ'առնեին կծախեին, իրենց պահանջումներուն կպատշաճեցնեին։

Մեռելին ազգականները, դրսեցի բոլորն ալ, ի՞նչ բանիքնին չէին գիտեր, բայց նորեն պարտվելնին չխոստովանեցան։

— Մենք ալ ննջեցյալը Գալբալը կտանինք։

Ատենապետը գոռաց. ասանկ հաճախորդ մը տասը տարին մեյ մը չիյնար։

— Կ'ուզե՞ք որ անկեղծությամբ խոսիմ, գումարը ավելցնելու եք։

Իր սրտին խորեն հարյուր հիսուն ոսկին անգամ շատ կգաներ. մտածեցեք, որ օրին մեկը կարգը իր թաղումին պիտի գար ու հիմակուց սակագինը տոկալիք սահմանի մը մեջ պահել կբաղձար։

Ատենապետը իր հաշտարարի գերը նոր զիջողությամբ մը վերսկսավ.

— Թող հիսուն ոսկի ավելի տան և խնդիրը փակվի։

— Երկո՞ւ հարյուր ոսկի։

— Կ'ընդունինք, բայց ֆրանսական ոսկի պիտի տանք. գուք ալ մի՛ պնդեք. ժամանակ չկորցնենք. դեռ շատ մը ուրիշ կարգադրություններ ունինք. մահազդները անգամ չենք տպեր։

Թաղականները խորհեցան որ թելը պիտի փրթեր. ճշտեցին սակայն, թյուրիմացություն չըլլալու համար, որ հուղարկավորության ծախքը այս գումարին մեջ չէր։

Պզտիկ գծվարություն մը որ դյուրավ հարթվեցավ՝ բակին մեջ գերեզմանին տեղը որոշելու առթիվ ծագեցավ. եկեղեցվույն դրան քով

չէր ըլլար. աջ կողմի պատուհանին ու պատին մեջտեղը առաջարկվեցավ. բայց այդ տեղը աչքի առջև չէր. Խորհրդարանին ձախ կողմին վրա հարմարեցան։ Ջնչին կետ մը մնացեր էր զոր ննջեցյալին տերերը հարկ սեպեցին հիշեցնել և զոր թաղականները իբրև անվիճելի իրավունք մը ճանչցան անմիջապես։ Նորոգվելիք զանգակատան ճակատը հանգուցյալին անունը պիտի նշանակվեր վայելուչ հիշատակությամբ մը։

Երբոր ավարտեցը ներս մտավ, համաձայնությունը կատարյալ էր արդեն։

Դ

Տասը հարկ շենքի մը բոլոր բարձրությունեն վար իջնող մեկը այնչափ տակնուվրա չպիտի ըլլար որչափ տեր Աբրահամ եղավ այս որոշումը իմանալուն։

Հոչակավոր ավազակը եկեղեցվո գրկին մեջ տեղավորվա՞ծ, դաշույն մը մխված պես։

Ջէր բավեր կենդանությանը մարդոց միշտ տրամադրելի հարգանքները ու պատիվները գնելը գրամով և այնքան ավելի անձկությամբ որքան անարժան էր անոնց։ Մահվանեն ետքն ալ այս կոդուպված փառաբանություններուն մշտնջենավորումը ու նվիրագործումը աստուծմե ծախու կ'առներ։

Երբոր ազգականները գացին, քահանան թաղականներուն հետ խոսելու ատեն գտավ։

— Կ'աղաչեմ, էֆենտիներ, այս բանը մի՛ ընեք, մեր ս. եկեղեցին մի՛ պղծեք։

Հեզ ու աղաչավոր ձայնով կ'ըներ իր խնդիրքը։

Իրեն համար եկեղեցին՝ ոևէ շենք մը չէր քարով ու կիրով շինված. եթե լեզու բերան չուներ, հոգի ու սիրտ մը կկրեր միշտ. իր ծոցը նվիրական էր ու մուտքը հոն՝ անոնց միայն վերապահված, որ անոր կսկիծները ու սուգերը կզգան։ Ի՞նչ կփնտրեր այս ննջեցյալը այդտեղ և ի՞նչ կհասկնար ատկե. ասկե ավելի մեծ լլկում մը իր վճիտ ու նրբությանց անգիտակ խղճմտանքին առջև չէր կրնար պատահիլ։

— Ի՞նչ ծառայություն ըրած է այս մարդը մեր եկեղեցվույն. քիչ մը դրամ առաջարկված է. բայց այս դրամը ավազակ անգամ ինքը չէ. ժառանգորդներն են որ ստակ մը տալով իրենց ննջեցյալը հոս թաղել կպահանջեն։ Արժանիքի խնդիր մը կա հոս. գոնե իր անհատական կյանքը անբասիք ըլլար. ինծի չիյնար վճիռ արձակել. ասուված է դատավորը.

բայց վերջապես մաքուր անուն մը չէ ձգած այս մարդը. ի՞նչ կըսեք, էֆենտինե՛ր։

Ի՞նչ ըսեին։ Ավագերեցը անիրավ չէր բոլորովին. բայց եկեղեցին միայն աղոթքով չապրիր. շենքը նորոգության կարոտ էր և զանգակատունը փլչելու վրա էր։

Մեծ փաստն էր ասիկա։

Տեր Աբրահամ չհուսահատեցավ. եկեղեցին իրն էր... մինչև հետին շունչը պիտի պաշտպաներ զայն։ Սև թիպեթե հովանոցը ձեռքը նավամատույց իջավ ու շոգենավ նստավ քարոզիչ եպիսկոպոսին քով երթալու համար։

Սրբազանը Գուզկունճուք գացեր էր քանի մը օր, իր քրոջը տունը։ Ուսյալ եկեղեցական մըն էր, փորձառությունով լեցուն, համոզված, որ միմիայն ավետարանական ճշմարտություններով չի շարժիր աշխարհ։ Ամբ կյանքն անգամ ասոր ապացույցն էր. տարիներ գավառները թափառելե վերջը իր հոտին ետևեն, խանգարված առողջությունը կազդուրելու համար Պոլիս եկեր անկյուն մը նետվեր էր ահավասիկ. ու պարտասումը կզգար՝ հիմա որ հանգստության մեջ էր այլևս։ Իր երիտասարդ վարդապետի օրերեն մնացած ակնկալությունները ու թռիչները փճացեր էին, ու կյանքի շփումեն՝ իր բոլոր մտավորական զարգացումը սկեպտիկ փիլիսոփայության մը վերածված էր, խավը թափած հագուստի մը պես։

Փոքրիկ սենյակին մեջ Հավատքն ու Թերահավատությունը դեմ առ դեմ կճակատեին այս վայրկյանիս։

— Բոլոր ըսածներդ կհասկնամ, տե՛ր Աբրահամ, բոլոր հոգվովս կհասկնամ ըսածներդ. բայց մտածենք միասին անգամ մը. այս մարդը կապակցություն ունի մեր շատ մը հարուստներուն հետ. զինքը վտարելը՝ ամենուն դեմ թշնամական փորձի մը պես մեկնություններու տեղի պիտի տա. այս կետն ալ աչքի առջևեն չհեռացնենք։

Ու տեսնելով որ ավագերեցը անդրդվելի կմնա՝

— Ասով նպատակս նորեն մեր ս. եկեղեցվույն ծառայել է. արդեն ամենքը անտարբեր են եկեղեցականության հանդեպ. քիչ մը վերջը հայտնի հակառակության պիտի դառնան. ու երբ եկեղեցականությունը փճանա՝ կրնա՞ եկեղեցին կանգուն մնալ։

— Եկեղեցին հավատացյալներով միայն կանգուն կրնա մնալ. թե որ հավատացյալները պակսին, արդեն իսկ եկեղեցին ինկած կ'ըլլա։

— Այդ ըսածդ աստվածաբանություն է, բայց իրողությունը տարբեր է. կրոնական համոզումները տագնապալից վիճակ մը ունին այս դարուս մեջ. զանոնք շատ առաջ վարելը նոր վրդովումներու տեղի կըրնա տալ. խուսափինք ասկե, տե՛ր Աբրահամ, խուսափինք։ Պատմությունը կհայտնե որ ամեն հասարակության մեջ դասակարգի զանազանություններ միշտ գոյություն ունեցած են և ասկե վերջն ալ պիտի մնան։ Մեր Հասարակության մեջ ունևորը զատ դասակարգ մը կազմած է և պիտի կազմե, այն ալ մեր հոտին մեկ մասն է, և էն կարևոր մասը, զայն ալ սիրաշահինք, ի՞նչ կ'ըսես։

Դադարե մը վերջ ուր սրբազանը իր խահվեն խմեց լմնցուց՝

— Նորեն եկեղեցվո սրբությունը պիտի առարկես, ննջեցյալին ալ ծանոթ կյանքը պիտի հիշեցնես հարկա՛վ. բայց գերեզմանատունն ալ եկեղեցվո մաս չէ՞ միթե. երբ մեկը անարժան է ժամուն բակին մեջ թաղվելու, պետք է ուրեմն գերեզմանատունեն ալ մերժել զինքը. կտեսնես թե ո՛ւր կհանգի քու պահանջումդ՝ եթե տրամաբանենք։

Ու տրամաբանեց այսպես, իր շուրջը մեծ վեճ մը, աղմուկ մը չհարուցանելու զգաստարեն մղված քիչ մը, ու քիչ մըն ալ իր դրական մարդու հայացքովը տարբերություն մը չգտնելով ժամին բակին և գերեզմանատան հողին մեջ։

Եվ գավառական կյանքեն քաղված պզտիկ պատմություններով համեմեց իր տեսությունները, միշտ անհամաձայնության դուռ չբանալու հայտնի ճիգով։

Ավագերեցը սանդուխներուն կեսը իջած էր ու սրբազանին ձայնը դեռ ետևեն կու գար.

— Սիրաշահինք։

Ե

Թաղեցին մարդը շբեղ թաղումով։ Հապճեպով նորոգված զանգակատունին ճակատը անոր անունը սրտառուչ առղերով արձանագրվեցավ, զոր մտնողը դուռնեն ներս իսկույն կտեսնե. «Նորոգեցավ զանգակատունս արդյամբ բարերար...»

Մարմարե զանգված մը այս մարդը ծածկող փոսին վրա կբարձրանա, իր պաղ ցոլացումը պտտցնելով պզտիկ շրջափակին մեջ ու բարեպաշտներուն ուշադրությունը հայցելով կարծես։

Տարին մեյ մըն ալ հոգեհանգիստի պաշտոն կմատուցվի մեծ հանդիսավորությամբ։ Այդ օրը տոնի օրվան պես բան մը կ'ըլլա. ազգականները կու գան նորեն, ամենքն ալ տիրոջ ձեռքով ու աղքատներուն հաց ու դրամ բաշխել կուտան. և հաջորդ առտուն կանուխ լրագիրները կհաղորդեն մանրամասնությունները, փղձկելով այս մարդոց մեծվայելուչ բարեպաշտության վրա։

Միայն տեր Աբրահամ կպահե իր շվարումը, քիչ մը ավելի ուսերը կքած, քիչ մը ավելի համբ քայլերով կքալե փողոցը, ավելի ուժով կբռնած իր մշտնջենական հովանոցին՝ կարծես գլուխը վեր չառնելու ու մարդոց երեսը չնայելու մտադրությամբ։ Ուշ կուգա առտուները եկեղեցին ու այնպես մը կ'ընե, որ չտեսնե ամբարտավան քարե շիրիմը, որ կխրոխտա և զանգակատունին ճակատը փալփլող ոսկի տառերը։

Քիչ ետքը անանուն հիվանդություն մը, որ հյուծում մըն էր ավելի քան թե մարմնավոր ախտ մը, անկողին ձգեց զինքը։

Ավագերեցը մինչև իր վերջին ժամը ալ եկեղեցին ոտք չկոխեց։

Ասիկա իր ցավը ու սփոփանքը եղավ միանգամայն։

<1908>

ՃՈԿՈ

Ա

— Ճո՞կո. ինչո՞ւ համար Ճոկո. իմ անունս Սարգիս Ուղուրլյան է. կարելի չէ ինծի, որքան ալ մեծ ըլլա ձեզի հաճելի ըլլալու փափագս, այդ անունը ձգել. հորս, Կարապետ Ուղուրլյանի, հարուստ վոճառականին զավակն եմ և չեմ կրնար վերջին պահուն անոր զավակը ըլլալե դադրիլ. մանավանդ թե մեծ ժառանգության մը ակնկալությունը ունիմ։

«Ի՞նչ պետք ունիք այդպես ուշադիր նայելու երեսս և զիս շիկնեցնելու. այո՛, շիկնեցնելու, վասն զի այդ գեղեցիկ կապույտ աչքերուն առջև անսովոր ջերմություն մը կզգամ այտերուս վրա, մի՛ խնդաք, կ'աղաչեմ. շա՞տ ծաղրելի եմ արդյոք ձեր աչքին։ Ճոկո, գարձյա՞լ»։

— Միշտ,— ըսավ աղջիկը, ժպտելով։

— Կ'երևա թե կատակը կսիրեք. ձեզ նեղացնել չեմ ուզեր, դրե՛ք ինչ անուն որ կ'ուզեք ինծի. կբավե որ այդ անուշ նայվածքնիդ չհեռացնեք ինձմե

— Ճոկոն, Ճոկոն է,— կ'ըսեր աղջիկը, ինքնիրեն խոսելով։

Բ

Ճերմկոտիկ, վարդի թերթին վրա փակած շուշանի մը ճերմկությամբ, նրբահասակ աղջիկ մըն էր. մազերը իրենց անառավոր ու ծայրահեղ դեղինի մը սաստկությանը մեջ, գլխուն վրա ամփոփված, ինքն

իր վրա գալարված ոսկեձույլ օձի մը մորթին շլացումը կուտային. այդ ոսկիի գծերը կշարունակվեր դեմքին վրա, կցանցնվեր հոն ալ։

Աչքին կապույտը այն կապույտն էր, որ անուն չունի, հալած, մարած լրջություն մը խորունկ, թափանցիկ ու վճիտ խավերով։ Նիհար, նրբավարտ մատներեն, որ դաշնակի ձայնաշարին իշխելու կոչումը կհայտնեին, դաստակը մատ՝ հետզհետե գիրնալով լեցուն ու հիանալի գիծով մը ուսին կմիանար։

Մոտայի ծովեզերքին վրա չորցած տերևներե ու գունացած ոստերե ձևացած հովանիի մը տակ հավաքված աղջիկներեն մեկն էր աս, որոնց մեջեն ծանոթ մը կանչեր էր Սարգիս Ուղուրլյանը, երբ կանցներ քովերնուն։

Այդ կատակասերներեն՝ ամենեն լրջախոհը կթվեր այս գեղուհին, որ զինքը կդիտեր հիմա, իբրև թե մտացածին բաղդատություն մը ըներ իրեն ու բացակա մեկու մը մեջ, ու հանկարծ գոչեր էր երեսն ի վեր, համարձակ, առանց թաշվելու առաջին տեսակցության պարտք դրած զգուշությենեն.

— Ա՜հ, Ճոկոն է, Ճոկոն է, կ'ըսեմ ձեզի։

Մյուսները համակարծիք կթվեին իրեն. այո՛, ճիշտ ան էր. ի՞նչպես խորհած չէին մինչև հիմա. թե որ մխոթերնին գար, շատոնց Սարգիսը ճանչցած պիտի ըլլային իրենց բարեկամուհին։

Գարեջուրի զամբիներուն շուրջը նստեին այսպես, խնդալով այս գյուտին վրա, թող չտալով որ երիտասարդը հեռանա.

— Կեցի՛ր, Ճոկո։

Գ

— Ձեզ գիտեր որքա՜ն կսիրեմ ձեզի հետ տեսնվիլ,— կ'ըսեր աղջիկը, երբ օր մը նորեն պատահեցան իրարու.— ինչո՞ւ չեք անցներ երբեմն մեր տանը առջևեն. եթե պատեհություն չունիմ խոսելու հետերնիդ, գոնե հեռվեն տեսնեմ ձեզ։ Գիտեմ, ճամփանիդ պիտի երկարի քիչ մը, բայց չե՞ք ուզեր հաճույք մը պատճառել ինծի, զիս երջանիկ ընել գրեթե։

Սարգիս Ուղուրլյանը կշվարեր. իրա՞վ. ո՞ւրկե կու գար իրեն այս անակնկալի համակրությունը, ինքը՝ կյանքը տալու պատրաստ էր այս աղջիկին, և ան էր ահա որ իրմե առաջ, մեկդի ընելով պայմանագրական վեհերոտության մը կանոնները, սիրտը կրանար, միամիտ պարզությամբ, ատեն չձգելով իրեն հայտնելու թե ինքն ալ խենթենալու չափ կսիրեր այս աղջիկը։

Այդ օրը անճառ երանության օր մը եղավ երկուքին համար ալ։ Բաժնվեցան, ակամա, նորեն իրար գտնելու առաջադրությամբ։

Զմայլած կ'երթար երիտասարդը, չհավատալով դեռ լսածին ու տեսածին, հուշիկ քայլերով կ'երթար, խիստ շարժում մը չընելու երկյուղով, վախնալով որ վաղանցիկ երազի դյութական շենքը հանկարծ չքայքայի։

Դ

Այս աղջիկը ա՛լ մտքի սևեռում մը եղավ իրեն. նորամուտ և անհրաժեշտ պայման մը իր գոյության մեջ. մինակը լուծեց ու վերլուծեց այս անակնկալ պարգևը, այս մտերիմ ու բարի սիրտը՝ որ իրեն անձնատուր կ'ըլլար։ Ո՛չ, տեղ մը չէր գտած այն տրտում ու քաղցր նայվածքը որ իրեն կ'ուղղեին ամեն հեղ, երբ մոտը ըլլար այս աղջկան, որ զինքը լուռ պաշտումի մը ակնածոտ գուրգուրանքովը կշրջապատեր։ Ինքը որ ուրիշ ամեն տեղ ձեռներեց ու զբոսասեր մեկն էր, կխորհեր այս աղջկան մտածած պահուն. անոր ոսկեգիսակ ու ծանրակիր մազերուն արձակած շողերեն կշլանար. մինչև այդ ժամուն մարդու չէր հարցներ աղջկան մը հետ խոսելու կերպը. և ահա իր համարձակությունը կկորսընցներ հոս։

Այս սերը, տարօրինակ եղանակով մը սկսած, տանջանք մը կ'ըլլար, կշարշարեր զինքը. կտառապեր, առանց պատճառը գիտնալու. մինչդեռ աղջիկը ավելի կմոտենար իրեն, հեշտաբոց շունչովը, որ տաք ու վրդովիչ հովի մը պես կզարներ երեսին ու քծնելով կ'ըսեր։

— Չխոսի՞ս, Ճոկո։

Իրա՞վ. ինչո՞ւ չէր խոսեր. ինչո՞ւ հուսահատ մարդու ձևը կ'առներ, երբ ամեն ազատություն կտրվեր. և ինքզինքը քաջալերելու համար Սարգիս մտքեն կկրկներ անոր բառը.

— Չխոսի՞ս։

Ե

Իցիվ թե չխոսեր։

— Ը՛չ,— ըսավ աղջիկը,— մի՛ ըսեք որ կսիրեք զիս, անխառն ուրախություն մը ձգեցեք ինծի. կխոստովանիմ, որ հիմար, անկարելի բան մըն է այն երազը, որ ձեր շնորհիվ զիս երջանիկ ըրավ. բայց մի՛ ավրեք զայն։

Ու տեսնելով որ երիտասարդը կ'ընդսիջեր զինքը.

— Ճոկոն եք դուք, Ճոկոն մնացեք ինծի համար. ի՞նչ կ'ելլե ատկե. ձեր ծնողքին, ձեր սիրածներուն համար Սարգիսն եք միշտ. չի՞ բավեր ձեզի. բայց, ինծի համար, գոհացեք պաշտվելով. ու պաշտելու մի՛ ելլեք երբեք. ապա թե ոչ ամեն բան պիտի վերջանա մեր մեջ։ Իմ աչքիս՝ անդիտակից ներկայացուցիչ մըն եք սիրո մը զոր շատոնց կորսընցուցած եմ աշխարհիս վրա։ Ձայներնիդ, նայվածքնիդ, քալվածքնիդ, ամեն բան իմ կորսնցուցած անձս կհիշեցնե ինծի։ Առջի վայրկյանեն որ տեսա ձեզ, չկրցա ինքզինքս բռնել. առանց դարձվածքի ըսի որ կսիրեմ ձեզի։ Դուք կուռք մըն եք որ պաշտելի գաղափար մը կպատկերացնեք. ու երբոր կենդանության նշան տաք, վար պիտի իյնաք ձեր պատվանդանեն. անմիտները միայն կկարծեն որ մարդիկ կուռքերուն նյութը պաշտած են առենով. ես ալ ձեր անձին մեջ՝ անհավատալի սեպվելու չափ մեծ նմանություն մը, հիշատակ մը կպաշտեմ. այդ պատրանքը չպիտի մնա թե որ զիս սիրելու ըլլաք։

«Քերականություն կարդացեր եք, այնպես չէ՞. գիտե՞ք ինչ է անդեմ բայ մը. ճիշտ այդ բայն եք դուք. Ճոկո ըսի ձեզի. այսինքն մարդու մը անուն տվի, որ երբեք չսիրեց զիս, որուն սակայն ես որոշած եմ հավատարիմ մնալ»։

Գլխու շարժումով մը կհաստատեր իր անդրդվելի կամքը։

Զ

Եվ այս չէ՞ միթե մեծ մասով բոլոր սերերու պատմությունն ալ. կպատահի՞նք մեր դիմացինին անձին մեջ, իրոք այն մտացածին էակին զոր սրտերնուս ու հոգիներուս մեջ ստեղծած ենք. ո՞չ ապաքեն այդ երևակայական, այդ կատարյալ էակն է զոր գտնել կկարծենք, կպաշտենք։

Ո՛չ. հափրացումները չպիտի գային երբեք, դառնությունները չպիտի խառնվեին մեր սիրույն, եթե ճշտիվ այն ըղձացված ու անկարելի կերպով կատարյալ արարածը ունենայինք դեմերնիս։ Ամեն մարդ իր Ճոկոն, իր ստեղծած ու չգտածը կսիրե միշտ, նույն իսկ ամենեն շատ պաշտել կարծած անձին վրա. ու ասոր համար է, որ, քիչ-քիչ, մեր սխալը ճանչնալնուս հետ, վարագույրի մը բացվելուն պես՝ պատրանքը կփարատի տակավ, ամենեն զորավոր ու անխախտ կարծված սերեն հիշատակի փշրանքներ միայն ձգելով։

<1893>

ՓՈԹՈՒՐԼԸՆ

Ա.

Վերադարձին՝ մրցանակաբաշխութենեն — ո՞վ հնարեր է այս բարբարոս բառը — Զարուհի՝ երջանիկ, բայց քիչ մը հոգնած հանդեսին հուզումներեն, իր ոսկեզօծ գրքերուն ծրարը թևին տակ, գեղին մանառիկ ու զառիվեր փողոցներեն կ'անցներ, տուներուն առջև նստած գուլպա հյուսող կիներուն, բոբիկ ոտքով հողին վրա փոշիներուն մեջ վազվըզող, տապլտկող տղոց մեջեն, զինքը դիտող գեղջուկներուն նետելով հպարտությամբ ու քիչ մըն ալ արհամարհանքոտ՝ լեցված նայվածքը։

Հաղթական վերադարձ մը իրեններուն քով, իրենց տնակը, վե՛րը, գեղին մեկ ծայրը, ա՜յնքան խարխուլ, ա՜յնքան հին տնակ, որ քովի տուներուն կռթնելուն համար միայն կարծես կանգուն կմնար։

Ինքը, իր տասնվեց տարիներու ծլումովը, իր կենսաբույր երիտասարդության բոլոր ճոխություններովը, այս մութ ու աղտոտ խրճիթին մեջ՝ աղբերու պարարտ բողբոջումովը ծաղկած վարդի մը տպավորությունը կձգեր։

Հոս, սակայն, իր շրջանավարտի բոլոր ցնծահույզ խնդությունը անտեղի կթվեր այս աղքատության հանդեպ։

Քիչ մը առաջ արտասանված ճառերեն, տնօրենին ու հոգաբարձության իրեն շռայլած գովեստներեն ու ժողովուրդին ծափահարություններեն, որ ամեն մեկ մրցանակի շնորհվելուն կկրկնվեին, ամեն կերպ շնորհավորություններու, գրեթե խոստումներու երփներանգ ծաղկեփունջեն՝ ոչինչ կմնար ահա իր ձեռքը, տանը սեմեն ներս ոտք կոխած վայրկյանեն։

Իր հիվանդ ու ցավագար մայրը անկողնին էր ու պզտիկ եղբորը, ցնցոտիներ հագած չորս տարու երեխայի մը, ճչելու, պոռալու ձայնը, որ փողոցին ծայրեն կլսվեր, դժգոհության մշտնջենական աղաղակը, այս աղքատիկ տան ճշմարիտ ձայնը ըլլալ կթվեր։

Պահ մը մորը անկողնին մոտ գնաց, ցուցնելու անոր իր առած մրցանակներուն շքեղ կազմածքը, որ, հիվանդ կնոջմեն ավելի, գետինը տախտակին վրա մոռցված մանկիկին ուշադրությունը գրավեց իսկույն։ Հետո, վեր ելավ իր փոքրիկ խցիկը, խնամքով զետեղելու, պահելու համար այս ամենը իր դասագրքերուն քով, որոնց՝ այնքան անձկությամբ սպասված վերջավորությունը կբերեր, սպասելով, որ լավագույն կյանքի մը սկզբնավորությունն ալ բերեր միասին։

Բ

Այդ կյանքը կգուշակեր, կտեսներ, գրեթե կվայելեր կանխավ, իր երևակայությանը մեջ։ Կանխահաս զարգացումով մը՝ իր աճապարող իմացականությունը իր շուրջի իրական մթնոլորտեն շուտով դուրս հաներ էր զինքը։ Ուսումնական աղջիկ մըն էր հիմա, լիովին իրագործելով փափագները իր մորը, Պոլսո մեջ երկար տարիներ ստնտվություն ու սպասավորություն ընող կին, որ իր կաթովը մեծցուցած օտար աղջիկներուն ուսումնական օրիորդներ դառնալը տեսնելով, իր աղջիկն ալ անոնց պես տեսնելու փառասիրությունը ու անձուկը ունեցեր էր։ Զավկին քով դառնալուն և նույնիսկ դեռ չդարձած, ոևէ ծախք ու զոհողություն չէր խնայեր անոր տալու այն կրթությունը, որ գեղին մեջ էն հարուստի զավակը կրնար ձեռք բերել։ Պոլսո հայ հանրմներու կենցաղին վրա՝ հիանալի բաներ պատմած էր իր աղջկան, այնչափ՝ որ ճոխություններու, վայելքներու առասպելախառն ավանդություններով լեցուցեր էր անոր հոգին։ Զարուկ՝ իր պզտիկ դասընկերներուն մեջ՝ բան գիտցողն էր ամեն ատեն, վՀիռ արձակելու կարողը, որուն ետին՝ իր Պոլիս ապրած մորը հեղինակությունը կար։

Դպրոցին մեջ՝ Զարուհին պսակեր էր իր վրա դրված բոլոր ակնկալությունները, ամեն տարի, ինչպես այս վերջին տարին ալ, առաջին կհանդիսանար քննություններուն մեջ, ծափերով ողջունված ու չորպաճիներու աղջիկներեն ավելի փառավորված։

Եվ մայր ու աղջիկ, միևնույն լոին ու թաքուն համաձայնությամբ, գեղջուկ կյանքե վեր աստիճանի մը հասնելու տենչանքը կսնուցանեին իրենց սրտին մեջ։

Վարժարանին մեջ, իր Պոլսեցի վարժուհին՝ կատարելագործյալ կնոջ տիպար մը Զարուկին աչքին՝ մնացածը ամբողջացուց։ Մայրաքաղաքեն հեռանալու համար, անկյալ հրեշտակի մը ձևերը ուներ այս կինը և գեղացի աղջիկներուն քով ապրելու, անոնց բան սորվեցնելու պարտականությունը՝ պատիժ մը կրելու պես ի գործ կդներ։ Պոլիսը, իր Պոլիսը հիշելու առիթը չէր փախցներ. գերագույն բաղդատության եզրը որուն տակ՝ բոլոր գեղը գեղացին ու գեղին դպրոցը կ'ընկճեր, կփճացներ։

Զարուկ, երբոր բարձրագույն կարգը անցավ, ընկերուհի մը եղավ անոր, այնքան ավելի մտերիմ, որքան միևնույն խուլ տրտունջը կար երկուքին ալ սրտին մեջ։

Ընթերցանությունն ալ եկավ իր բաժինը բերելու այս մատաղ հոգին խռովեցնող հովերուն մեջ, և դպրոցական վերջին տարին, երազա-

մոլ տարին եղավ, չքնաղ ու անդարձ տարին, որուն մեջ քաղքենի կյանքը, իր բոլոր շնչին մանրամասնություններովը, անմիտ կարգ ու սարքովը, այլազանությամբը, վարքերու արտոնյալ ազատությամբ՝ գունագեղ երանգներու ծիրանի գոտիի մը պես իր գեղացիի նսեմ մթնոլորտին վրա կգծագրվեր ամեն վայրկյան։

Գ

Առտուն կանուխ աղբուրին քով հավաքված էին մահալեին աղջիկները, կիները, մեյ մեկ դույլ, մեյ մեկ պարխան ձեռքերնին, կանուխ-կանուխ սկսելով իրենց տնեցի աշխատավորի միօրինակ վաստակը ու բամբասանքը։

Աղբուրը ամեն անցած դարձածի, ամեն գայթակղությանց արձագանքի կեդրոնավայրն էր, թելեֆոնի ընդունարանի մը պես, ուրկե լուրը իսկույն կտարածվեր գեղին մեջ հազար ու մեկ բերաններով։

Բարևներեն, առաջ անցնելու պզտիկ վեճերեն ետքը, Իսկուհին, ամենեն հետաքրքիր ու լավատեղյակ կինը բոլոր գեղին, օրվան նոր լուրը հաղորդեց ներկաներուն.

— Գիտե՞ք, աղջիկներ, Օհանճանը Զարուկը ուզեր է։

— Օհանճա՞նը։

Չհավտալու, զարմանալու պզտիկ մրմունջ մը՝ որուն վրա նախանձի պզտիկ հով մը կթռչտեր՝ հանդարտ ծովի մը մակերևույթը փոթփոթող թեթև քամիի մը հպումին պես։

Օհանճանը՝ առույգ ու կորովի կտրիճ մը, որուն վրա էին կարգելու աղջիկ ունեցող բոլոր մայրերու աչքերը։ Ապայե փոթուրովը, որ իր ջղուտ՝ բայց աղվոր կնկան մը նախանձը շարժելու չափ բարեձև սրունքին բումբը կգրկեր, չեփկենեն դուրս պոռթկացող լանջքին տոկուն կամարովը, իրեն պես բարձրահասակ մարդոց հատուկ քալվածքին պզտիկ ներերումովը, որ պչրանքի պես բան մը կ'ավելցներ առնական հրապույրին վրա, իրոք աղվոր տղա մըն էր անիկա, որուն յազմայով փաթթած ծուռ ֆեսին երկար ծոպը ուսը կծեծեր։ Իր նորաբույս ու նուրբ պեխին ոլորքը, առանց ուզելու շատ մը սիրտեր էրած ու մրկած էր։

Ասոնց բոլորին վրա զույգ մը եզի ու աղվոր արտի տեր, պարզ բենեպերությամբ առաջ եկած, բանվորության մաքուր ու թարմ հոտը, պարզությունը, քիչ մըն ալ ռամկությունը պահելով իր վրա և հպարտանալով այդ ռամկությունովը որ կվայլեր իրեն։

Եվ սակայն գացեր եկեր գիտնական աղջիկ մը իրեն կին առնելու որոշում տվեր էր ահա. տարօրինակ ամուսնության գաղափար, որ իր

մտքին մեջ մտեր ու իր կամքին հակառակ հետզհետե գամվեր ու հաստատվեր էր հոն, Տյումային խոսքին համեմատ, այնքան ավելի խոր՝ որքան զարկեր էր այդ գաղափարին վրա։

Պզտիկ մը վերլուծելով՝ գեղին էն ուսյալ աղջիկը, ինքը ռամիկ ու անուս մարդ, իրեն կին առնելու փառասիրությենեն ավելի՝ ճշմարիտ ու հիմնական համակրություն մը այս ընտրությունը թելադրած էր իրեն, և աղքատ աղջիկ մը չքավորությենե ազատելու, համեստ, բայց անդորր կենցաղ մը անոր ընծայելու ներքին գոհունակությունը ավելցած էր այդ համակրության վրա։ Ու այս բոլոր մտածումներով առաջնորդված՝ Օհանճան, իր մորը խուլ ընդդիմությանը հակառակ, Զարուկը ուզելու ելեր էր օրին մեկը, անոր շրջանավարտ ըլլալեն վեց ամիս անցած չանցած։

Այս բախտը, որովհետև իրոք բախտ մըն էր ասիկա, աղբուրին քովը հավաքված կիներուն միաձայն կարծիքին նայելով, միայն Զարուկին աչքին չերևաց սակայն, իր գիտնական աղջիկի երազներեն ռամիկ զարթնում մըն էր ասիկա, ջուր կրող, լաթ լվացող աղջիկներուն սովորական ու գռեհիկ ամուսնությունը՝ Հողագործի մը հետ, անոր կոպիտ ու դժնդակ ապրուստին մշտնջենական մասնակցությունը. հերկելու, ցանելու, քաղելու սահմանված գործունեություն մը՝ ցորենի, հարդի, աղբի կապված երիտասարդության մը հետ. ահա բոլոր ստուգությունը, որ այս ամուսնությունը իրեն կխոսանար։ Ու մարդ մը դեմը՝ որ իր աղվոր երիտասարդի բոլոր հրապույրները կկորսնցներ գեղացիի անշնորհ հագուստներովը։

Զարուկ լավագույն սեպեց իր աղքատության մեջ մնալ, քան թե այս տղուն հետ կարգվիլ։ Իզուր ազգականներ մեջ մտան և ավագերեցը եկավ զինքը խոստովանցնելու։ Բան մը օգուտ չրրավ. աղջիկը անդրդվելի մնաց իր որոշումին վրա, միջնորդելու եկող մարդիկ մեկիկ-մեկիկ ելան գացին. ծեր հորաքույր մը մնաց հոն, համառելով Զարուկը համոզելու, գեթ անոր մերժումին պատճառը հասկնալու համար։

— Աղջիկս, ինչո՞ւ չես ուզեր Օհանճանը։

— Ես փոթուրը մարդու հետ չեմ կարգվիր,— պատասխանեց Զարուկ։

Դ

Իրոք փոթուր չուներ ան տղան որուն հետ տարի մը վերջը Զարուկ ամուսնացավ։ Պոլիսեն եկեր ինկեր էր այդ գյուղը, չեմ գիտեր ի՞նչ կերպով, ու ազգ. վարժարանին մեջ տնօրեն-դասատուի պաշտոն մը կվարեր քիչ մը ատենե իվեր։

Զարուկին աչքին՝ գիտութեան, ազնվութեան ու ճաշակի ներկայացուցիչն էր այդ ազազուն ու վտիտ երիտասարդը, որ պարծուկ աքաղաղի ու դեմինին զիջողութիւն ընող մարդու մը ձևերը ուներ գեղացիներուն մեջ։

Հինգ հարիւր ղուրուշ էր իր ամսականը, որ գեղ տեղերու մեջ մեծ բան մըն է հարկավ, և որ, ամեն պարագայի մեջ, իր ընչին արժանիքեն շատ ավելի էր։

Իր կիսկատար, ամեն կերպով թերի ուսումը՝ կատարյալ իմաստակ մը, մեր տգետ ուսուցիչներուն ճշմարիտ տիպարը ըրած էր զինքը։

Ավելցուր ասոր վրա պահանջկոտ մեծամտութիւն մը, ոչ մեկ բան քիթին չտանող մարդու բնավորութիւնը, ահա Զարուկին ընտրած ամուսինը, մայրաքաղաքեն եկած մեկը, որ օր մը զինքը հոն տանելու ամեն երաշխավորութիւնները կ'ընծայեր։

Արդարև այս էր իրենց խոսակցութեանց մեջ հաճախող հանկերգը.

— Երբոր Պոլիս երթանք...

Անկեղծ էր այս մարդը երբոր Զարուկին հետ մայրաքաղաք դառնալու ծրագիրը, գուցե հազարերորդ անգամը ըլլալով, կպարզեր անոր շլացած աչքին առջև։ Քանի-քանի անգամ Պոլիսը նկարագրեր, բացատրեր էր։

Քանի մը տարի այս գեղին մեջ կենալե ետքը, Պոլսո կարոտը ու անձուկը կզորանար այս դառաուուի հոգիին մեջ, ու գեղին միօրինակ ու ընդարմացուցիչ կյանքովը ապրելու տեղ, մայրաքաղաքին մեջ անոթի տանջվիլը կնախընտրեր։

Երբեմն, իր երիտասարդ կնոջը կնկարագրեր Վոսփորը, իր օձապտույտ գալարումներովը, երկու գիեն բարձրացող ապարանքներու շքեղութեանը մեջ. ու կպարծենար ատով՝ երբե թե իրը ըլլային այդ բոլորը։ Ու ասանկով, այր ու կին կհամաձայնեին, մոռնալով շնչին ամսականե մը ձեացած սպրուտսի մը բոլոր զրկանքները, միամիտ վստահութեամբ մը հավատալով, որ Պոլիս ուաք կոխելուն՝ իսկույն ձեռքե ձեռք պիտի քաշեին այս ուսուցիչը, ամսականները պիտի թափեին շորս դիեն, ղրձացված հանգիստը բերելով իրենց։

Ու առժամանակյա կայանքի մը համոզումով այս գեղին մեջ կեցեր էին, դիմումներ ընելով Պոլիս, հոն գործ ու պաշտոն ձեռք ձգելու համար. ոչ ոք պատասխան կուտար իրենց, մանկավարժական տաղանդուն կոչում կ'ըներ. սկիզբները այս դժվարութիւնները չբավեցին անոնց երիտասարդի հուսալից կորովը փճացնելու նոր նամակներ գրեցին գեղեն, ծանոթներու դիմումներ ըրին շարունակ։

Զարուկ տարի մը չանցած իր առջինեկը ունեցավ. հետո երկրորդ մը. և հիմա, միշտ շնորհալի կին, տնական սպասավորութեան տաժանքովը կպաշարվեր հետզհետե։ Իր ոսկեզօծ երազները, խուսափող ստվերներու պես, միշտ մոտ՝ բայց միշտ անմատչելի կմնային։

Հինգ տարիե ի վեր ամուսնացած էին, երբոր առաջնորդի, թաղականի, հոգաբարձուի կոչիվ մը, պարբերական կոչիվը, վրա հասավ և իր երիկը վարժարանեն ճամփեց։

Ուսուցիչը բացը մնաց. զինքը պաշտոնի կոչող հոգաբարձուներուն հակառակորդները գործի գլուխ անցեր էին։ Ինքը, իր խրոխտ բռավականութեանը ապաստանած, չուզեց ասոր անոր դիմել աղաչել իր պաշտոնը վերստանալու համար։ Զրկված, անիրավված դասատուի, ազգային աշխատավորի դերը ուզեց վարել, ապերախտ դեր, որ եթե իր հպարտութիւնը կգգվեր, բնավ դրական օգուտ մը չէր ընծայեր։

Հիմա փողոցները կթափառեր, գեղջուկներուն դեմ իր արհամարհոտ պզտիկ ժպիտը շուրթին վրա, ուրիշ գործ մը գտնելու, հացի առակ մը ճարելու մտմտուքը պահելով իր հոգվուցե խորը։

Գեղեն ոչ ոք ձեռք երկարեց այս պոլսեցիին. նոր եկող տնօրենը, վանեցի մը, անոր դեմ զինվեցավ. պատրաստված, նահանջած ոտքե մը բոլորովին չքացնելու, ու ասոր անոր օգնութեամբը՝ հարձակողական վերադարձ մը արգիլելու մտադրութեամբ։ Նոր տնօրենին խոսքին նայելով՝ կ'երևար թե Զարուկին էրիկը բան մը չէր սորվեցուցեր իր խնամքին հանձնված աշակերտներուն։

— Ո՛չ տղոց միտքը, ո՛չ անոնց հոգին մշակեր է,— կ'ըսեր ան ամեն դեմը ելլողին։

Այս մարդը մանկավարժի հոգեր ուներ, հոգեբանութեան վրա կճառեր, ու ապշած հոգաբարձուներուն երեսին՝ Ֆրեպելի ու Փեստալոցցիի անունները կնետեր։

— Խեղճ տղոց բոլոր ժամանակը զուր տեղը վատնել տվեր է ձեր պոլսեցի ուսուցիչը. երեխաներու հոգիին պետք էր խոսիլ, փոխանակ շոր ու ցամաք կերպով կարգ մը անուններ քերնուց ստրվեցնելու անոնց։

Այս հարձակումներուն տակ՝ ճամփված դասատուն անգարձ կորսված կզգար ինքզինքը։ Կուսակից չուներ, ինչ որ հազվագյուտ բան մըն է գեղերու մեջ. պարտքը մինչև վիզը ելած էր, ու հացի, շոր հացի կոչիվը կսկսեր՝ իր բոլոր զարհուրանքին տակ ընկճելով այս հեք ընտանիքը։

Նախ, իր ունեցած բառգիրքերը ծախեր էր. հետո գնոչը քանի մը կտոր գիրքերը, ոսկեզօծ մրցանակները, որոնք այս նեղութեան օրերուն մեջ միայն՝ իրենց պահված տեղեն դուրս ելեր էին, իրական ու շոշափելի օգուտ մը արտադրելու համար։

Երբոր, դատի մը առթիվ, ես այդ կողմերը գացի ասկե քանի մը տարի առաջ, դրացիներուն ողորմությունը միայն կ'ապրեցներ այս ընտանիքը։

Դասատուն ծանր հիվանդ էր, գացի տեսնելու զինքը իր անկողնին մեջ։ Երեսուն տարու չկար դեռ հենք տղան և սակայն մազերը ալևոր էին բոլոր։ Աչքերը, որ ջերմեն կփայլեին, փոսը ինկած էին. դիակի գեղնություն մը ծավալած էր իր խոռոչացած այտերուն վրա. դրան առջև՝ իր երկու աղջիկը, պզտիկ շալվարներ հագած, երկու պզտիկ փոքուրըներ, կխաղային իրենց տարիքին անգիտակից ու շքեղ անփութությամբը։

Մայրերնին՝ գույնը նետած սրբամաև շրջազգեստի պես բան մը հագած էր. իր սև ու հին յազմաեն՝ որ այրիի մը երևույթը կուտար անոր՝ առատ մազերը կթափեին դուրս ճակտին վրա ու կոնակն մեջքը կհասնեին։

Մաքուր հայերենով մը, որուն մեջ զիս զարմացնելու անմեղ պչրանքը զգացի, խոսեցավ հետս, իր էրկանը կարոտ վիճակը պարզեց, ամուսնացած օրեն օր մը դեռ հանգիստի երեսը տեսած չըլլալը խոստովանեցավ։

Հիվանդությունը, հյուծախտ մը՝ սնունդի անբավականութենե ու բարոյական հոգերե առաջ եկած, օր օրի կհալեցներ անոր տկար ույժերը ու դյուրավ գուշակել կուտար վախճանը որ մոտալուտ էր։

Իմ հոն երթալես ութ օր վերջը մեռավ անիկա, մահ մը, որ փրկություն մըն էր գրեթե անտանելի թշվառութենե մը. իր կարճատև կյանքին պես աղքատիկ ու անշուք եղավ իր թաղումը. ես, մեկ երկու պոլսեցիներ որ դիպվածով այդ կողմը կգտնվեինք, հուղարկավոր գացինք իրեն մինչև գերեզմանատունը, որ անոնց տունեն շատ հեռու ալ չէր։ Գեղացիներեն հազիվ չորս հինգ հոգի, որոնց մեջ չորպաճիներեն մեկը, երիտասարդ մը, զոր ճանչցուցին ինծի, Օհանեան աղան։

Համեստ, գրեթե ամչկոտ մեկը, որ իմ մոտս գտնվելուն, ինծի հետ խոսելու համարձակելուն համար կարծես թե ներում կխնդրե։

— Խապա մարդեր ենք մենք,— կ'ըսե ինծի,— մեր ըրածին խոսածին մի՛ նայիք, մենք ուսումնական չենք, փոքուր կհագնինք, եմեն ունինք ոտքերնիս։

Պակասություն մը խոստովանելե ավելի, լուռ բողոքի, գանգատի պես բան մը կա այս խոսքին մեջ որ միտքս կշարշարե։ Շուտով կբարեկամանա հետս ու վերադարձին՝ ճամփունուս վրա իր գործատունը

կհրավիրե, խոզակի գործատուն՝ թթենիի պարտեզներով շրջապատված՝ զոր հաջողությամբ կբանեցնե։

Մեկիկ-մեկիկ քովի արտերը, հողերը կթվե ինծի, անոնց բերքը, հասույթը կբացատրե, բոլոր իր սեփականությունը, որուն վրա արդար ու համարձակ հպարտությամբ մը կպարծենա։

— Ես ռենչպերութենե առաջ եկած եմ։

Կգովեմ իր հաջողությունը, այնքան սիրահոժար, որքան Օհանեան խոնարհ ու ստորին աստիճանե մը տակավ բարձրանալով ձեռք բերած էր զայն։

Իրիկվան, իր տունը ճաշի հրավիրե զիս. կմերժեմ. բայց անիկա կթախանձե ու օձիքս չի թողուր. չեմ կրնար իր այսքան հյուրասիրությանը դեմ համառիլ. մանավանդ որ պարզուկ, բայց ազնիվ սրտի տեր մեկը կ'երևա ինծի։

Տունը՝ էն աղվորներեն մեկն է գեղին մեջ. ծովեզերքը տանող կառուղիին վրա կնայի ու գեղեցիկ պարտեզի մը մեջ շինված է. ընդարձակ շենք մը որուն մեջ իրմեն զատ մայրը կա միայն, դեռ կորովի կին մը, աշխատասեր ու խնայող հայուհիի տիպար մը։

— Բարի եկաք,— կ'ըսե ինծի։— Օհանեանս միսաֆիրը կսիրե, կմեծարե. բարի եկաք։

Քիչ մը կմտերմանամ հետը ու կհարցնեմ թե ինչո՞ւ մինչև հիմա հարս մը չունի տանը մեջ։

— Օհանեանիս հարցո՛ւր,— կպատասխանե ինծի։

Բան մը չեմ հասկնար ասկե. ուրիշ խոսքեր վրա կբերեն. հին ու նոր պատմություններ կպատմեն ինծի։ Ճաշեն վերջը, դրացիներ կհավաքվին ու մինչև կես գիշեր կզբոսնունք։ Գիշերը ես կդառնամ այն տունը՝ ուր այս գյուղը անցուցած բոլոր միջոցիս հյուրընկալված եմ։

Հետևյալ առտուն այնտեղ պատմեցին ինծի Օհանեանին պատմությունը, իր մերժված սերը, մինչև հիմա ամուրի մնալուն գաղտնիքը։

Զ

Անցյալները սպասուհի մը եկավ մեզի այդ գեղեն. իմ այցելութենես ի վեր երկու տարի անցած էր։ Ծատ մը հարց ու փորձեր ըրի իրեն։ Ի՞նչ կ'ընեին գեղացիները, խոզակը շահ կձգե՞ր առաջվան պես. գեղին աղաները իմ ճանչցած անձե՞րս էին, Հաճի Կարապետը, Օհանեան աղան, ուրիշները։

Այս վերջին անունին՝ սպասուհին ժպտեցավ.

— Օհանճան աղան կարգուկ է հիմա,— պատասխանեց ինծի,— որբևարի մը առավ ամիս մը առաջ։

— Ի՞նչ, որբևայրի՞,— հարցուցի։

— Վարժապետին կնիկը, Զարուկը։ Իր առջի ուզածը առավ. տեսա՞ր, էֆենտիս, խրսմեթը ինչ է՝ ան կըլլա։

Երկու բառով ամեն բան հասկցուց ինծի, ասիկա ամենուն գիտցածն էր գեղին մեջ։

— Առաջ՝ փոքուրլու ըլլալուն՝ չուզեց Օհանջան աղան. անիկա ալլըման տելիֆանչի մըն էր, ըմա հիմակին պես հարուստ ալ չէր շտապակը։ Աղջիկը կարդալ կիտեր, դպրոց գացեր ու կիտնական էր. չհավնեցավ անոր. առջի էրիկը վարժապետ էր. աղեկ օր մը չցուցուց կնկանը։ Հիմա Օհանճան աղան առավ նորեն։ Առաջ ալ աղվոր էր Զարուկը, չունևորութենեն չէր ցուցներ։ Թե որ հիմա տեսնես, պոյ, պոս, ծովի պես մազեր, լուսնի պես երես մը. հրեշտակ կըլլանի։

Ու բարոյականը հանելով այս բոլոր պատմությանը, իր պարզամիտ՝ բայց խելացի գեղջուկի բարոյականը՝

— Նայե, էֆենտիս, մեր գեղը Պոլիս չէ, հոն շալվար կհագնինք մենք, մեր էրիկ մարդիկ ալ փոքուր պիտի հագնին։

<1900>

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ա

Տասներկու տարվան անջրպետ մը։

Ամենահիմար սիրո մը ամենառամիկ վախճանին վրայեն անցած տարիներ։

Զատվիլ մը առանց կռվի, առանց վեճի, առանց իրարու երեսի նետված ծանր խոսքերու, թունավոր նետերու նման զորս հեռացած փախած միջոցիդ կ՝արձակես թշնամիին դեմ և որոնք անմիջական մահ մը չեն տար դիմացինին, այլ մեղմ, գրեթե չնչին խայթվածք մը, ասեղին ծայրը դպիլու պես բան մը, որ սակայն ժամանակով՝ տարիներու ընթացքին մեջ՝ համրաբար իր դառնությունը, իր ցավը կծավալե բոլոր մարմնին վրա, ու անոր մնացորդ կյանքը, նույնիսկ էն անուշ անցյալը, մանավանդ թե այդ անցյալը կժահրոտե մշտնջենական թունավորումով մը, և հին սերը ատելության կփոխե։

Ո՛չ, մերինը այդ անջատումներեն չեղավ։

Իր ընդոծին հպարտությունը և կնոջական բնազդը, որ քիչ անգամ կսխալի, գուշակել տված էին իրեն՝ պարապը որ հետզհետե կշինվեր, կմեծնար, կխորունկնար մեր սրտերուն մեջ. խոնջենքը որ կծանրանար վրաս, ափսո՜ս, խոնջենքը իր զգվանքին որ, կ՝ամչնամ ըսելու, իմ փոփոխամիտ երիտասարդի խառնվածքիս վրա՝ պատատուկ բույսի մը հազիվ թե զգալի փաթթվածքովը՝ շղթայի մը ծանրությունը կ՝առներ։

Եվ առանց սպասելու, որ սնոտի կամ շինծու բարուրանքներով ձևացած հրաժեշտը իմ կողմես գա, ինքը քաշվեր հեռացեր էր, ձանձրություն տալ չսիրող մտերմի փափկանկատությամբ, որ իր դեմինը պարտավոր կ՝դա անոր համար, որ «զիս մինակ ձգե» ըսելու ծանր հարկեն կ՝ազատե զիսքը. որ համբույրներով օծված ուխտերը, արցունքներով նկիրագործված առաջադրությունները, երդումներով տևականությունը երաշխավորված սեր մը դրված ըլլալուդ ամոթը բացահայտ կերպով չի ծանրացներ վրադ։ Ավելին կ՝ընե. ինքը կստանձնե այդ մեղքը, առաջինը՝ ինքը քեզ թողած ըլլալու երևույթը առնելով։

Ու այնպես է նեղմտանքը, անողոքելի ու սակաւաւ նեղմտանքը մարդուս, որ ան ալ՝ մարդոց պես՝ ի հարկին երևույթական ու արտաքին ճըշմարտությամբը կբավականանա։ Ան, որ հաւեքիստ ու դագար չպիտի տար քեզի, եթե դուն նախ լքեիր սիրած աղջիկդ, հիմա անոր անձնվիրությունը չհասկնալ ձևացնելով՝ անմեղ կհռչակե քեզ ու սրտիդ անդորրությունը կվերադարձնե քեզի։

Ինքնախաբություն է այս, առանց որուն սպրիլը անհնար պիտի ըլլար գուցե։

Այս ազատագրությամբ երջանիկ եղեր էի սկիզբները՝ տարիքիս եսասեր անփորձությանը մեջ. վերջեն ինքզինքիս վերադարձիս՝ մինակ մնալուս՝ իր բոլոր անձնվիրությունը խոստովաներ ու վայելեր էի ուշ մնացող շնորհակալությամբ մը և կարծես հետադարձ սիրո վերսկսումով մը։

Այս էր անցյալը։

Ու հանկարծ դեմ առ դեմ գտնվելնիս կիրակի առտու մը Այեմտադիի փոքրիկ եկեղեցիին մեջ. անակնկալ ու բիրտ հանդիպումը, որ ո՛ւէ կանխապատրաստությամբ չէ մեղմացած, որուն մեջ երկու կողմն ալ պատշաճ կեցվածք մը առնելու և իրենց հոգիին խռովքը գոնե սքողելու ժամանակ և միջոց չունին. այնպես որ այն երկար տարիներու անջրպետը որ մեզ զատած էր, ջնջվելով բոլորովին, մեր բաժնվելուն ճիշտ հաջորդ օրվան կվերադարձնե մեզ։

Տպավորությունս այնքան սաստիկ է որ իր կարգված ըլլալուն և քովը կեցող մարդուն, հավանականաբար, իր էրիկը ըլլալուն տարտամ գիտակցությունը միայն կ'արգիլե զիս իր քովը փութալ վազելե։

Բ

Դասէն՝ կդիտեմ զինքը հետաքրքիր, ու քիչ մըն ալ, ինչո՞ւ պահեմ, անձկությամբ։ Ինե չորս քայլ միայն հեռու է, փղոսկրե կողքով աղոթագիրքը ձեռքը, դեմքը այլայլած ու աչքը՝ իմինիս չհանդիպելու փախուստին մեջ՝ սեղանին ապավինած։

Իր գեղակառույց արձանի շռայլված պարգևները խաթարված չէին ամուսնանալովը. ընդհակառակը։

Նույն հասակյա կինն էր, աղջիկ ատենին վրա սոնքացած քիչ մը, իրավ է. բայց իր գորշ արդուզարդին ճարտարարվեստ վայելչությամբը, որ այս գյուղի ժամուն մեջ զարմանք կհրավիրե, պարտկելով, նույնիսկ շնորհալի ընծայելով իր մստ կնկան թանձրությունը։

Աչվքները՝ ածուխի կոտրտուքի պես փայլուն ու պճլտացող սևությունին պահելով հանդերձ՝ առջի աչքերը չէին, միշտ խոլ խնդուքով մը լեցուն աչքերը, այլ հանցավորի խոնարհ ու երկյուղաբեկ անձկությունը կմատնեին։

Առաջին զգացումս վերլուծելով՝ խորունկ գոհունակությամբ մը կլեցվի սիրտս։ Վախցեր էի որ ատենով, դյուրախաբ պատանիի անփորձությանս մեջ, անշնորհք էակի մը սիրտ տված ըլլամ. ինչ որ պիտի ամչցներ զիս այսօր որ ճաշակիս ու ընտրությանս ազնվությանը կվստահիմ։ Մեկ նայվածքով կհամոզվիմ, որ այս վախը անտեղի է բոլորովին. թե որ այս վայրկյանին առջի անգամ ըլլալով հանդիպած ըլլայի իրեն, կզգամ, որ հիմա ալ բոլորանվեր պաշտումով մը պիտի պաշտեի զինքը։

Միակ վախը որ կա՝ այն է որ ինքը արժանի չգտնե զիս իր սիրույն. ժամանակեն առաջ ճերմկցող մազերես՝ հոգերով ու մտմտուքով բեռնավորված ճակտես՝ չճանչնա այն պատանի ու ամբարտավան գլուխը, զոր ծունկին վրա հանգչեցնելը կսիրեր ատեն մը։

Ու կխորհիմ, որ անարտունջ, գրեթե ժպտելով բաժնվեր էր ինե մինչև վերջին վայրկյանը անուշբերնելով զիս, իր սովորական զգվող, փայփայիչ անուններեն և ոչ մեկը զլանալով ինծի, «հոգի՜ս»-ներ, «կյանքս»-ներ, որոնցմով օրորեր, վարժեցուցեր էր զիս և ուրկե վերջին

պահուն զիս զրկել չուզեց բնավ, այն բժշկին պես, որ մեռալուտ վախճանին գիտակցությամբը ամեն ուզածը կշնորհե հիվանդին։

Մինչև վերջին օրերը իր կատակասեր ու զվարթ բնավորությունը պահեց. սաչափը միտքս է սակայն որ երբեմն հանդիսավոր ձև մը կ'առներ. իրիկունները՝ իրարմե բաժնվելնուս՝ ձևոքը, որ իր գիծերուն անուշ նրբությամբը գլուխգործոց մըն էր, ինծի երկնցուցած պահուն, երդումի մը համար կարկառված կթվեր՝ երդում զոր շրթունքը չէին արտասաներ, այլ իր աչքերը կզուրցեին ինծի իրենց մռայլամած երկինքի ստվերներովը։

Երբեմն պզտիկ ակնարկություններ կ'ըներ մեր հավանական բաժանումին։

— Ինծի նայե, Գրիգորս,— կ'ըսեր ինծի,— ամեն բան աշխարհիս մեջ հանգիստի, արձակուրդի պետք ունի. ծաղիկները իրենց փթթումովը կհոգնին ու հաջորդ տարին կծլին մեյ մըն ալ։ Սերն ալ իր վատանը ինչո՞ւ չունենա. չա՜ր զավակս, մի՜ վախնար որ քու հարափոփոխ խառնվածքդ մեղադրեմ. քու սիրույդ սպառումը իր ուժգնությենեն, չափազանց վատնումեն կու գա. թե որ սա մեր միասին անցուցած երկու տարվան մեջ շատ չսիրեիր զիս՝ չպիտի պաղեիր հիմա ինե. քու արդարացումդ նույն իսկ հանցանքիդ մեջն է. այն բանը, զոր ուրիշ կին մը իրեն պզտիկություն պիտի սեպեր, ես ինծի պարծանք կհամարիմ. հիմա ինե փախչիլ ուզելդ՝ զիս շատ սիրած ըլլալուդ ապացույցն է։

Ներսես՝ բոլոր սրտովս իրավունք տալով իրեն՝ դյուրաշուրթն կեղծավորությամբ կբողոքեի այս խոսքերուն դեմ.

— Խե՞նթ ես, Մաքրիկ, կրնա՞մ քեզե անցնիլ։

Երկու օր վերջը, ուշադիր նայելով աչքիս մեջը, հոգիիս խորը կարդալու ջանքով մը, երբոր ես իր քովը ծունկ չոքած իր փայփայանքներուն անձնատուր կեցե՜ր էի, կհարցներ.

— Ի՞նչ կ'ընես, հոգի՜ս, թե որ գալ շաբթու հանկարծ ելլեմ մեկու մը հետ կարգվիմ։

Ես, կեղծ վրդովումով մը, զոր խորամանկություն կկարծեի, կպատասխանեի իրեն.

— Դուն ատանկ բան չես ըներ։

— Շատ աղեկ ալ կ'ընեմ, գիտեմ, որ ատով իմ սիրույս բոլոր խոնջենքեն կփրկեմ քեզ. գիտեմ, որ մոմ կվառես եկեղեցին՝ իմ ամուսնանալս իմանալուդ, չէ՞. մանավանդ որ թե որ ամուսնանամ ալ, դարձյալ պիտի սիրեմ քեզ, հիմակուց գիտցած ըլլաս։

Եվ վախնալով որ բոլորովին չհավատամ իր ըսածին, մեկդի ընելով իր լուրջ ձևերը, սինեմաթոկրաֆի պատկեր մը փոխելու պես փոխե-

լով իսկույն տեսարանը, քահքահով կխնդար վրաս, ու ապտակելով երևս՝

— Չէ՛, անառակ մա՛նչս, դող մ'ելլեր, էն հարուստ վաճառականն ալ թե որ զիս ուզելու ելլե, նորեն չեմ առներ զինքը։

Գ

Ատկե երեք օր վերջն էր որ ամուսնացավ. մանրերկրորդի մը մեջ լ'ճռված կատարված ամուսնություն՝ բոպեական լուսանկարի մը պես։

Անձնասպաններ կան որոնց անակնկալ մահվան լուրը քեզ ապշեցնելուն հետ միտքդ կձգե քանի մը օր առաջ այդ մեռնողին խոսքերը, որոնք զուրցված պահուն՝ անիմաստ ու անհասկընալի երևցեր էին. արտասովոր շարժուձևերը, որոնք զարմացուցեր էին քեզ և որոնք հիմա՝ այդ մահվան քովը բերվելով՝ իրենց ահավոր մեկնությունը կստանան. և կզարմանաս, որ ան ատեն՝ այդ խոսքերը լսելուդ փույթ չունեցար զանոնք վերլուծելու. «հիմար խոսքեր» ըսիր ու անցար. սպրդեցան գացին անոնք առանց սթափեցնելու, և հիմա, խղճմտանքդ կտանջե քեզ. թե որ ժամանակին գուշակեիր այդ անիմաստ թվող խոսքերուն, տարօրինակ երևցող ընթացքին բուն նշանակությունը, պիտի հաջողեիր թերևս այդ հուսահատը իր կտրուկ վճիռեն ետ դարձնելու։

Այսպես ալ եղավ Մաքրիկեն զատվելուս. իր վերջին խոսքերուն միտքը անոր ամուսնության լուրը առած ժամուս հասկցա, մութ սենյակի մեջ մտցված պայծառ լույսի մը պես, որուն շնորհիվ որոշ կերպով կզանազանես հոդ շարված առարկաները։

Անոր խրոխտ նկարագիրը այն ատեն միայն կատարյալ կերպով ճանչցա, երբոր շատ ուշ էր արդեն կրկին իր սիրույն կոչում ընելու։

Սուտ զուրցած կ'ըլլամ թե որ այս լուրը ինծի ուրախություն պատճառեց ըսեմ. այս բաժանումը, որուն բոլոր հոգիովս կբաղձայի, զըրկանք մը կ'ըլլար ինծի հիմա՝ որ եղած լմնցած բան մըն էր. Մաքրիկին շնորհալի դեմքը, մտքի ու մարմնի բոլոր ձիրքերը աչքիս առջևեն անդին չէին երթար. անոր քով պզտիկ մնացած ըլլալու տարտամ տպավորություն մըն ալ կ'ավելնար վիրավորված՝ անձնասիրությանս վրա։

Իրո՞ք այսքան դյուրավ ձգելիք բաժնվելիք մեկն էի ես, ես որ անոր հավերժական սեր մը ազդած ըլլալու ունայնամտությունը ունեի։

Ոչ իսկ բացատրություն մը, մնաս բարով մը, բառ մը ինծի։ Դանակի հատու հարված մը երկու տարվան սիրո հյուսվածքին վրան, և ուրիշ ոչինչ։

Հաջորդ օրը, երբ իր Մանչեսթր մեկնիլը իմացա էրկանը հետ, որ հոն հաստատված մեկն էր.

— Երթաս բարո՜վ, ըսի մտքովս իրեն, երթաս բարո՜վ, այդ մարդուն քով զոր հարկավ պիտի խաբես սիրո խոստումներով, ինչպես որ զիս ալ խաբեցիր. բարի վայելում կմաղթեմ իրեն։

Ու այս մարդուն դեմ, որուն ո՛վ ըլլալը չէի գիտեր, ատելություն չէի զգար, այլ արգահատանք մը, կխնդայի վրան, կկարեկցեի իրեն. վայրկյան մըն ալ սաստիկ մարմաջ մը կզգայի երթալ գտնելու զինքը ու ականջն ի վար ըսելու, որ հետը կարգված աղջիկը իմ սիրուհիս եղած էր. ասով կարծես թե կսփոփվեր իմ վիրավորանքիս ցավը. բայց կխոստովանեի իսկույն որ ասանկ փափագ մը ունենալս անգամ զզվելի բան մըն էր. հիմա իմ բարոյական ստորնացումիս դեմ կսրտմտեի և Մաքրիկին ազնիվ նկարագրին իմինես շատ ավելի բարձր ըլլալը զայրույթով կլեցներ զիս։

Հետո, ատեն անցնելով, այս ամենը ամոքեցավ, մեղմացավ, ջնջվեցավ վերջալույսի մը բոցավառության պես, որ մեր սիրույն իրիկնամուտն էր։ Իմ հեզհեզուկ ու փութամոռաց երիտասարդի սիրտս բան մը չհիշեց այլևս։

Անոր մեկնելեն հեռանալեն շատ ետքը կրցա իր ամուսնության պատմությունը ստուգել ու ճշտել. շատ լացեր էր ինե զատվելուն համար. հարուստ էրիկ մը ձեռքե չփախցնելու վախովը բացատրեցին ոմանք իր տարօրինակ աճապարանքը կարգվելու։ Ես, վերահասու ճշմարտության, գիտեի որ այս ամուսնության շնորհիվ Պոլիսը ձգել երթալու և զիս մոռնալու կարելիությունը զինքը համոզեր էր ամեն բանե ավելի. և այս վստահությամբ ինքնիրենս հաշտվեր էի Մաքրիկին հետ. ի՜նչ կ'ըսեմ, տարիներե վերջը անզուգական կինը մնացեր էր ան իմ աչքիս։

Ունևոր ու տարիքոտ մարդ էր էրիկը։ Երազված միությունը չէր ասիկա, այլ այն զուտհիկ կապակցություններեն մեկը, որ ամուսնութենե մը ավելի զուգավորիլ մըն է, և զոր պսակին օրհնությունը ոչ կրնա ազնվացնել և ոչ իսկ արդարացնել։ Ոչ հոգիի և ոչ մտքի պատշաճություն երկուքին մեջ. ո՛չ կրթության և ոչ զգացումի ներդաշնակություն. ոչ տարիքի և ոչ մարմնի հարմարություն. այլ բիրտ հպումը, անմեկնելի ու հավիտենական մերձեցումը, ավելի բիրտ քան այն զույգ մը եզինը, որ արորի մը կլծվի և ուր գոնե՝ գույնի, տարիքի, ույժի ներդաշնակություն կփնտրվի։

Մաքրիկ գոհ էր սակայն իր ամուսնութենեն. արտաքին ու ցույցի գոհունակություն զոր ամեն աղջիկ կ'ունենա կարգվելեն վերջը, որ հա-

կառակ իր պարծանքի հանգամանքին, համակերպութենե ուրիշ բան չէ, և որ, ափսո՜ս, անոր հույսերուն ու երազներուն նավաբեկությանը մեջեն անջատվող ծփացող միակ խլյակն է. ամուսնացած ըլլալու և դրամի տեր մեկու մը կնիկը եղած ըլլալու գոհունակություն։

Մարդը, այսպես կկոչեի ես էրիկը, Անգլիո մեջ հաստատված հարուստ հանձնակատար մըն էր, Կեսարիայեն հոս և հոսկե Մանչեսթր անցած, որ անգլիական ոստանին վարքը ու բարքը յուրացուցած կկարծեր, այն պատճառով, որ իր ածիլած ծնոտին,— գիշակերի հուժկու ու կոպիտ կզակ մը,— երկու դիեն երկնցուցած էր մորուքը, որ իր ամեն ժամ պիֆթեք ուտող ու գինի խմող մարդու կարմրած այտերը կծածկեին։ Երկար, գլանաձև գլխարկովը, ծունկերը գոցող սև ռըտենկոդովը, որ հանդիսավոր ու պաշտոնական մարդու ծպտումը կուտար այս դրսեցիին, զույգ մը կարմիրի զարնող դեղին ձեռնոցովը, զոր իր ոսկրոտ ու ոտքերու չափ մեծ ձեռքերուն մեջ կճմրթկեր, այս մարդը՝ Պոլիս գալուն՝ բոլոր հոստեղի աղջիկները ափ ի բերան ըրած ըլլալու միամտությունը ուներ։

Հոս՝ հայ վաճառականներու կիները, որոնք խլավուզություն ընելը կսիրեն, կթվո

լու իր հեռատեսությունը, coup d'oeil-ը, օրինակներով, մանր մունր դեպքերով, որոնց շատին, բերնի վարժությամբ մը, շարունակ իր կինը վկա կբռնե, ըսելով.

— Չըսե՞ս, Մաքրիկ։

Հետո, իր ամուսնության պատմությունն ալ կ'ընե ինծի։

Առտուները կանուխ, կու գա զիս պանդոկես վերցնելու. մեկտեղ կ'ելլենք պզտիկ պտույտի մը համար դեպի գյուղին արևելքը տարածվող բացավայրը. հետո գյուղին մեջ պտույտ մը և Այանին խահվեին մեջ երկու փառքի նարտ. ցերեկին կբաժնվինք իրարմե, երկու ժամ ետքը նորեն իրար գտնելու ու էլմալը կամ Դաշտելեն երթալու համար։ Այս վերջին պտույտին Մաքրիկ մեկտեղ է. մեկտեղ են նաև գրեթե բոլոր գյուղը եղող ընտանիքները։

Կովի կառքերու անհատնում շարքն է, որ կձևանա իսկույն։ Կարմիր ու պարարտ հողին մեջ սայլերուն անիվները կթավալին փորելով իրենց խորունկ ակոսը, հողին ճակտին վրա ձգված խորշոմի մը պես։ Ահա անտառին մեջն ենք և աչքդ առածին չափ կշարունակվի ան, ամեն մութ բաներու պես, իր սահմանին անստուգությամբը, իր հսկա ծառերուն անհատնում շարքովը, իր ստվերին խորհրդավոր անդորրությունովը, իր գույնզգույն կանանչությամբը որ երբեմն մինչև դեղինին կմոտենա և երբեմն գրեթե սեր կշոշափե, ամեն երանգները անկարգ կարգավորությամբ մը սփռելով։

Ձան ու ձուն չկա հոս՝ անիվներուն կոնչող թավալումեն զատ. հանկարծ սարեկի մը սուր երգը կվրդովե լռությունը ու այստեղ կյանքի գոյությունը կհաստատե։

Գետինը կակուղ է, փետուրներով շինված բարձի մը պես, չորցած տժգունած տերևներու անկումով ձևացած կակղություն, որոնք ամեն քայլափոխի կխշրտան, չտեսնվող օձերու սողոսկումներու պես։

Այս դարավոր ծառերուն, որոնք իրենց երկնամբերձիկ ուղղությունը անվթար կպահեն առույգ ծերունիներու պես, բաղեղի փաթթվուքներ մինչև գագաթները կհասնին հավերժական գիրկընդխառնումի մը մեջ, ու գորշ կեղևնուն վրա փակած մամուռներ՝ թավիշի կտորներու փայփայանքը կցանցնեն, հին զգեստի մը վրա փակցված թանկագին կերպասի տպավորությունը ձգելով։

Այս է մեր ամենավուր ճամփան ուրկե Մաքրիկին ու անոր ամուսնին հետ կ'անցնինք։

Հոս հոն՝ ծերացած ինկած ծառերու բուներ, ոմանք տարիներու բեռան տակ փճացած ու ոմանք իրենց առուգությանը մեջ օր մը կայծակեն զարնված։

Գետնեն հազիվ թիզ մը բարձրությամբ նիհար ցողուններով բույսեր՝ լայն ու հորիզոնական տերևներով, հողմահարի պես բացված, որոնք բոլոր այս տարածությանը վրա, դեպի երկինք բացված անհամար ձեռքերու կնմանին, ամբողջ մարդկության մը ձեռքերը, չեմ գիտեր ինչ սպասումի և ակնկալության դիրքի մեջ։

Մաքրիկ երկյուղած կկենա այս վեհաշուք ու պատկառելի տեսարանին առջև, մինչդեռ մարդը իր շահադետ վաճառականի անհարկի հաշիվը մեջտեղ կդնե.

— Գիտե՞ս որչափ խորանարդ մեթր ատաղձ կրնա տալ այս անտառը, կ'ըսե ինծի, որչա՜փ թրավերս երկաթուղիի. խորանարդ մեթրը տասը ֆրանքեն՝ գանձ մը ըսել է ասիկա, անանկ չէ՞, Մաքրիկ։

Մաքրիկ գլուխը կ'երերցնե, բայց նայվածքը հեռուն է, մոլորած անցյալին մեջ։

b

Զո՜ւր ջանքեր, անօգուտ պայքար զոր միտքս սրտիս դեմ կմղե, չվերարծարծելու համար սեր մը զոր հավիտյան մարած կկարծեի։ Իրմե փախչիլ հեռանալ ուզելով իր շուրջը կթափառիմ, ընկղմելու մոտ նավի մը՝ հորձանքին մեջ պտուտկելուն պես. հետզհետե կզգամ, որ կյանքը ու լույսը իրմեն միայն կրնան գալ ինծի. կզգամ որ դիմադրությանս ուժը կնվազի տակավ, բայց ինքն ալ հանցավոր է ինծի չափ այն պզտիկ ու լուռ պչրանքներուն համար, որոնցմով զիս կպաշարե։

Հիմակվան սերս այն նյութապաշտ սերը չէ, ալ որ մարմնական հրապույրներ կհետապնդե միայն. անցյալ տարիներու բովեն զտվելով՝ մաքրված ու ազնվացած է հիմակ։

Մեր երիտասարդության սկիզբը, մաս մը տեղ միասին քալելե վերջը ճամփաներս հանկարծ ճյուղավորվեր էր առջևիս ու ճակատագիրը զիս մեկ կողմ և զինքը ուրիշ կողմ մը նետեր էր. ու շատ մը տարիներե ետքը բախտը ահավասիկ նորեն միացուցեր, դեմ առ դեմ բերեր էր մեզ։ Երկուքնիս ալ կարոտով ու զղջումով կհիշեինք մեր անցյալը ու վաղափուլ երջանկությունը։ Աշխարհիս երկու ծայրեն եկած անծանոթներու պես որոնք՝ երկուքնուն ալ սիրելին եղող բացակայի մը վրա խոսելով իրարու կմոտենան, այսպես ալ մենք՝ մեր հին օրերու հիշատակովը՝ նոր մտերմությամբ մը կկապվեինք։

Այս մունջ համակրությունը, իր լուռ զգուշավորությամբը, հայտնի ու համարձակ սիրո հայտարարութենե մը շատ ավելի քաղցր էր ինծի։

Գրեթե երջանիկ էի այսչափով։

Իր ամեն մեկ խոսքը, շարժումնքը նույնքան մեկնության նյութ էին ինծի երբոր առանձնանայի. ամեն մեկ բառին մեջ իր անեղծ մնացած սիրույն խոստովանությունը կգտնեի ես։

Բնավ չեմ զարմանար, որ պզտիկ գրքույկի մը վրա հատորներով մեկնություններ գրվին, թե որ ատիկա սիրված գիրք մըն է։ Մեկնելը վայելել մըն է, ծույլ ու համեցող վայելում ինքն իր գլխուդ, ուզածիդ պես։ Բայց այս վայելքը կատարյալ ըլլալու համար, տված մեկնությունը դ ամեն տարակույսե վեր ըլլալու է. ապա թե ոչ ատիկա շուտով ամենեն անհանդուրժելի տվայտանքը կ'ըլլա։ Ատեն մը կու գա որ դիմացինեդ որոշ վավերացում մը, այո՛ մը, գլխու հաստատական շարժում մը կսպասես։ Եվ այն լուռ ու անհատնում հարցումներուն փոխարեն զորս կ'ուղղես իրեն, այդ «այո»-ն ուշանալուն՝ բոլոր մեկնություններդ և այն աղվոր վստահությունդ իր համակրությանը վրա, իսկույն կ'անհետանան։ Քու բացատրություններդ հիմարական ու ծիծաղելի քաշքշուքներ կ'ըլլան մեկեն. ամեն բան կ'երերա շուրջդ ու ամենեն երջանիկ մարդը՝ հիմա ամենեն դժբախտը կ'ըլլաս։

Էն շնչին պատեհությենեն օգուտ կքաղեի մինակ տեսնվելու հետը. այդ վայրկյանները սուղ ու անգին էին ինծի համար, էրկնեն գաղտուկ տեսակ մը մաքսախուսություն, որով զիս տառապեցնող այս անստուգությունս կհասկցնեի իրեն ու երբեմն ալ իր հին խոստումները կհիշեցնեի։

Պատասխան տալե կխուսափեր անիկա. բայց որքա՜ն հստակ ու մեկին էր իր տրտում նայվածքը։ Ամեն ինծի դպելուն՝ դաշույնի մը ծայրին պես մինչև սիրտս կմխվի ու հոն կկենա, կդառնա իր սուր ծայրին վրա, հաճույք մը զգալով հոդ կենալուն ու մանրակրկիտ պրպտելով՝ բացած վերքին բոլորտիքը ու խորունկությունը։ Վարժ մարդասպանները չեն բավականանար դանակ մը խոթելով հակառակորդի մը կուրծքը, այլ այդ վերքին մեջ կդարձնեն զենքը, անբուժելի ու անդարմանելի ընելու համար զայն. Մաքրիկին նայվածքը այս նրբությունները ունի իր քաղցրությանը մեջ։

Առտու մը կանուխ ճերմակ շրջազգեստով մը տեսա զինքը իր դրան առջև. բանված ճուրքով շրջազգեստ մըն էր, ծաղկասփյուռ պատմուճանի մը պես որ իր քանդակածո մարմնին կփակչեր, լանջքին բարձրակոհակ թավալումներեն մեջքին կ'իջներ ու ավելի վար, զիստերուն, մինչև ծունկվըներուն կփաթթվեր։

Աղջիկ ատենին պես երկուքի ճեղքած էր իր առատ ու ճոխ մազերը, գլխուն ետևը ժողվելով զանոնք. անցյալ տարիները ինծի հիշեցնելու

հայտնի ճիգը կտեսնեմ իր քովը, և դիտավորությունը՝ անդիմադրելի ընելու իր սիրույն կալանքը։

Քիչ մը վերջը էրիկն ալ եկավ քովը ու այն առատուն երեքնիս մեկտեղ ըրինք սովորական պտույտը։

Իրիկվան՝ շատ մը ընտանիքներու պես՝ Քորուպաշի ըրինք ճաշերնիս, վարի գյուղին մոտիկ պզտիկ սարավանդ մը, որ Դաշտելենի անտառին կկոթնի։ Որոշված է, որ ամենքնիս մեկտեղ վերադառնանք։

Այս վերադարձը վարի ճամփեն եղավ. ամբողջ կարավանը մեր կովի կառքերուն, երաժշտության, երգի, խնդալներու խլացուցիչ ժխորով մը ու շորս դիեն արձակված հրթիռներու մեջեն, ծանր ծանր կքալե խորտուբորդ ուղիին համեմատ ելևէջելով։

Անտառին մեջ կմխվինք նորեն՝ վրդովելով անոր հանգիստը մեր խոլ ուրախության աղաղակներովը որոնց արձագանքը կ'երկարի, կկորկըռնվի հեռուն։ Մութ է շորսդինիս. հսկա ծառերուն շուքը վերահաս գիշերին սևությամբը կթանձրանա, տեղ-տեղ մեղմացած մեր կառքերը զարդարող թուղթե լապտերներուն վարանող ու տարտամ լույսերեն։ Այս մութի զանգվածին մեջ ուր դեմքերը չեն որոշվիր, ձայները կբարձրանան սակայն, իրարու կհանդիպին։

Ես Մաքրիկին քովն եմ ու կառքեն իջած՝ հետիոտն կ'երթանք երկուքնիս քիչ մը առջևեն ու ետևնուս կլսեմ էրկանը ձայնը, որ այդ միջոցին իր առևտրական մեկ ճարտարությունը կբացատրե քովի մարդուն։ Հազիվ միջոց ունիմ կամաց մը երկու խոսք զուրցելու Մաքրիկին։

— Ըսե՛ ինծի որ զիս կսիրես տակավին։

Չի պատասխաներ անիկա, ձեռքս կբռնե միայն ու երկու քայլ անդիեն, մութին մեջեն հանկարծ էրկանը ձայնը կու գա մեզի, իր կինը վկա բռնելու սովորական կոչումը իր խոսակցին դեմ։

— Չըսե՞ս, Մաքրի՛կ։

Ու անտառին մեջ այս ձայնը, որ իմ հարցումիս կրկնությունն է, կտարածվի ծառե ծառ, ճյուղե ճյուղ, ճամփան կորսնցուցած թռչունի մը պես հոս հոն կզարնվի նվաղելու մոտ և զոր արձագանքը էն վերջը մեզի կվերադարձնե.

— Չըսե՞ս, Մաքրի՛կ։

Քիչ-քիչ գեղին կմոտենանք. վայրկյան մըն ալ ու անտառեն դուրս պիտի ելլենք. տերևներուն մեջեն գեղին վառված ճրագներուն բիծերը կ'երևան լուսազարդ երկինքի մը պես որ կարծես գետնին վրա փռված ըլլար։ Վերջին փորձ մը կփորձեմ՝ խզել տալու համար իր սփինքսի

լությունը. իմ հեք սիրույս պատրանքովը՝ մշանշենապես վերապահված կկարծեմ զինքը վերստանալու իրավունքս, համոզված՝ որ էրիկը քանի մը տարի հետը ապրած ըլլալուն համար չէր կրնար այս աղվոր կինը համայրամել։

Այս պահուս ոչ ոք ուշադրություն կ'ընե մեզի կամ գեթ ես այնպես կկարծեմ, ու գրեթե կբռնադատեմ զինքը պատասխանելու ինծի։

Խավարին մեջ իր ճերմակ շրջազգեստը ճառագայթող բան մը ունի ու այս մութ անտառին դիցուհին կթվի անիկա աչքիս։

— Հույս մը տուր, սիրո բա՜ռ մը ըսե զոնե։

Ավելի ուժով կսեղմե ձեռքս, բայց դարձյալ չի պատասխաներ։

Ու էրկանը ձայնը հանկարծ օգնության կհասնի ինծի կարծես, հեռվեն, խորունկեն եկող ձայն մը, անտառին արձագանքովը խոշորցած ու մութին մեջ իր նշանակությունը փոխած ձայնը.

— Ջրա՜ն, Մարքի՜։

<1901>

ԱՐՄԵՆԻՍԱ

Ա.

Հալբին հունարենակ կղզի մըն է։ Հոն ճանչցա զինքը. Անասթաշի քազինոն կու գար իրիկունները՝ շոգենավեն դիմավորելու իր ամուսինը, վասն զի իր ամուսինը պիտի ըլլար այն գեր, կարճահասակ, հիսուننոց մարդուկը զոր կ'առներ միասին՝ պանդոկ վերադառնալու համար։

Մինակ դուրս կ'ելլեր ամեն առեն. երբեմն հետը կրեբեր վեց տարեկան փոքրիկ տղեկ մը, որ իր զավակն է անշուշտ և որուն հետ մեծ մարդու մը պես կխոսակցեր մինչև վերջը։

Ոչ մեկու հետ հարաբերություն կամ տեսություն հաստատած էր։ Երիտասարդներ, ամեն ազգե, միշտ հետաքրքիր երբ կին մը ճանչնալու վրա է խնդիրը, ի զուր իր շուրջը դեգերած կամ իր ակնարկը ակընկալած էին. նրբեք չէր դարձած զանոնք դիտելու։

Քազինոն, ծովուն վրա երկնցած տախտակե դարատափին եզերքը, անկյուն մը ուներ, ուր ամեն իրիկուն կու գար առանձին նստելու. այդ անկյունը իրն էր. գեթ այդպես նկատված էր քազինոյին հաճախորդներեն, որոնք՝ իբր բարեկիրթ մարդիկ՝ այս անծանոթ օտարուհին մեծարել կսիրեին։

Քանիցս հանդիպեցա իրեն ու անունը հարցուցի հույն ծանոթներուս։

— Ի արմենիսա ինե, արմենուհին է, կպատասխանեին ամենքը. այս էր միակ անունը որով կղզիին մեջ ճանչցված էր հոն գալեն ի վեր։

Քազինոյին սպասավորներուն ըրած հարցուփորձս ավելի արդյունավոր չեղավ, մինչդեռ օտարազգիներն ալ ինծի կդիմեին, իբր ազգակից, իր վրա տեղեկություն ուզելու համար։

Ամուսինը, որ շաբաթը երկու անգամ միայն կու գար, կնոջմեն ավելի մարդախույս կ'երևար. մեկուն հետ բարև մը փոխանակած չէր ամիս ու կեսեն ի վեր, հորմեհետև կղզին Պելվյու պանդոկը եկած էին։ Երիտասարդները՝ անոր նախանձոտ բնավորությանը կվերագրեին այս տարօրինակ մենակեցությունը, ու կինը ամուսնին բռնության զոհը համարած էին։

Եվ իրավ ալ այս կնոջ դեմքին վրա չեմ գիտեր ինչ տրտմության անբացատրելի երույթ մը կար, որ այս ենթադրությունը կհաստատեր։

Վեհերոտ մեկը չէր թվեր. վայելուչ ձևերն ու համաչափակ քալվածքը այնքա՜ն կվայլեին իր մատղաշ ու աղվոր հասակին։ Առանց քաշվելու, բարձր ձայնով, պանդոկներու մեջ կյանք վարող անձի մը վարժությամբ, սպասավորները կկանչեր և ուզածը կ'ապսպրեր։

Առջի բերան կարծեր էի որ մինչև այն օր այս տիկնոջ հետևող երիտասարդներեն ավելի բախտավոր պիտի ըլլամ ես իրեն հետ ծանոթանալով։

— Ո՜հ, դուն կարող ես,— կ'ըսեին հույն բարեկամներս՝ ազգությանս վրա նախանձելով,— իր լեզուն կհասկնաս ու հետը խոսելու դյուրություն ունիս։

Առջի անգամն էր աշխարհիս վրա որ հայ ըլլալու մեջ առավելություն մը կգտնեի։ Այսպես իմ օտարազգի ընկերներես քաջալերված՝ տեսություն մը հաստատելու փորձերը սկսա։

Շատ հեղ գացի իր մոտը նստելու և ուշադրությունը հրավիրելու շափ բարձրաձայն խոսելով՝ ներկայությունս զգացնելու։ Մաքուր հայերեն խոսեցա նախ, բառերս ու բացատրություններս զատելով, խնամելով, հետո ֆրանսերեն ու թուրքերեն, հասկցնելու համար որ բոլորովին արհամարհելի անձ մը չէի։

Հետո հագուստիս սկսա խնամք տանիլ. դերձակս, որ զիս միշտ խնայող ճանչցած էր, զարմացավ հինգ ձեռք զգեստ մեկեն շինել տալուս. փողկապներու ահագին պաշար մը ամբարեցի ու վերջին նորաձևության պահանջումներուն և ոչ մեկեն փախուստ տվի։ Շապիկներուս օձիքը, ձյունաթույր, նեղ ու բարձր, որ մինչև թուշս կհասներ և ոիս

շնչահեղձ ընել կսպառնար, թաշկինակներս, նուրբ, մանուշարույր, շքեղ սկզբնատառերով զարդարված, կբավեին արդուզարդի արժեք ճանչցող կին մը հրապուրելու։

Ինքն ալ շատ աղվոր ու շատ մաքուր կհագվեր. ամեն օր կփոխեր իր շրջազգեստները, որոնք իրարմե գերազանց կերպով վայելչաձև ու ճաշակավոր էին, և որոնք Տրմիլվիլի կամ Թոիքոթյոզի խանութներուն մեջ պատրաստված կթվեին։ Իր կամարաձև փոքրիկ ոտքերը, զորս հաճույք կզգար անշուշտ ցույց տալու շրջազգեստին ծայրեն, միշտ մետաքսյա սև գուլպաներով ու Փերայի ամենեն ճարտար արհեստավորեն շինված կոշիկներով ամփոփված էին։

Ի՜նչ օգուտ սակայն որ իրեն ծանոթանալու ամեն ջանքերս անտես մնացին. համբակ սիրահար մըն էի. ո՛չ բարձրաձայն խոսակցություններս, որուն ակամա ունկնդիրն էր, ոչ վրդովյալ շարժուձևերս, ոչ իրեն ուղղած համառ ու բոցավառ նայվածքս, ասոնց և ոչ մեկը կրցավ իր գեղեցիկ մարմարե արձանի վայելուչ անտարբերությանը հաղթել. և ոչ իսկ նայեցավ երեսս։

Այն ատեն անհաջողությունս, հունաց քով պզտիկ մնալու ամոթս, բուռն հակառակության մը փոխվեցավ այս կնոջ դեմ։ Իր հպարտ ձևերը անկրթությանը տվի և իր մեկուսացյալ կյանքը՝ ընտանիքի մեջ երեվալու համար ունեցած գաղտնի պակասությանցը։ Ամեն կողմ սկսա շարախոսել իր վրա. որոշ ամբաստանություն մը ընելու անկարող էի, բայց անանկ կասկածներ կհայտնեի, որոնց ուժ ու հաստատություն կուտար այդ գաղտնածածուկ կենցաղը։

— Պոլսո ծանոթ ընտանիքներեն չէ այս կինը,— կ'ըսեի դեմս ելլողին,— և իր ծերունի սիրահարը ավելի հոմանին կ'երևա քան թե օրինավոր էրիկը։

Ու բարեկամներս, ինծի պես դառնացած, իմ խոսքս ամեն կողմ կտարածեին։

Բարեբախտաբար իրեն չէր հասներ այս բամբասանքներուն արձագանքը։ Կղզեցիներուն ուշադրությունն ու հետաքրքրությունը չէր դադրեր. հելլենուհիները, ամեն ատեն աղեկ հագվելու հետամուտ, իր զգեստներուն տարազը օրինակել կջանային, առանց ձեռք բերելու անոր կատարելությունը. և երբ անցներ Լիվատիայեն, իր փոքրիկ տղուն ձեռքեն բռնած, նազելաճեմ, դիցուհիի մը պես հանդարտաքայլ, զմայլանքով ու գովեստով խառն մրմունջ մը կլսվեր ամենուն բերնեն, մրմունջ, որ զիս ցասմամբ կլեցներ.

— Ի արմենիա ինե, ի արմենիա։

Բ

Արմենիսա շնորհալի ու հրապուրիչ էակ մըն էր. ատողներ ու պաշտողներ միայն կային շուրջը, անտարբերներու հանդիպած ըլլալու չէր։ Իր վրա ամեն բան հատուկ դրոշմ ուներ, շարժվածքը, նայվածքը, խոսվածքը։

Բնավ հետաքրքիր չէր. զարմանալու սովորությունը չուներ կարծես. ի՞նչ բանե կ'ախորժեր արդյոք, ինչո՞վ կարելի էր հաճելի դառնալ իրեն. դժվարի՞ն հանելուկ, զոր լուծողին՝ այս հեշտաբույր ու գեղանի կինն էր խոստացված պարգևը։

Իր լանջաբերձ ու խրոխտ կուրծքին մեջ սիրտը կմնար թաքուն ու գաղտնի, անհպելի գանձի մը պես, որուն «Բացվե, ո՞վ Սեզամ»-ը կփնտրվեր ու չէր գտնվեր։

Արմենիսայի մեծագույն զբոսանքը պտույտն էր, լայնեզր հարդե գլխարկի մը տակ ամփոփելով առատ մազերը, որոնք դեպի վեր առնըված, իր ծուծրակին աննման ու անբիծ սպիտակությունը ցույց կուտային, մեկ ձեռքով իր շրջազգեստը ժողվելով շնորհալի ձևով մը և մյուսով իր կարմիր հովանոցը բացած, որուն արևին տակ ցոլացումը իր դեմքին վարդի երանգները կշեշտեր։

Պաշտելի ու հրաշագեղ էր այսպես. կիրակի առտուները անպատճառ Մեծ Կղզի պիտի երթար. ես ալ հոն պատահեցա օր մը իրեն։

Այն մաքուր, ավլված ու ծառազարդ ուղիեն կ'երթայի, որ նավամատույցեն դեպի Ճաքոմոյի օթելը կտանի։

Երկու կողմե, խնամված ծաղկած պարտեզներու մեջ, ամեն մեկ քայլին սիրուն տուներ, վիլլաներ երբեմն, ապարանքներ, որոնց բաց դռներեն ներս կահավորման ճոխությունն ու շռայլությունը աչքի կզարնե, սև հագուստներով և ճերմակ փողկապով սպասավորներ, տիրուհիին չափ զարդարված սպասուհիներ, ստնտուներ՝ ճերմակ ու բարակ կտավե գոգնոցով՝ դրան մոտ սպասելու կեցած։

Տարբեր-տարբեր ճաշակով կառուցված այս քյոշկերուն մեջ քարուկիր ու անպաճույճ շինք մը իր պարզությամբը ուշադրություն կհրավիրե, իբր միակ լուրջ դեմքը այս բոլոր զվարթ ու խնդացող պատկերներուն մեջ։

Ամենքը հոն կդիմեն, ես ալ կհետևիմ իրենց ու հայ-հոմեականաց մատուռին մեջ կգտնեմ ինքզինքս։

Իրավ հայո՞ցն է այս եկեղեցին. տաճկերեն կխոսին, ֆրանսերեն կբարևեն իրար. եվրոպացիներ կտեսնեմ միայն շուրջս, ձեռնոցը ձեռքին, գլուխնին բաց, Շթայնի խանութին հագված արձաններուն պես ան-

շարժ ու կանգուն. ոչ ոք կ'աղոթե. սեղանին վրա քահանա մը ցած ձայնով ու անհասկնալի բրբբառով իսքնիրեն բան մը կմրմնջե. լռություն կտիրե ամեն կողմ. թիվ պատարագն է այս. կիները իրենց փղոսկրե ծածկույթով աղոթագիրքերին կթղթատեն և երբեմն սեղանին խոնարհություն մը կ'ընեն, չկրնալով չփակին տակեն քոռսեին երկաթներուն մեջ ամփոփված ճմլված լանջերնին ծռել. այրերը՝ իրենց հագուստին ծալքերը շտկելով, ատեն-ատեն ձախ ծունկերնին առջևի նստարանին կոթնցնելու շափ կոտրելով, իրը ծնրադրելու փորձ մը, ամենքը լուրջ ու ծանր կերպարանք մը առած, ներկայացման մը եկածի պես հանդիսավոր։

Արմենիսային կհանդիպի ակնարկս. ալ ավելի գեղեցկացած կտեսնեմ զինքը այս որբավայրին մեջ. բոլոր այս դիմակավոր դեմքերուն մեջ իրենը միայն անկեղծ ու ջերմեռանդ երևույթ մը ունի, որ մանկական անմեղություն մը կ'ընծայե իրեն։ Ակամա սակայն այս հիացումս կթողում. կվախնամ որ իրեն նայիլս ուշադրություն չհրավիրե. ի՞նչ ընելու եմ սակայն. այս մաքուր ու բարձր ընկերության մեջ կորսված, շվարած, տիկիններու վրայեն բուրող անուշ հոտերուն անձնատուր, բոլոր ճիգս կթափեմ գոնե անեպատշաճ շարժում մը չընելու համար։

Նեղվելով, դողալով որ վրաս չխնդացնեմ այս հեգնող ու կարծես իրը օտարոտի զիս միայն դիտող բազմությունը, չհամարձակելով տեղ մը նստիլ, չհամարձակելով դուրս ելլել, ի զուր մանկական հիշատակներուս կոչում կ'ընեմ ժամերգության սկիզբը թե վերջը ըլլալիս հասկնալու համար. չեմ հաջողիր. հուսահատելու մոտ եմ. քրտինքի խոշոր կաթիլներ ճակտես վար կսահին. հանկարծ մեկ քանի անձերու մեկնիլը կնշմարեմ. փրկությո՞ւն. տոթը փախցնելու չգար, բոլոր քաջությունս կժողվեմ ու դուրս կնետվիմ շուտափույթ ու սրատորփ, այո՛, սրատորո՛փ, վասն զի ահա Արմենիսայի ճիշտ մոտն եմ. ան ալ կմեկնի. դրան մեջ քով քովի ենք. մեկնելե առաջ մարմարե ավազանի մը մեջեն ջուր կ'առնե և երեսը կխաչակնքե. չեմ գիտեր այս ջուրին ինչ ըլլալը, բայց ես ալ Արմենիսայի պես այդ ջուրով կխաչակնքեմ երեսս. ջուրե՞ն թե իրմե երանության խոստում մը կծավալի ու հոգիս կթափանցե. Արմենիսա ինծի կնայի, և ժպիտ մը, մթամած հորիզոնի մը վրա ծագող ճառագայթի մը պես, իր գեղեցիկ կարմիր շրթունքին վրա կգծագրվի։

Այս եղավ ահա մեր բարեկամության սկիզբը. այդ ավազանը մեր ճակատները միացուց, ու կաթիլ մը ջուրը հալեցուց մեզ իրարմե բաժնող սառույցե պատնեշը։

Հալքի վերադարձին՝ շոգենավին մեջ միասին գանվեցանք դարձյալ. Արմենիսա խոսեցավ հետս, օդին գեղեցկության, ջերմության, Հալքիի զբոսանքներուն վրա, մինչդեռ ես, ամեն մեկ բառս կշռելով, անմիտ ու ապուշ համարվելու ստիճան խոհեմությամբ կուտայի պատասխանը, որպեսզի այս անհուսալի դիպվածով ձեռք բերած մտերմությունս չկորսնցնեմ։

Ապաքեն հինավուրց բարեկամի մը պես մտերմություն ցույց կուտար հիմակ։ Հալքիի երիտասարդներուն վրա կխնդար, ազատ ու համարձակ ծիծաղներով. կզգամ որ այս խնդուքներուն մեկ մասը ինծի կպատկաներ, մինչդեռ ինք՝ հանկարծ ուղղակի ինծի նայելով՝

— Կաթոլիկ եք, այնպես չէ՞,— հարցուց։

Այս անակնկալ հարցման վրա շշվարելու խելացությունը ունեցա։

— Այո՛,— ըսի իրեն՝ ատիկա հարցնելն իսկ ավելորդ դատող եղանակով մը։

Ես իսկ զարմացա այս հայտնի ստախոսությանս վրա, պզտիկ մը շվարանելուս։ Այս հաստատ պատասխանս զինքը համոզեց, գրեթե զվարթացուց։

— Խոսվածքնուդ կ'երևա արդեն. հայերը— և նախատական ու արհամարհող բան մը ուներ ձայնին մեջ՝ այս բառը արտասանած ատեն— երբեք ձեզի պես տաճկերեն չեն կրնալ խոսիլ։

Տաճկերեն խոսեր էինք միշտ։

Արմենիսա, ճշմարիտ կաթոլիկ մը, մոլեռանդ բայց պաշտելի հայատյաց մը կթվեր։

Գ

Արմենիսան կսիրեի ու երջանիկ կրոնափոխ մը եղա։

«Կաթոլի՞կ եք» հարցումը անդիմադրելի ու աննահանջելի բան մը ուներ իր մեջը, զոր սիրահարի մը սիրտը միայն կ'ըմբռնե. առանց խղճահարության, առանց երկմտելու, այո՛ մը ըսելով կրոնքս գաղտնի պահեր էի, ինչպես հարուստի մը քով չքավորությունս պիտի ծածկեի։

Ի՞նչ դյուրավ կ'ըսվի «այո»-ն. երկու վանկե և եթե գիրե կբաղկանա այս փոքրիկ բառը և բովանդակ տիեզերքին կեսը կնշանակե, վասն զի «այո»-ն և «ոչ»-ը բոլոր տիեզերքը կներկայացնեն։ Մեկ բառով ուրեմն անցեր էի Ոյուպիքոնեն և գոհ էի անցած ըլլալուս համար։ Ինչպես որ գուշակեր էի, պարզ կաթոլիկուհի մը չէր, այլ հայության ոխերիմ թշնամի մը. մեր ազգին պես խեղճ ու ողորմելի զարմե մը սեքած ըլլալուն նախատինքը մեր ազգին դեմ անհաշտ ու վայրենի ատելություն

մը առաջ բերեր էր իր մեջ. կաթոլիկությունը անոնց համար զոհացում տված էր իր սրտին, որովհետև ատով՝ օտար կրոնքէ ավելի օտար ազգության մը կպատկաներ ու հայության աղտը միանգամ ընդմիշտ կթոթափեր իր վրայեն։ Արմենիսա անոնցմե էր որոնք ի՞նչ ազգե ըլլալնուն հարցման անվեհեր կպատասխանեն.

— Կաթոլիկ եմ։

Բնավ հայերեն բառ մը արտասանելը լսած չէի. հասունիսթի և անթիհասունիսթի կռվին տաքության մեջ, ծայրահեղ ու կատաղի համունիսթ մը եղած էր, անկատար հայ մը ըլլալեն կատարյալ լատին մը ըլլալը նախամեծար համարելով։

Բայց հասունիսթն ավելի կաթոլիկ և կաթոլիկե ավելի պապական էր. հռոմեականներու եկեղեցին այն ատեն միայն կ'երթար երբ լատին եկեղեցի մը չգտնվեր. իր ընտանիքը էնկյուրիեն Պրուսա և Պրուսայեն հոս հաստատվեր էին, միասին բերելով այս հավատը։

Իր համոզումները՝ գեղեցկությանը պես իշխող ու նվաճող էին. իր փաստերուն անձնատուր ըլլալը ճշմարիտ հաճույք մը պիտի ըլլար ինծի, եթե արդեն կաթոլիկ եղած չըլլայի իր աչքին։

Հիմա որ մոլեգին կսիրեի զինքը, կեղծիքս ճշմարիտ ուրացումե ավելի առաջ երթալ կսպառնար. իր բոլոր կատաղությանը համամիտ կթվեի. անհավատալի գաղափարներ ուներ աշխարհիս վրա, զորս հերքելե կզգուշանայի. այդ փոքրիկ ու սիրեցյալ գլխուն մեջ՝ երկրիս ամենեն մեծ իշխանությունը պապական զորությունն էր։

Ու ես այս տպետ, գեղանի, կրոնամոլ կնոջ դեմ երկչոտ ու միշտ պարտված, սրտիս մեջ կզգայի սակայն ազգիս ու կրոնքիս դեմ ուղղված այս անիրավ նախատինքները, զորս Արմենիսա մեկ գգվանքով, առանց գիտնալու, մոռցնել կուտար ինծի։

Այսպես շարունակ հագեցած ու շարունակ անհագ իղձերե տոչորված, որ իմ հանցանքս ու արդարացումս է միանգամայն, սիրույս ու խղճմտանքիս մեջ երերածուի, սարսափով միտքս կբերեի իմ հանդուգնն ստախոսությունս և օր մը հանկարծ երևան ելլելու հավանականությունը։

Արմենիսայի սերը՝ ատելությանը պես բուռն ու զայրացած բան մըն էր. այն սովորական կիներեն չէր որոնք մեկ անկումով բոլորովին կնվաստանան։ Արմենիսա, ընդհակառակը, իր անկումով բարձրացեր էր։ Իր անփորձ օրերուն մեջ խարեության մը զոհ գացած ըլլալով, իր տարիքեն ավելի լուրջ ու ծանրախոհ դեմք մը ուներ։

Պարզապես պահծու կին մը ըլլալով հանդերձ, միշտ պատկառանք ազդած էր ամենուն։

Ինչպե՞ս համակրեցավ ինծի, չեմ գիտեր, բայց գիտեմ թե իր ամենեն երջանիկ սիրահարը եղա։

Երկինքը ավելի ջինջ ու կապույտ երևցավ ինծի, ծովը ավելի հեզ ու իր ալիքը քաղցրամրմունջ ու խորհրդավոր, ծաղիկները, ծառերը, լեռներն ու առանձնությունը սիրեցի. գիշերվան աստղերը մտերիմ ու բարեկամ եղան ինծի. բարի՛ սիրտ ու հեզահամբույր դարձա, առաջին անգամը ըլլալով տիեզերքը իր վեհության մեջ դիտեցի, զմայլեցա, ոտանավորներ գրեցի. սիրահար էի։

Հրաշալի տեսիլ մըն է կյանքը երբոր դիտվի այն վարագույրին պատռվածքեն զոր պատանություն կ'անվանեն։

Ասկե վերջը ա՛լ չպիտի տեսնեմ ո՛չ այն երանության և ոչ այն խղճի տանջանքին օրերը։

Արմենիսա անսահման գորով մը ցույց կուտար ինծի. իմ շփոթած ու երկչոտ դիրքս նախամեծար թվեցավ իրեն՝ գործոն ու ձեռներեց մարդու մը համարձակությենեն. կիները այսպես են. մայրական հոգածություն մը ունենալ կ'ուզեն իրենց մտերիմներուն վրա, հոգածություն՝ որ տեսակ մը իշխանություն կ'ենթադրե. ամոթխած ու դողդոջուն պատանի մը, որ առաջին անգամը ըլլալով կնոջ մը ձեռքը կսեղմե, փորձ ու հանդուգն երիտասարդե մը ավելի կսիրվի։

Անկարելի բան մը պատահեցավ մեզի. երկուքնիս փոխադարձապես երջանիկ եղանք. անկարելի ըսի, որովհետև սիրո մեջ մեկուն երջանկությունը մյուսին տառապանքին կրաղկանա։

Ա՛լ իր հայտնի մտերիմն ու ընկերն էի. ամենքը զարմացան ու նախանձեցան վրաս. ի՞նչ կերպով հաջողեր էի այս բախտը վայելելու. չգիտցան երբեք։

Ու այնուհետև միասին կ'երթայինք պտտիլ կղզիին շուրջը և վայրի ելակ քաղել ճամփուն վրա։ Վերջալույսին, Մանասթրի փոքրիկ անտառակին մեջ, հետաքրքիր ու շար ակնարկներե հեռու, ձեռք ձեռքի մեջ, ծառի մը տակ կնստեինք մինակ, բոլորովին մինակ, Մարմարայի կապույտ երեսին դեմ։ Գիշերները, Ահիլիան, մեր երիտասարդ նավավարը, իր եռազույգ թիով նավակը պատրաստ կպահեր մեզի համար, և լուսնին լուսով, ծովուն մեղմ ու հանդարտ ալիքներուն վրայեն կթոցներ մեզ Փրինքիփոյի գաղտնի պահ ու ամայի եզերքները։

Արմենիսա գեղեցիկ ձայն ուներ. իր երգերուն ոչ ոք գիտե տալ այն երկնային ա՛ն անմման շեշտը որ մարդուս հոգին հեշտությամբ և աչքը արցունքով կը լեցնե։ Սիրո ու դժբախտության վրա կդատնային միշտ իր երգերուն տունները։

Ինծի այնչափ համակրելուն դժկամակած կ'երևար։

— Մենք իրարու համար չենք,— կ'ըսեր երբեմն՝ տրտմությամբ գլուխը երերցնելով։

Բնավ չհարցուց ո՞ւր տեղացի, որի՞ զավակ ըլլալս. կաթոլիկ էի, ու այս կբավեր իրեն. ես ալ հարևանցի տեղեկություններ միայն ունեի իր վրայոք, որոնք ավելի ենթադրություններ էին քան ստուգություններ։

«Մատամ» կ'ըսեի սկիզբները. երբ հարաբերությունիս ավելցավ՝ Մաոի կկոչեի զինքը պարզապես։ Օր մը ըսի իրեն թե նախ Արմենիսա անունով ճանչցեր էի զինքը, և թե այսպես կկոչեին միշտ բոլոր կղզեցիք։

Իր զայրույթը չեմ կրնար բացատրել։

— Ես կաթոլիկ եմ,— ըսավ ցամաք կերպով։

Իր ծեր բարեկամը կու գար դարձյալ որոշյալ իրիկունները։ Ֆրանսացի դրամատեր մըն էր. տարիներե ի վեր միասին գտնված էին. հետզհետե համոզված էի որ իր հոմանին էր, և ինքը կհոգար անոր բոլոր շռայլությունները։ Քաշվելու մարդ չէր. հլու ու հնազանդ կ'երևար միշտ. այն ոսկեբարձ ավանակներեն մեկը, որոնց ամեն կողմ կհանդիպինք։

Շատ կ'ուտեր ու քիչ կխոսեր, շատ կվճարեր ու քիչ կստանար, առանց մոլտալու. իր առաջին հաճույքը Արմենիսան գոհացնելն էր. զավակ ու ազգական չունենալով, ամեն բան զոհելու պատրաստ էր անոր համար. ամուսնանալ ուզած էր հետը, բայց նորատի կինը իր ազատությունը դյուրավ չէր ծախած։

Սիրով ու միաբանությամբ կսահեր ուրեմն մեր կյանքը, Արմենիսա լուսավորչական ըլլալուս կասկածն անգամ չուներ, բայց ես՝ շիտակը՝ կտառապեի իմ ակամա հավատուրացությանս համար։ Հայերը իր գլխավոր ծաղրանքի նյութերն էին. մեր լեզուն՝ զոր չէր հասկնար, մեր եկեղեցին՝ ուր ոտք կոխած չէր հերետիկոս ըլլալու վախով, իր հարձակումներուն ենթակա էին։ Կրցածիս չափ կջանայի իր սխալ ու հոռի դատողությունները ուղղել, առանց կասկած հրավիրելու վրաս։

Իրավ ալ ամենեն նվաստ արարածը եղած էի. խիղճս կ'ըմբոստանար վերջապես, ու ես առաջինն էի անկմանս բոլոր ամոթն ու բոլոր խորությունը ճանչնալու, բայց Արմենիսան կորսնցնելը՝ կյանքը կորսընցնելեն ավելի դժնդակ ու մահացու չէ՞ր։

Որքա՞ն պիտի տևեր իմ սրբապիղծ խաբեությունս. ոևէ դիպված չպիտի՞ գար ճշմարտությունը երևան հանելու. և ամեն վայրկյան՝ ձեռքե հանելու ահուդողով՝ իմ երջանկությունս գառն ու պաշտելի տառապանք մը կ'ըլլար միշտ։

Դ

Խաչի կիրակի առտու մը, սեպտեմբերի գեղեցիկ առտու մը, նստեր էինք ծովեզերքի քաղինոն։

Կիները հագված, շքված, շպարված. էրիկ մարդիկ՝ մաքուր, նոր, կիրակնավուր հագուստներով, բոլորն ալ հույներ, հետզհետե կլեցվեին. մեկ ծայրը երաժշտական խումբ մը կնվագեր, ու կամուրջեն մեկնող շոգենավը Հալքիի նավամատույցը կբերեր այցելու ու շրջուն բազմություն մը։ Ելլողները կդիտեինք. ընդհանուր զվարթություն կար. ես ալ սովորականեն ավելի ուրախ Արմենիսայի կատակներուն վրա կխնդայի։ Հանկարծ, բարձր հասակ մը, ալեխառն երկայն մորուք մը, սև վերարկու մը և շուխայե փակեղ մը հեռվեն որոշեց զիս, բարևեց ու դեպի ինծի շրջվեցավ. այս սև վերարկուն, այս երկար մորուքը անմիջապես ճանչցա. ինծի Պանքոյի ստվերեն հազար անգամ ավելի ահարկու այս մարդը՝ որ իր անուշ ժպիտովն ու բարի դեմքովը կմոտենար, մեր խոստովանահայր քահանան էր։ Առաքինի, մաքրակրոն, շատախոս ու ներողամիտ մարդ մըն էր. երբեք տաղավարի մը պարապ չէր թողուր մեզ. ինք կնքեր էր ու զավկին պես կսիրեր զիս. զգացի փոթորիկին գալուստը և ի զուր խույս տալ ուզեցի կամ ծակ մը փնտրեցի՝ ոտքով գլխով անհետ ու անտես ըլլալու համար։

— Ողջույն, տղաս,— ըսավ տեր հայրը որ քովերնիս հասած էր ու շփոթությունս չէր տեսներ,— ահա եկա գտա քեզի. ո՞ւր կնստիք. անցյալ տարիեն ի վեր խոստովանած չես. այսօր տունով տեղով պիտի խոստովանիք ու գալ կիրակի Գնալը պիտի երթաք սուրբ հաղորդություն առնելու համար. տիկինը ո՞վ է, չեմ ճանչնար։

Տիկի՞նը. երեսն անգամ նայելու քաջություն չունի. բերանս չէր բացվեր. Լիվատիայի կողմը ցույց տվի քահանային, իբր թե մեր տունը ցույց տալու համար։

— Հայրդ տո՞ւնն է։

Գլուխս երերցուցի՝ «այո»-ի մը փոխարեն։

Այս համր ու պապանձած վիճակես բան մը կուշակե՞ց արդյոք. չեմ գիտեր. միայն թե տանջանքս չերկարեց ալ։

— Ուշ մի՛ մնար,— ըսավ ինծի հրամայական կերպով ու ճամփան շարունակեց։

Արմենիսա բառ մը չէր արտասանած բոլոր այս խոսակցության միջոցին։ Տերտերը մոտենալուն, չզուշակելով դեպի ինծի գալը, խնդալու ու ծաղրելու վրա էր. քահանային ուղղակի ինծի դիմելը, մտերմությունը,

ծանոթությունը, զինքը ապշեցուց. լսած խոսքերը անհավատալի բաներ էին. ու ամեն բան գուշակեց։

Երբոր քահանան հեռացավ, երեսս նայեցավ աղեկ մը. զգացի որ այս նայվածքը՝ դաշույնի մը պես պաղ ու սուր մինչև սիրտս կմխվեր. ճակատս քրտնաթոր ու վայրահակ էր։

— Կաթոլիկ եմ ըսելով խաբեցի՞ր զիս մինչև հիմա,— հարցուց այնպիսի ձայնով մը, որ բարկութենեն կդողար։

Երեսիս գույնը բերնես ավելի բացահայտ կերպով խոստովանեցավ հանցանքս։

— Պատասխան չտա՞ս, խաբեցի՞ր զիս,— գոչեց զայրագին, մեզ շրջապատող բազմությունը բոլորովին մոռնալով։

Պատասխան չունեի տալիք։

— Ըսե՛ տեսնեմ,— կկրկներ՝ գունաթափ ու բարկաճայթ։

Մոտերնիս նստողները մեզի ուշադրություն ընել սկսան։

— Հոս տեղը չէ ասանկ խոսքերու, ամենքը մեզ կդիտեն, վերջը կհասկցնեմ խնդիրը,— ըսի իրեն՝ փախուստի դուռ մը գտնելու հույսով։

— Ո՞ւր է տեղը, չըսե՞ս։

— Պանդոկ երթանք։

— Քալե՛։

Ու բացատրությունս, թերևս արդարացումս լսելու անհամբեր, Արմենիսա ոտքի ելավ. ես կալանավորի մը պես իրեն հետևեցա, ըսելիքս փնտրելով, չգտնելով շվարած մտքիս մեջ. կզգայի որ ժամը եկած էր հրաժեշտ տալու վաղանցիկ երջանկությանս. Արմենիսան կճանչնայի համառ ու ոխերիմ. ոևէ գթություն չէի ակնկալեր իրմե. կորուստս անդարման ու բաժանումնիս վերջնական պիտի ըլլար։

Տուն հասանք. որչա՜փ կ'ուզեի որ ճամփան անհատնում երկարեր ու բնավ չհասնեինք. սենյակը ելանք միասին, այն քաղցրաբույր, ժըպտուն, խոստմնալից սենյակը ուր ամբաստանյալի մը պես կմտնեի, և ուրկե դատապարտյալի մը պես դուրս պիտի ելլեի վայրկյան մը վերջը։

Հիշատակներով լեցուն էր այս սենյակը. բայց կեղծիքս շարունակել մտքես չանցուցի. մեկ բառով տիրացեր էի երջանկության ու մեկ բառով որոշեցի խույս տալ մեղապարտ ու հանցավոր երանութենես. բայց չկրցա անտարբեր զատվիլ ու հեռանալ. սիրտս փղձկեցավ. այն ատեն դուրս թափեցի հոգիս բոլոր տառապանքը, սիրույս ու հանցանքիս մեծությունը. ի՞նչ ըսի արդյոք. չեմ գիտեր ու չեմ հիշեր. Արմենիսա ապշած, զարմացած, մտիկ կ'ըներ առանց ընդմիջելու ու թող կուտար

որ ուզածս ըսեմ։ Ինքզինքս պաշտպանեցի հուսահատ քաջությամբ. երկու ամսվան կեղծավորությանս վրեժը Արմենիսայի կրոնական սկզբունքներեն լուծեցի. իր ամենեն նվիրական գաղափարներուն զարնելով գիտեի որ անդարձ կ'ըլլար իմ հեռացումս։

— Պիտի սիրեմ քեզ, որքան ալ ատելի ըլլամ ասկե ետքը. իմ սերս քուկինեդ ավելի անկեղծ ու մաքուր է,— ըսի անոր,— անիկա իմ հանցանքս պիտի քավի, բայց քուկդ միայն մոլեռանդ գաղափար մըն է եղեր և ոչ թե ճշմարիտ սեր մը։

Արմենիսա համարձակությանս վրա կզարմանար. երբեք զիս այսքան անվեհեր ենթադրած ըլլալու չէր. պահ մը իմ հուզումս իր սիրտն ալ շարժեց, բայց այսքան ատեն քիթին խնդացած ըլլալուս գաղափարը իր վիրավորված կրոնասիրությունը արթնցուց։

— Շատ լավ, շատ լավ,— պատասխանեց,— չերկնցնենք, հերետիկոս մըն ես և ուղղափառ ձևացուցիր ինքզինքդ. հոգ չէ. բայց ասկե ետքը մեր տեսակցությունը վերջացած է. գնա՛ մեղքնդ քահանայիդ խոստովանելու, խեղճ մարդը քեզի կսպասե։

— Թող այդպես ըլլա։

Մեկնեցա, ավերակներու մեջեն խույս տալու պես, վախնալով որ պատերը վրաս չփլչին հանկարծ. հեռացա պանդոկեն, ու հոն թողուցի փշրված հույսերս ու երազներս. ետիս չդարձա. ճամփան՝ մեր խոհարարին հանդիպեցա, որ զիս կփնտրեր ամեն կողմ. տեր Հայրը դեռ զիս խոստովանցնելու կսպասեր մեր տունը։

Քավելու մեղքս մնացե՞ր էր։

— Թող սպասե,— պոռացի ծառային, ու հիմարի մը պես առանց գիտնալու թե ո՞ւր և որ կողմ կ'երթամ, ճամփաս շարունակեցի։

Արմենիսա ութը օր հիվանդացավ. այս սաստիկ հուզման չէր դիմացեր. անկեղծապես կսիրեր զիս, և բաժանումը իրեն ալ դժնդակ երևցավ։ Սպասավորներեն իմացա որ իմ երթալես վերջը ինքն ալ շատ լացեր էր. ամեն առտու զացի գողտուկ լուր առնելու իր առողջությանը վրա։

Քիչ-քիչ շտկվեցավ, վրդովումը անցավ, հիվանդության ջերմը իր զայրույթը առավ տարավ, բարկությունը հանդարտության ու հանդարտությունը խորհրդածության տեղի տվավ։

Այս ցնցումը իր մտքին մեջ մանկութենե ի վեր հաստատված նախապաշարումներուն շենքը կործանեց. խելացի ու դատողության տեր կին էր, զիս մոտեն ճանչցեր ու սիրեր էր. մտածեց որ լուսավորչական ըլլալովս միևնույն անձը ըլլալ դադրած չէի։ Հայերը բիրտ ու վայրենի

մարդիկ ենթադրելուն ձրի զրպարտություն մը ըլլալը խոստովանելու պարտավոր էր։ Ճշմարիտ ու հաստատուն համակրանք մը ունեցած էր ինծի. իմ խաբեությունս սիրույս մեծությամբը բացատրեց, հասկցավ ու առաքինություն համարեց։ Հաշտվեցավ հետս, և զոհողությանս մեծությունը ճանչնալով՝ ավելի մեծ զոհողությամբ մը փոխարենը հատույց. ես կաթոլիկությունը կեղծեր էի, ինքը լուսավորչականությունը իրապես ընդունեց. քանի որ միևնույն աստվածը կպաշտեինք, կրոնքի տեսակետով հիմնական տարբերություններ չկային, այլ լոկ նախապաշարումներ. սերը այս նախապաշարումներուն հաղթեց, ինչպես վայրկյան մը խղճիս ու համոզմանս հաղթած էր։

Բայց ա՛լ երկար չտևեց մեր սերն ու մտերմությունը. այս անձնվիրությունը կարծես թե խանդաղատանքը սպառեց, իմ սիրույս փոխարենը վճարեց ու պարտավոր չմնաց. անկե վերջը մեր առջի օրերը չգըտանք մեյ մըն ալ. բարեկամներ մնացինք միշտ, բայց ոչ առջի սիրահարները։

Իր նախապաշարումները կորսնցնելով՝ այս կինը իր հրապույրներեն գլխավորը կորսնցուց. տարօրինակ ու սովորականեն տարբեր հանգամանքը նվազեցավ։

Հիմա կզգամ, որ պետք է թողուլ կիներուն միշտ իրենց նախապաշարումները, սխալ համոզումները, մինչև անգամ հոռի կողմերնին։

Կանացի գոյությունը այնպիսի ամբողջություն մըն է, որուն մեկ քարը խախտելու չգար։

Արմենիսա՝ ուղղամիտ կին մը ըլլալով՝ հետաքրքրական ու շահագրգիռ ըլլալե դադրեցավ. թերևս ժամանակ անցնելով, ես իմ հետաքրքրությունս կորսնցուցի։

Ա՛լ չէր բարկանար երբ Արմենիսա կոչեին զինքը. մեր բոլոր սերեն այս միայն հիշատակ մնաց իրեն. հետո դեպքերը մեզ բաժնեցին ու տարիներ անցան վրայեն. վերջեն իմացա, որ Արմենիսա իր ծերունի բարեկամին հետ ամուսնացեր է։

<1889>

ԿԱՐԾԵՄ ԹԵ

Ա

Ծոծրակին վրա վազվզող ոսկի ճառագայթներեն ավելի, որոնք կրակի մեջ ինկող պզտիկ օձերու պես՝ գալարումներ, կծկումներ ունեին, մատղաշ ու արքենի հասակեն ավելի, որ քալվածքին մեջ՝ զեփյուռեն

օրորվող ոստի մը նազանքը կ՚առներ, իր վճիտ ու հստակ աչքերուն համար պաշտեցի զինքը։

Կանացի աչքը, անոր մեջ խորունկ նայողին համար, վիհի մը վրա բացվող լուսամուտի մը տպավորություն կ՚ընե միշտ, և այնքա՛ն անստուգություններ, հեղակարծ անակնկալներ կ՚ընդնշմարվին հոն, որ անենց և անխարդախ բանը, զոր կտեսնեի դեմիս աչքերուն մեջ՝ զիս կհափշտակեր։

Բացարձակ ու անգիտակից Անկեղծությունը ունեի դիմացս, որ կարծես թե ակամա ըլլալուն համար արժանիք մը ըլլալե կդադրեր։

Ծովեր կան, որոնք թաքուն ցասումներ ու հրճվանքներ ունին միշտ իրենց կուրծքին մեջ զոպված. անոր համար է, որ անոնց շափյուղյա ճակտին պայծառությունը վայրկյանե վայրկյան հազար գույներով կրնա գունավորվիլ. իրենց հարափոփոխ ու հեղուկ կյանքին ճակատագիրն է սա։

Անդին ալ բյուրեղե կաթիլներ կան, որոնք իրենց մաքուր ցոլացումը կորսնցնելու կարող չեն, եթե ուզեն իսկ, և իրենց հավատարիմ անշարժությամբը քարացած կթվին։ Աննիկիս սիրտը այս ադամանդներեն էր։

Բ

Ինծի թափած սիրո լեզուն գեղջուկ, գրեթե շինական բան մըն էր.

— Հոգի՛ս, հոգիս ու կյանքս ես դուն, հասկցա՞ր։

Մանուկներու կցկտուր ու սահմանափակ բարբառը ուներ. ո՛չ նոր պարբերություններ, ո՛չ չլսված բացատրություններ՝ իր միակերպ, մթագնոտ սիրույն համար, միևնույն խոսքերը, որոնք ինծի՝ տղայության մեջ ասված երգի մը պես՝ հանհունս կրկնվելով ավելի քաղցր կթվեին։

Բայց այս պարզությունը զուրկ չէր կանացի բնազդիկ նրբություններե։

Երբ պտտկերս տալ ուզեցի իրեն՝

— Ո՛չ,— ըսավ ինծի,— իմ աչքերուս չեմ վստահիր քեզ, հոն չես դուն։

Եվ հարուստ ու շքեղ լանջքին վրա դնելով մատը.

— Հո՛ս, հոս, սրտիս մեջն ես, գաղտնի, խորունկ, անհարկի աչքերե ծածուկ տեղն ես դուն, միս միմակդ ու բոլորովին իմս, հասկըցա՞ր։

Ուրիշ ատեն՝

— Գիտե՞ս,— կ՚ըսեր ինծի,— որ դրան զանգակին զարնվածքեն,

սանդուխին վրա քալվածքեդ կճանչնամ քեզ և ուրախության սարսուռ մը կվազե ոտքես մինչև գլուխս։

Իմ պաշտումս ալ իրեն համար նույնքան բուռն էր. ես ալ զինքը՝ սրահին մեջ ձգած անուշ հոտեն, շրջապատող չնչին նյութերուն ազդականութենեն անմիջապես կգուշակեի։

— Հոս նստած էիր քիչ մը առաջ,— կ'ըսեի իրեն, աթոռ մը ցույց տալով, երբ ներս կմտնեի սրահեն։

Ճշմարիտ էր ըսածս. կ'ուրախանար, կժպտար, կշառագուներ։

Եվ ձեռքը ձեռքիս մեջ՝ երբոր կսթափեր զինքը համակող անէացումի հեշտանքեն, ինծի կ'ուղղեր տրտում ու անձկությամբ լեցուն նայվածքը, կարծես պահանջելու համար.

— Խոստացի՛ր որ չպիտի մոռնաս զիս։

Գ

Երբոր իմ մտերիմ բարեկամս, Ճամճյան Օննիկ, Իզմիրեն Պոլիս եկավ ամուսնանալու համար, ես տարիե մը ի վեր Աննիկեն բաժնված էի, այն խոլ արշավին մեջ զոր կմղեի կնոջական զբոսանքներու համար, ավելի հետաքրքիր ուղևորի մը պես քան թե ճշմարիտ վայելքի մը սիրույն։

Բայց անոր դեմքը՝ հատուկ պատվանդանի մը վրա դրած կպահեի սրտիս խորը. մասնավոր խուց մը հատկացուցած էի անոր, բացառիկ ու անստգյուտ էակին. ամեն հեղ որ կանացի պզտիկ դավերու, ստահոդ պչրանքներու հանդիսատեսը կ'ըլլայի, այդ դեմքին հաստատատիպ արտահայտությունը կ'ամոքեր զիս։

Եվ ունայնասեր՝ ինչպես կ'ըլլան իմ տարիքիս մարդերը, կ'երևակայեի այդ վճիտ ու հստակ սիրտը դեռ ինձմով լեցուն՝ թեև ես լքած ու ձգած ըլլայի զինքը շատոնցվընե ի վեր։

Աղեկ կհիշեմ որ շաբաթ առտու մըն էր։

Բարեկամս եկավ տեղեկություն առնելու ինե աղջկան մը վրա, որուն հետ միտք ուներ ամուսնանալու և որուն գովեստը ըրեր էին ամենքը. իմ ալ կարծիքս առնել կ'ուզեր որոշում մը տալե առաջ. ո՛վ ըլլալը հարցուցի. Աննիկն էր ան։

Չեմ ծածկեր, որ մեծ սրտնեղությամբ իմացա այս լուրը. ուրեմըն այս աղջիկը մոռցեր էր զիս, քանի որ ահա ուրիշի մը հետ կ'ամուսնանար՝ մինչդեռ ես անմխիթար կկարծեի զինքը ինե զատվելուն համար։

Բարեկամս իմ դժկամությունս կարդաց երեսիս վրա, այնքա՛ն այս

հետաղարձ նախանձը, սրտիս վրա խարանի ցավ մը ձգած էր. վախցավ որ աննպաստ կարծիք մը ունիմ այս աղջկան վրա։

— Ո՛չ,— ըսի իրեն,— ընդհակառակը. շատ գեղեցիկ ու շատ ուսյալ աղջիկ մըն է. ճաշակի ու մանավանդ սրտի տեր մեկն է. գնի այսպես կ'ըսեն զինքը ճանչցողները. ես հեռվանց միայն նշմարած եմ զինքը. երբեմն հոս հոն տեսած, բայց մոտեն չեմ ճանչցած բնավ. գիտեմ սակայն, որ ամենքը միաբերան զինքը կգովեն։

— Ես ալ այնպես լսեցի,— ըսավ բարեկամս,— ուրեմն որոշումս որոշում է. վայրկյան մը վախցուցիր զիս, գիտե՞ս, կարծեցի, որ անխելք բան մը ընելու վրա էի, Աննիկին հետ ամուսնանալովս. ուրեմն այս մասին ա՛լ խնդիր չկա. վաղը միասին պիտի երթանք խոսք կապը տանելու։

Ի զուր մերժեցի, ընդդիմացա, փաստաբանեցի. իզմիրցիները համառ կ'ըլլան, և բարեկամս մինչև որ խոսք չառավ ինե հետևյալ օրը իրեն ընկերանալուս, չթողուց զիս. ձեռքեն ազատելու հնարը չեղավ. թող այդպես ըլլա ուրեմն։

Վաղը ես Աննիկին խոսք կապ պիտի տամ... ուրիշի մը համար. ի՜նչ բախտի խաղ, աստված իմ։

Դ

Սրահին մեջ՝ ծնողքը, ազգականները, բարեկամները. հանդիսավոր բան մըն է այս խոսք կապը. և մենք երկու երիտասարդ եկած ենք մինակուկնիս այս մեծ արարողության համար. ես՝ իմ բարեկամիս ազգականն եմ, եղբայրն եմ, ամեն ինչն եմ. անիկա իբրև նշանած չի կըրնար խոսիլ, և ես անոր տեղը պիտի խոսիմ, շնորհավորեմ, ավանդական բարեմաղթությունները պիտի բաշխեմ։

Անուշ կհրամցնեն մեզի. Աննիկ դեռ չերևցավ. մտքովս կ'երևակայեմ, որ վերջին վայրկյանին զիս տեսնելով իր նշանածին քովը, առջի սերը պիտի վերարծարծի այնքա՜ն ավելի սաստկությամբ, որքան լուռումունջ կեցեր էր մինչև հիմա. իմ դեմս ուրիշի մը խոսք տալու քաջությունը չպիտի ունենա. կ'երևակայեմ անյուր գայթակղությունը, հաջորդ օրը տունիրուն մեջ ըսվելիք խոսքերը, երբոր հիմա ներս մտնելով ուղղակի ինծի գա, գիրկս նետվի ամենուն առջև ու պոռա.

— Ես քուկդ եմ միայն և ուրիշինը չեմ ըլլար։

Մտքովս կշարունակեմ երազը. ծնողքը ահա, որ կմիջամտե. բռնի կրաժնեն զայն. կհափշտակեն թևերուս մեջեն. մազերեն քաշելով, գետինները քսկռթելով կտանին ոճրագործի մը պես, ով գիտե ո՛ր մութ սենյակին մեջ բանտարկելու համար։

Որչա՜փ կզզջամ եկած ըլլալուս։

Աննիկ ներս մտավ. այս ժամին հանդիսավորությունը բնավ չի շփոթեցներ զինքը. վախս կփարատի տակավ ու կզմայլիմ իր անսեթևեթ ձևերուն վրա. գլխու թեթև ու շնորհալի խոնարհությամբ մը կբարևե մեզ, օտարականներու, հյուրերու ուղղված պաշտոնական բարև մը, ոչ շատ մտերիմ, ոչ շատ ցուրտ. իր անձին վրա որչա՜փ մեծ իշխանություն ունեցող մեկն է այս աղջիկը. ոչ դող, ոչ հուզում կա իր անուշ դեմքին վրա. չի շիկնիր, չի շառագունիր։

Կ'ապշիմ ու կնեղանամ միանգամայն. կսպասեի որ հանկարծակիի գար. կայծակե զարնվածի պես մնար զիս տեսնելուն, գույնը նետեր ու ծունկերը կթոտեին քիչ մը. ամենքը նշանտուքին առաջ բերած ջղային տագնապի մը վերագրեին իր թալուկը և ես միայն ասոր բուն պատճառը գիտնայի։ Իր քաջառողջ անտարբերությունը զիս պզտիկ կձգե։

Կես ժամ վերջը խոսք կապի արարողությունը ավարտած է. աջին ձախին շնորհավորություններ, բարեմաղթություններ կթոթովեմ։

Նորեն անուշ, նորեն սուրճ կհրամցնեն ու ամենքը կմտերմանան. կատակներ, զվարճություններ կ'ըլլան։

Բարեկամս, որ ժամանակ կորսնցնող չէ, իր նշանածին քովն է. կխոսի, կխնդա. պատուհանին քովը անկյուն մը կեցած ինծի նայելով բաներ մը կ'ըսեն իրարու. իմ վրաս կխոսին. որքա՜ն հետաքրքիր եմ Աննիկին խոսքերը իմանալու. կրցա՞վ ինքզինքը զսպել, ծածկել իր առջի սերը. արդյոք Աննիկ բան մը գուշակե՞ց. ահա նշան կ'ընե որ մոտենամ իրենց. չուզելով կ'երթամ քովերնին. ինչ ըսելիքս, ինչ ընելիքս չեմ գիտեր։

— Աննի՛կ,— կ'ըսե բարեկամս,— քեզի կներկայացնեմ իմ խիստ, բայց խիստ մտերիմ ընկերս. դուք պոլսեցի եք, հարկավ իրար կճանաչենաք քիչ մը, այնպես չէ՞։

Այս հարցումին, Աննիկ աղեկ մը իմ կողմս դարձավ. անանկ մը, որ պատուհանեն եկող լույսը զիս ողողե. աչքերը պզտիկցուց քիչ մը, ավելի մեծ ջանք մը ընելով իր հիշողությունը ամփոփելու համար. արագ և ուշադիր նայվածքով մը ոտքես գլուխս քննեց զիս. ես ալ կհետևեի հիմա իր նայվածքին բոլոր ճիգերուն. անկեղծ, բայց բոլորովին անկեղծ ջանք մը կ'ըներ այդ նայվածքը զիս հիշելու համար ու չէր հաջողեր. այնքան որ ես իսկ հավատալ կսկսեի զինքը բնավ տեսած չըլլալուս, վասն զի աննենգ ու անխարդախ բան մը կար այս աշխատության մեջ, որով իր բոլոր կամքը կդներ զիս ճանչնալու համար, այն անկեղծ ու անխարդախ բանը, զոր միշտ գտած էի ես այդ աչքերուն մեջ. և վերջապես, եզրակացության մը հանգելով, բայց կ'երևա չկրնալով բոլորովին հաստատ ու ապահով ըլլալ ըսածին, Աննիկ պատասխանեց բարեկամիս.

— Կարծեմ թե տեղ մը տեսած ըլլալու եմ էֆենտին։

<1898>

ՀԱԿՈԲԻԿ

Ա

Երաշտության եղանակներ կան, տարիներե ի վեր մոռցված, որոնք հանկարծ միտքդ կ'իյնան։ Եղանակներ՝ զորս անօգուտ ջանքեր ընելե ետքը մտքեդ վանելու ու հեռացնելու համար, մեկեն ի մեկ բարձրաձայն երգելու կ'ելլես։ Իմ Հակոբիկը հիշելու ելլելս այդ տեսակ բան մըն է։ Ի՞նչպես, մտքի ի՞նչ անգիտակից ջանքով հիշողությանս առջև եկավ կանգնեցավ այս տղուն դեմքը. չպիտի կրնամ բացատրել. սա գիտեմ միայն, որ ութը օրե ի վեր, վայրկյան մը աչքիս առջևեն չեմ կրնար վտարել զայն։

Դպրոցին մեջ նախ կտեսնեմ զինքը, ճիշտ իմ քովս նստած, զմելիովը գրասեղանին վրա իր անունը քանդակելու կամ շատ անգամ ալ պարզապես զայն տաշելու զբաղած, իր սիրական զբաղումը. հետո, դպրոցեն ելլելնուս, իրարմե բաժնվելնես վերջը, հոս ու հոն, միշտ ազվոր հագված երիտասարդ՝ որուն կենցաղասեր մարդու համբավը, հարափոփոխ սերերուն պատմությունը ամենուն բերանն էր։ Ավելի հեռուն՝ երեսունին մոտերը՝ միևնույն մարդը, հոգնած քիչ մը սակայն, և դրամական անձկությենեն՝ արդուզարդի ծախքերուն հետ իրավախոհության գալու ստիպված։ Ու քիչ մը վերջն ալ բոլորովին չքավորության մեջ ինկած, խավերը թափած որտենկոթ մը կոնակը, որուն մաշած կողմերը շղացնելու համար իր ջանքերը կնշմարեմ։ Հետո աներևութացումը, ծովին մեջ սուզող լուղորդին պես, որ իր գոյությենեն նշան չտար. և չսպասված վայրկյանին վերերևումը, ամուսնության մը շնորհիվ, անհնարին ամուսնություն մը այս տղուն համար, ուռած տիկի պես բան մը, որ ծովին հատակը սուզած նավը ջուրին երեսը կհանե։

Եվ շատ չանցած՝ լայն, սև շրջանակով պարուրված թուղթը, վրան՝ ծունկ չոքած անշնորհք հրեշտակով մը, որ անոր մահը եկավ օր մը ինծի ծանուցանել։ Ուրիշ ոչինչ։

Մասնավոր պատճառ մը որոնելու չելա ասոր համար. հիվնդցեր ու մեռեր էր Հակոբիկ, որ սիրուն տղա մը ըլլալու համար մահկանացու ըլլալե դադրած չէր ու թերևս ճիշտ ատոր համար ուրիշե մը ավելի մահկանացու ըլլալու էր։

Հիմա սակայն կվերակազմեմ այս կյանքը։ Օդաչու գնացք մը քան թե տոտիկ-տոտիկ քալել մը հաստատ հողի մը վրա։ Ընդհանուրեն տարբեր ապրիլ մը՝ ընդհանուրեն տարբեր մեռնելով մը իր թողությունը գտած։ Ութ օրվան մեջ իր վրա հավաքած պզտիկ պատմություններես, չնչին դեպքերես առաջնորդված՝ քայլ առ քայլ կհետեիմ իրեն։ Այս կյանքին բոլոր հորինվածքները կքայքայեմ մեկիկ-մեկիկ, ջիղերը կզննեմ, երակները կրանամ ու, ինչ որ անհնար կթվի ձեզի, իր հոգին կգտնեմ ու կվերլուծեմ։ Տեսակ մը հետադարձիկ վիրահատություն անգոյին, որ զիս կհետաքրքրե, կյանքի ու մահվան հարց՝ իրարու խառնված, որ քուն չի քնացներ ինծի մինչև որ լուծումը չգտնեմ ու ճիշտ եզրակացության մը չհասնիմ՝ տխուր, ամեն ճշտությանց պես։

Բ

Հայր ու մայր չուներ անիկա, այլ ծերունի մեծ հայր մը, Ակնեն եկած կարծեմ ու հացագործությամբ հարստացած, որ մինչև վերջը վրան գուրգուրաց և որուն մեկ հատիկն էր։ Այս երկու անչափահասությունները, մեկը՝ տարիքի անբավականութենեն առաջ եկած՝ Հակոբիկինը, մյուսը՝ տարիքին սահմանազանցութենեն բխած՝ իր հավինը, զիրար գտեր ու հասկցեր էին միշտ։ Իրենց Պեշիքթաշի տանը մեջ՝ քսան սենյակով, ընդարձակ պարտեզով տուն մը՝ մերինին դրացի, միս մինակ երկուքն էին։ Հոն ամեն բան իրմե կախում ուներ միայն, իր մանկական դատաստանեն։ Եթե իրավ է որ զբոսանքը շռայլվելով կդադրի զբոսանք ըլլալե, Հակոբիկ իր տղայության ատենեն ճանչցավ Ազնձրույթը, հագուրդե եկող Ազնձրույթ, աշխարհիկ հաջողությունները արհամարհելու մերձավոր։ Իր տարիքին հատուկ խաղերը շատոնց վայելած ու մեկդի նետած էր կոտրած խաղալիկներու պես, երբ մենք ամեն մեկս ատոնց մեջ գերագույն երջանկությունը կտեսնեինք։

Հակոբիկ անոր համար միայն վարժարան եկավ, որովհետև սովորություն մըն էր ասիկա և որովհետև տունը մինակ մնալով սիրտը պիտի նեղանար։

Աչքիս առջևն է իր նիհար, բայց աղվորիկ դեմքը լուսնկայի կլորությունով ու բերնին, թուշին, ճակտին գրեթե կնոջական գիծերը, այնքա՜ն նուրբ, ա՜յնքան փափուկ։ Խարտյաշ մազերը միշտ սանտրած ու երկուքի բաժնված գլխուն վրա։ Հիվանդագին շնորհ մը վրան սփռված, որ պահպանության կոչում մըն էր կարծես։ Տասնչորս տարու էր այդ միջոցին։ Անհնարին ծուլությունով ծույլ մը սակայն իր դասերուն մեջ։ Բացի գծագրութենեն, որուն մեջ նորեն զարտուղի կերպով՝ բայց իրական ձիրքով օժտված էր, հետինն էր ամեն ուսումներու մեջ։ Ծաղրանկարի վարպետ մը միայն. տնտեսեն սկսելով մինչև տնօրենը իրենց պատկերները ապահով էին գտնելու պատերուն վրա՝ մատիտով, երբեմն ալ ածուխի մը ծայրով գծված։ Հարուստի զավակ ըլլալուն՝ իր հանցանքները, քրեական մեզ ամենուս համար, ներողամիտ խրատներե ուրիշ հետևություն մը ունեցած չէին։

Իր վտիտ կազմին հակառակ՝ ճապուկ ու ճկուն տղա մըն էր, պարագլուխը մեր ամեն անկարգությանց ու մեր տղայական ըմբոստություններուն։ Ինչպե՞ս կ'ուզեր որ ասանկ տղա մը չսիրվեր մենե։ Օրերով բացակա կմնար դպրոցեն. այդ միջոցին նոր զբոսանքի մը, երբեմն նոր մարզանքի մը հետամուտ էր և որուն մեջ իսկույն գերազանց կհանդիսանար։ Մասնավորապես կհիշեմ կիրակի օր մը, երբ Օիլամուրի կողմը հանդիպեցա իրեն. ձի հեծեր էր, ամեհի նժույգ մը, զոր պըշրող ամազոնի մը պես խաղցնելով կվարեր։ Աղջիկները խենթ ըլլալու էին իրեն համար. այդ օրը նախանձեցա իր վրան։ Ատեն մըն ալ որսորդության սեր տվավ. իր հագուստը կապուստը, զեն ու զարդը, պատմած պատմությունները ամենուս բերնին ջուրերը վազցուցին։

Այս լիաբուռն վայելքը կյանքին, որ շնորհված էր իրեն մեր ցավատանջ դպրոցականության ճիշտ դեմը, դառնություն մը չդրավ երբեք մեր ներսը, այնքա՜ն կվայլեր իրեն անիկա, այնքա՜ն շնորհալի կ'ըլլար ատով։

Կհավատամ, որ շատ մը բաներու մեջ վայլեցնելը՝ մեծ ու գուցե ճշմարիտ Արդարացումն է։

Վարժարանի կյանքեն վերջը կորսնցուցի զինքը. ես նոր ուսանողության շրջանի մը մեջ նետվեցա. անիկա բուն կյանքին մեջ թևակոխեց իսկույն։

Պատանութենեն իր մուտքը երիտասարդության մեջ՝ շքեղ եղավ։ Ծերունի հայրը մեռեր էր մեծ հարստություն մը ձգելով իրեն, պատրաստ դրամ, կարգ մը կալվածներե ու շատ մըն ալ առնելիքներե բաղկացած։ Ուրիշ մը իր տեղը՝ այս ժառանգությունը հաշվելու, ժողվելու, կարգի բերելու պիտի նայեր։ Ասանկ հիմարություն մը չանցուց մտքեն բնավ։ Ունեցածը ծայրեն սկսավ վատնել, նախ պատրաստ դրամը, հետո կալվածները մի առ մի ծախելով. առնելիքները ձգեց պարտական-

ներուն ու չփնտրեց զանոնք, նույն իսկ երբոր աղքատացավ։ Պեշիքթաշ իր մեծ հոր տունը բնակեցավ միշտ, նախապաշարում ըսե կամ հարգանք անոր հիշատակին։ Գիշեր չեղավ որ Փերա չերթար, հաճույքի, զբոսանքի արվարձանը, նոր տարփուհիներու ետևեն։ Բայց իր փճացումին ու զեխությանցը մեջ անգամ միշտ ուրույնություն մը ուներ, վեհ ու տոհմիկ բան մը, ինչ որ, եթե ուշադրություն ըրած եք երբեք, մեր գավառացիներու զավակներուն մեջեն՝ Ակնեն եկող սերունդին վրա միայն կնշմարվի։

Գ

Ու այս բոլորին մեջ ատեն գտավ ճշմարիտ, մաքուր ու ազնիվ սեր մը ալ ունենալու իր սրտին մեջ. վասն զի աղեկ գիտեմ, որ մեր գեղեն աղջիկ մը սիրեց ու սիրվեցավ անկե։ Էսնաֆ ընտանիքի աղջիկ, պարզուկ ու անբիծ սիրտ, որ անոր նվաճող էրիկ մարդու մեկ նայվածքին առջև տկարացավ։ Դեղինի վրա, աղվոր առատ մազեր ու դշխոյի հասակ մը ուներ, խրոխտ գեղեցկություն, որ ամեն երանությանց պես Հակոբիկին բաժինը եղավ։ Բոլոր ախտավարակ հաճույքներու մեջ, այս աղջիկը՝ անհպելի սրբության մը պես իր սրտին առանձին մեկ անկյունը պահեց միշտ։ Իր խոլական արշավին ու հետո վերջնական քայքայումին մեջ այս սերը անխախտ իր տեղը մնաց։

Այսպես անցավ իր երիտասարդությունը, անդուլ վազք մը։ Այն օրը միայն որ ա՛լ դրամ չգտավ վատնելու, կանգ առավ առանց զարմանքի, մանավանդ առանց տրտունջի։ Երեսունին մոտ էր հիմա, նորեն վայելչագեղ երիտասարդ՝ պահելով վրան այն նրբությունը ու շնորհը, որ առնական կորովին հակընդդեմ է քիչ մը և ուրկե սակայն այնքան կ'ախորժին կարգ մը կիներ։

Ուրիշ մը իր տեղը պարտք պիտի ըներ շարունակելու համար իր ապրելու եղանակը. ատանկ բան մը չըրավ. ըսի որ կեցավ իսկույն ու իր մեծ հորը տան մեջ փակվեցավ, աներևույթ եղավ գրեթե։

Ատենին նահանջելը՝ ամեն բանի մեջ՝ ճարտարութենեն ավելի բան մըն է. ընդհանրապես ասիկա կպակսի անոնց, որոնք հաջողությամբ լեցուն կյանք մը վարած են։

Հետո, ստիպված, այդ տունն ալ ծախեց. իր առաջին վիշտը եղավ ասիկա բովանդակ կյանքին մեջ. ատկե վերջը անդաստական մեկը եղավ ա՛լ. զինքը շրջապատող համակրությունը, իրեն ընկերացող ծափահարությունները հետզհետե հեռացան իրմե ու տակավ պակսեցան մարող աթձագանքի մը նման, իր երեսին ժպտող բոլոր երեսները թթվեցան ու

անդին դարձան։ Անհրաժեշտ բարևներ անգամ պզտիկցան, տարտամ, խուսափողական ձևեր առին՝ իր փալթոին գույնին պես։ Այս ընդհանուր սառնությունը զինքը շփոթեցուց քիչ մը ու ամեն արիություն մեռցուց իր մեջը։ Ընդհանուր լքումին մեջ՝ ձեռք մը միայն կարկառեցավ իրեն, իր սիրած աղջկան ձեռքը։ Բայց հիմա՝ իր անկումին մեջ՝ ինքզինքը անարժան զգաց անոր ու խույս տվավ անկե։

Հոս հոն շրջեցավ, դեռ նոր ոտք դնելով մյուս կյանքին սեմեն ներս, դժնդակ ու իրական կյանքին։

Որչա՜փ ատեն աղքատ ապրեցավ, պատերու տակեն սպրդելով քալեց, զրկանքներու ահագին աշխարհքին մեջ թափառեցավ։

Այդ միջոցին էր կարծեմ, որ պատահեցա իրեն ու կեցուցի զինքը փողոցին մեջ։

— Տեսնենք,— հարցուցի իրեն,— ինչո՞վ կզբաղիս հիմա։

— Մեռնելով,— պատասխանեց ինծի։

Դ

Շաբաթ մը վերջը իր ամուսնության լուրը առի։ Տունը մնացած, ստակի տեր, անհրապույր աղջիկ մը՝ երիտասարդ էրիկ մը փնտրելու ելեր էր, ու Հակոբիկը համոզեր էին, որ այս պաշտոնը ստանձնե։

Առանց ընդդիմության, առանց խորհրդածելու հետևեր էր իրեն տրված խրատին, հիվանդի մը պես, որ ամեն կամք կորսնցուցած՝ հանձն կ'առնե ամենեն դառնահամ դեղը խմել։ Ու օրին մեկը տունփեսա գացեր էր Փանկալթի, փայտաշեն, հին օրերե մնացած տուն մը, Պետրոսյաններուն տունը, առանց աղեկ մը գիտնալու թե ի՛նչ ընելու համար։

Կարգի կանոնի մարդիկ էին հոն եղողները, հաքսին հորմեն մորմեն սկսելով մինչև տան ծառաները. առտուն երեքին՝ սեղանատունը նախաճաշ. վեցին՝ ցերեկվան ճաշը. իրիկվան դեմ՝ աներհայր ու զոքանչ հինգ փառքի պեզիկ իրարու հետ. իր կինը՝ դեմը անկյուն մը նստած, դրացի տուներուն մեջ պատահած եղելությունները մանրամասն պատմելով։

Ամենուն դեմքին վրա լուրջ ու հանդիսավոր բան մը կար, որուն մեջ նոր փեսան իր անառակ տղու անցյալին դեմ լուռ կշտամբանք մը կկարդար։

Իսկ կիրակի օրերը եկեղեցի պիտի երթային անխափան։ Հակոբիկ ընդդիմություն չըրավ այս ամենուն, այնքան նոր, այնքան անհնարին, այնքան անիմաստ էր իրեն այս ամենը։ Իր կինը, զուրկ ամեն պչրանքե, կարծես քրիստոնեական պարտականություն մը կատարելու համար

կմոտենար իրեն ու պարզապես զզվանք կ'ազդեր անոր։ Իրենց հարաբերությունները անհրաժեշտեն անդին չանցան։

Ամենն անհատականություն կերսնցուցած՝ Հակոբիկ ինքզինքը վերըստին գտնելու ջանք մը չըրավ, գիշեր մը մինակ դուրս ելլել մտքեն անգամ չանցուց։

Աշխարհի առջև սակայն՝ Հակոբիկ նոր բախտի մը տիրացած էր Պետրոսյաններուն փեսա ըլլալովը. բարևները սկսեր էին նորին տըրվիլ։ Անոր ըրավ չըրավ գործի դրավ զինքը իր կնոջ ազգականներեն մեկուն քով, որուն կալվածներուն հասույթը պիտի հավաքեր ու վարձու պայմանագիրները պիտի նորոգեր. բավական ատեն կանոնավոր ու գոհացուցիչ կերպով վարեց իր նոր փեսի ու գործակատարի դերը։

Եկեղեցի հաճախելը տեսնելով՝ քանի մը հոգի առաջարկեցին Հակոբիկը թաղական ընել։

Խելքը գլուխը եկավ, կ'ըսեին շատերը։ Հանգստությունը ու երջանկությունը հիմա գտավ, ըսին ամեն տեղ։ Աներհորը հարստությունը ուշ կամ կանուխ իրն էր և իրազեկ անձեր տասը հազար ոսկիի մոտ կհաշվեին այդ հարստությունը։ Նախանձողներ ունեցավ։

Թաքսիմ, պարտեզին մոտ բռնեցի զինքը։

— Ի՞նչ ըրիր, Հակոբիկ։

— Ինչ որ ըսեր էի քեզի արդեն, մեռա։

— Ի՞նչ կատակասեր մարդ ես։

Տրտում ժպիտ մը գծագրվեցավ ու անհետացավ իսկույն երեսին վրա։

— Ճաշի ատեն է,— պատասխանեց ինծի,— պետք է որ տունը ըլլամ։

Հեռացավ փութկոտ քայլերով, առանց զիս ողջունելու։

Ե

Ու մեռավ իրոք, չափավոր հիվանդութենե մը վերջը, ոչ շատ երկար՝ ոչ շատ կարճ, կարգով կանոնով, ինչպես որ պատվավոր մարդ մը պետք է մեռնի։ Ոչ հանկարծակի, ոչ դիպվածական մահով, որոնք զըղջումի ատեն չեն ձգեր ու գերագույն պատրաստությանց չեն հարմարիր, այլ երեք ամիս անկողնին ծառայելեն վերջը ու ս. եկեղեցու խորհուրդները առնելե զկնի, ինչպես մահազդը ծանույց։

Բժիշկները, որոնք զինքը դարմանելու եկան, ճշտիվ չկրցան ճանչնալ հիվանդությունը որ զինքը սպառնց. նվաղում մըն էր տակավ, անխոսիկ, առանց ցավի, որ այս շենքով ու շնորհքով լեցուն տանը մեջ միակ ներելին էր արդեն։

Անոր մեռնելովը ոչ ոք ցավ մը զգաց, թեև միշտ միևնույն մահազդը մեզի իմացուց թե այս կորուստը ի խոր սուգ համակեց տնեցիները։

Իր այրին տարի մը սևեր հագավ, առջի երեք ամիսը թանձր քողը մը դրած երեսն ի վար, որ մինչև ոտքը կհասներ, հետո քողը կոնակին վրա իջավ ու քիչ-քիչ վերցավ բոլորովին. ընդունված սովորությունները ամենքն ալ հարգվեցան ու պահպանվեցան։ Նույն իսկ քառասունքին, Հակոբիկին հոգուն պատարագ մը ընել տվին։

Այսպես գլխիվայր բան մը եղավ այս տղուն ճակատագիրը։ Ճիշտ անկե մեռավ ուրկե շատ մը մարդիկ այնքան հանգիստ կ'ապրին աշվընուս առջև։ Ցավը որ զինքը տարավ, բորոտությունն էր՝ տարածված այնքան մեր մեջ և որուն իր առողջ նկարագիրը չտոկաց։ Այդ հիվանդությունը կկոչվի՝ պայմանադրական կեղծիքը ընկերության։

<1904>

ԼՈՒՌ ՑԱՎԵՐ

ԱՆԴՐՇԻՐՄԻ ՍԵՐ

Ա

Սև շրջանակով պարուրված, սովորական ու ռամիկ պիտակն էր փակցված հոդ պատին, վրան ավանդական տապանովը որուն քով ծունկ չոքած՝ կին մը կ'աղոթե. վարի դին՝ ազգականներու թվումը, ու թուղթին ճիշտ մեջտեղը՝ հոն, ուր նայվածքները կ'երթան իսկույն, անուն մը, կարծես հատկապես իմ չհավտացող աչքերուս համար ահավոր կերպով մեծցած, ամբողջ հորիզոնը գրավելու չափ խոշորցած տառերով գրված անունը.

Տիկին***

Մեկու մը վրա ունեցած հիշատակներդ ու զգացումներդ՝ որքան ալ մոռցված ու անհետացած ըլլան, այդ անձին մահը իմանալուդ մեկեն կվերադառնան ու կյանք կ'առնեն՝ ճիշտ ինչպես ճերմակ թիթեղը լուսանկարին՝ քիմիական բաղադրության մը տակ հանկարծ պատկեր մը ի հայտ կբերե քեզի։

Այս բոլորովին անակնկալ մահը միևնույն ներգործումը կ'ըներ վրաս, ու մեղմիվ՝ անցյալ մը կկազմվեր շնչին հանդիպումներե, հավանելներե, անոր անցնիլ երթալեն վերջը դեռ ետևեն երթալու պես նայիլներե կազմված անցյալ, որ, պահված տեղե մը դուրս ելլելու պես, հանկարծ կ'ելլեր ահա, մտքիս առջև, իր տարտամ ու վարանոտ գիծերը կթոթափեր վար, այս կնոջ համար որոշ ու մեկին զմայլանք մը ըլլալը բացե ի բաց խոստովանելու համար։

Ժողվելով, հավաքելով այդ մանր մունր տպավորությունները, բերելով քով քովի՝ սիրելի դատ մը ապացուցանելու համար զորավոր փաստի զանգված մը շինելու պես, պայծառ կերպով կտեսնեի ինքզինքս հեռվեն, միշտ հեռվեն, քանի որ ներկայացած չէի այս կնոջ և հետը խոսած չէի բնավ, երկրպագումի մը պես դիրքի մը մեջ, մունջ հիացումով համակված, ամեն հեղ երբ Կղզի գացող շոգենավին վրա կամ Փերա մեծ փողոցին մեջ և կամ խանութե մը բան մը գնած պահուն կտեսնեի զինքը։

Միշտ արտորացող բան մը ուներ վրան որ հիմա, իր վաղահաս մահվան առջև կեցած պահուս, ահեղ խորհրդանշանը կ'երևա ինծի՝ արտորանքով կարճցած երիտասարդության։

Կապույտը կսիրեր ան. ոտքեն մինչև գլուխը կապույտներու մեջ պլլված, համակ կապուտագեղ կին, որ իր աճապարող փութացումին մեջ՝ «շուտ երեսս նայեցեք, վայելեցեք զիս, վասն զի վայրկյան մը վերջը ալ չկամ» ըսելու պես բան մը ունենալ կթվեր, երբոր կ'անցներ քովեդ։

Նրբահասակ ու նրբամարմին էր. թափանցիկ կաթնաթույր մորթով ու եղջերուի մեծ-մեծ բացված աչքերով, որուն մեջ ճերմակը կ'աղոտնար, կհատներ, այնքա՜ն կ'իշխեր մեջտեղի սևին ցոլացումը ու կվարագուրվեր երկար բիբերուն ձգած ստվերովը։

Խոսուն աչքեր, ժպտուն աչքեր, անմեղ ու մեղավոր աչքեր՝ որոնք տիեզերքին երանությունը իրենց ծոցին մեջ կպահեն։

Բ

Քովես, ինծի պես այս մահազդին առջև կեցողները կխոսակցեին, իրենց գաղափարները կփոխանակեին մեռնողին վրա, հիմա որ ոևէ նկատում ու ակնկալություն չէր մնացած, արտասանելով իրենց խղճին թելադրած անկախ վճիռը անոր մասին։

Այսպես կ'ըլլա միշտ մեռնողներուն համար. մարդիկ՝ դերասաններու պես, որոնց թատերախաղը վերջացած է, իրենց լեզուն ու դիրքը կփոխեն, գոհունակության շունչ մը առնելով, երկարատև ծպտում մը, լեզվի ու վարքի ծպտումը թոթափող մարդու ազատ շնչառությունը։

— *** Հյուպատոսին կինն էր. բայց իր անկարգությանը համար էրիկը ձգեց զինքը։

— Գիտեմ, դատարանին առջև հաստատվեցավ կնոջը գեշ վարքը ու երեք ամիս կա որ զավկրները ձեռքեն առին։

— Այո՛, ճամփեն ելած կին մըն էր։

Ու բարոյականի տոպրակնին բացած, այս անցորդները, որ դեռ քանի մը օր առաջ այս կնոջ մեկ ակնարկին արժանանալու համար կըբծնեին անոր ճամփուն վրա, իրենց մաղձոտ չարախոսությունները կուրս կթափեին։

— Ինչե՞ն մեռավ,— հարցուց առաջին խոսքը բացողը։

— Թոքատապեն։

Ո՛չ, ըսի մտքովս պատասխանելով անոնց, զավկրներուն ցավեն մեռած է այս կնիկը։ Եվ իսկույն ներսես պաշտպան կանգնեցա անոր, երբ աշխարհ խոսք մեկ կ'ըներ զինքը դատապարտելու համար։ Իր շնորհին, իր երիտասարդությանը վայելուչը՝ արատով մը չգոցվիլն էր իր դագաղին։ Ինչ որ ալ եղած ըլլար իր կյանքը, սիրտս կ'ըսեր որ ծաղիկ մը նետելու է անոր վրա և ոչ աղբի դեզ մը, ինչպես կ'ընեին սա մարդիկը։

Վարանոտ կեցեր էի մայթին վրա, անցորդներուն պատմած ուղիղ կամ սուտ զրույցներուն ակամա ունկնդիր, երբոր հեռվեն տեսա մեռելը զոր մեր կողմը կբերեին։

Առջևեն խաչալեմները բարձրացուցեր էին երեք գիծի վրա, որոնց երկու ծայրերունը՝ քահանաներու դասին ու մեջտեղինը դագաղը տանող կառքին առջև կ'իյնար. համակ ընկուզենիե էր ան, տեղ-տեղ արծաթ դրվագներով զարդարված։ Աղեբեկ մազերով ծերունի մը, հայրը, դագաղին անմիջապես ետևեն կուգար։ Ու անոր ետևեն, հուղարկավորներու ցանցառ թիվ մը, որուն մեջ Փերայի հույն հասարակութենեն քանի մը ծանոթ դեմքեր կնշմարեի։

Մեռելին երեսը բաց էր, ինչպես սովորություն է հունաց մեջ, այնպես որ կեցած տեղես կրցա, թափորին ծանր-ծանր քալվածքեն օգտվելով, լավ մը դիտել զայն։

Անհավատալի բա՜ն. միշտ իմ ճանչցած գեղեցիկ կինս էր հոդ պառկածը, կարծես թե կենդանի, աչքերը գոց, քիչ մը տժգույն, քիչ մըն ալ նիհար երեսով։ Հասակը, որ դագաղին բոլոր երկայնությունը կգրավեր, ամենեն վեհաշուք բայց ամփոփ ու պարկեշտ պառկվածքի մը շնորհքովը կշքեղանար, իր վրդովված կյանքին կարծես թե զղջումը բերելով զինքը դատող մարդոց։ Այս դիրքին մեջ կուրծքը՝ իր լայնածիր պարույրովը տրոփելու մտա կթվեր. ճերմակ բեհեզե շրջազգեստին ծայրեն, դագաղին նեղությանը մեջ ճմռկթած, ու համագույն բեհեզեն մուճակներուն մեջեն, հարսի մուճակներ, ոտքերը, մանրիկ երեխայի ոտքեր, իրենց

կորնթիքովը կհայտնեին որ գեղջուկ կամ ռամիկ աղվորություն մը չէր այս կնոջ գեղեցկությունը. և ոտքին պճեղը տոհմիկ ու ազնվական գիծերու սկզբնավորությունը կուտար իր նրբությամբը։

Մեռելը զարդարողները անոր ոսկի մազերուն ստվար խուրձը, աղջկան մը մազերուն պես, քակեր ու ձգեր էին ուսերուն վրա. հետին պչրանքը այս աղվորության որ ոչնչանալու կ'երթար ահա. ու այսպես, իր լուսավոր դեմքը վերջին պահուն կփայլեր երկու դիեն ծփացող դեղին կոհակներուն մեջ. դեղնություն, որ շատ անգամ կտեսնվի երբոր արևը այգուն այգուն կծագի ծովին վրա։

Գ

Չեմ գիտեր լավ մը թե ինչպես եղավ, որ մեռելին ետևեն գացողներուն խառնվեցա ես, ու ինքնակոչ հուղարկավոր՝ մինչև Թաքսիմ ընկերացա անոնց։ Միևնույն ատեն մտքովս,— գիտեք իմ հիվանդագին միտքս,— իսկույն երկու քայլափոխի մեջ, վեպ մը սկսա պատրաստել իր վրա, ջատագովիչ վեպը, բոլորովին տարբեր անկե, որ մահազդին առջև կանգ առնող անցորդներու կցկտուր խոսքերեն կկազմվեր։

Կխորհեի ինքնիրենս որ զոհ մը ըլլալ կվայլեր այս գեղանի մեռելին և ոչ այն անարգ ու հերատուկ կինը զոր վայրկյան մը առաջ դատափետեր էին։ Չճանչցված էակը ըլլալ, զոր իր ամուսինը, իր անհասկացողությամբը թերևս, խորտակած էր առջի ձեռք դպցնելուն, այն քընքուշ, դյուրաբեկ ու նրբարվեստ առարկաներուն պես, որոնց խիստ հպում մը՝ մահը ու խորտակումը կ'ըլլա իսկույն։

Ես իմ վեպիս առջի գլուխն էի դեռ, էրկանը դաժան, գրեթե բարբարոս նկարագիրը կշինեի մտքովս, երբոր հուղարկավորները, գերեզմանատուն տանող կառքերեն մեկուն մեջ հրամցուցին զիս։ Ո՞վ էի ես. ի՞նչ ընելու եկեր էի հոս. այս բաները չխորհեցա այդ պահուն. ներս մտա հույնի մը հետ որ, բարեբախտ դիպվածով մը, ճանչվոր ելավ ինծի։

Մինչև գերեզմանատուն եկողները շատվոր չէինք. ութը տասը հոգի ամենքս։

Մյուսներեն, որոնք ազգականները ըլլալու էին հարկավ, ես քիչ մը ետև կեցեր էի՝ աչքի չզարնելու տարտամ ջանքով մը։

Բայց երբոր թաղման արարողությունը սկսան, այնքան այլայլեր էի արդեն, որ հեկեկալով կուլայի առանց ա՛լ մեկը սեպելու, իբրև թե ես տերը ըլլայի ննջեցյալին, ու արցունքներուս մեջեն, երբ փոսը կդնեին մեռելը, դեռ կհիանայի վրան։

Երբեք մահը ոչ ոք այդ աստիճան գեղեցկացուցած էր։ Ո՛չ այն աշխարհիկ ու ցանկազարթուցյց աղվորությունը, որ այս կնոջ աղվորությունը եղած էր իր առողջությանը. այլ դեմքին վրա չքնաղ ու անմեղունակ արտահայտություն մը նախ, վճիտ ու պայծառ խղճմտանքի մը ցոլացումին պես։ Ո՞վ ըսավ որ հանցավոր ու պարտազանց մեկն էր անիկա. ամենեն մեծ արվեստագետին երևակայելիք շնորհը ու վայելչությունը սփռված էր այս մարմնին վրա, բայց մռայլ ու սրբազան վերարկու մը ձգածի պես պատկառանք միայն տարածելով անոր շուրջը։

Ու հիմա՝ քահանային աղոթքին հետ համընթաց՝ փոսին երկու դիեն բահերով նետված հողերուն տակ հեծեծող դագաղը հետզհետե կծածկվեր ու ծովին մեջ ընկղմող նավի մը պես աչքե կ'անհետանար։ Մեռելաթաղները հողին զանգվածները կկոտրեն, կշտկեն, կկոկեն ու ահա ոչինչ՝ բացի այն ուռեցվորած թարմ ու կարմիր հողեն որ նեղ ու երկար ձվաձև մը կկազմե այդտեղ։

Հուղարկավորները կարգով կմոտենան ծերունի հորը ու վշտակցությունին կհայտնեն, ու էն վերջը ես կմոտենամ անոր ձեռքը թոթվելու համար, երբոր, տարօրինա՞կ բան, ես պետք ունիմ որ իմ ձեռքս սեղմեն։

Մտերմության ի՞նչ անբաղդատելի օղակ մը կհաստատվի հանկարծ, վայրկյան մը առաջ իրարու անծանոթ երկու հոգիի մեջ. ի՞նչպես կ'ըլլա որ մեկ վայրկյանի մեջ զգացված կսկիծ մը՝ տարիներով միասին զգացված, բաժնված ուրախություններե ավելի սերտ մերձավորություն կազմե, ամուր ու պինդ շաղախ, որ սիրտերը իրարու կկապե իրապես անմեկնելի կապերով։

Դ

Անկե վերջ բարև մը կփոխանակեինք անոր հետ, իրարու հանդիպելնուս։ Չհարցուց բնավ թե ո՞վ էի ես և թե ի՞նչ իրավունքով իր սուգին մասնակցեր էի։

Վեց ամիս վերջը։ Լյուքսանպուրի սրճարանը կ'երթար անիկա պոիշի փառքի մը ընելու համար, իրեն պես գործե քաշված քանի մը մարդոց հետ։ Հոն գտնվեցա ես ալ ու միասին կխաղայինք շատ հեղ։ Ինքը վարպետ մըն էր ու ինծի պես համբակի մը խաղեն մեծ հաճույք չէր կրնար առնել. բայց չեմ գիտեր ինչո՞ւ ան ալ իմ ընկերությունս կփնտրեր։

Ու միասին, խաղին փառքին լմննալեն ետքը, իրիկվան դեմ, քովի քովի պզտիկ պտույտ մը կ'ընեինք մինչև Թաքսիմի պարտեզը և նույնպես միասին կ'ընեինք վերադարձը, հոր ու զավկի պես։

Ի՞նչ էր այն անպատմելի բանը, որ այս ծերունիին մոտ գտնվելուս՝ զիս ցնծությամբ կլեցներ, ամենեն երջանիկ արարածը կ'ըներ զիս։ Փոխադարձ համակրությունը, զոր այս մարդը ինծի ցույց կուտար, իր աղջիկեն եկածի պես տպավորություն կ'ըներ վրաս։ Ինքը իր աղջկան հիշատակը կ'ապրեր. ես ալ։

Անոր մահվանը տարեդարձին՝ երկուքնիս ալ մեյ մեկ շքեղ պսակ դրինք գերեզմանին վրա։ Գարունը ցնծությամբ կլեցներ այս սուգի տեղը. ծառերը, ծաղիկները կխայտային. ու գերեզմանին վերի դին բացվող եղրևանի մը իր կապույտ ծաղիկներու մեհևանդներովը և անոր սիրած գույնովը այդ փոսը կզարդարեր դեռ։

Վերադարձին հայրը իր տունը հրավիրեց զիս. անհուն երանություն մը զգացի ոտք կոխելով այն տունը ուր ապրած էր Սերաֆիթան։

Այս էր տարօրինակ ու աղվոր անունը այս կնոջ որուն մեռնելեն վերջը մտերիմ եղեր էի ինքնիրենս։

Անկե վերջը միշտ գացի հոն. օրին մեկն ալ հայրը անոր խուցը տարավ զիս։ Անոր աղջիկնության հոտերովը լեցուն սենյակ մը, որ զինքը գրկող, պատող, շրջապատող առարկաներով լեցուն էր. վարագույրները գոց էին միշտ, խորհրդավոր ստվերի մը մեջ պահելով զայն. աջ կողմի անկյունը բռնող թիկնաթոռին մեջ փետուրով լեցված բարձիկը անոր մարմնին թողած գոգը կպահեր դեռ, թռչունի մը բույնին պես՝ ու քովի մահճնե նրբակերտ սեղանին վրա՝ Պուռժեի. Մոփասանի մեկ երկու հատորները. քառորդ ժամվան մը համար միայն կարծես դուրս ելած էր այս սենյակին տիրուհին, և քիչ մը վերջը պիտի դառնար հոս իմ քովս, իր կապույտ արդուզարդովը, վազելով, արտորալով՝ ինչպես իր սովորությունն էր, կարմրած քրտնած ու համբույրով մը ներողություն խնդրելով զիս սպասցնելուն համար։

Սովորաբար նարտ խաղալու կու գայի անոր հորը հետ և ականջես Սերաֆիթան, ինձմե ուրիշին աննշմարելի, դեպի ինծի ծռած, գողար ու գողդոջուն ցողունի մը ծռելուն պես, կամաց մը շնորհակալություն կհայտներ իր հեք հորը մասին ցուցուցած խնամքներուս համար։

Ե

Ես երջանիկ էի, մունջ ու անխառն երջանկությամբ մը։

Սերաֆիթան, իր աշխարհային կապերը ու պակասությունները թոթափած վրայեն, երազաշեն ու միանգամայն իրական կին մըն էր ինծի համար։ Անոր մահը՝ հալոցն էր, մերկացնող, զատող, հարազատող այս ոսկին՝ խառնուրդեն, ազնվական մնացողը պահելով միայն։ Միայն բան մը չէր կրցած հեռացնել անկե, պչրանքը. թերևս անոր համար որ առանց անոր՝ Սերաֆիթան կին մը ըլլալե պիտի դադրեր հրեշտակ մը դառնալու համար։

Գլուխ գլխի կ'ապրեի անոր հետ. հիմա ինե զատ ոչ ոք ունէր անիկա. պզտիկ նախանձ մը սակայն. երբ իր վոթկած աղջկան ձևերը կտեսնեի իր քալվածքին, իր ժպտելուն, իր գլուխը ծռելուն մեջ։

Հայրը ամեն օր մեյ մեկ պատմություն ուներ անոր վրա պատմելիք ինծի. ես՝ տպավորություններ միայն և հեռվեն նշմարված բաներ, որոնք մոտը ապրող մարդուն համար նորություններ են միշտ։

Մանրամասն գիտեի ա՛լ իմ սիրած կնոջս մանկությունը ու երիտասարդությունը։ Այս խոսակցություններուն մեջ անոր ամուսնության դժբախտ պատմությունը կու գար երբեմն. բաժանումը, ամուսնալուծման դատը, որուն մեջ էրկանը փաստաբանները այս կնոջ թեթև մեկ շարժումը՝ քրեական հանցանքի մը պես ցուցնելու հաջողեր էին. վերջապես գայթակղությունը որ ծամոցը եղած էր ամենուն բերնին։

Հայրը տաք ու պաղ տեսած ու երիտասարդությանը մեջ շատ մը հոգեկան տագնապներ անցուցած մարդ՝ կանուխեն հանգած էր ներողամիտ վարդապետության մը, որուն մեջ աղջիկը արդարացնելու դիտումը չուներ։

— Ես ալ,— ըսավ օր մը ինծի,— շատ տառապեցա սկիզբը իմ կնոջս երեսեն. ճիշտ Սերաֆիթան էր ան. անոր գեղեցկությամբը, անոր ուրույնությամբը ու անոր զարտուղությամբը։ Քսանհինգ տարու էի երբոր սիրեցինք իրար. իր ընտանիքը մեր ամուսնության ընդդիմանալուն համար՝ առևանգեցի զայն ու ամուսնացանք հեռու տեղ մը, գյուղի մը մեջ։ Երբոր գործերս հաջող կերպարանք մը առին, ամեն ոք զիս ծափահարեց. աներս և զոքանչս հոգի տալ սկսան վրաս. աշխարհքը, այն անիրավ ու ապուշ աշխարհքը, որ հաջողողներուն դարպաս կ'ընե միայն, իմ շուրջս բոլորվեցավ։

«Փերայի մեջ մեր երեկույթները ամենեն փնտրվածներեն էին, ու կինս՝ կիներու ամենեն շնորհալին։ Բայց իր գեղեցկությանը չափ անհաստատ ու թեթև էակն էր, զոր գովեստներն ու ականջն ի վար փսփսացված սիրո խոսքերը կհաջողեին ատեն-ատեն գինովցնել։ Սկիզբները շատ տառապեցա ու կխոստովանիմ, որ դժնդակ բան մը եղավ ինծի այն եզրակացությունը, որուն հասա և որ հիմա կճանչնամ թե ամենեն ուղիղն է։

«Ամեն չքնաղ առարկայի բախտն է ձեռքե ձեռք խլվիլ. գիտակցությունը չէ որ կմղե զայն, այլ իրմե անկախ բան մը՝ ճակատագիրը. զինքը պատասխանատու բռնելուն մեջ արդարություն չի կրնար ըլլալ։

Աստղ մը իր շավիղը պիտի գծե, թիթեռնիկը պիտի ոստոստե, գետը պիտի վազե երթա ու աղվոր կնիկը պիտի ժպտի ասոր անոր. կկարծեմ որ տխուր բան մը պտի ըլլա եթե խոժոռած ճակատ ու սրդոդած աչքեր դնենք գեղեցիկ կնկան մը երեսին վրա։ Կան որ փողոցին մեջ կ'անցնին միշտ խոժոռած ու գետին նայելով և, դիպվածով, եթե երեսդ ալ նային, զայրացած կերպարանք մը կ'առնեն. չեմ ախորժիր ատոնցմե. լկրտած խնդուք մը՝ ամենեն պարկեշտ, բայց կախ երեսեն նախամեծար կսեպեմ ես։

Իմ կինս, պչրասեր քիչ մը, միշտ իմս մնաց, անոր համար որ չունեցա իր թեթևություններուն դեմ այդ ծանր ու դաժան վարմունքը, որ ամենեն ջերմ սերերը կպաղեցնե։ Չորս տարի առաջ կորսնցուցի զինքը։

Հետո՝ աղջիկը միտքը իյնալուն՝ հառաչեց քիչ մը։

— Սերաֆիթաս ճիշտ իր մայրն էր. բայց էրիկը իմ ներողամտությունս չուներ, խիստ ու անգութ եղավ իր կնոջը դեմ. կ'երևա թե ասով պատվավոր մարդ հռչակվեցավ աշխարհի առջև։

— Ես պատասխանեցի իրեն,— պատիվը շատ ավելի բարձր, շատ ավելի մեծ բաներու մեջ պահված կնկատեմ. կնոջ մը՝ էրկանը հանդեպ հավատարիմ ըլլալը կամ ոչ՝ չեմ նկատեր իբրև իրական պատվո խնդիր մը, այլ այն եսական պահանջումներեն մեկը, որոնք առնական բնազդի ու կիրքի մը գոհացում կու տան։ Սեփականության խնդիրն է աս, որ անշունչ նյութերեն անցնելով՝ մինչև կնոջ վրա կծանրանա։

«Ես պատիվը մարդոց իրարու օգտակարության մեջ կտեսնեմ միայն. այն մարդը որ իր նմաններուն ամենեն ավելի օգտակարն է՝ ամենեն պատվավոր մարդն է ինծի համար»։

Հիմա, ամբողջ օրեր միասին կ'անցընեինք խոսելով Սերաֆիթային վրա, և այնպես մը որ իբրև թե դեռ ողջ եղած ըլլար անիկա. այս կամովին պատիր ու շինծու բանը հաճելի էր մեզի։ Բայց ծերունին երթալով կտկարանար ու գոհ էր այդպես հատնելուն համար։ Զմեռը չկրցավ տունեն ելլել. ամեն առթիվ բան մը կգտներ իր աղջիկը հիշելու համար։

— Թե որ ճանչցած ըլլայիր զայն՝ պիտի սիրեիր զինքը,— ըսավ ինծի օր մը։

— Արդեն կսիրեմ զինքը։

— Գիտեմ։

Առաջին անգամն էր որ Կոեսիս կ'ըսեր այս խոսքը, թեև շատոնց հասկցած ըլլալու էր իմ սէրս։

Ապրիլ ամսվան մեջ իր վիճակը ծանրացավ բոլորովին. բժիշկը ըսավ ինծի որ հազիվ քանի մը ժամվան կյանքը մնացած էր։

Խելքը գլուխն էր մինչև վերջը ու հոգեվարքի մեջ էր արդեն երբոր նշան ըրավ ինծի որպեսզի ավելի մոտենամ իրեն. երբոր քովը գացի, իրեն քաշեց զիս ու ճակատս համբուրելով մրմնջեց հազիվհազ լսելի ձայնով մը, որ իր վերջին բառը ու վերջին օրհնանքը եղավ.

— Փեսա՜ս...

<1901>

ԼՈՒՍԱՀՈԳԻՆ

Ա

Գեորգյան Նիկողոս աղան բանը գործը տեղը խույումճի մըն էր։ Հիսունին մոտ՝ ամուրի մնացեր էր, աշխարհ չմտած իր երկու քույրերը, Փեմպե ու Նեկտար հանըմները կարգելու սպասումին մեջ։ Շատ թախանձեր էին իրեն, բայց չէր հոժարած ոտնակոխ ընելու կանոնը որ կտրամադրե՝ թե եղբայր մը իր քույրերը ամուսնացնելե վերջը միայն կրնա ինքը ամուսնանալ։ Իսկապես կանոնի ու ավանդության մարդ էր, հավատացող անոնց սրբությանը ու օգտակարությանը։

Իրմե տարիքով պզտիկ եղբայր մը, որ իրեն չափ խղճահարության տեր մեկը չէր, ամուսնացեր էր. բայց ձախորդությունը ետեւեն հասեր էր իսկույն։ Քանի մը տարվան մեջ գրամագլուխը փճացեր ու սրտին ցավեն մեռեր էր մարդը, Նիկողոս աղային վրա ձգելով իր այրին ու մանչ զավակ մը։

Նիկողոս աղան ազդարարություն մը տեսեր էր այս վախճանին մեջ։

Պզտիկ տարիքեն հնազանդելու վարժություն ուներ, դաժան հոր մը՝ Գեորգ աղային — հոչակավոր բոլոր Զարշրին մեջ— անդիմադրելի կամքին տակ ճզմվելով շարունակ։ Այս հայրը, հիմա գերեզմանին անդիեն, տասը տարվան անցյալի մը անջրպետեն դեռ կ'իշխեր իր վրա, ամեն

խնդրի մեջ իր կարծիքը, լավ ևս է ըսել, իր հրամանը կ'արձակեր, ու Նիկողոս աղան կհնազանդեր անոր։

Տարակույս վերցնող ամեն բանի մեջ խույումճին իր հորը կոչում կ'ըներ և չէր ուզանար պատասխանը առնելու. ինչ որ ալ ըլլար այդ պատասխանը, Նիկողոս աղան կհետեր անոր, խիղճը թեթևցած, նույնիսկ եթե իր գործելիքը մաքդասպանություն մը ըլլար։

Ամեն անհատականութենե զուրկ այս մարդը գոհ էր այսպես ըլլալուն համար։ Տրված պատվերի մը ետեն ապաստանելով՝ իր գոյությունը ամեն փորձանքե և ամեն գատափետութենե զերծ պահելու գաղտնիքը գտեր էր։

Քատը-գյուղ՝ Մյոհյուքտարի կոզմը կբնակեր ան ու, առանց բացառության, ամենուն հարգանքը կվայելեր իր գեղին մեջ։

Իրենց տունը, էսնաֆի ավանդական տունն էր։ Միջին հարկին վրա էր ամենավուր սենյակը. սեսիրը ծայրե ծայր կգրավեր անոր ճակատը ու երկու դիեն պատերու շրջանը կ'ըներ ամբողջ, Ո տառը ձևացնելով մաքուր, ձյունի պես ճերմակ մատամբոլ ծածկոց մը այդ սեսիրին ու բարձերուն տամասկան նախանձոտ զգուշությամբ և ծայրահեղ խնամքով մը ամեն աչքե կպահեր և նույնչափ մաքուր մատամբոլե վարագույրներ, իրենց երկուքի ճեղքված թերթերովը, պատուհանները կգոցեին։ Զախ դին պատին հենած պոռին վրա հին օրերե մնացած մեծկակ ժամացույցը շատոնց չէր բաներ, բայց երկու ծայրանաձև փոքրիկ սյուներով բռնված բոլորակը անթարթ կերպով բացված աչքի մը պես կկենար, Գեորգ աղային աչքը կարծես։ Անոր երկու դիեն ապակիե ծածկույթի տակ նույն տեսակ զույգ մը ծածկույթներու տակ ալ հին արհեստական ծաղիկներե շինված պզտիկ զարդարանքներ. ասոնց ճիշտ առջին շիշ մը ջուր ու երկու դին շարված երկու գավաթներ ծուփ-ծուփ ծփալով իրենց ճառշեե շինված պզտիկ ափսեներուն վրա։

Ու իրիկունները, Նիկողոս աղան, իր հատուկ անկյունը նստած ծտիկ կ'ըներ օրվան լուրերուն զորս իր քույրերը կհավաքեին լվացարար Մարիամեն, որ ամեն տուն մտնել ելլելուն համար՝ ամեն բանի տեղյակ էր։

— Գիտե՞ս, Նիկողոս աղա, Պոյաճյաններուն աղջիկը կկարգվի կոր։

Միշտ ամուսնության լուրով մը կսկսեր շարքը, զոր Նեկտար հանըմ իրեն տունը մնալու անիրավությունը շեշտելու նպատակով առաջ կնետեր։

Հետո, տղուն և աղջկան տարիքին խնդիրը կուգար, ու հոս՝ վեճը կդառնանար։

— Ես սանկ աղջիկ մըն էի,— կ'ըսեր Նեկտար՝ ձեռքը տախտակամածեն թիզ մը վեր բռնելով,— անիկա ալ ինծի մոտ բան մըն էր։

Նիկողոս աղան չէր կրնար համբերել ասոր.

— Խե՞նթ ես ի՞նչ ես, Նեկտար հանըմ, ան պզտիկ աղջիկ մըն է, քսան տարու կա չկա։

Ու պառված աղջիկը կզայրանար, Բեմպե հանըմը վկայության կկանչեր։

Խոսակցությունը կկենար հոս, հետո կվերսկսեր։

— Նշանիկ աղային կնիկն ալ իր սիրողեն զատվեր է, ապնը ծախքին մեծ մասը, կնկան լաթերը մարդուն ստակովն է եղեր։

Ու գոհունակության հառաչանքով կ'ավելցներ.

— Հիմա ամեն բան հասցվեցավ, ես այդ կնկան հագվելուն խելք չէի հասցներ կոր։

Նեկտար հանըմը այսպես ամբողջ գեղին շրջանը կ'ըներ, դուռ-դուռ պտտցնելով իր քինախնդիր հոգիին ատելությունները, մեկու մը չխնայելով։

Ամեն գիշեր մինչև չորսը կտևեր ասիկա ու հետո ամեն ոք իր սենյակը կ'առանձնանար։

Բ

Նիկողոս աղան Փերա չէր երթար. բայց շաբաթը գիշեր մը բացակա կմնար տուներն։ Այսպես էր տարիներե ի վեր։ Նիկողոս աղային բոլոր պատմությունն էր ասիկա։

Դեռ քսան տարու տղա մըն էր, երբոր Զարշը ելավ ստակ վաստկելու։ Այն ամառը նոր դրացի մը եկավ իրենց մոտը։ Այրի կնոջմե մը ու երկու աղջիկ զավակներե կբաղկանար այս ընտանիքը. ունևոր էին, խոհարար մը և սպասուհի մը կպահեին ասոնք. մայրը երեսունհինգի մոտ, մեծակառույց աղվորություն մը ուներ և զվարճություն կսիրեր. իրենց գալեն երկու ամիս ետը արդեն բոլոր դրացիներուն հետ մտերմացած էր ու ամեն իրիկուն հյուրեր անպակաս էին անոնց տուներն։ Տարին մեկ երկու անգամ երեկույթներ ալ կու տային։ Նիկողոս աղային ծնողքին համար ճշմարիտ գայթակղություն մը եղավ այս դրացնությունը. նախ մանրամասն հարցուցին փնտրեցին անոնց ո՞րի կին, ո՞րի զավակ ըլլալնին, ո՞ւրկե գալերնին, նյութական կարողությունին։ Անոնց զվարթ ու խոլ կյանքը ճիշտ իրենց քիթին տակը, իրենց անմռունչ ու մռայլամած կենցաղին դեմ անճահ հեգնություն մը թվեցավ. հետո կինը, որ եկող գացող հյուրին ձեռքը կթոթվեր ու ժպիտը պակաս չէր ըներ շրթունքին վրայեն, աղջիկները, որ իրենց մորը վարքը ունեին, այս ամենը

վտանգավոր մերձավորություն մը կկազմեին և զգույշ կենալու պարտքը կդնեին Գևորգ աղայենց վրա։ Մեկ երկու հեղ հազիվ այցելության գացին. Բեմպեն ու Նեկտարը այս խնդումերևս ընտանիքեն բան չհասկըցան. Նիկողոսին համար՝ այդ տունը երջանկության կոչումի պես անդիմադրելի բան մը ուներ. անոնց անդրանիկ աղջիկը, Սոֆիկը, իր բարձրը ու նուրբ հասակովը, իր կապույտ և անույշ աչքերովը, ոսկի մազերուն ծփացող, վեսվեսող մետաքսովը զինքը բոլորովին գրավեց. ինքն ալ աղվոր երիտասարդ մըն էր, հազիվ վերբ շրթունքը պերեշտով մը մրոտած. երկուքն ալ իսկույն իրար սիրեցին, բայց Գևորգ աղային խոժոռ դեմքը շուտով այս լուսավոր պատկերը նսեմացուց։ Անիկա նախ սա իմացեր էր, որ նորեկ այրի կինը շատ զուրցված կնիկ մըն էր, միջոց մըն ալ իր էրկնեն զատվեր էր անոր կենդանությանը միջոցին, հետո ունեցած ստակն ալ չնչին բան մըն էր ու անոր հարուստի վայելող մրսխումը՝ աղջիկները ամուսնացնելու ունայն ճիգ մը միայն։ Այս վերջին տեղեկությունը մանավանդ Գևորգ աղային մնացած ակնածությունները փճացուց. էսնաֆները միշտ վարժված են խոնարհելու իրենցմե հարուստներուն առջև ու ամբարտավան ըլլալ՝ իրենցմե նվազ ունևորներուն դեմ. Գևորգ աղան հիմա, գուշակելով կարծես Նիկողոսին սերը, դեմը ելլողին կ'ըսեր.

— Ես զավկներուս՝ զուրցված կնկան աղջիկ չեմ առներ։

Նիկողոս այս կտրուկ ու զարհուրելի վճռին առջև ընկճված մնաց. բայց շատ ուշ էր արդեն. երիտասարդը մեռնիլը ավելի դյուրին գտավ քան թե հորը կամքին դիմադրելը. հիվանդացավ. քիչ մը վերջը իրենց դրացիներն ալ հեռու փողոց մը՝ Փուշ Տիլիի կողմերը գացին։ Ատեն անցավ վրայեն, բայց երիտասարդը աղեկնալուն պես վազեց Սոֆիկին քով նորեն։ Հիմա գաղտնի, գիշեր ատեն, պարտեզին դրան քով իրար կգտնեին։ Հետո՝ տեսնելով որ Սոֆիկի մայրը նեղության մեջ էր՝ Նիկողոս հոժարությամբ ձեռնտու եղավ, անոր ապրուստին օգնեց։ Ալ դռան առջև չէր սլքտկար, տուներնին կ'երթար հորմեն գաղտնի միշտ. անոնց բոլոր հոգերը կստանձներ ու անձվիրությամբը ինքզինքը ա՛լ ավելի կսիրցներ։ Երկու տարի տևեց ասիկա, օր մըն ալ Սոֆիկին մայրը անկողին ինկավ մեյ մըն ալ չելլելու համար. սաստիկ թոքատապ մը ութ օրվան մեջ գերեզման տարավ զինքը։ Նիկողոս ամեն օր միջոց գտավ հիվանդին տունը երթալու, խնամելու զինքը, բանի մը կարոտը չզգացնելով անոր։

Հոգեվարքի մեջն էր՝ երբոր հիվանդը իր զավակներուն մտածեց։

— Ես կեցեր եմ,— ըսավ Նիկողոս։

Այս սփոփանքով մեռավ հիվանդը։

Գ

Ամուսնության մը պես ու ամուսնութենե ավելի բան մը եղավ ասիկա երիտասարդին համար. իր գաղտնի սիրույն ու խոստումին տերը մնաց. Սոֆիկեն զատ ուրիշ կին չճանչցավ աշխարհի վրա. ուխտ մը ասկե ավելի սրբությամբ չպիտի պահվեր։

Ասանկով՝ իր դատողության անձուկ շրջանակին մեջ կհաշտեցներ իր սերը՝ հորը դեմ ունեցած հնազանդության հարկին հետ. հայրը իր ամուսնությունը չէր ուզեր այս աղջկան հետ. ինք ալ չէր ամուսնացած ահավասիկ. բայց կրնար հարկավ, հիմա որ կատարյալ երիտասարդ՝ գրեթե չափահաս մարդ է, կին մը սիրել, և այս իրավունքով Սոֆիկեն չզատվեցավ։

Իր վաստակեն մաս մը, այնչափ միայն, որ հորը մանրապնին հաշիվներեն ճարտարությամբ կփախցներ, անոր և քրոջը ապրուստին հատկացուցած էր։ Հետո ուրիշ նախապաշարում մըն ալ կապեր էր զինքը այս կնոջ. իր գործը, առուտուրը օր օրի ավելի հաջող, ավելի շահավոր դարձեր էին. մինչդեռ իր արհեստակիցներեն շատեր հետզհետե կ'աղքատանային, կփճանային։ Մեռնող կնոջ հանդեպ սառանձնած հանձնառության դեմ՝ նախախնամության կողմե եկած փոխարինություն մը կնկատեր այս բախտավորությունը։

Օր մը միայն, և այդ օրը շարունակ կհիշեր, Սոֆիկ իր ծոցվոր ըլլալը իմացուց իրեն. զավկի մը մերձավոր ծնունդը տեսակ մը հրապարակային հանգամանք կու տար իր այնքան խնամով գաղտնի պահած սիրույն։ Այն ատեն իր շվարումին մեջ այդ զավակը չքացնելու համար դեղ ու դարման փնտրեց, բայց բնությունը անոր բոլոր հնարքները ի դերև հանեց, ու երբոր օրին մեկը զավակը ծնավ, ուրախացավ իր հնարքներուն ապարդյուն մնալուն։ Բայց այս ուրախությունն ալ խիստ վաղանցուկ բան մը եղավ. իր կյանքը հետզհետե նոր շփոթություններով, նոր դառնություններով կլեցվեր։ Երեխային կնունքը մեծ գործ մը եղավ, ո՞ւրկե կնքահայր գտնել, որո՞ւն խոստովանիլ իր գաղտնիքը. վերջապես մկրտությունը եղավ և իրիկունը անոր մայրը ըսավ իրեն, թե իրենց փոքրիկ Արամը արձանագրվեցավ ժամուն տոմարներուն մեջ իբրև «եկեղեցվո զավակ»։

Երբոր իր հայրը, Գևորգ աղան, օր մը հանկարծ մեռավ սրտի կաթվածե, Նիկողոս աղան արդեն մեկզմեկե աղվոր երկու զավկի հայր էր ինքն ալ։

Որքան ալ գաղտնի պահած կարծեր իր կենակցությունը, շատերը իմացեր էին ասիկա։ Այն վրան գլուխը շնորհքով մարդը որ ատեն մը

ցերեկները միայն և վերջն ալ շաբաթը գիշեր մը Սկյուտար կու գար Սոֆիկ հանըմին տունը, նախ ազգական մը կարծվեր էր դրացիներեն. բայց այս ենթադրությունը շուտով մեկդի եղած էր։ Քանի մը ընտանիքներ Սոֆիկ հանըմին երթալ գալը դադրեցուցեր էին՝ չզիջանելով պահծու կնկան մը հետ տեսնվիլ։ Անիկա սակայն իր զավակները խնամելու, մեծցնելու ետևեն էր միայն. իր չքացած կյանքին վրա ափսոսալով չէր դառնացած սիրտը. շատեր իր գեղեցիկ կնոջ հրապույրներուն հետամուտ եղած էին առանց հաջողելու. հարկավ կփափագեր որ այդ մարդուն հետ, որ վերջապես իր ճշմարիտ էրիկն էր աստուծո առջև, եկեղեցվո պսակովն ալ ամուսնանար, գոնե իր զավակներուն առջև ամոթահար չմնալու համար, գոնե անոնց անուն մը ձգելու համար։ Բայց Նիկողոս աղան միշտ խուսափեր էր ասկե։ Դպրոցին մեջ իր տղաքը՝ Արամը ու Գևորգը՝ մորերնուն մականունովը հիշվեր էին։ Երբոր խելամուտ ըլլալ սկսան անոնք, ուրիշ հոգ մը իր մայրական մտմտուքներուն վրա ավելցավ. պետք էր իր տղոցը առջև անուն մը տալ այն մարդուն, որ շաբաթը մեյ մը իրենց տունը կուգար։ Նիկողոս աղան մորեղբայր մը եղավ ուրեմն, և քիչ մը ատենի համար այս հնարքը հաջողեցավ։ Հետո, ուրիշ կսկիծներ եկան. օրին մեկը Արամ դպրոցեն լալով տուն դարձավ. կռիվի մը միջոցին տղաքը փիճ–փիճ պոռացեր էին իր երեսին ու հալածեր էին զինքը. վարժապետն ալ՝ փոխանակ պաշտպանելու՝ վռնտեր էր զինքը։ Անկե վերջը այդ նախատինքը տեսակ մը սովորական մակդիր եղած էր Արամ[՝]ա այնքան որ ստիպվեր էին զայն դպրոցեն հանել։

Դ

Հորը մեռնելուն՝ Նիկողոս աղան քառասունը անցուկ էր արդեն, դպրոցական տղու մը հնազանդ ու կրավորական դերին մեջ փճացած։ Մայրերն ու հայրերը «շնորհքով», «խոսք մտիկ ընող» զավկի օրինակ ցույց կու տային այս աղեբեկ մազերով մարդը, միշտ սև կամ մութ գույն զգեստներ հագած, ամառ ձմեռ չհանելով կոնակեն փաստրսյուն զոր իր տարիքեն եղող մարդու մը համար անհրաժեշտ կկարծեր։ Օձիքը վար դարձած ճերմակ շապիկին սև բրավաթ երբեք չէր փոխվեր։ Իր առուտուր ըրած խանութեն գիտեին անոր հաստատատիպ ճաշակը ու ներս մտնելուն, սովորաբար ծնունդեն կամ զատկեն քանի մը օր առաջ, առանց հարցնելու կպատրաստեին իր ուզածը, հոս իր զգեստները, հոն վեց ձեռք շապիկ, երկու բրավաթ, ձմեռը երեք հատ լավ տեսակ բուրդե ֆանելա և վեց հատ գուլպա, ամառը բամբակե։ Նոր լաթ հագնող տղու մը

պես կհրճվեր այս ամենը գնելով, միակ ուրախությունը իր բովանդակ կյանքին, որ անխափան կերպով տարին երկու անգամ կկրկնվեր։

Գևորգ աղային մեռնելեն ի վեր, տանը մեջ անոր տեղը բռնելու կոչվելուն՝ նախ բոլորովին շվարեր մնացեր էր ու ապարդյուն ջանքեր ըրած էր իր հլու ու ծռած ողնաշարը շտկելու համար։

Միջոց մը կարգվելու գաղափարը մտքեն անցավ։ Սոֆիկ հանըմ այնքա՜ն շատցուցեր էր թախանձանքը, որ Նիկողոս աղան պահ մը համոզվեցավ պսակվելու հետը։ Իր խոստովանահայրը՝ մաքուր ու պարզասիրտ քահանա մը՝ ան ալ խրատեց Նիկողոս աղան։ Բայց տունը խոսքը բանալուն՝ ամեն բան տակնուվրա եղավ։

Նեկտար հանըմ մեղմ ու հեղ ձայնով մը զգացուց, որ հորը անեծքը պիտի հասներ անոր վրան, թե որ ատանկ բան մը ըներ. հետո, դեռ իր քույրերը չկարգած ինքը կարգվելու ելլելը չտեսնված բան մըն էր. մյուս եղբայրը կարգվեր էր ահա և գլխուն եկածը տեսեր էին. նորեն ինքը գէտեր. հարկավ կարգվելուն պես՝ գալիք հարսը պիտի վռնտեր զիրենք տունեն և երկու խեղճերը պիտի մուրային կամ Հիվանդանոց պիտի երթային, բայց տանը մեծն էր ինքը և անոր հրամանին հնազանդելու պարտավոր էին իրենք։

Նիկողոս աղան այս խոսքերուն դեմ պատասխանելու բան մը չկրցավ գտնել. հորը խոժոռ դեմքը պատկերացավ իր աչքին առջև, հայրը նստած սա դեմի անկյունը, ճիշտ դեմը. ու այս վերհուշումով չկրցավ խոստովանիլ ոչ իր հին սերը, ոչ իր զավակներուն գոյությունը։ Ներսիդիեն իրավունք տվավ իր քրոջ ու՝ ամեն վարանամիտ մարդու պես՝ հարմարագույն ժամանակի մը թողուց այս անել վիճակին կարգադրությունը։

Նիկողոս աղային գործերը ալ ավելի աղեկցեր էին հիմա. Ջարշրին մեջ խոյումճիներուն էն հարուստներեն մեկն էր, Լոնճայի մեջ անդամ, իր գեղին Թաղական խորհուրդին մեջ գանձապետ էր։

Իր եղբորորդին, չափահաս պատանի մը, իր առուտուրին մեջն էր։ Որքա՜ն երջանիկ պիտի ըլլար թե որ իր բուն զավակները, հիմա երկու հրեշտակի պես տղաքներ, իր քովը ըլլային. բայց կխորհեր, որ բարոյականի դեմ պիտի ըլլար ասանկ բան մը ընելը։ Ու Նիկողոս աղան իր վարանումին մեջ մնաց։

Ե

Հորը պես ինքն ալ օր մը հանկարծակի, սրտի կաթվածեն, ժառանգական ախտեն մեռավ։

Եկեղեցին ու ժողովուրդը տակնուվրա եղան այս մարդուն հուղարկավորությունը ընելու համար։

Հուլիսի մեջ կիրակի ցերեկ մըն էր։ Ժամուն բոլոր զահերը ու մոմերը վառեցին, վարդապետները ու տերտերները հրավիրվեցան ու եպիսկոպոս մը գտնվեցավ, որ պատվավոր մարդու իբրև տիպար մեկը ներկայացուց ննջեցյալը։ Ապաքեն ժողովուրդին կարծիքն է որ պատիվը՝ ոչ այնքան կարգե ու կանոնե իրոք չշեղելու, քան թե շեղումները չցուցնելու, պարտկելու մեջն է։

Ոչ ոք աշխարհիս վրա Նիկողոս աղայեն ավելի կյանքին մեջ իր թերացումները պահած էր. ամբողջ ընտանիք մը քայքայեր, իր հարազատ զավակներուն ոչ միայն ապրելու նյութական միջոցները՝ այլ անուն մը ձգելու չէր հոժարեր. ատոր համար ու իր հանցանքը ատ տղոց վրա ձգելով փախեր էր աշխարհեն։ Ընկերական նախապաշարյալ կարծիքը ոչինչ կրնար ուզել իրմե ասկե ավելի։

Հանրության առջև իր վայելած հարգանքեն բան մը պակսած չտեսնելու համար շարժած էր միշտ անիկա, իր բովանդակ կյանքին մեջ. իր կամքե զուրկ մարդու նկարագիրն ալ մնացածը ըրեր էր։

Կամաց-կամաց կտանեին դագաղը այս մարդուն, որ իր հանցանքին բոլոր ահավորությամբը կարծես թե ծանրացած էր այս պահուս։

Հետո, մեռելակիր մարդիկ Ֆոլոնեի ջուր սրսկել սկսան դագաղին վրա. անոր շատ մոտեն գացողները թաշկինակին քիթերնուն տարին. դիակին նեխումը սկսած ըլլալու էր, վասն զի գարշելի հոտ մը, ամեն ջանքերու հակառակ կծավալեր, դուրս կ'ելլեր գոց սնտուկին շորս դիեն։

Ու այս ապականությունը, զոր կարելի չէր ըլլար ահավասիկ պարտկել, այս մարդուն վախճանին խորհրդանշանը կթվեր, ամեն եսասեր կյանքի վերջանալուն խորհրդանշանը, իսկույն ժայթքելով դուրս, գերեզմանի մը մինչև մուտքը հասնելուն իսկ չսպասելով։

Հիմա գարշահոտությունը կասստվանար, այս աղվոր կիրակի օրը աղտոտելով. ապահովապես ներքին ազնվանահոսություն մը պատահած ըլլալու էր. մեռելին տերերը թե՞չ ընելիքնին չէին գիտեր ալ. եկեղեցիին առաջին կարգի թավիշե ծածկոցը՝ իր արծաթափայլ լայն խաչովը փռված այս դիակին վրա՝ բոլոր համակրությունները որ այս մարդուն կ'ուղղվեին, չէին հաջողեր այս թարախի ու շարավի կույտին պղծությունը նվազեցնել։

Ցերեկվան մաքուր ու պայծառ արևը վերեն կ'իջներ ամենուն վրա, իր ճշմարտության հստակ լույսովը ողողելով այս պատիր մարդոց տղայական շարժումները, հեգնելով անոնց մութ ու շինծու խղճմտանքին կարգն ու սարքը։

Ընտրյալ բազմություն մը հետևեն կ'երթար. ամենքը միաբերան անոր գովեստը կու տային. շարախոս մը որ անպակաս է ասանկ հավաքումներու մեջ. փսփսաց որ լուսահոգին երկու զավակ ուներ, երկու զավակ զորս չէր ճանչցած. ամենքը լսեցին ասիկա. բայց այդ բազմության աչքին՝ ճիշտ այդ զավակները չճանչնալուն մեջ կկայանար այս մարդուն պատվավորությունը. երես չտվին ու ծուռ նայեցան այդ շատ գրոցին։

Կհիշեմ հետո դատը, որ ծագեցավ այս մարդուն մահվենեն վերջը։

Սոֆիկ հանըմ իր սուգը պահեց, բայց զավակներուն իրավունքները պահպանելու մեջ չթերացավ. նախ Թաղական Խորհուրդին, հետո Պատրիարքարան գնաց, իր զավակներուն ի՞նչ ըլլալիքը հարցուց. ամեն տեղ իր լրբությանը վրա զարմացան. ի՞նչպես ս. պսակը չտեսնող կին մը՝ ամուսնական և մայրական իրավունքներու թեկնածու կ'ըլլա. վոնտեցին զինքը. ճարը հատած այս մայրը Նեկտար հանըմին լուր ղրկեց. անոր եղբայրը իր զավակներուն հայրն էր ու մեծ հարստություն մը ձգած էր. այդ զավակներուն համար օգնություն մը ուզեց։

Նեկտար հանըմ խոսքը ուրիշեն փոխ չէր առներ. պատասխան տվավ որ անոր փիճերը նայելու պարտք չուներ. այն ատեն Սոֆիկ հանըմ դատարան դիմելու ելավ։ Ժողովները ու դիվանները իրար անցան իսկույն, պահպանելու համար ամուսնության նվիրականությունը, որ վտանգի տակ ինկած կ'երևար իրենց աչքերուն։

Բայց արդարությունը այս կնոջական վայնասուններուն առջև տեղի չտվավ։

Դիպվածով ներկա գտնվեցա Մեծ Զարշիի դուռը, երբ Շերիի պաշտոնյաներ հանգուցյալին սենյակը կկնքեին. իրիկվան ուշ ատեն էր ու մութը կ'իջներ տակավ, քարակոփ կամարներուն տակ կթանձրանար. խույումճիները եկեր հավաքվեր էին այնտեղ։

Նեկտար հանըմը իմացեր, վազեց հասեր էր հոն՝ լեզու ու բերան կտրած. բոլոր էսնաֆությունը իր ավանդական մոլոր վարդապետություններովը, կեղծիքով ու շահով շինված բարոյականովը, այս պառված աղջիկով կներկայանար, հայերեն-տաճկերեն խառն ի խուռն հիշոցներով լեցուն լեզվագարությամբը։ Կխոսեր ան, պաշտոնյաները համոզել կջանար. ու անոնց անկարեկիր ու անտարբեր դեմքեն չկրնալով քաջալերություն գտնել, հոն ժողվված արհեստավորներուն կդառնար, վկա կոչելով զանոնք իր դատին արդարությանը, քրտնաթոր, լեզուն դուրս ինկած, գրեթե հեկեկալով։

— Ես Նիկողոս աղային հարազա՞տ, էսգ քուրն եմ. կճանչնաք խույումճի Նիկողոս աղան։

Բազմությունը կմոտենար, հետաքրքիր կեր մը դիտելու, վեճի ունկնդրելու համար։

— Հորմես մնացած է այս բոլորը,— կպոռար անիկա,— Գևորգ աղայեն. եկեր ախպորս սենյակը կկնքեն, ի՞նչ իրավունքով. ես ու քույրս, մեյ մըն ալ եղբորս զավակը ժառանգորդ ենք. այս է օրենքը. հիմա ելեր սուտ զավակներ կհնարեն կոր. աս ի՞նչ անպատվություն իմ ախպորս. լուսահոգին աղա մարդ էր, անանկ բան չէր ընդուներ։

Հետզհետե ծանրացող մթության մեջ՝ դեմքը չէր տեսնվեր, բայց ձայնը՝ հեղձամղձուկ, խղդվող, անհետացող մոլորանքի մը պես, վերջին անգամ նոր ուժով մը լռության մեջ կթնդար, կամարե կամար կթռչտեր։

Հոն եկողներեն մեկը խոսքի խառնվեցավ.

— Ես աղեկ գիտեմ որ Նիկողոս աղան երկու զավակ ունի։

— Զավա՞կ մի ունի, փիճե՞ր չըսե՞ք սըվոնց, ո՞վ կճանչնա ատոնք...

Հուզմունքեն՝ ձայնը կդողար ու պաշտոնյաներու ձեռքեն կբռներ կնքելու գործողության դիմադրելու համար։ Մեղմիվ, մարդիկը մեկդի կ'ընեին զինքը, համոզելով, որ իրենց պարտքը կկատարեին ամեն բան կնիքի տակ դնելովնին, թե այդ գործողությունը մեկու մը իրավունքին վնաս չէր տար։

Բայց Նեկտար հանըմ կհամառեր, կ'ընդվզեր՝ իր կամքը ոեէ կերպով քալեցնելու վարժությանը մեջ վիրավորված, ու իր գեր ու կարճ հասակովը պատվարի մը պես կենալով երկաթե դրան առջև, անոր մուտքը արգիլելու գերմարդկային ջանքով մը ու ցասմնակոծ ատելությունը դարձնելով անոնց, որ այս դատը կ'ընեին իրեն դեմ։

— Այո՛, փիճեր, պարզ փիճեր անոնք...

Հետո մարելիք մը եկավ վրան, երեսը կապուտցավ, ծոմրտկեցավ. ջուր զարկին ու աթոռի մը վրա նստեցուցին զինքը. աչքերը գոց էին, բայց շրթունքը դեռ քիչ մը ատեն երերացին՝ շարունակելով թոթովել նախատինքը, մինչև որ գոցվեցան։

— Իջվածք է,— ըսին հոն գտնվողները։

Ու նորեն ժառանգությունն էր, ախտի ժառանգությունը այս անգամ, որ ստացվածքի ժառանգությունը այդքան սաստկությամբ պահանջող այս երիտասարդը միանգամ ընդմիշտ գոհացուց։

<1901>

ՄՇՄԱՅԻԴ ԲԱՐԵՎ ԸՐԵ

Ա

Թարգմանչաց վարժարանին հիշատակներես ամենեն քաղցրը՝ պատուհան մըն էր, Թաշ Վերտիվենեն պատուհան մը։

Փողոցի դրան քովեն եղրևանի մը կբարձրանար կտարածվեր տանը երեսին, հինցած տախտակներուն գունաթափ ներկին վրա, հազար ու մեկ ճյուղերով, որոնք հետզհետե հեռուն երթալով կնրբանային, իրենց ելևէջներուն, գիրկընդխառնումներուն հետ պտտցնելով կանանչ տերևներու և կապույտ ծաղիկներու կոհակներ։

Մենք այդ ծաղկի ու տերևի, գարնան ու երջանկության շրջանակին մեջեն կտեսնեինք միշտ իր հիանալի դեմքը, մազերը՝ ցիրուցան իր եղրևանիին պես, և սև սիրուն աչվրները՝ որոնք կժպտեին մեզի՝ երբ իրիկվան արձակուրդին կ'անցնեինք փողոցեն, դասի տետրակները թևերնուս տակ, ապագայի հիմար երազները գլխնուս և որ ավելին է՝ սրտերնուս մեջ։

Կժպտեր մեզի, մեր դպրոցականի հետաքրքիր ու պահանջող ակնարկին փոխարեն, կխնդար փողոցին այս պատանի անցորդներուն որոնք ա՛լ մտերիմները, պաշտողներն էին իրեն։

Սորված էինք անունը՝ գեղեցի՞կ, տարօրինա՞կ, իր դեմքին պես. կհիշեմ որ մեր բանաստեղծական առջի փորձերուն մեջ ինքը եղած էր խռովիչ մտատիպարնիս։

Հայր Արսենի ազատ մեծաչափ տողերեն սկսած մինչև հինգ ոտքով անձուկ ոտանավորներու մեջ սիրեցինք ու երգեցինք զինքը, սիրահարական գրագիտություն մը, որուն մեջ Թերզյանի դասերը իր անուշ նայվածքին կխառնվեին ամեն ատեն։

Հիմա այդ պատուհանը փակ է, այդ տունը կիսակործան ու թափուր՝ մեր սրտերուն պես։

Միայն՝ եղրևանին կ'աճի, կտվարանա միշտ. ծառ մըն է հիմա. ամուր ու հաստատ բունին կոթնած՝ մինչև տանիքը հասցուցած է տերևներուն կանանչ սաղարթները ու ծաղիկներու գլխահակ գանգուրները. իր ճյուղերն ու ընձյուղները՝ անհուն տարփանքի մը, ջիղերու մշտնջենական երիտասարդության մը գալարումները, պրկումները ունին, և ծերությունը, այս ծառին մեջ, ամեն գարնան՝ մոլեգին, ախտավարակ ծլումներով, ծաղկումներով աչքի կզարնե։

Բ

Սերվինազ մեկունը կամ մյուսինը չէր, հայտնի կ'երևար որ կսիրեր մեր Դ. կարգը իր հոգիին պես. հա՞րկ է ըսել, որ ինքն ալ մեր Դ. կարգին պաշտեցյալ հոգին եղավ միշտ։

Իր ժպիտը՝ ամենուն վրա բաժնվելով չէր տկարանար, պզտիկնար, անբավական դառնալով առանձինն ամեն մեկերնուս. ո՛չ. այլ կերպով մը իր գավակներն էինք, որոնց վրա հավասարապես կտարածվեին իր գորովը ու խանդաղատանքը՝ վառ ամենուս համար ալ։

Թերևս մեր անձերը չէր սիրեր այլ մեր պատանությունը, մեր թիվը, մեր դարտուղությունը։

Երբեք իրարմե չնախանձեցանք զինքը. ոչ ալ իր ընտանիքը ընդմիջեց մեր անմեղուկ տարփանքին քաղցրությունը. տասներեք տասնչորս տարու պատանիներ՝ լուրջ թեկնածուներ կամ վախնալու տարփավորներ չէին անշուշտ. բայց կրնամ վստահությամբ ըսել, որ ամենքիս ալ այդ պահուն հոժարափույթ պիտի ամուսնանայինք իրեն հետ, թեև ութը, տասը տարու մեծ եղած ըլլար մեզմե։

Այս սերը՝ Դ. կարգին ուսման ծրագրին մասը կկազմեր, քաղցրացնելով անհատնում դասախոսություններով լեցուն օրերնիս. իր հրապուրիչ դեմքը կառավարչին ժանտ ու թթված երեսին դառնությունը կմոռցներ։

Այսպես հնչտիվ բոլորեցավ տարեշրջան մը որ չպիտի վերսկսեր, Թարգմանչաց վարժարանի խանգարմամբը։ Դ. կարգը՝ այնքան հոծ, այնքան սերտիվ կապված, մեկ սիրտ, մեկ հոգի չմնաց. ամենքը ցրվեցան հոս հոն, ամբողջացնելու համար կիսկատար ուսումնին, ապագա մը շինելու, ընկերական գոյություն մը պատրաստելու հետամուտ։ Անհունական հաշիվներու ֆորմյուլներուն և Քեփլերի օրենքներուն մեջ մոռցանք Սերվինազն ու իր եղրևանիով գոցված պատուհանը։

Գ

Ինքը չմոռցավ մեզ. հինգ տարի վերջը, երկրաչափի վկայականս առնելե ետքը, տոնախմբության երեկույթի մը մեջ հանդիպեցա իրեն. նույնը մնացեր էր իր հրաշալի գեղեցկությունը, և բազմության մեջ իր գլխու շնորհալի շարժումեն անմիջապես ճանչցա Սերվինազը. պարողներու կրկին շղթայով մը շրջապատված էր. ես՝ արդեն հեռու աշխարհիկ երիտասարդ մը ըլլալե, ավելի վայրենացած իմ չափի ու հաշվի

մարդու վերացումիս մեջ, արհամարհանքով կնայեի այդ փերեւեթիկ տղոց, հեռվեն կ'ունկնդրեի այն փուճ ու սնոտի խոսակցությանց, որոնցմով օրիորդին քով ամեն ոք իր նրբամտության չափը կու տար։

Ակամա մի՛տս կհաշվեր (հաշվի մարդու ունակություն մը) արժեքը այդ տղոց, այդ ծեքծեքումը, այդ սեթևեթ շարժումները, և գումարս՝ անհունապես փոքրի, զրոյի, ոչնչության կու գար կհանգեր։

Սրահին լույսերուն մեջ Սերվինազ կճաճագայթեր, մաքուր հագված, ձեռնոց դնող երիտասարդներու թևը մտած. որչա՜փ կփափագեի խոսիլ հետը. ի՞նչ պիտի ըսեի եթե երբեք համարձակեի մոտենալ իրեն. հինգ տարի առաջվան մեր պատուհանի մտերմությունը կբավե՞ր հանկարծ քովը երթալու, հոս այս մարդոց մեջ, իբրև թե ընդհատված խոսակցություն մը շարունակելու ձևով։

Սերվինազը դիտելով իր գեղեցկության հաղթանակին մեջ, կհիշեի Թաշ Վերտիվենի պատուհանը, եղրևանիի կապույտ խոզոպները և մեր անմոռանալի Դ. կարգը, որուն մնացորդն ու ներկայացուցիչն էի այստեղ. և այս պահուս միտքս կու գային մեր քերթվածներեն տուներ, ամբողջ հավաքածո մը, որուն մեջ իր անունը կկրկնվեր միշտ անուշ արձագանքի մը նման և զորս ներշնչող աստվածուհին ահա դեմս է, հո՜դ, այդ ապերախտը՝ որ զիս չի ճանչնար հիմա։

Սրահը կթողում սենյակի մը անկյունը քաշվելու համար և ահա շրջազգեստի շրշյուն մը կլսեմ ետիս. ինքն է. աճապարանքով կմոտենա ինծի. կ'երևա թե շատ ատեն չունի կենալու։

— Ի՞նչպես ես, աղե՞կ ես։

Կսիրեմ այս պարզ ու եղակի ձևը, որ պաշտոնականի չի վերածեր մեր տեսությունը. կզգամ որ միշտ մեր Դ. կարգին Սերվինազն է։

Լրջաթույր ձեռնոցին թաթիկներովը կշոյե երեսս։

— Մեծցեր ես։

Ինքը ապահովապես ավելի երիտասարդացած էր։

Հետո, մտերմաբար, տասը տարվան բարեկամի մը պես, շարժելով իր աղվորիկ գլուխը, ու վեր առնելով սաթի պես փայլուն մազերեն մաս մը որ ճակտին վրա կ'իյնար, շուրջը կդիտե անգամ մը, գողունի նայվածքով, կաթնա նախանձոտ աչքերե գաղտուկ՝ սիրո ապացույց մը տալու համար ինծի, ան որ այն ատեն զոհ սիրտով ինծի կգանգատ.

— Միայն համար հոս եկա. մարդ չտեսնա, ջո՜ւտ, միկտա մը տուր։

Դ

Այդ գիշերեն զատ մեյ մըն ալ չտեսա զինքը։

Այն միայն իմ դասընկերներես, որ միշտ հետևեցավ իրեն՝ ինձմե տարիքով ու սրտով մեծ երիտասարդ մըն է։

Երկուքն ալ ձախորդությանց զուգահեռական գիծով մը շարունակեցին ճամփանին. Զարեհ չմտավ երբեք այն ուղին ուրկե խղճահարություններե զուրկ ապիկարությունները կհառաջդիմեն. գործի մարդ չեղավ բնավ. իր հոգին՝ մաքուր, միամիտ ու երիտասարդ մնաց։ Դպրոցեն ելլելուն՝ վաճառականի գրագիր եղավ և գրագիր մնաց մինչև վերջը. դպրոցին մեջ ամենես հառաջադեմն էր, բանաստեղծ մըն էր. հոս՝ վաճառատան ահագին մաշտոցներուն դեմը՝ ապշած, օրն ի բուն կքելով, խոնարհելով անբանի մը աշխատության տակ, դեռ ատեն կգտներ իր գրական փորձերը, պատրանքները շարունակելու։

Զորպաճին Արևելքի մեջ կարդալով Զարեհի ստորագրությունը, կզարմանար, կնախանձեր իր յազբնիին գրական կարողության և համբավին վրա. գրպանը ստակ մը չունեցող մեկը զոր ամեն ոք կճանչնար, մինչդեռ ինքը՝ էֆենտին, հարուստ ըլլալով հանդերձ, անծանոթ կմնար. և հաջորդ օրը Զարեհին դեմ կդառնար իր զայրույթը, կդիտեր սեղանին վրա ծռած գրագիրը, ջանալով աչքին պոչովը գուշակել անոր գրության նյութը, վախնալով որ իր վճարած աշխատության մեջեն մաս մը չգողնա. և այս հեռատեսությամբ առաջուց կհանդիմաներ զայն.

— Արևելքին զբ զբ հոդված գրելուդ սա սոն պիլանչոն լմնցուր։

Այս հաշիվներուն մեջ Սերվինազի պատկերը, դպրոցական օրերուն սերը, անբաժան կմնար իր սրտեն, որուն վրա կարծես հիմա պատատուկ տունկի մը պես երթալով կփաթթվեր։

Չէ՜ր վշտացեր Սերվինազի ամուսնության լուրը առնելուն. թերևս երջանիկ ըլլար այդ ամուսնությամբ. Զարեհի սերը անձնուրացության կմոտենար հիմա. բայց այս ամուսնությունն ալ ահա աղետավոր ու դժբախտ միություն մը եղած էր. հիվանդության, չքավորության շերջան մը։

Հիմա երիտասարդը ալ ավելի կհամառեր, անդրդվելի կմնար իր սիրույն մեջ։ Տարօրինակ տեսարան մըն էր այս տղուն կյանքը, որ իր տոմարներուն մեջ թաղված, հավատարիմ իր առջի սիրույն, դեռ այս կինը կ'երազեր ու անոր կցանկար ամեն վայրկյան. ոչ ամուսնությունը, ոչ չքավորությունը, ոչ գեղեցկության կորուստը մազի չափ չէին դգրդած և տկարացուցած իր սիրույն հաստատուն ու զորավոր շենքը։

Վեհանձնության, ասպետական հավատարմության պարտք մը կհամարեր ձախորդության, անկման ժամանակ չլքել իր սիրույն առարկան. ընդհակառակը՝ վաճառատան մեջ զինքը շորս կողմեն շրջապատող ապշեցուցիչ թվանշաններուն մեջ՝ իր բանաստեղծի երևակայությունը կգրգռվեր։

Գրչին տակն էին այն մեծամեծ գումարները, որոնք վայելքներու աշխարհներ կնշանակեին. հարյուր հազարավորներ իրարու վրա բարդելով կամ իրարմե զեղչելով ոսկիի դեղեր կխառներ իր տոմարներուն մեջ, ինչպես միջին դարու ալշիմիսթ մը իր ատրաշեկ հալոցին մեջ։ Օրն ի բուն գրչի մեկ հարվածով կհարստացներ կամ կփճացներ այն հեք արարածները, զորս ինք ստեղծած ու կնքած էր Մայր-Հաշիվին ամեն մեկ էջին գլուխը, Ընդհ. Ապրանք, Սնտուկ, և որոնց վրա, ամենահզոր նախախնամության մը նման, կխրոխտար։

Ի՞նչ կ'ըլլար եթե այս բոլոր հիացուցիչ գումարները, որոնք իր գրչին տակեն կ'անցնեին շարունակ, մարմին առնեին հանկարծ, շքափորության մատնվող սիրուհի մը ընծայելու արժանի կյանք մը շինելու համար։

Ե

Քարլա-Պաշրի անձուկ ցեխոտ փողոցներեն մեկը. քարուկիր տուներու խիտ ու հոծ շարք մը, կարգով կեցող դպրոցականներու գիծի մը կամ քով քովի սեղմվող մսկոտ հավերու երամի մը նման. հաղիվ հինգ կանգուն լայնքով տուն մը, որ իր երկու քովի պատերուն մեջ ճզմվելուն համար կարծես վե՛ր-վե՛ր կ'ելլե շարունակ. բաց դուռնեն՝ կերակուր եփելու հոտ մը կծավալի դուրսը, ներսը, բակին մեջ, սանդուխին վրա, որ մութին մեջ կկորսվի։

Դեմ դեմի երկու տենյակ առաջին հարկը կկազմեն. այսպես ալ բոլոր մյուս հարկերը. իրական սեֆեր թասի մըն է այս տունը. ու կ'ելլես վեր, հարկ մըն ալ վեր, և ուրիշ հարկ մըն ալ, առանց հաշողելու կատարը հասնիլ. Պ. Փափազյանի «Վերելքն հԱրարատը»։

Ամեն սանդուխին վերջանալուն՝ որ սահմանագլուխ մը կնշանակե, լեզուները, դեմքերը կփոխվին. հունարենով կսկսիս՝ գերմաներենեն, ֆրանսերենեն անցնելե հետո հայերենին քով շունչ առնելու համար։ Հոս՝ ծեր հելլենուհի մը, հոդ՝ մանկամարդ հայ հռոմեական կին մը, ամեն տարիքներ ու ամեն տարազներ, որոնցմե կ'անցնիս անսայթաք, հոն, վերը, Սերվինազի սենյակը մտնելու ջանքով։

Այդ սենյակը պետք է տանիքին անմիջապես տակը գտնվի. բայց

որքան ալ բարձրանաս երբեք բացարձակ վստահություն չկա հոս, վրադ դեռ ուրիշ հարկ մը չունենալուդ։

Երկու պատուհաններեն կտեսնվի Թաթավլան Փերայեն բաժնող ձորը, որուն զառիվայրի տուներուն երկարող կարգերը հետզհետե իջնող լայն սանդուխ մը կձևացնեն։

Սերվինազ՝ էրկնեն բաժնված՝ հոս կբնակի իր ութ տարու տղուն, Լևոնին հետ. երեսունհինգի մոտ կին մըն է, անցյալ գեղեցկությանը գիտակցությունը, արժեքը զգալով հոս, այս պոռոսային մեջ, որ Փերա կկոչվի, հիմա՛ ալ, իր սև սաթի մազերը առատ ու գ'ղեցիկ են առաջվան պես. հասակը նուրբ, բարեձև մնացած է. երեսին մորթը կծկած քիչ մը. շրթունքը՝ հեգնության պրկում մը ունի, որ դեմքը կտգեղցնե, բայց ակռաները մաքուր և ամբողջ են. վերջին հիվանդութենեն նիհարցած՝ ուսին տախտակները կցցվին դուրս։

Զարեհին հետ խոսած ատեն կբացատրե որ չէ կրցած աղեկ մը վրա գալ. պզտիկ օգափոխություն մը, քիչ մը աղեկ գ'նի, և առջինեն աղեկ միս պիտի կապե, մի՛ս, այո՛, վասն զի, անանկ չէ՞, էրիկ մարդիկ միսե կ'ախորժին։

Կխոսի խնդալով, կխոստովանի իր հրապույրներուն պակսիլը, ինչպես հանցանք մը պիտի խոստովաներ ակամա. և արդարացնել կ'ուզե ինքզինքը, պատճառները թվելով, քաշած նեղությունը, գեշ էրիկ մը, հիվանդությունները։ Հետո երիտասարդը իսպառ չհուսահատեցնելու համար իր վայելչությանը վերադարձեն, կ'ավելցնե, որ ամեն բան կրնա գարմանվիլ քիչ մը հանգստության երես տեսնելով։ Անցյալը ապագայի երաշխավորության կկոչե, երաշխավորություններու ամենեն անհիմնը։

— Ատեն մը, գիտե՞ս, ինչպե՞ս պլբխ պլբխ էի. հիմա չորցա։

Եվ կ'պտեր տխուր ժպիտով մը, որ ալ ավելի կտգեղցներ զինքը։

Շուրջը կնայեր, սեղանին վրա, անկյունները փնտրտուրի կ'ելլեր ու կդառնար երիտասարդին.

— Խյուրյուն չունիմ որ հրամցնեմ։

Քիչ մը վերջը իր կյանքեն կգանգատեր.

— Աղեկ օրի երես չտեսա. հազար հոգի փեշիս կպտտեր, դուն աղեկ գիտես։

Կշարունակեր, բաղդատություն մը ընելով մտքեն.

— Իմ կեսս շարժողները...

Եվ, հավանական պատասխանի մը առաջը առնելով.

— Ջեմ ըսեր որ ես գեղեցիկ եմ. առա՛ջ՝ ուրիշ խոսք։

Ամեն ոտքի ելլելուն ակնարկ մը կնետե դեմի հայելիին. սև, հինցած շրջանակով հայելի մը, որուն վրա ոսկի քանդակները կեցած են

դեռ. մեկ նայվածքով իր մարմնին, կեցվածքին, հագուստին դիմացինին վրա ընելիք տպավորությունը կհարցնե անոր և շրջազգեստին մեկ փոքը կամ մազին մեկ ոլորքը կշտկե շուտով։

Փողոց ելած ատեն՝ ուշադիր, հետաքրքիր, կդիտե կիները, որոնք կառքերով կ'անցնին սրարշավ, ժամանակ չձգելով իրեն դատաստանը ամբողջացնելու. անաչառ արվեստագետի մը պես կտեսնե, կցուցնե ամենուն պակասությունը, չքաշվելով բնավ տեսած կատարելություններուն վրա ալ հիանալե.

— Սա՛ անցնողը, նայե՛, աղվորիկ է, ըսելիք չունիմ։

Զ

Սերվինազ կգիրնար. միս կկապեր վերջապես, տանտիկնության միսը. և երիտասարդը կշարունակեր գալ, ամրացած իր տոմարակալության պաշտոնին և այս կնոջ համար ունեցած սիրույն մեջ. ամուրի մնացած էր հակառակ իր մորը ջանքերուն, երբեմն գեղեցկությանը, երբեմն տգեղությանը համար չկրնալով զատվիլ Սերվինազեն և անոր կյանքին մոտ մնալու սովորությունը չկրնալով մեկդի թողուլ, մեկդի թողուլ իր բոլոր հավատքը։

Այս տան մեջ, ուր բոլոր վարձակալները կճանչնային զինքը, կու գար ժամերով մնալ. երբեմն վերը կսպասեր մինակ, որպեսզի Սերվինազ վարը խոհանոցին մեջ իր կերակուրի պատրաստությունները ավարտե ու գա դեմը նստի. երբեք հետը դուրս չէր ելլեր, վախնալով, որ արատ չբերե անոր անունին։

Վերջերը ա՛լ տունեն էր գրեթե, ազգական մը Սերվինազին համար, որ անոր ներկայությանը իր սենյակը կմաքրեր, անկողինը կշտկեր. երբեմն դեմի սենյակեն դրացուհին կու գար, կաթոլիկ հայուհին, իրենց հետ խոսակցելու, ան ալ ամուսինեն բաժնված կին մը, ավելի մանկամարդ, պզտիկ քույր մը Սերվինազին, և բարեկամ մըն ալ կբերեր մեկտեղ, ան ալ իր ազգականը անշուշտ։

Սերվինազ կսկսեր ճանչցվիլ, հյուրեր կու գային. ինքը կսորվեր Փերայի խոսելու հատուկ շեշտերը, վարվելու եղանակները։

Զարեհ կատակ կ'ըներ այս հյուրերուն վրա. երբեմն կհարցափորձեր.

— Ո՞վ էր սա առջի օրվան մարդը։

— Ի՞նչ, ա՞տկե ալ կնախանձիս, ես մնացի-մնացի՝ ատանկի՞ն մնացի։

Հետո՝

— Ես մարդու նայելու սի՞րտ ունիմ. ասկե՞ ետքը։

Օր մըն ալ ելավ խորհուրդ հարցնելու Զարեհին։

— Ի՞նչ կ'ըսես, Պեքյար փողոցը ածան տուն մը կա, վարձու բրոնե՞մ՝ փանսիոնեռ առնելու համար։

Երիտասարդը համակարծիք չէր. այս՝ պզտիկ սենյակեն գոհ էր ինք, թեև ատեն-ատեն արմուկովը՝ ներս մտնողի մը կամ դուրս ելլողի մը զարնվեր մութ սանդուխին վրա։

Վայրկյան մը չէր կասկածեր այն կեղակարծ պարկեշտության երեվույթին վրա, որ այս տան մեջ կտիրեր, այս էրիկնեն զատվող կիներուն, այս երիտասարդ ազգականներուն ալեվլուկ բարքերուն վրա, որ կլեցվեին հոն, իր սերեն դուրս հետաքրքիր ըլլալու պետքը չզգալով բնավ և հավերժացնելով մեր միամիտ Դ. կարգը։

Է

Ամառվան իրիկուն մըն է. Մեծ Փողոցին մեջեն կքալեր դիտելով վաճառատուններու ապակիներուն պարզած պերճությունները, հանդարտ ու ստոյիկ, երբոր Կալաթա Սարայի մոտ Լևոնը տեսավ, ձեռքը օղիի շիշ մը բռնած, թուղթի մը փաթթված աղանդերի տեսակներով։

Կեցավ. հարցուցի որի՞ տանիլը այդ ամենը. հյուր կար տունը. հյո՞ւր. ի՞նչ հյուր. օղիի փոքրիկ շիշը կպատասխաներ իրեն. այս գլուխ գլխի զվարճության պատրաստությունները՝ փոքրիկ տղուն ձեռքին մեջ՝ պերճախոս ու ահռելի կթվին հանկարծ. սթափում մը կ'ունենա. փոքրիկ մանրամասնություններ, որ իր աչքեն կվրիպեին, հիմա կուգան հատիկ-հատիկ ամբաստանության ահագին զանգված մը ձևացնելու. իրա՞վ է արդյոք. այս՛, առջի անուղղա աղջիկն է այս կինը, այն զոր Թաշ Վերտիվենի պատուհանեն կտեսներ, եղևանիին կապույտներուն մեջեն, և որ հիմա այդ ծառին պես ապաժման ծաղկումներով կարթննար՝ տարիքը առնելուն հետ ուշ մնացողի մը պես՝ ավելի բուռն տենչանքներու կատարը բարձրանալու մրցումով։

Եվ կխորհի իր ալ կյանքին, ամուլ, անօգուտ ու աննպատակ, ամբողջ տառապանքի, սպասումի կյանք մը, որ ընդարձ գացած է միշտ այդ կնոջ ետևեն, բոլոր պատանությունը ու բոլոր երիտասարդությունը կապված, գամված այս կնոջ խոստմնատու նայվածքին, որոնք այս վայրկյանիս անկե բաժնվելով ո՛ևէ հենակետ մը չեն կրնար գտնել։

Իր պատրանքներուն այս քայքայման մեջ կզգա, որ Մեծ Փողոցի շենքերը կ'երերան, իր վրա կփլչին. կառք մը՝ զոր չի տեսներ՝ զինքը խորտակել կսպառնա. թևեն կքաշեն. անցորդները այս ապշած գեմքը

դիտելով կզբոսնուն։ Սփոնեքի խանութին առջև, օդիին շիշը բռնող փոքրիկ տղուն քով կեցած կխորհի, կվճռե. պիտի ձգե, պիտի թողու այդ կինը, որ այս վայրկյանեն ա՛լ գոյություն չունի իրեն համար. կշափե իր որոշման առաջ բերելիք սրտահուզությունը ու կ'ուրախանա, հիմա՛, շուտով, լուր մը, մահացու կապարի մը պես անոր ճիշտ սրտին. հասկընա, որ ա՛լ տեղյակ է ամեն անցած դարձածին։

Լևոնին թևեն կբռնե.

— Ինծի նայե, մամայիդ բարա՛ ըրե ինձմե։

Ու շեշտելով տղուն իր ապսպրած բարևին ահագին նշանակությունը.

— Չմոռնաս հա՛, ինձմե մամայիդ բարև ըրե։

<1892>

ՄՅՈՒՍԸ

Ա

Էմման հայ հռոմեական կին մըն էր, եվրոպացիի մը հետ ամուսնացած. գեղեցի՞կ, չեմ գիտեր շիտակը. ո՛չ, գեղեցիկ չէր ան, գեթ արվեստագետներուն սահմանած գեղեցկությամբը։

Թուխ դեմքով սևաչվի մը, հոյաշեն կառուցում մը, որուն լանջքին ու բարձերուն զեղծանող, շուայլվող կարկառները պակասություն մը պիտի ձևացնեին, եթե հատակին բարձրությունը չըլլար։

Հոն՝ ուր իր մասնավոր պչրանքը կդներ այս կինը, իր ոտքերն էին, միշտ նոր պոքերու մեջ ամփոփված ոտքեր, որոնց նրբավարտ մատներուն ծայրերեն մինչև սրունքին դնդղուց մինչ բարձրացող ու գրկող նուրբ կաշին երևան կհաներ ան, անպատկառ հրճվանքով մը, փողոցի փոշիեն կամ ցեխեն շաղոտելու համար, պետք եղածեն ավելի վեր՝ շատ ավելի վեր հանգրիճելով իր շրջազգեստը։

Այս ոտքերը բանաստեղծներուն երգած փոքրիկ ու մանկական խաղալիկները չէին. այլ իր մարմնեղ ու հասուն կնոջ — ըսի՞ միթե, որ երեսունը անցուկ էր անիկա — համեմատություններուն կպատշաճեին, իրենց գիծերուն զմայլելի ներդաշնակությանը մեջ միայն հայտնելով իրենց ուրույնությունը։

Էմմային դեմքը վերլուծող մը, այն հատուկ գիտության կանոններուն համեմատ որոնցմով կ'ըսեն թե մարդկային հոգվույն մինչև խորը կթափանցեն, կ'ասեն պիտի կենար. այնքա՞ն պակուցիչ ու ահավոր բան մը պիտի գտներ այս անմեղ ու մանկունակ երեսին վրա։

Աղջիկ ատենը Օրթագյուղի մեջ շատ տեսած էի զինքը. հիմա, շատ մը տարիներ անցնելեն վերջը, երբեմն Փերայի Շիտակ ճամփուն վրա կհանդիպեի իրեն. ամառները Թարապիա կամ Փրինքիփոյի մեջ ուր կուգար միշտ էրկանը հետ. կտեսնվեր և աներևույթ կ'ըլլար իսկույն։

Էմմա անոնցմե չէր որ ամիսներով տեղ մը կկենան, այնպես որ զինքը տեսնելու ստուգությունը ունենաս։ Այլ այն վաղակորույս և ճիշտ ատոր համար փնտրված հետաքրքրող ու երբեք չգոհացնող կնոջական տեսիլքներեն մեկն էր, որոնց էրիկ մարդիկ անձկաբեկ կսպասեն։ Հորիզոնին վրա անակնկալ կերպով ծագող ու անհետացող լույսերեն մեկը՝ որոնց շավիղը կը Վեռիե մը, աշխարհիս բոլոր անհունական հաշիվները մեկտեղ բերելով, չէ կրցած դեռ ճշտել։

Ես որ դիմագուշակ հարցուկի հովեր կ'առնեմ երբեմն, ամեն հեղ իրեն հանդիպելուս կջանայի, ինքնիրենս, իր գոյության առեղծվածը, իր աղիտաբեր արարածի կյանքին ալքերը պրպտել։ Տեղ մը իրեն հանդիպելու, հետը տեսնվելու համար հնարք մը չստեղծած դեռ, կձգեր կ'երթար ան, կարծես շատ իսկ սեպելով, իր վրա հիացողներուն համար, իր տեսքին քանի մը ժամվան վայելքը։

Բ

Էմման ամուսնացած էր, շատ երիտասարդ ամուսնացած, քանի որ իր զավկներուն էն մեծը հազիվ տասներեք տարեկան կար հիմա, թխադեմ տղա մը, ճիշտ մորը աչքերով։

Իր ամուսնության պատմությունը հետաքրքրական ու մասնավոր բան մը չուներ։ Աղվորությանը համար միայն առեր էր զինքը էրիկը, նիհար ու հիվանդկախ մարդ մը, ժանգոտած պղինձի դեմքով, որ չհափրացող ցանկության մը վայելքը փնտրած էր միայն այս ամուսնության մեջ։ Էմմա, իբր ճշմարիտ հայ հռոմեական աղջիկ մը, եվրոպացիի մը հետ ամուսնանալովը իր և իր ընտանիքին բաղձանքներուն կատարը հասած էր։

Ճշմարիտ սիրով մը կապված էր էրկանը հետ, տարիներով ու անձնվիրությամբ խնամելով զայն գթության քրոջ մը պես, առանց տրտնջալու և ուղիղ բանի քիչ մը անհամաձայն թվող այս հավատարմության հարուցած ընդհանուր զարմանքին վրա զվարճանալով։

Շատոնց ըսեր էին բժիշկները որ էրիկը երկար չապրիր, մինչդեռ մարդը հաճույք կզգար ի դերև հանելով այս գուշակությունները ու իր

հեք ոսկորներուն կմախքանձն ջենքը, իր կանչուցած երեսը պատցնելով կնոջը պարարտ հրապույրներուն քովը։

Ո՛չ վեճ և ոչ խռիվ իրենց մեջը, ինչ որ քիչ զարմանք պատճառած չէր իրենց բարեկամներուն, որոնք, ամեն բարեկամներու պես, գայթակղություններու ակնկալությամբը կ'ապրին։ Անակնկալ համերաշխությունը այս ամուլին՝ զրկանքի պես բան մը կ'ըլլար անոնց որ ամուսնության հաջորդ օրվան համար գժտում, երկպառակություն նախատեսեր էին։

Եվ անոնք, որ ջանացեր էին իր հոմանիները ըլլալ, հիմա մեկիկ-մեկիկ քաշվեր էին, չծածկելով իրենց զայրույթը։

Մեկը միայն համառեր ու գամվեր էր անոր հրապույրներուն։

Օրթագյուղի իմ դպրոցական ընկերներես էր, ան ալ հեռվանց ծանոթ մը էմմային, հիմա երեսունի մոտ, բայց դյուրահավատ ու միամիտ սրտով տղա մը, որուն հոգվույն ազնիվ մետաղը իր նոր թափծուի փայլին մեջն էր տակավին և զոր ձախորդությանց շունչը չէր եկած նսեմացնել։

Մաքուր հագված, առանց սեթևեթի սակայն, միշտ կարդալու գիրք մը բռնած ձեռքը, ընթերցումը ըլլալով իր մեծագույն զբաղմունքը, ճերմակ թաշկինակովը՝ իր կարճատեսի ակնոցը մաքրելու զբաղած շարունակ։

Ամեն աղմուկե, չափազանցությունե հեռացող իր կյանքը՝ իրավամբ մեզ ամենուս օրինակ ցուցուցած էին միշտ։ Երկրաչափական ձևերու ճշտությամբը կազմված էր իր գոյությունը։ Հորը մորը մեկ հատիկը, աչքերնուն լույսն ու պարծանքն էր. զինքը ամուսնացնելու կարոտեն զատ իր ծնողքը մամտուք չունեին։ Նշանավության պզտիկ խաչքեր զուրցվելու վրա էին իրենց դրացիներեն մեկուն աղջկան համար, որուն տունը շատ կ'երթար ինքը։

Պանքային մեջ, ուր լեցուն ամսականով պաշտոն մը ուներ, իր մեծերը կսիրեին անոր հավատարիմ ու աշխատասեր բնավորությունը. մեծ ապագա մը վերապահված էր իրեն, գրեթե խոստացված։

Դպրոցեն դուրս՝ միշտ բարեկամ, մանավանդ թե մտերիմ մնացեր էինք, ինչ որ շատ չի պատահիր. կ'ըլլար սակայն որ ամիսներով, երբեմն տարի մը իրար չտեսնեինք, բայց առջի հեղ իրար գտնելնուս, փոխադարձ քաղվածքը կ'ընդունինք իրարմե հեռու անցուցած օրերնուս, մեր ուրախություններուն և մանավանդ մեր հուսախաբություններուն, առանց անտեղի հպարտությամբ մը իրարմե բան պահելու. և այս խոստովանությունները մեր ընդհատված մտերմությունը՝ լ՛ ավելի կ'ամրացնեին։ Չէր հավներ ան իմ ապրելու եղանակիս ու փոստելու կ'ելլեր պա-

— Երջանկությունը՝ երջանկություն չփնտրելուն մեջն է,— կ'ըսեր ինծի երբեմն։

Եվ իր անդորր կյանքը նետելով երեսիս, իր ըսածը կհաստատեր։

Գ

Ինծի համար, բոլոր զինքը ճանչցողներուն համար, ամենեն ապշեցուցիչ անակնկալը եղավ էմմային համար ունեցած իր տարփանքին գայթակղությունը։ Գիտեի քիչ մը այս կնոջ համար ունեցած իր համակրությունը, բայց այս վերջավորությունը մտքես չէի անցներ բնավ։

Ուսկի՞ց ուր այս անփորձ ու միամիտ երիտասարդը կրցեր էր էմմային պես կնկան մը սիրտը գրավել. ի՞նչպես մանավանդ, ինքը՝ հանրային կարծիքին այնքան ուշադիր մը, պայմանադրական բարոյականեն մազի չափ չշեղող մը՝ ոտքի հարվածով մը մեկդի ըրեր էր իր ծնած օրեն զինքը մեծցնող, չորս դիեն պաշարող կյանքի կարգն ու սարքը, ընտանեկան ավանդությունները, ատոնց բոլորին վրա ելեր նստեր էր ամուսնացած ու զավկի տեր կին մը առևանգելու ու անոր հետ ապրելու չափ առաջ երթալու համար։

Երբոր այս լուրը առի, վեղարը ու սքեմը նետող վանականի մը նմանցուցի զինքը, այնքա՛ն ավելի հոխորտ իր ըմբոստությանը մեջ՝ որքան խստակրոն եղած էր իր հավատքի ժամերուն։

Բնությունեներ կան որոնք ջուրին թույլ ու մեղկ հնազանդության երևույթը կ'ընծայեն. բայց ջուրին կաթիլներուն միօրինակ ու անփոփոխ աշխատությունը լռելյայն կկատարեն անոնք, մեղմիվ, հեշտորեն մաշեցնելով զիրենք շրջապատող քարերը ու ժայռերը և ծակ մը, անցք մը բացվելուն՝ հեղեղի մը պես դուրս կթափին։

Այս երիտասարդինը այդ կարգեն էր ահա. ինքնիրենս այս խորհրդածությունները ըրի միայն։ Այս առևանգությունը սակայն ընդհանուր խոսակցության նյութը եղավ. կիները իրենց մաղձոտ շարախոսությունները դուրս թափեցին. այս կնոջ՝ էրկանը դեմ ցուցուցած անհավատարմությունը քարկոծեցին. զինքը ձեռքե ձեռք հափշտակել ուզող էրիկ մարդոց ճաշակին վրա ալ շատ մը խնդացին. գոնե գեղեցիկ կի՞ն մը ըլլար անիկա. սև ու նվաղուն աչքեր ուներ ան. ո՞վ սև աչք չունի Պոլսո մեջ. իր մինչ աղվորությունը, իր արդուզարդին շքեղությունը, ատոնք էին բոլոր հրապույրները, որոնց առջև ահա մարդիկ կանգ կ'առնեին։

Երիտասարդին մասին էրիկ մարդոց դատավճիռը եվազ խիստ չէր։ Հանրային կարծիքը այն ատեն մանավանդ կ'որոտար ու շանթեր կտե-

ղա, երբոր իր ամենեն խարխուլ ու կեղծիքով միայն ոտքի վրա կեցող սկզբունքներեն մեկուն դեմ է մեղանչումը։

Իմ բարեկամս, մեկ օրեն մյուսը, ամենեն անշնորհ ու անտակ երգտասարդի հոչակը ստացավ. իր անհատական կյանքը քրքրվեցավ ծայրեծայր ու լեցուն գտնվեցավ արատներով։

Պանքային մեջ անգամ իր խլճամիտ պաշտոնյայի դիրքը կորսընցուց. հառաջդիմության հույսերը մարեցան և մտերմական բարևները գլխու հարևանցի շարժումներու փոխվեցան։

Ես առիթ չունեցա զինքը տեսնելու բոլոր այն ամսոը. իմացա սակայն, որ իր ծնողքեն զատվելեն վերջը Էմման հետ միջոց մը Յագաճբգի կողմերը գացեր էր. հետո, տեղի տալով իր սիրած կնոջ հարափոփոխ պահանջումներուն, վերսկսեր էր անոր հետ ատանդական կյանք մը գյուղագնացության, ութ օր հոս՝ հինգ օր հոն և այսպես մինչև աշունը պտտելե վերջ Փերա եկեր էին ձմեռը անցընելու։

Դ

Օր մը, բնավ մտքես չանցած մեկ վայրկյանիս, գրասենյակես ներս մտավ ան. տիրաբար, չսպասելով գրագրիս հրամցնելուն, երկար ճամփու մը հոգնութենեն պարտասած մեկու մը պես աթոռի մը մեջ ինկավ. հետո՝ դեռ ինծի բան մը չըսած՝ խահվե մը ապսպրեց ինքզինքին և սիկառեթ մը վառեց։

— Քենե ուրիշ մեկը չունիմ իմ սիրտս բանալիք,— ըսավ ինծի դողդոջուն ձայնով մը,— այն վայրկյանին ուր ամեն ինչ կ'երերա ու փլչելու մոտ կ'երևա շուրջս, անխախտ՝ քու բարեկամությունդ միայն կտեսնեմ ու քեզի կ'ապավինիմ։

Այս ձայնը զարմացուց զիս. երեսը նայեցա աղեկ մը. որքա՜ն փոփոխություն. քանի մը ամսվան մեջ նիհարցեր ու վատեր էր. տենդի կարմրությունը իր այտերը կշառագուներ։

— Ինծի պատահածները հարկավ գիտես,— շարունակեց անիկա,— ատեն չկա որ երկար բարակ պատմեմ քեզի զանոնք, Էմման էրկընեն զատվեցավ, այր ու կնոջ մեջ փոխադարձ հոժարության գործ մը եղավ ասիկա, իրենց ամուսնությանը պես. իրենց շահերը, իրավունքները, ամեն ինչ ճշտած, որոշած են. զավկրները իրենց հորը քով կմնան ու մայրը իրավունք ունի ուղած օրը զանոնք տեսնելու առանձին։ Դատարան մը ասկե աղեկ չպիտի վճռեր։

Ուրեմն իմ բաղձանքիս լրումին մեջն եմ հիմա. ասո՞ր համար արդյոք աշխարհիս ամենեն ապերջանիկ մարդն եմ։ Ի՜նչ տարօրինակ սեր է իմինս որուն վայելքը զրկանքին չափ կտառապեցնե։

Ահավասիկ բոլոր խնդիրը։

Էմման իմս է, իմս բոլորովին, բայց զայն կորսնցնելու վախն է որ ամեն վայրկյան կպաշարե զիս։

Եթե օր մը ձգե զիս երթա՜, աստվա՜ծ իմ։ Այս ահուդողին մեջ ո՜չ գիշեր, ո՜չ ցերեկ ունիմ ես. քաջառողջ մարդիկ կան որոնք թոքախտ ըլլալու սարսափով իրենց կյանքը կդառնացնեն. ես անոնցմե՞ եմ արդյոք, թե ոչ նախազգացումը, մերձավոր կորուստին նախազգացումն է որ զիս կխռովե։ Ճշմարտության ասիկա ավելի մոտ է. երջանկությունս այնքա՜ն մեծ է, այնքա՜ն անհավատալի, որ վայրկյաններ կան ուր անոր ստուգության վրա կսկսիմ տարակուսիլ. քնաշրջիկի մը պես կ'անցնիմ կյանքին մեջեն, երազաշեն աշխարհի մը շրջանը ընելով, որչա՜փ օրվան մեջ... և ե՞րբ պիտի ըլլա զարթնումը։

Տեսնելով իմ անհամբերությունս այս անկապ ու անհարիր խոսքերուն դեմ.

— Երջանկութենե երես առած մեկը չեմ,— ավելցուց բարեկամս,— մեկը անոնցմե, որոնք իրենց եզական բախտավորությունը ուրիշի մը վկայությամբը հաստատելու հաճույքին համար՝ անոր կպատմեն զայն՝ հատկապես խել մը դժգոհանքի պատճառներու մեջ պարուրելով։

Ո՜չ. ես իրական անձկության մը մատնված եմ, վախի մեջ թե ուրիշ մը Էմման ձեռքես պիտի հափշտակե։ Ո՞վ է այդ մյուսը, մեջտեղ ելա՞ծ է արդեն, թե երևան պիտի ելլե. մութ հարցեր ինծի համար. բայց այդ մյուսը կա. կասկած չունիմ ատոր նկատմամբ։ Գիտե՞ս, երբեմն սենյակիդ մեջ գիրք մը կարդացած պահուդ, կամ պատուհանեն փողոցը դիտած մեկ վայրկյանիդ, առանց ոտնաձայն մը լսած ըլլալու կզգաս իսկույն որ մեկը ներս մտած է. չես տեսած դեռ զինքը, բայց ապահով ես, ստուգությունը ունիս որ գլուխդ վեր առնելուդ գիրքիդ վրայեն, կամ ետիդ դարձնելուդ, մարդը պիտի տեսնես, և իրոք զայն կտեսնես այլ։ Ես ալ ատոր պես՝ իմ երջանկությանս մեջ ոտք կոխող ինե ուրիշի մը գոյության ահավոր ստուգությունը ունիմ։ Ի՞նչ կ'ըսես դուն ասոր։

Այս հարցումին վրա նոր սիկառեթ մը վառեց անիկա։

Ե

— Դուն նախ պատմե ինծի, ի՞նչպես ճանչցար, ի՞նչպես ձեռք ձգեցիր այս կինը,— պատասխանեցի իրեն.— միայն մտմտուքնե՞րդ ըսելու եկար հոս. ի՞նչպես և ինչո՞ւ կսիրես զինքը. ~~ես որ երբեք~~ սիրած չեմ, հետաքրքիր եմ ատոր։

— Սիրեցի զինքը անոր համար գուցե որ հազարումեկ պատճառ

ունեի չսիրելու համար. այո՛, հազարումեկ. իմ կյանքս, իմ սկզբունքներս. իմ քնտանեկան վիճակս, ասոնք բոլորը մեկ կողմեն, այս կնոջ բոլոր կյանքը մյուսեն, իրեն մոտենալն անգամ կ'արգիլեին ինծի։

Փրինքիփոյի մեջ հանդիպեցա անոր, միևնույն պանդոկը գտնվելու ստիպված էր ցավին սաստկացած միջոցին և իր կինը քովը կհսկեր, թողլով իր զավակները սպասավորի մը հսկողությանը։

Զէի սիրեր այդ մարդը։

Անկարագիր, անպատկառ ու ամեն բան հեգնող մարդուն մեկն էր, որոնց առջև ամեն ընկալյալ կանոններ, միամտություններ, կամ մարմին։

Լուսնի գիշեր մը որոշվեցավ որ պանդոկին բոլոր հյուրերս եղզիին շրջանը բնենք։ Ոմանք կառքով՝ ոմանք էշ հեծած ճամփա ելան։

Փրինքիփոն զինքը շրջապատող կապույտ ծովին վրա կցոլացներ իր սաղարթախիտ բլուրները, իր վիլլաներուն գույնզգույն երեսները, իր պարտեզներուն երփնագեղ կանանչությունները։ Ու անհուն հայելիին մեջ, որ այս անմահ կապույտեն կձևանար, այս բոլորը կդողար, կսարսռեր ալյակի մը վեհերոտ տատանումին հետ։

Աջեն ու ձախեն բարձրացող երգերու ժխորովը Տիասքելո հասանք։ Հոս լուսինը իր բոլոր պայծառությամբը կ'ողողեր պզտիկ սարահարթը. Փենտիքի եղերքեն՝ ուրկե կբարձրանար, աննշմարելի վերելքով մը, ադամանդի կոտրտուքներով հարդարված լուսեղեն պողոտա մը ծովուն վրա կ'երկննար, կփալփլեր, կլայննար, կնեղնար շարունակ։

Բազմության մեջ տեսա էմման որ վար իջած կառքեն, խրխթոս տանող մեծ ճամփուն կողմը կ'երթար մինակը. այս ժամուն բոլորովին ամայի էր այդ տեղը, նոճիներուն շուքովը պատսպարված։

Գիտես որ ձեռներեց մեկը չեմ ես, բայց ութ օրե ի վեր այս կինը այնքա՜ն լուռ պչրանքով պաշարեր էր հոգիս, որ իրեն հետ խոսելու փափագին դիմադրելու անկարող էի ա՜լ։

Հոդ, այդ ճամփուն վրա, զոր կարծես ինքն ալ հարմարագույն վայրը դատեր էր, խոսեցա հետը առջի անգամ։

Սև մետաքսե fոռռած մը ուներ, այս օրվան պես միտքս է, և վեր ժողված ճերմակ պատմուճանին ժյուբեն տանքելներու եռևեփը ու փրրփուրը դուրս կծայթքեր։ Ինքը կ'ունկնդրեր ինծի՝ շարունակելով ժողվրտուքը իր ճակտին անհնազանդ մազերուն, մատը բերնին դնելով երբեմն, խոհեմություն պատվիրելու դիրքով, բայց որոշ ումեկին պատասխան մը շտալով երբեք։

Այսպես իր վրդովիչ կնկան դերին մեջ էր զոր Սենքիևիչ, իրավամբ, Բիզայի աշտարակին կնմանեցնե, ծռելով միշտ՝ բայց չիյնալով բնավ։

Իր ձեռքը զոր համբույրներով ծածկեր էի, քաշեց հանկարծ ուժով. մեր կողմը եկող ոտնաձայն մը լսեր էր. վայրկյան մը սպասելե ետքը մեր վախը ի դերև ելավ. վարեն՝ միայն երգի եղանակներ կհասնեին մեզի։

Հոս, անտառին խորը, գիշերը իր վճիտ անդորրությանը մեջ շքեղ էր. բյուրեղի մը չինչ պայծառությունը հագցնելով ամեն առարկաներուն։

Ծառերու երկար շարքը՝ իրենց պոչերուն վրա հանկարծ կանգնած անհնամաբ ծերու քանակ մը կարտակերպներ, խայտաբղետ շապիկներով վիշապներ, մեր սերը, մեր երջանկությունը դիտող նախանձոտ աչ-

քերու պես, պաշարելով մեզ չորս դիեն։ Գետինը ծածկող տերևներուն խշրտուքեն զատ ոչինչ կխռովեր մեր կարճատև առանձնությունը։

Էմման ինքը սթափեցուց զիս ըսելով.

— Դառնա՞նք։

Հաջորդ, վաղահաջորդ ու մյուս օրերը Էմման իր էրկանը հետ ա՛լ ավելի սիրով, ա՛լ ավելի մտերիմ և ինծի դեմ ավելի անտարբեր ու սառն գտնվեցավ։

Հնարք մըն էր ասա՝ էրկանը կասկածները չարթնցնելու համար։

Զ

Գիտե՞ս թե ինչ ծանր զոհողություններու պարտավորեց զիս այս սերը։ Եթե ոչ պատվո, գեթ խղճմտանքի դեմ շատ մը մեղանչումներու առաջնորդեց զիս. ոչ ոք ինե ավելի խստությամբ կդատե իմ արարքս. ծնողքս՝ որոնց բոլոր համոզումները, ակնկալությունները, շոյած երազները ոտնակոխ կ'ընեի. այն սիրուն աղջիկը՝ որուն սիրտը վաստակեր էի այնքան անարժանությամբ և որ քիչ մնաց նշանածս պիտի ըլլար. ասուց լուռ կշտամբանքը կզգայի սրտիս մեջ. ամուսնացած, զավկրներու տեր կին մը հրապուրելու ձեռնարկը ոչ նվազ անարգ ու անարժան գործ մը կ'երևար ինծի. ու այս ամենը կոխելով անցնելով, ա՛լ ավելի ուժով կապված կզգայի ինքզինքս Էմմային հետ, իմ բոլոր հանցանքիս մեծությամբը կապված։

Էմման ինքը զիս ընդուներ էր նախ անոր համար, որ իմ ցուցուցած անսահման սիրույս պես սեր մը տեսած չուներ. հետո, գեղեցիկ կին մը միշտ պետք ունի որ մեկը իր գեղեցկությունը երեսին ըսե. հոմանին տեսակ մը խոսուն հայելի է, կանանց արդուզարդի սպասին մասը կազմող։ Շատ վերջը միայն, կարծեմ, ինք ալ փոխադարձ համակրություն մը զգաց ինծի համար։ Այդ միջոցին էր որ հանկարծ, ինքնաբերաբար, շատոնց որոշված վճռված բանի մը պես, հայտնեց ինծի թե պատրաստ է զատվելու իր էրկընեն՝ ինծի հետ ապրելու համար։ Էմմային այս արիությունը բոլորովին զիս կապեց իրեն. ահա թե ինչո՞ւ ես ալ իմ ծեր հայրս ու մայրս թողուցի։

Անկեղծությունը կմեծարեմ նույնիսկ եթե հանցանքի մը մեջ ի հանդես կուգա։ Չեմ սիրեր մանվածապատ ձևերը որոնց տակ Մեղքը կպահվըտի ու կշարունակե Առաքինության հատուկ մրցանակները քաղել։ Ըսողներ կան որ բարոյականի կեղծիքն ալ բարոյական մըն է. ես այս բանաձևը գարշելի կհամարեմ։ Բոլոր խնդիրը իր ըրածին պատասխանատվությունը ընդունելու և չընդունելու վրան է։ Մեկը՝ թողլով ամուսնական հարկը, ինքզինքը չի պաշտպաներ այն հարվածներեն որոնց

արժանի՞ է թե ոչ, չեմ գիտեր, բայց որոնց ապահովապես կ'ենթարկվի։ Մյուսը՝ դիմածածուկ կինը՝ պարկեշտ ամուսնի պատրվակը երեսին վրա, բարևներու ու մեծարանքներու և մաքուր կնոջ տիտղոսի կողոպտումին մեջ կզայրացնե զիս։

Ու դառնալով իր մտատանջությանը, բարեկամս ավելցուց.

— Ըսի որ հիմա Էմմային սիրտը կորսնցնելե զատ ուրիշ վախ չըպատնար ինծի, մտացածին սարսափ, որ հիվանդ երևակայությանս ծնո՞ւնդն է. այսպես չէ սակայն, ես այն հազարումեկ չնչին նշաններուն անձկությամբ կհետևիմ, որոնք մոտալուտ կցուցնեն ասիկա։ Նախ Էմման մտամոլոր ու շվարած բան մը ունի. շատ հեղ խոսակցության մեջ մտքով բացակա է ու հազիվհազ մեկ խոսքը կրկնելուս կ'ուշաբերի. գեշ նշան. հետո իր արդուզարդին միշտ խնամոտ, հիմա մանավանդ ծայրահեղ մարմնապաշտությամբ մը իր բնական շնորհներուն ուշադրություն կ'ընե. ավելի գեշ նշան. ինծի հետ՝ իր սովորության հակառակ՝ քծնող ու ներողություն խնդրելու պես ձևեր մը ունի միշտ. ասոնք լիովին կ'ապացուցանեն ինծի ներկայությունը այն մյուսին որ ինե երջանկությունս կհափշտակե։

Կխորհիմ մանավանդ որ Էմման՝ ինծի համար իր էրիկը ձգելեն վերջը՝ կարող է զիս ալ, ուրիշի մը սիրույն, ձգել։ Թող ձգե զիս. բայց պիտի գտնվի՞ մեկը որ ինծի պես ու ինծի չափ գիտնա սիրել զինքը։ դյուրին ու դժվարին բան միանգամայն, անիկա ինծի համար միայն գեղեցիկ կինը չէր որուն կտենչամ, այլ մարմնացումը ամեն մարդկային երազներու, կհասկնա՞ս։ Ո՞վ ինե զատ այս ըմբռնումով պիտի ծընրադրե իր առջև. ռամիկ հեթանոսներն էին միայն որ ատենով կուռքերը կպաշտեին իբրև նյութ. մյուսները երկրպագած են անոր միայն՝ իբրև խորհրդանշանը գերագույն զորության մը։ Այսպես ալ ես Էմմային դեմը։

Է

Ես սրտապնդեցի հեք տղան. իր խանգարած երևակայությունը հանդարտեցուցի։

— Որովհետև Էմման ատեն-ատեն մտմտուքներ ունի եղեր՝ չի հետևիր ատկե, որ անպատճառ նոր հոմանի մը ունեցած ըլլա. քեզի համար իր ըրած զոհողությունները ամեն տարակույս վանելու չափ մեծ բաներ են. անխելքություն է ուրեմն միտքդ շարշարել անգո ոսոխի մը կսկիծովը. բայց այդ վիճակդ էապես երջանկության հատուկ վիճակն է, այն է՝ չկարենալ անխառն վայելել զայն։ Սիրե՛ Էմմադ և ուրիշին վրա մի՛ խորհիր։ Մի՛ խորհիր մյուսին վրա։

Համոզվեցավ քիչ մը. հետո.

— Խրատ մը կ'ուզեմ քենե, քանի որ հատկապես ատոր համար եկա գործի օր մը այսպես ժամերդ գրավել. կ'ուզեմ այս կասկածի մը թնոլորտեն դուրս ելլել, և եթե կարելի է հասկնալ իմ ենթադրություններուս անճիշտ ըլլալը։

— Խրատը,— պատասխանեցի իրեն,— հարցումիդ մեջն է. դժվար բան մը չէ էմմային պես կնոջ մը ուր երթալ գալը հասկնալ։

Չկեցավ ալ քովս. ձեռքս թոթվեց ու գնաց։ Տասնհինգ օր հազիվ անցեր էր, իրիկվան մը դեմ եկավ նորեն. բերանը կղպված էր։

— Ի՞նչ կա, ի՞նչ ունիս նորեն։

Ան ատեն խորունկ ու ցած ձայնով կամաց-կամաց սկսավ պատմել.

— Քանի մը օր շարունակ լրտեսեցի զինքը. էմման շաբաթը երկու անգամ առնվազն զավակները տեսնելու կ'երթար էրկանը տունը ու ժամերով կմնար հոն. բան մը չկար ստգտանելի այս վարմունքին մեջ։ Ատկե դուրս՝ պզտիկ գնումներուն համար՝ Փերայի վաճառատունները կմտներ, ու ոչինչ ատոնցմե զատ. իր կյանքը հստակ կանոնավորությամբ կճշտվեր և խիստ մոտ էի հիվանդոտ երևակայությանս վրա ծիծաղելու, երբոր շաբաթ մը առաջ տեսա էմման իր տղոցը տունեն դուրս ելլելուն. տժգույն այտերը կարմրած ու երեսին վրա այն չեմ գիտեր ինչ արտահայտությունը կար որ հանցավոր կինը կմատնե։

Կասկած մը, փայլակի մը արագությամբ, անցավ մտքիս մեջեն. թերևս հոս, այս տանը մեջ, ուր էրիկը բացակա էր ցերեկ ատեն, կտեսակցեր իր սիրած մարդուն հետ. սպասավորները որ վերջապես իր առջի ծառաներն էին, կրնային դրամի համար աչք գոցել եղածին։

Այսօր, երկու ժամ կա, էմման նորեն գնաց հոն. ես որոշումս տվեր էի արդեն։ Քիչ մը ատեն անցնելե վերջը դուռը զարկի. սպասավոր մը դիմավորեց զիս. պատրվակ մը պետք էր այս տան մեջ մուտքս արդարացնելու համար. տանտիրոջ անունը տվի։

— Վերն է,— պատասխանեց սպասավորը.— իմաց տամ։

Ապշեցա. էրիկը տո՞ւնն էր այս ժամուն. հետո սանդուխներեն վեր նետվեցա. սպասավորը հազիվ հասնիլ. իզուր ջանալով խոսք հասկցնել ինծի, կեցնել զիս։ Ոչ ոք կար տան մեջ. միայն, էն վերի հարկը ուր հասեր էի ահա, ննջասենյակի մը կիսաբաց դուռնեն մոանույշ ձայն մը, էմմային ձայնը, ականջիս դպավ, ու զգուշությամբ մոտենալով կրցա որոշ կերպով տեսնել զինքը իր ամուսնին թևերուն մեջ մարմնակործան։

ԶԱԲՈՒՂՈՆ

Ա.

Մարդ մը, որուն երեսը երբեք չէինք տեսած, խավարի մեջ ապրող դիվային էակ մը. գոյություն ունե՞ր իրոք, թե առասպել մըն էր, որ բերնե բերան կրկնվելով, տարածվելով՝ վերջնական ձև ու վավերացում կստանա, իրողության կարգ կ'անցնի։

Գող մըն էր Զաբուղոն մեր գեղին մեջ. ո՛չ այն ռամիկ գողը որ կբռնվի շարունակ, կծաղրվի ու բանտերու մեջ կփճանա. ոչ ալ այն ահարկու ավազակը որուն գողոնին արյուն կխառնվի ատեն-ատեն։

Իր մեծ արժանիքը ճարպիկությանը մեջ էր. օդի պես անոսր, ոգիի մը պես աներևույթ, տեղ մը չէ ու ամեն տեղ է միանգամայն։

Ամենեն ավելի ամուր փակված դուռը, ամենեն բարձր պատը՝ մրտնելե չեն արգիլեր զինքը. բանալիին ծակեն, տախտակներուն ճեղքերեն ներս կսլրդի կարծես, անշշուկ ստվերի մը պես։

Ամեն բան գիտե, ամեն խոսք կլսե ու գռնփակ նիստերը իրեն համար չեն. իրեն համար պատրաստված ծուղակներուն մեջեն հաջողությամբ դուրս կ'ելլե միշտ, վարպետ ձեռնածուի մը պես զարմանքի մեջ թողլով զինքը բռնելու պատրաստվող միամիտները։

Երեսը շիտակ տեսնող չկար. բայց կպատմվեր— ո՞վ, կամ ի՞նչպես, չեմ գիտեր— թե երիտասարդ մըն էր այս տղան, նկնահասակ, թխադեմ ու վատույժ տղա մը. երկաթագործի քով աշկերտութենե եկած էր ու կղպանքներու արվեստը պետք եղածեն ավելի սորված էր։

Հիմա արվեստաբերի մը պես՝ կ'ապրեր, գողնալով թալլելով շարունակ, ավելի սնապարծութենե քան թե իրական շարութենե մղված։ Կբավեր որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տունները կողոպտելով, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար։

Կամաց-կամաց մտերմություն մը հաստատված էր գյուղացվոց ու այս գողին մեջ, ի հարկե ստիպյալ՝ վարժվեր էինք իր ներկայության. այս խորհրդավոր ու անմեկնելի գոյությունը, հալածական մարդու այս աստանդական կյանքը՝ սրտերնիս կշարժեր, ու քիչ մըն ալ թե որ երթայինք առաջ, պիտի սիրեինք զինքը։

Բ

Զաբուղոն նշանված էր. կզարմանա՞ք։

Նշանտուքը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ։ Փոխանորդ հայրը օրհնած չէր զայն, ոչ ալ լրագիրները ծանուցեր էին։

Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էին, գիշեր մը, ծառի մը տակ, աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհիս ամենեն մեծահանդես նշանտուքը եղած էր իրենցը։

Ամենքնիս կճանչնայինք Վասիլիկը, այն վտիտ դեմքով ու թնչուկ մազերով աղջիկը, որ գույնզգույն պատմուճաններով, արտակարգ արդուզարդերով՝ վերը, լեռը կուգար պտտելու մինակը, շաբաթ իրիկունները։

Ոչ ոք կհամարձակեր աչք նետել կամ դարպաս ընել անոր. Կեսարի խոսեցյալն էր անիկա. իր բացակա նշանածին տարածած սարսափին մեջ պլլված՝ աներկյուղ կպտտեր ամեն տեղ. ու զինքը պահպանող այս վախը կվայլեր իրեն. անմատչելի ըլլալը՝ հրապուրիչ կ'ըներ զինքը։ Մասամբ մըն ալ նշանածին փառքը իր վրա կ'անդրադառնար. անոր արկածալից կյանքին կապվող այս աղջիկը սովորական մեկը չէր կըրնար ըլլալ. աշխարհքեն դուրս ապրող մարդուն նշանածն ալ աշխարհքեն դուրս արարած մըն էր, ու տեսակ մը պատկառանքի խառնված ըղձանքով մը կնայեին իրեն, ամեն անգամ, որ այս լվացարարի աղջիկը, վես ու արհամարհոտ դիցուհիի ձևերով, իր շաբաթական պտույտը ընելու կուգար մեր կողմերը։

Վասիլիկ՝ ինքը գոհ կթվեր այս կյանքեն. մարդ մը կար մութին մեջ որ զինքը կպաշտեր, Ռյուլ Պլասի ըսածին պես, առանց երևան ելլելու, առանց իր քովը գալու հրապարակավ։

Ու մութը՝ իրական մութն էր հոս. կյանքը՝ գիշերը կսկսեր իրեն համար ու գիշերը կվերջանար. վասն զի նշանածը մութին կրնար գալ, ամենեն անակնկալ մեկ պահուն, մտքե չանցած ծպտումի մը տակ, որուն գրկաբաց կսպասեր։

Ուրիշներ կրնային ըսել որ «այսքան օր» ապրեցան. ինքը պիտի ըսեր «այսքան գիշեր»։

Լուսինին պես խավար պետք էր որպեսզի փայլեր. էապես ազջամուղջի դշխոն էր այս աղջիկը։

Ու գողը, իր հարափոփոխ այլակերպություններովը, ամեն գիշեր

նոր սիրահար մը կթվեր իր աչքին, և այսպես ամեն հասակները ու ամեն գույները կարգով կծնրադրեին իր առջև, դյութական անուրջ մը շինելով ամեն ատեն։

Գ

Սկիզբները Վասիլիկ երջանիկ եղավ այսպես։ Բախտին չէ՞ր նմաներ քիչ մը այս անտեսանելի սիրահարը որ աշխարհքը կկողոպտեր զինքը հափրացնելու համար ամեն ճոխություններով։

Օր մը սակայն այս ամենը ծաղրելի թվեցան իր աչքին։ Իր գաղտագողի ու թաքուն երջանկությունը բան մը կկորսնցներ այսպես ծածուկ մնալով և չկրնալով ուրիշներուն ցուցվիլ։ Երևակայեցեք մեծագին ադամանդ մը, որ հավիտյան տուփի մը մեջ փակված մնալու դատապարտված ըլլա ու չկրնաք օր մը կուրծքերնուդ վրա դնելով դիմացիններդ շլացնել։

Իր բոլոր վայելքները, իր բոլոր ունեցածը այս գոցված ադամանդին տպավորությունը կթողեին։ Ինքը մանավանդ, ցուցամոլ էակ, չէր կրնար գոհանալ կյանքի այն ներքին ու լռին ներդաշնակությամբը որ ահա իր ձեռքին տակն էր և որ դուրսը արձագանք չէր ձգեր. մարդիկ կան որ դերասաններ են աշխարհիս վրա. իրենց սեփական կյանք ու գոյություն չունին և ուրիշներուն համար կ'ապրին միայն. հանդիսատեսներ պետք է ասոնցպեսներուն, ու կյանքը հրապույր չունի, եթե զիրենք դիտողներ պակսին. դերասաններ՝ որ հանձն չեն կրնար առնել թափուր սրահի մը առջև ներկայացում տալու։

Այսպես էր Վասիլիկ. իր մեկուսացումը՝ լքում կնշանակեր. ոչ ոք իր երեսը կնայեր փողոց ելած ատեն. գեղին բոլոր երիտասարդները իր հրապույրներեն կդողային։ Հիմա պշրանքի արվեստը կփորձեր անոնց դեմ, թույլ ու երերուն քալվածք մը առած էր, որ նուրբ մարմինին ամեն խաղերը կմատներ, և այսպես ցանկության տաք հով մը կտարածեր շուրջը ու օձի նայվածք մը՝ որուն հանդիպողը կկախարդվեր։

Օր մը տղուն մեկը կապվեցավ անոր ու հետը ամուսնանալ առաջարկեց. այն վայրկյանեն գողի սերը անտանելի լուծ մը դարձավ իրեն։ Ալ չկրցավ սպասել անոր, գիշերները լուսցնել, ժամադրություններուն գտնվիլ, սա պարտեզին մեջ, կամ ան լերան վրա. ամեն առթիվ գանգատեցավ, բողոքեց ու լացավ. մյուսը կզարմանար. ինչո՞ւ այս արցունքը, չէ՞ մի որ առաջվան պես կսիրեին իրար. ի՞նչ փույթ մնացածը. Զաբուղոն իր առանձնացած կյանքովը, միամիտ մարդու հատուկ անծալք գաղափարները կպարզեր։

— Ի՞նչ պիտի ըլլա անոր վերջը,— կհարցներ աղջիկը։

Ասոր վե՞րջը. Զաբուղոն երբեք չէր խորհած ատոր. ընդհակառակը կփափագեր որ վերջը չգա։

Այն ատեն հուսահատած՝ հոժարությամբ բաժանում ձեռք բերելե այս նշանտուքեն, որ օրհնված պսակ ավելի ամուր ու հաստատ կ'երևվար, դիվային խորհուրդ մը անցավ մտքեն. գիշեր մը ոստիկանները կանչեց ու ձերբակալել տվավ Զաբուղոնը։

Դ

Քարաշեն պատերուն, երկաթե ամրափակ դուռներուն ետին կսլքտեկան, սպասելե վհատած, կամքի պարտասումի մը մեջ անզգա և անտարբեր դառնալով տարիներու անվերջ հոլովումին։

Անակնկալ փրկության մը հույսը, առջի օրերուն ակնկալությունը, շատոնց լքած է զիրենք և հիմակ նախասահմանյալ թվականին սպասելով միայն, կծկված կմնան այդ տեղ ժամերո՞վ, չորս դիեն բարձրացող պարիսպներուն տակ բուսած հսկա սունկերու նման։

Ամեն հասակները ու ամեն տարիքները կան հոս, այս դիմացկուն քարե արգանդին մեջ որ Թիարան կկոչվի և որ այս մարդիկը պիտի վերածնի օր մը, պիտի արտաքսե իր ծոցեն դուրս, համերամ հղացումներովը։

Վերեն, նեղ բացվածքներե լույսը կսպրդի ներս, հաշվված խնայված լույս մը, տկար ու տժգույն բան մը, այն դեմքերուն պես զորս լուսավորելու կու գա։

Զաբուղոն ասոնց մեջն է. իր համբավը կանխած է զինքը բանտին մեջ. մեծ չարագործ մը չէ, բայց մեծ ճարպիկ մըն է. հսկողության տակ է շարունակ այս բանտարկյալը, որ ոտքը երկաթներ ունի ամուր ու կոնակը հաստ պարիսպներ։

Յոթը տարի պիտի մնա այսպես. երիտասարդ էր հոս եկած ատեն ու ծերացած դուրս պիտի ելլե. իր նշանածին կխորհի ամեն ատեն, այն մեկհատիկ բարեկամության որուն աներկբա կհավատա դեռ. ո՞ւր է. ի՞նչ կ'ընե արդյոք. ու հակառակ ամեն զգուշության, փախչելու ջանքեր կ'ընե. անգամ մը երեսուն կանգուն բարձրությամբ պատե մը կ'անցնի, բայց դուրսի բակին մեջ կրոնվի. ուրիշ անգամ մը բանտին երդիքին վրա ելլելու կհաջողի. երկու գիշեր կ'անցընե հոն. կտեսնեն ու կբռնեն զինքը նորեն։

Այն ատեն ամեն խստությունները ի գործ կդնեն ամեն վայրկյան փախչելու հետամուտ այս մարդուն դեմ. բանտին կարգապահական պատիժները կտեղան իր գլխուն. բան մը չի կասեցներ զինքը. դուրս պիտի ելլե. Վասիլիկը գտնելու համար, իրավ. որ ուրիշ պատճառ մը չունի փախչելու։

Եվ գիշեր մը կհաջողի վերջապես. խոհանոցին ծխնելույզին մեջեն վեր կ'ելլե նախ ու հետո հիանալի ճարտարությամբ մը այդ ցից բարձրությենեն վար կ'իջնե, այս անգամ բանտին շրջափակեն դուրս։

Երեք տարվան մեջ այս վեցերորդ փորձը կհաջողի ահա, ու շիտակ, անխոհեմությամբ թերևս, մեր գեղը կդառնա նորեն. կասկած մը չանցնիր այս հնարամիտ մարդուն մտքեն. տարակույս մը չի գար թունավորելու իր սիրույն մաքրությունը։ Իր ձերբակալությո՞ւնը. ձախող դիպված մը միայն. առջի օրերուն պես գիտե որ սպասող մը կա իրեն ամենեն անակնկալ ժամուն. ու վայելած ազատության գինը՝ այս բերկրանքով կբազմապատկվի, կմեծնա, իր սրտեն դուրս պոռթկալու չափ։

Վասիլիկին թովիչ ակնարկը պիտի գտնե նորեն. անոր գռուզ մազերուն պատկերը դեռ չտեսած, աչքին առջևեն կ'անցնի, և ուրախության սարսուռ մը կցնցե իր հեք մարմինը։

Մեղմիվ կմոտենա անոր տունին. պատուհանին առջև խոսակցության ձայն մը կկեցնե զինքը. ո՞վ է ներսը. մտիկ կ'ընե, չի հավատար իր լսածին. ներս կմտնե անձայն, առանց իր ներկայությանը կասկածը տալու, ու չի հավատար իր տեսածին. ժամ մը ամբողջ անկյուն մը կծկըված կսպասե, չկրնալով ցրված միտքը ամփոփել. հետո տակավ ինքզինքը կգտնե, կխորհի ու ձեռքը ակամա կ'երթա պզտիկ դանակի մը կոթին զոր մեջքի գոտիին անցուցած է. մատները կշոյեն զենքը. առջի հեղն է որ արյուն թափելու հարկը կտեսնե որոշ ու հստակ. ինքը որ ամեն բանե կրնա փախչիլ, այս վրեժխնդրության գաղափարեն չի կրնար զատվիլ ահա։ Ո՞վ է այդ ապուշ էակը, որ իր թողած պակասը լեցնելու եկած է այստեղ. սա նստող տղո՞ն համար Վասիլիկ մոռցած է զինքը։ Մեկ նայվածքով կչափե, կգնահատե այս ոսոխը ու շատ վար կգտնե իրմե։

Եվ իր սիրտը լեցնող արհամարհանքին առջև վրեժի գաղափարը կթուլնա. ձեռքը կքաշե դանակին բունեն զոր իր պրկված մատները կիսովին դուրս քաշած էին մեջքի գոտիեն. ո՛չ, չեն արժեր ասոնք իր զայրույթը, ու կամացուկ դուրս կ'ելլե կրկին։ Բոլոր գիշերը կքալե թափառական, փողոցներուն մեջ. ո՞ւր պիտի երթա այսպես. տուն չունի, ծանոթ չունի։ Կխորհի որ այդքան ծանրագնի ձեռք անցուցած ազատությունը բանի մը չի ծառայեր և ուսերուն վրա կծանրանա։

Արշալույսին հետ՝ վարանոտ քայլերով ետ կդառնա, իր բանտին նորեն, որան դրան առջև կգտնեն զինքը առտուն ու ներս կ'առնեն։

<1893>

ՌԵՀԱՆ

Ա

Ան ատենն ալ առատ մազերը կսիրեի ու քովընտի նստած՝ կդիտեի ձյունսպիտակ ծոծրակին վրա ժողվված սև թումբը՝ պարտեզին մեջ տեղ-տեղ դրված կազի լապտերներու լույսերուն տակ, շքեղ ու անբարբառ ցոլացումով, որուն աչքերս հառած կմնային։

Ինչե՞ր չէին ըսեր ինծի այդ մազերը. իրենց անմոռուն կեցվածքը՝ հո՛դ, այդ բարձունքին վրա, պարկեշտ ու վրդովիչ բան մը ուներ։

Հեռվեն՝ նայվածքս կհետևեր անոնց շնորհալի շրջագիծին, կամակ ելևէջներուն, ըմբոստ պզտիկ թելերուն,— ըմբոստ՝ որպես են ամեն պզտիկները,— որոնք սանտրեն փախչելով կդառնային կ'իյնային վար, զսպանակի գալարումներով։

Քիչ-քիչ, մտերմություն կհաստատեի անոնց հետ. կճանչնայի զանոնք, գրեթե կխոսեի հետևներին։

Ամենեն հաճոյալի անակնկալը եղավ երբ ինծի դարձավ իր դեմքը. գեղեցի՞կ. ոչ հարկավ. բայց տարօրինակ կերպով սրտի մոտ ու համակրելի պատկեր մը, հոգնած ու տրտում նայվածքով, որ ինկած տեղը կանգ առնելու պես բան մը ուներ կարծես։

Անո՞ր համար երկար ատեն սևեռած մնաց վրաս. չեմ գիտեր. բայց ինծի այնպես թվեցավ, որ այդ նայվածքը մանրամասն հետախուզեց զիս. չափեց, ձևեց, տեսավ մանավանդ զմայլած ու քիչ մը ապշած արտահայտությունը աչքերուս։ Գոհ երևցավ անշուշտ այս քննութենեն, վասն զի ժպիտ մը գծագրվիլը ու աներևութանալը մեկ եղավ երեսին սաստիկ կարմրությանը մեջ, այն վերջալույսի տարտամ շառավիղներուն նման որոնք արևմուտքին մեջ կհալին՝ համասփյուռ շեկություն մը ձգելով հորիզոնին վրա։

Բ

Որչափ որ կեցանք այնտեղ՝ անխոս մտերմության մը կապերով միացած զգացինք սրտերնիս։ Տարեց մարդիկ կային իր շուրջը, հայրը, հորեղբայրները թերևս, ու անոնց առջև, մանավանդ այն շարահայաց բազմության մեջ, որ այս Մյոհյուրտարի պարտեզը կլեցներ հիմա, զգուշավոր դիրքը պահելու ստիպված՝ չէր կրնար ուզածին չափ ստեպ ինծի դառնալ. բայց զինքը տոչորող հայտնի անհամբերությունը կկարդայի երեսին վրա, ամեն անգամ, որ առիթը գտներ իմ կողմս նայելու։

Պատանության անուրջներուն մեջ երազված, ըղձացված էակն էր դեմս, խորհրդանշաները իմ բոլոր փափագներուս, որ հոդ նստած էր, իր անվերլուծելի ձգողությանը մեջ։

Ազատ էր ան երևես չմայելու ու չխնդալու ինծի. ի՞նչ փույթ. նորեն պիտի սիրեի զինքը, պիտի հետևեի իրեն ու կապվեի իր հիշատակին. իր Կուռքի անտարբերությունը՝ մազի չափ չպիտի խախտեր իմ հավատքս։

Իսկ հիմա ավելի բախտավոր էի. կզգայի ստույգ կերպով որ անուշադիր չէր ինծի, ու զիս վրդովող խորհրդածությունները՝ իր մտքեն ալ կ'անցնեին։

Երազող ու մտամոլոր կերպարանք մը առած էր անիկա և անդադար կդիտեր ծովը՝ հանդարտ, անծալք սփոռցի մը պես պարզված, որուն վրա լուսինը՝ իր լրումի առատությանը մեջ՝ ադամանդե ոստոստուն գոհարներ կթափեր, մինչդեռ ամառ գիշերին անդորրությանը մեջ, ծառերը կկենային մեր շուրջը անշարժ՝ մինչև իրենց դողացող սաղարթները։ Օդին մեջ՝ ամբողջ անուրջի, վերացումի հրավեր մը կար կարծես, որուն երկուքս ալ անձնատուր կ'ըլլայինք ժամերով։

Գ

Կեսգիշերին մոտ էր երբոր բազմությունը ցրվիլ սկսավ. լուսինը անհետացեր էր. անոնք ալ ոտքի ելան. գլխու աննշմարելի շարժում մը՝ որ երկուքիս միայն հասկնալի ըլլալուն համար այնքան ավելի քաղցր բարև մը ձևացուց։

Հեռվեն ուղեկից եղա իրենց, ու ճամփուն վրա, մութին մեջ տեսա իր նազելի գլուխը՝ որ ետին կդառնար մեկը փնտրելու համար կարծես։

Համր ու դանդաղ քալվածքով մը կ'երթային ու հորը ձայնը կ'իմանայի մեզ շրջապատող անդորր լռության մեջ, խիստ ու հրամայող ձայն մը որ հնազանդություն կպատվիրեր։

Արդեն կմեղքնայի զինքը. ի՞նչ կքաշեր արդյոք խստասիրտ հոր մը ճնշումին տակ. մեծ ծառի մը անքույթ հովանիին ներքև փթթած ծաղիկ՝ որ քամիի հարվածներուն դեմ պաշտպանված է անշուշտ, բայց ուզածին չափ արևին երեսը չի տեսներ. անդին, ուրիշներ կան, բաց օդին, ձյունին ու բուքին ձգվածներ, որոնց՝ վտանգները ու վայելքները հավասարապես շռայլված են. ո՞րն է բախտավորը ասոնցմե։

Կզգամ որ իմս վանդակներու ետին պահվըտող աղջիկ մըն է. իր վեհերոտ ձևը այս համոզումը կուտա ինծի։ Ո՞վ է ինքը. ո՞ւր կբնակի. այս հարցումները այնքան ավելի կհուզեն միտքս որքան ահա քիչ-քիչ կմոտենան հարկավ իրենց տունին։

Կանգ առին վերջապես Ֆրերներու դպրոցին կողմը, նոր շինված տան մը առջև. պզտիկ սպասուհի մը՝ կանթեղ մը բռնած ձեռքը, դուռը բացավ. ես քայլ մըն ալ առի մոտենալու ու վերջին անգամ մը տեսնելու համար զինքը. հայրը մտավ նախ, վերջը մյուսները, տարիքի կարգով. էն վերջը մտավ անիկա ու ես մինակ մնացի տասը քայլ հեռուն, փողոցին մթությանը մեջ։

Ան ատեն ուզածիս պես դիտեցի տունը. դեպի Քուշ-Տիլի իջնող զառիվայրին ու հոն վազող վտակին կնայեր երեսը. գեղջուկ ու սիրուն բան մը ուներ. աջ կողմը՝ անկյունի սենյակը, էն աղվորը դիրքով, լույս մը երևցավ հանկարծ ու փողոցեն կրցա տեսնել զայն, մազերը թափած հիմա, որ բաց պատուհանին առջև եկավ կանգ առնելու վայրկյան մը ու դիտելու Մոտայի ծոցը՝ իր սեղմված հողե լանջքերուն մեջ։

Հետո լույսը մարեցավ ու ամեն բան խավարի մեջ ինկավ հանկարծ։

Դ

Ի՞նչ կխորհիս դուն, ձեռքդ գլխուդ այդպես, պատուհանիդ առջև նստած. թեթև քամին մեղմիվ կշոյե մազերդ ու ես կնշմարեմ հոսկե անոնց վրա վազող սարսուռը։

Այս իրիկվան դեմդ ելլող տղո՞ւն կմտածես դուն ալ. սպասված, օր մը չէ նե օր մը գտնված անծանոթին՝ որ հին բարեկամի մը պես առջի ժամեն մտերիմ կ'երևա քեզի, ինչպես որ ես ահա, փողոցին մեջ պատի մը տակ կեցած, քեզի կմտածեմ։

Հետո, ձանձրացած այս միակերպ անշարժութենեն, փողոցին մեջ կքալեմ, աչքս վեր այդ պատուհանին սևեռած. ի՞նչ կ'ակնկալեմ քեզմե, բառ մը, անուշ խոսք մը, որ շոշափելի ապացույցը ըլլա մեզ միացնող համակրության։

Մութին մեջ՝ չեմ կրնար որոշել դեմքը, զոր ծնոտին դրված ձեռքի կգոցե, բայց սև մազերուն ժողվվածքը կտեսնեմ հստակ. մունջ կեցած է հոն, չհամարձակելով առջի բառը ինքը արտասանել։

Եվ ես, իրմե ոչ նվազ վեհերոտ, չեմ խոսիր, վախնալով որ չխոսվեմ այս գեղեցիկ երազը ու ձեռքե չհանեմ զայն։

Հիմա, զովությունը կ'ավելնա. աջ ու ձախ երկարող փողոցներուն մեջ կլսեմ գիշերապահին ճոկանը որ կհնչե ու կ'իմացնե թե ժամը յոթն է։

Վերը անշարժ կոպասե ան իր արձանի դիրքին մեջ, ու ես վարեն, զինքը դիտելով միայն երջանիկ եմ ահա։ Հորիզոնին վրա պլպլացող լույսերը կտժգունին քիչ-քիչ. գիշերը ավելի հստակ, վճիտ ու թափանցիկ կ'ըլլա, ու հեռուն՝ ծովին մութ կապույտը, իր առջի փայլը կորսընցուցած՝ սև ծածկոցի մը պես կտարածվի իբրև թե անհուն դագաղի մը վրա։

Շուրջս տիրող վեհության ու խաղաղության մեջ ինքզինքս ուրիշ աշխարհ մը փոխադրված կզգամ. մաքուր ու խաղաղ երկիր մը, որ իզմե և իրմե զատ բնակիչ չունի. ամբողջ տիեզերքը մեր երկուքիս ձգված։

Աքաղաղները կխոսին. արևելքեն լույսի հոսում մը կսկսի. գեղեցիկ մազերը վերն են միշտ, պատուհանին առջև, իրենց առջի դիրքին մեջ. հովը կգգվե զանոնք, անոնց պզտիկ թելերը կդողացնե. դեմեն՝ լույսը կ'ավելնա, կզեղու, կշռայլվի. արշալույսն է։

Վաստակաբեկ, ժամերով հոս անքուն անցընելուս համար չեմ գանգատիր, դեմս է անիկա, իր պատուհանին առջև ինծի պես անքուն, ինծի պես երազող։

Քիչ մըն ալ կկենամ այսպես. հանկարծ սև մազերու կոհակը կճըշտվի աչքիս առջև. ոեհանի պզտիկ թումբ մը, իր մութ կարմիր թաղարին վրա կեցած, առտվան զեփյուռեն կսարսռա։

Ա՞ն էր բաց պատուհանին առջև ինծի սպասողը մինչև լույս. կզարմանամ. ի՞նչպես չտեսա. ծաղրելի կդտնեմ ինքզինքս. կբարկանամ պզտիկ իյնալուս համար։

Ե

Հիմա, որ տարիներ անցան անկե ի վեր, հիմա կ'օրհնեմ քեզի, ո՜վ ոեհանի պզտիկ փունջ, որ ամեն սրտի մոտ բարեկամե ավելի երջանիկ ըրիր զիս գիշեր մը ողջույն։

Աղջկան մը դեմք առիր պատրելու համար զիս. աղեկ ըրիր, այն բոլոր խանդակաթ գորովին համար՝ զոր թափեցի պզտիկ թերթերուդ վրա, չեմ զղջար։

Առավոտը թող գա ուզածին չափ իր հոսած լույսին անողոք ստուգությունը թոթափելու շորս դիս։

Դուն իմ աչքիս՝ առատ գեղեցիկ մազերն ես միշտ անոր։

<1892>

ԱՌՋԻ ՍԵՐ ԱՌՋԻ ԲԱՐԻ

Ա.

Թագուկ տուտուն իմ դրացիս է. չամուսնացած բարի պառաւ մը որ տունը մնացած աղջիկներու անհամբույր ու դառնացյալ սիրտը չունի։ Իր անուշ լեզուն, զվարթ խոսակցությունը կհիշեցնեն ինծի այն չքաղված խաղողի հատիկը, որ կեցած տեղը, բիրտ հպումներե հեռու, թոմելով ավելի ևս կբաղցրանա, չամիչի կվերածվի։

Թագուկ տուտուն անբասիր անցյալի մը համբավը ունենալով հանդերձ, ներողամիտ է երիտասարդներուն, ու հոժարակամ ամեն որ իր ցավը կխոստովանի անոր ու խորհուրդ կխնդրե իրմե։

Ամեն իրիկուն, կանոնավոր կերպով, պատուհանը նստած կտեսնեմ զինքը. մաքուր հագվելու վարժված կնկան մը անսեթևեթ պաճուճանքին մեջ. այս արդուզարդը հին օրերու տարազը անփոփոխ ու անայլայլ կպահե. նրբագեղ ասեղնագործություններով զարդարված սև յազմային տակ՝ ալևոր մազերուն ցոլացումը կփոխանցվի դուրս, մութ գիշերվան մեջ՝ ձյունապատ դաշտի մը փողփողումին պես։ Դեմքը՝ ճերմակ, անարյուն, խորշոմներով լեցուն հիմակ, կաթնապուրին երեսը ծածկող պարուտակին կնմանի, մաքուր ու փոթ-փոթ։

Ցմեռ գիշերները իր շուրջը կժողովվինք ամենքնիս, զինվելով իր հեզ ու համբերող բնավորությանը դեմ, կատակներ տեղալով իր տարիքին, առանց գործածության մնացած հրապույրներուն, իր յազմային հաստատատիպ հանգույցին և այն անվերջ, անհատնում օյաի մանվածահյուս դրասանգներուն վրա՝ զորս, ակնոցը աչքին՝ Թագուկ տուտու օրն իրիկուն կշինե, կբանի, ճշմարիտ արվեստագետի մը երանությամբը համակված։

Բոլոր արդուզարդեն՝ գլխուն օյան կփոխվի երբեմն, հանդիսավոր օրերու մեջ, ծնունդին, զատկին, խաչին, և որուն անակնկալը, անոր նուրբ գծագրության նորությանը մեջ կկայանա։

Հիմակվան ժանյակներու կոշտ ու ճաշակե զուրկ ձևերուն վրա արգահատելով, Թագուկ տուտուն՝ իր ձեռագործին աննման կատարելությունովը կխրոխտա ու հաղթանակը կտանի, ծերացած դողդոջուն մատներուն, անլույս ու տկար աչքերուն հաղթանակը։

Բ

Ոմանք, անողորմներ, գլուխը հավաքված՝ կտակը կշինեն խեղճ պառավին. բռնի, ակամա կտակ մը, իր ներկայության, իր աչքին առջև, ի կենդանվույն ժառանգությունը բաժնելու համար մեջերնիս, քանի որ էրիկ չունի, զավակ չունի, մարդ ու մարդասանք չունի բացի մենե որ ահա իր շուրջը բոլորված, իր լքված առանձնությունը մեր զվարճախոսություններովը կկենդանացնենք ու կ'ոգևորենք։

Օր մըն ալ ունեցածը չունեցածը տեսնելու փափագը ունեցանք. ադամանդ չունե՞ր, բոնսոլի՞տ ալ չուներ, ի՞նչ ուներ ուրեմն այս Թագուկ տուտուն, մեզի արժանի ի՞նչ ժառանգություն ցույց պիտի կարենար տալ օր մը եթե մեռներ, անպիտան շորերե զատ, որոնք դուրսը անկյուն մը ընկուզենիե շինված պարկեշտ սնտուկի մը մեջ պահված էին։

— Սնտուկը նայինք մեյ մը,— ըսավ վարի քովի տան տղան։

Թագուկ տուտուն բողոքեց. պոռաց. չէ՞ մի որ մահվընեն ետքը մերն էր այդ սնտուկը, ի՞նչ հարկ հիմակուց խառնշտկել իր բոլոր գույքը. իր իրավացի բողոքը խեղդվեցավ մեր հարուցած ժխորին մեջ։

— Սնտո՞ւկը,— պոռացին ամեն կողմե։

Բռնի առինք բանալին ձեռքեն ու ներս բերելով սնտուկը, ծանրացած դագաղի մը պես, վրան վազեցինք դիակեր ագռավներու երամի մը նման։

Հիմա Թագուկ տուտուն իր նստած անկյունեն կդիտեր մեզ առանց նեղանալու. ակնոցը հաներ աչքեն ու բարձին վրա դրեր էր ձեռքի ասեղնագործությունը, ինչ որ շատ կարևոր պարագաներու մեջ միայն կպատահեր։

Իր բոլոր կյանքը, կարգով կանոնով այդ սնտուկին խորը խնամով զետեղված, շարված, դուրս կ'ելլեր հետզհետե, երկար շղթայի մը օղակներուն նման որուն ծայրը՝ ծովին հատակը նետված երկաթին պես, մինչև իր երիտասարդության կ'երթար կհանգեր։ Եվ որքան կ'իջնեինք խորը, կմոտենայինք հատակին, օդե ու լույսե զուրկ մնացող այդ բոլոր նյութերուն հոտը սաստիկ ու կծու կուգար մեզի, քառասուն տարի առաջվընե պահված հոտ մը։

Հարության և վերակենդանության կոչված այս ամեն տարկանները սեղմված թանգարանի տպավորությունը կձգեին վրանիս. ու գովեստները չէինք զլանար տնօրենին, իր ճաշակին նրբության ապացույցը հոս ալ տեսնելով։

Ամբողջ շարք մը կսկսեր, ցուցահանդես մը հին ատեններու պերճանքին, մեծարժեք կերպասներու, վառ ու պոռոտ գույներով, որոնք

հիմա գործածական չեն, էնթարի ջալվարներ Պրուսայի կազե շինված, գույնզգույն տիատեմներ, ճաֆիֆ մատնիներ, սանտրեր, գլխու ասեղներ, բաղնիքի թաս մը. ու հետո, չգիտցողին հասկցնելու համար Թագուկ տուտուին ջերմեռանդ հռոմեական մը ըլլալը,— ինչ որ մենք գիտեինք տուտուին,— ամբողջ ու կատարյալ հավաքածո մը հոն՝ Հիսուսի, աստվածածնի փոքրիկ գունավոր պատկերներու, համրիչներու ու Վենետիկ տպված փոքրակազմ աղոթագիրքերու։

Մեզի պես ինք ալ հետաքրքիր աչքով կհետևեր այս ի տես հանումին, իբրև թե օտարոտի ըլլային իրեն այդ ամենը, որոնք՝ այս վայրկյանիս, իր առջի օրերը ետ կբերեին, անփոփոխ իրենց ձևով, գույնով ու բույրով, գրքի մը էջերուն մեջ զետեղված ծաղիկներու, տերևներու նման տափակցած ու փոշիացած քիչ մը։

Ու առանց վեճի, ինչ որ հազվագյուտ է իրական ժառանգորդներու մեջ, մեր մեջեն ամեն ոք իր բաժինը կ'որոշեր, իրեն պետք եղածը կնշանակեր, մեկդի կդներ։

Հիմա բոլորովին խորն էինք սնտուկին. ձեռագործներ կհանեինք դուրս, գունավոր մետաքսե հյուսված անհավատալի նրբությամբ, և սքանչացած՝ կդառնայինք պառավին որ կժպտեր համեստությամբ։

— Մեր ատենի աղջիկները բոլորն ալ գիտեին ասոնք։

Ու է՛ն վերջը, կապույտ մետաքսե պզտիկ պահարանի մը մեջ, որ ինքնին արվեստագիտական հրաշակերտ մըն էր, պզտիկ փունջ մը... խարտյաշ մազերու։

Գ

Կռիվը այս հեք մազերուն վրա փրթավ. ուսկի՞ց էին, ո՞րունն էին այս մազերը. և առանց իր պատասխանին սպասելու, անհամբեր, մեր վճիռը կուտայինք. սիրահարի մը գլխուն մազերն էին ասոնք, Թագուկ տուտուին սիրահարը. ու անմիջապես կերևակայեինք այդ սիրահարը, կպատկերացնեինք զինքը, մարմին ու հոգի կուտայինք իրեն. միջա՞կ հասակով, ո՞չ. ուրեմն բարձրահասակ։ Թագուկ տուտու մասնավոր տկարություն մը ունենալու էր շքեղ հասակներու ու բարակ մետաքսե պեխերու. գոնե երջանիկ եղա՞ծ էր այս մարդուն հետ։ Ու կհարձակեինք Թագուկ տուտուին վրա, կդատապարտեինք զինքը. այս սուրբ կինը, այս աղջիկը որ մինչև ետքը էրիկ մարդոցմե իր հեռացումը պահեր էր, կեղծավորին մեկն էր. իր հանցանքին խոստովանությենեն ավելի բան մը ունեինք ձեռքերնիս, դրական ապացույց մը։ Կատակները կվերսկսեին ամեն գլխե մեյմեկ ձայնով, անլուր ժխորի մը ներդաշնակությանը մեջ։

— Թագուկ տուտո՛ւ, բռնեցինք քեզի։

— Խարտյաշներեն կ'ախորժի եղեր, չըսեի՞ր մինչև հիմա։

— Ո՞վ է խարտյաշը մեջերնիս, թող առաջ անցնի։

Պառավը պատասխանելու ատեն չուներ, բայց իր սովորական անարյուն երեսը կգունավորվեր ահա, փոքրիկ խաժուկ աչքերը արտասովոր փայլով կճառագայթեին՝ սևեռած այդ մազի փունջին վրա, չկրնալով զատվիլ այդ անխոսուկ հիշատակեն. ու տակավ առ տակավ կթըրջեին, ծիրանի գոտիի մը տակ տեղացող անձրևի մը նմանությունը բերելով։

— Ատիկա մարգու չեմ տար. ինձի հետ գերեզման պիտի դրվի։

Ինչո՞ւ համար. բացատրություն կ'ուզենք, աղվոր սրտաշարժ պատմություն մը, անոնցմե՝ զորս Թագուկ տուտուն համով հոտով ըսելու արվեստին մեջ նմանը չունի։

Եվ տեսնելով որ ծաղրածուները կվիրավորեն զինքը, լուրջ կերպարանք մը կ'առնենք, կ'աղաչենք։

— Քուզում Թագուկ տուտու։

Եվ սնտուկը պարպված կթողունք սենյակին մեջտեղը. բազմոցին ու աթոռին վրա ալ անոր պարունակած այլազան առարկաները, անցյալ կյանքի մը բեկորները. պառավին բոլորը կհավաքվինք, ուշադիր, խելոք կեցած տղոց նման որոնց մասալ մը խոստացված է։

Դ

Մանկությենեն հորմե ու մորմե որբ, Թագուհին հոգեզավակ էր Փերա ընտանիքի մը մեջ, որ մանչ զավակ մը ուներ միայն և աղջիկ զավկի կարոտ կքաշեր։

Այս տղաքը քույր ու եղբոր պես մեծցան, քով-քովի, երկուստեք մոռնալով այն տաբբերությունը որ ճակատագիրը դրած էր իրենց մեջ. մանկական խաղերեն, կռիվներեն, ծեծկվուքներեն ու համբույրով մը կնքված հաշտություններեն վերջը՝ պատանությունը եկավ անծանոթ վրդովումներով, չհասկցված տրտմություններով, ուրախություններով խառնված. և վերջեն, երիտասարդությունը՝ ճշտելով ու հաստատելով ընդնշմարված սրտի անքակտելի կապերը, ինչպես քիմիական բաղադրություն մը, որ հստակորեն ի հայտ կբերե լուսանկարի փոքրիկ տախտակին վրա դրոշմված աներևույթ պատկերը։

Այն ատեն իրենք ալ վախցան, աղջիկը մանավանդ սարսափեցավ, հոգեզավակ մը ինքը, ընկեցիկ աղջիկ մը որ տան տիրոջ զավկին վրա աչք նետած էր։ Հետո քույր ու եղբայր կոչված էին միշտ. այս պայ-

մանադրական ազգականությունն ալ իր սրբությունը ուներ։ Ի՞նչ պիտի ըսեին մանավանդ իրենց ծնողքը. իր տեսած խնամքներուն փոխարեն չէր կրնար վիշտ ու կսկիծ ցանել այս տանը մեջ, ուր սիրով հյուրընկալեր, խնամեր, մեծցուցեր էին զինքը։

Քսան տարու էր ու խորհրդածությունը կու գար, հատու դանակի մը պես, այդ անմեղուկ սերը սրտեն կտրել նետելու հարկը զգացնելով. պահ մը կդիմադրեր, ինքզինքը կպաշտպաներ անձնազոհության դեմ. հետո քիչ-քիչ տեղի կուտար նորեն, վիրաբուժական գործողության մը ենթարկվելու պես. այո՛ի ո՛չի անընդհատ անցուդարձին առջև կկենար ժամերով վարանած, իր իրավանց ու պարտուց զուգակշիռը ընելով, անդունդի մը խորը չափելու հիմար աշխատությանը մեջ համառելով շարունակ. ութ օր այսպես անցուց, սենյակը քաշված. առանձնացած էր հիմա սև ու մութ սենյակին անկյունը։

Ե

Վերջապես որոշումը տվավ. իր միամիտ սրտին մեջ իր դատաստանը ըրավ ու անիրավ գտավ ինքզինքը. ո՞ւր էր թե այդ մարդասիրությունը տեսած չըլլար այս տանը մեջ ու երախտիքի մը պարտքին տակ չճնշվեր հիմա. փողոցի աղջիկ մը ըլլար, անոք ու անտեր, մազերը թափած ու ոտքը բոբիկ մուրացիկ մը, սիրելու ազատությունը պահելով։

Ու անմիջապես դադրեցուց իր մտերմությունները, մեկ հարվածով կծկեց այս փոքրիկ ամփոփուկ ծաղիկը, որ իր հոգվույն մեջ դողալով կփթթեր, մինչդեռ դեմը երիտասարդը կզայրանար ու կնախատեր զինքը։ Անոր դեմ կեղծավոր անտարբերություն մը ձևացնել հարկ էր, էն դժբնդակը իր պարտավորությանցը. ամեն նախատինքի հանդուրժեց ու ամեն աղաչանքի դեմ անդրդվելի մնաց. հառաչանք մը դուրս չթռավ իր խեղդուկ սրտեն, բայց որքա՜ն լացավ իր բարձին վրա։

Ամսվան մը մեջ երիտասարդին քով ոչինչ մնաց առջի սերեն՝ մահացու ատելութենե մը զատ. հիմա ամեն առթիվ իր հայտնի թշնամին էր տանը մեջ, այնքան որ մայրը կմիջամտեր իր տղուն անիրավությանը համար, ու առանձին մնացած ատեն թագուկը կսփոփեր.

— Հոգդ մ'ըներ, աղջիկս, էրիկ մարդիկ բարկացած ժամեր ունին։

Այդ միջոցին էր որ տղան հիվանդացավ. այն ատեն քրոջ մը անձնվիրությամբ խնամեց զինքը, օրերով անքուն հսկեց անկողնին քով, մորը հետ միասին փոխնիփոխ բաժնելով մեջերնին հոգնությունը ու կրսկիծը. ու երբ հիվանդին վիճակը ծանրացավ ու տենդը ցնորանք բերավ,

այն ատեն իր վարանումները վերստին սկսան. ի՞նչ շահած էր այս բոլոր մահացումներեն. և հիվանդին սնարին քով, կանթեղին արձակած առկայծ ու դողդոջուն լույսին պես, իր համոզումները ու տված որոշումները երերալ սկսան։

Այն ատեն փափագ մը ունեցավ հիշատակ մը գոնե պահելու իր ողորմելի սերեն. մկրատ մը գտավ փոքրիկ, որով հիվանդին երկարած մազերեն փունջ մը կտրեց առավ, գողի պես չորս դին նայելով։

Հիվանդը առողջացավ, բայց իր երեսը չնայեցավ. ոչ իսկ հիշեց զինքը. ծնողքը ամուսնացուցին զավակնին ու Թագուկ հարսնիքին զվարթ ու խնդումներես երևցավ։

Անկե ետքը, իր պարտքը կատարած մեկու մը խղճի հանդարտությունը ունեցավ. իր սերը կպահեր սակայն սրտին մեջ, հանցանքի մը պես որ թողություն ստացած է, պարտքի մուրհակ զոր հատուցած էր իր բոլոր երջանկությունը տալով, և զոր իրավունք ուներ ա՛լ քովը պահելու։

Այսպես պահեց ահա տարիներով փոքրիկ մազի փունջը ու ինքը շամուսնացավ։

Հիմա, երեսուն տարի ետքը, կյանքի հազար փոփոխումներե վերջ, հաշտված էր նախկին բարեկամին հետ. եղբայրության կապը վերստին կմիացներ զիրենք ահագին անջրպետի մը վրայեն։ Անիկա թոռան տեր ծերուկ մըն էր կորաքամակ, մազերը ճերմկած, մինչ իր քովինները ահա այդպես թարմ ու դեղին կմնային, ու ատոնց պես իր սիրտն ալ երիտասարդ ու աշխույժ մնացած էր, իբրև թե հանկարծ դադրած ըլլար բաբախելե այն օրը՝ ուր իր սիրածեն բաժնվելու ցավը զգացեր էր. այդ օրեն ի վեր իր սիրտը ապրած չէր ու ծերացած ալ չէր, մինչդեռ մարմինը կ'իյնար, կտկարանար հետզհետե։

Զ

Եվ ձեռքի ձեռք կպտտցնեին այս մազերու փունջը, ջանալով գտնել անոր մեջ պատմված կսկիծներուն հետքը։ Այդ մազերը կպահեին իրենց սևցած ոսկի փայլը և երիտասարդի թարմությունը։ Տարօրինա՜կ բան. իրենց գոյության մեջ մկրատին տված ընդհատումը փրկած էր զիրենք. չէին ծերացեր ա՛լ, իրենց տարեկից բոլոր ուրիշ մազերը ալևորած, թափած, չքացած էին, և իրենք միայն անխախտ ու անդրդելի կմնային քսան տարու՝ խոպոպիքի զվարթությանը մեջ ու պիտի մնային այսուհետև։ Մեկ ցավ մը ունեցեր էին, մկրատին հատու ցավը, բայց այդ

ցավը որքա՞ն կսկիծներե, անկումներե փրկեր էր զիրենք, մշտնջենական երիտասարդությունը շնորհելով, այն՝ զոր Թագուկ տուտուի սրտին մեջ կգտնեինք։

<1892>

ԿԱՏԱԿ

Ա.

Արտորալով կ'անցներ փոզոցեն, տենդոտ ձեռքովը ուժգին սեղմելով կլորցած թուղթի պզտիկ գլաններ որոնք իր տալիք դաշնակի դասերուն տետրակներն էին։

Մտազբաղ, ակնարկը մոլորած, անհասկնալի եղանակներ մրմնջելով քիթին տակեն, կ'անցներ զմայլած ու զվարթ դեմքով, որ իր հոգեկան երանության ճշմարիտ ցոլացումն էր։

Մյուսյու Սեֆերյան այն իրապես երջանիկ մարդն էր զոր հոռետեսները կփնտրեն ու չեն գտներ։ Երջանի՞կ. ինչո՞ւ չըլլար. աղքատ կոշկակարի զավակ, ինքնօգնությամբ, ձրի աշակերտներու վերապահված զրկումներով մեծցած, առաջ եկած տղա՝ որուն հոգիին անեղծանելի ու ազնվական մետաղը չէր ավրված ճղճիմ ու ողորմելի կյանքի տագնապներեն։

Իր աչքին... բայց իր աչքը դարձա՞ծ էր երբեք իրական կյանքի վրա, անջատվելով այն հորիզոններեն ուր սևեռած էր միշտ. իր գոյությունը մշտնջենական պատրանք մը եղած չէ՞ր. սիրո, անձնվիրության, առաքինության, ամեն կերպ ազնիվ զգացումներու գիրկընգխառնում մը չէ՞ր կյանքը. վսեմ նվագներու փոփուրի մը. գեթ այսպես ըմբռնած էր ինք կյանքը և չէր զղջացեր։

Ո՞ւսկից ուր, ազգային վարժարաններու մեջ ստացած թերի ուսումեն անցեր էր դաշնակի սեր տալու. ի՜նչ աներևույթ թելով իր անձուկ միտքը, իր անդորր հոգին երաժշտության անսահման ու վրդովյալ երազներուն կապված էր։

Բիրտ ու կոպիտ գիծերեն, որոնցմով իր մանկությունը, իր պատանությունը կձևանար, հիմակվան գեղարվեստի, բանաստեղծության շնորհալի շրջագիծը շինված էր, որ իր հեզ ու համակերպիկ դեմքը կպարուրեր. այն թուփի ու մացառի չորաբեկ ու վտիտ ճյուղերուն պես որոնցմով հորինված շրջանակ մը երփներանգ ծաղկեպսակի մը ավելի պճնագեղ կ'ըլլա երբեմն։

Բ

Երաժշտությունը զինքը գրավող առաջին հուրին եղավ, անկայուն ու հարափոփոխ դեմքով կին որ ուզված, ըղձացված պատկերը կզգենու ամեն վայրկյան, տեսակ մը մանանա որ փափագված ամեն համը, ամեն հաճույքը կու տա։

Իր դյուրահավան սիրտը շուտ մը կկապվեր այս երաժշտության նվագներուն մեջեն իր աչքին երևցող կիներուն, համոզումով ու անկեղծությամբ ինքնիրեն փեսա ըլլալով շարունակ, անուշ խոսքի մը կամ սիրուն ժպիտի մը տպավորությունը պահելով, սնուցանելով, մեծցնելով իր հեզ սրտին մեջ, հնչուն ու կույս քարանձավի մը պես որուն մեջ ինկող հետին մրմունջը՝ հարուցած անհամեմատ արձագանքովը կ'երկարաձգվի ու կբազմապատկվի։

Գթասիրողներ ու ծիծաղողներ միայն կային իր շուրջը. ի՜նչ ծաղու նյութ քան այս տարօրինակ երջանիկը. հպարտ չքավո՛ր մը չէ՞ր արդյոք որ իր ողորմելի վիճակը՝ հայտնի սնափառությամբ՝ քողարկել կ'ուզե։

Ու դաշնակցություն մը կսկսեր իր բոլորտիքը. կատակի, խաղի, ծաղրի դաշնակցությունը, որ այս մարդուն միամիտ սիրահարի ձևերովը պիտի զբոսնուր։

Վախցվելու մեկը չէր որուն ներելի չէ խաղ ու կատակ ընել, այլ այն անտրտունջ վշտատեսներեն մեկը՝ որոնք կարծես հազվագյուտ խաղալիկներ, զվարճության առարկաներ ըլլալու սահմանված են։

Գ

Ինքը՝ բնավ մտքեն չէր անցներ որ կրնան տաղրել զինքը. ամենեն անակնկալ ու անհավատալի լուրն անգամ չէր կրնար մերժվիլ իր պարզ ու դյուրախաբ սրտեն. այնպես որ, երբ օր մը, իր հարուստ աշակերտուհիներեն մեկը, Զարուհին, իր սրտին ազնվությունը գովեց, այս պարզ խոսքը սիրո հայտարարության մը պես հուզեց զինքը. այս աղջկան նայվածքը իր հոգվույն խորը կթափանցեր հիմա և հրապուրիչ կնոջ խռովանքը կձգեր հոն։ Այդ օրը դաշնակի դասին մեջ շփոթեցավ. ինքզները ու պեմոլները ոստոստեցին ձայնագրության տետրակին վրա, ինչպես որ բոլոր տունը ու բոլոր աշխարհը ալ այս պահուս կդառնար, հիմար երջանկության մը խոլ հոլովումովը միակ լուսավոր ու կայուն կեդրոնի մը շուրջը, այս աղջկան։ Տանը մեջ՝ անոր վրդոված դեմքը տեսնելով զվարճացան. ինչպե՞ս ասանկ մեկ բառով սիրահար կդառնար այս տղան։

Փերայեն, այդ տունեն, դարձավ խռոված մինչև իր սրտին խոր հատակը. բոլոր գիշերը չքնացավ. բանաստեղծ մըն էր այս տղան ու իր լքված ամուրիի սենյակին մեջ ոտանավոր գրելով անցուց գիշերը։

Այն ատեն խաղը բոլորովին զվարճալի հանգամանք մը առավ. ոտանավորը ձեռքե ձեռք պտտեցավ ու հավնվեցավ. այս ֆիանիսքը, իրավ որ չգտնված մարդ էր։ Լուրը տարածվեցավ տունե տուն, գեղե գեղ, և ամեն տեղ միևնույն խնդուքը պատճառեց։

— Ֆիանիսք Սեֆերյանը Զարուհիին սիրահարեր է։

Իրա՞վ. ամենքը այս հարցումը կ'ընեին, չկրնալով իրենց քրքիջը զսպել. պակաս էր քիչ մը խեղճ տղան։

Անկե ետքը խաղը կատարյալ ընելու բաղձանքներ հայտնվեցան. ներկայացումը ամբողջ ըլլալու էր. ու Զարուհիին եղբայրը գյուտ մը ըրավ. իր պաշտպանությանը տակ առավ երիտասարդ ուսուցչին սերը։ Թղթակցությունը իր միջոցով պիտի ըլլար։

Այն ատեն նամակները սկսան, միևնույն հիմար սիրույն խոստովանությունը, որ դրացիներու, բարեկամներու օրական զվարճալիքը կհայթայթեր ու զվարթ ժամեր անցընել կուտար։ Քանի մը մտերիմներ միջամտեցին այս անողորմ կատակին դեմ. զգուշացուցին ու արթնցնել ուզեցին զինքը։

— Մի՛ խաբվիր, Սեֆերյան։

Խաբվե՞ր. իր բարեկամներուն սիրտը հանդարտեցուց, Զարուհին կսիրեր զինքը։ Իզուր խրատ ու խորհուրդ տվին իրեն. ասոնք ամենքը նախանձոտներ էին իր սիրույն. ո՞վ ըսավ որ Զարուհիեն ստացած նամակները կարդա՞ր մեկիկ-մեկիկ. գի՞ր. եղբորն էր անշուշտ. Զարուհին չէր կրնար իր գրովը այդ նամակները հանձնել, բայց ան տուն տված էր անշուշտ եղբորը։ Դա՞ր ձյալ չէին հավտար. հո՛գը. ինք կհավտար ու այս կբավեր իրեն։

Եվ ճամփուն վրա անցնողները կանգ կ'առնեին, դիտելու համար այս մտազբաղ մարդը, որ իր աճապարող քալվածքով ու շուրջին անուշադիր ձևովը ստույգ երջանկության մը ետևեն վազողի մը կնմաներ։

Դ

Օր մըն ալ Զարուհիին եղբայրը ձանձրացավ. կատակը կ'անհամնար. դասատուն Զարուհին ամուսնության ուզելու կ'ելլեր, իր սիրույն, իր իրավունքներուն վրա խոսիլ կսկսեր. ու բամբասող բերանները, որ անպակաս են, այս անիմաստ կատակը մատերնին կնկսեին փաթթել։

Այն ատեն կոշտ ու ստորին բառերով հասկցուցին իրեն, որ այդպիսի աղջիկ մը չէր կրնար իրեն հետ ամուսնանալ. խելքը գլուխը կանչելու էր. ասանկ այլանդակ առաջարկություն մը ընելե առաջ։

Ու երբ համառեցավ, պինդ գլուխ մարդու ձևեր առավ, ճամփու դրին զինքը. ո՛չ շատ աներես մեկն է եղեր այս տղան, որ առջի դեմը ելլող աղջկան հետ կարգվելու կ'ելլեր։

Անկե ետքը անոր երեսը չցուցուցին իրեն. հերքումներ տեղացին դասատուին գլուխը. կատակ մը, կը հասկնա՞ր, պարզ կատակ մը ըրած էր աղջկան եղբայրը, խնդալու համար իր վրա. այդ նամակներուն գոյությունն իսկ չէր գիտեր Զարուհին։

Իր բարեկամները նորեն բոլորվեցան իր շուրջը, համոզելու համար զինքը ու բառնալու համար սրտեն այդ հիմար սերը, որ անբուժելի ախտ մը ըլլալ ու զինքը հավիտյան դժբախտ ընել կսպառնար։ Չհաջողեցան. իր ուղիղ ու պարկեշտ սիրտը չընդունեց որ իրեն հայտնված սերը ծաղր ու կատակ մը եղած ըլլա միայն. այս էր որ այլանդակ, անհնար ու եղեռնական կթվեր իր աչքին ու Զարուհիին բարի սրտին անհամաձայն։

Տարիներ անցան ու դժպվածով Զարուհին չամուսնացավ. և ասիկա պետք եղածեն ավելի էր անեղծ ու անկորուստ պահելու սերը իր հեք ու ողորմելի սրտին մեջ։ Մարդիկ կմիաբանեին իր իրական դժբախտությունը զգացնելու իրեն ու չէին հաջողեր. իր պատրանքը այն մշուշե շենքերեն չէր որ արշալույսի առաջին նշույլին առջև ծվիկ-ծվիկ կբզկտին, կ'անհետանան։

Իրեն հետ զբոսնելու համար, իր դյուրահավան սրտին խաղ խաղալու մտքով հորինված կատակը՝ հիմա մշտնջենական ու անվանելի ստվերի մը պես ամեն տեղ կհալածեր զինքը։

Ե

Գիշերը փողոցին մեջ կսլքտկա. ջութակի մը աղեղին պես տրտնջող և անդուլ երթևեկ մը. երբեմն կանգ առնելով, ունկնդրելով ապարանքի մը պատուհանին տակ, որուն գոց վարագույրին ետին կանթեղի մը լույսը կ'ընդնշմարվի, առկայծ ու պլպլացող լույս, մութի սահմանակից, որ հանցանք մը գործելե առաջ վարանող խղճմտանքի մը կնմանի։

Այս սենյակին մեջ է հիվանդը, Զարուհին, հյուծված ու մաշած, պահելով դեռ գեղեցիկ աղջկան ախտաբույր վայելչությունը։

Զինքը սպառող հիվանդությանը անուն չունի. բարոյական երկարատև տառապանք մըն է ավելի քան թե մարմնական ցավ մը, տառա-

պանք՝ որ ամենեն սաստիկ խոնջենքեն շուտ քանդած է իր առողջությունը։ Իր երբեմնի դասատուին անընդհատ հալածանքն է որ կսպանեն զինքը, հո՞դ, այդ անկողնին մեջ. այդ ծաղրելի սերն է որուն ենթակա եղած է այսքան տարիե ի վեր՝ առանց փրկություն մը գտնելու։ Այդ մարդը հետապնդած է իրեն շարունակ՝ հավատարիմ ուղտին պես, որ իր անշահասեր ու ծաղրելի անձնվիրությամբը Թաբթարենին ետևեն կ'երթար Ափրիկեեն մինչև Թարասքոն։

Ամեն միջոց ի դերև ելած է համոզելու համար այդ մարդը թե չսիրեր և երբեք չէ սիրած զինքը. ու ամոթահար այդ ապուշի սերեն, ջղային անհանգստություն մը ունեցած է որ, քիչ-քիչ, տարիներու շրջանին մեջ, ջուրին թուլիկ այլ համառ գործունեությանը պես քայքայած է իր առողջությունը։ Այս սրտի ախոնդանքեն՝ կյանքը արդեն զզվելի թվելու մոտ է իր աչքին. մինչդեռ վարը, փողոցին մեջ, անգիտակից մարդասպանը կթափառի դեռ իր սիրո անուրջներուն մեջ մոլորած. ուրախ ու երջանիկ է ան, այս կանխահաս մահվան մեջ նոր ու գերագույն ապացույց մը գտնելուն համար, իր սիրված ըլլալուն ապացույցը այս աղջիկեն, երբ աշխարհ խոսք մեկ ըրեր էր կարծես Զարուհին իբրև խաբեբա և անսիրտ էակ մը ցույց տալու իր աչքին։

Այս մխիթարությունը կցոլա հիմա իր ավերյալ դեմքին վրա. այս հավաստիքով՝ իր կսկիծը երջանկության կփոխվի նորեն, ու չկրնալով դուռնեն ներս մտնել, հոդ կենալու դատապարտված, փողոցին մեջ կշարունակե երթևեկել, իբրև թե մտադրած տեղ մը ունենար, անուրջի մեջ քալող մարդու մը պես։

Զ

Զարուհին մեռնելեն ետքը ամենքը բոլորովին հուսահատ ու դրժբախտ կարծեցին զինքը։ Իրոք, առջի երջանիկ ու երանյալ մարդն էր։ Հիմա ոչ դաս, ոչ դրամ և ոչ հարգ ուներ ալ. մտերիմները այս սևեռյալ մտածումի, այս զակատյալ մարդեն կհեռանային քիչ-քիչ։

Հագուստները կհիննային ու չէր կրնար նորեր դնել տեղը. բնակած փոքրիկ սենյակին վարձքը կդիզվեր ու տանուտերը կսպառնար դուրս նետել զինքը ու դաշնակը գրավել. դաշնա՞կը. երբեք չհավատաց որ այդ բանը կարելի է, ու վայրկյան մը մտահոգ չեղավ։

Ու կշարունակեր փողոցները թափառիլ աննպատակ, պահելով իր առջի երանյալ մարդու դեմքը զմայլած պատկերի մը առջև, որ ամենուն աներևույթ՝ իր աչքին դեմն էր սակայն։ Իր սիրելիին մահը, սրբամաշուք ցավե մը առաջ եկած, հատնումը ու սպառումը այս քաջառողջ

աղջկան՝ իրմե զատվելեն ետքը, իր սերը ու հավատքը նվիրագործեր, ու իրեն խաղ մը խաղցուցած ըլլալու կարելիությունը հերքեր էր։ Ապաքեն երբեք չէր տարակուսած անոր սիրույն վրա։ Այսպես հեռվեն, լռիկ մնչիկ, տարիներով սպասեր էր առանց անձկության, և առանց կասկածի թունավորումը զգալու իր մաքուր սրտին մեջ, ու ծերացեր էր գրեթե։

Հիմա ալ, մահը կու գար իր ձեռքեն հափշտակելու համար զայն. ու ան ալ չէր հաշտեր. սիրելին հոն է միշտ, իր գեմը, իր աչքին առջևը, այն առջի օրվան անուշ ու տրտում նայվածքովը որ չի գրվիր, չի զուրցվիր ու չի մոռցվիր։

<1892>

ՖՈՒՐԹՈՒՆԱ

Ա

Ֆուրթունան իմ դրացիս էր Քանտիլլի բնակած տարիս. հին ու փտած մակույկը որուն մեջ կթիավարեր օրն ի բուն, գիշերները մեր քովի ծովեզերքը կպահեր։

Մարդ ու մարդասանք չուներ. ընկեցիկ մեկն էր գեղին մեջ, ամառը՝ բաց օդին ու ձմեռը՝ հաստ պատի մը կողին մեջ բացված պատուհանաձև խորշը կքնանար ամեն իրիկուն, երբ գինետունեն, օրվան վաստակը վճարելե ետքը, դուրս ընեին զինքը. առանց տրտնջալու, խանութպանին անվիճելի իրավունքը ճանչցողի մը պես կհնազանդեր, դիմացինը ամչցնելով գրեթե իրեն դեմ ցույց տրված խստությանը համար, ու պատեպատ, քարեքար զարնվելով, իր տեղը, իր ողորմելի խշտյակը կգտներ միշտ։

Օդին իր միակ մոլությունն էր, իր միակ ըմբոնումը կյանքի, իր միակ իմաստասիրությունը. որքա՞ն ատենե ի վեր կխմեր այս մարդը. ոչ ոք պիտի կրնար ճշտիվ զուրցել. բայց իր կարմրած ու թմբրկած այտերեն, իր միշտ կիսափակ ու նվաղած աչքերեն, իր երերուն ու օրորվող քալվածքեն դատելով, որուն մեջ հավիտենական գինովը ու ծովի վրա մեծցող նավաստին իրար կ'ամբողջացնեին, նոր բան մը ըլլալու չէր։ Հագուստ չուներ. իր գրգլյակը մարած, նվաղած, մեռած երանգներու խառնուրդ մըն էր, աղքատության ծիրանի գոտին, զոր Նեսոն չէր գտած գեռ։ Անհամար կարկտաններու հակառակ՝ արմուկները դուրսն էին

միշտ, և չգոցվող կուրծքեն, լանջը՝ ուռած, կախված գորշ մսակույտ մը՝ աչքի կզարներ, արգահատանք կհրավիրեր այս մարդուն վրա։

Բ

Ատենով էն վայելչասեր նավավարն էր, մեկը անոնցմե որոնք անգիտակից արվեստագետի մը ճաշակը ցույց կուտան իրենց ռամիկ գործին մեջն ալ. անարատ պյուրինեիկ շապիկով, կապույտ թավիշե պըզտիկ բաճկոնակով, ձյունսպիտակ մաքուր շալվարով կպտտեր միշտ. իր նավակը, նուրբ, հյուծախտավոր տոհմիկ աղջկան մը նրբությամբ, սրընթաց նետի մը աշխույժը ուներ. կդողար. կգուրգուրար այս նավակին վրա, կշոյեր, կսիրեր զայն զավկի մը պես. հաճախորդները կգանգատեին այն չափազանց զգուշութենեն, զոր իրենցմե նավավարը կպահանջեր, կոխած կամ նստած ատեններին. ինքզինքը կ'արդարացներ. գիտեր որ մեյ մըն ալ ասանկ ձևավոր նավակ մը չպիտի կրնար շինել տալ։ Ո՛չ. ասիկա մասնավոր շնորհք մը ուներ, անբացատրելի բան մը. իր տեսակին կատարելությունն էր. օր չէր ըլլար որ տախտակները չսրբեր, արույրե կազմածքը չմաքրեր, չփայլեցներ ոսկիի պես։

Գեշ օդերուն, անձրևին, ծովը չէր իջեցներ. ագահի մը՝ հարստության համար ունեցած սերը ու տառապանքը ուներ ինքն ալ։

Այն ատեն երիտասարդ մըն էր. նշանված էր ու պիտի ամուսնանար. երևակայեցեք նավավար Էտմոն Տանթես մը։

Գ

Ամառ օր մը, Պեշիկթաշի առջև փոթորիկի բռնվեցավ. հանկարծուստ պայթող մրրիկ մըն էր, սև թաթառի մը պես խոյանալով իր վրա։ Մթնամինակ էր ծովուն բացը. իր անձին չմտածեց այնքան որքան իր խեղճ նավակին. շփոթեցավ, կորսվեցավ. ու երբ ողողող աղի ջուրերեն դուրս հանեցին զինքը, իր պրկված ձեռքին մեջ թի մը կար, վերջին բեկորը իր ընկղմած նավակին։ Երբոր խելքը գլուխը եկավ, չհավատաց, փընտրելու ելավ. անկարելի էր որ անհետ կորած ըլլար իր նավակը. տեղ մըն էր պահված ուր պիտի երթար գտներ զայն, մաքուր, փայլուն կազմվածքովը, ժպտուն հարսի մը պես։

Հետո հարկ եղավ համոզվիլ. բայց անկե վերջը երեսը չխնդաց. իր կսկիծը ճշմարիտ սուգի մը համեմատությունները առավ. ետ ձգեց հարսնիքը, ու ատեն մը շաշխատեցավ։

Հաջորդ ամառ նոր մը շինել տալու ձեռնարկեց ու շինվածին չհավանեցավ. ետ ձգեց՝ ուրիշ մը ապսպրելու համար ու անկե ալ գոհ չեղավ.

իր նավակին ճիշտ նմանը կպահանջեր, չափը կուտար, ձևը կբացատրեր. բայց ո՛չ. էն վարպետները այդ անանուն փափկությունը անգամ մըն ալ չհաջողեցան տալ։ Ու իր հավաքած դրամները այսպեսով վատնեց. քիչ մըն ալ գինետունները սկսավ երթալ, օդիին, այս լուռ խորհակցին, իր ուզածը, իր բացատրել չկրցած խնդիրքը հասկցնելու։

Դ

Անկե վերջը անկումը եկավ, մեղմ, թույլ, աննշմարելի բայց ստույգ փճացումը։ Նշանածը, սպասելե ձանձրացած, ուրիշի մը հետ ամուսնացավ. և ինքը շարունակեց նավակ փոխել, անտեսանելի տիպարի մը համառությամբ դեռ հետամտելով. իր նավակը, իր ամուսնությունը, իր վիճակը հարցնողներուն մեկ բառով մը կպատասխաներ, որ իր ամբողջ պատմությունը կպարունակեր.

— Ֆուրթունա։

Թախծալից ու տրտում ձայնով մը կուտար պատասխանը, միշտ միևնույնը, բառ մը միայն կտրուկ.

— Ֆուրթունա։

Ըսին որ խենթեցավ. գինովությունը ապուշի ձև մը տվավ իրեն. սկսան վրան ծիծաղիլ։

Անկե մնաց Ֆուրթունա անունը, մինչդեռ ինքը, գինետան անկյունը օդիի սրվակին առջև, իր նավակը կ'երազեր դեռ, դյութական գիծերով շինված։

Իրոք, աղքատության մեջ իր հինցած նավակը ա՛լ չէր կրնար փոխել. նորոգել կուտար հիմա, կոկելով անոր ծռած տախտակները, մաշած ու կոտրած թիակները. ամառները կներկեր, հինեն մնացող վայելչասիրության դրդումով։

Բայց օդիին ավերումներուն տակ իր կամքի ու կարողության մնացորդները կսպառեին։ Ֆուրթունան հաճախորդ չուներ ա՛լ, բացի անցորդ մանրավաճառներե ու խաբեբա մուրացիկներե զորս չնչին գնով մը տակավին կփոխադրեր հոսկե հոն, կուպրով ծեփված մակույկին մեջ, նստուկ գացողի մը պես՝ անգիտակցաբար կարծես շարժելով թիերը։

Ու պատուհանես կդիտեի զինքը, ամեն անգամ որ անցներ դառնար։ Դանդաղորեն ջուրը մխվող թիերուն ճողփյունը իր մշտնջենական երազը օրորող երգը կթվեր ինծի։

Ատով կշարունակեր գալ, ամեն օր կանուխ, պատրաստ կենալով իր մակույկին նստարանին վրա կորսամակ, քիթը կորսված կունտ ու

կակուղ այտերուն մեջ, անփույթ անվհատ սպասելով, և ամառը տաքուն՝ եղերքին խոտին վրա, արևին տաք ճառագայթներուն տակ քնանալով, հանդարտ ու անմեղ քունով մը, մեզի ցույց տալով իր եղկելի ու կիսամերկ մարմինը՝ համարձակ գետին թավալած։

Ե

Մարդ չէր ճանչնար. ոչ զիս որ տարի մը շարունակ իր դրացին էի, ո՛չ իր գեղացիները՝ որոնց մեջ ապրած էր այնքան ատեն. մարդ չէր ճանչնար. մարդկային ամեն ձայն, ամեն աղմուկ ու ամեն դեմք մշուշի մը մեջ կխառնվեին, կշփոթվեին մեկը մյուսին հետ։ Մեկ հոգի մը կզանազաներ դեռ. ջատուկ պառավ մըն էր, որ կու գար առտուները իր երկու աղջիկներուն հետ յազմա լվալու իմ տանս մոտ։ Ֆուրթունայի նշանածն էր. ու զայն տեսնելուն իր արբեցութենեն կարմրած դեմքը կդալկանար, մահատիպ գույն մը կ'առներ։ Նստարանին վրա շտկվելու, ուղիղ դիրք մը առնելու ջանքեր կ'ըներ, իր ցնցոտի փալթոին օձիքը կդարձներ մերկ կուրծքը պարտկելու համար, բնազդական ըղձանքով մը, որ այս կործանած իմացականության մեջ դեռ կենդանության անորոշ նշան մը կու տար, վերջին տկար շառավիղը այս մարած հոգիին աղջամուղջին մեջ։

Ադկե զատ օղին ուներ միայն իրիկվան. խենթի պես կվազեր վեր, գեղը, հոն ուր գինետունները կվխտան. ամենքն ալ իրենն էին, ամենքն ալ. արբեցության մեջ իր գոյությունը կսկսեր, ոչ հիմակվան ողորմելի կյանքը, այլ առջի երիտասարդության օրերը, իրենց հուսալից ու խընդում երեսուվնին։ Իր նավակը նախ, նրբամարմին թռչունի ձևով, որ ծովը հազիվ թե կշոշափե իր վազքին մեջ. հետո նավավարը՝ իր շքեղ արդուզարդովը, ֆեսը ծռած, որուն կա պուլտ ծոպին ծայրը ուսին վրա կ'իյնա. ու նավակին մեջ իր նշանածը, այն գեղեցիկ հույնի աղջիկը զոր սիրած էր։

Եվ այս աղոտ հեռանկարը, օղիի սրվակներու հաջորդությանը մեջ, կճշտվեր, հայտնի, պայծառ, կկենդանանար, ու Ֆուրթունան ամեն իրիկուն անով կ'ապրեր ժամերով, ժամերով մինչև որ գինետունեն դուրս ընեին զինքը։

Այս արբեցությունը Ֆարիայի գանձը չէ՞ր միթե այս ողորմելի մարդուն ձեռքը, ամենազոր կարողությունը որ վրեժները կլուծե, մարդոց ու դիպվածներու դեմ անխտիր։

<1893>

ՄԵՂԱ՛, ՏԵՐ

Ա

Առտվան ժամերգությունը նոր կսկսեր, մթության մեջ կորսված դեկտեմբերի առտու մը, ցուրտ ու խոնավ. կոչնակը օդին ու բուքին մեջ կ'արձակեր իր ընդհատվող վայունը, մինչդեռ թափուր եկեղեցին պանդուխտ քահանային ձայնովը կ'արթննար, կսարսռար իր քարակոփ պատերուն ու կամարներուն մեջ։

Տերտերը կ'երկնցներ իր աղոթքը, սպասելով բարեպաշտներուն որոնք չէին գար. վասն զի ո՞վ կու գար եկեղեցի, ձմեռ ու լուր օր մը, այս շլուսցող առտվանցով։

Քահանան շուրջառը ուսին իր ժամերգությունը կշարունակեր։

— Տեր զի բազում եղեն մեղք իմ և բազում անօրենությունք իմ։

Խուլ ու տարտամ ձայնով մը որ տիրող կես մթության կհարմաբեր, անտարբեր իր շուրջի միայնության, և անզգա ձայնագրի մը պես արտասանելով աղոթքին տուները. իրեն համար քսան տարվան սովորություն մը։

Հետո երկրորդ ստվեր մը տեսնվեցավ իր քովը. լուսարարն էր, այս որմերուն պահապանը, անոնց պես ամուր իր անտանելի պաշտոնին մեջ, սիրելով այս ստվերները, այս լքումը և կամարներեն կախված, կամ սուրբերու պատկերներուն առջև հաստատված կանթեղները, որոնք իր հիվանդագին զավակներն էին գրեթե, փութալով անոնց քով, մեկեն մյուսին, անոնց շարունակ սպառելու մոտ կյանքը արծարծելով։

Քիչ-քիչ մեկ երկու հոգի ալ երևցան, ժամկոչը, հետո մուրացիկ ծերուկ մը իր փայտե գավազանին կոթնած. ու հետո երկու պանդուխտ որմնադիրներ, հազիվ քուներնուն արթնցած։ Հիմա առտուն կճշտվեր. կանուխ գործի գացող բանվորներ կու գային խաչ մը հանելու դրան մոտ և հաջողություն խնդրելու. ժամուն սովորական աղոթողները ասոնք։

Բ

Սարաֆը ուշ եկավ եկեղեցի այն առտու. Առավոտ լուսին կեսին միայն հասավ, ինք որ ամեն օր զայն ծայրեծայր ըսելուն կպարծենար։

Դուրսը տիրող ցուրտին հակառակ, քրտնաթոր մտավ ներս, ծանրաշարժ ու պարարտ մարմնին բեռան տակ շնչասպառ. երեսը խաչակընքեց, ծնրադրեց, ֆեսը վար առած, ցույց տալով յուղոտ ու հերաթափ

գանկ մը. հետո բարձրաձայն հառաչանք մը ելավ կուրծքին խորեն, խորեն.

— Մեղա՜, տեր։

Երբեք մեղա բառը այսքան ստույգ անձկությամբ, այսքան անկեղծ ապաշավի մը արտահայտության ձևով լսված չէր։

Դասին մեջ շոքած սարաֆին կլոր մարմինը, ծռած գլուխը, կիսափակ աչքերը, ողորմելի ու գթության արժանի պատկեր մը կձևացնեին աստվածային զայրույթին տրամադրության տակ դրված. և ինք հանցանքին մեծությանը չափ այսպես անկեղծ զղջումի մը գալով միայն թողություն կ'ակնկալեր կարծես, երբ հետզհետե կկրկներ մարող, սպառող ձայնով մը, առանց քաշվելու զինքը լսողներեն.

— Մեղա՜, տեր, մեղա՜, տեր։

Հետո, թեթևցած, ոտքի ելավ ու իր հաստ ձայնը՝ տերտերին ձայնին միացավ. ու լուռ եկեղեցին կ'ապշեր, կխռովեր՝ ունկնդրելով այս մարդուն։

Ինքը՝ իր տանը մեջ ըլլալ կթվեր. դասը, գավիթը, խորանը բոլորովին իրեն էին անշուշտ. ինք կ'ըսեր աղոթքը միայնակ, քահանային առաջ, բառերը հատիկ-հատիկ, ամեն պարբերության նշանակությունն ու սրբությունը շեշտելով. պահ մը կհոգներ, շունչ առնելու կստիպվեր, ու վայրկյան մը վերջը նորեն կսկսեր, ընդմիջելով քահանային անորոշ մրմունջը և ծուռ-ծուռ նայելով անոր երեսը, երբ սխալ մը սպրդեր կամ վարանում մը տեսներ նոր տուն մը սկսելու ատեն։

Վայրկյան մը նորեն կմասնավորվեր իր աղոթքը, անհամար ծընրադրություններու խառնված, համբուրելով գետնի աղտն ու փոշին, ու լալագին և սրտաշարժ ձայնով մը վերադառնալով իր անձին.

— Մեղա՜, տեր։

Գ

Մարտիրոս աղան այսպես էր ամեն առտու, անպակաս եկեղեցիեն, իր ներկայությամբը ապահովելով եկեղեցիին բոլոր ծեսն ու արարողությանց կանոնավորությունը, և ոչ մեկուն փախուստի ճամփա չձգելով շարականներեն բառ մը պակաս կարդալու համար։

Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենեն կդողար. քարոզիչն ու թաղական խորհուրդը կ'ակնածեին իրմե և գյուղացին կմեծարեր այս հավատացյալ աղան, որ իր բոլոր հարստության հակառակ աղքատի մը պես խոնարհ ու աստվածավախ կթվեր։

Պոլիս, իր խանութին մեջ, Մարտիրոս աղա մեծազոր մարդ մըն

էր։ Հայր մայր չուներ, այլ հորեղբայրներու ու հորեղբոր որդիներու անհատնում շարք մը, որոնք փոխն ի փոխ կու գային իր քով, սորվելու դրամ շահելու արհեստը, հաճախորդներու հետ վարվելու կերպերը, բայց գիշերները տունը սարաֆին հետ Եկեսցեի կենալը աչք առնելով։ Այսպես անոր մեյ մեկ մանրանկարները կդառնային, Աստվածասիրությունը Դրամասիրության հետ հաշտեցնելու գաղտնիքը գտնելով։

Բայց անոնցմե ոչ մեկը աղային չափ հարստանալու հնարը կտեսներ։

Իրենց ժառանգական վաշխառուի բոլոր ճարտարությամբը, ստակ փոխ տալու ձևով աշխարհ կողոպտելու բոլոր խորամանկությամբը, ոչ, այդ հարստության չէին կրցած տիրանալ, և ինքնիրենին, երբ իրենց մեծավորին քով կեղծավորություն ընելե ու սպասավորի դերը մը ունենալե տաղտկացած բերաններին բանային, կհասկցվեր, որ իրենց խելացի աղգականը ի՛նչպիսի դեպքերե կրցած էր օգուտ քաղել։

Դ

Հայրենիքեն գրեթե բորիկ եկավ Պոլիս, նիհար ու վատույժ պատանի որ խաներու, քարուկիր սենյակներու խոնավության մեջ ծառայությամբ հավաքած հինգ հարյուր ղրուշով բացավ իր սարաֆի տոլապը, ճշմարիտ «տոլապ» մը զոր մինչև այն օրը ոչ ոք իրեն չափ վարպետությամբ դարձուցած էր։ Իր հայրենի քաղքին մեջ զոր Մարտիրոս մեր Երկիրը կկոչեր, տիրացություն ըրած ու ժամասիրություն ժառանգած էր ադկե։

Իր աղքատության, որբության բոլոր թշվառությունները տիրացուի զգեստը հագնելով կմոռնար, և աստուծո առջև, աստուծո տան մեջ, իր անկյալ դիրքեն կբարձրանար հանկարծ ուրիշներու հավասար ըլլալու և իր ջերմեռանդությամբը զանոնք գերազանցելու չափ։— Եվ ի՞նչպես չսիրեր եկեղեցին, ուր ո՛չ հարուստ ըլլալու, ո՛չ բախտավոր ըլլալու պետք կար աստուծո աչքին։ Այսպես երջանիկ ապրեցավ քանի մը տարի, մտածեց որ երկինքին թագավորությունը տնանկներու հատկացված է ու մխիթարվեցավ իր ներկա չքավորութենեն։— Բայց երբ տասնութը տարին թևակոխեց, բռնի Պոլիս ղրկեցին զինքը մարդ ըլլալու համար, իբրև թե աղքատ ըլլալուն համար մարդ եղած չըլլար մինչև այդ ժամուն։

Իր տաժանելի ուղևորության միջոցին, հետո շոգենավին մեջ և մանավանդ Պոլսո մեջ իր համոզումները, սովորությունները - անփոփոխ մնացին։

Ո՛չ, այս մայրաքաղաքը երկրին չէր նմաներ բնավ։ Ակնա տնակներուն երդիքը, գյուղացվոց շալվարը, կիներու աղտոտ լաչակը չտեսավ հոս, նոր աշխարհ մը՝ նոր գաղափարներ արթնցուց. վայելքի պետքը դրամի պետքը ցուցուց։ Իր բարեպաշտությունը, որ մինչև այն ատեն անշահասեր էր, պահանջող, ուզան բերան դարձավ։

Մայր եկեղեցվո մեկ անկյունին մեջ քաշված՝ անհատնում աղոթքներու ու շարականներու քաղվածքով ստակ և դարձյալ ստակ ուզեց աստուծմե. և իր աշխատության փոխարեն առած չնչին գումարները, որոնք զինքը կշլացնեին, աստվածային պարգևներ կհամարեր և իր աղոթքներուն վարձատրությունը։

Այսպես իր առևտուրը աստվածասիրության հետ խառնված մնաց. այն բոլոր առիթները ուսկից դրամ շահելու կարելիությունը նշմարեց, իր օգտին համար աստուծո կողմե հատկապես կարգադրված նկատեց ու բան մը չհարցուց ա՛լ իր խղճին։ Աստված իր ըրածը չէ՞ր գլուխ միթե։

Ե

Անգամ մը միայն տարակուսեցավ, վարանում մը զգաց։ Անոր բարեպաշտ մարդու համբավեն խաբված, իր մահամերձ բարեկամներեն մեկը մեծ, շատ մեծ, իր չտեսածին չափ մեծ գումար մը ավանդ հանձնեց իրեն, մահվընեն վերջը այդ գումարը ազգին ու իր ազգականներուն մեջ բաժնելու խնդիրքով. Մարտիրոս աղա նախ չհավատաց այս անակնկալ վստահության. հիվանդին անկողնին քով նըստած, սենյակին դուռը գոց, նախ անդիմադրելի մարմաջ մը զգաց տեսնելով այդ գումարը զոր հիվանդը փոքրիկ սնտուկե մը կհաներ. հետո հիվանդը հոն խղդելու և ստակները հափշտակելով փախչելու գաղափար մը ունեցավ, հիմարի գաղափար մը. բայց այս փորձությանց դիմադրեց. ի՞նչ հարկ անոնց. միթե աստված իր դեմը հանած չէ՞ր այս հիվանդը. ու աստուծո թողուց որ իր ուզածին պես տնօրինե ամեն բան։— Մարտիրոս աղա նախ դիմադրեց, չուզեց ընդունիլ այս ավանդը, ցած ձայնով, վախնալով որ դրան մոտ սպասող մեկը չլլլար ու իմանար այս ավանդի խնդիրը. հետո քիչ-քիչ տկարացավ, ավանդին պայմանները հարցուց. նախ է՛ն գլխավորը, տոկոս պիտի տա՞ր, ոչ, ըսավ հիվանդը. այն ատեն ա՛լ անձնատուր եղավ, ստացավ ավանդը, և աստվածաշունչեն հատվածներ բերավ մահամերձին ազգասիրությունը գովելու համար։

Հիվանդը մեռավ և հուղարկավորներուն մեջ Մարտիրոս աղա իր

արցունքներովը անկեղծ ու անսահման կսկիծով մը ննջեցյալին ամենեն սրտակից բարեկամը համարվեցավ։

Հուղարկավորության տևած բոլոր միջոցին ամբողջ ճամփուն երկայնությամբը այս մեռած մտերիմին վրա խոսեցավ, անոր բարեմասնությունները, պարկեշտությունը գովեց, անոր կյանքեն մասնավոր դեպքեր պատմեց և լացավ, մինչդեռ ուրիշներ, դագաղին ընկերանալով հանդերձ, իրենց համիալին, ֆոնեշիմենթոին, փիացային խոսքերը կ'ընեին. Մարտիրոս աղա զայրացավ ու իբրև թե ինքը ըլլար այս անճահ խոսակցությունը ընող, կսկծալի ձայնով մը գոչեց.

— Մեղա՜, տեր։

Մարդիկը լռեցին վայրկյան մը, քանի մը քայլ ալ ըրին լռությամբ. հետո մեկը, պասմաի վաճառական մը, շարունակեց իր խոսքը.

— Ահեմներուն պերաքները ձեռքե հանելու է։

Զ

Մարտիրոս աղա անկե վերջը իր բարերարը նկատեց ննջեցյալը. թող չտվավ որ մեկը գեշ ըսե անոր վրա. միթե այս մեծ հարստությունը անոր չէ՞ր պարտեր. ո՛չ, ապերախտ մարդ չէր. հետո այդ ավանդը յուրացնելու համար խորհեցավ ամիսներով. նախ ըսավ որ իրավունք չուներ ուրիշին ինչքը գողնալու. վերջը ինքնիրեն հարցուց, թե ինչո՞ւ աստված իրեն հանձնել տվավ այդ ավանդը և ոչ ուրիշի մը. այս հարցումը իր տարակույսները վանեց. աստված այս առիթը կներկայացներ իրեն հարստանալու համար, և ինք՝ իբրև խելացի մարդ՝ առիթեն օգուտ կքաղեր, մինչդեռ անխելք մը այդ բանը չպիտի մտածեր. այսպես բացատրեց աստուծո կամքը և ճշմարիտ գոհունակությամբ մը ավելցուց.

— Կամք տյառն օրհնյալ եղիցի։

Անդին՝ ննջեցյալին ազգականները կարոտության, չքավորության մեջ կմնային, անոր այրին Մարտիրոս աղային կդիմեր պզտիկ օգնություն մը հայցելու համար, իբրև իր ամուսնին սրտակից բարեկամեն։

Մարտիրոս աղա չզլացավ այդ օգնությունը, բայց այս դիմումը իր տարակույսները նորեն արթնցուց. պահ մը խորհեցավ որ ըրածը ճըշմարիտ գողություն մըն էր. բայց ո՞ր մեղքը թողություն չստանար եթե մարդս մեղայի գա. ու այս հույսով, սարաֆը թախանձագին ներում մը խնդրեց.

— Մեղա՜, տեր։

Պահ մըն ալ ըսավ որ ազգականներուն դրամը տա, բայց ազգին

դրամը պահե. ի՞նչ է վերջապես ազգին դրամը. չէ՞ մի որ ուրիշ մը պիտի ուտեր։

Այս վարանումներով կպահեր, այսինքն կգործածեր ստակը որ իր ճարպիկ ձեռքերուն մեջ արդյունաբեր կդառնար, բարեբախտ դեպքերով կկոկնապատկվեր, այնքան որ այս հաջողությունը իր գողության արդարացումը կ'ըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացույց, զղջում մը, զոր սովոր էր ա՛լ հայտնելու ամեն սոթիվ, խորունկ հավատքի ձայնով մը.

— Մեղա՛, տեր։

<1890>

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՆ ՎԱՂՈՐԴԱՅՆԸ

Ա

Ձեղունին ապակյա լուսամուտեն, նրբանցքներուն վրա բացվող պզտիկ պատուհաններեն, առտվան լույսը թատրոնեն ներս կսպրդեր,— սրահին մեջ ցրտին ու դողահար լույս մը, դուրսը տեղացող ձյունին սպիտակ ցոլացումը գոգցես, որ սրահին շիկորակ լույսերուն քով՝ կտժգուներ, կմարեր։

Ներսը կպարեին, երաժշտության ոգևոր շեշտերեն մղված, հորձեռանդն ու տենդահույզ, ուշադրություն չընելով այս կսնխահաս առտվան, ու սրահին տաք ու աղմկալից մթնոլորտին մեջ երկարելով այս ձմեռ գիշերվան զբոսանքն ու հաճույքը։

Երեսները ա՛լ կբացվեին. առջի զգուշությունը՝ սևաթույր կամ վարդերանգ մետաքսե դիմակներուն հետ մեկդի կնետեին ամենքը, այս պահուս մտերիմ դարձած իրարու։ Կես գիշերեն ի վեր անընդհատ տևող պարերուն հարուցած փոշին, այրերու սև զգեստներուն ու ձյունաթույր փողկապներուն, կիներու արդուզարդին և նուրբ շպարին վրա կտեսնվեր։

Հոգնած, հուլացած, դեռ կշարժեին, հանդարտելու մոտ եղող ծովի մը վերջին կոհակներուն պես։ Քիչ-քիչ, առտվան լույսը կզորանար, անկյուններուն ու անցքերուն մեջեն մթությունը կվաներ, ու սրահին մեջ կսկսեր տարածվիլ՝ իր շլացուցիչ ճերմակությամբը շեշտելով կազերուն դեղին ցոլքը։

Եվ ակամա կձգեին պարասրահը. տակավ առ տակավ բազմությունը կպակսեր. կմեկնեին խումբ խումբ, դրան մոտ հավաքված, պատմուճակեն ետ առնելով ցուրտին դեմ պատսպարվելու համար բերած զգեստներին. զույգ-զույգ, թև թևի կ'ելլեին դուրս, ձյունին անբիծ ու միապաղաղ մակարդակը կոխոտելով կհեռանային, այրերը իրենց վերարկուին օձիքը վեր առած, կիները դիպակե մեկնոցներուն մեջ փաթթված, իրենց հետ տանելով երաժշտության եղանակներուն արձագանքը, մինչդեռ դրացի տուներու պատուհաններեն՝ կանուխ արթնցող հետաքրքիրներ թմբռկած աչքերով կդիտեին ձյունին անշարժ ծածկույթին վրայեն սահող այս ստվերները։

Քիչ մը վերջը ոչ ոք կմնար պարողներեն. թատրոնին լույսերը կմարեին. և երաժիշտները իրենց կարգին կմեկնեին, գործիքներնին լաթե ծածկոցներու մեջ փաթթած թևերնուն տակ, պարասրահը իր սովորական կես-խավարին ու լուռ անդորրությանը հանձնելով։

Բ

Ինքը վերջին մեկնողներեն մեկն էր պարահանդեսին. ամայի ու անձայն փողոցին մեջ կքալեր, երկար ու կոճկված փալթոին տակ պահելով իր պարողի սև զգեստները, շապիկին բաց կուրծքը, որ հիմա այս լուր օրին ու ցրտագին առտվան չէր հարմարեր բնավ։

Առջի գիշերվան լույսերու փողփողումներեն, օթյակներուն մերկ ուսերեն ու շպարված դեմքերեն, սրահին խոսակցությանց և երաժշտության ձայներուն թոհուբոհեն տարօրինակ խառնուրդ մը իր հոգնած երևակայության մեջ կմնար ու կ'ընկերանար իրեն։

Ճամփուն վրա հազվադեպ անցորդները կդիտեին այս դալուկ դեմքը և քնաշրջիկի քալվածքը. ինքը կշարունակեր ճամփան, ուղիղ փողոցի մը մեջեն, սառույցե սահուն քարահատակին վրա. տուն կդառնար։

Եվ ամեն մեկ քայլափոխին՝ ոտքերուն տակ ճմլվող ձյունին միօրինակ խշրտուքը պարի եղանակներ կ'արթնցներ մտքին մեջ, վալսը՝ իր թախծալից բանաստեղծությամբը, մազուրքան՝ իր ընդհատված նվագներով։

Վաստակաբեկ ու դանդաղ քայլերուն հետ քաղվածք մը կբներ իր երեկույթեն. և երաժշտության, պարի, գույներու, ծանոթ ու անծանոթ դեմքերու մեջեն, կնոջ պատկեր մը միայն կմնար, վես, խռովիչ ու ամբարտավան դեմք մը, որուն արհամարհոտ և բարձրաձայն ծիծաղը կհընչեր իր ականջին մեջ, իր հոգվույն խորը։

Առջի տեսնելուն կանգ առած էր այդ տիկնոջ քով, որ պարահանդեսին մտերմական ու ընտանեկան ձևին համար անշուշտ իր օթյակը ձգելով պարասրահը կ'իջներ, ձախ ձեռքովը հանգրիճած իր վարդա-

գույն բեհեզե շրջազգեստը, ծանոթներու, մտերիմներու բաժնելով իր ժպիտը ու գլխու թեթև բարև մը։

Այդ վայրկյանեն չէր կրցած հեռանալ անոր քովերեն, ժամ մը ամբողջ լրտեսելով խոսակցությունը, շարժումը, ակնարկը, նախանձելով զայն բոլոր քովը մոտեցող մարդոցմե, մեծ մասամբ տարիքոտ դրամատերեր, որոնց ալևոր գլուխը երիտասարդ կնոջ սևաթույր մազերուն կքսվեր։

Փոխն ի փոխ անոնց թևն էր, սրահին շրջանը ընելով ու պարծենալով կարծես մեծ անձերու իրեն դեմ ցույց տված քծնող ու ցավատանջ ցանկության համար։ Պահ մը ուշադրությամբ գիտած էր զինքը, իր համառ ու շրջապատող նայվածքին պատճառը հասկնալու համար. հետո դառնալով իր քովի անձին՝ ցույց տված էր զինքը. անունը կհարցներ թերևս. ծանոթ մեկը չէր, ըսած էին։

Ու ինքը հեռուն անշարժ կկենար, դիտելով անոր գեղաշնորհ հասակը ու լեցուն ուսերուն շրջագիծը, որ երկուստեք մեջքը կ'ամփոփեր, կսեղմեր։

Այսպես պիտի տևեր մինչև լույս, եթե բարեկամ մը չհանգիպեր ու հանձնառու չըլլար այս տիկնոջ մոտ առաջնորդելու զինքը։ Դպրոցական դասընկեր մըն էր ատենով, հիմա կարևոր գիրքի տեր երիտասարդ վաճառական մը, Ֆոմիսերի ժապավենը կուրծքին, որ ամենքը կճանչնար այստեղ և հարմար ու պատշաճ խոսքով մը ներկայացուց զինքը։

— Տիկին, տաղանդավոր բանաստեղծ մը, Հակոբ Դավիթյան, գիտեմ որ բանաստեղծները կսիրեք և համարձակեցա ձեր մոտ բերել զինքը։

Ու երիտասարդին դառնալով՝

— Տիկին Հովսեփյան։

Տիկինը դիտեց զինքը՝ ուշագիր ու հետաքրքիր՝ ոտքեն մինչև գլուխը, փողկապը, կոշիկները, ձեռնոցը, սքամպուլինը, որոնք բանաստեղծի մը համար, բավական շնորհքով թվեցան։ Մյուսը թողուց զիրենք։

Իրենց խոսակցությունը պարահանդեսի սովորական բանաձևով սկսավ.

— Աղեկ բազմություն կա այս գիշեր։

— Այո՛, տիկին։

Երջանկության սրտագողին մեջ չկրցավ բառ մը ավելցնել, վախնալով որ ապուշ խոսքով մը իր բանաստեղծի ենթադրյալ նրբամտությունը ֆ դերև չհանե։

Լուությունը կշարունակեր ու ծաղրելի կդառնար։

Տիկին Հովսեփյան սկսավ նորեն.

— Գյո՞ւղը կնստիք։

— Ոչ, տիկին, Փերա կբնակիմ։

Կթոթովեր. անիմաստ խոսքեր պիտի ըսեր անշուշտ։

— Լսած եմ ձեր անունը,— ավելցուց վարանելով, իբրև թե խոստովանություն մը ըներ,— ձեր գրությունները միշտ կկարդամ ու միշտ հաճույքով։

Երիտասարդը իր գրագետի ամենեն դյուրազգած թելին մեջ արթընցավ։

— Իմ գրություններս ինձմե երջանիկ են ուրեմն։

Այս Ֆոմփլիմանը առաջինն էր, զոր ըրավ սրտատրոփ ու դողդոջուն, աղեկ մը չգիտնալով, թե տե՞ղն էր արդյոք։

Փոլքա մը կզարներ երաժշտությունը. պարի հրավիրեց ու պարեցին. թույլ, հոգնած կթվեր իր ընկերուհին. մարմնեղ կին մըն էր ու երիտասարդը կզգար իր սրտին վրա անոր ինքնամատույց լանջերուն հրույցքը. հետո պարի շրջաններեն, սրահին տաք օդեն ու իրեն հենող մարմնին այս ջերմութենեն գլուխը դարձած, մոռցավ որ հազիվ կես ժամե ի վեր կճանչնար այս կինը. հանկարծ իր հանդուգն ու ձեռնարկող իղձերուն բոլոր սաստկությամբը շրջապատեց այս մարմինը. շրջոդեց. փոլքան՝ վերջանալու մոտ՝ ալ ավելի կշտապեր հիմա, իր ուժգին նվագներովը, և կդառնային ջահերուն ցոլացումներուն մեջ, գրեթե չդպչելով գետնի տախտակամածին, եթերային պար մը. ընկերուհին իր լուությունը կպահեր. բայց երկար արտևանունքին տակեն ակնարկը կխոսեր հստակ ու պայծառ, ակնարկ մը որուն մեջ կդներ իր անձնատուր ու հաճույքե նվաղելու պատրաստ ոգին։

Երաժշտությունը դադրեցավ, ու ստիպված կանգ առին ալ, հազիվ կարենալով ուղիղ կենալ ոտքի վրա. տիկին Հովսեփյան իրեն կհենուր բոլորովին վաստակաբեկ ու մեղկացած, իբրև թե այս պարին հեշտությամբը խորտակված ըլլար. և իր թևովը կսեղմեր երիտասարդին բազուկը, այս պարով վայելած հաճույքնուն իբրև մեկ մնացորդը և իր տարփոտ կնոջ հպումովը սփոփելով անոր սիրատենչ պահանջումները։

Հետո ուրիշ երիտասարդներ հրավիրեցին զինքը, ու Դավիթյան հեռվեն, պարողներու ու դիմակավորներու բազմության մեջ, շարունակեց դիտել զինքը և զարմացավ, որ ուրիշներու հետ պարած ատենն ալ միևնույն սիրահալ նվաղումներով, մարմնի միևնույն ընծայումներով կվարվեր։

Առտուն, փողոցին մեջ, այս էր դեռ իր միտքը զբաղեցնող պատկերը որ հիմա հետադարձ նախանձով մը սիրտը կկեղեքեր, մինչդեռ

ձյունը կշարունակեր գալ գորշ ու ամպամած երկինքեն, դանդաղ, վարանոտ, ծայրանաձև գիծերով. և երկինքի այս ձյունաթույր սպիտակությունը սիրահոժար կուգար տարածվելու հողին վրա և իր սպիտակ կուրծքը հանձնելու անցորդի մը գարշապարին. ոչ ցեխը և ոչ աղտը չէր կեցներ զինքը. ու հաճույք կզգար կարծես այսպես ոտքերու տակ աղմաթաթավ հեծեծելուն և ճզմվելուն մեջ։

Գ

Ուսուցիչ ու բանաստեղծ էր միանգամայն, գավառացի նիհար ու վատառողջ տղա մը, այս Դավիթյանը, որ կասկածոտ, համառ ու խնայող մարդու կենցաղովը իր դրսեցիի ծագումը կպահեր։

Փերա, Քալիոնճու-Քուլլուքի տուներեն մեկուն մեջ, ուր իրեն պես դեռ քանի մը ամուրի երիտասարդներ կբնակեին, սենյակ մը վարձած էր, իր բոլոր տունն ու տեղը. և իր մայրենի լեզվի դասախոսություններեն զզված, քերականության կանոնները հազարերորդ անգամ ավանդելե ձանձրացած, գրգռված, հուսահատ, կդառնար իր սենյակը ու իր հավաքած փոքրիկ դրամագլխովը ուրիշ գործ մը փնտրելու, ապագա մը պատրաստելու մտադիր. այս ակնկալությամբ, առանձին մնացած ժամերուն, քերթվածներ գրելով կ'անցներ ատենը։

Փերան կսիրեր՝ իր մարդաշատ տուներուն, մեծ փողոցին, քարուկիր ու բազմահարկ շենքերուն, աղմկալից կյանքին համար. այս բազմութենեն ու ժխորեն կ'ախորժեր. ու իրիկունները իր սովորությունն էր, ելլել դուրս, եղեգնյա փոքրիկ գավազանը ձեռքը, իր բանաստեղծի լայն ճակատը բացած, Կալաթա-Սերայեն մինչև Թաքսիմ շրջան մը ընելու, ման գալու, ինչպես կ'ըսեր ինք, ու կիներու այս մեծ շուկային տեսքը, այս վաճառիկ հրապույրները վայելելու։

Այս հարուստ արվարձանը հազար ներշնչումներով լեցուն էր իր աչքին. և կ'ուսումնասիրեր զայն իր դուրսի զվարճության երևույթին տակ և ներսի մոլության ու ապականության սարսուռներուն մեջ։

Օր մը, հանկարծ, հրաատարակության տվավ իր քերթվածները. իր Վերջալույսի ցոլքերը նոթություն մըն էր. ոչ ծագկի խոսք կար հոն, ոչ արևի և ոչ սոխակի. այս ցոլքերու լույսովը ինքը ցույց կուտար մեծ քաղքի մը ստվերամած փողոցները, այդտեղի կյանքը իր հարափոփոխ միօրինակության մեջ։ Բնապաշտ քերթող մը եղավ ու հաջողեցավ. հայ տիկինները, որոնք գրականությամբ կզբաղեին, հետաքրքրվեցան, տեսնել ուզեցին զինքը. մինչդեռ իր դասախոսած դպրոցներու պասմանի հոգաբարձուները հանդիմանեցին զինքը։

— Մյուսյու Դավիթյան, ձեր գրությունները բարոյականի դեմ են. թող որ բան մը չի հասկցվիր այդ քերթվածներեն։

— Հակասության մեջ եք, էֆենտի, թե որ բան մը չի հասկցվիր այդ գիրքեն, ի՞նչպես գիտցաք որ բարոյականի դեմ էր։

Հոգաբարձուն պզտիկ մնաց. բայց հաջորդ դասին ավանդական ու մահաբույր բանաձևը հասավ իրեն.

— Դադարյալ եք։

Դադարյա՛լ. դասատունե՛րը գիտեն միայն այս անցյալ դերբային ահարկու նշանակությունը. այս բառը կնշանակե նախ որ ամսական թոշակե մը զրկված են, և մինչև որ նոր գործ մը գտնեն պետք է ա՛լ ավելի չափավորեն իրենց արդեն խնայող կյանքը. հետո այս բառը իր պատճառներուն մեջ կնշանակե, որ դասատուն հարգական կերպով չէ բարևած հոգաբարձուն՝ փողոցը հանդիպած ատեն, փեշը փեշին, տասնյակ մատները իրարու կցած, ճշտելով անցորդներուն առջև իր ակընկալու դիրքը և սպասելով որ նախ մյուսը բարևե բարձրաձայն.

— Ի՞նչպես են, պ. Դավիթյան։

Եվ շարունակե ճամփան առանց պատասխանի սպասելու։

Բանաստեղծը այս քրեական հանցանքներով արդեն նշանակված էր հոգաբարձության մտքին մեջ. մեծ փողոցին մեջ անոր գավազանը ճոճելով անցուդարձը, զիրենք չտեսնելու զարնելը, երբեմն մտերմաբար քովերնին մոտենալ ու խոսիլը, այս անբարոյական քերթվածներուն լույս տեսնելուն միանալով, շատ իսկ էին դադարման այդ որոշումը արդարացնելու։

Ինքը, ճշմարիտ դրսեցի, համառ ու ամբարտավան իր անկման մեջ, պարզապես ծիծաղեցավ լսելով այս որոշումը, զոր կառավարիչը կհաղորդեր իրեն։

— Խայտառակնե՛ր,— գոչեց բարձրաձայն։

Մինչդեռ կառավարիչը իր ականջը կգոցեր չլսելու համար այս անլուր հայհոյությունը ու իր ներկայությամբը մեղսակից չդառնալու համար։

Հիմա դաս տալե տարբեր հոգ ու մտածում ուներ երիտասարդը. ուրիշ ատեն իր դրամ շահելու հետամուտ ոգին պիտի զայրանար. այս վայրկյանիս գրեթե նախախնամական բան մը եղավ այդ դադարումը, որ միջոց կթողուր իրեն ծույլ ու երազող բանաստեղծի անուրջներու։

Դ

Վերջապես միջոց մը գտած էր երթալու Հովսեփյաններուն տունը, տիկնոջ չորեքշաբթի օրվան երեկույթներուն, որոնց սովորական հյուրերը զարմացած կնայեին այս նորեկին երեսն ի վեր։

Այս տանը մեջ երիտասարդը ուսուցիչ ավելի բանաստեղծ մըն էր. և բանաստեղծ ավելի՝ ոսկեհեր մազերով, խանդավառ խոսվածքով տղա մը, որ իր սիրահարի ձևերը չէր գիտեր ծածկել նախանձոտ աչքերեն։

— Վարժապե՞տ մը,— կ'ըսեին տիկնոջ մտերիմները։

— Ի՞նչ փույթ, կբավե որ սիրուն տղա մըն է։

Տիկին Հովսեփյան, իրեն շուրջը դարձող պեյերեն ու էֆենտիներեն ձանձրացած կթվեր ու նոր պատմություն մը կսկսեր։ Ապաքեն միշտ սիրած էր նոր պատմությունները։ Համբավավոր ընտանիքի մը կպատկաներ, վերջերս ինկած՝ բայց պահող միշտ ճոխ ու փարթամ կյանքի վարժությունը։

Իրենց հարստության սպառելուն հետ իր ամուսնության համար երազած փառատենչ ակնկալությունները պակսած էին. դեսպան մը, պետական բարձր պաշտոնյա մը փափագած էր ամուսին ունենալ. հետո առաջին քարտուղարով մը պիտի գոհանար. վերջ ի վերջո Հովսեփյան Պողոս էֆենտիին հետ ամուսնացած էր, հարուստ երիտասարդ մը, հորը մեկ հատիկ որդին, որ աֆիոնի և բամբակի առևտուրով կզբաղեր. մեծ դժվարություններ քաշեց համակերպելու համար իր նոր դիրքին. վաճառականը իր հաշվի, տետրակի, աֆիոնի խոսակցությամբը, իր մաղազայի մարդու կենցաղովը գռեհիկ ու ստորին երևույթ մը ուներ. առջի օրեն՝ փեսացուին մեկնելեն վերջը՝ իր տպավորությունը չէր ծածկած բնավ։

— Ո՞ւսկից գտաք այս այվազը։

Վերջը համոզվեցավ. բարեկամուհիներ խրատեր էին զինքը։

— Հո՛գդ, թող այվազ ըլլա, դուն նորեն սիրահիդ սիրածը գտիր։

Ամուսնացավ ու այս հարսնիքը երկար ատեն խոսվեցավ Պոլսո մեջ. մինակ առտվան սուփեին երկու հարյուր ոսկի ծախսված էր։ Հետո զատ տուն տեղ ըլլալ հարկ եղավ. Փերա բնակիլ կ'ուզեր. իր խոսքը եղավ։ Միսք փողոցը տարին 120 ոսկի վարձքով տուն մը վարձեցին ու կահավորեցին. հարսը իր եվրոպական կրթության համեմատ ապրելու եղանակ մը հաստատեց. իրեն հատուկ սրահ, սենյակ ու ննջասենյակ ուներ, զորս իր ճաշակով զարդարված էր փլյուշի, աքլասի կերպասներով, ուր լույսը կ'արգիլվեր երդցս վարագուրյալ պատուհաններեն։

Վաճառականը բան մը չէր հասկնար այս անօգուտ շռայլությունեն, պատերուն, աթոռակներու վրա դրված Չինի ու Հնդկաչինի հազար մանրակերտ նյութերեն, որոնց ոսկեզօծ նկարները այս մութ սենյակներուն մեջ կփայլեին. նվիրական տեղ մը մտնելու պես կուգար հոս, որ ոտք կոխելու տեղ չկար, և ուր մթնոլորտը հարսին գործածած էֆթռեներուն բուրումովը թանձրացած էր, մինչդեռ պատերը ու տախտակամածը ծածկող օթոցները ամեն ձայն ու աղմուկ կխեղդեին։

Հետո երեկույթներու և ընդունելությանց շարքը սկսավ. ամեն կողմե կը հրավիրվեին իրենք և պարտավոր էին հրավիրելու. էրիկը հլու և հնազանդ, չէր կրնար դիմադրել. իրենց դիրքը կպահանջեր, և տարին երեք չորս հեղ տիկին Հովսեփյան Փերայի հայ և օտարազգի մեծ ընտանիքները իր տունը կհավաքեր՝ ճշմարիտ պարահանդեսներ տալով։

Կզբոսնուր, թողլով, որ ամեն տեղ էրիկը իր բամբակի, աֆիոնի արտադրության, մաքսի, պայլայի խնդիրները պտտցնե ուզածին պես։

Ամառը Փրինքիփո կ'երթային օդափոխության. չէին կրնար էսնաֆի պես ամբողջ տարին միևնույն տունը բնակիլ. հոն ալ հյուրերը պակաս չէին և այս կյանքը կշարունակվեր, ապահով ու ստույգ կործանման առաջնորդելով իր էրիկը. ինքը այդ անդունդին կնայեր անտարբեր, դրեթե հաճույքով, հետաքրքիր՝ հասկնալու համար անոր հետևությունները։

Չորս տարվան ընթացքի մը մեջ բոլորովին զզված էրկանը առևտրական խոսակցութենեն, հետզհետե կզղջար իր ամուսնության վրա որ շղթայակապ դատապարտություն մը կդառնար, ու հազար անգամ պատրաստ էր փոխելու այս աֆիոնով խառնված հարստությունը, սրտի մոտ մարդու մը բարեկամությանը հետ։

Ոչ կիրք և ոչ ցանկություն ուներ իր ամուսինը և կինը իր տենդաբորբ հյուծումներովը կսպառեր, կհիվանդանար, բժիշկը՝ գաղտնապահ ու շնորհալի տոքթոր մը՝ կուգար եթե ոչ առողջացնելու, գեթ սփոփելու համար հիվանդը. տիկին Հովսեփյան իր քնատութենեն կգանգատեր. բժիշկը կզարմանար. այսչափ աֆիոնի մոտ մարդու մը կինը քնատութենե գանգատե՞ր և իր ֆյոռալներուն պետք ունենա՞ր։

Ճշմարիտ էր սակայն որ տիկին Հովսեփյան շատ գիշեր կլուսցներ, տենդոտ ու երազամոլ. և առտուն՝ գեղեցիկ աչքերուն կտրած կոպեն, տժգունած երեսեն գիշերվան տագնապները կկարդացվեին դեմքին վրա։

Իր դժգոհությունը էրկանը դեմ կդառնար և կզայրանար այն օրինավոր հարստության դեմ, զոր անոր երեսեն կվայելեր ու հիմարական կարգադրություններ կ'ըներ մտքովը, իր էրկանը կործանման ակնդետ սպասելով։

Իր արդուզարդերը կմտադրեր պատրաստել իր մտերիմներուն ընծաներեն. հագուստը բոլոր հարաբերությանցը ամփոփումը պիտի ըլլար, տեսակ մը քառնե ուր ամեն ոք իր անունը պիտի արձանագրեր։

Եվ ոչ ոք կար իր մոտը խրատելու համար զինքը և դարմանելու իր հիվանդ հոգին։

Այդ միջոցին աֆիոնի գիները մեծ անկում մը ունեցեր էին և ահագին քանակությամբ ապրանք կար էրկանը ձեռքը, որ հիմա շվարած ապշած կմնար այս մեծ կորուստներուն վրա, զորս դարմանելու անկարող կզգար ինքզինքը։

Կինը, քինախնդիր ու ոխերիմ իր ատելությանը մեջ, կհանդիմաներ անոր ապիկար ձեռնարկությունները։

— Հորդ հարստությունը ստակ չըներ, էրիկ մարդ ըսածդ ինքը վաստկելու է, դուն կորսնցնելե ուրիշ բան ըրած չունիս։

Ստույգ էր. երեք տարվան միջոցի մը մեջ՝ իր դրամագլխին կեսը կորսնցուցած էր այս թմրեցուցիչ դեղին վրա կատարած շահադիտությունեն. էրիկը իր հանցանքը կխոստովաներ, մեղմիվ, քիթին տակեն.

— Սա՛ աֆիոնը...

— Օ՜խ, տասն անգամ ըսի քեզի, դուն գործի մարդ չես, ես քեզմե տասն անգամ աղեկ եմ, ուզածիս չափ դրամ կրնամ շահիլ։

Չէր բացատրեր ինչ կերպով. բայց էրիկը կհավատար, ու կինը հաղթական ոտքի կ'ելլեր, կարմրած, գունագեղ ու պաշտելի իր ոխակալ ամբարտավանությանը մեջ. մյուսը ինքզինքը պաշտպանել կշանար լուրջ ձև մը առնել ուզելով.

— Կ'աղաչեմ, Նարդիկ։

Կնոջը քրքիջը իր ձայնը կխափաներ. խնդալեն կմարեր էրկանը ապշած ձևերը ու անիմաստ խոսքերը կրկնելով, ճարտարությամբ ձայնը նմանցնելով խորեն, անդունդեն եկող խուլ, սնանկանալու մոտ վաճառականի մը ձայնը.

— Կ'աղաչեմ, Նարդիկ...

Ու վայրկյան մը վերջը կ'ավելցներ արգահատությամբ դիտելով զինքը.

— Փեֆ շիրին ես։

Ե

Իր թեկնածուներուն մեջ զարտուղություն մը եղավ բանաստեղծը իր առատ ու դպրոցականի մը երկուքի ճեղքված, սանտրված մազերովը։ Երիտասարդը իր իտեալի հակամետ տրամադրությամբը բոլորովին վերացական հեշտությամբ մը կհամակվեր իր քովը. և այս դրական կինը երազացնոր հրեշտակի մը կերպարը կզգենուր. իր սրահին մեջ, անկյուն մը, գլուխ գլխի, անոր ուսին վրա հակելով իր ժպտուն դեմքը, կարմիր լուսարգելին տակեն արձակվող մեղմ նշույլներուն մեջ, տիկին Հովսեփյան բանաստեղծին կ'ունկնդրեր։

Անդին կփսփսային հյուրերը, դժգոհ այս բացառիկ շնորհեն զոր նորեկը կվայելեր, բայց կստիպվեին տեղի տալ, գիտնալով, որ տիկնոջ այս հովվերգությունը չէր կրնար շարունակվիլ։

Հետո այս ուսուցիչ սիրահարին անունը կտարածվեր բերնե բերան, տունե տուն. կքննադատեին, կգովեին, կխնդային. ի՜նչ բախտավոր էր այս երգիչը իր քնացուցիչ քերթվածներովը. հայտնի էր որ տիկին Հովսեփյանին ճակատագիրն էր թմրեցուցիչներու մեջ տարուբերիլը. այս դիտողությունը կծափահարվեր այն տուներուն մեջ որոնց տիրուհիները չէին երբեք հանդուրժեր անոր գերազանցությանը։

Նարդիկ թող կու տար որ ըսեին. ներքին գոհունակություն մը կ'ունենար լսելով իր հանած աղմուկին արձագանքը. այո՛, բանաստեղծ մը կսիրեր որ գեղեցիկ երիտասարդ մը ըլլալու առավելությունը ուներ. ճշմարիտ ու անկեղծ սեր մը փնտրած ու գտած էր։

Երիտասարդը միայն շվարած կմնար իր անակնկալ հաջողության առջև. իր ձեռքն էր ամեն գոհացում ստանալ. զորապետներ կան, որոնք իրենց տարած հաղթության օգուտը քաղել չեն գիտեր. ուսուցիչը անոնցմե էր։

Երջանիկ էր հիմա տիկին Հովսեփյանի սրահին մեջ. այս ճոխությունը, փակ վարագույրները, աթոռներու կակուղ կերպասը, ամեն ինչ մեղկության ու երանության կոչում կ'ընեին իրեն. և այս ամենուն մեջ հեշտաբույր հոտ մը, տիրուհին հոտը կուգար իր ատեն-ատեն սպասելու համար անցուցած ժամանակը մոռցնելու. հետո դոնեն կ'երևար տիկինը՝ միշտ թարմ, միշտ նոր հրապույրով. դերերը կփոխվեին. ուսուցիչը աշակերտ կդառնար։ Ու հանկարծ քմահաճույք մը կ'ունենար, երիտասարդը իր ճաշակովը հագվեցնելու կ'ելլեր, հրահանգներ կու տար զգեստներուն համար, փողկապի ու շապիկի համար Քեռնի վաճառատունը կհանձնարարեր, և ութ օր վերջը, երիտասարդը կուգար իր նոր հագուստներով, զորս վայելչապես կկրեր, և որոնց համար, ատենով Քոեթի Լիոնեի քով ձգած ստակեն՝ շունչ ու կյանք սպասելով հավաքած դրամեն՝ մաս մը ետ առնելու ստիպված էր։

Երբեմն տիկինը թատրոն կ'երթար և կփաթաթեր որ հոն գտնվեր ինքն ալ. կհնազանդեր. ու այսպես քիչ-քիչ կպարտավորվեր հանձնառու ըլլալ այն անվերջ ծախքերուն որոնք այս կերպ կյանքի մը պետք են.

իր գավառացիի խնայող սովորությունը կբողոքեր այս ընթացքին դեմ. դրամի ու կնոջ սերը կմաքառեին իր մտքին մեջ. կամաց-կամաց թողած էր իր բոլոր դասերը. սիրո ժամադրություններուն պատճառով ոչ մեկ տեղ կրցած էր կանոնավորապես շարունակել իր պաշտոնը. հոգը չէր. տիկին Հովսեփյանի մեկ ժպիտը, մեկ ձեռքի սեղմումը կփոխարիներ այս կորուստը. բայց Քռետի Լիոնեի ստակը կհատներ ծաղկեփունջերու ու պզտիկ նվերներու հատկանալով, վասն զի հիմա գիտեր այս աշխարհիկ սովորությունները. միայն թե այս ամենուն եզրակացությունը կ'ուշանար և տիկին Հովսեփյան կձանձրանար։

Զ

Սիրո համար ձանձրույթե ավելի մահացու բան չկա. տիկին Հովսեփյան հուսաց, սպասեց, բայց վերջապես ձանձրացավ, մինչդեռ երիտասարդը իր սիրո մոլեգին ու անհագուրդ ցանկությամբ կտառապեր. երբեք պատշաճ առիթ մը չկրցավ գտնել ոչ իսկ համբույր մը առնելու այն սիրատենչ շրթունքներեն։

Հետո ստակի նեղությունը՝ իր հեռավորությունը ու ստորնությունը եկավ հիշեցնել. այս վիհը, անհատակ ու ահարկու, երևցավ իր սարսափած աչքին. հիմա ա՛լ ոչ դաս կար և ոչ ստակ. շաբաթ մը առաջ իր վերջին դրամը առած էր պանքայեն. պարտքեր ըրած էր, ինքը որ ամեն ամիս տասը փարա պարտական մնալ չէր գիտեր. ո՞ւր գացեր էին իր դրամները. սենյակին մեջ ձեռնոցներուն տուփը աչքին դպավ՝ գույնզգույն հավաքածոյով. ու իր գավառացիի լուրջ միտքը արթնցավ։ Չհամարձակեցավ ապագայի վրա խորհիլ. իրեն սփոփանք մը կմնար, տիկին Հովսեփյանը՝ իր անձնվեր ու հավատարիմ կնոջ սիրովը. և սակայն, իր անկման և աղքատության մեջ, ա՛լ չպիտի կարենար ներկայանալ անոր տունը, և հեռվեն միայն, ուրիշներու հետ պտտած, ժպտած ատեն պիտի կարենար տեսնել Նարդիկը, ինչպես պարահանդեսի գիշերը դիտած էր անկյուն մը քաշված։

Այս մտածումներուն մեջ իր աղքատիկ սենյակը շարաշուք գույն մը ստացավ, անձնասպանության գաղափարը փայլակի մը պես անցավ իր մտքին մեջեն։

Այն գիշեր դուրս չելավ իր սովորությանը հակառակ ու մինակը իր կյանքին հաշիվը փնտրեց. գավառը, Պոլիս գալը, պանդուխտ դպրոցականի կյանքը, դասատուի նվաստ անցյալը, բոլորը ողբալի պատկեր մը կկազմեին, և այս ամենուն վրա արև մը կծագեր լուսավոր, պայծառ, կնոջ մը ակնարկը, որ իր բոլոր թշվառությունները համակրելի կդարձներ. կես գիշեր էր. հագվեցավ առանց գիտնալու ինչ ընելիքը, դուրս ելավ փողոցը, որ կողմ երթալիքը չգիտնալով։ Մեծ Փողոցին մեջ ուշադրության արժանի բան մը չգտավ, և գիշերը՝ մութին կթափառեր անընպատակ, երբ հանկարծ ծանոթ տան մը առջև տեսավ ինքզինքը. Հովսեփյաններու տունն էր, լույս կար, բազմություն կար, խնդալու ձայները մինչև փողոց կհասնեին։

Է

Միացյալ Ընկերությանց Տնօրեն Խորհուրդին կ'անդամակցեի. կարող պաշտոնյաներ կփնտրեինք մեր լուսավորության գործին ծառայելու, անձնազոհ ու համեստ մարդեր, որոնք իրենց միտքն ու հոգին նվիրեն առանց աղմուկի, պարտականություն մը միայն կատարող մարդոց պես. կփնտրեինք ու չէինք գտներ։

Երիտասարդ մը ներկայացավ մեր ժողովին. Դավիթյանն էր։

Պաշտոն խնդրելու կուգար Ընկերության վարժարաններուն մեջ. իր վրդոված դեմքեն կրած տառապանքը կհասկցվեր. նիհարցեր, աչքերը հորը ինկեր էին. հանձնարարեցի զինքը ու հարմար պաշտոն մը փնտրեցինք. Ալաշկերտի վարժարանին տնօրենությունը բաց էր. ընդունեց, աղաչելով միայն որ կարելի եղածին շուտով ճամփա ելլե։

Ժողովեն վերջը առանձին տեսնվեցա հետը. իր կսկծալի պատմությունը ըրավ ինծի. կորսնցուցած դիրքը, երկու հարյուր ոսկիի չափ դրամին հատնիլը, չքավորությունը աչքի առջև, և սրտին մեջ այս հավետ սիրեցյալ կնոջ պատկերը։

Վերջերը ա՛լ սկսեր էր իր երեսը չնայիլ. ուրիշներ, ավելի փորձ ու ճարտար սիրո արվեստին մեջ, վայելած էին զայն և ինքը իր չքավոր բանաստեղծի սիրույն ու պարկեշտությանը մեջ մոռցված էր։

Տիկին Հովսեփյան Փերայի ամենեն ըղձալի կինը կմնար, իրեն անգամ մը մոտեցողները տարփանքով ախտացյալ ու վարակյալ կհեռանային։

Ապաքեն ոչ ոք իր հրապույրներուն մենաշնորհը ուներ, ամենունը ըլլալ կբաղձար այս կինը քանի որ իր էրկանը չէր, նոր անկում մը իր տարփանքին վայելքը ու սաստկությունը կավելցներ։

Շաբաթ օրը ավստրիական թղթատարը կմեկներ և ուսուցիչը նույն օրը ճամփա ելլել որոշած էր. խոստացեր էի ուղեկից երթալ իրեն մինչև շոգենավ ու խոստումս պահեցի։

Իրիկվան ժամը ինին մեկնեցանք Ընկերության գրասենյակեն. բեռնակիր մը առջևնուս կտաներ ուղևորին համեստ սնտուկը. ձյունը կտեղար հանդարտ օդով մը ու ծուլությամբ կտարածվեր, կփռվեր ցեխոտ մայթերուն վրա. ամեն ազգ ու ամեն տարիք կկոխեր կ'անցներ անոր կաթնաթույր երեսին վրայեն, հոն թողլով իր գարշապարին աղտոտ դրոշմը. ձյունը կուգար կհանգչեր, երջանիկ այս կոխոտումներուն տակ։

Բաղդատություն մը եկավ միտքս այս կնոջ և այս ձյունին միջև. ապաքեն երկուքն ալ միևնույն ճակատագիրը ունեին։

Մաքսատան մեջ ճամփորդները կլեցվեին անհամբեր, հակերու, սնտուկներու, ծրարներու մեջերեն քալելով։ Քարափին վրա, այս եզերքեն ուրկե ուղևորությունը կսկսեր ալ, վերջին անգամ արտասանեց մեղմիվ տիկին Հովսեփյանի անունը.

— Նարդիկը չպիտի տեսնեմ ալ։

Լացավ. հետո իր գավառացի տոկուն բնավորությունը հաղթեց։

— Այս քաղաքին մեջ բոլորովին թուլասիրտ մեկը դարձեր եմ։

Շոգենավին մեջ շատ չկրցանք խոսիլ ու ինքը մտաբաղ կդիտեր այս ցուրտ օդը, ու բամբակի գուզերու պես տեղացող ձյունը, որ կհիշեցներ իր պարահանդեսեն ելած առտուն, ճիշտ տարի մը առաջ։ Ճըշմարիտ վաղորդայնը այս ուղևորությունն էր ահա, որ գավառացի տղան կխզեր ախտացյալ մայրաքաղաքին մոլություններեն՝ իր պարտականության առաջնորդելու համար։

<1890>

ԿԱՊԻԿԸ

Ա

Գառագեղ մը չէր աս, ոչ ալ առյուծ մը մեջինը։ Մարդու հասակի բարձրությամբ վանդակ մը, որուն երկաթե ցանցին մեջ զետեղված թառին վրա՝ բարակ շղթայով կապված կապիկ մը կխաղա առտվընե մինչև իրիկուն. դեմն ալ թռչունի փոքրիկ վանդակի մը մեջ թութակ մը, որուն խնդալե ճաթող մարդու քահքահը փողոցի անցորդները կկեցնե ու դրացի տղաքը դրան առջև կհավաքե ամեն օր։

Ամեն անգամ որ այցելության կ'երթամ տանտիրոջ՝ որուն իշխանավայել հյուրասիրությունը, ազնվական օսմանցիի վարքը՝ զինքը ճանչցողները կգրավե, վայրկյան մը կանգ կ'առնեմ պարտեզին մեջ, ներս

մտնելե առաջ, և թութակին աղմկալից խնդուքը, այս անհիմն ու անտեղի ուրախությունը, մարդոց շատերուն ուրախությանը պես, ինծի մտածել կուտա։

Վայրկյան մըն ալ կկենամ կապիկին մոտ, իր ճարտար լարախաղացի մարզանքներուն կհետևիմ աչքովս, սուր և խելացի ակնարկը կդիտեմ. իր ջղային, գերազանցապես ջղային արարածի տագնապներուն վրա կզմայլիմ։ Հարկավ բան մը պակսի անոր՝ կատարյալ մարդ ըլլալու համար. ի՞նչ արդյոք. ամեն պարագայի մեջ, պակսածը զգացումը չէ։

Եվ ամեն անգամ որ ծանոթներու, հետաքրքիրներու հետ կ'անցնինք կդառնանք քովեն, միշտ բառ մը կփոխանակենք իր վրան, ո՛րը՝ այն օրվան հնարած անոր մեկ խաղը կամ շարությունը կպատմե. ո՛րը՝ խելքին կամ զգացումին նոր մեկ փորձին վրա կխոսի. օրվան... մարդն՝ իր այս կապիկը Փրինքիփոյի մեջ։

Բ

Տանը ծառաներեն զինքը խնամողներուն մեջ իր նախընտրածը սպասուհի մըն էր. persona grata-ն այս դժվարահաճ ու անհամբույր լենդանիին. պե՞տք էր արդյոք ավելցնել իսկույն որ եկող գացող հյուրերուն ալ հաճելի էր այս ուժով լուսով աղջիկը որ Արշիպեղագոսի կղզյակեն մեկտեղ բերած էր՝ դրսեցիի առույգ ու աննենգ աղվորությանը հետ՝ նայադի մը վրդովիչ հրապույրը։

Ծանոթներես նրբամիտ թյուրք օրագրող մը որ ինծի հետ այս տունը կհաճախեր, ու ինծի չափ այս կապիկին կյանքովը կհետաքրքրվեր, տարօրինակ բաներ կպատմեր անոր վրա։

— Կհավատա՞ս,— կ'ըսեր ինծի օր մը՝ խնդալով,— որ այս հեք կապիկը սիրահարած է տանը սպասուհիին, ապացույց՝ որ ճաշակի մեջ ալ մենե ետ չի մնար այս կենդանին. խել մը գիրքերու մեջ կարդացած եմ որ Ամերիկայի օրանկութանները, հին ատեններու ասպետներուն պես, ճշմարիտ առևանգություններ և անվավեր ամուսնություններ կատարած են իրենց սիրած կիներով. չեմ զարմանար ուրեմն թե որ մեր կապիկն ալ Մարիղոն սիրե։

Եվ իմ տարակուսական ձևիս վրա՝

— Հավատա՛,— կ'ավելցներ բարեկամս,— որ իրողություն մըն է ըսածս. ես այս կենդանին ուսումնասիրելու վրա եմ. հիմար ու բուռն սիրո մը ապացույցները ունիմ, Ռոմեո և Ժյուլիեթի սեր մը։

Իրոք, ամեն անգամ որ Մարիղոն կմոտենար կապիկին, դող կ'ելլեր անիկա, հրճվանքի սարսուռ մը կվազեր իր մազոտ մորթին վրա,

աչքերը կփայլեին. ցնորած, երջանկութենե արբշիռ էակի մը անկարգ ու անկապ բաները կ'ըներ, վայրկենական կերպով հլու և հնազանդ կդառնար, և սպասուհին ձեռքին տակ կդներ փոքրիկ գլուխը որ այնքան շարությամբ լեցուն էր ուրիշներուն համար. իր նիհար թաթիկը փայփայանքի մը մեղմությամբ ու անհուն հեշտության մը դողովը աղջկան դպցնել կ'ուզեր միշտ։ Ասոնք և ասոնց նման հազար մանր ու չնչին բաներ այս սիրո տառապանքը կմատնեին, մինչդեռ թութակը, դեմեն, ծաղրանքի խլացուցիչ քրքիջով մը կծիծաղեր, իր հավիտենական հեգնությունը կդներ իր չզգացած այս ցավին ու կսկիծին վրա։

Գ

Քիչ-քիչ ճշմարիտ գայթակղության մը համեմատությունները առավ այս տարփանքը։ Կապիկը կնախանձեր և սուր ակռաները կկճրտեցներ Մարիղոյին մոտեցող ու խոսող էրիկ մարդոց դեմ։ Իր փոքրիկ բանտին վիզին փակչող նուրբ բայց անփշրելի շղթային արտոնածին չափ՝ ցասմնակոծ ատելություն մը կհայտներ իր բոլոր ոսոխներուն դեմ և վախ կ'ազդեր։ Այնքան որ հույն սպասուհին, իր կանացի բնազդովը, այս կաշկանդված անասունին վրա առաջ բերած տպավորութենեն կ'ամշնար, կպահվըտեր, և մյուս ծառաները կտանեին կերակուրը, որուն, կապիկը սրդոված հիմա, հազիվ կդպցներ իր շրթունքը. և այսպես օրերով իր զրկանքը այնքան հոժարությամբ հանձն կ'առներ, որ տերը անոր անոթութենե մեռնելեն կվախնար։

Իր խոլ խաղերը, իր հիմար ոստումները դադրեր էին. ժամերով անկյուն մը սմքած կկենար ան որ հանգիստ ու դադար չէր գիտեր։ Միայն՝ երբոր աղջիկը դիպվածով անցներ իր վանդակին քովեն, անսահման բերկրանքի խանդով մը կցատկեր տեղեն, կքաշեր շղթան, կդառնար, կ'ելևէջեր իր փոքրիկ տնակին մեջ։

Օր մըն ալ Մարիղոն ձգեց գնաց բոլորովին և փոքրիկ կենդանին ալ իզուր սպասեց տեսնել՝ իր կապված, գամված անկյունեն՝ զգացված էակը, վայելքի պատկերը որուն իրավունք ունենալ կկարծեր։

Դ

Թղթախաղերնուս էն տաք մեկ վայրկյանին էր երբոր լուրը բերին. ամենքնիս իսկույն ձգեցինք ելանք խաղը, սա անհավատալի բանը աչքով տեսնելու համար։

Փայտե թառին վրա ոլորված շղթային ծայրեն, որ այսպես կարճըցած հիմա՝ մինչև գետին չէր հասներ ա՛լ, կապիկը կախված էր ուղղաձիգ և անշարժ. իր աջ թաթիկովը ուժով մը կսեղմեր դեռ, կարծես թե կփայփայեր, շղթան որ իր սրտահոժար մահվան գործիքը եղած էր. աչվընները գոց էին ու բոլոր դեմքին վրա, հարափոփոխ ու ծաղրածու դեմքին վրա, չ'նմ գիտեր ի՞նչ ծանր ու լուրջ բան մը որ այս մեռելի մանկական երեսին՝ ազատագրության մը՝ վերջնական փրկության ու հանգիստի մը վեհությունը կու տար։

Ի՞նչպես, ե՞րբ պատահեր էր ասիկա. պարզ դիպվա՞ծ արդյոք. և կապիկը, այնքան փորձ ու ճարտար, կարելի՞ էր որ մեկանց այնքան ապիկար եղած ըլլար՝ իր շղթային ոլորումներուն մեջ շնչահեղձ մնալու չափ։

Ծառաները, որոնք սակայն ամենեն աղեկ կճանչնային այս կապիկը, հավաստեցին թե անիկա կամովին սպաննած էր ինքզինքը, մարդոց շատերեն ավելի մեծ արհամարհանք մը ցուցնելով կյանքին։

Ու ես, զարմացած, դեռ կարծես կդիտեմ սա շղթային ծայրեն կախված փոքրիկ մարմինը, իր վար ծռած գլխովը, ու սա փոքրիկ թաթը որ վար չիյնալու համար շղթան բռներ է։

Ժամերով պիտի կենայի ասանկ, թե որ թութակը հանկարծ իր խնդալե մարելու մոտ մարդու քահքահովը, որ կյանքն ու մահը չի զանազաներ, չգար զիս սթափեցնել։

<1899>

ՉՄԵՐԱԳՏԱ

Ա

Երբոր կարգը իրեն եկավ բան մը պատմելու, բարեկամս Էլմասյան, հարուստ ու գեղեցիկ երիտասարդ մը, որուն սիրային արկածները շատ զրուցված են Փերայի մեջ, այսպես խոսեցավ։

Գեղջուկ սովորություն մըն էր այն հույն սպասուհին աղվորությունը, որ անցյալ տարի մեր տունն էր։

Մեր փողոցին մեջ, ուր սպասուհիները կվխտան, մեկ հատիկ էր ինքը. բոլոր խոհարարներուն, ծառաներուն ու նպարավաճառի տղոց երազած աննման աղջիկը։

Անցորդները կկենային զինքը դիտելու համար, երբոր շարաթ առտուները, մերկոտն ու վար ծռած, դրան սեմի, քարերը մաքրելու կզբաղեր՝ ինչպես որ սովորություն էր մեր տանը մեջ։

Այս շինականի ոտքերը պզտիկությամբ կամ փափկությամբ չէին կրնար պարծենալ հարկավ. բայց իրենց աշխատասեր բրտությանը մեջ աղվոր գիծերու ու վարդ գարշապարի մը շնորհը ունեին։

Այս դիրքով՝ արձակված ոսկի մազերուն հարուստ խուրձը, հրդեհի մը պես, իր պարանոցին ճերմակությունը կ'այրեր ու երկու կողմեն վար կթափեր։

Խաժ աչքերը, հակառակ իր գեղացիի ամոթխած նայվածքին, կամ թերևս ատոր համար, ճովիշ բան մը ունեին երբոր հառեին վրայ, սաստիկ, զգլխիչ բուրումի մը պես որ կփակչի քեզի և ուրկե չես կրնար և չես ուզեր փախչիլ։

Ամենքը կարծեցին, որ կրցա իր շնորհները վայելել. սխալեցան։

Զմարաղտան չհաճեցավ երեսս նայիլ. սակավախոս աղջիկ մըն էր, ինչպես կ'ըլլան անոնք որոնց ուժը իրենց լռությանը մեջն է։

Օր մը սակայն վրա հասա երբոր կեսգիշերին, դրան մոտ կսիրաբաներ մեկու մը հետ. ուզեցի իմ բախտավոր ոտքս ճանչնալ. այնպես մը շարժեցա որ չկրցավ անիկա խույս տալ, առանց դեմ դեմի գալու ինծի հետ. իմ ախոյանս պարզապես անկյունի մսավաճառի մանչն էր. չսան տարեկան անշահ տղա մը, աղտոտ, յուղոտ, միսի, ճարպի հոտերով ծեփված գանելիք մը։

Ինծի տեսնելուն՝ Զմարաղտան պահվըտեցավ, բայց միտքս դրի այս սխտավարակ հաճույքին գաղտնիքը հասկնալ. գիտեք որ կանացի հոգեբանությունը իմ մեծագույն զվարճալիքս է. անծանոթ, անմատչելի բեռն է ան, որ Հյուսիսինեն ա՛լ ավելի համառությամբ կպահե իր թաքուն հրաշալիքները։

Հաջորդ օրը կանչեցի Զմարաղտան իմ սենյակս, կարծեց որ բան մը պիտի ապսպրեմ ու վազեց եկավ. այն ատեն նստեցուցի զինքը դեմքս, բռնի, աթոռի մը վրա, հանցավորի մը պես՝ որուն դատավորը կ'ենթադրեի ինքզինքս այդ վայրկյանին։

Ապշությամբ երեսս կնայեր ու քիչ մըն ալ՝ կ'ըմբռներ որ առջի գիշերվան հանդիպումը իմ հանդիսավոր ձևերուս հետ կապակցություն մը ունենալու էր։

Բ

Ու երբ տեսա զինքը այսպես մինակը.

— Աղջիկս,— ըսի անոր,— չեմ կրնար պահանջել որ զիս հաճելի գըտնես անպատճառ. ճաշակները կտարբերին. բայց հետաքրքիր եմ քու ըմբռնումդ հասկնալու. դո՛ւն, այդչափ շնորհալի մեկը, ի՞նչպես երեկ գիշերվան անշնորհք էակին սիրտ կու տաս։

Մտիկ ըրավ ինծի. իր դեմքին վրա գծագրված անձկությունը անհետացավ տակավ, և անփույթ, գրեթե անպատկառ ձևով մը պատասխանեց.

— Դուն,— ըսավ ինծի,— իրավ անկուշտ էակն ես եղեր. հարուստի, չտեսի, չհափրացողի տիպարն ես. ի՞նչ պետք ունիս հարցնելու իմ պատճառներս. անոնք չնչին ու անհասկնալի պիտի երևան քեզի. ինծի համար նվիրական են։

Ո՞վ ես դուն որ ինծի պես խեղճ ու աղքատ աղջիկ մը կհետապընդես. կպակսի՞ն քեզ սիրողներ. չե՞մ տեսներ ամեն օր սենյակիդ մեջ լուսանկարները բազմաթիվ սիրուհիներուդ, որոնք հոն իրար կգտնեն առանց իրար ճանչցած ըլլալու. տիկիններ ու վարձկաններ, ամեն տեսակեն ալ ունիս. ոչինչ կպակսի քեզի։

Բախտը քեզի ամեն վայելքը լիուլի շռայլեր է անիրավ առատաձեռնությամբը, և ատիկա՝ ուրիշներու զրկանքովը շինված է։

Այն հեք պատանին, որ իր աշկերտի աղտոտ ու բիրտ գրգլյակին վրա կպտտցնե խանութին բոլոր թանձրացած հոտերը, իբր թե իր դըժբախտ ճակատագիրը տաներ հետը ամեն տեղ, օրն ի բուն ամենեն նկուն աշխատության մը դատապարտյալն է. իր տաժանքին փոխարեն ստացած չնչին ու ողորմելի ամսական վարձը, հայրենի՛քը, հո՛ն, հեռո՛ւն,— այս բանը դուն չես գիտեր,— սպասող հոր մը, մոր մը վերջին տարիներու զրկանքը թեթևցնելու պիտի երթա. այդ ամսականը քու մեկ վայրկյանի հաճույքիդ գինն է։ Հո՛ս, իր երկրեն անջատված, նետված այդ տղան՝ ի՞նչ ունի զինքը շրջապատող այս մեծ մայրաքաղաքին ի հանդես բերած վայելքներեն։ Անիկա զի՛ս գտավ միայն վիճակակից մը իրեն, զիս որ իր ազատ տարիներուն տառապանքին գիտակիցն եմ. իր բարեկամուհին եղա, չեմ պահեր քենե. այդ գեղջուկ տղան ձեր մայրաքաղաքեն բան մը չզողցավ, բան մը չպակսեցուց ձեր վայելքի իրավունքներեն. տիկինները ձերն են ու ձերը թող ըլլան, բայց գեղջուկ աղջիկը իրն է ու իրը պետք է որ մնա։

Հետզհետե, քանի որ կխոսեր, Զմարաղտային այտերը կարմրեր էին. վերջի բառերուն՝ ոտքի ելեր էր. իր սրտմտած աղվորությունը, սրտաբուխ պերճախոսությամբը բոլորովին հմայող բան մը դարձեր էր. վես ու ամբարտավան դիրքով մը կանգներ էր դեմս, ասպարեզ կարդալով կարծես ինծի՝ որ իր խոսքերուն ունկնդրելե ավելի լանջքին հարույցքը կգիտեի։ Եվ հաղթված ընկճված իր դեմը, հիմակ ա՛լ ավելի զայրագին իղձով մը լեցվեր էի. հլու, քամակս ծռած իր դիմացը, և պուղատագին ձևով մը՝ իբր ճշմարիտ քաղաքացի, անմիտ ու թուլ արարած, փոխանակ վիճելու հետը՝ մոտենալ ուզեցի իրեն. բիրտ ույժով մը ետ հրեց իրեն կարկառվող ձեռքերս՝ աղտոտ ու գարշ բանի մը հպումը արգիլելու պես, և դուրս փախավ։

<1898>

ՄԱՐԱԳԵՏԸ

Ա

Հազար ութ հարյուր ութսունչորսի սկիզբները վիրաբուժական պզտիկ գործողության մը համար Փերայի Գերմանական հիվանդանոցը տարին զիս։ Տասնհինգ օրի չափ պիտի մնայի հոն. այսպես հավաստեցին ինծի զիս տարած ատենին։ Իրոք, երեք ամիս մնացի այն տեղը։ Մաս մը հիվանդությունս պատճառ եղավ ասոր, մաս մըն ալ հոնկե դուրս ելլելու դժկամակությունս։ Լավ՞ծ բան է հիվանդի մը, բժշկվելեն ետքը, հիվանդանոցին մեջ ապրելու փափաքը։ Տղայության ատեն՝ դպրոց չերթալու համար սուտ հիվանդ ըլլողներ շատ են. բայց քաջառողջ երիտասարդի մը՝ ազատ ու աղվոր օդը ձգելով, անկողնի մը մեջ ամիսներով մնալու հոժարիլը շատ չի պատահիր։

Իմս այս տեսակեն էր. վերջիվերջո երևան ելավ իմ հիվանդությանս կեղծիքը. բազկերակիս կանոնավոր զարկը, կարմիր երեսներս ու գլխավորապես զորեղ ստամոքսի մը պահանջումները խոսք մեկ ըրին իմ հնարքս երևան հանելու համար. բայց ասոնցմե ավելի կարծեմ թե թուլբերանությունս էր, որ ամեն բան հայտնի ըրավ։ Այնպես որ օրին մեկը ըսին ինծի թե հիվանդանոցին մեջ մնալու պատճառ մը չունեի այլևս և թե հիվանդանոցը պանդոկ մը չէր։

Հիվանդանոց մտնելուս չորրորդ օրը, կարծեմ, վիրաբուժական գործողությունը կատարեր էին. f[illegible]ոֆորմին պարգևած անզգայության տակ՝ դանակի հոշոտումները չիմացա։ Խելքս գլուխս եկած ատեն՝ երկարատև ընդարմացումե մը ելլող մարդու խոնջենքեն, վարանումեն զատ բան մը չկար վրաս։ Եթե վերքս կապող ճերմակ լաթերը չըլլային, եթե քովս հսկող գթության քրոջ՝ շարժում չընելու պատվերը չլսեի, հիվանդանոց մտած օրես ի վեր վրաս փոփոխություն մը կատարված ըլլալուն չպիտի հավատայի բնավ։

Զգայությանս վերադարձին հետ սակայն պզտիկ ու խորունկ անհանգստություն մը, որ տակավ ցավի կփոխվի, կտրված պատռված միսերուս, ջիղերուս ցավը, սուր ու զայրագին բան մը, որ հետզհետե սաստկանալով՝ հիմա անկողնեն դուրս նետվելու կմղե զիս։ Կ'երևա թե ասիկա նախատեսված է արդեն, վասն զի գթության քույրը, որ քովս չէ բաժնվեր վայրկյան մը, կսրտապնդե զիս։

— Հիմա կ'անցնի, համբերե, տղաս, տեղեդ մ'երերար, որովհետև վերքդ կբակվի և շատ գեշ կ'ըլլա վերջը։

Ցավիս ավելնալեն՝ հեծեծանքս սենյակս կլեցնե, այնչափ որ գտնըված տեղս չսեպելով՝ ձայնս ալ կբարձրանա ճիչերով ու աղաղակներով։

Սնարիս քով փայտե աթոռակի մը վրա քույրը նստած է, շարունակելով իր սփոփիչ խոսքերը, վարժ բերնով մը, գրեթե գոց եղած պարբերություններ զորս հարկավ, մինչև ինծի գալով, հարյուրավորներու ալ կրկնած է շարունակ.

— Հիմա պիտի անցնի, բան մը չէ ասիկա, ա՛լ բոլորովին աղեկցած ես։

Աղեկցա՞ծ. ինչպե՞ս, երբոր ցավերս վայրագ ու ահարկու բան մը կ'ըլլային այս պահուս, այն աստիճան, որ անդիմադրելի փափագ մը կզգայի քակելու նետելու վերքիս կապերը ու մարմնիս խորեն, չեմ գիտեր ո՞րտեղեն, քաշելու փրցնելու՝ զիս շարչարող միսերը ու գործարանները բոլոր։ Անկողնին մեջեն պզտիկ մը երերալուս քույրը ուշադիր կսրդողեր։

— Մի՛ շարժիր, ո՛չ, այդ բանը չըլլար,— կ'ըսեր ոտքի ելլելով,— կսրդողիմ։

Գ

Երեսը նայեցա շիտակ մը՝ այս «կսրդողիմ»ին վրա, խե՜նթ էր, ի՜նչ էր այս կինը, որ տառապանքիս զարհուրանքը չէր հասկնար բնավ։ Անհավատալի՜ բան. իր մեղրամոմի հատնումովը հատած, տժգունած դեմքին վրա տեսածս՝ կարեկցություն մը չէր, այլ հրճվանք մը կարծես. իր պզտիկ, ամփոփ և երկու դիեն վեր առնված բերնին ու շուրթերուն վրա ժպիտ մը, հայտնի ուրախության մը ժպիտը, կգծագրվեր ու կ'աղվորցներ զինքը։

Ցավիս տագնապներուն մեջ ու պոռալս շարունակելով հանդերձ, ուշադրությամբ կդիտեի զինքը իր կեցվածքին մեջ. այնքա՜ն տարօրինակ և անհարկի կգտնեի այս ցնծությունը իմ գլխուս վրա։ Նրբացողուն ծաղիկի մը կնմաներ, բարձրահասակ ու քիչ մը նիհարկեկ, վայրահակ սիրուն գլուխով մը՝ որուն վրա մարապետներուն ճերմակ գլխանոցը երկու թևերը բաց աղավնիի մը թառիլը կհիշեցներ։ Հստակ ու խոշոր աչքերուն մեջ թոնուտ երկինքի մը կապույտը կար։ Իր մութ կանանչ չուխայե շրջազգեստը հարկավ ոևէ պերճություն չուներ, բայց անոր հասակին շքեղությանը կվայլեր այս պարզությունը և, fnnսե չդնելուն հակառակ, մեջքին նրբությունը աչքի կզարներ դարձյալ։

Պետք է հավատալ թե ցավիս սատկությունը քիչ մը մեղմացած ըլլալու էր, քանի որ այսքան մանրամասն կրնայի այս կնոջ պատկերը վերլուծել։ Դեմքին վրա սակայն՝ ծավալող դեղնությանը հետ՝ չափահասության տարիներու աննշմարելի հպումը կար։ Ամենեն ավելի իր ուրախութենեն աղվորցած դեմքին արտահայտությունը զիս կգրավեր ու քիչ մը կզայրացներ։

Ցավ մը ունեցած պահուդ կ'ուզես որ դեմի մարդդ ալ ցավի ու կսկիծի մեջ ըլլա. վիշտը միակ ինչքն է զոր մարդս կհոժարի, մինչև անգամ կպահանջե, որ ուրիշին հետ բաժնեմ։ Եվ ահա իմ քովս կին մը որ իմ տառապանքիս առջև հրճվելու, ակնդետ սպասված հաճույք մը ըմբոշխնելու երևույթ մը ունի։ Զիս քաջալերելու համար լեզու թափած միջոցին ներքին ցնծությանը ցոլացումը կտեսնեմ այդ դալուկ երեսին վրա, ինչպես կանթեղի մը ապակիին գույնը որ ներսի լույսին վառելով հայտնի կ'ըլլա։

Սկիզբները այս տպավորությունս վերագրեցի իմ եսասիրությանս. դիմացինիս ինծի համավիշտ չըլլալեն առաջ եկած դժգոհություն թերևս։ Ստույգը սա է որ անիկա իր խնամոտ հոգածությունը անպակաս կ'ըներ վրայես. վերքիս պատանքը փոխված օրերուն ներկա էր միշտ. ու իր ձեռքով կկատարեր դարմաններս։ Օր օրի վերքս կգոցվեր ու առողջություն տակավ կվերադառնար. բայց այդ համեմատությամբ ալ մարապետին երեսեն անուշչ ժպիտը կպակսեր, իրիկուն եղած ատեն լեռներուն ետին պահվըտող արևու ճառագայթի մը պես։ Հիմա առջվան պես չէր կենար քովս և կվազեր ուրիշներուն քով, անոնց որոնց ցավագին աղաղակները, պատերուն հաստությունը ճեղքելով, մինչև ականջս կհասնեին երբեմն։ Ու վերադարձին իմ մոտս, ուրախության և հրճվանքի ժպիտը, այն՝ որ իմ ցավերուս ամենեն զայրագին միջոցին կ'ընդնըշմարեի իր դեմքին վրա, կարծես թե շուրթերուն վրա էր, մարելու աներևութանալու կոչված ժպիտը՝ երբոր ինծի կմոտենար։

Դ

Քույր Էմիլիեն, զիս խնամող մարապետը, քաջասիրտ հիվանդապահի համբավը ունի. բժիշկները մեկ հատիկ հոչակած են զինքը. ամենեն սարսափելի վիրահատությանց ներկա է ան. առանց խռովելու կատարելով իր պարտքը արյան ճահճներու, միսերու, ջիղերու հոշոտմանց մեջ։ Ցավագին աղաղակներու, պաղատանքներու դիցուհին է ան կարծես։ Հիվանդ չկա որուն կսկիծի, անեծքի հեծեծանքը ունկնդրած չըլլա։ Ամեն տեղ է անիկա, ուրկե հեծեծանք մը կուգա. բայց գլխավորաբար էրիկ մարդոց մոտն է իր պաշտոնը, պահապան հրեշտակի պաշտոն զոր անվրդով արիությամբ մը կվարե։

Այս անվհատ տոկունությունը ի՞նչպես մտած է այս էապես տկար ու ավշային կազմվածքին մեջ, որուն՝ երեսին թափանցիկ ու անգույն ճերմակությունը, սպիտակ գլխարկեն երբեմն դուրս սպրդող մազերուն դեղին ոսկին՝ հայտարար նշաններն են։

Ապաքինությունս կանոնավոր կերպով առաջ կ'երթար և իրեն հետ երկար խոսակցություններու պատեհությունը կուտար ինծի։ Կթվեր թե ինքն ալ կ'ախորժեր քիչ մը իմ հախուռն վճիռներես, որոնց մեջ եթե դատողությունը միշտ ուղիղ չէր, գեթ համոզումի անկեղծությունը կար, և ճշմարտազանցություններուս ներողամիտ լռությամբ մը կ'ունկնդրեր։ Երբեմն ընկերական խնդիրներու, հոգեկան փորձություններու, մարդոց ապագային վրա կճառեի, և այն ատեն լուրջ խոսակից մը կգտնեի դեմս։ Ուսյալ ու զարգացած մտքի տեր կին մըն էր, և այդ պահուն մարապետի կարգը ու սարքը կթոթափեր մեկդի, իր կարծիքը ազատ ու համարձակ հայտնելու համար։

Խոսակցության մեջ հայտնեց որ մյունիխցի ազնվական ընտանիքի մը զավակ էր. նկարել ու երգել ալ գիտեր, խնամված դաստիարակության մը ուրիշ բոլոր առավելություններեն զատ։ Ու զարմանքս կ'ավել-

նար գտնելով զինքը հոս՝ Պոլսո հիվանդանոցի մը մեջ՝ սպասավորելու, վերքերը կապելու, ցավեր դարմանելու ապերախտ աշխատության մը մեջ, երբ իրեն պես շնորհագեղ էակ մը ամեն կերպ երջանիկ օրերու արդար ակնկալությունը կրնար ունենալ. ու ճշմարիտ դյուցազնության մը հմայքը կ'ավելնար իր հազար տեսակ հրապույրներուն վրա։

Ինքզինքս պզտիկ ու շատ պզտիկ կզգայի անոր քով. հիմա իմ մեծարանությունները կչափավորեի, և խորունկեն, սրտես բխող մեծարանքով մը կ'ողջունեի իր մուտքը իմ սենյակես։ Իր ճերմակ ձյունաթույր գլխանոցը լուսավոր պսակ մը կ'երևար աչքիս, և մտքովս կտեսնեի անոր տակ ոսկի մազերուն ճաճանչները։

Հիմա բոլոր մտածմանս առարկան ան էր։ Հեռվեն՝ նրբանցքներուն մեջ քալելուն՝ իր թեթև ոտնաձայնը կճանչնայի։ Սենյակես ներս մտնելուն դող կ'ելլեի բոլոր մարմնովս ու երջանիկ էի միանգամայն։

Առջի խոսուն կատակասեր տղան չէի ալ, այլ թոթովախոս մանուկ մը և երբեմն ցնորակոծ սավառնումներով բանաստեղծ մը, երկու ծայրահեղություններ որոնց, իրոք, ճիշտ մեջտեղն է իմ տափակ նկարագիրս։

Իմ խնդիրքիս վրա՝ գիրքեր կբերեր ինծի կարդալու համար. մեկ հատը Շուփենհաուերի հատոր մըն էր, և այդ հատորին մեջեն սա պարբերությունը ցույց տված ինծի.

> Աշխատիլ և տառապիլ՝ ապրելու համար։ Ապրիլ՝ աշխատելու և տառապելու համար։

Ա՜յս էր բովանդակ կյանքը։

Սենյակս ձգել երթալուն, լույսը ու օդը կպակսեր հոնկե։ Ընդարմացած, մրափի մը մեջ կթաղվեի. կյանքս կդադրեր կարծես իր բացակայությամբը. և ժամերով իրեն վերադառնալուն կսպասեի, հատնումով մը, ուրիշ ոևէ կամք ու իղձ չունենալով աշխարհիս վրա։ Պատուհանես, որ Մարմարայի բոլոր տենսքը կվայելեր, նայվածքս աննպատակ ու անտարբեր կսևեռեր դուրսի աշխարհին վրա. իմ բոլոր ուզածս, սիրածս հիվանդի սենյակս էր, իր ճերմակ՝ գրեթե աղքատիկ պատերովը, իր թափուր մերկությանը մեջ։ Այս կնոջ մոտ ապրիլ. այս էր բոլոր կյանքիս ըղձանքը։

Բժիշկները իմ առողջացած ըլլալս կհաստատեին. իրոք աղեկցեր էի, եթե հոգիիս քայքայումը չսկսեր, նոր հիվանդություն մը զոր քույր էմիլիեն իր թափանցող նայվածքովը պայծառ կերպով կտեսներ։

— Տղաս,— կ'ըսեր քովս գալով,— պետք է դուրս ելլել, քիչ մը օդ առնել, պտտիլ։

Ես՝ համառությամբ կփակվեի սենյակիս մեջ, չուզելով մեկուն երեսը նայիլ, խոսքի բռնվիլ ասոր կամ անոր հետ, ժամանակս վատնել զուր տեղը, երբոր կրնայի զայն իմ միակ երազիս հատկացնել։

Ներսիդիես հիմա կխոստովանեի թե հիմարի պես կսիրեի այս կինը որ հիվանդապահս էր, որուն ազգը, տարիքը, կրոնավորուհիի կոչումը, ամեն բան վերջապես կ'արգիլեին զիս ոևէ հույս ունենալե սրտիս մեջ։ Այս անկարելիությունը ա՛լ ավելի կսաստկացներ սերս։ Անջրպետին խորությանը չափ՝ հոն նետվելու փափագս՝ կ'ավելնար, վիհերու ձգողությանը, անոնց տված գլխու պտույտին պես։

Ե

Այնչափ ատենվան մեջ օր մըն ալ միտքես չանցավ բառ մը, ամենաչնչին ակնարկություն մը ընել իրեն՝ սրտիս մեջ արթնցուցած զգացումներուն վրա։ Առվեռին երգը ճիշտ իմ վրաս էր. բայց անիկա, Առվեռի սիրած կնոջմեն ավելի սրատես, քաջությամբ խոսքը բացավ ինծի.

— Տղաս,— ըսավ ինծի ցերեկ մը, երբ կտիպեի զինքը վայրկյան մը ավելի քովս նստիլ,— ես քու վիճակդ հասկցած եմ, հիմար ու անկարելի երազով մը կտառապիս...

Հանցավոր տղու մը պես շվարեր էի։

— Ես մարապետ մըն եմ հոս ու դուն երիտասարդ մը որ, փառք աստուծո, բոլորովին աղեկցած ես և պետք է որ ա՛լ չկենաս այս տեղը և մանավանդ միտքդ հանես տղայական փափագները, որոնցմով զուր տեղը կտանջվիս...

Հանկարծ մեկդի ըրի ամեն վեհերոտություն.

— Ոչ թե մտքես, այլ սրտես պետք է որ քաշեմ հանեմ իմ երազներս,— պատասխանեցի անոր։

Եվ իբր թե այս մեկ խոսքովս ամեն բան հայտնած ըլլայի, պզտիկ մը ծակվելով վերքի մը բոլոր արյունը պոռթկալու պես՝ բոլոր տառապանքս դուրս թափեցի։

— Ինչո՞ւ այդքան կատարելություն ունիս վրադ,— ըսի իրեն,— եթե քու վրադ հիանալը, զքեզ սիրելը արգիլված է։ Ի՞նչ պիտի վաստկիս ամփոփված մնալով քու մինակությանդ մեջ որ լքումի մը կնմանի։ Ի՞մ ուզելովս էր որ սիրեցի զքեզ. երբե՛ք. և հիմա որ կզգամ թե շատ ավելի ծանր հիվանդ մը եմ քան թե հոս եկած օրս, հիմա կվոնտես զիս, առանց գթության բառ մը ըսելու ինծի։ Պիտի ըսես և պիտի համրես ինծի բոլոր անպատեհությունները կամ անպատշաճությունները իմ սի-

ռույս. այս բոլորը հազար անգամ ես ինքզինքիս թված եմ. կ'երդնում որ ես բան մը, բան մը չեմ ուզեր քենե. հիվանդ էի և հիվանդ եմ միշտ, ձգե որ քու քովդ ապրիմ հոս, առանց աղեկնալու հույսի, բայց գոնե առանց ալ մեռնելու հաստատ ստուգության մը։

Զ

— Մեռնելո՞ւ, ինե՞ հեռու մնալուդ համար պիտի մեռնի՞ս,— պատասխանեց ինծի ժպտելով, ժպիտ մը՝ որուն մեջ դառնություն մը կար։— Չես մեռնիր, ապահո՛վ եղիր. հոսկե դուրս ելլելուդ՝ երեք օր պիտի նեղվիս, ութ տաս օր ալ վրաս պիտի մտածես, տասնհինգ օրեն բավական սփոփված պիտի ըլլաս արդեն, և ամիսե մը՝ հիշատակ մը, անուշ ու աղոտ հիշատակ մը պիտի մնամ մտքիդ մեջ. գալ տարի դուն ալ պիտի զարմանաս զիս սիրած ըլլալուդ։

Իմ ժխտական շարժումիս վրա՝

— Ես այդ սիրո արբեցությունները գիտեմ, շամփանիայի փրփուրին պես շուտով կսմքին։

Եվ հանկարծ այլափոխվելով, կարծես մերկանալով իր մարապետի խոժոռ երևույթը, իր ծանր ու լուրջ ասացվածքը, ամենեն հրապուրիչ, մոլորեցուցիչ կինը դառնալու համար և ամենեն դաշն ու վրդովիչ շեշտը դնելով իր ձայնին մեջ՝

— Որովհետև վաղը պետք է որ ձգես երթաս հոսկե ու պիտի երթաս. և որովհետև համակրելի ու սրտի տեր մեկն ես կամ այնպես երևցար, քեզի կրնամ ըսել, որ չեմ հավատար քու սիրույդ և ձեր բոլոր էրիկ մարդոց սերերուն։ Ես իմ անունս, ընտանիքս, հարստությունս, իմ քսան տարու երիտասարդուհիի բոլոր իրավունքներս զոհած մեկն եմ երիտասարդի մը, որ, քեզի պես, մեռնելու չափ սիրելու երդումներով խաբեց զիս։ Զիս ամուսնության ուզող շատ մը ազնվականներու առաջարկությունները մերժեցի, ծնողքիս թախանձանքին մտիկ չըրի ու փախըստական գողի մը պես՝ գիշեր մը փախա հայրենի տունես, սիրականիս մոտ երթալու համար։ Ընտանիքս ուրացավ զիս, ինչ որ իր իրավունքն էր։ Ես փույթ չըրի ասիկա. երջանիկ էի զիս սիրող երիտասարդին քովիկը։ Անիկա պզտիկ մը մտահոգ էր. իմ սիրույս կուրությանը մեջ՝ սկիզբները ուէ կասկած չթունավորեց սիրես, բայց վերջը տեսա, ձանձրության և զզջումի պես բան մը տեսա անոր վրա, ինծի հետ միացած ըլլալու զզջումը։

Զգացա՞ծ ես երբեք բարձր ու ամուր պատի մը փլչիլը վրադ, քարերուն հարվածները գլխուդ ու մարմնիդ վրա, զգայազիրկ ու անկենդան մնալդ անոր տակ։ Այսպես եղավ իմ զարթնումս։ Օր մըն ալ, մեկդի ընելով ամեն կեղծիք, իմ սիրած տղաս ըսավ ինծի.

— Պետք է որ հաշտվիս ծնողքիդ հետ, այս աղքատությունը չի քաշվիր ալ։

Տարվան մը չքավորությունը բավական եղած էր հատցնելու համար այն անսպառ սերը որ մինչև գերեզման պիտի տևեր։

Այն ատեն վերջին վարանումներս անհետացան. իր քովեն ձգեցի փախա, ինչպես տարի մը առաջ փախեր էի հայրենի տունես, իրեն վերադարձուցի իր ազատությունը, սուտ ու փուճ խոսքերով ուրիշ կիներ խաբելու ազատությունը։ Բայց այդ վայրկյանեն ապառաժի մը պես քարացավ սիրես. կսկի՞ծն էր թե վրեժի գաղափարը որ հոգիս ամրացուց. ուխտ ըրի աշխարհքիս վայելքները ուրանալու. մարապետ եղա։ Աղքատի մը ուրիշին ողորմություն ելլել տալուն պես՝ ցավեր ու վիշտեր սփոփելու տվի ինքզինքս, երբ ես այնքան կարոտ էի սփոփանքի. քանի որ ինծի տրված չէր աշխարհքը վայելել, ջանացի որ ուրիշներ լիովին, առանց ցավի վայելեն զայն. իմ զրկումովս ուրիշներուն վայելքը շինեցի։

Բայց ասոնց ամենուն վրա ներքին ուրախություն մը ունեցա. մեկ հատ մը, բայց գերագույն ուրախությունը, զոր խոստովանելու արիություն պիտի ունենամ. չեմ ուզեր ինքզինքս լավագույն ցուցնել քան ինչ որ եմ իրոք։ Հատկապես ուզեցի որ իմ պաշտոնս վիրահատներուն մոտ ըլլա, և այնպես ալ եղավ. ես կ'օգնեմ, կսպասավորեմ իրենց և այսպես հանդիսատես կ'ըլլամ մարդոց, այսինքն ձեր բոլոր տառապանքին, գալարումներուն. ձեր աղաղակներեն շինված այս ահարկու երաժշտության ու նվագահանդեսին ունկնդիրը ըլլալու վայելքը ունիմ օրվան ամեն ժամուն։ Էրիկ մարդոց ցավատանջ գոռում գոչումները մտիկ ընելով՝ իմ սրտիս զսպված ու անմռունչ ցավերը գոհացում կստանան, կմեղմանան։ Կ'ընդունիմ որ անգութ ու ոխերիմ գոհացում մըն է ասա։ Ձեր ճիչերը, վայնասունները լսելու համար ուրեմն քիչ մը հոս եկած եմ. ուրիշ հիվանդապահ կին մը ինծի չափ անվրդով արիություն չպիտի կրնար ցույց տալ. ամենքը կշնորհավորեն զիս։ Ես, երբոր միանակ մնամ խղճմտանքիս հետ...

Հոս, քույր Էմիլիենի ձայնը մարելու պես եղավ։

— Ինքզինքս կ'ատեմ։ Ահա այս տառապանքին հրճվանքովն է որ, դեռ հազիվ երեսուն տարեկան, ծերացած եմ։

Վայրկյան մը դադարե ետքը, տեսնելով իմ լռությունս՝

— Տեսա՞ր որ քու երևակայած բարձր հոգիդ չունիմ ես, որքա՞ն

հեռու եմ անկե, ճիշտ հակառակը գուցե անոր։ Սիրվելու մեկը չեմ ես, այլ ճակատագրին բեռը տանող ոխակալ կին մը։

— Այս բոլոր ըսածներդ բան մը չեն պակսեցներ իմ պաշտումես,— ըսի իրեն,— ամենեն ըղձալի էակն ես աչքիս, ու կվախնամ որ հավիտյան այդպես պիտի մնաս։

— Տղա՛,— ըսավ ինծի։

Հետո անուշությամբ ու թող տալով որ ձեռքը բռնեմ ու շրթունքս մոտեցնեմ անոր՝

— Վաղը դուրս ելիր ասկե, հավատա՝ որ քիչ օրեն կ'անցնի այս բոլորը. քրոջ մը պես դարմանեցի քեզ, ենթադրե որ քույրդ եմ միշտ։ Ու, եթե երբեք տարին մեյ մը քայլերդ այս կողմը առաջնորդեն քեզ, եկո՛ւ երբեմն զիս հարցնելու։

Է

Սենյակես ելլելեն վերջը ի՞նչ գնաց ըսավ հիվանդանոցին մեծավոր մարապետին։ Սա գիտեմ միայն որ հետևյալ օրը անդարձ կերպով որոշեցին իմ մեկնումս. դուրս ելլելու պատրաստություններս երկարցուցի, սպասելով որ վերջին անգամ տեսնեմ զինքը. բայց չկրցա տեսնել։ Եվ տարօրինա՜կ բան, իր բոլոր գուշակածները ելան. զինքը տեսնելու կարոտս մարեցավ տակավ. օրական զբաղումները, կյանքի պայքարը, արտիս ամեն ծաղիկներուն պես, ճզմեց չորցուց և փոշի ըրավ այս երազքս ալ։

Բայց քույր էմիլիենի հիշատակը մնաց մտքիս մեջ, գրքի մը էջերուն մեջ մոռցված տերևի մը պես քիչ մը տժգունած։

Միայն, ինչպես որ ապսպրած էր ինծի, տարի մը վերջը, Թաքսիմի կողմերը պտտած մեկ օրս, հիվանդանոց գացի զինքը հարցնելու համար։

Հազիվ ամիս մըն էր որ տարափոխիկ հիվանդություն մը՝ ութ օրվան մեջ՝ առեր տարեր էր զինքը։

— Անոր պես հիվանդապահ մը չի գար մեյ մըն ալ,— ըսավ մեծավոր մարապետը գլուխը երերցնելով։

Այս եղավ իր բոլոր դամբանականը։

<1900>

ԽՆԴՈՒՔԸ

Ա

Երբոր ներս կմտնեմ սենյակին դուռնեն, ի՛նչ սուտ զուրցեմ, սիրտս ուժով կբաբախե։

Իրավ է որ տասը երկար տարիներ զիս այս տունեն կբաժնեն, բայց երեկվան պես աչքիս առջևն է սա հեռավոր անցյալը։ Բոլորը երկու ամսվա կյանք մը այս տունին շուրջը, բայց է՛ն տագնապալը, է՛ն դժբախտը որ անցուցած եմ պատանությանս մեջ, է՛ն մեծ վրդովումը հիմակվան խաղաղությանս ուղղվելե առաջ։

Ու ահա այս տանը դուռը ոտք կոխելուս, մտովին ամբողջ վերադարձ մը կկատարվի հոգիս մեջ. կ'երիտասարդանամ հանկարծ. կզգամ որ հիմակվան գիրուկ ու կարճուկ մարդը չեմ, որուն խորշոմած ճակտին վրա կյանքի պայքարները իրենց քով քովի շարված զուգահեռականները ձգած ու գացած են, խղճամիտ ձեռքով ակոսված արտի մը պես, այլ երեկի տղան՝ նիհար, հպարտ ու ճշող. կերպով մը այլափոխումը Ֆաուսթին, որուն մեջ սատանան դուրսեն չէ՛, իմ հիշատակներս են միայն։

Թեթև քայլերով ուրեմն կմտնեմ ներս, իբրև թե այն մեծ ժամանակի անջրպետը հանկարծ բարձված ըլլար մեջերնուս։

Ամեն ինչ, շուրջս, այս պատրանքս հաստատելու խոսք մեկ ըրած է կարծես։ Նորեն տասը տարվան առջի սրահն է, անփոփոխ, անայլայլ. մութ կարմիր թավիշե ֆանափեն իր բազմոցներով, անկյունը դրված դաշնակը՝ բաց ձգված ու շորս դին երաժշտության նոթաները ցիրուցան. պատերուն վրա՝ իրենց ամեն ատենի տեղը հաստատ՝ նույն պատկերները ու լուսանկարները որոնց ամենեն զմայլելին սա դաշնակին վրա դրվածն է, երիտասարդ կնոջ մը դիմագիծը, զոր քաջ կճանչնամ։

Այդ լուսանկարին իրականը դեմս է ահա։

Իր սովորական տեղն է՝ պատուհանին քովը, բազմոցին վրա նստած, ու մեղմիվ ահա ոտքի կ'ելլե և քայլ մը առաջ կուգա։

Ան է։

Տեսե՛ք անգամ մը, իր աղվոր հասակը բնավ փոխված չէ. իր սև աչքերը առջի տրտում ու խորունկ նայվածքը ունին. իր ձեռքերը միշտ նույն մանկական թաթիկներն են. իսկ մատները ավելի նրբացած են քիչ մը։

Բայց պզտիկ մը գիրցած է, տարիքի բերմունք. ու իր ածուխի

կոտրվածքի պես փայլոտ մազերուն մեջ ճերմակ թելեր սպրդած են. փայլակին գծած լուսավոր շավիղները մութ գիշերվան մը մեջ։

Իր երեսին վարդ գունավորումը չէ մնացած. անոր տեղ փղոսկրին տժգույն ճերմակությունը միօրինակ իր երեսին վրա ծավալած է, մեղրամոմի ճերմակությունը։

Այս դեմքին լրջությունը աղեկ կճանչնամ, արձանի անխռով լրջությունը զոր աշխարհ՝ս ամեն աղերսները ու պաղատանքները չեն կրցած երբեք այլայլել։

Խնդալ ու ժպտիլ չէր գիտեր այս կինը. իր անտարբեր երեսը օր մը անուշ ու զվարթ ճառագայթով մը չփայլեցավ. իր կյանքի կանոնն էր սա։

Ու առջի հիշատակներս, առջի կսկիծներս քուներնուն կ՝ելլեն. ինչո՞ւ այս խռովիչ աղվորությունը և ինչո՞ւ այս խոժոռ ու անժպիտ դեմքը որ միևնույնն է տասը տարի վերջը. մարդկային տկարություններու գլուխ չդարձնող դիցուհի՞ վեսությունը, իր արհամարհոտ կնկան բոլոր սառնությունը, հո՛դ, հայտնի, ընդհանրելի կերպով գրված են այդ դեմքին վրա։

Ու ես կրկին փորձություն կզգամ սրտիս մեջ պոռալու իր երեսին.

— Մեկդի՛ դիր այդ անտարբեր ու սրդոզած երեսը աստուծո սիրույն. անգամ մը գոնե խնդա՛ ինծի, խնդա՛, ո՞վ աղվոր կին։

Հազիվ երկու բառ փոխանակեր էինք, երբ իր աղջիկը ներս մտավ. տասնվեց տարու պարմանուհի մը, վարդե ու լույսե խմորված էակ մը. նազանքով ու ժպիտով մոտեցավ ինծի։ Ու աղեկ մը չեմ գիտեր ի՞նչ խոսքի առթիվ — կ՝երևա թե կրցա տիկինին հաճելի կամ զվարճալի բան մը ըսել — իր սովորական անփույթ ու նեղացած դեմքը մեղմացավ, անուշցավ, ու, զարմանալի՞ բան, թեթև ժպիտ մը ուրվագծվեցավ նախ, հետո հաստատվեցավ այս աղվոր դեմքին վրա, արշալույսին ծագելուն պես որ քիչ-քիչ որոշ ու աննահանջելի առավոտի մը կվերածվի։

Որքա՜ն գեղեցիկ էր այսպես. երբեք չէի գիտեր որ այսչափ պիտի աղվորնար. բայց ժպիտը ավելի շեշտվեցավ ու քիչ-քիչ, կամացուկ մը խնդալ սկսավ։

Աստված իմ, առջի անգամ ահա ճշմարիտ կինը երևան կուգար այս անզգա աղվորության մեջ։ Կխնդար, երջանիկ էր ուրեմն, և ես իրմով երջանիկ էի։

Ինքը՝ կշարունակեր խնդալ, երթալով ավելի շատ և ավելի ուժով, անվերջ քահքահ մը հիմակ, որով ձեղունը կթնդար, մինչդեռ ես իր մեկ՝ մեկ ժպիտին ակնկալուն՝ ապշած զմայլած կդիտեի զինքը և այս գեղեցիկ ուրախությունը, այսքան չնչին պատճառով մը։

Երևակայեցեք դեմերնիդ կծծի ու ագահ էակ մը որ հանկարծ, մեկ վայրկյանի մեջ, ամենեն մսխող ու շռայլ մարդը դառնա։

Ու շվարումիս մեջ ան կխնդար հիմա, այնքա՜ն սաստիկ որ Ֆոռսեն նեղ կուգար իր հարուստ իրանին, ու բազմոցին կոնակին կկոթեներ, չկրնալով ուղիղ նստիլ իր տեղը։

— Հա՛, հա՛, հա՛...

Այն ատեն աղջիկը մոտեցավ ինծի ամչնալով, տրտմության քողով մը դեմքը վարագուրված ու անուշ ձայնով մը՝

— Ներեցե՛ք,— ըսավ ինծի,— այսպես է ահա խեղճ մայրիկս իր վերջին հիվանդութենեն ի վեր. ոչինչ պատճառով մը կսկսի խնդալ ժամերով. կ՝երևա որ ջղային բան մըն է։

Եվ իրոք, քահքահը՝ զվարթ, պոռչտող քահքահ մը՝ գրեթե ոգեղցնելով իր սիրուն դեմքը, անսովոր ու դառն ուրախությամբ մը կլեցներ սենյակը, մինչդեռ աղջիկը՝ մորը քով ծունկ չոքած՝ անոր ձեռքերը կսեղմեր։

Խորհեցա որ տասը տարի առաջ իմ փնտրածս այս աղվոր երեսին վրա՝ սա պոռացող, անգիտակից ու անիմաստ խնդուքը չէր, այլ այն պզտիկ, գրեթե աննշմարելի ժպիտը, այն խորհրդավոր ու չնչին բանը, որ ամեն խոստումները ու ամեն վերապահումները, ամեն մերժումները ու ամեն անձնատվությունները, ամեն տարակույսները ու ամեն հայտնությունները իր մեջը կպահեն։

Խորհեցա մանավանդ տարօրինակ ճակատագրին այս կնկանը, որ իր մեկ ժպիտը այնքա՜ն ժլատ, ագահ համառությամբ ամենուն զլանալե ետքը, ահա զուր ու փուճ տեղը իր անսպառ խնդուքը կթափեր իր շուրջը, առանց որ մեկը գտնվեր ու ծռեր զանոնք գետնեն ժողվելու համար։

<1898>

ՅԵՂԻՆԱԿԻ ԿԱՋՄԱԾ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՆՈՐԱՎԵՊԵՐԸ

ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԱԿԱՆՈՒՆԸ

Սերոբե վարդապետ երեսունևհինգ տարու հազիվ կար, թեև ավելի մորուք մը կզարդարեր յուր լայն կուրծքը. բարեձև գլուխ ու բարեկազմ մարմին ուներ. խստակրոն էր առանց աննեբող լինելու, ինչ որ հազվագյուտ է, ու կատարյալ կրոնավոր էր, առանց դագրելու կատարյալ մարդ լինելե, ինչ որ բնավ չպատահիր։

Կապույտ թավշե չէր անոր գլխարկը պճնասեր եկեղեցականներու գլխարկին պես, այլ սև չուխայե շինված էր իր անպաճույճ վերարկուին նման։

Կսիրեի յուր ոգևորյալ խոսակցությունը, մշակյալ միտքն և ուղիղ դատողությունը, մանավանդ կհարգեի անոր անձնվեր ու ազգասեր ոգին։

Տարիեն ավելի էր, որ կտեսնվեի հետը, առանց ո՛ւր տեղացի լինելը, ո՛ր ընտանիքին վերաբերիլը գիտնալու, յուր մաքուր ու քաղցր արտասանութենեն կ'զգայի միայն թե դրսեցի չէր։

— Ի՞նչ է ձեր մականունը, հայր սուրբ,— հարցուցի օր մը իրեն։

— Մականուն չունիմ, բարեկամս,— պատասխանեց ինձ տրտմությամբ ժպտելով։

Հետաքրքրությունս ավելցավ.

— Աստվածդ սիրես շիտակը զրուցե,— կրկնեցի անոր,— ապահով եմ, որ պոլսեցի ես, կարելի է, որ ճանչվոր, թերևս ազգական ըլլանք։

Յուր մականունը հասկնալ ուզելով, վարդապետին կենաց պատմությունն էր զոր կհարցնեի անգիտությամբ. մտերմությունիս կատարյալ ու անկեղծ էր և չի զլացավ յուր հետաքրքրաշարժ անցյալը պատմել։

Մեր գրեթե բոլոր վարդապետներուն պես, Սերոբե վարդապետն ալ ուսուցչական ասպարեզի զրկանքներեն անցեր էր կրոնական կենաց մահացումներուն, մարդոց խոսքը տղոց քարոզեր էր, աստուծո խոսքը մարդոց քարոզելե առաջ։

Թեև ունևոր մարդու և ծանոթ ու անվանի ընտանյաց զավակ, բայց տղա հասակեն չքավորության մեջ մնացեր էր յուր հորը մահվամբ, որ բոլոր հարստությունն՝ առևտրական ընկեր եղող հորեղբոր կողմեն կողոպտված էր. յուր մոր, տկար ու հիվանդոտ կնոջ բերնեն լսած էր ազանխիղճ հափշտակության պատմությունն, երբ զատկի ու ծննդի առթիվ այս ազգականին երթալով ձեռք պագնելու ու թերևս փոքրիկ նվեր մը ստանալու համար՝ տուն կդառնար հորեղբոր ապարանքին ճոխության ու փարթամության վրա սքանչացած։

— Այդ բոլոր քեզ շլացնող հարստությունը քու հորդ էր, զավակս,— կ'ըսեր հեք կինը։

Մինչդեռ անդին հորեղբայրն յուր եղբորորդին տեսնելուն՝ աշխարհի մեջ միայն մուրացիկ ազգականներ ունենալու վրա կգանգատեր։

Ի՞նչպես դասախոս դարձեր էր, պարզապես դպրոցական շրջանն ավարտելուն լավագույն գործ մը չի գտնելեն և յուր այրի մոր ապրուստն հոգալու հարկեն ստիպյալ։ Ո՞չ ապաքեն օրապահիկ ճարելու անխուսափելի հարկն եղած է միշտ հայ ուսուցիչներ հասցնող վարժապետանոցը։

Երիտասարդն առանց հմուտ հայագետ մը լինելու, քաջ ծանոթ էր ազգային մատենագրության. զրկանքներով մեծցած ըլլալուն՝ գրական զբաղմանց մեջ սփոփանք մը գտնելու վարժված էր և դրական ուսմանց վրա ունեցած ծանոթություններն հին վարժապետաց հատուկ եղող նախապաշարումներեն զերծ կացուցեր էին զինքը։ Ինքն ալ հետզհետե կապվեր էր այս ակամա ընդունած ասպարեզին, դասախոսական կենաց բոլոր տաղտուկին և ժեր ազգին մեջ անբաժանելի դարձած բոլոր նվաստացուցիչ հանգամանացը տակ, դյուրավ նշմարեր էր այս պաշտոնին գերազանցապես վսեմ գաղափարը։

Դասասրահին մեջ, յուր համարձակ լեզուն, յուր ազատ գաղափարները լսողները՝ չի պիտի ճանչեային փողոցը հանդիպած աննշան երիտասարդին։ Բարձրագույն կարգի աշակերտաց համար, նա պարզ հայերենի դասատու մը չէր. գրագիտություն ու մատենագրություն դասախոսելով, ամեն դյուրություն ուներ յուր նյութեն խոտորելու և սրտերնին զգացմանց նոր բացվող յուր պատանի աշակերտաց քարոզելու հառաջադիմությունն ու ազգասիրություն, երկու ցնորքներ, երկու բևեռնե՛ր, որոնց շուրջը կդառնար միշտ յուր խանդավառ հոգին։

Երրորդ ցնորք մը, երրորդ բևեռ մը պիտի ըլլար Երվանդի սրտին (այս էր երիտասարդ դասախոսին անունը) աշակերտուհվո մը աղետալի սերը։

Տունը կ'երթար հայերենի դասեր տալու նմա, երբ դեռ 16 տարեկան աղջիկ մըն էր և օր մը միայն երեք տարին վերջը, օր մը միայն հանկարծ նշմարեր էր, թե որքա՜ն գեղանի էր յուր աշակերտուհին։

Հիմա որ տարիքն ու փորձառությունն ավելցած էր, կրնար ապահովությամբ ըսել, որ հրաշալի գեղեցկություն մը չուներ. բայց այն ատեն չքնաղ արարած մը թվեցավ յուր աչքին։

Մանկության տարիներեն սկսյալ տնական հոգերը մեկ կողմեն, դպրոցական աշխատությունները մյուսեն, ժամանակ չէին թողած սիրային կապակցություններու։ Իրենց անմարդի ու առանձին թաղին մեջ, ծեր ու թոռոմած կիներե ի զատ ուրիշ դեմք չէր տեսած, մինչդեռ յուր վեհերոտ բնությունը կ'արգիլեր իրեն, փողոցի մեջ գոնե երիտասարդ կնոջ մը դեմքը տեսնելու։

Ուրեմն ամեն գաղափարե զուրկ էր կանանց մասին, երբ առաջին անգամ աղջկան մը դասախոսելու կանչվեցավ։

Անթիվ բազմության մը ներկայության քննություն տալու պահուն ոչ այնչափ դողաց որչափ այս աղջկան առաջին հեղ դասի սկսելուն։ Դպրոցական շրջանե դուրս ոևէ հարաբերություն կամ ծանոթություն չունենալուն՝ կվախնար, որ ծաղրելի կամ անպատշաճ բան մը կ'ըներ։

Ուշիմ, ծույլ, շարամիտ ու բարեսիրտ աղջիկ մ'էր այս նոր աշակերտուհին, այնքան զվարճախոս, որքան ինք լուրջ, այնքան համարձակ, որչափ ինք վեհերոտ էր։

Պատանուհին, տարօրինակ հետաքրքրությամբ, մանրախույզ ու գաղտնի ակնարկով մը գլխեն մինչև ոտքը քններ էր զինքը. և կ'երևի թե բավական պակասություններ գտած էր վրան, ըստ որում քանիցս արհամարհոտ ձևով մը շրթունքը երերցուցեր էր, բայց քիչ-քիչ դասատուին վայրենի ձևերն անշուշտ զբոսալի թվեցան իրեն, և գոնե սկիզբները, կատակերգություն մե տեսնելու անհամբեր անձի մը պես կ'սպասեր անոր գալստյանը։

Այս տարօրինակ դիրքն ավելցուց դասատուին շփոթությունը, բայց տակավ առ տակավ ինքն ալ վարժվեցավ անոր և անհավատալի անտարբերությամբ մը սկսավ յուր դասերը։

Խելացի աղջիկ մ'էր Արուսյակ. մինչև այն ատեն, ուրիշներե առած շոր ու ցամաք քերականության դասերն անտանելի նեղություն ու ձանձրույթ միայն պատճառեր էին իրեն. երիտասարդին ընտրած եղանակը՝

նվազ ձանձրալի պարտ էր լինել, քանի որ ուսման սերն անոր ծուլության հաղթեց, և քիչ ատենվան մեջ ըրած զգալի հառաջադիմությունը նպաստավոր գաղափար մը տվավ դասատուին վրա։

Այսպիսով իրենց հարաբերությունները բարվոքեցան և հետզհետե կատարյալ բարեկամության մը ձևն առին, մինչդեռ յուր բնավորության ծանրությամբը վարժապետն արդեն ծնողաց վստահությունը կվայելեր։

Ընտանիքը մեկուսացյալ ապրողներեն չէր. իրենց տան մեջ գրեթե անպակաս էին երեկույթներն և ընդունելություններն, որոնց Երվանդ շատ անգամ հրավիրվելու պատիվը կ'ունենար, առանց օգուտ քաղելու այդ հրավերներեն։

Արդարև, ի՞նչ ընել պիտի երթար այդ ցուցամոլ ու նանրամիտ ընկերությանց մեջ՝ ուր փայլելու ամեն առավելութենե զուրկ էր և ծաղրելի դառնալու ամեն հատկություն ուներ։ Նախ և առաջ ուսուցիչ մը ըլլալը կբավեր բոլորովին ծառայական դիրք մը տալու իրեն, որ յուր արժանապատվությանը կդպչեր. նամանավանդ յուր ստացած դաստիարակությունն հիմնովին կտարբերեր այդ անձանց ապրելու ու մտածելու եղանակին։

Յուր փոքրիկ հմտությամբը՝ կարող էր անշուշտ ազգային կամ օտարազգի մատենագրության վրա ճառելու, դարուս իմաստասիրական շարժման վրա կարծիք մը հայտնելու, կամ տեղեկություն հաղորդելու նոր գյուտի մը վրայոք, բայց կատարելապես անկարող էր շնորհքով ու վայելուչ բարև մը տալու կամ ճաշակավոր մեծարանք մը ընելու տիկնոջ մը, եթե դիպվածը բերեր, որ կնոջ մը խոսք ուղղելու առիթն ունենար։

Հագուստի, կապուստի, զբոսանաց նոր միջոցներու, խաղի, պարի ու բամբասանքի կվերաբերեր հոն ընդհանուր խոսակցությունն, ուստի լիովին իրավունք ուներ հեռու մնալու այդ ընկերություններեն, որոնց ունայնությունն հանչափս ախորժելի էր յուր աշակերտուհվույն աչքին։

Անոր շուրջը ծառայող պատանիներ ու երիտասարդներ լեցուն էին հոն։ Այդ տղաքը կկազմեին այն թաղին ճաշակի ու վայելչության խրնդիրներու գերագույն ատյանը։

Մտքերնին պարապ, քսակնին հայրական առատաձեռնությամբ լեցուն, պաճուճանքի և նորաձևության սիրահար, բոլոր ունակություններին տիկնանց հաճելի լինելու հատկացուցած, ամենեն ավելի ծաղրելի ըլլալով հանդերձ՝ ամենեն շատ ուրիշի վրա խնդացող. նախամեծար համարելով գործածել ֆրանսերենն զոր չեն հասկնար, մայրենի լեզվեն զոր ուղիղ խոսելու կարող չեն, զմայլող Բաթթիի կամ Սառա Պեռնառի վրա, առանց գոնե ի փոխարեն գիտնո մը կամ իմաստասերի մը անուն

գիտնալու, իբրև փոքրիկ կապիկներ Եվրոպայի անառակ ու ազնվական երիտասարդաց. ի մի բան, անօգուտ էակներ իրենց ազգին ու համայն մարդկության համար։ Ահա այս կերպ էին իր աշակերտուհին շրջապատող երիտասարդաց խումբը։ Երվանդ, իր անաչառ ուղղամտությամբը, կզարմանար, թե ի՞նչպես կարելի էր ախորժիլ այս փճախոս անձերե։

— Չեք գիտեր, որքան կ'զբոսնում անոնց հետ,— կ'ըսեր Արուսյակ, երբ իր դասատուն անցողակի դիտողություն մ'ըներ այդ մասին։

Վասն զի փոքրիկ ակնարկութենե մը ավելին ընելու արտոնություն չուներ անշուշտ, քանի որ ամեն ինչ՝ հորը հաճությամբ, թերևս այդ խումբեն, որուն վրա խեղճ մարդը կ'սքանչանար, փեսա մը գտնելու փափագովն էր, որ տեղի կունենար։

Անցան երեք տարիներ, և Արուսյակ 19 տարու աղջիկ մ'եղավ, բարձրահասակ, կայտառ ու սիգաճեմ. յուր իմացական կարողությունն՝ եռանդուն երևակայությանը պես զարգացած էր. երիտասարդն անհուն գորով մը կտածեր անոր վրա, այն պարտիզպանին պես, որ յուր ձեռքը խնամած տունկին վրա հոգի կուտա. դասի օրերու կ'սպասեր անբացատրելի անհամբերությամբ և պարզ ու սովորական դասախոսություն մը չէր, զոր կտաներ իր աշակերտուհվույն. հմտալից ու հանհունս ախորժելի խոսակցություն մը, ուսկից դյուրավ կնշմարվեր յուր սրտազեղ խանդաղատանքը, խանդաղատանք՝ զոր յուր պարկեշտ պարզմտությամբն եղբայրական մտերմություն մը միայն կհամարեր, երեք տարիներու բարեկամությամբ հաստատված։

Եվ հիրավի բոլորովին մտերմացած էին ալ, Արուսյակ խիստ մեծ գաղափար ուներ յուր վարպետին արժանյացը վրա։

— Մաքուր ու առաքինի սիրտ և մեծ տաղանդ ունի,— կ'ըսեր միշտ ամենուն հանձնարարելով զանի։

Երբեմն անոր արդուզարդին դիտողություն կ'ըներ։

— Ուսյալ մարդիկ հագուստի կարևորություն չեն տար, բայց դուք ալ բոլորովին տերվիշ եք դարձեր,— կ'ըսեր անոր և հոգածու ու գգվալի շարժմամբ կուգար անոր փողկապը շտկելու կամ ֆեսը մաքրելու, որ սովորաբար յուր ձևը կորսնցուցած էր։

— Գիտե՞ք,— կըսեր օր մ'ալ,— շատ գեղեցիկ անձ եք, պարոն դասատու, հագուստնիդ փոխելու պայմանավ,— կ'ավելցներ խեղալով։

— Տղայական խոսքեր մի՛ ըներ, տեսնենք, այսօր քեզի հաճելի դաս մ'ունիմ, Ալիշանի մեկ ոտանավորը պիտի ուսումնասիրենք ի միասին,— կպատասխաներ դասատուն յուր լրջությունը պահելով։

Պիտի հավատացվի՞ եթե ըսենք, որ ամենաչնչին պատճառ մը այդ երջանիկ անդորրությունը վրդովեց— բարձի վրա թողված մետաքսյա սիրուն ու կապույտ ծնրակապ մը, հեշտաբույր այն բոլոր նյութերուն պես, որ Արուսյակի կվերաբերեին, բավ եղավ յուր ցնորքը փարատելու. կնոջ մարմնույն այնքան մոտեն դպչող այդ փոքրիկ զարդը հեշտավետ խոստումներ կկրեր յուր վրա, զոր երիտասարդն իզուր չի հասկընալ ջանաց և իզուր փորձեց յուր մոլորյալ մտածություններն ուղղել. անդիմադրելի զորություն մը կար այդ շողշողուն մետաքսին վրա։

Հանկարծ երևցավ անոր գեղանի տիրուհին. երբեք այնքան անդիմադրելի էակ մը չէր եղած նա, որքան այդ խռովյալ պահուն. աղջիկ մը, ո՜չ, հրապուրիչ կին մ'էր, աշխույժ ու սիրավառ, որ դեպի իրեն կհառաջանար։ Այն ատեն միայն յուր աչքը ճշմարտության բացվեցավ և ճանչցավ սարսափով, թե այն եղբայրական գորովը, ամեն օր տեսնելու անհամբերությունը, անոր մոտ անցուցած կարճատև ժամերուն երանությունը՝ ճշմարիտ ու խորունկ սեր մ'էր միայն։

Երկար պատմելու հարկ կա՞ դժբախտ սիրո մը բոլոր տառապանքը։

Դեմ առ դեմ նստիլ ժամերով առանձին ու խոսիլ պաշտեցյալ անձի մը հետ, սրտիդ խորը անհուն գորովն ի զատ բան մը չունենալ, և լեզվիդ ծայրը՝ այդ խոստովանութենեն ի զատ ամեն ինչ ունենալ. ի՞նչ կեղծիք։

Աղքատիկ վարժապետ մը ըլլալ ու փարթամ աշակերտուհվույն աչք վերցնել. ի՞նչ հանդգնություն։

Հիմար ու տենդահույզ երիտասարդ ըլլալ ու անզգա ծերունվո մը սառնությունը պատրել. ի՞նչ դժբախտություն։

Այն վայրկյանեն վերջը ի՞նչ կերպով կարող եղավ արդյոք յուր դասերը շարունակելու. հարկ է միայն ըսել, որ Արուսյակ ավելի գուշակեց, քան թե իմացավ անոր վիճակը, զգացման խնդիրներու մեջ ամեն աղջիկ ի բնե ավելի հմուտ է քան թե երիտասարդն. անկեղծ բարեկամությամբ կսիրեր յուր անփորձ ու պարկեշտ դասատուն. բայց հայր մ'ուներ, որուն հնազանդություն կպարտեր, և այնպիսի ընկերության մը մեջ կ'ապրեր, որուն պատշաճիցը համակերպիլ միշտ ախորժելի էր իրեն։

Ոչինչ ավելի երջանիկ պիտի ըներ զինքը քան թե յուր դասատուն, հանկարծ լավ դիրքի մը տեր դառնալով ամուսնության կոչեր զինքը, բայց աղքատ ու անոթի վարժապետի մը (որքան ալ տաղանդավոր լիներ այդ անձն) կինն լինել հավիտյան ծաղրելի գաղափար մը պիտի մնար իրեն համար։ Ուստի անուշադրի ձևերով և այն փափկությամբ, որ կանանց հատուկ է, յուր համակրությունը հայտնելով հանդերձ այդ

սիրո երազին իրականալի դառնալու պայմանը՝ ծածկեց, ապաքեն իրավունք ուներ այսպես վարվելու, գիտնալով յուր հորը բնավորությունը, որուն աչքին դրամե ի զատ ամեն առավելություն արժեք ու նշանակություն չուներ բնավ։

Այն ատեն Երվանդին համար ալ սկսան այն հազար ծրագիրները, խորհուրդներն ու մտածումներն, որք վեր բարձրանալու տենչեն վարակվող ամեն մարդ ուզե չուզե կ'ունենա։

Հարստանա՞լ և շուտով հարստանալ, ծաղրելի ու անխուսափելի առեղծված զոր իզուր փորձեց լուծել. լսել էր շատեր, որոնք մեյմիկ հանք գտնելով հարստացեր էին մեկեն, ուրիշներ, որոնց՝ արհեստական փոքրիկ գյուտ մը տված էր այնչափ ստացվածք և ուրիշներ, որոնք վիճակահանություններե շահեր էին մեծամեծ պարգևներ, ու յուր չնչին խնայողությունները հատկացան այս զանազան միջոցներեն մին ի կատար հանելու։

Պահ մը մեքենական փորձերու ետևե, պահ մը բախտատոմսերու հետամուտ, ստվեր մը հալածող հիմարի մը պես շրջեցավ այս անիրականալի խորհուրդներուն շուրջը, մինչդեռ հույսն ու հուսաբեկությունն իրարու կհաջորդեին միշտ յուր գաղտնի ու մթին որոճումներուն մեջ։

Ի՜նչ, այդ գյուտը ընողները՝ իրմե՞ ավելի խելացի էին միթե, այդ բախտի պարգևները շահողները՝ իրմե ավելի՞ անհրաժեշտ պետք մ'ունեին անոր. նախախնամությունը չի կա՞ր վերջապես աշխարհին վրա. պատրալից հարցումներ, որոնց բացասական պատասխանները շուշացավ ըմբռնելու։

Այն ատեն մութ հուսահատություն մը պատեց զինքն, ընկերային վիճակը՝ ուսկից ոչինչ ուներ սպասելու, խաբեբա դաշնակցություն մը երևցավ յուր աչքին և առաքինությունն ու արժանիքն՝ անողոք ու ծաղրածու հեգնություններ յուր թշվառ կացության դեմը։

Ու այս սև գաղափարներով պաշարված, օրն ի բուն կվազեր դպրոցե դպրոց, տունե տուն, խանի մը սենյակեն ուրիշ սենյակ մը, դաս մը ավելի տալու, մեճիտ մ'ավելի շահելու հույսով. ստակը՝ մինչև այն ատեն անշան մետաղ, հանկարծ մեծազոր ու ահարկու նշանակություն մը ստացավ յուր աչքին. մեկեն ի մեկ խնայող, կծծի ու ագահ դարձավ, ցորեկները չի ճաշեց այլևս, զգեստի ստակ չի տվավ ու յուր գունատ ու յուղոտ փալթոն ամիսներով չնորոգեց։

Բայց ասոնց և ոչ մին հաջողեցավ. թշվառը կմտածեր, որ վեց ամսվան մեջ, անտանելի նեղությամբ հավաքած դրամը երկու հազար ղրուշը չէր անցած տակավին, մինչդեռ աճապարանոք Ղալաթիայեն անցած ատեն, դասախոսության ժամ մը չի կորսնցնելու ջանքով, երկաթուղվո բախտատոմսեր վաճառող հրեան՝ կարծես իրեն համար կպոռար խոստմնալից ու ապահով ձայնիվ, որ յուր ծախած ոսկի տոմսին տերը՝ վեց հարյուր հազար ֆրանք ուներ հետևյալ օրն ստանալիք։

Վեց հարյուր հազար ֆրա՞նք, այս բախտի, այս երջանկության, այս կենաց կոչումը տարօրինակ համառությամբ մը, յուր բոլոր կամքին հակառակ, կհետևեր, կ'ընկերանար իրեն ամեն կողմ, իբրև խաբեբա ու պչրասեր անձնավորություն մը, ուսկից իզուր կճգներ բաժնվիլ և հրեա պոռացողին ձայնն՝ անլուր արձագանքով մը կթնդար դեռ յուր սրտին խորն, երբ շատոնց արդեն հեռացեր էր անկե։

Երվանդի աշակերտուհին, սիրուն, ուսյալ, հարմար տարիքի ու լավ օժիտի տեր, կ'սկսվեր ամեն կողմե փնտրվիլ, և զարմանք, որ ունևորներն ավելի հետամուտ գտնվեցան անոր մոտ, քան թե այդ օժիտին իրոք կարոտ եղողներն։

Հարուստն՝ աղքատեն ավելի դրամը կսիրե, ուր որ ըլլա, ինչ ձևի մեջ ալ որ ներկայանա, զարմանալի ձգողության օրենք, որու հիմը կկազմե մարդկային անհագությունն։

Երվանդի հորեղբայրը՝ ծակաչք, լավ դիրքի, թեև անշահ զավկի տեր, շատոնց յուր որդվույն հարմար դատեր էր այս միությունն՝ որու առավելություններն ակներև էին։ Երվանդի բերնեն գովեստներ միայն լսած էր անոր մասին և աղջկան օժիտը երկու հազար ոսկիեն վար չէր։

Այս ամուսնության խոսքերուն հաստատություն գտնելուն հետ, տան դուռը փակվեցավ երիտասարդ դասատուին դեմ, քանի որ անպատշաճ էր, որ նշանվելու վրա եղող աղջիկ մը դեռ դաս առնելով զբաղվեր, նամանավանդ երբոր ապագա հարսին աներհայրն էր, որ դասատուն ճամփելու պետքը զգացուցեր էր։

Իրավ է, որ ամեն ոք պահ մը զարմացեր էր այս առաջարկության վրա, անոնց միջի ազգականության կապը հիշելով, և կերպ-կերպ ենթադրություններ ըրեր էին ամենքը։

Շաբաթ օր մ'էր երբոր աղջկան հայրը ամսականներու հաշիվը կարգադրելով՝

— Եկու նորեն մեզ երբեմն տեսնելու,— ըսավ անոր։

Երվանդ ճամփու դրված էր։

Երիտասարդը՝ ապշած ու շվարած տուն դարձավ. յուր հուսահատության սաստկագույն վայրկյանին այս մոտալուտ օրը չէր գուշակած. այսքա՜ն շուտո՞վ... և ոչ իսկ ժամանակ տվին իրեն, որ վերջին

ճիգ մը, գերագույն փորձ մը ըներ յուր սիրուհվույն արժանանալու համար, ամեն ինչ լմնցած էր այլևս։

Խեղճին մայրը՝ սարսափեցավ անոր այլայլած երեսը տեսնելով և հուսալով յուր որդվույն վրդովումը մոռցնել, որուն պատճառը չէր գիտեր։

— Գիտե՞ս, տղա՛ս,— ըսավ անոր,— հոբելբորորդիիդ հետ նշանվեր է։

— Այսօր իմացա ու զիս ալ ճամփեցին, ա՛լ դասի պետք չունին եղեր։

Թոթովեց քան թե պատասխանեց այս բառերը։

Ուրեմն բավ չէր, որ հորեղբայրն՝ հայրենական ժառանգությունը հափշտակելով զինքն ու յուր մայրը չքավորության դատապարտեր և հիմա ճիշտ այդ կողոպտած հարստությանը շնորհիվ յուր մեկ հատիկ սիրեցյալն ալ կհափշտակեր և իր որդվույն կուտար։ Ապաքեն այս մարդը՝ ոխերիմ հակառակորդի մը պես, յուր դեմը ելած էր մանկութենեն մինչև երիտասարդությունն ու մի առ մի փճացուցած յուր ամենեն նվիրական հույսերն ու իրավունքներն։

Սպառնալից խորհուրդներ անցան մտքեն այս անխիղճ մարդուն դեմ, որ հասարակության մեջ, ուղիղ, պարկեշտ, եկեղեցասեր մարդու համբավ կվայելեր. ու ազգին խորհուրդներուն, ժողովներուն մեջ՝ պատվավորագույն պաշտոնը միշտ անոր պահված էր իբրև առատաձեռն բարերարի մը։ Ապուշ ու անմիտ ազգ, որուն բարերարից դասը մտնելու համար դրամն եղած է միշտ ապահով անցագիր։

Վայրկյան մ'իսկ մտքեն չանցուց յուր սերը պատմելու և գերագույն շնորհ մը խնդրելու այդ անսիրտ մարդեն, որո գթությունը՝ ողորմածությունը ամենուն բերանն էր։

Անոր ծաղրող ու լկտի դեմքը կբավեր ամեն աղերս կասեցնելու յուր շրթանց վրա։

Հայնժամ ակնարկը սևեռեցավ յուր սիրեցելույն կորուստովը՝ անպատակ դարձող կենացը վրա։

Դասախոսական ասպարեզը երևցավ հանկարծ յուր բոլոր անօգուտ, ապերախտ ու ծաղրելի գույներովը. այն ժամուն միայն հասկցավ, թեև շատ ուշ, որ տղոց լեզուն խոսած պահուն մոռցած էր մարդոց լեզուն հասկնալ, աշխարհիս մեջ դարձյալ իրավունքը ու հաջողությունը կմնար զորավորագունին, ոչ մեկ օրենք կպաշտպաներ զինքը՝ իր կրած զրկանաց և մատնված հավիտենական դժբախտության փոխարեն։ Ընկերական անիվը կդառնար անողոք ճշտությամբ և ինքն էր, որ տակը կճզմըվեր, անոր ատամներուն մեջ թողլով յուր բովանդակ հույսն ու երջանկությունը։

Ո՞րքան տնեց յուր այս անտանելի վիճակը, ստույգը չպիտի կըրնար ըսել, միայն թե մեծագույն աղետ մը, յուր մորը հիվանդությունը ու մոտավոր մահվանը նախագուշակ նշանները մոռցնել տվին յուր անձը և յուր ցավերը. հաջողության պես՝ դժբախտությունն ալ մեկ կողմե միայն չէր գար իրեն, և Երվանդ անդուլ ու անօգնական ջանքերե վերջը քիչ օրվան մեջ յուր մայրը կորսնցուց։

Արցունքներ եկան վարդապետին աչքը յուր մայրը հիշած ատեն։

— Մինակ ու չոր գլուխ մնացած, հուսաբեկ ու կյանքե դառնացած, ինչո՞ւ չի թողուցի արդյոք այս կյանքը ես ալ,— շարունակեց նա հառաչելով.— մորս գերեզմանին քով, երբ որ ցանցառ հուղարկավորները հեռացան, աղոթած ու արտասված ատենս միայն գերագույն սփոփանքի մը ձայնը հնչեց սրտիս մեջ. աստծո ձայնն էր, զոր ճանչցա և որուն հնազանդեցա. հայրենիք մ'ունեի ինձմե ավելի թշվառ, ազգ մ'ունեի ինձմե ավելի ողորմելի, անոնց որոշեցի հատկացնել կենացս մնացորդը. մինչև ցայն վայր կրոնքի մասին թերահավատ, աշխարհիս ունայնությունները տեսած ու ամեն հենակետի՝ ձեռքիս տակ փշրվիլը զգացած ատենս, երկնային ապավենի մը անհրաժեշտ հարկը ճանչցա։

Վարդապետ ձեռնադրվեցա, հավիտյան մոռնալու պայմանավ թողլով իմ անունս և այն ատելի մականունը, զոր հորեղբայրս կգործածեր և որ կենացս աղետները կհիշեցներ միայն ինծի. ահա թե ինչու համար ըսի որ ընտանեկան մականուն չունեի. չի կեցա ալ ի Պոլիս և Հայաստանի մեջ ճամփորդությունս երկարեցավ ութ տարվո չափ և ուսկից հազիվ տարի մ'է, որ վերադարձա, չի հարցուցի զանոնք, որք իմ դժբախտությանս պատճառ եղած էին։ Աստուծո մխիթարությունը զոր կվայելեմ այդ մարդկային տկարությենեն արգիլեց զիս։

<1887>

ԿԱՆԱՆՑ ԲԺԻՇԿԸ

Ա.

Փարիզեն նոր դարձած էր բժշկության վկայագիրն ի ծոցին, տասնհնգոտ տարի շրջելե ետք անոր աղմկալից փողոցներուն մեջ։ Իրմե վերջ գնացողներն իրմե առաջ ավարտած ու Պոլիս դարձած էին. ի՛նք միայն աճապարելու պետք չէր տեսած։ Կրցածին չափ շատ զբոսնուլ՝ այս եղած էր յուր նշանաբանը, ցորչափ հայրենի քսակն՝ իր ուսմանց ծախքը

վճարելու վստահությամբ, իր անառակությանց ծախքը միայն կհոգար խղճամիտ ճշտությամբ։

Ի՞նչ բանի կծառայեր դրամն իր ապուշ ու անմիտ հորը, որ մեկ դրուշը մյուսին վրա դնելով, կծծի ու ագահ համառությամբ դիզեր էր այդ հարստությունն զոր ինք Փարիզի ծոփուհյաց մոտ այնքան քաջ գիտեր վայելել։ Ֆաքյուլթեին հոգնեցուցիչ դասախոսությունները, վիրաբուժական ահարկու գործողություններն, անդամազննական գարշահոտ փորձերն իրեն համար չէին։ Ինք ուսանողաց արվարձանին խոսվահույզ ու խառնագնաց կյանքը միայն կ'ուսումնասիրեր իր անձին վրա, իր մարմնույն մեջ ներմուծելով Քառթիե Լաթենի ապականյալ երիտասարդության ժահրը։ Այս էր ահա իր բժշկական բոլոր պարապումն, ու տարիներ կհաջորդեին իրարու արագասահ, անընդհատ հաճույքներով ու վայելքներով։

Իր ընտանյաց ուղղած նամակները ստահոդ խոստումներու երկար շարք մ'էր միայն. իր խուրին նայելով, շատոնց անցուցեր էր տոքթորության քննություններն և լեկ գործնական բժշկությունը սորվելու համար կկենար ի Փարիզ. այսինչ վիրաբուժական գործողության ներկա գտնված էր, այնինչ հիվանդանոցին մեջ պաշտոն ստացեր էր, ու ընտանյաց պատրանքը կշարունակվեր այս պանծալի պատմություններեն շլացած։

Հայրը, պարզամիտ մարդ, մտքովը կծիծաղեր այն նորեկ բժիշկներուն վրա որք 7—8 տարվան մեջ ուսումնին կ'ավարտեն ու Պոլիս կդառնան։ Ի՞նչպես տգետ ժողովուրդն ինքզինքը կհանձներ այս համբակներուն խնամոցը։ Իր կարծյոք, մինչև յուր որդվույն վերադարձը պետք էր սպասել հիվանդ ըլլալու համար։ Այս հավատքով կշարունակեր կանոնավորությամբ ուղարկել անոր տարեկան թոշակը։ Հիմակ այդ թոշակը թերևս անբավական էր, քանի որ տոքթոր եղած էր զավակն ու այդ տիտղոսին համեմատ դիրք մ'ունենալ կպարտեր. և իր բոլոր ագահության հակառակ հավելում մ'ըրած էր անոր հատկացված տարեկան գումարին վրա։

Բայց ստակին ու որդվույն սերն ամեն անգամ կմաքառեին յուր սրտին մեջ երբ վճարմանց ժամանակը գար. երբեմն կմտածեր թե յուր որդին ալ շա՜տ կ'ուշացներ վերադարձն և թե անխելքություն էր հետաձգել Պոլսո մեջ իրեն սպասող հիվանդաց այցեգիները։

Տիլպերյան Սողոմոն աղան տարիքն առնելով հաշվո մարդ ըլլալե դադրած չէր։ Իր որդվույն մեկնելեն 10 տարի վերջը, իր տոմարներեն կգտներ թե, բաղադրյալ տոկոսը վրան ավելցնելով, զավկին կրթությանը հատկացուցած ստակը չորս հազար յոթն հարյուր ոսկվո պատկառելի գումարին կհասներ. հառաչանք մը, ակամա հառաչանք մը, ծերունի վաշխառուին բերնեն կ'ընկերանար այս թվանշանին արտասանությանը։ Բայց բանը գիտցող մարդ էր միշտ. կխորհեր թե յուր որդին՝ արվեստին մեջ աննման՝ Պոլիս գալուն պես բժշկական դասուն մեջ առաջնակարգ դիրք մը պիտի գրավեր, ինքն իրեն կհաշվեր թե օրական առնվազն 6 ոսկի շահելով երկու տարվան մեջ իր ծախսած բոլոր գումարը «էվել էվելոք» պիտի ձեռք բերվեր. ու այս խոլական հաշիվը կդարմաներ կմեղմեր իր կորուսյալ ոսկիներուն ցավն ու կգգվեր իր շահամոլ մարդու անձնասիրությունը։ Զավակը բժիշկ ընելու գաղափարը, սարաֆության միջոցին կատարած առևտրոց ամենեն շահավորը լինել կխոստանար։

Անդին երիտասարդը կ'զբոսնուր իր մարմնույն ու հայրենի քսակին բոլոր տոկունությամբը, իր զգայարանաց բոլոր ապականությամբը։ Ո՞վ պիտի ճանչնար Սողոմոն աղային տղան այդ փարիզցի անառակի հագուստներուն ու ձևերուն տակ։

Գունագեղ, բարեկազմ և առույգ պատանի մ'էր երբոր ոտք կոխեց առաջին անգամ Փարիզի կիզիչ քարահատակին վրա. հիմա նիհար ու բարակ մարդ մ'էր, որուն դժգույն ու դալուկ դեմքը սրածայր մորուքով մը կ'ամփոփվեր, վերջին նրբաձևության համեմատ։ Աչքին կոպերը կտրած քնատուքենե, նայվածքը տարտամ ու անտարբեր, հեգնող բայց ողորմելի պատկեր մը, այս մնացած էր ահա առջի զվարթ պատանիեն։ Այն առաջի օրեն ի վեր հորում հաջողած էր քննություն մը, միակ քննություն մը անցունել Բժշկական Համալսարանին մեջ, մի՛տքն ինկած ատեն կամ լավագույն զբոսանք մը չի գտած ժամանակ միայն կ'երթար երբեմն ունկնդրել դասախոսությանց։ Քանիցս քննություններե մերժվելե հետո ա՛լ քննության մտնելե ալ ետ կեցեր էր. կխորհեր, որ ատեն շատ ուներ իր առջևը, երիտասարդ բժիշկները վստահության արժանի չէին, տարիքին առածները միայն հաջողության կոչված են, և այս խարխուլ փաստն իր ծույլ ու մեղկ ընթացքն իբրև թե կ'արդարացներ։

Այսպիսով, Փարիզ եկող հայ ուսանողներուն երեցն ու մեկ քանիներուն առաջնորդը դարձեր էր։

Ամենքը կճանչեին զինքը. կերուխումի լավագույն ընկերն էր. նորեկներն անոր հանձնարարությամբ կվարձեին իրենց սենյակը կամ ճաշարանը կ'որոշեին։ Ինքը փարիզցի դարձած՝ կծիծաղեր այս անփորձ պարոններուն վրա։ Իր բոլոր ջանքը ցոփակյաց ու շվայտ ուսանողաց ձևերը ձեռք բերելու հատկացած էր։ Այդ մեծ Բաբելոնին մեջ, ուր կորուսյալ աղջկունք կվխտան, զատեր էր իրեն ընկերուհի մը ինչպես պարտ

է ընել ամեն ուսանող և զոր ծիծաղելի հոխորտանոք կներկայացներ իր հայ բարեկամներուն, ըսելով ֆրանսերեն լեզվով.

— Պարոններ, իմ կինս է։

Անառակ մը չէր սակայն բառին նշանակությամբը, այլ անառակներուն վրա զմայլող մը։ Իր տափակցած ուղեղին համար պարծենալու մեծագույն նյութն, իր միակ տենչն՝ անոնց վարքը, բարքը, սովորություններն ունենալու մեջ էր։ Մարդս միշտ պիտի ապացուցանե թե կապիկն սերած է։

Այսպես մինչդեռ ուրիշներ Փարիզ կուգային, կ'ուսանեին և կմեկնեին, ինք գամված մնացեր էր հոն իբրև թե տիղմի մեջ թաթխված ըլլար և ամեն վայրկյան խոր ևս մղվեր անոր մեջ. ընտանյաց, ծանոթ դեմքերու տեսության, ծննդյան վայրերու կարոտը մտքեն անգամ չէր անցուներ. Փարիզի ցեխին մեջ ծնած ճճի մը ոչ այնքան իրեն հարմար մթնոլորտ պիտի գտներ քան թե այս հայու տղան այդ քաղաքին մեջ։

Հանկարծ հորը մահվան լուրն ստացավ իր տարեկան թոշակին վերջանալուն գույժին հետ։ Սողոմոն աղան հարուստ ճանչցված էր ամենեն։ Իր ծանոթ ագահության համար միայն վարկի ու վստահության տիրացեր էր։ Իբր ապահով և պարկեշտ մարդ մը, շատեր ստակ տված էին նմա պահելու ի փոխարեն մեկ-մեկ պարտամուրհակի։ Ստույգն այն էր, որ Սողոմոն աղան իր որդվույն պատճառած ծախքերեն ու մեկ քանի առևտրական ձախորդ գործողություններե փճացած, ավանդ տրված ստակներն անգամ սպառեր և ճիշտ ժամանակին մեռեր էր, առանց սակայն զավկին օրական վեց ոսկի շահիլը տեսնելու։

Չքավորության կյանքն սկսավ երիտասարդին համար այնքան ավելի դժնդակ որքան շռայլ ապրուստի մը կհաջորդեր։

Իր զբոսանաց ընկերներուն ոչ մեկուն կրնար խոստովանիլ այս հանկարծական աղքատությունն, ուսկից մեծագույն հանցանք գործած ըլլալե ավելի կ'ամչնար։

Իր զայրույթն օրապահիկ հացի կարոտ մնալեն ավելի իր հաճույալից կյանքեն բաժնվելուն համար եղավ. ամսո մը չափ քովի ստակովը դեռ քշքշվեցավ, վարանյալ, առանց որոշում մը տալու, կարգադրություն մը ընելու, չի կրնալով դեռ յուր չքավորության համոզվիլ. բայց նեղությունն երկաթե շղթայի մը պես զինքը չորս կողմեն կաշկանդեց. ամենուն պարտք ըրավ գիտնալով հանդերձ որ անկարող էր իր պարտքերն հատուցանելու. պարտապահանջները շատցան, ձայներնին բարձրացուցին. մեջերնուն խստասիրտ մը մինչև զինքը բռնտ դնելու չափ սպառնացավ։

Վատասիրտ անձ էր, իր գլխուն ճարը մտածելու, գտնելու անկարող։

Բնակած տանը մոտ հայ ուսանողներ կային որոց ո՛չ քովը գացած էր և ոչ երբեք մտերմություն հաստատած անոնց հետ։ Այս հուսահատական վիճակին մեջ անոնց ապավինեցավ։ Անոնցմե մին մանավանդ իրեն գթաց և օգնեց. անոր խորհրդովը քաջալերված թողուց իր բնակարանն ու կարասիներն. իր ընկերուհին թողլու պետք չի մնաց, վասն զի արդեն մեկնած էր դրամական շփոթությանց լուրն առնելուն պես։

Աժան սենյակ հինգերորդ դստիկոններու մեջ միայն կար, ու ճարահատ՝ տանյաց վրա թառող թռչուններու պես մթին ու խոնավ փողոցի մը մեջ, քայքայուն տան մը բարձրագույն հարկը անկյուն մը գնաց մտավ։

Հոն վերստին սկսավ շարունակել իր ուսումը. բայց ապրելու դժվարությունն առաջին ու գլխավոր զբաղումն եղավ իրեն։ Շատ գիշեր լույս չունեցավ սենեկին մեջ, շատ անգամ ողորմություն բաշխող պանդոկներուն դրան առջև սլքտաց առանց համարձակելու ողորմություն խնդրելու, անոթի էր անշուշտ. այդ միջոցին ճանչցավ ստակին կարևորությունը. հետին խնայողության դատապարտված, ամեն գնած նյութերը միշտ անհավատալի կերպով սուղ թվեցան իր պարապ քսակին. հիրավի, այս մայրաքաղաքն աղքատաց բնակելու տեղը չէր։

Պոլիս դառնալ, այս եղավ այնուհետև իր միակ հույսն ու մտածումը։

Հայ ուսանողաց բարեսրտության ապաստանած՝ կրցավ ավարտել վերջապես իր բժշկական ուսումը չորս երկար տարիներե վերջը, վասն զի թշվառության տարիներու պես ոչինչ կա երկար տևող աշխարհիս վրա։

Առջի սրամտությունն ու հիշողությունը չուներ, բայց քննիչները ներողամիտ էին ու բախտն հաջող. պատահեցավ որ իր բացառապես գիտցած նյութերուն վերաբերին հարցումներն, և ահա այս ձևով մի՛ջակ վկայականի մը արժանացած Պոլիս վերադարձավ տոքթոր Տիլպերյան։

Բ

Լրագիրները՝ արդանդի և ջղային հիվանդությանց մասնագետ տոքթոր Տիլպերյանի անվերջանալի ազդարարություններով լեցուն են։

Մասիսի մեջ, փոխաբերությանց սիրահար խմբագիր մը՝ հայոց գիտական հորիզոնին վրա նոր աստղ ծագած լինելը կ'ավետե, ու կթախանձե մեծանուն բժիշկն, որ զիջանի Պոլսո հիվանդներն ալ դարմանելու։

Մեծ բոմբյունով գործի կ'սկսեր այս բժիշկը. Պոլիս վերադարձին հնաձևոր ազգականի մը մահվամբ չորս հարյուր ոսկվո գումար մը

պատեհ ժամանակին ձեռքը կուգար՝ Փերայի մեջ տուն, կահ կարասիք, սպասավոր, գրքատուն, բժշկական գործիք, ամեն ինչ ունենալու համար։

Իր ընտանիքը՝ Պոլսո մեջ ծանոթ ընտանիքներե մին՝ տոքթորին անմման ճարտարութենեն ի զատ ուրիշ խոսք չունի բերանը։

Տաճիկ առած մը կ'ըսե որ ժամանակը անպիտաններուն է։ Տոքթոր Տիլպերյան այս առածին կենդանի օրինակն եղավ. քիչ ատենվան մեջ իր համբավը՝ շատ ավելի հին, շատ ավելի ճարտար բժիշկներունը գերազանցեց։

Ինքզինքն արգանդի ու ջղային հիվանդությանց մասնագետ հռչակելով անօգուտ ու ծաղրելի սնապարծություն մը ցույց տալ չէր իր նպատակն, այլ ստույգ ու շահավետ հաշիվ մը՝ որ «մեկ մեկ ալ երկուք կ'ընե»ի պես պարզ ու բացահայտ էր. կանանց հատուկ եղող այս հիվանդությանց մասնավորապես աշխատած ըլլալն հայտարարելով, իր հաճախորդաց մեծագույն մասն իգական սեռեն պիտի ըլլար, որոց մոտ բժշկական հմտութենեն ավելի իր փարիզյան ձևերն ու գեղանձն երիտասարդի անդիմադրելի ազդեցությունը՝ բարերար և առողջարար ներգործություն մը պիտի ունենային։

Տոքթոր Տիլպերյան սխալած չէր իր հույսերուն մեջ, իգական սեռի տկարության ճանաչողությանը մեջ, քանի որ քիչ ատենվան մեջ Փերայի ամենեն շատ փնտրվող բժիշկներեն մեկն էր հիմա։

Իր արհեստակիցներն ի զուր անոր հաջողության գաղտնիքը կ'որոնեին, ի զուր անոր դարմանելու հոռի ու սխալ եղանակները կքննադատեին. այս բժիշկը գեղեցիկ սեռին հաճելին, վստահելին կմնար միշտ. կանայք կպաշտպանեին զինքն ու այսպես հոլանի պարանոցներու և հեշտավետ կուրծքերու կոնակը պատսպարված կդիմադրեր ամեն հարձակումներու. ի՞նչ կհասկնային այդ բժիշկները ջղային և արգանդի հիվանդություններե, միթե իրեն պես մասնագե՞տ էին անոնք ալ. ո՛չ, ո՛չ, անոնց պատասխանելու չէր զիջաներ բնավ. ինքը շատերու պես չորս տարիեն բժիշկ դարձած չէր. այլ տասնչորս տարի գործնականապես աշխատեր էր մեծ վարպետներու քով, որոնք իր տաղանդին վրա հիացած Ֆրանսայի մեջ կեցնել ուզեր էին զինքը. Շառքոյի առաջին աշակերտն էր ինք և զինքը լսելու համար ժողովված տիկնաց և օրիորդաց կբացատրեր Շառքոյի ո՛վ ըլլալը։

Իգական սեռն իր կողմն էր. բոլորն ալ անոր օգուտները կտեսնեին ու անով միայն առողջանալու կարելիության կհավատային։

Այրերն այս կույր հավատին դեմ մաքառելու անկարող էին. տոքթոր Տիլպերյանի գործած հրաշքնե՛րուն թվումը՝ ամեն պայքար անօգուտ կդարձներ. միթե տոքթոր Տիլպերյան չէ՞ր որ օրիորդ Շամլյանի

գլխուն ցավը աղեկցուցեր էր, միթե տոքթորը չէ՞ր որ տիկին Քարտաշյանի անհանգստությունը դարմաներ էր և ասոնց պես անթիվ պատմություններ, որոնց ներքև, ջրհեղեղի մը տակ մնալու պես, էրիկ մարդոց տկար դիտողությունները կ'անհետանային։

Հետևաբար տոքթոր Տիլպերյան իր ճամփան գտեր էր. ո՛ւր որ հրավիրվեր, թե՛ փորի ցավ ըլլար, թե՛ գլխու ցավ, վարժվեր էր ջղային կամ արգանդի վերաբերյալ նկատելու հիվանդությունը։ Պատահեցավ, որ հայտնի թոքախտավոր աղջկան մը քով տանին զինքն, և տոքթորը չի վարանեցավ հայտնելու, թե ջղային թոքախտե մը կտառապեր հիվանդը։

Թե որ իր դարմանումն արհեստական և գիտական տեսակետով շատ անգամ անհարմար ու երբեմն վտանգավոր իսկ լիներ, տոքթորն այդ փոքրիկ թերությունը՝ խոսվածքին քաղցրությամբն ու վարմունքին վայելչությամբն անշուշտ կլեցներ. կատարյալ սալոնի մարդ էր եթե ոչ Ակադեմիայի, բժշկական խոժոռություն չիկար իր դեմքին վրա, ու երբեմն առժամանակյա ու անհրաժեշտ ծանրությամբ մը հանդերձ, Փարիզի պուլվառներուն վրա ճեմողի մը հովեր կային վրան որ կիները կհափշտակեր։

Նամանավանդ կանանց ամենեն վատթար սովորության անվնասության, թերևս օգտակարության կողմնակից բժիշկ մ'էր. դեմքի վրա մազի վրա քսվելիք ներկերու կամ fnnսնի կուսակից բժիշկներն հազվագյուտ են և տոքթ. Տիլպերյան ալ ավելի կսիրվեր այս ներողամիտ սկզբանց համար։

— «Սիրուն մարդ է» կ'ըսեին կանայք անոր վրա խոսած ատենին և իր այցելությանը կ'սպասեին ավելի՛ ախորժելի խոսակից մը տեսնելու անհամբերությամբ քան թե բժիշկ մը։

Իր տեսակ տեսակ արկածներով բեղմնավոր անցյալեն, 14 տարի վարած փարիզյան կյանքեն, փոքրիկ հատված մ'ուներ միշտ ընծայելու իր հիվանդին. նամանավանդ հաճելի և ճաշակավոր մեծարանքներով կհամեմեր իր բժշկական քննությունը։

— Ի՞նչ քնքույշ թև մ'ունիք, տիկին,— կ'ըսեր միույն բազկերակը բռնելով։

Երկրորդի մը՝

— Ձեր մարմինը գիտական տեսակետով ամենեն բարեձևն է,— կ'ըսեր այնպիսի ժպիտով մը, որ հիվանդին սրտին մինչև խորը կթափանցեր։

Եվ այսպես կվաճառեր իր գեղեցիկ երիտասարդի և բժշկի արվեստը։ Իր մտած ելած տուներուն մեջ ամեն գաղտնյաց և ամեն գայթա-

կղելի դիպվածոց տեղյակ՝ գաղտնապահ ու անհրաժեշտ մարդ մը համարված էր։

Բայց այցեգինի վրա կատակ չէր ախորժեր. իր կարծյոք ամեն հիվանդ մեկ-մեկ դրամի հանք էր զոր շահագործելու գաղափարն ուներ միայն։ Հիվանդներ ուներ որոց վրա ավելի կվստահեր, քան թե կալվածատեր մը իր եկամուտին վրա։

Օր մը Օրթագյուղ ոսկերչի մը տունն հրավիրվեցավ, անոր հիվանդ կինը դարմանելու համար։

Քառասունը հազիվ անցուկ, գիրուկ, ուժեղ, էրկնեն դժգոհ, գեղանի խարտիշուհի մ'էր. բոլոր բժիշկները սրտի հիվանդություն մը գտած էին անոր վրա. տոքթոր Տիլպեր արգանդի տկարություն մը տեսավ երկար դարմաններու կարոտ։

Առանց հարուստ ըլլալու, ազնվական ընտանյաց զավակ էր ամուսինն և պատրաստ իր ունեցածը ծախսելու՝ կնոջը խանգարյալ առողջությունը վերադարձնելու ու անոր հավիտենական գանգատներեն ազատելու համար։

Սոֆիկ հանըմ, իր տարիքին հակառակ, հեշտության ու սիրո անսպառ գանձեր կպահեր իր սրտին մեջ թաղված. իր անզգա ու տգեղ ամուսինը՝ որո հարուստ ամիրայի զավակ ըլլալեն հրապուրվեր էր, հազիվ երկու երեք տարի արժանացեր էր իր գորովանաց։

Եվ սակայն Հակոբիկ աղան այս կնոջ հետ ամուսնանալուն համար միայն հարկադրվեր էր թողուլ իր ընտանիքն և զրկվիլ հայրենի ժառանգութենեն. ու ընտանյացը ծոցեն վտարված՝ անձնական աշխատությամբը ու սորված արհեստին շնորհիվ կհոգար իր ապրուստի համեստ միջոցները, մինչ անդին յուր եղբարքը կտիրանային հորը թողած բոլոր հարստությանը։

Բարեմիտ, ուղղամիտ և հաստատամիտ մարդ էր այն վայրկյանեն հ'որում յուր հայրը՝ Զարֆճյան Պողոս ամիրան՝ ամեն ճշմարիտ ամիրայի պես անողոք ու բռնավոր, իր բացարձակ արգելքին հակառակ որդվույն ամուսնությունը լսելով զայրացեր ու ապտակ մը զարնելով տունեն դուրս վռնտեր էր զինքը, նույն վայրկյանեն իր հորը, իր ընտանյաց անունը բերանը չէր առած անգամ մ'ալ ու տարիներն անցեր էին. հայրն իր հայրական ու ամիրայական իշխանության դեմ գործված անարգանքը, որդին իր կերած ապտակը ու տեսած նախատինքը չէին մոռցած, և միևնույն արյուն կրող այս երկու մարդիկն օտարական ու հակառակորդ մնացեր էին իրարու։ Մյուս եղբարքն որոց այս գժտությունը հայրենի ժառանգության ամբողջությունը կ'ապահովեր, ջանք խնայած չէին անդարձ ու վերջնական ընելու այս հեռավորությունը։

Պողոս ամիրան՝ խստակրոն մարդ, որ հավատքի ու կրոնական պարտավորությանց մեջ փախուստի ճամփա գտնել չէր գիտեր, այս քենը սրտին մեջ այլևս հաղորդություն չէր կրցած առնուլ. ինքն որ ամիս մը առանց խոստովանության ու հաղորդության անցուցած չէր և իր բարեպաշտ սովորության համեմատ ամեն կյուրակե առավոտ կ'երթար եկեղեցին պատարագ տեսնելու, այդ սուրբ խորհուրդեն զինքն ի բաց վանող արգելքն հիշելով ամեն անգամ ավելի զայրացած կդառնար տուն։ Ա՜հ, թե որ մեկը միջնորդեր այդ ըմբոստ որդվույն համար, զոր մյուսներեն ավելի սիրած էր միշտ, եթե նույն ինքն Հակոբիկն իր ոտքով գար հայրական աջն համբուրելու զատկի առտու մը, Պողոս ամիրան մարդոց երջանկագույնը պիտի ըլլար։

Զատիկն ու ծնունդը կհաջորդեին ու ոչ ոք կ'երևար, ու ոչ ոք կբարեխոսեր այս կորուսյալ որդվույն նկատմամբ, որ իր հայրական ու քրիստոնյա սրտին համար մշտատև ու անդարմանելի վիշտ մը կմնար։

Այս խորին ցավն իր կյանքը դառնացուց. օր մը հանկարծ Հակոբիկին աղջիկ զավակը տեսնել ուզեց. հրաման ըրավ որ երթան անմիջապես իրեն բերեն զայն. զինքը շրջապատող որդիքն ապշեցան ու վախցան. տունեն բաժնված օրեն զայրացյալ հորերնուն հարգանք մը ցույց տալու պատրվակով Հակոբիկին խոսքն արգիլված էր տանը մեջ։ Անոր զավակ մ'ունենալն առավելագույն իրավամբ գաղտնի, բոլորովին գաղտնի պահված էր. և ահա ամիրան անունն անգամ սորվեր էր և տեսնել կփափագեր մանկուհին։

— Թող Օրթագյուղ երթան ու Երանիկը ինծի բերեն,— ըսեր էր։

Օրթագյուղ ըսած էր՝ Հակոբիկին անունը չի տալու համար։

Մանկուհին բերին ու Պողոս ամիրան սիրեց, պագավ, ու գիրկն առնելով իր ընդարձակ ապարանքին բոլոր սենյակները ցուցուց. պարտեզ տարավ ու ջերմոցին էն հազվագյուտ ծաղիկներն ու պտուղները փրցուց անոր տալու համար, թեև շարունակ իր քով գտնվող մյուս թոռանը երեսը անգամ չէր համբուրած։

Մարդ չի համարձակեցավ դիտողություն ընելու, մինչդեռ Երանիկ իբրև թե գիտնար թե իրն ալ էր այդ բոլոր ճոխությունն, այդ մեծ ապարանքն, այդ ծաղկալից ու ընդարձակ պարտեզն իր բոլոր շատրվաններովը, մեկեն մտերմացեր էր իր պապուն հետ և շատախոս հետաքրքրությամբ, որ ծերունի հավուն զմայլանք կ'ազդեր, ամեն բան հասկնալ կ'ուզեր։

Պողոս ամիրան երջանիկ էր այս հարցումներուն պատասխանելով. ինքը տկար ու չորաբեկ ծերունի ոևէ հոգնություն չզգաց կարծես ժա-

մերով գ'րկը առնելուն այդ մեծ ու սև աչերով, հստակ ու խրոխտ նայվածքով մանկուհին, որ հայրական ցեղը կհիշեցներ։

Սրտահույզ զուգավորություն մ'էր պապուն խորշոմած դեմքն ու աղեբեկ մազերը թոռան վարդագույն մանկական երեսին ու խարտյաշ խոպոպյաց քով։ Կես դար կբաժներ այս երկու մանուկները։

— Հոս կկենաս այս գիշեր,— ըսավ կամացուկ մը մանկուհվույն ականջն ի վար,— ասիկա քուկին տունդ է։

— Իմ տունս հայրիկիս տունն է,— պատասխանեց փոքրիկ աղջիկն առանց գիտնալու թե որքան մահացու հարված մը կուտար ծերունվույն սրտին։

Ծերունին ալ չի կրկնեց առաջարկը։

Իրիկվան դեմ Երանիկը տարին ու Պողոս ամիրան ա՛լ ավելի հուսահատ ու անմխիթար մնաց։

Այս սրտի ցավերով իր օրերը կարճցան, կաթված մը ունեցավ օր մը և ալ ոտքի չի կրցավ ելլել։

Մանկուհին երկրորդ անգամ մ'ալ տեսնել ուզեց իր անկողնույն մեջ, բայց չի ցուցուցին իրեն. հիմա իր ձայնը, որ ատեն մը սարսափ կպատճառեր, մտիկ ընող չի կար. սպասավոր մը միայն թողած էին անոր քով որ մինչև վերջը կքնանար կամ տրտնջալով դժգոհելով կծառայեր։

Մեկը չուներ գանգատելու, ոչ ոք արտոնություն ուներ անոր սենյակը մտնելու։ Տեսած արհամարհանքը կաթվածեն ավելի մահացու եղավ իրեն։

Այս մեծ ամիրան, այս գեռոզ մարդն, որ վաթսուն տարի իր տան մեջ միահեծան իշխեր էր բռնակալի մը պես պատն երեսին, լքյալ և անոքիկ մեռավ, ո՞վ պիտի հավատար ասոր, մանկական զվարթ դեմքի մը, իր փոքրիկ սիրուն թոռանը, Երանիկին կարոտը քաշելով։

Ամեն բան առաջուց կարգադրված էր։

Հակոբիկ աղայի եղբարքը լուր տարածեցին ամեն կողմ թե ժառանգությենե զրկված էր նա և հատուկ թուղթ ու ստորագրություն ցույց տվին իրենց հորը կնիքովը կնքված, զոր հիվանդությանը ժամանակ գողցած էին։

Հակոբիկ աղան ո՛չ կամք և ոչ միջոց ուներ անոնց հետ դատավարելու. եղբարքն ու աշխարհ զարմացան որ ոևէ ժառանգական պահանջում չլսեցին. ձեռք առած զգուշությունին ավելորդ էր։

Սոֆիկ հանըմ չէր ըմբռնած երբեք այս չափազանց վեհանձնությունը։

— Թող եղբայրներդ ամառը Վոսփոր, գարունը Կղզիներն երթան ու հոս մենք տանը մեջ տանջվինք,— կ'ըսեր ամուսնույն աղքատությունը ու անխելքությունն երեսին զարնելով։

Ամուսինը մեղմությամբ կպնդեր իր որոշման վրա.

— Ի՞նչ պիտի շահինք բան մը պահանջելով. անոնք ամեն բան խորհած են մեր իրավունքն հափշտակելու համար. պարապ տեղը պզտիկ իյնալ չեմ ուզեր։

Սոֆիկ հանըմ գոնե լուր ղրկելու, դատ բանալու, սպառնալիք ընելու կողմն էր։

— Տեսնաս ի՛նչպես պիտի վախնան,— կ'ըսեր էրկանը, շարունակ այս խնդրույն վրա բերելով խոսակցությունը,— գոնե քիչ մը բան ձեռք կ'անցունենք։

— Աղքատներն իրավունք չեն կրնար շահիլ այս աշխարհիս մեջ, իրենց Թող ըլլա գողության վաստակը,— կկրկներ Հակոբիկ աղան, որ այս մասին զիջողություն ըրած չէր երբեք կնոջն։

Եվ այր ու կին տասն տարիե ի վեր, հորմե հետե Պողոս ամիրան մեռած էր, երկուստեք անհողդողդ կշարունակեին այս վեճն ու կռիվը։

Եվ ահա քսանմեկ տարի կ'ըլլար ամբողջ որ միասին կ'ապրեին և Սոֆիկ հանըմ կկատղեր մտածելով, որ հարսնցու աղջկան մը տեր եղած, գրեթե ծերացած էր առանց գոնե երեսը տեսնելու այն երջանկության զոր իր դյուրաբորբոք բնավորությունը երևակայել կուտար իրեն աղջիկ եղած ատենը։

Այս միակ զավակը մեծնալով հետզհետե աչքեն ելած էր. տանը մեջ, ամեն վայրկյան իր աչքին առջև իր շուրջը դարձող, պտտող, խընդացող, երգող այդ պարմանուհին կարծես թե իր ծերությունը շարունակ երեսը զարնելու համար կծիծաղեր։ Առանց անոր ներկայության Սոֆիկ հանըմ իր կլորիկ դեմքովը, խրոխտ ու մսոտ կուրծքովը ու վայելուչ հասակովը դեռ երիտասարդ կին մ'էր, տարիքը տասը տարի պակաս ցույց տալու կարող. բայց իր աղջիկը՝ կենդանի ծննդյան վկայագրի մը պես իր քովն էր միշտ, որ իր ընդունայն անցած օրերուն դառնությունը կհիշեցներ։

Այս հարս տև նեղությենեն ու զայրույթեն երևան ելեր էին սրտի հիվանդության մը սկզբնավորություններն. այն ատեն ա՛լ իր դժգոհանքը չափ չէր ունեցել, օրն ի բուն ինքզինքն էրկանը ձեռքը մատնված մարտիրոսուհի մը կնկատեր։ Ո՛չ հայազգի, ոչ օտարազգի բժիշկները օգուտ ըրին անոր մոլեգին սրտին. տոքթոր Տիլպերյան բացառություն մը եղավ բժշկաց անկարողության մեջ։

Առջի այցելութենեն, Սոֆիկ հանըմ հայտնեց թե բարվոքում մը կ'ըլլա իր վիճակին մեջ. երկրորդ ու երրորդ այցելությունք այս համոզումը շարունակեցին. ամուսինն այցեգիները կվճարեր անտրտունջ առանց հարցնելու փնտրելու, մինչդեռ կինն հաղթական ու հանդիմանական եղանակով կգոչեր.

— Տեսա՞ք մը բժիշկը, մեկ անգամեն ճանչցավ հիվանդությունս, իբրև թե ուզեր ամուսինը պատասխանատու բռնել առաջուց տոքթոր Տիլպերյանը չի բերելուն։

Էրիկը գլուխը կ'օրորեր այս խոսքերուն դեմ. մեծ վաստակի տեր չէր ու հեք մարդը կմտածեր թե իր ամսական շահը տոքթորին այցեգիները վճարելու չէր բավեր։

Մտքեն անգամ չանցուց իր կնոջ առաջարկելու որ վերջ տա անոր այցելությանց. առջի բառեն կգուշակեր սպառնալից փոթորիկ մը որ իր գլխուն պիտի պայթեր. ապաքեն ամուսնանալեն ի վեր, փոխադարձ հակակրություն մը եղած էր իրենց հարաբերությունը. միայն իր աղջկան ծնունդն սփոփանք մը եղած էր իրեն առանց անդորրություն կարենալ բերելու տանը մեջ և Էրիկը լուռ ու անձայն իր բոլոր գորովն ու սերը այս մեկ հատիկ զավկին հատկացուցեր էր, զոր մայրն անհավատալի անտարբերությամբ կլքաներ կամ կրթելու պատրվակով կծեծեր։ Հակոբիկ աղա՝ հայր ու մայր եղած էր միանգամայն իր զավկին։

— Մայրդ է, աղջիկս, համբերելու է,— կ'ըսեր անոր, երբ մանկուհին կգանգատեր օրն ի բուն մորը ձեռքեն քաշած նեղություններեն։

Ու կհամբերեին, մինչդեռ Սոֆիկ հանըմ իր վեճերով, կռիվներով, գանգատներով տունը կլեցներ. սպասավորները խույս կուտային ու դրացիներն՝ անոր անհանդուրժելի բնավորության տեղյակ՝ չէին տեսնըվեր հետը։ Այս կերպով ինքզինքը միայն կ'սպառեր յուր անվերջ սրրտմտությամբը։

Տոքթոր Տիլպերյան մեղմացուց այս դժգոհ ու դյուրագրգիռ հիվանդը. իր պատվերները գերազանցապես ախորժելի էին։

— Դուք ազատության, սրտի հանգստության պետք ունիք, տիկի՛ն,— կ'ըսեր բժիշկն երկարորեն մտիկ ընելով անոր մերկ ու դողդոջուն կուրծքը. նեղություն ու մտմտուք չի գար ձեզի, նամանավանդ ընավ դող ելլելու չեք։

— Դող չելլե՞լ, տոքթոր, ամեն օր զիս հատկապես կբարկացնեն։

— Ո՛չ, ո՛չ, չելլար,— կկրկներ բժիշկն անոր ձյունաթույր պարանոցին վրա հակելով իր գեղեցիկ գլուխն ու իր քննությունը շարունակելով։

Եվ պատվերները կշարունակվեին, մինչդեռ հիվանդը քաղցրալուր եղանակի մը ունկնդրելու պես մտիկ կ'ըներ բժշկին ձայնին։

— Դուն զիս պիտի ազատես, տոքթոր,— կ'ըսեր աննման հավատքով մը։

Ամիսները կսահեին այս հաճելի տեսակցություններով, թեև ամեն անգամ բժշկին տված հրահանգը նոր ծախքի դուռներ կբանար ամուսնույն. այսօր կառքով շրջագայելու հարկ կտեսներ, վաղը շոգենավով, ուրիշ անգամ մը կպատվիրեր Կղզին օթել մը երթալ առանձին, վասն զի իբրև տան բժիշկ՝ էրիկ կնոջ մեջ եղած հարատև գժտության տեղյակ էր։

— Առանձին երթալ պատվիրեց բժիշկը,— կկրկներ իրիկունը հիվանդն իր ամուսնույն, որ ամեն ընդդիմութենե հուսակտուր՝ տեղի կուտար։

Հակոբիկ աղան այն պարզամիտ ու համակերպող անձերեն էր որք ընդհանրապես խաբեբաներու ու մասնավորապես կանանց զոհը լինելու դատապարտված են։ Շուկային մեջ առուտուր չի կար, իր դրամագլուխը խորելով ուրեմն այս բոլոր անօգուտ ծախքերը կհոգար. իր կինն առանձին օթել ղրկելու գաղափարն՝ առջի անգամ տարօրինակ երևցավ, բայց բժշկին հրամանը բացորոշ էր։

Դրեթե տարի մ'ամբողջ այսպես անցավ ու ոսկերչին անձկությունն երթալով ավելցավ։ Շաբաթն երկու անգամ բժիշկն անվրեպ կուգար սահմանյալ ժամուն։ Ալ հիմա ընտանի մարդ էր գրեթե. Հակոբման աղայի դրամական կարողությունը գիտեր կնիկեն առած տեղեկությամբը. իբրև խորհուրդի և ծրագրի մարդ անմիջապես Հակոբ աղայի համար ընտանյացը հետ հաշտվելե ուրիշ փրկության միջոց չէր տեսած։

— Ի՞նչ հարկ անտեղի հպարտությամբն հայրենի ժառանգությունը չի պահանջել ու իր հիվանդությունը դարմանելու անկարող մնալ։

— Բերանդ պագնեմ, տոքթոր,— կգոչեր Սոֆիկ հանըմ, բժշկին շահավետ խորհուրդներեն հափշտակված,— եկու տեսա մարդուն հասկըցո՛ւր։

Իր առողջական վիճակը սակայն իր բոլոր հայտարարությանց հակառակ ոևէ բարվոքում ցույց չէր տար. բայց ասի ավելի իր էրկանը պետք էր վերագրել քան թե տոքթորին։

— Քառլսպատ պատվիրեց բժիշկը,— կ'ըսեր դիտողություն ընողներուն.— հոս մնալով անկարելի է առողջանալ. ի՞նչ հանցանք ունի մարդը, թե որ իր պատվերները չենք կրնար գործադրել։

Ու այսպես ստակը կ'երթար ու օգուտը չէր տեսնվեր։ Հայնժամ այր ու կնոջ մեջտեղ կռիվ ու վեճն սկսավ ավելի սաստկությամբ։

Սոֆիկ հանըմ նախամեծար կհամարեր մեռնիլ, քան թե այնքան օգուտները տեսած բժիշկեն բաժնվիլ։

Դրացին ու գյուղացին, ազգականն ու օտարականն ա՛լ բամբասել կ'սկսեին այն տարօրինակ հիվանդն որ իր անօգուտ ու երիտասարդ բժշկեն չէր կրնար անցնիլ։

Էրիկն այս ամոթալի խոսքերը լսեց ու զայրացավ. կինն ինքն ալ ապշեցավ այս տարապարտ կասկածներուն վրա։

— Ի՞նչ զրպարտություններ են ասոնք,— գոչեց բարկութենեն կասկապուտ կտրած,— այսքան օր է տունս կուգա կ'երթա, բնավ անպատշաճ բան մը ըրած չէ. չա՞մչնար ադ էլպիս հանըմը, որ այս տեսակ խայտառակ խոսքեր կհանե. եղբորդ կինը պիտի ըլլա. ասոր անոր վրա աղտ քսելուն թող քեզմե հափշտակած ստակին վճարեն. ինկե վերջը քիչ մ'ալ իր վրա ըսվածներուն ականջ տա. մարդ չէ գտեր՝ սպասավորներուն հետ ժամանակ անցունելու ելեր է. բերանս չի բանամ։

Սոֆիկ հանըմ հուզյալ ու դողդոջուն իր բոլոր զայրույթը դուրս կթափեր հրաբուխի նման. իր ներոջը բոլոր գայթակղալից պատմությունները կրկնելով ոստ կարի իր վրեժը կլուծեր։ Եվ հիրավի ինք ախորժելէ, թերևս չափազանց ախորժելէ ավելի հեռուն գացած չէր Տոքթոր Տիլպերյանի մասին, մինչդեռ իր նեղ պիտանիներեի քարափն ամենեն տարօրինակ և ամենեն անամոթ հարաբերություններով լեզու հանած էր։

Ներքնապես սակայն ինքն ալ մեղադրեց տոքթորին հետ ստացած չափազանց ընտանությունը։

— Ի՞նչ ընեմ,— կ'ըսեր ասոր անոր,— ուրիշ մասնագետ մը չկա. ուզեմ չուզեմ անկե զատ մեկը չեմ կրնար կանչել։

Բայց ոչ ոք կ'ընդուներ այս ծաղրելի բացատրությունն ու ջամբասանքը երթալով կշատնար։

Այն ժամանակ Սոֆիկ հանըմ ավելի խելքի մոտ միջոց մը որոնեց բժշկին հետ իր մտերմությունն արդարացնելու ու պահպանելու համար։

— Տոքթորը Երանիկին շատ հավնած է,— ըսավ էրկանը,— ամեն անգամ անոր գովեստը կ'ընե, կարելի է ուրիշ դիտավորություն մ'ունի։

Հակոբ աղան հանհունս կսիրեր իր զավակն։ Երանիկ եկեր հասեր էր, ինքը վերջին տարիներուն ձախորդությենեն օժիտ մը չէր կրնար հատկացնել անոր ամուսնության. աղջիկը կարգել, գոհ ու երջանիկ տեսնել ու ապա մեռնիլ, այս էր միակ մտմտուքն ու միակ փափագն այս բարի մարդուն, այս անձնվեր հոր, ու այս փափագին իրագործումը երթալով անհավանական՝ գրեթե անկարելի կ'երևեր որքան ժամանակը կմերձենար. իր երջանկության երազն ստվերի մը պես խույս կուտար իրմե որքան որ ինք անոր ետևեն կ'իյնար։ Տոքթոր Տիլպերյանի իր զավակը ուզելեն հավանականությունը լսելով, Հակոբիկ աղան վարանեցավ ու երկու ուրի մեջ մնաց։

— Աղեկ գիտե՞ս գոնե,— հարցուց կնոջը։

Եվ այնուհետև տոքթորին այցելություններն ավելի համակիր ընդունելության հանդիպեցան։

Գ

Երանիկ տասնևութ տարեկան կար, իր մոր նման գեղանի խարտիշուհի մը, ավելի փափուկ, ավելի թարմ, ավելի քնքույշ ու ավելի վեհերոտ աղջիկ մը, իր կուսական անմեղության մեջ։ Հորը պես հաստատամիտ, պարկեշտ ու հեզահամբույր էր. թեև համեստ վիճակով մեծացած, բայց մեծահարուստ օրիորդի մը պարզասեր ճաշակն ու վեհանձն անտարբերությունը կար յուր վրա։ Ամիրայի Ֆոռ էր։ Ինքը միայն խելահաս եղած ատեն հորը իրավունք տված էր պապուն ժառանգությունը մերժելուն։

Հակոբիկ աղայի ընտանիքն առանձնակյաց եղած էր միշտ, և տոքթորն առաջին վայելուչ երիտասարդն էր զոր Երանիկ նշմարած էր, այն տարիքեն ի վեր հորում աղջիկ մը ուշադրություն կդարձնե երիտասարդի մը։ Իր միամիտ ու անփորձ ակնարկին առջև կատարելության ու բարեկրթության տիպարն էր այս երիտասարդ ակնոցավոր բժիշկն, որուն երկայն ու փայլուն գլխարկն այնքան աղվոր կվայլեր իր բարեձև գլխուն։ Ամենուն բերնեն գովեստ միայն լսած էր անոր վրայոք և իր սրտին խորը կիսաստվածի մը հատուկ հարգանքով շրջապատեր էր անոր սրտագրավ պատկերը։

Իր գաղտնիքը սակայն և ոչ մեկուն հաղորդած էր. բժշկին գալուն՝ երբեմն դրան մոտ, երբեմն սանդուխին վրա կհանդիպեր անոր ու «ի՞նչպես եք, աղեկ եք, օրիորդ,— շնորհակալ եմ» մը կփոխանակեին, վասն զի բժիշկը գտնված պահուն Երանիկ երբեք յուր մորը սենյակը մտած չէր։ Այս էր ընդամենը իր բոլոր հարաբերությունն անոր հետ. բայց ամեն նորահաս աղջկա պես գաղտագողի միջոցներով ուսումնասիրած էր զնա։ Բժիշկն ամեն գալուն սովոր էր իր փառտրայուն դուրսը ձգելու և Երանիկ անմեղ հետաքրքրությամբ կքններ այդ թեթև զգեստին կերպասն, աստառը, կոճակները, կարող դերձակին անունը. երբեմն գրպանները խառնելու չափ կհանդգներ, չի բռնվելու համար չորս դին նայելով, առանց որոշ կերպով գիտնալու թե ի՞նչ կ'ուզեր գտնել. ու չչտահաներ որ մետաքսե կամ վուշե թաշկինակ մը գտներ անոր ան-

վան սկզբնատառերով զարդարված և որուն վրայեն տոքթորին սիրած հոտը, նյու-մոն-հեյի մուղին հոտը կբուրեր։

Անկե ի վեր ինքն ալ այդ բույրն սկսեր էր գործածել, չէր գիտեր ինչո՞ւ համար։

Այսպես հազար չնչին բաներով, գաղտնապես, անզգալապես ծներ ու մեծցեր էր յուր մաքուր ու անբիծ սերը, առանց մեկու մը՝ նույն իսկ յուր մորը կասկածն հրավիրելու։ Երանիկ տոքթորը կպաշտեր ինչպես որ սուրբի մը պատկերը կպաշտեն, առանց փոխադարձ գգվանք մը կամ համակրության ցույց մը սպասելու։ Այսչափ ատենվան մեջ ձեռքը չէր բռնած տոքթորին։

Իր սերն, ամեն առաջին սերերու պես, կույր, վստահ ու քիչով գոհացող սեր մ'էր. տոքթորը շաբաթը մեկ երկու անգամ տեսնելու հույսն ուներ ու ասկե ավելի խնդրելու բան մը չէր գտներ իր կուսական պարկեշտ պահանջումներուն մեջ։

Բժիշկը տեղյա՞կ էր արդյոք, որ Հակոբճան աղայի ընտանյաց մեջ իրեն աղջիկ տալու դիտավորություն կար առանց որոշ բան մը ըսելու. մասամբ մը գուշակած էր այս փափագը. և ո՞ր տունը գացած էր առանց այս կերպ հույս մը զարթուցանելու։ Օժիտ չի տվողները՝ միջնորդ կանանց բերնով՝ ստակ ունեցողները՝ մետաղին հնչուն ու համոզող ձայնով աղջիկներն առաջարկեր էին և ինքն այս անխուսափելի ընծայումներեն պաշարված, փորձ ռազմագետի մը պես շարժեր էր միշտ օգուտ քաղելով իր գիրքեն։

Ոմանք մինչև իսկ իր տունը, իր խորհրդակցության սենյակը բերած էին իրենց աղջկունքը, մեկ-մեկ պատրվակով տոքթորին ցույց տալու համար։

Երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ օրերն հորում հիվանդներն իր Փերայի տան մեջ կ'ընդուներ, իգական սեռը կխառնվեր հոն, սամաթիացի Փառանձեմ տուտուեն սկսյալ մինչև փերացի տիկինները. և տոքթորը գիտեր զամենքը գոհացնելու ճամփան, մեկուն անույշ խոսք մը, մյուսին կատակ մը, երրորդի մը ակնարկ մը ուղղելով և ոչ մեկուն սիրտը կկոտրեր։ Եվ իրիկվան ժամը 12-ին երբ ա՛լ վերջին հիվանդը կմեկներ, տոքթորը մեճիտիեներու կույտ մը կգտներ իր դարակին մեջ։

Հակոբճան աղայի տան մեջ իր կացությունն ավելի ձախող էր անշուշտ։ Կինն իր խուսափելու վրա եղող երիտասարդության ու հրապույրին բոլոր ուժգնությամբն, աղջիկը նորածիլ սրտի մը բոլոր անձնվիրությամբն ու բոլոր խանդաղատանոքը կշրջապատեին զինք։

Ցանկությունն ու սերն ախչան կկանգնեին իրարու դեմ։ Մոր և զավկի միմյանց ոսոխ ըլլալեն ավելի ի՞նչ դառն ու կսկծալի բան կա։

Տոքթոր Տիլպերյանի համար այս դիրքն իր հատուկ հաճույքն ուներ։ Մորը կցանկար, աղջիկն կ'ախորժեր ու ամուսնեն կվճարվեր։ Այս էր հաշվեհկշիռն իր պժգալի պարզությամբ։

Երանիկ մ'այն դժբախտ կմնար ամենուն մեջ։ Իր անմեղ սիրտը կ'ըմբոստանար։ Անմեղությունն հավիտյան բողոքող ու ապստամբող պիտի մնա։ Հիմա մանկությենն, պատանությենե անցած կին ու կատարյալ կին եղած էր, և իր խռովյալ երևակայության մեջ, մայրը չէր տեսներ իր դեմ, այլ անողոք ոսոխուհի մը, որ իր պաշտած միակ անձն իր ձեռքեն հափշտակելու կճգներ։ Երանիկ անհանդուրժելի կգտներ այս ընթացքն. երբեմն տոքթորն ալ հանցավոր կդատեր իր երկդիմի վարմանցը համար. իր սրտին խորն ո՞րքան գեղեցիկ հատկություններով, ո՞րքան վեհանձնությամբ ու անկեղծությամբ օժտեր էր անոր պատկերն և իրականության մեջ ի՞նչ մեծ տարբերություն այդ պատկերեն. իր կիսաստվածն՝ երթալով պարզ մահկանացուներու վատթարագույնը կթվեր։ Տրտում ու տխուր էր հիմա. սերն՝ իր բոլոր պատրանքներովը, կսկիծներովը կծանոթանար իրեն։ Քաջություն և տոկունություն չուներ հուսահատության ժամերու դեմ. առջի հարվածեն, առջի բախումեն, իր դյուրաբեկ սիրտը փշրեր ու ավերակ դարձեր էր։

Եվ սակայն այդ կործանյալ խորանին մ'ջ, առաջին սիրով նվիրագործյալ պատկերը, տոքթոր Տիլպերյանի պատկերը կմնար կանգուն, զոր Երանիկ տոքթորին դեմ զայրանալով հանդերձ անգիտությամբ կպաշտեր դեռ։

Իսկ ընդհանուրին մեջ ի՞նչ աղտոտ չարախոսություններ տարածվեր էին և իր անբիծ անունը նշավակ դարձուցեր ամեն գռեհիկ զրույցներու։ Բամբասանքը կանանց բերնին մեջ՝ ձյունի մեջ թավալող գնդակի մը կնմանի. շարունակ գլորելով կ'ստվարանա։

Այս չարախոսներու մեջ ամենեն անխիղճն Երանիկի հորեղբարց ընտանիքն էր, որ քսու ու կեղծավոր կարեկցության մը դիմակին տակ կծավալեր ամեն զրպարտություններ։ Սկիզբեն ի վեր Հակոբ աղային իրենց մասին ցույց տված անտարբերությունն ու արհամարհանքը նախատալից թված էր իրենց։ Հարուստները միշտ պիտի փափագին որ ամեն ոք կարոտ ու աղաչավոր դիրք մ'ունենա իրենց քով։ Տոքթորին Երանիկին հետ ամուսնության լուրն՝ իրենց սրտմտության չափը լեցուց։ Իրենք ալ աղջիկ մը ունեին, այն՝ զոր Պողոս ամիրան չէր կրցած երբեք սիրել. քսաներկու տարեկան կար այս օրիորդն և հազիվ տասնեյոթը տարու կ'երևեր, իր մեծ ու անհեթեթ գլխով, գեղեցիկ ու առատ մազերով, բարակ ու շորուկ հասակովը սաղարթավոր աքասիայի մը կնմաներ. հպարտ էր ինչպես պարտ էր լինել ամեն հարուստի աղջիկ, որ

տղա հասակեն ամբարտավան հոր մը հոռի կրթությունը կ'ստանա. գիտեր, որ էրիկ մը պիտի առներ ճիշտ ինչպես սպասավոր մը կ'առնեն. հարուստ չէ՞ր միթե։ Կենաց պայքարին մեջ ոտք չի կոխող այս աղջիկը՝ ամենեն քաջ տեղյակ էր դրամին ամեն առաքինություն փոխարինելու կարողությանն։ Ոչ ոք կմերձենար սակայն իր ահագին գլխուն ու առատ ոսկիներուն. երիտասարդ գրագիր մը, սնանկանալու մոտ վաճառական մը, հարուստ, բայց ծերունի կալվածատեր մը, այս կերպ էին յուր հրապույրներուն զարնվողները. և օրիորդ Ագապի ահավասիկ վեց, ճիշտ վեց տարիե ի վեր էր որ կ'սպասեր անհամբեր և ուզածը չէր գտած դեռ։

Այս աղջիկն իր լեցուն օժիտով ավելի աղեկ կվայլեր տոքթորին քան թե Երանիկ իր բոլոր գեղեցկությամբը. այսպես մտածեցին իր ծնողքն և հարուստներու հատուկ լրբությամբ ամեն պատշաճություն արհամարհելով որոշեցին տոքթորին առաջարկել իրենց աղջիկը։

Գարնան սկիզբներն Երանիկ երջանիկ եղավ հիվանդ ըլլալով. բավական ատենե ի վեր ուրիշ հույս կամ փափագ չէր տածեր, անկողին իյնալու չափ հիվանդ ըլլալ՝ այս էր իր միակ ակնկալությունը։ Քիչ մ'ատենե ի վեր պզտիկ նեղություն մը կզգար կուրծքեն և զարմանալի հոգնություն մը բոլոր մարմնույն մեջ. բանի տեղ չէր դրեր այս չնչին անհանգստությունն, որուն վրա հիմակ ավելցած էր շոր ու ընդհատյալ հազ մը ու իրիկվան դեմ թեթև տենդ մը։

Երկուշաբթի օր մը չկրցավ անկողնեն ելլել. հայրն, ահաբեկ այս անծանոթ ցավեն, գործի չիջավ ու հիվանդին անկողնույն քով հսկեց։

Տոքթորն եկավ ու երկարորեն զննեց ու մտիկ ըրավ իրեն համար միայն բարախող այս թշվառ սիրտն. ի՞նչ գտավ հոն արդյոք. հորը բան մը չըսավ, բայց դուրս ելած ատեն երկարորեն տեսակցեցավ Սոֆիկ հանըմին հետ. բժիշկը չէր կարող դեռ վերջնական բան մը հայտնել. տեսնե՞նք, կ'ըսեր գլուխն օրորելով, օրիորդ Երանիկին կազմն ու կուրծքը խիստ առողջ էր և ամառվան վրա գալովն հիվանդության պիտի դիմադրեր։ Այս էր տոքթորին կարծիքը, զոր, իր պաշտոնական ձևերը ձեռք առնելով, կբացատրեր, մինչդեռ մայրն ավելի այս քաղցրալուր ձայնին կ'ունկնդրեր քան թե իր զավկին կենաց համար զուրցված այս չարագուշակ խոսքերուն։

Տակավ առ տակավ հիվանդությունն աղետալի կերպով ծանրացավ և Երանիկի երջանկությունը կարծես թե կատարյալ դարձուց։

Երիտասարդ աղջիկն իր հիվանդության շուտով անցնելեն ի զատ վախ չուներ. իր հոգվույն մանկական անմեղությամբն հիվանդությունը

մը, ծանր ու երկարատև հիվանդություն մը միայն երազեր էր իբրև միակ միջոց տոքթորին խնամքը, խոսքն ու տեսությունը վայելելու համար։ Ի՞նչ փույթ եթե մինչև մահվան առաջնորդեր այդ երանավետ ցավը։

Եվ բժիշկն անփույթ ու անտարբեր կշարունակեր իր այցելությունները ժամացույցի մը ճշտությամբ, ցորչափ իր այցեգիները կվճարվեին։

Իր հինավուրց անառակի անցյալովը շատ ու շատ տեսած էր կանացի ամեն պչրանքները. բայց այս մանկամարդ աղջիկն՝ իր բոլոր ամոթխած ու անփորձ համակրության մեջ, անծանոթ հրապույր մը ուներ կարծես։

Անդին հիվանդությունը կհառաջանար հաստատ ու արագ քայլերով, քրտինքն և հազն օր օրե կ'ավելնային։

Ժամ ութեն կ'սկսեր տենդն երեսի կարմրությամբ մը, որ վերջալույսի շառագունության պես տխուր ու հրապուրիչ էր. հիվանդին երկար ու ոսկեգիսակ մազերն, անխնամ կերպով ցրված բարձին վրա, առավել ևս կշեշտեին դեմքի դեղնագույն դալկությունն ու տանթելներով զարդարուն շապկեն երևցող լանջքին ննման սպիտակությունը։

Շատ նիհարած էր, բարակ ու վտիտ մատունքը կարծես թափանցիկ դարձեր էին. աչերն, այն հրուտ աչերը, մարեր, նվաղեր էին. և վերմակին բացվածքեն կտեսնվեր, որ անոր քնքույշ ու ձյունաթույր ուսեն ոսկորը միայն մնացեր էր մորթին տակ։ Հալեր ու մաշեր էր մեկ բառով և երակներն իրենց կապույտ ուղիներով մի առ մի կհամրվեին հիվանդին դողդոջուն բազկին վրա։

Սկիզբները մահացու կարծելե հեռի էր զինքը տանջող անիմանալի ցավը, բայց այժմ, որ հազին սաստկության մեջ թուքը բոսորագույն կներկվեր թաշկինակին վրա, ա՜լ չէր խաբեր ինքզինքն և անողոք ախտը կճանչցվեր անբույժ ու անդարման։

Այն ատեն տոքթորին այցելությունները բոլորովին անհրաժեշտ եղան իրեն համար. մերձակա մահվան գալուստեն քաջալերյալ, ավելի համարձակություն մը ստացավ իբրև թե. պատշաճությունները իրեն համար, օրհասական հիվանդին համար չէին, հո՞գը թե որ մեռնելեն վերջն ալ շարախոսեին յուր վրա։

Հայրն ու մայրն ալ բոլորովին գժտեր էին իրարու հետ. աղջիկնին մինչև աստիճան մը միության գիծ մը եղած էր այս երկու ներհակ բնավորությանց մեջ, Սոֆիկ հանըմ իր անձնական ցավին ու հիվանդությանը զբաղած՝ ժամանակ չուներ Երանիկը խնամելու. առտու և երեկո միայն կուգար անոր սենյակն որպիսությունը հարցնելու և հետը քիչ մը խոսակցելու համար։

Հայրը միայն, հայրական սիրո հուսահատ համառությամբը, գիշերն ի բուն կհսկեր, դեղերը կուտար, քրտինքը կսրբեր հիվանդին, նամանավանդ սիրտ ու քաջություն տալ կ'ուզեր անոր, երբ թշվառն ինք ա՜յնքան պետք ուներ քաջալերության խոսքերու։

Իր հայրական ծածկատես հոգածությամբը դյուրավ նշմարեր էր, որ իր զավակն հափշտակող հիվանդութենեն ավելի անհուն ու դժբախտ սեր մը կար ու կ'սպառեր անոր սիրտն։ Ու վիրավորյալ առյուծի մը պես դեռ կ'ուզեր մաքառիլ անծանոթ ու ծանոթ այս թշնամվույն դեմ. բժիշկը չբերել կմտածեր պահ մը և կվախնար, որ զավկին մահը փութացուցած չըլլա։

Առավոտ մը որոշյալ ժամին տոքթորը չերևցավ. ժամը մը, երկու ժամ սպասեցին, երբեք իր խոստման մեջ թերացած չէր. բացառիկ արգելք մը կար անշուշտ։

Հետևյալ օրը լուր ղրկեցին բժշկին տունը, դուրս ելած էր ու Պոյուքտերե Զարֆճյաններուն գացած էր այցելության. այն օրն ալ մինչև երեկո սպասեցին. հետևյալ օրը դարձյալ չեկավ, հիվանդը ձայն չէր հաներ, բայց տարաբախտ հայրն անոր թաշկինակն արցունքներով թրջած կգտներ բարձին տակեն։

Ի՞նչ պատճառ կար չի գալու համար. գրեթե երկու տարիե ի վեր փոխանակագիր մը հատուցանելե ավելի ճշտությամբ վճարված էին անոր այցեգիները. տանը բժիշկն էր այս մարդն և այս հուսահատական վայրկյանին իր զավակը լքանելն Հակոբ աղայի աչքին սարսափելի ու վայրենի ոճիր մը թվեցավ։

Ինք անձամբ գնաց աղաչելու որ գա, եթե ոչ փրկելու՝ գեթ սփոփելու համար հիվանդը. բժիշկը մերժեց։

— Խղճիս կոիպչի ձեր ստակը առնուլ,— պատասխանեց տոքթորը.— ես անոնցմե չեմ որ միայն ստակ առնելու համար հիվանդները կփնտրեն. ի՞նչ օգուտ, ամեն ջանք ի գործ դրի, բայց հիվանդությունն անդարմանելի է, հազիվ շաբաթ մը կյանք ունի...

Հակոբ աղան խույս տվավ ավելին չի լսելու համար այս անողորմ գուշակություններեն։ Տոքթորը արդեն առջի վայրկյանեն ամեն կողմ իմացուցեր էր Երանիկի հիվանդությունն իր բոլոր պարագաներովն որպեսզի ապագային իրեն հանցանք մը չի վերագրվի. բժշկական գաղտնապահությունն իր համբավին պահանջումներեն վերջը կուգար. արդեն երբեք այդ գաղտնապահության չէր կրցեր վարժեցնել յուր շատախոս լեզուն։

— Գիտեի որ չի պիտի գար.— մրմնջեց հիվանդն երբ տեսավ որ միայնակ կվերադառնար իր հայրը։

— Մ՞չ, ո՜չ, պիտի գա, բայց քիչ մը զբաղյալ էր։

— Մի՛ խաբեր զիս, անուշիկ հայրս, գիտեմ որ չի պիտի գա, բժիշկները հիվանդաց մահվան մոտ օրերը գալ չեն ուզեր, վատե՜ր, որ ճիշտ վտանգի ժամուն կփախչին։

Երանիկի վերջին օրերը անցան ամեն ճչնաժամի օրերու պես շփոթությամբ, հուսահատությամբ և արցունքով խառնված։

Ինչ որ ալ ըրին, հիվանդն ա՛լ ուրիշ բժիշկ չընդունեց իր քով։

Հայտնի է որ այս ցավագին տառապանաց վերջը մերձեցած էր. հայրն անկողնույն մոտն էր ու հիվանդին հրավառ ու նիհար ձեռքն իր ձեռաց մեջ էր մինչև վերջը։

Երանիկ չէր խոսեր. բայց հորը անսահման խնամոցը փոխարեն երբեմն անոր ձեռքը կքաշեր իրեն ու կհամբուրեր. լռին ու գերագույն շնորհակալություն մ'էր ու թերևս վերջին հրաժեշտ մը. հայրն ա՛լ չէր վրդովեր անոր հանգիստը. առջի բառեն կվախնար որ հեծկլտանքն իր ձայնը խեղդեին. արդեն հազիվ կարող էր ծածկել իր արտասվելե կարմրած ու ուռեցած աչքերը։

Դ

Ամիս մը վերջը տոքթոր Տիլպերյանի նշանտվության լուրը նորեն տարածվեցավ օրիորդ Զարֆճյանի մը հետ։ Տասն օր առաջ պարզ ու անշուք կերպով թաղեր էին Երանիկը Շիշլիի ազգային գերեզմանատան մեջ ու բժիշկն հիմա աքասիայի ծառին հետ պիտի ամուսնանար։

Այսպես տոքթորը կշարունակեր Պոլսո կանանց մեջ յուր այրական թեկնածուի պաշտոնը, ո՛ր մեկեն ակնկալելով, ո՛ր մեկին խոստանալով ամուսնությունը։

Ամեն տեղ կհաջողեր կանանց հավիտյան հաճելի մնացող այս հնարքը։

Երիտասարդ ու հարուստ այրիներ, հասուն աղջիկներ, էրիկնուն դժգոհ ամուսիններ, կիներ ու կինե՜ր վերջապես, իրենց հիվանդության պատմություններովը, իրենց կարոտակեզ պահանջումներովը՝ խորհրդակցության պճնազարդ ու գաղտնապահ սենյակը կլեցնեին։

Իր Պոլիս գալեն ի վեր արգանդի ու ջղային հիվանդությունները տարօրինակ կերպով բազմապատկված կթվեին. կվճարեին ու կվճարեին հիվանդներն այս բժշկին. ոմանք իրենց կյանքովը, ոմանք իրենց ստակովը, ոմանք իրենց պատիվովը կվճարեին այս երիտասարդին բժշկությունն ու այս բժշկին երիտասարդությունը։

Անոր այցելած ընտանեկան հարկերը կկործանեին. կային ալ որ, Հակոբիկ աղային տան պես, սիրեցյալ անձի մը կորուստով ավերակ ու սգավոր կմնային։

Մահվան, անպատվության ու դժբախտության հով մը կ'ընկերանար այս տարփածու բժշկին ամենուրեք ուր մտներ ելներ։

Տոքթր Տիլպերյան կատարելապես հաջողեր էր, ինչպես կ'ըսվի աշխարհային լեզվով. օրը չորս հինգ ոսկի կվաստակեր հիմա. Սողոմոն աղան կրնար գերեզմանեն ելնել՝ յուր որդվույն ավերիչ ու շահավոր արվեստին վրա հպարտանալու համար։

<1888>

ՆԵՐՍԵՍ

Ա

Ջենկելքյոյի նավամատույցին քովեն ասիական եզերքը դեպի հյուսիս հետզհետե ծովուն մեջ կմխվի ու փոքրիկ հրվանդան մը կձևացնե հոն. Քուլելին է որ այդ բարձանց վրա գտնվող աշտարակեն ստացած է իր անունը։

Վոսփորի ծովեզերքին վրա ծանոթ գյուղերեն չէ, այլ քանի մը աղքատիկ տնակներե բաղկացյալ զառիվեր օդավետ թաղ մ'է, որուն մոտ կտարածվի Քուլելի հիվանդանոցն իր զինվորական ուղղագիծ ճարտարապետությամբ։

Աղքատ ձկնորսներ և օրով սպասավորության գացող խեղճ կիներ կբնակին հոն։

Ահա այդ ողորմելի տնակներեն միայն մեջ կնստեր հայ նավավարի մը այրին իր մեկ զավակով։

Տասը տարի առաջ Քում Քափուի հրդեհեն փախստական՝ հոս եկեր մնացեր էին. էրիկը՝ ծովերուն վրա վարած իր տաժանելի կյանքին բոլոր խնայողությունը՝ իր տունն ու գույքը, այս կրակին տալով, աղքատացեր էր, առանց կարենալ վարժվելու այս անհավատալի ձախորդության։ Առջի անվախ ու հանդուգն նավավարը չէր մնացեր. կարծես թե զինքը կործանող հրդեհին թանձր մուխն իր հոգին և իմացականությունն ալ մթագներ, և տրտում, շփոթած ու մելամաղձոտ մարդ մը ըրեր էր զնա։

Նավավարը չորս տարի միայն ապրեր էր անոր վրա, և իր կինը ծառայությամբ աշխատելով կմեծցներ Ներսեսը, իր որբ զավակը։

Աշխարհիս վրա մանկությունը թշվառությունը կհեգնե. շատ օր ուտելու հացի կարոտ, շատ հեղ ցուրտ քամիին դեմ անպատսպար մնացեր էր Ներսես խնդալե մարելով իր անոթության կամ իր ցնցոտի ու պատառուն հագուստներուն վրա։

Ապաքեն իր հասակին հարմար զգեստ մը ունեցած չէր երբեք. բարեսիրտ թուրքի մը գթությանը կպարտեր իր փալթոն, որուն մեջ կանեբևութանար և հույն տիկին մը իր ամուսնույն անգործածելի ու ահագին կոշիկները տված էր իրեն, որուն միույն մեջ Ներսեսին երկու ոտքը դյուրությամբ կպարակվեին։

Բնավ նախանձ կամ ատելություն ունեցած չէր՝ տեսնելով հարուստ մարդոց զավակները, երբ հագված սքված կ'անցնեին իր քովեն։

Հայրը ծովու մարդ, ինք ծովու մոտ ծնած, այն անփույթ ստահակներեն էր, որոնց համար ծովեզերքը բոլոր տիեզերքը կկազմե, իբրև տեսակ մը մարդկային խեցի, որուն ծովուն աղի ջուրը միայն կյանք կուտա։

Յոթը տարուեն քաջավարժ ու անվախ լուղորդ էր և մայրը՝ դողդոջուն սրտիվ ի զուր պատուհանեն կպուռար ու իր անզուսպ որդվույն վտանգավոր խաղերն արգիլել կ'ուզեր։

Տարի մը վերջը Ներսես ձեռք անցուցած էր հին, փտած ու խոշոր նավակ մը, որուն թիակներն հազիվ շարժելու կարող էր և որուն վրա թիավարելե ետ չէր կենար։

Օրն ի բուն այդ հնօրյա նավակին մեջ քրտնաթոր կ'երգեր, կխաղար, ձուկ կ'որսար։ Այդ նավակն իր տունը, իր ընակությունն էր, և անոր կուպրով ծեփված կարծր տախտակամածն իր աղքատիկ անկողինեն շատ ավելի սիրելի էր իրեն։

Մայրը՝ զուր տեղը սիրտ հատցնելե հուսահատ, ալ բան չէր ըսեր ու թող կուտար որ ուզածն ընե։ Որքա՜ն տարբեր էր այս տղան ուրիշ տղաքներե. մինչդեռ ոմանք պեպեքի հետամուտ՝ իրենց ընտանեսեր բարքը, ոմանք ժամ օյինի խաղալով, իրենց գրական կամ կրոնական կոչումը կհայտնեն, Ներսես՝ այժմ փոքրիկ բայց կատարյալ անառակ մը դարձած՝ շատ գիշեր չէր դառնար տուն ու անգղիացի լորտի մը պես իր զբոսանավին մեջ կ'անցներ գիշերները։

Ներսես տասը տարեկան եղած ատեն արևեն ու հովեն սևցած, ձեռքը թի քաշելե կարծրացած, առույգ, անվախ ու տգետ տղա մ'էր, որուն հայհոյալից խռսակցությունը կ'ահաբեկեր ու կ'ապշեցներ հեք մայրը.

ուսկի՞ց սորվեր էր այդ լիրբ ու խայտառակ բացատրությունները, այդ անլուր հայհոյությունները։

Խեղճ կինն իր որդվույն ապագային վրա սարսափեցավ. իր էրկանը արհեստեն դժգոհ էր արդեն և որդին՝ կրթյալ և ուսումնական անձ մը տեսնելու անմեղ բաղձանք մ'ունեցած էր միշտ. և ահա հիմակուց այդ տասը տարու տղան չափահաս սրիկայի մը ձևեր կ'առներ։ Մոտերը դպրոց չի կար, ու նավավարին կինը Ներսեսը իր ազգին խնամոց հանձնելե ուրիշ միջոց մը չգտավ։

Կյուրակե օր մ'էր որ ազգականի մը տանելու պատրվակավ Իսկյուտարի Թաղական Խորհրդույն հանձնեց զնա՝ Ազգային Հիվանդանոցի վարժարանը դրվելու համար։ Այս զավակն ուներ միայն բովանդակ աշխարհիս վրա ու անոր ապագա երջանկությանը մտահոգությամբ, այս ողորմելի մայրը չէր վարաներ անկե ալ զուրկ ու հեռու մնալու։

Մայրությունը՝ զավկի համար մարտիրոսություն մը եղած է հաճախ։

Սրտեն արյուն կ'երթար, երբ իր այրի կնոջ շալն ուսին,— վասն զի իր ամուսնույն մահվանեն վերջը սևերը հանած չէր,— զավկին ձեռքեն բռնած, ուրախ դեմք մը կեղծելով, հետիոտն կ'երթար Իսկյուտար։ Եվ որքա՞ն աղաչեր ու պաղատեր էր աղաներուն իր զավակը որբանոց ընդունել տալու համար։

Որբանո՞ց. և ո՞վ միթե այս հեք ու անտերունչ որբեն ավելի այդ դժբախտ հարկը մտնելու իրավունք ուներ։

Ներսեսը հիվանդանոցի վարժարանը դրին գիշերօթիկ, ու մայրը բոլորովին միայնակ ու անոքիկ մնաց իր ամայի խրճիթին մեջ. բայց դեռ իր ապրուստեն կտրելով, շատ օր ցամաք հաց ուտելով, կհաջողեր փոքրիկ գումար մը տանելու իր զավկին՝ երբ ամիսը անգամ մը կ'երթար Եսի-Քուլե անոր մոտ, սուրբի մը ոտքը ուխտի գացող բարեպաշտուհվո մը պես ջերմեռանդ ու ճշտապահ։

Բ

Մարդկային տեսակետով՝ որբանոցը հիվանդանոցեն շատ ավելի բարձր ու շատ ավելի սրբազան հաստատություն մ'է. վասնզի որբությունը դժբախտությանց ամենեն գերազանցը ու ամենեն նվիրականն է։

Այն անհավասար մարտին՝ զոր զորավորը հավիտյան կմղե տկարին դեմ, որբությունն սկիզբն է։

Եսի-Քուլեի մեջ ազգն հիվանդանոց և որբանոց մ'ունի. մահը՝ այս երկու հաստատությանց մեջտեղը մնացած է միշտ. իրմե առաջ կուգա հիվանդությունը, ու որբությունը իրմե վերջը. մահը՝ տարօրինակ

ու անխուսափելի միության գիծ մ'եղած է այս երկու աղետներուն մեջ։

Վարժարանի մեջ Ներսեսի աշակերտության տարիներն անցան ամեն տղայության տարիներուն պես դյուրասահ։

Դպրոցին մեջ քիչ շատ առջի անառակն էր, միշտ ավելի խաղի քան դասերու հետամուտ. ի բնե բարի ու ընկերասեր, բայց անիրավությանց դեմ ըմբոստ ու խրոխտ։

Որքա՞ն դառն փորձերու ենթարկվեցավ Ներսեսի այս բնավորությունը որբանոցին մեջ. իր ուղիղ ու վայրենի դատողությունը երբեք չհամակերպեցավ հոն տեսած անիրավություններուն. զարմա՞նք, որ այդ զրկյալներու վայրին մեջ ալ զրկանքներ տեղի կ'ունենային։ Շատ հեղ պատահեցավ որ Ներսես ծեծ ուտեր իր ընկերոջ հանիրավի պատժվելուն դեմ բողոքելուն համար։ Դաստիարակը՝ որուն այս տղոց հսկողության հոգն հանձնված էր, աստուծմե ու մարդոցմե դժգոհ, խրստասիրտ ու անտանելի ծերունի մ'էր, որ իր բախտեն կրած ձախորդություններուն վրեժը իր խնամոց հանձնված անմեղ տղաքներեն կլուծեր։

Կառավարիչներու, հին վարժապետներու այն հազվագյուտ տիպարներեն մին էր, որոնց այսօր հետաքրքրաշարժ հրեշի մը նայելու պես կնայինք։

Դանիել պատվելին՝ կարճահասակ ու բարբարոս ծերուկ մ'էր, որ ինքզինքը պզտիկ թագավոր մը կնկատեր միշտ իր սրահին մեջ. դյուրաթեք՝ բայց անբեկանելի գավազան մը, իր արքայական ահարկու մականն էր անշուշտ. իր գաղափարը, իր ավանդություններն ուներ այս մարդը ուսուցչական ասպարեզին վրա։

Հիմակվան վիճակը, նախատյալ ու արհամարհյալ, կվերագրեր նախկին վարժապետաց ու տիրացուներու պակսելուն։ Ինքը դեռ հոխորտ համառությամբ մը անոնց սովորություններն ըստ կարի կպահպաներ. իր բթացած ուղեղովը կմտածեր թե վարժապետի մը համար ներելի չէ երբեք ժպտիլ աշակերտաց առջև։ Դժնյա ու անողոք մարդ մ'էր՝ որուն սրտեն ծերությունը ամեն մարդկային ու գորովը զգացում ջնջած էր։

Աշակերտները կդողային իրմե. ու հիվանդանոցին հոգաբարձությունն ինքն իրեն կկարծեր թե լավագույն դաստիարակն ուներ իր դպրոցին մեջ։

Ամեն աշակերտ ըստ կարի չեզոքացնելու կջանար այս կառավարչի դեմքով մարմնավորյալ կատաղությունը. մին՝ ամենեն երջանիկն աշակերտաց մեջ, վարժապետին ծառայությանը հատկացված էր, անոր մաքուր ջուր, սիկառին կրակ տալ, տնտես ախպարը կանչել, ասոնք էին իր առանձնաշնորհումները, որք պատժական խստություններեն զերծ ազատուցանեին զինքը. ուրիշ մի քանիներ, սովորաբար է՛ն գեղեցիկ-

ներն այս տարաբախտ մանկանց մեջեն, կառավարչին նախամեծար ու սիրելի աշակերտներն էին։

Վարժապետին աչքը մտնալ՝ այս էր հեք տղեկներուն միակ փափագը, մինչդեռ իրենց մանկական ու դառնացյալ սիրտը խուլ զայրույթով կլեցվեր այս մարդուն դեմ։

Ինքը ամենեն լավ տեղյակ էր իր շուրջը տիրող ատելության հոսանքին. իր ծանոթ ու հայտնի հակառակորդները, թշնամիները ուներ պատանյաց մեջ, և Ներսես այդ հակառակորդներուն հոչակյալ պարագլուխն էր միշտ։

Հետզհետե մթին ու ահարկու բան մը կ'ըլլար այս տղուն ու այս ծերունվույն մեջի ատելությունը. վարժապետը պարգև կխոստանար Ներսեսի հանցանքն իմացողներուն, իբրև թե մարդասպանի մը գլուխ մը փափագեր ձեռք անցընելու. և խեղճ մանուկները, վարժապետին շնորհաց արժանանալու հավիտենական տենչեն փոքձված, կ'երթային պատանվույն բոլոր շարժումներն հաղորդել իրենց վարժապետին. այս օր գրասեղանը տաշած էր զմելիով, մյուս օրը դասագրքեն էջ մը թուղթ պատռած. այն ատեն այս քրեական հանցանքներեն բորբոքյալ վարժապետին կատաղությունը չափ չուներ։ Ի՜նչ ապերախտ սիրտ՝ որ հիվանդանոցին գույքը կփճացներ. ո՜չ, գավազանի սովորական հարվածներն անզոր էին Ներսեսին դեմ ու խստագույն բան մը կփնտրեր անոր դեմ առանց գտնելու։

Ներսես իր կողմանե պարապ չէր կենար։ Դանիել պատվելիին փոքր ու մեծ ամեն ձևով ու չափով ծաղրանկարները վարժարանին բոլոր պատերուն, գրասեղաններուն, դասագրքերուն վրա կային. վարժապետը տեղ մը չէր կրնար երթալ առանց ածուխի կամ կապարի կտորով նկարված իր դեմքը տեսնելու. ի զուր մաքրել ու սրբել կու տար այս ծաղրաշարժ պատկերները. ժամ մը վերջը Դանիել պատվելիին ամեն դիրքով նկարները, կոնակի վրա պառկած, աշակերտաց առջև ծնրադրած, կամ դագաղի մեջ դրված, նորեն պատերը կծածկեին։

Այն ատեն վարժապետին Ներսեսի տված բոլոր անտեղի պատիժները, փոքրիկ զրկանքները շատ չնչին մնացին այս անլուր ընդդիմության դեմ։ Վարժապետը այս անհավասար մարտին մեջ պարտյալն էր միշտ և կգանգատեր որ ծեծելու արտոնություն միայն ուներ դպրոցին մեջ. իր կարծյոք կախաղան հանելու իրավունքն ալ իրեն պէտք էր տրվիլ, Ներսեսի դեմ ի գործ դնելու համար։

Օր մը կախաղանեն լավագույն բան մը հնարեց այն գազան-դահճի խորամանկությամբ, զոր տղայոց տկար ու զորավոր կողմերը ճանչնալով ստացած էր։

Ուրբաթ օր մը կատաղի հիվանդ մը բերեր էին հիվանդանոց. հուժկու ամեհի մարդ մը, զոր իր հաստ չվանե կապանքներուն մեջ դեռ վեց հոգի հազիվ կզսպեին։ Ներսես հիմարներեն կվախնար ու սարսափահար կնայեր այս ահեղ մարդուն, որուն արյունալից աչքը կարծես թե իրեն կսպառնար։

Դանիել պատվելիի սիրտը առջի անգամ ըլլալով թերևս ուրախութենե դողաց Ներսեսի սարսափը տեսնելով. անոր անզգաստ ու անուղղա անունը շատոնց հանած էր, և այս անառակն ի զգաստություն կոչելու համար երեք օր չոր հաց և երեք օր բանտարկություն տնօրինեց։

Ներսես իր կրած պատժոց վրա խորհրդածող չէր. բայց երեք օր բանտարկությունը պատժոց խստագույնը երևցավ իր աչքին։ Զզիչավ սակայն ներում կամ պատժո թեթևացում խնդրելու պատվելիեն, ու հպարտ և բարձրագլուխ տնտես ախպոր հետևեցավ հաստատ ու ամուր քայլերով։

Վարժարանին բանտը վարի հարկին մեջ բավական կոկիկ սենյակ մ'էր։ Տնտես ախպարը, պատվելիեն ստացած հրահանգին համեմատ, հոն չառաջնորդեց Ներսեսը, այլ դեպի հիմարանոցն ուղղվեցավ. պատանին շփոթած ու անմրմունջ կհետևեր երբ հիմարապետին որոտընդոստ ձայնը զինքը կասեցուց։

Տնտես ախպարը, կոշտ ու կոպիտ վանեցի բեռնակիր, հառաջ մղել ուզեց զայն. Ներսես ընդդիմացավ, մինչդեռ տնտեսն իր բանտապահի իշխանությունը անարգված տեսնելեն զայրացած՝ իր բոլոր ուժովը պատանին հիմարանոցը կքաշկռտեր։

Կարճատև, աղիողորմ ու սարսափելի եղավ այս պայքարը, որուն հիմարապետն ալ եկեր մասնակցեր էր։

Խոսիլ, շունչ առնել անգամ չտվին Ներսեսին, զոր զորեղ ու անդիմադրելի բազուկներ անհավատալի կոշտությամբ բուրջի մը պես քաշելով, հրելով, մշտելով զնտանը առաջնորդեցին։

Ներսեսը չէր լացեր։

Գ

Հիվանդանոցին մեջ կատաղի հիմարներուն տրված մասը, ապուշներուն և անվնաս հիմարներուն հատկացված շենքին ծայրն է. հոն պատին գամված հաստատուն ու ամուր երկաթե օղակներու կապված են հիմարները. բայց նորեկ կատաղիները երկու-երեք օր խավարային խցիկի մը մեջ մնալե հետո միայն կտարվին հոն։

Երեք հատ են այս անլույս ու փոքրիկ զնտանները, որք իրարու քով դրված երեք կանգուն դագաղներու կնմանին։

Կովին տաքության մեջ ստացած կոուփներեն ու հարվածներեն շփոթած, Ներսես ժամանակ չէր ունեցեր իր շուրջը դիտելու. բանտին մեջ ա՛լ անշուշտ ժամանակ ուներ շատ, բայց լույսը բացարձակապես կպակսեր։

Պատանին ձեռքովը շոշափեց իր չորս կողմը. հազիվ մեկ ու կես կանգուն տարածություն ուներ իր խցիկը, քանի որ առանց շարժում ընելու նստած տեղեն անոր չորս պատերուն կրնար դպիլ. և այսպես չոր տախտակին վրա նստած Ներսես առաջին անգամ իր կենացը մեջ գլուխը ձեռացը մեջ առավ մտատանջությամբ։

Այս առաջին խորհրդածությունը քաջալերիչ չէր ու մարդկությունը շարաշուք գույնով կներկայանար իր աչքին առջև. իր անմեղ հոգին վերջապես կ'ապստամբեր այնքան խստությենե զայրացած։ Ի՞նչ կ'ուզեր այս պատվելին իրմե. ի՞նչ գեշություն ըրեր էր որ զինք այսպես կհալածեր. իսկ սա տնտեսին ինչե՞ր պիտի ըներ եթե անգամ մը դուրս ելլեր բանտեն. ու վրեժխնդիր ծրագիրներ քիչ մը իր սիրտը կսփոփեին. բայց ե՞րբ դուրս պիտի ելլեր ասկից. ժամերը կ'անցնեին ու Ներսես ի զուր կսպասեր փրկավետ ձայնի մը. ապահով էր թե ոչ ոք պիտի գար զինքը հարցնելու և իրեն հոգածություն ցույց տալու մորմեն ի զատ։

Մորը հիշատակին Ներսես արտասվեց. այս միայնության, այս մթության մեջ, մորը հիշատակը լուսավոր ճառագայթի մը պես ցոլաց ու իր հոգին ողողեց. ո՞ւր էր հեք կինը. այս ահավոր բա՞նտը նետել կ'ուզեր իր զավակը արդյոք երբ միամիտ պարզությամբ մը ազգին խնամոցը հանձնելու կուգար իր մեկ հատիկ որդին. խնամո՞ցը. խնամք բառը դառն հեգնություն մ'էր այս վայրենի տանջանաց ու զրկանաց դեմ, որոնց զոհ ըլլալու դատապարտված են ազգին որբ ու անտերունչ մանուկները։

Հանկարծ երկաթե մեծադղորդ շառաչյուն մը լսվեցավ ճիշտ իր քովիկն և իր խցիկը մեծազոր ու ահեղ մարմնո մը երերումովը տատանեցավ։

Ներսես ահաբեկ հիշեց որ կատաղի հիմարի մը ճիշտ մոտը կգտնըվեր. այն ատեն սարսափը պահ մը իր սրտին բախյունը դադրեցուց ու վայրկյան մը անշունչ ու անշարժ սպասեց։

Լռությունն հաջորդեց, սառն ու սպառնալից լռություն մը այս տախտակապատ գերեզմանին մեջ. ձայն չկար ու Ներսես սիրտ առավ քիչ մը. պահ մը վերջը մռնչյուն մը, խուլ, վայրագ, հրեշային մռնչյուն մը, ու հետո դարձյալ լռություն։

Այսպես ժամերն անցան, ամեն բանտարկության ժամերուն պես դանդաղ ու երկար։ Ներսես այս մշտատև մութին մեջ ժամանակի զազափարը կորսնցուցեր էր, ցորե՞կ թե գիշեր էր, չէր գիտեր. կհաշվեր միայն որ առնվազն օր մը եղած էր իր բանտարկութենեն ի վեր, մինչդեռ իրոք հազիվ երեք ժամ անցած էր. այս է պատճառը որ մարդս շուտով կծերանա բանտին մեջ։

Քիչ մը վերջը զնտանին դուռը բացին. ի՞նչ հույսով, ի՞նչ անմեղ ու հաստատ համոզում ունեցավ թե զինքը փրկելու եկած էին. երեք օրը լրացե՞ր էր արդյոք։

Ներսես տախտակամածին վրա գետնաքարշ, ոտք ելլել ուզեց, իր նոր փրկիչը դիմավորելու համար։

Ո՜րքան դառն եղավ իր պատրանքը երբ կտոր մը չոր հաց նետելե վերջը իրեն, ճիշտ ինչպես շան մը կնետեն, հիմարապետը աճապարեր էր դուռը գոցելու երեսին։

Մարդս միշտ պիտի ապացուցանե թե վայրենի կենդանիներե սերած է։

Զարմանք չէ որ հիվանդանոցի մը մեջ պաշտոնյայք ուրիշ ամեն մարդերե ավելի զուրկ ըլլան մարդկության զգացումներե։

Ասոնք՝ սովորաբար առանց ընտանյաց, առանց սիրո, առանց կապակցության, սառն ու անտարբեր մարդիկ են, որոնք կկոչվին ամենեն ավելի գթալից, ամենեն ավելի խանդաղատանաց ու գորովո կարևոր պաշտոններու։

Զնտանին մեջ ժամանակը կ'անցնե՞ր թե չէր անցներ, Ներսես ավելի ետ երթալուն կհավատար. ու խոնավ փայտին վրա նստած, ամենեն փոքրիկ շշունջին ու ձայնին ուշադիր, անհամբեր ու սրտատրոփ կկենար։ Ո՜չ ոք, ոչ ոք կար զինքը հարցնող կամ փնտրող։ Այն ատեն կզղջար Դանիել պատվելիին այս աստիճան թշնամանալուն. ծերունի վարժապետին դաժան դեմքը ամենակարող ու անողոք իշխանության մը պատկերը կ'ըլլար իր աչքին. մինչև այն օրը ծաղրած ու արհամարհած այդ բթամիտ ծերուկը, վիթխարի ու մեծազոր բացատրություն մը կստանար. ու մտածել չգիտցող այս տղան մտածելե ուրիշ բան չուներ հիմա, մութին ու խոնավության մեջ։

Պահ մը կարծեց թե գեշ երազի մը տագնապով այս ցուրտ ու մթին խցիկին մեջ կգտնվեր. իցի՜վ թե այնպես ըլլար։

Բայց ահա քովեն հիմարին շղթայակապ մարմնույն տատանումները կ'ավելնային ու բոլոր շենքը ուժգնությամբ կցնցվեր. իր խցիկը զատող պատը անոր անգիմադրելի ույժին դեմ խիստ տկար պատվար մը կ'երևար իրեն, և ի՞նչ պիտի ըներ եթե այդ տկար պատը խորտակե-

լով, հիմարը իր վրա հարձակվեր. Ներսես անզգայապես, մեղմիվ, առանց իր գոյության, իր դրացիության կասկածը տալու, ետ ետ կ'երթար մինչև մյուս պատը, իբրև թե մեծագույն միջոց մը ձգելու կատաղի մարդուն և իր մեջտեղ։

Դ

Անդին Դանիել պատվելին կհրճվեր կպանծար իր հաղթանակին մեջ. Պոնապարթ ոչ այնքան խրոխտ ու փառահեղ երևույթ մը ուներ Ավստերլիցի ճակատամարտեն վերջը, քան թե այս ապուշ տիրացուն իր անողորմ ու եղեռնական շահատակութենեն հետո։

Ներսեսը մեջտեղեն վերցնելով, իր շուրջը տիրող թշնամության ու հակառակության գլուխը խորտակեր էր. Ներսես այս տղայական ընդդիմության հոգին էր. պատվելիին դեմ մղված գաղտնի մարտին մեջ ամեն ոք իր հանդգնությանը, հնարամտությանը կվստահեր. ամեն անիրավության զոհին ծանոթ ու համառ պաշտպանն էր նա. անոր բարեկայությամբը ամենքը ինքզինքին անզոր ու անպաշտպան զգացին իրենց վարժապետին դեմ։

Ո՞ւր էր Ներսես. տղաքը զայս կհարցնեին իրարու. դպրոցին բանտը չէր որ տարեր պահեր էին Ներսեսը. իր ընկերներն ուրիշ հոգ ու մտածում չունեցան երեք օր։

Ցորեկվան արձակուրդեն օգուտ քաղելով, մին՝ խոհանոցը, մյուսը մոմարանը, երրորդը, կոշկակարաց սենյակները խուզարկեր էր, առանց հետք մը գտնելու իրենց ընկերեն։

Ի զուր ջանացեր էին ողոքիչ խոսքերով տնտես ախպարը խոսեցնել տալ. այս անմիտ վանեցին տերության գաղտնիքը պահելու պես, Ներսեսին բանտարկության վայրը կծածկեր։

Դիտված է որ սնոնք միայն իրենք իրենց կարևորություն տալու կճգնին, որոնք ամեն կարևորութենե զուրկ են. ամեն պաշտոնատան մեջ ստորակարգյալներն են միայն ամբարտավան։

Հիվանդանոցի վարժարանի մեջ, տնտես ախպարը իր մեծ նշանակությունը կպահեր, ու վեհապանծ դեմքով մը իր շուրջը հավաքվող տղոց մեջ շրջելով՝ Ներսեսի օրինակեն օգտվիլ կխրատեր անոնց։

Կյուրակե օրը ամսագլուխ էր ու Ներսեսի մայրը հիվանդանոց եկավ իր զավակը տեսնելու. ձմեռվան ցրտին ու սաստկաշունչ օրերեն մեկն էր, և այս անգամ հաստ փոքրիկ փայթա մը բերեր էր անոր համար։

Տնտես ախպոր մոտեցավ հարգական ձևով մը ողջունելով. տնտեսը

կրակով լեցուն վառարանի մը քով տեղավորվեր էր. այրին տեսավ առանց շարժելու տեղեն։

— Ներսեսս կկանչե՞ս,— ըսավ անոր կինը աղաչավոր ձևով։

— Ներսեսդ պանդն ի,— պատասխանեց տնտեսը վեհությամբ։

— Բա՜նտը, տե՜ր ողորմյա, աս օդին ցուրտին ի՞նչ կ'ընե. ի՞նչ հանցանք ըրավ որ բանտը դրիք։

— Տիմադարձություն կ'ընի միեզ։

Տնտեսը ինքզինքն ալ հաշվի կդներ։

Խեղճ կինը վարժապետին ներկայացավ գլխիկոր ու որդվույն համար բարեխոսելով։

Պատվելին անդրդվելի ու անխռով ճշմարիտ հրճվանոք մը կնայեր այս արտասվող կնոջ վրա. կխորհեր, որ ինքն ալ այսպես պաղատանք ու աղերսանք լսելու բախտին կ'արժանանար ահավասիկ. աղերսանք, որ իր շարամիտ եսությունը այնքան կգգվեր։

Ու լուռ ու խրոխտացած մնալով սրահին մեջ, մինչդեռ տարաբախտ մայրը իր պաղատագին [illegible] անձանքը զուցե տասներորդ անգամ ըլլալով կկրկներ, լիարուռն կվայելեր այս մեծ մարդու, մահու և կենաց վճիռ արտասանող մարդու դիրքը։

Կինը կշարունակեր իր աղաչանքը, բայց վերջապես համբերությունն սպառելու մոտ էր։

— Քու տղադ հանցավոր էր ու պատժվեցավ,— ըսավ վերջապես պատվելին։

— Կիրակի օրով պատիժ կըլլա՞,— հարցուց կինը միամտորեն։

— Ուրբաթ օրվընե պատժված է,— ավելցուց պատվելին անտարբեր։

— Ի՞նչ, ըսել է ուրբաթ օր, անկե ի վեր զավակս բա՞նտն է այս ձյունին ու բուքին,— գոչեց կինը ցավագին աղաղակով։

Պատասխան չստացավ։

Այն ատեն այս համեստ, այս աղաչավոր կինը հանկարծ կերպարանափոխ եղավ. իր զավկին այս սաստիկ եղանակին երեք օր շարունակ բանտարկության լուրը անոր խելքը գլխեն առավ։

— Ո՞վ [illegible] դուն որ զավակս երեք օր կբանտարկես, անանկ զավակ մը հասուցած ունի՞ս մի նայիմ, պատվելի,— գոչեց կինը մոլեգին ու հուսահատ,— երե՜սս նայե, երե՜սս, ես քու գիտցած կնիկներեդ չեմ, անօրենս, անաստված, շո՜ւտ զավակս կ'ուզեմ, զավակս։

Պատվելին վախցավ այս զայրացած դեմքեն, մինչդեռ կինը հնտրզհետե, հրաբուխի ջեռուցյալ հոսանքին պես, իր զայրույթը հայհոյություններով և սպառնալյոք դուրս կթափեր։

— Մորուքդ թել-թել կփնտտեմ քուկին, վարժապետ, շուտ զավակս պիտ բերես։

Խռովությունը մեծցավ սրահին մեջ. պատվելիին շփոթած վիճակեն քաշալերյալ աշակերտներն սկսան ձայներնին բարձրացնել։

— Զավակդ չկերա՞նք ա, ծո՜ տնտես ախպար, բեր սըվոր տղան. բայց գիտցիր, որ հոգաբարձությունը պիտի արտաքսե այդ անառակը։

Մայրն այս խոսքերը չէր լսեր ու ձայնը երթալով կբարձրանար։

Եղելությունը շուտով մը իմացվեցավ հիվանդանոցին մեջ ու դրպրոցին տնօրենը, բարի ու պարկեշտ երիտասարդ մը, այդ վիրավորյալ մայրն ամոքել ջանաց։

— Մի՛ պոռաք, կ'աղաչեմ, եկեք վար իջնանք, զավակնիդ պիտի տեսնեք, ի՞նչ ընենք, դպրոցին կանոնը կա։

— Երե՞ք օր զավակս բա՞նտը դնել աս ցուրտին,— կկրկներ մայրը շարունակ, այս անհավատալի խստությենեն կատղած,— զավկի տեր չե՞ք դուք, կգոչեր իր շուրջը ժողովված մարդոց դառնալով։

Տնօրենը գոհացում մը տալ ուզեց այս կնոջ՝ միասին տանելով զինքը՝ Ներսեսը դուրս հանելու համար բանտեն։ Բայց սխալ ճամփա բռնած էր, ու տնտեսը թեմենանի մը ընելով կամաց մը իմացուց, որ անառակաց հատուկ բանտը դրված էր Ներսես։

— Անառակաց բա՞նտը, ի՞նչ կ'ըսես, տնտես ախպար,— ըսավ երիտասարդ տնօրենն ապշած ու սարսափած,— երեք օր հո՞ն թողուցիք տղան։

— Պատվելին էնպես հրամայեց։

Տնօրենն ամոթահար ու աղետ մը պատահած ըլլալու նախազգացումեն դղրդյալ, ետ դարձնել ուզեց կինը՝ որ կհամառեր, իր ձեռոք զավակն այս անողորմներուն ձեռքեն փրկելու համար։

Այն ատեն ստիպյալ և ուրիշ մի քանի պաշտոնեից ընկերակցությամբ պարտավորվեցավ այս կնոջ հետ երթալու բանտը. քանի՛ կհառաջանային հիմարանոցին մեջ՝ խեղճ կինը ապշած սարսափած՝ չորս կողմը կնայեր, առանց կարենալ հավատալու տեսածին ու լսածին։

Բայց երբ զնտանին դուռը բացին, արտաքսիչ ու ահավոր տեսարան մը պարզվեցավ իրենց աչքին առջև։

Ներսես ցուրտ սառնամանդին վրա անշարժ պառկած էր, աչքերը փակ, ու իր մանրիկ ու վոտիտ անդամները ցուրտեն քար կտրած էին. կարելի եղածին չափ պատսպարվելու համար, իր փոքրիկ ձեռքը մյուս թևին մեջ մտցուցեր էր, գլուխը տախտակին վրա դրած. իր գլխուն մոտ կկենային դեռ չոր հացի կտորները, զորս ներս նետեր էին առանց ներս նայելու, և որոնց չէր դպած բնավ։

Մայրը նվաղեցավ, մինչդեռ տնօրենին ու պաշտոնեից աչքերը արտասվոք կլեցվեին։

Բոլորն ալ փութացին մորն ու որդվույն ամեն խնամք տանելու, ու երկուքը միասին փոխադրեցին հիվանդանոցին դեղարանը։

Թշվառ կինը աչքը բանալուն, պաշտոնյաները տեսավ միայն իր շուրջը. բերանը շարժեց, բայց առանց կարենալու ձայն մը հանել. այն ատեն արցունքներ խառնվեցան իր աղերսարկու նայվածքին. հասկցան որ զավակը կհարցներ։

Պատասխան չունեին տալու։

Ներսես երկնից հրեշտակներու քովն էր։

<1888>

ՓՈԹՈՐԻԿԸ

Ա

Ահ ու դողի մեջ, պատուհանը, դուռը, քարափին վրա ցրված, շվարած կսպասեին, մինչդեռ փոթորիկը կ'ալեկոծեր Վոսփորն իր բոլոր ուժգնությամբ։

Գիշերվան մեկ ու կեսն ըլլալու էր, ամառ գիշերվան մը, հանկարծահաս մրրիկի մը սևության մեջ կորսված, զոր անընդհատ իրարու հաջորդող կայծակին գիծերն ի զուր կփեռեկտեին. երկնքին մեջ ինչպես ամենուրեք պայքար մը կար լուսին ու մթության մեջ, ոխերիմ ու մահացու կռիվ մը. և խավարը կհաղթեր հոս ալ, գրավելով ամեն կողմ՝ բարդելով իր խավերը մին մյուսին վրա և տարօրինակ գիշերվան մը պես, սև վարագույրով մը ծածկելով բոլոր հորիզոնն ու ծովուն մրրկահույզ ջուրերը։

Խավարին մեջ որոշ ու հայտնի, փոթորիկին ահեղագոչ մռնչյունը միայն կուգար, վայրենի ճիչի, աղաղակի մը պես, վայրկյան մը դադրելով, իբրև թե զայն արձակող մեծածավալ թոքերը շունչ առնել ուզեին, և հետո ավելի ևս սաստիկ գոռալով։

Եվ այս աղմուկին ու շփոթության մեջ տնեցիք ահաբեկ վեր վար կվազեին, չգիտնալով ըրածնին ու թողածնին, ի զուր ջանալով որոշել ծովուն վրա «Անվեհերը», փոքրիկ մակույկն որուն մեջ իրենցմե մին այս պահուս կգտնվեր, ահարկու դարձած այդ կոհակներուն խաղալիկ, գուցե անհետ կորսված անոնց մեջ։ Կուլային, կ'աղոթեին ու կհուսային։

— Սահակը հետն է,— կ'ըսեր հայրն, հիսունի մոտ ծերացած մարդ մը, ջանալով սիրտ տալ իր կնոջը։

— Վախու բան չկա,— կ'ավելցներ դրացի մը,— անոնք մոտերն եզերք մը եկած են, «Անվեհեր»ը վախնալու մակույկ չէ։

Ու փոթորիկը կմռնչեր՝ ի դերև հանելով այս հուսադրական խոսքերը, ծովուն վրա ձեացող այլաց կատարները կթոցներ՝ դաշույնի հարվածով կտրելով զանոնք ու ծովեզերքին վրա կեցող մարդիկն ետ կհրեր խստությամբ, իբրև թե անոնց միջամտությունը մերժելու համար։

— Տեր ասված, դուն ողորմե՛։

Տղաքը կպոռային անդիեն։

— Տյուրի՛կ, Տյուրի՛կ,— ձայն մը հասցնել ուզելով ու պատասխան մը ակնկալելով ծովուն վրայեն։

Բ

Իր սովորությունն էր իրիկվան ճաշեն վերջը շրջագայություն մը ընել ծովուն վրա, կսիրեր ծովն. անոր հետ, անոր քովը մեծցեր էր Տյուրիկ իրենց տանը մեջ։ Հարս երթալեն վերջն երկու տարի միայն հեռու ապրեր էր անկե. Փերայի աղմուկին ու փոշիին մեջ բանտարկված, զրզված անոր ազատ մթնոլորտեն, իր ծովեզերյա տանը կարոտը քաշելով, և միշտ փնտրելով անոր ազատ ու լայնատարած հորիզոնն և կապուտակ ալիքները։

Երկու տարվան հարս էր երբ որ, այրի մնացած, պարտավորվեցավ հորը տունը դառնալ, չկրնալով համաձայնիլ կեսրոջը հետ, որ չէր ներեր իրեն ողջ մնալը զավկին մեռնելեն վերջը։

Այս վերադարձեն շատեր նոր ամուսնություն մը գուշակեր էին։

— Կենե՛ն է,— կ'ըսեին կիներ։

— Աղվոր է,— կ'ըսեին էրիկ մարդիկ։

Գեղեցիկ ու երիտասարդ էր. բայց վես ու առնական գեղեցկություն մը, որ դիմացինը կշփոթեր ու հառաջանալը կ'արգիլեր։

Իր սև աչքերը թաքուն կայծակներով լեցուն կթվեին, և ոչ ոք կհամարձակեր անոնց խորը նայիլ։

Հպարտ ու առանձին կմնար իր երիտասարդ այրիի սուգին մեջ քաշված, գլուխ չդարձնելով երբեք երիտասարդաց շաղակրատ ու սեթևեթյալ խոսքերուն։

Չորս տարիե ի վեր որ հորը տունն էր, սուգե չէր եկած դեռ ու բամբասող կիները՝ նախանձաբեկ անոր ազդած բացառիկ հրապույրեն՝ կ'ըսեին իրարու.

— Սևերը կվայլե, անոր համար չի հաներ։

Արդարև կվայլեր իրեն սևը։ Ձերմակ մորթին փափկությունը կշեշտեր. իր առատ մազերուն սևաթույր փայլին կհարմարեր. բարձր ու վայելուչ հասակին բոլոր առավելությունը կճշտեր։

Աղջիկները չէին քաշեր զինքն. անոր շուրջը դարձող արանց բազմությունը կհուսահատեցներ զիրենք։ Այս երիտասարդ կինն իրենց իրավունքներն ու հույսերը կ'ոչնչացներ. կբողոքեին։

— Թո՛ղ կարգվի ու ասանկ բոլոր էրիկմարդիկը գլուխը չժողվե։

Եվ սակայն Տյուրիկ ձեռքեն եկածը կ'ըներ զանոնք հեռացնելու համար։ Բարձր ու գոռող սարի մը պես անմատչելի կկենար իր գեղվույն ու սուգին մեջ։

Գ

Ժամ մը առաջ իր սովորական պտույտին ելած էր ծովուն վրա։ Սահակը մակույկը բերած էր ու իր հանքմը կպտտցներ ծովուն կապույտ ու անջինջ երեսին վրա։ Պյոյուքտերեցի տղա մը, որուն հաղթ կազմվածքը կատարյալ երիտասարդի մը երևույթը կուտար իրեն։ Յուր հայրն այս տանը մեջ քսան տարի իբր նավավար աշխատած էր, ու ինքն ալ տարի ու կեսե ի վեր, հորը տեղ կ'աշխատեր հիմա։ Զավկի մը պես կսիրեին զինքը։ Պզտիկուց ի վեր մը այս տան մեջ մեծցած էր։ Կհիշեր, հիմա թիավարելով իր հանքմին դեմը, կհիշեր իրենց տղայությունը։ Հանքմին հետ միասին վարպետ տուտուի գացած ըլլալնին, շատ աղեկ միտքն էր մսավաճառի քովի տունը, ուրկե ինքը ցորեկեն վերջ կփախեր միշտ ծովեզերքը, հույն ընկերներու հետ գուգուն և խայտառակ խաղալու համար

Դառնությամբ, ցավելով, ինքզինքը հանդիմանելով կ'ըսեր թե մարդ եղած չէր ինք, ու այսպես նավավար մնացած էր հորը պես։

Կխոսեր, մինչդեռ ալիքները մեղմիկ կփայփայեին նավակին կողերը, ու կհեռանային եզերքեն հոսանքին մեջ. օդը իրիկվան զովության տեղ ընդհակառակը տաք ու հեղձուցիչ կդառնար։

Տյուրիկ չէր պատասխաներ նավավարին պատմած մանկության հիշատակներուն, բայց ինքն ալ կհիշեր այդ օրերը, ու կ'ունկնդրեր առանց ընդմիջելու. ինքն ուրիշ խորհուրդներու մեջ մտաշրջիկ, ակնարկն երկընքի եզերտից մեջ թափառիկ, չէր տեսներ իր դեմը թիավարող տղան, որ իրենց մանկության մոտությունը հիշեցնելով կարծես հիմակվան հեռավորության դեմ լռելյայն գանգատ մը կ'ուղղեր։

Դ

Ծովը կապույտ սավանի մը պես առանց ծալքի կտարածվեր կմնար ու տաք զեփյուռ մը՝ անտեսանելի հրդեհի մը ջեռուցած մթնոլորտին պես երեսի կզարներ։ Հեռվեն Պյոյուքտերեի ծովեզերքը մթնշաղին մեջ նոր վառվող ճրագներն ու լապտերները լուսավոր բիծերու կնմանին։

Սուլթանիեի բացերն էին հիմա. ոչ նավավարը և ոչ տիրուհին ուշադրություն կ'ընեին քիչ-քիչ երկինքը ծածկող մթին ամպերուն որոնց խայտաբղետ փայլը ծովուն անշարժության մեջ կցոլանար։ Սովորականեն շատ հեռու գացած էին արդեն ու կհեռանային դեռ ալյաց կամաց ընթացքին հետ։

Հավասարապես բացն էին երկու եզերքեն և ծովուն վրա մռայլ քող մը կ'իջներ, հետզհետե մշուշե վարագույրի մը մեջ ամփոփելով զիրենք։ Երիտասարդ կինն իր նավավարեն զատ մեկը չէր տեսներ ալ ու ստիպյալ կդիտեր հիմա անոր առույգ և հուժկու իրանն, որ ամեն կոնակի վրա ծռելուն, թափանցիկ պյուրյունճյուկ շապիկեն ցույց կուտար թավ կուրծքի մը ելևէջն և շապիկին լայն թեզանյաց մեջեն մկանուտ թևերը։

Տյուրիկ իր նավավարը կդիտեր այս ծովին ու օդին ջերմության մեջ, այս կես լույս ու կես խավարին մեջ, այս եզական միայնության ու առանձնության մեջ։ Դեռ պատանի մ'էր, վերին շրթունքը հազիվ թե մրոտած, նուրբ աղվամազ մը դեռ նոր կսկսեր անոր արևակեզ այտերուն վրա. մերկ ոտքերն հենարանին դրած էր անծածկույթ ազդերքը ցույց տալով։ Թարմ, կորովի ու անծանակ բան մը կար այս տղուն վրա, որ երիտասարդ կինը կխռովեր։

— Քանի՞ տարու ես, Սահակ։

— Ի՞նչ գիտնամ, հանըմ, տասնյոթը, պելի տասնութը կամ։

Ու մանկամարդ կինը ակամա կբաղդատեր այս տղուն տարիքն իր քսաներկու տարիներուն հետ և բոլորովին հարմար կգտներ իրարու։

— Նայինք քեզ ե՞րբ պիտի նշանենք։

Մոր մը ձևերը կ'առներ՝ ավելի ազատությամբ խոսելու համար, և վերջապես ծովուն այս առանձնությանը մեջ իր համարձակությունը կ'ավելնար։ Հաճույք, գաղտնի ու անբացատրելի բան մը կզգար խոսելով այս նշանտուքին վրա, անոր նշանածին, գրեթե կնոջը վրա։ Սահակին կինը պյոյուքտերեցի աղջիկ մը պիտի ըլլար, երջանիկ կին մը այս հուժկու թևերուն մեջ, որոնց վրա կզմայլեր։

Ու այս խոսքերով, պատանին շփոթությունն ու կարմրությունը կվայելեր։ Թերասքող հարցումներով կշանար անոր անփորձ պարզամտությունը չափել. ու որքան ավելի շփոթ ու խռովյալ տեսներ նավավարն, իր բացատրություններն ավելի դյուրահասկնալի, բառերն ավելի բացահայտ կդառնային՝ տեսնելով որ վախ չկար այս տղուն հասկացողությենեն ,որուն զգայնությունը ժայռի մը պես ամուր ու հանդարտ կ'երևեր։

Եվ նորատի կինն ավելի կհառաջանար պրպտելով այս պատանի սիրտն, ու հետաքրքիր բժիշկի մը պես փնտրելով զայն թունդ հանելիք ջիղը։

Նավավարը չէր պատասխաներ, ձյունաթույր ու մեծածավալ վարտիքին անհամար ծալքերովն ու փոթերովը լեցնելով իր նստարանը, հեռուն՝ եզերքներուն նայելով միշտ զոր չէր տեսներ մշուշին մեջ ու ակնարկը փախցնելով իր տիրուհվույն հետախույզ ու խրոխտ աչքերեն։

Կհասկնա՞ր թե չէր հասկնար այս լեզուն։

Ե

Հանկարծ ծառոց խարշափյունի պես խշրտուք մը ելավ։ Ծովուն վրա տեղ-տեղ փոքրիկ պղպջակներ կազմվեցան, ծովուն երեսը մութ երանգներով զատվեցավ. հեռվեն մղված զորավոր շունչ մը փարատեց այս մշուշե սրսկապանն, որ տիրուհին ու ծառան կշրջապատեր։ Ուշատետեի բարձունքին վրա երկինքը փայլատակեց, դեղին ու շլացուցիչ լույսով մը ողողելով ծովն ու ցամաքը և ամպրոպահույզ որոտում մը սաստկությամբ ճայթեցավ։

— Հանըմ, պոռա կա, փախի՛նք, փախի՛նք։

Ծովուն մակարդակը գոգ կ'առներ, կ'ուռեր՝ երկար ու անծայր կոհակ մը ձևացնելով։

Ետ դարձան, նավավարը փութացնելով իր թիավարությունը երկնից մթության ու ծովուն սպառնալյաց առջև զորս քաջ կճանչնար։

Հիմա կշարժեին, կտատանեին դեռ չփեռեկտվող այն կոհակին վրա, բարձրանալով ու խոնարհելով անոր կամքին հետ։

Հարավի հողմը կուգար կհասներ ուժգին— հալածական ու հալածող հով մը իր բոլոր սաստկության մեջ։

Նավակը Պեյքոզի բացերուն կմոտենար, ու ծովն իր կոհակաձև երերման մեջ չկրնալով դիմադրել փոթորիկին շունչին, հազարավոր ալիքներով կպատռվեր, կճեղքվեր սպիտակ փրփուրներու մեջ։

Սահակ իր բոլոր ույժը կուտար՝ ջիղերուն բոլոր տոկունությամբը, մարմնույն բոլոր առուգությամբը կովելով։

Դյուրաբեկ մակույկը ալյաց վրա կ'ոստոստեր և փոթորիկը կոնակեն կմղեր զայն անընդհատ շունչով մը, որ երիտասարդ կնոջ ուսը ու մեջքը կ'ընդգրկեր, և մազերն՝ իրենց գեղեցիկ ու ամփոփ շտկվածքը կորսնցուցած՝ հողմածուփ կշարժեին։

Հիմա գիշերը կշրջապատեր զիրենք, ահարկու երաժշտությամբ մը տոնելով իրենց միայնությունը, ու ծովուն մեջ խեղդամահ կորսվելու վտանգովը անոնց միության հարկը շեշտելով։

Փոքրիկ մակույկը ջուր կ'առներ ա՛լ։ Այրին թողած էր ղեկին մեռաքսահյուս չվանները և փոթորիկը միայն կվարեր ու կ'ուղղեր զիրենք։ Հանըմը չէր խոսեր, բայց կտեսներ մահն. այս հեղուկ դաշտին մեջ խեղդվիլը՝ մոտ, շատ մոտ, իր քովիկը, և կվախնար։

Իր դժգույն դեմքն այտերուն կարմրությունը կորսնցուցած, ավելի հրապուրիչ էր, մինչդեռ հողմն իր անդաղտնապահ ու որոնող շունչովն անոր շրջազգեստը կխառներ շարունակ՝ հեշտալի առագաստի մը պես լեցնելով զայն։

Անկարող էր ուշադրություն ընելու հիմա իր զգեստից խառնակությանն որ նավավարին ցույց կուտար իր սրունքն ամբողջ, մինչև ծունկերը, զորս սև ֆիլտեմոսե գուլպան իր պարույթովը կ'ընդգրկեր մինչև ծնրակապն ու անկե անդին և որուն վրա նուրբ ու ձյունասպիտակ վուշ ճերմակեղեններուն դրասանգները կխաղային իբրև տեսակ մը փրփուր զոր շրջազգեստն իր գաղտնածածուկ ու երանավետ փոթերուն մեջ սպառած ըլլար։

Զ

Մրրիկն իր զայրույթին ու կատաղությանը հասած էր ալ. ծովը հետզհետե լեռնաձև ալիքներով չորս կողմեն կպաշարեր փոքրիկ մակույկը զոր իր աղի ջուրերովը լեցուցած էր։

Մութին մեջ աներևույթ դարձող ցամաքն՝ իրարու հաջորդող փայլակներուն ցոլացման մեջ կտեսնվեր հանդարտ ու անբույթ։ Տուները ու ապարանքներն իրենց կարմիր ու զվարթ լույսերը վառած էին ու ալյաց մեջ կորսվող մակույկն, անիրականալի երազի մը պես հեռվեն կդիտեր ցամաքին այս հաստատ ու ապահով երջանկությունը։

Սահակ կշարունակեր իր գերմարդկային ճիգերը, վտանգը կկրկնապատկեր անոր ճարտարությունը։ Բոլոր ջանքը կկայանար նավակին կողը չընծայելու ալյաց հարձակման, ու խավարին մեջ ճերմակ փրփուրներեն կոհակաց գալուստը տեսնելով՝ ձախ թիակովն իր ուղղությունը կպահեր։ Խույս տալու մեջ չէր փրկությունն, այլ անխոհեմ դիրքով մը չընդդիմանալու փոթորկին զայրույթին, և այսպես հալածական ու հնազանդ կմղվեին ալյաց կատարներուն ու խորությանց մեջ։

Երիտասարդ կինը նավակին մեջ սարսափեն նվաղած, ընկողմանյալ կմնար, իր արդուզարդին գրգռիչ ու շնորհալի անկարգությանը մեջ։

Ումուր Յերիի ծոցը կմտներ մակույկը հիմա։ Այս սեղմված եզերքներուն մեջ ծովն ավելի կբարձրանար, կ'ուռեր սպառնալից ու մահագույժ կդառնար։ Նավավարն կզգար կորուստն անխուսափելի։ Ալիքները կիսովին թրջած էին զինքն ու իր տիրուհին։ Աղի համ մը, այդ ջուրերն ելլող դառնություն մը կլեցներ իր շնչասպառ կուրծքը, խեղդամահ կորսվելուն սկզբնավորությանը պես այս ջուրե գերեզմանին մեջ։

Իր ուղղությունը պահելու ստիպված՝ ալյաց կնայեր դեռ ու միջոց մը փայլակին լուսովը տեսավ նավակը մոտեցած եզերքին զոր փրփուրներու սպիտակությունը՝ ձյունապատ դաշտի մը նման բոլոր երկայնությամբը կգրավեր։

Այլ անկարելի էր չփշրվիլ այդ ծովուն ու ցամաքին մաքառմանը մեջ. անկարելի՝ ետ դառնալ բացը նետվելու համար։ Այն ատեն աղաղակ մը փրթավ իր կուրծքեն, օգնություն կոչելու ձայն մը, աղիողորմ և հուսահատ գոչյուն մը, զոր ծովն իբրև թե անակնկալ աջակցություն մը արգիլելու դիտմամբ իր մոնչյունովը ծածկեց։

Ցամաքեն տասը գրկաչափ բացն էին, ծովն օրորոցի մը պես առաջ ու ետ կմղեր զիրենք և իր խուլ նվագներովը քնացնել կ'ուզեր այս դատապարտյալները։

Այս մահվան տարուբերին մեջ ալիք մը անհնարին մոլեգնությամբ գրկեց բարձրացուց մակույկն իր լույծ կուրծքին վրա. մանրերկրորդ մը վարանեցավ կարծես որոշում տալու համար, հետո անհավատալի զորությամբ ցամաք նետեց զայն, հոն հավաքված ավազներուն վրա, ու ետ քաշվեցավ։

Այս ալիքն որ իր անօրինակ ուժգնությամբը ստույգ կորուստ մը պարտ էր բերել, իրենց փրկությունն եղավ. չափազանց սաստկությունը խորտակելու տեղ ազատեց զիրենք և իր նպատակին ներհակ արդյունք մը արտադրեց։ Այս պարագային մեջ ծովու վարմունքը մարդոց վարմունքին համաձայն գտնվեցավ։

Նավավարը դուրս նետվեցավ ու ամեն բանե առաջ իր պրկված ու ուժաթափ մատներովն ա՛լ ավելի դեպի ցամաք քաշեց թեթև մակույկն ու հետո տիրուհին դուրս հանել ջանաց։

Մթության մեջ կ'որոշեր անոր վախեն դալկացած դեմքն ու մարմնույն բոլոր զմայլելի գծագրությունը զոր թրջված շրջազգեստը բոլորովին հայտնի կ'ըներ։

Այն ատեն բռնեց այդ լեցուն ու հրաշագեղ մարմինը, իր գրկին մեջ, իր ուսերուն վրա առավ՝ առանց թևերուն մեջ կարենալ ամփոփելու այդ հարուստ իրանը՝ առույգ բարձունքը։ Մանկամարդ կինն այս հպումով, այս ջերմությամբ սթափեցավ։ Զգարմացավ սակայն ինքզինքն այս բազկաց մեջ տեսնելով. կիսովին փարատվող նվաղմանը մեջ, երազի մը, երջանիկ ու փափագված երազի մը տպավորությունն ունեցավ։ Իբր թե Պյոյուքտերեի իրենց ապարանքին մեջ իր քաղցրաբույր ննջասենյակին անուրջներովը ու երիտասարդ կնոջ իղձերով խռովված ու բորբոքված ըլլար այս վայրկյանիս, ուզեց որ այդ երազը շուտով չվերջանա, ու երկարի։

Ու այս պատրանաց անձնատուր, հողուն դալարյաց վրա, ուր գրկելով տարած էր զինքն իր նավավարը, նսեմաստվեր ու խոնավ երկնքին տակ, փոթորիկին հորինած տարօրինակ ու տիտանյան եղանակներովն, ամպրոպին ահարկու ձայներուն մեջ, չզարթնուլ ձևացուց, անպաշտպան թողլով վարդագույն դարձող այտերն ու նվագելու պատրաստ քնարի մը պես բոլորովին դողդոջուն այս մարմինը, մինչև որ, այս երազը, որ այնքան կնմաներ իրականության, շարունակվեր ու ամբողջանար։

Ը

Քարափին վրա՝ ուր նորատի կինն ոտք կոխեց, արցունքներ, համբույրներ ու աղոթքներ իրարու խառնվեցան.

— Ազատեցա՜ր, ազատեցա՜ր։

— Եկու զգեստներդ փոխե, խխում ես, Տյուրիկ։

Ուրախութենեն վերջը հարցումներ տասնյակներով. ո՞ւր բռնվեցաք, ի՞նչպես փախաք, ո՞ր կողմն ելաք։ Այս ցնծության ու ուրախության մեջ նավավարը մոռցված կմնար իր մակույկին մեջ. վերջապես անոր ալ կարգն եկավ. Տյուրիկ իր ազատաբարը ցույց տվավ.

— Ես ինքզինքս կորուսած էի բոլորովին, բան մը չեմ հիշեր. Սահակին հարցուցեք։

Շնորհակալությունները, գովեստները չպակսան. Տյուրիկի հայրն ոսկի մը պարգև տվավ։

— Ես տան զավակն ես,— ըսին ամենքը միաբերան։

Անկե վերջը բնական էր որ նավավարն ավելի անձնվեր ըլլար իր հանրմին, որ երիցս իրեն տիրուհին էր։

Ը

Հետո փոթորիկին հիշատակը միայն մնաց։ Տիկինը մեյ մըն ալ իրիկունները չելավ ծովուն վրա շրջագայելու։ Իգուր նավավարը ամեն ապահովություն տվավ իրեն. հեռու չպիտի երթային, ոչ, ծովեզերքը միայն մակույկը դիմացկուն ու վստահելի էր։ Հանրմը իր որոշման վրա հաստատ մնաց։ Այն գիշերվընե ի վեր իր նավավարին երեսը տեսնել չէր ուզեր կարծես. կզգուշանար անոր հանդիպելե և երբ պարտավորեր խոսք մը ուղղել իրեն, ցամաք ու հրամայական շեշտ մը ուներ միշտ։

Զայրույթ մը կար հիմա իր սրտին մեջ անձնատուր եղած ըլլալուն համար այս պատանի սպասավորին։ Այդ վայրկյանն, որուն ախտաբորբոք անհամբերությամբ մը սպասած էր ատեն մը, ամոթ ու արատ մը կթվեր այժմ իր հագեցյալ սրտին։ Իրեն հավասարներեն շատերու աղերսներն արհամարհած էր ու կզարմանար այս ռամիկ տղուն հաջողության համար։

Փոթորիկն իր գլխուն վրա և իր հոգվույն մեջ գոռացեր ու անցեր էր. ու մոռնալ կ'ուզեր ալ այդ վրդովյալ գիշերը. մինչդեռ նավավարն ընդհակառակն հիշել ու հիշեցնել կջանար այդ երանավետ ու արհավրալից վայրկյանները։ Իր տիրուհվույն շուրջը կդառնար շարունակ՝ կենդանի հանդիմանության մը պես անտանելի դառնալով։ Չէր կրնար երբեք պատմել իր երջանկությունն ու բախտը, չէր համարձակեր իր տիրուհվույն խոսիլ անոր նվաղման միջոցին պատահածներուն վրա. և իր սրտին ու մտքին մեջ ամփոփված այդ երջանիկ նվաղումը՝ իրականութենե ավելի երազի մը նման երևակայական բան մը կ'ըլլար, բայց ոչ առանց խորապես վրդովելու իր նոր արթնցող երիտասարդի հոգին։

Վայրկյաններ կուգար ուր ժամերով լռին նստելե վերջն իր խոհանոցի քովի փոքրիկ խուցի մեջ, ու աչքերովը պատկերացնելե վերջն իր անհավատալի երազին բոլոր մանրամասնություններն, անդիմադրելի բան մը կմղեր զինքն իր հանրմին երեսն ի վեր ըսելու իր սիրատոչոր իղձերն ու տառապանքը։ Վերջապես այդ ձյունաթույր ու ջերմիկ մարմինն ինքն էր փրկած ծովուն անդունդներեն և իրենը պետք էր լիներ ամեն բանե առաջ։

Լռին, առանձնակյաց ու վայրենի կդառնար հետզհետե։ Գործ չի կար տանը մեջ իրեն համար. մակույկը չէին նստեր և ավելի իրեն վարձք մը տալու համար վար դրած էին զինքը, քանի թե իրական ծառայության մը ակնկալությամբ։ Եղբարք զայս ու կարտաներ. այս ոդորմությունը ծանր կուգար իր սրտին։ Շատոնց պիտի խույս տար այս տունեն, եթե իր հանրմին տեսքեն կարոտ մնալը դժնդակ ու մահացու

զրկում մը չթվեր իրեն։ Իրավ է որ անվտանգ ազատեց էին փոթորկեն, բայց մահվան այսքան մոտ դեգերելը պակասության մը արդյունք համարված էր տանը մեջ ու նավավարն աչքե ինկած կզգար ինքզինքը։ Հանցավորի մը պես զայն մեղքնալնուն համար միայն չէին պատժեր։ Անշունչ ու անտեսանելի մնալու կջանար ալ. երբեք մտքեն չանցավ որ ապերախտություն մ'էր տնեցոց զինքն այսպես լքանելն. հիմա անօգուտ, բայց ատենոք անձնվեր եղող շան մը պես չէին վոնդեր զինքը, բայց չէին ալ ուզեր։

Այս ցավը՝ փոթորկին սարսափին և անոր պարգևած երանության ու անհամար իղձերուն հաջորդելով՝ խանգարեց իր տկար իմացականությունը։

— Վրան մեռաք եկավ,— կ'ըսեին զինքը մեղքնալով, մինչդեռ երիտասարդ այրին իր անտարբեր ու խուսափող վարմունքը կ'ավելցներ։ Խոսքը եղած ատեն, այդ վիճակին ծանրացումեն վախ կհայտներ միշտ։ Մյուսներուն՝ չափազանց կթվեր այդ հոռետեսությունը. իր վախին վրա կատակ կ'ընեին, կզվարճանային.

— Ձելլա հանկարծ ճիտդ փաթթվի։

— Մ'ըսեք, դող կ'ելլամ։

Կխնդային։

Դեպքերն իր վախին արդարացի ըլլալը հաստատեցին։ Նավավարին մտային վիճակը հետզհետե ծանրացավ։ Ինչպես հիմունքը խախտած շենքի մը մեջ զանազան մասերն իրարու վրա կզետեղվին խառն ի խուռն, միևնույն բանը կպատահեր գաղափարներուն ու զգացումներուն մեջ զորս ի հիմանց դղրդեր էին։ Տոքթորը կանչեցին, քառորդի մը չափ խոսեցավ հետը զանազան նյութերու վրա, բայց միշտ փոթորկին վրա էին նավավարին տված պատասխանները։ Բժիշկը խելագարությունը հաստատեց և առանց վարանելու պատճառը ցույց տվավ. փոթորկին գիշերն երկյուղեն խանգարում մը հառաջ եկած էր խեղճ տղուն մտքին մեջ։

— Բայց վախնալիք բան մը չկա,— կ'ավելցնե բժիշկը,— ավելի ապշության մեկ տեսակն է։

— Չէ՛, չէ՛, տոքթոր, տան մեջ վտանգավոր է, այնպես չէ՞,— կպընդեր այրին։

Վերջապես ճամփու դրին, մորը տունը ղրկեցին ապուշը։ Կյանքը ազատած էր, բայց իր հոգին արդեն կորուսած էր փոթորկին մեջ։

<1889>

ՍԽԱԼ

Ա

Կատեի, բայց ինչո՞ւ կ'ատեի այս կինը. ամեն հեղ որ փողոցին մեջ հանդիպեի իրեն, իր խոժոռ, թթված երեսը, փոթփոթած ճակատը, պրկված շրթունքը՝ արհամարհանքով լեցուն կզայրացնեին զիս։

Իբրև թե հետամուտ մեկն եղած ըլլայի իրեն, կամ բոլոր աշխարհ սիրո հայտարարություններ ունենար իրեն ընելու, զորս կանխավ կզգար, կգուշակեր, երեսը դառնություն մը կպատեր միշտ, անթափանց պատըրվակ մը, պատրաստած անույշ խոսքերդ բերնիդ մեջ ձգելու, արգիլելու համար։

Այս հակառակությունը մեր մեջ հետզհետե կսաստկանար. չէի ճանչնար զինքը. բայց իր ատելությունը, արհամարհանքը բացահայտ կկարդացվեր իր երեսին վրա. խուլ, անիմանալի թշնամություն մը, որ հետզհետե կծանրանար առանց երբեք տեղի տրվելու իմ կողմես։

Ի՞նչ կ'ուզեր այս կինը ինե. կզգայի, որ ծանր նախատինք մը պիտի ըներ, երեսս ի վեր պիտի պոռար բիրտ ձայնով եթե խոսելու առիթը ներկայանար երբեք։ Շոգենավին մեջ, կամուրջին վրա, ոտքես մինչև գլուխս կշափեր, ամփոփելով զիս իր մեկ նայվածքին մեջ, որուն առջև կպզտիկնայի ամեն ատեն։

Բ

Զինքը մոտեն ճանչնալու անհուն փափագ մը կուգար հիմա սրտիս, տենչանք մը, որ մարմաջի պես կխածներ զիս։ Ինքնիրենս այս կնոջ կյանքը, գոյությունը կստեղծեի, կձևացնեի։ Ճանչնալ կ'ուզեի զինքը առանց մեկու մը հարցնելու. հետո, ամբողջ աշխարհ մը, ամբողջ էություն մը շինելես վերջը իմ ուզածիս պես, իրականության հետ բաղդատել զայն։ Տեսակ մը նախախնամություն կ'ըլլայի, որուն տրված ըլլար ամբողջ կյանքեր ու միջավայրեր ստեղծել, մարդեր ապրեցնել, լացնել ու խնդացնել, իրական նախախնամության դեմ ոսոխ զորություն մը, մրցումի մը մեջ եղածին պես։

Եվ ահավասիկ ինչպես կ'երևակայեի զինքը. պետք էր երեսունհինգ տարու ըլլար, ոչ ավելի, ոչ պակաս. ոչ հիմար երիտասարդուհի, ոչ դժգոհ տանտիկին, ոչ հույս մը ըլլար և ոչ հիշատակ մը. ոչ անցյալին նայեր և ոչ ապագային. ներկան և միայն ներկան ըլլար ան։

Կ'ուզեի որ ամուսնացած ըլլար այս կինը. ինչո՞ւ համար. անոր համար թերևս, որ ամուսնացած մեկը չամուսնացածը կպարունակե արդեն իր մեջ. և իմ կա՛մքս էր, որ բան չպակսեր այս կնոջ. կ'ուզեի որ ամուսնացած ըլլար, որպես զի ազատությամբ խոսեի հետը, համարձակ, գրեթե անպատկառ։

Ճաշակի տեր կին մը ըլլալու էր, որ գիտնար հովանոցը բռնել, սիրուն փոքրիկ կոշիկ մը ունենալ և գուլպային երեսը ցույց տալ ամեն քայլափոխին, անհոգ ու անփույթ կերպով մը, գլխու թեթև ողջույնի մը մեջ սեղմեցնել կես ժամվան խոսակցության մը բոլոր հմայքը։

Գրել ու կարդալ չգիտնար բնավ, ո՜հ բնավ չգիտնար. կին մը ըլլար, որ իր լեզվին վստահեր միայն, որուն ձայնը ներդաշնակություն մը ըլլար ինքնին, ու խոսքերը ամբողջ քերթված մը, առանց իր գիտության։

Է՛ն մեծ մտմտուքս այն էր թե պե՞տք էր սիրտ մը տալ այս կնոջ. թեր ու դեմ ինչե՞ր կար մտածելիք։ Սիրտ մը տալ ու դժբախտ ընել զինքը. չտալ ու իրեն հանդիպողները դժբախտ ընել. երկսայրաբանություն՝ որուն առջև իմ նախախնամությունս կվարաներ. անհատական օգուտը և հանրության օգուտը կմաքառեին հոս ալ. ափսո՜ս, առանց ելքի մը հանգելու։

Հո՜գս. սիրտ չունենար թող ու երջանիկ ըլլար. աշխարհ իր հրապույրեն խաբվեր, սարսռար և անոր ցավովը գալարվեր, տանջվեր, ավերակներու թագուհի մը ըլլար, ի՜նչ փույթ, որուն փոշիները ու աճյունները ուրախութենեն դողային, երբ այս կինը քալեր իրենց վրա։

Գ

Շոգենավին վարի հարկի ընդարձակ համարին մեջ, ուր վառարանին ցոլքը կվազեր կվազվզեր ձարե բազմոցներուն վրա, այս բաները կմտածեի դիտելով շարունակ այս կինը հիմա այդտեղ, ճիշտ դեմս նստած, ու կշարունակեի կերտել զինքը, հիմար արձանագործ, սրբագրելով իր գոյությունը, բաներ ավելցնելով ու պակսեցնելով այդ կյանքին մեջ։

Այս գաղջ մթնոլորտին մեջ, ուր անիվներուն անընդհատ բոֆբոֆը կլսվեր միայն, միտքս կ'աշխատեր անսպառ գործունեությամբ. իր ազվորիկ մսոտ դեմքը կձգեի այնպես ինչպես որ էր արդեն. իր սև շրջազգեստը կպահեի. սև տաֆթեյե գլխարկին ժանյակներուն խառնվող ոսկի մազերուն չէի դպեր բնավ։

Հետո, զինքը ստեղծելեն վերջը, հարկ էր իր ամուսինը, տունը տեղը ստեղծել. ամուսի՞ն մը այս կնոջ. հիմա կզզջայի ամուսնացնելուս համար այս արարածը որ իմս էր, զոր իմ ձեռքս էր պահել անեղծ իր կույս գեղեցկությանը ու հրապույրին մեջ։

Շոգենավը կքալեր իր ջուրի անդուլ աղմուկովը լեցնելով ականջը։ Կինը կպահեր իր խոժոռ երեսը, և ես որ այնքան բարիք կկամենայի իրեն, որ այնքան կպրպտեի իր կյանքին խորը, է՛ն մութ անկյունները, ես որ մտքիս ցավատանջ հոգնությամբը և երկունքովը այնքա՛ն իրավունքներ ունեի իր վրա, ես անբարբառ կշարունակեի դիտել զինքը, մինչդեռ վառարանեն արձակվող բոցին նշույլը իր դեղին խոպոպիքը կհրահրեր ու այտերուն գունաթափ վարդի երանգը բոլորովին կկարմրցներ, կվառեր։

Դ

Հետը խոսելու անդիմադրելի պետք մը կզգամ. պետք մը ըսելու իրեն մեղմիվ. «Կ'աղաչեմ, թողուցեք այդ դառնացած դեմքը, չե՞ք գիտեր որ անույշ ժպիտ մը ո՜րքան պիտի վայելե ձեզի. կտեսնեմ որ սրտերնիդ կնեղանա այս առանձնության մեջ, ու ես պատրաստ խոսակից մըն եմ ձեզի»։ Ասոնք բոլորը բարձրաձայն ըսելու հիմար եռք մը կշարշարե զիս։

Նավամատույցները կ'անցնեինք մեկիկ-մեկիկ. Հիսար, Պոյաճքյոյ. ապահովապես Ենիմահալե կ'երթա ինքը՝ ճամփու վրա թողլով զիս որ պարտավոր եմ Պյոյուքտերե ելլել ու կիսաշեն, կիսավարտ թողուլ այս բոլոր կյանքի հորինվածքը։

Պյոյուքտերե հասնելուս ոտք կ'ելլեմ ակամա և դրացիս ինքն ալ կ'ելլե։ Դիպվածով միասին պիտի շարունակենք ճամփանիս. նավամատույցեն աջիս կդառնամ, ծառազարդ ճամփու մը հետևելով. ետիս կնայիմ ու կինը կշարունակե գալ մանրուկ քալվածքով մը, որ բոլոր ատելությունս կ'առնե կտանի, այնքան շնորհալի, բնական ու հրապուրիչ է իր անձը. կխորհիմ որ իմ բոլոր երևակայությամբս, այս ինքնատիպ ամբողջությունը չէի կրցած ձևացնել։ Կանգ կ'առնեմ տան մը դրան առջև ուր դատական խորհրդակցության մը համար կանչած են զիս, ուր ամբողջ ընտանիքի մը պատիվն ու հարստությունը կա միանգամայն վճռելիք, և ահավասիկ այդ կինը որ քովիկս կու գա կհասնի, կկենա սպասելով, որ բացվի դուռը։

Ներսը ճանչցանք դիրար. վերջապես. այս ընտանիքեն էր, որոնց դատին համար գացեր էի իմ կարծիքս տալ. սեղանի վրա դրված պաշտոնագրերու, վճռագրերու, տաճկերեն գրված փնջալ մեծ թուղթերու

շուրջը կխորհրդակցինք, կմտածենք, ջանալով փրկության միջոց մը գտնել կորսվելու մոտ այս հարստության համար. ու հիմա իր խոժոռ նայվածքը ո՞րքան կակուղցած քաղցրացած է երբ ինծի կդառնա. խընդիրք մը կա հոն լռին ու բացորոշ և ես կշարունակեմ կարդալ շուրջի թուղթերս, հարցումներով ընդմիջելով ընթերցումս ու այդ կնոջ դառնալով.

— Ամուսիններդ թողած եք, այնպես չէ՞, տիկին։

— Այո՛։

— Քանի՞ տարու էիք երբ սա թուղթը ստորագրեցիք։

— Հազիվ տասնչորս տարու, անչափահաս էի, չէի գիտեր ստորագրած թուղթս։

— Զավակ չունեցա՞ք երբեք։

— Ո՛չ, հազիվ տարի մը ապրեցա ամուսնուս հետ ու բաժնվեցանք. իմ բոլոր դժբախտությանս պատճառը ինքն էր։

Ու կատարյալ հարցաքննության մը կ'ենթարկեմ զինքը, ճիշտ ուրիշներուն պես, ու երկար ատենե ի վեր զիս տանջող հետաքրքրության վրեժը կլուծեմ ահա։

Ուրեմն դժբախտ էր իրոք. ամուսնացած էր՝ ամուսնության դառնությունները միայն տեսած ըլլալու համար, ու հիմա այդ կապը ամեն տեղ ընդքարշ կ'ածեր իրեն հետ բանտարկյալի մը ոտքին կապված շղթային պես. ասդին իրենց հարստությունն ալ դատական վտանգի մը մեջ ընկղմելու փճանալու վրա էր։

Նախախնամությունը ինծի պես չէր. այս կնոջ գեղն ու հասակը, պատրիքն ու հրապույրը չէին ազդած անոր վրա. անիկա իր ռամիկ պատուհասներուն ու ցավերուն համար բնավ խտրություն չէր դրած այս կնոջ նկատմամբ։

Ե

Հետո երբ դատն ստանձնեցի ու մտերմացա բոլոր ընտանիքին հետ, պատմեցի օր մը իրեն իմ նախախնամություն մը ձևանալու անհնարին երազս։

Եվ տեսա, որ այս կինը իր դատովը կ'ապրեր միայն. իր կորսվելու մոտ ապրուստին սարսափը իր միակ մտմտուքն էր, իր կյանքը այս հոգովը կլցվեր բոլոր. այս վեհին բոլոր մանրամասնությունները կզբաղեցնեին զինքը, աշխարհեն գրեթե անջատելով։

Դեմքին վրա դրոշմված խստությունը զոր այնքան ջանացած էի վերլուծել, որուն ամենեն բանաստեղծական բացատրություններ տալով՝ մեծցուցեր էի մտքիս մեջ, այս դատին պատճառած հոգն էր անվրեպ։

— Դատերնիս շահեցեք,— կ'ըսեր ամեն անգամ զիս տեսնելուն,— դատերնիս շահեցեք։

Ասով կ'ապրեր ալ, այս մտատանջությունը զինքը կսնուցաներ. դատարանի, կոչնագրի, վճռագրի վրա էր իր խոսքը շարունակ, և ես որ իմ նախախնամությանս մեջ սիրո, հրապույրի ճակատագիր մը սահմաներ էի իրեն, հիմա այս կնոջ անձուկ ու սովորական գոյությունը տեսնելով, կ'արգահատեի։

<1892>

ԱՌԱՋԻՆ ԶՐԿԱՆՔԸ

Քիչ մը ետքը պիտի արթննա հորանջելով ու երախայի բռունցքովը շփելով արտևանունքը։ Իր վստահող նայվածքը սենյակին մեջ շորս դին պտտցուցած ատեն՝ բոլոր խաղալիկները իրենց տեղը կարգով շարված պիտի գտնե, հաճոյակատար և անտրտունջ արարածները՝ որին ոտքը, որին թևը կոտրած՝ զինքը գոհացնելու առջի պատրաստակամության մեջ սպասելով։

Պառկած տեղեն՝ փոքրիկ սրունքները օդին մեջ երերցնե պիտի քիչ մը ու տոտիկներուն հետ ալ պիտի խաղա, հետո պիտի կանչե.

— Նե՜ննե՜ե։

Վարժված է, որ իսկույն պատասխանեն իր առջի կոչին, ու պիտի զարմանա քիչ մը, երբ որ Նեննեն ուշանա քովը վազելու։ Առաջին անգամն է, որ պիտի պատահի իրեն այս տարօրինակ ու անկարելի բանը, հապաղում մը իրեն դեմ՝ որ սորված է միշտ շքեղ անտարբերությամբ մը դիտել այն արտորանքը, որ իր մեկ ու կես տարու մանկիկի հրամաններուն համար կցուցվի միշտ։

Ու անհամբեր, դառնալով անկողնին մեջ, պիտի կանչե նորեն.

— Նեննե՜ե։

Ան՝ ժամ մը առաջ գնաց հեռացավ, այս վերջին անգամուն ալ նորեն ինքը քնացնելե ետքը մանկիկը՝ Պարտիզակի երգերովը, զոր ես ալ հիմա կամա ակամա գոց ըրած եմ քիչ մը։

Քունին մեջ մեղմիկ համբույր մը դնելե ետքը զավկին ճակտին վրա, որ քիչ մըն ալ իր զավակն է հարկավ, քաշվեցավ գնաց ոտքին մատներուն վրա կոխելով։

Նոր շրջազգեստը հագած էր, վերջին նվերը զոր մեկնելեն առաջ տվինք իրեն. ու, գեղը տանելիք սնտուկները կապած մեր տունեն մեկնելե առաջ, երբոր եկավ ձեռվընիս պագնելու՝ կինս ու ես արցունք մը կարծեցինք տեսնել իր գեղացիի աննենգ աչքերուն մեջ։

***

Արթննալուն՝ Նեննեն չի կար. բայց ծնողքը հոգածու՝ սպասեցին անոր զարթումին ու հազար տեսակ խաղերով ջանացին որ չփնտրե իր ստնտուն։ Իր մանկական ուշադրությունը զբաղեցավ ատոնցմով, բայց իր փոքրիկ կյանքին մեջ այս առաջին բաժանումին պարապը չի լեցվեցավ շուտով. ինչ որ ալ ըրինք, նորեն միջոց մը Նեննեն հիշեց. ան ատեն լացավ, պոռաց, կարծելով, որ մոտ տեղ մը պահվըտած էր միայն և զինքը զայրացնելու համար չէր գար իր քովը։ Վերջք կամաց-կամաց գիտակցությունը, անմոռանչ ու անխոս ընկճումը եկավ ավելի մեծ աղետի մը, անդարմանելի կորուստին գիտակցությունը։ Իր լացը, որ բարկության լացն էր մինչև այդ վայրկյանին՝ փոխվեցավ, հեզ ու խոնարհ դարձած, համոզված լացը եղավ։ Իր սուգը ամբողջ շաբաթներ տևեց։

Մարդկային զգացումները հողերու մեջ թաղված հին քաղաքներու կնմանին. որչափ որ պեղումներու շնորհիվ աչքի առջև ելլեն անոնք՝ այնքան իրենց խորունկությունը կպակսի։ Այսպես ալ հիմա իր կսկիծը նվազ արտահայտված՝ ավելի ինքնամփոփ ու ավելի սպառիչ էր ամեն չցուցադրված զգացումներու պես, վասն զի ավելի անկեղծ էր։ Բայց կարոտի վայրկյաններ կ'ունենար երբեմն այդ միջոցներուն, իր ձեռքի խաղալիկները մեկդի կնետեր, արհամարհելով ատելով՝ իր ուշադրությունը ու իր վշտին հիշատակը ձեռքեն խլող այս պզտիկ դավերը ու հատնումով ու անձկանոք լեցուն ձայնով մը կհարցներ.

— Նե՜ննե՜ն։

— Նեննեն պիտի գա։

Ա՛լ հիմա գիտեր այս խոսքին սուտ ըլլալը, բայց կհավատար ատոր. սուտը սփոփանք մը կ'ըլլար այս պարագային մեջ և մանկիկը ինքնախաբեության առաջին փորձը կուտար և անձնատուր կ'ըլլար ատոր. էապես մարդկային տկարությո՛ւն որ ահավոր ստուգություններեն կխուսափի միշտ, մխիթարության միջոցներու մեջ ամենեն պատիրը կուրությամբ կգրկե, այն անբուժելի հիվանդներուն նման որոնք իրենց վիճակին գիտակից՝ զիրենք մաշեցնող հիվանդության գոյությունն չունենալուն մտադյուր կհավատան, եթե ասանկ հավատքը մը ընծայվի իրենց։

Ամիսներ անցան ասանկով. ես կհետևեի իր վշտին այլափոխությանցը. իր ցավը երթալով կմեղմանար՝ առանց բոլորովին անհետանալու. ինչպե՞ս ըսեմ, կ'անուշնար գրեթե ու իր հառաչանքով լեցուն ձայնը երգի մը պես կկրկներ ատեն ատեն.

— Նեննե՜ն։

Տարի մը ետքը բերնի վարժությամբ մը միայն այս անունը կուտար. ժամանակը ահա ասանկ իր պաշտոնը կատարեց։

Հիմա մենք էինք որ իր ստնտուն կհիշեցնեինք իրեն։ Առջի հեղ այս անունը արտասանելուս՝ զարմանքով ու հարցումներով լեցուն աչքերը մեզի դարձան. հետո մտմտուքի մը մեջ ինկավ պահ մը ու քիչ վերջը իր փոքրիկ գլուխը թոթվեց մեկդի ընելու համար գարձես իր միտքը լլկող շարշարող գաղափարը ու խաղալիկները պահանջեց մենե։

Հայտնի եղավ, որ իրեն համար Նեննեն դադրած էր իրականություն մը ըլլալե, հիշատակ մը դառնալու համար։

***

Հինգ տարի վերջը Նեննեն վերադարձավ Պարտիզակեն։ Յազմա կապած, շալվար հագած անճանաչ կնիկ մըն էր. իր արևակեզ դեմքը տգեղցեր ու պառվեր էր. ո՞ւր էր մեր մոտ եղած ատենվան շնորհալի ու երիտասարդ կինը։

Հետո այս հինգ տարիները անջրպետ մը բացեր էին. անիկա որ մեր ընտանիքեն էր ատեն մը, հիմա օտարական մը դարձեր էր. երկու կողմեն կզգայինք ասիկա։

Բայց երբ որ Արամիս ձայնը լսեց՝ չդիմացավ. իր չնչին նվերներու տոպրակը գետինը մոռցավ, անոր քով վազելու համար։ Դեռ միտքս է տեսարանը. Արամս նախ վախցավ, ետքը զարմանալի զգացում մը ունեցավ այս կնոջ դեմ.

— Նեննեդ եկա՛վ,— կ'ըսեինք իրեն։

Ստնտուն համբույրներով կծածկեր տղուս երեսը, բայց փոխադարձուէ սիրո արտահայտություն մը չտացավ. մանուկը հետաքրքիր՝ մանրամասն քննեց այս կնոջ տարօրինակ տարազը ու միջոց մը՝ յազմաճ վար քաշեց գլխեն. սա եղավ իր միակ շարժումը, հետո ձգելով Նեննեն՝ իր մորը քով վազեց։

Կարծեմ թե այն քանի մը օրվան մեջ որ այս կինը մեր տունը մնաց, իրենց հարաբերությունները բարվոքեցան քիչ մը. վերհուշումը եկավ, անցյալին եղծված գիծերը տարտամ կերպով մը ճշտվեցան մինչև

ապտիճան մը իր մտքին մեջ. բայց ասիկա նոր հոշոտում մըն էր, որ եղավ իր սրտին համար։

Անիկա իր երախայի երևակայությամբը դյութիչ պատկեր մը պահած էր իր Նեննեեն ու ահա իրականության մեջ այդ պատկերը իր շնորհազուրկ ու ծիծաղելի իսկությանը մեջ երևան կուգար. այս կի՞նն էր ան, որուն համար այնքան արցունք թափած և կսկիծ զգացած էր։ Ավելի աղեկ չպիտի՞ ըլլար, որ անեղծ մնար իր մանկական հիշողության մեջ մնացած դիմագիծը։ Հիմա պզտիկ գորով մը կսկսեր ցուցնել անոր դեմ, բայց ասիկա ավելի պարտքի ձևով բան մըն էր քան ինքնաբուխ սեր մը. իր տղայական գիտակցությունը կ'ըսեր իրեն, որ ապերախտ մեկը պիտի սեպվեր թե որ երես դարձներ այս աղքատիկ կնկան, ու միմիայն այս կշտամբանքեն ազատելու համար կհոժարեր ինքն ալ փոխադարձ համբույր մը առնել իր Նեննեին սևցած այտերեն։

Եվ խորհեցա ինքնիրենս, որ բաժանումի մը ցավը վայրկյանին միայն կրնա դարմանվիլ. հապաղված վերադարձ մը նոր կսկիծ մը կուտա՝ քաղցր հիշատակ մը եղծանելով։

<1902>

ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄԸ

Կնոջական աշխարհը զոր էրիկ մարդիկ կազմակերպած են ուզածնուն պես, բռնադատիչ ու ճնշող կին արարածին դեմ՝ հարկավ ամենեն անիրևակայելի ընդվզումներու և կեղծիքներու աշխարհն է։

Ահա հատ մը անոնցմե՝ զոր ամուսնացած կին մը պատմեց ինծի անցյալ օր, այցելության մը պահուն։ Հիմա որ տարիքը առած մեկը կսեպվիմ՝ կիները ալ չեն քաշվիր իրենց գլխեն անցած դարձածը ինծի խոստովանելե։ Գիտեն որ կսիրեմ իրենց հոգեկան հարցերովը զբաղիլ, այդ խուլ պայքարներուն պատմագիրը ըլլալ։ Մանավանդ որ իմ մեծ ներողամտությունս իրենց մեղանչումներուն համար տեսակ մը հրավեր է խոսելու։

Մեծ պատահարները զիս անտարբեր կթողուն. բայց մանր դեպքերը՝ շնչին ուրիշներու աչքին՝ լուրջ խորհրդածություններու նյութ են ինծի։ Դասերը որ կքաղեմ անոնցմե՝ վրդովի՛չ պայմանադրական կարգ ու սարքի կուսակցներուն՝ թանկագին են ինծի համար։ Անոնք կուգան հաստատել այն բարոյականը, որ իմս է, ճիշտ ներհակը և գլխավորը

հանրության մեջ ընդունվածին. իմ բարոյականս, որ կկայանա Իրականը՝ Սուտին, Ճշմարիտը՝ Կեղծին վերադասելուն մեջ ամեն տեղ և ամեն ժամանակ։

***

Այս պզտիկ դեպքը ինծի պատմողը շնորհալի կին մըն է, քիչ մը դժգույն, քիչ մը նիհար, աչքին կոպերը քիչ մը կտրած, քիչ մը խուսափող նայվածքով, այն՝ որ վեհերոտներու հատուկ է, քիչ մը ծիծաղող վրաս, վասն զի կնոջական հոգույն ամեն առեղծվածները լուծողի հովեր կ'առնեմ։

— Պարո՛ն,— ըսավ անիկա երբոր մյուս հյուրերը մեկիկ-մեկիկ ձգեցին գացին և մինակ մնացինք երկուքնիս սրահին մեջ,— այս վայրկյանիս ծանրակշիռ խոստովանություն մը պիտի լսեք ինե։ Այո՛, պարոն, ես ամուսնացած կին՝ օր մը էրկանս դեմ անհավատարմություն գործեցի։

Կսպասեր որ աղաղակ մը արձակեմ կամ վրդովումի նշան մը տամ. ես, ընդհակառակը, ոտքս ոտքիս վրա նետած կենցաղագետ մարդու վարժությամբ՝ պատասխանեցի.

— Տիկի՛ն, ձեզի պես գեղեցիկ կնոջ մը համար այդ եղելությունը զիս չի զարմացներ բնավ։

— Կ'աղաչեմ, կ'աղաչեմ,— կրկնեց անիկա անհամբերությամբ, թողուցեք ձեր կնամեծար մարդու փաղաքշանքը. այս վայրկյանիս ստածող մարդուն հետ խոսիլ կփափագիմ, կ'ըսեր որ անհավատարիմ գտնըվիլս, ես որ պատվավոր կին մըն եմ, ձեզ չի զարմացներ, և սակայն իմ գործած անհավատարմությունս ձեզ պիտի ապշեցնե անպատճառ, վասն զի էրկանս ներկայությանն էր...

Տարակույսի նշաններ դեմքիս վրա։

— Եվ նույնիսկ օգնությամբը,— ավելցուց անիկա։

— Կատակ կ'ընեք, տիկի՛ն։

— Կրկնեմ, ի՛ր օգնությամբը, բայց ո՛չ հարկավ իր գիտությամբը. փառք աստուծո, վերջապես քիչ մը զարմացած կթվիք, կ'ուզե՞ք խոստովանությունս լսել և ի հարկին թողություն տալ։

— Առա՞նց ապաշխարության,— հարցուցի խնդալով։

***

Գիտեք որ էրիկս դրական մարդ է, պե՞տք է արդյոք բացատրել թե ի՞նչ է դրական մարդը. մեր վաճառատան տոմարակալը և բոլոր պաշտոնյաները անոր տաղանդին վրա կհիանան և չափազանցություն մը չէ

ատ։ Ամուսնությանն թվականին պարզ խառնիպան մըն էր. հիմա արդեն առաջնակարգ հայ վաճառականներեն է։ Կատարյալ ամուսին մըն է այնչափ, որչափ որ դրական մարդու մը կվայելե ըլլալ. տարին չորս գլխարկ և վեց շրջազգեստ կշինե ինծի. մանր մունր արդուզարդի ծախքերն ալ հոժարությամբ կվճարե։ Վերջապես նյութական բարեկեցության մը ամեն պետքերուս գոհացում կու տա և այսպիսով իր ամուսնի պարտականությունները լիովին կատարած ըլլալու համոզումը ունի։ Պետք է ավելցնել որ կսիրե զիս. վասն զի կթվի թե իր արուի իտեալին պատշաճ մարմնական առավելությունները ունիմ։ Ասոր մեջ ալ դրական և հաշվի մարդն է նորեն. պարտիի և պահանջեի գլուխները հավասարեցնելու ճարտար մարդը։ Ամուսնական կյանքին համար անբավական հատկություն մըն է սա՝ և չնչին անհամաձայնություններ, որոնց պատճառը չ'ըմբռներ, անպակաս են մեր մեջը։ Արտաքուստ բարեկիրթ ձևեր ունի. փրոք բուռն և զայրացկոտ է. նախանձն ալ մեծ բաժին ունի իր ցասումներուն մեջ։

Ես երևակայությամբ ապրող կին մը չեմ. բայց կկարծեմ որ մարդուս համար ուտելե խմելե, հագվիլ շքվելե ավելի բան մը կա միշտ. ամուսնությունը միայն մարմնական մերձեցում մը չեմ նկատեր, այլ հոգիներու ու զգացումներու միություն մը։ Հոս է, որ զիրար հասկնալու կարող եղած չենք և ասկե ծագում առած են այն վեճերը, որ մեզ իրարմե բաժնող անջրպետը խորունկցուցած են հետզհետե, առանց սաթքենես, որ մարմնական հանձնառութենե մը ավելի խղճմտանքի հանձնառություն մըն է։

* * *

Երկու տարի կա, Պյոյուքտերե յալը մը գընակեինք. հեռավոր ազգականներես երիտասարդ մը հոն հաստատված էր, մեր տունը հաճախել սկսավ։ Կանացի բնազդովս խսկույն գուշակեցի որ մեծ տպավորություն մը ըրեր էի իր վրա։ Ան ալ վաճառականությամբը կզբաղեր. բայց բնավորությամբը՝ ո՞րչափ հեռու ամուսինես. ավելի մոլորած մըն էր առևտուրի ասպարեզին մեջ քան թե անհողդողդ ուղևոր մը էրկանս նման։ Խորհող քան թե գործող, զգացող քան թե արտահայտող մարդ մըն էր անիկա։ Իր սնփությամբը տակավ կփնտրեր հոգեն մնացած հաբստությունը, երբոր ուրիշներ մեծամեծ գումարներ կդիզեին նույն առևտուրին մեջ։

Եվ գոհ էր, կվախնամ ըսելու երջանիկ, այսպես ըլլալուն համար։ Խիստ լավ կխոսեր անգլերենը, քանի մը տարի Մանչեսթր ապրած ըլլալով, քիչ մը նկարել գիտեր, ամենեն ավելի երաժշտության անձնատուր էր։ Պշրանք մը կար կարծես այս տղուն կյանքի ըմբռնումին մեջ, պըշրանք, որ ազնվական արհամարհանքե մը կձևանար այն բիրտ ուժերուն դեմ, որոնք մարդկության ճակատագրին մեջ այնքան մեծ տեղ մը կբռնեն։

Քիչերն իրեն չափ գիտեն աղվոր խոսիլ. անակնկալներով դրվագված, ապրված կյանքի հատվածներով երբեմն խորունկ, երբեմն զվարթ դիտողություններով պճնված խոսակցություն՝ որուն համար հոգի կուտամ ես։ Իմ առանձնությանս համար բաղձացված ընկերն էր, զոր դիպվածը դեմս հանած էր։ Ի՞նչ վտանգավոր դիպված սակայն. լերան վերելքները հմայիչ տեսարաններ կպարգևեն մարդուս, բայց այդ սարավանդներուն քովերը ո՞րքան անդունդներ կպահվըտին. վա՜յ հոնկե սահողին։

Կզգայի որ իմ ոտքս ալ կսահեր և դեմինս ատով համարձակություն կ'առներ։ Անոր աղերսներուն մեջ, նայվածքով պատմված, կես բառերով արտասանված, վեհերոտ ու քաղցր աղերսներ, իմ ընկճվիլս կտեսնեի։ Իր լուռ պաղատումը զիս կպաշարեր առատու իրիկուն, տունը, փողոցը, ամեն ժամ և ամեն տեղ, չորս դիես կմոտենար, մեղմիվ բայց անընդհատ, ջուրին պես աճելով շարունակ։ Եվ ես կոչում կ'ընեի իմ պարտավորությանս, իմ պատվիս, բոլոր այն սկզբունքներուն որոնցմով մեծցեր էի, իբրև թե այս բարձրացող ջուրին դեմ մինչև ոտքիս մատվընեներուն վրա կենալով բարձրանայի ես ալ, դիմադրելու և չընկզմելու համար։

Օր մը նամակ մը տվավ ինծի այն անդիմադրելի ու խանդոտ լեզվովը գրված որ իրեն հատուկ էր։ Ծրջանկության կոչո՞ւմս, որուն խորունկ արձագանքովը բոլոր հոգիս դղրդաց։ Վճռական վայրկյանն էր աս կանացի կյանքին մեջ։

* * *

Իրիկվան ճաշեն վերջը եկավ պատասխան փնտրելու։ Ամուսինս պրիճ խաղալու գացած էր գրացիի մը տունը։ Որոշումս տվեր էի արդեն։ Ամառվան այն ոսկեհուռ ու սարսռացող գիշերներեն մեկն էր, որուն մեջ մարդերը և իրերը կշփոթվին, կ'անոսրանան, կ'ննջվիանան, ցնորքի և երազի կվերածվին։ Այս դյութիչ աշխարհը ինծի կրկնապես զմայ-

լելի կ'երևար, վասն զի այդ պահուն հրաժեշտ պիտի տայի անոր, քարափի վրա կեցող, շոգենավ մտնելու պատրաստ ճամփորդին պես, որ օտար երկրի մը հաճույքներեն ձեռք քաշելով իր հայրենիքը կվերադառնա։

Երկու բառով, այն հատու ու վճռական բառերովը որոնցմով կիները իրենց անդառնալի կամքը կհասկցնեն երբոր ուզեն՝ ըսի բարեկամիս, որ պետք էր հրաժարիլ անօգուտ հետապնդումեն ա՛յնչափ անպատշաճ իրեն, որ էրկանս մտերիմն էր, որքան անվայել ինծի, որ պատվավոր կին մըն էի։ Զպահեցի իրմեն որ միակ անձն էր ինքը, զոր հոգվույս ամենեն մոտիկը նկատելուն տկարությունը ունեցեր էի պահ մը, և ճիշտ ասոր համար, պետք էր որ այլևս ոտք չկոխեր իմ տանս սեմեն ներս։

Մեկ վայրկյանի մեջ դահիճի պաշտոնս կատարեցի։

Զգեց գնաց առանց բառ մը արտասանելու, զարմացնելով զիս իմ դյուրին հաղթությանս վրա։ Զղջումով խառնված թախիծով մը աչքե անցուցի այդ երիտասարդին հետ անցուցած աղվոր ժամերս. իրո՞ք բաժնվեր էի իրմե. ժամ մը վերջը նամակ մը անկե։ Դողալով բացի զայն։

Քանի՞երորդ անգամն էր արդյոք որ կկարդայի զայն, երբ ամուսինս սենյակես ներս մտավ հանկարծ։ Հանցավորին անգիտակից շարժումովը նամակը իսկույն պահեցի. քովս վազեց.

— Ի՛նչ է այդ պահածդ, ուսկի՞ց է։

— Ոչինչ։

— Ի՞նչպես ոչինչ, տո՛ւր որ տեսնեմ։

— Ոչինչ ըսի քեզի։

Ետ գնաց երկու քայլ, մեկ նայվածքով ոտքես մինչև գլուխս չափեց զիս իբրև թե հասկնալ ուզեր թե արդյոք միևնույն ա՞նձն էի ես, որուն այնքան վստահություն ցույց տվեր էր։ Տարտամ կերպով մը՝ բաներ մը կգուշակեր առանց հավատալ ուզելու։ Դեմքին վրա կկարդայի նախ՝ ապշություն մը, հետո՝ պզտիկ վարանումի խառնված մտքի աշխատություն մը, որով հասկնալ կուզեր անցած դարձածը, և ավելի ետքը՝ լությունը, որով հասկնալ կուզեր անցած դարձածը։ Ուրիշ ատեն պիտի դողայի իր առջևը. չեմ գիտեր ինչո՛ւ ծումը՝ արդեն ձեռք բերված իր դրական մարդու կտրուկ տրամաբանությամբը։ Ուրիշ ատեն պիտի դողայի իր առջևը. չեմ գիտեր ինչո՛ւ այս անգամ, կարճ հասակովը վրաս խոյանալու պատրաստ, արյուն լեցված ու կապիճեն դուրս ցատքելու մոտ աչքերովը գարշելի և քիչ մըն ալ ծիծաղելի երևցավ աչքիս։ Ես ալ ինքնիրենս հարցուցի որ այս ռամիկ էակի՞ն համար բոլոր երջանկությանս զոհողությունը ըրեր էի։ Հասկցավ կարծես թե իր ըրած դատաստանս և ավելի կատղեցավ։

— Սիրող մը ունիս, ո՞վ է, պիտի ըսե՛ս։

— Սիրող չունիմ։

— Թուղթը, շո՛ւտ։

Իմ մեջս ալ հակառակության ոգին հանկարծ բռնկեցավ. ոտքի ելա։

— Պիտի չտամ։

Այն ատեն դեմքին այլակերպությունը զարհուրելի եղավ. բերնեն թուքեր սկսան ելլել հայհոյություններով խառնված։

— Կճանչնամ սիրողդ. սա ազգականդ չէ՞ մի. արդեն կասկածեր էի քիչ մը։

Լուռ մնացի։

— Ան է սիրողդ. սիրո՛ղդ, հասկցա՞ր։

Դարձյալ լություն։

* * *

Մոլեգին վրաս վազեց, ոտքի ուժգին հարվածով մը գետին գլորեց զիս. ցավը սրտիս զարկավ. նամակը կփնտրեր վրաս. բոլոր տկարությանս մեջ դեռ կդիմադրեի, կարկամած մատներուս մեջ համառ հուսահատությամբ մը սեղմելով թուղթին կտորը։ Հետո ծեծել սկսավ զիս։ Իր արու անասունի նախանձը՝ թումբերը խորտակած հորձանքի մը բոլոր զայրույթովը կպոռթկար.

— Սիրո՛ղդ, սիրո՛ղդ։

Գետինը երկնցած, մարմնակործան, այս բառը բոլոր ցավիս սաստկության մեջ անուշ մեղեդիի մը, սփոփանքի մը պես կու գար ինծի, այո՛, վերջը-վերջը սիրող մը գտեր էի, հոգիիս մեկ ընկերը և զոր ինե վանելու, հեռացնելու հիմարությունը գործեր էի։ Մարմնիս էն տանջված վայրկյանին այն սիրուն բոլոր քաղցրությամբը կվրդովվեի։ Ո՞րքան Թոլսթոյ իրավունք ունի «Քրեոյցերի Սոնատ»ին մեջ պնդելու, որ հոգվույն անձնատվությունը մարմնույն անձնատվութենեն ավելի մեղավոր է։

Կերած ծեծիս մեջ՝ անարգված զգացումներուս բոլոր սաստկությամբը՝ ինքզինքս սիրած երիտասարդիս գրկին մեջ կզգայի և. պատրաստ անոր զոհվելու, թեև ցավին չդիմանալուս համար ալ միևնույն վայրկյանին բարձրաձայն կու լայի։

Խոշտանգումը մարմնին ահեղ ու խորհրդավոր արարողության մը պես զիս սիրածիս կզուգավորեր. տեսակ մը պսակ՝ զոր նախանձը կդներ մեր գլխուն վրա և մեզ իրարու կկապեր անդարձ։ Երջանիկ և նվաղած էի։ Ան մարտիրոսներու զգացածին նման զգացում մըն էր իմինս, տեսակ մը երանություն, որ դեմքիս վրա՝ արցունքիս մեջեն՝ պայծառ կերպով կցոլանար և ա՛լ ավելի կզայրացներ էրիկս։ Կհասկնամ հիմա սուրբերը տանջողներուն բարբարոսությունը։

Ապտակը կ'իջներ երեսիս, հետո կռուփի հարվածներ կոնակիս, մեջքիս. միսերուս կսկիծը հոգվույս մեջ հեշտության մը պես կծավալեր ու սիրած երիտասարդիս անձնատուր կ'ըլլայի բոլորանվեր։ Տանջանքիս էն սաստիկ ու կսկծալի րոպեին նահատակության, գերագույն վայելքի մը սարսուռովը կդողայի և էրիկս եղավ այս երջանկությունը պարգևողը ինծի։

Վերջապես ձեռք անցուց թուղթը, ապշությամբ ու ամոթով լեցվեցավ, գտնելով անոր մեջ ոչ թե հանցանքիս, այլ անմեղությանս ապացույցը. զղջաց ըրածին, ոտքս ինկավ, ներում խնդրեց։

— Դուն իմ հավատարիմ ու պատվավոր կինս ես,— ըսավ ինծի, ճիշտ այն վայրկյանին, որ գուցե պատվավոր, բայց անհավատարիմ եղած էի իրոք։

<1912>

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

ՊՈՒԵՏ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՔՅԱՆ

Տասը տարի կա. օգոստոսի կիզիչ արևին տակ, Ղալաթիո կամուրջին վրա, լայն ու հաստ թիկնոցի մը մեջ, ցուրտ չառնելու սարսափով աղեկ մը փաթթված, ու գլխուն վրա բանալով ահագին հովանոց մը որ նախապատմական օդապարիկի մը տպավորությունը կթողուր տեսնողներուն վրա, միջահասակ, մարմնեղ, երեսը մազով մորուքով ու ակնոցներով ծածկված մարդ մը՝ հանդարտաքայլ կհառաջանար։

Ամեն ոք կանգ կառներ, ու ես ալ ամենուն պես, դիտելու համար տարօրինակ անցորդը՝ իր միևնույն ատեն ցուրտի ու տաքի դեմ առած չափազանց զգուշությանը, խոժոռ ու վախկոտ դեմքին վրա նկարվող՝ ավազակներու մեջ դիպվածով ինկած մարդու ապշությանը համար։

Միսաքյանն էր։

Կամուրջին վրա ամենքը կաճապարեին կվազեին իրենց գործին ժամ առաջ հասնելու և ափրիկյան տաքե մը ազատելու ջանքով. ինքը փույթ չէր ըներ. տոտիկ-տոտիկ, բայց շուրջը դիտելով շարունակ, կասկածելով, վախնալով, որ առանց իր տեսնելուն մեկը չմոտենա հանկարծ իրեն ու վատությամբ դաշույնի հարված մը տա կոնակին։

Այս մարդը գրական ասպարեզին մեջ միևնույն էր ինչ որ էր Ղալաթիո կամուրջին վրա։ Իր անունն հալածող գովեստներուն ու պարսավներուն մեջ համաձայնություն կա միշտ դժգոհ ու մեկուսի բնավորությանը վրա։

Ճշմարտությունն այն է, որ հեք մարդը մեծահարուստ իշխանի մը շռայլությամբ իր կյանքին մեծագույն մասը վատնած էր գրականու-

թյան մը համար որ իրմե կհեռանար շարունակ ու ապերախտի վրա աշխատած ըլլալու դառնությունը կթողուր իր սրտին։

Ծերունի սիրահարի մը նախանձոտ մոլությամբ փարած էր այդ գրականության, որ զինքը երեսի վրա կթողուր նորեկներու, պատանիներու հետ զբոսնելու ու անոնց հաճույք պատճառելու համար հարափոփոխ արդուզարդով, նորաձևություններով, քերականական տարազը կմերժեր և կմերժեր այն գոց սենյակի մը մեջ վաթսուններց մարդու մը հետ փակվելու առաջարկը որ պատվելիին էր։

Այսպես, չկրնալով հետևիլ ինքն ալ մշտնջենական երիտասարդուհվույն որ իր նորանոր տարփանքներովը հերատուկ կնոջ մը ձևերը կառներ իր աչքին, Միսաքյան ամեն դառնացյալ սրտի պես, անունն անգամ լսել չէր ուզեր այս անհավատարիմ գրականության, որուն գայթակղությանց արձագանքը իր սենյակին դռան չհասած պետք էր մարեր։

Կհասկնանք ուրեմն եթե ոչ կ'արդարացնենք պատվելիին քեն պահող տղու գոյությունը։

Իր դժբախտությունը եղած է իրենը կարծել ինչ որ իրոք ամենունն էր և ամենունը պետք է մնա։

Ապաքեն անոր մեկուսացմամբը հայ գրականությունը կորուստ մը ըրած չէ. հեռացումը ազգային կյանքեն՝ այնքան կտրուկ և միանգամայն այնքան անձուկ մտքով մը տեղի ունեցած է որ ետքեն, ուզեր իսկ, պիտի չի կրնար վերադառնալ. ու երբ օր մը հանկարծ ելլեր սենյակեն դուրս ման գալու համար գրական ասպարեզին մեջ, ո՛չ ծանոթ դեմք մը պիտի հանդիպեր հոն և ո՛չ հասկցող մը իր գիտցած լեզուն։

Ատենով իր գրած աշխարհաբարը, որուն չենք կրնար չհավնիլ այսօր իսկ, իր անունը անկորուստ պիտի պահե, բայց պետք է զեղչել, մեծապես զեղչել, իրեն թեկնածու եղած գրագետի, համայնագետի և իմաստասերի համբավեն։

<1891>

ԲՅՈՒԶԱՆԴ ՔԵՉՅԱՆ

Արևելքի խմբագրապետը — հորմեհետե Արևելք խմբագրապետ մը ունի — չի ստորագրեր իր հոդվածները. պետք չունի ատոր. այն ողջմտությունը որ իր գրությանց ամեն մեկ տողեն կթորե, կարտահոսի, կզեղու և ընթերցողը խեղդել կսպառնա, կմատնե զինքը. և ահա ատոր համար է որ Բյուզանդ Քեչյան անունը Պոլսո լրագրության մեջ չի կարդացվիր հաճախ. և նորեկ մը գրական ասպարեզին վրա թերևս անոր գոյության կասկածն իսկ չունենա։

Բայց եթե անունը չի լսվիր ստեպ, իր հոդվածներուն արձագանքը, շատ անգամ պատճառած ցավը՝ կհասնի կերկարի ամենուրեք. հարվածին սաստկությենեն, տրվելու ձևեն՝ բազուկը կճանչցվի և այդ բազուկը ամենեն կարշնեղ թևն է, ճշմարիտ ըմբիշի բազուկ, որո մատներուն խստության տակ, կզարմանամ թե գրիչը ի՞նչպես չի փշրվիր ամեն վայրկյան։

Այն տրամաբանության թանձրացյալ զանգվածը, որ Բյուզանդ Քեչյան կկոչվի, հակասության հաղվագյուտ մեկ մարմնացումն է միանգամայն։

Երբեք պաշտպանողական ոգին այսքան հարձակողական մարդու մը մեջ մուտ գտած չէր. ահա այն տպավորությունը, որ իր հրապարակագրի կյանքը կթողու զինքը ուսումնասիրողին վրա։

Ո՞րն է այս հակասությունը տարբաղադրված ատեն ի հայտ գալիք անկեղծ անհատականությունը։

Ծայրահեղ արմատականի մը վայելուչ հարվածելու տրամադրությենեն դատելով՝ իր հետախաղաց դեգերումները չեն կրնար իր բուն համոզումը, իր ճշմարիտ դավանանքը ըլլալ։

Բայց երբ կտեսնենք թե բարոյականի և պահպանողական գաղափարներու այս համոզիչ ջատագովը, որ մեր հասարակությենեն դուրս ալ ամեն կողմ, իր պաշտպանած և ջատագոված գաղափարներուն հաղթանակովը կհրճվի ու պարտությամբը կդառնանա, որ համաշխարհային պարգևաբաշխության հանդեսի մը նախագահի մը պես՝ մեկուն մրրցանակ և մյուսին հանդիմանություններ կու տա այս միամտությունը կզարմացնե մեզ, և իր հոդվածները կարդացողները այս հրապարակագրին մեծ անունը լսելով, կերևակայեն ալևորյալ պատվելի մը, Միսաքյան մը իր տաղանդովը, Տերոյենց մը, աններող ատելություններովը, այնքան որ զինքը տեսնելեն վերջն ալ, իր սև մորուքը ներկված, և երիտասարդի առուգությունը դեղորեից շնորհիվ ձեռք բերված արվեստակյալ կորով մը պիտի համարեին։

Եվ այս է ճակատագիրը որ իրենին պես մեծ իմացականությունները չեն կրնար շեզոքանալ. ասպարեզ պետք է իրենց, աջը թող ըլլա

թե որ ձախը չկա. և այն ատեն, իրենց բնականին ներհակ ուղղության մեջ ալ ի հայտ կբերեն այն տաղանդը զոր իրենց ճշմարիտ կոչումին պիտի ծառայեցնեին։

***

Իր դեմքը ոճին խստությունը չունի. գիրուկ, հսկա, խնձորի պես կլոր գունագեղ երես մը, որուն վրա ամեն ինչ հեզություն, չափավորություն է. բացի ճակատեն որուն վրա տագնապյալ մտքի մը բոլոր վրդովումները կկարդացվին։

Ոչ ոք իրեն չափ քաջ գիտե ոսոխ մը պարտության մատնել, հարված ին ուժգինները ուղղելով տկարագույն կողմերուն, տասն և հինգ տարվածին մեջ ստացված սովորիե իվեր գրական կրկեսին, ամենօրյա պայքարին մեջ ստացված սովորություն մը։

Այս պայքարը իր հրապարակագրի բոլոր գոյությունն է. իր հոդվածներուն հայտնի երկարությունը՝ փաստորեն առարկայությանց թվույն նեղ կու գա միշտ. և կզգաս, որ գրիչը ակամա կանգ կառնու ամեն անգամ։

Իր լուրջ ու ծանրախոհ հրապարակագրության անմատչելի չեն սակայն ծիծաղն ու ժպիտը. անշուշտ Աբեղյի խմբագրապետը քիչ անգամ կխնդա. բայց եթե երբեք զիջանի ծիծաղիլ, կատակ ընել, կատարյալ նրբամիտ և զվարթախոհ մարդու մը հայտնության անակնկալը կու տա ընթերցողներուն։

Ո՞րչափ ավելի պիտի սիրեինք այս գրական վաստակավորը թե որ խոժոռելե ավելի դյուրությամբ ժպտիլ գիտնար, դատապարտելե ավելի հեշտիվ ներել, և զարնելե ավելի հաճույք զգար փայփայելե։

Բյուզանդ Քեչյանի գրականությունը կարծր ու անողոք սրտի մը ցուրտը ունի, պողպատի մը ցուրտը. թերևս անոր համար որ իրեն բացին ինկող գոյության մը ներկան և ներկայեն ավելի մութ ապագան կընդնշմարե, ինքը, որ ապերախտ կովանի մը վրա մաշեցնելու դատապարտված է հմտության և առուգության պաշար մը, որով աշխարհներ կրնար շինել և որով իրեն համար հազիվ թե տնակ մը կառուցած է։

***

Կըմբռնեմ ուրեմն իր գրականության բոլոր կարծրությունը, և բանաստեղծության և երևակայության այն պակասը որ իր գրվածոց մեջ այնքան զգալի է։

Գրական ասպարեզը բնտրած լինելն արդեն՝ երևակայության ահագին մեկ սխալը կգավանի ինք և բնական է որ ոխ պահե այդ թշնամվույն դեմ։

Իր լեզվովը — վասնզի հատուկ լեզու մը ունի այս հրապարակագիրը — հստակության և հոծության անհասանելի զուգավորման հարցը լուծած է։

Արվեստի, գեղեցկագիտական զարտուղություններու չի զոհեր երբեք իր պարբերության կոկիկ ու պարկեշտ դարձվածքը և իրավունք ունի այսպես ընելու. խմբագրապետ մը հիացվելե ավելի հասկցվելու պետք ունի։

Գրագիտական նրբություններու և մանվածապատ արդուզարդերու սովորությունը չունին իր ամենօրյա հոդվածները, այն գործավորուհյաց պես որք ամեն օր Պոլիս գործի երթալու ստիպված՝ ամիսն անգամ մը փողոց ելլող տիկիններու փերևեստումները ի բաց թողած են։

Բայց այս պարզությունը զուրկ չէ ճաշակե, արժանապատվութենե և շատ անգամ նորութենե. Աբեղյի խմբագրապետը որքան ալ բեռնավորյալ ըլլա, խղճի պարտք մը ի գործ դնելու գիտակցությամբ, միշտ ուշադիր ու խնամոտ գտնված է իր արձակին, որ իր ամենօրյա զենքն է, և որուն գեթ սուր և հատու ըլլալուն ջանք խնայած չէ մինչև ցարդ։

***

Իր ապագա՞ն։

Թերևս գործե քաշված, եկամուտի տեր մարդ մը, որ սակավապետ կյանքի մը և խնայողական ամենանուրբ հաշիվներու, գյուտերու, հնարքներու շնորհիվ ձեռք բերած հարստության մը արդար վայելումը կընե, որ բնակած գյուղեն քաղաք չիջներ, օրն իրիկուն սրճարանի մը անկյունը ճատրակի խաղերուն կհետևի անձկությամբ, իր հրապարակագրի կյանքին պայքարները հիշելով քառակուսի տախտակին առջև։

Թերևս քերթող մը, մի՞ զարմանաք. երգիծաբան, հեգնող քերթող մը որ կշիռեն կամ տեսակեն— որակեն կամ քանակեն— նենգող մասավաճառին կամ թղթավաճառին դեմ օր մը զայրանալով, ամբողջ աշխարհի փերեզակներուն դեմ ելլե ինքը, անոնց պաշտպան նախախնամությունը՝ ոսանավորներու դառնաշունչ հատորով մը մարդկային առևտուրին հավիտենական խարեբայությունը մատնանիշ ընելով աշխարհին։

<1892>

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

Դիվահար ոգի մը. արծվի մը եթերային ճախրանքը սարե ի սար, երբեմն ավելի անդին ուր պարապությունը կտիրե ա՞լ. կամ հավասարակշռությունը կորսնցուցած օդապարիկի մը ոստոստուկ ելևէջները, ընդքարշ ածելով ընթերցողը իր ետևեն՝ խոլ, անբևեռ ուղևորության մը մեջ. ամենեն առաջ ինքը չափելով իր գրական զեղծմանց մտքերու վրա ձգելիք տարապայման խոնջանքը, զեղծմունք որոնց տերը չէ, զորս անգիտակցաբար ի գործ կդնե և որոնց պատասխանատվությունը կծանրանա սակայն իր վրա ուղիղ բանի վերադարձի պահուն, ջղային տագնապներու պես որոնք արթնության ատեն հիվանդը կամչցնեն։

Այսպես կդատեն Եղիան նույնիսկ անոնք որ իր համակրողներն են մեծ մասամբ. ինքնատիպ տաղանդի մը զարտուղությունները կվրդովեն զիրենք. այս տարօրինակ փայլը, դեղնորակ լույս մը՝ կայծակի ղիկզակին պես, աչքերը կշլացնե։

Կպնդեն թե ներելիի, ընթեռնելիի համար որոշ, անանցանելի սահման մը կա ուրկե դուրս ելլող ամեն թռիչ կվիրավորե իրենց ընկալյալ գաղափարներուն պարկեշտությունը։

Հետո կարծեմ քիչ մը իրավամբ կգայրանան եսասեր, եսամոլ գրականության մը դեմ որ Եղիայինն է։ Հոժարակամ կխոստովանին անոր քաջ հայագետի արժանիքը,— հազվագյուտ արժանիք մը մեր օրերուն մեջ — բայց ավելցնելու համար անմիջապես որ այս գրագետին շատ մը դաթձվածքները, նորակերտ բառերը, գաղափարներու արտահայտության ձևերը՝ իրենց հանդգնության մեջ հաճախ այլանդակության կհանգին։

* * *

Ու թե որ ճիշտ ըլլար այս ամենը, պիտի պակսե՞ր միթե գրագետին արժանիքը. աշխարհաբարի այս Նարեկացին պիտի մոռցվե՞ր, ուրացվե՞ր մեզմե։

Ամենուս համար Տեմիրճիպաշյան, իբրև արձակագիր, մեկ հատիկ է հիմակվան հայ դպրության մեջ. իր հատվածներու ձևը՝ շատ անգամ երկարաձիգ, բառերու ընտրությունը՝ շատ անգամ ծայրահեղ խնամքով ու հոգածությամբ ի հայտ եկած, գույներու խայտաճամուկ երանգները, իր եզական տաղանդին հատկանիշները պիտի մնան։

Իր գրվածոց ճոխությունը՝ դեռաբուսիկ հարուստի մը աղմկալից ճոխությունը չէ, այլ վաղնջական ազնվականի մը գեղեցկագիտական ոճն ու տարազը։

Կարմիրը, կանանչը, դեղինը չեն տիրապետեր իր պատկերներուն մեջ. վրձինը՝ միշտ գովելի զգուշությամբ մը, կխուսափի այդ պոռացող գույներու սաստկութենեն. գրագետին բոլոր նկարագիրը ճերմակին ու սևին մեջ կտարուբերի, մեկեն մյուսը կշրջի շարունակ. այս նկարիչը՝ սթոմբ մը ունի իր մատիտին քով և այնչափ միայն։

Եվ ի՞նչ պահեմ. այս կես-ստվերը կպատշաճի իր գունաթափ ճակատին ու վայելչապես կընդգրկե անոր մոայլամած սիրահարի դեմքը։

Սիրահարի՞։

Տեմիրճիպաշյան ալ սիրո արկածյա՞լ մըն է արդյոք. ո՞վ գիտե։ Ոչ ոք կյանքի ունայնությունը, պատրանքին թողած դառնությունը իրեն չափ հզոր կերպով զգացած է, և կսպասեմ որ վաղը ելլե այն անկեղծությամբ, որ իր գրական նշանաբանն է, խոստովանի իր հոռետես վարդապետությանց՝ ռամիկ, սովորական և արդեն կես մը գուշակված սկզբնապատճառը։

* * *

Բայց հոն՝ ուր հուսախաբը կսպառնա երազատես մը դառնալ, հոն պետք է որ գրագետը կանգ առնու, բաժնվի անկե. դժնդակ բայց անհրաժեշտ պարտավորություն ամեն անոնց որք հրապարակագիր են խոստացած են, Ֆաուսթին պես, իրենց միտքն ու հոգին նվիրել, լափել տալ ճիվաղի մը որ այստեղ հասարակություն կկոչվի. ճիշտ այն փոքրիկ նապաստակներուն նման, որոնք կպահվին, կսնուցվին, կմեծցվին՝ գառագեղի մը մեջ սպասող առյուծի մը ճարակ դառնալու համար։

Այս չէ՞ միթե գրագետին հանձնառությունը։

Եվ այն ատեն, սրտերնիս պիտի չսեղմվեր տեսնելով այն հոռետես վարդապետությանց ներգործությունները, որոնք Եղիային հասցուցած երիտասարդ գրողներու վրա առջի օրեն կնշմարվին։ Տղաքնե՞ր, որ գերեզմաններու շուրջը կդեգերին, փոխանակ կանանց շուրջը պըտտելու, որ չարագուշակ բուերու պես կուլան, կկոծեն, երբ պարտեին զվարթության ու ժպիտի կենդանությունը բերել մեզի. որոնք առջի քայլեն դասալիք՝ կյանքի պայքարին մեջ, ո՛չ իրենց և ոչ մարդկության օգուտ ունին, և որոնք վերջապես քաղաքակրթության հաշիվներուն մեջ ոևէ թվանշան կամ քանակություն չեն ներկայացներ։

Ո՛չ, չեմ ախորժիր այդ ոռնացող եղանակներեն. գերեզմանի, ոս-

կորի, գանկի, մարմնո տարբաղադրության վրա կապված գրագիտություն մը, որ իր ուրույն արժանիքին չի կոթնիր, այլ սարսափով ու արհավիրքով կչանա կանգուն մնալ, ուշադրություն հրավիրել, և խպլիկի, ուրվականի ձևեր կառնե, թերևս մանավնները զգաստության բերելու համար։

Ո՛չ, չեմ սիրեր այս ամենը. մանավանդ երբ Եղիայեն զատ, անոր բարձր կարողութենեն, կամ անոր անձին հատուկ մեղմացուցիչ պարագաներեն զուրկ պատանիներ՝ ձեռնամուխ կըլլան այս բացասական ու աղջամղջային գրականության։

* * *

Այն բարձանց վրա կամ այն անդունդներուն մեջ ուր ներյալ է Եղիային խոյանալ կամ գահավիժիլ, վհուկ մը կամ վարդապետ ըլլալ պետք է, և Եղիան երկուքն ալ է միանգամայն։

Իր հմտությունը վանականի ընդարձակ աղոթատեղվույն պես վեհ ու շքեղ խստությամբ մը կահավորած է, ուրկե մարդ երկյուղած կմտնե ներս, դուրսը թողլով ամեն աշխարհիկ կապերը. ո՛չ հիմակվան գրողներեն շատերուն գիտությանց պես որոնք ցույցի համար զարդարված պշրասեր տղոց սրահիկներն են, ուր խաղալիկներե ի զատ ոչինչ կա, ցուցամոլ և հարևանցի կահավորում։

Այդ խստակյաց միայնության ու վեհության մեջ ուր մեծ իմաստասերներու ոգիները կշրջին, ուր Աստվածաշունչ մատյանն ու հնգիկ ս. Գիրքը կվերծանվի, այս լռությունը, այս խորհելու, իր անձին վերադառնալու, անոր վրա ամփոփվելու աշխատությունը կվնասեն Տեմիրճիպաշյանին։ Ներքնահայեցությունը բառ մըն է զոր ինք ստեղծեց իրեն համար և որ պարզ մահկանացուներու աչքին եսութենե տարբեր բան մը չի նշանակեր բնավ։

Եվ ահա խղճմտանքի այդ խուլ վերծանումներուն մեջ է որ ամբոխը— ռամիկը թե որ կուզեք — կդադրի հետաքրքրվելե ու իրեն հետեւելե։ Մարդ չի մնար շուրջը, բայց եթե սակավաթիվ բարեկամներու խումբ մը որ դեռ հրապուրված կնոջ մը պես գրագետեն չի բաժնվիր ուր որ ալ երթա, աշխարհիս ծայրը և անկե ալ անդին, որ կփնտրե, կհալածե զինքը ամեն տեղ, փողոցին և դպրոցին մեջ, և որ պատուհանեն գեթ կնետե իր այցեստամբ երբ Եղիային գու

Եթե այսպես կպատկերացնեք ձեր մտքին մեջ գրաբարի այս հայտնի ախոյանը, չարաչար կսխալիք. իր զգեստին վերջին տարազը այդ ըլլար գուցե եթե իր ճաշակին խստասիրտ և իրավախոհություն չսիրող տրամաբանությանը ձգեինք զինքը, այնպես որ գրական Բարեկենդանեն հետո, որուն հանդիսատեսները եղանք ատեն մը, բուն Բարեկենդանը բերեր մեզի։

***

Հակոբ Գուրգեն կրտսերն Անաքարսիսը չէ, բայց ուղևորություն մը ըրած է հելլադա և հԱթենս, և առանց սպասելու որ Նոր Պարթելեմի մը ծանոթացնե մեզ իր ճանապարհորդության շահեկան զննությունները, ինքը հոժարափույթ առած է գրիչը ձեռքը, հելլեն դպրության վառարանեն տաքցած, կաղդուրված։

Դեպի Հունաստան ճամփորդելով, այս ոչ-երիտասարդ հայագետը, իր միշտ տրամաբանական ոգիեն մղված և առաջնորդված է անշուշտ, հինգերորդ դարու ավանդական ուղևորությունը կատարելով, ուխտագնացության մը պես, որ պարտք է, խղճի պարտք, ամեն ոսկեդարի գրաբարին հավատարիմ մնացող Հայու։

Գրաբարի այս հավատքը, որուն հոմանիշ է իր անունը, ընդարձակ է իր մեջ, հայտնության մը պես, զոր գիտությամբ արդարացնելու համար ապարդյուն ջանքեր ի գործ չի դներ Մաքս Մյուլլերն օգնության կոչելով, որ արդեն հերքումե զատ ոչինչ կրնա տալ իր միամիտ համոզման։

***

Իր դժբախտությունը գրաբարը աշխարհաբար գրելու պարտավորված ըլլալն է անշուշտ, որ անողորմ ճակատագրի մը պես կծանրանա իր գլխուն վրա, ամեն ժամ։

Ի՞նչ երանություն եթե առավոտուն դեմը ելլողը «Ողջույն տեառնդ» ըսեր իրեն փոխանակ աշխարհաբարի գռեհիկ «բարև»ին, եթե տունի կյանքը և փողոցի կյանքը ոսկեդարին վեհությամբը ոգևորվեր։

Եզնիկը... Այս անունին ի լուր Գուրգեն մագնիսացում մը կզգա հոգվույն ու սրտին խորը, մագնիսացում մը, զոր Մեսմեր չէր նախատեսած, և որ տասնչորս դար հնվեն իր բոլոր զորությունը և ազդեցությունը պահած է անկեղծ այս Հայկաբանին ջիղերուն վրա։

Ի՞նչ նյութի վրա կխոսի այս գիրքը, որո՞նք են հեղինակին գաղափարները, իմաստասե՞ր թե պատմաբան. պատասխանը դժվար է տալ քիչ մը, բայց լեզո՞ւն...

***

Գուրգենի գրագիտությունը,— թողությո՛ւն նմանաձայնությանս համար — գեթ այն, որ աղոտ կերպով կնշմարվի իր պատառիկներուն մեջ, զորս մերթ ընդ մերթ կնետե, առանց զգալու թե ի՛նչ վիրավորիչ բան կա հասարակության համար պատառիկներ ընդունելու իր ձեռքեն, այս գրագիտությունը՝ զգացո՛ղ, թրթռացո՛ղ ոգի մը ի հայտ կածե գրաբարաշեն պարբերություններուն մեջեն, որ հոյակապ ավերակներու վրա ծաղկող դալարյաց տպավորությունը կթողուն, կամ Սողոմոնի տավիղին վրա Շոփենեն երգված եղանակներու։

Եվ ահա ասոր համար իր գրաբարի մոլությունը, նախապաշարումը կթեթևնա մեր աչքին, և լեզվաբանության այս հերձվածողին դավանությունը՝ պարզամիտ աղջկան մը պատրանքին, քաղցր անուրջին պես գրեթե համակրելի կդառնա։

Չէ՞ մի որ ամենքնիս գրաբար ուսած ենք նախ. և Գուրգեն իր առաջին սիրույն հավատարիմ մնացողի արժանիքը ունի գոնե. հետագեմ մ'է, առանց կեղծիքի գեթ, ազատ համարձակ հետազեմ մը, որ կոնակը մեզի դարձուցած կքալե իր նպատակին. դեպի հինգերորդ դարը, և այս կերպով կտարբերի անոնցմե, որք՝ ո՛ր կողմ երթալնուն անգետ, հառաջ քալելու ձևեր կրնեն, ոտքերնին կշարժեն առանց տեղերնուն երերալու, երազի մը մեջ եղածի պես։

***

Իր համբավը գրելե ավելի խոսելով ձեռք բերած է. իսկ աշխարհիկ զբոսանաց մասին չի հետևիր բնավ Եզնիկի որ ապահովապես ոչ նարտ կխաղար և ոչ պիլառտո, և որոնց մեջ Գուրգեն իրավամբ կփայլի իբրև քաջարվեստ վարպետ։

Իր միակ ցավը այն է անշուշտ, որ այդ խաղերուն մեջ հին ու նորի պայքարը չկա, այլ միայն հաջողելու հարատև ջանքը, որ ավելի գործնական և արդյունավոր է։

Սրահի մեջ Գուրգեն իր մաքուր և անխառն հայախոսությամբը ուշադրություն կհրավիրե և իր շարադասությունները, հոլովներու, խոնարհումներու ուղիղ գործածությունը, միշտ կոճկված փալթոն՝ հայկաբանության ուսուցիչը կմատնե անմիջապես։

* * *

Իր վերջավորությո՞ւնը.

Հավանական ավագերեց մը, որ իր հմտությամբը զինված՝ Շնորհալիին դեմ պիտի մարտնչի, անոր անկյալ գրաբարին սխալները մատնանիշ ընելով և հանձն չառնելով Այսօր անհաղը երգել եկեղեցվույն մեջ։

Կամ իր պիկանոյի խաղերը կատարելագործելով՝ հայ Սլոսոն մը ըլլա, Լյուքսենպուրկի սրահին մեջ և պատերուն վրա ոսկեդարի գրաբար ծանուցումներով հրավիրե հասարակությունը իր արվեստին փորձերուն, հասարակությունը, որ պիտի չկարենա գալ, ծանուցումին լեզվեն բան մը շհասկնալուն համար։

Եվ կամ հաջորդ մը Մարկոս Աղաբեգյանին,— խնդրեմ չնեղանա զինքը պաշտոնեն արձակելուս,— գրապահ մը Ղալաթիո խորհրդարանին մեջ, որ իրեն վստահված գրքերեն ու ձեռագիրներեն գատելով հինգերորդ դարի փշուրները, մնացածները այրե բոլոր, ո՛չ թե տաքցնելու համար բաղնիք մը զոր չունի, այլ իր մսկոտ ձեռքերը, որք գրպանեն դուրս չեն ելլեր։

<1892>

ՍԻՊԻԼ

(ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ)

Սիպի՞լ. ինչո՞ւ այս պատրվակը. ներելի չէ՞ անուննիդ տալ. և ի՞նչպես ծանոթներու կարգը դասել այս դեմքը, որ անծանոթ մնալ կփափագի։

Անծանոթ մնալ ամենուս փափագն է. մեզի հատուկ, առանձին, անձեռնմխելի գոյություն մ'ունենալ ուր քաշվինք ուզած ատեննիս. ծրպտում մը որով կարելի ըլլա թաքչիլ դժնեհայաց աչքերե. օդահան գործիք մը, որով պարապություն շինենք մեր շուրջը ու պոսպոսող բերաններու կեղծավոր ձայնը շհասնի մեզի։

Ի՞նչ օգուտ. ճամփուն ամբողջ երկարությամբը բուսած փուշերուն ու մացառներուն մեջ, ամեն մեկ քայլափոխին ծվիկ-ծվիկ կրզքտի վերարկուն որ անհարկի աչքերե պիտի պահեր մարդուն ներքին ու թաքուն կյանքը։

Սրտին հետին խորշիկը պետք է պարզել ու բան մը չունենալ ու չպահել քեզի հատուկ. ալ այսուհետև ո՛չ ես մասնակի գոյություններ, այլ ընդհանուր կյանք մը. ո՛չ ցողի կաթիլ մը՝ գիշերեն մնացած թրթռացող տերևին վրա. և ոչ կաթիլ մը արցունք արտևանունքին վրա դողահար. ո՛չ գետ, ո՛չ լիճ և ոչ ծով. այլ օվկյանը միայն. բոլոր ցամաքը մեկդին ու բոլոր ջուրը մյուսը. այս է նոր աշխարհագրությունը։

* * *

Կմեղանչեմ հարկավ եթե անգաղտնապահ ձեռքով վեր առնեմ այն քողը որուն ետին Սիպիլ ծածկված կուզե մնալ. այդպես թո՛ղ ըլլա. բայց ներելի է գեթ ուրվագրել իր պատկերը այնքան, որքան շղարշին թափանցկությենեն կմատնվի կամ լաչակին գեղահարդար ու արվեստաշեն ծալքերուն մեջ մոռցված բացվածքեն կընդնշմարեմ։

Վիպասա՞ն թե բանաստեղծ։

Գրող մը որ հոգիին հետ կզբաղի, երբեք մարմինին. ու կվախնամ ըսելու, որ սիրտը վեր կդասե միտքեն, և ըստվերի մը տարտամ մթությունը՝ որոշ գծի մը հստակ ու անխարդախ սևությենեն։

Բանաստեղծ մը ուրեմն։

Բանաստեղծ մը որ շնորհալին՝ գեղեցիկեն կնախընտրե ու տպավորությունը հիշատակեն։

Ինքն ալ տպավորություններ թողուլ կուզե և ոչ հիշատակներ. իր եղանակները այն բերնուց սորվելիք ու հեղհեղվելիք երգերը չեն զորս ամբոխը միտքը կպահե. այլ ներդաշնակություն մը որ մտքի օրորումով ու ծփանքով, հանգգայս կտանի քեզ մինչև այն հանգրվանները, ուր վայելքը տրտմության կփոխվի։ Եվ ամեն անգամ որ կյանքի պատահումներով մոտենաս այդ սահմաններեն մեկուն, այդ ներդաշնակության վայելքը կարթննա հանկարծ սրտիդ մեջ, թեև անկարող ըլլաս զայն հորինող նվագները վերհիշելու։

Իր վեպերը քերթվածներ են։

Աղջկան մը սիրտը անբիծ տատրակի մը սիրտն է, որ դուն ուրեք մեր տանյաց վրա բույն կդնե. իր երևակայած երիտասարդի հոգին ալ հրեշտակի և ճիվաղի հոգիներու մեջ կտարուբերի. ճոճանակի մը պես որ գծած աղեղի մեկ ծայրեն մյուսը կերթա շարունակ ու չի կենար հոն՝ ուր պետք է վերջապես կանգ առնել և ուր մարդկային հոգիները սովորաբար կկենան։

Պատճառն այն է որ քերթող մ'է վիպասանը ու իր մտքին թռիչքովը ու աշխույժովը կոգևորե վեպին անձինքը այնքան, որ կդարձրին մեզի

նմանելի, անճանաչ էակներ կըլլան, որոնց ուրախության ու կսկիծին անտարբեր կմնանք։

Ի փոխարեն, իր քերթվածներն ալ վեպեր են ուր սրտի անկեղծութենեն ճշմարիտ բանաստեղծությունը կբխի։

Վանքի մեջ մոռցված միանձնուհին՝ իր շնչին բաժինը պահանջելով կյանքեն, արդար բողոք մը կբերե ու կհուզե մեզի։ Իր ժանյակներու սիրուն մեռնող պերճասեր աղջիկը մեր արդի Օֆելիան է, վասնզի հորմեհետե աղջիկները չեն մեռնիր ծաղիկ քաղելով, իրենց արդուզարդին համար կսպառին։

Եվ եթե այս բանաստեղծությունը անկեղծ ցավակցություն մը կարթնցնե մեր սրտին մեջ, պատճառն այն է որ քերթողը վիպասան մ'է հոս։

Այլ քերթողի ու վիպասանի գիրկընդխառնումը գեղեցիկ մազերու մեջ զետեղված ծաղկի մը տպավորությունը կընե վրաս։

* * *

Իրրև վիպագիր հավատք ունի ամեն բանի վրա. ատով իր ճմաստասիրությունը կամրապնդի, երբ մերը՝ ինքնագլուխ քալելու դատապարտված, կտկարանա, կսայթաքի ամեն վայրկյան։

Իր շեշտը անկեղծության շեշտն է նույնիսկ հոն՝ ուր գերազանցը գտնելու ջանքով կվրիպի. իր գծած պատկերները անտարակույս կապրան մըն է, ուր գլուխգործոցներ մուտք ունին միայն և որոնց հետ կապրի օրն ի բուն, գլուխ գլխի, կատարելության հրաշակերտներ, որոնք ամենօրյա դրացիներու վերջնական հանգամանքը առած են իր աչքին։

Եվ երբ կհաճի կյանքը բացատրել այդ էակներու կյանքով, կզմայլեցնե բայց չի համոզեր զմեզ. իր ըմբռնումը, շքեղ, խստապահանջ, բայց եթե կարելի է ըսել, անձո՞ւկ կթվի։

Գեղջուկներ ենք մենք որ կպահանջենք իրմե, ապարանքի տիրուհիեն, լայն ու հարթ պողոտայի վրա քալելու վարժված տիկինեն, նեղ ու ցեխոտ փողոցներուն, խարխուլ տուներուն, ծուռումուռ սանդուխներու վրա ապրողներուն գոյությունը չուրանալ ու չարհամարհել. ու երբ ոտքերնին սահելով իյնան ու գլտորին վար, իր վճիռին մեջ ի հաշիվ առներ ելևէջները ճամփուն ուրկե քալելու ստիպված է աշխարհ։

* * *

Այն երիտասարդ կինը, որ Սիպիլ կստորագրե, իր անհատական կյանքովը պարծանքն է իր սեռին և մեծ տաղանդովը՝ մեր բոլոր գրականության։

Տանտիկին մըն է այս մեծ բանաստեղծուհին. և տանտիկին պիտի մնա մինչև վերջը. կյանքի պայքարները պիտի չդպին իր ճակատագրին. հորձանքները ու փորձանքները պիտի եռան, պիտի պտուտքին, պիտի անցնին իր քովիկեն առանց իրեն դպչելու։ Գրականության մեջ ինքը պիտի մնա ճշմարիտ ներշնչյալ կինը որուն պատգամները պիտի սրտապնդեն մեզ, որ այնքան կարոտ ենք քաջալերության անույշ ձայնին. և իրեն օրինակովը պիտի շարունակենք վաստակիլ, ապերախտ վաստակ, մինչև այն օրը որ Սիպիլ ապագան ցույց տա մեզի, հստակ և ջինջ հորիզոն, թողլով ներկան իր առօրյա ծփանքին։

<1892>

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

Տժգույն իր ոճին պես, սգավոր՝ իր գրվածոց մեջ տիրող ոգվույն նման. ժպտելով շարունակ, ժպիտ մը որ դեմքի ցավագին կծկումին հետ կշփոթվի և ավերակի մը վրա ինկող ճառագայթի մը պես տխուր է. սիրելով աղմուկը՝ իր սրտին միայնությունը ու մահաբույր լռությունը մոռնալու համար. շարախոսելով, շարախոսվելով, գթալով ու գթության արժանի ըլլալով կազմված կյանք մը։

Նավագնացության մը միջոցին ծովու վրա լույս տեսած այս երիտասարդը, ատկե թերևս, անդունդի վրա քալող մարդու երերուն քալվածքը ունի ու գլխի պտույտը։

Իր անհավասար գրականությունը՝ այս ծովին պես, լի է անկումներով ու խիզախ բարձրացումներով. ալետատան ու հողդողդ գրականություն, որ ամեն կողմ կտանի զինքը, որ ոչինչ ունի անքույթ, որուն կատարները ու վիհերը կերերան, կդողան, իրարու վրա կգլորին շարունակ, և որ իր ամբողջությանը մեջ կոծկոծյալ բան մը ունի, ճիշտ ծովին նման։

***

Իր սնոր. բայց սեռ չունենալն է իրենը և ահա ասոր համար է որ գրագետը չափելու համար ամեն բաղդատության եզր բացարձակ կերպով կպակսի մեզի։ Իր եղանակը, ծանոթ ու տվյալ պայմաններն կհեռանա։ Գրականության մեջ իր կանոնը զարտուղությունն է։ Երբ ամեն գրոզներ կարգի ու սարքի կհեռամատին, ինքը միանակուկ կպահե իր անխնամ ու արտակարգ տարազը. կոճկված, սանտրված հրապարակագիրներուն մեջ ինքն է որ հանրության առջև ելլելու կխիզախե միշտ թափթփած մարդու, արտաքին պաճուճանքով զբաղելու ատեն չունեցողի անփութությամբ, այնքան որ այս անհոգությունը ա՛լ ճշմարիտ պըշրանք մը կդառնա։ Ահա՛ իր գրականության հատկանիշներեն մին։

***

Մարդիկ կան որ ամենեն աննշան նյութին վրա խոսելու համար հանդիսավոր ձևեր, կեցվածքներ կառնեն, կհազան, ձայներնին կփոխեն, շարժումներնին կլայնացնեն։

Մասիսի նախորդ խմբագրապետը հակառակն է անոնց. իր ընտրած նյութին ծանրության չափ իր գրելու եղանակը կանոսրանա միշտ։ Այս իր գրականության ֆիզիքին օրենքներեն մին է։

Հոն՝ ուր ուրիշներ պիտի խոժոռեին, ինքը կժպտի և հոն, ուր ուրիշներ պիտի լային, ինքը կերգե, բայց երգին մեջ ողբի պես բան մը կպահվըտի և այս զվարթությունը, որուն ներքև արցունքի կաթիլ մը կապասատանի, այն ծիրանի գոտիները կհիշեցնե ինծի որոնք իրենց պայծառ գույներուն ցոլացումին տակ կծածկեն երկնքի թոնրնկեցիկ արտմությունը։

***

Գրականությունը, իր տարփանքը, զինքը հրապուրող սիրուհին ըլլալ կթվի։ Այս նախկին Վենետիկյանը՝ իր վանական կյանքի մաքրությունը անարատ պահած է միշտ. ս. Ղազարի մեջ վարդապետ չէ կրցած ըլլալ, բայց աշխարհական ալ մնացած չէ. ամեն ինչ թերատ, ստվերոտ ու անկատար է իր վրա։ Այս կիսավարտ քահանան, այս գրչի մարդը տեսակ մը Ռընանի տպավորությունը կթողու իմ վրաս. ո՛չ անոր մեծ գիրքը և ոչ անոր ահաբեկիչ հմտությունը ունի հարկավ. բայց անոր նման՝ բանաստեղծության ու պատրանքի թաքուն գանձեր կան իր սրբ-

ին մեջ որ եկեղեցական կրթության մը լռության ու առանձնության մեջ դիզված, հավաքված են և որ իր գրականության մեջ երևան կելլեն, կենդանի ու զգայուն հոգի մը տալով իր սովորաբար պարզ ու անպաճույճ գրվածքներուն։

***

Իր ժողովրդական զավկի, գրեթե շուկատ մարգու ձևերը կսիրեմ։ Իր մշտնջենական պատիվը պիտի ըլլա մեր մեջ, իբ organ կյանքերովը, առաջին ինքը տանելը, մոռեցնելը գրականությունը ժողովրդին՝ փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականության մը անմատչելի բարձունքին։

Իրմով սկսած ու քաջալերված է միշտ այն երիտասարդ գրագետներու շարքը, որ մեր հրապարակագրության այժմու ռամիկ, թե որ կուզեք, բայց հասկնալի ու սրտի մոտիկ հանգամանքը տված են։

Այս տասը տարիներուն մեջ ուր իր գրական գործունեությունը կփայլի, ամեն կողմ տարած են զինքը իր թափառահաճ գրագետի պարապմունքը։

Ջուրի արձակումի մը պես կուգա, կանցնի, կտարածվի, կլայնա, կանձկանա ու կանհետի հանկարծ և օր մը անշուշտ պիտի գտնեն գետնին վրա ակոս մը իր լրագրական արգասավոր անցքին նշանակ։

***

Ի՞նչպես պիտի ըլլա այս կյանքին ծերությունը. վերջ իվերջո ո՞ւր պիտի կանգ առնե զինքը տանող նավակը։

Ինչ որ ամենեն հավանականն է, այն է, որ քանի մը տարի վերջը իր մեծ իմացականությունն ալ այն մշուշին մեջ մտնե՝ ուրկե իր գոյությունը երբեք դուրս չէ կրցած ելլել։

<1892>

ՏՈՔԹՈՐ ԳԱԲՐԻԵԼ ՍԵՎՅԱՆ

Գլուխը՝ ձախին ծռած քիչ մը, միջահասակ մարդ, որ իր շարժումներուն ծայրահեղ ժուժկալությամբը, անշարժության կմոտենա և իր սովորական կեցվածքին անփոփոխ ձևովը՝ խանձարուրին մեջ մոռցված ու հոն ծերացած երախայի մը նմանությունը կբերե։

Տոքթոր Գաբրիել Սևյան՝ Վենետիկեն հոս եկող այն ոտանավոր գրողներու սերունդին չի վերաբերիր, որուն ճիշտ համրանքը ընել անկարելի է և որոնցմե սակայն Պեշիկթաշլյան, Թերզյան ու Աճեմյան միայն հաջողած են մեր մեջ։

Ա՛լ ավելի հին, ավելի լուրջ, և ավելի բարձր դասի մը կպատկանի. իր տեղը՝ Վիեննայի լեզվաբաններուն, Այտընյանի, Գաթրճյանի, Գարագաշի և այլոց քովն է, որոնցմե շատերը լռության մեջ ամփոփված մնացեր էին, իրենց գիտնական գրաբարագետի ծանրութենեն չբաժնվելով ու վախնալով խառնվիլ բազմության մը որ, իրենց աչքին, բարեկենդանի մը դիմակավորներուն երևույթը ուներ։

Այսպես լքած ու լքված կմնային միշտ. և երբ անոնցմե մին հանկարծ նորեն կերևա գրական ասպարեզին վրա, հարուցյալի մը ազդեցությունը կընե վրանիս կամ վրեժխնդիր ոգիի մը, որ նորերուն անպատկառ քրթմնջյուններուն ու ծիծաղներուն մեջ չի շփոթիր և իր կըշտամբանքով լեցուն դասերը կու տա առանց մեկի մը խնայելու։

* * *

Հարուցյալ մը, այո՛, որ գուցե այդ պատճառով, գիտակցաբար կխոսի անոր վրա, զոր մենք մեռյալ կանվանենք։

Անոր քովեն կուգա, աղեկ ու ռինտ ըլլալուն լուրը և մերձավոր վերադարձի մը ավետիսը կբերե մեզի Տոքթոր Սևյան, որ, իր արվեստին ուսուցածին հակառակ, վերակենդանության կհավատա։

Ու դիակին վրա ծռած, շփելով երակները, o տը Ֆլոռնյի շիշը մոտեցուցած ռունգներուն, արվեստական շնչառություն մը ընել տալու ապարդյուն ջանքերով, թմրած սառած անդամները ճգնելով տաքցնել իր շունչովն իսկ, այս բժիշկը Գրաբարին գլխուն վերև կհսկե սիրելիի մը մահվան չհամոզվող մարդու համառ պատրանքին մեջ։

Կկարծեմ որ դահիճի, անգութ ու անողորմ մարդու գործ է մեր ըրածը, քաշելով զինքը այս անկենդան մարմնին քովեն, պոռալով, կրկնելով շարունակ անոր երեսն իվեր որ զայն թաղելե և անոր երկյուղած հիշատակը պահելե զատ բան չկա ընելիք այսուհետև այդ մարմնին համար։

Տոքթոր Սևյանի գրական դավանանքը համոզումե ավելի վեր բան մը, հավատք մըն է գրեթե. շենք մը, որուն հաստատությունը իր տկարությանը մեջ կկայանա քան թե իր իսկական զորությանը, ճիշտ այն ծաղկին նման որ տխեղծ ու քնքուշ կազմվածքովը՝ փայփայանքի ու գգվանքի միայն կոչում կրնա ընել ու չի կրնար հրավիրել իր վրա կացինի հարվածները որոնք հաստ ու բիրտ ծառերու կոճղին,— գիտական ապացուցումներու,— սահմանված կմնան։

Իրավունք չունի ուրեմն նետելու այդ ծաղիկը գրական կրկեսին մեջ, ուր կոխկոտուքը պակաս չէ և ուր մրցող տղաք՝ պայքարին ջերմության մեջ, չզանազանեն թերևս այդ անզոր բույսը իրարու գլխու նետված փայտի կտորներեն ու ճզմեն առանց ուզելու։

* * *

Ամենեն շահեկանն այն է որ տարիները չեն կրցած ցրտացնել կամ ամոքել իր դյուրագրգիռ ու պահանջող բնավորությունը։

Գրաբարի սիրուն հարուցած վեճին մեջ միևնույն մարդը կգտնենք նորեն, առջի անհամբեր երիտասարդը, որ հինգ վայրկյանի սպասումեն ձանձրացած, կպոռար ոևէ աղջկան մը երեսին.

Կա՛մ հույս տուր կամ խիստ վրճիռ տուր հետին.

«Քսակդ կամ կյանքդ» ըսելու պես բան մը։

Այո կամ ոչի մարդն է կտրուկ, զայրացկոտ, գրեթե երախան՝ անփոփոխ իր դիրքին ու իր ճչող պահանջումներուն մեջ։

Այս եռանդը ու կորովը, զոր տարիներուն դիզած ձյունը չէ կրցած մարել, կզմայլեցնե զիս. ամբողջ քերթված մը կտեսնեմ հոն։

Իսկ ինչ որ օրինակելի է այդ կյանքին մեջ, ինչ որ երբեք ուզածիս չափ ստեպ առիթ պիտի չգտնեմ ըսելու հիմակվան տղոց, մեր գրականության համար ցույց տրված այն հոգածությունն ու սերն է որ Տոքթոր Սևյանի և անոր բոլոր դասակիցներուն ու ժամանակակիցներուն մեջ անվրեպ կտեսնվի, սեր՝ զոր կյանքի պայքարը, մարդուն անհատական ձախորդությունները, և որ ավելին է, հաջողությունները չեն կրնար մոռցընել տալ կամ մեկդի նետել։

* * *

Տոքթոր Սևյան այս օրերս Արևելքի մեջ հրատարակելով կես դար առաջ գրված իր քերթվածները, իր բանաստեղծական եղանակեն նմույշ մը կուտա մեզի։ Զարմանալի՞ բան. ինքը՝ որ համամիտ մեկը չէ բնա-

պաշտ դպրոցին, անոր աշակերտածի պես բաներ մը նշմարել կուտա հոն. անշուշտ իրական, շատ իրական պատկեր մըն է այն որ հետևյալ տողերուն մեջ կներկայացվի,

Մարմնույն պարարտ ձևերուն կազմած ելևէջներուն.

Բնապաշտ մըն է ինքն ալ ուրեմն առանց գիտնալու, և ճիշտ ա՛յն վտանգավոր ցանկության հովերով տարուբեր, որմե ա՛յնքան կխորշի հիմա։

Կկարծենք որ Քաթյուլ Մենտես կամ Արման Սիլվեսթր ցնծությամբ պիտի ստորագրեին իր տաղերը։

Բնապաշտ ձևին դեմ գաղափարի հեղաշրջումը հապաղած կթվի հարգելի բժշկին մտքին մեջ. ասկից ներելի է հետևցնել թե ախտաբորբոք գրականութենե մը ցույց տրված խորշումը,— իբրև պարզ բնախոսական երևույթ,— մասնավորապես այն տարիքին մեջ երևան կելլե ուր մարմնույն պարարտ ձևերուն կազմած ելևէջները անօգուտ բորբոքումե զատ ոչինչ կրնան արթնցնել։ Հա՞րկ է արդյոք գրական պարկեշտությունը սահմանել իբրև էապես հարափոփոխ բան մը, որ տարիքներու, հասակներու ենթական ըլլա, անոնց ավելնալուն կամ պակսելուն հետ աճի կամ նվազի և անհունական հաշվո խնդիր մը ձևացնե այսուհետև,

$$Q\ |Q| = 0$$

***

Տոքթոր Սևյան երկդիմությանց ու վարանումի մարդ չէ։ Այն նեղսիրտ նավապետին պես, որ Միջերկրականեն Ատլանտյան Օվկիանոս անցնելու համար Ճիպրալթարի նեղուցը երկար բարակ փնտրելու նեղությունը հանձն չառնելով, լավագույն սեպած էր Ափրիկյան ծովեզերքին վրա խրել տալ իր նավը, Տոքթ. Սևյան, որ իր առաջին ուղևորությունը այդ նավին վրա ըրած է, լեզվի խնդիրներու մեջ համբերատար քննությունները, աչը ձախը զննելե հեռանալով՝ նախամեծար կհամարի գրաբարին վրա նետվիլ ու հոն կառչած մնալ հաստատամիտ ոստրեի մը պես։

Ու կխորհիմ որ իրավունք ունին թերևս անոնք, որ չսիրելով մեր հողմակոծիկ տերևի ճակատագիրը, անգտանելի ճշմարտության մը պատրանքեն չբռնվելով, անկորուստ կպահեն ամեն բանի մեջ իրենց միամիտ ու վաղնջական գաղափարները։

Իրավունք ունին։

<1892>

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆ

Քերթող մը և ուսուցիչ մը. գրականությունը սիրող մը և սիրցնող մը, հրապուրիչ կնոջ մը նման որ բան գործ ըրած է ուրիշներու սրտին մեջ արծարծել այն կրակը, որ զինքը կտոչորե արդեն։

Եվ սակայն մշտաբորբոք հուրը մոխիր չէ դարձուցած զինքը։ Երեք մանուկներուն պես, որ Նաբուգոդոնոսորի հնոցին մեջ անխոց ու անվնաս մնացեր էին, Թովմաս Թերզյան ալ չէ խանձած իր սրտին մեջ վառող կրակեն, որ շատ-շատ, եղկ ու ամոքիչ մթնոլորտ մը կազմած է իր շուրջը, վակոն-վիի երանավետ բարեխառնությունը ձմեռ ատեն և արևն մեջ բանաստեղծը հավիտենական երիտասարդություն մը գտնելու բախտն ունեցած կթվի՝ երբ ուրիշներ, կես ճամփեն խոնջած ու վաստակաբեկ, կանգ կառնեն ըսելով.

Իմ հուրքս անկան և ես ահա ծերացա...

***

Թովմաս Թերզյան հակառակը ըսելու իրավունք ունի. գրեթե առջի խարտիշագեղ երիտասարդն է միշտ որ մոռցած է ծերանալու, ճիշտ միևնույն անձը որուն, քսան տարի առաջ, պատիվ ու բախտ ունեցած եմ աշակերտելու։

Հիմա փողոցը կպատահիմ իրեն երբեմն. չի հիշեր զիս, բայց ես քաջ կճանչնամ իր ձեռքի շնորհալի շարժումը որ ափի մը մեջեն խուսափող թռչունի մը սլացումին կնմանի։

Եվ ոսկի ակնոցին ետևը, նույն կարճատես աչքի կոպերուն հարատև մեծցեցումն է, հալումը գրեթե, որուն բաց մնացող պզտիկ անցրպետին մեջ սղմելու կաշխատիս, փեղդ փեղդ բերելու, պզտիկնալու փափաքներ կունենաս, ապարդյուն ջանքեր կընես դիմացինիդ նայվածքը չհոգնեցնելու, տեսողությունը դյուրացնելու համար, երբ դիպվածով դեմը գտնվիս այդ թարթափող աչքերուն։

* * *

Քերթող մը ըսի. հին դարերու թրուպատուր որ կերգե ու կանցնի շարունակելով իր ճամփան, կյանքի ճամփան երկար ու ամայի. նետահար թռչունին պես, որուն փախուստի շավիղը՝ հողին վրա կաթկթող վերքի արյունեն կգուշակվի, այդպես ալ իր հոս հոն ցիրուցան երգի, ներդաշնակության կտորներեն բանաստեղծին ուղին կճշտվի՝ որքան ալ անփույթ եղած ըլլա ինք ժողվելու, հավաքելու իր վատնած ու շռայլած ձայնին արձագանքը։

Իր քնարը ունկնդրվելու համար չէ որ կմրմնջե. այլ գլխավորապես իրեն համար ու հետո այն մտերիմներուն, որոնք «տունեն» են և ոչ փողոցը հանդիպած օտարականներ։

Այս է պատճառը որ չէ ամփոփած իր քերթվածները հատորի մը մեջ. հետո խորհած է, թերևս իրավամբ, թե պետք է զանոնք թողուլ ամենքն իրենց տեղը ու իրենց ատենին։ Իրարու քով բերել այդ հատուկտոր եղանակները, երբ, ափսո՜ս, անկարելի է իրարու քով բերել զանոնք, որ այդ եղանակները լսեցին։ Ինչո՞ւ համար։

* * *

Հետաքրքիրները հասկնալ կուզեն թե այս քերթողին ի՞նչ է կյանքի ըմբռնումը, հատուկ իմաստասիրությունը որով գոյությունը արդարացնե կամ դատապարտե. հոռետե՞ս թե լավատես ոգի մըն է, ո՞ր կիսագունտին կվերաբերի։

Բանաստեղծները աստղաբաշխներու նմանցուցած եմ միշտ, որոնք իրենց դիտակի ապակիներեն երբեք ճշմարտությունը չեն կրցած տեսնել ու վայելել. շատ մեծ, կամ շատ փոքր կերևան առարկաները իրենց. աշամերձիկ ապակիինն է հանցանքը որուն կորնթիքին վրա՝ ամեն պատկերներ կբեկբեկին, կայլայլին, երբեմն ճիշտ հակոտնյան կըլլան իրականին։

Ասոր համար է որ քերթողները ճշմարտութենե շատ անդին կամ շատ ասդին պիտի մնան. այս է իրենց ճակատագիրը. լալու կամ խընդալու կարող են միայն և երբ տեսնենք անոնցմե մին, որ Թովմաս Թերզյանին պես, ժպտիլ ալ գիտե, ժպիտ, որ համակերպություն կնշանակե, կյանքի տվյալ պայմաններուն լավագույն իմաստասիրությունը բերած կըլլա մեզի։

* * *

Ուսուցչին կյանքը քերթողի կյանքին չափ ու թերևս անկե ավելի շահեկան է. պատվելիներեն անմիջապես ետքը, անոնց տաքուկ հիշատակովը, ավանդություններովը, ծեսերովը լեցված ուսուցչական աթոռին վրա՝ այս բանաստեղծը, իր գեղեցիկ երիտասարդի վայելչությանը մեջ, դալար ոստի մը բողբոջումն էր հոն, ուր քիչ առաջ, գոսացած ծառը կկենար։

Իրմով է որ հայկաբանության դասեն ետքը ու անոր քովիկը սկսած է գրականության դասը, որ, հիմա անգամ, նորություն մըն է և որ քսան տարի առաջ ճշմարիտ հերձված մըն էր անդրդվելի հայկաբաններու սերունդին մեջ։

Գրաբար քերականության միապաղաղ սառույցեն ետքը ուր, բևեռային ուղևորությանց մեջ պատահածին պես, գաղղոները մեծ մասով կփատնան, ճշմարիտ գարունի մը տպավորությունը ըրավ այս դասախոսությունը աշակերտներուն վրա. ամենքը կանանչցան՝ ծաղկեցան։

Որի՞նն է պատիվը եթե ոչ ուսուցչին, որ իր շուրջը հավաքված տղոց եռանդը ու ավյունը չմարեց, այլ գիտցավ վառ պահել անոնց սերը մեր լեզվին համար, որ Բագրատունին, Ալիշանը ու Հյուրմյուզը ճանչցուց անոնց և որ իհարկին իր քնարը, իր սիրտը դրավ անոնց մանրիկ մատներուն տակ։ Որի՞նն է պատիվը եթե, նշմարելով թաքուն հարստությունները, որոնք կպահվեին այդ փակ սրտերուն մեջ, կրցավ հմայքի բառը արտասանել.

Բացվե, ո՛վ Սեզամ։

* * *

Թովմաս Թերզյան ո՛չ ծափերու ըղձանքը և ո՛չ դատափետության վախը քաշած է երբեք. փառքի ցանկացող չէ եղած և ոչ ալ հուսախաբության ենթակա։

Իր բոլոր կյանքը համակերպության կյանք մը եղած է. Պեշիկթաշլյանի կրտսերն է ինք ու անոր պես, համեստ վաստակավոր, չի սիրեր աղմուկը։

Բայց որքան ալ մեկուսանալ ուզե, խուսափիլ դեպի իրեն կարկառող ձեռքերեն, գրականության մեջ իր կրկին ու թանկագին գործու-

նեությունը պիտի չմոռցվի։ Կհիշեմ որ Անակրեոնի տաղերու թարգմանությունը Օտյանի նվիրած էր սիրուն ձոնով մը, ուր կըսեր անոր.

Դստերք Կաստալի
Եվ հարսունք Գողթան
Քեզ թագ կրկնակի
Հյուսեցին, Օտյան։

Իր աշակերտները Կաստալի աղջիկները կամ Գողթան հարսները չեն արժեր անշուշտ, բայց պատրաստ են իրենց ճակատին հյուսելու քերթողի և ուսուցչի կրկին պսակները, որոնց իր ազնվական գլուխը արժանի է։

<1892>

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ

Շատերը կճանչնան զինքը իբրև փորձ ելմտագետ մը որ հսկա ծրագիրներ ունի մտքի մեջ. հնարագիտական մեծամեծ հաշիվներ, խորհրդավոր մտերմություն մը թվանշաններու հետ որոնք իր ականջն ի վար մոգական բառեր կփսփսան միշտ։

Վեցհազարյակի ընթացքին է կարծես որ անհամատեալի գանձեր գտնելու միջոցը կընծայեն քեզի, վայրկյանի մը մեջ սպիտակ էջի մը վրա քանի մը ձևեր գծելով միայն։

Ու երազային վայելքներու բաշխողը կթվի աչքիդ այդ աղբեկ մազերով անձը, որ, քիչ մը թաղված իր խորհուրդներուն մեջ, հանդարտաքայլ կանցնի քովեդ մարդու մը պես, որուն կսպասվի ամեն տեղ և որ ինքը՝ տեղն մը բան մը չունի սպասելիք։

* * *

Ու քիչեր կճանչնան բանաստեղծը, տրտմությամբ ու սակավիկ մը պատրանքով լեցուն հոգին, որ պահվըտած կապրի այդ հաշվագետին մեջ։

Իր հղացած դրամական ահագին ամբարտակներուն մոտ, ոսկիի, ոսկեթանկի հոյակապ զանգվածներուն ճիշտ քովիկը, ի՞նչպես կրցած է փոքրիկ բանաստեղծության գողգոչուն ծաղիկը։ Ի՞նչպես այդ մեծապետ կառուցումներուն դրացիությունը պաղ մը չէ ձգած անոր վրա և գրգռնույշ ու թախծագին մեխակ մը ծլած է հոն ուր կվախցվեր թե չարախնդաց դժնիկ մը միայն պիտի բուսներ։

Ի՞նչպես։

* * *

Կարապետ Գարագաշ ալ կպատկանի Ազրիտկանի գեղջկական հատնող սերունդին. իտալական կապույտ երկնքին տակ մեծցած է ու անոր շերմ կլիմային մեջ սնած։

Գրականության մեջ՝ այն բարձր ճաշակի տեր արվեստագետներեն է, որ իրենց ամեն երկին համար, անուրջի մեջ միայն ընդնշմարվող ձևի, գույնի, գաղափարի կատարելությանը կբաղձան, Հիսուսի քով ղրկված նկարչին պես, որ աստվածային պատկերի մը անթերի ճշտությունը ձեռք բերելու կաշխատեր։

Խղճմտությունը, իր անձին դեմ, անիրավության կհասնի անշուշտ ու երբ մենք կզմայլինք— դիպվածով տեսած ըլլալնուս համար— իր թարգմանությանց նկարագեղ ու ճշտապահ ոճին վրա, ինքը գաղտնի կպահե զանոնք դեռ հասարակութենեն։

Ու կմտածեմ որ այս գրագետը, այնքան դժվարահաճ իրեն համար որքան ներողամիտ ուրիշներուն նկատմամբ, ինչե՞ր չէ բզքտած, պատռած, ոչնչացուցած, դժգոհության վայրկյանի մը մեջ։ Ստուգիվ, մեր հիմակվան քիչով գոհացող գրողներուն ստվար թիվին մեջ Կարապետ Գարագաշ եզական գեմք մը կներկայացնե մեզի։

* * *

Այս գրաբարագետը չի խորշիր նորեն ու չանգոսներ զանոնք. իր ձայնը քաջալերող է ամեն անոնց որոնք կվաստակին ապերախտ վաստակը գրականության։

Ինքը՝ քերթողին հետ, որուն երգերը բերած է մեզի այն բաներուն կթվի երազել, որ «միշտ կմնան»։ Իր ընտրած ձևն ալ գրականության մեջ գրաբար ոտանավորի ձևը արդյոք տեսականի գաղափարո՞վ է նորեն։ Ազնվագույն թերևս, բայց շատերու անմատչելի մետաղին վրա են միշտ իր նրբակերտ քառյակները. կկարծենք սակայն թե երկաթն ալ որ մեր աշխարհիկ լեզուն է, իբրև ամենեն պարզ շինվածանյութը, կարող է պիտանիի ու գեղեցկի կրկին պահանջումներուն գոհացում տալ ու կհավատանք, որ արվեստավորն հոն ալ իր ճաշակին նրբությունը, իր ճարտար ձեռքերուն վարժությունը ցուցնելու կարող է։

***

Այսպես ոսկի երազներու մարդը՝ վայելչապես խառնված է ոսկիե երազներու մարդուն. թվանշաններուն բանաստեղծությունը տեսած ու հրապուրված է ինքը և միշտ սիրահար մը մնացած է անհունին ու անսահմանին։ Բախտին ամեն մեկ ձախողվածներուն երգով մը պատասխանած է ու հիմա, հիսունի մոտերը հասած, ամփոփուկին պես զոր ամեն շոշափում կկծկե, ինքն ալ քաշված ու ամփոփված մեկն է։

Կսպասե՞ արդյոք որ նորերն ալ կյանքի անդուլ պայքարին մեջ պարտասուն, հետզհետե ու մեկիկ-մեկիկ ձգելով իրենց երիտասարդի վերացումները, կորսնցնելով սրտի պատրանքները ու պարտավորելով խոստովանիլ վաղանցուկ հանգամանքը ամեն աշխարհային վայելքներուն, իր եզրակացությանը գան, իր բանաձևին, որ հավատքի մը վերջավորությունն է և ուրիշ հավատքի մը սկիզբը.

Աստեն համայն եղբանիք մեռանին։

<1893>

ՕԳՍԵՆ ԽՈՃԱՍԱՐՅԱՆ

Ժողովին մեջ տեսած եմ զինքը. ոսկրոտ, նիհար ու դեղին գլուխ մը որ հեռվեն, բեմին վրա, անջատված կերևար մարմինեն, միս մինակը կեցած հոն, ահարկու շոր գանկ մը, որ կխոսի, կբարբառի, գրեթե կհայհոյե։

Կհիշեմ իր մեռյալի ցուրտ ու անթարթ նայվածքը, իր խեղդուկ ձայնը, իր ծայրահեղության հակամետ պահանջումները, որ հեռու տեղե մը, ուրիշ աշխարհե մը գալ կթվեին։

Հիմա, հոն է ինք, այն աշխարհին մեջ, որուն խորազնին ակնարկը, բարձր շեշտը, անկարելի փափագները կներկայացներ կենդանությանը միջոցին իր ուրվակերպ մարդու ձևերովը։

***

Սամաթիացի հրապարակագիրը մեծ գրագետ մը չէր, բայց կըրցավ մեծ խմբագրապետ մը ըլլալ։ Առօրյա լրագրության մեջ՝ ոչ այնքան գրական գեղեցկություն կփնտրվի, որքան գրվածքներու նորությունը, ուժգնությունը, անսովորը և խրոխտը։

Օգսեն Խոճասարյան այս բոլորը ուներ ու մեկ հատիկ էր օրը օրին զբաղեցնելու համար այն տղան, որուն հասարակություն անունը կուտան։

Ուրիշներ՝ ընթերցանության գիրք մը կուտային ձեռքը, կաշեկազմ հատոր մը մաքուր տպագրությամբ. ինքը խաղալիկ մը կուտար, խաղալիկ՝ ուրկե ավելի կօգտվեր մանուկը քան թե այն մեծ հատորը ուսկից բան չէր հասկնար. կերպով մը ֆոռպելյան դրությունը, մանկավարժական արդի եղանակները ի գործ կդներ այս խմբագրապետը նույն ընթերցողներուն համար, որոնք իր դպրոցին, իր լրագրին կաշակերտեին ու կհաջողեր միշտ։ Տղան չձանձրացավ երբեք ու հանզգայս վարժվեցավ միտք հոգնեցնելու այն ամեն էական խնդիրներուն, որով հանրային կյանքը կձևանա։ Օրագրին մշտնջենական արժանիքը պիտի մնա այս։

***

Ուղևորներ կան, որոնք ամեն բան նախատեսելով ճամփա կելլեն, պայուսակներ, հագուստի և ուտեստի պաշարներ, ամբողջ կարավան մը հետերնին առած. այնպես որ հարկ կըլլա կարավանին սիրուն, որ ամեն ծակե չանցնիր, ետ կենալ շատ մը տեղեր տեսնելե, այցելելե, թերևս ամենեն շահեկան մասերը ուղևորության։ Եվ ուրիշներ ալ կան որ ձորձ մը ուսերնուն ձգած ու ցուպ մը ձեռքերնին կմեկնին. որոնք վարժ են պատի մը տակ կամ քարի մը վրա քնանալու ի հարկին, որոնք ամեն նեղ անցքերը կսիրեն, կպրպտեն ու կարավանով գացողին չըրածը ընելու կհաջողին։

Օգսեն Խոճասարյան այս ցուպը ձեռքը ճամփորդներեն էր լրագրության մեջ։

Ջուրով լեցուն ավազանի մը մեջ կրնաք գավաթ մը ջուր ալ դուք ավելցնել առանց անոր գույնը փոխել տալու. անդին՝ կաթիլ մը ներկը կբավե գունավորելու ամբողջը։ Օրագիր այդ ներկին պուտիկն էր որ ամեն օր կու գար իյնալու հասարակության մտքին մեջ, երփնելով անոր միօրինակությունը։

***

Ինչո՞ւ համար քսան տարի վերջը միտքս կիյնա հանկարծ այս ջընջված պատկերը. անո՞ր համար արդյոք որ մեր մեջ լրագրությունը հաստատողները պետք ունին գալ տեսնելու թե ի՞նչ վիճակի բերած հասցուցած ենք զայն։

Ի՞նչ ապավեքություն պիտի ընեք մեր վրա եթե այդ գունաթափ երեսը կենդանանար, այդ շիջած աչքերը տեսնեին, այդ փակված բերանը խոսեր։

Լավագույն է թերևս որ չգա մեր քովը ու շարունակե նիրհել հոն ուր կհանգչի հիմա։

Սամաթիայի եկեղեցվույն մեջն է իր համեստ գերեզմանը, իրեն հատկացված գույքն հոգը դրամով գնված չէ. մարմարե, պորփյուրե չէ իր շքեղ շիրիմը. մայրենի ծոցն է ան, անշուք ու տաքուկ մայրենի ծոցը ուր մեռելները չեն մսխր։

<1893>

ՀՈՎՍԵՓ ՅՈՒՍՈՒՖՅԱՆ

Գիտուն մը, և ոչ ավելին է, իմաստուն մը։

Հովսեփ Յուսուֆյան, այն վարար ջուրի հոսանքներեն չէ որոնց թավալումը՝ երկու գիի եզերքներուն անձկութենեն, կամ հետևած ճամփուն անհարթ ըլլալեն՝ ազմկահույզ ու մեծաշառաչ կըլլա, ուշադրություն կհրավիրե։ Այլ վեհինաճեմ գետի մը հանդարտասահ ու անշշուկ ընթացքին կնմանի որուն արգասաբեր ջուրերը իրենց առվին կպատշաճին, էվել կամ պակաս չեն գար, և որոնք կայուն ու անշարժ կթվին հարևանցի գիտողի մը աչքին։

Իր կարգավորյալ կյանքը ու գործունեությունը չեն ճանչնար անակընկալը. այս շափագետը որ սիրուն կնոջ մը ետևեն հետապնդելու պես ամեն հաշիվներու մեջ անծանոթը կորոնե միշտ ու Ք-երը կփնտրե, ամենուրեք կհալածե, երևան կհանե պահվըտած ամեն ծակերու, ամեն ծպտումներու մեջեն, բայց իր մտերմության շրջանակին մեջ չընդունիր զանոնք։

Իր բոլոր գոյությունը կնմանցնեմ այն հառաջատվության կարգերուն, որոնց մեկ օղակեն ամբողջը կգուշակվի։

* * *

Շատերը տեսած են, բայց քիչերը կճանչնան զինքը։ Իր սակավախոս մարդու զգուշավոր ու ժուժկալ ձևերը, ձայնին մեղմ ու միօրինակ հնչյունը, մորուքին կանոնավոր շրջագիծը, հագուստին անփոփոխ ձևերը միայն տեսնող մը երիցական քարոզիչի մը տեղ պիտի առներ զինքը, ու ճշմարիտ հարցուկ մը ըլլալ պետք է գուշակելու համար այդ շափազանց համեստության տակ՝ մեր ազգին մեծագույն գիտնականը։

Չափական ու բնական գիտությանց այս մեծ վարպետը երիտասարդ մըն է գիրուկ, միջահասակ, ճիշտ այն մեծ ջութակներուն պես զորս այնքան ճարտարությամբ կզարնե. վասնզի հաջող ջութակահար մըն է նաև այս գիտնականը։

Կմտածեմ սակայն որ իր ծովածավալ հմտությունը հուսահատեցուցիչ բան մը ունի. ի՞նչ տարօրինակ առանձնություն է ան ուր լքված կմնա մարդ, երբ այդքան կհեռանա սովորական իմացականության սահմաններեն։

Հետին միջատին կյանքը ճանչնալ ու կարող ըլլալ միանգամայն ամեն աչքերու անտես լուսավոր գունտի մը համակ շավիղը ճշտել երկնից մեջ. անհունապես փոքրը ու անհունապես մեծը ըմբռնել. հիմակուց գիտնալ անցյալը որ խավարն էր, ներկան որ ստվերն է, և ապագան որ լույսը պիտի ըլլա. ո՜չ, այս ամենը մեկանց պիտի չուզեր տեսնել միակ մտքի մը մեջ։

* * *

Հովսեփ Յուսուֆյան այն գիտուններեն չէ որ հին ատենի մոգերուն պես իրենց սորվածները կծածկեն պարզ մահկանացուներեն։ Ընդհակառակը, իր ջանքը եղած է գիտական հոդվածներով, որ Արևելքի ամենեն պատվաբեր էջերը կկազմեն, գիտությունը ռամկացնել, հասկնալի ու մատչելի, նույնիսկ հրապուրիչ ընծայել ամեն անոնց, որոնք կկարծեն թե չոր ու ցամաք անապատ մըն է ան։ Յուսուֆյան հովասուն օվասիսները ցույց կուտա մեկիկ-մեկիկ, ամեն մեկ քայլին, այնպես որ ամայի ու դժնդակ համարված ուղևորությունը՝ Փարիզի պուլվարի մը վրա շրջագայելու չափ հաճելի դարձնելու գաղտնիքը կգտնե։

Իրմե առաջնորդված, և իրեն ունկնդրելով, կհետևինք ճամփուն, որ գիտության համար իրմե ավելի արժանավոր մը չէր կրնար բանալ մեր գրականության մեջ։ Ճամփա, որ իր շնորհիվ միշտ կարճ, միշտ անբավական կթվի մեր աչքին. հետաքրքրությունենիս կարթնա, բայց չի հագենար ու Հազար ու մեկ Գիշերներու հրաշալյաց պես շարունակությունը լսելու անհամբերությամբը զմեզ կշարշարե։

***

Գրականություն մը կա հիմա հրապարակին վրա որ, ճշմարիտ հրապույրներե զուրկ կնոջ մը պես, փերևետի, ներկի, շպարի կկարոտի միշտ. ո՛չ մաքուր հոգի մը ունի, ո՛չ գեղեցիկ մարմին։ Իր հաջողությունը ծեքծեքումեն է. իր հոսկե հոնկե փոխ առնված գույներուն փայլը՝ ցորեկվան պայծառությանը չի դիմանար, բայց գիշերը, ջահերուն արձակած լույսին տակ, դիմացինը պատրելու կբավե։

Յուսուֆյանին գրականությունը անոնցմե չէ. իր հրապույրը իրն է բոլորովին. արդուզարդին անհոգությունը՝ իր ստույգ գեղեցկության գիտակցությամբն է, վեհապանծ գեղեցկությունը Գիտության։ Այս հրապարակագիրը ոչինչ ունի բռնազբոսիկ ու արվեստակյալ. քեզ հմայելու համար պետք չունի աչքի քթթումներու. իր նայվածքը պարզ ու վճիտ է, ուր ճշմարտությունը կցոլա ու միշտ կգրավե զքեզ. այս է իր ոճը։

Իր լուրջ ու ծանրախոհ գրականությունը խոժոռություն չի բուրեր երբեք. զայն կարդացած պահուս, տողերուն մեջ կընդնշմարեմ խնդամիտ ու կատակասեր մարդու մը շուքը և իրոք Հովսեփ Յուսուֆյան մեր ամենեն նրբամիտն է։

Եվ իր բարոյական նկարագրին վրա ավելցող այս զվարթությունը երկնաբերձ լեռան մը վերելքին մեջ, ամայի ու քարուտ կողին վրա չսպասված ծաղկաստանի մը տպավորությունը կընե իմ վրաս։

<1893>

ՏՈՔԹՈՐ ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՎԱՐՅԱՆ

Շտապող մարդ մը փողոցը, որ երկայն ու քիչ մը ծուռ գլխարկ, Պուլվարտիե մը կհիշեցնե. բուռն, կրքոտ ու վեհանձն՝ ինչպես պարտք ու իրավունքն է ըլլալ ամեն երիտասարդի։ Աշխույժի ու կորովի մարնացում մը. անդուլ ու համբերատար աշխատություն մը որ ավելի պատվաբեր է քան շահաբեր. հազվագյուտ մարդ, որ իր ուսումը միմիայն փող դիզելու սահմանած չէ. շարունակող մը, գիտության չեզոք ու լուրջ շրջանակին մեջ, պատվավոր ավանդության մը, որով հայ բժիշկները հմտությունին՝ իրենց ազգին մտավոր զարգացումին ալ ծառայեցուցած են։

Ասոր համար թերևս Հիպոկրատի աշակերտներուն մեջ քիչ մը սեկուսացած մեկն է ինքը. անոնց պզտիկ համերաշխությանց, հաշիվներուն, հառաջադիմելու, հաճախորդ վաստկելու համար ի գործ դրած ճարտասանություններուն մարդը չէ։ Ավելի բարձր հորիզոնի մը մտատանջությունը ունի ինք, գիտության անձուկը։

Իր փառասիրությունը ատով կառաջնորդվի և արդար իրավունքի մը հանգամանքը կառնե։ Ես իմ մասիս, ուղիղ չեմ գտներ ուրեմն այն քննադատությունները որոնցմով ոմանք կխծբծեն զինքը երբոր երկասիրությանց ճակատը փայլող անունին քով կշարե իր գիտական տիտղոսները «ազատ ի գիտությունս, ճարտարագետ երկրագործ, վկայալ Փասթյոռյան ուսումնարանեն»։ Ասիկա չի նմանիր սպանիկ ազնվականի մը տիտղոսներու շարվածքին. Ավագ Սպանիո, դուքս Ալքանթարայի և կոմս Մորրոզի։ Ժառանգական ունայնություններ չէ, զոր Տոքթոր կկցե իր անունին. ավելի ճիշտ կըլլար նմանեցնել ասիկա հիշատակարանի վրա նշանակված սա կերպ արձանագրության մը — հարկավ գիտական աշխարհին մեջ — մարաջախտ Նեյ և ասոր քով, Վակրամ, Իենա, Ավսթերլից. մոգական բառեր, որոնք դժնդակ և ծանրագնի հաջողություններ կնշանակեն։

***

Ընդհանրապես նյութամոլ միջավայրերու մեջ գաղափարի մարդիկ հարգ ու արժեք չեն կրնար ունենալ. փույթ չէ ուրեմն որ հրեա սեղանավորի մը պես իրեն արհեստը չշահագործող Տոքթոր Տաղավարյան, մեր լավագույն բժիշկներեն մին, դրվատիք չլսե այդ միջավայրերուն մեջ. կամ, երբոր պատահմամբ հրապարակ իջնե, իր մեկ երկին դեմ, ավելի մաղձով քան թե բարեմտությամբ լեցուն քննադատության մը վրա իր բացատրությունը տալու համար, դառն, վիրավորիչ, երբեմն ինչև անհատական կյանքին թափանցել ուզող ընդմիջումներով դրվատելն իր խոսքերը։

Փույթ չէ. իրեն պահված ու վերապահված կմնա միշտ ամեն սրտի ու մտքի տեր մարդոց ամենաջերմ համակրությունը, որոնք լռությամբ, բայց ուշադրությամբ կհետևին իր ազգօգուտ աշխատություններուն և որոնցմե ավելի թանկագին ու փրկարար դեղագիր մը պատրաստել ոևէ բժիշկի տրված չէր բարեբախտաբար։

Մեր մեջ, ուր բարեկրթությունը իր ծայրագույն աստիճանին հասնելե հեռի է, պետք չէ սպասել որ նույնիսկ թշնամությանց առեն՝ զեն-

քերուն ազնիվը գործածվի միշտ. քիչ շատ վայրենի ժողովուրդն ենք, որուն պայքարի կազմածքին մեջ թունավոր նետը առաջին տեղը կգրավե ամեն ատեն։

***

Տոքթոր Տաղավարյանի գործունեությունը միայն գիտական հրատարակություններով չէ։ Հարգելի բժիշկը բանասիրական հետազոտություններով ալ ոչ նվազ օգտակար է իր հասարակության։ Հայ թատրոնի և Հայ դպրոցներու հաստատման վրա իր հավաքած տեղեկությունները շահեկան վավերագիրներ կկազմեն մեր ժամանակակից կյանքը ուսումնասիրողներուն համար։

Այս նյութերը, որոնք սակայն իր մասնագիտություններեն այնքան հեռի կթվին, իրոք այնպես չեն։ Սխալ է ենթադրելը թե, որովհետև սա մեկը բժշկություն ուսած է, կամ սա մյուսը որ մաթեմաթիքի վարպետ մըն է, գրական հրապույրներու հաճույքը կանգիտանան։ Իմաստակներու տրված է միայն մասնագիտական ուսումներու մեջ մոլորիլ ու գամվիլ, ճշմարիտ գիտնականը մտքի ավելի շատ զարգացում ունեցող մարդն է և ոչ թե շատ ավելի բան միտքը պահողը. գիտությունները զարգացման անհրաժեշտ պայմաններեն են, բայց ամբողջ զարգացումը չեն։

Քաջ կհիշեմ անհունական հաշվի ուսուցիչներես մին, ֆրանսացի մը, որ մաթեմաթիքի մեջ ունեցած աննման կարողությամբը իր ազգին ալ պարծանքներեն մեկն էր հարկավ։ Կհիշեմ վինքը որ մեքենաբանության առաջին դասը Ժորժ Սանեն առնված հիշատակությամբ մը սկսավ՝ ընելով մեզի.

— Մրջյունի մը քայլը աշխարհը կը սարսե։

Ուսկի՞ց ուր այս մեծ չափագետը իր անվերջանալի տարազներուն, Փ-երուն, Փ-երուն մեջ ատեն գտեր էր ֆրանսական մատենագրությամբ ճոխացնելու իր միտքը այնքան, որ Մյուսեի սիրուհվույն գործերեն առնված բնաբանով մը—և ամենեն պատշաճը այն ուսման որ շարժումներուն գիտությունը էր (մեքանիկ)— կրնար իր դասերը զարդարել։

***

Բժիշկներեն անոնք, որոնք գրականությամբ զբաղած են, իրենց հատուկ լեզվական դավանանք մը ունեցած են, որ հերձված մը եղած է շատ անգամ։ Տոքթոր Տաղավարյան այս կանոնին բացառություն մը չէ, ընդհակառակը. իր երեսին ըսեմ որ չեմ սիրեր իր գրաբարակերտ հյուս-

վածքը. պինգգլուխ աշխարհաբարյան մըն էի և եմ. չեմ ընդունիր որ ուզողը այս գեղեցիկ լեզուն ճաշակի զուրկ ոտարազով մը հագվեցնե ու փողոց նետե. բոլոր ուժովս կբողոքեմ այս կերպ ազատության մը դեմ որ զեղծում մըն է։ Ընդունինք որ բժիշկները, իբրև լուրջ ու գործի մարդեր, ճաշակի խնդիրներու մեջ դեգերելու ատեն չունին թերևս։ Իրենց նահապետը, վերջին ժամանակներուն, Ռուսինյան՝ ընտրողական աշխարհաբարովը հռչակավոր կրցավ ըլլալ. տաղանդը, նորության փափագը, կմրցին իր լեզվին մեջ, որ, իբրև ճշմարիտ արվեստագետի գործ, եզական ու հիացուցիչ է արդարև։

Բայց անկե զատ ոչ ոք մեր բժիշկ գրողներեն հաջողած է կարծեմ համակրելի ոճ մը մեջտեղ դնել. համոզումները հարգելի են անշուշտ, կմնա միայն գիտնալ թե լեզուն համոզո՞ւմ մըն է։

Ասով սակայն Տոքթոր Տաղավարյանի գործը չի դադրիր ամեն կերպով հարգելի աշխատություն մը ըլլալե, և երբ ներելի է մերինին պես հասարակության մը մեջ քանի մը ոսկիով բարերարի անուն և հռչակ ստանալ, անուն և հռչակ, զոր օրագիրները իրենց քծնություններովը կստորագծեն շարունակ, չեմ հակնար, կամ լավ ևս, կհակնամ որ Տաղավարյանի հանրօգուտ աշխատությունները չոչընչվին։

<1898>

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՄՐՅԱՆ

Լայն ու ընդարձակ ճակատ մը, որ կարծես, բոլոր գլուխը կգրավե և գլուխ մը, որ նիհար իրանին վրա, զարտուղության մը պես, կբարձրանա հանկարծ, կկանգնի, հուժկու, անկյունավոր գիծերով կցցվի։

Կապույտ և մանր աչքեր, տրտում նայվածքով մը, որ գիմացինին չեն ուղղվիր, այլ խույս կուտան անկե, անդին, հեռուն սևեռելու համար։

Բոլոր արտաքինը, ինքնամփոփ երևույթովը, վարժապետի տարտամ նմանություն մը կբերե, կամ ծպտված մնալու հարատև ջանքը ընող մարդու մը։

Գրագետը՝ բոլորովին տարբեր չէ այս արտաքին մարդեն. կյանքի վրդովանքեն խուսափուկ մեկը, այն բոլոր վեհերոտներու դասակարգեն, որոնք Աստուծո մը փեշին, Նախախնամության մը հովանիին ապաստանած կապրին, հոն կոչում կընեն շարունակ, ճիշտ այն երախային նման, որ դպրոցին մեջ իր դասընկերեն կերած ծեծին դեմ ինքզինքը կպաշտպանե ըսելով.

— Իրիկունը հայրիկիս խապար կուտամ։

Հայրիկը սակայն, եթե հայրիկ մը ունի, իրիկվան տուն դառնալուն, միայն դասերը սորված ըլլալը կհարցնե իրմե՝ առանց մտիկ ընելու իր գանգատներուն, ինչ որ շարգիլեր մանուկը դպրոցին մեջ միևնույն պաշտպանությանը ապաստանելու հաջորդ օրը։

* * *

Մրմրյան նորեկ մըն է, գեթ իբրև աշխարհաբար գրող, հայ հրապարակագիրներուն մեջ, թեև շատոնց իվեր իր քաջ ու հմուտ գրաբարագետի համբավը շինած է մեր հին լեզվի քուրմերուն անձուկ շրջանակին մեջ։

Հյուրմյուզի, Հայր Արսենի ախոյան մը ըլլալու չափ գրաբարագետ, որ Հուկոնի Փոսկոլեայն գրաբար թարգմանելով, ս. Ղազարու վանականներուն ասպարեզ կարդացած է ատենով։

Ինչ որ իր արժանիքը կկազմե, սա է որ ժամանակին հասկցած է թե մեր մեջ հին լեզվով մատենագրելը՝ ո՞րքան սերտ նմանություն ունի այս դարուս մեջ լատիներեն ոտանավոր մը հրատարակելուն հետ։

Գրաբարին, այդ պաուված ցնծուհիին սիրովը կորսված հոգիներուն մեջեն՝ ատենին դարձի եկող մըն է ինքը, որ մեր՝ հին աշխարհաբարյաններուս՝ վերի կողմը նայելու արտոնությունը կվայելե. վասնզի իր աշխարհաբարը ստուգիվ հիանալի աշխարհաբար մըն է։ Կարդացեք իր Արմաշը, Միսաքյանի կենսագրությունը։

Քանդակված պարբերություններ, որոնց ցցվածքը ու կարկառները՝ նյութը կամ գաղափարը իսկույն կհորինեն կպատկերացնեն աչքիդ առջև. ոսկեզօծ արձակ մը, ոչ կեղծ ու խարդախ փայլով, այլ զուտ ու հարազատ ոսկիի շողյունով։ Ադամանդի հղկումներով հղկված բառեր ու բյուրեղե ածականներ, որոնց բոլոր ցոլացող ճառագայթներուն մեջ, այս արձակը կնշուլե, ամառ ատեն արևին տակ տարածվող ծովի մը ջինջ կապույտին պես։

Իր շարադասությունը տարբեր է մերինեն. բայց շնորհազուրկ չէ. ուշադիր դիտողին համար՝ ինքնուրույն տարազը, զոր վերջ իվերջո կճանչնաս բուն հայերենի բեհեզներովը, մետաքսառէջ ծոպերովը պարեգոտած ոճն է, զոր իրմե առաջ և մինչև ցարդ ոչ ոք, որչափ կհիշեմ, զգեցուցած է իր գրվածքներուն։

Հարկավ, պզտիկ զննությամբ մը, դեռ գրաբարագետը կնշմարվի հոն. բայց ոչ այն գրաբարագետը որ ճամփան կորսնցուցած է հին լեզվի մը մոլորակներուն մեջ, այլ իր մեծ վարպետին, Միսաքյանին պես

օգտվող մը այդ հին լեզվեն, ճաշակավոր ընտրություններ ընելով, անոր նրբարվեստ գանձերը ու հորինվածքը զանազանելով հոռի շաղփաղփումներեն, և բերելով զետեղելով զանոնք իր գրվածքներուն մեջ, մոզայիքներու կամ կարմիր, կապույտ, կանանչ, փոքրիկ լուսամուտ ապակիներու պես, որոնք իր կառուցումներուն՝ հին մեհյանի մը հանդիսավոր, լուրջ ու աղոտ շքեղությունը կընծայեն։

Հասարակ ընթերցողին մատչելի գրողը չէ անիկա. նախնական աշխատություն մը պետք է, վերլուծումի պզտիկ ջանք մը անհրաժեշտ է իր դարձվածքները ըմբռնելու ու ճաշակելու համար. ճիշտ ինչպես բնության ծոցին մեջ գեղեցիկ տեսարան մը վայելելու համար շատ անգամ հարկավոր է պզտիկ վերելքի մը հոգնության հանձնառու ըլլալ։

Ըսի արդեն որ հանապազօրյա կյանքի ռամիկ, բայց անխուսափելի պայքարներուն մեջ կտրիճ մը չէ այս գրողը. աղմուկի ու ընդդիմության մարդ չէ անիկա. քաղաքեն ավելի գեղը և գեղեն ավելի վանքը կարծես կհրապուրեն զինքը։ Հո՛ն, այդ անդորրության և միայնության ծոցը, ուր բնությունը իր անսեթևեթ պչրանքովը, ձայներու հեզությամբը ու գույներու մեղմություններովը, անպատիր վայելքներու և երազանքի դուռը կբանա։ Հո՛ն, այդ հովվական կենցաղին առջև, այնքան հեռու մարդկայինեն և այնքան մոտ աստվածայինին, գրագետը երևան կելլե. իր նկարիչի վրձինը երանգներու գույներու չտեսնված ճոխությունով մը զմեզ կզմայլեցնե և ամենուս սրտին մեջ՝ գեղը երթալ ապրելու, աշխարհիս ունայնություններեն հրաժարելու փափագներ կարթնցնե։

Մրմրյան ամուրի մըն է, թեև քառասունին մոտ հիմա, եթե ոչ մատ մը ավելի. պետք եղածեն ավելի ամուրի մը, եթե հավատանք իր վրա և շուրջը պատմվածներուն. կնատյաց մարդն է ինքը և այդ պատճառով գուցե ինքը մինակ, էապես ոգեպաշտ (spiritualiste) և աստվածապաշտ գրողն է, խորհրդամած գրող մը մեր մեջ՝ ուր շուկատ ու աղկաղկ գրականություն մը կտիրե միշտ։ Ոչ այն գրականությունը որ գիտության կհենու. որ մեր կյանքին, եթե ոչ մեր մահվան, վերլուծությամբը կլուսավորվի. որ փիլիսոփայական դավանություն մըն է վերջապես, այլ եսականության համար, շահու համար, ամեն կեղծիքը, ամեն ստորնացումը ընդունող գրականությունը, ամենեն զզվելին։

Չեմ ըսեր որ իրմե զատ ոչ ոք մաքուր ու վերին գաղափարե մե, իտեալե մը չառաջնորդվիր. բայց կպնդեմ որ ոչ ոք անոր չափ ամեն վայրկյան աչքը կսևեռե հոն, գլուխ գլխի կապրի, կսիրաբանե անոր հետ, անոր լույսեն կամ հաճույքեն շլանալու աստիճան, եթե դուրս թողունք Եղիան, ափսո՜ս, բոլորովին շլացած մը։ Աչքե անցուցեք անգամ

մը Մրմրյանի Ալելուիան և ըսեք թե կարո՞ղ եք բան մը հասկնալ այս ակնախտիղ պարբերություններեն։

Հավատացողներու համար իտեալը աստված կկոչվի, կըսե Սթեֆեր։ Չեմ ծիծաղիր իր վրան, երբոր Մրմրյան ամեն բան վերադարձնելով տանելով այս գերագույն գաղափարին, ամեն առթիվ կոչում ընելով անոր իր գրվածքներուն մեջ. վերջիվերջո ազոթքի պես բաներ մը կթոթովե. եզական դեմքն է ան ինծի համար, նույնիսկ երբ ներշնչյալի մը վերացումը կբերե մեր գրականության մեջ, ուր ամեն բան այնքան տափակ և շատ հեղ ստորին է։

***

Եվ սակայն առեստուրի աշխարհեն եկող մըն է ինքը հրապարակագրության մեջ, պասմաի ու ամերիքանի վաճառականեն ծագած է գրագետը։ Այս հակասության առջև միտքս կվարանի, կկասի քիչ մը, և իր ապագան մարգարեանալը՝ կդժվարանա։

Իր գեղեցիկ կրծկալ մորուքը զոր վերջերս այնքան մեծցուց, իր կնախույս ու մաքուր կենցաղը՝ մոտ օրեն եկեղեցական ասպարեզը մտնելու նշան մը չեմ նկատեր ես. հակասությանց մարդն է միշտ անիկա։ Ամեն ինչ ուներ առենով իբրև գրագետ երևան գալու համար ու խանութպան եղավ այդ միջոցին. հիմա վեղարեն ու վերարկուեն զատ բան մը չի պակսիր իրեն՝ հազվագյուտ եպիսկոպոս մը ըլլալու և, ճիշտ ատոր համար, կսպասեմ որ վաղը, զգալով ունայնությունը իր երկնավեր կենցաղին, ինչպես մենք՝ մեր աշխարհիկ զբոսանքներուն ու գայթակղություններուն ունայնությունը կզգանք երբեմն, վերադարձ մը ընե դեպի մեզի, ոստում մը, վերջին պահուն, ծերությանը մոտ, նոր Ֆաուստ՝ նոր Մարկարիթով մը սկսելու համար կյանքը զոր չէ ապրած գեռ, այն վայրկյանին, երբոր ամենքը իր անբասիր վարքին արժանի պտակումը տեսնելու միայն կպատրաստվին։

<1909>

ՀՐԱՆԴ ԱՍԱՏՈՒՐ

Հեռվեն՝ բարձր ու պարթև հասակ մը, որուն պարարտ շքեղությանը քով գլուխը, պզտիկ մնացած, աչքի չի զարներ։

Հագուստ ու կապուստ մը, որ ընդունված կանոններե չի վրիպիր ու սովորական ըլլալն գուրս չելլեր ոչէ կեսի վրա. քալվածք մը, որ գինվորական խրոխտությունը շունենալուն համար ոչ նվազ կանոնավոր է, շարժուձևեր, որոնք բաբեկիրթ մարդոց հատուկ օրենքներեն և ոչ մեկուն դեմ կմեղանչեն, և ինծի պես՝ դիմացինին վրա պակասություն գտնելու աշխատող ամենեն բծախնդիր ու պահանջկոտ մարդուն շանքերն ի դերև կհանեն։

Ամառ ձմեռ, առաու իրիկուն, ահագին ծքաքներ, հսկա դեղեր հայերեն լրագիրներու, հանդեսներու, որոնք իր երկու դիի գրպաններեն դուրս կսպրդին, գլուխին կհանեն. կարծես շնչահեղձ չըլլալու սարսափով։ Շատ անգամ ալ տետրակներ, սեղմված թեին տակ, երբեմն գիրքերու ամբողջ հատորներ զորս տեղե տեղ կփոխադրե ամեն օր, կտանի, կբերե, կշտկե, կմաքրե, կգոցե, կբանա, կնոթագրե։

Ատկե անգին մնացածը՝ գեղեցիկ երիտասարդ մը, ուսյալ և պարկեշտ տղա մը։

***

Գրականության մեջ Հրանդը, ինչպես կանվանենք զինքը, մեր աշխարհաբարին դայակը ու ստնտուն է. մի՛ զարմանաք էրիկ մարդ մը ստնտու տեսնելով. հորմեհետե կիները կգրկեն արանց... մի՛ վրդովիք նորեն, պարկեշտասուն հոգիներ, ասպարեզները պիտի ըսեմ միայն և ուրիշ ոչինչ, էրիկ մարդիկ ալ փոխադարձը ընելու, կանացի զբաղումները ձեռք անցնելու իրավունքը ստացած են։

Աչալուրջ պահապանն է ան, որ երախային ձեռքը կամ ոտքը ծուռ չձգելու երկյուղով կփաթթե զայն Քերականության մը կապերուն մեջ, այն աստիճան սեղմ և ուժգին, որ մանկիկը, թևը ճիվը երերցնելու անկարող, շատ հավանականությամբ պիտի ավանդեր իր հոգին, եթե դիպվածով իր ճակատագիրը ըլլար այս երիտասարդին ձեռքը մնալ։

Թո՛ղ ավելք որ երիտասարդ բառը շարունակեմ գործածել իրեն համար, որ ինե տարու մը միայն պզտիկ է։ Շնորհ մըն է զոր կընեմ իրեն, երբ իրոք ես եմ որ անկե կօգտվիմ անուղղակի։ Հայ մեծատուններուն ազգին ըրած շնորհներուն կարգեն է այս և ես հիմա մեծատունի հովեր սկսած եմ առնել. գիտցե՛ք որ Ազնվաշուք կգրեն ինծի Պաստրիարքարանեն կամ Թաղ. Խորհուրդեն։ Ի՞նչպես կատարվեցավ այս աստիճանական բարձրացումը. գլուխս չեմ հոգնեցներ պատճառը գտնելու համար. բայց կխոստովանիմ որ այս անակնկալը կշոյե ու կգգվե փառասիրության սատանան, որ ներսիդիս կընակի։

Այս երիտասարդը ուրեմն կարգի ու կանոնի սիրահար մըն է ամեն բանի մեջ։ Դիտած եմ սակայն, որ այս սերը խոտոր կհամեմատի միշտ ձեռներեցության ոգիին հետ, որ անհատականությունները ու նկարագիրները կկազմե։ Կկարծեմ, որ այս հակումը պատասխանատվութենե խուսափումե ուրիշ բան մը չէ վերջապես։ Շատ մը մարդիկ միմիայն անոր համար կանոնով կշարժին, որպեսզի կարող ըլլան, ի հարկին, այդ կանոնին ետևը ապաստանելու։ Մարդկային ամեն արարքները արդարացնելու համար դյուրին ու առաջուց գտնված պատասխանն է ան։ Կամ թե կոխված ճամփան է, ուրկե ուրիշներ, քենե առաջ, տարիներով անցեր դարձեր են և ուրկե դուն ալ, քու կարգիդ կքալես, ոտքիդ տակ փոսի մը չհանդիպելու ստուգությամբ։ Առաջինը սակայն, որ այդ ճամփան բացավ, քու այսօրվան ունեցած ստուգությունդ չուներ անիկա։ Քիչ մը վարանելով, քիչ մը խոհեմությամբ, քիչ մը արիությամբ, քիչ մը խելքով, քիչ մը տաղանդով, քիչ մը վնասվելով՝ քիչ մը վնասելով կոխեց այդ տեղին վրա. ուրիշներ հետևեցան անոր և ուղին հարթեցավ այնքան որ տափակությունը եղավ, ուրկե այսուհետև կուրաց, կաղաց, գոսացելոց անգամ ներելի է անցնիլ դառնալ։ Այդ է ահա կանոնը ինծի համար։

***

Ես որ համակ զարտուղություն եմ, այս չափված ձևված մտքին հետ բարեկամ եմ միանգամայն, քսան տարվան բարեկամ մը, այնքան իրավ է որ մարդս իր չունեցածին կարոտը կքաշե, այդ չունեցածը անույշ կերևա իրեն աչքին։

Ասոր համար թերևս ամեն անգամ որ իմ ճշմարտազանցություններուս խոնջենքը կամ հարուցած վրդովմունքը կզգամ, իսկույն Հրանդին կվերադառնա միտքս։ Իր քարոզած անդորր ու խաղաղ սկզբունքները աչքիս առջև կուգան, հստակ ու վճիտ խոսքերը, անսեթևեթ ոճը, անքննադատելի շարադասությունները ուր՝ տեր բային, սեռի խնդիրը, բայը և չեմ գիտեր ի՛նչը կարգով շնորհքով կկենան, խելոք տղաքներու պես, և որոնց դեմ ըսելիք չեմ գտներ։

Հարկավ, ակներև ճշմարտությունները վայելուչ ձևով մը շարունակ կրկնելովը, Հրանդ իր գրվածքներուն մեջ կշռայլե քիչ մը տրամաբանության այն միջոցը, զոր չեմ գիտեր ինչո՞ւ հասարակ տեղիք կկոչեն ոմանք։ Հասարա՞կ, ինչո՞ւ համար արդյոք։ Բայց ամեն պարագայի մեջ, ասավ հավատարիմ կմնա իր կոչումին, իր ուխտին պիտի ըսեք, որ է դեմի մարդուն քննադատությանը տեղի չտալ, մաքուռ հետ չգժտիլ։

Ինքը, որ ամենուն բարեկամն է, իհարկե կբաղձա որ ամենն ալ իրեն բարեկամ մնան։

Ես երանի կուտամ իրեն. ատելությենե անմասն եղող իր հոգիին վրա կնախանձի իմինս որ չարությամբ լեցուն է։ Ես՝ միայն սրտմտիլ ու խնդալ գիտեմ. սահմանափակ ու նախնական գիտություն։ Հրանդը գիտե ժպտիլ անոնց դեմ որոնց ներելի չէ ծուռ նայիլ. ժպիտ, որ դրվատիք է, պարսավ է, այո՛ է, ո՛չ է, ամենեն անհաշտ բառերու ամենեն հաշտ խտացումն է. Հրանդն է վերջապես, հսկա հակասություն մը։

Իր համբերող սրտին, ամեն հակասությանց մեջ հաշտություն գոյացնելու ճգնող ճարտարության վրա կզմայլիմ միշտ. և այդ շնորհիվ իր ձեռք բերած ընդհանուր համակրությանը՝ բոլոր հոգիովս, ներսես, կամաց մը կվավերացնեմ, վախնալով, որ ինե եկող հայտնի վավերացում մը այդ համակրությունը չպակսեցնե իր շուրջը։

***

Եվ ահա այդ ընդհանուր համակրության մթնոլորտին մեջ Հրանդ կշարժի, կգրե, կօրագրե, կուսուցանե, երբեմն կքննադատե, իր ամենեն անույշ ժպիտը պարզած իր դեմքին վրա և չի հաջողիր մեկու մը սիրտը կոտրել։

Ապիկարներ կան որոնք ոտք կոխած տեղերնին անպատճառ բան մը կկոտրեն, կթափեն. ես ատոնցմե եմ. ուրիշներ՝ ապակիե, բյուրեղե առարկաներով լեցուն խանութի մը մեջ կմտնեն ուր, ամեն քայլափոխի, ամեն շարժումի, հազար նուրբ դյուրաբեկ ու թանկագին բաներ— անձնասիրություններ— կոտրելու ստուգությունը կա. և ահա քաջարվեստ լարախաղացի պես հոն կշարժին անոնք, կերերան, կանցնին, ետ կդառնան, իբրև թե լայն ու ամայի հրապարակի մը մեջ միս մինակ ըլլային։

Ասիկա ինքնածին հատկություն մըն է ու սորվելով չի ստացվիր։

***

Հրանդ Ասատուր իրավագետ մըն է, բայց փաստաբան մը չէ. մարդը բովանդակ՝ այս զանազանության մեջն է։ Դուն ուրեք, չըսելու համար երբեք, ի գործ կդնե իր արվեստը. իր ուսումը վայելող մը ու վայելցնող մը չէ. ագահ ու կծծի մարդու մը պես, որ իր հարստությանը տերը չէ։ Այս էապես վեճի, պայքարի, կրքի, երբեմն նախատինքի կյանքը

քը չի պատշաճիր իր հեզահամբույր սովորությանցը. ծանր բառեր ըսելու ու լսելու վարժությունը չունի։

Հրապարակագրության մեջ իր եղանակն է ընտրել այնպիսի նյութեր, որոնք իրեն դեմ ընդդիմախոսներ հարուցանելու բնությունը չունենան։ Այս մտահոգությամբ, ատեն մը վարանելե ետքը, Պատանեկան Ներշնչումներու հեղինակը վերջ ի վերջո կանգ առած է տեղ մը, իր ընտրած առանձին մեկ անկյունը որ իր սեփականությունն է ալ. աշխարհաբար լեզվի Քերականությունը և վերջացող տարվան մեջ Պոլսո Հայոց վիճակին վրա ուսումնասիրություններ՝ իր ճյուղը կկազմեն։

Այս ըստ երևույթին անփառունակ ու անվարձահատույց վաստակին մեջ՝ Հրանդ Ասատուր խզճամիտ և ուշիմ տոկունություն մը ի հանդես կբերե, ինքնիրեն և, քիչ մը ինքն իր գլխուն, պրպտելով, քակելով, քակոտելով հանգույցները, լուծելով առեղծվածները, փնտրելով և երբեմն գտնելով, ո՜վ երջանկություն, կանոններ, իր սիրական կանոնները մեր լեզվին քերականության, հավաքելով ժողովելով ասոնք ամենքը, ամեն մեկին etiquette-ները դնելով թանգարանի մը մեջ զետեղելու պես։

Պատմական նյութերու վրա իր պատրաստած նմուշներեն դատելով, իր աշխատությունը՝ անուններու ու թվականներու ժողովածու մըն է, զոր կարդացողը հին գերեզմաննոցե մը դուրս ելլողի տպավորությունը կունենա։ Իր մեթոդը, որ ամեն հավաքածուի սիրահարի մեթոդն է, համբերությամբ ու մանրամասնությամբ ձևացած է։

Կարծեմ թե բանասիրությունը ասիկա չէ բոլորովին։ Ապա թե ոչ, շատ դյուրին պիտի ըլլար բանասեր կոչվիլը. ըստ իս, ոչ այնքան հավաքելու, որքան դատելու մեջն է անիկա. ոչ այնչափ կարդալու, որքան իմաստը հանելու մեջ. ոչ այնչափ կանթեղները քովե քով շարելու բազմապատկելու, որքան զանոնք վառելու մեջ։

Այս վերապահումներով հանդերձ, իր աշխատությունները Աբրահամ Այվազյանի մը մասալներուն չեն նմանիր, ո՜չ հեռվեն ո մոտեն. ամենեն մաքուր ու ազնիվ նյութը, ապիկար ու անվարժ մարդու մը ձեռքն ինկած, ծիծաղելի շինվածք մը կարտադրե. միևնույն նյութը ձեռնհաս մեկու մը շնորհիվ թանկագին բան մը կըլլա։

Այս պարապմունքին մեջ Հրանդ Ասատուր՝ ա՛լ մարդու սիրտ կոտրելու վախը չունի. իր գրելիք ու պատմելիք դեմքերը շատոնց մեռած գացած մարդոց դեմքերն են. այսուհանդերձ իր գրիչը, նույնիսկ այս մեռնողներուն համար, միշտ զգույշ ու մեղմ է, առօրյա կյանքեն առնված ծալքով մը, ստացված վարժությամբ մը. երկաթ չէ անիկա, այլ

հնօրյա փետուրը որ կփայփայե այն միջոցին անգամ ուր խայթելու կշանա։

Հրանդ Ասատուր իր այս սահմանին, ու այս պզտիկ, բայց իրոք լայն անկյունին մեջ տեղավորված, կպահանջե որ իր հեղինակությունը ճանչցվի։

Կոնակը տված գրագարանին, որ կարծեմ ամենեն ճոխն է իր տեսակին մեջ, լեզվական ու բանասիրական նյութերու մագիստրոսն ըլլալու ճամփան բռնածի պես է, ինչպես Մկրյան Հայրն ալ քահանայության դասին է ատենե մը իվեր։ Իր միամիտ ու անխախտ համոզումն է, որ մենք Հայերս իրեն կպարտինք քիչ մը մեր լեզվական կանոնները։ Սահակ Մեսրոպի նման գյուտ մը ըրած ըլլալու չափ սնապարծ չէ. բայց թանկագին ու ծածկված հնություն մը երևան հանող գիտնականին արդար հպարտությունը ունի անիկա։

Մի՛ ըսեք ինծի որ մեր լեզվի կանոնները մամիկս անգամ գիտե. մամիկիս գիտցած քերականությունը՝ հայերենի դասատուներ չեն գիտեր շատ անգամ։

***

Քսան տարի առաջվան աղվոր տղայեն, որուն համար աղջիկները հոգի կուտային, հիմակվան դեռ առույգ, միշտ աղվոր, բայց քիչ մը դահացած մարդուն գալու համար, ի՜նչ փոփոխություններ։ Այն ժամանակի ոսկեզօծ շրջանակեն, որ իր պատանի ու խարտյաշ բանաստեղծի դեմքը կպարուրեր, մինչև մատենագրության ուսուցչի պատկերը, որ այսօրվան իր պատկերն է, ի՜նչ ուղևորությո՜ւն. և մինչև Հիվանդանոցին Օրացույցին հեղինա՜կը՝ ի՜նչ խոտորում։

Կիները մանավանդ, անոնք որ աղվորը աղեկեն կնախընտրեն, հարկավ պիտի չհասկնան և պիտի չներեն երբեք ասիկա երբ ես, որ էրիկ մարդ եմ, ես անգամ չեմ ներեր իրեն։

Իրեն վախճանը շատ դյուրին է ճշտել. հիմակուց կտեսնեմ զինքը ահագին ձեռագիր մը թեին տակ, որ Իզմիրյանց Մրցանակի Հանձնաժողովին կմոտենա։ Վերջին դարու մեջ Պոլսահայոց մտավորական զարգացման Պատմությունն է այս երկը, որուն կմախքը մասամբ մը հրատարակված է արդեն։

Ասկե օգտակարագույն գործի մը չէր կրնար սահմանվիլ այս մրցանակը, որ արդար վարձատրություն մը պիտի ըլլա հեղինակին և պակումը իր գրական փառասիրության։ Ատկե անդին, ապագան ոչինչ կվերապահե Հրանդին համար։ Մոռցա ըսելու որ Պարոնյանի կենսա-

գրությունը պիտի ավարտե օրին մեկը. բայց այս գործը լուրջ մարդոց շրջանակին մեջ, անոնց, որոնց կարծիքին մեծ կշիռ կընծայե ինքը, միևնույն ընդունելությունը պիտի չգտնե. հետո ուրիշ դառնություններ պիտի հաջորդեն ասոր. Ցորայանի կենսագրությունը զոր Հրանդ իր ծերության օրերուն մեջ պիտի ավարտե, թշնամիներ պիտի հարուցանե իրեն դեմ, բան մը զոր Հրանդ մինչև այդ ժամը ճանչցած պիտի չըլլա։ Հոն՝ ուր վերջին անխառն ու մնայուն սփոփանքը վերապահած պիտի մնա իրեն, նորե՛ն Հիվանդանոցի Օրացույցը պիտի ըլլա, ուր այս գրագետը ճարտարությամբ պիտի սպրդեցնե իր բանասիրական հոդվածները, գետնախնձորի տապկածի մը և շագանակի անույշի մը մեջտեղ։

Ապագային Տեր Երեմիան պիտի ըլլա անիկա, անոր պես կառչած իր ժամանակագրական հմտությանը և անոր պես սպիտակ, բայց միշտ գեղեցիկ մորուքը ձեռքը բռնած։

<1901>

ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐՅԱՆ

Ճառագայթող երես մը՝ պայծառ խղճմտանքի ցոլացումով. գեղեցիկ խարտյաշ գլուխ մը, երիտասարդի գլուխ, միշտ վեր բռնված, հակառակ մտավորական անընդհատ ու ծանր վաստակի մը ու, կարծես, ճիշտ այդ վաստակովը առուգացած. հասակը ոչ մեծ և ոչ փոքր. իր պարտականությանը, իր բովանդակ պարտականությանը մեջ ամփոփված մարդու հասակ։

Այս ամենը սակայն խրոխտ բան մը ունի որ անմասն չէ արդար հպարտությենե մը և որուն համար անծանոթ մը՝ իրեն մոտը երթալու պիտի վարաներ իրավամբ։ Ապաքեն իր մտերմության շրջանակը անձուկ եղած է միշտ, և չափազանցություն մը չէ պնդելը, որ ոչ ոք մուտք ունեցած է հոն։

Այս առանձնությունը հաճելի է իրեն. անկե, այդ բարձունքեն կդիտե, տարիներու հոլովումին հետ, անցքը, անդուլ անցքը իրերուն ու մարդերուն, հարափոփոխ, շահեկան, ու մշտնջենական տեսարանը՝ անակնկալով, ահավորով, ծիծաղելիով, զմայլելիով լեցուն, որուն թերևս ատեն-ատեն սրտնեղությամբ կհետևի, բայց զոր չի դադրիր ուշադրությամբ ուսումնասիրելե։

❁❁❁

Մեր ազգին կրթության հոյակապ վաստակավորն է ան. իր դաստիարակության գործը պարզապես հիանալի է. կոչումի ու անձնվիրության գործ, որ քահանայութենե ավելի սուրբ է և վարդապետութենե ավելի հմտության կկարոտի. ինքն իր գլխուն հիմնելով, պահելով, զարգացնելով կրթական հաստատություն մը, զոր ազգին բոլոր հարուստները ու աղաները մեկտեղ հավաքված՝ անկարող էին կանգուն պահել. ինքը մեկ հոգի՝ ավելի շատ աղքատ ու կարոտ տղոց նյութական ու մտավորական սնունդ տված, մեծցուցած է զանոնք քան թե ոևէ հարուստը մեր ազգին, և այս ամենը լռության ու համեստության քողին տակ՝ հռչակված ողորմությանց ճիշտ դեմը. ի՜նչ մեծ դաս։

Արդար է ուրեմն որ իր հիմնած վարժարանը իր անունովը և ինքն ալ իր վարժարանովը պարծենա։

Իր տված կրթությունը նյութապաշտ ձգտումը չէ, զոր ամեն բարձրագույն իտեալի վտարումեն կձևացնեն ոմանք, այնքան ջատագովված, գրեթե դրվատված այսօր. այլ նկարագիրը կազմող դաստիարակություն, որ Օգտակարին ետևեն վազելու ատեն գիտե Ճշմարտին քով ալ կանգ առնել ու Գեղեցկին առջև կորսնցուցած վայրկյաններուն համար չափսոսալ։

Այս կրթությունը ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ արդեն, քանի որ ջերմ հավատացյալ մըն է ինքը, որ մարգարեի մը վայելուչ մթասքող լեզվով մը գրի առած է Լամբնեի մռայլ ու մութ պատգամները, որոնք կարծես ստորերկրյա եկեղեցիե մը կուգան, անոր հաստ ու խուլ պատերը ճեղքելով կհասնին մինչև մեզի։ Ի՞նչ բանի հավատացող սակայն, ասիկա պիտի չի կրնար որոշ կերպով ըսել մեզի. հավատացող մը, որ մարդս վայելելու համար չի գար աշխարհ, այլ պարտք մը կատարելու, քաղելե ավելի հերկելու համար. անձնուրացության հավատացող մը ուրեմն, հավատքներուն գերագույնը։

❁❁❁

Խորհող մը, իմաստասեր մըն է ինքը. ոչ անոնցմե որոնք վայրապար դեգերանքներու մեջ մոլորած՝ ամեն օրվան ճամփան կկորսնցնեն. իր իմաստասիրությունը գիտե սակավատև կյանքեն մարդուս՝ շատ բան չպահանջել ու քիչով գոհանալ, որովհետև գիտե որ աչքդ բացած գոցած պահուդ ահա օրը իրիկուն կըլլա. իրավունք ունի ուրեմն չարհամարհելու ամենաչնչին բարելավությունը, զոր կյանքը կրնա պարգևել։

Կյանքի պատահարներու դաժան հպումեն, անոնց ատեն-ատեն մարդուս ուսին վրա նետած ցուրտ վերարկուեն սարսուռ զգացած է հարկավ երբեմն բանաստեղծի հոգին, որ իր ներսը կբնակի. բայց լքումի ու վհատության անմատչելի է իր սիրտը. հետո օրն ի բուն մանկության, պատանեկության հետ ապրող այս մարդը, ատով իսկ, ապագային կնայի ամեն ատեն. անոր հետ մտերիմ ու ծանոթ է ալ։ Քառորդ դարի մը տևողությամբ հաստատված անխափան մտերմություն, ամենեն պատվաբերն այս առանձնասերին համար։

***

Գրագե՞տ է արդարև. հրապարակագի՞ր. ամեն ատեն. իր տարազը պարզության, վայելչության, ճկունության տարազն է. շլացնելե ավելի համոզելու կմիտի ան. իր ակնկալությունը գրվատիք ունենալե ավելի իրավունք ունենալու մեջ կկայանա. գույներու, երանգներու շլացումովը չի հոգնիր իր վրձինը. բայց մատիտը իր գիծերուն ճշտությամբը անհավասարելի է, ինչ որ որքան նկարչին նույնքան գրագետին խղճմտությանը և պարկեշտությանը ապացույցն է։

Իր սեռը, տարիքի բերմունքով թե ուրիշ պատճառով մը չեմ գիտեր, fantaisieեն կխորշի միշտ. իր գրվածքը լուրջ ու հյութեղ է։ Հետո, իր դավանանքը գրականության մեջ նույնն է ինչ որ էր կյանքի ըմբռնումին համար. արշավի մարդը չէ ինքը, ոչ իսկ աճապարանքի. ասոր համար է որ իր գրած լեզուն, տարիներու ընթացքին մեջ՝ ոտքեն մինչև գլուխը մերկացած ըլլալով հանդերձ գրաբարի շքեղ գրգլյակը, դեռ բոլորովին մեր աշխարհաբարը չէ եղած. բաճկոնը պակաս չէ, ոչ ալ շապիկը, բայց բան մը, զոր ստուգիվ չեմ կրնար ճշտել՝ պակաս է վերջապես անոր վրա։ Ասիկա սակայն իմ փույթս չէ բնավ և չի նվազեցներ իր գրագետի արժանիքը։ Իմ մասիս չեմ ներեր որ մեկը դեմս ելլի ու գրած լեզվիս չհավնի. գրականության մեջ լեզվի թույլտվությունը, անոնց համար, որոնց ուզած ձևով այդ լեզուն գրելու կարողությունը վեճի տակ չէ, այն թույլտվություններեն մեկն է, զոր Ժյուլ Բիմոնի մեկ խոսքը փոխ առնելով հոս, «անհրաժեշտ» պիտի կոչեմ. ուստի արդար է, որ ես ալ չմիջամտեմ ուրիշի մը գրելու եղանակին, գրելակերպին, քանի՞ որ հետադեմ մը չնեպվելու համար անպատճառ հարկ է որ ես ալ քայլ մը առնեմ դեպի հառաջ։

Գաղափարներու աշխարհին մեջ շատ հեղ տարակարծիք գտնված ենք իրարու քսան տարիներն իվեր, հորմեհետև հոս հոն կհանդիպինք իրարու մամուլի միջոցով։ Féministe մըն էր ան արդեն Մայտան պաշտպանելով իմ հարձակումներուս դեմ երբոր ես իմ արևելքցիի համառությամբս այդ դատին դեմ կմաքառեի և դեռ կմաքառիմ, համոզված, որ ատով կինը կկորսնցնե քան թե կշահի իր շնորհին մեջ, որ իր կոչումն է. եսասերի, կնասերի համոզում պիտի ըսեք ինծի և իրավունք պիտի ունենաք։

***

Քիչեր մեր մեջ կհավասարին իրեն հմտությունով, որ շարունակ կարդալով, վերծանելով ձեռք բերված է։ Զարմանք որ այս ընթերցումի մոլությունը չէ վնասած իրեն։ Ես կկարծեմ, որ կարդացված գիրք մը մոռցվելու է. կվախենամ որ դարձյալ ծանր ճշմարտազանցություն մը ըրած չըլլամ առաջ նետելով այս գաղափարը, որ, ամենալով կխոստովանիմ թե, իմ էն սիրած գաղափարներես մեկն է. ասոր համա՞ր է արդյոք, որ այն սուղ վայրկյաններուս մեջ զոր ընթերցանության կհատկացնեմ, ակնարկ մը կնետեմ ու կանցնիմ գրքի էջերուն վրայեն, զանոնք ավելի աչքե անցուցած ըլլալու քան թե անոնցմե բան մը հիշելու նպատակով։

Զորավոր իմացականությունները, որպես է այս գրագետինը, կօգտվին գուցե ուշադրությամբ հետևելով հեղինակին, բայց չի՞ գար ատեն մը որ միտքը ավելի հիշելու քան թե խորհելու ծալքը առնե. կամ միտք պահված ամեն նյութի համար դնելու տեղ չմնա հիշողության մեջ և կամ այդ բոլորը խնամով կարդով հոն զետեղելը գժվարանա, անթիվ հատորներով առլցված մատենադարանի մը պես։

Կրթության, դաստիարակության կենսական հարցերը իր ամեն ժամու որոճումներուն նյութերը և իր մեծ հեղինակության ենթականերն են, որուն իր շատ մը առիթներով արտասանած բանախոսությունները կվկայեն. ու հոս է, որ ահա դաստիարակը, խորհողը, գրագետը ձեռք ձեռքի կուտան կմիանան, կազմելու համար մեր ժամանակին ամենեն նշանավոր դեմքերեն մին որ Պերպերյանն է։

***

Ապագա՞ն. բայց ապագան հիմակվընե շնորհված է այս բախտավոր ու միանգամայն արժանավորին. անմահության մեջ մտնե՛լ կենդանության ատենեն. այս առասպելային ու շքեղ ճակատագիրը այսօրվընե իրենն է։

<1901>

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Սև վերարկու մը որուն փեշերը հողմածուփ կերերան միշտ, հապճեպ ընդոստ քալվածքի մը բախումներով. լարված հսկա ժամացույցի ճոճանակին պես օդին մեջ խոշոր աղեղներ գծող զույգ մը թևեր. մոլորուն նայվածք մը մռայլ աչքի մը մեջ, ուր ուշադիր մեկը արյան բիծեր կնշմարե, չեմ գիտեր ուրկե եկած. խուլ ձայն մը, որ բառերը կուլ տվող Պարտիզակցիի արտասանություն մը կբերե ականջիդ։

Խրոխտ, ըմբոստ ու խռոված հոգի մը, մշտնջենական հալածող մը ու հալածված մը. դժբախտ մը մեկ բառով։

Ստվերներու, մութի պիտի ըսեի, այս սիրահարը, ի՞նչպես կրցավ «Լույս»-ի արտոնատեր ըլլալ. կարելի է անոր համար լույս ու մութ բառեր են լոկ, ու իրապես աշխարհիս վրա ոչ լույս կա ոչ մութ, այլ տպավորություններ միայն անհաստատ, հարափոփոխ, գրեթե հակասական. հոս ուղիղ ու հոն սխալ, ինչպես ըսած է Փասքալ։

Ավետարան կկարդա հարկավ, բայց Վեցհազարյակն ալ չգիտնալուն չեմ կրնար երդում ընել։

Ստնտուներու երկրեն եկող այս եկեղեցականը, որ այնքան շատ խոսիլ տված է իր վրա, իր ջաղացքի մը նմանող մշտաշարժ թևերուն պես թշնամական բան մը ունենալու երևույթը ունի, մինչդեռ անվնաս մեկն է գուցե և եթե չի վախնամ հանրային կարծիք կոչված անխելք ոգիին դեմ նոր խիզախում մը ըրած ըլլալու ամբաստանութենեն, պիտի ավելցնեի որ ատենով օգտակար անձ մըն էր այս վտարանդին։

***

Ինչո՞ւ զինքը շրջապատող խուլ հակառակության մասնակից չեմ ես. անոր համար գուցե, որ մեր եկեղեցականները, խոսք մեկ ըրած կատեն զինքը, իր մասին միայն ոտնակոխ ընելով այն համերաշխության ոգին, որ զիրենք կմղե աչք գոցելու ամեն վրիպումներուն, որոնք ավելի իրենց մեջ քան այլուր կհաճախեն։ Գուցե անոր համար որ համոզված եմ, որ ինքնին մաքուր ու ազնիվ էր իր կավը, զոր անձրևները, որ երկինքեն կուգան, ցեխի վերածեցին, ավելի մաքուր քան այն մարմարները, որոնք սպիտակ կերևան դուրսեն, արատնին իրենց ներսը պարտկելով։ Անոր համար նաև որ իրոք հանճարեղ գրող մըն է. ուրույն տաղանդ ու դրոշմ դնող մը իր բառերուն ու տողերուն մեջ, սուր և խայթիչ երգիծանքե ու մանկական պարզմտութենե շինված տաղանդ. հակասական բան մը իր բոլոր կյանքին պես։ Վասնզի ուրիշ բան է առհասարակ տաղանդ ունենալ, և ուրիշ է զատ, քեզի հատուկ տաղանդ մը, ոճ մը ունենալ. այնքան մեծ է երկրորդը առաջինեն որքան մեծ է բարեկամ մը ունենալը բարեկամներ ունենալե։

Եվ վերջապես անոր համար որ զվարթ տառապյալ մըն է այս վարդապետը, կյանքի բեռը տանելով իր ուսերուն վրա անպատկառ անհոգությամբ մը, կանոնները, պատվերները ոտնակոխ ընելով շարունակ. աներկյուղ ըմբոստ մը, որ երկնային պատիժներեն չահաբեկիր ու մարդկային հանդիմանությունները չի սեպեր. որ ամենուն հետ կկռվի ու կհաշտվի, ամեն տեղ կմտնե, կիջնե ու կելլե երբեմն ալ, բայց ավելի կիջնե քան կելլե. միշտ համակերպելով ամեն կերպ զրկանքներու որոնց սովորած է և, նորատեսակ Միհրդատ, անզոր դարձնելով անոնց դառնությունները իր հոգվույն վրա։

***

Անոնք որ գրվածքի մը մեջ խնամոտ ու վաստակյալ կանոնավորությունը և ուղղությունը կփնտրեն, անոնք որ արդուզարդը, բառերուն պերճությունը, բացատրությանց ճոխությունը կսիրեն, Վահան վարդապետին գործերեն մեծ բան մը չեն կրնար հասկնալ։

Իր գեղջուկ ու քահանայախոս բարբառը ֆրանսական մատենագրության նրբություններեն ու խաղերեն ախորժողներուն աչքին՝ արժեք չունի։

Հայրենի երդիքին տակ եփված թանն է, ապուր ուտող այս վարդապետին ապուրը, և եթե Բայառի ճաշարանին գրգանույշ համեմներովը պատրաստված չէ, գեթ հարազատ համ ունի ու սրտի մոտ հոտ մը կբուրե. սննդարար ու մաքուր է միշտ և արյունը չապականեր ֆրանսացի խոհարարին պատրաստածին պես։

Իր ընդհանրապես հարթ ու հավասար ոճին մեջ սակայն, տեղ-տեղ թռիչ կառնե, իր ոճը կբարձրանա անակնկալ կերպով մը և գրագետը՝ բառով, խոսքով մը հանկարծ կհայտնե ինքզինքը, շլացնելով զքեզ։

Ժամանակ մը Վահան վարդապետը մեր ազգային կյանքի խղճամիտ ուսումնասիրողն էր. առաջնորդական ուղևորություններ հայրենի գավառներու մեջ՝ բեղմնավորած են իր հմտությունը, իր վրա ձգելով թափառական Հրեայի մը— քրիստոնյա հրեայի մը— առասպելախառն համբավը։

***

Իր վերջին մասին գուշակ մը չեմ կրնար ըլլալ. հարցուկ մը ըլլալու է գիտնալու համար ինչ որ Ճակատագիրը կվերապահէ իրեն. ապահովապես պատրիարք չի պիտի կրնա ըլլալ, թերևս եպիսկոպոս ալ չձեռնադրվի, թեև եպիսկոպոսացուի վարակումը հիմա կՃարակի ավելի քան երբեք. բայց կհավատամ որ իր մասին քիչ-քիչ ավելի արդար դատաստան մը պիտի կազմվի. իր հոտն, իր եկեղեցին սիրող մըն է ինքը, ոչ թերևս այնպես՝ ինչպես ամեն ոք կսիրե։

Եվ երբ օր մը ձգե ու երթա այս աշխարհը, չեմ գիտեր թե իր գերապատիվ ու արժանապատիվ եղբայրները ի՛նչ պիտի ընեն, բայց ապահով եմ որ աշխարհականները իր կորուստը պիտի զգան։

Բառեր կան որոնք գոյություն ու նշանակություն ունին, բայց իրենց տեղը գրված չըլլալնուն համար, գիրքին վերջին երեսը կազմող ցուցակի մը մեջ կարձանագրվին վրիպակ անունով։

Վահան վարդապետ մարդկության գրքին մեջ խոշոր տպագրական սխալի մը տպավորությունը պիտի ձգե երթա։

<1905>

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆՈՒՐՅԱՆ

Գլուխը վեր բռնած մարդ մը, միշտ վեր բռնած, սովորական մահկանացուի մը հետ չշփոթվելու ջանքով մը. բարձր հասակին վրա լանջքը դուրս կպոռթկա, հրավեր կկարդա, վրադ հարձակելու պես ձևեր կառնե։ Ամեն բան ուժ ու խստություն կբուրե այս մարմնին վրա, պատերազմիկ ուժ, որուն ինքնավստահ հանգամանքը մեկ նայվածքով աչքի կզարնե խկույն։

Գործի մեջ ու խոսքի մեջ, տունը կամ դուրսը անփոփոխ ու միակտուր կգտնես զինքը. հին ատենի ասպետ՝ կամ դարավերջիկ բռնավոր, որ իր զեն ու զարդեն չի մերկանար, օրվան ոևէ մեկ ժամուն հանկարծակիի չգալու համար։

Ուժի, կորովի այս արտահայտությունը մարմնեն ավելի գլուխեն կուգա, մեծ ու իշխող զանգված, ալևորած վերջերը,— բարձր սարերու ալևորումովը,— որ հոժարությամբ, դյուրությամբ, վերջերը՝ քիչ մը տաղտուկով, կտանի դեռ մանվածապատ խորհուրդներու ու վրդովված խղճմտանքի մը ծանր բեռը։

Փողոցին մեջ կանոնավոր, գրեթե զինվորական քալվածք մը, որ կճնշե կոխած հողը, չանալով կարծես իր գարշապարին դրոշմը ազեկ մը տեղավորցնել, կամ ցույցի քալվածք մը շմատնելու համար հոգեկան պարտասումը։

Զայնին մեջ երբեմն մեղմություն մը, որ դիմացինին զիջում մը ընելու ծանուցումը վրան կկրե։ Խոսվածքը՝ ամենեն հանճարեղը, ամենեն խորունկը և ամենեն նուրբը, սպառնալիքով ու գգվանքով խմորված, խունկի բուրումներով, վարդի փայփայումներով օծված, բայց նաև սուրերու շկահյուններով, թնդանոթներու որոտումներով շինված սենֆոնի, հիանալի ներդաշնակություն, որ զքեզ կհմայե բայց չի համոզեր։ Մարդիկ կան որոնք անուշությամբ կնվաճեն դիմացինը. Նուրյան անունցմե չէր։ Այս մեծ ուժը դիմացինը կրնար ընկճել, երբե՛ք անձնատուր ընել։

***

Ահա նկարագրությունը մարդուն, որ մեր հասարակության գործերը իր անսահման ակնկալություններուն համար բացված միակ ասպարեզն համարած էր։ Իր բովանդակ կյանքը հարատև ճիգ մը եղած էր ազգին աղետները շահագործել, այնպիսի սկզբունքներու կոչում ընելով, որոնք ամենեն զարհուրելի ոճիրները արդարացնելու համար հեղհեղված են միայն։ Զեյթունի ապստամբությունը, Հայոց ջարդը 96-ին, իր կյանքին երկու ահավոր ու արյունոտ էջերը պիտի կազմեն։

Հովհաննես Նուրյան հանրային գործերու մեջ ամեն խորհուրդ ու աջակցություն արհամարհող կամքով մը հառաջացեր էր, միս մինակը, իր գիտցած կերպովը, որ ափսո՛ս ամենեն մաքուրը և ազնիվը չէր, հարթելով ճամփուն դժվարությունները։

Եվ ահա օրին մեկը սահմանադրական արշալույսի ծագումեն շատ առաջ, այդ ճամփան հետզհետե անձկացեր, նեղցեր էր. իր պաշտած միակ աստվածը՝ Բռնապետությունն ալ երես դարձուցեր էր իրմե։ Ազգը Արփիարին ձեռքովը ապտակեր էր զինքը։ Ամեն կողմեն անհաշտ ատելություններու մթնոլորտի մը մեջ մնացեր էր։ Ոչ իսկ Փերայի թաղական խորհուրդի անդամ. հետու՝ ամեն հանրային գործունեութենե։

Ու այս անխոնջ ու աննկուն մարդը, մինակության այս ժամուն, հոգնությունը կզգար անցյալին։ Իր ճամփուն բոլոր երկայնքին վրա հարուցած զայրույթի ազազակները, որոնք իր ականջը չէին հասած թերևս, հիմա որոշ ու հստակ կերպով կուգային իրեն և զարմացած ապշությամբ կի՛մանար, իմանալ կուգեր, որ ինքը էապես համակրելի մարդ, ամենեն բուռն հակակրությունը մարմնացուցած էր իր անձին

վրա։ Իրեն հետ, կամ ավելի ուղիղ խոսելով, իրեն պես աշխատողներուն դեմ՝ հասարակության զգացած զայրույթն ու նողկանքը, մի միայն իր անունին, իր համբավին վրա կծանրանային, այն տոկուն լաստին պես որ ամեն բեռ կտանի առանց ընկղմելու։

* * *

Գրկել մը կա այնքան բուռն, որ գրկվողին վայրկյան մը շունչ առնելու թող չի տար։ Հովհաննես Նուրյանի հանրային գործերու հետամտությունը քիչ մը ասոր կնմաներ։ Իր ամեն գործին մեջ՝ բոլորանվիրություն մը, գաղափարի մը միայն ծառայել և ամեն բան ստորադասել մը կար այդ գաղափարին. խառնվածքի խնդիր է ասիկա. քիչ մըն ալ ասպարեզի անձկություն. պզտիկ հասարակության մը պզտիկ պետքերու հետ զբաղիլն է որ ա՛լ ավելի մեծ հոգերու դիմագրավելու կարող ույժին հետ՝ պատշաճ համեմատություն մը չառներ երբեք։

Երևակայեցե՛ք առաջնակարգ խնջույքներ պատրաստելու կարող խոհարար մը, ապարանքներու փափկաճաշակներուն գոհացում տվող արվեստավոր, որ էսնաֆ մարդու տան մեջ կերակուր եփելու կոչված ըլլա դիպվածով։ Իր պատրաստած կերակուրը կրնա համադամ մը ըլլալ. բայց, ի՞նչ օգուտ, որ այդ տունին կարագի ու հավկիթի տարեկան բոլոր պաշարը կվատնե։

Հովհաննես Նուրյան մեր հասարակության մեջ պահպանողական ոգին իսկ է, ազնվապետական պահանջումներով լծորդված։ Մշտ կհիշեր որ ամիրայի ու անոնց լավագույնին, Պեզճյանին, շառավիղն էր։

* * *

Հեռուն գտնվող առարկայի մը մոտեցածիդ չափ այդ առարկան կմեծնա աչքիդ. անորոշ ու տարտամ կեսը, զոր անծայրածիր հորիզոնեն կնշմարեիր, քովը հասնելուդ՝ իր բարձրությանը անակնկալ չափովը զքեզ կապշեցնե։ Մարդոց մեջ ճիշտ հակառակն է ասոր. հազվագյուտ են անոնք, որ իրենց մոտենալուդ՝ կրնան հեռվանց նշմարված համեմատություններնին պահել. Նուրյան այդ սակավաթիվներեն մեկն էր։

Ամեն արժանիքի տեր մարդոց պես՝ դասակարգերու կուսակից էր ան։ Եվ ասոր համար իսպառ անհպելին մնաց իրեն այն բանը որուն կարոտը ու անձուկը քաշեց սակայն իր բոլոր գործունեության երկար շրջանին մեջ, ժողովրդականությունը։ Իր սրտին մեծ ցավը մնաց ասիկա մինչև վերջը։ Տարօրինա՜կ բան, որ շատերուս համար մեծ դաս մը կպարունակե իր մեջ, այս կորովի անձնավորությունը իր բովանդակ կյանքին մեջ արհամարհած ու անարգած այդ բանին կարոտովը տոչորեր էր շարունակ, առանց հայտնի ընելու։ Այն ցնցոտիներու մեջ պլլված պչրուհին, այն պապուկ կինը, որ ստորին, բայց ստվար դասերուն համակրանքը կկոչվի՝ միշտ երես դարձուցեր էր իրմե, նվազագույն արժանիքի տեր մարդոց ժպտելու համար։

Եվ եկո՛ւ տես որ՝ բոլոր ուրիշ հաջողություններեն, թավիշե պատմուճաններու, մուշտակե վերարկուներու փերեետումեն, վուշե ճերմակեղեններու կամ բրդեղեն ներքնազգեստներու շրշյուններեն ավելի՝ այդ մուրացիկ կնկան աղտոտ լաթերը ախտավարակ հրապույր մ'ունեին իր աչքին։ Այդ երես դարձվիլը իր վերջին տարիներուն միակ մտատանջությունն էր. ամեն ջանք կրներ ատոր անիրավությունը ապացուցանելու համար։ Հիմա որ երիտասարդության տարիներուն վերադառնալը հնարավոր չէր ալ, անցյալին պատմությունով սփոփվիլ կուզեր, իր փափագին չհասած սիրահարի մը պես։ Ունայն ճիգ, որ ազգային անեծքի մը պես ամեն տեղ զինքը հետապնդող հալածանքը չէր կրնար զինաթափ ընել։ Եվ հանկարծ արցունքի կաթիլ մը կշողար իր աչքերուն մեջ. այո, արցունքի կաթիլ մը, որ սրտեն կբխեր՝ ապառաժե սորսորող վճիտ ու պայծառ ջուրի մը պես։

* * *

Իր ձայնը հանրության մեջ երբեք համակիր արձագանք մը չունեցավ. սիրված ատենաբանը չէր ան. իր խիզախ խառնվածքին կպարտեր այդ անհաջողությունը։ Շեշտի անկեղծություն մը կա, որ կեղծիքներուն ամենեն վտանգավորն է. հասարակությունը իրեն պատշաճեցուցած էր այս ծանր վճիռը։ Եվ սակայն խոսակցությունը այս մարդուն՝ անհավասարելի կերպով հրապուրիչ, հազար տեսակ ցայտումներով, անակնկալներով դրվագված էր։

Աղվոր խոսելու գաղտնիքը իրն էր ու կվախնամ որ իրը պիտի մնա։

Սովորությունն էր իր գտնված ժողովներուն մեջ պարապ ու ոչինչ մարդոց հետ գործակցիլ. իր անհատականությունը ավելի վեր հանելու հնա՞րք մըն էր արդյոք ասիկա, աղվոր կնոջ մը պես, որ իր փայլը չնսեմացնելու համար՝ իրմե տգեղին հետ պտրտելու կելլե փողոցը։ Օր մը դիտողություն ըրի իրեն։

— Այդ պարապ անձերը իրենց օգուտը ունին,— պատասխանեց ինծի,— ոչ թե ինծի՝ այլ հասարակության համար. միևնույն գործը, որ

մեկ անձն մը պիտի բխի, միշտ թերի ու սխալ մտածված բան մը պիտի նկատվի, ութ կամ տասը անձի որոշումով մը հաստատված՝ հասուն դատողությամբ մը արտադրվածի դրոշմը կստանա և վստահություն կներշնչե։ Պատշգամներու տակ և իբրև թե անոնց բեռը տանելու համար դրված գեղեցիկ մարմարե քանդակված քարեր՝ ֆոնսոլներ կտեսնես միշտ։ Այդ քարերը, պատշգամին հաստատության տեսակետով, օգուտ մը չունին. ոչ ոք պիտի համարձակի սակայն այդ պատշգամին վրա ելլել և հոդ կենալ, երբ օդին մեջ կախված տեսնե զայն, առանց սեպ նեցուկի, մինչդեռ այդ մարմարե քարերը իրեն վստահություն կներշնչեն. աչքի վստահություն, որ մտքինին չափ էական բան մըն է։

Ուրիշ օր մը, խոսքը մեր ազգայիններուն իրենց վիճակին անգիտակցությանը վրա էր։

— Հանցանքը,— ըսավ,— մեր տուներուն մեջ գտնվող հայելիներունն է թերևս, որոնք զմեզ իրականեն ավելի մեծ կցուցնեն։

Ու այսպես ժամերո՞վ. ամենեն նրբամիտ ու հանճարեղ նմանություններով կպատկերացներ իր խոսքը։

***

Իր կյանքին պես իր մահն ալ ուժգին ու սաստիկ բան մը եղավ։ Զինքը շանթահարող հիվանդությունը անոր գլխուն վրա հարձակեցավ, ճիշտ այն տեղը, ուր իր մեծ կարողությունը զետեղված էր և ուր սիրտը ու հոգին անգամ հաստատված կթվեին։

Մահը՝ սովորական ու գռեհիկ հիվանդություններու համեցումներեն, վերջին ստորնացումեն հեռու պահեց զինքը. մեկ քայլափոխով կյանքեն մահը անցավ անիկա։

Իրեններուն համար հարկավ բաղձալի բան մը պիտի ըլլար, որ զինքը զարնող հարվածեն վերջն ալ գեռ ապրեր ան գոնե քանի մը տարի, նույնիսկ կաթվածահար, նույնիսկ թոթովելով լեզուն՝ սուր ու խայթիչ, զոր այնքան ճարտարորեն գործածեց, նույնիսկ խոնաբհած՝ գլուխը, զոր այնքան աաեն վեր բռնած էր։

Իր ճակատագիրը չուզեց ասիկա և իրավունք ուներ չուզելուն։

<1909>

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ ԵՎ ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՁԻՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Անտարակույս ընթերցողներս պիտի զարմացնեմ, երբ ըսեմ, թե Չինաստանի մեջ հայկական գաղթականություն մը կա։ Հայ գաղթականություններ ի Հնդկաստան ծանոթ են. բայց չինաց մեջ առաջին անգամն է որ կլսվի։

Այս զարմացումը ապշության պիտի փոխվի, եթե ավելցնեմ, թե Չինաստանի գաղթականությունը Թուրքիո հայոց չափ բազմաթիվ է, ու Պոլսո հայոց չափ բազմաթիվ մաս մըն ալ կբնակի ի Փեքին՝ նույն խակ Չինաստանի մայրաքաղաքին մեջ։

Ու երբ ըսեմ, թե այս հայ գաղթականության ներքին ու ազգային գործերը ճիշտ մեզի պես կամ՝ քիչ փոփոխությամբ, սահմանադրությամբ մը կտնօրինեն, թե հոն ևս Պատրիարք մը և Ազգ. Վարչություն մը, Երեսփ. Ժողով մը ունինք, թե հայոց լեզուն կխոսվի ու կգրվի՝ թեև հայերը չինական անուններ կկրեն, թե տեղական մամուլ ու մատենագրություն մը կա, թե այդ հայոց մեջ խելացի մարդիկ կգտնվին ճիշտ այս տեղի նման, իրավ է որ բոլոր ըսելիքներս ավարտած պիտի ըլլամ, բայց ոչ ոք պիտի հավատա խնձի ու ամենքը պիտի ծիծաղին։ Հիմակվընե կերևակայեմ թերահավատ ընթերցողներուս հուզմունքը.— Կարելի՞ բան է որ Չինաստանի մեջ հայեր ու բազմաթիվ հայեր, հայ գաղթականություն մը կգտնվի ու տեղեկություն չունենանք, պիտի գոչեն ամեն կողմեն։— Ոչ, կատակ մըն է այս, պիտի պատասխանեն ուրիշ մը, բայց անախորժ կատակ մը, քանի որ հայկական գաղթականություն մը ծագրի նյութ կընտրե։— Ինչ որ ալ ըլլա՝ ծիծաղելի է, պիտի ավելցնեն եր-

րորդ մը։ Միծաղելի կամ ոչ։ Չինաստանի մեջ բազմաթիվ հայոց գաղթականությունը իրողություն մըն է. եթե կանոնավոր հարաբերությանց պակասությունը չէր ծանոթացուցած զանոնք մեզի, պատճառ մը չկա որ ասկե վերջն ալ հարաբերություն չունենանք անոնց հետ. Փեքինի մեջ ալ ազգային կյանքը Պոլսո կամ Թիֆլիսի հայոց կյանքեն ավելի վառ ու փայլուն է։

Այս նոր հայոց աշխարհը գտնելու համար պետք չեղավ ինձ Քոլոմպոսի նման հանծանոթն դիմել։

Իմ հայ չինացի բարեկամներես Մեծապատիվ Չիու-չի, որ Փեքինի գիտուններու ժողովին անդամ է և տեղական ազգային գործերուն լիովին հմուտ, և որուն հետ թղթակցության մեջ եմ, իր նամակներով պետք եղած ծանոթությունները տվավ ինծի Չինաստանի հայոց կյանքին նկատմամբ, որով անոնց անգոյության կասկածները բոլորովին կջրվին։

Ուստի որոշեցի հետզհետե հրատարակության հանձնել Մեծ Չիուչիի նամակները, որոնք կատարյալ լույս կսփրեն և հետաքրքրական մանրամասնություններ կուտան այս անծանոթ գաղթականության վրա։

***

«Ի՞նչ կուզեք որ գրեմ ձեզի մեր հայոց վրա, միթե դուք ևս հայ չե՞ք. հայը՝ հոս ալ նույնն է ինչ որ է ամենուրեք, ձանձրացուցիչ հյուր մը, որ կկարծե թե բոլոր աշխարհ զինքը ասպնջականելու համար ստեղծված է, քանի որ իրեն հատուկ տեղ մը չունի. որ նախադաս կհամարի ուրիշի հոգերով զբաղիլ, քանի որ իրեն մտածելու այլևս բան մը մնացած չէ. որ աշխարհի գործերը կտնօրինե, քանի որ իրենները կարգադրելու բախտը չունի. որ և ոչ մեկ տեղացի է ու ամեն տեղ կգտնվի. որ ամեն լեզու կխոսի, քանի որ իրենը հասկցող չկա. որ ուրիշներու հետ կվաստկի, կժպտի, կցավակցի ու կարտասվե, անշուշտ թողով ուրիշներուն, որ անոնք ալ իր վրա արտասվեն. որ ազատությունը, հավասարությունը, եղբայրությունը կսիրե, քանի որ աշխարհ կպնդե թե անոնք լավ բաներ են. տկարին՝ բարեկամ, քանի որ չոր մաղթանքե զատ ուրիշ կերպով անոր օգնության չի կրնար հասնիլ. բռնավորին՝ թշնամի—զոր պառավ կնկան մը պես անիծելե ուրիշ բան չըներ. որ իր ապրած մթնոլորտին գլուխ հարմարիլ, քանի որ մթնոլորտը իրեն չի հարմարիր. որ ամեն տպավորություն կընդունի և կանդրադարձնե. կատարյալ մեղրամոմե մարդ, որու վրա իրեն հետ կենակցող ամեն ազգ՝ իր կնիքը կթողու մոլության և առաքինության հետ, վերջապես

Եվրոպային ազգին լքյալ, անհերես ու անառակ մեկ զավակը, որ կմաքառի բախտին և մարդոց դեմ ու զինքը ավելորդ արարած մը կդավանին, որ իզուր կաշխատի անհետանալու երկրիս երեսեն կամ հանգըստության վայր մը գտնելու հոն, միշտ շփոթած, միշտ անհանգիստ, միշտ զվարթ ու կատարելապես անտարբեր ու փիլիսոփա էակ մը՝ վարդապետին քարոզին դեմը, ինչպես կանանց անհավատարմությանը առջև։

Փեքինի գրական կյանքը կբաժնվի երեք դաստիարակներու մեջ, որոնք ճառ խոսելով կիշխեն անհանդարտ ժողովուրդի մը վրա, որ անոնց կունկնդրե ինչպես ապշած եվրոպացի մը թորմոն քարոզիչի մը խրատներուն։

Դիվանագիտական օրենքներու համաձայն խմբագրված դաշնագրություն մը՝ հարակից ու փոխադարձ շահերու վրա հիմնված, ինչպես կըսեն քաղաքագետները, այս երեք մտային ինքնակալներու կայսրությունները կսահմանե. հաստատելով modus vivendi մը, որ հարուցվելիք վեճ չի թողուր մեջտեղ և այս կերպով կջրե այն սխալ համոզումը, որով պատերազմը ընկերական կյանքի անհրաժեշտ պայմաններեն մին կհամարվի։

Մեր վարժապետներեն անմիջապես վերջ և պարզ մահկանացուներե անմիջապես առաջ, կիները կուգան տիրապետական մրցումներու մեջ, նույնիսկ գրական ասպարեզին մեջ։

Մեր կիները փոքրիկ ունին ոտք ու մեծ ունին գլուխ, նեղ ու բարակ աչք ու շատ խոստացող ակնարկ, անուշ բերան ու կծու լեզու, հեշտալուր ձայն ու խաբեբա խոսքեր, սահմանափակ միտք ու անսահման պահանջումներ։

Կանացի հրապուրանքներու անդիմադրելի զորությունը և այն քաղաքավարությունը, որ ի բնե ամեն չինահայու հատուկ է, բարեբախտաբար անտանելի չի դարձներ մեր գեղուհիներուն լուծը և հոժարակամ կճանչնանք գերիշխանություն մը, զոր մեր մեծազոր կայսրությունը իզուր կպահանջե Թոնքենի համար։

Ազդեցությանց կարգով խոսելով՝ կիներեն վերջը կուգան մեր լրագիրները. հասարակաց կարծիքի այս ինքնակոչ ներկայացուցիչները՝ սովորական մահկանացուներեն սա տարբերությունն ունին, որ նախ կմկրտվին և հետո կծնին, կմեծնան, կամուսնանան, հասարակաց շահերը պաշտպանելու կձեռնարկեն ու իրենցը պաշտպանելու հազիվ կհաջողին ու բազմարդյուն այլ կարճատև կյանքե մը վերջը կվախճանին՝ իրենց ծաղիկ հասակին մեջ անբուժելի հիվանդությենե մը (զոր բժիշկները լրագիրներու համար համաճարակ կվճռեն) խոր սուգով և անմխիթար կսկիծով համակելով բոլոր ցրվիչները, գրաշարները, տպագրիչ-

ները, թղթավաճառները, այլ մանավանդ բաժանորդները, որոնք այս առթիվ կանխավճարի անպատեհություններն անգամ մը ևս կհաստատեն։

Բայց ինչ որ ալ ըլլա սա ճշմարիտ է որ լրագրությունը հառաջդիմելու վրա է մեր մեջ. մասնավոր թղթակից ուղարկելու նախաձեռնությունը հզոր ապացույց մըն է այս մասին։

Ընդվայր պիտի առարկեն թե թղթակից-խմբագրի պաշտոնը կըրկնապես նվիրական է, ըստ որում՝ հեռավորությունը անկարելի դարձնելով լուրին ճշտությունն ստուգել, ընթերցողը՝ թղթակցին պարկեշտությունն ու ճշմարտախոսությունը ունի միայն գրավական, թե այդ ճանապարհորդ թղթակցին ժամանակ երեսը ամոթի զգացումին դեմ քանիցս անթափանց մնացած է, որպես մեր Փեքինի նավարանին մեջ խարըսխյալ զրահավորը հուսանք որ պիտի մնա ֆրանսական զնդակներու դեմ, թե ծանրաբեռնյալ՝ ոչ Պուալոյի փայտահատին պես փայտերով ու տարիներով միայն, այլ այնպիսի անցյալով, որ պատժական դատարանին ուշին կդյուցացնե, այդ թղթակցին երեսին սևը բնական թե վերջեն հավաքված մուրերեն ներկված լինելը խնդրո նյութ է, թե փորձառությանց տեր ըլլալե վերջը՝ պարագային հարմար սուտեր միևնույն հաջողությամբ կրնա գրվիլ Փեքինեն կամ Վաղարշապատեն։

Այս ամենը պարապ գանգատներ են միայն. սուտը ճշմարտին աղն է՝ ըսած է մեծանուն փիլիսոփա մը, որուն անունը կորսնցուցած եմ. և հիրավի շարունակ ճշմարտախոս անձ մը անտանելի խոսակից մըն է. թղթակցին պարտականությանց առաջինն է իր ընթերցողները գոհ ընել և ես նախամեծար կհամարիմ ուրախությամբ սուտ մը ողբալի ճշմարտությենե մը։

Եթե լրագիրներու թղթակիցները սուտեր կշինեն, պատճառն այն է, որ դառն փորձառությենե մը վերջը, որ քիչ մնաց խեղճերը առանց ընթերցողի պիտի թողուր, թղթակիցներն ալ պարտավորվեցան Բրուտոսի նման գոչել՝ «Ո՜վ ճշմարտություն, դու բառ մըն ես միայն»։

Մեր ազգային գործերը չեն տնօրինվիր կրոնական գլուխ համարվող բարձրաշնորհ մանտաքենե մը և երկու ժողովներե, որոնց մին՝ ազգին կամքը հայտնելու և մյուսն ալ գործադրելու կոչված է։

Այս հոգևոր գլուխով, երեսփոխանական մարմինով ու վարչական ուղղով արարածը, որ չինահայերուս ապագան կճակատագրե, այն հասնելուկին լուծումն է, որ «Կայի՛ չկամ— չկայի կամ» նախադասությամբ սկսելով, տասը տարի շարունակ բարեհիշատակ տպարանապետի մը տարեցույցին ամենեն հրապուրիչ մասը կկազմեր։

Տարաբախտ տպագրիչը շատոնց ղրկված էր այս աստիճան հաջողնի բան մը հանելուկի վերածելուն. իզուր հանելուկը խիստ բացահայտ ակնարկությամբ կսկսեր «Կայի՛ չկամ— չկայի կամ» պարբերությամբ։ Ամեն կողմեն կհարցնեին իրեն թե հանելուկը կուտվե՞ր թե չէր ուտվեր, խանութի՞ մեջ թե ձեռքե կծախվեր, ու ասոր նման հազար մանրախուզությենե վերջը, «գտա՛, գտա՛, կաղա՛մբ է, կաղա՛մբ» կգոչեր մին, որ տարվան մեկ եղանակը կա, մյուսը չկա։ Ո՛չ, «Պատրիարքարանի պաշտոնյաներու բարեկրթությունն է, որ կա ու չկա բան մըն է», կավելցներ ուրիշ մը։ «Չէ՛, չէ՛, կիներու հավատարմությունն է որ բնավ չկա», կպոռար երրորդ մը, որ իր անձնական փորձառության վրա կհիմներ իր պատասխանը։ Իսկ ոչ ոք կմտածեր ազգային վարչության վրա, որ ստվեր մըն էր. մինչդեռ համառ տպարանապետը, այս լուծումին գանվելուն հուսահատ՝ իր գրավը շարունակ կավելցներ խաղամոլ անգլիացիի մը պես։

Առեղծված մեքենային գլխավոր մասը մեր Ներկայացուցիչներու ժողովն է, որուն վրա իրավամբ կպարծինք. վասնզի մեր Ներկայացուցիչներու ժողովը՝ Քրիստոսեն ավելի բարեբախտ՝ իր աջակողմը և ձախակողմը ունի, ոչ սակայն դատապարտված ավազակներե կազմված։

Իսկ մեքենային ամբողջացուցիչ մասն է գործադիր իշխանությունը, որուն ատենապետը Վսեմաշուք Փի-Փի-Լյունկ, իր դիրքը զինու զորությամբ գրավելուն վրա կարծես պարծենալով ֆրանսացի զորապետին պես կգոչե՝ «j'y suis, j'y reste!»։ Եվ արհամարհական ակնարկով նախ կպատասխանե Ներկայացուցիչներու ժողովին ապստամբական շարժումներուն, որոնք անլուր աշխարհակալության մը պտուղը մեկ վայրկյանի մեջ իր ձեռքեն հափշտակելու կհանգին։

Վասնզի ցավ է խոստովանիլ, որ պաշտոնեության դեմ հակառակությունն իբրև սահմանադրական հիվանդություն մեր ժողովներուն մեջ ալ մարտի կմղե երեսփոխանները. բայց վարչությունը անհողդողդ իր աթոռին ետին՝ թշնամիին կսպասե ու կծիծաղի այն հարցական ու հարցապնդական ռումբերուն վրա, զորս պարբամիտ ժողովականներ կարձակեն իբրև խորհրդարանական կռիվի մեջ նորագույն ու մահատու զենք մը։

Միայն թե նեղ պարագաներու մեջ անպայման զինադուլ մը, որուն փոքրագույնը վեց ամիսեն պակաս չէ, կլռեցնե հարցանոթներու որոտումը, և հաշտության ծիածանը, թեև վաղանցիկ, ժողովականներու ու պաշտոնյաներու գլուխը կմիացնե։

«Սիրով կպատասխանեմ ձեր հարցումին, միայն թե տարի ու կես կպահանջեմ»— խոսք մըն է, որ այս կիրքերը մեղմելով հանդերձ համ-

բերությունը կյանք լինելը կուսուցանե թերահավատ երեսփոխաննե-
րու, որոնք հայտնի դժգոհությամբ կլսեն Հիսուսի այս դառնահամ պատ-
գամը։

Այս առթիվ կհիշատակեմ Ներկայացուցիչներու ժողովին մեջ անց-
յալները տեղի ունեցած միջադեպ մը, որ մեր խորհրդարանական սովո-
րությանց վրա փոքրիկ գաղափար մը կրնա տալ ձեզի։ Փեքինի Ֆոնկ-
Թու թաղին ներկայացուցիչը վարչության ատենապետին հաճելի ըլլա-
լու անկեղծ դիտավորությամբ, ուզեց գովեստ մը ընել անոր վարչա-
կան տաղանդին վրա, դաստիարակության օրենքներու վիճաբանութե-
նեն օգուտ քաղելով՝

— Կհիանամ, տյա՛րք,— ըսավ,— թե ի՛նչպես վայելչաձև է Գոր-
ծադիր իշխանության վսեմ ատենապետին գլխարկը և ի՛նչպես բարեձև
է իր պեխերուն ոլորքը. այսպիսի շնորհալի գլխարկ մը և ոլորուն պեխ
մը իր վարչական կարողություններուն անհերքելի ապացույցները չե՞ն
միթե։

— Վեց ամիս կպահանջեմ այս հարցումին պատասխանելու հա-
մար,— գոչեց անգուսպ ատենապետը։

— Բայց, ներեցե՛ք, հարցում մը չէ որ...

— Ինչ կուզե թող ըլլա, երեք ամիս կպահանջեմ առնվազն՝ բա-
ցատրություն մը տալու համար,— կրկնեց Վարչության գլուխը անվրդով»։

<1884>

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՀԻՇԱՏԱԿՆԵՐՈՒՍ ՄԵՋ

Ֆալաքան.— Տիրացու Արթին ու ձայնավոր Գասպար.— Պեշիքթաշի
Մաքրուհյան Վարժարանը.— Դերասաններ.

Ֆալաքան իմ էն հին դպրոցական հիշատակս է։

Հիմա մշուշի մեջ կերևա ինծի այս փայտե ու չվանե կազմված
գործիքը, որ տանգլուխ ու վիթխարի D մը կհիշեցնե ֆրանսական այ-
բուբենեն։

Այս D-ին սյունակը փայտե է, տոկուն ու դիմացկուն փայտ. և
պարույրը ռուսական կուպրով ծեփված բարակ չվանե մը կբաղկանա։
Կուզեք տեսնել հիմա այդ անվնաս դարձած գործիքը։

Գավազանը՝ հունի ծառե ոստ մը դյուրաթեք ու անբեկանելի, ֆա-

լաքային հետ contre-basse ջութակի մը տպավորությունը թողած է
հիս։ Առաջ այդ երաժշտությունը չէի սիրեր։

Ջութակահարին դեմքը միտքս է, բռնավորի դալուկ ու մեղկացած
դեմք մը, կարճ հասակի մը ծայրը անցած խոշոր գանկ մը, ֆեսը
ետին ծռած ու ցույց տալով ճերմակ գտակը իր քրտնածոր ու լայնա-
ծավալ ճակատեն. ձյունապատ գագաթ մը ջեռուցյալ պահարանի մը
ծայրը։

Ի՞նչպես կըլլար որ այս նիհար մարդը շարունակ կքրտներ. ամառ
ձմեռ կգանգատեր եղանակեն, հեղձյալ, հազիվ կարենալով շունչ առնել,
հետզհետե մերկանալով վերարկուն, սեթրին ու բաճկոնն ու երևան հա-
նելով շապիկին վրայեն տափատը բռնելու համար կուրծքին վրա խա-
չաձև բերված ասկրն, որ իր ուսերը կկքեր ու խաչված մարդու մը կեր-
պարանքը կուտար իրեն։

Այսպես կշրջեր տիրացու Արթին ծաղկոցին մեջ, հոտավետ ծաղ-
կոց մը, ուր հարյուր տղոց քաղվածքի մոլտուքը՝ մեղվաց երամի մը
բզզյունին պես երթալով կբարձրանար ու խլացուցիչ կդառնար. մերթ
ընդ մերթ կանգ առնելով, գավազանը ձեռքն ու պոռալով իր ճշող և
սուր ձայնովը.

— Լռությո՛ւն...

Մյուսյու կուզեր որ կոչեինք զինքը. վարժապետ և պատվելի բա-
ռերը հետադեմ ու նախատական կթվեին իրեն։ Ուսումնարանը, ուր
կառավարելու համար ունեցած բաղձանքը երբեք իրականացած չէր,
Ձայնավոր Գասպար կառավարչի ու ձայնավոր դասատուի կրկին պաշ-
տոններուն մեջ ամրացած կմնար և այս փառասիրական պահանջումը
դառնությամբ կլեցներ իր փոքրիկ սիրտը։

Անվերջ բաղդատություն մ'էր իր նախակրթարանին և ուսումնա-
սրահին մեջ, որ միշտ մեզի նպաստավոր եզրակացությամբ մը կվեր-
ջանար։

— Վերի աղմո՛ւկը նայեցեք, թող չեն տար որ աշխատիք,— կըսեր
մեզի։

Կամ թե՝

— Թող մեյ մը իմ սրահս նային, մեյ մըն ալ սա վերի խովուշը։

Եվ մենք կեղծավոր ու շողոքորթ, կբոլորվեինք իր շուրջը, կարե-
կից իր ցավին ու անաչառ վկա իր գանգատին արդարացի ըլլալուն։

— Այո՛, մյուսյու։

Եվ սակայն վերի սրահը կորոտար, կթնդար իր ցնծալից ու աղմ-
կալից կյանքովը, կռիվներով, ծեծկվուքներով զորս կզգայինք մեր

գլխուն վրա ու ներքնապես կողբայինք մեզ ծաղկոցին գրասեղաններուն կապող տարիքներնուս վրա։

Կարծեմ թե կաթվածե մեռավ վերջ ի վերջո. իր մշտածոր քրտինքին գաղտնիքը՝ սրտին մեջն էր. խեղճ ջութակահարը երբեք զով եղանակ մը չգտավ իր կազմվածքին հարմար, ու մեռավ։

Ուսումնասրահի կառավարիչը Ձայնավոր Գասպար կունտ ու կլոր, ծիրանի այտերով, ձայնը մարած, պուռալե ու օղիեն, զվարթ ու կատակախոս մարդ մ'էր։

Հռչակավոր Արիստակեսի աշակերտներեն էր. աստիճան առած էր. քահանա պիտի ձեռնադրվեր եթե իր ամուրի ըլլալը արգելք չըլլար։

Կհիշեմ որ այս սուրբ ակնկալությամբ զինված՝ տարիներով թափառեցավ աղջիկ փնտրելու համար։

Կիները կհավնեին զինքը երբ դասին մեջ կայնած, Մնունդի ու Ջատկի առավոտները ոսկեվառ շապիկովը կդառնար եռին վերնատունին, իբրև թե հիշեցնելու որ ինքն էր օրվան անհրաժեշտ մարդը։

Գասպար աղան քահանայության ու ամուսնության թեկնածու մնաց մինչև վերջը. վասնզի ոչ ոք երեցկին ըլլալ հանձն կառներ։

Երբ Խորեն սրբազան Մաքրուհյան վարժարանի տնօրենությունը թողուց, Գասպար աղան այլևս շատ չկրցավ կենալ։

Նորեկ հոգաբարձուները իր խեղդուկ ձայնին չէին հավնիր. մին, նովարտա ոսկերիչ մը, որ ինքն ալ ձայնավորություն ընելու տկարությունն ուներ, կիրակի առավոտ մը եկավ տնկվեցավ դասին մեջ, Գասպար աղային քովիկը, եթե ոչ բոլորովին կապտելու՝ գեթ մաս մը առնելու անոր իշխանությենեն։

Գասպար աղան չէր կրնար առանց ձայնավոր դասատուի մը ավանդական իրավունքները զոհելու՝ այս կացությունն ընդունիլ. հրաժարեցավ. բարով եկար ըսին իրեն ու կիսավարտ քահանան բոլորովին բացը մնաց։

Հետզհետե ուրիշ վարժարաններ մտավ եկեղեցական երաժշտության դասատուի պաշտոնով. բայց առջի զվարթ մարդը չէր ալ. չքավորությունը, իր ի դերև ելած կոչումը, Մաքրուհյան վարժարանի հիշատակը, ուր տարիներով սովորած ու արմատացած էր, վարժարան մը որ իր տունն էր գրեթե, մանավանդ այն ոսկերչին ստվերը, այս ամենը միացան հեք ձայնավորին կյանքը դառնացնելու համար։ Ամեն կողմ ոսկերիչ մը կերազեր. իր քթին տակ, իր քովը, ստվերի մը պես անբաժան ուր որ ալ երթար, ազատ ու հզոր ձայնով ոսկերիչ մը, որուն քով իր մաշած ու հատած շունչն անսնչի կմնար։

Անկից վերջը շրջուն տիրացու մը եղավ. տոն օրերը, գյուղի աղքատ եկեղեցիները կերթար, փոքրիկ վարձքի մը, մեճիտիեի մը փոխարեն, անեղծ պահելով իր ձայնավորի արժանապատվությունը։ Քալելով կերթար ամեն տեղ, լեռնե լեռ, շարժելով գունտ գլուխը, կարծես թոթափելու համար զայն պաշարող մտմտուքները։

Վերջին անգամ մը Ալեմտաղի պատահեցա իրեն. հետիոտն եկած էր Իսկյուտարեն չորս ժամ շարունակ քալելով։ Հեռվեն՝ միշտ կարմիր մնացող այտերեն ճանչցա այդ ոգելից ըմպելիքներով ուռած ու թմբրուկած դեմքը. ինքը չճանչցավ զիս. հետո իմ բարևելուս վրա, խորհեցավ, հիշեց. Մաքրուհյան վարժարանի աշակերտ մ'էի ու սիրելի մնացած հիշատակներ կարթնցնեի մտքին մեջ. իր փայլուն, իր հաջող ատենները գիտեի։

— Ո՞ւր է հիմա այն օրերդ, Գասպար աղա,— ըսի իրեն։

Երաժիշտը սթափում ունեցավ իր հոգվույն մեջ։

Ի՜նչ, միթե ինքը չէ՞ր առջի ձայնավոր Գասպարը։

— «Արի» մը ըսեմ տե մտիկ ըրե։

Ափսո՜ս, իցիվ թե չըսեր. դասեն՝ ուր գացեր էինք ունկնդրելու իրեն, ձայն մը չէր որոշ ու հասկնալի, այլ հեղձամղձուկ հառաչանք մը, որ կելլեր ավերյալ խոռոչե մը ու փոքրիկ եկեղեցվույն բարեպաշտները կզարմացներ։

— Ա՞յս է Պոլսեն եկող ձայնավորը։

Խեղճ մարդն ինքն ալ զգաց որ իր անկումն անհույս ու վերջնական էր։

Գոնե այն եկեղեցիներեն միույն մեջ տեղի ունենար այս պարտությունը, ուր այնքան ատեն լսված էր իր երգերուն ներդաշնակությունը. այն կամարներուն ներքև, զորս իր որոտացող ձայնովը թնդացուցած էր ատեն մը. ո՜չ, այլ այս լերան գլուխը, այս փոքրիկ ու մթին մատուռին մեջ, բանե չհասկցող այս գյուղացիներուն առջև, որոնք կծիծաղեին իր վրա. ի՜նչ վերջավորություն։

Այս մեծ զորապետը, հռչակավոր ճակատամարտի մը մեջ զարնվելու տեղ անծանոթ ավանի մը, աննշան կովո մը մեջ կանհետանար։

Եվ ես որ զինքն ամենուն գոված էի, իրմե առաջ խույս կուտայի իր պարտության մասնակից չըլլալու զգուշությամբ։ Հուսկ ուրեմն փոքրիկ օգնությունով մը ջանացի սփոփել զինքը, հիշեցնելով այն մանկության օրերս, հորում ամեն տարի գիրք կարդալու, Դանիելի կամ Եղեկիելի մեկ գիրքը, իր շնորհիվ եկեղեցվույն մեջ ձեռք բերած համբավես երախտապարտ, հաջորդ օրը կանուխ կփութայի հորմես պահանջած նվերս գաղտնի իր ձեռքը դնելու։

Մեկ մ'ալ չտեսա զինքը. բայց իմացա որ Ազգը իր Հիվանդանոցին մեջ կպատսպարե հիմա այս դժբախտը։

***

Վերջին հիշատակ մը ունիմ Պեշիքթաշի վարժարանեն, թատերական ներկայացմանց ի պատվի եղած միջոցն էր. Պոլիս՝ իր կետիկ Փաշան ուներ, Օրթագյուղ՝ Բարեսիրաց թատրոնը. ուրիշ գյուղեր՝ մասնաշան ուներ, Օրթագյուղ՝ Բարեսիրաց թատրոնը. ուրիշ գյուղեր՝ մասնաշան ուներ։ Պեշիքթաշ՝ Մաքրուհյան վարժարանի սրահին մեջ առաջին ներկայացումը տվավ։

Ի՞նչ ուրախություն մեզի համար. ութ օր առաջ դասերը ստիպյալ դադրեցան. մեր նախակրթարանը՝ ուր թատերաբեմը պիտի շինվեր, հարկ եղավ թողուլ, լուություն պատվիրող չմնաց. ամենքը՝ տնօրենեն մինչև դասատուները, ամենքը ճարտարապետ ու բանվոր դարձած էին. տնտեսը կմնար միայն ուսուցչական մարմնույն իբրև վերջին հիշատակ մը. մենք՝ գամերը, գռոթքները ու տախտակները կփոխադրեինք, եռանդուն ու աշխատասեր, գրքերը մեկդի նետած ու ազատ շունչ առնելով։

Տասնհինգ օր առաջ սկսած էին փորձերը չորրորդ կարգի դասարանին մեջ ուր արգիլյալ էր մեզ մտնել և որուն դրան քովեն ամեն անցնիլ դառնալնուս, կլսեինք բարձրագույն կարգի աշակերտաց ձայները իրենց դերը արտասանելով։

Օր մը Արշակ Բ.ն էր որ կգոչեր բանտին մեջ խելահեղ ու սարսափած ուրվականներու տեսքեն.

— Ահա... Պապ, բայց այս Պապ չէ...

— Կարտինալ է,— կպատասխաներ անդիեն պատրաստախոս տղա մը ու խնդալով կմարեին։

Երբեմն Դրաստամատն էր հաղթական զորավարի ցնծությամբ լեցված, երբեմն Ալանոզան՝ նույնպես բարձրագույն կարգի աշակերտնեված, երբեմն Ալանոզան՝ նույնպես բարձրագույն կարգի աշակերտնեված, որուն համար այս հակառարեն մին սև ու կանաչ դեմքով տղա մը

դպրոցականի մը ու խույումճի մը խառնուրդով շինված փոխաբերություն մը ընելով կկրկնե դեռ.

— Եվ առատ հուձք զոր այսօր մեր սուսերներ հնձեցին։

Մյուսները Շապուհեն ավելի բախտավոր չեղան. Ալանոզան ու Դրաստամատ՝ այս երկու անհաշտ թշնամիներն իրենց գրկած ասպարեզովը միացան. պասմայի վաճառականներու քով մտան երկուքն ալ։ Առաջինը իր դժգույն կանանչ դեմքովը կրկնատոմարի հաստ ու ահագին տետրակներու վրա հակյալ մնաց ու ալ ավելի կանանչեցավ։ Մյուսը հրապուրիչ երիտասարդ, Քալփաճեիներու գլուխը խանութպան դարձավ. դեռ անցյալ օր այդտեղ պատահեցա իրեն։ Այո՛, նույն Դրաստամատն էր, զոր տղա հասակես անջինջ կերպով պատկերացուցած էի մտքիս մեջ Արշակ Բ-ի ներկայացումեն ի վեր։

Այս անգամ, խանութին լայնքին դրված նեղ ու երկայն սեղանին վրա կերպասներու ծրարները բանալով մեկիկ-մեկիկ շուկային կես ստվերին մեջ ցույց տալով անոնց գեղեցիկ ու փայլուն գույները, Դրաստամատ կպոռար.

— Նե զարիֆ պասմալարըմըզ վար...

<1889>

Օրթագյուղի վարժարանը.— Թարգմանիչներ.— Սեթյան.— Պերպերյան Ավետիս Պատվելի.— Իմ դասընկերներս.— Գաբրիել Ներշապուհ։

Այս վարժարանը կկաղար, իր հին ու երերուն շենքովը, դրամական կացությամբն և ընդհանուր կառավարչին ձախ ոտքովը։

Հեք մարդուն այս ձախորդությունը պատերազմի մեջ ստացված չէր, թեև այն անվերջանալի կռվույն մեջ, զոր քառորդ դարե ի վեր կմղեր ազգին անզուսպ ու անուղղա տղոց դեմ, հաղթյալը միշտ ինքն ըլլար։ Սնոտի պարծենկոտությամբ չէր ուզեր իր պարտությունը ծածկել. գիտեր որ անկարող էր հաջողությամբ մաքառելու իր հսկողության հանձնված մանուկներուն դեմ և բացեիբաց խոստովաներ զայն, հետզհետե զինադադար և հաշտություն առաջարկելով։

Իր պայմանները՝ ամեն հաղթյալ մարդու պայմաններու պես մեղմ ու չափավոր էին։

Ընդարձակ սրահին երկու եզերքին երկայնությամբ շարված գրասեղաններուն մեջ պաշարված, կենտրոնացած, անհավասար կարկինի մը պես դառնալով իր ուղիղ ոտքին վրա, այս հավիտենական զինվորը իրավախոհություն կառաջարկեր ողորմ ձայնով մը, որ ամենուս սիրտը կշարժեր։

— Հատե՛ սուս...

Հատե՞ սուս. կընդունինք քառորդ ժամվան մը համար լուռ կենալու պայմանավ ամեն ինչ ընելու այս արտոնությունը, բայց քիչ-քիչ մեր անհանգիստ շարժումներն այս դաշինքը կխզեն. առանց շարժման կյանք չըլլար վարժարանի մեջ, և մենք այս ֆիզիքական օրենքներուն ենթարկված, մեր անկենդան չըլլալը հաստատելու ստիպյալ, համբերությունենիս սպառած ու մոռնալով ամեն ուխտ և դաշինք, ձայներնիս կհանենինք անտանելի ժխորով մը լեցնելու համար Թարգմանչաց վարժարանը։

Դպրոցին քով Բարեսիրաց թատրոնը կսպասեր հանդարտ ու կեղծավոր երևույթով ու այս մերձավորությենեն գրգռյալ ամեն ոք թատերգություն կպատրաստեր հոս. Հայր Արսեն՝ Թասինի ողբերգությունը կթարգմաներ, Թերզյան՝ Հայր Արսենի Իփիգենին, Թղլյան Թերզյանի Սանդուխտը, ու մենք ամենքս՝ Միշել Լուիի հռչակավոր Théâtres contemporainsի հավաքածոները։ Ճշմարիտ թարգմանչաց վարժարան։

Թատրոն ու թարգմանիչ զիրար գտած էին։

Այս վարժարանին մեջ ճանչցա սև ու մութ երիտասարդ մը, Հովհաննես Սեթյան, որ վերջեն բանաստեղծ մը պիտի ըլլար, բոլորովին, անակնկալ բանաստեղծ մը, որ այս ընդհանուր արշավին մեջ իր երկրորդական դասատուի դիրքը պահելու պարտավոր, հաստ ու ծանրաշարժ հատորներով բեռնավորված, որոնց բառարաններ ըլլալը գիտենք, կվազեր ծակեծակ մտնել, մեզմե գաղտնի, բոլորովին գաղտնի, բառ գոց ընելու համար մինչև վերջը, և իր նպատակը ծածուկ պահելու ջանքին մեջ շփոթած, չկարենալով պարտկել փեշին տակ ահագին ու մեծածավալ գիրքերը, հապճեպ ու փութական՝ կանցներ մեր առջևեն, ու մենք այս խույս տվող դասատուին սև զգեստներուն, նիհար սրունքներուն ու գորշ գույնին նայելով եռևեն, երկու ոտքերուն վրա կանգնած վիթխարի ու փախստական մուկի մը կնմանցնեինք զինքը։

Այն ատեն կրոնագիտության դասը կսիրեինք. դալուկ ու դողդոջուն ծերունի մը, գիտուն ու հոյակապ մարդ մը կավանդեր մեր կրոնքի դասերը։

Իր նիհար ու ծառի կեղևի մը նման ճմրթված դեմքը՝ դեղին ու ճերմակ էր գրեթե երակաց անարյունութենեն, ու քիթը խոշոր, համառ ու հաստատամիտ մարդու քիթ մը, մշտնջենական հարբուխի մը դատապարտված ըլլալու էր զոր մեծածալ կարմիր թաշկինակով մինչև վերջը կսրբեր։

Այս ալևոր կրոնագետը, Պերպերյան Ավետիս պատվելին, կսիրեինք. կսիրեինք իր տարիքին հակառակ անհոգ եռանդին ու իր ճշմարիտ կրոնասիրությանը համար, որ ամեն բանե առաջ ազգասիրության վրա կհենուր միշտ։

Կենդանի, աշխույժ ու պատերազմիկ դասախոսություն մըն էր, ուր մեր կրոնքին նրբություններեն առաջ, հռովմեականաց ու բողոքականաց դեմ հաջողությամբ վիճաբանելու եղանակները կուսանեինք։

Ու ամեն անգամ սորված դասերնուս, մեր վարժապետին գիտությանը կոթնած, վիճաբանելու անհամբեր, փողոցե փողոց, լեռնե լեռ կշրջեինք բողոքական մը գտնելու և Տիրոջ խոսքին մեր դավանությանը համաձայն ըլլալը հաստատելու համար. ոչ մեկ ճշմարիտ բողոքական կելլեր մեր դեմ. իզուր աջ ու ձախ հանդիպած բոլոր կեղծավոր բարեպաշտները, «սիրելիս, բարեկամ» բառերով սկսող շրջուն գրավաճառները վար կդնեինք ճամփուն վրա՝ բռնի Աստվածաշունչ գնելու պատրվակավ, կեցնելով զինքը, ու սրբոց բարեխոսության վրա իր կարծիքը հարցնելով, մեր պատրաստ ապացույցներն ու փաստերը գլխուն նետելու և զինքն ամոթահար ընելու համար։ Սովորաբար կա՛մ սնանկացած վաճառական մը կըլլար, կա՛մ անգործ դասատու մը, որ հոժարությամբ կընդուներ մեր տեսությունը և մեր սիրեցյալ եկեղեցվույն ուղղությունը, զոր չքավորությանն համար միայն մոռցած էր։

Այսպես լուրջ հակառակորդ մը պակսեցավ մեզի ամեն ատեն, ու այն բազմաթիվ վկայությունները, որով մեր բոլոր արարողությունները, ծեսերը կհաստատեինք, հետզհետե մոռցանք։ Բայց չեմ մոռնար երբեք իմ ծերունի դասատուիս պատկառելի դեմքը. իր մահվընեն դեռ շաբաթ մը առաջ եկավ ժամանակին, ճշտապահ իր դասախոսությանը մեջ, սովորականեն քիչ մը ավելի տկար, պարզելով ահագի՜ն կարմիր թաշկինակն ու վերջին օծման մասին մեր եկեղեցվո սկզբունքները. զինքն անբաժան կտեսնեմ միշտ այդ թաշկինակեն. վառ ու հավատարիմ գույնովը իր դրոշակն էր գրեթե ու կրնանք ըսել որ այդ դրոշակին մեջ փաթթված մեռավ Ավետիս Պերպերյան։

***

Թարգմանչաց վարժարանի դասընկերներս ծանոթ անձեր են բոլորը. Տիգրան Արփիարյան հրապարակագիր մըն է. Շիտանյան, Բապուճյան՝ ուսուցիչ են. Ատրունի իր դպրոցին հավատարիմ թարգմանիչ մըն է միշտ, բայց ոչ սուրբ գրոց. Սալովմիթ փաստաբան մ'է։

Սալովմիթ փաստաբա՞ն։

Ինչո՞ւ Սալովմիթ կկոչեինք զինքը. ի՞նչ ըրած էր այս անունին արժանանալու համար. շատ կսիրե՞ր արդյոք Ռասինի Գոթոդիան. չեմ գիտեր, անտարբեր, լուրջ, պարզ, ուսյալ երիտասարդ մը, որուն երկար և ուղիղ մատները բոլորն ալ բացված տարօրինակ հողմահարի մը պես խոսակցության ջերմությանը մեջ հետզհետե դիմացինին աչքը կմտնեին. իզուր ետ կեցնել ուզած էին զինքը այս վատ սովորութենեն. վերջապես որոշեց ինք գրպաններուն մեջ պահել այդ անզուսպ թևերը։

Սալովմիթ իր դասը կարտասաներ ուղիղ և անշարժ կանգնած ուսուցչին դեմը, ոտքը ոտքին քով, թևերը թաղված անհատակ գրպաններու մեջ, անհանգիստ, քրտնելով, տասնապետին դեմ կանգնած կարգապահ զինվորի մը ձևով, ու քիչ մը ետքը դասին ոգևորության մեջ մոռնալով բոլորովին իր կոկիկ ու քաղաքավար կեցվածքը, քայլ մը կառներ հառաջ ու ձեռքերն արձակած ակամա հանդիմանությամբ մը կերկնցներ դասատուին երեսն ի վեր։

Սալովմիթ գեղեցիկ սեռը կսիրեր. տարիներով դարձավ, շրջեցավ, հատնելով մաշելով գեղեցիկ ուսերու և սպիտակ մարմիններու շուրջը, իգական ընկերություններու, կանացի ժողովներու ծառայելով, հոտվըտալով փոքրիկ կոշիկներ, հեշտաբույր ձեռնոցներ ու գեղեցիկ հովանոցներ. բայց անհամաձայնություն մը կար իր անձնվեր ու համոզելու հետամուտ ոգվույն ու անհանդարտ ձեռքերուն մեջ, և այս ապարդյուն սպառումներով, որ իր նախապաշարումները փարատեց, այս ամուլ մնացող համոզման ջանքերով, Սալովմիթեն փաստաբան մը միայն մնաց։

Եղեռնադատ Ատենին առջև, խոժոռադեմ դատավորներուն հանդեպ կեցած, մարդ մը՝ անչափահասի մը առևանգության առթիվ կպատասխանե նախագահին, կխոսի անշարժ ու անտարբեր, կրավորական ու անզգա գործիքի դիրքով, անսեթևեթ տրամաբանությամբ։

Իր մեղմ ձայնը լսողները, իր ամփոփ կեցվածքը դիտողները ամբաստանյալը կկարծեն զինքը. ես հեռուեն, ճարտար հանցավոր մը կենթադրեմ իր տված պատասխաններեն. հետաքրքրությունս կշարժի։

— Աղջիկը չափահաս էր ու իր կամքովը եկավ,— կըսեր մարդը նախագահին։

— Տեսնեմ սա առևանգիչին դեմքը,— կըսեի մտքովս։

Վայրկյան մը մարդը ընդհանուր դատախազին ընդմիջումեն զայրացավ, թևերը զոր մինչև այն ատեն թույլ կերպով քովերեն թողած էր, երկու թիերու պես վեր բարձրացուց իր բողոքը շեշտելու համար, և իր այդ բացված ու սպառնացող մատներեն անմիջապես Սալովմիթը ճանչցա։

Սալովմիթ առևանգի՞չ. ի՞նչ պիտի ըսեր արդյոք Դպրոցասեր Տիկնանց Ընկերությունը։ Բարեբախտաբար իմ ապշությունս երկար չտևեց։

Սալովմիթ ձեռքերը վեր առած էր ու կերերցներ ազատ, համարձակ, ուզածին պես, իր ճառին բոլոր պահանջումներուն համեմատ. այս անգամ իր ահագին թաթը մոտեցնելով քովիկը նստած գեղանի ու մսոտ կնկան մը, զոր ոչ ոք տեսած էր մինչև այն ատեն, ցույց տալով զայն դատավորներուն, սև մանթլեի մը ու կարմիր զարդերով շտկված fաբող գլխարկի մը տակ, հուզված ու կարմրած, գրեթե պարծենալով այսքան բազմության ի տես ելլելուն, փաստաբանն այս հանգույցը կլուծեր մեկ բառով.

— Ահավասիկ Բերուզ հանըմին անմեղությունը հաստատեցի։

Էո՜ֆ...

Գաբրիել Ներշապուհ միջին եզրը կներկայացներ ազգին երեք չափագետներուն մեջ։

Թվաբանությունը՝ վտիտ ու թափանցիկ Մյուսյու Փասքալով մարմնացած, հետզհետե կստվարանար, վայելուր ձև մը կառներ Ներշապուհի մոտեցած ատեն, բոլորովին գունտ ու կլոր բան մը դառնալով Սիմոն Միքայելյանի քով ուր կվերջանար։

Փասքալ իր նիհար մարգու զվարճախոսություններն ուներ, Սիմոն Միքայելյան ծանրաշարժ ու գիրուկ լրջություն մը և Ներշապուհ չեզոք երկիր մը կըլլար երկու հակառակորդներուն մեջտեղ, նրբամիտ ու պատկառելի դասախոս մը ըլլալով։

Թուխ ու գեղեցիկ դեմքեն, ձախ հոնքին վրա ցցված ուռ մը աչքի կզարներ, աշակերտներուն դիտողությունը կհրավիրեր, առանց նվազեցնելու իր ազդած համակրելի տպավորությունը. ընդհակառակն ուսուցչի հատուկ դրոշմը կուտար այս ցից ու կլոր մսակույտը, որ դասախոսին ճակատեն կմեկներ իբրև անոր խելքին մեկ մասն անհամբեր դուրս նետվելու, դիմացինին հասնելու և հաղորդվելու համար։

Հոնքին այս առանցության (relief) տակ աչքը կթաղվեր, կխորասուզվեր, բայց ցույց տալով այդ մութեն իր զորեղ շառավիղները։

Ես իր պեխերը կսիրեի ու իր պապա ձևերը. պեխերը թավ, լայն, ալորուն, զորապետի մը վայելուչ, որ իր դեմքին դասախոսներու սովորական կեղծավոր գեմքեն բոլորովին տարբեր, համարձակ երևույթ մը կընծայեին։

Թվաբանական անվերջանալի խնդրոց մեջեն որով կողողեր զմեզ, գեռ կդիտեմ իր հեզ ու համբերող դեմքը, մարտիրոսի դեմք մը։

Հռովմեականաց վարժարանին մեջ ուր կդասախոսեր առաջին լուսավորչականն ըլլալով, տնօրենին՝ տոքթոր Շիշմանյանի ազատասեր ոգվույն ու Անդիներուն ակամա հայասիրությանը կպարտեր այս պաշտոնը։

Իր աշակերտները որոնք կսիրեին իր շուրջը բոլորվիլ, ցիրուցան են հիմա. ոմանք, թերևս լավագույնները, մեկնեցան ժամանակեն առաջ. ու մենք անոնց թողած պարապը չկրնալով լնուլ, իզուր ջանալով սեղմել մեր բաց մնացող գիծերը, մենք ալ կհառաջանանք մեր կարգին սպասելով։

<1889>

Ինչո՞ւ կսիրեմ Հռովմեական Հայոց եկեղեցին. ի՞նչ նախապաշարում է աս, որ չեմ կրնար վրայես թոթվել։

Զիս հրապուրողը՝ օտարության թեթև հո՞վն է, որ կթռչտի անոր կամարներուն տակ, բարեպաշտներուն ամփոփ ու քաղաքավար կեցվա՞ծքն է, որ զիս կգրավե։

Այս մարդիկ ու այս կանայք որ հատուկ ձևեր, խոնարհելու, ծնրադրելու մասնավոր կանոններ, պայմանագրական ամբոզջ կարգ ու սարք մը ունենալ կթվին, ո՞բքան կտարբերին մերիններեն։

Մեր բուռն ու եռանդուն աղոթասիրությունը չի կա հոն. առջի վայրկյանեն կզգաս անմիջապես որ մեր եկեղեցին չէ ան, պանդուխտին գետնամած դեմքը, ազային անշնորհ մռայլությունը, ողբի, կոծի, տրտունջի այնքան նմանող ձայները, որ մեր եկեղեցվո պատերուն կզարնվին հաճախ, չեն լսվիր հոն։

Գոհ ու երջանիկ մարդոց տեղն է, Ավետյաց երկիրը ուր Վիշտը վայելչությամբ կմտնե ներս և ուր Ցաւը անգամ շնորհալի կընծայե ինքզինքը։

Այս էր գեթ հանկուցիչ երևույթը, որով, հստակ ու պայծառ, կպատկերանա այս պահուս մտքիս առջև Թրթագեղի Հռովմեական Հայոց եկեղեցին իր լուսազեղ գավիթովը, իր բարձր գմբեթին լայնալիճ աղեղովը որ օդին մեջ կխորխտա, իր տաճարին մեջ աղոթելու եկող ընտրված, զատված բարեպաշտներու ու բարեպաշտուհիներու ժողովքովը. բաց գիրկ՝ լեցուն խոստումներով և քսան տարիներե ի վեր հորմեհետե առաջին հիշատակը պահած եմ, այդ գիրկը՝ ուր նետվելու անբացատրելի փափագ մը կունենա մարդ առջի տեսնալուն, կմեծնա աչքիս, կմեծնա, կլայննա, կխորունկնա ահա ու բաց... անդունդի մը տպավորություն կթողու վրաս։

* * *

Անոր պես ալ քովի վարժարանը շնորհալի բան մը ուներ։

Ո՛չ. մերիններուն չէր նմաներ այս դպրոցը որ 1874-ին՝ իր նոր ճերմակի ներկված երեսովը, մաքուր կանանչ փեղկերովը երկաթե, պզտիկ շափին ու շնորհալի ձևին մեջ, շալեյի մը կնմաներ։

Ակամա կբաղդատեի այս նորաշեն հարկին վայելուչ ճարտարապետությունը ու զվարթ երեսը մեր ազգային վարժարանին խարխուլ երևույթին, տարապայման տարածությանը հետ։

Այս խորհրդածությունները չբրինք այն ատեն երբ Թարգմանչաց վարժարանին խանգարյալ վիճակեն հուսաբեկ՝ մենք, բազմաթիվ հայ տղաքներ, հարկադրվեցանք Հռովմեականաց դպրոցը դիմել։

Կսիրեինք այն կիսափուլ շենքը որուն հրաժեշտ կուտայինք, ծոած, կոտրած գրասեղանները որոնց վրա արմուկնիս մաշեցուցած էինք. սեղանատունը՝ ո՛չ շատ մաքուր, կերակուրի հոտերով ծանրացած մթնոլորտով։ Մեր վարժությունները, մեր ծանոթները կձգեինք հոս, տնտեսեն մինչև կառավարիչը ու վերջին պահուն կմոռնայինք մեր բոլոր գանգատի պատճառները, ի դեպս ու հանդեպս տրված պատիժներուն դառնությունը, երբ կպատրաստվեինք ահա ոտվընիս դնել օտար վարժարանին սեմին վրա։

Ո՞վ պիտի գտնեինք այս շենքին մեջ. ի՞նչ կերպ մարդիկ էին ասոնք որոնց կես եվրոպացիի ձևերուն առջև՝ մեր ասիական կերպերը ու շարժումները ծիծաղելի պիտի թվեին։

Ու ծուղակի մը մեջ բռնվածի պես, հոժարությամբ ներս մտնելի վերջը, առջի քայլեն՝ կզզջայինք եկած ըլլալուս համար, և կամաց մը, անձայն, անշշուկ, նահանջելու փորձությունը կզգայինք։

* * *

Տնօրենը միջահասակ մեկն էր. հաստաբուն ու կայծակնահար ծառի մը կոճղին տպավորությունը կթողուր զինքը տեսնողին վրա. արեվակեզ ու թխաթույր դեմքին խստությանը տակ անուշությունը կպահվըտեր, հիշեցնելով այն ամպամած երկինքը որ ծիրանի գոտի մը կպարզե աչքիդ, չսպասված վայրկյանի մը մեջ։

Իր ալևորած մազերը կերկարեին, կծփային ուսին վրա բանաստեղծի մը, արվեստագետի մը հողմածածան մազերուն պես ու ճերմըկած մորուքն, կուրծքին վրա փռված, վեհության շուքը կավելցներ իր պատկառելի երեսին վրա։

Ձայնը խորունկեն եկող արձագանքի մը պես թավ ու տրտում շեշտ մը ուներ։

Այս տնօրենը՝ տոքթոր Շիշմանյանն էր։

Մենք, նորեկները իր դպրոցին մեջ, ամենեն էվել իր հոգածությանը առարկա եղանք. հայերեն լեզուն կսիրեր ու իր բոլոր ջանքին հակառակ՝ անոր արժանավոր տեղը չէր կրցած տալ վարժարանին մեջ և ահա իրենց լեզուն սիրող ու գիտցող պատանիներու ամբողջ խումբ մը մեկեն կուգար իր քովը, իր ձեռքին տակ։

Կհիշեմ որ օր մը Եղիշեի մեկ հատվածը կարդացնելով հռովմեական աշակերտի մը, հարցուց անոր թե աշխարհիս ո՞ր մասին մեջ կգտնվեր «ի հեռաստանե» կոչված երկիրը, որ այդ հատվածին մեջ կհիշվեր։

Հեռաստա՞ն. աշակերտը մտածեց. մեր կարգին մեջ՝ հառաջադեմներեն մին էր ամեն դասերու մեջ բացի իր մայրենի լեզվի դասեն։ Շփոթած՝ կմտածեր իր քաղաքական աշխարհագրության բոլոր հիշատակները ամփոփելով. Պելուճիստան, Աֆղանստան, Հնդկաստան, Պարսկաստան... Հեռաստան։

Ապահովապես Ասիո մեջ ըլլալու էր այս երկիրը. «ստան» վերջավորած անունները ուրիշ ոևէ տեղ չէին կրնար գտնվիլ ու համարձակությամբ դարձավ Տնօրենին.

— Ասիո մեջ։

Ահագին քրքիջով մը ողջունեցինք այս ապուշ պատասխանը. սրահը ամբողջ թնդաց մեր քահքահեն. Թարգմանչաց վարժարանը կծիծաղեր, իր կորուսած աշակերտներուն վրեժը լուծելով։

***

Վերջեն թողուց գնաց զմեզ, ամենուս հոգվույն մեջ դնելով իր մեծ հոգիեն մաս մը։ Տոքթոր Շիշմանյանեն Ներեցնց մը ծագեցավ և մեր հոովմեական դասընկերներեն ամբողջ խումբ մը, դպրոցական հարկը ձգելե ետքը, եկավ մեր Պատրիարքին մոտ, հիշելով հայրենի տուները ու ան եկեղեցին որ իրենցն էր միշտ, որ իրենց առժամյա հեռացումին համար չէր դադրած իրենց համար ալ աղոթելե և ուր, երբ ալ դառնան, վստահ էին որ իրենց տեղը պահված կմնար ամեն ատենն։

<1893>

ՔՈՔԻՆԱՔԻ

(Զմիրի կյանքեն)

Առ տիկին...

Ա

Քոքինաքին կերգեր. նուրբ ու ներդաշնակ ձայն մը, որ գիշերն ի բուն կհամառեր Հայնոցին գոց ու կանանչ փեղկերուն գեմ. երբեմն ներսեն փսփսուք մը կլսվեր, դուրս կթափանցեր. Քոքինաքին էր. կճանչնային այս ձայնը, որ հունարեն երգերու հատվածներով կուգար արթնցնել զիրենք կեսգիշերին լռության մեջ։

Քոքինաքին վտիտ ու դժգույն երիտասարդ մ'էր նուրբ՝ իր ձայնին, գունաթափ, հյուծախտավորի մը նման, տասը գիշեր անքուն հսկելու կարող իր դրուպատուրի անտանելի խոնջանքին տոկալով. և այսպես բոլոր քաղքին անհրաժեշտ եղող մարդ մը ըլլալուն գիտակցությունը ցույց տալով սովորաբար քնատութենե փակվող աչքերուն մեջ։

Իր ձայնը բոլոր քաղքին ձայնն էր, անոր վիշտերուն թարգման, ուրախության մասնակից, գանգատող և լալագին ձայն մը բոլոր արեվելքի ձայներուն պես։— Առանց այս տղուն Իզմիր չի պիտի կրնար կարծես դուրս թափել միշտ արտահայտվելու տրամադիր եղող իր ոգին. գիտեին և ասոր համար կպաշտեին Քոքինաքին. հայ, հույն, տաճիկ, եվրոպացի ձեռքե ձեռք կքաշեին զինքը, շոյելով անոր ուսը, մեզմիվ, դրամ դնելով կամացուկ մը անոր ափին մեջ, և առաջարկելով երգ մը

երգել իրենց իբրև թե խնդիրք մը կներկայացնեին ու երբ երգը վերջանար, միշտ զմայլանոք, անկեղծ երախտագիտությամբ մը դրվատելով երգիչը.

— Պռավո, Քոքինաքի։

Բ

Քոքինաքին կերգեր. փողոցին մեջ մեկ գիծին վրա երկու կողմե շարունակվող լուսավոր կետերը, որ կազերուն դեղին ցոլքերն էին, հեռուն երթալով իրարու կմոտենային, զիրար կկտրեին և այդ դժգունած լուսով փողոցը կերկարեր ամայի, թափուր, իր տուներուն հուսահատական միօրինակությամբը որ լռին, ուղղագիծ պատնեշներու տպավորությունը կըներ վրաս և որոց ետին ամբողջ բանակ մը կերևակայեի քունի մեջ թաղված։—

Մեր աղմուկեն, վասնզի մենք էինք Քոքինաքին երգել տվողը Հայնոցին մեջ, գիշեր ատեն իրենց անդորրությունը խռովող անձերը տեսնելու տկար փորձեր կըլլային, փեղկերը բացվելու դղրդյուն մը կլսվեր և ես պահվըտելու կպատրաստվեի, աննշմարելի դառնալու չափազանց փափագով մը, պզտիկնալով բաց կառքին անկյունին մեջ, մինչդեռ Քոքինաքին իսկույն, հանպատրաստից, երգի նոր տուն մը կսկսեր Հոմերոսի լեզվով զոր ամեն ոք, ինձմե զատ, կհասկնար այս Հայնոցին մեջ. իր բանաստեղծական տաղանդը ի հայտ կածեր, ճշմարիտ աշուղի մը պես որ վայրկյանեն, պարագայեն կներշնչվի։

Ես՝ այս ցուրտ գիշերեն, այս անմարդի թաղեն ու գոց պատուհաններեն ոչինչ պիտի գտնեի ներշնչվելու և ողորմագին բան մը պիտի ըլլար իմ տաղս եթե երբեք այս տեսակ հարկի մը տակ գտնվեի։

Բայց Քոքինաքին իր արվեստին քաջավարժ, այս ամեն ներշնչում մարող տեսարանին առջև չէր թերանար. կզգայի որ իր ոտանավորը կկաղար, հանգերը իրարու չէին պատշաճեր և ամբափակ պատշգամներուն ուղղված հրավառ շեշտերը շարունակ նույն դիմառնությամբ կսկսեին՝

Ֆիլիմու Պետրոսաքի։

Երգին մեջ Սարգիս կամ Պետրոս աղան հունական մասնիկով մը կհարստանար, կքաղցրանար, տեսակ մը կրկնամկրտություն, կեսգիշերին ու փողոցի մեջ, որով երգիչը՝ հավատարիմ իր օրթոդոքս եկեղեցվույն խստապահանջությանը, արվեստը կրոնքին հետ կհաշտեցներ։

Զմեզ շրջապատող ստվերներուն մեջ, վրանիս թշնող գիշերվան շաղին տակ, մեր մայրենի եկեղեցվո ուղղափառությունը պաշտպանելու

մտադիր չէի. վրաս ծանրացող թմրության մեջ, այս քաղցրալուր ձայնը՝ տեսակ մը նեննիի, օրորի թույլ ու հեշտ տպավորությամբը կներգործեր, մինչդեռ ընկերներս ընդհակառակն հետզհետե կոգևորվեին, հափշտակված անոր շեշտերեն, կմոռնային ժամը, ցուրտը, խոնավությունը, զմեզ շրջապատող առանձնությունը՝ անոր դառնալով կրսեին աղաչավոր ու փայփայիչ.

— Քոքինաքիմու...

Գ

Հայնոցը հարթ ու տափարակ գետնի վրա շինված թաղ մ'է, որուն քարահատակ փողոցները ուղիղ անկյուններով զիրար կկտրեն, կկտրտեն հաջ և հահյակ պատցնելով խաբվելու չափ նմանող երկհարկ տուներու շարքն ու երեսները զորս պարտեզ մը, ծառ մը, բույս մը չի գար կենդանացնել։ Իզուր կառքերնիս կշարժի, կհառաջանա, ամեն կողմ տանիլ կուզե մեր աղմուկը, աննպատակ պահանջումները. անիվները կթավալին շարունակ։

— Սարգիսյաններուն տանն առջևն ենք,— կըսեն ինձ։

— Ասի Պաթմազյանն ելած տունն է,— կըսե մյուսը Հակոբոս աղային։

Ասոնցմե և ոչ մին կտարբերի մյուսներեն, այնպես որ կեսգիշերեն ի վեր հորմե հետե թափառական կշրջինք, երազի մեջ քալող մարդու իրական անշարժության մեջ և միևնույն տանը առջև կկարծեմ ինքզինքս։—

Ընկերներս կերգեն, կզվարճանան, քննադատելով իմ ապշած պոլսեցիի լրջությունս զոր պարզապես ծաղրելի կգտնեն գիշերվան այս սեցիի լրջությունս զոր պարզապես ծաղրելի կգտնեն գիշերվան այս պահուն. օդի կառաջարկե մին. երգե կրսե մյուսը. դուք Պոլսո մեջ չե՞ք զբոսնուր, կհարցնե երրորդը։

Պոլսո մեջ կզբոսնունք թե ոչ լավ մը չեմ գիտեր, բայց հոս՝ կըզգամ անդիմադրելի փափագ մը մեկեն թոթափելու այն հիմար ծանրությունը զոր, չեմ գիտեր ի՞նչու, զգեցած եմ այս գիշեր և իրենցմե բարձրաձայն պոռալու անհուն տենչ մը կգրավե զիս։

Օդին ազդեցության տակ՝ փողոցի տուները կսկսին տեղերնուն երերալ, շարժիլ, պարել, տիտանյան պար զոր կդիտեմ հիմա առանց երերալ, շարժիլ, պարել, տիտանյան պար զոր կդիտեմ հիմա առանց զարմանքի, իմ ահաբեկելու, ալ գլխիվայր կտեսնեմ ինքզինքս առանց զարմանքի, իմ ձայնս՝ ընկերներուս ձայնին կխառնվի անհանդուրժելի ժխորի մը վերածելով անոնց երգը։

Հետո, ցույց տալով քիչ մ'ալ իմ մայրաքաղաքացիի պարծենկոտ գերազանցությունս, Պոլսեն երգեր կերգեմ իրենց զորս կունկնդրեն. ու Քոքինաքին մեծ-մեծ կբանա իր փակվող աչքերը վախնալով որ չելլեմ ոսոխ և ախոյան հանդիսանամ իրեն։

Գիշերվան ցողը կշարունակե տեղալ անձրևի պես թրջելով զմեզ և հոդացավի սպառնալիքներով խանգարելով մեր բերկրանքը։

Դ

Առտվան մոտ Հայնոցը կգթա վրանիս. բարեկենդանի սովորության համեմատ ծանոթներու բարեկամներու տուներ վերջապես կհաճին հյուրընկալել զմեզ, մեր Քոքինաքիին հետ։

Տան տյարք ու տիրուհիք փութով կհագվին, կուգան աչքերնին շփելով, ժպտուն սակայն, կազերը վառելու, նախ գիտելու համար եկողներուն դեմքը և այս տարօրինակ հյուրերը։

Գինի, քոնյաք, շամբանյը կհրամցնեն իրենք ալ մասնակցելով մեր անիմաստ խնդումին և մեկնելու ժամուն արք մեզի ընկերանալով կըստվարացնեն մեր շրջուն խումբը։

— Հոս բարեկենդանը այսպես է,— կըսեն ինձ ամենքը միաբերան, արդարացնելով մեր գիշերային ուղևորությունը։—

Հետզհետե ասպատակող փոքրիկ բանակ մը կդառնանք Հայնոցին մեջ, մինչդեռ աքաղաղը կխոսի և Քոքինաքին կվերսկսի նորելուկ հունական երգը, իր դաշն ձայնովը, որ պատե պատ, դուռե դուռ կկրկնվի կերկարաձգվի։

— Մա՜ր կա՜ ա՜ ա՜ռո...

Աստղերը տակավ առ տակավ բացվող երկնից կապույտին վրա կդժգունին, անտեսանելի կըլլան. մութը՝ իր խստությունը կկորսնցնե, կմեղմանա. տուներուն գույները կճշտվին, փողոցներուն մեջ մարդիկ երևան կելլեն որք զմեզ կդիտեն հիացած. կառքեր՝ քաղքին ուտելիքը կկրեն ու տեղ-տեղ կազերուն լույսը կմարի։

Ե

Վերջին տունն ուր գացինք, դեմս ելլողը դո՞ւն էիր որու կնվիրեմ Իզմիրի բարեկենդանի այս փոքրիկ հատվածը. գեթ մեկն էր որ քեզ կնմաներ, ա՜յնքան կնմաներ։

Քեզմե քիչ մը պակաս խոժոռություն դեմքին վրա երբ երեսս նայեր. ժպիտ մը ավելի... բայց ո՛չ, քու ժպիտդ ավելի քաղցր ժպիտ չի

կա. հասակը նուրբ, դյուրաթեք, հարուստ ու խիզախ կուրծքի մը բեռան տակ, քուկինիդ պես. միայն քեզի պես տրտում չէր անի։

Տեսնելուս պես մոտը զացի մտերմությամբ. զիս ներկայացնելու հարկ չիկա ըսի բարեկամիս. տեղը, ժամանակը, մարդիկ կշփոթեի մտքիս մեջ. աղջիկը՝ երեսս կնայեր խնդալով, զվարճանալով արբած պոլսեցիի համարձակությանս վրա։

Եվ խոսակցությունը կսկսի և անունդ տալով.

— Ի՞նչպես, հո՞ս դո՞ւք ալ։

Չէր պատասխաներ. ես կհամառեի.

— Տեսնենք ե՞րբեն ի վեր։

Աղջիկը բարձրաձայն խնդալե կմարեր։

— Հոս,— կշարունակեի,— Պոլիս չենք, բայց դուք միևնույն ծաղրող և անողորմ էակն եք։

Այնքան կխնդար որ ալ պիտի ճաթեր։

Սենյակին մեջ եղանակները, ձայները, քահքահները, բաժակաց բախումը իրար կխառնվեին։

— Ձե՞ք պատասխաներ։

Այդ պահուն պատանության վերադարձ մը կբներ միտքս, կհիշեի բոլոր-բոլոր այն անձնահույզ խանդաղատանքս, որով քանի տարիներ հետևեցա քեզի, քեզի անծանոթ, ստվերի մը պես անշշուկ և վախկոտ. հետո սպասելե, քաջալերող ակնարկ մը սպասելե ու միշտ խոժոռած դեմքի մը հանդիպելե ձանձրանալս, անպատեհ սիրո մը համար ինծի արժանի վերջավորություն։

Եվ տեսնելով որ կշարունակեր ծիծաղիլ վրաս, ձեռքը ուզեցի բռնել. այն ատեն խնդալը դադրեցուց և ուղղելով գեղեցիկ բարձր հասակը, սպանյոլի մը արտասանությամբ հեռացուց զիս։

— Ո՞վ կարծեցիր զիս, ծե՜ե՜։

Զ

Դուրսը լուսցած էր. փողոցե փողոց մեր խումբը երթալով կպակսեր՝ ընկերներս իրենց տան առջև հասնելնուն դռնեն ներս կսպրդեին մեկիկ-մեկիկ, խորհրդավոր էակներու պես կանհետանային, թողլով որ մնացողները շարունակեն Բարեկենդանը։

Ես կշարունակեի քալել անգետ և անփույթ որ կոզմ երթալուս ցորչափ Քոքինաքին իր ձայնովը կառաջնորդեր ինձ անծանոթ աշխարհի մը մեջ, զոր գինովութենե գագոյալ ուղեղս իզուր կջանար պարունակել. և տասը վայրկյանի մեջ ամեն ինչ կհատներ կանհետանար չորս դիս,

այս բարեկենդանի գիշերը, բարեկամներս, Հայնոցը, և այս բոլորին խառնվող պատանության հիշատակը, հոս մինակ գլուխ գլխի ձգելով զիս Քոքինաքիին հետ առավոտյան պայծառ լույսին տակ փողոցին մեջտեղը. բայց երգիչին բոլոր գիշերվան եղանակները կհնչեին միշտ ականջիս, քնարի մը թելերուն պես, որ նվագածուին դադրելեն վերջը դեռ կթրթռան ամբողջ երեկույթի մարող սպառող արձագանքին պես։

<1891>

ՓՈՔԵՐ

Կիները ամենեն շատ սիրեցին այս խաղը, նենգությամբ, անակընկալով, սիրտհատնումով լեցուն, որ ամեն կողմ կճարակի հիմա, Փերա, Փրինքիփո, Պյոյուք Տերե, Քատրքյոյ։

Պոիճը հաշիվ ու նրբություն կպահանջեր միայն. մտքի ջանադիր աշխատությունն էր, որ հոն կգործեր, հաջող թուղթեն մեծագույն օգուտը քաղելով և ձախորդեն՝ նվազագույն վնասը քաշելու համար ոգորելով, տաժանելով խելքի խուլ պայքարի մը մեջ։

Փոքերը ոչինչ կուզե ասոնցմե. խաբեության ու կեղծիքի իսկատիպ խաղն է, ուր ուժդ ու տկարությունդ հավասարապես պարտավոր ես ծածկել դիմացինեդ, երբեմն համեստությամբ, շփոթած, վարանքով, ամենափոքրիկ գրավ մը բռնելու համար, իբրև թե չվստահելիր թուղթիդ զորությանը, ու երբեմն խոյանալով հակառակորդիդ ամբողջ դրամին վրա, պլըֆի մը հանդգնության մեջ պարտկելով իրական տկարությունդ ու հակառակորդդ վախեն փախցնելով։

* * *

Ըսի ու կհավատամ, որ կիները ամենեն ճարտարներն ըլլան այս խաղին մեջ, իրենց բուն մթնոլորտին մեջ ըլլալնուն համար անշուշտ։

Ուժն ալ սուտ, անուժությունն ալ սուտ, խոյանալն ալ սուտ, վարանիլն ալ սուտ, ընդունիլն ալ, մերժելն ալ, ամենքն ալ սուտ. ամբողջ կնոջական աշխարհ մը։

Հոս պչրանքը, ժպիտը, խոժոռումը, անուշ խոսքը, ամեն շարժումները և ամեն ակնարկները պետք է գիտել, վերլուծել, կանգ առնել, չխաբվելու համար, և ավելի գեշ, ծիծաղելի չըլլալու համար երբոր վարդագույն շուրթեր պոռան երեսդ ի վեր.

— Քառե կամ ֆլո՞շ...

Ու ափ ի բերան թողլով զքեզ հափշտակեն տանին ունեցածդ չունեցածդ, խնդալով քթիդ, ուրիշ անգամվան համար թուղթ խաղալու եղանակիդ վրա մտերմական խրատներ տալով քեզի, ուսդ ծ[illegible]լով մեղմիվ։

— Բարե՛կամս, թուղթ չուզողին ոբլանսը չեն բռներ։

Եվ կամ թե՝

— Պլրֆը հայտնի էր. պետք էր տեսնել։

Իրա՞վ։

* * *

Կմտածեմ որ Փոքեր մըն է կյանքը, զոր ամբողջ աշխարհ կխաղա արդեն։ Պրլֆյոններ մեկ կողմեն, չունեցածը ունեցած ձևացնողներ ու հաջողողներ, անթիվ, անհամար. պայքար մը մահացու, ոխերիմ, որուն ամբողջ կյանքդ կդնես, շարունակ ըսելով Մոն թո՛ւ։

Եվ դեմդ մեկը կելլե, անծանոթ մը, չար ոգի մը, Դիպվածը թերևս զոր չես ճանչնար, և որ գրավդ կբռնե ու կկործանե զքեզ չորս թուղթ նետելով առջիդ։ Կամ թե մարդիկ կտեսնեն մեծ ուժի ու դրամի տեր, ամեն օր ամեն վայրկյան ձեռվընին Ֆուլ ա լ'աս ունեցող մարդիկ, որոնք կանցնին Փասսոյի անընդհատ մրմունջի մը մեջեն, անկարող օգուտ քաղելու բախտեն, որուն երես առած, շփացած զավակներն են. մինչդեռ անդին ուրիշ մարդիկ, ձեռներեց, ճարպիկ ու հանդուգն, որ աշխարհներ կրնային վաստակիլ, տարիներով զույգ մը չունին ռվերբյուռ մը ընելու համար։

<1892>

ՄԱՐԳԱՐ ԱԽՊՈՐ ՏԵՐՏԶ

Դրսեցի մըն է, պանդխտության տաժանքովը ծերացած. իր բիրտ ու հաստ մարմինը՝ կքած, ծռած, քայքայած է հոս. ողորմելի մնացորդըն է հիմա առջի կայտառ երիտասարդին, որ քսան տարիներ առաջ վազած եկած էր Պոլիս, բախտ փնտրելու համար զոր երբեք գտած չէր։

Այս քաղքին մեջ, ամեն ինչ կզարմացներ զինքը, մարդերը, ձայները, փողոցները ու տունները։ Միայն եկեղեցին, իր եկեղեցին կճանչնար, միևնույնը հոս ալ ինչ որ էր իր երկրին մեջ, դասը, բանկալը, գավիթը, խորանը։

Հոն վերադարձած մարդու պատրանքը կունենար. ձայներն ու եղանակները ծանոթ էին իրեն. իրեն պես շատեր կտեսներ շուրջը, լալագին ու հառաչալից սրտեր, երեսանկյալ ու գետնամած մարդիկ, ժամուն պատերուն ու քարերուն քսվող դեմքեր, օգնություն ու սփոփանք հայցող հոգիներ բոլոր։

Իսկ պատարագի ատեն ա՛լ տարակույս չուներ բնավ. հոս հոն չկար. իր վերացմանը մեջ, քահանան, դպիրներն ու բարեպաշտներու բազմությունը կմիանային, հիշեցնելով իր բնավայրը, աղոթքի ժամերը գյուղին, ամբողջ ու անխառն վայելք մը ձևացնելով զոր խոնասեր, փափկաճաշակ մարդու մը պես Մարգար ախպար կըմբոշխներ մեղմիվ, կծծի, ագահ մարդու խնայողությունով։

* * *

Ասիկա իր երջանկությունն էր, դյուրագնի ու ստույգ երջանկությունը՝ զոր ոչ ոք կրնար իրմե կապտել և որուն ոչ ոք դպչելու իրավունք ուներ։

Բոլոր հայրենակիցներուն մեջ իր ժամասիրությունը առածի կարգ անցած էր. առավոտուն ու երեկոյին, մանավանդ կիրակի օրերը պատարագի ժամուն, անխախտ իր համեստ տեղը կբռներ, մինչև վերջը կկենար հոն, մինչև «Օրհնյալ եղերուքը» ու դանդաղ ու դժկամակ մարդու քալվածքով դուրս կելլեր, գրեթե ակամա։

Փորձանք մը պատահած էր սակայն իր այս սակավապետ երանությանը գլխուն. տարիներ անցնելով արարողություններն ալ կբռնվեին կարծես այն շուտափույթ ու շտապող ոգիեն, որ ամեն բանի մեջ կմտներ։

Ու եկեղեցիին մեջ աղոթքները, այն ծանր ու համրասաց եղանակները, տակավ-տակավ տարօրինակ հորդորի մը աճապարանքը կառնեին. առջի երկու ժամ տևող արարողությունը հիմա կես ժամվան մեջ կավարտեր. փճացումը, մսխումն էր այս Մարգար ախպոր բոլոր ու միակ վայելքին. ինքը՝ միշտ էն վերջինն էր մեկնողներուն, իբրև թե դեռ հույս մը ունենար աղոթքին վերսկսելուն, և հուսաբեկ կելլեր դուրս, լուսարարին հետ, տրտռալով, գանգատելով այս անտեղի փութացումներեն։

* * *

Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցիին մեջ ծերագրած պահուն Մարգար աղայար այդ օրերը փնտրելու կսկսեր. առաջ շուտ կարտասանեին աղոթքները, բայց վերջապես կարտասանեին. հիմա ամբողջ հատվածներ կկրկնվեին ահա փութո պնդությամբ հառաջ տարված արարողության մեջ։

«Առաքելոց»-ի պահուն երբ սարկավագները կսկսին սեղանեն երգել.

«Առաքելոց, սրբոց, մարգարեից, վարդապետաց...», ահա վարեն գոգիրները վրա կհասանին, չթողլով որ շարունակեն ու հառաջ քշելով իրենցը.

«Հիշյա Տեր և ողորմյա»։

Եվ այսպես անընդհատ ու վերահաս «Հիշյա»-ով ժամանակ չեն թողուր սրբոց անուններու հիշատակությանը։ «Հիշյա» մը, որ այնքան կնմաներ «չՀիշյա»-ի։

Մարգար աղայար կխոռվի ալ. ո՛չ, այս երկրին մեջ չկար. և վերջին հույսով մը կշարունակե ամեն կիրակի այդ եկեղեցին երթալ, որ մը, անգամ մը գոնե, կատարյալ ու չխռովված արտասանությունը լսելու «Առաքելոց»-ին։ Իր արդար ակնկալությունը ի դերև կելլե միշտ. նախանձախնդիր դրսեցին եղանգատի, կբողոքե ու կշարունակե եկեղեցի երթալ, ուր իր խնդրանաց ականջ չեն կախեր բնավ, ու կխլեն իրմե վերջին պատրանքը իր բնավայրին ու իրեններուն աղոթքի ժամը հիշելու, հոգվով անոնց հետ միանալու պատրանքը, որ այս քաղքին մեջ Մարգար աղայար միակ ինչքն էր, իր միակ երջանկությունը։

<1892>

ԷՏԼՎԱՑՍ

Սեղանիս վրա է մոխրասպիտակ թերթերով ծաղիկը։ Գոց սնտուկներու մեջ՝ ծովով, երկաթուղիով ճամփորդած է և ամիսներով աշխարհ պտտած է իմ ձեռքս հասնելի առաջ։

Խոնջ ու վաստակաբեկ բան մը չկա վրան. իր ձյունագալար անկողնին մեջ ծրածի պես՝ գողար ու գողդոջուն կեցեր է դեմս, երկու ձեռքով փարած իր դեռաբողջոջ ծաղիկի փափկությանը։

Ցողուն չունի, հյութ ու կյանք չտներ տեղե մը այս եզական ծաղիկը, ուրկե Ռիկիի կամ Յանկիֆրոյի վերելքը փորձող ամեն ալպասեր՝ հատ մը չքաղած վար չիջներ։

Ուշադրությամբ կդիտեմ այս անբացատրելի հմայքը, այս անթառամ երիտասարդությունը, և մատիս դպչելուն, կզգամ, որ իր տերևներուն նուրբ թավիշը՝ փայփայանքը սիրող պզտիկ կատուի մը ուսին պես կակուղ է դեռ։

Իր ստվերում ճերմակությունը ատեն անցնելով չէ եղծված, ու անայլայլ կեցած է որբևայրիի մը կես սուգին պես, որ վայելուն հանմար՝ բնավ չի հաներ վրայեն։

Իր գալուստեն ի վեր իմ քովս, ո՞րքան ծաղիկներ ծնան, բողբոջեցան ու մեռան պարտեզիս մեջ. ամենքը, անկե ի զատ, անցան գացին, իրենց վաղամեռիկ հրապույրներուն սուգը ձգելով սրտիս մեջ։ Էտվայսը միայն իր անանց մանկության մեջ է ու պիտի մնա այսպես։

Ու բաղդատությունը ինքնին կուգա մտքիս առջև. որոշում մը տալու, երթալու մեջ ընտրություն մը ընելու պետքը կզգամ. չէ՛. չեմ սիրեր այս լերան ծաղիկը, չեմ սիրեր որ ինքը մնա հավիտենական երիտասարդությունին, երբ իր նմանները այնքան շուտ կանցնին կերթան. անիրավ, կոշտ ու հետագեմ կտեսնեմ անվերջ տևողությունը բանի մը, որ իր շուտանցիկ ու խուսափուկ հանգամանքին համար գողտր ու քնքուշ է աչքերնուս։

Եվ կզայրանամ, մանավանդ անոր համար, որ վերջապես պետք է ամեն բան ժամանակի մը ենթակա ըլլա, իր վերջին օրը, ժամն ու վայրկյանը ունենա, և անոր սպասկոտ անձկությամբը տառապի, վախնա կամ ուրախանա. վերջին էակը չըլլա ինք, և մեկը գտնվի որ իրմե ետքը գա և կարենա վճիռ մը տալ անոր դեմ։ Իմ կարծիքովս անմահությունը մահացումներուն էն ահավորն է։

Չափազանց տևողությունն իսկ բանի մը, անտանելի է սրտիս։ Կիներ կճանչնամ որ իմ տղայությանս միջոցին մանկատի աղջիկներ էին, ու հիմա ալ դեռ առջի աղջիկները մնալու կշանան, հին ատենի ծեքծեքումները կպահեն։ Կանանց էտվայսներն են անոնք։

Դպրոցական տարիքես կհիշեմ կարգ մը մարդիկ, որ հայ հասարակության մեջ երեցեր էին, հանրային կյանքի մեջ, աղեկ կամ զեշ, փորձ մը ընելու երևույթով, և ահա քառորդ դար մը վերջը, միևնույն մարդիկը կտեսնեմ շուրջս, կանգուն ու երիտասարդ, միշտ գործի վրա։ Ազգին էտվայսներն են անոնք։

Ու իմ ծաղիկներուս դառնալով ես անանք միայն կուգամ, որոնց Սյուլլի Բրյուտոմ վաղաթառամ կյանքը երեսնուն կզարներ։ Ես իմ մեռ-

նող ծաղիկներս կսիրեմ, և էտվայսիս պես տարիներով սեղանիս վրա կեցող բույսե մը՝ հազար անգամ կնախընտրեմ այդ նուրբ ու թարմ բաները, որոնք գույնի մը ու բույրի մը հիշատակը ձգելով կանցնին։

* * *

Փողոցին վրա նայող տան մը պատշգամբին մեջ, լայն ապակիին ետև տեղավորված, աղվոր կնիկներ կտեսնես երբեմն. հոն են միշտ անոնք միևնույն ժամուն։ Ձեռքովդ դրածի պես, ապահով ես հոն գրտնելուդ այնքան, որ անշարժ կարծելու իրավունքը կուտան քեզի։ Ուզածիդ չափ կրնաս դիտել զանոնք ու զմայլիլ վրանին։

Անդին, փողոցին թոհուբոհին մեջ, անուշադիր ու մտազբաղ մեկ վայրկյանիդ՝ ժպտուն, արագաքայլ, մանրիկ ոտքերով մեկը կսահի կանցնի քովեդ հանկարծ, իր անցքը ավելի կզգաս քան թե ատեն կունենաս տեսնելու։ Ու աճապարանքով կդառնաս, կվազես ետևեն ու հազիվ կհաջողիս հեռուն, շատ հեռուն, բազմության մեջ բոլորովին անհետանալեն առաջ, ծոծրակին վրա ոսկեձույլ թումբի մը պես բարձրացող մազերուն ցոլքը նշմարելու։

Ո՞վ է, ո՞ւր է, ի՞նչ է, չես գիտեր, գեղեցի՞կ է գոնե, չես կրնար տեսնել։

Ընդնշմարվող, խուսափող բանն է ան, Երջանկությունն է։ Անդին՝ անբաժան, մշտակա, շարունակ քովդ ի վեր է մյուսը. Վիշտը՝ սա դեմի ծաղկիս պես։

<1898>

ԲԱՐԵԲԱՐԸ

Երբոր մինչև վերջին վայրկյանը լավ մը կշտացավ ու հղփացավ այս հարստությամբը ու ինքնիրենը ստուգեց թե ոևէ վայելք չէր մոռցած իր ծեր անառակի կյանքին մեջ, այս անթիվ ոսկիները ինչ ընելիքին վրա խորհեցավ։

Անհավատարիմ կնոջ մը պես, որ իր չսիրած էրկանը մահամերձին՝ տոնի, ցնծության պատրաստություններ կտեսնե, կզգար որ իր դեղին ոսկիներն ալ կխլրտեին, կշարժեին, անսովոր ձայներ կհանեին սնտուկին մեջեն։ Իր մահվան անկողնեն որոշ կերպով կլսեր անոնց ըմբոստ մետաղի խշրտուքը։

Ու ճիգ մը ըրավ, հնազանդության գերագույն փորձ մը ուզելու համար անոնցմե, և իր պլպլացող մտքին տարտամ լույսովը փնտրեց հաճելի բանը, վերջինը, զոր կրնար ակնկալել դեռ այս հարստության օգնութենեն, հրաժեշտի անուշ խոսքը զոր պաշտեցյալ կնոջ մը շրթունքեն կպահանջես։

Այն ատեն տարօրինակը, անհավատալին պատահեցավ. աս հնարամիտ ու կենցաղասեր մարդը, որ ամեն բանե օգուտ մը հանելու մեջ իր նմանը չէր ունեցած այսքան տարի, շվարած մնաց, ապիկար ու անկարող գտավ ինքզինքը հաճույք մը ձեռք ձգելու՝ իր ձեռքին տակ եղած ահագին դրամներեն։

Իր հինցած, փճացած ստամոքսը ոևէ համադամ չէր կրնար մարսել. իր ջրոտած, թունավորված արյունը ոևէ բորբոքումի անընդունակ էր ա՛լ. իր պարտասուն և թուլցած ջիղերը հիմա օրհասական ժամին պրկումովը կգալարվեին, նվագարանի մը մաշած թելին պես, որուն կոտրիլը՝ բութակին անգամ մըն ալ դառնալուն կնայի։

Այս անկարողության խոստովանությունը խելքը գլխեն տարավ. քովի սենյակին պատեն նախ փսփսուք մը, հետո աղմուկ մը կթափանցեր, կուգար ներս և վերահաս մահվան երկյուղեն սթափած լսողությունը՝ այդ աղմուկին մեջ իր ժառանգորդներուն ձայնը ճանչցավ։

Ու հանկարծ լույս մը ծագեցավ մահվան արհավիրքով գրավված այս մտքին խորը. իր չար մարդու բնազդը մեկեն արթնցավ. վերջին ավազակության, կողոպուտի մը խորհուրդը իր նեխած ու ողորմելի մարմինը դղրդեց ոտքեն մինչև գլուխը. ուրախության սարսուռ մը վազեց իր մորթին վրա, խորշակին պես որ գարշ ու անշարժ լիճի մը մակերևույթին վրա կթռչտի։

Եպիսկոպոս, քահանա ու թաղական ուզեց իր քովը, որոնք փութացին եկան. ան ատեն հանդիսավոր ու սրտառուչ ձայնով մը, զոր Սրբազանը վերջեն իր դամբանականին մեջ հիշեցուց, կտակ մը ըրավ ու բոլոր հարստությունը, որ ա՛լ իրը չէր, եկեղեցիին ձգեց։

<1898>

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Կանուխ, ան ժամուն ուր ամեն մարդ գործի կերթա, անակնկալ երաժշտություն մը, լաթեռնայի վրա եղանակված ճչուն ու հատկտոր երգեր, որոնք բոժոժներու սուր ու թավալուն ձայնը կհիշեցնեն քիչ մը։

Գիշերն ի վեր արբեցութենն չի կշտացող խաղաղուած ցնծութիւններու խումբ մը ձիերու վրա, իրենց բեհեզյա ծպտումներուն պտուցող գույներովը, ու պատրվակյալ երեսնուն արբեցուցած հետաքրքրությամբը։

Ու պահ մը փողոցին անցուդարձը կդադրի, ճամփա բանալով կանխազարթույց այս արշավին առջև և կարծես ըսել ուզելով.

— Թող տվեք որ Ճակատագրին արդարությունն ալ անցնի։

Վասնզի Ճակատագիրը որ կույր է, տեսնողն մը ալ՝ ելի արդար դատաստան կկտրե երբեմն։

Ավելի վար, ուրիշ խումբ մը կդիմավորե զմեզ. ասիկա հետիոտն է. աղմուկի, երգի, շպարի, տարազի միևնույն զեղծումը ու շռայլությունը. փողոցին պատշաճությանցը դեմ միևնույն անտաստությունը. միևնույն ցույցը մարմնական հարինվածներու ու միևնույն հոդվածներու խաղերը։

Եվ ասիկա այսպես բոլոր ճամփուն երկայնքը, Փերայի Մեծ փողոցեն մինչև Ղալաթիո ստորոտը, մինչև քովերը մեր խմբագրատունին ուր կապաստանիմ։

Ինչ ոք մտքեն կանցրնե կշտամբել այս կամավոր-երջանիկները, այս դիմածածուկ-անպատկառները, որոնք, Տրեյֆյուսի դատավորներուն պես, դոնփակի կուսակից չեն։ Զքմեղանքի, ներողամտության ու թույլտվության ընդհանուր հով մը կփչե։ Քաղաքը, վայրկյան մը, իր լուրջ մարդու երեսը պարզելու պետքը ունի. պզտիկ կատակի մը կնայի, որպեսզի բարձրաձայն խնդա ու մասնակից ըլլա մեջտեղի ցնծության, ինչ որ առվորաբար շաբթուս վերջերը կպատահի։

Ու երկարող փողոցին դեմ դեմի քարակոփ շենքերը, որոնք մարդոց և դեպքերու փոփոխականությենեն բան մը չեն հասկնար, իրենց Նյուքի պարզմտությանը մեջ, կզարմանան, կապշին Քաղքին ինքնամոռացումին և այս ուրախության ցույցերուն առջև։

<1898>

ՎԵՐՋԻՆ ԱՐԵՎԱԳԱԼԸ

Այս ժամուն ընդարձակ տաճարը գրեթե պարապ է լայնապարուր գմբեթին տակը. հոս ու հոն անկյուններու մեջ ապավինած սքլած քանի մը մարդիկ, մուրացկաններ, որոնք եկեղեցին առվորական բարեպաշտներեն, սա մյուս մուրացկաններեն առաջ ներս սպրդած են. հոնտուն, մեղանին մոտերը, ազնիվ փայտե քանդակներով շինված բազմանամին ետին սովերներու մեջ սև վեղարներ, և աջ ու ձախ կողմը երկուքի բաժնված գպիրներ դասին մեջ։

Եկեղեցին սուգի մեջ պլլված է. այս համատարած մթության մեջ՝ խորանին փակչող մեծ ու ճերմակ խաչը իր քառաթև ու կեղակարծ սպիտակության ցոլքովը զինքը շրջապատող արհավիրքը կավելցնե։ Հավատացյալները կուգան մեկ, երկու հատ, վայրահակ գլուխներ բոլոր։

Այս անբարբառ տրտմությունը անխոս ցավերու պատկառանքը ու մեծությունը ունի ու ես, լավ մը դիտելես վերջը որ զիս տեսնող մը չկա ու ապաժաման բարեպաշտությունս ծաղրանքի նյութ պիտի չդառնա, կամացուկ մը կծնրադրեմ ահա քարին վրա։

Հանկարծ ձայն մը կբարձրանա դասեն. Արևագալը կսկսի.

— Հարևելից...

Վտիտ ու մանկան ձայն մըն է անուշ, բեկբեկված քիչ մը, որ իր ընդհատումներուն մեջ կերկեբանքի մը ձևը կառնե, ու կպատշաճի այս սուգի տաճարին. սարսուռ մը կվազե վրաս, դեմեն թավ ու խժուկ ձայն մը կելլե վեր տրտում ու վարանոտ ու ոգբը կտավառնի ամբողջ տաճարին մեջ վիրավոր ու փախստական թռչունի մը պես.

— Նահատակք եշմարիսք...

Աղոթքին ելեէշներուն հետ՝ հոգիները հավատացյալներուն, որոնց թիվը ավելցած է հիմա, կտատանին, կշվարին։

Ո՞վ հնարեր է աղոթքը. ո՞վ մտածեր է առաջին անգամ արցունքն ու հառաչանքն զորություն մը ձևացնել. ի՞նչպես այս բոլոր բարեպաշտները իրենց ամեն կսկիծներուն համար աներևույթ ապավենի մը փարելու հատատ ապահովությունը ունին։ Եվ մինչդեռ դպիրներու դասերը իրենց երգեցողությամբ եկեղեցին կթնդացնեն, ես մտքովս կփոխադրվիմ մեր եկեղեցիներուն մեջ, ուր ամենքը այս վայրկյանիս միևնույն հավատքով վերջին արևագալը կերգեն։

<1898>

ԹԻՊԵԳՆԻԿՆԵՐ

Նահանջ ուղևորություն մըն էր մեր բրածը ձմեռ ատեն, այս անձուկ կիրճերուն և այս տղմուտ դաշտերուն մեջեն, զոր ձմեռնամուտի անձրևները ճախճախուտներու կվերածեին շաբաթակ։ Եվ, զգուշավ

կճամփորդեինք ողողված, թրջած մինչև ոսկորնիս, շարունակ մեր ձիերուն քայլափոխները ճշտելու և հավանական անկումները արգիլելու ջանադրությամբ։

Այսպես անընդհատ ջուրի հեղեղներու մեջեն կեբթայինք, լացող և խոնավ երկինքի մը տակ, և կմտածեինք ճամփուն երկայնքին, մեր ուղևորությանց մնացած մասին, որ ճշմարիտ տաժանքի կերպարանքը կառներ։

Իրիկվան դեմ գիշերեցինք մոտի գյուղին մեջ խոնջաբեկ ու ցրտահար ամենքնիս ալ։ Հիմա ցուրտը կավելնար ու ձյունի հատիկները կսկսեին գալ վաղահաս ու փութկոտ ձմեռին հետ։

Արշալույսին երբոր ճամփա ինկանք, նորեն առատ կուգար ձյունը։

Սպիտակ, անհամար թիթեռնիկներ էին ասոնք, որ ժանտ ու չոր երկինքի մը կապարե ցանցեն կմաղվեին. լուռ ու մունջ տեղացում մըն էր ասիկա. անթիվ առաքելություն մը կարծես որ երկիրը գրավել ուզեր իր դյուրահալ ու անբիծ խուժիկներովը։

Ու մենք գոհ, ազատելնուս համար վերջապես անձրևի մտրակումներեն, մեր շուրջը կդիտեինք անմեղ զմայլումով մը։

Ոմանք դանդաղ կիջնեին վար. հազար նազանքով, կարծես թախանձանքներու սպասումով. ոմանք խուճապի մեջ, ոլորապտույտ ծայրաններ գծելով օդին մեջ. ուրիշներ արծիվի մը շքեղ ճախրանքովը. և այս խոլ արշավին մեջ ամենքը անվնաս կհասնեին վար, իրենց գզված քուրդե հոլանի թևերը անկապահ գործիքի մը պես ծառայեցնելով վայրէջքին։

Ժամերով եկան այսպես, մեր քովը, մեր շուրջը, մեր վրան տեղալով անընդհատ, ու հեռուն, դաշտը, ճամփան և հորիզոնը բոլոր։

Խորհրդավոր ուղևորներու կնմանեին ասոնք, որոնք պաշտոն ունեին կարծես շտկելու, կոկելու, հարթելու աշխարհին վրա մակերևույթը ամեն բաներուն, և հատկապես, դյուրացնելու մեր ուղին. և իրոք, սարերն ու հովիտները կհաշտվեին իրարու հետ և այս միօրինակ ճերմակ փայփայանքներուն տակ քարերն ու լեռները կկակուղնային։ Եվ սակայն, ցորեկին երբոր արևը ծագեցավ հանկարծ սնդիկե երկինքի մը շղարշին տակեն, մեր շուրջը տարածվող այս մաքուր հարթության ու շքեղության վրա ուղևորությունը վտանգավոր և անստույգ կդառնար։ Անդունդներն ու գահավեժները պահված էին մենե ու հողին հերկոտիքը ծածկված բոլոր, ճամփուն մատնությունները իր անբծությամբը վարագուրված էին։

Ո՛րքան նախընտրելի էին պարզ հողն ու քարը իրենց աղտոտ տիղ-

մերովը, իրենց մերկապարանոց ելևէջներովը ու ակներև խորտուբորությամբը, քան թե սա պայծառ ու ցոլացիկ մակերույթը, որ կպարզվեր աչքերնուս առջև իր անսահման տափարակի խաբեությամբը։

* * *

Վարանոտ ու համր գնացքով մը շարունակեցինք ճամփանիս, ու իրիկնամուտին դեռ ոևէ օթևանի նշանը չէինք տեսած։

Ցյունը դադրեր էր ա՛լ. բայց դեմը, հեռուն, մարը մտնող արևին քով ճերմակ ոսկի թիթեռնիկներու տեղատարափ մը կար, ատրաշեկ հալոցե մը թափված հյուլեներ, որոնք բաց դեղինեն մինչև մութ կարմիր գացող ծիրանի գոտիի մը հազար երանգներով բոլոր եզերքը կկիտվածեին։ Եռուզեռում մըն էր գույնզգույն թիթեռնիկներու որոնց փոքրիկ թևերը կդժգունեին, կշիկնեին, կվառեին, կմարեին շարունակ հսկա քարայրի մը մեջեն։ Ո՛րքան մոտը գացինք իրենց, նույնքան հեռացան անոնք մենե, միշտ միևնույն անջրպետը պահելով մեջերնիս։

Այս թիթեռնիկները այլափոխիկ խոստումնե՞րն էին կյանքին. անոնք զորս ձեռք երկնցնելուդ՝ ափիդ մեջ կթվիս բռնել շարունակ. անոնք որ մոռցնել կուտան խոնջենքը ճամփուն, միշտ մերձակա և միշտ խաբուսիկ հանգրվանը, երազված ըղձացված բևեռը, որուն, ահա՛ քայլ մը ևս, և պիտի եզերիս։

Եվ այսպես, երբ ճերմակ թիթեռնիկները կհարթեին ճամփանիս, ու պատիր ապահովություն մը կներշնչեին մեզի, այս մյուս կարմիր թիթեռնիկներն ալ մոտավոր հանգրվանի մը խոստումովն ու ձգողությամբը կպատրեին զմեզ, որպեսզի մեր վերջին ուժերը դեպի իրենց հասնելու ջանքերովը սպառենք։

* * *

Ու հանկարծ, գիշերը իջավ վրանիս. երիթամած մթությամբ մը որ կարծես անհամար սև թիթեռնիկներու խուժումովը ձևացած էր։

Մանր ու բյուրավոր շղջիկներ ամենքն ալ, իրենց սև կազե թևերը սարդի ոստայնի մը նման տարածելով մեր շուրջը և մեր վրան։ Ելևէջ չունեին ասոնք, ո՛չ ճախրանք, ո՛չ անկանոն պարույթներ օդին մեջ. այլ լուռ ու խոժոռ էջք մը, դանդաղ բայց միօրինակ, անխափան ու անմաքառելի բան մը. հետզհետե ավելի հոծ և ավելի խիտ կդառնար բանակը սև թիթեռնիկներուն, որոնք, աննշմարելի ու տիտանյան ձուլ մը վիժածի նման՝ անընդհատ կլեցվեին ու կ[illegible], արհավիրքի թանձր աքսկապան մը հորինելով մեզի։

Այս ան թիթեռնիկները փարդապարհ շարքով փուղային կկնեցին քով-քովի, հանեն-հանեն, անխոսան ու անկորուստ ամենքն ալ. իրենց գրաված տեղը ձեռքն չհանելու մտադրությամբ։ Հարերն ու մոմոտուքները, ցավերն ու կսկիծներն էին ասոնք, որոնք կշրջապատեին զմեզ ամեն կողմե զարհուրելի հավատարմությամբ մը։ Եվ իզուր թոթափել ուզեցինք զանոնք վրանուս. սև թիթեռնիկները ա՛լ ավելի ճնշեցին զմեզ, ավելի շատցան և ստվար քողը ձևաքաշեցին հիմա։ Ահավոր վերարկուն, որուն մեջ օթևանեցանք։

***

Ճերմակ թիթեռնիկները կբանքի ադավրոն էին հարկավ, պահելով մենք, ցույց չտալով մեզի անոր թաքուն վտանգները։ Ոսկի թիթեռնիկները ցորեկն էին կյանքին՝ հույսով ու առաջադրությամբ լեցնելով զմեզ։ Մև թիթեռնիկները գիշերն էին կյանքին, աղջամուղջի բովը, որուն մեջ ամեն բան կաներևութանա։

<1905>

ՇԻՇԼԻԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ ՄԵԹԵԼՈՅԻ ԿԻՐԱԿԻՆ

Վերեն վար խաչաձևված է մաքուր ու ազվոր ճամփաներով։ Տեղ-տեղ մարմարե կառուցումներ աչքի կզարնեն ձյունե դեղերու նման զորս գարունը անտեսած է գուցե։

Պզտիկ քառակուսիներուն մեջ գետինը դահանակի շլացուցիչ փողփողումովը կխայտա, այնքան տարօրինակ կերպով հզոր է դալար բոզբոչումը, որուն մեջ երբեմն ծաղիկ մըն ալ, երիցուկը ընդհանրապես, իր խայտաուցը կգնե։

Դրախտի մը մեջ եմ, որ, Վերջին Հյուկոյի բառերն պես, ցժոլոք մը կծածկե։

Մինակս կհասաչանամ ուղիներուն մեջ, տեղ-տեղ ուռեցվորած հողերը, աչս հետաքրքիր ծաղկորումները գիտելով. ամեն քայլափոխիս տեսարանն ալ կփոխվի. փողոցները կաբբեբեին, մարդիկն ալ հարկավ։

Կյանքի պայքարը, անիրավ կարգն ու սարքը, կաքն ու նիստը, քենկերային ամեն վիճերը մեկ բառով, զարմա՜նք, հոս են ամբա՜ղ, կատարյա՛լ այս մահվան միայնության մեջ։

Հարգի թաղերը դատ են և պուրխանները հոգերը թանկագին. անդին նեղ ճամփան կամ վարուն արահետը և ոչիլի անոթին՝ այն տեղը որ ամենունն է և ոչ ոքինը։ Վերինը, Միջակը և Ստորինը ուրեմն, զարհուրելի երրորդությունը հոս է նորեն, իր պատակտումներով ու չափազանցող վերջերովը։

Հարուստին և աղքատին մշտնջենական կռիվը այս լռության մեջ ալ կլսվի, մունջ, բայց որոշ ու հստակ բողոքով մը։

Կալվածական դրությունը, «իմա»-ի, «քուկդ»-ի տարբերությունը հոս է. անջատումները՝ ավելի կարուկ, վիհերը՝ ավելի լայն բացված, միությունները՝ անկարելի։

Տեղ մը միայն, ուր ես իմ մասիս պիտի ուզեի հանգչիլ, եղբայրակցությունը կատարյալ է և գիրկընդխառնումը ճշմարիտ. հոն ուր լացերը ու սուգերը շեղջակուլտերով կլեցվին, հասարակաց փոսին մեջ։

***

Հոս, հոն տերտերներու կհանդիպիմ, քանի մը այցելուներու հետ, որոնք կերթան այս կամ այն գերեզմանին վրա աղոթք մը ըսելու... դրամի փոխարեն. շահավետ օրն է այս կսկիծի օրը։

Եվ անոնք որ իրենց սիրելիներուն վրա աղոթք մը ըսել տալու դրամ չունին...

Փարիզի մեջ, ամենեն ցնծահույզ և խնդամոլ ոստանը աշխարհիս, բոլոր քաղաքն է որ, Մեռելոցի կիրակին, գերեզմանատունները կլեցնե, ծաղկի դեզերու տակ ծածկելով շիրիմները. այդ օրը Ֆրանսա իր մեռելները միայն մեծարելու նվիրած է։

Մեր պարապ ու ամայի գերեզմաններին ցանցառ այցելուներուն կհետևիմ։ Ցավերու վերհիշումներով սփոփանք փնտրող այս մարդիկը կնմանցնեմ անոնց, որոնք խարանի մը կիզումեն վերքի մը դարմանումը կակնկալեն։

Հանիարծ, աչքս մարմարե նիսարձան մը, իր թմբկած ու անհաճո ծերունիի երեսովը, մանր ու խոնջ աչքերուն մեջ սառած նայվածքովը որ իմինիս վրա կսևեռի, կպահանջե որ իրեն նայիմ։ Կմոտենամ. ազգային վաստակավորի մը, ուէ բարերարի մը անունը կփնտրեմ և ծռած, ոսկի վերտառությունը կարդալու համար, կշտկվիմ սրտմտած ու կոնակս կդարձնեմ իրեն։ Շուրջիս բոլոր ձյունասպիտակ մարմարներուն ու ներբակերտ շիրիմներուն վրա՝ մոռացության միայն արժանի կյանքեր, որոնք, տարօրինա՜կ բան, անուններն անկորուստ պահելու, հոս, վերջին վայրկյանին, ջանք չեն խնայած։

Զախիս մատուռի ձևով շիրիմ մը, որ այր ու կնոջ մը դեմ դեմի դրված պատկերները կպահպանե. իբրև թե չբավեր այս հեք ամոլին անունը իմանալ, պետք էր երեսնին ալ տեսնել, էրկանը պատվանշանի խաչը ու կնոջ բեհեզե շրջազգեստը զանազանել. միամիտ ու ծիծաղելի համոզում աս էրիկ կնկան համոզումը, զոր սա քարե սրսկապանը կմարմնացնե։

Եվ այս լիրբ ու անպատկառ անձնագովությունները ու անձնապահպանումները այնքան կհաճախեն շորս դիս ահա, որ սիրտս լեցնող զզվանքը շրթունքս կելլե մինչև, և ճշմարիտ ամոթ մը կհամարեմ, կատարյալ անվանարկություն մը, դասակցություն մը հոս՝ այս փառապանծ կոթողներուն քով։

***

Եկեղեցին, որ կպնդե թե գերեզմանատունը իր մասը կկազմե, պետք չէր թող տալ այս անպատկառ ցուցահանդեսը և զլանալու էր, հանրային սրբավայրի մը մեջ ամենեն անարժանին ըստ կամս հավերժանալու արտոնությունը։ Մենք որ ոչինչ ունինք մեր հանրային մարդոց նվիրելիք, շա՞տ է արդյոք եթե գերեզմանի մը պատիվը վերապահենք իրենց։

Ու բնությունը, մեծագույն եկեղեցին, ինքը կուգա վրեժը լուծել այս վրդովիչ խնդիրներուն ու լրբենի շքեղության, որ վարձով կնկան մը փերևեռումին պես կպարզվի այս գերեզմանատան մեջ։

Հոն, ուր քարե ու մարմարե մահարձանները կխրոխտան, գարունը բույս մը կշինե այն ոսկերոտիքին վրա որ անոնց տակ կծածկվին, մինչդեռ հասարակաց փոսին ու հողին վրա լիաբուռն կսփռե, կշռայլե ցնծալից ու երփներանգ երիտասարդությունը։

Մեկ դին՝ հավերժացումն է կրսեն ոմանք, անէացումն է կսեմ ես, քարի մը անշարժությանը մեջ։

Մյուս դին՝ կյանքը իր հարափոփոխ դրվագներովը. ձմեռվան ձյունին ու բուքին տակ փոս մը, այո՛, որ հիմա գարունին հետ կծաղկի, կզարթնու, աչքիս ու սրտիս կխոսի։

<1898>

ԲԵՌԻՆ ՏԱԿ

Հիմակվան պես մի՛տքս է, ամառվան տաք ցորեկ մըն էր, հալած կապարի պես հրատապ մթնոլորտով մը որ շնչառությունը անկարելի կդարձներ։

Երեք հոգի, երեք բեռնակիրներ քամակնին ծռած կհառաջանային քով-քովի, համր, բայց տոկուն քայլափոխներնուն տակ դղրդեցնելով Ղալաթիո կամուրջին երկաթե լուծքը։

Իրենց կորովի մեջքը կքող, զիրենք, կես-մարդերու վերածող բեռերնին չնչին ու աննշան կթվեին, և զարմացա հեռուեն այս առույգ մարդիկը ընկճված տեսնելով մեյ մեկ փոքրիկ տոպրակի ծանրության տակ։

Մոտեցա. պաշտոնյա մը կընկերանար իրենց և օձիքնուն վրա փակցրված ճերմակ մետաղի սկզբնատառեր՝ այս մարդոց Օսմանյան Պանքային բեռնակիրները ըլլալը կհայտնեին։

Հիմա կբացատրվեր գաղտնիքը. ոսկվո պարկեր կփոխադրեին այս բեռնակիրները իրենց ուսերուն վրա, և խսկույն կրմբռնեի տարապայման ծանրությունը այն պզտիկ բեռերուն։

Եվ կամուրջին բոլոր երկայնքին վրա համառ ու աշխատասեր մրրջյուններու պես երթևեկողներուն բազմությունը փղոցներուն, հրապարակներուն վրա լեցված բոլոր մարդիկը երևակայությանս առջև եկան՝ մեջքերնին կքած քիչ շատ ամենքն ալ, այս երեք բեռնակիրներուն պես, ավելի կամ նվազ ծանր ոսկվո անտեսանելի բեռի մը տակ։

***

Քովես, ուղիղ, կորովի դեռ իր վաթսուն տարիներուն հակառակ, քրտնաթոր ու շնչասպառ մարդ մը, որ Պոլսո մեծագույն սարաֆն էր թերևս, անցավ, ճերմակ թաշկինակովը սրբելով իր կնճռոտած ճակատը. հակառակ իր շիտակ ու ամբարտավան քալվածքին, իրոք, զինքը ավելի ընկճված, ավելի նկուն տեսա այն ոսկիներուն բեռին տակ, որոնց տերն էր այս ծերունին։

Իր պատանության օրեն երևակայեցի զինքը ծռած, ուսին վրա շալկելով ոսկին, տանելով շարունակ իր կյանքին բոլոր երկայնքը, չհամարձակելով դպիլ երբեք անոր, իբրև թե՝ սա երեք բեռնակիրներուն քովը կեցուղին պես, ոսկիին վրա հսկող պաշտոնյա մը իր ամեն քայլերուն հետևեր. այսպես, տարիներու հոլովումներով անտրտունջ, թերևս

ալ երջանիկ. հասած, կզերած էր գերագույն եզերքը որ ծերություն կկոչվի։

Ագահությունը միշտ ավելի վար, միշտ ավելի ցած իջեցուցած էր այս մարդուն խրոխտ ու բարձրավիզ երևցող գլուխը, և սա գացող երեք ճամպլներեն ավելի գետնամած ու գետնաքարշ՝ անցած դարձած էր միշտ կյանքին ամեն ճամփաներեն։

***

Ու շատ մը անցորդներ ոչ նվազ կորաքամակ էին հարկավ. ոսկվո բեռը, անձկությամբ լեցուն բեռ մը, ամենուն ալ մտքին և հոգվույն մեջ կար, թե ոչ ուսերնուն վրա։ Եվ անոր ծանրության տակ, այդ սիրտերը ու հոգիները կքեր, ծռեր, բաժնվեր էին իրենց նախնական շիտակությենեն. ոսկին, որ մարդիկը բարձրացնելու պետք էր ծառայեր, ընդհակառակը զանոնք կընկճեր, կխոնարհեցներ և ո՞վ գիտե Ղալաթիո կամուրջին վրայեն անցնող սա երեք բեռնակիրները թերևս խորհրդանշաններն էին նյութապաշտ մարդկության։

<1898>

ԿՈՐՍՎԱԾ ԽՈՍՔԵՐ

Աշտարակիկներով, պարիսպներով շրջապատված անհեթեթ ու ամայի ժայռի մը կողին վրա խիզախող եվրոպական դղյակ մը չէ, որուն լուությունը ու միայնությունը արհավիրքով լեցուն կըլլա շարունակ, և որուն շուրջը բնությունն ալ ըմբոստ և անհրապույր բան մը կունենա, պառված կույսի մը դաժանությունը։

Ո՛չ, անանկ չէ շենքը. լայն ու լուսավոր պատուհաններով վիլլա մը, հինկեկ քիչ մը, բայց հանգստավետ կառուցումի մը բոլոր պայմաններուն մեջ. իր շուրջի ընդարձակ պարտեզը՝ դարավոր ծառերուն ստվերովը, մամուռներուն կանանչ թավիշովը, որ կարծես փայփայանքի կոչում կընե, տունտեղ եղած թռչուններուն երամովը՝ տարիներ տեվող լքումի մը շնորհն ու ազնվակենցաղությունը ստացած է։

Նորություն ու պաճուճանք չկա հոն. ամեն բան տարիքը առած, վրդովումե հեռացածի հով մը ունի։

Իրիկնամուտի ատեն է. հոչակապ անդորրություն մը որուն մեջ կթաղվի տունը. վերջալույսը չի թափանցեր հոն. այլ գեղեցիկ մագերու վրա ցոլացածի պես, տեղ-տեղ, մարող արևին ճառագայթները կուգան լուսե ադամանդներ դնել հինավուրց ծառերու սաղարթներուն վրա։

Դրան առջև, ուրկե լայնանիստ մարմարե քիչ մը ներկոտած աստիճաններ պարտեզ կտանին, փայտե քանափեի մը վրա՝ գեղջկական արդուզարդով, պարիսպ չփակով ու պատմուճանով, երիտասարդուհի մը, որուն ծպտուն դեմքին վրա երես առած, շարաճճի, գրեթե անառակ աղջկան մը երևույթը կա։

Նայվածքը ուշադրիվ և աննպատակ կսևեռի իր շուրջի ստվերներուն մեջ, աննշմարելի իտեալի մը հետապնդումովը։

Եվ ճիշտ այդ վայրկյանին կռնակը կեցող այր մը, որ տարիքոտ նշանածի մը կնմանի ինծի, անոր ականջն ի վար բաներ մը կփսփսա. սիրո, անձնվիրության խոսքեր թերևս։

Աղջիկը գլուխը չի դարձներ ետին նայելու համար թե ո՞վ է այս վրդովիչ բառերը նետողը. սկեպտիկ, դարավերջիկ գեղուհին է ինքը և ոչ այն անփորձ կույսը, որուն հոգին մեկ նայվածքով կխոովի. ու բոլոր այնքան խնամքով մտածված, քաղցր ձայնով մը արտասանված խոսքերը կերթան կկորսվին, անդարձ ու անօգուտ, իրիկվան մթնշաղին մեջ։

Այս է պատկերը, անգլիացի վարպետե մը առնված գեղեցիկ վիմագրություն, որ իր ոսկեզօծ շրջանակին մեջ սենյակիս պատին վրա կտեսնեմ ամեն օր։

Եվ ամեն օր, գրեթե ամեն անգամ, նոր տեսածի պես կկենամ անոր առջև, կմտածեմ. այս վերջալույսին շքեղությանը, ու այս երանության միջավայրին վրա կհիանամ, այս ոչ երիտասարդ սիրահարին թափած լեզվին վրա կցավիմ, և աղջկան անփույթ ու անզգա կեցվածքին ծափահարելս կուգա։

Կլսեմ, ականջովս կլսեմ գրեթե, սա անխոս պատկերին վրայեն, անուշ խոսքերը, որ այս մարմարի պես անխոով աղջկան կուղղվին առանց հաջողելու հասնիլ մինչև անոր միտքը ու հոգին։

Եվ կհասկնամ վերնագիրը. այս աղվոր ու խորհրդածություններով լեցուն պատկերին վերնագիրը, զոր նկարիչը, իմաստասեր մը կյանքի, այնքան խորին գիտակցությամբ մը դրած է . . .

Կորսված խոսքեր

Կորսվա՞ծ խոսքեր. և ատկե զատ բա՞ն մըն է կյանքը միթե. կորսված բոլորն ալ, աղեկն ու գեշը, անուշն ու դառնը, օգտակարը և անօգուտը. միշտ դեմդ՝ սա պատկերին մեջի գեղեցիկ կինը, գլուխը քեզի դարձնելու չհոժարող իր վես ամբարտավանությանը մեջ։

Անկամա կնմանցնեմ ինքզինքս, հրապարակագիրը, սա տարիքոտ նշանածին որ իր միտքը ու սիրտը ճնշելով, լուծելով՝ է՛ն գեղեցիկ խոսքը, է՛ն աղվոր խորհուրդը, է՛ն շնորհալի ձևը կմատուցանե ան երես առած աղջկան, որ հասարակություն կկոչվի. մտազբաղ ու անտարբեր հասարակություն որուն ուշադրությունը չեմ գիտեր ո՛ւր կմոլորի ու կսեվեռի միշտ։

Բայց այս անփույթ կեցվածքը, այդ ուսերը թոթվելն երբոր ամենեն լուրջ ու կարևոր խնդրովը կուզես զինքը զբաղեցնել, իր շահուն, իր բարօրության վրա խոսիլ հետը, շարգիլեր զքեզ՝ իր օգուտին հավիտենական մտածողը, շարգիլեր որ գիշերն ի բուն տքնիս հետևյալ օրը նոր բառ մը բերելու իրեն, ականջն ի վար քաղցրությամբ, նոր խոսք մը, կորսված առջիններուն պես։

Իրոք կորսվա՞ծ՝ այն ըսված բոլոր խոսքերը, որոնք, եթե շուտով ու դյուրությամբ կարտասանվին, գիտցած ըլլաք որ նույնքան դյուրությամբ չեն պատրաստվիր և ամենեն դժնդակ աշխատությունն են հրապարակագրին համար։

Կորսված, այս ժամուն համար թերևս, բայց ո՛չ բոլորովին։

Երբեմն, անոնք որ ինծի պես երաժշտության համար օտարականներ են, օր մը անհաճ ու անդեպ վայրկյանի մը մեջ, առտուն անկողնեն ելած պահերնուն, օրինակի համար, երգի պզտիկ հատկտուր եղանակ մը կհիշեն. տղա հասակի մեջ դպրոցը լսված, կամ մեծնալե վերջը, փողոցե մը անցված ատեն, ականջի դպած երգի մը վերհիշումն է. երգ որուն կարծեր էինք չունկնդրել։ Եվ այս վայրկյանիս, հիշողության զարմանալի կարողությամբ մը, ո՛վ գիտե որքան տարի վերջը, առտվանց կանուխ այդ կտոր բրդուճ եղանակը կտիրե մտքիդ. իզուր կփորձես փախչիլ անկե. իր անցյալ բոլոր մոռացումին, լքումին, ատենով իրեն համար ցույց տրված արհամարհանքին վրեժը կլուծե և կպարտավորե զքեզ՝ քթիդ տակեն ճշմարիտ հաճույքով մը մրմնջել զինքը։

Հանրության համար հրապարակագրին խոսքերը այս երգի փշրանքին կնմանին։ Մոռցված խոսքեր, թերևս. կորսվա՞ծ խոսքեր, երբե՛ք։

<1898>

«ԱՊՐԻՄ — ՄԵՌՆԻՄ»

Դեղին կոճակ մը մեջտեղը,— աղտոտ դեղին մը, որ ինծի համար գույներուն ամենեն վհատեցուցիչն է,— ճերմակ պզտիկ շեղփերով պարուրված։ Այս է բոլորը։ Ջոր, կտրուկ ծաղիկ մը, որ սովորական ծաղիկներու փափկությունը ու խոնավությունը, գույներու պեսպիսությունները, երանգները ու մարելիքները չունի. չունի, մեկ բառով, անոնց բանաստեղծությունը։

Ամեն ծաղիկ, բացի անկե, իր երգիչը ունի, իր հարգված ու մեծարված պարտեզը, ու երբեմն ալ սիրտ մը, որուն տրոփումներուն կունկնդրե։ Երիցուկը զուրկ է ասոնց ամենեն, լեռան վրա, դաշտին մեջ, միս մինակը կբուսնի ան, կոխկոտուքներու մեջեն, ձյունին ու փուքին դեմ, որբի մը մեծնալուն պես շարքաշ փթթումով։

Ոչ մեկ փունջի մեջ կերևա իր դեղին կոճակը, իր շքեղութենե անմասն թերթիկները, որոնք ճերմակ ու կակուղ փուշերու կնմանին, ամեն խնջույքե ու կոչունքե վտարված է ան, ծաղիկներու Վահան վարդապետը, որ անտրտունջ փիլիսոփայությամբ մը կհամակերպի իր լքումին։

Այս տոկունությունը ու այս համակերպությունը վերջ ի վերջո իր սեռը մոռցնել կուտան քեզի. զայն փրցնելու համար ա՛լ նույն զգուշությունը չես ունենար, ինչ որ կունենաս երբ մեխակ մը, կամ հասմիկ մը քաղես։ Բիրտ ձեռքով կգատես զայն իր ցողունեն, ո՛չ իր տեսքին համար կրնաս ժաքեթիդ լամբակին անցընել, ո՛չ իր հոտին համար քովդ պահել զայն։ Իր ծաղիկի կոչումը ոչինչ է։

Բայց ավանդական հարցուկն է ան զոր տղա տարիքդ ճանչցած ես, փետրտելով հեք պզտիկ թերթիկները «Ապրիմ-Մեռնիմ»-ին, հաճոյակատար քուրմը, որ դեմդ կեցած շարունակ, «Պիտի ապրիս» պատասխանած է քեզի։

Երիտասարդ, սիրտդ բացած ես իրեն, իրմե հասկնալու համար ճշմարիտը ու ստույգը այն սիրո խոսքերուն զոր պաշտված էակ մը փսփսացած է ականջդ ի վար։

Անկյուն մը քաշված, տենդոտ ձեռքով սկսած ես փետրտուքը. «Կը սիրե զիս, Շատ կը սիրե, Բնավ չի սիրեր»-ի անվերջ ու դարձդարձիկ հոլովումը։

Ու չափահաս մարդ, հիմա՛ ալ կակնկալես, դրական ու շոշափելի օգուտը կփնտրես իրմե, այն միայն զոր կրնա տալ. հաջողության կամ ձախորդության հաշիվներուդ պատասխանը, իբր թե նորօրինակ ապրու-

ֆակ մը ըլլար այս պզտիկ ծաղիկը, ու ակնդետ կհետևիս «այո»-ի «ոչ»-ի փոխնիփոխը անվերջ հակասություններուն, որով իր ողորմուկ պորտին շրջանը կրնես հետզհետե մերկացնելով զայն իր ճերմակ փշփշանքին։

* * *

Աղջիկներ կճանչնամ, շնորհազուրկ արարածներ, որոնք, սիրո ու ըղձանքի առարկաներ չըլլալուն համար կարծես, կին համարվելու իրավունքը կորսնցուցած են. այրեր են անոնք, որոնց հետ էրիկ մարդ մը ինքզինքը հարկադրված չզգար հետևելու լեզվի կամ վարքի պատշաճություններուն, որոնք պարտավորիչ են կնոջ մը հանդեպ։ Անոր հետ կխոսի ամեն նյութի վրա բացահայտ կերպով, առանց վերապահումի, առանց կիսավարտ բառերու կամ թերասքող պարբերություններու։

Ամեն վիշտ կրնա պատմվիլ իրենց, անոր համար գուցե, որ անոնք վիշտ ունենալու իրավունքը չունին. տեսակ մը բժիշկ են, որոնց ամեն հիվանդությունները կզրուցվին առանց ամոթի և առանց դարձվածքի։ Կամ թե քողընկեցիկ կիներ են որոնց կարգ մը մարդիկ կերթան, իրենց սիրո ցավերը բացատրելով, խորհուրդ ու դարման հարցնելու համար։

Ու այդ աղջիկները հոժարակամ կընդունին այս խորհրդատուի, տեսակ մը մխիթարիչի ապերախտ ու վիրավորիչ պաշտոնը, քեզի հետ մեկ կըլլան քու սիրած կնոջդ վրա հիանալու համար, երբոր դուն անոնց զմայլանքին կներկայացնես քու կուռքդ, համբելով անոր բոլոր հրապույրները։ Ա՛խ սաթե մազեր, պայծառ ու միանգամայն վրդովիչ նայվածք, հասակ մը արքենի, որ շուք կձգե իր շուրջը, իր պատմուճանին շքեղությունը, իր ոտքին նուրբ պճեղները, որոնք շրջազգեստին հանգրիճումեն կտեսնվին, գուշակել տալով ամենեն շնորհալի պարույթը մարմնական գիծերու։

Եվ անոնք, անխռով, մտիկ կընեն քեզի, իրենց ներսեն ընելով ահավոր բաղդատությունը իրենց ողորմուկ անձին հետ։ Իրենց նկուն մարմինը, ավերակ դեմքը, փոքրիկ ու անլույս աչքերնին, վար թափվող շրջազգեստին վրանուն, ասոնք բոլորը կբաղդատեն քու ցույց տված լուսաշաղ պատկերիդ հետ. ու արիությունը կունենան, փոխանակ անեծքով մը վանտելու զքեզ քավելնուն, կաբեկցնելու քեզի։

* * *

Որքան շատ օրինակներ կհիշեմ այն բիրտ խրոխտության որով մարդ մը՝ ուրիշ մը, սովորաբար ինկած ու ողորմելի էակ մը, չի քաշվիր օգտվելե, շարունակելով հանդեպ զայն արհամարհել։ Իրավունք մը պես կպահանջե, կառնե անկե էն շնչին օգուտը զոր անիկա կրնա տալ, ընկճվելով դեմինին բրտությանը տակ. երևակայեցեք գինի շինող մարդիկ որոնք խաղողը իրենց ոտքին տակ ճզմելով՝ անոր հոգին կքաշեն դառնեն։

Ու գանգատի գաղափարը իսկ չի գար այդ քամահրված էակին միտքը. իր պարտքը վճարելու պես հեզությամբ կխոնարհի իր ճակատագրին առջև որ «Ապրիմ-Մեռնիմ»-ին ճակատագիրն է։

Ամեն տարիք ու ամեն հասակ պիտի ծոի փրցնելու ու իսկույն փետրրտելու համար զայն։ Հետո անոր դեղին աղտոտ ու մերկ կոճակը պիտի մնա միայն, մեջտեղը, գետինը, ոտքի տակ, ասոր կամ անոր գարշապարին տակ ճզմվելու համար, հերատուկ կիներու պես։

Շատ կհանդիպիմ անոնց, փետրտածներուն, իրենց ճերմակ փշփշանքը կորսնցնողներուն։

Երբեմն էրիկ մարդիկ են անոնք, պատանիներ՝ երազնին թողած, եքիտասարդներ՝ իրենց հույսերը լքած, աշխարհ մտած առջի օրերնուն։

Երբեմն ալ կիներ, կույսեր, որոնք այրերը չի ճանչնալնուն համար կտառապին, իրենց շնորհները կթողուն, և արամբիներ, որոնք այրերը ճանչցած ըլլալնուն համար իրենց հրապույրներեն կմերկանան,— բոլորն ալ փետրտած «Ապրիմ-Մեռնիմ»-ներ։

* * *

Ես սիրած եմ միշտ այս «Ապրիմ-Մեռնիմ» անունը։ Կյանքի ու մահվան այս քովքովիությունը, այս եղբայրությունը սիրած եմ։ Քով քովի, ու թե որ կուզեք, իրարու մեջ անցած, ազնիվ թաշկինակներու անկյունները բանված սկզբնատառերու պես։ Այդ գիրկընդխառնումը, մեկ բառի մեջ ամփոփված, բոլոր աշխարհը չի՞ ձևացներ միթե։ Ըլլալ ու չըլլալու հարցը չէ՞ ան. ռամիկ ու աղետավոր հարցը, որ ամեն առարկայի վրա դրոշմված է։

Ամեն անգամ որ կքաղեմ քեզի, ո՛վ պզտիկ դեղին ծաղիկ, կհիշեցնես ինծի այն ահավոր մերձավորությունը, զոր քու անունդ կկազմե. «Ապրիմ-Մեռնիմ». երբոր ամեն տեղ Կյանքը կշանա ըստ կացի խուսափիլ, հեռու կենալ Մահեն, քու վրադ միայն երկուքն ալ իրենց ճշմարիտ ու պատշաճ տեղը կգտնեն։ Այն քաղաքին պես, որ իր գերեզմանոցը իր ծոցին մեջ զետեղած է՝ փոխանակ հեռուն, շատ հեռուն, անտեսանելի անկյուն մը տանել դնելու, դուն ալ Ապրելուդ մեջ Մեռնիլդ պարփակած ես։

<1909>

ԿՈՏՐԵԼԵՆ ԵՏՔԸ

Հարկավ ազնիվ հախճապակի էր այս սուրճի սկահակը իր պզտիկ պնակին մեջ, երբոր նվեր բերին ինծի օր մը։

Տվողը, բարեկամներես մեկը, որուն պզտիկ ծառայություն մը մատուցեր էի, ըսավ թե չնչին բան մըն էր տվածը։

Բայց իր երթալեն վերջը, անուշադիր և հարևանցի աչք մը պտըտցուցի վրան։

Ասիկա զատեր էր, որպեսզի սուրճս անոր մեջեն խմեմ և միշտ հիշեմ զինքը այդ առիթով։

Թափանցիկ խմորը, իրոք, տեսակին ազնվությունը երևան կհաներ, և Սեվրի հռչակավոր արվեստարանին նշանը վրան էր, կարմիր, պզտիկ բոլորակով մը, որուն մեջ 1844 թվականը կկարդացվեր։

Բավական ատեն գրասենյակիս փոշիներուն մեջ սպասեց, անկյուն մը դրված. ես, որ արվեստական բաներու կարևորություն կընծայեմ, ասիկա իմ գրասենյակիս մեջ ունենալու փառասիրությամբ բավականացեր էի սկիզբը. հետո բոլորովին մոռցեր էի զայն. օր մըն ալ այս սուրճի ըմպանակը ծիծաղելի թվեցավ ինծի իր անօգուտ սպասումին մեջ. խորհեցա որ այս լքումեն աղեկ էր եթե երբեմն անով սուրճ մը խմվեր. առի տուն տարի զայն։

Հոն ավելի բախտավոր չեղավ. նյութերն ալ մարդոց կնմանին քիչ մը. իրենց ճակատագիրն ունին. ոչ ոք երեսը նայեցավ աս խեղճ սկահակին. մեկ հատ մըն էր ու նմանը և օրինակը չկար, որպեսզի օրական գործածության մեջ ընդունվեր։

Պարզ զարդի համար տեղ մը դրինք. քանի մը օր վերջը հոս ու հոն նետվեր էր. անգամ մը պզտիկ զավկիս ձեռքը տեսա. հետը կխաղար, ու ժամանակ կանցներ. օրին մեկն ալ ձեռքեն վար ինկավ, կտորկտոր եղավ։

* * *

Անցած օր անոր պզտիկ պնակը ձեռքս անցավ. սրտի նեղության մեկ վայրկյանիս, անոր նուրբ գծագրություններն ու գունագեղ կիտվածները կգնեի. ստուգի՛վ գեղեցիկ արվեստի մը հրաշակերտն էր. գիծերուն շնորհալի ընդելուզումները, նկարեն երանգներուն գիրկընդխառնումները ուշադրությունս գրավեր էին. հանկարծ իրար փաթթված երկու տառեր նշմարեցի, վրան արքայական զինանշանով. ճիշտ դիմացի կողմը շրջանակին, միևնույն զինանշանը ու միևնույն սկզբնատառերը։

Այս տառերը ֆրանսերեն L և P գիրերն էին, և ահա լույսը իսկույն ծագեցավ մտքիս մեջ. Լուի-Ֆիլիփի կվերաբերեր այս սուրճի սկահակը իր պնակով. Սեվրի արվեստարանին նշանին քով Ֆոնթենեպլոյի դղեակին անունն ալ կար գրված, զոր հիմա կնշմարեի։

Ա՛լ տարակույս չկար։ Ֆրանսայի թագավորինն էր ասիկա. իր զարդարուն ու նրբակերտ հորինվածքը բավելու էր արդեն, ճանչցողի մը համար, մեկ նայվածքով ճշտելու թե ասիկա սովորական մահկանացուի հատուկ բան մը չէր կրնար ըլլալ։

Եվ հիմա որ կոտրած փշրված էր այդ խեղճ սկահակը, որուն արժեքը չէի կրցած ըմբռնել, երկար տարիներ մնացեր էր քովս, ձեռքիս տակ. հիմա ո՞րքան կզղջայի ըրածիս վրա, ո՞րչափ կկշտամբեի ինքզինքս՝ քիչ մը հոգ և ուշադրություն չդարձնելուս համար արվեստական ու պատմական այսքան թանկագին բան մը հասկնալու և պահպանելու։

* * *

Այս պզտիկ դեպքը կթելադրե ինծի կարգ մը խորհրդածություններ, որոնք այս տողերը կարդացողներուն միտքն ալ պիտի գան հարկավ։

Ընդհանուր կանոն մըն է որ մարդիկ իրենց կենդանության մեջ չճանչցվին ու չգնահատվին անոնցմե, որոնց քովն ու մոտը ապրած են շարունակ. մահը, անդարձ կորուստը պետք է գա, որպեսզի անաչառ դատաստան մը ու արդար վճիռ մը ընել կարելի ըլլա. գերեզմանին անշրպետը պետք է, որպեսզի մեր ակնարկը կարենա ճշտիվ տեսնել գիծերը այն դեմքերուն, որոնք անոր մյուս եզերքն անցած են հիմա. անոնց վերադարձին անկարելիության համոզումը պետք է մեզի, որպեսզի կուրցած աչվրնիս բացվին ճշմարտության, ու զիջանինք խոստովանելու և հրապարակելու անոնց առավելությունները, որոնց վրա անգիտակցաբար գուցե չշչարեինք, ցորչափ կենդանի էին անոնք։

Կիսորհիմ որ բարեկամությունները, անձնվիրությունները ալ ասանկ են շատ անգամ. ոչ ոք ամենադույզն արժեք մը կուտա այն սրտերուն, որոնք հոժարափույթ ու լուռ հավատարմությամբ իրեն կսպասեն. ու հարկ է որ այդ սիրտերը խորտակվին, որպեսզի կորուստին մեծությունը կարելի ըլլա զգալ և չափել։

Այսպես պատահեցավ իմ սուրճի սկահակիս համար ալ. ես զայն ճանչցա... կոտրելեն ետքը։

ԳԻՐՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԱՀՏԻՆ

Պոլիս բնակող Ֆրանսացի մեկ բարեկամս, որ այս պահուս պատերազմի դաշտին վրա կգտնվի, ատեն-ատեն քանի մը տող գիր կղրկեր ինձի։ Բան մը չբսեր պատերազմական գործողությանց մասին, որոնց վրա ոչ տեղեկություն տալը արգիլված է. իր խորհրդածությունները կհաղորդե ինձի ներկա պատերազմին առթիվ. անոր սկզբնապատճառներուն, վերջնական հաղթության ոչ կռվին մնալուն և հասած գալիք հետևություններուն մասին կարծիքներ կհայտնե, գուշակություններ ալ կընե, որոնք շատ անգամ շահեկան են։

Այս նամակներուն մեջ կանոնավորություն և կապակցություն պետք չի փնտրել։ Մինչև անգամ տեղ-տեղ հակասություններ ալ կրնան տեսնվիլ, որոնց աչք գոցելու է։ Այս վերապահությամբ այդ գիրերը Ազատամարտի ընթերցողներուն պիտի ներկայացնեմ հետզհետե։

Ա ՆԱՄԱԿ

Չորեքշաբթի օր մը մեկնեցանք Կոստանդնուպոլսեն ուր Պիզանսն ու Սթամպուլը գիրկընգիրառն կապրին հինգ դարեր ի վեր։ Արևելքն է ան. միշտ պայծառափայլ, երբեմն արյունաներկ։ Ես դեպի Արևմուտքս կերթամ. կարմրցող, զարհուրելի կերպով կարմրցող Արևմուտք մը։

Ճամփորդության բոլոր տևողության միջոցին լավ մը դիտեցի սպ Մթչերիրականը, որուն վրա գերմանական ակնկալությունները կթողուան. խորհեցա որ այս ծովին տիրապետումն է այսօրվան պատերազմին սկզբնապատճառներեն մին։ Միտքս չելլեր Վիլհելմ Բ-ի խրոխտ dictonը.

Իմ կայսրությունս ծովերու վրա է։

Ան, որ առարկան է այս ըղձանքներուն՝ անգիտակից կթվի իր ճակատագրին համար ծրագրված խորհուրդներուն, իր նվաճումին համար թափվելու պատրաստ արյունին։ Ան կշաբունակե իր կապույտ բեհեղի գգվանքովը և շոգենավնուս կուրծքն ու պարանոցը զարդարող սպիտակ փրփուրե ժանյակովը մեր աչքերն հմայել։

Բ ՆԱՄԱԿ

Կազմ և պատրաստ կեցեր եմ. համազգեստս հագած, հրացանը ձեռքս, պայուսակը ուսին։ Թե որ զիս տեսնես՝ չպիտի ճանչնաս։ Եվ ի՞նչ է պատերազմը՝ եթե ոչ անճանաչելի դառնալը մարդուս։

Ասանկ ժամու մեջ է որ հանկարծ մարմին կառնե, շոշափելի կըլլա խորհրդավոր և անտեսանելի թելը, որ մարդս դարերու հոլովումին ներկայությամբը իր ցեղին իր հոգին կկապե։ Այս պահուս ես դարձած եմ առանձին գոյություն ունենալե. իմ ազգիս հոգին է, որ կապրի իմ ներսս. որչափ որ տևե պատերազմը՝ ես անով պիտի ապրիմ, պիտի տառապիմ կամ պիտի հրճվիմ։

Ասանկ վայրկյաններու մեջ է նաև որ մարդուս տեսությունը ամեն տրդելները կթափանցե, տեսակ մը տեսնթկենյան ճառագայթ, որ բոլոր թանձրությունները կանցնի, հեռուն, շատ հեռուն կտեսնե... Ստուգությունները։

Առաջինը, որ պայծառապես կցոլա աչքին առջև, այն, որ մղվելիք երկար ճակատամարտներու վրայեն կգծագրվի դեմս, հորիզոնին վրա՝ Միլիթարիզմի բնաջնջումն է Եվրոպայեն։ Միլիթարիզմի անհետացումը տեսնել, թնդանոթներու ծուխին և մուխին մեջ՝ ի՞նչ հակասություն։

Գ ՆԱՄԱԿ

Այսօր առաջին անգամ լսեցի որոտալիր և դաշն երաժշտությունը թնդանոթներուն. թեթև տարուս մը վաղանցուկ ու տակավ վարժությունը որ Անզգայության դրացի է։ Թե որ այս է քաջությունը՝ ես ունիմ զայն։

Թշնամին անտես է մեր աչքերեն։ Դիմացի սարերուն վրա մուխի գիծ մը և՝ իսկույն գնդակներու սուլումը մեր շորս դին. հոն են գերմանները. ի՞նչ ընելու եկեր են այս մարդիկը մեր երկրին վրա. այն վայրկյանին որ հրացանս կուղղեմ անոնց կողմը, այս մտածումը միտքս կլլեր. տարօրինակ կգտնեմ փոփոխս սպաննելու մարդիկ զոր չեմ ճանչնար։ Եվ սակայն այս է իմ պարտքս այս ժամուս։ Սպաննել՝ չսպանվելու համար։ Բոլոր ազգությունները ասոր մեջ կմինտրեն արդարացումին։ Ինքնապաշտպանություն. ահավասի՛կ մեծ բառ. բնազդական բառը. վա՜յ անոր որ կանգիտե զայն։

Թշնամին իր հրետանիին և այրուձիին գերազանցությանը կվստահի։ Գերազանցությո՞ւն, ահավասիկ ուրիշ բառ որ ճակատագրական արշավի մը հրավերն է, մշանջենական կռիվը դեպի ուժը։

Եվ գերմաններուն հանձնապաստանությանը վրա կծպտիմ, ի՞նչ է անոնց ուժը մերինին քով. մեր ուժը մեր իրավունքին մեջն է։

Դ ՆԱՄԱԿ

Առաուն կանուխ մեր գումարտակը ոտքի վրա է, գիշերը ետ մղեցինք թշնամին որ մութեն օգտվելով մեր գիծերուն վրա հարձակեր էր. խավարը՝ ահավասիկ մեծ զինակիցը պատերազմի մեջ։

Հիմա պիտի հառաջանանք. բայց նախ մեռելները պիտի թաղենք։ Ամեն օր նոր գերեզմաննոց մը ունինք. այսօրվանը թեթև զառիվայր՝ առջևնիս կտարածվի, տեղ-տեղ ուղղագիծ բարտիներով վարագուրված. այստեղ կուվեցանք գիշերը. պզտիկ վայրի մանիշակներ իրենց ցողաթուրմ լանջքը բացեր են։ Այստեղ կքնանան անոնք որոնք մեյ մըն ալ չպիտի արթննան. բարտիներու մեղմ սոսափյունը անոնց հավերժական քունը պիտի օրորե։

Երիտասարդներ բոլորն ալ. անոնց դեմքին վրա աներևութացեր է ատելությունը որով իրարու դեմ խոյացեր էին։ Քով քովի, եղբայրական քունով մը կքնանան թշնամիները և երկուստեք թափված արյունի առուներեն մեկ վտակ մը միայն ձևացեր է որ անշշուկ կհոսի ահավասիկ։

Համլեթի մեռելաթաղին պես ամեն դիակի առջև իմ մտածումներս ունիմ. ի՞նչ պատկեր. ուհլան մը իր պրկված ձեռքին մեջ սեղմեր է լուսանկար մը, որ իր մորը ըլլալ կթվի. ուրիշ մը՝ թևը գլխուն բարձ ըրած, երկնցեր է, անփույթ կարծես շուրջը անցած դարձածին. սա զինվորը երկինքը կդիտե իր մեծաբաց անլույս աչքովը։

Մերինները մեկ կողմ, թշնամին մյուս կողմ հավաքեցինք ու երկու մեծ փոսերուն մեջ լեցուցինք զիրենք։ Կյանքի մեջ դեմ առ դեմ՝ մահվան մեջ ալ անանկ մնացին։

Ե ՆԱՄԱԿ

Որքան ճշմարիտ է Պահանջի և Մատուցումի օրենքը. ուրիշ ատեն հազվագյուտ են անձնազոհողությունները կամ վտանգի արհամարհանքը. կհիանանք անոնց վրա. մեծ վարձատրություններու արժանի կդատենք զանոնք։ Հիմա ամենօրյա ու սովորական բաներ են որոնց վրա տենք զանոնք։ Հիմա ամենօրյա ու սովորական բաներ են որոնց վրա նայող չկա, այն չքնաղ ու թանկագին ծաղիկներուն նման, որոնք ջերմացներուն մեջ անհուն հոգածությամբ կպահպանվին և իրենց տեղվույն վրա, այրեցյալ գոտիի տենդոտ բուսականության մեջ՝ արժեքնին կկորսնցնեն։ Զարմանալի չե՞ս գտներ որ բոլոր բարբարոս բնազդները արթնցնող Պատերազմը միևնույն ատեն բոլոր վեհանձն զգացումներու ասանկ ճոխ հունձք մը պարգևե մեզի. ի՞նչ բնագիմամաքա հավաքածո մըն է ասիկա։ Այսպիսի խորհրդածություններ կպաշարեն միտքս. կամքես վեր է հեռացնել զանոնք ինե. ամեն քայլափոխիս կհետևին ինծի իբրև ավելի հավատարիմ ընկեր քան այն հրացանը որ ուսիս վրա կկրեմ։

Լիեժեն լուր չունինք. իր դյուցազնական դիմադրությունը ընկճեցա՞վ արդյոք թշնամի ուժերու գերազանցության տակ. ասպետական վահանը զոր Պելճիքան բարձրացուց մեր թշնամիին դեմ։ Լիեժ, հրեղեն ու բոցավառ անուն որ մշտնջենապես պիտի լուսավորե աղջամուղջը, որուն մեջ խորասուզված կթվի մարդկային խղճմտանքն ու Գիտակցությունը։

Զ ՆԱՄԱԿ

Հաճախ ճամփորդած եմ Գերմանիա, անոր լեզուն կխոսիմ, անոր մեծ մատենագիրները ծանոթ են ինծի, անոր գիտական քարձրությանը և ճարտարարվեստի հրաշագործությանը վրա սքանչացող մըն եմ անվերապահ։

Այլամերժ և կույր հայրենասիրության պես ծիծաղելի ոչինչ կա նույնիսկ պատերազմի պահուն։ Այս նախաբանը ըրի քեզի հասկցնելու համար որ անկողմնակալ ոգիով մը կդատեմ եղելությունները։

Գերմանական սպառազինությունը կես դար տնտեսապես ճնշելե ետքը Եվրոպան՝ զայն վերջնապես ընկճելու համար ասպարեզ իջավ այսօր, զուր ջանք սակայն, Եվրոպան և ոչ մեկ ազգի տիրապետությունը կընդունի. ազգերը գերի վարելու, աշխարհակալություն ընելու դարը իսպառ վերջացած է։ Գերմանիա կհայտարարե, որ զինքը երկաթե շրջանակի մը մեջ բանտարկելու համար թափված ճիգերուն, վաղվան վտանգին դեմ իր սուրը մերկացավ։ Ճշմարտություն կա ասոր մեջ, ոչ ամբողջ ճշմարտությունը։ Եղելության մը պատճառը գտնել, դժվար աշխատություն. վերացական միտք մը մերձավոր դրդիչը ցույց պիտի տար Սերայովայի ոճիրը. վերլուծիչ միտք մը հեռավոր պատճառը պիտի որոներ, մակերևույթին դեպի խորը պիտի թափանցեր։ Փիլիսոփաները հատորներ գրած են պատճառը և սկզբնապատճառը իրարմե զանազանելու համար։

Պատերազմի հայտարարությենեն շատ առաջ Գերմանիան պայքարի մեջ էր իր հիմակվա հակառակորդներուն հետ։ Ֆրանսայի դեմ՝ ցեղային անհաշտություն և Ալզաս Լոռենի չսպիացած վերքը. Մեծն Բրիտանիո դեմ՝ առևտրական և ճարտարարվեստական կռիվը իր բոլոր սաստկությանը մեջ. այս կռվին մեջ հաղթությունը Գերմանիո կողմն էր։

Պալքանյան պատերազմը, տարիներն ի վեր մղված պայքարը սաստկացուց հոն առեղծված նոր վիճակը իրենուն, իր անպամասված ձևին մեջ իսկ, գարձյալ թումբ մըն էր գերման տարածումին դեմ դեպի հարավ. գերման հեղեղը այս թումբը տապալելուն հետ մեկտեղ մյուս դարավոր վեճերն ալ լուծելու կոչված։ Անհնահանդիպելի հարկ. այսպես նկատեցին գերմանները։

— Ուշադրություն,— կոչեց տասնապետս,— թշնամին դեմերնիս է։— Գնդակները սուլոցը ընդհատեց խորհրդածություններս։

Է ՆԱՄԱԿ

Հեղեղը արձակվեցավ խուժեց, իր ամեհի թափին տակ Լիեժը և Նամյուրը, Մանոնվիլիեն և Մոպեոժը ինկան. մեր բանակները նահանջեցին առանց խուճապի տակաց. Շարլուային մինչև Լաֆեռ. թշնամին Փարիզի դուռները հասավ. ամեն բան կորսված... կթվի, թերևս է։

Գեշ լուրերը կայծակի արագությամբ կուգան. բայց, տարօրինակ երևույթ, փոխանակ զմեզ վհատեցնելու, ընդհակառակը, բոլորովին անգառնալի կդարձնեն որոշումներս՝ բնաջինջ ըլլալու քան թե թշնամին առջև խոնարհելու։ Վերջին օրն է Ֆրանսայի, թող այնպես ըլլա, մենք վճռած ենք մեռնելու։

Մեր կողմը ճակատամարտը սովորական կռիվը չէ, այլ վայրագորեն և գազանային գիշատումը զենքով, եղունգներով, ակռաներով։ Գերման հառաջխաղացությունը ոչ միայն չի թուլցուց մեր դիմադրությունը, այլ ավելի զայրացուց զայն, ուժգնություն տվավ անոր։

Սովորական պատերազմը՝ ըստ միջազգային իրավագիտության, վախճան մը չէ, այլ միջոց՝ հակառակորդ կողմին ընդունել տալու որոշ պահանջներ, այս անգամ բուն իսկ վախճանը ըլլալ կթվի, դիմացինը փճացնելու վախճանը։

Այս խորունկ համոզումով է որ գուցե Ֆրանսական նկարագրին այս ճակատագրական ժամուն ստամատական փոփոխություն մը կկրե, իր ջատագրուց ու քիչ մը անհարիր հանդամանքը կմերկանա. բանի մը միայն չէ հրաժարեր՝ զվարթությունենն։ Զվարթությո՞ւն մահվան դեմը. հարկավ, կինը միշտ վայելչությամբը, այրը՝ միշտ ժպտելով մեռնելու են մինչև վերջին վայրկյանը։

Ը ՆԱՄԱԿ

Թումբ մը կանգնեցինք մեր կուրծքերեն, ավելի առկուն քան թե բոլոր զրահապատ ամրոցները աշխարհիս. Ֆրանսական բանակը իր լայն և խրոխտ ճակատը հանեց հեղեղին դեմ։

Մեր թշնամիին հաջողությունը տեսնելով, տեսնելով անոր նորահնար զենքերը, պատրաստվեր էի ըսելու՝ ամենեն ուժով ազգը ան է, որ մեծ թիվով ճարտարագետներ ingénieurներ ունի, դարավերջիկ սահման զորության, և հիմա կրսեմ ամենեն ուժով ազգը այն է որ մահվընեն չի վախնար։

Ճակատամարտը հոս կամ հոն չէ, ամեն տեղ է. երկու բանակները, մարդկային կրկին շղթաներ, դեմ առ դեմ, գրեթե գուգահեռական գիծով կգալարին վերեն վար հաշված շարժումներով, համենալով, նահանջելով, կասելով երբեմն և երբեմն նոր թափով մը նետվելով հառաջ։

Գիրկ գիրկի կռիվ, կուրծք կուրծքի, թև թևի, ոտք ոտքի անցած, հողին վրա գետինը տապալեկող երկու ըմբիշներ, պահ մը մին՝ ընկրճվելու մոտ... երբ հանկարծ անակնկալ շարժումով մը ոչ միայն ինքզինքը կփրկե, այլ հակառակորդը նեղը կդնե։ Հանդիսատեսները այս տխուսանյան պայքարին կհետևին ավելի սրտատրոփ քան թե բուն ինքն պատերազմիկները։ Հևիհև պայքար որ հազիվ պիտի կրնար քանի մը ժամ տևել և որ գերմարդկային, անհունապես գերմարդկային ճիգով մը շարաթե մը ի վեր կշարունակվի։

Հեղեղը ետ դարձավ, եկած ճամփեն դարձավ ոչ բոլորովին մինչև իր եկած տեղը։ Մասնի ճակատամարտը պիտի կոչվի այս թումբը պատմության մեջ։ Իմ գումարտակս նվազեցավ. որչափ պաթապ տեղեր մեր շարքերուն մեջ։ Երեկ ինկավ ճիշտ քովիկս, Ժոռժ Լբպոեռն, երիտասարդ օրագրող մը, որ հոս ճանչցա, շուտով բարեկամացեր էինք, աշխույժ, խոսուն, զվարթ. զվա՜րթ մեռելները խնդացնելու չափ։ Անգլիական դասարարակության չերմ սիրահար մը, Տեմոլենի գիրքը՝ Անկլո-Սաքսոնների գերազանցության պատճառները, խորունկ ներգործություն ըրած էր իր վրա. իր տանը մեջ ամեն բան անգլիական էր, իր զավակը, յոթը տարեկան մանչ մը Ֆրանսերենի չափ կիսոսեր անգլիերենը։ Զորակոչին երբոր բաժնվելու վայրկյանը եկավ, իր ճիտը պլլվեցավ ան, երեսները համբուրեց և պզտիկ խեղճուկ ձայնով մը ըսավ.

— Good by!

Զարնվելեն ժամ մը առաջ գուցե տասներորդ անգամը ըլլալով պատմեց ինծի այս բաժանման պատմությունը։

Տեսարանը գծագրված է աչքիս առջև և անդին չերթար։ Օվ հիմա բարեկամիս անշունչ մարմնին վրա անոր ճիտը պլլված, երկու պզտիկ բազուկները կնշմարեմ և մանկական ձայն մը որ անոր ականջին կփսփսա.

— Good by!

Թ ՆԱՄԱԿ

Դիտված է թե պատերազմը, որ մարդկությունը բնաջինջ ընելու կաշխատի, գրականությունը կծաղկեցնե, հաստատելով անգամ մը ևս այն օրենքը, որուն համեմատ ամեն վնաս իր օգուտը ունի։

«Հաղթություն» բառը ամենուս կիտցած մեկ բառն էր, անոր նշանակությունը պայծառ էր, մանավանդ զայն ձեռք բերող կողմին համար։ Անոր վրա վերջերս ավելցավ «բարոյական հաղթություն»-ը Moralischer Sieg զոր ավստրիացիները հնարեցին՝ բնորոշելու համար իրենց պարտությունը Կալիցիո մեջ, Լեմպերկի կորուստովը արձանագրված։ Ավստրիացիները այս ճակատամարտներուն մեջ իրենց ցույց տված քաջությունը և դիմադրությունը ռուսական առավելակշիռ ուժերու դեմ՝ այս նոր բացատրությունով հավերժացուցին. իրապես պարտված՝ բարոյապես հաղթող հռչակեցին ինքզինքնին. նոր վիճակ մը ստեղծվեցավ, մինչև ցարդ մեկ կողմը կհաղթեր և մյուս կողմը կպարտվեր. նոր բացատրությամբ երկու կողմն ալ հաղթող կրնար հանդիսանալ։ Ոչ ոք ընդդիմություն ցուցուց այս նորության դեմ։ Անոր վրա Մեծն Բրիտանիան ավելցուց «վերջնական հաղթություն»-ը, Final Victory, որուն կհավատան ամեն անոնք, որոնք բիրտ ուժին վերևը քաղաքակրթական ուժի մը գոյությանը համոզված են։ Նափոլեոն, որ հաղթություններու ամենեն առատ հունձքը քաղած ըլլալուն կրնար պարծենալ, «վերջնական հաղթություն»-ը չունեցավ։ Պատերազմի բախտը երբեմն կնմանի այն պչրասեր կանանց, որոնք շատ մը վաղանցուկ հպումները, նույնիսկ մերկացումները կթույլատրեն, բայց տևական կենակցության չեն հոժարիր։

Կան նաև Կատարյալ հաղթությունը, այն, ուր պարտվողը բոլորովին անձնատուր կըլլա, և Անկատարը, ուր պարտվողը զենքը ձեռքը կկենա, հաղթողին հոգնութենեն օգտվելով՝ հաշտության ամեն մեկ պայմանին վրա կվիճի, կարևոր զիջումներ ձեռք կբերե և իսկույն երկրորդ պատերազմի մը կպատրաստվի լռելյայն։

Ո՞րն է վերապահված մեզի։

Ժ ՆԱՄԱԿ

Գերմանիան կզարթնու հոյակապ ու շքեղ երազեն որ քառասունչորս տարի տևեց անընդհատ, կզարթնու միահեծան տիրապետութենեն, որով ճնշեց բովանդակ Եվրոպան... ինքզինքը գտնելու համար այս պահուս պատերազմի դաշտին վրա միս մինակը։ Վալքիյրիներե առաջնորդված մարտիկներու երազ՝ Հազար և մեկ Գիշերներու պատմության վերջավորությունովը պսակված։ Ինծի համար պատերազմը վերջացած է, լմնցած է այն վայրկյանեն ուր աշխարհք հասու եղավ Վեճին իսկությանը։ Կռիվ չունինք ազգի մը դեմ, որուն անժխտելի մեծությանն ու զորությանը վրա կհիանանք. մենք կմարտնչինք լոկ մտայնության մը դեմ որ կըսե՝ Իրավունքը հզորագունին։ Տարվին կենդանաբանական աշխարհին համար սահմանած էր այն օրենքը, որով ապրելու իրավունքը ամենեն ընդունակին, le plus apte a՝ vivre միայն կշնորհվեր։ Սփենսըր կջանար մարդկային ընկերության պատշաճեցնել զայն։ Ո՞վ է մարդոց և ազգերուն մեջ ամենեն ընդունակն ապրելու. այս հարցը գործնականապես ճշտելու համար հռչակվեցավ պատերազմը, ճշտելու համար թե ո՞վ է հզորագույնը։ Մենք կպատասխանենք՝ Իրավունքը տկարագունին։ Ահա երկու անհաշտ, մշտնջենապես, խորապես անհաշտ գաղափարները, որոնք ասպարեզ իջած են այսօր. դավանանքի կռիվ, անողոք՝ նույնատեսակ բոլոր կռիվներուն պես։

Մարդ մը՝ ձեռքը իր սուրի երախակալին, հրավեր կկարդա, իր իրավունքին, անվիճելի իրավունքին վրա կճառե. ո՞վ չունի միթե անվիճելի իրավունք մը. ան միայն իրենին խոսքը կընե. այդ իրավունքը մեծ է, խիստ մեծ. վա՜յ անխոհեմին, որ պզտիկ դիմադրություն մը պիտի փորձեր։ Այդ սարսափը այսօր գոյություն չունի. խպլիկին վախը փարատած է այլևս, և շունչ մը, երկա՜ր, աղվո՜ր, ազա՜տ, բոլոր աշխարհի կուրծքեն դուրս կթռչի միահաղույն։

ԺԱ ՆԱՄԱԿ

Գյուղը մոտիկնիս է, հերկված, հարդարված հողերով. անդին թարմ կանաչություն մը որու վրա ակնարկը կհանգչի. այստեղ ոչխարներու երամակ մը ցնծության մեջ, հանկարծ գերմանական հրետանին կգոռա, մահ կսփռե ամեն կողմ, մերինը կպատասխանե, լեռնե լեռ կերկարի արձագանքը որոտումներուն. նախաբանն է աս. հետո գնդակներու սուլումը, օդին մեջ թռչող անհամար օձերու վազքը. կրակե անձրև, որուն շռափնելներու կարկուտը կխառնվի. նորօրինակ հրախաղություն

է այս. հետո գրոհը՝ աջեն, ձախեն, դեմեն, քովեն, մեր վրա խոյացող թշնամվույն. սվիններու նգիվը արյունաքրու. հետզհետե Ալինան մերին-ները, գետինը կծածկվի և թակայն ոչ իսկ փոքրիկ տրտունջ մը կխառնվի մոլեգին երաժշտության պատերազմին. ոչ ոք պիտի թույլ տար ինքզինքին այս տկարության նշանը թշնամույն առջև. մեր վաշտը նահանջեց թողլով պզտիկ բլուրը, ուր կեցեր էինք. հրաման մեզի երթալու կրակին դեմ. առաջ կնետվինք առանց վարանելու. արբած խելակորույս մարդու արշավն է մերինը. վերագրավեցինք մեր բլուրը. նորեն ձեռքն հանեցինք, վերստացանք. վեց ժամ ի վեր կկռվինք շարունակ։

Մեր շուրջը ոչ տուն, ոչ տնակ այլևս, ոչ ցանք, ոչ մշակություն, ոչ ծառ, ոչ բույս, համատարած լռություն մը. ամեն բան քար ու քանդ, տակնուվրա, դիակնե՞ր, դիակնե՞ր, դիակնե՞ր մարդոց, կենդանիներու՝ խառնիխուռն, հողը պատառ-պատառ, հոշոտված և այս անէացումին վրա՝ ծուխեր-մուխեր, որ ծուլորեն կբարձրանան տեղ-տեղ պզտիկ ամպերու պես հոս՝ այրող ջաղացքի մը վրայեն, հոն՝ գյուղին կիսակործան տանիքներեն։

ԺՐ ՆԱՄԱԿ

Իրավունք ունի՞մ իմ անձիս վրա խոսելու. կերևի թե դյուցազնություն մը ըրած եմ անցյալ օրվան պատերազմին մեջ, այսպես կըսեն մեծերս, որոնք անունս կհիշատակեն բանակին օրակարգին ordre de jour մեջ. միտքս է, այո՛, որ մեր նահանջի ժամուն ետ դարձա միայնակս, թշնամիին կրակին տակ պառկող վիրավոր ընկերներեն մին շալակեցի ու մեր կողմը բերի, հետո երկրորդ մը, երրորդ մըն ալ, անփույթ վրաս տեղացող գնդակներուն. ա՞յս է դյուցազնական արարքը; մահը՝ երբոր մարդուս շուրջը կհածի, կբազմապատկվի, կբյուրապատկվի՝ կդադրի սարսափ ազդելե, անվնաս կդառնա, կատակի կվերածվի, այսպես հաջողեցա ես կտրիճի համբավ շահելու։

Մի մոռնար, սիրելի՛ս, այսուհետև ինծի գրելիք թուղթերուդ մեջ դյուցազնի մը մատուցվելիք հարգանքը։

<1914>

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակ մը ի վեր մեր լրագրության էջերը կլեցվին ֆրանսական արդի մատենագրության դեմ մղված ծիծաղելի պայքարի մը փորձերով։

Օր չանցնիր որ քաղաքական հոդվածի մը, առևտրական տեսության մը, կամ տնտեսական կացության մը նկարագրին մեջեն հանկարծ հարձակում մը, ակնարկություն մը, զարտուղություն մը չբլլվի այդ մատենագրության դեմ։

Ժեռոտելի բաստիլներուն ծանուցումները անակնկալներու այսքան գեղեցիկ շարք մը ձևացուցած չէին։

Ռասփայլ կպնդեր թե կարող է նույնիսկ դատավորաց աթոռներուն մեջեն զառիկի թույնը գտնել, և այսօր այն վիճակին եկած հասած ենք որ օրվան լրագրական մրճյուին մեջ,— ստամոքսային բացատրություն մը գործածելով որ հիմա շատ հարգի է,— կրնանք անպատճառ պզտիկ հատված մը գտնել Անբարոյական գրականություն վերնագրով։

Որո՞ւ կուղղվին այս ճառերը։

Մեր գրականությունը՝ անշուշտ այն միայն, որ քանի մը տարին ի վեր լրագրական հրատարակությամբ լույս կտեսնե, պետք ունի՞ արդյոք այդ փրկավետ ազդարարության։ կամ մեր ընտանեկան բարքերը ա՞յն աստիճան մատնված են ապականության, որ ամենօրյա բարոյականի քարոզները ներքին լուրեր հաղորդելու չափ կարևորություն ստացած ըլլան։

***

Միանգամ ընդմիշտ ըսենք ամեն անոնց որ տարբական ճշմարտությունները ըմբռնելու ընդունակ են, թե անբարոյականությունը մարմնական զեղծմանց մեջ չի կայանար միայն։

Այդ ստորին կայանը հատկացնելով շարունակ բարոյականին, զայն կարի գռեհիկ ու աննշան բան մը դարձուցած կըլլան։

Սիրո վաճառականությունը մեղադրելի է անո՛ր համար անշուշտ որ կեղծիքի առուտուր մըն է. և սակայն որքա՜ն մարդիկ ապրուստնին կճարեն օրնիբուն իրենց սիրտն ու հոգին կեղծելով։

Փաստաբան մը, որ անիրավ դատի մը պաշտպան կանգնելով իր հմտությունը կծախե քանի մը ոսկիի փոխարեն, հրապարակագիր մը, որ իր խիղճն ու գրիչը միանգամայն կվաճառե որոշյալ շաբաթականի մը համար, բժիշկ մը, որ հիվանդ մը խաբելով, խաբխբելով, իր այցելագիրներու արդյունավոր շարունակությունը կպահպանե, երիտասարդ մը, որ աղջկան մը դրամօժիտին համար կկարգվի միայն, ինքնամատույց կնոջմեն կտարբերի՞ն միթե և իրենց ստացած դրամը ճշմարիտ կապենք մը չէ՞ արդյոք։

***

Հեռո՜ւ մեզմե այն բարոյախոսները, որ ընկերական կարգերու ամեն կեղծիքներուն դեմ անտարբեր՝ միայն կնոջ մը մերկ ուսեն կամ հոլանի պարանոցեն կշառագունին։

Մոքերնիդ չի՞ գար Թառթյուֆը։

> Խոսքդ ուղղեմ առաջ ինծի՝ խնդրեմ ա՜ռ
> Թաշկինակս ու ծածկե այդ լանջն անպատկառ։

Մարդիկ, որոնց բարոյականի ամուր ու հաստատ շենքը, Նեվայի ափանց վրա կառուցված ձյունե դղյակի մը պես, մարմնական աննշան մեկ հրապույրին առջև կկակուղնա, կհալի, կանհետանա խպառ և որ ավելին է՝ չեն կրնար գրքի մը մեջ, իրենց դյուրաբորբոք զգացմանց համար անպատուհաս կերպով ընթեռնուլ սիրո մը նկարագրությունը, կնոջ մը պատկերը, դիմագիծը, առանց խռովելու տեսնել Ռյուպենսի մեկ նկարը կամ դիցուհիի մը արձանը։

Եվ այս դառնությամբ կդառնան մեր գրականության դեմ ալ— այնքան հեռու արդեն եվրոպական գրականութենեն— հոն ալ որոնելու, գըտնելու ցանկության միfnոպը, որուն համար կվախնան թե իրենց դյուրագրգիռ հոգին՝ բերրի ու արգավանդ հող մ'ըլլա։

***

Գրականությունը իր նպատակովը միայն կրնա բարոյական կամ անբարոյական հռչակվիլ. նկարագրությունները՝ արվեստական խնդիրներ են, որոնք չեն կրնար երբեք անբարոյականության համար իբրև փաստ հառաջ բերվիլ։

Եթե երբեք ախտաբույր կամ ցանկացուցիչ տեսարանի մը նկարագիրը բավեր հեղինակը անպարկեշտ ու անբարոյական համարելու համար, գիտե՞ք որ նախնի ու արդի, աշխարհական կամ սրբազան մատենագիրներեն գրեթե ոչ ոք դուրսը պիտի մնար։

Հելլենական գրականությունը նախ պետք էր կրակը նետել իր դիցաբանության հետ մեկտեղ։

Կուզե՞ք որ Արիստոփանեն հատվածներ գրեմ հոս։

Հոովմայեցվոց մատենագրությունը տարփանքի նկարագրության մեջ հելլենականեն վար չի մնար. Լյուքրես, Քաթյուլ Փեթրոնեն դասական հեղինակներ են։

Բայց ի՞նչ պիտի ըսեք Հոռասի համար; կարդացա՞ծ եք բարեկամի մը ուղղյալ, առ Պառին, առ Մեսեն վերնագրով տաղերը։

Ժյուվենալ կանանց վրա գրած երգիծանքին մեջ անտարակույս գերազանցած է արդի գրողներուն բոլոր ազատությունները։

***

Ֆրանսական մատենագրությունն ալ իր նշանավոր ու դասական հեղինակներովը նպաստավոր չէ բոպիկ ոտքե մը կամ անծածկույթ ստինքե մը կարմրող հրապարակագիրներուն։

Ռապլե իր զվարթախոհ հեշտասիրությամբը երբեք անբարոյական հեղինակ մը համարված չէ։

Բայց անշուշտ պիտի զարմանաք, եթե ըսեմ ձեզ թե տիկին տը Սեվինիե ոչ նվազ համարձակ գրագետ մըն է. տիկին տը Պռենվիլիե անուն կնոջ մը անձնասպանության փորձին առթիվ, իր աղջկան գրած նամակները կրնաք աչքե անցընել։

Ֆլեշիե պերճախոս եկեղեցականը ինքն ալ անբարոյականության ամբաստանութենեն ազատ պիտի չի մնար ձեր աչքին, եթե իր հիշատակարանները կարդացած ըլլայիք. և նույնիսկ Ֆենելոն իր Տելեմաքովը, իր դիցուհիներու, հավերժահարսերու նկարագրությամբ հեշտություն չի՞ բուրեր քիչ մը։

Լաֆոնթենին խոսքը չեմ ըներ. բայց Մոնթեսքիյո անվանի օրենսգետն ու փիլիսոփան, իր Պարսկական նամականիով անտարակույս անբարոյական գրագետի մը վճիռը պիտի ստանար ձեզմե։

* * *

Կուգե՞ք որ քիչ մըն ալ վերջին դարու հեղինակներուն վրա խոսինք. կընդունի՞ք Վոլթեռը, ո՛չ. Տիտռո՞ն ալ չեք ուզեր. Ժան Ժաք Ռուսոյեն պզտիկ ընթերցո՞ւմ մը, Նուվել Էլոյիզեն, Խոստովանություններեն։ Կփափագի՞ք ակնարկ մը նետել գոնե Թեոֆիլ Կոթիեի՝ Օրիորդ տը Մոփենին, Միշլեի Վհուկին, Տյումայի Քամելիազարդ Տիկնոջ վրա։ Ասոնք բոլորն ալ անբարոյական են. ֆրանսական բոլոր գլուխգործոցները մեր մաքուր բարքերուն համար չեն։

Արձակագիրներն են ասոնք. բանաստեղծները տեսնենք շնորհ պիտի գտնե՞ն ձեր աչքին առջև. Ռոնսար, Տոպինյե հիներեն են։

Անմաքուր գրիչներ անշուշտ բոլորն ալ, որոնց արտադրած խենեշանքը ֆրանսական ստամոքսները կմարսեն և դպրոցներուն մեջ կկարդացվին, կուսուցվին։

Բայց քերթողի մը անունը պիտի տամ, զոր պիտի չի կարենաք մերժել, Ալֆրետ տը Մյուսեն։

Ալֆրետ տը Մյուսեն ինքն ալ կապշեր— եթե ողջ ըլլար— Նամունայեն առնված հատվածի մը՝ անբարոյական հորջորջված գրականության դեմ, իր գրականությանը դեմ ինքն փաստ մեջտեղ բերվելուն։

Հա՞րկ է թարգմանել հոս թե ինչպես կսկսի Նամունան։

* * *

Մեր հին մատենագրությունը՝ սրբազան ու պատմական մատենագրություն մըն է միայն. այսուհանդերձ կրնամ գրականության թառթյուֆները ահաբեկելու համար ցույց տալ Սողոմոնի Երգ Երգոցը, որոնք, հուսամ թե, խստապահանջ պարկեշտության ու քարոյականի դեմ չեն մեղանչեր,— մասնավորապես Գլուխ Է.ն իրենց խորհրդածությանցը կհանձնեմ։

Եվ մեր վերջին գրականության գալով Ուիյուճյան Գաղտնիք Հավատարմությանը թարգմանելով չենք կարծեր որ լպիրշ գրականության ծառայած ըլլա. և սակայն հոն՝ նկարագրություններ, տեսարաններ չեն պակսիր կիրքերու սաստկությունն ու զայրույթը պատմող։

Իսկ Գուրյան, այն պարկեշտ ու մաքուր հոգին, այդ անբասիր ու շուշանաթույր կյանքը, ա՞յն ալ խենեշանք մը նետած է մեզի իր վերջին թատերգությամբը, Թատրոնը, որուն նյութին հանդգնությունը՝ խավարամիտ աչքերու կամավոր միամտությունը կրնա շլացնել։

* * *

Թողունք ուրեմն այդ անբարոյական գրականության հորջորջումին տակ հարվածված մատենագրությունը, որուն գլխավոր պակասությունը այն է թերևս, որ ստամոքսի, ուտելիքի, պարենավորման պայմաններուն, գիներուն վրա չի ճառեր և կհակառակի ասով գուցե մեր գրական գաղափարներուն։

Գրականությունը այն ատեն միայն անբարոյական է, երբ իր առաջադրած նպատակն ըլլա ընթերցողները ցանկությամբ ու տարփանքով վարակել։

Կլսենք որ Եվրոպայի մեջ կան գրավաճառներ, առևտրական ձեռներեց ոգիեն մղյալ, որ հատուկ գիրքեր գրել կուտան, կտպեն ու կցրվեն գաղտագողի, անանական նկարագրություններով և միայն նկարագրություններով լեցուն, որոնք անուն չունին, հեղինակ չունին, հրապարակային գոյություն չունին, այլ կսողոսկին ձեռքե ձեռք, և կանգ կառնեն սովորաբար հանուն բարոյականի պոռացող մարդոց դարակներուն մեջ. ատոնք են ահա լպիրշ գրությունները։

Իսկ ֆրանսական արգի մատենագրությունը հոյակապ և աննման արվեստի մը մարմնացումն է։

Պալզաք, Ֆլոպեռ, Կոնքուռ, Պոտլեռ, Տոտե, Պուռժե անբարոյական գրագետներ չեն, այլ մեծանուն մատենագիրներ, որոնցմով Ֆրանսա հավետ կպարծի։

Զուգահեռական ուսումնասիրություն մը պիտի չընեմ նկարչության և արձանագործության համար, որոնք մարդկային մարմինը այնքան հոլանի ցույց կուտան։

Գիտեմ որ բարոյականի հավատաքննիչները չեն հանդուրժեր ատոր և անշուշտ կփափագին փակված տեսնել Լուվրի Մյուզեն և Նեշընալ Կալլերին։

* * *

Ո՛չ. մեր ընտանեկան բարքերը, մեր գրականությունը հեռու են ապականությամբ վարակվելե։ Այդ ձրի զրպարտությունը բանով մը չարդարանար. և եթե հարկ անհրաժեշտ է հանուն բարոյականի պայքար

մը մղել մեր մեջ, նյութեր չեն պակսիր, ափսո՜ս, որ իրոք արդարացնեն անբարոյականության ամբաստանությունը։

Պարոնյան՝ միակ բարոյագետը, որով պոլսահայերը կրնան պարծիլ, երբեք մեր հեք գրականության դեմ ըսելիք մը չի գտավ, բացի անոր շողոքորթ ու շատ անգամ կեղծավոր ձգտումեն։

Մասիս, 14—2—1892

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՅՇ

Ան հաղթանակներեն վերջը որով պսակված է իր վերջին ուղևորությունը ի Կովկաս, տիկին Սիրանույշ առաջին անգամն է որ, մեր մեջ, պիտի երևնա նորեն հայ թատերաբեմին վրա։

Մեծ է հետաքրքրությունը. Մարկրիթ Կոթիեի դերը՝ այն շինված պատրաստ շրջազգեստներուն չնմանիր զոր ամեն ոք կրնա հագնիլ, այլ շղարշի կտոր մըն է նուրբ, հողմածուփ բան մը, որուն մեջ փաթթվողին կիյնա իր ճաշակը, իր շնորհը ցույց տալ և այդ անհարդար թյուլի պատառով արդուզարդ մը շինել, որուն բարեձևությունը՝ թափանցկությանը մտածելու ատեն չձգե։

Երբ տիկին Սիրանույշ այսքան դժվարին ու այսքան հրապուրիչ դերով մը ի հանդես կուգա, արդեն ապացույցը տված կըլլա թե, ամեն մեծ դերասանուհիներու պես, կըմբռնե թե թատրոնին կոչումը կյանքի ու սրտի զարտուղությունները բացատրելո՛ւ մեջ է և ոչ թե անօրինակ, անլուր, անհավատալի ոճիրներով, արկածներով, հանդիպումներով՝ հասարակությունը զբոսցնելու մեջ։

***

Աշխարհագիրներ կան որոնք ցամաքով կզբաղին միշտ և ուրիշներ որոնք ծովերը կչափեն միայն, խորությունները կպրպտեն, անդունդներու մեջ կսուզվին և հոն՝ նոր մակերևույթներ կգտնեն։ Տյումա՝ այդ ծովաչափներուն պետն է, եթե իրավ է որ ամենեն խոր ծովը աշխարհիս մեջ՝ կանացի սիրտն է ամեն ատեն։

Ռամիկը անհատակ կկարծե զայն, անվերջ անդաղար վայրէջք, որ ծայր ու հանգ չունի, և կզարմանա որ ուրիշներ ահա անոր հատակը կճշտեն, թուղթի վրա կգծեն գրեթե, ճիշտ աշխարհացույց քարտեսի պես, ու ցույց կուտան հոն անակնկալ վերելքներ ալ որք մեզի անտես ու անծանոթ սարեր կկազմեն մութին մեջ։

Քամելիազարդ տիկինը այդ անակնկալ բարձրացումներուն մեկն է։

Մարկրիթ Կոթիե այն կիներեն է, որոնք կյանքեն հաճույքը կճանչնան միայն ու անով կավանդեն հոգինին, Օֆելիային պես որ ծաղիկներ քաղելով մեռնելու գաղտնիքը գտած էր։ Մարկրիթ՝ այն շատ երջանիկ կամ շատ դժբախտ արարածներեն է, որոնց համար կյանքը միակտուր ու միակողմանի է, բովանդակ զվարճություն՝ առանց զուգակշիռ մը ունենալու ոչէ պարտականության գաղափարի մեջ։

Եվ օրին մեկը իր սիրած մեկ երիտասարդին հայրը կու գա աղերսել իրեն, ալևոր ու պարկեշտ մարդ մը՝ անձնամատույց կնոջ մը ոտքը, իր զավակը վերստանալու համար աղաչելով։

— Ձգե՛ իմ տղաս։

Այդ երիտասարդը իր մեկ հատիկ սիրածն է հազարներու մեջ, որոց վրա կծիծաղեր. և հիմա անուշ խոսք մը, հոր մը աղերսը կբավե համոզելու համար զինքը,— ախտավարակ ու զվարճասեր ցոփուհին,— հրաժարելու իր ներեն, հեծկլտալով սրտին խորքեն, բայց առանց տկարանալու իր զոհողության մեջ։

Երբ ամեն՝ ոք իր շահը ու օգուտը կպահպանե ի հարկին ուրիշները ոտնակոխ ընելով, ո՜րքան անակնկալ անձնազոհություն մըն է Մարկրիթ Կոթիեի հրաժարումը երջանկության երազներեն և ո՜րքան անկեղծ կըլլա կարեկցությունիս իր կսկծալի վախճանին վրա։

***

Տիկին Սիրանույշ ամեն հատկություն ունի արժանավոր թարգմանը ըլլալու Տյումայի այս գեղեցիկ գործին։

Իր արվեստին չափ զգացում ունի, ինչ որ անհրաժեշտ է Մարկրիթի դերին համար։ Քաջ կխոսի հայերենը, բան մը որ քիչ-քիչ պակսելու վրա է մեր դերասաններեն շատերուն. իսկ ինչ որ ավելին է, խոսիլ գիտե Տիկին Սիրանույշ սիրո լեզուն։

«Խոսինք, բավ. ո՜հ, խոսիլ
Հատնել է լոկ ինձ համար»։

Ինչպես կըսե բանաստեղծը։

Հետո ավանդական ուղևորությունը ըրած է ի Կովկաս ուր մեր դերասաններն իրենց նվիրագործումը կստանան, կքաջալերվին, բայց կվարժվին խստապահանջ հասարակության մը դատաստանին։

Հայրենիք, 19—12—1892

ՔԱՏԸ ԳՅՈՒՂԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Երևակայական Հիվանդը. ՄՈԼԻԵՌ.— Քամելիազարդ Տիկին, երրորդ արարված, ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏՅՈՒՄԱ։

Շաբաթ գիշեր Քատը գյուղի թատրոնին մեջ Ֆասուլյաճյանի խումբը հաջողությամբ տվավ խոստացած առաջին հայերեն ներկայացումը՝ լեցուն սրահի մը ու լեցուն օթյակներու առջև։

Պետք է ըսել որ բացի վաղեմի դերասանապետեն ու հռչակավոր դերասանուհիեն և, որչափ կհիշեմ, պ. Շահինյանե զատ որ Ֆոռմոն Թիոլերի մեջ անգամ մը ներկայացած էր, մեր հասարակությունը ոչ ոք կճանչնար նորակազմ խումբեն, մեծ մասամբ սկսնակներով ձևացած, և անշուշտ ներկայացման հայերեն ըլլալուն հրապույրն էր, որ հասարակությունը այսքան հոծ թիվով թատրոն բերած էր։

Ֆասուլյաճյանի առաջին գովելի հանգամանքը այն եղավ որ որոշյալ ժամուն սկսավ ներկայացումը. բան մը զոր շատոնց մոռցած էինք հորմեհետե Մնակյան վարժեցուցած էր մեզի, ներկայացումը սկսելու համար, բազմության մը հավաքվելուն սպասել, այն նավավարներուն պես, որոնք պետք եղած թիվով ուղևոր չառած ճամփա չեն ելլեր։

Օթյակներուն մեջ Քատը գյուղի բոլոր ծանոթ ընտանիքները կտեսնեմ. ո՞վ ըսավ որ չեն սիրեր Թատրոնը եթե սիրվելու արժանիքով ներկայանա. ամենքը գոհ են այս ներկայացումը տրվելուն համար ու տրամադիր Ֆասուլյաճյանի խումբը քաջալերելու, մանավանդ եթե հարկ եղած նոր տարրերը ավելցնե վրան։

Մամուլը իր ներկայացուցիչները ունի հոն, ուշադիր, խստապահանջ, ինչ որ իրենց իրավունքեն ավելի պարտականությունն է։

Զանգակը կհնչե ներսեն. երաժշտությունը կդադրի, ահա առաջին արարվածը։

Ամբողջ հայտնություն մըն է մեզի համար Երևակայական Հիվանդին *ներկայացումը։ Ջսպասածնիս կգտնենք հոն. միգուցե սպասածնիս պակաս չգտնենք։ Ֆասուլյաճյան՝ կատարյալ Առկան մըն է, երբեմն չափազանցության տարված ձևերով. այս չափազանցությունը պետք գտնենք իր խմբին բոլոր մյուս ընկերներուն վրա ալ. բայց Մոլիեռի այս գործը կատակերգութենե (քոմեդի) մը ավելի զավեշտ (ֆարս) մըն է։ Հեղինակին նպատակը՝ ծաղրելին մատնանիշ ընել է և ասոր համար ինքն իսկ ծայրահեղության տարած է իր ի տես հանած անձերուն նկարագիրները։*

Դերասանները գիտակցաբար կամ անգիտակցաբար անոր գաղափարին ճշմարիտ թարգմանը կներկայանան մեր աչքին։

Ֆասուլյաճյանի արտասանությունը մաքուր է միշտ և այն պզտիկ վարանումը՝ խոսած պահուն, որ հիշողության պակասութենե մը հառաջ գալ կթվի, դերասանին ճարտարությամբը անզգալի կդառնա։ Շեշտը բնական է և դեմքին արտահայտությամբը անհավասարելի է այս դերասանապետը։

Առաջին տեսարանի դիմառնությունը, երկրորդ արարվածին երկու Տիրֆոռյուսներուն մեջ իր կեցվածքը, տոքթոր Թյուրկոնի առջև շանթահարումը, հետո մեռելի ձևացումը, ամեն կերպով կատարյալ էին։

Թակ պարտավոր ենք ճանչնալ թե Տյուվալի հոր դերին մեջ պ. Ֆասուլյաճյան տկարացավ. առաջին ու գլխավոր պակասությունը իր դերը լավ չգիտնալն էր. հուշարարի օգնության ապավինողները երբեք հաջողություն ակնկալելու չեն բեմի վրա. վարանում մը, թոթովում մը, սխալ արտասանություն մը, մեկ բառով խոսվածքի ամենեն փոքրիկ թերացումը դերասանին բոլոր արվեստը կջնջե ու կսպանե։

Տյուվալի հոր արտասանած բառերը դանդաղ, մին մյուսին սպասելով շարունակ, հուշարարին հատուկտոր փոխանցումին պես, այս բոլորը իրեն պես մեծ դերասանի մը սազածը չէր, և դերասանը վայրկյանը վայրկենեն քաղելով իր բառերը, անկարող եղավ կյանք կամ ոգևորություն դնելու անոնց մեջ։

Երևակայական Հիվանդին *մեջ ամենամեծ հաջողությունը ունեցավ օրիորդ Քնար Թուանեթի դերով. այս էր հայտնությունը որ զմեզ գրավեց ու հիացուց գրեթե։*

Երբեք երես առած աղախինի դերը այսքան բնական, այսքան անքննադատելի ճարտարությամբ երևան հանված չէր. իր ձևերը, իր տերը չտեսող սպասավորի մը հանգամանքը, տակե ավելի առաջ չէին կրնար տարվիլ։

Մոլիեռի կատակերգության մեջ առաջին մրցանակը իրեն տվավ հառարակությունը և չսխալեցավ։ Օրիորդ Քնարի արվեստը գոված ատենիս կհիշեցնենք որ իր հաղթանակին մեկ մեծ մասը՝ պարտավոր է իր դերը լավ ուսումնասիրած ըլլալուն։ Թուանեթ՝ երբեք տարվածներուն մեջ երբեք կարոտ չեղավ հուշարարին։

Օրիորդ Քնար իր այս դերին մեջ ճշմարիտ դերասանուհի մը արժանիքին ապացույցը տվավ. իր գործը զգացման գործ չէր, այլ մտքի ներքության, և նուրբիկ եվրոպական թատերաբեմի մը պատիվ կրնար բերել իր շաբաթ գիշերի դերին մեջ։

Անկե վերջը երկու Տիրֆոռյուսները պ. պ. Ջոպանյան և Արշակ

նույնպես արժանի կգտնենք ամեն գովեստի. դիմաշարժության մեջ ամեն կերպով հաջողություն ցույց տվին. հայրը գլխի շարժումներով ընկերանալով տղան ճառերուն, օգնության հասնելով անոր, իր հոգածությունը ճշմարիտ կերպով պատկերացուց. իսկ որդին իր ծաղրելի ու ապուշ գիտնականի ձևերուն, հետո բռնկած բայց վեհերոտ սիրահարի շփոթությանը մեջ կատարյալ եղավ ու հասարակությունը երկուքին ալ հայտնեց իր գոհունակությունը բուռն ծափահարություններով։

Հաջող էր նաև պ. Վ. Քուրեճյան իր սպառնալից գուշակություններուն մեջ, թեև իր քալվածքը ու շարժումը ավելի հին ատենի վրեժխնդիր արարածի մը վայելուչ են։

Քլեանդի դերին մեջ պ. Գալֆայան անուշ ձայնե մը զատ բան մը չհասկցուց. բեմի համար պետք եղած քաջությունը չուներ. իր սիրահարի ձևերը ավելի զարմացած մարդու մը կերպարանքին կնմանեին քան թե ձեռներեց ու սատանորդի երիտասարդի մը որպես պետք է ըլլա Քլեանդ։ Իսկ օրիորդ Քլեր (Անժելիք),— չենք գիտեր թե հայ անուններու պակասությենե՞ն արդյոք այս օտար անունին դիմած է դերասանուհին,— իր գեղեցիկ երևույթեն զատ ոչինչ ունի հիշատակության արժանի. բեմին վրա միշտ շփոթած աղջիկ մըն է, որ մինչև երրորդ արարվածին վերջը ինքզինքը չկրնար գտնել։

Պ. Վարդազարյան պարզապես քնացուցիչ դեղի մը ազդեցությունը բրավ իր կցկտուր երկարաբանություններովը։ Այն ալ իր դերը չգիտցողներեն մեկն էր։

Տիկին Պերճուհի (Պելին) գոհացուցիչ է և ավելի գոհացուցիչ պիտի ըլլար եթե այս ալ իր դերը լավ չգիտնալու ախտեն չտառապեր, վասնզի իր շարժումները պատշաճ են ու բավական իր երկրորդական դերին։

Իսկ նոտարը պ. Շալճյան լավ կընե եթե ուրիշ անգամ ավելի պատրաստությամբ երևան գա, վասնզի պարզապես ողորմելի էր իր անհատնում կմկմանքին մեջ։

Ու այս ամենը գոհության նոթով մը փակելու համար հիշենք փոքրիկ Ազնիվը Լուիի դերին մեջ որ առանց կեղծիքի փոքրիկ տղու ճշմարիտ տպավորությունը հառաջ բերավ։

Մեկ բառով պ. Ֆասուլյանճյանի խումբը հաջողեցավ Մոլիերի զավեշտին մեջ. այս նոր պատրաստված դերասանուհիներն ու դերասանները ցույց տվին, որ լավ մարզիչի ձեռքով աշխատած են ու բնական պետք եղած տրամադրությունը ունին. իրենց կմնա աշխատիլ ու հառաջանալ. հիներեն շատերը կճանչնանք որ իրենց չափ արժեք չունին. բայց պետք չէ մոռնալ, խղճի մտոք աշխատության գործ է դերասանությունն, եթե կուզեն փայլիլ հոն և ձեռք բերել նախանձելի անուն մը։

***

Քամելիազարդ Տիկնոջ երրորդ արարվածով հանդիսականներուն թուլացած ուշադրությունը վերստին կամփոփվի կհոծանա. ամեն ոք գիտե որ այս երեկույթին մեծագույն ձգողությունը Տիկին Սիրանույշի վերերևումն է ու անոր կսպասե անհամբեր. տասնհինգ երկար տարիներե ի վեր առաջին անգամն է որ հայերեն լեզվով թատերգության մեջ կերևա ահա։

Տիկին Սիրանույշի մուտքը ահագին ծափահարությամբ մը կողջունվի. իր քալվածքն իսկ տարբերություն մը ունի ուրիշ քալվածքներեն, թույլ ու շնորհալի բան մը զոր չեմ կրնար ճշտել. իր շարժումները չեն շոայլվիր ու հատուկ շնորհ մը ունին միշտ. իր ձայնը արծաթի հընչյունը ունի, թրթռալով սրտերուն մեջ։ Ամենքը լուռ իրեն կունկնդրեն ահա. ահա մեծ դերասանուհին ինքը, այնպես ինչպես ըսած էին մեզի թիֆլիսցիք. իր արվեստը օրինակած բան մը չունի, ամեն բան իրեն հատուկ է։ Եթե սկիզբները այնքան մեծ չէ իր ազդեցությունը, պատճառը քիչ մը այն է որ իր մարմնոյն մեծակառույց շենքը կհերքե քիչ մը հյուծախտավոր հիվանդի դերը. ու երբ դերասանուհին կրսե թե հազիվ քիչ մը ատեն ունի ապրելու աշխարհիս վրա, ոչ ոք կհավատա իրեն, այնքան առողջ կգտնե զինքը։

Բայց հետո արվեստը իր ներգործությունը կընե, ամենքն անձնատուր կըլլան։ «Թե որ բաժնվիմ անկե, ես իսկապես կմեռնիմ»։ Այս կտորին մեջ այնքան սիրտ ու արցունք կդնե դերասանուհին որ ամենքը միևնույն դողով կհամակվին. ո՛չ, ալ ուշադրություն չենք դարձներ ռուսահայ ասացվածքներուն որ կսպրդին հոս ու հոն, «կլինին», «ասում են» և այլն։ Նամակը գրելու տեսարանին մեջ իր սրտի դժկամությունը, ներքին պայքարը լավ բացատրեց անշուշտ, բայց կկարծենք որ այս կտորը պետք է ավելի համր ու ծանր ըլլար. նամակագրությունը ավելի վարանում, ամեն մեկ բառը ավելի շատ խորհրդածություն կպահանջեր. այդ պահուն իր ձեռքի հուսահատ գալարումները իսկապես ծովասույզ անձի մը ջանքին կնմանեին։ Ու հասարակությունը շունչը զսպած, չընդմիջելու, չխռովելու համար պատկերը, կդիտեր. և այս ակնկառույց ու անձկալից սպասումը՝ իրոք, ավելի էր իբրև գովեստի արտահայտություն, քան այն ծափահարությունները որով անընդհատ ողջունեցինք զինքը վերջեն։

Արմանի դերը առաջին տեսարանին մեջ պ. Շահինյան լավ տպավորությամբ չսկսավ, բայց վերջեն հաջողություն գտավ Մարկրիթի հետ

վերջին տեսակցության մեջ և հորը գիրկը նետվելու ձևը բոլորովին գրավիչ ու ճշմարիտ եղավ։

Պ. Շահինյան պետք է նվազ աճապարող ըլլա իր դերերուն մեջ։ երբ սենեկին մեջ Մարկրիթը կկանչե հետո սպասուհին, իր «ոչ ոք, ոչ ոք»-ները շատ շուտ կհասնին. պետք է սպասել, հոլտը կտրել և հետո ըսել «ոչ ոք»։

Գեղեցիկ փունջ մը ընծայվեցավ Տիկին Սիրանույշի հայ մամլո ներկայացուցիչներու կողմե, ուրիշ գեղեցիկ փունջ մը Քատը գյուղի երիտասարդներեն առ օր. Քնար և դափնյա պսակ մը առ պ. Ֆասուլյանցյան կավ երեկույթ մը, եթե խոմբը գիտնա օգտվելու եղանակը՝ գոռծը շարունակելով։

Հայրենիք. 21—12—1892

ԹԱՏՐՈՆ

Ո՞վ ըսավ որ զբոսատեղի մըն է Թատրոնը։ Ո՞վ ըսավ որ պարի կամ թղթախաղի տեղը բռնելու պետք է ծառայե ատեն-ատեն, պարզապես զանազանություն մը հառաջ բերելու համար։

Այնքան հաճախ գրված է թե դպրոց մըն է Թատրոնը որ այս բառնաձևը պիտի չկրկնեմ. իմ աչքիս, տպագրության նշաններու մեջ տեսնըված մատնացույց ձեռքի այն նշանն է, որ ընթերցողին մասնավոր ուշադրությունը կհրավիրե հաջորդ հատվածին վրա։

Կյանքի անկայուն ու հեղհեղուկ երևույթները՝ ուչքի առչև իրենց հարատև ներկայությամբը, հաստատակ ու անկարևոր կռառնան գրքի մը շարունակվող ու քեցուն էջերուն պես, և Թատրոնն է որ կենալու նշանը կու տա, հատուկ ուշադրությամբ դիտելու հարկը կզգացնե աս կամ ան տիպարը, որուն փողոցը հանդիպած ենք շատ հեղ առանց գլուխնիս դարձնելու։

Եվ այդ պատկերին առչև խորհրդածելու պարտավորած՝ հարկ չի՞ ըլլար դառնալ մեր անձին վրա, մեր սրտին վրա իբրև թե անոնք ալ մատնանիշ եղած ըլլային, և Թատերաբեմին վրա ի տես բերված անձին մոտեն կամ հեռուն ունեցած մեր առնչությունը որոշել, երբեմն կատարյալ մեր նմանությունը խոստովանիլ։

***

Այս ըմբռնումով, Թատրոնի բարոյացուցիչ հանգամանքին բարձրությանը ոչ մեկ արվեստ կրնա հավասարիլ։ Գուն իսկ կյանքն է անապրվածը, իրականը և ոչ թե գրված, երգված կամ նկարված կյանքը։ Հոգեբանական կրկներևույթն է. հարազատ երկվորյակներուն վրա իմաստասերը կամ բարոյախոսը իր ամեն փորձերը կրնա կատարել, ամեն միքրոպները սնուցանել, հետևությունները երևան հանել. տեսակ մը Փասթյորյան աշխատանոց, որուն մեջ ուսումնասիրություններն ու զննությունները կըլլան ոչ թե բնախոսական տեսակետով նմանօրինակ արարածի մը, այլ նույնիսկ մարդ էակին վրա։ Եվ հոն, հասարակությունը, փոխանակ դրան ծակեն նայելու ներս, ներկա է անձամբ, իր աչքով կհետևի տեսարանին հառաջ բերած ախտաբանական երևույթներուն, վախճանին ու դարմանի միջոցներուն։

***

Իսկ այն հասարակություններուն համար ուր որ ընթերցանությունը տարածված չէ կամ գրեթե կպակսի, Թատրոնը անհրաժեշտ պետք մըն է հոն։ Հիմա, մարդկությունը՝ ամենեն շատ, տաղտուկե կտառապի. հազիվ աչք մը նետած գրքի մը առաջին էջին վրա և ահա վերջաբանը հասկնալ կուզե. իր աճապարող հոգին ծանր կուգա էջերը դարձնել մի առ մի։ Այսպիսիներուն համար Թատրոնն է որ պիտի գա իր կյանքի համառոտ կրճատումովը ամենեն նեղտիրտանները գոհացնել, մեկ երկու ժամվան մեջ ամբողջ տարիներու հոլովումը, անցքերը, պատահածները խիտ ու հոծ ձևով մը ներկայացնել, և էապես շահեկան մասերը երևան հանել։

Եվ զարմանք որ մեր մեջ՝ ուր ընթերցանության սերը չկայի պես է, ուր գիրք չի հրատարակվիր գրեթե, ուր լրագիրներն անգամ հազիվ ուշացրիվ ակնարկի մը կարժանանան, զարմանք, որ Թատրերգություններ չեն գրվիր մեր մեջ, չեն խաղցվիր։

***

Բայց Թատրոնի բարձրությենեն իսկ կհետևի թե կատարյալ բան մը ըլլալու է ան կամ բնավ ըլլալու չէ, Թիեռին մեկ խոսքը փոխառնելով հոս ըստ պատշաճի։

Դերասանական արվեստը միջակություն չընդունիր. ասոր համար է որ այդ պայմանով ձեռացած տեսարանը պետք է ուրիշ, բոլորովին ուրիշ անուն մը ստանա, բայց թատրոն չհորջորջվի երբեք։

Մեր մեջ արվեստագետներ չեն պակսիր ու անկարելի չէ, բնավ անկարելի չէ խումբ մը կազմակերպել որ Թատրոնը վերակենդանացնե։ Պետք է ի բաց թողուլ արվեստագետի պզտիկ նախանձները, չքաշելու, իրարմե նսեմանալու զգացումները։

Ու գործնական վերջաբան մը տալու համար այս ամեն խորհրդածությանց, կհավատանք որ պզտիկ ջանք մը կբավե վերականգնելու թատրոնը մեր մեջ։

Մեր հասարակության գործերուն գլուխը գտնվողներուն կոչում կընենք հայ թատրոնը կազմակերպելու համար բաժին մը հանել իրենց աշխատութենեն։

Դպրո՞ցը,— այո՛. բայց Թատրոնն ալ։

Մասիս, 31—12—1892

ԷՄԻԼ ԶՈԼԱ

(Մեր պատկերը)

Մշտնջենական պարտյալ մը ֆրանսական Ակադեմիայեն ու մշտընջենական հաղթող մը ֆրանսական գրականության մեջ։

Իր անունին ճակատագիրն է, գրական մեծ անուններու պես, տարուբերիլ ամենաջերմ դրվատիքե մինչև ամենախիստ դատափետություն. ալեկոծիկ լաստի մը պես բարձրագույն գագաթները ելլել ու ամենախոր վիհեր իջնալ։

Իր բարեկամները ու հակառակորդները հավասար կատաղությամբ կպաշտպանեն ու կդատապարտեն իր գործը, բայց ոչ ոք, ոչ ոք կմխտե իր գրական մեծ տաղանդը։

Տլ.տոյեն, Մթանտալեն, Պալզաքեն, Ֆլոպերեն ետքը Զոլան այսօր անվիճելի գլուխն է այն դպրոցին որ գրականության մեջ կեղծիքը, ստությունը, խաբեությունը վերցնելու Հարկը կդավանի։

Գրականությունն, որ Գիտության մասն է՝ չի կրնար անոր հակառակորդը ըլլա՛լ. այս է իր Համոզումը. հիմա միևնույն գաղափար չէ՞ որ Գեղարվեստին համար ալ կհայտնվի ամենուրեք. Վակների հաջողության գաղտնիքն ալ Զայնաբանության մեջ մեծ վարպետ մը ըլլալուն մեջը չէ՞ միթե։

Ճշմարտությունը ուրեմն ամեն բանե առաջ, մանավանդ թե ամեն բանե վեր. ահա գրականության արդի բանաձևը որ Զոլայինն է։

* * *

Ըսին որ կյանքի այն հոյակապ ուսումնասիրությունը, որ «Ռուկոն-Մագառներ»-ու շարքովը կմարմնանա, իր նկարագրի ճշտապահությամբը վնասակար ու վտանգավոր բան մը ուներ հանրային բարոյականության համար։

Ամեն անոնք որ մոլության դեմ մաքառած են, վար առնելով անոր կեղծիքի դիմակը, ամենքն ալ այս ամբաստանության ենթարկված են։ Հա՞րկ էր ուրեմն մոռնալ որ մոլությունը գոյություն ունի կամ ցույց տալ զայն Ֆյոյյեին պես այն նուրբ շպարներով գեղեցկացած որ հրապուրիչ ընծայեն զինքը անփորձ աչքերու։

Այսպես չէ խորհած ֆրանսացի մեծ վիպագիրը և պարկեշտասուն Անգլիան վերջերս իր մեկ մեծ գրագետին բերնով, որ Վերնոն Լի կստորագրե, ճանչցած է, որ Զոլայի ձեռնարկած գրական վաստակը էապես բարոյացուցիչ հանգամանք մը ունի։

Իր վեպերուն մեջ Դժբախտությունը ու Անկումը ուսումնասիրած է այս մեծ գրագետը ուրիշներու թողլով Բախտը ու Հաջողությունը պանծացնելու դյուրին գործը։

Խավարին ու տիղմին մեջ ռահվիրա մը եղած է իր ներողամիտ իմաստասիրության լույսը ցրվելով հոն ալ։ Զզվանքի ու սոսկումի աշխարհին այս մեծ խուզարկուն՝ շահեկան, ապշեցուցիչ ու զմայլելի բաներ գտած է այնտեղ. ու տիրող ընդհանուր փտտումին վրա առանց հուսահատելու, նոր հավատք մը, նոր ուժ մը քաղած է անկից վերակենդանության, մաքուր ու անբիծ կյանքի մը ծագումը այդ աղջամուղջեն։

Այս է ահա իր եզրակացությունը որ սրտապնդություն կուտա ընթերցողին, իր վիրաբույժի գործողությունը որ շարավի ու թարախի գարշանքը ունի, կենդանության, գրեթե վերակենդանության գործ մըն է։

* * *

Ռուկոն-Մագառներու շարքին մեջ ամենքը համաձայն են «Ժերմինալ»-ը իր գլուխգործոցը համարելու մասին։ Կարո՞ղ եմ արդյոք ես, հայ հրապարակագիր մը, իր նվազ համբավավոր մեկ հատորը նախադասելու։ Եվ սակայն առանց քաշվելու պիտի ըսեմ որ ամենեն գերա-

զանցը կհամարիմ իր Գործը «L'oeuvre», որ կարծես իր անձին վրա գրված, իր ճակատագրին վրա մտածված երկ մըն է։

Քլոտի ու Ֆաժբոռլի անունները ընկերական պայմանագրությանց հետևանոք ստեղծված երկու ոսոխ գլուխներու անունները պիտի մնան։

* * *

Իր հոչակավոր վեպերու շարքին մեջ «Ժեռմինալ»-են հետո, որ հանքերու մեջ աշխատողներու զոհողության ու տանջանքի կյանքը կներկայացնե, կուգա «Ասոմուար»-ը, որ գործավորաց կենցաղը կնկարագրե. արբեցությամբ շաղախված, փճացած գոյություն. «Երկիրը», որ հողագործներու նյութապաշտ ու անասնացած ոգին կմերկացնե, «Բո Պուլը», որուն մեջ քաղքենիներու արտաքին շենքին ու շնորհքին տակ պահվըտող՝ բարոյական նեխումը մատնանիշ կըլլա, «Դրամը», որ շահադետներու բարքը կպատկերացնե իր խարդախութենե ձևացած ճարպիկության ու ձեռներեցության մեջ. «Նանան», որ անձնամատույց կնոջ մը՝ ամեն դասակարգի անհատներու վրա ի գործ դրած տարփական նախճիրներու պատմությունն է և որ մածնող շաղախին պես միևնույն շենքին բոլոր քարերը ու մասունքը իրարու կմիացնե միևնույն ապականության խմորովը. և ամենեն ետքը «Քայքայումը»՝ Ֆրանսայի անակընկալ պարտությունը 1872-ին։

Այս համառոտ թվումն ընել, մեկիկ-մեկիկ ճշտելով իր գործերուն բարձր նշանակությունը ու իմաստասիրական կապը որ բոլորը իրարու կմիացնե, չի՞ բավեր հաստատելու համար թե այս անբաղդատելի վիպագիրը մեծ բարոյագետ մըն է նաև, թե որքան քիչ ճանչցած են Զոլան անոնք որ ապականիչ ու վտանգավոր բան մը կհամարին անոր գրական վաստակը։ Ասոնք են ահա իր «Ռուկոն-Մագառներու» շարքին ամենեն փայլուն գոհարները։

Այս հսկայի աշխատությենեն զատ Էմիլ Զոլա նշանավոր է իր գրական քրիթիկներովը, որոց առաջինը «Իմ Ատելություններս» հոբշորջած է։

* * *

Այս անվանի գրագետին հատկանիշը, որով իր մեծ դեմքը կճշտվի ժամանակակից ֆրանսիացի այնքան նշանավոր գրողներու մեջ, իր ոճին կորովն է, նկարագրությանց ապշեցուցիչ ճշտությունը, պատկերներու ճոխությունը և ընդարձակությունը։

Էմիլ Զոլա անհատ՝ վիպագիրը չէ, այլ մարդկային ահագին կուլտերու, ամբողջ դասակարգերու։

Ինքն է միայն որ գտած է անհամար բազմությունմը մեկանց, մեկ հատորի մը մեջ երևան հանելու, ապրեցնելու ու երկարաձիգ պատմության տևողության միջոցին՝ ամենքն ալ աչքի առջև պահելու դրժվարին խնդրույն լուծումը։

Իր ամեն գործերուն մեջ հարյուրավոր արարածներ են որ կշարժին, կապրին, կխոսին. ընկերության մեկ կարևոր մասն է, որ տեսարանին վրա կուգա և կկենա հոն մինչև որ վարագույրը իջնա։

Իր իմաստասիրությունը կյանքի պայքարներու գիտակից մարդու ներողամտությամբը տոգորված է. այս գրագետը գիտե թե որքան քիչերու վերապահված է ուրիշի դեմ աններող ու խստապահանջ ըլլալու ահարկու իրավունքը։

* * *

Էմիլ Զոլա երկրաչափի մը զավակն է. իր հորը վերահաս մահը, ժառանգական դատերու մեջ՝ հայրենի հարստության վճացումը հարկադրած են զինքը կիսկատար թողուլ իր ուսումը։

Իր երիտասարդության տարիները Փարիզի մեջ՝ սև չքավորության, կես-անոթության տարիներ եղած են։

Հետո սկսած է ապրուստը ճարել Հաշեթի հոչակավոր գրավաճառին քով աշխատելով իբրև պաշտոնյա, որին հրապարակագրության մեջ թևակոխած է «Ֆիգառոի» մեջ ընդունվելով իբրև քննադատ և որուն էջերուն մեջ պարզած է իր բնապաշտ գրագետի համոզումները, որ այնքան ոխ ու ատելություն հարուցած են իր շուրջը և որ մինչև հիմա վառ կմնան իրմե հարվածյալներուն շատերուն սրտին մեջ։

Անկե վերջը իր գործերը ընդունելություն գտնել սկսած են, հաջողությունը իր ոտքը եկած է վերջապես։

Զոլա մեծ համբավ կվայելե մանավորապես Ռուսիոն մեջ ուր «Ռուսական Հանդեսին» աշխատակցությամբը հոչակավոր է։ Ապաքեն իր հուզած բոլոր ընկերական մեծ հարցերը՝ օրվան խնդիրներ էին հոն և ընթերցողը չէր կրնար անտարբեր մնալ այս հրապարակագրին որ այնքան կարեկցությամբ կճշտեր անտարբեր աշխարհի աչքին՝ անոր անծանոթ պահված կյանքին պայմանները։

Մեծ վիպագիրը առանձնասեր ոգի մըն է։ Ընկերութենե ու բազմութենե կխորշի՝ գրքերու մեջ ամբոխի սիրահար այս մարդը. իր բոլոր երազը եղած է առանձին ու անշշուկ գոյություն մը։

Մասիս, 27—2—1902

ՖՐԱՆՍՈՒԱ ՔՈՓՓԷ

(Մեր պատկերը)

Անոնք որ դասավորելու մոլութիւնը ունին, որոնք բաղդատութիւնը կսիրեն և ամեն բան շարել կուզեն առաջնութեան կարգով, Հյուկոյեն ու Լամարթինեն անմիջապես ետքը Քոփփեին տեղ պիտի տան։

Մինչև այն բարձունքը՝ ուր կկենան Ժերսեյի տարագիրը ու Սենֆուանի մենակյացը, մինչև այն կատարները՝

Ուր թխսեն դիմ և արծվիմ

ինչպես կըսե Եղիան, չի խոյանար Համեստներու քերթողը. այլ մեր ինքպես կըսե Եղիան, չի խոյանար Համեստներու քերթողը. այլ մեր մտանը երդիքին վրա թառած թռչունն է. այն, որուն դարձդարձիկ ճախրանքին կարելի է աչքով հետևիլ պատուհանեն և որուն երգին ձայնը՝ մանկութենե ի վեր օրորած է զձեզ։

Ասոր համար է որ եթե Հյուկոյին վրա պիտի սքանչանանք միշտ, Լամարթինին վրա պիտի զմայլինք, Քոփփեն ալ պիտի սիրենք։

* * *

Ֆրանսուա Քոփփե քերթող մըն է ամեն բանե առաջ ու քերթող մնացած է միշտ. ոչ թե անոր համար որ գրական ուրիշ սեռերու մեջ ալ իր եզական կարողությունը ցույց տված չըլլա, այլ անոր համար որ այսպես ուզած է ինքը։

«Գրելու հանապազօրյա ճիգը, որ խմբագրի մը ճակատագիրն է, ատեն չի ձգեր իրեն մտավոր հանգստի ու ամփոփումի որ անհրաժեշտ է բանաստեղծի մը», կգրեր Քոփփե իր վերջին թերթոնին մեջ, որ միանգամայն իր հրաժարականն էր թատերական քրիթիկի պաշտոնեն, զոր այնքան փայլով վարեց Փարիզյան օրաթերթի մը մեջ։

Այդ միջոցին Ֆրանսական Ակադեմիո անդամ ընտրված էր. և անկե ի վեր կշարունակե իր գրական վաստակը, չի նմանելով անոնց որոնց համար այս ընտրությունը ծուլության ու անգործության վկայական մը կրնե։

* * *

Իբրև թատերագիր, Քոփփե ավելի վիպական դպրոցին կմտանեն. այն դպրոցին որ թատերաբեմին վրա մեծագույն ներգործությունը կընե։ Իր Անցորդը, որ ավելի խոսակցություն մըն է քան թե զատ թատերական կտոր մը, քիչ մը Մաթիոն Տրյուրմը կհիշեցնե Հյուկոյին։ Հո՛ս ալ անձնամատույց կին մը կա, ազնվության թռիչքով մը բարձրացող, որ կխղճա իրեն համար ցանկութենե տառապող խեղճ տրուպատուրի մը վրա և անոր անմեղության կխնայե։ Քոեմոնի վին շինողը այլանդակ մարմնի մեջ բանտարկված մեծ հոգիի մը ու մեծ կիրքի մը վերլուծումն է։ Սերվիրո Թոռելլին— գլուխգործոցը— Պեշիկթաշլյանի Բուտոնը միտք կձգե։

Այս ամենուն մեջ ոճի, ձևի, արվեստի կատարելությունը՝ զգացմանց բուռն պայքարով մը մղված՝ վսեմի կհանգի միշտ։

Թատերգությանցը մեջ՝ միշտ մեծ կիրքերու, սաստիկ վրդովումներու հետ սիրած է զբաղիլ, ինչ որ Հյուկոն թե՛ իր վեպերուն և թե իր թատերգությանց մեջ ըրած է։

* * *

Իր քերթվածոցը մեջ բանաստեղծը իրական կյանքը կառնե. պարզ ու գեղջուկ կյանքը, որ իր սովորական ու անմոռուչ գոյությանը մեջ՝ այնքան համեստ դյուցազնություններ, անբարբառ ցավեր, անտես արցունքներ կպարտկե։ Քոփփե այս ամենը կտեսնե և, ինչ որ ավելին է, կզգա։

Անշուշտ, իր փարիզցի ու միջակ դասի ընտանյաց զավակ մը ըլլալը՝ նպաստած է իրեն, մոտեն դիտելու ինչ որ անտեսանելի է վեր ի վերո դիտողի մը աչքին։ Իր նկարագրությունները, պատկերները մանավանդ՝ լուսանկարի ճշտությունը ու ցոլացումը ունին, պզտիկ տրտմությունով մը խառնված լուսանկար, որ ամպամած օդով մը առնված ըլլա։

Այս քերթվածներուն երկար շարքին մեջ առաջին տեղը կգրավեն իր Մտերմությունները, որոնք սիրված անձի մը հետ խոսակցություն մը կկազմեն, գլուխ գլխի անցված ժամերու պատմություն, որուն մեջ քերթողը առիթ կգտնե ամեն առարկաներու վրա իր բառը ըսել, իր գթած ձայնը լսեցնել, իր համեստ իմաստասիրությունը ընել, ամբողջ ներդաշնակություն ու ամբողջ գորով, ճիշտ ինչ որ Բանաստեղծությունը պարտի ըլլալ։

* * *

Հետո, իր պզտիկ ոտանավոր պատմությունները հատուկ սեռ մը կձևացնեն գրեթե. սեռ մը, որ իրեն է և որուն մեջ հավասարող չունի բնավ։ Անցորդը, եթե թատերգություն անունը չառներ, առաջինը պիտի

ելլար այս շարքին մեջ, որոց մեջ կփայլին Դարբինները, զոր կարտասաներ ողբացյալ Ադամյան, Բեկորը, Սրինու�ությունը և ասոնց նման գոհարներ։

Քոփփե իբրև արձակագիր ոչ նվազ հռչակավոր է. իր նորավեպերու հատորները միշտ խանդաղատանքի գանձեր կպարունակեն, պարզ ու անկեղծության շնորհիվ և իր վերջին հատորը Սուղ և Երկար, նորեն հավաքածո մըն է պզտիկ պատմություններու որոց մեջ երևցող իր բանաստեղծի խառնվածքը՝ թարմ ու մանկունակ երգի մը ներգործություն կթողու։

Նախընթաց թվով մը հրատարակեցինք իրմե երկու քերթվածներ զորս Փանոսյան կրցավ հայերենի վերածել, առանց բնագրին հրապույրը կորսնցնելու։

Թարգմանությունները, մանավանդ ոտանավոր քերթվածոց համար, կլիմա փոխած ծաղիկներու կնմանին։ Սովորաբար իրենց փոխադրված նոր հողին մեջ՝ ոչ առջի գույնը և ոչ առջի հոտը կրնան պահել։ Փանոսյան այն հաջող պարտիզպանն է, որ զգալի ընել չի տար այս տեղափոխումը։

Մասիսի ներկա թիվին մեջ Քոփփեեն հրատարակված քերթվածը՝ դարձյալ անոր կպարտինք, թեև այս քերթվածին գաղափարը՝ «Միամիտ Պատմություններ» վերնագրին տակ ընդլայնված գտանք քանի մը շաբաթ առաջ. ռամիկ բանագողության մը կասկածը չունեցանք բնավ, այլ ըսինք միայն, որ թերևս այդ արձակին տերը ու ֆրանսացի բանաստեղծը զիրար գտած են առանց գիտնալու։ Չէ՞ մի որ,

Les grands esprits se rencontrent.

Մասիս, 17—4—1893

«ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ»

Վայելքը իր չափը ունի, որոշ սահմանե մը անդին հեշտությունը՝ տվայտանքի, մահացումի մը պես ցավագին բան մը կըլլա, անսովոր ճիշեր, աղաղակներ արձակել կուտա մարդուս։

Արվեստի գերագույն արտահայտությունները այս կարգեն են։ Այդ վերնագավառներուն մեջ՝ ուզեղային դրության պարտասումի աստիճան գրգռումը, արյան շրջաններու համախուժումը, ջիղերու տարապայման պրկումը կմիանան մղձավանջային, քնաշրջիկի, էսրարի ծուխերով ծանրացած մթնոլորտի մը, իրականեն, ապրվածեն ավելի վեր գոյություն մը— եթե ներելի է ինծի ալ նոր բառ մը կերտել— Գերակյանքը ստեղծելու համար։

Այդ գերակյանքը ապրեցանք մենք ուրբաթ գիշեր երեք ժամ շարունակ Վարիեթեի թատրոնին մեջ Պաքուի Աբելյան-Արմենյան տրամաթիք խումբի կողմե տրված ներկայացումին առթիվ։

Երեք չորս օրե ի վեր Թոքաթլյանի սրահին կիսակործան սյուներուն վրա փակցված համեստ ծանուցումներ այս խումբին գալուստը իմացուցեր էին մեզի։ Պզտիկ խմբակ մը որուն մեջ անսովոր դեմքեր, ձևեր կնշմարվեին, քանիցս նիստ կազմած էր այս սրահին մեջ։

Ովքե՞ր էին ասոնք, պիտի ըսեր ռուսահայ մը։ Պարզապես Պաքուի տրամաթիք խումբն էր ասիկա, որ ուրբաթ գիշեր Շիրվանզատեի ամենեն խորունկ և ամենեն դառն մեկ փիեսի՝ Պատվի համարի ներկայացումով սկսավ։

Ամփոփեմ նյութը։

Պ. Անդրեաս Էլիզբարյան ջոջ վաճառական է։

Ջքավորությենե ճամփա ինկած անձ որ ինքնիրեն դիզած է իր հարստությունը և որ օր մը պիտի պռռա իր զավակներուն երեսին.

— Ես իմ հորից փող ե՞մ ստացել, թուք ու մուքով, զրկանքներով, քաղցած փորով եմ ես մարդ դարձել։

Դրամապաշտ պուրժուազիի թիփն է ան, մարդկության վախճանը միմիայն դրամի մեջ փնտրող։

Իր գործի մարդու տաղանդը առուտուրի կյանքին սովորական խորամանկություններովը ու նենգություններովը ձևացած է։ Սողոսկող ու ամբարտավան, կտրիճ ու վատասիրտ միանգամայն։

Իր պարտամուրհակները փրոթեսթ եղած չեն. պատվավոր մարդ ուրեմն. իր շահատակությունները հայտնված չեն. ուստի հարգելի և ազնիվ անձնավորություն, ազնվաշուք մը, թե որ անպատճառ փափագիք. ի հարկին կարող իր հափշտակություններեն մաս նվիրել ազգային ուսումնարան մը հիմնելու համար. ազգային բարերար մը, թե որ կուզեք։

Արդյոք Շիրվանզատե Պոլի՞ս ապրած է։ Հարստության հիմնական մասը իր առևտրական ընկերոջը մահվընեն օգտվելով կողոպտած բաժինն է և այս պիտի ըլլա բոլոր փիեսին առանցքը։

Այս ազնվաշուքը իր թալանած ընկերոջը որբերուն ողորմություն տալով մեծցուցած է զանոնք։ Ջրսի՞ ձեզի թե բարերար մըն է։

Այս է մարդը։ Ջզվելի հարկավ, բայց ոչ վճռական չարագործը։ Ահավորը անոր կնոջ եղբայրն է. Սաղաթելը՝ իր գործերուն օգնականը

ու չար ոգին անոր. այն կմղե զինքը միշտ դեպի չարը, դեպի ապիրատութիւնը. Իսկոն՝ այս դրամապաշտ Օթելլոյին։

Տեսարանը իսկապես զարհուրելի է երբեր երկու չարագործները (բենց թալանին փայ ու բաժինին մեջ իրարու դեմ կելլեն։

— Խոստումդ կատարե՛. բաժինս տուր թե ոչ գիտեմ ընելիքս։— կգոչե Սաղաթել։

— Հետո կուտամ։

Այս «հետո կուտամը» շեք գիտեր որքան հոգեբանապես ուղիղ է։ «Հետո կուտամը» կնշանակե որ խոսքեն պրծելու պատրաստվող անձը դեռ չի համարձակիր դիմակը վար առնել, կնշանակե ժամանակ վատնիլ, որպեսզի վարժվի իր դերումին ու անոր քաջութիւնը ունենա։

Անդրեաս Էլիզբարյան չորս հասուկ զավկի տեր է։ Բայց անոնք որքա՜ն նկարագրով տարբեր են իրարմե։

Բագրատ Էնժենիյոր է. դրամական ու նյութական փիլիսոփայութիւնամբ սնած երիտասարդ. մին անոնցմե որոնք սրտի խղճահարութիւնները չեն ճանչնար։

Իր աստվածը բանականութիւնն է, ուրիշ բառով օգուտը միայն։ Այս թիփը պուրժուայի զավակն է, պատրաստ ուրիշի վրա նետվելու, բայց թույլ չի տալով որ ուրիշ մը համարձակի իրմե փող կորզել։ Այսպես, տեսնելով, որ Սաղաթել ծախսի հաշիվներու վրա վերադիրներ, խամիններ կընե, Բագրատ կգոչե անոր երեսին.

— Իմ գործերու մասին ձեռներդ մաքուր պահե՛։

Իր քույրը Ռոզինա հարուստի շփացած ու փճացած աղջիկն է. արդուզարդի ունայնութիւնց և իր պատկանած դասակարգին իրավունքները խստութիւամբ պահպանելու հետամուտ։ Չի ներեր, որ ծառան, Վարդանը՝ ես ու դուն որ խոսի հետը։ Ազգային զգացումն ալ բացակա է իր սրտեն։ Օտարացած աղջիկ։

Մյուս եղբայրը, տանը անառակ որդին, Սուրենն է, մսխող, խաղամոլ ու զվարճասեր տղա, որուն սակայն հոգիին մետաղը ազնիվ ու մաքուր է։ Իրենց հարստութիւանը աղտոտ ծագումին վերահաս եղածին պես, իսկույն կպատրաստվի անկե հրաժարելու, մինչդեռ Բագրատ, հույը արժանի զավակ, ամեն նենգության աջակից ըլլալու պատրաստ է այդ հարստութիւնը ձեռքե չի հանելու համար։ Ասոնց աչքին պատիվը դրամն է ու ամեն բան ընելու կարող են այս պատվին համար։

Իսկ հերոսուհին կրտսեր քույրերնին է. Մարգարիտը սրտի ու մտքի տեր աղջիկը, մոայլ խորհուրդներով ծանրաբեռնված այս տան մեջ միակ լուսավոր դեմքը։

Հետո՝ մայրերնին, Երանուհին պարզամիտ ու աստվածավախ կին

որ իր աղվորութիւանը համար, Անդրեասին հետ ամուսնացած էր։

Ահա ընտանիքին բոլոր անդամները. անոնց վրա թե որ ավելցնենք Արտաշես Օթարյանը, Անդրեասին կողոպտած ընկերոջը որդին որ Մարգարիտը կսիրե, փիեսին անձինքը կամբողջացվին։ Գործողությունը կոկսի անով որ Օթարյանը ձեռք կանցընե կարգ մը Անդրեասին ստորագիրը կրող հին վավերագիրներ, որոնք այս վերջինին հարստութիւանը՝ Օթարյանին պատկանիլը կհաստատեն։ Օթարյան կուզե որ իր իրավունքը ճանչցվի ոչ այնքան դրամի համար, քան թե վերցնելու համար իր վրայեն Անդրեասի ողորմութիւամբը ապրած լինելու նախատինքը, որ զինքը Մարգարիտին առջև նվաստացուցիչ դիրքի մը մեջ կպահե։

Կերևակայվի Անդրեասին սարսափը երբ այս վավերագրերուն գոյությունը կիմանա։ Ամեն թուղթ ոչնչացած կկարծեր։ Երիտասարդ Օթարյանի քանի մը հազար մանեթ տալով ձեռքեն ստորագրություն մը կորզելու կշանա ու չի հաջողիր։ Դատի սպառնալիք կա։ Իր հարստությունը, 700.000 բուպլը, երևակայեցեք, կորսվելու վրա է։ Այն ատեն երիտասարդին Մարգարիտին համար ունեցած սերեն օգտվելու գաղափարը կհղանա, բայց Մարգարիտ իրեն գործակից չի կրնար ըլլալ. դայն խաբելե ուրիշ հնար չկա։ Սուտ զայրույթով մը իր աղջկանը դեմ կբարկանա, ըսելով որ Օթարյանը զրպարտիչ մըն է և իր աղջիկը դատավոր կընե այս մասին ըսելով, «դո՜ւն ուզե, առ Օթարյանին փաստերը ու վավերագիրները. պիտի տեսնես որ ոչ իսկ թուղթի կտոր մը ունի»։

Մարգարիտ այս նենգավոր խոսքերեն կխաբվի։ Օթարյանեն կպահանջե այդ թուղթերը տեսնելու։ այս վերջինը առանց վարանելու, թուղթերը իր սիրուհվույն կհանձնե։ Մարգարիտ զանոնք հորը կցուցնե որ անոնց ճշտությունն ճանչնալու կպարտավորի։

Բայց գիշերը Սաղաթելին հետ համախորհուրդ, իր աղջկան սենյակեն թուղթերը կգողնա ու կվառե։ Այսպիսով կպահե իր հարստությունը ու պատիվը։ Իսկ Մարգարիտ այդ թուղթերու փճացումին մասին իր սիրոջին դեմ ինքզինքը արդարացնելու անկարող՝ կյանքին վերջ կուտա։ Անդրեաս երկու ձեռքը գլխուն կզարնե, որդեսպան մըն է ինքը այսուհետև։

* * *

Այս է նյութը դոր հարկավ շատ թերի, շատ անզոր կերպով ուրվագծեցի այստեղ։ Հատոր մը պետք է ամբողջ այս հրաշակերաը վերլուծելու համար։ Այս բոլոր դեմքերեն ամեն մին Շիրվանզատե իր սեր

ու անողոք գրոցով փորագրած է։ Շոփենհաուեր կրսե որ թատերագիրը՝ ճակատագիր ըսել է, որովհետև ինքն է որ իր ստեղծած անձերուն բախտը կորոշե. ճակատագրին պես ալ անողոք ըլլալու պարտավոր է։ Շիրվանզատե Պատվի համարին մեջ ժամանակակից պուրժուազիեն բոլոր թիփերը լիաբուռն սփռած է։ Փիեսին կազմվածը իր պարզությանը մեջ հոյակապ է և հյուսիսի գրականության հորինվածը կհիշեցնե։ Ռուսահայ թատերագիրը շատ բարձր է Օքթավ Միրպոյեն որ սակայն Ֆրանսայի փառքերեն մեկն է, իր տարազն Հանրի Պեքի դաժան, բայց անկեղծ նկարագրությունն է իրական կյանքի դրվագներե վերցված։

Եթե դասական տեսակետե դատվեր, Շիրվանզատեի գործը այն տեղն ալ իր մեծ նշանակությունը պիտի ունենար։

Մարգարիտին շվարումը՝ մեկ կողմե ավանդ դրված այս թուղթերը գողցուցած ըլլալու պատասխանատվությենեն, մյուս կողմե իր հայրը մատնելու պարտավորությանց առջև, զոր իր մահվամբը կբավե, այնպիսի շքեղ տեսարան մըն է, որ հին ողբերգությանց ցնցումը կուտա։

Իր խոսակցությունը dialogueը որ ունէ թատերական փիեսի հաջողության առջի պայմանն է, երբեք այսքան ժողովրդական պարզությամբ և խիզախությամբ չէր փայլած որչափ այս փիեսին մեջ։ Մեկ ծայրեն մյուսը սուրերու բախում մըն է կարծես, լույսեր ու բոցեր արձակելով շարունակ։ Ամեն բառ գնդակի հարվածի պես ուժգին ու սաստիկ է։

Պոլսահայ հասարակությունը այս ռուսահայ բարբառը իմանալու համար դժվարություն չունեցավ, նույնիսկ ամեն մեկ բառին բովանդակ ուժը զգաց ու հասկցավ։

***

Պաքուի տրամաթիք խումբը, որ ներկայացուց Շիրվանզատեի փիեսը, հայտնություն մը եղավ ամենուս համար, ապշեցուցիչ, հիացուցիչ հայտնություն մը։

Այս վերջին մեկ քանի ամիսներու մեջ թե՛ տեղական և թե՛ դուրսեն մեծադղորդ ծանուցումներով գրված խմբակներ, հայերեն լեզվով կարգ մը ներկայացումներ տվին ու պետք է խոստովանիլ որ հայ լեզվով թատերական ներկայացումներ տեսնելու եռանդնիս ցրտացուցին։ Համբակներ ու թերուսներ կամ հինցած ու փճացած ուժեր՝ կյանքի ըմբռնումե ու գրական զարգացումե զուրկ էին։ Եվ ի՞նչ եղավ մեր զարմանքը, երբոր ուրբաթ գիշեր Պաքուի տրամաթիք խումբը Շիրվանզատեի հոյակապ գործը նույնքան հոյակապ արվեստագիտական տաղանդով մը ի հանդես բերավ։

Պ. Աբելյան, Անդրեաս Էլիզբարյանի ճնշիչ դերին մեջ, անստգյուտ կատարելությամբ մը ցույց տվավ, որ լիովին ըմբռնած է Շիրվանզատեի գծած վաճառականի դեմքին բոլոր գիծերը, ամենեն նուրբերեն սկսելով մինչև ամենեն թանձրերը, այդ նկարագրին հոգեկան ազդակները, ընկերական ըմբռնումները, առուտուրի մարդու բարոյականը, խորամանկություններն ու ճարտարությունները։ Այս ամենը այնքա՜ն հարազատ կերպով պատկերացած էր իր դեմքին վրա, այնքա՜ն ճշգրիտ կերպով խտացած իր շարժուձևին մեջ, որ մտքովս ըսի թե մի՛ գուցե պ. Աբելյան առևտուրի աշխարհեն վտարյալ մը ըլլա և ո՛չ անմասն արվեստագետ մը։ Հիշեմ այստեղ երկրորդ արարվածին մեկ տեսարանը ուր իր ընտանիքի բոլոր անդամներուն վրա իր ցասումը կթափե, կվոնտե զանոնք։ Ականջիս մեջն է իր ձայնը.

— Դե՛հ, կորե՛ք, հայտա՛...

Պարզապես հիանալի է այն դիմափոխությունը որով նույն վայրկյանին Օթարյանի թուղթերը ձեռք անցընելու համար կհաշտվի իր աղջկան՝ Մարգարիտի հետ, շոյելով անոր գլուխը.

— Ա՛յ օրհնյալ լինիս, աղջի՛կս, դու բարի սիրտ ունիս։

Ու երբ Մարգարիտ Օթարյանեն առած թուղթերը ցույց կուտա իրեն, իր անմեղությանը վստահ արարածի մը ամբարտավանությամբ, ըսելով անոր.

— Քննի՛ր և տես։

Իսկ հոն ուր ինքզինքը գերազանցեց, չորրորդ արարվածին այն տեսարանն է ուր Օթարյանին փաստերը գողությամբ ձեռք անցունելե հետո՝ անոր դեմ լրբությամբ կկանգնի ու մարդ ճամփա դնելու սովորական բանաձևովը Մաղաթելին դառնալով կրսե.

— Ելիր կլուպ երթանք, փռեֆերանս խաղալու. կլուպ երթանք։

Տիկին Արմենյան Մարգարիտի դերը ուներ։ Միմիայն իր «դուրս գալը» սենային վրա հաջողություն մը եղավ, անոր համար, որ, նախ՝ ամեն շնորհալի կնոջ դեմքը ինքնին հաջողություն մըն է արդեն։ Տիկին Արմենյանինը հաղթանակ մը գարձավ, երբ իր խաղը տեսանք, երբ՛ք այսքան շնորհ, այսքան նուրբ ու այսքան արտահայտիչ դեմքի մը վրա միացած չէր։ Իր ձայնին քաղցրությունը ու արտասանության վճիռությունը, ճշմարիտ հրապուրանք մըն էր. ամենեն խորունկ տպավորությունը թողուց, երբ թուղթերու գողության պահուն քունեն սթա-

փելով, ճերմակներու մեջ փաթթված, վրեժխնդիր ոգիի մը պես հոգի ետևեն խոյացավ, ու ավելի առաջ երթալու անկարող, գետինը փուվեցավ։

Իսկ պարզապես հրաշալի էր չորրորդ արարվածին մեջ, երբ իր հոգը աղաչեց որպեսզի ետ տա գողցված թուղթերը։

«Հայրի՛կ, հայրի՛կ» աղաղակը բոլոր սրտերը դղրդեց։ Ու, թուղթերուն կրակի մեջ նետվելով փճանալու պահուն իր դեմքին զարհուրած արտահայտությունը, իր քարացումը, արձանացումը, կապկված լեզվին տեղ՝ մեծ-մեծ բացված գեղեցիկ աչքերուն նայվածքը, այն mimigue-ի գլուխգործոցներեն է, որոնց իրականացումը մեծ տաղանդներու վերապահված է։

Մյուս բոլոր դերակատարներուն առթիվ ալ իմ զմայլանքս հայտնելու համար դեռ շատ մը էջեր լեցնելու եմ։ Բավականանամ միայն շնորհավորելով պ. Արմենյանը, որ Սուրենի դերով ճշտիվ պատկերացուց «Անառակ Որդվույն», բայց անառակությանը հետ՝ հոգեկան ազնվությունը պահող երիտասարդի նկարագիրը, որ կերպով մը Ռյու Պլասի մեջի Տոն Սեզար տը Պազանը կհիշեցնե։

Պ. Բիրոյան ոչ նվազ հաջողությամբ երևան բերավ Բագրատի դերին մեջ դրական իմաստասիրությամբ ախտավարակ սերունդի մը չոր ու ցամքած սիրտը. տարիքնուն առաջ ծերացած տղաքներ, որոնք բանաստեղծության սփոփանքեն ու վայելքեն իսպառ հրաժարած են. մոայլամած մարդիկ որ շարունակ տրտմության քող մը կնետեն մարդկության երեսին վրա։

Պ. Ազյան՝ Սաղաթելի տարապայման կերպով դժվարին դերին, Ոսկանյան՝ Օթարյանի, տիկին Պուրժալյան՝ mondaine աղջկան, տիկին Զապել՝ ավազակ էրկան մը ձեռք ինկած նկուն և ջերմեռանդ կնկան մը դերերնուն մեջ ճշմարիտ արվեստագետներ հանդիսացան։ Փիեսը այնպիսի մասեթրոյով մը ներկայացավ որ անպատմելի հմայք մը գործեց բոլոր սրահին վրա։ Ադամյանի մահվընեն ի վեր Պոլիս ասանկ արվեստական ներկայացում տեսած չէր. ֆրանսական մեծ tournéeներու ներկայացումներն անգամ այս տպավորությունը չկրցան ձգել, այն պատճառով որ անոնց մեջ մեկ-երկու առաջնակարգ դերասանի շուրջ բոլորված են անհավասար և աններդաշնակ կարողություններ, իսկ հոս բոլորը ներդաշնակապես կցված, հավանականաբար, երկար արվեստակցությամբ մը միևնույն զարգացումը ու ըմբռնումը ստացած են։ Այս խումբը, հակառակ պայմանագրական կանոններու, ռեքլամներ չբրավ թերթերուն մեջ, իր ծանուցումը այս ներկայացումը եղավ և ասկե ավելի շքեղ ու հզորը չէր կրնար ըլլալ։ Առանց վերապահության կրնամ հայտարարել, որ այս տրամաթիք խումբը հայոց գեղարվեստական փառքն է։ Ցավեցա միայն որ ռուսահայերը թատերական ասպարեզին վրա ալ գերազանցությունը խլեցին մեր ձեռքեն, անիրավնե՞ր։ Այս խումբին հաջողության մեկ մեծ բաժինը կվերաբերի տրված փիեսին ինքնին հոյակապ գրվածք մը ըլլալուն, անոր համար վերջին կեցցներու մեջ Շերվանզատեի անունը կցեցի իր դերակատարներուն անունին։ Երկուշաբթի գիշեր խումբը Շիլլերի Ավազակները պիտի ներկայացնե, կերևա թե սեռին ավազակներուն հատկացված է, պուրժուաներու ավազակներեն վերջը՝ Շիլլերիններ։

Ժամանակ, 14—12—1908

ԷՋԵՐ ՈՒՂԵՎՈՐԻ ՄԸ ՕՐԱԳՐԵՆ

ԻՐԻԿՆԱՄՈՒՏՔ ՄԸ ՍԵՎ ԾՈՎԻՆ ՄԵՋ

Ա

Աշունի ցողաթուրմ առավոտ մը կմաղվի գորշ, ծուլորեն հորիզոնին վրա պառկող ամպերու ծվեններեն։ Ցամաքին վրա անթիվ միներեներ վտիտ բաղուկներու պես դեպի երկինք կբարձրանան։ Նավահանգըստին մեջ՝ խաչաձևված կայմերու արձանացում մը։ Ղալաթիա, քարափին վրա քաղաքին վաղազարթույց եռուզեռումը նավաստիներու, բեռնակիրներու, ոստիկաններու իրարանցումեն շինված։

Իմփերաթուր Թրայան իր սպիտակ ներկված հոյակապ լանջքովը, իր ամբարտակաձև հարկերուն վերելքովը, իր կրկին ծխնելույզներուն անհամբեր շնչառությամբը մեզի կսպասե։ Քյոսթենճեի թղթատարն է ան։

Մեկնելու վրա եղող սրիմբրի մը սովորական տեսարան։ Ճամփորդներու և ճամփու դնողներու ամենուն գիտցած հավաքումը։ Հոս՝ հայր մը, մայր մըն է, որ իր զավակը ճամփու կդնե, հոն՝ աղջիկ տղա մը, որ իր ծերունի ծնողքը շոգենավին կհանձնե, ո՞վ գիտե, թերևս մեյ մըն ալ չի տեսնելու վախով համակված. այստեղ բարեկամներ, որ զիրար կթողուն, ամենքս, այս պահուս իրարու խառնված՝ հանկարծ սուլիչին խլացուցիչ ստիպումին վրա, իրարմե կբաժնվինք, հապճեպով տալով առնելով վերջին համբույրները, արտասանելով վերջին բառերը։ Սանդուխները վեր կառնվին, պարանները կբակվին։ Հաղորդակցությունը կկտրվի քովիկնիս կանգնող ցամաքին հետ։

Հետո, դանդաղ տատանում մը որ թղթատարին երկաթե լուծքը կդղրդե։ Քարափեն, որուն հետ կուրծք կուրծքի կեցած էինք, կբաժնվինք ահա, մեղմիվ, գրեթե անզգալորեն։

Անձկությունը սրտերնիս կճնշե. սիրելիներե բաժնվելու անձկությունը, զղջումի պես բան մը, եթե ետ կենայինք սա ուղևորությենեն. բայց ինչպես կպատահի միշտ՝ ուշ է զղջալու համար։ Կինս ցամաքեն իր մեկնող զավակներուն նորեն պատվերներ կուտա, չի մսիք, հիվանդ չըլլաք, ձայնով մը, որուն մեջ հեծկլտանք մը կմարի, հազար տեսակ վախեր իր մայրական սրտին մեջ կլեցվին. թե որ մե՞յ մըն ալ չի տեսնա իր զավակները. բոլոր քարափին վրա սպասող այս բազմությունը՝ յուրաքանչյուր ուղևորին համար միևնույն դողերը կզգա. թաշկինակներ աչքերը կսրբեն, հետո օդին մեջ կծածանին, լուռ ու վերջին մնաս բարովի մը պես։ Ա՞յս է զատվիլը։ Շոգենավը ճամփու կելնա, հետըզհետե կբացվինք ցամաքեն. քարափին վրա կեցողները կպզտիկնան աչքերնուս, դեմքերը չեն զանազանվիր ալ, իրարու կխառնվին, երկու հատվածներու վերածված։ Մնացողները՝ հոսաս մեկնողները հոս. այսպես չէ՞ միթե բոլոր աշխարհը։

Բ

Վոսփորը կճեղքենք կանցնինք տիրական գնացքով մը։ Ենիքյոյ, Պյոյուքտերե, Ենիմահալլե, Քավաքները միառմի կանհետանան ու նեղուցեն դուրս կնետվինք՝ աջերնուս վեր ցցվող, ալիքներե ծեծված պարեխներու շարք մը քերելով։

Բաց ծովն ենք ահա, Սև ծովը և ահա Նարպեյի տողերը միաքս կբյնան հանկարծ.

> *Չէ՛, Սև ծո՛վ, չէ, փրփրադեղդ ալիքներ*
> *Հայը միշտ նկուն, գերի ինկած չեն տեսներ.*

Իր զարհուրանքի համբավին հերքում մը տալու համար գուցե, Սև ծովը անծալք ու անհուն կապուտություն մը կպարզե մեր առջև։ Թեթև պզտիկ ցնցումներով, որ Հելիսին բախումները կմատնե մեր պզտիկ աշխարհը, պզտիկ մարդկությունը, Թուրքե, հայե, հույնե, ռումենե, անգլիացիե, ֆրանսացիե, գերմանացիե ձևացած, կքալե, կքալե շարունակ։

Պտույտ մը նախ շոգենավին զանազան մասերը. վերի կամուրջին վրա, ճիշտ ճակատը մետալ մը, առնական խրոխտ դեմք մը, որուն տակը գրված է.

Marcus Ulpius Trajanus

Հռովմայեցի կայսեր անունն այս շոգենավին տրված է. հիշեցնելու համար, որ Ռումեն ազգը հին Հռովմայեցիներեն կսերե։

«Իմպերատորուս Թրայանյուս» իր անդուլ վազքը կշարունակե, ժամերը կսահին, օրվան գիտակցությունը կկորսվի քիչ-քիչ, այսպես կպատահի ամեն անգամ որ մարդս ցամաքը կթողու. մինակ ենք այս ծովին վրա. մինա՞կ, ո՛չ բոլորովին. պզտիկ թռչուններու խումբ մը Վոռփորեն կընկերանա մեզի. պահ մը մենե առաջ կվազե, պահ մը ետ կմնա. ի՞նչ կփնտրեն այս պզտիկ թափառականները մեր շուրջը։

Ժամը (Ը. Ե.)* վեցն է. իրիկնամուտքը կսկսի ձախեն. բարամբունքին կոթնած՝ կդիտեմ արեգակին, ատրաշեկ բոլորակին տակավ էջքը՝ հեռուն, ամպերուն ետին, ալիքներուն մեջ. համեցող ու միանգամայն արտորացող էջք մը։ Հետո, հորիզոնին բոլոր երկարությամբը և վերը երկինքին վրա, հետզհետե գծվող, գծագրվող, քայքայվող ու ինքզինքին վերակազմվող, գույնզգույն, նարինջի, մանիշակի, հալած ոսկի, ամեն երանգներով ներկված ցամաքներու, լեռներու, կղզիներու, լիճերու փողփողումը։ Հետո, տակավ շիջումը այս բոցավառության, իրրև թե հզոր ձեռք մը հանկարծ ետ քաշած ըլլար այս մեծաշեն ու թափանցիկ ամպերուն կոնակեն զանոնք ապրեցնող հրահրող լույսը։

Ու այդ բոլոր զեխությենեն, եզական սինեմաթոկոպֆին մեր հիացած աչքերուն առջև թափած ճոխություններեն մութ կարմրություն մը միայն կմնա, կարմիր սպիացումի մը պես, որ առջի արյունոտ վերքին տեղը կմատնանշե։

Անկե ետքը կապարի գույն ամպերու դեզ մը միևնույն գույն ծովին վրա հանգչող անասունի մը պես։

Ցամաքին հետ ոևէ կապ չունինք. միայն երամակը պզտիկ թռչուններուն՝ իր դարձդարձիկ շրջաններովը մեր ճամփան կպարուրե. իր ճովողությունը քամիին ձայնին կխառնվի։ Այս փոքրիկները կխաղան, կզվարճանան մեզի հետ. փախչող ու հետապնդող չնչին Հույսերն են անոնք. ինչ որ ալ ընենք չեն զատվիր մենե։ Հավատարիմ ու անհավատարիմ՝ Հույսեր, պզտիկ թռչունները, ի՞նչ կուզեք ինե։

Գ

Մութը հետզհետե կկազմվի, կստվարանա. կլեքարական լույսերը կվառին։ Ճաշը թապլը-տոթի անխախտ խոսակցություններով խառնված։

— Քանի՞ ժամեն կհասնինք Քյոսթենճե։

— Ես իսկույն Պերլին կմեկնիմ։

Սակավախոս անգլիացի մը բերանը բանալու կհաճի։ Ամեն տեսակ փոթորիկներե մազապուր ազատած անվեհեր ճամփորդ մըն է. երկու տարի առաջ Ամսթերտամի առջև, մազ մնաց որ պիտի խեղդվեր. տարի մը առաջ Ամերիկայեն դարձին՝ կորսվող Ռեփյուպլիքին վրա կգտնվեր։ Անտարբերությամբ մը կպատմե այս բոլորը ու պզտիկ սարսուռ մը կվազե ունկնդիրներուն մարմնին վրա։ Ծովով ճամփորդելու սովորությունը չէ թողած, ընդհակառակը։ Վերը սրահին մեջ երաժշտություն կա. շատերուց հրեա մը, դաշնակին առջևն է. ինչպես ես ալ գրասեղանիս առջևը՝ այս տողերը գրելու զբաղած։ Աջեն ճերմակ լույսի ողողում մը սրահեն ներս կմտնե. լուսինն է, որ ծովին վրա արծաթե լայն պողոտա մը կբանա։ Տեղ-տեղ փարոսներու լույսերը կտեսնվին։ Հանկարծ դեմերնիս լույսերու շլացուցիչ շողք մը, ադամանդե տիատեմի մը պես, դուրս կելլե. Քյոսթենճեն է ան։ Կես ժամեն հոն ենք, մեր առաջադրություններուն, խորհուրդներուն, իղձերուն բեռը շալկած։

<1909>

Ա

ՊԵԼՃԻԳԱՆ.— ԿՂԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՂԵՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ.— «ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՆ ՏՈՆԵՑԵՔ».— ՊՐՅՈՒՔՍԵԼ ԵՎ Կ. ՊՈԼԻՍ

Հակասություններու երկիր այս երկիրը. պզտիկ և մեծ. շքեղ և աղտոտ. նուրբ և կոպիտ։ Գիտություն բայց գրականություն միանգամայն. Արվեստ բայց մանավանդ ճարտարարվեստ։ Նորության և Հնության ընդելուզում. երկու անհաշտ ցեղերու, Վալոններու և Ֆլամաններու հզոր գիրկընդխառնումը և եթե բառը ձեզ չահաբեկեր, ազատ սերը ու միացումը՝ սուրբ պսակով օրհնված ամուսնության մը պես կոիվով լեցուն։ Ահա Պելճիգան, եթե դատենք Պրյուքսելեն կամ Պրյուսելեն, ուր կգտնվիմ քանի մը օրե իվեր։

Կրոնական զգացումե բոլորովին զուրկ, գրեթե անհավատ այս երկիրը, անհավատալի բան, ամենեն կղերական երկիրը եղած է հիմա։ Մեր հետադիմականները, անոնք զոնե որոնք եվրոպական կյանքը ուսումնասիրած ըլլալու հավակնությունը ունին, այս երկրին մեծ զարգացումը ցույց կուտան ամենուն, հասկցնելու համար որ կղերական ոգին գիտության և հառաջդիմության ոգիին հետ անհաշտ չէ ամենևին։

Անմիտնե՞ր, եթե գիտնային թե ի՞նչ է Պելճիգայի կղերականու-

* (Ը. Ե.)— Ըստ եվրոպականի — Ե. Կ.։

թյունը, տեսնելին այն չար վհուկը որ ատենե մը իվեր կսավառնի հոս, եթե գիտնային, որ Ֆրանսայեն արտաքսված սևազգեստներու ահավոր բանակն է ան, զարհուրելի վտարանդին է, որ երկիրե երկիր կանցնի միշտ և որ Պետության և Եկեղեցիին բաժանման օրենքեն առաջ՝ իր սովորական հեռատեսությամբը գաղթը սկսած էր դեպի այս կողմը, դեպի այս փոքրիկ պետությունը, որ, ճիշտ այս պատճառով, իսկույն ենթական պիտի ըլլար անոր հզոր ներգործությանը. և այնպես ալ եղավ։

Պելճիգան այսօր ժեզուիթներու երկիրն է, ոչ ավելի ոչ պակաս. թող ցնծան մեր ազգին Ռոտենները, Էոժեն Սյուի նկարագրած տեսարանները ամենքն ալ կան. միայն թափառական Հրեան կպասկի. դեռ քանի մը օր առաջ լրագիրները պատմեցին թե՛ ինչպես հարուստ ազնվական մը հիմարանոցի մը մեջ, ժեզուիթներու ձեռքը գտնվող հիմարանոցի մը մեջ, տարիներով բանտարկված էր։

Ժեզուիթություն մը... ի՞նչպես կուզեք որ սահմանեմ ես ասիկա. Ժեզուիթություն մը որ գիտակ՝ քսաներորդ դարու դրական ոգիին, Կրոնք և Բարոյականը նյութապաշտ ու շահավետ գրականության մը հետ լծորդելու գաղանիքը գտած է. և անո՛ր համար ժողովուրդը աչք կգոցե անոր Քրիստոնեության քարոզած անձնվիրությունները ու անշահասիրությունները քարոզելու եկող առաքյալ մը քսանը չորս ժամ չանցած պիտի վռնտվեր կաթոլիկ Պելճիգայեն։

Հիմա՛ր պիտի ըսեին իրեն ժեզուիթները, կղերը քսաներորդ դարուն մեջ չէ այն ինչ որ էր Քրիստոսի օրով. ի վաղուց անտի Ույժի կուսակից ու ծառայող էր։ Ույժը դրամն է այս դարուն մեջ։ Մենք այս երկրին մեջ նյութական շահերու ծառայեցնելով միայն կրցած ենք կրոնը կանգուն բռնել, ո՛ւշ մնացած քարոզիչ, հեռացի՛ր այս տեղեն։

***

Քաղքին մեջ՝ Տիեզերական Արվեստահանդեսին հարուցած եռուզեռումեն, օտարական այցելուներու սովորական թոհուբոհումեն ավելի ոգևորություն մը կնշմարեմ. փողոցներեն անցնիլ՝ անհնար. ամբողջ Պրյուքսելը պատրաստության մեջ է, արդուզարդի, toilette-ի հնհնուքին մեջ։ Տուներուն երեսները կներմկնան, ապակիները կսրբվին, հրապարակներուն վրա հապճեպով estrade-ներ կշինվին. նվագածուներու համար, ամեն կողմ սյուներ կդրվին, դրոշակներ կբարձրանան զույնզգույն, գիշերվա լուսաշաղության համար անթիվ լամբարներու շարքը կերկննա խայտաբղետ օձի մը վեռվեռող օղակներուն նման։

Պելճիգան իր անկախության տարեդա՞րձը կտոնե արդյոք։

Ո՛չ. կբավե խանութներու ցուցափեղկին մեջ ապակիին ուշադրություն ընել այս հանդեսին պատճառը հասկնալու համար։ Քովիս մսավաճառին ի տես դրած հորթի, ոչխարի միսի հատվածներու քով պզտիկ թուղթե étiquette մը — «սպիտակ մը» կրսեինք ատենով — «Fêtez-Marie», «Մարիամ Աստվածածինը տոնեցեք». իրա՞վ, Աստվածածնա տոն է կաթոլիկներու համար։ Jambon-ի և Saucisson-ի խանութին մեջ միևնույն ծանուցումը՝ «Աստվածածինը տոնեցեք», Հավանայի սիկառին և Muratie-ի սիկարեթներու քովիկը միևնույն պիտակը, և զարմանք... Loewen-Braeu, Munich-ի անունով պարծեցնող գարեջրատուններն ալ իրենց փոքրիկ կոչը ցուցադրած են, Թեզկյահի վրան պահապան հրեշտակի մը պես՝ «Fêtez-Marie»։

Ավընյու Անսբագի խանութներուն մեջ, հաճախորդները կվխտան, օտարականները սկեպտիկ այս կրոնավաճառական ցույցերուն առջև կժպտին կանցնին, բայց տեղացիները իրենց բանը գործը գիտցող մարդիկ են. առուտուրը կօգտվի միշտ այս պզտիկ étiquette-են։ Եվ ի՞նչ են միթե ամեն տեղ, բոլոր Բանայիները, կրոնական տոներ, որոնք առևտրական հաշիվներու ու քիչ մըն ալ զվարճանալու պետքին հետ հաշտեցված են, պատվավոր հաշտություններ, ատենով Մասիսի և Մանզումեի մեջ կնքված հաշտության պես։

Վերահաս գիշերվան հետ կյանքը ավելի ևս կոգևորվի. ճաշարանները նստելու տեղ չէ մնացած. սեղանները մայթերու վրա կդրվին ալ. ձայները կբարձրանան. հոս լեզու մը որ գերմաներեն չէ, բայց գերմաներենը կհիշեցնե իր յաներով, հոն՝ ուրիշ մը, որ ֆրանսերեն չէ շեշտովը, բայց ֆրանսերեն է բառերով. անգլիերենը անպակաս ասոնց քովիկը, այստեղ կին մը, որուն գրկին մեջ մանկիկ մը քնանա խոնջած. այդտեղ երկու մարդ թև թևի վար չիյնալու համար։

Ելեկտրական լույսը կփողփողի ավընյուներուն և պուլվարներուն երկայնքը՝ շլացուցիչ ծիածաններ կազմելով. երաժշտության նվագները ասոնց հետ. մարմնամարզի ընկերակցությունները իրենց զանազան համազգեստներովը և ֆանֆառներովը. գոռ ու գոչ մը. խառնիճաղանճություն մը. ու ամեն բերնե բարձրացող աղաղակներ. զոր փողոցները հսկա փողերու պես կթնդացնեն և ամեն կողմ ծավալող հոտ մը, գարեջուրին հոտը, որ արբշիռ քաղաքի մը շնչառությունն է, ամբողջ քաղաքը, ի՞նչ կըսեմ, ամբողջ երկիրը, իր տոնին, իր ցնծությանը մեջ։ Եվ ասոնց բոլորին վրա պիտակը հիմա լուսազարդված, երգված, հրսկայացած որ կսավառնի, «Աստվածածինը տոնեցե՛ք»։

***

Կարգ մը շահեկան նմանություններ, որուն մտքեն կանցնի, Պրյուքսելին և մեր մայրաքաղաքին մեջ։ Հոս՝ բնակչությունը մեծ ափարթմաններու, խաներու մեջ լեցված, առլցված չէ ինչպես շատ մը մայրաքաղաքներու մեջ։ Ամեն ընտանիք իր տունը ունի. փողոցներու երկու դին բարձրաբերձ ու բազմահարկ շենքեր չես տեսներ, երկհարկ կամ շատ շատ եռահարկ տուներ, որոնք մերինները կհիշեցնեն։ Հետո, մեր շահնիշիրները հոս ալ կան և տուներուն ճակատները կզարդարեն. Պրյուքսելի էն գեղեցիկ պողոտան՝ Ավընյու Լուիզը իր ութսուն մեթր լայնքովը ու երկուք ու կես քիլոմեթր երկայնքին վրա այսպես է։

Ուրիշ նմանություն մը որ բնության գործն է. Պրյուքսելը հարթ դաշտի մը վրա կառուցված չէ, այլ ելևէջավոր հողի մը վրա. հետևապես շատ մը փողոցներ շտկված ու սալարկված, թեև զառիվերներ կամ զառիվայրներ են, միայն թե գիտությունը կրցած է այս անկանոնության ներդաշնակություն մը տալ, ասոնց մեջ ալ ոչ միայն կարգ կանոն, այլ ճաշակ և գեղեցկություն դնել։

Վերջին նմանություն մը. այստեղի կառապանները մեր կարգ մը օրագրողներուն տմարդությունը ունին, բայց ոչ հայհուչը, իրենց ամբարտավան շարժուձևը, եթե երկու բառ քով քովի դնելու արիության հետ միանար, մեր մամուլին հիմակվան վիճակին պատշաճ մտավորականություն մը պիտի կազմեր։

Ի պատիվ այստեղի կառապաններուն, պետք է ավելցնեմ, որ հաշիվի, կեղծիքի, չարաշահության մեջ այդ կարգ մը օրագրողներեն շատ ետ կմնան. չեմ ըսեր օրինակի համար որ չեն գողնար, եթե ձեռվընուն գա, ժամեն և սակացույցեն, բայց այս առաքինությունը, որ ամեն ինքզինքը հարգող առուտուրի մարդու առաքինությունը կկազմե, ճակատաբաց ի գործ կդնեն, ոչ թե պարկեշտության քողին տակ ծածկվելով, պզտիկ սուրբերու պես։

Պրյուքսել, 12 օգոստոս 1910

Բ

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԵԼՃԻԳԱՅԻ ՄԵՋ ԵՎ ԱՅԼՈՒՐ.— ՊՐՅՈՒՔՍԵԼՅԻՆ ԻՆՉՊԵՍ ԿԺԱՆՉՅՎԻ.— ՖԵՐԵ՞Ի ՀԻՊՈՍՏԱԿԸ ՊՐՅՈՒՔՍԵԼԻ ՄԵՋ

Դիտված է որ կյանքի պայքարը լայնության աստիճաններուն համեմատ կփոխվի. այրեցյալ երկիրներու մեջ՝ անգո, բարեխառն գոտիին վրա, չափավոր, ցուրտ կլիմային տակ՝ կասստկանա բոլորովին։ Այստեղ՝ ըլլալ կամ չըլլալու հարցն է այլևս, կտրուկ՝ սրված դաշույնի մը բերնին պես։

Աշխատությունը, որ մինչև ստրկության կտարվի, խղճմտություններու պակասը, որ մինչև խաբեության կհանգի, այս անդուլ կռվին հանգրվաններն են։

Շահագործո՞ւմ. այս է մեծ բառը, մեծ գաղափարը այս երկիրներուն մեջ. ոչ սակայն կոպիտ շահագործումը, ոչ իսկ անիմաստը։ Շահագործում մարդկային տկարություններու, աիտերու ու մոլություններու. անսպա՞ռ հանք որուն արժեթուղթերուն գինը միշտ կբարձրանա։ Շահագործում մարդկային պետքերու, Ավելորդեն սկսելով մինչև Անհրաժեշտը գավաթ մը ջուրեն մինչև բնական արտաքսումները։

Եվ այս չէ՞ միթե Քաղաքակրթության ընթացքը։ Նոր պետքերու ստեղծում՝ նոր գոհացումներու ասպարեզ ստեղծելու համար։ Վայելքին և Սպառումին սրշավը Արտադրության դեմ։

Պրյուքսելի մեջ Արքայական Պարտեզին, Parc Royal *մուտքը ազատ է, բայց աթոռի մը վրա հանգչիլը՝ տասը սանթիմի կնայի։ Խորհրդարանը կարող ես այցելել, բայց ոչ առանց հիսուն սանթիմ վճարելու։ Թանգարաններու հրաշակերտները կրնաս վայելել, պայմանով, որ մեկ ֆրանք աչքե հանես։ Ու հետո ասոնց մանրամասնությունները, հոս՝* catalogue *մը, հոն՝ պատմուճակ մը, որոնց պետք է դարձյալ վճարել ու* taxi*-իդ դուռը բացող կամ գոցող տղան, որ քանի մը սանթիմ չփրցուցած օձիքդ չի թողուր։*

Tourisme*-ը, երկիր տեսնելու անձուկը, որ քսաներորդ դարուն ժամանցն է, հարկավ ամենեն ավելի կշահագործվի, հետաքրքրական ամեն ինչ տեսնել կարելի է, բայց դրամով։ Պելճիգայի մեջ քարայրները մեծ հասույթ կբերեն. և ամենեն զվարճալին այն է, որ ամեն տարի նոր քարայր մը ի հայտ կբերվի, վերջինը, թվականի կարգով, Ռամբենի քարայրն է Տինանի,* Dinant sur Meuse*-ի մեջ, որ իրոք բնության ամենեն խորհրդավոր հրաշակերտներեն մեկն է։*

Բայց անակնկալներն ալ կան ասոնց մեջ։ Այդ կողմերը լեռան մը գլուխը հին բերդի մը վերելքը կատարեցի օր մը, զարմա՜նք. ո՛չ ticket, մուտքի թղթիկը գունավոր, ո՛չ դռնապան. բարձրացա, ինչպես կըսեն մեր Ռուսահայերը, վե՜ր, ավելի վե՜ր, գարձգարձիկ քարուկիր սանդուխներե, և ճիշտ գագաթը... մեկ ձեռքը հավիտենական կապույտ կամ դեղին ticket-ը, և մյուսը՝ պատկերազարդ carte postale-ը բռնած՝ անխուսափելի դռնապանը, որ իր գոց ըրած խոսքերուն շարքը սկսավ.

— 1470-ին շինված այս բերդը 1644-ին նորոգվեցավ։ Տինանի պաշարման ատեն մեծ ծառայություն մատույց։ 1810 թվականին ֆրանսիացիներուն կողմե գրավվեցավ։

Իրա՞վ։ Դռնապանը շարունակեց իր պատմությունը։

— Հոսկեց տեսնված պատկերը դիտեցե՛ք անգամ մը. Մեռոի բոլոր գեղազվարճ ափերը աչվընուդ առջևն է... տասը սանթիմ միայն։

Բայց լրումը այս ամենուն՝ Պրյուքսելի Մայր Եկեղեցիին պատերը զարդարող գունավոր réclame-ներն են։ Հավատքի, կրոնքի վերաբերող ծանուցումներ, օրինակի համար՝ այս սուրբին կամ այն սրբուհիին ուխտագնացության պայմանները ճշտող, Քուքին մեկ տեսակը պարզապես. և քիչ մը անդին՝ արարողության ատեն աթոռներու սակագինը, երեք սանթիմ գավիթին մեջ, հինգ սանթիմ մայր խորանին դեմը. ճիշտ ինչպես թատրոնին մեջ աթոռները ու նստարանները կվարձվին։

Այս դիտողությունները կընեի Պրյուքսելցի ծանոթի մը, գիշեր ատեն թևթևի պտտելով փողոցները. հանկարծ լուսինը երևցավ իր սպիտակ ու քնքուշ քոլորակովը։ Ու հարցուցի թե Պելճիգայի երկինքին վրա փայլող այս արբանյակը դիտելու համար ticket-ի պետք կա՞ արդյոք։

— Ո՛չ,— ըսավ քովինս ժպտելով,— ո՛չ, լուսինին տեսքը ձրի է Պելճիգայի մեջ... պարզ աչքով դիտողներուն։

* * *

Ես Պելճիգացին իր քիթեն կճանչնամ։ Մի խնդաք, կխնդրեմ։ Շատեր քիթի մը գոյության պատճառը չեն կրցած գտնել. հոտառությա՞ն համար. երբե՛ք։ Ի՞նչ է ուրեմն այս ցցմունքը մարդկային դեմքին վրա։ Տափակութենե խուսափում պարզապես. կանոն՝ զոր եթե օրագրողներեն ոմանք չեն կրնար սորվիլ, Բնությունը իր գեղեցկագիտական բնազդովը չէր կրնար անգիտանալ։

Քիթը՝ նկարագրի արտահայտիչը այր մարդուն, զմայլելի լրացուցիչն է կնոջական երեսին իր դողդոջուն թեփկներովը։ Ինծի համար

ռուեգները իրենց նբբությամբ ազնվականության լավագույն վավերագրերը կարժեն, գեղեցկության ազնվականություն հարկավ։

Ես կկարծեմ որ քիթը մեծ ազդեցություն ունի մարդկային ճակատագրին վրա, ահա ալ Պատմութենեն գիտենք, որ մեծ մարդիկ մեծ քիթեր ունեցած են։

Ֆրանսացիները ամենեն շատ զբաղած են քիթով. Un grand nez n'a jamais déparé un beau visage առածը ծանոթ է։ Ֆրանսացի ժամանակակից քերթողներեն Ռոսթան՝ «Սիրանո ը Պերժըրաք»-ովը անմահացած՝ քիթին մեծագույն երգիչը եղած է։

Այո՝ Պելճիգացին իր քիթեն կճանչնամ։ Այս քիթը սովորաբար ամբարտավան՝ միջակութենե կխորշի. վեր թռած ծայրով մը կվեքջանա, միշտ լայնկեկ խարիսխի վրա կհանգչի։ Հարյուրին իննսունը այսպես է. պզտիկ բացառություն մը կընեմ թեթև, խիստ թեթև կերպով վար գարձող ծայրերու, որոնք անպատճառ ամշկոտություն չեն նշանակեր։ Ու օտարականներով լեցուն այս քաղաքին մեջ ինքնիրենս զանազանությունը կընեմ փոքրոջը դեմս ելլողներուն. ահա՝ Ամերիկացի մըն է ածիլված պեխովը, ահա՝ Անգլիացի, դեղին գույնովը և այն անդրդվելի շարժուձևովը, որ բովանդակ աշխարհը իրեն թիկ կը սեպի. ահա՝ Ֆրանսացի՝ իր մանր աչքերովը, իր աշխատավը և ան՝ Պելճիգացի իր խոսուն ու հառաջադեմ քիթովը։

Վալոն ու Ֆլամանդ իրենց քիթովը միացած են գրեթե. ոչ մեկ տարբերություն երկու ցեղերուն մեջ, որ սակայն գույնով ու մարմնի դիծերով իրարմե շատ հեռու են. Վալոնը խարտյաշ է, Ֆլամանդը՝ կարմրաթույր, մին նիհար է, մյուսը՝ պարարտ։

* * *

Այս կիրակի հանդես կա այստեղ, սգահանդես. ո՛չ միայն այստեղ, այլ աշխարհիս ամեն կողմը, գոնե այն ամեն տեղերը, ուր կղերամատությունը ու tartuffisme-ը չի տիրեր։

Ֆերերի՝ ազատամտության մարտիրոսին, մահվան տարեդարձն է։ Ինչ որ գաղափարի մարդ կա Պրյուքսելի մեջ, ամենքը վազած եկած են իրենց հարգանքը բերելու այդ մեծ հիշատակին։

Գողգոթայեն մինչև Մոնժյուիք. այս է կղերամիտ ոգիեն առաջնորդվող ճամփան զոր Մարդկությունը կտրած է շուրջ քսան դարերու մեջ։ Հան՝ զոհ, հոս՝ դահիճ ըրավ կղերը քրիստոնեությունը։ Ամեն պարագայի մեջ քսաներորդ դարուն մեջ Ֆերերի ազատությունչան չափ զարհուրելի ոճիր մը դեռ չէր գործած ան. մեկ ոտքանք մը միայն, Ֆե-

րերը զարնող գնդակները Ֆերերի մարմինը ծակեցին անցան ու գացին կղերականությունը զարկին։

Պրյուքսելի Grand place-*ը գիտե՞ք. ամենեն հետաքրքրական ու պատմական հրապարակներեն մեկը այս մայրաքաղաքին։ Մեծ տարածություն մը չունի ու մեր գիտցած* parquet *քարերով սալարկված է. չկա օտարական մը որ այցելած չըլլա զայն։ Քառակուսի գետին մը. աջը՝ Ժողովուրդին տունը և ձախը՝ Արքային տունը. երկուքն ալ իրենց հին գոթական ոճովը վերանորոգված, սրածայր եռանկյուններու խոյացած գագաթներով։ Ճակատները այս շենքերուն բանված քարերով, կարծես մարմարե ժանյակներով զարդարված են, ինչ որ զարմանալի բան մը չունի այս ժանյակի քաղաքին մեջ որ Պրյուքսել կկոչվի։ Հրապարակին մյուս երկու կողմի շենքերը նույն ոճով են ու մեկը մանավանդ՝ համակ ոսկեզօծ։*

*Սգահանդեսը հոս կատարվեցավ պատկառանքով համակված բազմության մը ներկայությամբը։ Ես ալ հոն էի իբր զավակ ի վաղուց խավարամտությունը մերկացնող ազգի մը։ Ասկե երեք դար առաջ հոս գլխատվեր էին Էկմոնթի և Հոռնի կոմսերը**, *Ֆիլիփ Բ.-ի հրամանով. սառնք խղճի ազատության զոհեր էին։ Ֆերերի անունով կազմված ընկերակցությունը մարմար մը բերավ զետեղեց արքային տանը սեմին տեղ։ Ահա ինչ որ ոսկի տառերով գրված է այս քարին վրա։*

«Այս հիշատակարանը կնվիրվի ի պատիվ Էկմոնթի և Հոռնի կոմսերուն որոնք հիշտ այստեղ գլխատվեցան, խղճի ազատության համար մահառելնուն պատճառով։ Նվեր՝ Ֆերերի հիշատակին կազմված ընկերակցության կողմե. Ֆերեր՝ որ անցյալ տարի, այս օրը մահացավ միևնույն դատին համար»։

Էկմոնթի և Հոռնի կոմսերուն արձանները Պրյուքսելի մեկ հրապարակին վրա կանգնված են։ Որոշված է որ Ֆերերի արձանն ալ Պրյուքսելի ուրիշ մեկ հրապարակին վրա կանգնվի։ Ահա թե ինչպես կղերական դահիճներու ձեռքով մեռնող զոհերը կվերակենդանանան։

Ու մտքովս վերադարձ մը ըրի մեր հեք ազգին վրա, մեր սուտ եկեղեցասերներուն, մեր ամբարիշտ բարեպաշտներուն վրա։

Պրյուքսել, 22 օգոստ., 1910

---

* *Ս. Հ. — Կոմս Լամորալ Էկմոնթ, ծն. 1522, փոխարքա Արդուայի և Ֆլանտրիոյ, 1568-ին գլխատված՝ իբրև վարիչ հոլանտական ապստամբության, Սպանիո դեմ։ Կյոթե այս անունով ունի հինգ արարնոց ողբերգություն մը, որուն համար Պեթհովեն գրած է «Ովերթյուռա մը։— Կոմս Ֆիլիփ Հոռն, ծն. Նիվել 1518. կառավարիչ Կելտրի. գլխատված Էկմոնթի հետ, նույն օրը, և նույն տեղը։*

ՕՍԹԱՆՏ՝ ԾՈՎԵԶԵՐՔ.—
ԲՈՒԺԻՉ ՔԱՂԱՔ ՈՒ ՎԱՅԵԼՔԻ ՔԱՂԱՔ.— ՕՍԹԱՆՏԸ ԿԶԲՈՍՆՈՒ.—

Անհուն, բայց անհուն տարածություն մը ծովի, անեզր, անսահման։

Դեղին, հետո կանանչ, հետո կապույտ շերտեր, որ հեռուն, այս ջուրերը զուգահեռական գիծերով կբաժնեն ու անծանոթ Պետության մը, Տարրերու Պետության հորիզոնաձև պառկող, ծփացող դրոշակը ու զինանշանը կկազմեն։

Ծովեզերքին վրա՝ ոչ մեկ ժայռ, ոչ մեկ խութ, ոչ մեկ քարի կտոր. այլ ավազ մը ալյուրի պես բարակ, գրեթե անշոշափելի, միգամած հորիզոնի մը պես գորշ, մետաքսի պես փայփայիչ, չլսված, չտեսնված թավիշե գորգ մը փռածի պես ոտքերուն տակ այս դիցուհիին, որ Օսթանտ կկոչվի։

Ամայի և անշեն այս ափերը Հուսահատության և Անէացումի հորիզոնը պիտի ըլլային գուցե. հյուրամերժ ափեր՝ ուր Եղիային, ափսո՜ս, մոռցված մեր Եղիային Նիրվանան հոժարակամ պիտի գար հանգչիլ։

Եվրոպական հանճարը այլապես տնօրինած է. այս եղկելի անկյունեն աշխարհիս ամենաշքեղ քաղաքը հարուցած է մոգական ստեղծագործությամբ մը, որուն առջև աստվածային իսկ կրնա ապշիլ։

Օսթանտի քարափը որ մեջքը ծռած՝ Կ-ի մը ձև ունի, ամբողջ այս ծովեզերքը կընդգրկե իր հզոր բազուկին մեջ։ Այս քարափին վրա ծայրեծայր մեկը մյուսեն ճոխ պզտիկ պալատներ կամ պանդոկներ իրենց վես ճակատը կցոլացնեն դեմի հեղուկ հայելիին մեջ։ Ճարտարապետական արվեստը իր գանձերը լիաբուռն սփռած է ամենուն վրա, լուին մրցումի մը մղձավանջեն կարծես թե մղված, մեկը մյուսեն հմայիչ դարձնելու համար։

* * *

Ահա դեպի այս շինծու ու արվեստական գեղեցկությունն է, որ խոնջած, ջիղերը փրթելու չափ պրկված Մարդկությունը կուգա կվազե Եվրոպայեն, Ամերիկայեն, երբոր կյանքի անողոք պայքարեն, անոր պողպատի շլջանակեն դուրս ելլել ուզե վայրկյան մը։

Եվ հո՜ս որոշ, հաստատ դիտումով մը ոտքը կկոխե, աշխատությամբ, շատ անգամ զրկելով, երբեմն զրկվելով, դիզված հարստությու-

նը վատնելու դիտումով՝ կուգա հոս, ինչ որ ամենաբուռն հեշտանքն է աշխարհիս մեջ, և բացատրությունը եթե ոչ արդարացումը, այն ամեն հափշտակություններուն, որոնցմով միայն հարստությունները, փոխանակ տարածվելու բոլոր մարդոց վրա, ասոր կամ անոր ձեռքին մեջ կդիզվին։

Տնտեսագետները, որոնք ամեն ինչ կհետազոտեն, կհաշվեն թե այցելուները ամեն ամսավան եղանակին, որ այստեղ ամիս ու կես կտևե, ութը միլիոն ոսկի կձգեն Օսթանտի մեջ։

Ապաքեն այս վայելքի քաղաքը իր ամբողջությամբը՝ բովանդակ աշխարհիս ամենամեծ խանութներեն մեկն է իսկապես. հոյակապ Պոն Մարշե ուր ամեն ինչ ծախու է. ադամանդեն սկսելով մինչև աղբը. անրծութենեն սկսելով մինչև աղտոտությունները. հոգին և մարմինը, լուրջը և ծաղրելին։ Ամեն ինչ իր ծախողը ու առնողը ունի. Մատուցումի և Պահանջումի կանոն որ այս անօրեն քաղքին միակ օրենքը ըլլալ կթվի։

Հետո, այս համակ ոսկեզօծ շրջանակին մեջ հավիտենական Եդեմը, զոր աստված իզուր ջնջել կարծեց։ Կինը ոչ միայն իր բնական շնորհներուն մեջ, այլ մանավանդ այնպես ինչպես Արվեստը կրնա հիանալի ընծայել։

Որ մեկը բեհեզե, շղարշե, կազե, տանթելե պուրնուզներու մեջ թերասքող, կարծես թե օդաշու. որ մեկը՝ մութ կերպասներե պատմուճաններու մեջ իրենց վիմաշեն մարմնին կաղապարումը դնելով ու չեմ գիտեր ինչ այրական ու տիրապետիչ քալվածքով մը։

Ամեն տարիքները ու հասակները հոս են թեև, բայց ալեհեր ու շինծու կազդուրումներով առուգացած դրամատերներ, ճերմկիլ սկսող մազերնին ոսկիի ներկած տարիքոտ կիներ բաղդատաբար թիվով շատ են. և այս հակասական համեմատությունը ինքնին հասկնալի է։

Ես կսիրեմ աշունը կիներուն. շիջելափառ արևմուտքը, որուն անգիտակից խորհրդանշանն է և որ իրապես Կյանքը կներկայացնե իր անհանջելի վերջավորությանը մեջ։

***

Արևով առավո՞տ մը. հազվագյուտ բախտ այս տարի Օսթանտի համար։

Գիշերվան տեղատվությունեն բոլոր ալիքաբեր եզերքը լայնցած, լայնցած, անսովոր տարածություն մը ստացած է. տեսակ մը փոշիի

հրապարակ, որուն վրա հավաքված են Օսթանտի հյուրերը մեծ ու պզտիկ։ Հարյուրավոր տղաք, մանչ ու աղջիկ, միլիոնատերի զավակներ, կխաղան ստունքնին մերկ, ոտքերնին բոպիկ. բոպիկություն, որ հոս հարստության հայտարար նշանն է, ո՞վ հակասություն մարդկային գործերու։

Ու ավազին վրա մանուկները պատկերներ կգծեն. հոր կփորեն, ո՞չ սակայն իրարու. վաղափուլ աշտարակներ կշինեն, ո՞չ սակայն բաբելոնյան աշտարակներ։

Ճերմակ, կապույտ, վարդագույն կառքեր, որոնք շարժուն բաղնիքներ են, ծով մտնել ուզողներուն տրամադրության տակ. և ահա միառմի, այրեր ու կիներ ատոնցմե դուրս կելլեն, բաղնիքի թեթև հագուստներեն հագած, Հյուսիսի ծովին հզոր բախումներուն դեմ կենտվին թույլ ու մեղկ ջիղերնին կազդուրելու համար։ Եվ ամեն անգամ որ ալիքները կքաշվին կամ կցածնան, կանացի մարմնին բոլոր շլացուցիչ կարկառները աչքի առջև կպարզվին իսկույն կապույտ ջուրին մեջ թաթխվելու, պահվըտելու համար. հետո հանկարծ մարմարե ծյունե ցայտումներով իրենց ապշեցուցիչ կատարելությունները կցուցնեն նորեն արևին ճառագայթներուն տակ։

Եվ ծովին աղի համովը ծանրաբեռնված քամին զով հպումով կցրվի, կմարե, աչքերու մեջ փալփլող ցանկությունները։ Այս տեսարանը եզական գույներու ու գիծերու պեսպիսությամբը, իր ամենօրյա կերկնումին մեջ՝ սովորական ու հաստատատիպ բան մը կելլա, նկար, tableau, որ անառուն վարպետի մը, Բնության, վրձինեն ելած ու հոգ կախված է։

***

Գիշերը Օսթանտը կզբոսնու, այս քաղաքը չի լուսավորվիր, այլ կվառի. չի խոսիր, այլ կերգե. չի շարժիր, այլ կպարե։

Ճաշարաններու մեջ, ուր չորս գին հայելիները էլեկտրական լույսերը կբյուրապատկեն, կանանչ հոլանի կուրծքին վրա սփռված մարգարիտե մանյակներու անփայլ և զգույշ նշույլը ադամանդե, հակինթե, զմրուխտե մեհեանգներու երփներանգ ճառագայթումին կխառնվի։

Գինիներու ու շամփանյայի շոգիներու մեջ դասակարգերու զանազանությունները տեղի կուտան տակավ. կանհետանան։ Պատիվի կամ անպատվության մարդ, դրամի կամ դանակի մարդ, արվեստի կամ հնարքի մարդ, բոլորը կխառնվին, կեղբայրակցին։ Կիները մանավանդ ո՞րքան կշփոթվին կամ չշփոթվիլ կուզեն իրարու հետ. մեծ իշխանու-

հին մեծ ցնծումիին հետ կմրցի, էգ վագրերու կռիվ այս լուսաշող կրկեսին մեջ։ Ցերեկվան զգուշությունները, կեղծիքը պիտի ըսեի, կվերնան հետզհետե. փսփսուքներ, համբույրներու շառաչներ, գիրկընդխառնումներ. ամեն տեղ երաժշտություն և ծաղիկ։ Բուրումնավետ և արբեցուցիչ մթնոլորտ, զոր մարդիկ տարակուսական Արքայության մը ապավինելե առաջ՝ խոհեմություն սեպեցին իրենք իրենց ձեռքովը պատրաստել։ Դրախտ, որուն ախտաժետ զեխությունները կրնան քննադատվիլ, դատապարտվիլ բայց չեն կրնար դադրիլ բուժիչը ըլլալե այն թախիծին, որ քսաներորդ դարու Մարդկության ահավոր հիվանդությունն է։

Քազինոն անհամար ջահերու լույսովը օվկիանոսին եղերքը կանգնած փարոսի մը կնմանի, բարոյական նավաբեկություններու փարոս. այս է արտաքինը. ներսը՝ նվագահանդես, երաժշտական արվեստին գերազանց արտահայտությունը. Քառուզոն՝ դյութական երգիչը, Վեռլեն՝ աննման երգչուհին, երեք հարյուր ջութակի ներդաշնակությանը ընկերացած։

Ամբողջ Օսթանտ հոն է. ամբողջ Օսթանտ՝ այսինքն անորակելի զանգվածը ամեն ազգերե ու սեռերե ձևացած, կունկնդրե ամենախոր լռության մեջ. որևէ եկեղեցվո մեջ չէ տեսնված այսքան երկյուղած պատկառանք, երկրպագելու այսքան պատրաստակամություն. երաժշտության դյութիչ աստվածն է այս հրաշքը գործողը։

Ինքնիրենս կհարցնեմ, կամ կվախնամ հարցընելու, թե ա՞յս է արդյոք գերագույն Ճշմարտությունը որուն առջև՝ ըմբոստ ու աննվաճ Մարդկությունը ծունկ պիտի չոքի օր մը, վերջին Կուռքը, զոր պիտի պաշտե և որուն առջև մեղայր պիտի գա։

* * *

Կեսգիշերին մոտ թղթախաղի մեծ սրահը լեցուն է. պաքարայի սեղանին շուրջը՝ սմոքինկներու սևությունը շապիկներու ձյունաթույր կուրծքին քով ավելի կնսեմանա կարծես. մեծ դիվանագետներ կթվին ըլլալ այս մարդիկը, սազերնին սանտրած, երկուքի ճեղքած, որոնք իրենց չափված ձևված կեցվածքովը պատկառանք կազդեն։

Խաղացողնե՞ր են պարզապես, որոնք պանքնոթով լեցուն թղթապանակնին բերած են հոս։ Էն աղվոր կիները, էն անվանի պահծուները հոս են, այս սեղաններուն շուրջը, լուրջ, գրեթե խոժոռ. ստակ շահելու եկած են հոս. հինգ հազար, տասը հազար ֆրանքի պա՞նքո պոռացող կիներ, որոնց ձեռքին մեջ էրիկ մարդիկ խաղալիկներ են միայն։

Այստեղ հետաքրքրող առարկան խաղացողներու բախտավորությունը կամ անբախտությունն է. սա խաղացողին վեց ձեռք անցավ. վեց ձեռք բառը բերնե բերան. սեղանե սեղան կթռչի, ամբողջ սրահը կիմանա, կխոնարհի այս բախտավորին առջև և ներկաներու ակնածությունը կավելնա կարծես երբ որ նոր շահված պանքնոթներու ծրարը իզուր կշանա տեղավորել իր գրպաններուն մեջ։

Դուրսը՝ քարափին ամբողջ երկայնքը ալիտանջ օվկիանոսին մռընչող ձայնը. դեռ այս ժամանակ մանրավաճառներ իրենց պզտիկ ապրանքները կծախեն և լրագրավաճառներ վերջին ժամուն հասած ֆրանսական, գերմանական թերթերուն անունները կպոռան.

— Թա՛ն, էֆռ ոք Փարի, Ֆրանֆուրթր Ցայթունկ, Գերլիներ Թակպլաթ...

Ներսը՝ խաղացողները, գործի մարդիկ սովորաբար, որոնք աշխարհիս լուրերեն վայրկյան մը իսկ անտեղյակ չեն կրնար մնալ, պորսաներուն գիները կհասկընան լրագիրներեն. երեսներ կան որ կթպտին և երեսներ որ կթթվին բոլորովին. հետո, խաղը իր սաստկությամբը շարունակ կգինովցնե այս վայելողները։

Եվ ահա հանկարծ դրամատերներու սիրելի այս անուններուն մեջեն, իբրև գերագույն վերջավորությունը, ուրիշ օրագրի մը անունը փողոցեն կլսվի, խարազանի պես ցնցող անուն մը, որ սիրող ցնծությունը կվրդովե, աղետավոր հեգնության մը պես.

— Vorwaerts.

Օսթանտ, 23 օգոստոս 1910

ԵՐԹ ՀԱՏՍ ԻՄ, ՍԱՏԱՆԱ՛.— ԳԵՐՄԱՆԻԱՆ ՄԵՂԱՔԵԼՈՎ.— ԿՅԱՆՔԸ՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ.— ԿԻՐԱԿԻ ՄԸ ՎԻՍՊԱՏԵՆԻ ՄԵՋ.— ԿՈՒՐԱՑ, ԿԱՂԱՑ, ԳՈՄԱՑԵԼՈՑ.— ԱՅՍՏԵՂ ՕՍԹԱՆՏ ՉԷ։

Ի՞նչ, հազիվ թե ջոգեկառքին հևիհև արշավեն դուրս եկած, դրական ու քաղաքական մարդու կրկին կալանավորումը, Նեսոսի պատմուճանը մերկանալով՝ հազիվ թե այս հեռավոր տեղվանքը եկած՝ կազդուրվելու համար որքան մարմնական խոնջենքեն, նույնքան ալ հոգեկան պարտասումներեն։

Եվ ահա Գրականության Սատանան՝ այն, որ թվի թե ինծի նման վերջալույսներու ետևեն՝ կհետապնդե, Մեֆիսթոն, որ Ֆաուսթի մը

ֆերպարանափոխել կուզե զիս, չեմ գիտեր ինչ անմատչելի Մարգարիտա մը ցույց տալով հեռվեն, բաներ մը կմրմնջե ականջս իվար։ Կդիմադրեմ.

— Ոչ, հազար անգամ ոչ։

Եվ ինչպես կըլլա չեմ գիտեր, սեղանին առջև տեղավորված կգըտնեմ ինքզինքս, գրիչ մը ձեռքս, ուղևորության օրագրիս դիմացը։

***

Գերմանիան կտրեցի անցա ոչ բոլորովին հարավեն, ո՛չ ալ բոլորովին հյուսիսեն, այլ հարավեն հյուսիս՝ 45 աստիճանի անկյունով մը, ինչպես կըսեն երկրաչափության մեջ։ Աշխարհիս վրա ամեն երևույթ իր անկյունը ունի. գործը ճիշտ անկյունը գտնելու մեջն է։ Ճերմակ կամ սև, իրավ կամ սուտ, անկյունի խնդիրներ բոլորը։

Այն գիծը որով ճեղքեցի ցամաքային Եվրոպայի մեծագույն կայսրությունը. Ի դարու գործունեության տպավորիչ (impressionnant) պատկերներեն մին կկազմե անշուշտ։

Բասսաուեն, Նյուրընպերկեն, Ֆրանքֆուրթեն անցա։ Ճամփուս բոլոր երկարությամբը՝ աջեն ու ձախեն տարածվող, մինչև հետին հողի անկյունը մշակված փայփայված դաշտերուն ու մինչև ամենեն նուրբ ճյուղերը, ընձյուղները խնամված անտառներուն մեջեն գերմանական մեծ քաղաքները հոս հոն կկանգնին հանկարծ, Երկրագործության մեծագործություններուն դեմ՝ Ճարտարարվեստին ստեղծագործությունները հանելու համար։ Ուրիշ անգամներ տեսեր էի Ավկըսպուրկը, Ուլմը, Տյուսելտորֆը, Էսսենը։ Ծուխերու ու մուխերու մեջեն ցոլացող լույսեր, որոնց առջև ավելի ևս պետք է երկյուղածությամբ խոնարհիլ քան թե երկինքին վրա փայլող արեգակներու առջև։ Հնոցներ, ուր տիտանյան դարբնությամբ մը աշխարհ նոր ի նորոգ կկերտվի շարունակ։

Մյուս կողմը՝ Մյունխեն և Տրեզտեն ճարտարարվեստին հետ միասին գեղարվեստներուն կհրամայեն. Գերմանիան միայն գիտուններ և խորհողներ կծնի. այս դիտողության դեմ՝ Տեսչերները կբողոքեն այն ձևով որ բողոքներուն լավագույնն է՝ աշխատելով։

Անոնք փրոֆեսյոններ հասցուցած են ոչ միայն գիտությանց մեջ, ինչ որ վաղուց ունեին, այլ գեղարվեստի ամեն ճյուղերուն համար։ Օրն ի բուն նոր գիծեր, նոր գույներ, նոր ներդաշնակություններ ստեղծելու ջանքը՝ նոր գաղափարներ հղանալու պես, տենդագին վարակումով մը վարակած է Գերմանիան։

Երաժշտությունը իրենն էր. նկարչության, արձանագործության ալ հաջողությամբ ձեռք զարկավ, հիմա կահագործության, քանդակագործության, ապակեգործության վրա նետված է, ինչպես նետվիլ գիտե Գերմանացին, առյուծի պես։

Հարկավ այս բոլոր ջանքը դեռ հառաջ բերած չէ այն վերջին նըրբությունը, ճաշակի գերագույն ազնվացումը, որ ցեղի մը համար կատարելություն մը ըլլալով հանդերձ, հոգնության նշան է և որ աշխատութենե և կամքե ավելի ժամանակով կստացվի։

Այսպես Գերմանացի կնոջ արդուզարդը և շարժուձևը ֆրանսականին ազնվությունը և հրապույրը չունին դեռ. Գերմանիո մեջ դեռ բավական ատեն կաթնաթույր պարանոցներու և դաստակներու տեսքին՝ ժամպոնի և սոսիսոնի տարտամ հոտեր պիտի խառնվին և մանրիկ փոքրիկ քալվածքներու տեղ՝ կիները զինվորական քայլափոխներով կոխած մայթերնին պիտի ապշեցնեն։

***

Վիսպատեն պարտեզ մըն է. շքեղ պարտեզ մը ծաղիկներով բուրյան, նվագներով թաթախուն, մարգարիտներով, որոնք իրենց գետինը փռված թավիշի կակղությունները կտարածեն ամեն կողմ, ավլված, ջրված allée-ները, որոնք լայն դեղին ժապավիններու պես դրասանգներ կհորինեն, ստվերախիտ ծառերով, որոնց հովանիներուն տակ հիվանդ ծնողքներուն հետ եկող պատանիներ ու աղջիկներ կերազեն։

Անդամալույծներու ու հոդացավե տառապողներու քաղաք, որոնց բուժիչը ըլլալու համբավը կվայելե իր հանքային ջուրերուն շնորհիվ։

Ինծի պես շատեր վազեր եկեր են այստեղ և չորս կողմիս բազմությունը, հիվանդներու բազմություն, հակառակ իր զվարթ երեսին աղաչանքի պաղատանքի համար, գթություն խնդրելու համար, չեմ գիտեր ո՛ր աստուծմեն, ծունկի եկած աղերսավորներու տպավորությունը կթողու վրաս։

Այս կիրակի առտվան կապույտ երկնքին տակ, համասփյուռ ծաղիկներու մեհեանդներուն մեջ, զմայլելի երաժշտության մը արբեցությամբը պարտկիլ կուզե անիկա իր տառապանքը. այս երաժշտությունը մահվան երգեցողությունն է. այս ծաղիկները դագաղներու պսակներ են. այս պայծառ առավոտը շիջելափառ մայրամուտքն է բոլորիս։

Այստեղ Տանթեի դժոխքը չէ և ոտք կոխողը ամեն հույսի պետք չէ որ հրաժեշտ տա. բայց որքան անկումներ և ի՜նչ հակապատկերներ որոնք ծիծաղելի պիտի թվեին, եթե ողբալի չըլլային իսկապես։ Տե-

սած եք հարկավ այն փոքրիկ կառքերը որոնցմով սանտուները դեռ ոտքի չելած երախաներ կպտտցնեն— փողոցը կամ պարտեզի մեջ. ո՞ր-չափ այդ կառքերեն— ամեն քայլիդ կհանդիպիս ատոնց. քիչ մը ավելի մեծկակ, որոնց մեջ մարմնակործան մարդեր, անդամալույծներ կպտտցրվին, երիտասարդներ, երբեմն ժամանակեն առաջ պատուհասված, որոնք ետևնուն հրվելով հոսկե հոն կփոխադրվին։

Կանուխ՝ դեմի եռացող ջուրի աղբյուրը փութացի. սպասողներու ամբողջ շարք մը գտա հոն. ձեռքերնին մեյմեկ գավաթ բռնած։ Ու շար հարցուկի մը պես կարդալ ուզեցի ամեն մեկին դեմքին վրա կյանքի մնացորդը. զոր այնքան անձկությամբ պահպանելու համար եկած են։

Ի՜նչ ավերակներ շուրջս։ Հոս՝ երերցող գլուխներ ու շներերցող ոտքեր. բաց աչքեր ու չտեսնող նայվածքներ. շարժող շրթունքներ և չխոսող լեզուներ։ Կդիտեմ մյուս դեմքերը և ամենուն վրա կտեսնեմ ուղեղային կամ ընդհանուր կաթվածը, rupture d'anévrismeը, angine de poitrine դարանամուտ։ Ո՞րքան դեռ պիտի ապրիք, դեռ պիտի ապրիք, հե՜ք ցավագարներ։

Կարդացած կամ իմացած եք հարկավ Լրսաժի Կաղ Սատանան, որ ուզած պահուն տուներու մեջ անցած դարձածը իմանալու համար տանիքները վերցնելու հնարքը գտեր էր։ Թե որ հնար ըլլար գանկերը բանալ մեկնումի ժամը գիտնալու համար, ապահովապես պիտի գտնվեին մարդիկ, որոնք չպիտի ուզեին համենալ հոս և մահը պիտի կանխեին իրենց ուզած օրը, ուզած ժամուն, կտրիճորեն, տեր Արտավազդ վրիժահանին պես, հատուկ հանդես մը սարքելով։ Եվ մտերիմներն և ազգականները, հայ թագավորին օրով եղածին նման, առանց լացի-կոծի տուն պիտի դառնային,

— Անգետ թե լա՞ն զյուրյանց արքայն՝ թե տոնեն։

* * *

Ո՛չ. այստեղ Օսթանտ չէ. հոս չեն եկեր զբոսնելու համար, կերպով մը մահվան ընդառաջ վազելու համար. ո՛չ. այստեղինները փախչողներն են անկե։

Ընդառաջ վազողներ և փախչողներ. քաղաքակրթությունն ամեն բանի մեջ այս երկու հակառակ շարքերը ունի. հակընդդեմ վազք որ հառաջադիմության հորձանքը, Կրլֆ Սթրիմը կձևացնե թերևս։

Վիսպատեն, կիրակի, 20 օգոստոս 1911

ՀՐԵԱ ՎԻՍՊԱՏԵՆ.— ՍԻՐՈ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.— ՔՈՒԽՊՐՅՈՒՆՆԻ ԿԱՐՄԻՐ ՀԱՄՄԱԶԳԵՍՏՈՎ ԱՂՋԻԿՆԵՐԸ.— ՔՅՈՒՐՀԱՈՒՋ։

Սպասելով Մեսիայի Երուսաղեմ գալստյանը՝ Հրեաներուն արքայանիստ քաղաքը Ֆրանքֆուրթն է. Ռոշիլտները հոնկե ճառագայթեցին Փարիզ, Վիեննա, Լոնտոն, Իսրայելի մեծահարուստ զավակները հոն կբնակին միշտ։ Վիսպատեն, որ Ֆրանքֆուրթի մեկ արվարձանը ըսել է, հրեական քաղաք մը ըլլալու պարտավորված է։

Հալածական և հալածող սա հրեա տարրը, ողորմելի և անգութ. ցնցոտիներ հագած կամ շափյուղայով, հակինթով, մարգրիտով բանված վերարկուներու մեջ, հակասական և սակայն ըմբռնելի ճակատագիր մեծ ցեղի մը, որ պզտիկ ազգ մը ըլլալու թույլտվությունը կխնդրե... մեզի նման։

Այս ամենը կնշանակե որ Վիսպատենը լեցուն է այս պահուս աշխարհիս յոթը ծայրեն փրթած եկած Հրեաներով, Միացյալ Նահանգներեն, ինչպես Ռումանիայեն։ Ածիլված պեխ և երես, ամառվան կարճ veston, լայնեզր փանամա, կամ երկայն ալեխառն մորուքը կուրծքին ծեծելով, սև redingote-ը մինչև ոտքն հասած և քիչ մը յուղոտած երկայն գլխարկը գլուխը. դասական երկու ծայրի տիպարները։

Բայց ամենուն քով հավասարապես ցեղին քիթը՝ արծվի քիթ, լավ մը տեղավորված, նստած երեսին վրա և որ կամք ու տոկունություն կնշանակե ու ցեղին... եղունգները, որոնք բարեշրջության օրենքին համաձայն՝ պաշտպանողական հանգամանքը կորսնցնելով սկսած են հարձակողական դառնալ։ Կըմբռնեմ ուրեմն Սիոնականության ազդած ահը մեր թուրք հայրենակիցներուն վրա և հառաջ բերած զգուշության կարիքը Պաղեստինի հրեա բնակչության դեմ։

Նախ մեկ երկու հատ, ցանցառ թիվով մտան հոն, երթալով՝ թիվը ավելցավ, առանց սակայն ուշադրություն հրավիրելու, երբ որ, իրոք, կատարյալ արշավանք մըն էր։

Եվ օրին մեկը ստվար, հոծ գաղթականություն մը արդեն տեղավորված գտնվեցավ հոն. Ոդիսևսի ձին և Հելլեններու մուտքն էր այս Տրովադայեն ներս, թեև ոևիցե գեղեցիկ Հեղինե չէր գտնվեր հոն, եթե վտարանդի ազգի մը աչքին՝ հայրենի հողը Հեղինեի մը չափ հրապուրիչ չէ։

***

Այս կերպ խորհրդածություններով կշենցնեմ պտույտի ժամերս, խորհրդածություններ որոնք բարեկամներս են, հավատարիմ բարեկամներ, խոսակիցներս են, համբերությամբ ինձի ունկնդրող խոսակիցներ, առանձնությանս մեջ։

Ամեն մեկ քայլիս՝ հինավուրց շագանակենիներու շուքին մեջ պահվրտած վիլլաներ երեսին կցուցնեն։ Ճերմակ պիտակներու վրա անունին գրված է. Առնիա, Մերսեդես, Մաթիլտ... մեծ մասով կանացի անուններ։ Այս պզտիկ ապարանքներուն տերերը իրենց կյանքեն սիրո դրվագ մը հավերժացնել ուզած են այս կերպով։ Կհիշեմ որ ատենով հայ վաճառական մըն ալ Անգլիայեն ապսպրած ամերիքանի ծրարներուն վրա իր սիրած մեկ աղջկանը պատկերը փակցնել տված էր. սիրո և վաճառականության գիրկընդխառնումին պես բան մը, այնպես չէ՞։

Վիլլա Մաթիլտին դուռն առջև կեցած ինքզինքս. այս անունը մեկեն երեսուն տարի ետ կտանի կյանքիս մեջ. ի՞նչ ասանում անհան անջրպետի մը վրայեն։ Ո՛վ իմ պատանությանս արևը որ պահ մը, բոլոր հիմար երազներս, հորիզոնին վրա սահող փախստական ամպերուն պես, գորովանքովդ ոսկեզօծեցիր։ Ի՞նչ տվի քեզի ատոր փոխարեն. սա ապարանքներու տերերուն ըրածն անգամ չըրի. սիրուն անունդ չի հիշեցի չնչին վեպին մեջ ուրտեղ՝ մեր միանալուն ուրախությունեն ավելի, բաժնվելունս կսկիծը պատմեցի։ Այն անուշ կսկիծը որ հիմա, անակնկալ վերհուշումին առջև, արեւոած մարդուն տխուր վայրկյանները կքաղցրացնե նորեն, ո՛վ Արմենիսա։

Առտուն՝ գեռ նեռապերկի անտառը իր ցողաթուրմ շուքին մեջ պառկեր է. պառկեր է գլուխը լեռան սարին, ոտքերը մինչև վարի հովիտները երկնցնելով, երևակայեցեք Ալեմտաղիի անտառեն ծառերը ավելի երիտասարդ, ավելի կարգապահ շարքերով։

Դեպի լեռը տանող արահետեն գացի մինչև ռուսական մատուռը, նրբամարմին շենքը՝ համակ բյուզանդական ճարտարապետություն. լեռան կողին վրա, անտառին մեկ բացվածքեն մեծ ու պզտիկ աշտարակներուն խոյանքովը վեր կբարձրանա անիկա. ոսկեզօծ գմբեթներուն շլացուցիչ դեղինը շուրջի կանանչության հետ գույներու էն շքեղ միավորությունն է անտարակույս։

Ներսը, ձախ կողմը գերեզմանի մը վրա, երիտասարդ ու գեղանի կին մը իր բոլոր հասակովը երկնցած է մարմարին անշարժությանը մեջ. երեսին վրա չեմ գիտեր ի՞նչ վեհաշուք խաղաղություն մը տարածվեր է։ Նասաուի վաղամեռիկ դքսուհին է ան որ միանգամայն ռուս մեծ-դքսուհի մըն էր։ Ամուսինը անոր հիշատակին կանգնած է այս մատուռը։

Եվ ահավասիկ պատին վրա, գերեզմանին քովիկը, բաց կապույտ մարմարե մեռայյոն մը որ այս հոյակապ շիրիմը կերտող արվեստագետին Հոֆկարթիրնի դեմքը կանմահացնե։ Արձան և արձանագործ, արարած և արարիչ միևնույն հավերժությամբ միացած իրարու։

***

Քոխպրյունեն եռացող ջուրի ակին վրա շինված տաղավարն է պզտիկ պարտեզով մը շուրջը։

Ուխտագնացության պես ամեն առտու այս աղբյուրը կուգան հիվանդները ձեռքերնին մեյմեկ պարապ գավաթ բռնած։ Կարմիր քիթերու, ուռած այտերու, թուլցած երեսներու ցուցահանդեսն է, որ Բարեկենդանի օրերուն Պոն Մարշե կամ Պազար ալմանի ճամբեյաններուն մեջ շարված անհեթեթ գլուխները քիչ մը կհիշեցնե։

Աղբյուրի առջև կարմիր պասմայե շրջազգեստներ հագած երիտասարդ աղջիկներ կսպասավորեն. դեղին մազերով, վարդագույն երեսներով մատուակներ՝ թոչունները, սաֆաները զորս մեր տղայության օրերուն այնքան կսիրեինք։

Ծպտուն, շնորհալի, լեցուն գավաթը երկնցնելով քեզի և անուշ ձայնով մը որ արտասանությամբ ալ ճոխողումի կնմանի.

— Պիթե շե՞ն։

Անդին Kurhaus-ն է, Դարմանումի պալատը, անհրաժեշտ քազինոն որ ամեն ջրաբուժիկ քաղաքի (ville d'eau) մեջ կգտնվի, բայց հոս ճըշմարիտ պալատի մը համեմատությունները ունի։ Ստորին գբոսանքի և թղթախաղի սովորական կայանը չէ, այլ մտային հանգիստի և հոգեկան դարմանումի վայր։ Իր ճարտարապետության ոճը, արտաքինը և ներքինը կհամապատասխանե այս կոչումին։

Դուրսեն՝ սյունազարդ ճակատ մը ժուժկալ գիծերով, որ ամեն սեթևեթե խույս կուտա. ներսը ընդհակառակը պերճանքն է, գունավոր մարմարն է, ոսկի դրվագներն են որ կտիրեն ամեն կողմ։ Հոլը, ընթերցարանը, conférance-ի սրահը։

Հիանալին երաժշտության մեծ սրահն է բարձր գմբեթին կորնթիքովը, որ պատի մութ գույներուն և տիրող կես ստվերին մեջ կկորսվի. երկյուղածության պես բան մը կզգաս այստեղ, սրահն մը ավելի տաճար մըն է կառուցված այն աստուծուն զոր ամեն ոք առանց վեճի կպաշտե հոս՝ Երաժշտության։

Եվ իրոք ամեն կողմ նվագահանդես է. պանդոկներու մեջ, պարտեզներու մեջ, այնքան որ դուրսս ալ ներսս ալ երաժշտություն կտրած է հիմա և պզտիկ հպումով մը կենդանի ֆոնոկրաֆի մը պես Վակներեն, Շուպերթեն, Մոցարթեն կտորներ պիտի երգեմ։

Վիսպատեն, 27 օգոստ., 1911

ՍԵՏԱՆ.— ՎԻՍՊԱՏԵՆԻ ԾՐԶԱԿԱՅՔԸ՝ ՔՅՈՆԻԿԵԹԱՅՆ.— ՀԻԹԻԹ ՄԸ ՎԻՍՊԱՏԵՆԻ ՄԵՋ.— ՇՎԱԼՊԱԽ՝ ԶԱՎԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ։

Այսօր, 2 Սեպտեմբերը Սետանի հաղթության տարեդարձն է, ֆրանսական մեծ սուգը, գերմանական մեծ տոնն է։

Վիսպատեն դրոշազարդված, հագված, շքված, ամենքը ոտքի վրա. verein-ները իրենց դրոշակներովը, նվագախումբերովը կանցնին մեծ պողոտաներեն կարգով, սև երկայն գլխարկով, սև redingote-ով, հանդիսավոր. մին՝ ծերունիներու ջոկատ մըն էր, 1870-ի զինվորներ բոլորը, հիշատակներով բեռնավորված։

Parc-ին մեջ Վիլհելմ Ա-ի արձանին առջև, ուհլաններու նվագախումբը մարտական երգեր կհնչեցնե։

Քյուրհաուզի լիճին մեջ լաստերու վրա թատերաբեմ մը շինված է, դափնիներով զարդարված. Պիզմարքի կիսարձանը հոն է. գիշերը ballet մը խաղացին այնտեղ արքայական թատրոնին դերասանուհիները։

Չեմ գիտեր թե որքան վեհանձնություն կա այս ուրախություններուն մեջ. արդար ըլլալու համար, պետք է խոստովանիլ սակայն որ օրինակը Ֆրանսան, ամեն փափկություններու երկիրը, ինքը տվավ ատենով։ Փարիզն էր որ ամենեն առաջ իր պուլվառները, ավնյուները, կամուրջները Գերմանացիներու վրա տարված հաղթություններու անունովը մկրտեց. Ավնյու Վակռամ, Ավնյու տ'Էյլս, Ավսթերլիցի կամուրջ, ո՞րը համրեմ։

Մարոքյան վեճին առթիվ, որ հանկարծ կրնա պատերազմի մը հանգիլ, այսօրվան տարեդարձը բացառիկ կարևորություն մը կստանա ահավասիկ։

Ի՞նչ պիտի վճռե բախտը, եթե բախումը տեղի ունենա, երբ որ հին վրեժներու կոչում ըլլվի ու այս երկու հզոր պետությունները իրարու վրա նետվին։ Գերմանիա, կովի պատրաստության մեջ, անողոքական կթվի ինծի. ամեն ոք, ամեն ինչ զինվորական կարգապահություն է հոս, իբրև թե պատերազմի մը նախօրյակին ըլլայինք, օտարականներն անգամ կհետևին ասոր։ Եթե զիս տեսնեք Վիսպատենի փողոցներուն մեջ, չի պիտի ճանչնաք անտարակույս. քալվածքս մարտական կանոնավորություն մը ունի, պտույտե ավելի մարզանքի հանգամանք մը. մեկ՝ երկու, մեկ՝ երկու... Անգիտակից զինվո՞ր. ո՞ւր կերթամ արդյոք։

Եվ սակայն, այնքան զորավոր է մեր Արևելքցիի մեղկությունը, որ Պոլիս վերադարձիս՝ առջի թուլամորթ էակը պիտի ըլլամ, տնտնացող քան թե քալող ճամփուն վրա։

Ամբողջ դաստիարակություն մը պետք է մեզի, Հայերուս, եվրոպական վարքն ու բարքը հիմնապես, և ոչ թե դիպվածով կամ առժամանակյա կերպով ստանալու համար։ Տարիներ Եվրոպա ապրած հայրենակիցներ գիտեմ որ այնտեղի ապրելու կանոնները կապիկի նմանությամբ միայն նմանցնելու ջանացեր էին հոն և Թուրքիա դառնալուն հաջորդ օրը այդ ամենը մոռցան. մայրս իրավունք ուներ, երբոր կըսեր մեզի.

— Սև աչքը մորուց պետք է, ծարիրածը թեզ կավրի։

* * *

Կուզե՞ք որ ամբողջ մեկ օրս պատմեմ ձեզի։

Արշալույսին պտույտիս դեպի արևելք ուղղվեցա, մեր վրդոված արևելքը. հոս ալ մարգագետիններ՝ դարավոր ծառերով հովանավորված, դարձյալ մարգագետիններ, միշտ մարգագետիններ, որոնց վրա ակնարկը կհանգչի, ու այսպես ժամ մը ամբողջ քալեցի։ Վերեն եկող առու մը իր թափանցիկ ջուրերուն անշարժ թվող սահումովը կդիմավորեր զիս շարունակ, կընկերանար ինծի, տեղ-տեղ արվեստաշեն ապաոաժներու կողքին վրա կփշրվեր, կխոխոջեր առտվան լռությանը մեջ։ Վիսպատեն դեռ քունի մեջ է։ Թեթև հով մը. դեմեն արեգակը կբարձրանար, մերթ լույսե հյուսված վարագույր մը, մերթ լուսանյութ գիծեր, մերթ լույսի անձրև մը կիջեցներ վերեն այս կանաչության վրա։ Ծառերու ոստերուն տերևներուն թույլվության շարժումին համեմատ, գետնի թավիշին վրա պատկերներ կգծագրեր, կավրեր, նորեն կգծեր։ Փախվըտուք խաղալու պես կզվարճանար, կատակներ կըներ։ Դրախտի մը գոյության վրա տարակուսողները թող հոս գան։ Թող տեսնեն թե ի՞նչեր կարող է ընել իմաստուն կառավարություն մը։

Ո՞րչափ խորհրդածության նյութեր շուրջս։

Եվրոպայի մեջ որքան դեպի հյուսիս երթաս՝ այնքան դեպի կատարելություն երթալդ կզգաս. Ամերիկայի համար նույնը կրնա ըսվիլ. մեկ երկրի մը, Գերմանիո կամ Ֆրանսայի մեջ իսկ՝ այս դիտողությունը կարդարանա։

Կեսօրեն ետքը օթոմոպիլով պտույտ մը մինչև Քեոնիկշթայն, որ հոյակապ պանդոկ մը ամայի բլուրի մը վրա քաղաքեն ու գյուղեն փախչողներուն ապաստան կընծայե։ Վերադարձ գիշերը, անսահման դաշտերու ու սարահարթերու վրա, երբեմն գլուխնին տնկած անտառներուն մեջեն անդուլ արշավ մը։ Տեղ-տեղ գյուղի մը հեռվեն ցոլացող լույսերը կտեսնվին, որոնց օթոն ժամը ութսուն քիլոմեթրի արագությամբը՝ վիշապի մը պես սուրալով կմոտենա կհասնի ու առաջ կխոյանա նորեն ամայի և նուրբ ճամփաներուն վրա։

Լեռան մը սարին վրա հին գղյակ մը խավարին մեջ կգծագրվի ու կանհայտանա և ուր՝ կարծես ձեռքը սուրին ուսած ասպետ մը՝ դարերն ի վեր անքուն կհսկե ջարունակ։

Սթկֆրիտներու, Իզենպեներու, Վալքիյրիներուն հայրենիքն է սա աչքի առջև պառկող անմոռուն հողը։ Գերման հոգին թախիծով լեցուն հոգի մը, կթափանցեմ այս վայրկյանիս, մտածող, զգացող և պատմող հոգի, որ երաժշտության մեջ՝ Պեթհովենով, Վակներով, փիլիսոփայության մեջ Քանդով, Նիցշեով, գրականության մեջ՝ Շիլլեռով, Կյոթեով կարտահայտվի։

***

— Բարև, պ. Զոհրապ։

Ետիս կդառնամ ապշած, ո՞վ կխոսի իմ լեզուս այս պանդոկին մեջ. ո՞վ կճանչնա զիս հոս. դեմս՝ ազգակից մը, Հայ մը։ Ներեցեք, հիթիթ մը պիտի ըսեի։

Այո՛, հորմեհետե գիտունները հաստատեցին որ «Հայ» անունը «Հիթիթ» անունին աղավաղումն է, կարծեմ թե տրամաբանական է հայտարարելը, թե Հայերը դադրած են գոյություն ունենալե, Հիթիթները գրված անունց տեղը։

Եվ մեր նախահայրերը ի՞նչ եղան արդյոք, այս հետադարձ ազգափոխության մեջ, Հայկը, Արամը, ո՞ր անողոք գիտնականը փճացուց զանոնք իմ սրտիս հավետ պաշտելի այս անունները։

Զիս բարևողը երիտասարդ բժիշկ մըն է, Պերլինի մեջ ուսած, Տոքթ. Տեովլեթյան։ Հայրը՝ բժիշկ, ինքն ալ բժիշկ. մեկ եղբայրը Լիեժի մեջ հանքային երկրաչափ ըլլալու կպատրաստվի։ Առանց ճանչնալու կհամակրիմ այս ընտանիքին, որ գիտության կհատկացնե իր զավակները։ Իցի՞վ թե այս գիտությունը արհեստական մակարդակին վրա չի կենար մինչև վերջը. երբեմն ավելի վեր, մինչև ճշմարիտ գիտնականի մը բարձրությանը հասներ։ Եվրոպական համալսարաններուն մեջ ուսուցիչ ըլլալու և ատկե ալ անդին անցնելու փափագը մեր երիտասարդներուն փառասիրությունը դառնար։

Տոքթորին հետ Շվալպախ գացինք, ան ալ ջրաբուժիկ կայան մըն է իր ազբյուրովը որ կազդային ջուր մը կուտա, Kurhaus-ովը որ Վիսպատենին պես փարթամ կառուցում մը չէ։

Շվալպախ մշտադարար անդաստաններ ունի. հոն շուքին՝ բազմոցի պես երկնցող լաթե աթոռներուն վրա, նուրբ ճերմակներ հագած երիտասարդ կիներ կպառկին ժամերով— որը՝ գիրք մը ձեռքը. որը՝ ձեռագործի մը զբաղած. որը՝ երազի մը մեջ մոլորուն, ամենքը ցուցնելով, կամա կամ ակամա ցուցմունք, իրենց փոքրիկ ուրքերը։

Պատկերը զմայլելի է։

Շվալպախի ջուրը համբավ մը ունի, զոր ցած ձայնով միայն պիտի ըսեմ, որպեսզի ամենքը չիմանան ու բարոյատեր հոգիներ չվրդովվին. այս ջուրը ամուլ կիներուն զավակ ունենալու փափագները կիրագործե։ Ու ատոր համար է որ գունդ-գունդ կվազեն կուգան աղվոր կիները, երիտասարդ կիներ, որոնք զավկի տեր ըլլալ կուզեն անպատճառ, երբոր զավկի տեր եղողները ճիշտ ատոր համար կգանգատին շարունակ։

Այն պատճառով որ կիները կդիմեն հոս, այրերը իրենց բացակայությամբը կփայլին և տեսակ մը հարեմի գույն և մասնավոր ձգողություն մը կուտան այս կայանին։

Զարախոսները, որ ինչպես այլուր՝ հոս ալ պակաս չեն, կպնդեն որ այստեղի կայտառ պատանիները բոլորովին անմատն չեն այս իրձերուն պսակմանը մեջ։

Վիսպատեն, 4 սեպտ. 1911

ԱՅԳԵԿՈՒԹՔԸ ՎԻՍՊԱՏԵՆԻ ՄԵՋ.— ՔԻՉ ՄԸ ԸՆԿԵՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.— ԵՆՆԻ ԵՎ ԿԵՐԹՐՈՒՏ.— ՄՆԱՑ ԲԱՐՈՎ, ՎԻՍՊԱՏԵՆ։

Երբոր անդին՝ Մարոքի վեճը հետզհետե կդառնանա, կքացխի, ասդին՝ խաղողները կհասուննան, կանուշնան, գինիի կփոխվին։ Մին՝ փրցնելու չի գար. մյուսը՝ անհրաժեշտ պետք է փրցնել։ Եվ տարօրի-

նակ զուգադիպություն, ասոնցմով է որ այս ժամուս—Գերմանիա և Ֆրանսա—ամեն բանե ավելի կզբաղին։

Նախ սա նախապաշարումը վերցնենք որ Գերմանիան՝ գարեջուրի, Ֆրանսան գինիի երկիր կհամարվի։ Այսօր Գերմանիա Ֆրանսայի չափ գինիի երկիր է. բոլոր այն տեղվանքը, զոր Ռենը կթրջե իր վեհաձեմ ընթացքին մեջ, բոլոր իր ափերուն վրա այգիներու անհատնում շարքերը կերկարին ու կերկարին։

Ռենի գինիները պոռտոներու չափ հռչակ ունին։ Ասմանսհաուզեն, Հոխայմեռ, գինի գործածողները գիտեն այս անունները։ Նույնիսկ շամփանյային համար մրցումը սաստիկ է. այս տեղեն կես ժամ հեռու է Հենքելի գործարանը, գերմանական առաջին marque-երեն մեկը, բոլորովին արդիկ (moderne) հաստատություն մը, տարին երեք ու կես միլիոն շիշի շամփանիա արտադրող երեսուն մեթր խորութենե մը և որ ժյուլ Վեռնի երևակայության արժանի ստորերկրյա պալատ մըն է։

Վերահաս աշունին հետ այգեկութքը սկսած է Ֆրանսայի մեջ. գիտեի որ գյուղական հանդեսներով կտոնեն այդ օրը, Գերմանիո մեջ միևնույն ուրախությամբ կողջունվի անիկա։

Այս գիշեր Քյուրհաուզ ցնծության մեջ է. այս պատճառով լուսավառություն և պարահանդես կա. conférance-ներու սրահը... գինետունի վերածված է, նկարեն գինետուն հարկավ։

1911-ի այգեկութքին այլաբանական յուղանկար պատկերը, մուտքին դեմի պատը գրեթե կիսով մը գրաված է. այս պատկերին երկու դին հսկա տակառներ կբարձրանան որոնց ճակատի տախտակները ամենանուրբ քանդակներով քանդակված են. ձեղունեն շուրջանակի թուրթ գույնզգույն կանթեղներե ձևացած ողկույզներ կախված են, ներսեն ելեկտրական լույսերով վառված. սյուները բոլոր դափնիներով ժապավինված, պարուրված են։ Մեջտեղը սեղանի տեղ՝ պզտիկ տակառներ, որոնց շուրջը կբոլորվին գինի խմողները։ Սպասավորները մեր գիտցած սև habit-ով և ճերմակ բռավաթով մարդիկը չեն, այլ գուլպանին մինչև ծունկերնին, լաղերուն հագածին նման ամփոփ շալվարով մը և կարմիր բաճկոնակ մը կոնակին, հին ժամանակներու տարազով։ Պարահանդես եկող կիները հոս են, բոլոր իրենց հոլանի կուրծքերուն փաղփողումը ավելցնելով այս լույսերուն վրա։

Հաջողած երեկույթ մըն է. ես ալ կես լեզու գերմաներենովս խոսքի կխառնվիմ։

— Թռատպեն Ֆի՞սթ։

— Յա, յա՛։

***

Մարոքի վեճը միայն երկու պետություններու վեճը չէ, այլ երկու որոշ դասակարգերու պայքարն է. Վայելողներու և Աշխատողներու մարտընչումն է, երբեմն արյունոտ դրվագներով ընդհատված, նոր եռանդով, նոր զոհաբերությամբ հառաջ տարված պայքար։

Մարոքի համար Գերմանիո և Ֆրանսայի մեջ պատերազմը ի դարուն մեծագույն եղեռնը պիտի ըլլա և մինչդեռ դրամի մարդիկ անհագ չարաշահություններու համար արյուն թափելու հարկը կզգացնեն, աշխատանքի մարդիկ եղբայրասպան մարտին մեջ կնետվին, կարգիլեն։ Ի՜նչ վճռական ապացույց հաստատող որ ընկերվարականները ուրիշին ինչքը գրավելու համար պատրաստված արյունարբու մարդիքը չեն, այլ այդ կարգի մարդոց դեմ ելլողները իրենք են. Ընկերության, Մարդկության գերագույն շահերը և էն բարձր վախճանները պաշտպանողները իրենք են։ Գերմանիո մեկ ծայրեն մյուսը կազմված ցույցերը պատմական նշանակություն մը ունին. անոնք դիվանագետներուն և սեղանավորներուն կազմակերպած միջազգային դավադրությանց ջախջախումը կնշանակեն։

Ի՜նչ բարեշրջություն մարդկային դատաստաններու և ըմբռնումներու. Նափոլեոնյան դյուցազներգությունը, արյունի մուխի մեջեն, ծվիկ-ծվիկ դրոշակներու պլլված հաղթություններու ապշեցուցիչ շարքը՝ դար մը ետք ահավասիկ, իր պատիր և շլացուցիչ դեմքը կկորսնցնե. և Ֆրանսայի պես մեծ ազգի մը ճակատագրին վրա խաղցված ահավոր և ոճրապարտ բախտախաղի մը պես կերևա մեր աչքին։

Այսօր ամենեն կույրերն անգամ պետք է ճանչնան ընկերվարականներու մատուցած մեծ ծառայությունը խաղաղության դատին, որ քաղաքակրթության դատն է. Բանակին դեմ Բանակ. մին՝ արյուն թափելու և մյուսը՝ թող չի տալու համար։

Տառապանքներով լեցուն դարին հավերժական պատիվը ըլլա ասիկա։

***

Ռոպենսոն այնչափ չուրախացավ իր կղզիին մեջ Ուրբաթի հանդիպելուն, որքան ես Ենին և Կերթրուտը դիպլածով ճանչնալուս համար. Քյուրհաուզի ճանչվորություն։

Վարդով և հասմիկով շաղված մարմիններ, ինչպես կըսե տեղ մը Արման Սիլվեսթր. ցորենագույն մազերով որոնք ճերմակի կզարնեն. ո՛չ այն մսահեղց և կայտառ աղջիկները որոնք գերման երիտասարդուհվույն տիպարը կկազմեն. նրբացողուն ծաղիկներ երկուքն ալ։

Երկուքն ալ ֆրանսերեն գիտեին, կրկնապես երկինքեն եկած խոսակիցներ եղան ինծի համար։ Գերման պուրժուազիի զավակ՝ մինակնին Վիսպատեն եկեր էին մոտիկ քաղքե մը։ Խիստ զարգացած, ինքնավստահ, խրոխտ մանկամարդուհիներ, որոնք միշտ քաջ երաժիշտ են և օթոմոպիլով պտըտելու սիրահար։

Եթե չեմ սխալիր, գերման աղջիկը, եթե ոչ ամերիկացի աղջկան չափ, գոնե անոր մոտ ազատություններ կվայելե և ոչինչ չունի նախանձելու ֆրանսուհվույն պչրասիրությանը վրա։ Զվարճությունները չի մերժեր հանուն կեղծ պարկեշտության մը. պատշաճությունները հարգելու պայմանով՝ երկդիմի կատակներեն և պզտիկ հպումներեն կախորժի։ Նույն իսկ գողցված համբույրներու համար թողությունը չի զլանար։

Կերգե, դաշնակ կզարնե, կպարե... կխմե ալ։ Բայց երբ ամուսնանա, կատարյալ տանտիկին մը կըլլա իսկույն։

Երկու քույրերեն մեծը՝ լուրջ, պզտիկը՝ շարաճճի է քիչ մը. Կերթրուտ տարի մը ամբողջ Կարմիր Խաչի Ընկերության մեջ պիտի ծառայե իր դպրոցին ավարտական քննությունները տալե ետքը։ Ճիշտ ինչպես մանչերը զինվորական պարտականությունին կկատարեն. կհիանամ իր վրա։

Գերմանական կրթության համեմատ, աղջիկ մը լավ տանտիկին մը չի կրնար ըլլալ, եթե կարկանդակ պատրաստել չի գիտեր։ Իմ նոր բարեկամուհիներս, որոնք կատարելության գլուխգործոցներ են, հոս ալ իրենց գերազանցությունը ցուցուցին. օր մը դիպվածով անուշեղենի խոսք մը դարձավ, և այս առտու աչքս բանալուս՝ սիրուն տոմսակով մը և թուղթե տուփի մը մեջ մերձակա քաղաքե մը եկած կարկանդակ մը զիս ուրախացուց. այս եղավ իրենց հրաժեշտի նվերը։ Իրարմե զատվեցանք ինչպես որ իրարու մոտեցեր էինք, առանց ցնցումի։

***

Այսօր կմեկնիմ հոսկե, ուղղակի դեպի Անգլիա։ Ի՞նչ կտանիմ հետս ապարդյուն դարմանումե մը ետքը. նախ սա ճշմարտությունը զոր երբեք մտքե հեռացնելու չէի, դիպվածական հիվանդությունները միայն բուժելի են. ոչ անոնք որոնք գոյության փճացումին հետևանքներն են։

Երիտասարդության ավյունեն, չափահասության կորովեն ետքը՝ ծերության խոնջենքը. այս է անհեղլի կանոնը. Պեշիկթաշլյան միտքս կիյնա։

Չի այս են կյանք, հետ լուսո, երիթամած գա գիշեր.

Ուրեմն դեպի գիշերը կքալեմ, իզուր սպասելով, գոնե հոգիիս համար, պզտիկ առավոտ մը։

Կանուխեն ամեն պատրաստություններս տեսա. սնտուկներս գոցեցի և կայարան ղրկեցի. շոգեկառքին տոմսակը գրպանս է և կես ժամեն Վիսպատենը կթողում. Վիսպատենը շատ սիրեցի, ատեցի, օրհնեցի և անիծեցի։ Վերջին անգամ մը դեմի Parc-են անցա, Նյուրնպերկի ճամփան բռնեցի։ Այս վայրկյանիս՝ անհավատարիմ բայց միշտ շքնաղ կնկան մը պես ինծի կնայի անիկա և այս Սեպտեմբերի արևով վերջին պշրանք մը կդնե իր աղվորություններուն մեջ. երկինքը իր թովիչ կապույտը, գետնի կանանչները իրենց մեղմ գգվանքը, ու չորս դիս ծառերը իրենց զով հովանին կուտան ինծի. ստուգապես մեյ մըն ալ չպիտի տեսնեմ այս տեղվանքը. վերջնական ու անդարձ բաժանումն է այս։

Աչքիս անկյունը ջերմություն մը կզգամ, արցունքի կաթիլ մը կամաց-կամաց վար կսահի այտես. կամչնամ, շուրջս կնայիմ գողի մը պես. ոչ ոք. այն ատեն համարձակ, բարձր ձայնով, հեկեկալով կուլամ։

Վազելով պանդոկ դարձա. օթո մը և կայարան կփութամ. պանդոկին ծառաները դուռն առջև ողջերթ կմաղթեն ինծի. խանդաղատանքի գանձեր ունիմ սրտիս մեջ այս մարդոց համար. ճամփուն բոլոր երկարության վրա Եննիներ, Կերթրուտներ կանցնին. կարծես թե համբույրներ կղրկեն ինծի։ Վակոնիս անկյունն հազիվ թե տեղավորված՝ լոֆոմոթիվը ուժով և երկար շունչ մը կառնե. ամբողջ կառախումբը կդղրդի, կշարժի ու տակավ Վիսպատեն հեռացավ, պզտիկցավ, և անհետացավ աչքերես։

Վիսպատեն, 10 սեպտ. 1911

ԲԱՐՁՐ ՍԱՎՈՒԱՅԻ ՄԵՋ.— ՎԵ՛Ր, ԱՎԵԼԻ ՎԵՐ.— 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ ՍՈՒՐԲԵՐԸ ԵՎ ՆՈՐ ՕՐԱՑՈՒՅՑ ՄԸ.— ԱԼԲՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ՄԻՆՉԵՎ ՍԱՌՈՒՅՑԵ ԾՈՎԸ.— ՇԵՐՄԱԿ ՍՈՒԳ.— ՄԻՇՏ ՎԵՐԵՆ ՆԱՅԵԼԵՔ։

Ա

Նորեն աստանդական կյանքս սկսա. Փալաս օթելներով և Վակոնլիներով ընդելուզված ուղևորի կյանքը, անվերջ հոսուհոնությունը Եվրոպայի մեկ ծայրին մյուսը. աննպատակ, սկեպտիկ, բաժանումներու տրտմությամբը վարագուրված։

Հիմա Սեն Ժեռվե Լեպեն եմ. հարավային Ֆրանսայի մեկ անկյունը. ի՞նչ ընելու եկած եմ այս լեռներուն մեջ. բժշկական վերջին նորության համեմատ cure d'altitude*-ով, բարձր տեղվանքներու օդով կազդուրվելու, մտքի ու սրտի մաշումներուն տեղը լեցնելու համար. անհնարին և ծիծաղելի ակնկալություն։*

Սալցպուրկեն դեպի հարավ, կետրոնական Եվրոպայի դաշտերուն անսահման տարածությանը քով, կանանչ թավիշի այդ անհուն սփռված-քին դեմ, հեռուն հորիզոնին վրա վիթխարի և անմոռուչ զանգված մը կկանգնի, երկնքին վճիտ կապույտին մեջ թաթխելով իր ձյունապսակ սարերուն ելևէջը, տեղ-տեղ ամպե շղարշի մը մեջ պարուրելով զայն։

Այդ ծուռումուռ գիծը՝ մեծ բացված կզակի մը, առասպելական տիրլոտոքյուսի մը՝ վարի ատամնաշարը, անվերջ կերկարի երկինքը խածնելով շարունակ։ Ալբյան լեռնապարանին առաջին հանգույցները կհայտնվին ահա։ Թիրոլը, բարձր Սավուան, Շվեցիան է ան, էտըլվայսներու աշխարհը։

Տափակություններու սիրահարները թող հոս չգան. տարօրինակ երկիր ուր քալել չի կա, մագլցիլ կա. ուր կանգ առնել չկա, բարձրանալ կամ իյնալ կա։ Մեր դարուն նշանաբանն ու ճակատագիրը. վե՛ր, ավելի վե՛ր. գերագույն ճիգը ուրկե քայլ մը անդին մահը կսպասե։ Այս է 20-րդ դարուն կյանքը՝ մեծ վայելքներու հետ մեծ վտանգները. մեծ անձնասիրություններու քով մեծ անձնազոհությունները. վերջապես մեծ մեղքերու դեմ մեծ թողությունները։ Դյուցազնության դար, որ մահը արհամարհելու մեջ իրեն հավասարող չի պիտի ունենա։

Ոչ այն մահը որ մարդ պատերազմի դաշտին վրա կփնտրե իր նմանները սպանելով, այլ այն որ իր նմաններուն օգտին կնվիրվի։

Տեսեք երկրախույզները, լեռնախույզները, բևեռախույզները. նոր աշխարհ բացողները մեր առջևը, շատերը իրենց առաքելությենեն չեն դարձած, Քրիստոսի առաքյալներեն— ապահովապես ավելի սուրբ անձնազոհությամբ մը։

Տեսե՛ք. ծովերուն վրա և ծովերուն տակը պտրտող և հանկարծ անհետացող նավաստիները, օդերուն մեջ ճախրող և հանկարծ գահավիժող կտրիճները, որոնք անդարձ գացին, հողին տիրապետության վրա ավելցնելով ծովին և օդին տիրապետությունը։ Մեր դարուն սուրբերն են անոնք. իրենց մահվան տարեդարձները մարդկության մեծ տոներն են և օրացույցը որ զանոնք կարձանագրե, կկոչվի Քաղաքակրթության Պատմությունը 20-րդ դարուն մեջ։

Բ

Ես ալ Ալբերուն վերելքը կատարեցի. ինչո՞ւ կծիծաղիք. ի՞նչ կուզեք որ ընեմ այս բարձր Սավուային մեջ։ Դժնդակ և անհնարին վերելքը կատարեցի հաջողությամբ. անդունդներու եզերքներեն կախված՝ հասա մինչև անմատչելի բարձրությունները և ան Սառույցե Ծովը, որ երկու դիեն կանգնող ախոյան լեռներու ծոցը իր կապույտի զարնող ճերմակ և հոլանի միսովը կլեցնե. անհամար ջիղերով, երակներով, գծված գծագրված մարմին որ ալբասերներու գարշապարներուն դրոշմը կկրե ամեն տեղ։

Իմ վերելքիս համար անտարակույս ոչ ոք մտքեն կանցնե արձան մը կանգնել ինծի, ինչպես կանգնած են Շամոնիի մեջ արձանը անոր որ առաջին անգամ Մոն Պլանի կատար բարձրացավ։

Ես իմ վերելքս կատարեցի հանգիստի և ապահովության բոլոր բաղձացված պայմաններուն մեջ, funiculaire*-ին կարմիր թավիշե նստարանին վրա լավ մը տեղավորված, վայելելով հիացած աչքիս առջև հետզհետե պարզվող լայն կանանչ հովիտը որ Սեն Ժերվեեն մինչև Շամոնի կերկննա, հսկա և անշարժ երկու դիեն բարձրացող լեռներովը, նոճիի անտառներուն դողդղացող շուքը ձգելով անոր վրա։*

Ան, որ առաջին անգամ սրածայր երկաթով ցուպը ձեռքը՝ սայթաքելով ամեն քայլափոխին, վտանգելով իր կյանքը ամեն մեկ շարժումին, մինակը սլացավ այդ ապալերկ կողերեն վեր, ան իմ ունեցած միջոցներես բոլորովին զուրկ էր. իր տաժանքին փառքը ոչ ոք իրմե կրնա կապտել։ Վախճանը՝ մեկ, Միջոցները տարբեր։

Վախճան և Միջոց, բնազանցությունը ասոնց վրա կվիճի մինչև հիմա։ Ոմանք Վախճանը՝ կդավանին ամեն ինչ, ուրիշներ Միջոցներուն առջև կվարանին. ես՝ այս վարանողներեն եմ. Վախճան և Միջոց անբաժանելի են իրարմե. մին բարձր, մյուսն ալ պետք է բարձր ըլլա. չէ՞ մի որ Միջոցն ալ Վախճան մըն է ինքնին։

Գ

Մինչև որ Ալբերուն վերելքը ածանցավ և ապահովվեցավ, ո՞րքան կյանքեր զոհվեցան։ Այս Սառույցե Ծովը, որուն վրա կանգնած ևս ահավասիկ սա մյուս հեղուկ ծովին պես, քանի՞ արկածախնդիր ուղևորներ կուլ տվավ։

Ի՞նչ բազմավեպ դյուցազներգություններ կրնան գրվիլ իրեն վրա։

Քանի կնայիմ անմեղունակ և ցուրտ երեսին, այնքան կզարհուրիմ անկե։ Դալարագեղ ու ստվերոտ գերեզմանոցը չէ, այլ սպիտակ և միապաղաղ Կայանը, Ճերմակ Սուգն է ան։

Pêcheur d'Islande-են էջ մը միտքս կիյնա, Պորթանիի մեջ գերեզմանատան մը նկարագրությունը. շիրիմներ, որոնց տակ մարմիններ չեն հանգչիր, վասնզի ծովերուն հատակը պառկած են, միայն համեստ փայտե խաչեր, որոնց վրա անուն մը և սա պարզ վերտառությունը՝

Սուլիի մեջը կորած

Սառույցե ծովն ալ այս պահուս, այդ կերպ անթիվ խաչերու անտառով մը ծածկված կթվի աչքիս։

Սառույցին մեջը Մահացած

Մահացած թե անմահացած, դուք պատասխանեցեք, ո՞վ իմ ընթերցողներս։

Այս բարձունքին՝ հիմա Շամոնին, իր կարմիր տանիքներովը երփներանգ ծաղկի փունջի մը կնմանի դալար խոտերուն մեջեն և լեռներու կողքին վրա՝ արևմուտքին բոցավառությանը մեջ՝ նոճիներուն անտառները իրենց ուղղաձիգ բուներուն անհատնում ու կանոնավոր շարքերը կտարածեն ասեղե տերևներով, վարագուրված շարքը երբեմն դեպի վեր, երբեմն դեպի վար կախված, կանանչ թելբեչե դրած հարսերու պես։

Հոս վերեն տեսարանը զմայլելի է, մինչդեռ քիչ մը առաջ, ստորոտեն՝ բան մը զանազանել կարելի չէր։ Ուրկե կհետևցնեմ թե Մարդոյ և Իրերուն վերեն նայելու է միշտ. նայիլ գիտնալու է. լա՜յն, ազա՜տ մաքուր նայվածքով, որպեսզի ամեն ինչ ընդգրկես անոր մեջ. ոչ թե անձուկ և հաշաղկոտ ակնարկով մը, որով պզտիկությունները ու տգեղությունները միայն կտեսնես միշտ. իսկ մեծություններն ու գեղեցկությունները՝ երբե՜ք։

Սեն Ժերվեյեպեն, 18 օգոստոս, 1912

ԷՔՍԼԵՊԵՆ.— ԼԱՄԱՌԹԻՆԻՆ ԼԻՃԸՆ ՎՐԱ.— ՈՒՐ ՍԱՌՈՒՅՑԻ ԽՇՏԱՆՆԵՐԸ ԿՀԱՆԳՉԻՆ.— ԱՆՄԱՀԱՆԱԼ ՈՒԶՈՂ ՄԸ ԵՎ ԱՆՄԱՀԱՑՈՂ ՄԸ.— ԽԱՂԱՐԱՆԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՁՈՐ ՇԱՏ ՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՐԻՆԱԿԵԼ ՊԻՏԻ ՊԱՏՉԵՆ.— ԹԱԳՈՒՀԻ ԵՎ ԹԱԳԱՎՈՐ ՄԸ ԿՁՆԱՆՉ ԾԱԾԿՎԱԾ ՍԵՂԱՆՆԵՐՈՒ ՔԱՐՎ։

Ա

Էքսլեպեն հոդացավե տառապողներու մեծ իջևանը, Սեն-Ժերվեի մոտիկ է. իր բաղնիքներուն բուժիչ համբավը ոչինչ կորսնցուցած է հոս ու հոն երևան ելլող կարգ մը նոր հանքային ջուրերու մրցումեն, դրամ շահելու մրցումներ բոլորն ալ։ Հիներու ու նորերու պայքարը միևնույն սաստկությամբ առաջ կմղվի հանքային բաղնիքներու, որքան գաղափարի աշխարհին մեջ, ո՛չ գուցե միևնույն հաջողությամբ։ Ինծի այնպես թվեցավ որ հակառակ իր անսաստ հեղափոխականի հռչակին, Ֆրանսան՝ երկիրներուն ամենեն պահպանողականն է... երբ որ խնդիրը դրամ շահելու վրա է։ Այս է պատճառը թերևս որ հիները, էքսլեպեն և Վիշի, պարապ տեղը կգրավեն միշտ ջրաբուժիկ հաստատության մեջ։

Առաջինը՝ իր հաջողությունը բնական գեղեցկությանը կպարտի ավելի քան թե ջուրերուն գերազանցությանը. գեղեցկություն, զոր տարիները, փոխանակ խաթարելու, ավելի կպանծացնեն հիշատակներու հրապույրը դնելով վրան։

Սավուայի բոլոր դյութիչ աղվորությունները լիաբուռն սփռված, լեցված են իր գիրկը, իր շուրջը, իր ոտքերուն տակը։

Ճիշտ իր քովիկն է Պուրժեի Լիճը. շափյուղե ձվաձև հայելին, զոր Լամառթին երգեց և որուն ձախ եզերքին ուղղաձիգ բարձրացող լեռները անմատչելի կդարձնեն այդ ափերը. դեպի արևելք՝ մեղմիվ մինչև հովիտը ծռող բլուրներուն հարուստ կանանչությունը։

Միայն քսան վայրկյան հեռու է Շամպեռին, որուն ուսուցչական վերջին համաժողովը իր ընկերվարական ձգտումներուն համար այնքան աղմուկ հանեց և այնքան հալածանքի ենթակա՝ արդի կարգը ու սարքը պահպանել ուզողներու կողմեն. հոն է Լե Շարմեթը, պզտիկ այգիի

մը և պարտեզի մը մեջտեղը, աղբյուրի մը մոտիկ, գեղջուկ տնակը ուր Ժան-Ժաք Ռուսո տիկին տը Վառռանսը սիրեց։

Ո՜րքան հիշատակներ, երևակայեցեք անգամ մը, ֆրանսական գրականության գլուխգործոցները այս տեղերուն ներշնչումներեն բխած։

Գացի երկյուղածությամբ այցելեցի այս վայրերը։

Իրիկվան մը դեմ պզտիկ շոգենավ մը Կոան Բոռեն Հոթքոմպ տարավ զիս լիճին հարավի ափերը քերելով, հյուրամերժ և անբնակ ափեր։ Վճիտ ու անապակ երեսին վրայեն սահեցանք իրիկնամուտին անդորրությանը մեջ։ Հոթքոմպ՝ պզտիկ հրվանդանե մը շինված է. դղյակ և եկեղեցի Սավուայի թագավորներուն սեփականությունն են։ Ոչ ո՜ք պահապաններեն զատ, մարդկային ամեն աղմուկ հեռու այս մինակության անձուկը ունեի. կեցա, այստեղեն շուրջս դիտելու համար. հեռուն էքսլեպեն իր ետևի լեռներուն ոտքի վրա փռված է. դեմի եզերքին վրա՝ ներկված դաշտերու միօրինակ ու անշշուկ տարածությունը. ժամը վեցը ըլլալու է. հորիզոնեն եկող ոսկեզօծումին մեջ Հոթքոմպին սրածայր կատարները գույնզգույն գոհարներով կզարդարվին և վայրկենապես կմերկանան զանոնք ավելի վառ կամ ավելի նվազածներով պճնվելու համար. և այս բոլորը շուրջի մարգագետիններուն և ժայռերուն կանանչությանը միացած՝ լիճին անշարժ փայլունությանը վրա կվետվետին ու կհանգչին։

Ներս մտա եկեղեցիեն. դասին և գավիթներուն մեջ Սավուայի իշխանները իրենց իշխանուհիներուն քով կքնանան։

Այս տան ամբողջ պատմությունը հոս է. Եվրոպայի ասպետական կյանքին մեկ մեծ դրվագն է աչքիս առջև պառկող սա գերեզմաններու շարքը։

Կես ժամ կեցա Մառի Քրիսթինի արձանին առջև որ դռան մոտիկն է. ի՜նչ արվեստի գանձեր թափվեր են հոս. դիտեցեք սա շրջազգեստի ծալքերուն բնականությունը. կուրծքին վրա աջեն ձախ իջնող լայն ժապավենին moire-ի վետվետումը և սա տանթել pelerine-ին նուրբ բանվածքը. տեսե՛ք ինչպես սա ոտքի բարձին կակուղ ու փայփայիչ երևույթեն իսկույն կհասկցվի թավիշե ըլլալը։

Եվ միտքս՝ թագուհիեն որ անմահանալ ուզեր է, արվեստագետին կերթա որ ահա անմահացած է այս արձանով։

Վերադարձա. աչքիս առջև քրքրվող հիշատակներու ահագին ծրարին, դարերուն մեջի բերած հանձնած մեծ վեպերուն առջև զարմանահար ու... քիչ մը տրտմած թե ի՜նչ շնչին հյուլեի բաժին մը ունինք ամեն մեկերնիս մեր օրերուն պատմությանը մեջ։

Վիլլա տե Ֆլեոռը, էքսլեպենի քազինոն, Renaissance-ի ոճով շենք մըն է որ ինքզինքը հավնեցնելու փափագը ունի, ոչ՝ զքեզ հիացնելու հավակնությունը։ Վեհության, տարապայման համեմատություններու կամ արտասովոր ճոխության մը ընձեռած միջոցներուն շապավինելը այն պզտիկ, պատին տակեն արտորալով քալող grisette-ին կնմանի որ քեզ կհրապուրե առանց բացառիկ գեղեցկության կամ արդուզարդի մը օգնության։

Քազինո մը, Եվրոպայի մեջ, միևնույնն է ամեն տեղ։ Ծաղիկներե պարտեզ մը, ու երաժշտության, պարի ու ընթերցանության սրահներ, թատրոն մը, էական մասերը կկազմեն անոր։ Ոմանք իրենց թղթախաղի սրահը ունին։

Մոնթեքառլոյեն ետքը էքսլեպենինը համբավավոր է... գրավներու մեծությամբը, պատճառած աղետներուն թիվովը։

Երբ որ ներս մտա ես՝ իր բովանդակ ոգևորությանը մեջն էր։ Բարձր ձեղունեն կախված, Ոսկի ջահերը գլխիվար ծռած հսկա ծաղկեփունջերու կնմանին։

Հոծ, աճապարող ու մտահոգ բազմություն մը. տարիքները, սեռերը և ազգերը խառնիխուռն. ուղիղ կեցող սև սմոքիններու ու ձյունաթույր շապիկներուն քով, նուրբ շղարշներու մեջ ավելի պլլված քան թե ծածկված մարմիններու ու քողամերժ կուրծքերու կոհակները. ադամանդներու, մարգրիտներու, գոհարներու ցոլացումը՝ հազար տեսակ զգլխիչ բուրումներով ու նույնքան հաշիվներով, հոգերով կազմված մթնոլորտի մը մեջ. էն սիրուն դեմքերը՝ լուրջ, խոժոռած, ո՛չ մեկ ժպիտ, ոչինչ շնորհալի կամ քաղցր. ամեն բան՝ խիստ, թախծոտ. պայքարը ոչ թե հանգիստը. պայքարը անողոք. բնաջինջ ընելու կամ ըլլալու որոշումը ամեն բանի մեջ. կտրուկ գործի մարդոց հատուկ շարժումներ. սակարան մը իր տագնապի ժամուն։

Մաս մը՝ կանանչ ծածկված երկար սեղաններու շուրջը խելոք մը նստած է որ ինծի՝ Պեշիքթաշի Մաքրուհյան վարժարանին սեղանատունը կհիշեցնե. մաս մը անոնց ետին ոտքի վրա և մաս մըն ալ ատոնց ետին. մարդկային ամփիթատրոն. այր ու կին քով քովի, շունչ շունչի. սեղանին մեջտեղը և ամեն խաղացողին առջևը պանքնոթներու ու ոսկիներու դեզ մը։

Ատեն-ատեն բարձր ձայնով արտասանված բառեր, հրավերներ, մարտի կոչերու պես որ ընդարձակ սրահներուն մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը կերթան։

— Հինգ հարյուր ոսկիի գրավ մը. ո՞վ կբռնե հինգ հարյուր ոսկիի գրավ մը, ո՞վ։

Ապշած մտիկ կընեմ։ Ոչ ոք անտարակույս։

— Պա՜նքո։

Բոլոր գլուխները ան կողմը կդառնան հետաքրքիր ու քիչ մը հարգանքով հանդուգն խաղացողին հանդեպ։

— Ձորս։

— Վեց։

Շարունակ թիվերու բախումներ, սուրերու շկահյունին պես, կամ մեծ թվանշանը, անվիճելի հաղթությունը, որ խրոխտ շեշտով կարտասանվի.

— Ի՜նը։

Եվ մյուսը, պարտությունը, նկուն, երկչոտ, գրեթե ամոթահար։

— Պաքքառա՜։

Որ զերո կնշանակե։

Այս տարօրինակ աշխարհը իր հատուկ օրենքները ունի, էականը՝ սրտնեղելու, գանգատելու իրավունք չունենալն է. ո՜րչափ կառավարություններ գիտեմ, որ ասանկ օրենք մը հաստատել պիտի ուզեին իրենց երկրին մեջ։ Օսմանյան կառավարությունը մանավանդ ամենքը պիտի կանխեր։ Կարող ես մեկ ժամվան բոլոր հարստությունդ փճացնել, բոլոր քուկիններուդ կյանքը խաղալ և կորսնցնել, բայց նեղանալու, ձայնդ քիչ մը բարձր հանելու արտոնյալ չես. մեռնիլ՝ ժպիտը շուրթին. այս է Կանոնը. Հռովմեական արքությունը ոչինչ է ասոր քով. է՛ն մեծ կորուստ տվողը անզգա, արձանացած կկենա, բայց ես զսպված հառաչանք մը կգուշակեմ իր կուրծքին մեջ և արցունքի կաթիլ մը իր արտևանունքին վրա։

Մեծ սեղանին շուրջը հավաքվողներուն մեջ չափահաս տարիքով կին մը, սև աղվոր աչքերով. մութ գույնե մեծագին վերարկուի մը մեջեն բեհեզե վարդագույն շրջազգեստը արձանի գեղեցկություն մը կխոստովանի. ադամանդե թագ մը ճակտին վրա կրակներ կարձակե. պարանոցին շրջանը ընելե վերջը մինչև մեջքը իջնող մարգարիտի շարք մը, ճանչցողներու խոսքին նայելով, անհաշվելի գումար մը կներկայացնե։

Անհոգ ու ծույլ անտարբերությամբ մը կխաղա—էրիկ մարդոցմե ավելի խիզախ ու կտրիճ։ Կհետաքրքրվիմ կհարցնեմ։

— Գեղեցիկ Օթթերոն է։

Քարմենի հայրենակցուհին զոր տասնհինգ տարի առաջ Փարիզի բեմերեն մեկուն վրա ծափահարեր էի իր անտալուզյան պարերուն մեջ։ Քիչ մը ստվարացեր է, բայց դեմքին ձվաձևը ավելի շնորհալի եղեր է։

որոշ աշունը չէ դեռ, բայց ամառին վերջն է. անիկա էրիկ մարդոց վրա իր առջի տիրապետությանը մեջն է, միահեծան և անկարեկիր, ինչպես ամեն տիրապետություններն են։ Սահմանադրական կամ ռամկավարական կարգերը իրեն համար չեն. խորհրդարանական իշխանությունը չի ճանչնար անիկա. դահլի՞ճ իր boudoir-ը ունի։

Կխորհիմ որ երբ Եվրոպայի feministe-ները ու Մեծն Բրիտանիո suffragette-ները էրիկ մարդոց հավասար իրավունքներ ձեռք բերելու համար կճգնին, ահա կին մը, որ արանց վրա իշխելու իրավունքը տարիներե իվեր կվայելե առանց վեճի, իր արվեստին ու գեղեցկությանը շնորհիվ։

Այն վայրկյանին որ ներսես կողջունեմ այս խաղի ու պարի դշխոն, իրական, վավերական թագավոր մը կանցնի քովես. Հելլենաց թագավորը՝ Յորկիոսը։ Ի՜նչ փնտրելու եկեր է այստեղ, երբոր իր երկիրը այնքան ծանր տագնապներ կանցնե այս պահուս։

Գլխուն melon-ը ծուռ, ճերմկած պեխերը խնամով վեր ոլորած երկու կողմեն, պզտիկ խուզարկու նայվածքովը Հելլեններու թագավորը՝ խաղասրահի մը մեջ թափառական, ամենեն դժնդակ տպավորությունը ըրավ վրաս, ու մեղքցա հելլեն ազգը։

Էքսլեպեն, 25 օգոստոս, 1912

ԼԵ ՇԱՐՄԵԹ.— ԺԱՆ ԺԱՔ ՌՈՒՍՈՅԻ ԵՐԿՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ.— ՎԻԾԻ.— Ի՜ՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԼԱ ԳՈՒԱԳԵՏ ԿԻՆԸ։— ՏԻԿԻՆ ՏԸ ՍԵՎԻՆՑԵ ՀՈՍ.— ՌԱՆՏԱՆԻ ԴՂՅԱԿԻՆ ԱՌՋԵՎ.— ՄԵՐ ԱՐԵՎԸ ԵՎ ԱՅՍՏԵՂԻՆԸ։

Ա

Ռուսսոն այն մատենագիրն է որ ամենեն խորունկ ներգործությունն ըրած է վրաս։ Սեն Փռեոյին հետ Ժյուլիին համար արտասված եմ. Տիկին տը Վառռանսը, իրեն պես ես ալ սիրած եմ քիչ մը։

Հազիվ քանի մը շաբաթ կա որ Ֆրանսա անոր ծննդյան երկհարյուրամյակը տոնեց մեծաշուք պատիվներով. Պարթոլոմե Փանթեոնին մեջ հանգչող անոր աճյուններուն համար նոր արձան մը կերտեց. ապաժաման պատիվներ — ո՞ւր էիք երբոր անիկա աղքատ... հալածական կպտտեր։

Թուրք բանաստեղծին տողերը միտքս կիյնան.

Գաարինի սենքի մուսալատա պիլուպ, է՛յ Պաքի,
Տուրուպ էլ պաղլայալար քուրշընտա յարան սաֆ, սաֆ։

Արժանիքդ՝ գերեզմանաքարիդ առաջը պիտի ճանչնան ո՛վ Պաքի
Եվ այնտեղ կարգով դեմդ բարև պիտի կենան բարեկամներդ։

Կյուրակե ցորեկ մը Շամպեռի գացի Լե Շարմեթը տեսնելու համար. Ռուսոն այնտեղ ապրեցավ իր երիտասարդության էն աղվոր տարիները. վաղանցիկ օրեր որոնց կարոտը քաշեց մինչև վերջը։

Ջառիվեր ու ամայի ճամփու մը կողքին, երկու բլուրներու գրկին մեջ, Լե Շարմեթ ծառերուն ետին պահվրտեր է։

Դուրսեն սովորական տնակ մըն է երկհարկ. կոնակը պզտիկ այգին, քովը պզտիկ պարտեզ մը, անդին աղբյուրը իրենց տեղն են. մրտրովս կվերադառնամ խոստովանանքին մեջի պարզ ու սրտառուչ տողերուն, որով Ռուսո, առաջին անգամ հոս ոտք կոխելուն, իր զգացած ուրախությունը կպատմե. իրավցնե անդորր միայնությունն է, թարմ ու զով միայնությունը ուր երջանկությունը, որ վկաներու չի կարոտիր, սովորաբար կապաստանի։

Ներսը՝ գետնահարկին վրա, սեղանատունը, ամենօրվան սրահը, իրենց հինցած կահ կարասիով կեցած են։

Տիկին տը Վառռանսի ննջասենյակը վրայի հարկն է, խցիկով մը քովը, զոր պզտիկ խորան մը աղոթատեղիի կվերածե. անկողինը, որուն վրա այնքան երազներ հյուսված են, անկյունն է։ Ֆրանսան երկյուղած հարգանքով մը կպահե այս տնակը իր առջի վիճակին մեջ, այնպես՝ ինչպես իր տերերը ձգեցին. ո՛չ ոք կարող է ձեռք դպցնել անոր, հապա ժամանա՜կը. պատերուն թուղթերը մաշեր, իյնալու վրա են. տիկին տը Վառռանսի անկողինը ծածկող վերմակին բուրդերը դուրս թափելու վրա են. գոց տուներու հատուկ խոնավության ու փտտումի մթնոլորտ մը կա։

Ամեն բան իր տեղը՝ այո՛, բայց ոչինչ մնացեր է հին օրերու ուրախութենեն. կսկծալի բան մը կա այս անշունչ վկայություններու մեջ, փախչող երանություն մը, որ մեյ մըն ալ չպիտի վերադառնա հոս։

Վարը սեղանին վրա բաց տետրակ մը՝ ուր այցելուները իրենց տպավորությունները կրնան արձանագրել. ես երկու տող միայն գրեցի այս տետրակին մեջ.

«Հեռավոր Արևելքեն՝ Արևմուտքի մեծագույն հանճարին պաշտում»։

Ռուսոյի վրա անհատնում ուսումնասիրություններ հրատարակված են. վերջինը Էմիլ Ֆակեինն է որ անոր բարեկամուհիներուն պատմությունը կընե. բազմաթիվ են անոնք. բայց Ռուսոն, իրոք, ո՛չ մին սիրած է անոնցմե. Տիկին տը Վառռա՞նսը, մայրական գուրգուրանքի վրա կնոջական սիրո պատվաստ մը, Տիկին տը Լառա՞ժը, զգայարանքի գոհացում. Տիկին տ'Ուիքտո՞ն, պարզ տենչանք։

Եվ սակայն ո՛չ ոք սերը երգեց և հավատաց անոր որքան Ռուսոն։ Դարեր դարերու պիտի հաջորդեն, բայց Նոր Էլոյիզը մեյ մըն ալ չի պիտի գրվի. մարդիկ այս գիրքը միշտ արտասվելով պիտի կարդան։

Ժյուլին գոյություն չունի. անիկա Ռուսոյի սիրատոչոր հոգվույն ստեղծած էակն է. տարօրինակ հեղաշրջում ուր արարիչն է որ արարածը կպաշտե։

Գրագետներու համար, մտքով քան թե զգայարանքով ապրողներու համար՝ կարծվածեն ավելի հաճախադեպ է ասիկա։

Շատեր Ռուսոն հալածանքի ցնորքեն տառապող մը, հիվանդ մը նկատած են. Ֆակե՝ հանճարին համընթաց հիմարություն մը կնշմարե անոր մեջ. ափսո՜ս. ի՞նչ է հանճարը եթե ոչ սովորական մտայնություն մը և զգայնություն մը տարբերել. այլասերել կոչեցեք զայն եթե կփափագիք, բայց չեք կրնար ծնրադրել անոր առջև։

Ասոնց վրա մտածեցի վերադարձիս. ճամփուն վրա, խոտերուն ծաղիկներուն մեջ, երիտասարդներ, երիտասարդուհիներ թև թևի, երգելով, պզտիկ համբույրով մը ընդմիջված երգեր, վրանին երջանկության ծիածանը ինձմե ուրիշին անտեսանելի. ցնծությունը ամեն տեղ։

Երևք մեծ հանգրվանները այս արտասովոր կյանքին քով քովի բերի. Լե Շարմեթ՝ ուր Ռուսո սիրված և երջանիկ էր. Էմբնսվիլ՝ ուր լքված մեռավ. Փանթեոն՝ ուր իր փառքին մեջ պառկեր է։

Ը

Ոևէ բարվոքում չկա առողջական վիճակիս մեջ. ասիկա անակնկալ մը չէ ինծի համար որ հոռետես եղած եմ միշտ, գոնե իմ անձիս վերաբերմամբ։

Ոչ միայն բարվոքում չկա, այլ վատթարացում. իսկույն սնտուկներս կկապեմ. անկողին չիյնալ օտար երկրի մեջ. այս է բոլոր ջանքս, զո՞ւր ջանք։ Ահա ցավերս կսկսին. կարիանամ. շուտ կայարա՜ն. Վիշի, հոն պիտի բժշկվիմ։

Շոգեկառքեն ելա կաղալով. մինակս հակելով հազար ու մեկ շընչին բաներու վրա որոնք ճամփորդության մը բոլոր հոգնեցուցիչ մասերն են։

Տասը օր անկողնի մեջ, պատը երեսին, պանդոկի մը սենյակին մեջ. ա՞յս է Վիշին։

Վերջապես ոտքի կելլեմ. պտույտ մը քաղքին շուրջը. Ալլիեն հոսկ կանցնի. փողոցներուն մեջ կթափառիմ. ի՞նչ է սա շենքը. մարմարի վրա արձանագրություն մը հարցումիս կպատասխանե. տիկին տը Սեվինյե հոս բնակեցավ ատեն մը. ով չի ճանչնար այս անուշիկ կնիկը, որ նամակագրության անվիճելի դշխոն պիտի մնա, կին գրողներու մեջ տիկին տը Սեվինյեն անոր համար կսիրեմ որ իր սեռը իր գրության մեջ կցուցնե ամեն վայրկյան. ուրիշներ կպահեն, էրիկ մարդ ըլլալու կճգնին, մինչև իսկ էրիկ մարդու հագուստ կհագնին՝ Ժորժ Սանին պես. անիկա իր կանացի հանգամանքը ի տես կբերե ամեն տողին մեջ. խանդաղատանք, գուրգուրանք, նրբություն, անույշ ժպիտ մը, սուր դիտողություն մը, ահա բուն կինը ըստ իս, ահա տիկին տը Սեվինյեն։

Առտուն կանուխ կանանչ կակուղ օթոցներուն քովերեն կքալեմ, սփռված հոս հոն, եզերքը Ալլիեին որ դեռ քուն է. արևը նոր ծագեր է ու տերևներուն վրա գիշերվան ցողեն մնացող կաթիլներ ադամանդներու կվերածե. ճամփուս վրա տեսակ-տեսակ ծառեր, որոնց անունները չեմ գիտեր. ձևերու զանազանություն ամենուն մեջ. ասոր բոլոր ճյուղերը, բունին զուգահեռական, դեպի վեր, շուրջերնին տերևներու պզտիկ փունջով մը, հարսնիքի մոմերու պես. հատ մը նույն տեսակեն, որու բոլոր ճյուղերը այնքան իրարու քով ամփոփվեր են, որ թևը ոտքը խանձարուրի մեջ փաթթված երախայի կնմանի. ուրիշ մը, որուն ճյուղերը, հովանոցի մը պես բացված, կանոնավոր բոլորակ մը կկազմեն, կարկինով չափված, ավազանի մը մոտ ուռենիներ իրենց գլխահակ ոստերովը. հետո նոճիները, հազար ու մեկ պեսպիսություններով. մութ եղրևանիի գույն տերևներով բույսեր. ոմանք բաց, բաց, ճերմակի մոտ դեղնությամբ։

Այս վայրկյանիս Ալլիեին երեսը հորիզոնաձև դրված նկար մըն է, տեղ մը՝ ծառերուն մութ կանանչությունը, տեղ մը՝ տանիքի մը կղմինտրներու վառ կարմիրը, տեղ մըն ալ՝ երկու կողմի հողերուն գույնը իրենց բոլոր երանգներով, մեղմություններովը. զմայելի պատկե՛ր, զոր ոչ մեկ վրձին կրնա իրականացնել, և զոր ոչ մեկ մյուզեի մեջ կրնաս տեսնել։

Ժամ մըն է որ կքալեմ, առանց գիտնալու ուր երթալս, առանց նպատակի, ինչ որ շատ հեղ, որոշ նպատակ մը ունենալե նախամեծար է, վասնզի հուսախաբության տեղի չի տար։

Անտառներու մեջեն կանցնիմ, արտերու մեջեն. երկիրը կտարածվի, կտարածվի, տեղերը կշփոթեմ, այնքան իրարու կնմանին. քովես հանկարծ օթո մը կսլանա, փոշիի ամպի մը մեջ ծածկելով զիս. գյուղի մը մոտն եմ, մեկ երկու տուն, հետո փողոց մը կերևան. քիչ մը անդին դղյակ մը իր վես ճակատը կցուցնե։

Ռանտան, Ֆրանսայի թագավորներուն, Պուրբոններուն կալվածներեն մեկն է. Փարիզի կոմսուհին հոն կուգա ամառները. հիմա անբնակ է. Parc-ին մուտքը ազատ է. ներս մտա, ժամերով թափառեցա այս տեղերը։ Ռանտանի դղյակը ոչինչ ունի ասպետական. երկու կողմի բոլորակաձև աշտարակները ատամնավոր պարիսպներու խրոխտությունը չունին. ոչ խրամատներ, ոչ շարժուն կամուրջ որոնք հին օրերու հիշատակները արթնցնեն. այլ ամեն կողմ ավլված ծառուղիներ, ավազով շաղված ճամփաներ, վարդերով, հասմիկներով, դեռ չեմ գիտեր ի՞նչ տեսակ ծաղիկներով հարդարված պարտեզներ. փոխվա՞ծ, փոխվա՞ծ ամեն բան, ինչպես Ֆրանսան ինքը. թագավորը պարզ քաղաքացիի, Լուի ԺԴ-ը՝ Լուի Ֆիլիփի վերածված. Ռանտանի դղյակեն այս պատմության դասը առի ես։

Նույն ճամփան վերադարձա ոտքով, ծուլորեն, վայելելով վերահաս իրիկունը, անույշ՝ հասունցած խաղողի հատիկի պես, ջնջելով հողերուն հոտերը, գյուտեր ընելով ամեն քայլափոխիս՝ ծառերու ու բույսերու աշխարհին մեջ, նոր աշխարհ ինծի համար։

Իրիկունը կուգար մեղմիվ անզգալորեն իր ամոքիչ խաղաղության վերարկուն տարածելով կամաց-կամաց, նախ ձորերուն, հետո սարավանդներուն վրա. քայլերս կփութացնեմ ճամփաս կորսնցնելու վախով. աշունի մեջ ենք, զովությունը հետզհետե կավելնա. բայց հոգս չէ. Վիշի հասած եմ արդեն. կամուրջին վրա կկենամ հոգնություն առնելու համար. արևմուտքին կնայիմ, կյանքիս մեջ ասանկ արևի մուտք տեսած չեմ. կարմիր բոլորակ մը, բայց մարած, բոլորովին մարած. կյանքե զուրկ կարմիր մը, ջրաներկ պատկերի մը վրա տեսնվածի պես, կարմիր բոլորակ կապույտ թուղթի մը վրա փակցված. այսչափ. այս արևը գույն ունի բայց լույս չունի. ճառագայթ չարձակեր. ուզածիդ չափ դիտե զայն աչքով. չի շլացներ քեզ. ոչ փողփողում ունի, ոչ անթիվ գույներու մոլուցքը, ոչ երկվայրկյանե երկվայրկյան կատարված այլափոխությունները. ոչի՞նչ մերին արևմուտքներեն որոնք մինչև վերջին վայրկյանը կմաքառին, կապրին, իրենց ճոխությունները կշռայլեն, իրենց լույսերը կսպառեն. ոչինչ ասոնցմե. այլ հանդարտ ու պարկեշտ էջք մը ծառերուն ետին հորիզոնին վրայեն. անհայտացումը արդեն մեռած արարածի մը։

Մեր արևը երիտասարդ և հայրատ կնոջ անձնատվությունն է. լիաբուռն պաքգեղը իր բոլոր գանձերուն՝ առանց վաղվան մասին

մինչև հետին շունչը անզգաստ մեռնողը չեմ գիտեր ուրեղ, ան, որուն եկեղեցին թաղում չըներ։ Իսկ այս տեղինը պարկեշտ այրին է, տանտիկին եղած, որ սեփիրին վրա հոգին կավանդե՝ հաղորդություն առնելի վերջը։

Վիշի, 12 սեպտ. 1912

ԷԼԻ ՍԵԹԹԱՅԻՆ ԳՅՈՒՏԸ.— ԱԺԱՆ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ.— ՉԱՋՈՂԱԾՈՒԹՅԱՆ ՄԸ ԳԱՂՏՆԻՔԸ.— ՆԱՅԻԼ ՈՒ ՏԵՍՆԵԼ.— ՎԵՐՋԻՆ ՊՏՈՒՅՑ ՎԻՇԻ. ԲԱՐՀԻՆ ՄԵՋ.— ԴԵՊԻ ՓԱՐԻԶ։

Ա

Սելեսթենի աղբյուրը տանող ճամփուն վրա, իր փոքրիկ խանութին առջին, ուր կավե մեծ ու պզտիկ կիսարձաններ շարված են, Էլի Սեթթան կեցուց զիս.

— Պարոն, երեք նիստի մեջ կատարյալ նմանությամբ կիսարձաններդ շինե՞մ. ահավասիկ ձեզի աղվոր թելադրություն մը. արձանը հավերժացումն է մարդուս. անոր երկարաձգումն է դարերուն մեջ, գերեզմանեն անդին։

Կխորհիմ թե ուզիդ է ըսածը։

— Ասոր համար ոչ հազար ֆրանք կուզեմ, ոչ ալ հինգ հարյուր։

Երկու հարյուր ֆրանք գոնե, կըսեմ մտքովս։

— Հիսուն ֆրանք միայն պիտի վճարեք,— ըսավ Սեթթան։

Որքա՜ն աժանցեր է անմահությունը։

Եվ փարատելու համար վերջին վարանումս՝ ավելցուց.

— Թե որ նմանությունը կատարյալ գտնեք և գոհ մնաք աշխատությենես՝ հիսուն ֆրանք կվճարեք. ապա թե ոչ սանթիմ վճարելու պարտավոր չեք։

Փաստը վճռական թվեցավ ինծի։

Աթոռին վրա խելոք մը նստած եմ, գլուխս դեպի ձախ, քիչ մը վեր բռնած. կոկոզավիզ պիտի ըսեր հայագետ մը. աչքս աջ կողմը ձեղունին հառած։ Այսպես անշարժ կեցեր եմ, մինչդեռ Սեթթան իր առջևի կավե զանգվածին վրա ծռած՝ կաշխատի ու կխոսի։

Վաթսունի մոտ կերևար, գիրուկ, ուսերը վեր ժողված քիչ մը։ Կարիելալտիի գլուխ մը մանրուկ անհանդարտ աչքերով. աղեբեկ բայց առատ մազեր, որոնք մինչև ուսերը կհասնին, սանտրված, երկուքի ճեղքված՝ լայն ճակատին վրա, գիտունի մը վայելուչ։

Տիրացուի շապիկ մը հագած էր ճերմակ լաթե. աշխատության շապիկը։

Կխոսի, սուտը իրավին խառնելով, սխալներով լեցուն ֆրանսերեն մը, ամեն բառին ծայրը իր Իտալացիի երգող շեշտը դնելով։ Անվանի արվեստագետներու մտերիմ ըլլալը հասկցնել կուզե.

— Ֆալեիեռին կըսեի որ...

Ազնվական տիկինները իր հաճախորդներն են.

— Հոթռիվի կոմսուհին կճանչնաք հարկավ։

Բացասական նշան մը ինձմե։

— Ո՞չ։

Կզարմանա, զարմանք որ մեղադրանք կնշանակե։

— Աշխարհք կճանչնա կոմսուհին. միլիոնատեր, գեղեցիկ. ուզեց որ այս ամառ իր կիսարձանը շինեմ. այս ամառ անկարելի է ըսի իրեն. Վիշիս չեմ կրնար ձգել. նեղացավ քիչ մը, բայց իսկույն հաշտվեցանք. գիտնաք ի՞նչ խոնարհասիրտ կին է. ո՞րքան կպատվե զիս։

Եվ ճիշտ այդ միջոցին՝ իր անձնասեր խառնվածքեն մղված, իր չքավորությունը կխոստովանի. հիվանդ կինը անկողինն է ու բժիշկ բերելու կարողություն չունի. զավակներուն կրթության ծախքը չի կրնար հոգալ։

Սեթթան մին է անոնցմե որոնց բովանդակ կյանքը միշտ հակասություն է. շատգրուց ու մեծխոսիկ Պոհեմին վավերական թիփն է աչքիս առջևը։ Չեմ հավատար իր ըսածներուն. միայն շինելիք արձանին ինծի նմանելուն վստահ եմ. այնքա՜ն համոզիչ են իր հավաստիքը և այնքան մարդս, ամենեն խորամանկը ու զգույշը, իր փափագած բանին դյուրությամբ կհավատա։

Ունայնասիրությունս զգվող խոսքեր ալ կընե Սեթթան։

— Ճակատնուդ վրայի այդ պզտիկ մազի փունջովնիդ շատ կնմանիք Պոնափարթին. իրավ կըսեմ, շատ կնմանիք։

Այս գաղափարը հետզհետե կտեղավորվի իր մտքին մեջ։

— Կպնդեմ որ չափազանց կնմանիք անոր։

Հանկարծ աշխատությունը կընդմիջե, գլուխը վեր կառնե ու ինծի կհարցնե.

— Շիտակ ըսե՛ք, դո՞ւք էիք որ անցյալ ձմեռ Ֆոլի Պեռժեռի թատերախումբին վրա Պոնափարթի դեմքը կնմանցնեիք։

Չեմ կրնար խնդալս զսպել։

— Տեսե՛ք ինչպես գտա։

Մանկական միամտություն մը մնացած է այս ծերունիին վրա, ինչպես արևի ճառագայթ մը մոլորած հին քարայրի մը անցքերուն մեջ։

Հետո հանկերգը.

— Սիրուն և կատարյալ նմանությամբ արձանիկ մը պիտի ունենաք

Նիստերը շարունակվեցան. երեքը՝ չորս եղավ, չորսը՝ հինգ. Սեթթային փույթը չէր. կաշխատեր մեծախոսություններու առատակը պարպելով. բայց կավե զանգվածը կհամառեր ինծի չի նմանելու։

— Դյուրին չէ ճշգրիտ նմանություն մը ձեռք բերելը,— կըսեր ինծի,— բովանդակ Արվեստը, Մեծ Արվեստը ատոր մեջն է. գերագույն վայելքն է ան։

Վեցերորդ նիստին համբերությունս սպառած էր. չեմ գիտեր ի՞նչ սրտնեղություն մըն ալ ունեի. ոտքի ելա պզտիկ արձանը ուշադրությամբ դիտելու համար։ Ո՞վ է սա մարդը, այդ թթված երեսը. այդ ծուռ քիթը. ես շատ մը ծուռություններ ունիմ հարկավ, բայց քիթս ուղիղ է, պատրանքը որ մինչև այդ վայրկյանը աչքերս գոցեր էր՝ մեկեն ի մեկ վերցավ. ոամիկ խաբեբայության մը բռնված ըլլալս կըմբռնեի։

Սեթթան կշարունակեր խոսիլ առանց գլուխը վեր առնելու.

— Մարքիզ Գավոշինին...

— Պարո՛ն,— պոռացի երեսն իվեր,— կբավե այսչափը. Տիկին ոը Մենթրնոն ոստրե ուտելու հրավիրած էր իր բարեկամները. ոստրե չի գտնվելուն, տիկինը սիրուն պատմություն մը հրամցուց հրավիրյալներուն, որոնք գոհ մեկնեցան. դուք ճշգրիտ նմանությամբ արձանս խոստացեր էիք, ատոր տեղ՝ անմարսելի սուտեր կծախեք կոր։

Երեսս նայեցավ, ապշած այս անակնկալ հարձակումեն, չի հավատալով իր լսածին, ինքզինքը պաշտպանելու փորձ մը ըրավ.

— Գիտեք, պարո՛ն, որ պզտիկ կիսարձանի մը վրա նմանություն դնելը դյուրությամբ չըլլար։

— Կբավե ըսի ձեզի. մեծ արձանագործներու անունները գոց ընկնուդ՝ անոնց արվեստեն քիչ մը բան առնելու էիք։

Սեթթան կակազել սկսավ.

— Կխնդրեմ, մի՛ բարկանաք. մինչև որ նմանությունը կատարյալ չըլլա՝ մի՛ առնեք արձանը։

Բայց ա՛լ պոռթկացեր էի ու չի կեցա.

— Արձաննիդ ձեզի ըլլա. ահավասիկ հիսուն ֆրանքնիդ. դուք ո՛լ արձանագործ եղած եք ձեր կյանքին մեջ և ոչ ալ ասկե վերջը պիտի ըլլաք։

Սեթթան գլուխը խոնարհեցուց, վայրկյան մը համամիտ կթվեր ինծի, այնքան շվարեր, ինքնավստահությունը կորսնցուցեր էր։ Իր մեծակառույց սուտերուն փլլելուն հետ՝ անոնց ավերակներուն տակը մնացած մարդու երեսույթը առած էր. ինձմե ավելի ինքզինքը խաբած էր անոնցմով և ահա՛ իր՝ չաջողած մարդու, կեղծ արվեստագետի կյանքը, բովանդակ մերկությամբը, աչքին առջևն էր։

Բոլոր աղքատությանը հակառակ՝ չուզեց առնել հիսուն ֆրանքը զոր սեղանին վրա դրեր էի. ազերբարկու ձայնը ականջս է երբ կըսեր ինծի.

— Համբերեցե՛ք, մեկ նիստ մըն ալ, խոսք կուտամ որ...

Մտիկ չըրի, ստակը ձգեցի ողորմություն տալու պես. Սեթթան ալ բառ մը չարտասանեց; իր մանրուկ աչքերը մորթվելիք ոչխարի մը հեզությամբ ինծի դարձուց ու արցունքի կաթիլ մը հանկարծ գլտորեցավ իր խորշոմած այտին վրայեն։

Որքա՜ն զզջացի ըրածիս։

Տոտեին ո՛ր գործին մեջն է այն ծերունի դերասանը, Տլոպելը, ամեն թատրոններե ճամփված, որ չի հասկցված արվեստագետ մը կդավանի ինքզինքն ու այդ մխիթարությամբ կապրի կյանքին վերջին տարիները։ Ես ահա այդ գերագույն վերջին սփոփանքը կորզեր էի անոր ձեռքեն՝ ճշմարտությունը երեսն իվեր պոռալով։

Զգեցի գացի. բայց մինչև գերեզման իջնալս այդ արցունքի կաթիլը պիտի գլտորի խղճմտանքիս վրա։

Երեք օր վերջը դարձյալ այդ կողմեն կանցնեի. Սեթթային ձայնը ականջս հասավ. ներս նայեցա. մարդ մը գեմը առեր էր և ինքը սեղանին առջև կավե զանգվածի մը վրա ծռած կաշխատեր։

— Գիտե՞ք, պարո՛ն,— կըսեր անոր,— որքա՜ն կնմանիք Թիեռին. ճշմարիտ կըսեմ, ճիշտ անոր նայվածքը, անոր խրոխտ գլուխը ունիք։

Բոլորովին զինաթափ էի։ Ու կմտածեի ինքնիրենս այս ծերունին ճակատագրին վրա. ի՞նչ էր իր անհաջողության գաղտնիքը. աշխատասեր և խելացի էր. ինչո՞ւ համար այն նմանությունը, զոր իր հաճախորդներուն կխոստանար, չի կրցավ իրականացնել օր մը. վասնզի, շատ մարդոց պես, թերություն մը ուներ. կնայեր բայց չէր տեսներ. Նայիլը չի բավեր. Տեսնել գիտնալու է. ինչ որ քիչերու տրված է։

Այսօր Վիշինն կմեկնիմ. առտուն ռազմական պատույտս կատարեցի։ Ալլիեն՝ տեղարժ կթվի, երկու կղզիներուն մեջտեղը պառկած, իր ճակատագրին համակերպած էսքիմոսներուն արտաքինությունը ունի։ Իրոք, անշշուկ կրաչիս անիկա... Ո՞րքան մարդիկ ապրեցան են, ո՞րքան մարդիկ որոնք բարձրագույն երևույթին մինչև անոր ոտքերը հասած են։

Կապույտ երկինք մը, վճիտ կապույտով, անհամար, գլխուս վրա է. հեռուն՝ հորիզոնը, հոն ուր դաշտերն ու երկինքը իրարու կդիպչին, մեղմ կոհակներու թավալումը ունի։

Թեթև հով մը ելավ. հսկա սոսիներուն անհամար տերևները, փոքրիկ ծնծղաներու պես, կերերան, երգել կսկսին՝ խորունկ սոսափյուն մը հանելով։ Շատ մըն ալ կարմրած դեղնած տերևներ գետին ինկան. ե՞րբ դեղնեցաք, կանա՜նչ տերևներ, քամիին փչելուն հետ աշունը հայտնվեցավ հանկարծ, մինչդեռ մենք ամառվան մեջ կկարծեինք ինքզինքնիս. այն կիներուն պես որոնց թաքուն վիշտ մը՝ մազերը կճերմկցնի մեկ ժամվան մեջ. ակնա՜րկ մը հայելիին. երիտասարդությունը ձգի փախչեր է ահա։

Կառախումբը կսուրա հևալով. մոնչելով. միօրինակ և խլացուցիչ երաժշտություն. կամուրջներուն վրա՝ անիվներուն թավալումը ավելի շառաչյուն կհանե որ պարապություն sonorité-ն է։ Մարդոց մեջ ալ նույն բանը կպատահի միշտ։

Պատուհանիս ապակիին առջևեն դաշտերն ու բլուրները ետ-ետ կփախչին շարունակ. Սինեմաթոկրաֆի պատկերնե՞ր. արևին բոլորակը հորիզոնին վրա հետզհետե խոնարհելով կուղեկցի մեզի, երբեմն ծառերու շարքի մը ետին կվարագուրվի, երբեմն դուրս կելլե, երեսին քողքը դնող, վար առնող կնկան մը պես խաղեր ընելով։

Մուլե՜ն, Նրվե՜ռ, Մոնթա՜րշի, պզտիկ դաղարներ ու իսկույն արշավը։

Հիմա արևը ա՛լ մարը մտած է. վակոններուն մեջ լույսերը կվառվին. մութին մեջ կերթանք անգետ որ կողմ դիմելնուս. գեղեր, բնակություններ իրենց պզտիկ լույսերու խումբովը վազելով դեպի մեզի կուգան և նույն վայրկյանին կհեռանան մենե. մարդկային բաղձանքներու խոստացած երջանկության նման. այսպես ժամ մը, երկու ժամ։

Հանկարծ հեռուն, գիշերը լույսե բիծերով կծակծկվի. երթալով լույսերը կշատնան, կշատնա՜ն. պահ մը հողին վրա փռված պես կթվին. քովերնուս վազող ջուրի մը, Սենին, վճիտ հայելին կկրկնե զանոնք. տեղ-տեղ կարմիր կանանչ լույսեր կխառնվին. ծանր-ծանր կքալենք. անիվները հազիվ թե կթավալին. երկաթե կամարի մը տակ մեր մուտքը տարօրինակ արձագանքով մը կթնդա. կառախումբն ուժով մը կցնցվի, կանգ կ'առնե երկար շունչ արձակելով, Փարիզ հասած ենք։

20 սեպտ. 1912

ՓԱՐԻԶ, — ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԱՂԱՓԱՐԸ. — ՀԱՄԱՇԽԱՐՀԵԼԸ ԱՐՎԵՍՏ Է։— ՍՈՍԻՆ ԵՎ ՁԵՄԱՐՏԻՆ ՊԱՅՔԱՐԸ.— ԳՈՒՏԵՆԲԵՐԳԻ ՖՐԱՆՍԵԶ ԵՎ ՕՓԵՐԱ ԳՈՒՄԻԶ։

Ա.

Փարի՜զ, մեծ դարբնոցը ուր մարդկությանը առաջնորդող գաղափարները կծեծվին, կձևակերպվին շարունակ. հնոց, որ Դժոխք մը ըլլալու էր և որ Արքայություն է իրոք. արվեստական Արքայություն, բայց հազիվ տարբերող իրականեն. անհամեմատ կերպով դյուրամատչելի և ածան, ինչպես արվեստական շաքարը, խահվեն, մետաքսը, փղոսկրը՝ իրենց իսկականեն։

Մթանգամայն երկունքի քաղաք նոր, լավագույն աշխարհի մը ցավատանջ երկունքը որ հոս բարձրաձայն խնդուքով մը ծածկված է։

Այս է իմ տպավորությունս։

Ըսի որ նոր գաղափարները կդարբնվին հոս, բայց քիչերը կծնին այստեղ։ մեծ մասով Անգլիայեն, Ալմանիայեն կուգան. Փարիզ ձև և գույն կուտա, շնորհալի կընծայե զանոնք։

Ռամկավարական վարդապետությունները. Անգլիայեն եկած են. Made in England. Ընկերվարությունը. Ալմանիայեն. Made in Germany. Փարիզ՝ պատնց, ինչպես ուրիշ նոր միտքերու, սիրուն պատմուճան մը և բեհեզե վերարկու մը կնետե վրան։ Այնպես որ առանց անպատեհության, այս մայրաքաղաքին վրա մեծ պիտակ մը երնա փակցվի. այն՝ որուն ամեն քայլափոխիր կհանդիպիս արդեն.

Robes et Confections.

Եվ մենք, Հայերս, որ համոզված ենք թե բոլոր հեղափոխական գաղափարները Ֆրանսացվոց մեջ կծնին, մենք որ Անգլիացիին պահպանողականությունը, Ալմանիացիին չափավորությունը, Ֆրանսացիին ծայրահեղությանցը դեմ կճակատեցնենք, մոռնալով որ Ֆրանսան Լուի ԺԶը Կիյոթին ղրկելե դար մը առաջ՝ Անգլիան Շարլ Ա-ը գլխատած և Հանրապետությունը հռչակած էր. առանց հիշելու որ Ֆրանսացի ոևէ մատենագիր գործավորական կյանքին դժբախտությունները գիտնականապես դեռ չի քննած՝ Քարլ Մարքս իր հոյակապ գործը, ընկերվարության Ավետարանը, «Դրամագլուխը» հրատարակած էր, այսօրվան տնտեսագիտության հիմերը դնելով. և առանց խորհելու որ գործավորներու հանգստության թոշակը, դեռ վերջերս միայն ընդունված Ֆրանսայի մեջ, Մեծն Բրիտանիա և Գերմանիա հաստատված էր շատուն.

եկամուտի վրա տուրքը՝ կես դարե իվեր Մեծին Բրիտանիո, քիչ մը պակաս ատենե իվեր Ալմանիո մեջ ընդունված, Ֆրանսայի մեջ դեռ հաջողած չէ մուտ գործել։

Անվիճելի փաստեր այս բոլորը ցույց տվող որ Ֆրանսան՝ իբրև թե հառաջապահը կամ ծայրահեղը, այս կարգի աղիտաբեր մոլորումներու մեջ, ինչպես կըսենք մենք, ամենեն երկչոտն ու հետամնացն է

Ասոր նման դեռ ո՞րքան սխալ կանխամտածումներ տեղավորված մեր մտքերուն մեջ, որոնք մեզ միշտ ծուռ, երբեմն անհեթեթ կամ ծիծաղելի եզրակացություններու կառաջնորդեն։

Ի՜նչ մեծ, ի՜նչ հիմնական սրբագրության մը կկարոտի հայ մտալնությունը։

Հագվեցնե՞լ. մեծ գործ, դժվար արվեստ. հագվեցնել Մերկությունները, որոնք առհասարակ տգեղ են. նույնիսկ կանանցը. Մոփասանի ամենեն նրբամիտ գրվածքներեն մեկը այս նյութին վրա է։

Իսկ Ճշմարտությունն՞ը. գիտե՞ք, ամեն անգամ որ գրիչը ձեռքս կառնեմ ճշմարտություն մը հագվեցնելու համար, որքա՜ն նեղություն կքաշեմ, գրեթե կհուսահատիմ, ո՞ր ձևը պիտի վայլե արդյոք, ո՞ր կերպասը, ո՞ր գույնը, հագուստ մը որ շատ լայն չըլլա, որուն մեջ իր ինքնությունը չի կորսվի. ոչ շատ նեղ, ուր իր ամեն գիծերը բացահայտ երևան չի գան. ոչ շատ երկայն ոչ շատ կարճ և ոչ շատ թեթև կերպաս մը, ոչ շատ ստվար, որպեսզի ոչ տաքեն նեղվի, ոչ ալ մրսելով հիվանդանա. վասնզի Ճշմարտությունները եթե չեն մեռնիր, ստեպ կհիվանդանան։ Ո՜չ շատ բաց գույն, ո՜չ շատ մութ. որը՞ ուրեմն։

Եթե Ճշմարտություն մը հագվեցնել այսքան դժվար է, որքա՜ն ավելի ծանր աշխատություն մըն է Ստություն մը հագվեցնելը։ Եվ սակայն անոր մեջն ալ կհաջողին մարդիկ։

Պուլվառներուն վրա, Rue de la Paix-ին մեջ պտտած միջոցիս ասոր կխորհիմ. ճշմարիտ գոհարներու ճիշտ քովը՝ ահա կեղծերը. իրավ մարգրիտին քովը՝ սուտը. և այնքան իրարու նման, որ անհնար է զանազանել, գիները միայն կտարբերեն. բոլոր սուտերը և կեղծերը ածան, բոլոր ճշմարիտները սուղ. սուտին մրցումը, հավիտենական մրցումը կվախնամ ըսելու հազիվական մրցումը, ճշմարտին դեմ. վրդովեցուցիչ չէ՞ ասիկա։

Հոկտեմբերը վերամուտի ամիս է. զարթումի, վերակենդանության ամիս. աշուն, որ մեծ քաղաքներու մեջ՝ գարունին փթթումը, կենսունակությունն ունի. սալոն, դպրոց, թատրոն՝ վերաբացում ամեն տեղ։

Ֆրանսական թատրոնը տիեզերական համբավ մը կվայելե թեև՝ հիմա, հանճարե ավելի ճարտարությամբ կազմված է ան. և այս չէ՞ միթե հաջողության պայմանը ամենուրեք. միջակություններ՝ որոնք պըզտիկ հնարքներով մեծ տաղանդներու հատուկ տեղերը կգրավեն։

Շատ թատրոններ կան Փարիզի մեջ. երկուքը միայն էապես ֆրանսական են. ֆրանսական ոգվույն անեղծանելի դրոշմը կկրեն՝ ըսել կուզեմ. երկու հատ զոր ուրիշ ոևէ երկրի մեջ չես կրնար գտնել։

Քոմետի Ֆրանսեզը դասական գրականության նվիրված է. Մոլիեռի տունը, գաղղիական նրբամտության ապաստանն է. աշխարհիկ հաստատություն մըն է, բայց սովորական թատրոն մը չէ ան. գրեթե ծիսական բան մը ունի. սրբավայր՝ ուր մեծ թատերագիրները և մեծ դերասանները, ժողովուրդեն ճանչցվելու համար, անպատճառ պետք է որ օծվին, աստիճան առնեն։ Ամեն ինչ սեթևեթ և հանդիսավոր է հոն. խոսքերը, շարժումները և երբ բովանդակ աշխարհ արվեստական կյանքեն խորշելով դեպի իրականը կդառնա, ոչ ոք Քոմետի Ֆրանսեզին ժամանակագրական սխալ մը ըլլալը դեռ կխոստովանի։

Վասնզի մեծ անցյալ մը, շլացուցիչ օրեր ունեցա[ծ է] ան, երբոր ինքը միայն ֆրանսական թատերգությունը իր ծոցին մեջ կամփոփեր. դասականները՝ Քոռնեյլ, Ռասին, ռոմանթիկները՝ Մյուսե, Հյուկո, իրապաշտ դպրոցին հոյակապ և աննման վարպետը՝ Տյումա որդին, հոն փառաբանվեցան։ Եվ այս մեծերուն քով և անոնց շուքին տակ կրտսերները, որոնց մեջ աչքի զաքնող դեմքեր ալ գտնվեցան, Հենրի Պեքի նման։

Այնպես որ, Փալե Ռոյալի քովիկը պարկեշտ մը նստած այս անպաճույճ շենքը՝ տպավորությունը կընե վրաս Հաղթական Կամարի մը, որուն վրա ֆրանսական գրականության մեծագույն անունները քանդակված են և որ Փլաս տը Ղեթուալի խրոխտ կամարեն շատ ավելի ակնածելի է ինծի։

Բայց բավական ատեն կա որ մեծ թատերագիր մը շարտադրեց ֆրանսական լուրջ մամուլը։ Հոս թատերական արվեստին անկումի մատնված ըլլալը, քոզարկված ձևով մը հասկցնելու վրա է։ Փարիզյան թատերաբեմներուն ներկայացուցած pieces-ները՝ պարապության, ոչընչության ներգործությունը կձգեն հանդիսականին վրա. վաղուց ֆրանսա-

կան ճաշակը չի սիրեր մթութիւնները, խորունկութիւններն ու մռնչիւնները. Շեքսփիր և Իպսեն երբեք հաջողութիւն գտած չեն Փարիզի մեջ. Պայծառութիւն, Վայելչութիւն, Սրամտութիւն այս նրբացած ժողովուրդին համար անհրաժեշտ պայմաններ են. բայց ատոնցմով միայն չի շինվիր կյանքը։ Նոր շարժում մը չպիտի ուշանա կարծեմ վերանորոգելու ֆրանսական թատրոնին այժմու միաձև formule-ները. և քիչ մը ջիղ ու արյուն մտցնելու անոր տկարացած մարմնին մեջ։

Օփեռա Քոմիքը ֆրանսական երաժշտության տաճարն է։ Մյուս երկիրներեն Ֆրանսան՝ իր ժպիտին անուշությամբը կտարբերի. ժպիտ զոր հոս ամեն բանի վրա կտեսնես. Օփեռա Քոմիքին երաժշտությունը այդ ժպտուն երազող երաժշտությունն է ահա. մեծ օփեռան չէ ան, ոչ ալ պզտիկը, թեթևը, օփեռեթը. վակներյան երգերուն խորունկ ու ճրնշիչ վայելքը չի տար. ոչ մյուսին խռլ զվարթությունը. ոչ Վալքիյոթ, կամ Լոհենկրին, ոչ Հրացանակիրները կույսերու վանքին մեջ կամ Տոլլառներու իշխանուհին. մեծ կիրքերու որոտումները չեն թնդար անոր ծիղունին տակ. միայն սովորական կյանքի տրոփումները, և որքա՜ն սրտի մոտիկ։

Գացի անգամ մըն ալ մտիկ ընելու Մինիոնը որ իր զմայլիչ ձայնովը կերգեր.

Կը ճանչնա՞ս այն երկիրը ուր նարնջենիները կը ծաղկին

Բոպիկ, ցնցոտիներու մեջ, ահ ու սարսափ լեցված աղվոր աչքերովը, առևանգված իր հայրենի տունեն՝ Մինիոն, Հայուհին կպատկերացներ իմ աչքիս։ Կճանչնամ, ըսի մտքովս, երկիր մը ուր նարնջենիները շարունակ արյունով կներկվին. այդ երկիրը իմ հայրենիքս է և ուրտեղ քեզի բախտակից շատ մը քույրեր ունիս, ո՜վ Մինիոն։

Փարիզ, 18/1 հոկտ. 1912

ՓԱՐԻԶԻ ՍԱԿԱՐԱՆԸ.— ՔԻՉ ՄԸ ԱՆԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆ։

Առտուն՝ պտույտ մը աննպատակ։ Rue du 4 Septembre-ը՝ Փարիզի ամենեն կենսահոդ փողոցներեն մեկն է։ Իր անունը փութամոռաց ֆրանսացիին կվերակոչե Նափոլեոն Գ-ի անկումին հետ արդի Հանրապետության հաստատումը։ 4 սեպտեմբեր 1870. քառասուն երկու տարի անկե ի վեր։ Ի՜նչ շուտ կանցնին տարիները։

Առևտուրի տենդոտ կյանքովը զեղուն այս փողոցը՝ գրեթե միշտ մարդկային գետով մը առլցված է. գե՛տ, որ կառքերու, թրամվեյներու ու օթոներու անընդհատ անցուդարձին մեջեն Bourse-ի հրապարակը կթափի։

Ի՜նչ է սա շենքը. անժպիտ բայց ոչ անշնորհ երես մը։ սյունազարդ ճակատ մը որ լուրջ և հպարտ բան մը ունի. չորս անկյունը չորս քարդրոշ արձաններ՝ Հարստությունը, Առատությունը, Խոհեմությունը և Արդարությունը կեցեր են. Փարիզի Սակարանն է ան. դարավերջին մեհյան, որ իր քուրմերը, իր ծեսերն ունի և ուրկե ելած պատգամներուն առջև թագապսակ գլուխներն անգամ կխոնարհին։

Պատկառանքով կնայիմ իրեն։

Տեսակ մը հեգնություն կա իր պարզությանը, իր կամովի աղքատությանը և այն անհաշվելի հպարտությանը մեջ որ անկե կհոսի ամեն կողմ, աշխարհի շրջանը կընե և իր տեղը կվերադառնա՝ նոր պտույտներ վերսկսելու համար ճիշտ ինչպես արյունը սրտեն կելլե, մարմնին շրջանը կընե և նորեն սիրտը կվերադառնա։ Այս գեղեցիկ նմանությունը իմս չէ. ելևմտագետներու և ընկերաբաններունն է։

Սիրտ՝ սա տարբերությամբ միայն, որ կյանքը պահպանելուն հետ երբեմն մահ ու կոտորած ալ կսփռե իր շուրջը. ցասումի պահուն իր գահավեժ տրոփումներուն հետ ո՞րքան տուներ տեղեր կփլչին, երկրաշարժե մը փլչողներեն ավելի շուտ, ավելի հիմնահատակ։ Քիչ մըն ալ կանացի սիրտ որ տկարներուն անողոք՝ զորավորներուն խոկույն անձնատուր կըլլա։

Ավելի ճիշտ է ըսել վարար ջուր մը որ հողերը կոտորե, կարգասավորե, երբեմն ալ կհորդի, իր փոսեն դուրս կնետվի, ճամփուն վրա հանդիպած բոլոր մշակություններն ու ցանքերը կավրե կավրշտկե։

Այո՛, պատկառանքով կնայիմ անոր, Դրամագլուխն է ան, առասպելային ուժը որ աշխարհը կվարե տիրաբար և որուն դեմ կովելու համար Ընկերվարությունը կհանե, հազիվ քանի մը տարիե ի վեր, սա մյուս ուժը՝ նկունը և ողորմելին, Աշխատությունը. Դավիթին և Գողիաթին պատմությունն է ան գուցե. մենե վերջը գալիք սերունդը պիտի տեսնե թե ո՞վ է վերջնական հաղթողը։

***

Որքա՜ն զարմանալու նյութեր կան այս քաղքին մեջ։ Խանութնե-
րուն, տուներուն վրայի ծանուցումները հազար թելադրություններ կընեն
մարդուս. ճիշտ հիմա երկու վերտառություն աչքիս կհանդիպին. մին
«Քաղաքային դպրոց մանչերու» և ճիշտ քովը, մյուսը՝ «Քրիստոնյա
դպրոց մանչերու»։ Եկեղեցին՝ Պետության դեմ, երբոր ատեն մը անոր
թեև ու թիկունքն էր. երեկվան բարեկամները այսօր թշնամի. ի՜նչ մեծ
փոփոխություն. ի՜նչ հետաքրքրաշարժ պայքար. ազատ մրցումն է ան։
Թող խայտա Սփենսերի հոգին. «Աշխարհը արժանավորագունին» ըսավ
անիկա։ Մեր քերթողահայրը, դարեր առաջ, ըսած էր. «Սահմանք քաջաց
զենքն յուրյանց»։

Մրցումին ամենեն բուռնը Պետության դեմ կմղվի կոր. ո՞վ կհա-
վատա ատոր, այո՛, Պետության դեմ. չէ՞ մի որ ամեն ինչ առուտուր
է աշխարհին մեջ. նույնիսկ Պետությունը։ Քաղաքացին տարեկան գու-
մար մը կվճարե՝ ծախու առնելու համար անկե ապրանք մը որ կկոչ-
վի «Ապահովություն կյանքի, պատվո և ինչքի» կամ «Արդարություն»
կամ «Ուսում» և կամ «Պաշտպանություն ճարտարարվեստի ու վաճա-
ռականության»։

Պետությունը՝ վաճառողը, անհատը հաճախորդն է։ Որովհետև Պե-
տությունը, մյուս վաճառականներուն պես, շատ հեղ իր ապրանքը
կխարդախե, կամ խիստ բարձր գին կպահանջե, անհատները իսկույն
իրեն դեմ մրցումի կելլեն. անոր ծախած ապրանքները լավագույն տե-
սակն և ավելի ածան տալու առաջարկություններ, մատուցումներ
կընեն։ Ես պետություն մը գիտեմ — գուք ալ — որ ասանկ մրցումի մը
առջև շատոնց պետք է որ իր խանութը գոցեր։

Սա արդարություն կվաճառե. իրավարարներ կարգելը ի՞նչ է՝ եթե
ոչ խույս տալ դատարաններեն, այսինքն պետության վաճառած արդա-
րությենեն, որ միշտ սուղ, դանդաղ և գեշ տեսակն է։ Սա մյուսը ապա-
հովություն կծախե. Պերլինի, Ժընևի մեջ վաճառականները իրենց խա-
նութներուն պահպանությունը պետությենեն չեն սպասեր, գիտեն, որ
ասիկա գոհացուցիչ կերպով այդ գործը չի կրնար ի գլուխ հանել. հա-
տուկ ընկերություն մը կազմված է, որ տարեկան չնչին վարձքի մը
փոխարեն՝ գիշերը աչալուրջ հսկողությամբ մը վաճառատունները կպահ-
պանե գողերուն դեմ։ Ոճրագործները ձերբակալելու համար Մեծն Բրի-
տանիոյ մեջ detective-ները փայլուն ծառայ են։ անոնք հետաքրքրաշարժ
գործը կատարեն շատ ավելի հաջողությամբ քան ուրիշներ։ Ինչպես
անհատները շատ ավելի ծանոթ կերպով կանչեն քան թե

պետությունը։ Vill d'Evéque փողոցի մեջ Քրիստոնյա դպրոցին գոյու-
թյունը քաղաքային դպրոցին դեմը ատոր ապացույցն է։

Ի՞նչ մնաց պետության ձեռքը, այն որ պետք է միայն՝ արտաքին
թշնամիին դեմ երկրին պաշտպանությունը համար բավականաչափ ուժ
մը, պահեստի բանակ մը՝ ոչ ավելի ոչ պակաս։

Շանզ Էլիզեի Ավընյուին մեջ կես մութ մը, գորշ ու թանձր, կիջներ
վերեն, կտարածվեր հետզհետե ավելի խտանալով. գիշեր էր գրեթե.
տեղ-տեղ լույսեր փայլեցան, շատցան, քիչ մը վերջը բոլոր ավընյուն
լուսասփյուռ տարածություն մը եղավ. իբրև թե աստղազարդ երկինքը
իր կապույտ թավիշովը վերեն վար ինկած Etoile-ի հրապարակեն մինչև
Concorde-ի հրապարակը փռված ըլլար։

Մինչև պանդոկին դուռը այս ադամանդազարդ գիշերին մեջ խոր-
հրդածություններս շարունակեցի. ահավասիկ Մարդկություն մը, որ
դարերե ի վեր աննահանջ կքալե, վարանումներով, համեցումներով,
աջ ու ահյակ խոտորումներով իր շավիղը կգծե, այսօր ճգմելով իր գար-
շապարին տակ ինչ որ իր գլխուն վրա դրած էր երեկ և vice versa։
Կմտածեմ սա Մարդկության վրա, շվարած հիմա, երկու մեծ ճամփա-
ներու առջև. մեյ մը մեկին, մեյ մը մյուսին երթալով, ինծի պես, ան
ալ չգիտնալով իր ուղելիքը։

Երկինքին վրա՝ Սենի ափերուն քով բարձրացող շենքերուն կոնա-
կեն, կարմիր փոշիացում մը կտարածվի և բոլոր հորիզոնը կգրավե
հետզհետե. գիշերը՝ փոխանակ սենալու, կանոսրանա, կես լույս, կես
մութ, կես կապույտ, կես կարմիր քողք մը կըլլա և որուն մեջ մշտա-
վրդով Քաղաքը կփաթթվի։

<1913>

ՎԵՊԵՐ

ԱՆՀԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Պոլսական վեպ

ՄԱՍՆ Ա

ՍԵԴՐԱՔ

Երեք ուսանող երիտասարդներ էին ասոնք, երեքն ալ զատ-զատ գաղափարներու, զգացումներու և հատկությանց ներկայացուցիչ. այսօր և ոչ մին մնաց անոնցմե, մին մահը տարավ, մյուսը պանդխտությունը տարագրեց և երրորդին ոչ ոք գիտե ուր ըլլալը։— Հետք ու հիշատակ չի թողուցին, ո՞ւսկից եկան և ո՞ւր գացին ասոնք. ոչ ոք կրցավ երբեք իմանալ. բայց անոնց տարօրինակ կյանքեն քանի մը հատվածներ դեռ բերնե բերան կզրուցվին։ Պարզ ու սրտահույզ է այս անհետացած երիտասարդաց վրայի ավանդությունը։

Երբ ուսանող կըսեմ, կերևակայեք անմիջապես քսակով թեթև, հույսով հարուստ, զվարթ, լքյալ, անտեր ու անհոգ էակ մը. ոչինչ ավելի հետաքրքիր է քան գոյությունն այս արարածին որ ուսման խստությունն իր անսպառ զվարթությամբ կթեթևցնե, ու շատ անգամ անողոք ճակատագրի դառնության դեմ կմաքառի։

Ընկերական արդի դիրքին մեջ ուսանողի կյանքն հատուկ գոյություն մ'է խորին ուսումնասիրության արժանի. այս տարօրինակ կյանքըն ընկերական պայքարին մեջ առաջին պատերազմի դաշտն է այսուհետև։

Ուսանողն՝ ամեն բանի փափագող ու ամեն բանե զուրկ՝ հեգնող ու դժգոհ անձնավորություն մ'է։

Այն երեք պատանիներն՝ որոց պատմությունը կ[redacted], Փերայի Համալսարանին ազատ ուսանողներեն էին, ատեն մը երբ փրավաբանական ու երկրաչափական ճյուղերը կդասախոսվեին հոն։

Երեքն ալ [redacted] երիտասարդներ էին. ի՞նչպես գտեր էին զիրար. պարզապես Համալսարանին մեջ հանդիպելով. միատեղ ճամփորդությունը միշտ բարեկամություն հառաջ կբերե և ուսանողությունը ճամփորդությանց [redacted] մտերմացեր էին այս երիտասարդներն որք միասին ճամփա ելած էին դեպի անծանոթն։

Քսակին սովորաբար պարապ, ու [redacted] ցերեկվան ճաշն առողջապահիկ կանոնաց հակառակ և հետևաբար ավելորդ դատելու, այս պարոններն երբեք չէին մտաբերած բախտին խստությանը դեմ գանգատելու. բարձրագույն գիտությանց հետևելով, թիչ շատ փիլիսոփա, այլ զվարթ փիլիսոփաներ էին ասոնք։

Դասախոսությանց ժամը լրանալուն պես, այս երիտասարդներն՝ իբրև Փերայի փոգոցներուն մշտաշրջիկ ոգիներն՝ վարձու սենյակ որոնելու պատրվակավ տուներու մեջ փակված գեղուհիներն երևան հանելը բան գործ ըրած էին իրենց։

Բայց այս ձրի ու հաճույալի պարապումը երկար չի տևեց. բաղդատաբար շատ կարճ միջոցի մեջ, վարձու տուն կամ սենյակ ունեցողներուն ամենքն ալ այս երեք թափառիկ այցելուները ճանչցան և իրարու ճանչցուցին, այնպես որ օր մը բոլոր տուները փակ գտան իրենց առջև։

Այս կացությունը ծանր էր ու չէր կրնար շարունակել. երեք բարեկամներուն ամենեն հանճարեղին կիյնար ճար մը մտածել, գյուտ մը ընել, եթե ոչ ուսմանց մեջ անուն ստանալու՝ գոնե ամենօրյա նոր զբոսանք մը հնարելու համար։

Հարկը մարդս հնարամիտ կընե։

Փերայի տանուտյարք առավոտ մը տեսան երկրաչափական գործիքներով զինված մի քանի երիտասարդներ որք իրենց տանը հատակագիծը շինելու զբաղած էին։

Փողոցներուն նոր ուղղություն մը տալու խոսք կար. ասոնցմե մին տուները երեքական մետր ներս քաշելու հարկին վրա կպնդեր... երե՞ք մետր... տանուտյարք ահաբեկեցան. Թաղապետական Վեցերորդ շրջանակը՝ փողոցի համար փլցուցած տուներուն արժեքը հատուցանելու կողմեն հռչակ հանած չէր, ու ասով երրորդը կըլլար որ երկրաչափները դարձյալ իրենց բնակությունը քանդել կորոշեին։ Կալվածատերներեն մին մոտեցավ այն երիտասարդին որ խումբին մեծը կերևեր ու զայն տուն հրամցուց [redacted] դժվարություն չըրավ և իր ընկերներով այս հրավերին պատասխանեց։

Այս փոքրիկ քաղաքավարությունը բոլոր այն փոզոցի տուներ փրկեց, վասնզի երկրաչափներն իրենց գործիքները վերցնելով ոգի տեղ փոխադրեցին։ Ավելորդ է ըսել որ այս սպառնալից կատակն ուսանողներուն նորահնար մեկ միջոցն էր։

Ահա այս և ասոր նման հազար խաղերով իրենց ցերեկվան ժամերը կանցունեին այս հովկուլ դատարկաշրջիկներն, ինչպես կրսեր բարեհիշատակ Թուսինյան։

Գիշերները տարբեր խնդիր էր. զբոսանքի նեղություն չի կար. դժվարությունն ընարության մեջ էր. Փերայի բոլոր Քաֆե շանթանները հյուրամեծար կգտնվեին այս տղոց համար, վասնզի ամեն մեկուն մի մեկ-մեկ երգիչ աղջկան համակրությունը շահած էին։

Երբեմն ազգասիրական զգացում մը մուտք կգտներ այս զվարճությանց մեջ. օր մը տեսան որ Տիգրան՝ երեք մտերմաց կրտսերագույնը՝ Արևելյան Ալբազարի մեջ նորեկ ու գեղանի գերմանուհվո մը բարեկամությունը շահեր էր. դիտեցին որ այս կապակցությունը սովորականեն ավելի ջերմ էր. Տիգրան ամեն օր մեկ երկու ժամ այս աղջկան տունը կանցուներ։

Ամիս մը վերջը գիշեր մը Տիգրան Համալսարանին բոլոր աստանդական ուսանողները ժողվեց ու Ալբազար տարավ։ Ես եմ զձեզ հրավիրողը, պարոններ, ըսավ Տիգրան ասոնց առջևն իյնալով. երիտասարդներն հոժարակամ հետևեցան իրենց դեռահաս ընկերին։

Թրամվեյի նոր գծին շինվելեն առաջ ամենուն ծանոթ էր այս հրաշակավոր սրահն, ուր այսօր Նոր Թատրոնը կբարձրանա իր շքեղ ճակատով։

Ամեն ոք գիտե կամ չգիտե թե ի՞նչ է Քաֆե շանթան մը.— Հոս՝ տեղը չէ բարոյականի տեսակետով քննել այս զբոսանաց վայրերը. սա չափ հարկ է ըսել միայն որ այս սրահներուն մեջ ամբոխը երկու ժամի կբաժնվի, մին որ սրահին մեջ, պարզամիտ ու ապշած, կունկնդրի կիսամերկ ու հրապուրիչ աղջկան մը երգերուն. ասի հանդիսատեսներուն նորեկ, դեռավարժ ու աղքատ մասն է. մյուսն որ արհամարհելով պարզ ունկնդրը մը համեստ դերն, իր ժամերը կանցունե դերասանուհյաց հատուկ արտոնեներուն մեջ, այս դիցուհյաց մոտ ու ռուլեթի սեղանին քով իր կյանքը բաժնելով ցոփության ու խաղամոլության մեջ։

Ալբազարի սրահն այս գիշեր կարծես սովորականեն ավելի փոքր մ'ուներ. երգիչներն իրարու կհաջորդեին իրենց ճոխ ու շռայլ շրջազգեստներուն երկայն քղանցքովը ծածկելով տեսարանին կեսն. ընդհանուր զվարթություն մը կար սրահին մեջ։

Կարգը գերմանուհվույն եկավ։ Գեղանի երգիչն հառաջացավ տեսարանին առջև. սև ալբակի պարզ ու անզարդ շրջազգեստ մը հագած էր որ իր գեղեցիկ մարմինն ընդգրկելով անոր բոլոր հրապույրը երևան կհաներ. մազերը ժողված չէր, այլ ցիրուցան թողած ուսին վրա. Իր դեմքը խոժոռ ու տրտում արտահայտություն մ'ուներ։ Աղջիկն սկսավ երգել...

Եվրոպացիներն իզուր ջանացին բառ մը հասկնալ այս անսովոր արտասանութենեն, մինչդեռ ահագնալուր ու որոտաձայն ծափահարություն մը երգին առաջին տունը կողջուներ։ Երգիչ մը չէր նա, այլ ներշնչյալ ու գերագույն ոգի մը որ կիշխեր բոլոր ներկայից վրա. սրահին մեջ գտնվող բոլոր հայերն ոտք ելեր էին միևնույն զսպանակեն մղյալ. դերասանուհին Մայր Արամքի առաջին տունը երգեր էր։

Առաջին անգամն էր որ հայերեն երգ մը կլսվեր այս սրահին մեջ, ու այս հաճոյալից գաղափարը Տիգրանի երևակայության ծնունդն էր։

Տիգրան իրավաբանության ուսանող մ'էր. ճպուռի մը պես շատախոս, թռչնո մը պես երգող ու անոր պես անհաստատ, աղջկան մը պես քնքուշ, սատանայի չափ խելացի պատանյակ մ'էր. առաջինն էր Համալսարանին մեջ ուր ամենքը զինքը կսիրեին, միշտ օգնող ու ձեռնտու գտնված էր իր դասակիցներուն որոց անբաժանելի ընկերն էր, մասնավորապես Սեդրաքի համար (երկրաչափության ուսանող մը) որու զավկի ավելի սիրելի էր։

Տասնեյոթը տարեկան կար այս պատանին, համեստ իր գիտության մեջ, պարզ, համարձակ, վիճող ու զայրացկոտ տղա մը։ Բարձրագույն գիտությանց հետևելով՝ մայրենի լեզվի գրագիտությունը մեկ կողմ թողած չէր։

Բացե ի բաց կարհամարհեր անոնք որ հազիվ օտար լեզվի մը մեջ դեռավարժ, իրենց ազգությունն ամոթ ու նվաստություն կհամարին ու մայրենի լեզուն կվճռեն անհամ, կոշտ ու տգեղ. նույնչափ կարհամարհեր գուցե անոնք որք գիտությանց նախնական ծանոթություններն ստանալով անմիջապես աշխարհաքաղաքացի կդառնան։

Հետևապես ազգային կյանքի հմուտ ու հետամուտ, քննադատող ու դժգոհ ոգի, ի բեռ ընդդիմադիր ամեն վարչության, քիչ շատ մատունեցած էր իր բարեկամներուն հետ այն զանազան ժողովրդական ցույցերու մեջ որմե ապիկար վարչություն մը ու նվաստացած երեսփոխանություն մը կսարսափին։ Քանիցս այս երկու ժողովները պաշարած էր Մատենադարանի սենեկին մեջ որ մեր ազգային փախստականի [illegible]

Ղալաթիոյ եկեղեցվո բակին մեջ շատ անգամ լսված էր անոր ըմբոստ ու [illegible] մշակներն իր շուրջը կհավա-

քեր, կհրահրեր ու կարձակեր. ժողովրդյան պատանի ու սիրելի հոնտուրը էր ասի՝ զոր ամենքը կճանչային այն ատենները։

Այս վատթարացման դարուն մեջ ուր միտքն հոգին կմոռցնե, ուր մարդկությունն ազգությունը կանհետացնե, թերևս միակ այս երիտասարդն էր նյութապաշտ փիլիսոփա մը՝ առանց զուրկ լինելու այն բանաստեղծական ոգ'ենն զոր պատանությունն ու դժբախտությունը կուտան և զոր չափահասությունն ու երջանկությունը ետ կառնուն։

Տիգրանի ընտանիքը ծանոթ չէր ու ինքը բնավ չէր խոսեր անոր վրա. իր մանկությանը Պեշիքթաշ կրնակեր, վերջեն Օրթագյուղ անցավ ու հետո Փերայի մեջ հանդիպեցան անոր։

Իր ընկերներն Համալսարանին մեջ ճանչցան զինքը. շիկնոտ ու մելամաղձոտ, սրտափակ ու գլխահակ տղա մ'էր. ժամանակով սրտի մոտ, հպարտ ու զվարթ պատանի մ'եղավ. քաշված ու առանձնացած էր առաջ. հիմա մոտեցող, թերևս հարձակող մեկն էր։

Այս տղան միջակ ու վայելուչ հասակով, մութ շագանակագույն մազերով պատանի մ'էր. գեղեցիկ դեմք ու գեղեցկագույն աչքեր ուներ զորս Համալսարանին շուրջը գտնվող տուներուն աղջիկները շուտով նշմարեցին։

Տիգրան սիրեց առաջին աղջիկն որ իրեն ժպտեցավ ու ինքն իսկ իր սիրո սաստկությենեն վախցավ։ Դիցուհվո մը պես գեղանի ու մանկամարդ հելլենուհի մ'էր այս որ Համալսարանին պարգևաբաշխության հանդիսին մեջ տեսեր էր պատանին առաջին ելլող այնքան տարիքոտ ընկերներու մեջեն. նա մանավանդ զարմացեր ու հավներ էր անոր ձևերուն որոց շնորհը պարզությանցը մեջ կկայանար։

Կատա՜կ մը, պարզ կատա՜կ մ'ընել կարծեր էր ժպտելով անոր երեսին ու անոր սրտին հաղորդելով յուր աչքերուն ավերիչ կրակը. վերջեն Տիգրանի հափշտակությունը տեսնելով զբոսներ էր քիչ մը ու հետ ձանձրացեր էր անկից. այս քմահաճույքը լուրջ բան մը չէր աղջկան համար, այլ մահացու կրնար լինիլ պատանվույն սրտին։

Հելլենուհին ամուսնացավ. ահավոր ու սարսափելի հարված մը եղավ ասիկա Տիգրանին որ մաղ մնաց պիտի մեռներ. մեկու մը չի բացավ իր վիշտն ու մեկու մը չի գանգատեցավ. արժանապատվության զգացումն որ ամենեն հզոր կխոսեր յուր հոգվույն, զինքը փրկեց. ի մտածեց այլևս անոր, բայց չի ջնջեց անոր սերն իր սրտեն. ամուսնացող անխոհեմուհին իր սիրած աղջիկը չէր. իր սիրածը մեռած համարեց այլևս և երկյուղած բարեպաշտությամբ մը իր սրտին մեջ խոր ու շատ խոր թաղեց առաջին սիրո հիշատակն ու ամրացավ ճակատագրին դեմ։

Ոչ ոք իշխեց իրեն սիրով անկից վերջը։ ի փոխարեն ինքը բուռն ու կատաղի եռանդով մը նետվեցավ կանանց մեջ. սիրած էր ու խաբած էին զինքը. կարգն իրեն էր խաբելու. Տիգրան ձախորդության կհավատար. ուստի ծանր չեկավ իրեն միույն վրեժը մյուսեն լուծել. հատուցման մեջ կիները մեկզմեկու երաշխավոր կճանչնար։

Ուստի ամեն կնոջ միևնույն աշխուժով ու միևնույն համոզմամբ կրկնեց իր սերն ու գիմացինը համոզեց. իրեն համար բաղդատություն ու տարբերություն չի կար կանանց մեջ. մանկամարդը կամ տարիքն առնողը, գեղանին կամ տգեղը, տիրուհին կամ սպասուհին, գործավորուհին կամ իշխանուհին, կրոնավորուհին կամ հասարակաց աղջիկը միևնույն բանն էին իրեն համար։

Սեղրաք երեք բարեկամներուն ամենեն ծանրաբարոն էր ու քանի երեք տարեկան լինելով Տիգրանի համար գրեթե մեծ եղբայր մ'էր. տրժգույն, նիհար ու խարտիշահեր երիտասարդ մ'որ սովորաբար դալուկ դեմքին վրա նեղ ու բարակ շրթունքն աչքի կզարներ իր կարմիր գույնովը։

Գեղեցիկ կապույտ աչքեր, լայն ու ժամանակեն առաջ ակոսյալ ճակատ մը, սիրուն մորուք մը ու սև երիզով կախված ակնոց մը կտեսնվեր այս երիտասարդին դեմքին վրա որ միշտ լուրջ թերևս խոժոռ երևույթ մ'ուներ. կատարյալ հակապատկեր մը լինելով հանդերձ յուր կրտսերագույն բարեկամին, իր արտաքին ցուրտ ձևերուն ներքև փափուկ ու վեհանձն սիրտ մը կկրեր։

Անձնվեր մինչ ի մահ առանց բառ մը արտասանելու, գաղտնապահ, խորհրդատու, մեկ բառով եղական ընկեր մ'էր։

Իր սկզբունքներն ու ճաշակը ծանոթ էին, որոց համար մաքրակրոն անգլիացվո մը պես անողոք էր. կառավարության միապետությունը, կանանց մեջ խարտյաշը, գույներուն մեջ սևը կճանչնար միայն։

Երաժշտության մեջ Մենտելսոնը կընտրեր իր համար, անորոշ ու տրտում շեշտերովը. նկարչության մեջ Այվազովսքին իր անհուն ու անխուսափելի ծովին, իր ծփծփուն ալիքներուն, յուր կապարագույն ու ցիրուցան ամպերուն և այն անբացատրելի խորության հետ որ այս մեծ արհեստավորին հատուկ է։

Բանաստեղծությանց մեջ արևելյան երգերը կսիրեր։ Երբեմն մելամաղձոտ, հուսակտուր այլ համբերատար ոգի մը կա այս երգերուն մեջ, երբեմն արհամարհոտ շեշտ մը։

Անոնք որք անգետ են օսմանյան գրագիտության, պախարակելե ուրիշ կերպով չեն հիշատակեր զայն. է՜հ, տեր աստված, ո՞վ է սա մուրացիկ երգիչն որ սրճարանին մութ մեկ խորշին մեջ կնվագե. հարգա-

լից բազմություն մը խոր լռության մեջ կունկնդրե նմա. Արևելքի ժողովրդյան չափ ոչ ոք մեծարած է բանաստեղծներն։

Ու Սեդրաք հոժարափույթ կերթար Պոլսո ամենեն անծանոթ մեկ խորշին մեջ, տաճիկ թաղի մը մեկ անկյունը բարեմիտ ու ծերունի թուրքաց հետ ունկնդրել այս գնչու բանաստեղծներուն։ Երբեմն հայ մ'է այս համեստ երգիչն՝ որ յուր մայրենի լեզվին անծանոթ՝ օսմանցի բանաստեղծներուն մեջ ստացած է փառահեղ անուն մը։ Արդարև թուրք երգիչներն՝ որպես նախնի ժամանակի ասպետներ՝ հատուկ անուն մ'ունին իրենց ասպարեզին մեջ որով կհիշատակվին։

Սեդրաք անհագ հետաքրքրությամբ կհավաքեր մոռացյալ հայ բանաստեղծներու վրա այն ամեն ավանդությունները՝ զորս ժամանակը դեռ չէր անհետացուցած։ Ու կպատահեր որ անվանի Նամի մը ելներ ասոնց մեջեն, դեռահասակ ու վաղամեռիկ երգիչ, գրագետ ու փիլիսոփա մը, պարծանք հայ տաղանդին, բոլորովին մոռացյալ ու անծանոթ եսամոլ հայ գրագիտաց մեջ։

Ո՞ւր տեղացի էր և ո՞ր ընտանիքի կվերաբերեր Սեդրաք. ահավասիկ հարցում մը զոր երբեք չէին մտաբերած անոր բարեկամներն. հեռվե հեռու լսած էին որ Վոսփորի ասիական եզերքեն լավագույն ընտանիքի մը անդրանիկ զավակն էր. իր անկախ դիրքն ու ազատ դաստիարակությունը չէր հարմարած հայրենի տան նահապետական ընթացքին ուր անառակ ու անդարձ որդի մը նկատված էր։

Մայրն, ո՛վ անհավատալի գաղտնիք կանացի սրտին, իր ժպիտ մյուս զավակացը հատկացուցած էր ու խոժոռ ու աններող դեմք մ'այս միայն կար Սեդրաքի դեմը։ Հայրը խրոխտ հանդիմանությամբ ու սպառնալյոք կհյուրընկալեր այս անշահ զավակն՝ որ իր հոր առևտրական տետրակները բռնել կմերժեր։ Եղբարքն՝ ամենքն ալ իրմե փոքր՝ իր վրա կծիծաղեին. կատարյալ լքում մը տեսավ այս տղան նույնիսկ իր ընտանյաց գրկին մեջ ու ալ առանձին կյանքը անհրաժեշտ գտավ։

Սեդրաքի բաժանմամբ կարծես բեռ մը վերցավ ընտանյացը վրայեն. ամենքը գոհ ու երջանիկ կարծեցին իրենքզիրենք այս տղուն հեռանալովը, իսկ ինքը չի կրցավ բոլորովին անտարբեր բաժնվիլ մայրենի ծոցեն. ահավասիկ յուր խորհրդածություններեն մաս մը զոր թուղթի մը վրա նշանակած էր.

«1873 տարվո սեպտեմբերի 7-րդ օրը բաժնվեցա ընտանիքես զատ ու ազատ ապրելու համար. բաժանումը միշտ աղեկ ու տխուր բան մ'է վերջավորություն մ'է. հոն նախորդ կյանքը կդադրի ու ինչ որ ալ ըլլա նոր սկսելիքը, կարելի չէ անտարբեր սրտով առաջինը թողուլ. հետանայց նայվածք մ'ունինք ամեն բանի զոր կթողունք կամ որ զմեզ կթողու,— իսկ բաժանումներու աղեկությունը հոն է որ ոևէ ուժ անջատմամբ չի ջլատվիր այլ կկրկնապատկվի. աշխարհիս մեջ կյանքը բաժանումով կսկսի. որդին պետք է բաժանել մորն արգանդեն որպեսզի ծնի ու ապրի. ո՜վ դժնդակ ու արդյունավոր ճակատագիր մարդկության»։

Ուրիշ տեղ մը այսպես գրեր էր .«Գիշերները մինակ կդառնամ ամայի սենյակս որ համեստ կահ կարասիք մը միայն կպարունակե. ամեն ինչ կանոնավոր շտկված ու իր տեղն է. ճրագս լուցկիին մոտ, փայտը վառարանին քով, զգեստներս իրենց ծածկոցին ներքև. ժամացույցի պես լարված սենյակ մը որու դեմ իզուր գանգատելու պատճառ կփընտրեմ. ո՜չ, այս երկրաչափական անխոտորութենեն չեմ ախորժիր. քիչ մը անխնամության երևույթ պետք է ինծի. վարձկան ձեռքի մը ծառայությունը չէ այլ սրտի մտոք անձի մը խնամքն որ կրնա շենցնել այս անարձագանք պատերը»։

Սեդրաքի ընտանեկան բաժանումն ուրիշ պատճառով մ'ալ ծանր ու դժվարին եղավ. հայրենի տունեն մեկնելով հարկ եղավ նաև թողուլ մանկության ընկերուհի մը։

Քույր ու եղբայր ըսվելու չափ տղա հասակե ի վեր, Սեդրաքի հետ մեծցած գեղանի պարմանուհի մ'էր այս՝ որ բարեկամ ու դրացի ընտանիքի մը մեկ հատիկ զավակն էր։

Յուր տան մեջ լքյալ՝ Սեդրաք անոր քով միայն գտեր էր առաջին գորովո զգացումը։

Պատանին սովորական տղա մը չէր. աղջիկն ամենեն լավ գիտեր զայս. անոր ընտանեկան կացությունը մոտեն ճանչնալով՝ իր մեծարանքն ավելցեր էր այս դառնացյալ հոգվույն նկատմամբ ու ինքնին հանձն առեր էր զայն սփոփել։

Ազգային վարժարանաց ուսումն ավարտելով Սուրբիկ— այս էր Սեդրաքի նորատի բարեկամուհվույն անունն— ինքզինքը խիստ համբակ գտեր էր իր ուսյալ ընկերոջ քով որո հմտությունը, բարձր դատողությունն ու խմաստալից խոսակցությունը զինք կհմայեին. երիտասարդին մտերմությունը խիստ նպաստած էր այս համակրելի հոգվույն ու մտքին մշակման, և փրկարար ներգործություն մը ըրեր էր անոր վրա։

Ինչ որ ալ լինին մեր ազգային վարժարանաց վերաբերված պակասությունք, նոքա՝ անհատական դպրոցներուն վրա ամենաբարձր առավելություն մ'ունին, որ ճշմարիտ ազգային կրթություն մը տալու մեջ կկայանա։

Ֆրանսական Գիտության քեռց կամ Բաղդատական վարժարանները միայն մեջ Ֆրանսիոյ և մյուսին մեջ անգլիերենը կրնան չավարտյալ

կերպիվ ավանդվիլ. ազգային վարժարանք օտար լեզուներ ուսուցանելու մեջ հաջողություն ունեցած չեն երբեք և ճիշտ ասոր համար կգտվեմ զանոնք. ամեն աղջիկ ընկերության մեջ, ընտանյաց մեջ դիրք մ'ունենալե առաջ հայուհի մը պարտի լինիլ և Սուրբիկ ազգային կրթություն ստացող աղջկան տիպար մ'էր։

Հայ-հռոմեական բարեկամուհի մ'ունեցեր էր որ Փանկալթիի մեջ ֆրանսական գիշերօթիկ վարժարան մը կհաճախեր. տեսակցություն մ'ունեցան օր մը և երկու աշակերտուհիները փոխադարձաբար իրենց առած ուսմանց վրա խոսեցան. Փերայի օրիորդն արգահատող կարեկցությամբ մը հարցուց Սուրբիկին առած դասերն ու խրոխտ մեծամտությամբ մի առ մի թվեց այն կարևոր գիտելիքները զորս ինքը կուսաներ։ Ֆրանսայի պատմություն, Ֆրանսայի աշխարհագրություն, Ֆրանսայի գրականություն ու Պապական եկեղեցվույն սրբազան դավանանք, ահա՛ ինչ որ այս կանուխեն օտարացյալ աղջիկը թվեց իր ապշյալ ընկերուհվույն. նույն իսկ ֆրանսացի օրիորդը պիտի նախանձեր այս արևելքցի ֆրանսուհվույն վրա։ Ֆրանսայի՝ Ֆրանսին գետակը, ասրն ու ձորն, ամենեն աննշան ավանը ծանոթ էին այս հայուհվույն՝ որ իր հայրենյաց Արարատը չէր գիտեր և չէր ուզեր գիտնալ։

Սուրբիկ ապշեցավ, ամշցավ ու զայրացավ, մինչդեռ ամբարտավան պարեմանուհին իր չգիտցած հայերեն բառերը կոպիտ ու սխալ արտասանությամբ մը կրկնելով անոնց տգեղությանը վրա կծիծաղեր ու հայերեն չգիտնալուն վրա կուրախանար։ Արդեն ապագայի պատրաստությունները տեսեր էր. պիտի ամուսնանար եվրոպացի երիտասարդի մը հետ որ զինքը պիտի տաներ այն գեղեցիկ ու պաշտեցյալ երկիրն որուն ամեն բան զոհելու պատրաստ էր. հայ երիտասարդաց հետ ամուսնանա՞լ, ազգային պարոններու հետ կենակցի՞լ, ահա այն սարսափելի հավանականությունը՝ զոր բնավ չպիտի ընդուներ։

Բայց ինչ որ անհանդուրժելի թվեցավ Սուրբիկի, այն նախատալից անտարբերությունն էր որով իր հայրենյաց հիշատակությունը լսեց այս խորթ ու անհարազատ զավկին բերնեն և Սուրբիկ այլևս չտեսնվեցավ անոր հետ։

Ինք՝ մոտեն տեղյակ էր հայոց գրական գործունեության, ամեն նոր երկ կամ պարբերական հրատարակություն իր հետաքրքիր նայվածքեն չէր վրիպած և Սեդրաք հմուտ դատավոր մը ու լավագույն առաջնորդն էր անոր գրական պարապմանց մեջ. իրիկունները ճաշեն վերջը Սեդրաք Սուրբիկի տունը կերթար. օրվան լուրերն աչքե կանցուցեին, ու հետո ձմեռը, վառ ու ճարճատուն վառարանին ջերմությանը մոտ, նոր հրատարակություններով ծածկված սեղանին շուրջը, կսկսեր այն ջերմ, լուրջ

ու հմտալից խոսակցությունն որ մինչև կեսգիշեր կերկարեր։— Ընդհանրապես կգանգատեին որ բուն ազգային գրականութենե մ'ավելի օտարամուտ ոգի մ'էր որ հայ հեղինակաց շարադրությանց մեջ երևան կելներ։

Երբեմն գիտությանց ու ուսմանց վրա կդառնար խոսակցությունը. պարմանուհին, իր սեռին հատուկ բարեպաշտությամբ, ըստ կարի կդիմադրեր այն կտրուկ վճիռներուն՝ որով գիտությունն իր անխուսափելի ճշմարտությունները կծանուցանե. երկրաբանութենե մինչև աստղաբանության վրա կխոսեին և Սեդրաք իր բարձր կրթության շնորհիվ մի առ մի կբացատրեր այն անողոք ու մշտնջենական օրենքներն՝ որով անհունապես փոքրիկ հյուլեն ու անհունապես մեծ տիեզերքը միևնույն ներդաշնակությամբ կկառավարվին։— Ընկերական կենաց մշտահույզ խընդիրներն ի կարգին վիճաբանության նյութ կլինեին. ազգաց ճակատագիրն, անհատներու ազատությունը, լեզվի ու կրոնքի տարբերությունն հետզհետե կքննվեին։— Սուրբիկ հուզյալ ձայնիվ կպաշտպաներ աշխատավորներու տառապյալ դասն ու հարստության ի գործ դրած բռնության դեմ կորոտար, մինչդեռ երիտասարդն հանդարտ ձայնով կբացատրեր տնտեսական գիտության այն ամենանվիրական սկզբունքն որ ամեն առուտուրի ազատությունն հարգելու մեջն է և տրտմությամբ կթվեր այն տարբեր տարբեր պատճառներն որոց մեջ փնտրել պետք է թշվառության գաղտնիքը։

Այսպեսով և եվրոպացի հեղինակներու ընթերցանությամբ ստացավ ծաղկահասակ աղջիկն հիմնավոր ու առողջ կրթության մը բոլոր տարրերքը։

Սուրբիկ միանգամայն վարպետ գրչի տեր ու մանավանդ տաղանդավոր դաշնակահար մ'էր։ Դաշնակը փոթորկյալ կամ հանդարտ ծովու մը պես կպատկերացներ անոր մրրկոտ կամ անդորր ոգին. անզգա գործիքի մը ձայնը չէր որ կբարձրանար, այլ անոր ճարտար ու փափուկ մատներեն դղրդված անբացատրելի ու հմայիչ ներդաշնակություն մ'էր հնչուն, պայծառ ու ազատ, որ կսավառներ ունկնդրին զմայլած հոգվույն վրա։ Իր ամենեն սիրած վարպետը Մենտելսոնն էր, վասնզի Սեդրաքի սիրածն էր այն. ճաշեն վերջն երբ խոսակցությանց նյութն սպառեր ու կամենային հանգիստ առնուլ, այն ատեն կզարներ այն սոնաթներեն մին՝ որոց տրտմությունն ու վսեմությունը միշտ գաղտնիք մը պիտի մնա ամենուն համար։

Հազվագյուտ բացառությամբ մը պատանուհին զերծ էր այն ողբալի ազատամտութենեն՝ որով նորատի աղջիկներն ու պառավ կիներն իգական սեռին անհավասարության դեմ կբողոքեն շարունակ։

Աշխարհիս վրա աղջիկը՝ պահանջող, պառավը՝ գանգատող պիտի մնա հավիտյան։

Ոչ մեկ դար, ոչ մեկ լուսավորություն պիտի կարենա երբեք զոհացնել այս երկու անձնավորությունները զորս բնությունը միևնույն դժգոհության շրջանակին մեջ միացուցած է։

Աղջիկն՝ հույս ունենալուն վրա կգայրանա, պառավը՝ չունենալուն համար, ու այս երկու հակառակ պահանջումները միևնույն բողոքով երևան կելնեն։

Դիտեցեք որ երբեք մանկամարդ ու ամուսնացյալ կին մը իգական սեռին գերության վրա չի խոսիր. երիտասարդությունն ու ամուսնությունը կնոջ ամենազորության միջոցն է. բայց ամեն իշխանությունն իր անկումն ունի ու զարմանալի չէ որ տարիքնին առնող կիները, զուրկ ամեն թեկնածութենե, անհամ ու անկարգ գտնեն այն ընկերական կյանքը՝ զոր իրենց երիտասարդության ժամանակ այնչափ հրապուրիչ կգտնեին։

Սիրող հոգիները միշտ անձնվիրության պատրաստ են ու Սուրբիկ այս անձնվեր էակներեն էր. բնությամբ խրոխտ, այլ վեհանձն հոժարությամբ երիտասարդին գաղափարաց բարձրությունը ճանչցեր ու մեծարեր էր, առանց սնոտի հպարտություն մը ցույց տալու։ Սակայն այս խորին մտերմությունն առանց վտանգի չէր։ Այս փոխադարձ հարգանքն ու համակրանքն, երկու ծավալման կարոտ հոգիներու ամենօրյա միությունը, տարիքնին, գաղափարաց ու զգացմանց ներդաշնակությունն՝ անքակտելի կապ մը հառաջ բերին։

Պատանուհվույն հրաշալի գեղեցկությունը Սեդրաքի խելքը գլխեն չառավ, բայց անոր գորովալից մտերմությունը զայն շղթայեց ու աշխարհ այս աղջկան վրա միայն հիմնված երևցավ անոր աչքին։

Սեդրաք ու Սուրբիկ զիրար սիրեցին, բայց այս սերը չէր այն վաղանցիկ ու խաբեբա ավյունն՝ որ հովի պես կուգա ու կանցնի, այլ խորին, սուրբ ու հոգեկան միավորություն մը։

Ահա այս պատճառով Սեդրաքի բաժանումը դժնդակ զրկում մը դարձավ. ընտանեկան գորովե արդեն զուրկ, կարոտ մնաց նաև այն միակ երեսին որ իրեն կժպտեր։ Անցյալ օրերու հիշատակն հեռավոր ու կորուսյալ երջանկություն մը պատկերին պես անոր շփոթ մտքին մեջ կնկարվեր։ Հայտնի եղավ որ չի պիտի կարենար անկե զատված ապրիլ։ Գաղտնի նամակագրություն մը ըստ կարելվույն մեղմացուց այս անջատման ցավն։ Երկար և անվերջանալի նամակներ էին ասոնք զորս ամեն գիշեր կգրեր իր հոգվույն ամեն տպավորությունները, օրորտին դառնությունները, հույսերն, պատրանքն և ցնորքը ցրվելով թափելով անդգա թղթին վրա։ Որոշ բառ մը չի կար այս գրությանց մեջ, ո՛չ. սիրելը շատ չնչին, շատ տկար բառ մ'էր որ իր անհուն խանդաղատանքը չէր կարող բացատրել։ և ոչ մեկ բառի մեջ, և ոչ մեկ նամակի մեջ կարելի էր ամփոփել իր փոթորկյալ հոգին։

Սուրբիկի նամակները միևնույն խռովյալ արձագանքները, միևնույն անհուն անձնվիրությունն ու ապագայի մտահոգությունները կպարունակեին.

«Սիրելիս, քու սիրովդ ու հմտությամբդ սնուցիր զիս. հիմար եռանդով մը նետվեցա ամեն գաղտնիք իմանալու. դուն քովս էիր ու ամեն ինչ ուսուցիր ինձ. խրոխտ, գիտուն ու սիրեցյալ առաջնորդ մ'էիր, ահավոր վարդապետություններ ուներիր լեզվիդ ծայրն, որք քու բերնիդ մեջ իրենց սոսկումը կկորսնցուցնեին. իզուր ուզեցի մաքառիլ անոնց դեմ, քու սերդ հաջողեցավ ընել ինչ որ հմտությունդ նախապաշարմանցս դեմ չէր կարող ընել. համոզվեցա քեզի։ Կապված էի քեզի այն միակ սիրով զոր երիտասարդուհին երկու անգամ չունենար իր բոլոր կյանքին մեջ. մոռ թե հեռու միշտ պաշտեցյալ հիշատակ մ'ունիս սրտիս մեջ զոր երկյուղած բարեպաշտությամբ կպահեմ»։

Ուրիշ նամակի մը մեջ այսպես կրսեր. «Ո՞ւր ես, Սեդրաք։ Զմրան գիշեր է ցրտին, ձյուն ու բուք կտեղա, ի՞նչ կընես առանձին ու մթին սենեկիդ մեջ. այս տունը բանտ մ'է նսեմ քանի որ հոս չես. ծնողացս սերը չի լնուր այն պարապը զոր դուն թողուցիր։ Ցըլլա թե հուսահատ քաջությամբ, չափազանց աշխատությամբ առողջությունդ վտանգես։ Անձիդ տրված հարվածը միայն քեզի չպիտի զարնե»։

Եվ այլուր. «Լսեցի քննությանցդ հաջողությունը. մաթեմաթիքը միշտ կսիրեիր, ու ճշմարտության գիտությունն է կսեիր. կտեսնես թե ինչպես կհիշեմ բոլոր խոսքերդ. սակայն չըլլա թե այդ պարապմունքը Սուրբիկդ մոռցնել տա քեզ։ Ես կուզեմ որ քու համբավդ այնչափ մեծ ըլլա որչափ մինչև հիմա տեսած զրկումդ։ Քու անունդ պետք է, կուզեմ որ մեծարանոք հիշվի ու ես անով պարծենամ»։

«Դուն հարուստի աղջիկ ես, կգրեր օր մը անոր երիտասարդը, ես ալ հարուստի որդի էի, բայց հիմա ոչինչ եմ. ատեն մը չէի և հիմա ալ չեմ տար կարևորություն հարստության, բայց թե որ միջոց մ'է այդ քեզ մոտենալու, Սուրբի՛կ, հնդիկ իշխանի մը չափ հարուստ պիտի ըլլամ։ Անվան ու փառքի հետամուտ չէի և չեմ, սակայն եթե քու ծնողացդդ աչքին այդ է այն պատվանդանն որով մինչև քեզ բարձրանալ ներելի է, լա՛վ ուրեմն, պիտի մոռնամ, պիտի փակեմ սիրտս, ու միտքս միայն մաշեցնելով պիտի ստանամ այն դիրքը զոր ընկերությունը կպահանջե նորեկներեն»։

Այս հաստատ համոզմամբ ձեռք զարկավ իր երկրաչափական ուսման զորս քանի մը տարիեն աննման հաջողությամբ մը պիտի ավարտեր. և Համալսարանին մեջ ճանչցավ Տիգրանն ու սիրեց զայն եղբոր մը չափ։ Այս երկու պատանիներն այնչափ ավելի զիրար կսիրեին որքան մինչև ցայն վայր զլացված էր իրենց ամեն գորովանքը։ Իրարու համար գաղտնիք չունեցան և ոչ մեկ ժամանակ։

Տարիքի պզտիկ տարբերություն մը պատճառ չեղավ իրենց սրտի կապերը միմյանց հաղորդելու. Սեդրաքի նոր բարեկամն անոր սփոփանք ու քաջալերության օրինակ մ'եղավ և անոր զվարթ ու խնդուն երեսը՝ մասամբ թեթևցուց ուսման տարիներու աշխատությունն ու տրխրությունը։

Տիգրանի միջոցավ ծանոթացավ նաև Խոսրովին հետ որ նույնպես զվարթ ու զվարճախոս ուսանող մ'էր, և այս ընկերական կյանքով կարծես անդգալի կերպով վերջացուցին տարեշրջաններն ու վերջին քննությունները տվին։

Խոսրով դատավորական ճյուղն ընտրեց. Տիգրան ազատություն կսիրեր միշտ, ու փաստաբանական ասպարեզը մտավ. պաշտոնեության փաղքն, որ Խոսրովին բոլոր ակնկալությունն էր, իրեն համար նշանակություն չուներ։ Այս երեք մարդիկը՝ չորս տարի դասընկերություն ընելե վերջ՝ իրարմե կբաժնվեին աշխարհի պայքարին մեջ մըտնելու համար։

Բայց Խոսրով պարզ ու գոհ սրտով չի զատվեցավ իր ընկերեն. գավառացի՝ այսինքն ի բնե խորամանկ՝ բնավորությամբ խիստ հեռի էր Տիգրանեն։ Սակայն իրավ է որ երբեք միմյանց դեմ մեղադրելի վարմունքի մեջ գտնված չէին ու թե որ Տիգրանին ծանր եկած բան մը միայն կար, այն ալ սա էր թե իր ընկերը ջանացած էր ատեն մը իր հույն սիրուհին ձեռքեն կորզել. բայց աղջիկը՝ բացեիբաց ծաղրուծանակ ըրած էր արդեն իր դժբախտ հակառակորդն ու զայն Համալսարանին բոլոր ուսանողաց կատակներուն ու հեգնությանց մատնած էր։

Խոսրով՝ ամեն բանե ավելի ընկերական դիրք մը ձեռք բերելու հետամուտ՝ հոժարակամ իր նպատակի հաջողության զոհած էր ամեն զգացում. կատարյալ տեր իր անձին, վարժված ծածկելու այն ամեն դառնությունը՝ զոր Համալսարանին մեջ Տիգրանին բարձր դիրքն իր նախանձոտ սրտին մեջ կթափեր, բայց ամեն ատեն կարոտ անոր օգնության, վկայագիր մը ձեռք բերելու համար, վկայագիր՝ որ ամեն ասպարեզ պիտի բանար իր առջև, խոհեմություն համարած էր զգուշանալ ամեն ընդդիմության ու հակառակության փորձերե։ Ընդհակառակն խոնարհ ու հաճելի ձևերով անոր պաշտպանության ապավինիլ

կցուցուներ, որով հաջողեր էր Տիգրանի կատարյալ վստահությունը շահելու։

Անգամ մը միայն քիչ մնացեր էր վար առնու այս կեղծավորության դիմակը։ Վայրենի ու վավաշոտ սերով մը սիրած էր այն գեղեցիկ հելլենուհին որ Տիգրանին կծպտեր շարունակ. ինքն երկու տարիե ի վեր մեկ ժպտին կարոտ, մեկ նայվածքին կապված, մաշեր ու սպառեր էր երբ իր երջանիկ ընկերն, ամեն բանի մեջ ճակատագրեն օգտված, անհուսալի հաջողություն մը ձեռք կբերեր և որ ավելին է, ամեն օր համար կուտար իրեն՝ վայելած բոլոր շնորհներուն։

Ափսո՜ս, վայելչության կողմե չէր կարող մրցիլ իր գեղեցիկ ոսոխին հետ. իր կարճ հասակով, ցած ճակտով, գոուզ մազերով ու ծաղկավեր դեմքով, բարեձևության պահանջումներ չէր կարող ունենալ. բայց իր առավելություններն ալ կկշռեր անոր փոխարեն. իր հայրենիքեն ոտքով եկած էր Պոլիս, յոթեն տարեկան եղած ատենը, և Զապթիա վարժարանին մեջ տնտեսին քով ու անոր կերակուրներով ապրած էր մինչև տասներեք տարեկան հասակը երբ հաջողեր էր Շահնազարյան վարժարանը մտնել. ամեն բանի կարոտ, ամեն բան ձեռք բերեր էր աննման հաստատամտությամբ. մանկութենեն դատապարտված ընկերական ամեն մահացումներու, մարդատյաց մեկը դարձած էր ու կիսկատար փիլիսոփայությամբ մը զոր իր մոլար սկզբմանցը կհամաձայներ, շուտով համոզված էր թե չարն ու բարին գոյություն չունին, թե վատությունը տեղին համեմատ ազնվություն է, թե մարդուս գերագույն նպատակն իր եսության մեջ կկայանա։

Հետևապես գեշ ոգվով ու սխալ դաստիարակությամբ զորացած, և ոչ մեկ բանի մեջ լավ կողմը կրցած էր նշմարել։ Հելլենուհվույն սերն անգամ չէր այն բարձր ու ազնիվ զգացումն որ մարդն անասուններեն կբաժնե, այլ վայրագ ու ահավոր իղձ մը ու տանջանք մ'էր։

Երբեք չէր ներած իր պատանի ընկերոջը դասի մեջ առաջնությունը. սիրո ասպարեզին մեջ անոր նախամեծար համարվիլն իր համբերության չափը լեցուց. մութին մեջ սպասող կատարյալ թշնամի դարձավ իր սրտեն, թեև անկարող անոր վնասելու։ Աղջկան մոտ իր խնդիրքն ու հետևանքն հետևյալ օրը Տիգրանին միջոցով տարածվելով Համալսարանին մեջ, մին իր ծաղրանկարը շիներ էր որուն մեջ իր ծակոտյալ երեսը գեղուհվույն շրթանցը կմոտեցներ, երբ սա զզվանոք գլուխը կդարձներ. ուրիշ մը փոքրիկ ոտանավոր մ'էր շիներ անոր վրա որ բոլոր ուսանողներուն բերանն ինկավ։

Այն ատեն անհաշտ ու ոխակալ լռությամբ մը պաշտպանեց ինքզինքը. երկու տարի կար շրջանն ավարտելու. քիչ մը վերջը Տիգրանի

լքումն ալ տեսնելով անհուն գոհացում մը ունեցեր, կատարյալ վրեժխնդրության համ մ'առեր էր անկից։ Բայց այդ իր նվաստությունը չէր փոխարինած. բախտն հարված մը տված էր Տիգրանին, ինք իր կողմեն բան չէր կրցեր ընել։

Ասոր հետ մեկտեղ մտերմության ու բարեկամության ցույցերը կրկնապատկել հարկ եղավ երբ ավարտման քննությունք մոտեցան։

Արգարն անօգուտ չեղավ այսքան կեղծավորություն. իր վկայագիրը Տիգրանի շնորհիվն ստացավ. ամեն դասի մեջ հետադեմ, իր բարեկամին դասատուաց քով ըրած բարեխոսությամբ ձեռք բերավ այդ պաշտելի թուղթն որու վրա իրավամբ կհիմներ իր բոլոր ապագան։

Զատվեցան իրարմե փոխադարձ անձնվիրության խոստումներով. «Դատավոր եղած ատենդ չըլլա որ իմ իրավունքներս անտես ընես», ըսավ Տիգրան, Խոսրովին ձեռքը սեղմելով.—«Ոչ ոք զքեզ պաշտպանելու հավակնությունը կրնա ունենալ երբ դուն կեցած ես», պատասխանեց իր բարեկամը։

Իսկ Սեդրաքի ու Տիգրանի բաժանումն ավելի սրտահույզ եղավ. երկու եղբայր այնչափ չէին սիրած զիրար որչափ այս երկու ուսանողները. իրենց վիշտերն ու ուրախությունը միասին բաժնած էին մինչև այն ատենը։

Սեդրաք իր երկրաչափական վկայագիրն ստանալե հետո Ատանայի երկրորդ երկրաչափ անվանվեցավ ու մեկնեցավ Պոլսեն. անտանելի թվեցավ այս բաժանումը Տիգրանին. ամենքն այս գավառին վատ ու մահաբեր օդին վրա կխոսեին, իսկ Սեդրաք բնավ չի դեղևեցավ. իր բարձր արժանիքը գործով պիտի ապացուցաներ. իր սիրուհվույն ճանչնալը չէր բավեր իրեն, անոր ընտանիքն ալ համոզել կուզեր։ «Սուրբիկ, քեզի համար կը մեկնիմ», ըսավ նորատի աղջկան։ Սուրբիկ այս զորավոր մարդուն միակ տկար կողմն, այս Աքյուլլեսին միակ վիրավորելի կետն էր։

Տարի մը կա որ երիտասարդ երկրաչափն իր պաշտոնին գլուխն է, ուր հաջողած է իր պաշտոնակցաց և մեծերուն հարգանքն ու համակրանքը շահիլ։ Ատանայի դաշտին մահաբեր օդը բարվոքելու համար եղած ջանքերեն և ոչ մին հաջողած էր. Սեդրաք այս մեծ ու մարդասիրական նպատակին նվիրեց ինքզինքն. իր պատրաստած հատակագիծն ու ծրագիրը բոլորովին պիտի մաքրեին այդ տղմուտ դաշտին վատառողջ ժանտահոտություններն, ու երկրագործին պիտի տային ընդարձակ ու բարեբեր հողեր. Սեդրաքի առաջարկությունը բոլոր գավառին համար կենսատու խնդիր մ'էր և իր ծրագիրն ամբողջապես ընդունվեցավ գավառին կառավարիչը Մեճիտիեի չորրորդ աստիճանը խնդրեց այս

եռանդուն պաշտոնակալին համար, որ անմիջապես շնորհվեցավ։ Ալ գանգատելու տեղի չի կար. բախտը կսկեր ժպտիլ։ Իր առանձնության մեջ չէր հուսահատած երբեք. սիրուհվույն պատկերն հոն էր որ զինքը կքաջալերեր։ Քայլ մ'ևս և ահա առաջին երկրաչափ պիտի անվանվեր։ Ո՜հ, այն ատեն բաց ջակատով պիտի դառնար Պոլիս ամուսնության խնդրելու իր սիրած աղջիկը. ընտանիքը չէր կրնար դժկամակիլ այլևս։ Երաշխիքության մեջ անցնելու համար այս քայլը միայն մնացեր էր։ Սեդրաք իր աշխատությունը կրկնապատկեց. կառավարության պաշտոնեի մը հարմար հանգարտ գործունեություն մը չէր, այլ հիվանդոտ տենդ մը վարակյալ անձի մը նման կվարեր իր անատանելի աշխատությունը։ Զորս մարդու գործ էր ստանձներ ու քսան մարդու գործ կտեսներ. անիմանալի պատերազմ մ'էր զոր ժամանակը փութացնելու համար կմղեր ամեն օր. պաշտոնի բարձրացում խոստացեր էին իրեն, բայց վեց ամսեն առաջ չէր կրնար կատարվիլ. ապրիլի վերջն էին. վեց ամիս՝ վեց տարվան չափ երկար թվեցավ իր անհամբեր սրտին։ Եթե զաշխարհ բեռցնեին իր ուսին վրա այս պայմանաժամը կարճցնելու համար, հոժարությամբ պիտի ընդուներ այս նոր Աթլասը։

Մեսաժրրի Քամպոն երկկայմ շոգենավն, որ այն ատենը Պոլսո և Աղեքսանդրիո միջև թղթատարություն կըներ, իր շաբաթական ուղևորությունը կատարելով մայիսի մեջ կիրակի առավոտ մը Վոսփորի ջուրերը կմտներ նոր հարսի մը պես քծնելով։ Նավուն կամրջին վրա երիտասարդ ուղևոր մը կտեսնվի գունաթափ ու դողդոջուն. մակույկներն անմիջապես կշրջապատեն նորեկ շոգենավն. ասոնց միույն մեջ Տիգրան կգտնվեր որ առանց սպասելու շոգենավին կենալուն, շվանները վեր ելնելով դեպի երիտասարդը վազեց ու զայն ողջագուրեց. Տիգրա՜ն, Սեդրա՜ք, այս երկու բառերը միասին լսվեցան ու երկու բարեկամներն արտասվելով իրարու գիրկ նետվեցան. քիչ մ'ատեն հեծկլտանքե ուրիշ բան չի լսվեցավ. արդարև սրտահույզ տեսարան մ'էր դիտել այս երկու երիտասարդները՝ զոր ճակատագիրն եղբայրութենե ավելի սերտ կապով մը միացուցած էր. «Արիացիր, Սեդրա՜ք», ըսավ վերջապես Տիգրան վեր առնելով ու համբուրելով իր բարեկամին դալկահար ճակատը. «Ճշմարիտ՞ է ուրեմն», հարցուց տարաբախտն հապիկ լսելի ձայնով մը։

Տիգրան չի պատասխանեց, այլ տոմս մը միայն նետեց ուղևորին ոտքը։

Տրգին և Գ. Ք. պատիվ ունին խնդրել... որ [illegible] գտնվիլ այս կիրակի առավոտ իրենց Սուրբիկ դստեր Վսեմ. Արամ էֆենտիի հետ պսակման արարողության որ պիտի կատարվի Քատրգյուղի ս. Թագավոր եկեղեցվույն մեջ:

Ահա ինչ որ ուղևորին շվարած ու նսեմացած ակնարկը կարդաց այս հեշտաբույր ու ոսկետառ տոմսակին վրա։ Ստույգ էր ուրեմն ան անհավատալի գույժն. և ինքն երեսի վրա թողլով իր պաշտոնն, առանց վայրկյան մ'սպասելու վազեր և հասեր էր այն օրն հազիվ հորում Սուրբիկ պիտի պսակվեր։

Քատրգյուղի ս. Թագավոր եկեղեցին քառակուսի, պզտիկ ու գեղեցիկ շենք մ'է և հոյակապ մարդու մը առատաձեռնության արդյունք։— Խուն բազմություն մը եկեղեցվույն ամեն կողմը կանուխեն գրաված է. բակը, բանկալը, խորհրդարանին մեջ անգամ կենալու տեղ չի կա։ հետաքրքիր ամբոխն հրավիրելոց մուտք անգամ թողած չէ։

Ժամը վեցն է. հանդիսին տերերն հրավիրյալներուն հետ հասան ու անանցանելի մարդկային պատնեշ մը թափանցելով հաջողեցան եկեղեցին մտնել. պսակի արարողություն կա. հանդիսականներուն մեջ կնշմարվին Պոլսո առևտրական տանց գլխավոր ներկայացուցիչները, դատական իշխանության անդամներ և հայազգի բարձրաստիճան պաշտոնատարք. փեսան քառասնամյա պաշտոնակալ մ'է՝ որ վայելչապես կկրե մյութեմայիդի ոսկեճամուկ համազգեստը. հարսն հագած է սպիտակ կոռնե երկար շրջազգեստ՝ հարսանեկան թափանցիկ շղարշով ու իր կոհակածուփ մազերով ծածկված. դյուրին է նշմարել բարեձև հասակ մը, նեղ, նեղ, ափի մեջ ամփոփվելու ու ճզմվելու չափ նեղ մեջք մը որ թավալուն, հպարտ ու շլացուցիչ կուրծք մը կկրե, ճակատ մը անամպ արշալույսի պես պայծառ, աչքեր սև ու խոշոր որոց վրա շուք կուտան իր երկար բիբերը. բերան մը գարնան վարդի պես թարմ ու կարմիր. քիթն ուղիղ, ռունգերն ուռած, թափանցիկ, դյուրահույզ ու հրապուրիչ. սպիտակ ձեռնոցներ մինչև թևերը կերկարին ու երևան կհանեն անոր քնքուշ ու աննմանելի գիծերն, ու նույնպես ճերմակ սնդուսե կիսակոշիկներ կսեղմեն անոր փոքրիկ ոտները։— Տասնչորս տարեկան կա այս աղջիկն, այս մեհյանին մեջ ճշմարիտ դիցուհին՝ որ կիշխե բոլոր հավատացյալոց վրա։

Պսակի արարողությունն սկսավ, մահվան ողբերու նման տխուր երաժշտությամբ մը. միշտ խորին տպավորություն մը հառաջ կբերեն այս տխրանվագ ազոթքներն. ապատամբ միտքը պահ մը կընդարմանա ու հոգին հմայության մը ներքև կվերանա ու անմատչելի երկնագավառներու մեջ կսավառնի. բարեպաշտ լռություն մը կտիրեր. պսակադիր քահանան ձայնը բարձրացուց ու փեսին դառնալով՝ «Տե՞ր ես այս օրիորդին», ըսավ հանդիսավոր հարցումը կրկնելով. «Այո՛», պատասխանեց փեսան գլուխը խոնարհեցնելով. «Եվ դու հնազա՞նդ ես, աղջիկս», ըսավ քահանան օրիորդին ուղղելով խոսքն. աղջիկը վեր առավ գլուխն... երկու սլաքներ, ո՛չ, երկու հրացայտ շանթեր պատահեցան իր մոլորյալ ակնարկին. բողոքող, սպառնացող, որոտացող ձայն մը կարծեց լսել, նենգավո՞ր բառը կարծես ականջին զարկավ, աչքերը մթագնեցան, խուլ բժժանքով ականջը լեցվեցավ ու գեմքը մահատիպ թալկություն մը գրավեց. Սեդրաք իր բարկացայտ նայվածքը աղջկան վրա սևեռեր էր։

Սեդրա՞ք, անշուշտ իրական բան մը չէր կրնար ըլլալ ասի, այլ արհավալիից տեսիլ մը զոր իր խռովյալ խղճմտանքը միայն արտադրած էր։ Սեդրաքի ներկայությունն անբացատրելի էր։ Այն վայրկենին իսկ ուր նոր ուխտով մը ավելի հին, ավելի նվիրական ուխտ մը կդրժեր, ճիշտ այդ վայրկենին երիտասարդին նայվածքը մահատու դաշույնի մը պես շողացեր էր աչքին. թե որ ապտակ մը ուտեր, հոժարակամ պատրաստ էր ներելու. այլ այս անխոս ներկայությունն այնչափ ավելի նախատալից թվեցավ որշափ լռին ու իրավացի էր։

Մարդս ամենեն ավելի անիրավ եղած ատենը կբարկանա նույն բանը պատահեցավ Սուրբիկին. կանացի սիրտն անհատակ ու անքննելի մ'էր. ճշտիվ չէ կարելի անոր հոգվույն վիճակն հաստատել։ Եվ ի՞նչ մ'է. ճշտիվ չէ կարելի անոր հոգվույն վիճակն հաստատել։ Եվ սաչափն ստույգ է որ ուրիշի մը հետ ամուսնանալ որոշելով հանդերձ՝ Սուրբիկ իր վաղեմի բարեկամը հավիտյան կսիրեր։ Անոր հեռացումն ու տաժանելի վիճակն իր գթությունը շարժեր էր, և սերը տարօրինակ երևույթ մը կզգենու երբ գթության կմիանա. տեսակ մը շնորհ կդառնա որ տվողին բարի կամեցողության ձգված է. սերը չի մուրացվիր այլ կպահանջվի. ողորմություն մը չէ այլ տուրք մը։

Երիտասարդին վիճակն աղջկան մոտ ավելի պաշտպանության զգացում մը հառաջ բերած ու այս կերպով իր սերը պարտականություն մը լինելի դադրած էր ստանց անհետանալու. մյուս կողմն իր ընտանյաց ճնշումն որ բռնության մոտեցած էր, իրեն խոստացված ամուսնույն բարձր դիրքն ու պզտիկ փառասիրության զգացում մը՝ ամենքը միացեր էին հեռավոր անձի մը տված խոստումը մեկդի ընելու։ Բայց այս հանկարծական վերադարձն հաշվի մեջ չէր. ինչպես ըսինք Սուրբիկ իր մանկության տարաբախտ ընկերը միշտ կսիրեր. զայն տեսնելուն հիմար փափագ մը ունեցեր էր անոր գիրկը նետվելու արտասվելու. բայց առանց կանխավ իրմե ո՛ևէ բացատրություն խնդրելու՝ անոր

այս հանկարծական ներկայությունն, հրապարակավ զինքն ամոթահար ընելու անողոք փորձ մը ու թշնամանք մը նկատեց և իր բոլոր սիրույն հակառակ՝ զինքը նվաստացնելու այս ջանքը խիստ ծանր եկավ իրեն։ Ինքնիրեն երիտասարդին համար մեծ զոհողություններ ըրած ըլլալ կկարծեր ու դիմացինն ապերախտ համարեց այս թշնամության ցույցին համար ու այլևս ամեն բարեկամություն վերջացած։ Հանցանքն իրը չէր եթե գացեր էր աշխարհիս մեկ ծայրն ու անպաշտպան թողեր էր զինքն անգութ հոր մը բռնությանց ներքև ու հիմա եկեր էր իրրև թե համար պահանջելու իրմեն։ Զինքը սիրել խոստանալով հավիտենական գերության դաշն կռած չէր ու Սեդրաք իրավունք չուներ այնչափ ատեն անտարբեր ու լուռ կենալե վերջը ճիշտ պսակի արարողության ժամուն սպառնալից ստվերի մը պես երեսին զարնելու իր ընթացքը։— Նահանջել կարելի չէր այլևս. բոլոր գյուղին մեջ ծաղրուծանակ ու շաղակրատ ամբոխի մ'առջև ամոթահար ըլլալու վախը մեռնելե ավելի սարսափելի էր։

Ու Սեդրաք ճիշտ զինքն այս նվաստության մատնել եկեր էր անշուշտ։ Այս մտածումները մեկ մանրերկրորդի մեջ Սուրբիկի մտքեն անցան, ու հիմարուհին՝ ինքնիրեն եթե ոչ պարկեշտություն գեթ արդարացում մը գտնել կարծեց իր վարմունքին մեջ. նամանավանդ աչքին զարկեր էր երիտասարդին ճամփորդության անճոռնի հագուստներն հրավիրելոց սև ու անքննադատելի զգեստներուն մեջ. անոր արևեն ու հողմեն սևցած երեսը չգիտեմ ի՞նչ վայրենության երևույթ մը տվեր էր անոր սովորաբար տրտում երեսին ու անմիջապես մեծ տարբերություն մը նշմարեր էր երիտասարդին ու իր ամուսնույն մեջ։

Սեդրաք իրեն համաստիճան մեկը չէր. իրմե վար դասի մը պատկանող անձի մը կողմեն, նույնիսկ թե որ պաշտեցյալ մեկը լիներ այդ անձը, Սուրբիկ թշնամանքի մը հանդուրժողներեն չէր ու չի հանդուրժեց. ամբարտավան կերպով մը վեր առնելով իր գլուխն՝ «Այո՛, տեր հայր», ըսավ քահանային, «հնազանդ եմ»։

Այսպիսի հանդիսավոր վայրկյաններու մեջ բնական եղող հուզումե ի զատ ոչ ոք բան մը նշմարեց հարսին դեմքին վրա. այս անդարձ որոշումը կայծակի արագությամբ տրվեր էր անոր մտքին մեջ ու մեկ բառով ճակատագիր մը խորտակեր էր։ Ահա այսպիսի խախուտ ու անիրավ պատճառաբանության մը կհենուր այս անողոք որոշումն, որ մանկության ու պատանության ամենեն նվիրական կապերը դանակի մը պես մեկ հարվածով կջնջեր. ափսո՛ս. ու հարկ է ավելցնել որ այս աղջիկը թերևս լավագույն կինն էր աշխարհիս վրա։

Սեդրաք իր պաշտոնատեղին չի վերադարձավ և ոչ իսկ հրաժարական մը կամ լուր մը ղրկեց. ի՞նչ օգուտ այլևս։ Այս անլուր մատնությունն ահարկու հարված մ'եղավ գլխուն որ զինքն ընդարմացուց ու ապշեցուց. իր սերն, իր անձնվիրությունն, այս ուխտադրուժ աղջիկն, այս հարսանիքն, ուրիշ բան չէին կրնար լինիլ բայց անհաճո երազ մը ուսկից սթափիլ կուզեր։ Ինչ որ հզորագույն հուզումներ չէին կարողացել ընել այս ուժով մարդուն վրա, մատնված սերը կարողացավ ընել։ Սեդրաք ընկճեցավ. իր սրտեն զարկեր էին զինքն. այս աղետը խորտակեր էր իր հոգվույն միակ զսպանակն, և ուղեղը չէր կրցած դիմադրել այս անակնունելի բաղխման. բժիշկները մոտալուտ խելագարության նշաններ նշմարեցին անոր վրա։

Ետի-Քուլեեն Վելի-էֆենտի երթալու ճամփուն վրա ամայի և առանձնացյալ դաշտի մը մեջ երկհարկ, փայտաշեն ու քառակուսի շենք մը չի բարձրանար այլ կտարածվի. հին, գրեթե խարխուլ ու ընդարձակ հարկ մ'է որուն հավիտենական դեղին գույնն առածի կարգ անցած է. դիմացը կա փոքրիկ պարտեզ մը որուն մեկ մասը բանջարեղինաց հատուկ է ու մյուս մասն հասարակաց զբոսավայր մը լինելու հավակնությունն ունի։ Ադրիանուպոլսո շոգեկառքն անոր արևմտյան կողմը քերելով իր երկաթե ճամփուն վրա կսրանա։

Այս պատմական շենքն Հայոց Ազգային Հիվանդանոցն է։ Ես չեմ նայիր ո՛չ անոր փլատակ սպառնացող պատերուն և ո՛չ աղքատիկ անկողիններուն. անոր տխուր ճակատը զարդարող ազգային անունն իմ սիրտս կգրավե ու անմիջապես կսիրեմ այս քայքայուն շենքը։

Օրինավորություն, ճշտություն ու հայրական հոգածություն մը կտիրեն այս ճշմարիտ ազգային հաստատության մեջ։ Անոր հիմնադրին նվիրական ոսկերոտիքն Մայր-Եկեղեցվո մեջ կհանգչին, այլ անոր ազգանվեր ոգին հավիտյան կհսկե այս սփոփանաց հարկին վրա։

Հիվանդանոցին մեջ մաս մը կա որ ամուր պատերով բաժնված է ու երկաթե հաստատ ձողեր անոր պատուհանները կզարդարեն. 40—50 հոգվո չափ բազմություն մը կապրի հոն հզոր ու որոտաձայն պահապանի մը ազդած սարսափին տակ հնազանդ։ Գլուխնին պզտիկ գդակ մը, լայն ու հաստ բրդե շապիկ մը, նույնպես լայն ու միևնույն կտավե տափատ մը այս թշվառության զինվորներուն միօրինակ համազգեստն է։ Մեծ մասը նստած է փայտե տախտակամածի մը վրա ու շրջանակ մը կազմած է։ Դեմքերնին լուրջ ու խոժոռ, ակնարկնին շրջուն ու մոլորյալ, ձայներնին ցած ու հանդարտ, այս մարդիկը նորեկ այցելուին աչքին կարծես ծանր ու դժվարին խնդրո մը համար խորհրդակցության

մեջ են. մաս առ մաս իրարու հետ կխոսին, կպատասխանեն, կվիճին ու առանց մոտեն ակնջ տալու անոնց խոսակցության անկարելի է դատել այս տարաբախտներուն վիճակը։

Հիմարներն են ասոնք։

Ահավոր ու կարեկցության արժանի տեսարա՜ն։

Այս միազգեստ տարաբախտներուն մեջ երիտասարդ մը կնշմարվի իր զվարթ ու խնդուն երեսովն ու համակրելի ձևերովը. արագ, գրեթե տենդային արտասանություն մը ունի. հակառակելու չի գար անոր, անմիջապես կզայրանա ու կսպառնա. իր բախտակիցներեն միայն հետ կխոսի շարունակ որ իրեն մտիկ չըներ. կխոսի ու կխոսի, կարծես պատմություն մը կընե ու վճիռ մը կսպասե անկից.— ի՞նչ կշաղակրատե այս հիմարն. երբեմն կերգե ու գիշերն անխոս լռության մեջ ամենքը կճանչնան անոր սիրած երգերուն ողբալի շեշտը։

Այս հիմարը Սեդրաքն է։

Տարվան մը չափ ամեն բժշկական խնամք անօգուտ դառնալով, ընտանիքը պարտավորեցավ ազգային խնամոց հանձնել զայն։

Տիգրան ուրբաթ և կիրակի օրերն հատկացուցած է իր բարեկամին՝ որ զինքը չի ճանչնար։

Իզուր նոր կայծով մը բորբոքել կուզե այս մարած հրաբուխն, ու աթձագանք մը արթնցնել անոր խորահատակ սրտին մեջ. ամեն հույս շատոնց վերջացած է ամենուն համար և Տիգրան միայն կհամառի բախտին ու գիտության դեմ. իր այցելություններն անպակաս են։ Հիվանդանոցի մարդիկներն հիմարին եղբայրը կկարծեն այս նորատի երիտասարդն՝ որ իր հանգստության ու զբոսանաց ժամերը նվիրական պարտականությամբ կլեցնե ու ամեն անգամ արտասվելով կվերադառնա։

Սեդրաքի այս մահացումը երկար չի տևեց։ Երկինք գթաց կարծես այս թշվառին. օգոստոսի սկիզբները ծանր ժանտատենդ մը բռնվեցավ ու տասնևութ օրվան մեջ հալեցավ այս առյուծի պես տղան. ուրբաթ երեկո մ'էր, օրհասական ճգնաժամն սկսավ, վերջին պայքարը կենաց ու մահվան մեջ։ Գոգցես բախտին անողոք հեգնությամբ հիվանդը պահ մը սթափեցավ իր մահատիպ թմրութենեն. տրտում նայվածքը չորս կողմը սևեռեց, Տիգրանը միայն տեսավ քովը, նշան ըրավ անոր մոտենալու և իր սառ կտրած շրթունքով համբուրեց երիտասարդին դալուկ ճակատը. ու քիչ մ'ատեն կամաց, խիստ կամաց ձայնով մը խոսեցավ անոր հետ... կես ժամ վերջը Սեդրաքի աստղը շիջեր էր։

Սեդրաքի կրոնական համոզումները կարի սահմանափակ էին. քրիստոնեությունն հարգելով հանդերձ գերագույն էակի մը գոյության հավատալեն անդին անցած չէր երբեք։ Մահվան ճգնաժամին մեջ անոր

հուշաբերած վայրկենին ուզեր էին իր մոռցած պարտականություններն հիշեցնել ու բարեսիրտ պանդուխտ քահանա մը հանձն առեր էր այս դժվարին պաշտոնը. Սեդրաք բացարձակ կերպով մերժեց ամեն աղերս ու խրատ։ «Ես խղճի և սկզբունքի տեր մարդ եմ, ըսավ քրիստոնեության այս համեստ ներկայացուցչին, ու կեղծիք չեմ ընդունիր մահվան անկողնույս մեջ»։

Քահանան չի պնդեց, Սեդրաքի անկեղծությունը զինքն համոզեց ու չուզեց բռնանալ անոր խղճմտանքին վրա. ասի այն բարի անձերեն մին էր որոնց մոտ պարզմտությունն ուղղության և առաքինության լավագույն առաջնորդն եղած է։ Իրմե ավելի գիտուն կրոնավոր մը ինքզինքը թերացած պիտի նկատեր Սեդրաքի վրա բռնություն ու ճնշում չի գործածելուն. այս պանդուխտ երեցն այնպես չի նկատեց և շատ կվախնամ որ քիչ մ'ավելի խոսքով երեցն ինքն ալ չի համոզվեր Սեդրաքի գաղափարներուն։

Որոշվեցավ ուրեմն որ գաղտնի պիտի մնար հիվանդին հաղորդություն չառնելն։ Քահանան մոլեռանդ ժողովրդյան գայթակղութենեն նախամեծար համարեց այս անհրաժեշտ ստախոսությունը։

Բայց չի գիտցվիր թե ի՞նչ կերպով այս ճգնաժամի գաղտնիքն հիվանդանոցին մեջ տարածվեցավ. քահանային թուլբերանությո՞ւնն էր թե ուրիշ պատճառ մը կար, որով իմացվեցավ Սեդրաքի լուսավորչական եկեղեցվո պարտականությունները մերժելն։

Հարազատ լուսավորչականներու աչքին՝ այս երիտասարդ ազատամիտն պոռոգ մը, բողոքական մ'էր և բողոքականե մ'ավելի քամահրելի արարած մը չի կա։ Կրոնական խտրություններն՝ ազգության ոգիեն ավելի ուժով կազդեն մեր վրա։ Ամենքը կհիշեն այն ահավոր պատմությունն որ բողոքական հուշակավոր ննջեցյալի մը թաղման հանդեսին հետ կապված է։ Հայոց պատմության սև ու տխուր մեկ երեսն է այդ մոլեռանդ անողորմությունն որ անկենդան դիակի մը դեմ կմաքառեր։ Իր ազգային պարտականության մեջ եղջերուի մը չափ սիրտ չունեցող խուժան մը իր քաջության փորձը գերեզմանատանց ապացուցանել կճգներ։

Երեսուն տարվան միջոցե վերջը միևնույն աններող գաղափարները կտիրեին, և Սեդրաքի թաղումը Սամաթիայեն, Եսի-Քուլեեն ու շրջականներեն ժողված ու հավաքած էր ստորին անկիրթ ամբոխ մը, որ հաստատ կերպով դիմադրել որոշած էր անոր Հայոց գերեզմանատան մեջ ամփոփվելուն։

Հայրենավանդ մոլեռանդություն մ'էր որ անեղծ պահված էր ու առաջին առթիվ երևան կելներ։ Տիգրան միայնակ էր այդ մրրկոտ բազ-

մության դեմ։ Հուղարկավորության հանդեսն սկսավ անշուք ու անձայն. լքյալ ու աղքատիկ հուղարկավորություն մ'էր. քահանա մը, ժամկոչ մը, հինցած ու պատառուն ծածկոց մը, ասոնք միայն կրնային առ առավելն ձրի տրվիլ։ Ուրիշ բան էր, եթե թավիշե ծածկույթի, սնտուկի մը (այսպես կանվանի եկեղեցվո լեզվով նոր դագաղն) և բազմաթիվ քահանաներու ծախքը վճարելու դյուրությունն ըլլար. Տիգրան ասոնց և ոչ մին ուզած էր. այդ ստորին խտրությունները զայն չէին վշտացներ և ավելի բարձր էր անոր ակնարկը։ Հիվանդանոցի մատրան մեջ ննջեցելույն արարողությունն երկար չի տևեց ու դագաղը ճամփա հանեցին դեպի գերեզմանատուն...

Գայթակղյալ ամբոխը կհետևեր դագաղին ավելի թշնամվո քան թե հուղարկավորի մը դիրքով, ու խռովյալ տրտունջ մը՝ որ քահանային աղոթքին կիշխեր, որոշ կերպով կըսեր.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Դագաղը կտանեին չորս հուժկու երիտասարդներ, Սեդրաքի այն թշվառ վիճակակիցներեն զորս ուժի կարոտ աշխատությանց մեջ, հիվանդանոցի վարչությունն երբեմն կգործածե զանոնք բոլորովին անզբաղ չի թողլու համար։ Անշուշտ լավագույն է այս անզգա էակներուն հանձնել ննջեցյալ մը ի գերեզման առաջնորդելու տխուր պաշտոնը։

Նեղ ու գալարուն ճամփե մը կհառաջանային համբաքայլ։ Բնության ամենեն ավելի զմայլելի, պայծառ օրերեն մեկն էր, արևը կարձակեր իր ջերմ ու ոգևորիչ ճառագայթներն, երկինքը խաղաղ էր ու անամպ, ծառերը տերևներով կծածկվին, նոր կյանք, նոր հոգի մը կծավալեր ամեն կողմ իբրև դառն հեգնություն մ'այս մահվան տեսարանին դեմ։

Այս թաղման ընդդիմացողներու ուրիշ խումբ մը կես ճամփան կսպասեր որ առաջնույն հետ միանալով կրնար անլսելի ընել թաղման արարողությունը։ Ժամկոչն իր ձայնը քահանային աղոթից կմիացներ արագ ու հապճեպ արտասանությամբ, ինչպես որ վայելուչ է աղքատին գերեզմանին, մինչդեռ խուժանը գանգատող ու բողոքող ձայնիվ կկրկներ շարունակ.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Տիգրան գլխիկոր կհետևեր դագաղին. այս մրրկահույզ հուղարկավորներուն աղաղակը չէր զոր կլսեր, քահանային սրտահույզ աղոթքն էր՝ որու առջև կխոնարհեր։ Ի՞նչ, ա՞յս է եղեր յուր մտերմին վախճանն, այդ գիտությունն ու այդ սիրտն այս տխուր վերջավորությա՞ն վիճակյալ են եղեր. ո՞վ պիտի հավատար մի քանի տարի առաջ երբ անփույթ ու զվարթ ապագային վրա հանդուգն ապահովությամբ կխորհեին։

Բայց ամբոխին աղաղակն հետզհետե կբարձրանար սպառնալից շեշտով մը. գերեզմանատունն հասեր էին. պահ մը լռություն տիրեց. գիտցողները չգիտցողներուն կպատմեին այն անլուր սրբապղծությունը. բողոքական մը ուղղափառ Հայոց գերեզմանին մեջ ընդունվի՞... Լուսավորչականներուն գերեզմանատունը մտնելն արքայություն մըտնելեն ավելի դժվարին էր։

Ծայրահեղ միջոցներու դիմելե առաջ ամբոխը կխորհրդակցեր, խռովության հողմը կտարուբերեր զայն, մինչդեռ իր խուլ և մոլեգին բողոքն շրջակա արձագանքներեն կրկնվելով ընդարձակ հովտին մեջ կտարածվեր.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Ո՞վ էր և ի՞նչ կուզեր այս հիմար ու կատաղի բազմությունը։ Տիգրան անոնց դարձավ։ Իր պատանությենեն կճանչնար զայրացյալ խուրան անոնց դարձավ։ Իր պատանությենեն կճանչնար զայրացյալ խուժանի մը բոլոր ուժն ու տկարությունը. ժամ էր վերջ տալու այս ամոթալից տեսարանին. դագաղը քարի մը վրա կսպասեր, և քահանան անօգուտ կերպով կբանակցեր այս անզգամներուն հետ խոսք հասկցնելու անոնց։— Իզուր ըսավ անոնց թե Քրիստոսի և ոչ մեկ վարդապետության մեջ կտեսնվեր այս աններող մոլեռանդությունը, թե երիտասարդ ննջեցյալը բողոքական մը չէր, իզուր գերեզմանին սրբությունն ու մահվան նվիրականությունն հիշեցուց այս չափազանց կրոնասիրությենե մոլորյալ հոգիներուն։

Երկու հարյուր հոգվո չափ բազմություն մը կշրջապատեր մթին փոսն՝ ուր Սեդրաքի մարմինը պիտի ամփոփվեր, և քահանային տկար ձայնը շուտով կկորսվեր ահավոր ու վայրենի մռնչման տակ որ երկու հարյուր բերնե արձակվելով, փոթորկաշունչ հողմի մը պես կսավառներ.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Երբեք անկրթությունն այս աստիճան վայրենի երևույթ մը չէր ստացած. ափսո՜ս, միևնույն անսաստ ու կամակոր խուժանն էր զոր ինքն այնքան անգամ բորբոքած ու արձակած էր ազգային իշխանության դեմ, ինչպես թնդանոթաձիգ սպան կարձակե յուր հրատապ և ավերիչ ռումբը։ Այժմ այդ մարդիկն իրեն դեմ կելնեին այնքան կոշտ ու անգութ որքան այլոց դեմ հանած էր։

Տիգրան ցասկոտ էր բնությամբ. ո՜չ թվույն անհավասարությունն, ո՜չ բարկալից բազմության զայրույթն ու անոր անհաշվելի հետևանքը զինքը չի կասեցուցին։ Իր բարեկամին դիակին դեմ կռվող այս մարդոց տեղի չի պիտի տար, թե որ մեռնիլ անգամ հարկ ըլլար. արյունը եռաց. թերևս իր պերճախոս լեզուն հաջողեր մեղմել այն մրրիկը՝ զոր

այնքան վարժ էր հարուցանել. բայց բարկությունն ամեն խոհեմությունն անոր մտքեն վանեց։

— Ետ քաշվեցեք, ստահակնե՜ր,— գոչեց անոնց,— ես եմ այս ննջեցելույն տերը, չըլլա որ մոտենաք անոր, ազգինն է այս գերեզմանատունն ու հայոց ազգին մեկ զավակն է այս մեռյալն որ հոս պիտի թաղվի։

Կովո հրավեր մ'էր։

— Այդ ալ փոթեսթան մ'է,— աղաղակեցին ոմանք,— տփեցե՛ք այդ անհավատը։

Խուժանը՝ կատղած՝ ամեհի ու բարբարոս մոնչմամբ կպատեր երիտասարդն, որպես փոթորկահույզ կոհակներ կշրջապատեն ընկղմելու մոտ նավն. ամենեն քաջերն հառաջ նետվեցան. պահ մը վտանգն անխուսափելի և ահավոր դարձավ, մինչդեռ հեռու մնացողները զայրագին արձագանքի մը պես կկրկնեին.— փոթեսթան մ'է, փոթեսթան մ'է, զարկե՛ք։

Անզգամ մը աչերն արյունով լեցված ձեռքը վերցուց...

Սարսափելի հայհոյություններով խառն որոտման պես ձայն մը լսվեցավ հանկարծ. երկու մարդ, ոչ նվազ շարաշուք ու ստորին երեվույթով քան մյուսներն, անհավատալի ուժով մը այդ մարդկային պատնեշը ճեղքելով երիտասարդին քով սրացան ու պոռացին.

— Մի՛ դպիք մեր էֆենտիին։

Պահ մը վարանում տիրեց։

Կերևեր թե այս երկու մարդիկն անծանոթ չէին. բաց գլուխնին՝ թեթև յազմայով մը պատած, կուրծքերնին մերկ՝ զոր չի կոճկվածը պըզտի բաճկոնակ մը բաց կթողուր շարունակ, ոտքերնին բոպիկ այն ծանոթ կոշիկներու մեջեն որք իրենց հատուկ անվամբ եմենի կկոչվին, այս մարդիկը կվերաբերեին այն ստորին դասուն որ պարագային համեմատ ձկնորս, նավարար ու ջրհանկիր կըլլա և որ սովորաբար քիչ կամ շատ ոճրագործ է։

Պարտեին այս երկու անձինքը մեծ համբավի մը և իշխանության տեր լինիլ (համբավ՝ որ գովելի տեղ մը չէր կրնար ունենալ), ըստ որում ամբոխն իր հարձակման մեջ կանգ առավ։ Հետո այս մարդիկն հետզհետե հեռացուցին երիտասարդը մոտեն շրջապատողներն ու կամաց ձայնով, տարօրինակ հեզությամբ մը՝ որո նեբքև դաշույնի հարվածի մ'սպառնալիքը դյուրությամբ կնշմարվեր, մի առ մի վանեցին այս սպառնալից բազմությունն։

Ի դեպ էր անշուշտ այս անհուսալի օգնությունն՝ որ համառ երիտասարդը կփրկեր։

Տիգրան գեշ երազե մը սթափիլ կարծեց երբ յուր շուրջն այս երկու ազատիչները միայն տեսավ՝ զորս չէր ճանչեր և որոց իր շնորհակալությունն հայտնեց։

— Դուք կրկին բարեգործություն մ'ըրիք,— ըսավ անոնց,— նախ արգիլեցիք որ ննջեցյալ մը անգերեզման թողուն և զիս սպաննեն, երկրորդ՝ թող չի տվիք որ այդքան մարդիկ սրբապիղծ ու ոճրագործ լինին։

— Ես ձկնորս Կարապետին եղբայրն եմ,— ըսավ անոնցմե մին,— դուն իմ եղբայրս մահվանե ու բանտարկութենե փրկեցիր առանց ստակ և վարձք պահանջելու։ Դուն զիս չես ճանչնար, բայց մենք քեզ լավ կհիշենք, երբ դատաստանին մեջ իմ եղբայրս կպաշտպանեիր ու փրկեցիր. մենք աղքատ մարդիկ ենք, ապերախտ չենք, ըսավ խոնարհությամբ ու հեռացավ իր ընկերոջ հետ մինակ թողլով սգավոր երիտասարդն իր մտերմին գերեզմանին քով։

Պալըքլըյի գերեզմանատունը Պոլսո Հայոց գերեզմանատանց երեցն ու հինավուրցն է. չի կա մեկն որ ազգական մը հանձնած չլինի այդ սև հողին. այս գերեզմանատունը սովորական բան մը չէ, այլ շարագուշակ քաղաք մը՝ որ իրեն տնակները, պալատներն, արվարձաններն, իր հարգի ու անհարգ թաղերն, իր սովորություններն, ավանդություններն ու նախապաշարումներն ունի. երևակայեցեք ընդարձակ դաշտ մը երբեմն կոտրած, սեցած ու տձև քարերով, երբեմն հոյակապ շիրիմներով ծածկված, ոչ իսկ մատ մը տեղ ուր ոսկերոտիք գրված չլինին. նսեմաստվեր ու անխնամ վայրենի ծառեր որք աստ անդ կտարածեն ոչ թե շուք, այլ կարծես անթափանց մառախուղ մը. ոչ ճամփա և ոչ ուղի առաջնորդվելու այս մեռելոց լաբյուրինթոսին մեջ ուր գերեզման մը գտնել շատ անգամ դժվարին ու երբեմն անհնարին է. ու հարկ է, եթե պետք ունիս համբույր մը տալու սիրեցյալ հողակույտի մը, հարկ է դիմել գերեզմանաց պահապանին, միակ իշխանն ու միակ հպատակն այս ոսկերոտյաց աշխարհին մեջ։

Մյուս թաղերու գերեզմանատուններն ո՛չ այնքան սգատխուր երեվույթ մ'ունին. այդ նոր շիրմաստաններն հետզհետե փոխվելու ու շրջակվելու վրա են. անհարազատ զավակնե՛ր, ուր լուսավորության անվան տակ ամեն ինչ կնորոգի, մինչդեռ անոնց ծերունի հավը, Պալըքլըյի գերեզմանոցն, անսասան կկենա ու ավանդապահ անգղի մը պես անշարժ կհսկե իր մեռելոց վրա։

Սեդրաքի մարմինն այս գերեզմանոցին մեջ թաղեցին. այնպես փափագեր էր օրհասական երիտասարդը. քույր մը ունի եղեր իրմե

առաջ մեռած, անոր քով ամփոփեցին զինքը։ Տիգրան քար մը դնել տվեր էր անոր վրա ու փոքրիկ երկաթե վանդակ մը այս կրկին գերեզմաններուն շուրջն։

Սեղրաքը ծածկող քարին վրա ո՛չ անուն կա և ո՛չ թվական, այլ երեք բառ միայն կկարդացվի որ մինչև այսօր բոլոր այցելուներուն հետաքրքրությունը կշարժե։ «Հանգիստ թողուցեք զինքը» գրված է այս մարմարին վրա. որո՞ւ կուղղվի այս տարօրինակ պատվերն, ո՞վ նընջեցելույն հանգիստը կրնա խռովել արդյոք։

Անոնք որ փափագած են իմանալ այս անանուն ննջեցելույն գաղտնիքն, իզուր պահապանին դիմած են տեղեկություն ուզելու համար. պահապանն իր հսկողության հանձնված մեռելոց նման լուռ էր այս մասին։ Միայն դիտեր էին ոմանք, որ սևեր հագած մանկամարդ կին մը ամեն տարի Մայիսի առաջին կիրակի օրը պսակ մը կբերեր այս լքյալ գերեզմանին։ Պսակ մը Պալըքլըյի մեջ հազվագյուտ դեպք մ'է. հետաքրքիրները հուսո նշույլ մ'առին. կինը միշտ ճշտապահ կգտնվեր. հետևեցան անոր ու երբ օր մը սևերով կինը գերեզմանեն կվերադառնար, ետևեն գացին անոր ո՛վ ըլլալն հասկնալու համար, բայց տեսան որ տան երկՃի կառք մը իր վարագույրներն իջեցուցած սրարշավ կտաներ սգավոր այցելուին. այն ատեն դարձան գերեզմանին քով գտնե պսակին ձևեն, ծաղիկներուն կապվելուն ճաշակեն ո՛ւսկից գալը գուշակելու համար։ Պսակը ճերմակ քամելիաներով շինված էր, որուն վրա կապույտ մանիշակներով կազմված «Զոզում» բառը կկարդացվեր։

ՄԱՍ Բ

ՄՈՌԱՅՈՒՄ

Հունիս ամսո մեջ պայծառ ու անդորր գիշեր մը, Քանլըճայի ծովեզրյա ապարանքներեն մին շքեղ կերպիվ լուսավորված էր. Պետական խորհրդո հայազգի անդամներեն և Մաարիֆի օսմանյան դեսպանատան նախկին առաջին քարտուղար վսեմ. Գեորգ էֆենտի երեկույթ մը կընծայեր իր ընտրյալ հրավիրելոց. դեսպանական մարմինը գրեթե ամբողջովին, Պետական խորհրդո նախագահը, բարձրագիր իսլամ ու հայազգի պաշտոնատարք և սեղանավորք իրենց ընտանյաց հետ պատասխանած են հայ քաղաքագետին ընդունելության։

Սրահներեն մին՝ միայն լուրջ ու քաղաքական խոսակցությանց հատկացած է։ Ռուսո-Թուրք պատերազմին նախընթաց եղող Պալքանյան ազգաց խռովությունք մտատանջություն կտարածեն դիվանագիտաց մեջ, խլրտում մը կա, հով մը՝ որ կոհակածուփ կհուզե սլավյան ազգություններն ու սրատես անձինք դյուրավ կճանչնան հյուսիսի քամին, որ փոթորիկ միայն կծնանի։

Ուրիշ ակումբ մը երիտասարդաց, որոց մեջ կնշմարվին դեսպանական փայլուն քարտուղարք, զինվորական կցորդներ, դատական պաշտոնատարներ, տիկնանց շուրջն հավաքված է։ Անդին խաղի սրահը թափուր չէ ու պաճարան իր անխուսափելի տագնապովը կվարակե իր բոլոր սիրահարները. մեճիտներով սկսեր էին, շուտով գրավներն ոսկվո կվերածին ու մեծ գումարներ կշահվին ու կկորսվին։

Տիկնանց քով ընդհանուր խոսակցության նյութը՝ մեծ ընտանիքի վերաբերող հույն տիկնոջ մը իր ամուսինը թունավորելու ոճրով ամ-

բաստանությունն էր, որ նույն օրն իսկ անմեղության վճռով մը վերջացեր էր։

Ամենքն ընդհանրապես կքննադատեին երիտասարդ փաստաբան մը որ ներկա էր հոն ու բառ մը չէր արտասաներ այս հարձակմանց դեմ. իր տաղանդը չարաչար գործածելուն մասին եղած դիտողությանց դեմ ժպիտով մը կբավականանար, ու լուռ, ժպտուն ու տխուր կկանգներ անշարժ վառարանին մարմարին կոթնած։

Այս երիտասարդ լռակյացն, որո պերճախոսությունը կամբաստաներին, Տիգրանն էր։ Չորս տարի անցեր էր հորմե հետե սիրով, գրեթե մոլությամբ ընդգրկելով փաստաբանական ասպարեզն, հոն գտեր էր միայն այն մշտատև պայքարն որ իր դյուրահույզ ու մշտագրգիռ հոգվույն անհրաժեշտ էր։ Իր խորին ու լուրջ հմտությունը, խիստ ու անաչառ դատողությունն, հզոր ու հպարտ շեշտը, պերճ ու զարդարուն լեզուն շուտով մեծ անուն ու մեծ համբավ տվեր էին անոր։ Բաղդատաբար քիչ միջոցի մեջ հաջողեր էր ձեռք բերել բարձր դիրք մը որ այս դժնդակ ասպարեզին մեջ հազվագյուտ է։

Շատեր հուսահատ ետ քաշված են և այս մշտատև կռվո կյանքն ամեն արարածի ուժին չի համապատասխաներ։ Տիգրան ընդհակառակն իր մթնոլորտը գտեր էր հոն, այս էր այն ասպարեզն զոր երևակայեր էր միայն հարմար իր անհանդարտ ու դժգոհ ոգվույն ու հոն իշխող ու հզոր ձայն մը վաստակեր էր մինչև իսկ այն բազմաթիվ թշնամյաց քով զորս ընկճելով ու հաղթելով ստացեր էր։

Հարկ էր գոհանալ այս հաջողութենեն որ կույր բախտի մը շնորհը չէր և որ դատական հաղթանակներով ձեռք բերված էր։

Տիգրան՝ մասնավորապես պատժական դատերու մեջ անվիճելի իշխանություն մը ստացած էր. յուր հրաշքները մեկե ավելի էին. կենտրոնական բանտին հյուրերեն ո՛ր մեկն իրենց կյանքն, ո՛ր մեկն իրենց ազատությունը կպարտեին անոր։ Իր անունը վերջին ապավենն էր որում ամբաստանյալն անհավատալի վստահությամբ կապաստաներ և այդ անունն բանտին մեջ նվիրական էր, անոր մասին ամենափոքրիկ չարախոսություն ամենամեծ ոճիր մ'էր. երախտագիտությունն այն միակ մնացորդն էր զոր չարվո ու բարվո զգացում կորսնցնող այս մեծ ոճրագործները դեռ կպահեին իրենց սրտին մեջ։

Օր մը նորատի կին մը բերին հոն որ իր էրիկը թունավորած լինելու ամբաստանության ներքև կգտնվեր։

Կանանց հատուկ բանտը փոխադրվելե առաջ առժամյա կերպիվ առաջնորդեցին զինքն ընդարձակ, խոնավ ու մթին սրահի մը մեջ, տխուր ու մահազդեցիկ օթևան, ուր տարաբախտ կինը մազ մնաց վախեն պիտի մեռներ։ Իրեն բանտարկության ընկեր ուներ ամբաստանյալներ ու դատապարտյալներ. ահավոր տեսարան մ'էր այս երկաթներով ծանրաբեռնյալ ավազակներու խումբն որոց ամեն մեկ շարժումը շղթայից շառաչմամբ կկրկնվեր, որ մեկն անփույթ, զվարթ ու կայտառ, որ մեկը տժգույն, նիհար ու դողդոջուն այս մահվան կապանքներուն տակ։ Հոս պատանի ու գեղանի մարդասպան մը որ ուրնունամյա ծերունի մը սպաննած էր ու ու անոր ցույց տված տարօրինակ դիմադրությունը զարմանոք կհիշեր. հոն՝ երկար մորուքով, վարդապետի դեմքով դրամանենգ մը, որ իրեն տրված պատժույն ծանրությանը դեմ կրողոքեր. անդին՝ աներկյուղ հրձիգ մը որ ապահովագրության ընկերութենեն երկու հարյուր ոսկի կորզելու համար ամբողջ թաղ մը կրակի տալու չէր վարանած. քիչ մը անդին երեք-չորս անձինք՝ ծանոթներ ու մտերիմներ, որք միատեղ ապրելով բարեկամացած են և որք ապագայի պատրաստություններով ու արդարության ձեռքը չի մատնվելու համար նորանոր միջոցներ մտածելով կզբաղին. ասոնց մոտ ծերունի մը, որ պատժական դատարաններե ստացած բազմաթիվ դատապարտությանց շնորհիվ անփորձ իրավագետե մ'ավելի պատժական օրենսդրությունը կճանչնա. զորօրինակ նա կբացատրե նորեկներուն, թե գաղտարանին կողմե ձրի փաստաբան մը պիտի ունենան, թե ուրանալե լավագույն պաշտպանության միջոց չունին, թե չննիչ դատավորին բընութենեն գանգատիլ հարկ է դատարանին առջև։

Նորեկ կինը սոսկմամբ զատվիլ ուզեց այս մեղապարտ ընկերութենեն, բայց ամենուն ծաղրն և հարձակումն իր վրա հրավիրեց. ամենքը նախ և առաջ տեղեկանալ ուզեցին անոր ոճրին ի՛նչ ըլլալը։

— Թունավորո՞ւմ մը, այդ բան մ'ըսել չէ,— կըսեր անդիեն հրոչակավոր ստահակ մը,— ցկյանս շղթայակապ աշխատությամբ մը կազատիս։

— 174-րդ հոդվածին վերջին պարբերությունը գիտե՞ս,— գոչեց անդիեն ծերունի խորհրդատուն,— կարծես քու վրայիդ ձևված է։

— Մեղք այդչափ գեղեցկությանը,— ավելցուց պատանի մարդասպանը,— մինչդեռ կինն ահաբեկ ու շվարած հիմարի մը պես իր շուրջը կնայեր շարունակ, առանց բառ մը հասկնալու եղած խոսակցութենեն։

Նույն միջոցին իմացվեցավ այն անհավատալի արագությամբ որ բանտերուն միայն հատուկ է և որով ամեն հաղորդակցության միջոցե զուրկ ամբոխի մը մեջ արտաքին բոլոր լուրերն անմիջապես կտարածվին, թե նորեկ ամբաստանյալը Տիգրանի պաշտպանության հանձնված էր դատարանին կողմե։

Տիգրանի պաշտպանյալ լինելը կիսով մը փրկվել և բանտարկելոց երաշխավորության ներքև գտնվել կնշանակեր։

Այն վայրկենեն ամենքը բարեկամ դարձան նորատի կնոջ ու զինքըն հուսադրեցին։

Ամենքը կհիշեն այն տարօրինակ թունավորման դեպքն որով նոր ամուսնացած հույն վաճառական մը զոհ եղավ Առնավուտ գյուղի մեջ։ Կասկածները կծանրանային անոր երիտասարդ կնոջ վրա, որո թեթև վարքն ու առանց մի քանի ամիս սպասելու կրկին ամուսնության փորձը նոր ապացույց բերել կթվեին այս ոճրույն։ Կալանավորման հրամանագիրը չուշացավ զգացնելու այս անպատշաճ փութաջանության բոլոր անխոհեմությունը։

Պոլսո ամեն ազգի ու կարգի մարդիկ, նամանավանդ կանայք հետաքրքրեցան. օրվան սովորական խոսակցության նյութ դարձավ այս ձերբակալումն։ Ամբաստանելույն սեռը, տարիքը, գեղեցկությունը, բարձր դիրքը բացառիկ հանգամանք մը կուտային այս եղերական արկածին։ Լրագիրներն, որ այս տեսակ ոճրագործությանց երկտողե մ'ավելի չէին զոհեր, հարկ դատեցին բոլոր դատաստանական քննության վրա օր ավուր տեղեկություն հաղորդել իրենց ընթերցողներուն։

Տիգրան, հետամուտ ամեն հռչակ հանող դատաստաններու մեջ պաշտպանության դերն ստանձնելու, ամբաստանելույն փոխանորդությունը խնդրեր ու ստացեր էր. և ի՞նչ չեղավ իր զարմանքին աստիճանն երբ ձերբակալյալ կինը ճանչցավ. այն մանկամարդ հույն աղջիկն էր զոր 4—5 տարի առաջ այնքան հիմարությամբ սիրած էր։ Ամուսնանալով իր հրապույրը կորսնցուցած չէր. միշտ միևնույն հրդեհող նայվածքը, միևնույն քնքուշ, նուրբ ու մատաղ հասակը, միևնույն ոսկեգույն խոպոպիքն ու վարդաշուրթն բերանն էր զոր ուսանողն այնքան, ո՜հ, այնքան եռանդյամբ պաշտեր էր։ Տիգրան զղջաց այս փոխանորդությունն ստանձնելուն. ոճրին ապացույցները բազմաթիվ և հազվագյուտ խնամոք իրարու կապված էին։ Ընդհանուր դատախազն արտասովոր խստությամբ մը հառաջ կվարեր այս դատը. մի գուցե անլսելի ըլլար իր ձայնն և իր ձեռոք, բուն իր ձեռոք կախաղանի մատներ այդ պաշտեցյալ գլուխը։ Նախկին սիրո մը մնացորդ մոխիրը կարթիններ ու կբռնկեր. թերևս լավագույն էր ուրիշ պաշտոնակցի մը հանձնել այս դժվարին պաշտպանությունը. բայց որի՞ հավատալ և որի՞ վստահիլ։

Հուսկ ուրեմն որոշեց խույս չի տալ վտանգի պահուն. այս դասալքությունն իրեն չէր վայլեր. պահ մը մոռցված սերն արթննալ կարծեր էր. բայց ո՜չ, անձնասիրության ու եսության զգացում մ'էր որ զինքը դղրդեր էր միայն։

Անշուշտ ամեն մարդկային ու գերմարդկային ջանք ի գործ պիտի դներ փրկելու համար նորատի կինը, բայց ո՜չ զայն պաշտելուն համար, այլ միայն, ո՜վ մարդկային ունայնություն, ճանչցնելու համար այդ կնոջ, որ իր արհամարհած երիտասարդին կպարտեր իր կյանքը։

Տիգրան քաջությամբ գործի ձեռք զարկավ։

Դատաստանի օրը մոտ էր. Ոճրագատ ատենի սրահն հոն էր ուր կգտնվի այժմ։— Դատավարության օրն հասավ. խուռն բազմություն մը անոր ամեն մուտքն ու ելքը գրաված էր, երբ Ոճրագատ ատյանն իր հրապարակային նիստն սկսավ։

Այն ատենվան լրագիրները գրեցին բոլոր այս դատին մանրամասնություններն։ Ամբաստանելույն հարցաքննությունեն ու վկայից տեղեկություններեն վերջն ոճրույն ապացուցման եղանակը կքննվեր։ Տարօրինակ զուգադիպությամբ ընդհ. դատախազի օգնականի պաշտոնը կվարեր Խոսրով։

Պարզ դիպվածի մը բերմո՞ւնք էր թե կանխորոշ վրեժխնդրության մը փափագն, որ Տիգրանի դասընկերն այդ աթոռին վրա կբազմեցներ. ոչ ոք կրնար ստույգը գտնել։

Միայն թե դատավարությունն երկար ու մանրախույզ և ամբաստանության ու պաշտպանության կողմն հավասար համառությամբ նշանավոր եղավ։

Խավարային ու անծանոթ պայքար մ'էր որ տեղի կունենար այս երկու մարդոց մեջ. ուսանողության կյանքի սիրային շնչին դիպված մ'էր որ այս երկու բարեկամներն անհաշտ թշնամի դարձուցեր էր իրարու։

Մեկն իր սերը պիտի պաշտպաներ, մյուսն իր լքման ու մերժման հատուցումը պիտի պահանջեր։

Ընդհանուր դատախազի օգնականն համառոտիվ թվելով ոճրին ապացույցներն ու սպանելույն երիտասարդ ու բարի ամուսին մը լինելն հիշեցնելով, մեծագույն խստության մը հարկը կզգացներ. ամենքըն անհամբեր կսպասեին գիտնալ թե ի՞նչ էր պահանջած պատիժն. և այս անհամբերությունն երկար չի տևեց. Խոսրով իր խոսքը շուտով ամփոփեց. մեկ բառով մահվան պատիժ կպահանջեր մեղապարտ կնոջ դեմ։ Ամբաստանելույն ո՜չ գեղն, ո՜չ երիտասարդությունը չէին ազդեր այս մարմարե սրտին։

Արհավրալից լռությամբ մը ընդունվեցավ այս անլուր խստությունը։

Խոսքը պաշտպանությանն էր։

Իրիկվան ժամը 11-ն էր, սրահը մթնցեր ու գերեզմանի լռություն ու ամփոփում կտիրեր չորս կողմը։

Տիգրան իր շուրջը նայեցավ անգամ մը. թշնամի բազմություն մ'էր որ զինքը կշրջապատեր. ամբաստանելուն հանցավորության կանխապես համոզյալ ատյան մ'էր որ իրեն պիտի ունկնդրեր։ Չըլլա՞ թե անկարող լիներ փրկելու այս թշվառուհին. այս վախն անոր միտքը խանգարեց։ Մահու ու կենաց վայրկյանն էր. ոտք ելավ դողդոջուն ու ամբաստանյալեն ավելի տժգունած։

Ամեն ոք իր շնչառությունը պահ մը կտրեց ավելի աղեկ լսելու համար. ճանճի բզզյունը պիտի լսվեր հինգ հարյուր հոգիե ավելի խռնված սրահի մը մեջ, երբ ծանր ու հաստատ ձայնով փաստաբանն իր պաշտպանության ճառն սկսավ։

Անոնք որ լսեցին, հավիտյան չպիտի մոռնան այդ ձայնն. ի՞նչ ըսավ, ո՞ւսկից սկսավ և ի՞նչպես վերջացուց, ի՞նչ կերպով հաջողեցավ պատռել, թոթափել այն ծանր կասկածներու մթնոլորտն որու ներքև ամբաստանյալը կընկճվեր, ի՞նչ ձևով վանեց այն ատելության ամպն որ բոլոր ունկնդիրները կգրավեր. ոչ ոք պիտի կարենար ճշտիվ զրուցել։

Նախ իրողություններն ու հետո օրինական ապացույցները քննելով, անանման հաջողությամբ և ջախջախիչ կերպով հերքեց այն փաստերն, որոնք ճարտար կապակցությամբ մը ընդհ. դատախազին ատենաբանության մեջ՝ ոճրագործությունն ապացուցանելու կհանգեին։

Բառերը, դաշույնի հարվածի պես սուր ու կտրուկ, մի առ մի կզարնեին այն կասկածներուն, որոց կշիռեն կախումն ուներ դատին ելքն։

Ու երբ իր հետախույզ ակնարկը կրցավ համոզումը որոշել պահ մ'առաջ խոժոռած դեմքերուն վրա, երբ ամեն ստվեր փարատած տեսավ դատավորներուն ճակատեն, այն ատեն հիշելով այն անհանդուրժելի տառապանքն ու մահացումն, որոնց փափուկ ու սրտաբեկ արարած մը հուսահատ քաջությամբ մը դիմացեր էր, արթնցնելով բանտի ու կապանաց այն անջնջելի օրերու հիշատակը, փաստաբանին հպարտ շեշտը պաշտպանութենե ամբաստանության դարձավ։ Երբեք սրտահույզ ոճն այդքան խորին ու ուժգին չէր դղրդած մարդկային սրտերն։ Ամենքը, քիչ մը առաջ ամբաստանելուն հանցավորության համոզված, հիմա պատրաստ էին անոր անմեղությունը վկայելու։

Կես ժամ միայն տևեց այս զարմանալի պաշտպանությունն և կես ժամ, դատավոր ու ունկնդիր, փաստաբանին ձայնին անբացատրելի հմայության տակ մնացին։

Դատավարությունը վերջացավ, երկբայելի չէր տրվելիք վճիռն, և քառորդ մը վերջն ամենքն ակներև ուրախությամբ ստացան անմեղության վճիռ մը որ միաձայնությամբ տրվեր էր և որ ամբաստանելուն

արձակումը կհրամայեր, մինչդեռ տարաբախտ կինը վախեն ու հուզումեն դողդոջուն սրահին մեջ կնվաղեր։

Տիգրան չսպասեց շնորհակալության ցույցերու. ամենեն մաքուր ու ամենեն բարձր համբավն ունեցավ այս անլուր հաջողությամբն. ուրիշ բան մը չէր պահանջեր. ինչպես չորս տարի առաջ, հիմա ալ նույնչափ հաստատ էր այս գեղանի կինը չի տեսնելու որոշման վրա. իր մոռացման վրեժը լուծեր էր. ուստի մեկնեցավ առանց ետին դառնալու։ Եվ ահա այս կերպով վերջացեր էր այն եղերական արկածն, որ ողջույն Պոլիսն հուզած էր և որ Գևորգ էֆենտիի սրահներուն մեջ, ինչպես այլուր, տիրող խոսակցության նյութն էր։

Սրահներն հետզհետե կոգևորեին, երեկույթն իր ամենեն մեծ փայլն ու զվարթությունն ստացեր էր. պարերն իրարու կհաջորդեին, ու չի պարողները քարափին վրա կամ ծովահայաց սրահներուն մեջ կշրջեին։

Տիգրան շուտով խույս տվեր էր զինքն հալածող հետաքրքիրներեն. ամենքն անոր բերնեն լսել կուզեին այս սրտահույզ տռամին մանրամասնությունները. Տիգրան սիրտ չուներ անոնց հազարումեկ հարցմանց պատասխանելու. առանձին ու կիսաստվեր սենեկի մը բաց պատուհանին մոտ երերուն թիկնաթոռի մը մեջ տարածվեր էր ու ծովը կդիտեր։

Հիրավի զմայլիչ տեսարան մ'էր որ իր տրտում ակնարկին առջև կպարզվեր։

Կեսգիշերը ժամ մը կանցներ, ու լուսինն իր լրման մեջ պայծառ ու կապույտ երկնից կամարին վրա կշողար. ծովն հանդարտ էր, ուր կանդրադառնար երկինքն իր կապույտովն ու անհամար աստղերով. ամառվան այն անբացատրելի գիշերներեն մին էր, որով Վոսփորն այնչափ դյութիչ է։ Բնության այս անդորրությունն ու պարզությունը զինքն հափշտակեց, մոռցավ երեկույթը, սրահը, բազմությունն ու երաժշտության վրդովյալ ձայներն. առանձնություն ու լռություն կտիրեր իր շուրջն. ամենքն աշխարհիս մեջ կզբոսնուն ու զվարթ էին. ինքը միայն մենիկ ու ապերջանիկ մնացեր էր։

Իր մանկությունն ու պատանեկությունն որբության, աղքատության ու աշխատության մեջ անցուցեր էր. հազիվ երիտասարդ, ամենեն կանուխ թևակոխած հրապարակային կյանքին մեջ ուր վաղաժամ այլ արդարացի համբավ մ'իրեն կհետևեր, ափսո՞ս, մեկը չէր ունեցած հաղորդելու ու բաժնելու անոր հետ իր մշտահույզ հոգվույն վրդովմունքն։ Իր հայրն ու մայրը գերեզմանեն միայն կրնային նայիլ իրենց միակ որդվույն փառալից կենացն և չի կար իր քով սիրեցյալ մեկն որու բանար իր հազար զգացումներով, հույսերով, խանդաղատանոք լեցված

սիրտը։ Սեդրաքի մահվընե ի վեր մենակյաց, ծեր, դաժան ու վայրենի մեկը դարձեր էր. Սեդրա՜ք... շատոնց սև հողը կծածկեր զայն... ու ինքը մինակ, բոլորովին մինակ մնացեր էր աշխարհիս վրա...

Այս տխուր մտածումներուն մեջ էր, երբ մերձակա սրահեն դաշնակի մը վրա քաղցր ու տրտում եղանակ մը կբարձրանար, իբրև թե ծովուն ալյաց վրայեն ու գիշերվան խորին լռության մեջ, համբ ու դանդաղ շեշտերով։

Զարմա՜նք, այս եղանակն անծանոթ չէր Տիգրանին. անոր տրտմահնչուն նվագեն ճանչցավ թե Սեդրաքի սիրած մեկ կտորն էր։ Հուզյալ և անձկանոք ոտք ելավ, հասկնալու համար թե ո՞վ էր այն անձն, որ պարահանդեսին թնդյունեն ու աղմուկեն խուսափած, առանձին սրահի մը մեջ կդաշնակեր այս տխուր եղանակն, որ այնքան մոտեն իր գաղափարաց տրտմությանը կպատշաճեր։

Երիտասարդ ու վայելչագեղ կին մ'էր որ, առանց նոթայի, միայն իր հիշողության զորությամբ, այս դժվարին կտորը դաշնակին վրա այնչափ կատարելությամբ ու հոգվով կզարներ։ Ամուսինը, Տիգրանի ծանոթ պաշտոնատար մը, անոր մոտն էր, որ զինքը տեսնելով ըսավ. «Մոտեցե՛ք, սիրելի փաստաբանս, կերևի թե դուք ալ ինձ պես ժխորե չեք ախորժիր, բայց իրավունք չունիք դուք, որովհետև դեռ երիտասարդ եք և զբոսնելու պետք ունիք։ Տիկին, ավելցուց, իր մանկամարդ կնոջ դառնալով, ահավասիկ ձեզ կներկայացնեմ իմ ամենեն ավելի հարգած բարեկամներես մին, այն երիտասարդ փաստաբանն, որու անունը ամենուն բերանն է. տիկին Արամ էֆենտի, ավելցուց երիտասարդին դառնալով»։ Տիգրան դեղնեցավ, դեմքը խիստ խոժոռ երևույթ մը առավ ու կատարյալ բարեկրթությամբ խոնարհություն մը ըրավ իր բարեկամին կնոջ, բայց չի պատասխանեց։ Աննախատեսելի դիպվածով դեմ առ դեմ կգտնվեր այն միակ կնոջ՝ զոր հավիտյան չի տեսնել ուխտած էր և Սուրբիկ կարդաց անոր խոժոռած դեմքին վրա իր դժկամությունը։

Երիտասարդ փաստաբանին համակիր մտերմաց մեջ շատոնց ի վեր առաջին տեղը կբռներ Սուրբիկի ամուսինն։ Անգետ այն աղետավոր պատմության, որո իր կինն անողոք դյուցազնուհին ու Տիգրանի բարեկամն անմեղ զոհն եղեր էին, և որ անշուք ու մոռացյալ հողակույտին մեջ ծածկված էր, Արամ էֆենտի առաջին տեսութենեն ի վեր անսահման համակրություն ունեցեր էր Տիգրանի համար։ Գիտուն, ծանրաբարո, ինքնօգնությամբ ձեռք բերած իր բաղձր պաշտոնն, որու համար պահանջված արժանիքեն ավելին ուներ, ծերունի պաշտոնատարը մեծապես կհարգեր անոնք, որ իրեն պես միայնակ ու անօգնական հառաջացած էին ընկերության դժվարամատչելի դասերուն մեջ։

Անկողմնակալ ու ձեռնհաս դատավոր գոլով ամեն արժանյաց ու կարողության, մեկ նայվածքով գուշակեր, ճանչցեր ու գնահատեր էր իր երիտասարդին մեծ տաղանդն ու մեծագույն ապագան։ Անոր ազատ ու հմտալից խոսվածքը սիրեր, կծու ու հեգնող բառախաղություններեն ախորժեր ու վճռական ու ծայրահեղ դիտողություններն համաձայն գտեր էր իրեններուն։

Այսպեսով կազմվեր էր այն հաստատ բարեկամությունը, զոր ամեն առթիվ ցույց տված էր երիտասարդին և որ քիչ-քիչ հայրական գորովանաց փոխակերպեր էր։ Արդարև Սուրբիկի ամուսինն հիմա հիսունի մոտ պետք էր լինիլ։

Միայն կարծես երիտասարդը չէր ճանչցած լիովին անոր մտերմությունը. միշտ հարգալից այլ միշտ քաշված՝ չէր պատասխանած անոր համարձակ անկեղծությամբը։ Զորօրինակ իր անթիվ թախանձանաց վրա բնավ չէր գացած անոր տունը և չէր ճանչցեր անոր ընտանիքը։

Տիգրան այն գիշերն առաջին անգամ լինելով կպատահեր այս կնոջ։ Ինքնիրեն երևակայեր էր երբեմն զայն գեղեցիկ, շատ գեղեցիկ ու նույնքան վատ ու անմիտ։ Այս տեսության մեջ Տիգրան իր դատողությունը մասամբ միայն կրցավ հաստատել, հիրավի գեղանի կին մ'էր երիտասարդության ու վայելչության բոլոր հրապույրներովը, բայց չի կրցավ անոր խոսակցությունը սեթևեթ ու սնոտի վճռել. ընդհակառակն պարտավորեցավ ինքնիրեն խոստովանիլ, թե լավագույն ընկերական դասուն մեջ հազիվ անոր մի քանի նմանյաց հաղիպեր էր։ Սակայն Տիգրան անձնատուր չեղավ այս նպաստավոր դատողության՝ զոր առանց կամենալու կազմեր էր. նրբամիտ, հրապուրիչ և խելացի կին մ'էր թերևս, բայց երբեք Տիգրան չէր կրնար մոռնալ այն տարաբախտ վերջալորությունն, որ իր թշվառ բարեկամին վիճակեր էր։ Ուստի կծու ու խրոխտ կերպով պատասխանեց անոր, և իր խոսքերով դաշույնի հարվածե ավելի խոր արյունեց անոր սիրտն, առանց սակայն բառ մ'արտասանելու անցելույն վրա։

Մանկամարդ կինը խոովեցավ, այլ չընկճեցավ. Տիգրան արցունքի կաթիլ մը նշմարել կարծեց անոր գեղեցիկ աչքերուն մեջ երբ անհաստատ ու ուխտադրուժ աղջկանց ակնարկություն մ'ըրավ։

— Որչափ ալ խիստ ըլլա ձեր վճիռն,— ըսավ Սուրբիկ տրտմությամբ,— ես զայն անիրավ համարողներեն չեմ։ Որչափ ալ անփորձառու աղջիկ մը լինի ուխտադրուժ անձն, անոր հանցանքն ո՛չ ոք ինձմե ավելի անքավելի կդատե. ուրիշ մը իմ տեղս կրնար ձեզ պատասխանելով ըսել թե դեպքերը կամեցողութենե զորավոր են, թե նորատի աղջիկ մը, ենթակա ամեն տեսակ ճնշմանց, գուցե ամենեն տկար էակն

է պատահմանց դիմագրավելու համար ու պետք չէ մեկ հանցանքով մ'ուրանալ անոր ազնիվ զգացումներն. ո՛չ, ես ասոնց և ոչ մին կըսեմ. ամեն հանցանք իր պատուհասն իր ծոցին մեջ կկրե. ի՞նչ հարկ անգութ ու անողորմ լինել հանցավորին դեմ երբ ճակատագիրն ամենեն ավելի անողորմ է անոր։ Պետք է մոռնալ, այո՛, հավիտյան պետք է մոռնալ զայն, քան թե խոր քննել անոր ողորմելի կացութիւնը։ Թերևս անգութ մնալու սիրտը չունենաք և կարեկցության արժանի դատեք թշվառուհին։

Տիգրան այս լեզվին չէր սպասեր. կարծեր էր թե Սուրբիկ ինքզինքը պիտի պաշտպաներ իր հարձակմանց դեմ. սխալեր էր. նա այնպիսի բարձր ու վսեմ մտածություններով պատասխանեց, որ Տիգրան բառ մը չի գտավ ավելցնելու։

Հիրավի նշանավոր մեկն էր այս կինը, նորա զգացմանց բարձրությունը չի ճանչնալ կարելի չէր։ Խոսք մը չի գտավ պատասխանելու. թերևս ուներ շատ ըսելիքներ, բայց ամուսնույն ներկայությունը կարգիլեր ավելի հառաջ երթալե. ուստի խոսակցության նյութը փոխեց։

Տիգրան իր պաշտոնին ու ասպարեզին բերմամբ մարդուս հոգեբանական զգացումը, զորությունը, տկարությունն և բարեշրջումը ճանչցող և ուսումնասիրող մեկն էր։

Զարմանոք դիտեց այս դեռատի ու գեղանի կինն, որո արտաքին վայելչությանը վրա կավելնար բարձր դաստիարակություն մը։ Տարօրինակ գաղտնիք մ'էր անշուշտ, որ այսքան կատարելությամբ օժտյալ կին մը թերանար ամենանվիրական խոստմունքի մը մեջ ու սովորական խաբեբա մը լիներ։ Իգական սեռին հատուկ տկարությո՞ւն մ'էր այս թե հրեշտակի կերպարանքին ու ձևերուն ներքև ծածկված վատթարագույն էակ մ'էր իր դեմինը։

Երեկույթը վերջանալուն Տիգրան աճապարեց ամենեն առաջ խույս տալու, բայց այցելության խոստում մը չի տված՝ իր ծերունի բարեկամին ձեռքեն չազատեցավ։

Հուզյալ ու խռովյալ գատվեցավ. իր համոզումը ծանր հարված մը կրեր էր այն գիշեր։ Մինչև այն օր անարժան արարած մը նկատած անձը լավագույն և ազնվագույն զգացումներու տեր մեկն երևցավ իր աչքին. իզուր ջանաց մաքառիլ այս տպավորության դեմ, իզուր ջախջախիչ ապացույցներ որոնեց ու գտնել կարծեց անոր դեմ, իզուր իր տարաբախտ բարեկամին սրտակտուր վախճանը հիշեց. սիրտն ու համոզումն ապստամբ մնացին մինչև վերջը։

Թերևս Սուրբիկ բռնության մը զոհն էր, թերևս հնազանդությունը բարձրագույն ու գերագույն հարկ մ'էր անոր ամուսնության միջոցին։ Ո՞վ գիտե, ամեն ենթադրություն ներելի էր. խոստովանեցավ ինքնիրեն

թե առանց անգամ մը խոսեցուցած լինելու այս կինն, արդարացի չէր վերջնական կերպիվ դատապարտել զայն։ Այցելություն մը խոստացած էր. կրկին տեսության պետքն ու հույսն զգաց. սակայն չի կրցավ քնանալ այն գիշեր, խառնիխուռն երազներ իր նիրհը վրդովեցին. իր ցնորքներուն մեջ պահ մը կտեսներ Սեդրաք ցուրտ ու խոնավ վարձու սենեկի մեջ առկայծ կանթեղի մը լուսով աշխատող, պահ մը կհիշեր զայն երբ իր պաշտոնատեղիեն կվերադառնար առանց կարենալ հավատալու դեռ իր դժբախտության մեծությանը, կտեսներ զայն դժգույն ու դողդոջուն, երբ անոր սիրուհին իր նորապսակ ամուսնույն թևին հենած խրոխտ ու հպարտ անոր առջևեն կանցներ։

Շաբաթ մը տևեց իր այս անհանգիստ կացությունն. ի վերջո որոշեց այլևս չի մտածել այս մասին. ի՞նչ փույթ իրեն թե այս կինը բարի կամ չար արարած մ'էր. իր բարեկամը մեռած և այս կինն ամուսնացած էր. լավագույն էր մոռնալ այս աղեկտուր պատմությունն, որ իր երիտասարդության տարիներուն հետ այնքան սերտ կապակցություն մ'ունեցեր էր։ Իրեն չէր իյնար դատաստան ընել ու վճիռ տալ։

Բայց այս առաջադրությունը չի կրցավ գործադրվիլ. հա՞րկ էր արդյոք իր բարեկամին կենացը մեջ խաղացած տխուր դերին վերագրել այս կնոջ հիշատակը մոռնալու անկարելիությունը, չէր գիտեր. բայց սա ճշմարիտ էր, որ անոր հետ ունեցած տեսակցությունն անջնջելի կերպով արմատացած մնաց իր մտքին մեջ. անոր շարժմունքը, ձևը, խոսվածքը, ձայնն աչքին առջևն էին շարունակ. «Թերևս դուք ալ անգութ լինելու սիրտը չունենաք ու կարեկցության արժանի դատեք թշվառուհին», ըսած էր Սուրբիկ իր անձին ակնարկություն մ'ընելով։

Հիրավի թշվա՞ռ էր արդյոք. և ինչո՞ւ համար։ Բայց ինք ի՞նչ կհետազոտեր անոր ընտանեկան կյանքն, ի՞նչ կվերաբերեր իրեն. թշվառ կամ երջանիկ, անոր գիտնալիք բանն էր. ո՛չ սակայն, պետք էր իմանալ թե այդ հանցավոր կինը գոնե խղճի խայթ մը չուներ. այս հարցումները բոլորն ինքնիրենն ըրավ և իր անհանգիստ հետաքրքրությունը մեղադրեց. բայց չի կրցավ մեկդի ընել։ Կրկին տեսակցության մը ակընկալությունը գամ զգամ զորացավ իր սրտին մեջ. ամեն օր կորոշեր այցելություն մ'ընել և ամեն օր կհապաղեր. օր մը մինչև Սուրբիկին տան մոտերը գնաց ու չի համարձակեցավ դուռը զարնել, և ետ դարձավ։

Այն ատեն երկչոտ անձկությամբ մը իր սիրտը քննեց ու մեկեն խորին և հայտնի կարեկցություն մը, համակրություն մը նշմարեց այս կնոջ մասին. կարեկցությո՞ւն... անշո՛ւշտ, ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ... ու վախցավ, ամչցավ թերևս ինքնիրեն իր հիմար սերը խոստովանելու...

Ի՞նչ, սիրե՞լ այն կինն, որ իր միակ մտերմին ատեն մը սիրուհին

էր ու հիմա իր ամենեն ավելի հարգած անձին ամուսինն էր։ Տիգրան իր հանցանքին մեծութենեն սարսափեցավ. խղճմտանքն ու պարտականությունն իրենց խիստ և որոշ ձայնը լսեցուցին։ Տիգրան ինքզինքեն խույս տալ ուզեց իբրև մեծագույն շարագործ մը, ինքզինքը հանդիմանեց, պարսավեց. ո՜չ, ինքն այնչափ վատ մը չէր և չէր կրնար լինել, անտարակույս խաբված էր իր ճանաչողության մեջ. սիրե՞լ, ո՞ւսկից գտեր էր այս հոռի գաղափարը։

Ահավոր ու երկարատև պայքար մը տրվեցավ իր հոգվույն մեջ, քարսիրտ և օտարական բժիշկի մը պես ինք անձամբ քննել ուզեց իր վերջին ծանրությունն և պարզապես մահացու և անբժշկելի գտավ զայն։ Ու երբ համոզվեցավ որ այս կինն իր ճակատագրին կիշխեր, երբ ճանչցավ թե իր սերն ուրանալն անօգուտ էր այլևս, այն ատեն իր ցնորած մտքին մեջ իր պարտականությունը փնտրեց ու չի գտավ։

Անշուշտ հանցավոր մ'էր, ուէ գթության անարժան հանցավոր մը այս կինը սիրելուն, որ պետք էր իրեն համար կրկնակի նվիրական ըլլալ։

Այս անակնկալ ու դժբախտ սիրո հետևանքը բոլոր իր արհավրալից ու կսկծալից պարագաներովն երևցավ իր աչքին։

Ինքն՝ որ այնքան հաջողակ էր ուրիշները պաշտպանելու արվեստին մեջ, զարմացավ որ ինքզինքն արդարացնելու բան մը չէր գտներ. հանկարծ սպառնալից ստվեր մը տեսնել կարծեց... Սեղրաքն էր որ իր բարեկամության համարը կպահանջեր իրմե։ Ո՜չ, փրկության ճամփա մը չի կար, և անգութ դատավորի մը պես ինքն ամենեն ծանր պատիժը տնօրինեց իր անձին։

Անձնասպանության գաղափարը պահ մը անխուսափելի համառությամբ մը իր միտքը պաշարեր էր։ Տիգրան Ժան-Ժաք Ռուսոյի աշակերտ մ'էր և ապրելու քաջությունն ունեցավ. մեռնիլը վաղ կամ անագան միտքը դրած էր, հարկ չէր զայն փութացնել, որոշեց միայն այլևս չի հանդիպել այս կնոջ ու թե որ անկարելի էր անոր պատկերն իր հիշատակեն ջնջել, թե որ անհնար էր մոռնալ անոր ներդաշնակ ձայնը, լավ ուրեմն, ինքնիրեն միայն պիտի քաշեր անծանոթ ու մեկ սրտի մը մեջ միայն ամփոփված սիրո մը բոլոր դառնությունն և այլևս չպիտի տեսնար Սուրբիկը։

Անտարակույս տխուր ու գովելի քաջություն մ'էր այս հաստատ որոշումն, որ միայն կրնար համաձայնիլ խստապահանջ պարտականության մը ձայնին։

Տիգրան Սուրբիկի բնակած գյուղին մեջ բայց հեռավոր արվարձանի մը մեջ կբնակեր։ Այս հեռավորությունը բավական չհամարեց. փոզոցին մեջ, շրջագայության մեջ, այցելությանց մեջ կրնային իրարու հանդիպիլ ու Տիգրան փախստական ոճրագործի մը շտապավ հեռացավ այդ տեղերեն ու Պյոյուք-Տերե գնաց բնակելու։

Բայց տարաբախտը չէր հաշված այն դժնդակ փորձին բոլոր ծանրությունն, որու դատապարտած էր իր կյանքը։ Սուրբիկը տեսնելու բոլոր հույս ու ակնկալություն վերջանալուն հետ ճանչցավ իր սիրույն ու տառապանքին մեծությունը։

Ամեն ինչ ի գործ դրավ մոռնալու համար եթե ոչ իր սերը, գոնե իր անձը. նոր եռանդով մ'ընդգրկեց իր մրրկալից ասպարեզը, բայց զզվանք ու տաղտկություն գտավ հոն՝ ուր ատեն մը ամենեն մաքուր գոհունակությունը կգտներ. աննպատակ երևցավ կյանքն ու մաքառելի ձանձրացավ։ Մի քանի տարվան մեջ բավական հարստություն մը ձեռք բերեր էր, որոշեց գործն քաշվիլ և ա՛լ զայն խիստ քիչ անգամ տեսան դատավարության մեջ։

Ատեն մը ամեն մտային աշխատություն դադրեցուց, իր աշխատության սենյակը ոտք չի կոխեց, գրական ամեն պարապում վերջացուց. և ուզեց ձեռքի աշխատություններով իր անձը հոգնեցնել ու զբաղեցնել. իր ծովեզերյա տան պարտեզին մեջ օրն ի բուն կտեսնեին զինքը, որ տոկուն գործավորի մը պես կաշխատեր. ի՞նչ կմտածեր արդյոք երբ խոնջած ու քրտնաթոր հանգիստ կառնուր ծառի մը տակ, ակնարկը սեեռած ծովուն երեքածուփ կոհակաց վերա։ Իրիկվան դեմ շրջագայություն կըներ հետիոտն կամ ձիով, կերթար որչափ որ կարելի էր հեռուն երթալ, բայց նախամեծար կհամարեր ամայի ու խոպան վայրերը. բազմությունը զինքը կգայրացներ ու ամեն մարդկային ձայնե իբր վնասակար ու չարագուշակ հնչյունե մը կխուսափեր։

Անցան քսան ամիսներ այս տրտում և անսփոփ կյանքով. գարունը կհաջորդեր ձմեռվան ցուրտ ու խոնավ օրերուն, օդերը պայծառացան, Վոսփորի ափունքը գալարեցան ու գեղեցկացան, և ամառվան սովորական հյուրերը Պյոյուք-Տերե վերադառնալով նոր ոգևորություն մը բերին այս պահ մը ամայացած եղերքներուն։

Տիգրանի Պյոյուք-Տերեի մեջ բնակած տան կոնակը, քիչ մը ավելի վեր, ամառվան համար ուրիշ կոկիկ ու փոքրիկ քյոշկ մը կար պարտեզներու մեջ առանձնացած։ Այս քյոշկը բավական ժամանակե ի վեր պարապ՝ հինցած ու տխուր երևույթ մը ստացեր էր. անոր տերերը կենդանության նշան ցույց տված չէին և ոչ իսկ անգամ մ'այցելելու եկած այս սիրուն բնակությունն, որ ճաշակի տեր մարդու մը ստացվածքն էր անշուշտ։ Տիգրանի տան ետին, ավելի բարձր ու բոլորովին ծովահա-

յաց դիրքով, ընդարձակ ու զառիվեր պարտեզի մը մեջ, վայրի շագանակի ծառերե կազմված նեղ ու խորհրդաստվեր ուղիներով, առջևն հարթ ու ուղիղ, ուր 6—7 հատի չափ տերևախիտ ու հովասուն ծառեր շուք կուտային և որ կարծես ծովուն մեջն էր, այս մենակյաց բնակությունը մարդատյաց, բայց բնության գեղեցկություն ճանչցող մարդու կվայլեր։ Անոր զմայլելի տեսարանը նույնիսկ Վոսփորի մեջ չէր գտնվեր. մեկ կողմեն մինչև Սև ծովու փոթորկյալ ալիքն, մյուս կողմեն Ասիական եզերքն իր դալարյալ բուրաստաններով, Պեյքոզեն մինչև Քանտիլի, ահա անոր հազվագյուտ ու աննման տեսարանը։

Ամառվան սկիզբները շարժում մը տեսնվեցավ այս լռին ու լքյալ բնակության մեջ։ Նորոգություն մը կկատարվեր հապճեպ ու փութաջան գործավորներով։ Մեկ երկու շաբթվան մեջ, պարտեզը խնամով շտկվեցավ, քյոշկը նորոգվեցավ, ներկվեցավ ու կահավորվեցավ։ Տիգրան՝ դրացի մը ունենալու հավանականությունը գրեթե ուրախությամբ տեսավ։ Երկու տարվան առանձնությունը զայն կերպարանափոխ ըրեր էր։ Մշտատև տխրությունն ու անոքությունը կրնային ծանր հետևություններ ունենալ և Տիգրան առանց աղմկալից ընկերության մը մեջ նետվելու, իրեն պես առանձնասեր ծանոթի մը հետ տեսության պետքը կզգար։

Քանի մ'օր վերջը քյոշկին նոր տերերը փոխադրվեցան։ Տիգրան դեռ չէր տեսած զանոնք և գիշեր մը ճաշեն վերջը՝ ծովուն վրա նայող սրահին մեջ բուսաբանության գիրք մը կթղթատեր որ Հարավային Ամերիկայի ճոխ ու հարուստ բուսոց ու ծառոց վրա կխոսեր, երբ իր ծեր սպասավորը նոր դրացիներուն այցելության եկած լինելն իմացուց. Տիգրան դիմավորեց զանոնք։

Արամ էֆենտին, իր տիկինը, երկու փոքրիկ հրեշտակներ, ասոնք եղան Տիգրանի դիմավորած անձինքն։

Ո՞ւսկից, ի՞նչ կերպով և ի՞նչ դիպվածով Պյոյուք-Տերե ու իրեն այնքան մոտ եկեր էին։ Ամենամեծ հուզմանց մեջ անգամ երիտասարդն ինքնիրեն տերն էր. իր վրդովումն երկար չի տևեց ու կատարյալ ազնվությամբ իր հյուրերը մեծարեց։

Արամ էֆենտի միշտ միևնույն գորովալից ու մտերմասեր անձն էր. հոր մը խանդաղատանոք Տիգրանը տեսնելուն ու այնքան մոտ դրացի ունենալուն ուրախությունն հայտնեց։ Բայց ի՜նչ փոփոխություն իրեն վրա. երկու տարվան մեջ բոլորովին ծերացեր ու ինկեր էր. մազերը ճերմկցեր, ճակատը խորշոմեր ու տեսությունն և լսողությունը սկարացեր էին, միայն անոր հզոր միտքը մնացեր թերևս առաջվընե ավելի զորավոր։ Պաշտոնե հաներ էին զինքը. նախանձաբեկ հայ պաշտոնյաներ՝ իրեն մեծ դիրքին հետամուտ՝ չէին վարաներ մուր քսելու անոր մաքուր ու անբիծ պաշտոնավարության վրա ու անխորհուրդ որոշում մը՝ առանց քննության՝ վտարեր էր զայն քաղաքական ասպարեզեն։

Արամ էֆենտի պաշտոնի համար հոգի տվող մարդ չէր բնավ. առանց բողոքելու, առանց գանգատելու, սակայն իր անմեղությունն անվիճելի կերպիվ հաստատելե վերջը, գրեթե գոհությամբ ձգեր էր իր պաշտոնն, որո համար իր տկարությունն ու հիվանդոտ վիճակն արգելք էին։ Նախարարաց խորհուրդը շուտով համոզվեր էր անոր անմեղությանն և հարմար հանգստյան թոշակով մը վարձատրեր էր այս խելացի պաշտոնեին քսան տարվան ծառայությունը, մինչդեռ Փարիզի մեջ գտնվող մեծանուն հայազգի հարուստ մը, վաղեմի բարեկամ մը՝ որուն կվերաբերեր այս քյոշկն, անոր տրամադրության ներքև դրած էր զայն։

Արամ էֆենտի անկեղծ հոգածությամբ Տիգրանի վիճակն հարցուց ու իր երկու փոքրիկ զավակները ներկայացուց, որոնց մեծը գրեթե յոթը տարեկան կայտառ ու զվարթ մանչ մը և մյուսը շորս տարեկան փափուկ ու գեղանի մանկուհի մ'էր։ Սուրբիկ միայն անփոփոխ մնացած էր. ոչ սակայն. ծանրության հով մը կար անոր վրա. բայց իր հրաշալի գեղեցկությունն ավրված չէր. այն երևակայական կինն էր միշտ զոր երիտասարդն իր ցնորքներուն և երազներուն մեջ կտեսներ ու կպաշտեր. բուրում մը կար անոր վրա կարծես հրապույրի, հեշտության ու երջանկության որ իր շուրջը կծավալվեր, Սուրբիկի գտնված տեղն հմայիչ ու անբացատրելի մթնոլորտ մ'էր և անոր մոտն, այնքան մոտն ապրելու ստուգությունը Տիգրանն հիմարեցնելու չափ անհավատալի երջանկություն մ'էր։

Սակայն Տիգրանի այս տպավորությունն այն վրդովյալ հուզումը չէր, որ զինքն ալեկոծեր էր այս կինն առաջին անգամ տեսնելուն։ Այս անգամ գոհունակության, անդորրության ոգի մ'էր, որ իր մտածության մեջ կարթննար։ Վտանգալից ապագա մը չի տեսավ որ զինքը վախցներ, այլ հեզ ու հանդարտ տեսության մը վայելքն, որ իրեն պիտի բաներ։ Այս գիտուն, ծերունի ու բարի ամուսինն, այս նորատի ու գեղանի կինն, այս երկու պաշտելի հրեշտակներն, այս ամեն ինչ ընտանեկան կենաց դրախտն էր անշուշտ և ինքն, այո՛, ինչո՞ւ չըլլար, մտերիմ, անձնվեր ու առաքինի բարեկամ մը պիտի լիներ հոն. որդվո մը պես կսիրեր ու կհարգեր այս ընտանյաց տերն ու եղբոր մը պես, միայն եղբոր մը պես, պիտի սիրեր անոր կինն։ Այն ատեն երևակայեց իր կյանքը՝ ցայնժամ դառնությամբ լցված՝ որ հանկարծ երանության հորիզոններով կվերաբացվեր։

Վստահություն և ապահովություն զգաց իր անձին վրա ու այս տրամադրությամբ իր մտերմությունն ու գորովը կրցավ ցույց տալ այն ընտանյաց ուրկե մինչև այն օր խուսափած էր. անոր զավակներն անհուն համակրությամբ ընդունեց և փոքրիկ մանուկներն իրենց նոր բարեկամին կապվեցան այն անսխալ համոզմամբ, որով տղայք անմիջապես կորոշեն զիրենք սիրողն ու չսիրողն։

Այսպեսով Տիգրանին կյանքը պատող մառախուղը փարատեցավ և զվարթության արևը նորեն փայլեցավ անոր խնդուն երեսին վրա։ Երիտասարդն ի բնե ուրախությունը սիրող էր. երջանկության հեռանկարն իր սիրտն անսահման բերկրությամբ լեցուց. բանի մը փափագող չէր այլևս ու գուցե աշխարհիս վրա միակ գոհ ու երջանիկ անձն էր։ Հավատքն ու համոզումն՝ աշխատության կարոտ չեն գոյանալու համար։ Տիգրան զգաց քան թե որոշեց այս բոլոր խորհուրդներն. ապագային տեսարանը մառերկրորդի մը մեջ պարզեցավ իր աչքին առջև իր բոլոր պայծառ գույներովն ու իր ամբողջությամբ, և Տիգրան աներկմիտ ու անկասկած հավատաց անոր։

Ի՞նչ է արդյոք մարդկային սրտին գաղտնիքը. ժամերով, շաբաթներով, ամիսներով քննած ու անթափանց համարած ստվերները մեկ վայրկենի մեջ անհետացան, ու Տիգրան զարմացավ, որ այս գեղանկար երկինքը չէր նշմարած մինչև այն ժամը։

Առջի տեսութենեն՝ մտերմությունը կատարյալ եղավ ու խոսակցությունը, զոր Տիգրան այնքան քաջ գիտեր ախորժելի դարձնել, մինչև գիշերվան վեց երկարեցավ. բաժնվեցավ ամեն օր տեսնվելու խոստմամբ։

Տիգրան միանակ մնաց. ի՜նչ զարմանալի ու անակնկալ դիպված.— ո՞ւսկից ո՞ւր ճակատագիրն առաջնորդեր էր այս կինը զոր չի տեսնելու համար ամեն ինչ ի գործ դրեր էր. բայց նախախնամության կամքն իր կամքեն վեր էր հարկավ։ Երկու տարվան մոտ ժամանակ մ'անցունելը մեծապես օգտած էր իր տենդահույզ տագնապաց ամոքվելուն։

Տիգրան ինքզինքը քննեց ու առանց վարանման հայտարարեց թե բժշկված էր անդարմանելի կարծած հիվանդութենե մը։ Սուրբիկի տեսքը նոր կյանք ու կենդանություն տվեր էր անոր. նոր մարդ մ'էր որ աշխարհ կուգար առողջ ու ազատ, առանց նախորդին տկարության։

Ուստի անվախ ու անքույթ պիտի ապրեր այն կնոջ մոտ և հիմա բական տենդեր չի պիտի կրնային գալ վրդովելու իր անդորր էությունը։

Այս երաշխավորությամբ հաստատվեցավ այն սերտ բարեկամությունն, որ երկու դրացիները գրեթե միացուց։

Այս ընտանությունն սկսավ բարեբաստիկ գույներով. Արամ էֆենտի, քիչ մը հիվանդոտ ու տկար, մեծ բարվոքում մը գտած էր այս օդափոխությամբ. իր կինը միշտ ամուսնույն մոտ, անոր բոլոր հանգըստության և իր որդվոց կրթության նվիրված, ու Տիգրան որ զվարթ ու խնդումերես այս առանձնասեր ընտանյաց ոգևորություն կուտար ու անոնց միօրինակ կենցաղավարության տրտմությունն ու ձանձրույթը կփարատեր։

Օրական զբաղումնին գրեթե միևնույնն էր. առավոտուն կանուխ, գրեթե արշալույսին հետ կելնեին. երբեմն Տիգրան էր որ այգուն, այգուն քյոշկին դուռը ձեռք կառնուր ու երբեմն իր դրացիներն, որ երիտասարդը կուգային արթնցնել ու անոր ծուլությունը մեղադրել. նախաճաշի ու ճաշի տեղերն որոշված էին անպատճառ առջի իրիկվընե. մերթ անտառուտ ու ստվերամած մեկ կողմն էր իրենց պարտիզին մեջ ուսկից կդիտեին արևուն ծագումն հանդարտ Վոսփորի ջրերուն վրա, մերթ Պեյքոզի մեկ եզերքն ամայի ու անխոով ծառի թփի մը տակ. ցերեկը՝ ճաշեն վերջն ընթերցանություն մը կընեին նոր հեղինակի մը ու հետո ջուրերը կերթային, մասնավորապես Քեսքանե-Սույին, որ խորհրդավոր ու նսեմաստվեր անտառի մը մեջ պայծառ ու անուշ ջրի աղբյուր մ'է ու Ենի-Մահալլեցի բնակչաց մի զբոսավայրը. գիշերն երբեմն Պյոյուք-Տերեի գեղեցիկ քարափին վրա շրջագայություն մը կամ ծովուն վրա կոնտոլով պզտիկ պտույտ մը և երբեմն ծովեզերյա տան սրահին մեջ խոսակցություն մը պատուհանին քով լուսնի լուսով. ահա այս անձանց հաճույքն ու անցուցած կյանքն։

Ո՞չ իսկ բառ մը, խոսք մը կամ ակնարկություն մ'անցելույն այս ներդաշնակ երանության մեջ. Տիգրան ամեն բան մոռցած էր. Սուրբիկի հետ իր գորովն՝ եղբայրական անկեղծությամբ ու համարձակությամբ մը կհայտնվեր և նորատի կինը միևնույն անկեղծությամբ ու համակրությամբ կտեսնվեր իրեն հետ։

Մտերմությունն այնչափ հառաջ գնաց, որ օր մը Սուրբիկ Տիգրանի անցյալ օրերը քննել ուզեց։

— Ոչ ոք չե՞ս սիրած մինչև այս տարիքը, Տիգրան,— հարցուց անոր,— քեզի պես անհանդարտ մեկը չեմ կրնար ենթադրել, որ անտարբեր կամ անփույթ մնացած լինի մինչև հիմա,— ավելցուց խնդալով,— նեղանաս կամ չի նեղանաս հոգս չէ, տեսնենք պատմե՛ մեզի քու հաջողություններդ ու սիրային արկածներդ։

— Ի՞նչ կհասկնաս սիրային արկած ըսելով. թե որ այն խաբեբա զրախոսությունները կըմբռնես զորս երիտասարդ մը ու երիտասարդուհի մը առանց զիրար սիրելու անամոթ հանդգնությամբ մը իրարու կկրկ-

նեն. թե որ այդ տեսակ պատմություններ կուզես, տիկին, ի՞նչ մեղքս պահեմ, շատ ունեցեր եմ մինչև ցարդ. իսկ թե որ ճշմարիտ, խորին ու սրտի կապ մը ըսել կուզես, ատիկա ունեցեր եմ ու չեմ ունեցեր միանգամայն,— պատասխանեց երիտասարդը ցած ձայնով, որուն մեջ Սուրբիկ իր կանացի փափկությամբ տրտմության ու դառնության շեշտ մը նշմարել կարծեց ու խոսակցությունն հառաջ չի տարավ։

Տիգրան փոխադարձաբար կրնար հարցնել թե Սուրբիկ ալ այդ տեսակ սրտի կապ մը ունեցած չէ՞ր. բայց և ոչ մտաբերեց զայս։ Այս անքույթ երջանկության մեջ մոլորած երիտասարդին ակնարկն ու հիշողությունը ներկայեն անդին չէին անցներ։

Հիրավի երջանիկ էր Տիգրան։

Հորմեհետե ինքզինքը տեր կարծեր էր իր սրտին, պատճառ մը չէր գտած իր անձը մշտնջենական զրկման դատապարտելու. բավ էր որ անպատիվ խորհուրդ մը չանցներ իր մտքեն և ուրիշ արգելք չի կար զուրկ մնալու այս կնոջ երեսեն, որ իրեն համար արեգակն էր փայլուն ու կենսատու։ Անոր շնչած օդը շնչել, անոր պտրտած վայրերը տեսնել, անոր ձայնը լսել հեշտալուր, կարենալ առանց ոևէ անպատվության ամեն ժամ տեսնել զայն, խոսիլ անոր հետ, մեկ բառով պաշտել զայն իրապես երբ վերացական աշխարհի մը մեջ անգամ այսչափ երանության չէր հավատար, Տիգրանի՝ ուրիշ պահանջելու բան մը չէր մնար։ Ի՞նչպես սակայն իր խանդավառ սերն եղբայրական գորովանաց փոխակերպեր էր, ի՞նչպես կրցած էր գոհանալ պարզ մտերմության մը վայելքով. այս կնոջ անքննադատելի ծանրությո՞ւնն էր արդյոք, անոր լուրջ ու խոհուն վա՞րքն էր որ զինքն հեղափոխեր էր, թե ոչ այս տեսությունն իսկ մեծագույն շնորհն էր զոր՝ իր սիրույն չափազանցության մեջ՝ երիտասարդը շատ և շատ իսկ դատած էր իրեն համար։ Ինչ որ ալ ըլլար չի ջանաց ծածկել իր համակրությունն, որ արդեն իր ամեն խոսվածքին ու վարմունքին մեջ երևան կելներ։ Տարօրինակ ազդեցություն մ'էր այս կնոջ իշխանությունն երիտասարդին վրա. երբ որ խոսեր իրեն, ներդաշնակ նվագ մ'էր որուն դադրելեն վերջն անգամ երիտասարդը դեռ կունկնդրեր երբ որ նայեր իրեն. փայփայիչ ու գգվալից ակնարկ մ'էր որ իրեն կհետևեր ու զինքը կշրջապատեր էլեկտրական հոսանքով մը։

Խոստովանեցավ օր մը Սուրբիկին իր բոլոր տկարությունը.— «Չեմ գիտեր, ըսավ անոր, ի՞նչ հմայություն ունիս վրադ, կզգամ որ քույրս քեզ չափ չպիտի սիրեի. անբացատրելի զգացում մ'է զոր իզուր կջանամ հասկնալ. հոր մը չափ կսիրեմ քու ամուսինդ. հավատա որ ուրախ եմ այնպիսի բարի ու սիրեցյալ անձի մը կենակիցն լինելուդ. թերևս

իրարու չի հանդիպեինք բնավ թե որ Արամ էֆենտիի բարեկամը չլինեի ես»։

Այս անդորրության օրերու մեջ էր որ Արամ էֆենտի գլխի ծանր հիվանդութենե մը պառկեցավ. Սուրբիկ անձնվեր հոգածությամբ մը խնամեց իր ամուսինը, քսան օր հարկ եղավ անքուն անցունել անոր անկողնույն մոտ. դեղերը տալ, զայն սփոփել ու խնամել վարձկան ձեռքի գործ չէր և Սուրբիկ անձամբ իր պարտքը կատարեց. վտանգներն անցան, բայց նախկին առողջությունը չի վերադարձավ. հիվանդությունը հաղթվեցավ մշտնջենական հետք մը թողլով սակայն հիվանդին վրա զոր անկարելի եղավ բուժել։ Արամ էֆենտի ականջի ծանրություն մ'ուներ, այս հիվանդությունն անոր լսողությունը խանգարեց. հիվանդն ոտքի վրա ելավ բոլորովին խուլցած, ծանր հարված մ'եղավ ասի ծերունի մարդուն, հավիտենական զրկում մ'էր ամեն հարաբերութենե։ Անփարատելի տրտմություն մ'եկավ իր վրա և իզուր ջանացին զինքն սփոփել. ամեն մարդ պարտավորեցավ գրով խոսիլ իրեն հետ։ Ամեն ձայնե զուրկ ու կարոտ մնացող այս մարդը չի կրցավ անտարբեր քաջությամբ մը դիմադրել այս աղետին. յուր անդբաղ օրերուն բոլոր հաճույքը խոսակցությունն էր զոր հարկ էր մեկ կողմ թողուլ. իր խլության պատճառավ պարտավոր էր մեկուսի մնալ այլևս իբրև խելագար հիմար մը. այլևս ընկերության մեջ չպիտի կարենար մտնել ծիծաղելի չըլլալու համար. երաժշտությունն և իր կնոջ դաշնակին ձայնը, զոր այնչափ կսիրեր, ա՛լ իրեն համար չէին։ Նամանավանդ իր որդվոց ձայնը չի լսելը զինքը խիստ վշտացուց։

«Զավակներուս ձայնեն կարոտ մնացի», պատասխանեց անոնց, որք զինքը մխիթարելու համար ամեն ջանք կընեին։

Իսկ Սուրբիկ ի՞նչ կմտածեր այս անակնկալ պատահարին առջև։ Իր ամուսնույն դժբախտ կացության վրա կատարյալ ու խորին ցավակցությամբ մը հանդերձ չի կրցավ ակնարկ մը չի դարձնել նույնիսկ իր գոյության վրա. հազիվ 25 տարեկան էր դեռ, երբ իր ծերունի ամուսնույն հիվանդ վիճակը՝ նոր տկարությամբ ծանրանալով, ընտանեկան կյանքը բոլորովին կվերջացներ։ Ապաքեն քանի տարիներև ի վեր հիվանդոտ էրիկը դարմանելով անցուցած էր կենաց ու երիտասարդության լավագույն օրերն. այսուհետև այրի ու ծերացած կնոջ մը տխուր ու մռայլ ապագան վերապահված էր իրեն։

Հանկարծ անցյալ օրերը պատկերացան իր աչքին առջև անողոք ճշտությամբ մը. ո՞ւր էր այն ցնորական երջանկությունը զոր Սեղրաքին սիրույն մեջ կվայելեր երբեմն, ո՞ւր էր այն հեշտության դրախտը զոր երիտասարդին ականջին կխոստանար ու կփսփսար։ Ուխտադրուժ

ու խաբեբա՝ քարուքանդ կործաներ ու փշրեր էր այն երանության հույսերն զորս իր ձեռքն էր իրականության վերածել. չարագուշակ հրեշտակի մը պես մահ և ավերում սփռեր էր իր շրջագին, և սև հողերն հափշտակեր տարեր էին այն մեկ հատիկ սիրեցյալն, որուն միայն խոստացած էր պատկանիլ։

Սուրբիկ չար հոգի մեկը չէր. ոչ ոք իր հանցանքին մեծությունը թերևս իրեն չափ կճանչնար. ոչ ոք ապաշխարելու ու ներողության արժանանալու հարկն իրեն չափ կխոստովաներ։ Ամուսնական կյանքին մեջ իր պարտականության անթերի գործադրությամբն սփոփանք մը գտնել որոշեր էր, հավետ իր սրտին մեջ պաշտելով իր միակ սիրելվույն հիշատակը։

Տարիքի անագին տարբերությունն, որ ի սկզբանե իր և ամուսնույն մեջ կգտնվեր, զինքը զուրկ թողած էր երջանկության այն ամեն հույսերեն, զոր երիտասարդուհին իրավունք ունի պահանջելու։ Հայրական խնամք ու հոգածություն գտեր էր շատ անգամ հոն, ուր հրդեհող և սպառող հնչություն մը գտնել կհուսար։ Քնքուշ ու հազվագյուտ ծաղկի մը պես ջերմոցի մը մեջ միայն պահվեր էր, մինչդեռ այնքան պետք ուներ ազատ օդին ու արևին ճառագայթներուն։ չէր կրնար գանգատիլ սակայն իր ամուսնույն դեմ, որո բարի, առաքինի ու ներողամիտ բնությունն ամեն մեծարանաց արժանի կկացուցաներ զինքը։

Անշուշտ գիտեր թե որքան անդարմանելի սխալ մը գործած էր ամուսին ընտրելով իրեն այնպիսի մեկն, որ հոր մը տարիքն ուներ իրեն քով և իր աչքը սևեռելով կտեսներ իրեն տարեկից մանկության ընկերուհիներն, որոնց ամեն մեկը հիմա իրեն պես երիտասարդ, առողջ ու զվարթ ամուսինով մը երջանիկ եղեր էր. անշուշտ իր ձեռքն էր օգուտ քաղել այն բոլոր թույլտվութենեն՝ զոր իր ամուսինը կատարյալ վստահությամբ մը տվեր էր իրեն, շեղելու ու մոլորելու համար պատվո ու պարտականության ճամփեն. երիտասարդներ չէին պակսած ականջն ի վար զմայլիչ ու ապահով նկարագրելու այն ուղին, որ լի էր անհատակ անդունդներով։ Սուրբիկ մերժած էր ցայն վայր և գոհ էր խոտորած չլինելու ուղղության ճամփեն. բայց ահա անոր ու միայնակ՝ դատապարտյալ ծերունվո մը հետ ինքն ալ դատապարտված էր. անզգա մը չէր սակայն երբ երիտասարդական արյունն այնչափ ուժգին կշարժեր իր սրտին մեջ. ծաղկահասակ ու գեղեցիկ՝ ինքն ալ միթե չէ՞ր գիտեր սիրել։ Երիտասարդ կինն, առանց ոևէ փորձառության տեր լինելու, խորին գ'տակցություն մ'ուներ յուր տեսնված անձանց տրամադրության վրա ու իր կնային բնազդմամբ առաջին տեսութենեն ճանչցեր ու հասկցեր էր Տիգրանի համակրությունն, իսկ հիմա բոլորովին կկարդար անոր սրտին խորն ու խոովության հովեր կփչեին։

Անփույթ ու շաղակրատ զվարթությամբ մը՝ սիրային լուրջ կապակցության մ'առաջքն առնել ջանացեր և հաջողեր էր ցայնվայր. Տիգրան անոր ընդունելության ձևերուն տակ չէր կրցած նշմարել երկյուղալի անձկություն մը. և հիմա որ ամուսնույն խուլնալովը գրեթե միայնակ ու առանձին կմնար այս երիտասարդին հետ, վտանգը մեծ և ահավոր էր. ո՞վ պիտի պաշտպաներ զինքը տկարության, անխոհեմության վայրկենի մը մեջ. ճակատագիրը կարծես չար սատանայի մը պես ամեն ջանք ի գործ կդներ զինքը փորձելու. բայց գուցե իրեն չափ մեղքցվելու արժանի էր Տիգրանն ալ. Սուրբիկ երևակայեց զայն երբ լռիկ ու անձայն խույս կուտար իրմե և երախտագետ սրտով կմտածեր այն անձնվեր զոհողության, որով երիտասարդն ինքը միայն տանել ուզեր էր դժբախտ սիրո մը բոլոր տառապանքն. այնպես թվեցավ հանկարծ իրեն որ Տիգրան իրեն մոտը կծնրադրեր ու ձեռքերը միացուցած սիրո ու տառապանաց խոստովանություն մը կըներ իրեն, անոր հեշտալի ջունը կարծես թե կգգվեր իր դեմքը... Սուրբիկ սթափեցավ, դուրս ելավ դողդոջուն և պարտիզին զով ու ցրտին հողմն ամոքեց անոր հրատապ ճակատը...

Այսպես նոր-նոր շփոթություններ կպատրաստվեին մոտավոր ապագայի մը մեջ, ընտանեկան հորիզոնին վրա սև կետեր կտեսնվեին, նախակարապետ մեծ ու խոովահույզ մրրիկներու։

Արամ էֆենտիի ապաքինութենեն վերջն ապրելու եղանակին փոփոխություն կրեց։ Այս բարեսիրտ մարդն՝ այնքան ծանր հարվածի մը ներքև ընկճված՝ գրական պարապմանց տվավ ինքզինքն ու առանձնացավ. բայց անխիղճ ու եսասեր մեկը չէր որ իր ճակատագրին բոլոր դառնությունն իր ամուսնույն վրա ալ բեռնավորեր. ազատամիտ փիլիսոփա, որ իր ընկերական կենաց բոլոր անպատեհ կողմերը կճանչնար, գիտցեր էր գեթ իր անուշ բնավորությամբ լնուլ տարիքի հեռավորությունն, որ զինքն իր կնոջմեն կբաժներ և հիմա բնավ չէր ուզեր երիտասարդ ու անփորձ կնոջ մը քավել տալ անհեռատես որոշման մը հետևանքը, զոր ինքն իր բոլոր փորձառությամբը չէր գուշակած ատենով։

Ուստի կնոջը գրեթե բռնությամբ հրամայեց իրեն հետ չառանձնանալ։

«Ինձ համար որդի մը ու քեզ համար եղբայր մ'է Տիգրան,— ըսավ Սուրբիկին,— կուզեմ որ առաջվան պես ուրախ ու ազատ ապրիք. հարկ չէ որ ես ալ ընկերանամ ամեն ատեն ձեզի, ես այսուհետև չեմ կրնար

շարունակ դուրս ելնել և դուն ինձ հետ բանտարկյալ մի մնար»։

Հիրավի, եղբայր մ'էր Տիգրան Սուրբիկին։ Այս հեռադետ մարդն անկեղծությա՞մբ կըսեր այս խոսքերն ու այս անխորհուրդ առաջարկին վրա չէ՞ր խորհած երբեք։

Ո՛չ. այնքան պարզմիտ մեկը չէր որ առանց կշռելու հետևանքն այս աստիճանի թույլտվություն ու ազատություն շնորհեր իր երիտասարդ կնոջը։

Ծերունի պաշտոնատարը շատ և շատ անգամ խորհած իր ընտանեկան կացության վրա և քանիցս զղջացած էր անտես ըրած լինելուն այն առաջին պայմանն՝ առանց որո ամուսնությունն անհամ կատակերգություն մը կլինի եթե ողբերգության չի դառնա։

Զղջում մը կար այս մարդուն սրտին մեջ. ճշմարիտը խոսելով չէր կարող իրեն հետ հավասարապես պատասխանատու համարել իր կինն ալ այս անպատշաճ միացման մեջ և հանցանքն անդարմանելի ու մշտատև կծանրանար իր վրա միայն։

Մարդկային արդարությունը չէր կրնար դատապարտել զինքն և իր տագնապյալ խղճին ձայնն էր միայն զոր կլսեր որոշ ու բացարձակ։

Այն վայրկենեն, այս տարօրինակ մարդն որոշել էր իր կնոջ վերադարձնել անոր ազատությունն և կերպով մը թեթևցնել եթե ոչ դարմանել իր գործած սխալը։

Արհամարհելով ընկերության բոլոր չարախոսություններն ու նախապաշարումներն, սփոփանք մը պիտի ունենար, եթե իր կինն առանց խոտորելու պատվո ճամփեն կարենար իրեն տարեկից ու առաքինի երիտասարդի մը բարեկամական գորովովը մոռնալ և իր երեսին չի զարնել զինքն հավիտենական թշվառության մը մատնած լինելու հանցանքը։

Անշուշտ Սուրբիկ և ոչ մեկ ժամանակ առիթ տված էր իր ամուսնույն դժգոհություն կամ հանդիմանություն մը կարդալու իր դեմքին վրա. բայց այս լռին համակերպությունը գանգատող ձայնե մ'ավելի ծանր եկած էր միշտ անոր սրտին։

Թե որ ամուսնաթողությունն ընդունելի լիներ մեր կրոնական օրենսդրության մեջ, Արամ էֆենտի բռնությամբ պիտի բաժնվեր իր կնոջմեն. ու քանի որ օրենքը կաշկանդող ու բռնադատող էր, իրեն կիյնար կարելիության ու պատշաճության սահմանին մեջ անտանելի չի դարձնել ամուսնական լուծը։

— Ո՞րի կսպասես ամուսնանալու համար,— կըսեր օր մը Տիգրանին,— չըլլա որ երիտասարդությունդ անցունելե վերջն ինձ նման հիվանդ ու կարոտ օրերուդ օգնական մը փնտրելու համար մի՞այն ամուսնանալու ելնես։ Տարիքն առնելեն վերջն երիտասարդուհի մը հետ ամուսնացող մարդը կնմանի ծովն ինկող անձի մը՝ ոտքեն կապված ծանր գնտակին, որ իր երիտասարդ կինը միասին կտանի թշվառության անդունդը։

Մինչև այն ատեն իր կնոջ և ոչ մեկ փափագին հակառակեր էր. Սուրբիկին ամենեն շնչին հաճույքն իրեն պարտականություն մը ի գործ դրած էր միշտ և ասկից վերջը միևնույն բարեսրտությունն ու թույլտրվությունը տալու հարկը ճանչցավ։

Այս ձևով Տիգրան ավելի մեծ ազատություն մը վայելեց Սուրբիկին քով. իր բոլոր բարեկամության հակառակ, այս էր մարդկային սրտի տկարությունն, գրեթե գոհությամբ տեսավ Արամ էֆենտիի մենավոր մնալը. բայց զայն առանձին չի թողուց. երբոր Արամ էֆենտի իր աշխատության սենեկեն դուրս ելներ, Տիգրան անոր քով կկենար միշտ ու մերթ գրավոր խոսակցությամբ և մերթ պեզիկի խաղով կանցունեին միասին քանի մը ժամեր։

Խոսքով շուտով հառաջացեր էր իր կանխորոշ ճամփուն մեջ. սովորական ասպարեզն, օրինական ճշտությամբ սահմանափակ գտնվելով, առաջուց ի վեր անհարմար թված էր իրեն. ուստի շուտով թողուց իր ընդհանուր դատախազի օգնականի պաշտոնը վարչային բարձրագույն պաշտոնի մը փոխարեն։

Այս երիտասարդը՝ դյուրին ու արագ հառաջադիմության մը անհրաժեշտ եղող բոլոր պայմաններն իր անձին վրա կբովանդակեր։

Նա ուներ մեծերու դեմ հլու ու ստրուկ հնազանդություն, ազդեցիկ անձանց մերձավորություն և անոնց քով այն ողոքիչ ու շողոքորթ զվարճախոսությունն, որ երբեմն խեղկատակություն կկոչվի ու շատ անգամ ճշմարիտ արժանյաց տեղ կրոնե։ Այս միջոցավ ստացել էր նա զորավոր պաշտպաններ։

Միանգամայն հաջող ամուսնությամբ մը իր դրամական կացությունն ապահովեր էր, առանց վարանելու ամուսնանալով հարուստ ու գեղանի աղջկան մը հետ որո բոլոր պակասությունն՝ ատենով հայրենի գեղանի աղջկան մը հետ որո բոլոր պակասությունն՝ ատենով հայրենի փախուստ տված լինելն էր երիտասարդ դասատուին հետ։ Հարստանեն փախուստ տված լինելն էր երիտասարդ դասատուին հետ։ Հարստանեն զարոսկի օժիտ պիտի տար անոր հայրը՝ մեծահամբավ դրամատեր մը, որ կառավարությունն ու հասարակությունը կողոպտելով ձեռք բերած էր իր հարստությունն և զոր բրտինքով ու պատվով ձեռք բերված կանվաներ։ Սակայն հակառակ իր մեծ դիրքին ոչ որ իր աղջիկն ամուսնության ուզած էր և անոր աղմկալից անցյալն ատեն անցնելով մոռցված չէր։

Խոսրովի պես դրամի կարոտ ու պատվո մասին ներողամիտ անձ մը միայն անոր ամուսին կրնար լինիլ։ Բարձրանալու մշտատև տենչն բռնվող այս մարդուն աչքին ամեն ինչ՝ բարեկամություն կամ ամուսնություն՝ միայն իր մեծության գաղափարներուն նպաստելուն համար գոյություն ունեցող բաներ էին։

Նորա կինը պետք էր նախ և առաջ դրամի տեր լինիլ, երկրորդ՝ սրահի մը մեջ խոսակցելու չափ կրթյալ մեկն ըլլալ. և Խոսրով այս միության մեջ անկե անդին չի նայեցավ։

Շիտակն ըսելով իր կինը կատարելապես հարմարեր էր այս տարօրինակ մարդուն. Եվգինե վառ ու խռովյալ երևակայության տեր, համառ ու արտակարգ աղջիկ մ'էր։

Ճարտար դաշնակահար, լավ գծագրիչ, ինչպես որ կտեսնվեր իր ներքնասենյակի պատերեն զորս իր մատիտին արտադրությամբը միայն զարդարեր էր, այս կինն ամեն բանե առաջ իր անկախության սիրահար մեկն էր։ Շարունակ ֆրանսական վեպեր կարդալով՝ անոր ըմբոստ բնավորությունը բոլորովին անզուսպ ու հիմարական բան մը դարձեր էր. թաքուն, անձայն ու անշշուկ սիրահարություն մը՝ անոր զզվանք պիտի ազդեր. ընդհակառակն առևանգության, բռնության, ապանության կամ թունավորման վախերով լեցուն ու գայթակղալի հոչակ ունենալիք ամեն տրիփ անոր պիտի հաղթեր։

Անոր ազատության ու անկախության փափագը՝ բռնավոր տարփավորի մը գերին լինելու տենչանքն էր միայն և ոչ ուրիշ բան։ Այս կնոջ հետ հաշտ կենցաղի հույսն անկարելի էր։ անոր կամ տերը, կամ ստրուկը պետք էր լինիլ։

Իր արկածալից երիտասարդությունը միշտ չափազանց ներողության մը արժանացած էր հորը կողմեն, որ անհավատալի տկարությամբ կսիրեր այս աղջիկն։

Եվգինեի ամուսին լինելիք մարդը պարտ էր առաջուց աչքն առնել անոր լուծին տակալը, գոնե անոր քացարձակ անկախությունը ճանչնալը. Խոսրով այս վիճակն անընդունելի չի նկատեց. շենք շնորհք Եվգինեի երեսն անգամ նայած չէր. կապո՞ւյտ աչվի էր թե օձ աչվի. անոր մազերը խարտյա՞շ էին թե շագանակագույն. բերանը փո՞քր էր թե մեծ, շիտակը շատ աղեկ չէր գիտեր. թիստ լավ գիտեր սակայն որ իրեն տրվելիք օժիտը նշանտվության օրեն իր տրամադրության ներքև պիտի գտնվեր ու այս բավ էր անոր։

Ամուսնության առաջին ամիսները փոխադարձ տարաբաղդ անտարբերությամբ հետևարեն և անդարձությամբ անցան, մինչև որ Խոսրով անգամ մը իր ամուսնական իշխանությունն ի փորձ դնել ուզեց։

Տիկնոջ երիտասարդ մեկ ազգականը՝ Խոսրովի տան սովորական և ամենօրյա այցելուներեն մեկը դարձեր էր. այս տղան՝ վաճառականի մը քով գրագիր, որ իր շաբաթականն իր զգեստներուն միայն կհատկացներ, բավական վայելչագեմ ու խարտիշահեր մեկն էր, զոր շար լեզուները կպնդեին թե Եվգինեի վազեմի ու արդի մեկ մտերիմը լիներ։ Այս լուրը շուտ հասեր էր Խոսրովի ականջը, բայց չէր ուզած անորոշ ու տարտամ կասկածի մը վրա իր դուռը փակել անոր դեմ, նամանավանդ ամուսնության առջի օրերը։ Տանը մեջ բնավ կարևորություն տված չէր անոր. առջի տեսութենեն մեկ երկու բառով հասկցեր էր որ, զգեստներու գլխեն ի զատ, այս անձն ոչխարի մը պես անմիտ ու վայրենիի մը չափ տգետ արարած մ'էր։ Այս տխմար էակն Եվգինեի պես կնոջ մը տարփավորը չէր կրնար ըլլալ։

Սակայն ի սկզբանե անվնաս նկատված այս արարածը՝ քիչ-քիչ Խոսրովի անտանելի թվեցավ. իր հակակրությունն այնչափ ավելցավ, որչափ իր կինն այս աստիճանի ապուշի մը վրա տարօրինակ զորով ու սքանչացում կհայտներ։

Խոսքի պզտի մենամարտով մը սկսավ այր ու կնոջ մեջ այս երիտասարդին վեճը։

Եվգինե անոր ճաշակն ու վայելչությունը կգովեր։

— Կզարմանամ,— ըսավ անոր ամուսինն,— այդ անհամ պարոնեն ախորժելուդ։

— Ինչո՞ւ ըլլա անհամ, մինթե համով ըլլալու համար պետք է անպատճառ քաղաքական կամ ուսումնական նյութերու վրա՞ ճառել ձեզի պես. մենք՝ կանայքս՝ այդ տեսակ բաներե չենք հասկնար, ամեն մարդ իր ճաշակն ունի։

— Այդ խոսքը քու հմտությանդ հարմար չէ. դու ուսյալ կին մ'ես և շարունակ քուրջի վրա խոսիլը դատարկ գլուխ կանանց հատուկ է։

Քանի մ'օր վերջը խոսքը նորեն բացվեցավ բայց այս անգամ ավելի կծու կերպով։

— Ձեմ կարծեր որ հատկապես ինձ հակառակելու համար այդ անպիտան անձն հոս հաճախել կուտաս. անցյալ օրվան դիտողութենես ի վեր այդ պարոնն օրը երեք անգամ գալ սկսավ։

— Ամենևին. միայն կխնդրեմ որ այդքան չնչին բանի մը համար խնդիր չի հանեք. որովհետև շատ կանուխ է գեռ,— ավելցուց հեգնությամբ,— վեց ամիս չեղավ ամուսնանալնիս և նախանձոտ Օթելլոյի դերը ծիծաղելի կըլլա։

Խոսրով թարկացավ բայց ինքզինքը զսպեց։

—Համբերությամբ մտիկ ընել պարտավոր եմ որովհետև քեզմե

մեծ եմ. քեզ նկատմամբ մինչև հիմա ունեցած անտարբերություն անխանձ ըլլալս կհաստատե, կպահանջեմ միայն որ պատշաճությունը ճանչնաս, բսավ ցուրտ կերպով ու դուրս ելավ սենյակեն։

Ի՞նչ տեսակ էին Եվգինեի հարաբերություններն այս երիտասարդին հետ, որ Արմենակ կկոչվեր. արդարությունն հարգելու համար պարտավոր ենք հայտնել, որ անպատշաճ կապակցության ամեն զրույց բոլորովին անհիմն էր։

Եվգինե չէր սիրեր ու չէր կրնար սիրել այս տխմարը, բայց տրխմարությունն ալ իր հաճելի կողմն ուներ։

Արմենակ Եվգինեն կարենալ սիրելու մեծամտությունը չուներ բայց անոր հետ տեսնվիլն, հասարակաց տեղ մը անոր հետ միասին ժուռ գալն իրեն շատ էր ու քիչ չէր։

Մինչև իր էրկանը դիտեղության պահուն, Եվգինե այս տղուն հետ կզբոսնուր, անոր վրա կծիծաղեր, կխնդար, բայց գեշ աչքով մը նայած չէր անոր. սակայն իր էրկանը ընդդիմությունն անոր ի բնե պատերազմասեր ոգին արթնցուց. նամանավանդ անոր խոսքին վերջին պարբերությունը խիստ վիրավորիչ դստեց. «Քեզ նկատմամբ ունեցած անտարբերությունս սննախանձ ըլլալս կհաստատե» ըսեր էր. անտարբերությո՞ւն... Եվգինե իր ամուսնուն համար ուրիշ զգացում ունեցած չէր. բայց ամուսինն իր մասին անտարբեր ըլլալու իրավունք չուներ և որոշեց այդ անտարբերությունը խորտակել։

Ի շնորհս Եվգինեի բերած օժիտին և իր ամսականին Խոսրով Պոլսո առաջնակարգ էֆենտիներեն մեկն էր հիմա. իր կնոջ բերած գումարը քոնսոլիտեի խաղով ստացված մեկ երկու հաջողությամբ կրկնապատկված ու եռապատկված էր և Խոսրով՝ շահադիտության մեջ հանգուգն ու անվախ՝ վերջին բախտով մը մեծ հարստություն մը շինել ու այնպես քաշվիլ կուզեր այդ վտանգավոր խաղեն։

Մեկ օրվան մեջ հարյուր ոսկի շահիլ կամ կորսնցնելու վարժվող մարդ մը խնայողության տեր չէր կրնար լինիլ ու Խոսրովի քոնսոլիտեի ելևէջին պատճառած շահերուն մեջ իր տանը համար ըրած մեծ ծախքը չնչին բան մ'էր։

Կարոտության մեջ նվաստ ու ստրուկ եղողն հարստության մեջ ամբարտավան կըլլա. Խոսրով հազարավոր ոսկիներուն հաշվոց հետ շուտով հինավուրց ազնվականի մը բոլոր ձևերը սորված էր։

Այս էֆենտին մոռցած էր անշուշտ հայրենիքեն հետիոտն Պոլիս գալը կամ տնտես ախպոր ավելցուկ հացի կտորներն, երբ իր հյուրերուն գանգատող ձայնով մը Հեռալին և Պյոտկիին կոշիկներեն կամ Լբպոնին կերակուրներեն կդժգոհեր։

Իր ազգային գաղափարաց գալով, իրեն նորահաս հարուստ մը՝ վարչության, ժողովոց և երեսփոխանաց վրա ծիծաղելու իրավունք ուներ. բայց Խոսրով խորամանկ փառասեր մ'էր որ այդ ժողովոց մեջ ձայն ու իշխանություն ունենալը չարհամարհեց։

Առաջին պաշտոնատարը չէր նա (և անտարակույս վերջինն ալ չի պիտի ըլլար) որ ազգին մեջ ազդեցություն ունենալն՝ իր դիրքին օգտակար կերպով ծառայեցնելու գաղափարն հղացեր էր։ Այս օրինավոր ակնկալությունն՝ ի վաղուց անտի շատ քիչ անգամ ի դերև ելած է. արպեսզի նորեկներ ադոր ճշմարտությունը չըմբռնեն։

Մեկ նամակով Խոսրով իր հայրենիքեն երեսփոխան ընտրել տվավ ինքզինքն Ազգային ժողովին, իսկ հոն խոհեմությունը ձեռքե չի թողուց ու խորագետ ճարտարությամբ ձեռք բերավ ազատամիտ ու ժողովրդական երեսփոխանի անունը զոր պաշտոնատար երեսփոխանները խիստ քիչ անգամ ստացած են։

Ժողովին ամեն նիստերուն ներկա, ներկա նախապատրաստական գումարումներու, ամեն վիճաբանության մասնակից, իր դիվանին մեջ տեղեկարեր, հանգանակության մեջ կարգադիր մասնախմբի անդամ, Խոսրով էֆենտին Ազգային ժողովո ամենեն գործունյա ու ազդեցիկ անդամներեն մեկը դարձավ։

Ամենքը միաբերան կգովեին այս մարդն, որ ազգին վնասելու կարողությամբն հանդերձ այնքան անձնվեր կծառայեր անոր։

Այս համբավը, զոր անաղարտ կկարծեր, ստանալե հետո սկսավ յուր շահատակություններն։ Իր ձայնն հետզհետե խրոխտ և հպարտ՝ հակառակ կարծյաց տեր երեսփոխաններն արհամարհանոք ու սպառնալոք կսաստեր։ Ո՞վ էին այն անպիտան մարդիկն, որ կհամարձակեին իրեն դեմ խոսիլ. գիտեի՞ն որ կարող էր զիրենք մինչև հաքսոր մատնել։

Խոսրովի ծրագիրներն ի գործ դրվելու մոտ էին. միայն իր ընտանեկան կենաց խռովություններն աճեր ու բազմապատկեր էին երթալով։

Ինչպես ըսինք Եվգինե իր էրկանն անտարբերությանը հաղթելու համար անոր նախանձը շարժել որոշեր էր։ Ոչինչ այնքան անխախտելի է որքան կանացի որոշումն։ Այն վայրկենեն սկսելով Եվգինե չէր թերացեր, իր ամուսինը կատղեցնելու համար, ի գործ դնելու այն ամեն փոքրիկ կամ մեծ, անվնաս կամ վնասակար միջոցներն, որ կանանց պատեբազմի համբավը կկազմեն։

Այն երիտասարդն ամեն օր հրավիրել, իր ոտքին բով նստեցնել, գլխի վայր փսփսալ անոր ականջն ի վայր, թեր մտնել շրջագայու-

թյան համար ու կոթնիլ անոր թևին ամենուն ուշադրությունը հրավիրելու չափ. ու երբ ասոնք անբավական դատվեցան, նամակագրություն մ'սկսիլ անվերջանալի, օրն իրիկուն տոմսակներու տարուբերին զբաղեցնել ծառաները, ծաղկանց փունջեր պատրաստել տալ, ղրկել և ընդունիլ ու վերջապես կղզին կամ Պյոյուք-Տերե կամ ուրիշ հեռու տեղեր ժամադրություններ կարգադրել, ահա Եվգինեի ռազմագիտական միջոցներն։

Խոսրովի՝ քիչ-քիչ անհանդուրժելի երևցավ իր կնոջ ընթացքը։ Կոիվներն անպակաս դառնալ սկսեր էին. բայց Եվգինե պատերազմե փախուստ տվող չէր, ընդհակառակն. արդեն քոնսոլիտեի մեջ մի քանի մեծ կորուստներ Խոսրովի բնավորությունը բոլորովին դառնացուցեր ու համբերության չափը լեցուցեր էին։ Տանն անկարգությունն ու անխնամությունն որ շռայլության ծայրագույն աստիճանի հասեր էր, իր կնոջ մասին ամեն մանրամասնություններով հեղհեղված ամոթալի պատմություններ, ընտանեկան հարկին կործանման ապահով նշաններն էին։ Խոսրով թեև երբեք չէր սիրած, չէր ախորժած իր կնոջմեն, բայց քիչ մ'ալ սպասել որոշեց։

Դրամական կորուստներն ու ձախորդությունն որ քանի մ'ամսե ի վեր զինքը կհալածեին, պաշտոնի հառաջդիմությամբ փոխարինել որոշեց. իր ամսականը ներկա վիճակին մեջ անբավական դարձեր էր նույնիսկ իր կնոջ զարդարանացն ու պարտքը գիշվեր էր չորս դին. ամսականի ու պաշտոնի բարձրացումը փրկության միակ ճամփան էր. դեռ ոչ ոք գիտեր անոր նեղության մեջ գտնվիլն. ամենքը զինքը հարուստ ու ազդեցիկ գիտեին. ժամ էր աղեկ ու արտաքո կարգի վարպետությամբ մը վերստին հաստատել իր կորսվելու մոտ եղող դիրքը. Խոսրով ազգային գործոց դարձուց իր հետաքնին ակնարկն։

Որ մեկին խոսամամբ, որ մեկին սպառնալյոք, որ մեկին համոզմամբ Խոսրով հաջողած էր արդեն կուսակցություն մը կազմել ժողովույն մեջ, որ իր գաղափարներն ի գլուխ պիտի հաներ։

Սահմանադրության վերաքննության վիճաբանությունը տեղի կունենար։ Խոսրով՝ պարզապես զայն ջնջելու համոզումը հայտնեց. իր կարծյոք, Քաղաքական ժողովը կբավեր ամեն ինչ տնօրինելու. ի՞նչ պետք է այս վայրախոս երեսփոխանաց որոցմե օգուտ չի կար. տասնեվեց տարվան փորձը մեջ պեղն էր իր համոզումն հաստատելու։ Մյուս կողմե ազգային վարժարաններու պետք չի կար որք ավելորդ ծախք մը ու հոգ մ'էին ազգին գլխուն։

Այն պատնվան մատղաշն հիմակվանները չափ անհիրտ ու անհոգի չէին։

Նախ ապշությամբ մտիկ ըրին այս նոր վարդապետության ու հետո որոտալից ընդմիջում մը ատենաբանին խոսքը կտրեց.

— Մի՛ մեղանչեք Սահմանադրության դեմ,— կպոռային ունկընդիրներն հագիվ զսպելով իրենց զայրույթը։

— Ի կարգ, ի կարգ,— կգոչեին երեսփոխաններն հետին կանգնած։

— Շարունակեցե՛ք, էֆե՛նտի,— կպատասխանեին մյուս կողմե Խոսրովի կուսակիցները։

Խոսրով այս ընդհանուր խռովության մեջ չի տկարացավ. այլ թևերը խաչաձև միացնելով իր կուրծքին վրա.

— Պիտի սպասեմ հոս որ Դիվանը գոնե խոսքի ազատությունն հարգել տա,— ըսավ նա,— չեմ կարծեր, ավելցուց սպառնալից ակնարկությամբ ունկնգիր ամբոխին, որ խուժանին հարձակմանց դեմ մեր անձերը պաշտպանելու համար կառավարության միջամտության դիմելու հարկադրենք զմեզ, ատենապետ էֆենտի։

Ատենապետին զանգակին ձայնն աղմուկին հետ կշարունակվեր ու անլսելի կդառնար։

Ամենեն կոշտ ածականներն, ամենեն ծանր խոսքերն իրարու դեմ կփոխանակվեին։ Դիվանը շվարած իզուր լռություն կպահանջեր։

Երեսփոխանները կզգային որ պատրաստված դավ մը կար, ամեն մարդ կացության ծանրությունը կըմբռներ, բայց ոչ ոք բացորոշ կերպով Խոսրովն ամբաստանելու կհամարձակեր, այնքան ծանոթ էր անոր վտանգավոր անձ մը լինելը։

Սահմանադրության հիմնադիրներեն ծերունի երեսփոխան մը խոսք պահանջեց ու պահ մը հաջողեցավ ստանալ. ալեհեր, բայց դեռ առույգ ու կայտառ բժիշկ մ'էր տոքթոր Բ պեյ, որո այսքան հուզյալ ձայնը լսված չէր դեռ. նա այն անձերեն էր որոց միշտ պատկառանքով ունկընդրություն կլիներ։ Իր երիտասարդության ատեն Սահմանադրությունը տվեր էր ազգին։ Իրեն պես մի քանի երիտասարդաց հետ խորհելով ազգին ապագային. բեղմնավոր ու ազատական խորհուրդ մ'էր զոր հղացեր ու գործադրեր էին. իր երկն էր ազգային օրենքն և զավկի մը չափ կսիրեր զայն։ Այդ օրենքը ջնջելու պահանջումն իր աչքին ոճիր մ'էր։

Ամենքը պահ մը լռեցին այդ մեծարելի ծերունվույն ձայնին առջև։

— Կհիշեցնեմ Դիվանին,— աղաղակեց նա,— որ Սահմանադրության դեմ խոսելու ազատություն չի կա այս ժողովին մեջ. խոսելու ազատությունն հոդ կանգ կառնու. Դիվանին պարտքն է ժողովին կամքն հարցնել իմանալու համար թե կհաճի՞ ատենաբանին մտիկ ընել։ Նե-

բեցնք որ ըսեմ նաև թե Դիվանին վեհերոտ ընթացքը ժողովին անարգանք մ'է։

Որոտընդոստ ծափահարություն մը մեկ կողմեն, գոռ ու գոչումը մյուսեն, վերսկսան մեծագույն սաստկությամբ։

Նախատինք չի բավեցին. Խոսրովի հակառակորդք քաջալերվեր էին ու ամենեն ծանր ամբաստանություններն ապտակի պես անոր երեսին կզարնեին։

Վերջապես Դիվանին և քանի մ'ազդեցիկ երեսփոխանաց օգնությամբ վայրկյան մը կարգը վերահաստատվեցավ ու քվեարկության արդյունքն, ատենաբանն ունկնդրելու մասին, բացարձակ առավելությամբ «ոչ» մը երևան հանելով, Խոսրովի բոլոր հատակագիծներն հիմնահատակ կործանեց։

Վար իջավ բեմեն, կաս կապուտ կտրած ամոթեն ու բարկությունեն, բայց դեռ խրոխտ ու սպառնալից մեկնեցավ ժողովեն, մեկտեղ տանելով իր կործանյալ հույսերուն հետ վրեժխնդրական պատրաստություններ։

Խոսրովի մեկնելովը բեռ մը կարծես վերցավ ժողովին սրտին վրայեն. այն մարդուն վախեն ոչ ոք իր համոզումը կրնար ազատությամբ հայտնել, այդ մարդն օտարական մ'էր. անոր հեռանալեն վերջն ամենքն իրենց լեզվին տվին. մին պարսավանաց քվե մը առաջարկելու չափ հառաջ գնաց. ժողովն ազգասիրական եռանդով մը հուզված էր. երեսփոխանները զիրար կշնորհավորեին. ու այսպես վերջացավ այդ նշանավոր ու պատմական նիստը։

Խոսրով տուն դարձավ։ Եվգինե դուրս ելած ու վերադարձած չէր դեռ. թեև ժամը 12-ի մոտ էր. Խոսրով՝ արդեն ցասմամբ լեցված, իր կնոջ ընթացքն աններելի դատեց. ընտանեկան հորիզոնին վրա մեծ փոթորիկ մը պատրաստված էր ու տիկնոջ վերադարձին կսպասեր պայթելու համար. ժամը կեսն էր ու ոչ ոք երևան ելած էր. ո՞ւր գացեր, ո՞ւր մնացեր էր. Խոսրով իր կատաղությունն սպասավորներուն դեմ դարձուցեր էր, չգիտնալով որի՛ դեմ հագուրդ տալ իր բարկությանը։

Մեկին քառորդ մնալով, Եվգինե տուն դարձավ բաց կառքով մը. հայտնի էր թե զվարճությենե մը կվերադառնար, կերևեր թե քիչ մը ոգելից ըմպելիք ալ խմած էր, որովհետև այտերը վարդագույն, աչերը կարմրած, զվարթ ու բարձրաձայն խոսելով խնդալով վար ցատկեց կառքեն։

Սև կոբնատինե ճոխ ու գեղեցիկ շրջազգեստ մը հագած էր, որ անոր գիրուկ ու բարևձև հասակն ու ուռուցիկ դիրքը կսեղմեր. մազերը ծև, փայլուն ու երկայն, անգլիական ձևով ու վայելչությամբ հարդարված, հաստիկ կամ փոփվեին ատլաս ծոպերով զարդարված հարգ գլխարկի մը տակ, որո ձեն խտալցի ավազակներեն առնվելուն համար, պրիկան կկոչվի։

Երեսը ներկած, դնմքը ճերմակ ու կարմիր, արտևանունքն ու հոնքերը սև, շրթունքը լայն ու հեշտավետ, ունգները դողդոջուն, աչքերը փայլուն, կուրծքն՝ աննման ու խոստմնալից՝ թափանցիկ տանթերներով ծածկված, որ իր գահավեժ ելևէջովը կմատնվեր, ձեռնոցները մինչև ուսն երկարած ու ձեռքն հովանոցի տեղ մեծագին խարազան մը, ահա այս ձևով Եվգինե իր ամուսնույն դեմն ելավ։

Խոսրով՝ առաջին անգամ ըլլալով՝ զարմացավ ու սքանչացավ այսքան վայելչության ու լրբության վրա։

Ի՞նչ կինն էր այս գեղանի էակն, որ զաշխարհ մոլորեցնելու կարող կթվեր. Խոսրով ապշեցավ ու միանգամայն ներքին հպարտություն մը զգաց։

Ինչպե՞ս մինչև հիմա աչքին չէր զարկած այդ հրապուրիչ մարմինն, այդ պաշտելի կինն, որ վեհերոտության օրենքներն անգիտանալուն համար թերևս այնքան գեղապանծ կերևեր։

Խոսրով հանկարծ վայրենի իղձ մը զգաց իր սրտին մեջ, հրաշեկ երկաթի մը այրվածքին նման. մոռցավ իր կացությունը, քայքայումն, այն օրվան պարտությունը; բարկությունը, վրեժն ու ամեն ինչ։ Զարմանալի երևույթ մ'էր ասի մարդկային տկարության, երբ մինչև այն վայրկյանը միայն մեծության, փառաց ու հարստության խորհուրդներով համակված այս մարդն՝ ո՛չ թե օտարուհվո մը հանդեպ, ո՛չ, այլ իր կնոջ համար, իր երկու տարվան կնոջ դեմը վավաշտ ու հիմարական սերով մը կտագնապեր։

Սպառնական շեշտ մը պատրաստեր էր, սակայն փայփայող ու ողորիչ ձայն մը միայն ելավ բերնեն։

— Ո՞ւր մնացիր մինչև հիմա։

— Ես ալ աղեկ մը չգիտեմ. ո՞ւր չմնացի որ. ցորեկվան ճաշեն վերջը ժամ մը միայն կորսնցուցի հարդարանաց համար. հետո տիկին Ա՞ին հետ Մասլաք գացինք. անցյալ օրվընե որոշեր էինք. ո՞վ գտնանք հոն կհավնիս. Էախ և առաջ մեծ մարդերեն, էֆենտիներեն սկսինք, քանի որ այնպես հաճելի է ձեզի։ Կարապետ ու Երվանդ էֆենտիներն իրենց տիկիններով միասին, անկից վերջն, այն երիտասարդ պատկերահանն որ մեզի մեկ երկու անգամ եկավ. գիտես որ շատ պաշտելի տղա մ'է այդ տղան. հետո մեր Արմենակն իր եղբորորդվույն հետ, որ Փարիզեն նոր եկած է հոս, արձակուրդի ամիսներն անցունելու համար. շատ զվարճախոս անձ մը. երգեցինք, պարեցինք ու զբոսնեցանք,

նամանավանդ բավական գարեջուր խմեցինք և շիտակն ըսելով ինձմե զատ ամենքը գինովցան։

Եվգինե ինքզինքը դուրս ձգելու իրավունք չուներ. գլորեց քան թե պատմեց այս ամենը մեկ շունչով։

Խոսրով պարզապես հմայվեր մնացեր էր։

Կարելի՞ բան էր որ մինչև հիմա մեկուսացման մեջ թողած լիներ իր կինն ու ուրիշներ միայն ճանչցած ու պաշտած լինեին զայն. Խոսրով զգաց նախանձու որդն, որ իր սիրտը կկրծեր։

Այսչափ ատեն անփույթ ու անտարբեր, գրեթե թշնամացած մնալե հետո, հաշտության ու համակրության ճամփան խիստ դժվարին երևցավ. ի՞նչ ձևով պիտի սկսեր հայտնել անոր իր հանկարծական փոփոխությունը։

Ճաշի ատեն էր. Եվգինե զարմացավ որ այն իրիկունը նախատեսյալ կռիվը տեղի չունեցավ Խոսրովի կողմե, ընդհակառակն գրեթե համակրական ձև մը նշմարեց անոր վարմունքին մեջ. Խոսրով ճաշին վրա սովորականեն ավելի գինի խմեց ու իր կնոջ կատակներ ըրավ։ Եվգինե ասոր չէր սպասեր. հասկցավ որ գաղտնիք մը կար ու իր կանացի բնազդմամբ չուշացավ իր ամուսնույն հաշտության փափագը գուշակելու։

Ինչպես ամեն անձնապաշտ կին, Եվգինե խիստ մեծ գաղափար ուներ իր անձին վրա. վաղ կամ անագան կսպասեր իր ամուսինն իր ոտքց տակ տեսնել, ուստի Խոսրովի ընթացքը մեծ հաճույություն պատճառեց, բայց անոր փաղաքուշ խոսքերը գերազանց կերպով անհամ թվեցան իրեն։ Խոսրովի ո՛չ գգվանքին և ո՛չ անուշ լեզվին կարևորություն ընծայած էր երբեք, հետևապես անոր անձնատուր լինելը տեսնելով իր ցուրտ ու հակառակորդ բնավորությունը մեկդի չի ձգեց։

Խոսրով, գինվո շոգիներեն մոլորած, իր կինն համբուրել ուզեց. Եվգինե խորին ու անդիմադրելի զզվանք մը զգաց այս մարդուն փայփայանքեն։

— Թո՛ղ զիս, կխնդրեմ,— ըսավ սառն կերպով,— այդչափ մոտությենեն չեմ ախորժիր։

Ու իր սենյակն առանձնացավ ու դուռը փակեց։

Ցնորքներով, իղձերով ու խրատներով լեցուն գիշեր մ'եղավ այն առաջին գիշերն հորում Խոսրով իր կնոջմեն հեռու մնալուն բոլոր կսրոտն ու բոլոր դառնությունն զգաց։

Մտածեց որ ամուսնական կյանքը կարի ծանրակշիռ հանգամանք մը կզգենուր իր հիմարական տենչանքին պատճառավ։

Ինչպես ըսինք, առանց Եվգինեի համակրող կամ համակրելի լինելն ստուգելու ամուսնացած էր հետև անոր ազատությունն հարգելու պայմանավ. առևտրական գործ մ'էր զոր կատարեր էր թիվերու ու շահու վրա հիմնելով իր ամուսնությունն առանց սերն ի հաշիվ առնելու, ու հիմա որ անզուսպ ու անբացատրելի կիրք մը զինքն իր կնոջ ոտքը կձգեր, կխորհեր, մեծ մտատանջությամբ, թե ի՞նչ տեսակ ընդունելություն մը պիտի գտներ հոն։

Եվգինեի բնավորության նայելով, այդ ընդունելությունը քաջալերիչ լինելե խիստ հեռի կթվեր։

Անցան մի քանի օրեր, հաղթական կինն իր զբոսալից ընթացքը փոխելու կողմը չէր բնավ. Խոսրովի բոլոր ներողամտությունն ու բոլոր մտերմության փորձերն ի դերև ելան։

Եվգինե կարծես զինքը ծայրահեղ միջոցներու դիմել տալու առթիթ կորոներ։

Խոսրովի քաղցրության ու համակրության վերջին ջանքերը կատարելեն կես ժամ վերջն էր, որ նորա կինը տիկնոջ մը հետ ժամադրություն մը պատճառ բռնելով դարձյալ մեկնելու կպատրաստվեր։

Ամուսինն զգաց բարկության կրակն որ իր գլուխն ու միտքը կհեղաշրջեր։

— Դուրս չպիտի՛ ելնես,— գոչեց նա կիրքեն ու զայրույթեն կուրցած, երբ որ տեսավ որ Եվգինե դուրս ելնելու վրա էր։

— Ձեր կալանավորը չեմ կարծեմ ու դուք բանտապահ մը չեք։

— Ամուսինդ եմ ու ի՛նձ պիտի հնազանդիս։

Երիտասարդ կինն այս ձևերուն վարժված չէր. ինքն ալ զայրանալ սկսավ։

— Հնազանդությո՛ւն,— ըսավ նա,— հա՛, հա՛, շիտակը զիս խընդացնել սկսար, ես ո՛չ քու աղախինդ և ո՛չ ալ սպասավորդ եմ, քու ծառաներուդ հետ վարվե այդպես։

— Չպիտի՛ ելնես դուրս, կհասկնա՞ս,— գոչեց էրիկն ինքնիրմեն բոլորովին դուրս ելած ու բռնությամբ քաշելով կնոջը թևեն։

Եվգինե դեղնեցավ։

— Դուն ա՛լ չափն անցուցիր, այստեղ խարբերդի լեռը չէ; ինծի նայե՛,— ըսավ անոր,— քու հայրենակիցներեդ շատերը մեր տունն իբրև սպասավոր պահած ենք, դուն ալ կրթությամբ անոնցմե տարբերություն չունիս՝ եղեր. վրաս ձե՛ռք վերցնել, ալ ամեն ինչ վերջացավ, հիմա հոս տունը պիտի երթամ. շո՛ւտ, շուտ կառք մը բեր, Հակո՛բ,— պոռաց սպասավորին, որ էրիկ կնոջ մեջ տեղի ունեցած կռիվն հասկնալու համար դրան մոտ եկեր էր։

Կռիվը ծանր կերպարանք մ'ստացավ. Խոսրով իր կիրքեն շփոթած իր կնոջ վրա իշխանություն ունենալ կարծեր էր. անոր պատասխանն

իր դիրքին ինչ լինելն հասկցուց. Եվգինեի պատասխանը պաղ ջուրի տուշի մը պես անոր խելքը գլուխը բերավ. արդարև անկե հնազանդություն չէր կրնար պահանջել. իրենց ամուսնության առաջին պայմանն էր այդ. հորը տունը վերադառնալու սպառնալիքը մանավանդ զինքն ահաբեկեց. անկից զատվիլն ուրիշներու, բացարձակապես ուրիշներու հանձնել էր զայն։

Խոսրով կացությունն ըմբռնեց. ինքն ամուսնական իրավունք ու իշխանություն չէր ունեցած բնավ ու հիմա որ իր կնոջ օժիտն սպառեր ամնցուցեր էր, հիմա որ նեղությունն հասնելու մոտ էր, կնոջմեն բաժանումն աշխարհ իր վրա ծիծաղեցնելու միայն պիտի ծառայեր։

Այս գործնական ու դրական մարդն ամենեն մեծ վրդովմանց մել անգամ իր հաշիվը չէր մոռնար։

Հետևապես սպառնալյաց ճամփան թողուց աղաչանաց թելը ձեռք առնլու համար. ո՛չ ոք Խոսրովին չափ հաջողակ էր նվաստանալու արվեստին մեջ։ Պահ մ'առաջ խրոխտ ու բիրտ լեզու գործածող այս մարդը չի վարանեցավ իր դեմքը փոխելու, աղաչելու, ու հեծկլտալ ձայնով, աչերն արտասվալից, իր կնոջ ոտքն ինկած, ներումն ուզելու անկից։

— Գիտեմ,— կմրմնջեր նա հեկեկանոք,— խառնվելու իրավունք չունիմ քեզի, Եվգինե, դուն քու տերդ ես. մի՛ մեղադրեր զիս. միշտ կլքանես էրիկդ ու ուրիշներու հետ կզվարճանաս, անպատիվ բան մը չես ըներ բնավ, ադոր տարակույս չունիմ, բայց ես ալ ամուսինդ եմ ու քեզ կը սիրեմ...

Եվ արդարև կսիրեր հիմա կատաղի ու մոլեգին սիրով... Ու այս աղերսարկու եղանակին վրա շարունակեց։ Իր հեշտամոլ ու վայրենի իդձերը՝ կնոջը մոտ ըրած թախանձանոք ավելցան ու զայրացան, և այս հուզմունքով իր պերճախոսությունը կարծես թե համոզիչ դարձավ. Եվգինեի քով ծնրադրեր, անոր ձեռքերը կբռներ ու կհամբուրեր, կհոսոտաներ, կգգվեր. մանկամարդ կինը չէր պատասխաներ. այս ատտիճանի անզուսպ կիրք մ'ազդած լինելն անոր անձնասիրությունը կգգվեր։

Եվգինե գոռոզացավ ու սարսափեցավ միանգամայն։ Այս բուռն սիրո արտահայտությունն այն մարդու կողմե, որ իր էրիկն էր, վերջապես զինք վախով լեցուց։

— Տղա մի՛ ըլլար,— ըսավ վերջապես իր էրիկն ոտքի վրա հանելով,— անգին նստե, ծառաներն ի՞նչ կըսեն հիմա։

Եվգինեի ձայնն հանդարտ, գրեթե քաղցր էր. Խոսրով ուրախությունե արբշիռ եղավ։

— Ես քու գերիդ, քու շունդ եմ, Եվգինե,— ըսավ այս հիմար մարդը բոլորովին խելացնորս— Ինչպես կուզես այնպես վարվե հետս, բայց մի՛ սրդողիր ինծի հետ. գնա՛ զվարճացիր, դուն զվարճությունը կսիրես, ես ալ քիչ մ'աշխատություն ունիմ. քեն մի՛ պահեր ինծի դեմ. սիրույս չափազանցությունը զիս հուզեց. գիտես որ միշտ քու հաճոյիցդ համակերպած եմ։

Ու այն օրեն Խոսրով իր կնոջ ճշմարիտ գերին ու շունը դարձավ. մեծ պահանջումներ չուներ. իր կնոջ մեկ ժպիտը կամ հոգմահարով երեսին զարկած մի փոքրիկ ապտակն իբրև գգվանք կբավեր. այն օրվան կոիվեն վերջն, ա՛լ Խոսրով բնավ չհամարձակեցավ կնոջն ո՞ւր երթալն, որի՞ երթալն հարցնել կամ փնտրել. կնոջը բարի կամեցողությանը ձգված էր այս կետն որ քիչ կարևոր չէր, քանի որ Խոսրովի ձեռքն հասած անստորագիր նամակներ իր կնոջ այցելությանց վրա տարբերնակ մանրամասնություններ կհաղորդեին։

Հանկարծ իր կինը տունեն ունեցած բացակայությունը վերջացուց. Խոսրովի անհավատալի թվեցավ առջի բերան ասիկա. իրեն հաճելի՞ ըլլալու համար արդյոք Եվգինե տունը կկենար։

Ամուսնույն այս քաղցր տարակույսը շուտով փարատեցավ։ Դյուրությամբ նշմարեց որ իր պրիշի ընկերներեն հարուստ վաճառական մը, որու հետ գիշերներն, ուրբաթ ու կիրակի օրերը կմիանային թուղթ խաղալու համար, իր կնոջ համակրությունը շահած կերևեր. հասկցվեցավ որ Եվգինե հատկապես անոր թուղթի համար իրենց տունը գալիք օրերըն այցելության չէր երթար։

Խոսրովի այս խաղի ընկերը՝ պարոն Մարեմյան՝ ամենեն դյուրավ հաղթվող ու ամենեն առատաձեռն թուղթ խաղացողներեն մին էր. նամանավանդ Խոսրով քանիցս փոխառություններ ըրեր էր անկից և չէր կրցած դեռ վճարել։ Մարեմյան առանց նախկին հաշիվները պահանջելու ի հարկին անոր ծառայություն ընելու պատրաստ մեկն էր. այսպիսի մարդե մը անկարելի էր հարաբերությունը կտրել։ Այր ու կնոջ սիրալիր ընդունելությանը վրա հետզհետե այս վաճառականը տանը մեջ անպակաս հյուր մը կամ լավ ևս է ըսել տանուտեր մը եղավ։ Խոսրով ցորեկվան ու իրիկվան ճաշի թող չէր տար զայն, վասնզի երկու հարյուր ոսկվո նոր փոխառություն մ'ընելու վրա էր. նեղությունը շատցեր ու պահանջատերները տան դուռը ձեռք առեր էին։

Բայց Եվգինե ի՞նչպես զատվեր էր իր բազմաթիվ մտերիմներեն։

Եվգինե քծնող ու հեգնող խավորություն մ'ուներ. հարուստ վաճառականը մինչև ցայն վայր ծանոթ էր իրեն այս կամ այն դերասանուհվույն համար ըրած շռայլ ու խելառ ծախքերովը։

Եվգինե իր ամուսնույն դիրքեն անգամ քանիցս լսած էր անոր արտակարգ նվերները։

Կանանց համար ամեն զոհողություն ընելու պատրաստ երևցող այս մարդն իր հետաքրքրությունը շարժեց. մոտեն ճանչնալ կուզեր թե ի՞նչ տեսակ անձ մ'էր այս Մարեմյանը. ուստի իր սովորության հակառակ ուրբաթ օր մը դուրս չելավ ու էրկանը պրիչի խաղին ներկա գտնվեցավ. անխելք մեկը կարծեր էր զայն, բայց տեսավ որ խոսակցության մեջ բավական հանճարեղ էր. իր համբավավոր ու մեծածախ արկածներուն վրայոք եղած կատակներու մասին՝ իշխանի մը վայելուչ համեստությամբ ու փորձառու սիրահարի մը պատիվ բերելիք գաղտնապահությամբ պատասխանեց նա։

Այս համեստությունն ու գաղտնապահությունը խիստ հաճելի երևցավ Եվգինեի. անոր վայելուչ շարժմունքն ու ձևերը, հագուստն ու խոսակցությունը լավագույն տպավորություն հառաջ բերին։

Մարեմյան ամուրի հետևապես ազատ էր. երեսունհինգ տարեկան կար ու հետևապես պատանի սիրահարի մը նման փոփոխամիտ չէր. իր էրկանը մտերիմն էր և հետևապես անոր հետ տեսնվելու մեջ ղժվարություն չկար. հարուստ էր և հետևապես քիչ մը բան կրնար վրա առնուլ անկից։ Հարկ է խոստովանիլ, որ Եվգինեի այս տրամաբանությունը կատարելապես ուղիղ էր։

Մյուս կողմե Մարեմյան այն վարպետորդիներեն էր, որք խառնագնաց ու անառակությամբ բեղմնավոր անցյալի մը պարգևած փորձառության շնորհիվ, մեկ նայվածքով պաշտելի կին մը՝ պարկեշտ կնոջմե մը կզանազանեն։ Եվգինե անտարակույս՝ նետվելու որս մը չէր։

Երկու կողմն, այսպես պատրաստված, շուտով վիրար հասկցեր էին։ Մարեմյան չէր ուշացեր Եվգինեի մյուս տարփավորներեն ի բաց վանելու, ու ինչպես ամեն հաղթանակի իրավունքն է՝ պատերազմի դաշտն իրեն մնացեր էր միայն։

Ահա այս եղանակավ Եվգինե իր բացակայությունները վերջացուցած էր. սակայն կամաց-կամաց հիմար ու անբացատրելի տկարությամբ մը կապված էր իր նոր տարփավորին. այս խրոխտ ու ամբարտավան կինն, որ իր հոմանյաց հետ իր էրիկեն լավագույն կերպով չէր վարվեր մինչև այն ատեն՝ Մարեմյանի քովը կատվի մը պես գոչալից ու համբերող դարձած էր։

Այս նոր կապակցությունն երկար չտևեց ամեն կողմ իմացվելու համար. Խոսրով լռելյայն ընդունած էր այս ծանր կացությունը. Մարեմյանի, Եվգինեի ու իր մեջ որոշված ու ճանչցված տեսակ մը ամոթալի դաշնադրություն մ'էր, որ երեք կողմերն հավասարապես գոհ պիտի ըներ։

Քիչ մ'ատեն վերջն էր որ ի լրումն դժբախտության Խոսրովի պաշտոնը խնայողության համար կջնջվեր, և նոր պաշտոնի մը կոչվելու հույսեն ի զատ բան մը չէր մնար նմա։

Սակայն իր տան դրությունը փոփոխություն չի կրեց. հասարակությունը զարմացավ ու ցավեցավ որ այս պաշտոնանկ մարդն իր առջի ճոխ ու բազմածախ ընթացքը կպահեր։ Փայլուն դիրքի հասնող մարդը միշտ ամենուն նախանձը կշարժե իր շուրջն, ու ամեն անկում գոհացում մ'է զոր բախտն այդ չար հոգիներուն կնետե։

Իր տան մեջ միայն Խոսրովի կացությունն ստորնացեր էր. նա՝ ծախուց տնօրեն մ'էր ավելի քան թե այն տան մեծը։

Չի կա վիճակ մը որո մարդ չի կարենա սովորիլ ու հանդուրժել։ Մարեմյանի շնորհիվ ու ստակով պահվող այդ տան մեջ Խոսրովի վիճակն անտանելի էր անտարակույս արժանապատվության զգացումն ունեցող մարդու մը համար։

Շաբաթին այն գիշերներն հորում Մարեմյան սովոր էր Խոսրովի տունն անցունել, այս տանտեր-այցելուին ամեն հաճույքներեն և ոչ մին կրնար մոռցվիլ. սպասավորներն ամենեն լավ կճանչնային այս ազնվական հյուրին մեծ նշանակությունը։

Մարեմյան՝ իր քաղաքավար ձևերուն տակ, բիրտ ու լիրբ բնավորություն մը կծածկեր. Եվգինեեն ամեն զոհացում ստանալե հետո երևան ելավ անոր անհանդուրժելի վարմունքն որում չէր սպասվեր բնավ։ Բարկության մը միջոցին, Մարեմյան՝ «Կորսվե, ա՜նպիտան» պոռացեր էր անոր երեսին։

Խեղճ կինը գիշերը մինչև լույս արտասվեց. առավոտուն Մարեմյան տեսավ անոր կարմրած աչքերը, բայց բառ մ'անգամ չզիջավ արտասանել իր առջի իրիկվան կոպտությունն արդարացնելու համար և հետևյալ իրիկունն ալ իր սովորության հակառակ տուն չեկավ։

Խոսրով այս անհամաձայնության վրայոք պզտիկ հով մը առեր էր քովի սենյակեն լսելով անոնց բարձրաձայն վեճն ու կռիվը։

Մարեմյան չի գալն իր կասկածը հաստատեց. այս մարդուն հետ ավրվելու ատենք չէր բնավ ու անուղղակի կերպով Եվգինեն ստիպեց նամակ գրելու ու հաշտվելու անոր հետ։

Երիտասարդ կնոջ խրոխտ բնավորությունը քիչ մ'ատեն դիմադրեց այս նվաստության փորձին. ո՛չ ոք մինչև ցայն վայր, ամուսին կամ տարփավոր, անտես ըրած էր իրեն դեմ այդ աստիճան կրթության պայմաններոք. բայց վախցավ որ Մարեմյան անձնասիրությունը վիրավորած նկատե, եթե հաշտության առաջին խոսքն ինք չի բանա. ինքնիրեն ըսավ թե իրև կին՝ իրեն կիյնար ինչ որ ալ ըլլար իրավունքն,

առաջին դիմումը կատարելու և իսկ-ոբրեն արդարացում մ'ալ գտնել աշխատեցավ անոր կոպիտ վարմունքին համար. թերևս անոր բարկացած, խիստ բարկացած մեկ վայրկենին հանդիպած էր. ինչո՞ւ մինչև այն օրն այս կերպ ընթացք մը չէր ունեցած. էրիկ մարդիկ շատ անգամ իրենց գործի մեջ ունեցած զայրույթը տան մեջ երևան կհանեն. ու ասոնց պես հազար ու մեկ պատճառ որոնեց կամ գտավ Մարեմյանի նամակ գրելու համար։ Մարեմյան հաշտվեցավ. բայց նոր կռիվներ չուշացան ու այս անգամ ավելի հեռու գացին. Եվգինե նշմարեր էր որ Մարեմյան՝ իր հույն սպասուհվույն պետք եղածեն ավելի ուշադրություն դարձուցած էր. ճամփա տալ ուզեր էր ու Մարեմյան բացեիբաց դեմ էր կեցեր։

Օր մը կռիվն այն աստիճան հասավ, որ Մարեմյան ձեռք վերցուց Եվգինեին վրա և այս հիմար կինը չի կրցավ ինքզինքը պաշտպանել։ Ուրիշներու դեմ խրոխտ ու հանդուգն եղող այս կինն իր նոր տարփավորին դեմ արտասվելն ու աղաչելի ուրիշ բան չուներ և իր սերը՝ տեսած կոպտություններեն նվազելու փոխարեն կավելնար։ Մարեմյանն իր ձեռքեն հափշտակել կուզեին ուրիշ կիներ։ Ո՛չ, թույլ չպիտի տար։ Իր տարփավորն՝ հագեցած ու ձանձրացած, ցրտություն կցուցներ, ուստի չէր կարող իր սիրույն հենլով բան մը պահանջել անկից և անոր գթությանը միայն կրնար ապաստանիլ։ Ինչո՞ւ չէր կրնար Եվգինե զատվիլ այս մարդեն։ Դրամի խնդիրն իր աչքին կարևոր չէր բնավ, բայց իրեն ամոթ պիտի համարեր թե որ իր տարփավորն, որով այնքան պարծենցեր էր, զինքը լքանելով ուրիշներու հետ ապրեր բացեիբաց։ Հետևարար ստիպված էր անոր կամքին համակերպիլ, սպասելով որ հարմար առթիվ ձեռք բերե վերստին իր կորուսյալ ազդեցությունը։

Իր հույն սպասուհին սակայն տեսած քաջալերությամբը տանը մեջ ոսոխուհի մը դարձեր էր. Եվգինե չէր կարող բան մը հրամայել անոր. քանիցս նա բացարձակ կերպիվ դեմ դրեր ու պոռացեր էր իր տիրուհվույն երեսին սպառնալով անմիջապես մեկնիլ. Եվգինեի ուզածն էր այս բայց կվախնար, որ հետևյալ օրը Մարեմյան զինք պատասխանատու պիտի բռներ այդ ազախնույն հեռացմանը համար. հետևապես հարկ էր լռել ու չի լսելու զարնել անոր հոխորտանքը։ Նա քիչ-քիչ ամեն ծառայություն վերջացուցած էր ու միայն Մարեմյան եկած ատեն կերևար ու անոր կսպասավորեր. իսկ անոր հոն չեղած ատենը իր զարդարանքը միայն կուտար տան տիրուհվ. պես։ Եվգինե դեռ բացորոշ կերպիվ անոր հարաբերությունը չէր տեսած իր տարփավորին հետ, բայց մեծապես կկասկածեր որ համբույրի ու գրկագնդման գրոհները շատոնց՝ ի վեր

կկարդային նոքա առտուները Մարեմյանի սենյակին մեջ, ուր սպասուհին հագուստները մաքրելու ու նախաճաշ տանելու համար կերթար, մինչդեռ ինքը՝ շնչհատ, գունաթափ ու դողդոջուն, ոտքին ծայրերուն վրա կոխելով, փակ դրան ետևեն անոնց խոսակցությունն ըմբռնել կջանար։

Այո՛, պարտավոր էր դեռ քիչ մ'ալ համբերել. թե որ նոր կռիվ մ'ըլլար Եվգինե իր սպասուհվույն քով պզտիկ պիտի մնար. ուստի օգուտ չի կար անտարբեր դարձող տարփավորի մը գլխու ցավ տալե. իր արցունքն, որ անպակաս դարձեր էր, մեկու մը չպիտի ցույց տար. գաղտնի, ամենեն գաղտնի պիտի պահեր իր ցավն ու վիրավորյալ անձնասիրությունն և գոհ ու զվարթ դեմք մը պիտի զգենուր առաջվան պես ամենուն դեմը։

Գարունն եկեր էր և Մարեմյան՝ Խոսրովի նոր պաշտոնի մը համար աշխատելով հանդերձ ծախուց մասին դժվարություն հարուցած չէր։ Վերին Վոսփորի մեջ տուն բռնել որոշեր էին այն տարի և Եվգինե, որ Ենի-Մահալլեն կսիրեր, առաջարկեց հոն անցունել ամառն։

Ենի-Մահալլե՝ ամառը մեծ մասամբ հայաբնակ, հայաբնակ վայրերու ամեն թերություններն կամ առավելություններն ուներ. հեռավորագույն գյուղերու մեջ ամեն ընտանյաց մեջ անցած դարձածը հոն կպատմվեր ու կքննվեր։ Հոն՝ Մարեմյան, քիչ ատենեն վերջը տեղեկացավ ի մեջ այլոց, թե Տիգրան, որո մի քանի անգամ ջուրերը հանդիպեր էր նորատի կնոջ մ'ընկերացած, հարուստ փաստաբան մ'էր որ Պոյուք-Տերե կբնակեր և ըստ երևույթին այդ ընկերացած կնոջ տարփավորն էր։

Մարեմյան մեկ տեսնելովը Սուրբիկի հավներ էր. անոր վրա գտեր էր միայն այն պարզության շնորհն որ պարկեշտության հատուկ է։ և որ անառակ մարդոց աչքին ամենեն մեծ հրապույրն է։ Իր մեծ ճանաչողությամբ, հասարակաց տեղեկության հակառակ, անմիջապես հասկցեր էր, որ անոր երիտասարդ ընկերը տարփավորի մը ձևը չուներ բնավ։

Ավելին գիտնալու հարկ չի կար այս մարդուն. Տիգրանին բարեկամուհվույն ետևեն իյնալու համար անմիջապես անոր հետ տեսնվելու միջոցները փնտրեց, բայց չի հաջողեցավ. իր ծանոթ ընտանիքներեն հազիվ մի քանիին հետ Սուրբիկ գլխի բարև մը կփոխանակեր. իսկ անոր այցելությունները չի կայի պես բան մ'էին։ Մարեմյան այս կողմեն հոտակտուր՝ Սուրբիկի ամեն տեղ հետևելու ճամփան ձեռք առած էր, այնչափ որ իր պահանջող ու ամբարտավան նայվածքը նորատի կնոջ ուշադրությունը գրավել ու զինքն անհանգիստ ընել սկսավ։

Մարեմյան, սխալած չէր Տիգրանի վրայոք ունեցած կարծյացը մեջ։

Տիգրան անշուշտ կսիրեր, խանդակաթ համակրությամբ կպաշտեր Սուրբիկը, բայց դեռ սիրո բառ մը արտասանած չէր անոր երեսին։

Անցյալ օրերը, անոր ամուսնույն վիճակը, Սուրբիկի անպաշտպան կացությունն և այս տեսակ հազար նկատումներ, որք Մարեմյանի պես մարդոց համար կին մը նվաճելու նույնչափ պատճառներ են, Տիգրանի աչքին այնքան բացարձակ արգելքներ էին. իր սրտին խորը պատկեր մը կար, զոր կպաշտեր, ու այդ պատկերը թերևս Սուրբիկինն էր. բայց իր վարմունքն եղբայրական գորովո սահմանը չպիտի անցներ։

Սուրբիկ իր պաշտպանության հանձնված էր, և Տիգրան որ քաջ գիտեր թե որքան մեծ է կանացի տկարությունը, նախանձոտ եղբոր մը պես կհսկեր անոր վրա։

Գյուղ տեղվանքը իրարու ծանոթ եղողները շուտով կտեսնվին։ Խոսրով Արամ էֆենտին ու Տիգրանը կճանչնար և կյուրակե առավոտ մը, եկեղեցիեն վերադարձին այցելություն մը տվավ քյոշկը։

Տիգրան հոն էր։

Երկու տարիեն ավելի էր որ այս երկու հին դասընկերները զիրար տեսած չէին։ Պաշտոնի մեջ Խոսրովի հպարտությունը Տիգրանը բոլորովին իրմե հեռացուցած էր. բայց անոր անկումը, նեղությունը զորս երիտասարդ փաստաբանը քանիցս առիթ ունեցած էր իմանալու, իր բարկությունը մոռցնել տված էին։ Դպրոցական այս միակ ընկերը մնացեր էր պատանության տարիներեն. և Տիգրան զայն տեսնելուն չի կրցավ իր հուզմունքն ու ուրախությունը զսպել։ Խոսրով ալ անտարբեր չի կրցավ մնալ. այո՛. միշտ այն անկեղծ բարեկամն էր այս երիտասարդն որո այնքան բարիքը վայելած էր։

Զիրար հարցուցին, իբրև թե ճամփորդությենե վերադարձած լինեին.

— Ենի-Մահալլե եկանք ձեզի մոտ ըլլալու համար,— ըսավ Խոսրով,— հուսամ որ զոնե ասկե վերջը չես մոռնար զիս։

— Ո՛չ, ո՛չ,— պատասխանեց Տիգրան,— բայց դուն ալ մեզ մինակ մի թողուր. երեք հոգի եղանք հիմա, Արամ էֆենտին շատ դուրս չելներ, բայց դուն կրնաս գալ, գոնե պուտ մը կրնանք դարձնել և ժամանակը կանցնի։

Պրիչի փառքի՞ մը. ասիկա Խոսրովի համար հաճելագույն առաջարկ մ'էր։

Այսպեսով հաստատվեցավ նորեն սիրությունն այս երկու փաղեմի ընկերաց մեջ. Խոսրով քանիցս եկավ Տիգրանի տունն և մի քանի անգամ Եվգինեին հետ միասին պատահեցան անոր Պյուր-Տերեյի մեջ։ Տիգրան պարտավորեցավ փոխադարձ այցելություն մը տալ, բարեբախտաբար Մարեմյան հոն չէր ու արիտասարդը չէր գիտեր իր բարեկամին ընտանեկան կացությունը։

Տիգրան Խոսրովի հետ կրկին տեսնվելովն իր առջի անձնվիրության փորձը տվավ։ Բարեկամներ ուներ ազդեցիկ։

— Դատական պաշտոն մը կուզե՞ս,— ըսավ օր մը Խոսրովին,— թերևս կրնամ առնուլ, բայց դուրս երթալ հարկ պիտի ըլլա։

— Ինչ ալ ըլլա կընդունիմ,— պատասխանեց նա,— պաշտոնանկ մնալը զիս կհուսահատեցնե։

Ու շաբաթ մը անցնելե վերջը Սեբաստիո մեջ երեք հազար ղրուշով պաշտոնի ավետիսը ստացավ։

Խոսրով հիրավի հուսահատ վիճակի մը մեջ մնացեր էր. աչքներն լեցվեցավ երբ իր բարեկամն եղբայրության այս վերջին ապացույցը տվավ։ Անոր ձեռքը համբուրել ուզեց... Եվգինե ալ իր շնորհակալությունը հայտնեց։ Եվ այս միջոցավ իրենց կապակցությունն ավելցավ։

Մարեմյանի փափագած բանն էր այս մտերմության հաստատությունն. միայն այս հինավուրց անառակը կվախնար թե խիստ գեշ տպավորություն մ'ըրած կրնար ըլլալ Տիգրանին վրա ամեն կողմ Սուրբիկի հետևած ըլլալովը ու երբ հասկցեր էր թե Արամ էֆենտիի կինն՝ անոր բացառիկ պաշտպանության ներքև էր, որոշեր էր Տիգրանի թե ոչ բարեկամությունը, գոնե չեզոքությունն ստանալ։

Մյուս կողմե Եվգինե խորամանկ ու բարկացոտ էր. ուստի իր այս նոր տարփանաց վրա ո՛նէ կասկած գտնվելու չէր, վասնզի Եվգինե կարող էր ի դերև հանել իր բոլոր խորհուրդներն և գիտեր թե նա իր սերը պաշտպանելու համար ամեն միջոց ի գործ դնելու մասին վարանող կին մը չէր։

Ուստի ուշադրություն ըրավ Տիգրանի այցելության եկած ժամանակ Եվգինեի տունը չի գտնվելու, միանգամայն դադրեցուց այն ուշագրավ հետազոտությունը, զոր Սուրբիկը դուրսը պատահած ժամանակ սկսեր էր։ Կատարյալ, խաբվելու չափ կատարյալ անտարբերություն ցույց տվավ անկից վերջն ամեն ատեն, որ հանդպեցավ անոր։

Արարատյան Ընկերության դաշտային պարահանդեսն ամենուն միտքն է գեռ. պրլսեցվոց այս տեսակ շքեղ երեկույթ մը քիչ անգամ պատրաստված է։

Շարքի մ'առաջ ամեն ոք պատրաստության մեջ էր։ Հայերը շոայլության մեջ միշտ հարաբերությամբ փայլած են։ Հաջիվ եղավ որ այն շաբթուն Փերայի խանութներուն տարվույն մեջ ամենեն շատ առևտուրն ըրած միջոցն էր։

Ամեն կողմ խոսակցության նյութն այս պարահանդեսն էր։

Արամ էֆենտիի տունն ալ՝ ուր պրիշի փառքի մը կխաղցվեր, նույն երեկույթին վրա էր խոսքը։

Սուրբիկ՝ իր բոլոր փափագին հակառակ երթալու կամք չէր հայտներ. Տիգրան բան մը չէր ըսեր ու Խոսրով միայն կպնդեր երիտասարդ կնոջ, որ ներկա գտնվի.

— Իմ կինս ալ հոն պիտի ըլլա,— կըսեր,— տեսակցության առիթ մը կունենաք։

Իսկ Արամ էֆենտի բռնադատեց որ Սուրբիկ անպատճառ երթա պարահանդես. հարկ եղավ ուրեմն համակերպիլ. բայց կեսգիշերեն ժամ մը վերջը պիտի դառնար։

Պարահանդեսի գիշերն է։

Արտակարգ ոգևորություն կա Պոյոյուք-Տերեի ափունքը։ Պարտեզն անհամար ջահերով ու լույսերով կփայլի ընդարձակ ամփիթատրոնի մը նման. բազմությունն ամեն կողմե հետզհետե կհասնի ու երաժշտությունն իր եռանդուն ձայնը կլսեցնե։ Մեկ նայվածքով կրնաս հոն նըշմարել ամենեն բարձրադիր հայերն իրենց ընտանյաց հետ միասին. պարի վայրն ամեն կողմ լեցուն է։

Ծոսի մը տակ երիտասարդ մը ու մանկամարդ կին մը կխոսակցին։

— Տիկին,— կըսե երիտասարդը ձեռքերն աղաչավոր դիրքով մը միացուցած,— գիտեք որ շատոնց ի վեր կարոտ ու զուրկ թողուցիք զիս ձեր տեսութենեն. ափսո՜ս, առջի օրվընե գուշակեցի իմ բախտս, բայց չի կրցա մեկդի ընել զայն. տարիե մը ի վեր հոս, հոս միայն հանդիպեցա ձեզի։

— Թողեք զիս, կաղաչեմ,— կպատասխաներ կինն,— այս տեղ առանձին մնալնիս վայելուչ չէ, ամուսինս կրնա գալ...

— Ատեն մը այդպես չէիր խոսեր ինձ հետ, Եվգինե՛,— կկրկներ երիտասարդն,— ամուսի՞նդ չէ թե ուրիշ մը։

— Արմենա՛կ,— գոչեց կինը բարկությամբ։

— Թող չեմ տար զքեզ այս գիշեր, կուզե Վառեմյան գա, կուզե Մարեմյան։ Իմ իրավունքս ավելի հին է։

— Ամուսնույս քովը տար զիս, ապա թե ոչ քաշվե։

— Ես այդ տեսակ բան չեմ գիտեր,— ու այս ըսելով երիտասարդը նորատի կինը գրկելու ու համբուրելու կաշխատեր։

Եվգինեի համբերությունն սպառեցավ։

— Անդին գնա, հիմա պիտի պոռամ։

— Համբույրով մը բերանդ կգոցեմ։

Կինը ճիչ մ՚արձակեց։

Երիտասարդ մը, որ այն կողմեն կանցներ, մոտեցավ. Արմենակ մեկդի բաշվեցավ, մինչդեռ կինը շվարած ու զայրացած գոչեց.

— Ազատեցե՛ք զիս սա անպիտանին ձեռքեն։

Տիգրանն էր մոտեցողը. տեսավ ու ըմբռնեց տեղի ունեցած տեսարանն։

— Ուրիշ տեղ մը տարբեր կերպով պիտի վարվեի ձեզ հետ, հոս զձեզ վռնդել տալով պիտի բավականանամ։

Եվ այն միջոցին անցնող հյուրամեծարի մը միջոցավ դուրս ընել տվավ և Եվգինեն թեն առնելով պարի դաշտը դարձավ։

Մազուրքա մը կզարնվեր. աչքով Սուրբիկը փնտրեց, տեսավ որ Խոսրովի հետ էր։ Ինքն ալ Եվգինեի հետ քիչ մը պարել ուզեց։

Ոչ ոք Եվգինեի չափ քաջ պարող էր. Տիգրանի թևին վրա բան մը չի կար ծանրացող, այլ իր երեսին հեշտավետ բուրում մը ու իր քովն զմայլիչ հյուր մը որ պարողներու հորձանքին մեջեն իրեն հետ կսրանար։

Տիգրան բնավ այնքան հաճույք զգացած չէր. շրջան մը միայն ընել ուզեր էր ու այն ատեն միայն կեցավ երբ երաժշտությունը դադրեցավ. անկից վերջը քատրիլ ու հետո վալս մը պիտի լիներ ու այս վալսին համար խոսք տվին իրարու և պյուֆեն ուղևորեցան։

Սուրբիկ հոն էր Խոսրովի թևը մտած։

Տիգրան անշուշտ իրավամբ խորհեր էր թե չարախոս բազմության մը մեջ, ուր արդեն տեսակ-տեսակ տարաձայնություններ կդառնային իր մասին, որքան ալ մաքուր ու անկեղծ լիներ իր սիրտը, պատշաճագույն էր, որ Արամ էֆենտիի կինը մինչև վերջն իրեն հետ ի միասին չի տեսնվեր ու տեղի չի տար նորանոր բամբասանաց։

Ինչե՞ր չէին ըսեր մինչև այն ժամանակ. Տիգրան Սուրբիկի սիրահարն էր. ո՞վ կտարակուսեր ադոր. և ահա նորատի կինն, որ իր հիվանդ ու ծերունի ամուսինը լքանելով վարձկան ձեռքերու, ինք կուգար զբոսանաց վայրերն իր տարփավորին հետ զվարճանալու։ Այս զրպարտությունները պիտի լիներեն հետևյալ օրն ամեն կողմ տարածվելիք արձագանքն, ու Տիգրան մեծապես իրավունք ուներ իր զգուշավոր ընթացքին մեջ։

Սուրբիկ միայն Տիգրանի իր մոտը չի գալուն այս բացատրությունը չի տվավ. լավագույն բացատրությունն անոր թևի գեղանի ու շնորհալի կինն էր և ուրիշ պատճառ փնտրելու հարկ չի տեսավ։

Դպրոցեն փախչող տղու մը պես այն իրիկուն Սուրբիկ անպատում բերկրություն ու խնդում զգացեր էր պարահանդես գալուն։ Ո՞րքան ատենե ի վեր զուրկ էր մնացեր այս տեսակ հաճույքներե, ու ասպե-

տական դղյակի մը տիրուհվույն պես առանձին ու մարդե հեռու ապրեր էր իր քյոշկին մեջ։

Պահ մը մոռցավ իր կենաց մառախլապատ հորիզոնն ու ընտանեկան հարկին հոգն ու մտմտուքը պարահանդեսին շողշողուն փայլին առջև։

Քաշված ապրելով, իր ծանոթները գրեթե մոռցեր էր. բայց Տիգրանի ընկերությունը կբավեր անոր. Սուրբիկ պարելը կսիրեր, նամանավանդ վալսն որ տեսակ մը թաքուն ու անբացատրելի ախորժ ուներ իրեն համար։

Ո՜րչափ մեծ եղավ իր զարմանքն, երբ պարահանդես մտած չի մտած, Տիգրան իրմե բաժնվեցավ մեկ մ'ալ իր քովը չի գալու համար։ Ո՞վ էր այդ Եվգինեն ուսկից երիտասարդը չէր կրնար զատվիլ. մազուրքայի ատեն նշմարել կարծեց թե Տիգրան խիստ մոտեն կգրկեր իր վայելչագեղ ընկերուհին։

Սուրբիկ նեղացավ. ինքն ալ աղեկ մը չէր գիտեր ինչ պատճառավ, մինչև այն ժամ երիտասարդն ո՛ևէ սիրային խոստովանություն մ'ըրած չէր իրեն. թերևս ինքը նշմարել կարծեր էր անոր ներքին համակրությունն ու կերևեր թե բոլորովին սխալած էր այս ենթադրության մեջ։

Սուրբիկ միշտ նույն դյուրագրգիռ կինն էր։ Այն գիշեր խմած մեկ երկու քոնյաքն անոր գլխին զարնելու մոտ էր, երբ Տիգրան մոտեցավ և Եվգինեն խոսրովին հանձնեց անոր վալսի խոստումն հիշեցնելով։

Սուրբիկ փոթորիկ մը զգաց իր սրտին մեջ այս խոստումը լսելով. ի՜նչ, այդքան չի կարենալ բաժնվելու չափ ախորժելի մե՞կն էր այդ մանկամարդ կինն և մեկ նայվածքով ճանչցավ անոր վրա երիտասարդ մը գլխե հանելու բոլոր առավելությունները։

Իր ներքին խռովությունն այնքան ավելի սաստիկ և ուժգին եղավ որքան Տիգրանի չէր կրնար հաղորդվիլ։ Կմտածեր որ իր բարեկամին անկախության դպչելու իրավունք չուներ. նա ազատ էր իր ուզածին հետ պարելու կամ խոսելու. զինքը պարահանդես բերել խոստացեր ու բերեր էր և ագկե ավելի բան մը չէր կրնար պահանջել անկից։

Ափսո՜ս, մինչև այն վայրկյանը Տիգրանը գոնե իրեն անձնվեր մեկն համարած էր. և առաջին առթիվ կտեսներ թե ո՜րքան խաբված էր իր համոզման մեջ։ Իր վիրավորյալ հպարտությունն արգիլեց զինքն ո՛ևէ բան մը զգացնելե Տիգրանի. ի՜նչ օգուտ եթե իր սրտիպման վրա երիտասարդն այդ կնոջ հետ չպիտի պարեր։

Սուրբիկ՝ այս երկրորդ անգամն ըլլալով, կսխալեր իր գատաստանին մեջ։

Տիգրան հիմարի մը պես կսիրեր զինքը։

Արամ էֆենտիի կինը պարահանդեսին մեջ գտնվող տիկնանց մեջ թերևս ամենեն գեղանին էր։ Մեծագին չէր անոր հագուստը. պարզ քեմ կազե շրջազգեստ մը հագած էր նա վալանսիեններով շտկված, որո թափանցիկ ու անգաղտնապահ հյուսվածքը՝ մարմարի պես սպիտակ մարմնո մը բոլոր հեշտալի հրապույրը կմատներ. իր սիրուն գլուխը, գալուկ դեմքը, դյուրաբեկ հասակն, երապի մեջ երևցող ու խուսափող տեսիլ մը կհիշեցներ զոր կորսնցնելու վախով մարդս կվախնա ձեռք դպցնելու։

Զմայլման ու հափշտակության շշունջ մը կբարձրանար երիտասարդաց ու պատանյաց մեջ անոր անցած ատեն. ամենքն անոր ընկերացող անձին շուրջը կդառնային անոր ներկայացվելու, հետը շրջան մը ընելու կամ բառ մը փոխանակելու հույսով, իբրև նորատեսակ արբանյակներ, որոց այս շողշողուն ու հրավառ աստղը ձգողության ընդհանուր կեդրոնն էր։

Լուռ ու անխոս, Տիգրանի հետ հառաջացավ նա ծառուղվո մը մեջ. երիտասարդն իր թևին վրա կզգար անոր փափուկ ու բնքուշ թևին ջերմությունն որ էլեկտրական հոսանքի մը պես իր երակներուն կհաղորդվեր. կանը ուռին ծառի մը մթին ու խորհրդալի ստվերին տակ. քիչ մը հեռու ուրիշ զույգեր կպտտեին կամ կխոսակցեին։

Սուրբիկ տրտում ու խոհուն կերևեր։

— Ի՞նչ ունիս այս իրիկուն,— հարցուց երիտասարդը մտահոգ։

— Ոչինչ,— մրմնջեց նա։

— Չե՞ս ուզեր պարել։

Սուրբիկ դժկամակության ձև մը տեսնել կարծեց այս հարցման մեջ։

— Ո՛չ,— պատասխանեց նա,— այս գեղեցիկ գիշերին ավելի կուզեմ երկինքն ու ծովը դիտել։

— Թե որ խոսրով էֆենտիեն չախորժեցար, ուրիշ բարեկամի մը հանձնեմ քեզ։

Այս վերջին խոսքը խիստ ծանր եկավ Սուրբիկին. սիրտը դառնությամբ լեցվեցավ ու կսկծալից հառաչանք մը զսպեց իր սրտին մեջ։ Ա՛լ տարակույս չի կար. երիտասարդը չէր սիրեր ու չէր սիրած զինքն. ու հիմա պարահանդեսին մեջ իր գլխեն նետել կուզեր զինքն ավելի ազատ զրոսնելու համար։ Ու այս տեսակ սև մտածումներ անոր շփոթած մտքը գրավեցին. ուրախ ու զվարթ եկեր էր պարահանդես. երիտասարդական բազձանքներն՝ իր սրտին մեկ անկյան մեջ թաղված, իզուր պահ մը արթննալ սկսեր էին. հիմա կըմբռներ թե հարկ էր մոռնալ, վերջապես մոռնալ երջանկության վաղանցիկ հույսերն. ինքը,

խե՜ղճ կին, ո՞վ ուներ աշխարհիս վրա. ամենեն լքյալ ու երեսի վրա ձգված տարաբախտ էակ մ'էր։

— Ո՜չ,— ըսավ հաստատ ձայնով,— Խոսրով էֆենտի անհաճո մեկը չէ. իրեն տար զիս։

Քիչ մ'ալ պտրտեցան անշշունչ, առանց բառ մ'ավելցնելու. երաժշտությունն անդիեն վալսի նշանը տվավ. պարողներն հետզհետե գացին. Սուրբիկ հուսաց վայրկյան մը, որ երիտասարդն իր քով պիտի մոռնար Եվգինեի տված խոստումը. բայց իր պատրանքն երկար չի տևեց. Խոսրով իր կնոջ հետ իրենց մոտ գալու վրա էր, ու Տիգրան դեպի անոնց հառաջացավ.

— Ձեք մոռցած խոստումնիդ անշուշտ, տիկին,— ըսավ։

— Ես ալ եկա ձեզ զայն հիշեցնելու,— պատասխանեց Խոսրովի կինը։

Երկու բարեկամներն իրենց ընկերուհիները փոխանակեցին, և Տիգրան շուտով վալսի հորձանքին մեջ անհայտ եղավ։

— Ես չեմ պարեր, տիկին,— ըսավ Խոսրով,— և կվախնամ որ ձեզ չի նեղացնեմ։

— Ես ալ պարելե շատ չեմ ախորժիր. արդեն շատ կենալու դիտավորություն չունիմ. ամուսնույս խոսք տվի շուտով դառնալու ու թերևս հիմա ինձ կսպասե։

— Ո՜հ, դեռ շատ կանուխ է,— ավելցուց Խոսրով։

Ու այսպես քիչ մը ատեն խոսեցան դեռ պարահանդես եկող կանանց, անոնց հարդարանաց, Արարատյան Ընկերության ու այն գեղեցիկ հասույթին վրա։

Խոսրով հասկցավ որ Սուրբիկ նեղացած էր, բայց չէր գիտեր ի՞նչ պատճառավ. թերևս պարելը կսիրեր, ու ինքը չէր կրցած անոր հաճոյանալ։

Այդ միջոցին Մարեմյանը տեսավ որ իրենց մոտ մի քանի հոգվո հետ կանգնվեր. Մարեմյան մոտեցավ ու իբրև թե նոր նշմարելով իր բարեկամին քովի կինը, խոնարհություն մ'ըրավ անոր առջև. խոնարհություն, որ սովորական կերպիվ գլուխ ծռելե ավելի մանկամարդ տիկնոջ համար զմայլում ու անձնվիրություն կնշանակեր։

Սուրբիկ անմիջապես ճանչցավ մեկ քանի ամիս առաջ ստվերի պես ամեն կողմ իրեն հետևող անձը։ Բարեկիրթ մեկը կերևեր նա. լավ կխոսեր ու քաղաքավար ու հարգալից մեկն էր։

— Հիմա շատ չեմ պարեր ալ, տիկին,— կրսեր նա, այնպիսի խոնարհ ձայնով մը որ տաքորինակ կերպիվ փայփայէր շեշտ մը ուներ,— և շիտակն ըսելու համար թերևս չեմ կրնար պարել. պատանեկան աշ-

խույժն ու եռանդը շատոնց լքեցին զիս,— ավելցուց նա տրտում ու գլխիկոր։

Պատանի մը չէր դիմացինն անշուշտ. բայց Սուրբիկ առողջության բոլոր ձիրքերով օժտյալ, հասուն տարիքի տեր մեկը տեսավ զնա։ Տղա մը չէր Տիգրանին պես անխոհեմ ու անզուսպ. փորձառու ու հաստատամիտ մեկը կթվեր։ Իր բոլոր վարմունքին մեջ Սուրբիկի համար վիրավորիչ լինելիք բառ մը կամ ակնարկ մը չունեցավ և բնականաբար երիտասարդ կնոջ հետ շրջագայություն մ'ընելու առաջարկը չի կրցավ մերժվիլ։

Թև ի թև, սովորական խոսակցությամբ մը զբաղյալ, պտույտ մ'ըրին պարտեզին մեջ ու պյուֆեեն մեկ-մեկ ըմպելիք առին. Սուրբիկ ամեռ մը ուզեց. բայց ներկայացված հեղուկն սխալմամբ անշուշտ՝ ապսենթ ըլլալու էր, որ անմիջապես անոր գլխուն զարկավ. մեկ վայրկյանի մեջ պարտեզն, երկինքն ու ծովն իր մոլորյալ ակնարկին առջև իրարու խառնվեցան, ոտքին ներքևեն հողը խույս տվավ կարծես, ու խեղճ կինը Մարեմյանի թևեն ի զատ հենակետ մը չտեսավ իր շուրջը։

— Այս ի՞նչ տեսակ ամեռ էր,— թոթովեց Սուրբիկ։

— Ինձ տվեք գավաթնիդ,— ըսավ Մարեմյան զարմանք ու վրդովում կեղծելով,— բայց այս ամեռ չէ,— ավելցուց նա կաթիլ մը բերանն առնելե վերջը,— ապսենթ է. սակայն անհոգ եղեք, տիկին, ամեն պարագայի մեջ կատարելապես անվնաս ըմպելի մ'է, կապահովեմ ձեզ այս մասին,— ու այս ըսելով խստիվ հանդիմանեց սպասավորը։

Սուրբիկ բան մը չլսեց. այն ստոիճան սաստիկ էր հուզմունքն. հեղձուցիչ մթնոլորտ մը կար որ իր շնչառությունը կարգիլեր. ծաղիկներուն բուրումը մեկ կողմեն, թաշկինակներու վրայի անուշահոտությունները մյուս կողմեն ու այս սաստիկ ըմպելիքն առաջուց առած քսնյաքներուն վրա ավելնալով՝ պզտիկ գինովություն մը հառաջ բերին։

Մարեմյան շփոթեցավ ու ուրախացավ, իր հուսացածեն ավելին հաջողեր էր. իր թևերուն մեջ առնել ուզեց այս թանկագին բեռն ու առանձին ու ամայի տեղ մը փնտրեց մտքովը զայն հուշաբերելու համար. բայց երիտասարդ կինն անմիջապես ավելորդ դատեց զանոնք. իր շփոթությամբն հանդերձ զգաց որ այս մարդը խիստ վտանգավոր ու խիստ խորամանկ մեկն էր. Տիգրանի դեմ սրդողած ու նեղացած պահուն վայրիկ մը շնորհքով մեկը երևցեր էր նա իր աչքին, բայց չուշացավ ինքնիրեն խոստովանելու թե զինքը շարունակ հալածող այդ մարդուն գիտավորությունն անպարկեշտ և իրեն անոր հետ տեսությունն անվայել էր։

Բավ է որ կին մ'ուզե իր պատիվը պաշտպանել որպեսզի հաջողի անոր դեմ պատրաստված ամեն փորձ ի դերև հանել։

Սուրբիկ այս մարդուն մոտ ինքզինքն առանձին գտնելով վախցավ ու այս վախը բոլորովին իր խելքը գլուխը բերավ։

Այո՛, հանցավոր էր,— այսպես խորհեցավ երիտասարդ կինը ներքնապես,— այսպիսի կասկածելի անձնավորության մը ընկերանալուն, և Տիգրանի առաջ ինքզինք արդարացնելու միջոց մը չի կրցավ գտնել իր մտքին մեջ։ Ի՞նչ պիտի ըսեր, ի՞նչ բացատրություն պիտի տար անոր հետ ընկերանալուն։

Ո՜րքան մեծ տարբերություն այս երկու մարդոց մեջ. երկուքն ալ զինքը կսիրեին. այսպես գոնե կկարծեր ինքը, բայց մինչդեռ Տիգրան ամեն ազատություն ու դյուրություն վայելելովն հանդերձ երկու տարվան մեջ զինքը նվիրական էակի մը պես հարգելե ու պաշտելե անդին անցած չէր, անդին նորեկ մը, գործունյա, փութաջան ու ձեռնարկող, համառոտ ձևերով զինքն իր գրկին մեջ սեղմելու չափ հառաջացեր էր կես ժամվան մեջ։ Հանկարծ անոր մտքեն կասկած մը անցավ ու Սուրբիկ զզվանք ու սոսկում զգաց այս մարդեն. ի՞նչպես կրցեր էր անոր թեն ընդունիլ. ինքն իսկ զարմացավ ասոր։

Վտանգն ամենեն աղեկ ուղղեց նորա դատողությունն. և մարդկային սրտին բնական եղող հակազդեցությամբ մը Տիգրանի բոլոր փափկությունն ու անձնվիրությունը ճանչցավ ու գնահատեց։

— Կխնդրեմ որ զիս խոսրով էֆենտիին մոտ տանիք,— ըսավ վախով ու ցասմամբ հուզյալ ձայնով մը։

Մարեմյան Սուրբիկի բոլոր մտածումները միառմի կարդաց անոր դեմքին վրա, ու հակառակելու անկարելիությունն հասկցավ։ Ուստի շուտով առաջնակարգ դերասանի մը պես իր առջի հարգալից ձևն զգեցավ։

— Հոժարությամբ, տիկին,— պատասխանեց նա,— միայն կխնդրեմ որ ներողամիտ լինիք թե որ ո՛նէ կերպով տուիթ եղա ձեր անհանգստության. հավատացեք որ ամոթով եմ այս մասին։

— Բնա՜վ, էֆենտի, հանցանքը ձերը չէ. և ես շնորհակալ եմ ձեր խնամոցը. ջղային տկարություն մ'էր որ երբեմն ենթակա կըլլամ,— պատասխանեց Սուրբիկ շտապ ու ցամաք կերպով։

Վալսը լմնցավ ու պարողներու քրանաթոր զույգերը՝ գիշերվան զով օդն առնելու համար պարտեզին մեջ ցրվեցան։

Տիգրան Եվրինեն իր ամուսնուն դարձուցած մեղադրանքին տակավ Սուրբիկն որ անծանոթի մը թեր մտած դեպ իրենց կուգար։

— Որո՞ւ ես հանձներ տիկին Արամ էֆենտին,— հարցուց երիտասարդն առանց ծածկելու իր դժգոհությունը։

— Ո՜հ, անհոգ եղիք,— պատասխանեց Խոսրով, թեթև մը կարմրելով սակայն, իմ ծանոթներես է ու խիստ ազնիվ անձ մ'է։

Տիգրան այս բացատրությունը չընդունեց. բայց ինքնիրեն ավելի Սուրբիկի նեղացավ քան թե իր բարեկամին, մինչդեռ օտարականը Սուրբիկը ձգելե ու խոնարհություն մ'ընելե վերջը կհեռանար։

— Ո՞վ էր այդ պարոնը, Սո՛ւրբիկ,— հարցուց երիտասարդն երբոր մենակ մնացին։

— Ես ալ աղեկ մը չեմ գիտեր ո՛վ ըլլալն. իրավ է որ բարեկիրթ անձ մը լինելով հանդերձ անհամակրելի թվեցավ ինծի։

— Թեր մտած ատենդ պետք էիր ատիկա մտածել և ո՛չ հիմա։

Սուրբիկ Տիգրանի վշտացած ըլլալն անոր խոժոռած դեմքեն ու ցամաք պատասխանեն հասկցավ։

Անծանոթի մը թեն ընդունիլը պակասություն մ'էր ու նորատի կինը ներքնապես իրավունք տվավ երիտասարդին ու անոր սիրտն առնել մտածեց։

— Այս տեղի բազմությունը ձանձրացուցիչ է,— ըսավ Տիգրանին մեղմ, գրեթե աղերսարկու ձայնով մը որ կարծես ներումն կխնդրեր և որ տարօրինակ կերպով երիտասարդին սրտին դպավ,— տուն դառնանք թե որ կհաճիս։

— Դառնանք,— կրկնեց Տիգրան մեքենաբար։

Թեթև թևի վար իջան պարտեզեն համր ու դանդաղ քայլերով. Սուրբիկ հոգնած էր ու թույլ կերպով իր ընկերոջ թևին կհենուր։ Քարափեն անցան ուր հոգնախառն ամբոխ մը կշրջեր, կերգեր, կզբոսնուր գիշերվան ցողին տակ անփույթ ու անխոնջ։

Բազմության մեջեն անցան անտարբեր՝ չի լսելով իրենց շուրջի աղմուկն և առանց զգալու մինչև իրենց ծովեզերյա տուներ հասան։

Դիշերը թեև խոնավ, բայց իր բոլոր պայծառության մեջ էր. հեռուն պարահանդեսին լույսերն ու եքսաշտության ձայները փնվաղեին ու կանհետանային։

— Ես անոթի եմ, Սո՛ւրբիկ,— ըսավ Տիգրան,— քյոշկն ելլելե առաջ քիչ մը բան ուտենք. գուն ալ կարծեմ թե անոթի ես. այս ալ զբոսանք մ'է, մանավանդ թե պարահանդեսի հաշվույն մեջ չէ։

— Ուշ չէ՞ այս պահն։

— Բնավ. ժամը յոթն է. կես ժամեն վեր կանգնիմ քեզ. հոս տարավոր արթնցնելու պետք չունինք, ու այս գիշեր քեզի ծառայելու պատիվն իմ անձիս կվերապահեմ, տիկին,— ավելցուց խնդալով։

— Այդպես թող ըլլա ուրեմն,— պատասխանեց Սուրբիկ։

Այս առաջադրությունն անտարակույս հաճելի էր. կեսգիշերին, ծովեզրի սենյակը, լուսնի լուսով, գլուխ գլխի ճաշ մը ընելն՝ հրապուրիչ ծրագիր մ'էր։ Սակայն Սուրբիկ վայրկյան մը խորհեցավ, որ գիշեր ատեն թերևս վայելուչ չէր ամուրի երիտասարդի մը առնը գտնվիլ երբ ամեն մարդ կքնանար։ Բայց Տիգրանի առաջարկը մերժելն անոր վրա կասկածիլ ու զայն վիրավորել պիտի ըլլար. Սուրբիկ դեռ ասոր նման հազար պատճառանք մտածեց ու գտավ այս հաճոյալի հրավերն ընդունելու համար. մարդս որքան դյուրավ կհամոզվի թե որ կամենա։

Ներս մտան առանց մեկու մը ձայն տալու. ծովեզրի սենյակը Տիգրանի աշխատության սենյակն էր. Սուրբիկ բնավ հոն մտած չէր դեռ. ակնարկ մը ձգեց իր չորս դին հետաքրքրությամբ ու սիրով լեցուն. ճրագի պետք չի կար. լուսինն իր արծաթյա ճառագայթներովը սենյակը կողողեր ու ցերեկվան պես կլուսավորեր։

Ի՜նչ զարմանալի բան է եղեր երիտասարդի մը սենյակն. այս եղավ Սուրբիկի հետազոտության արդյունքն. ամեն ինչ անկարգ ու անկանոն. արևելյան ու եվրոպական կարասիք միասին. հոս թրքական փոքրիկ բազմոց մը Պուխարայի գորգերով ծածկված, հոն հին ֆրանսական թիկնաթոռներ, չինական կերպասե վարագույրներ, խել մը անօգուտ ու թանկագին նյութեր, հնություններ, հին և նոր դրամներ, զենքեր փայլուն կամ ժանգոտած, գորգեր, պատկերներ, հախճապակե ամաններ, պզտիկ ու մեծ լուսանկարներ նշանավոր անձերու, դերասանուհյաց, արվեստավորներու, հրապարակախոսներու, ասդին անդին, պատերուն վրա, գրեթե ամեն կողմ ցրված խառնիխուռն բայց ոչ առանց ճաշակի. փոքրիկ արձաններ իրենց մերկ ու շլացուցիչ գեղով, ոսկեզօծ ու լայն շրջանակներու մեջ Վոսփորի զանազան տեսարաններն ու Անվո ավերակներն. Հայաստանի զանազան քաղաքներե հավաքված տեսակ-տեսակ կերպասներ, բանվածներ, աթոռի մը թողված Միռապո մը, սեղանին վրա Պեշիքթաշլյան մը. հոս իրավագիտական թերթեր. վերջապես փոքրիկ սենյակի մեջ հավաքված արվեստի, գեղարվեստի, գիտության ու գրագիտության վերաբերյալ ճոխություններ՝ մեկ բառով ամեն ինչ կամ ոչինչ։

Սուրբիկ շատ մը հարցումներ պիտի ըներ իր տեսածներուն վրա, բայց այս սենյակին մեջ անբացատրելի անհանգստություն մ'զգաց. վրդովիչ ու հրապուրիչ մթնոլորտ մը կար. իր շուրջը տեսած անթիվ նյութերն ու պատկերները կարծես նույնքան խոսուն ու համակրելի հոգիներ էին. ազոնք էին երիտասարդին ամենօրյա ընկերներն, անոր ամեն մեկ հուզման, տխրության և ուրախության մասնակից։ Եվ Սուրբիկ անմիջապես սիրեց ու պաշտեց այս ամենն իրենց անխնամ անկարգության մեջ։

Անդին Տիգրան հինօրյա ու քաջավարժ սպասավորի մը պես սեղանը շտկեց պատուհանին մոտ. քիչ մը պաղ հավ, տապակած ձուկ, Պոռտոյի հին գինի ճարելն վայրկյանի մը գործ եղավ. ու երբ խոսելով խընդալով սկսան ճաշն, երկուքն ալ բերկրացան հանպատրաստից ու առանց երկմտելու այս խորհուրդն ի գործ դրած ըլլալնուն։

Իրենք անոթի, կերակուրներն համով, գինին ընտիր, ու բնականաբար խոսակցությունը վերսկսավ եռանդով ու աշխուժիվ։

— Պարահանդեսին մեջ կարծեմ նեղացար ինծի։

— Այո՜, թեև այդ ազատությունն ու իշխանությունը չունիմ։

— Որքա՜ն նախանձոտ ես եղեր, մինչդեռ շարունակ ադոր հակառակը կպնդես։

— Կհավատա՞ս, թե որ ըսեմ որ քեզմե ի զատ և ո՛չ մեկի համար այդքան դյուրազգաց եղած եմ։

— Ո՞չ իսկ հույն բարեկամուհվույդ մասին,— հարցուց Սուրբիկ խնդալով։

Եվ մտերմությունն հետզհետե ավելցավ. այն գիշերվան պարահանդեսեն՝ ուրիշ տարիներու պարահանդեսներու ու երեկույթներու վրա դարձավ խոսքն. երիտասարդին հիշատակներն արթնցան, անցյալ օրերու պատմություններ, գրեթե խոստովանություններ ըրին իրարու, մինչդեռ զորավոր ու անխառն գինվո վերջին գավաթները կպարպվեին ու գլուխները կսկսեին տաքնալ ու դառնալ։ Այդ ժամուն ա՛լ բնավ չէին մտածեր իրենց տարօրինակ ու անպատշաճ կացության ու գիշեր ատեն մեկ սենյակ ի միասին ու առանձին գտնվելնուն վրա։

Քիչ մ'առաջ նախանձու վրա խոսեր էին ու ադկից խոսակցությունը սիրո վրա բերելու չափ դյուրին բան չի կա աշխարհիս մեջ։

Սուրբիկ հոգներ էր. նա ավելի կունկնդրիր քան թե կխոսեր, թիկնաթոռի մը մեջ տարածված, աչքերը կիսափակ ու երեսը կարմրած. մինչդեռ երիտասարդն անոր քով ու դեպի անոր ծռած, փոքրիկ ու բընքուշ ձեռքն իր ձեռացը մեջ ամփոփած, կշաղակրատեր։

Սուրբիկ ուրիշ բան չէր լսեր անոր խոսքերեն բայց եթե հեշտալուր մրմունջ մը, որ իր լսողությունը կհմայեր. կզգար որ կարող էր տարիներով առանց նեղանալու մտիկ ընել այդ քաղցրաձայն նվագին, որ ոչ երբեք այդքան ախորժելի ու ազդիչ թված էր։

Երջանկություն ըսվածն ա՞յս էր արդյոք երկրիս վրա։ Սուրբիկ գրեթե այնպես կարծեց վայրկյան մը։

Գիշերը կտառաջանար գվարթ ու աստեղազարդ. լուսինն հետզհետե կխոնարհեր դանդաղ և վարանչալ, ծովուն վրա ձեռնելով անթիվ ու անմանելի լուսեղեն ուրվագիծեր որք շարունակ կկազմվեին ու կփոփոխեին անոր սնդիկի պես անշարժ ու փայլուն երեսին վրա. ամեն որ հանգչած էր ու ամեն կողմ տարածվող խոր լռության մեջ միայնակ էր այս մանկամարդ կինն իր սիրած մտերմին քով, բյուր իղձերով տոգորյալ։

Տիգրան հիմա ա՛լ գրեթե բոլորովին իրեն մոտ ծնրադրած էր ու Սուրբիկ անոր հեշտահամբույր շունչը կզգար իր մազերուն մեջեն, իր երեսին մոտ, իր դյուրագրգիռ մորթին վրա, և կխռովեր. հանկարծ զդաց երկու սիրատենչ շրթունքներ որ իր ձեռքին կդպեին հիմարական ակնչանոք պատելով իր բոլոր զգայարանքը. Սուրբիկ ձեռքն ետ քաշել ուզեց, բայց այս նահանջումն ավելի պարտյալ մարդու մը անօգուտ մեկ ջանքն էր բան թե լուրջ դիմադրություն մը. Տիգրան բռնացավ ու մանկամարդ կինն անոր դեմ զորություն չուներ. աչվքներեն կրակ կելներ, ակնարկը կնվաղեր ու ամեն ձայնե ավելի ուժով՝ բառ մը, բառ մը միայն անոր ականջին կզարներ անդիմադրելի, իր պատճառած հրապուրին համար։

— Կպաշտեմ զքեզ,— կմրմնջեր երիտասարդն անոր ականջն ի վար։

Սենյակին մեջ լուսնին լույսը վարագույրներուն բացախփիկ գույներուն հետ կխաղար. պզտիկ արձանները թվեր թե կոգևորեին իրենց մարմարե փոքրիկ կայաններուն վրա. պատկերները կժպտեին ոսկեզօծ շրջանակներուն մեջ ու անդիեն հեզաշարժ ծովուն ձայնն, որ մեղմիվ տանը քարափը կփայփայեր, կհասներ միօրինակ այլ ներգաշնակ երգի մը պես։

Ուրիշ ատեն Սուրբիկ պիտի բաղձեր այս վարմունքին դեմ. հիմա երջանիկ էր սիրո այս խոստովանությունը լսելով. անշուշտ հիմա չէր որ կիմանար Տիգրանի զինքը սիրելն. ինքն ալ ինչե՞ր չէր քաշեր իր փոխադարձ սերը ծածկելու համար ու անտարբեր դեմք մը ցուցնելու իր պաշտեցյալ մտերմին. վայրկյան մ'առ ու մոտ էր անձնատուր լինելու. հեշտության երազներ անոր շփոթած միտքը գրավեցին ու վայրիկ մը Տիգրանի բազուկներն անքակտելի շղթա մը կազմեցին անոր մարմնույն շուրջը։

Հանկարծ պատկեր մը անցավ Սուրբիկի աչաց առջևեն, խոժոռ ու տրտում դեմք մը, որո տարօրինակ նայվածքը մինչև իր սրտին խորը թափանցեց։ «Ձգե՛ս խաբեցեր ու հիմա ամուսի՛ն պիտի խաբես», կրսեր այս նայվածքը բացորոշ խստությամբ։

Սուրբիկ սարսափահար ուժով մը մեկգի հրեց զինքը շրջապատող թևերն ու ոտքի վրա ելավ մեկեն։

— Տի՛գրան,— ըսավ խելակորույս երիտասարդին,— այդքան շո՛ւտ մոռցար Սեդրաքի հիշատակը։

Սեդրաքի՞...

Ո՞ւսկից գտավ այս սպառնալից անունն, որ փայլակի մը ցոլացման պես իր միտքը պատող մառախուզը փարատեց. Տիգրան կանգ առավ իր անվայել աղերսանաց մեջ ու մաներկրորդ մը բավեց խելքը գլուխը բերելու. ինչ որ ալ ըլլար իր անսահման սերն ու մարդուս տկարությունը, պարկեշտությունն, որ իր սրտին մեջ էր միշտ՝ զինքն արիացուց ու պատվո ճամփեն չի խոտորեցավ։ Բայց իր քաջության փորձը տալե վերջն իր հուզմունքը չի կրցավ ծածկել ու Սուրբիկեն հեռու աթոռի մը վրա ինկավ ուժաթափ ու ամոթահար։

Ա՛լ չի խոսեցան ասոր վրա ու քիչ մը ետքը պարտեզին դռնեն անցնելով, Տիգրան, լուռ ու քար կտրած, ծաղկահասակ կինը քյոշկը տարավ ձգեց ու տուն դարձավ. բայց մինչև առտու իր խռովյալ երևակայությունը թույլ չի տվավ քնանալ։ Արշալուսուն դեմ միայն, խորտակված ու վաստակաբեկ, բազմոցի մը վրա քունը տարավ։

Այն գիշերեն վերջը քիչ մ'ատեն Տիգրան խիստ զգուշավոր ընթացք մ'ունեցավ քյոշկը գտնված ժամանակ. հանցանք մը գործած ատեն վարժապետեն բռնվող տղու մը կնմաներ։

— Ա՛լ պատանի մը չեմ ես,— կրսեր երբեմն ինքնիրեն,— ու ինչպե՞ս հիմարություն մը գործելու չափ հառաջ գացի. իրավ է ուրեմն որ մարդս իր անձին չի կրնար իշխել եղեր. իմ բոլոր հաստատամտությունս այս կնոջ մեկ ժպտին առջև անհետացավ ու առանց անոր...

Իրիկուն մը Սուրբիկ Տիգրանի առաջարկեց միասին շրջան մ'ընել պարտեզին մեջ. վերջալույսն իր բոլոր շքեղության մեջ և պարտեզն ամայի ու խորհրդավոր էր։

— Վշտացար ինծի դեմ, այնպես չէ՞,— հարցուց հանկարծ Արամ էֆենտիի կինը։

— Բնավ, տիկին, ընդհակառակն շնորհապարտ եմ ձեզ։

— Նախ և առաջ, տիկին, ձեզ և ասոր պես պաշտոնական բառերը վերցուր ու պարզապես Սուրբիկ ըսե ինծի առաջվան պես, որպեսզի չի սրդոդած լինիլդ հասկնամ։

Երիտասարդը քիչ մը վարանեցավ։

— Միթե չափազանց մտերմության հետևանք չէ՞ր իմ սխալմուն-

քրս,— ըսավ նա,— դուք պետք է ուզեք որ այս ձեռակերպությունները մնան ու պատնեշ մ'ըլլան իմ տկարությանս դեմ։

— Ո՛չ, Տիգրան, առաքինությունն արժեք չունի թե որ ճնշման մը արդյունք է. ես քեզմե աղեկ գաղափար ունիմ քու սրտիդ ազնվությունը վրա ու քու մտերմությանդ կորուստովը չեմ ուզեր իմ հանգստությունս փոխարինել. մոռցիր ալ այն ժամն ինչպես որ ես ալ չեմ հիշեր բնավ։

Տիգրան չի պատասխանեց։

— Մի՛ կարծեր որ չի մաքառեցա սիրույս դեմ, Սո՛ւրբիկ,— ավելցուց նա քիչ մը վերջը,— երեկվընե չէ որ անբացատրելի իշխանություն մ'ունեցար իմ վրաս դուն, որո հետ հավիտյան անհաշտ ու ոխերիմ թշնամի մնալ պարտեի. ես անոնցմե չեմ որք իրենց հաճույքին, թերևս երջանկության համար ուրիշի երջանկությունը կգողնան ու տունը կկործանեն. ինքզինքս չեմ ուզեր արդարացնել վայրկյան մը սխալելուս. դուն ինծի շուտով ճանչցուցիր պարտականությունս, որուն համար ալ ավելի... կհարգեմ զքեզ. իսկ դուն,— և Տիգրան հառաչեց այս ըսելով,— բնա՜վ, ո՜հ, բնավ լսած մի՛ ըլլար իմ դժբախտ սիրույս խոստովանությունը։

— Հաշտվեցանք ուրեմն ու տուն դառնանք։

Այսպես վերջացավ այս խոովության սկզբնավորությունը. սակայն ուրիշ դժբախտություն մը շուշացավ այս ընտանյաց գլխուն։

Արամ էֆենտիի գլխի հիվանդությունը բոլորովին անհետացած չէր ու հանկարծ նոր ձևով մը երևան ելնելով խիստ ծանր կերպարանք մ'առավ քիչ օրվան մեջ։

Խնամքները չպակսեցան. Խոսրով հիվանդատես եկավ ու Ենի-Մահալլե դառնալուն ծանոթները զինքը շրջապատեցին իբրև թե տեղեկություն մ'առնելու համար հիվանդին վրայոք. կեղծավոր կարեկցություն, որով քողարկված էր հիվանդին կնոջ վրա տարածված հետաքրքրությունն. անշուշտ երևսի վրա թողած էր իր ծերունի ամուսինն, երիտասարդ տարփավորին հետ զբոսնելու համար։

Կիներն ու հատկապես պառավները նշանավոր էին իրենց հավաքած տեղեկություններով։

Հիսունոց գիրուկ կին մը որո երեսին խորշոմներն անհետացնելու համար կատարված ջանքերն ապարդյուն մնացած էին, լրագրաց մեջ կարդացած խաբեբա դեղերեն գանգատելե վերջը կպնդեր, որ Արամ էֆենտիի տունեն ելած սպասուհի մը թանկագին մատնամասնություններ բերած էր իրեն, մատնամասնություններ, որք պայծառ, պայծառ չէին կրնար լավել։

Բամբասող հետաքրքիրներուն սիրտն անհամբերությենե բաբախեց։

— Հոգի՛ս,— կգոչեր նա,— կարգված կիներն աղջիկներե ավելի կատղեր են հիմա. լսվա՞ծ բան է ասիկա որ գիշերն ի լույս ձգես հիվանդ էրիկդ մինակը շարշարվի ու դուն պարտեզին դռնեն դրացի երիտասարդին տունն երթաս։

Ունկնդիրներն իբրև թե չի հավատալու շարժում մ'ըրին՝ չարլեզու պառավը զայրացնելու ու ա՛լ ավելի խոսեցնելու համար։

— Չե՞ք հավատար,— կրկնեց գիրուկ կինն աշխուժիվ,— չե՞ք հավատար, կուզե՞ք որ Մարիամը կանչեմ ու ձեր դիմացը խոսեցնեմ։

— Վրայեն շնորհքով կին մը կերևա, մեղա՜, ալ մարդ իր տեսածին ալ խաբվելու չէ,— վրա բերավ անդիեն սիկառի թուղթի պես նիհար ու թափանցիկ կին մը, որ բուրդի ու բամպակի անհրաժեշտ պաշարով մը բեռնավորած էր ամեն ատեն։

— Ատանկները շնորհքով կերևան վրանուն։

— Ո՞վ կսիրե եղեր,— հարցուց քառասունն անցուկ աղջիկ մը, որ ամուսնանալե հուսակտուր, ա՛լ պառավներու կարգը բազմելու իրավունք ուներ։

— Փաստաբան է, ի՞նչ է, գիշեր ցերեկ իրարու տունն են եղեր։

— Այս տեսակ կիները բոլոր իգական սեռին ալ պատվույն կդիպչին,— ավելցուց արդար զայրույթով երիտասարդ ու գեղանի կին մը որո սիրահարական արկածներն երեսին վրա ներկված գույներուն չափ բազմաթիվ էին։

Ուրիշներ կպնդեին թե իր կնոջ մեղապարտությունն հաստատվելուն վրա Արամ էֆենտի հիվանդացեր էր. թե խեղճ մարդն ամեն տեսութենե զրկված, գրեթե բանտարկված էր. շատախոս երիտասարդ մը՝ ականջն ի վար փսփսալով խորհրդավոր ձևերով կպատմեր թե իր բարեկամներեն մեկն Արամ էֆենտիի բյուշկին մոտեն անցած ժամանակ գիշերային ժամադրությանց հանդիպեր էր։

Այս կերպ էին ահա խոսակցություններն հասարակության մեջ. այս բամբասողներեն գոնե մին՝ բան մը գիտե՞ր կամ թե ինք կհավատա՞ր իր ըսածներուն. բնավ։ Նախանձը մեկ կողմեն, հետաքրքրությունը մյուսեն միացեր էին զրպարտությունն ու քսությունը. ծավալելու այնպիսի անձերու դեմ զորս թերևս շիտակ շիտակ չէին ճանչնար։

Երիտասարդ կինը մեծագույն հանցավորը, թերևս ոճրագործ մ'էր. ամենքը ծերունի ամուսնույն կգթային ու կկարեկցեին միայն։ Գուցե հարկ էր ջանք մ'ընել զայն իր անհավատարիմ կնոջ ձեռքեն փրկելու համար։

Այս տեսակ են ահա այն սարսափելի տարաձայնություններն, որք փոխանցիկ ու քստմնելի հիվանդության պես բերնեբերան տարածվելով մարդուս պատվույն կդպչին, կհալածեն ու շատ անգամ կխորտակեն թաքուն, համառ ու անողոք ամբաստանություններ որո դեմ ամբաստանյալն ինքզինքը արդարացնելու միջոց չունի։ Մարդոց ներքին կենաց մասին հասարակաց կարծիք ըսված բանն՝ ի բացակայության տրված վճիռ մ'է որ առանց դատապարտելույն հաղորդվելու կգործադրվի։ Բավ է որ զրպարտիչ բերան մը բացվի մեկուն դեմ ու դատապարտությունը ժամանակի խնդիր մ'է միայն և որո դեմ զրպարտյալը բողոքելու իրավունք չունի։

Այս կերպ էին ահա հասարակաց կարծիքը Սուրբիկի մասին։ Պարկեշտության, մաքրության նշույլ չունեցող անառակուհիներ չէին կրնար անտարակույս անոր առաքինության հավատալ. սեր ճերմակին գոյության չի կրնար հավատ ընծայել. այս եղած է միշտ աշխարհիս օրենքը։

Անդին հիվանդը կտառապեր ու կդարմանվեր. խեղճ մարդուն հիվանդությունը մահատու ու սարսափելի կերպիվ փոխանցիկ ախտ մ'էր. խոհեմությունը կպահանջեր զգուշություններ ձեռք առնուլ անոր քովը մոտեցված ատեն. բժշկաց պատվերը խիստ ու բացորոշ էր. Սուրբիկ միայն չի ճանչցավ այդ արգելքն զոր իր պարտականության հակառակ դատեց. իր մանկութենեն ի վեր դժբախտ ու ճակատագրեն հալածյալ՝ քաջությամբ, գրեթե ուրախությամբ նետվեցավ այն վտանգին մեջ, որ այնչափ դյուրավ կրնար զինքն ալ ի միասին գերեզման տանիլ։ Ո՞չ ոք գիտցավ երբեք այս մանկամարդ կինն առաջնորդող գաղափարը. փոխանցման վտանգը տարաբախտուհին հրապուրեց. ազգական, բարեկամ իզուր խրատեցին կամ սպառնացան. Սուրբիկ անդրդվելի մնաց. Տիգրան միայն բան մը չըսավ, մինչդեռ բժիշկներն ապշած ու սքանչացած կմեկնեին ամեն անգամ։

Միայն իր զավակներն հեռացուց ու ինքը գիշեր ու ցորեկ սպասուհվո մը օգնությամբ հիվանդին քովեն չբաժնվեցավ։

Հիվանդության չորրորդ-հինգերորդ օրերն Արամ էֆենտին անճանաչելի էր. անհամար ուռուցք ու պալարներ, սև ու կապույտ, անոր դեմքն ու ճակատը պատեցին. աչերը փոսն իջած ու երեսին ուռուցիկ կույտերուն մեջ թաղվելով երկու փայլուն կետերու փոխվեցան. շրթունքքն իրարմե հեռու ու բոլոր գլուխն ահավոր ու քստմնելի երևույթ մ'ստացավ։

Սարսափելի ախտը մեկ քանի ավուր մեջ այս աստիճանի կերպարանափոխ ըրած էր հիվանդը. սպասուհին վախցավ ու առավ քալեց ու Սուրբիկ մինակ մնաց հիվանդը դարմանելու ու սփոփելու համար։

Մինա՞կ. ոչ սակայն. քանի որ Տիգրան առտու ու իրիկուն հոն էր. բժիշկները կհրավիրեր, դեղերը կպատրաստեր ու տունեն դուրս հիվանդին վերաբերյալ բոլոր հոգերը կմտածեր։ Նա մանավանդ Արամ էֆենտիի նեղությունը գուշակելով, առանց Սուրբիկի զգացնելու, Արամ էֆենտիի մեկ պահանջքը գանձած լինելու պատրվակով դրամական օգնություն մը կներ ու վերջապես այդ մահու ու սարսափի օրերուն մեջ պահապան հրեշտակի մը պես կհսկեր այդ անօգնական ընտանյաց վրա։

Բժիշկներն հետզհետե ձեռք քաշեցին. հիվանդին վիճակը բոլորովին հուսահատական ու անոր ավերյալ դիմաց տեսիլն արհավիրալից դարձավ։

Անտարակույս նախախնամության անքննելի մեկ գաղտնիքն էր, որ այս դժնդակ ու զարհուրելի ախտն այսքան բարի ու պարկեշտ մարդու մը վիճակած էր. հիվանդին խելքը զլուխն էր միշտ. վերջին օրերուն, երբ որ ինքն ալ վերահասու եղավ իր վտանգավոր կացության, վարանում մը տեսնվեցավ այս մարդուն վրա. ըսելիք մը ուներ ու չէր կրնար կարծես մեկու մը հայտնել. Սուրբիկը միայն տեսնելով միշտ իր քովն, իր արդեն անհանգիստ խղճմտանքը բոլորովին վրդովեցավ. ամենքն, եղբայր, քույր կամ ազգական, քոլերայե փախելու պես, առանց ետևին դառնալու, ա՛ռամի խույս տվեր էին ու միայն այս երիտասարդ կինը մնացեր էր մինչև վերջն հաստատ իր սիրույն ու հավատարմության մեջ. այն ատեն մտածեց թե որքան ծանր պարտքեր ստանձնած էր այս մատղաշ ու փափուկ արարածին դեմ, զոր դեռ տղա հասակեն աններելի անխոհեմությամբ մը իր կենաց բոլոր ծերության ու տառապանացը մասնակից ըրած էր. մտածեց նաև թե ո՞ւսկից կճարեր բժիշկներու ամենօրյա տրված գումարները, վասնզի իր չնչին խնայողություններն հիվանդության առջի մեկ երկու ավուր մեջ սպառած էին անշուշտ։

— Սուրբիկ,— ըսավ մանկամարդ կնոջն որ աթոռի մը վրա ու անկողնուն մոտը նստեր էր, քնահատութենե թալկահար ու դժգունած,— ստակ մնացած չէ քովդ. իմ սեղանավորս կա Պոլիս, պետք է մեկ երկու ամսական կոտրել տալ այս օրերու համար։

— Բայց ստակի նեղություն չունինք,— պատասխանեց նա,— ատեն չեղավ քեզի իմացնելու որ հույն վաճառականին վրայի առնելիքներդ Տիգրան էֆենտին գանձեց։

— Ո՞ր հույն վաճառականն,— հարցուց հիվանդը մտախոհ։

— Դուն գիտես անշուշտ. որո՞ւն վրա հարյուր բան ոսկի պահանջ ունիս։

Արամ էֆենտի մեկու մը վրա այս տեսակ պահանջ մը չուներ ու անմիջապես գուշակեց այն չափազանց փափկության զգացումն, որով Տիգրան դրամական օգնություն մ'ընդունել տալու համար այս ստախոսության դիմեր էր. բան մը չ'ըսավ, բայց աչվընները լեցվեցան։

— Եղբորմե մը ավելի է մեզի Տիգրանը, Սո՛ւրբիկ, գիտցած ըլլաս,— մրմնջեց միայն։

Իրիկունը երիտասարդն եկավ տրտում ու տխուր. հետևյալ օրվան համար բժիշկները նոր խորհրդակցության մը հրավիրեր էր. շատերը մերժեր էին գալու. և ոչ մին ծածկեր էր հիվանդին մոտալուտ վախճանն. ասով հանդերձ Տիգրան համառեր էր զանոնք կանչելու համար։

Հետևյալ օրը հիվանդը բոլորովին ծանրացավ. իրիկվան դեմ Տիգրանը տեսնել ուզեց. հինգ րոպե վերջ երիտասարդն անոր անկողնույն մոտն էր։ Սև վարագույրներ կարգիլեին պատուհանեն եկող լույսն, որուն չէին կրնար այլևս դիմադրել հիվանդին տկարացած աչքերը. գերեզմանի պես մթին ու սգավոր սենյակ մ'էր. հիվանդը գլխով նշան մ'ըրավ կնոջը զինքը մինակ թողլու համար ու Տիգրանին դառնալով.

— Իմ վերջս մոտ է ալ, Տի՛գրան,— ըսավ հազիվ լսելի ձայնիվ, ու տեսնելով որ երիտասարդն ընդմիջելու շարժում մը կընե,— ո՛չ, ո՛չ,— ավելցուց նա,— խաբվելու պետք ունեցողներեն չեմ ես... շնորհակալ եմ քեզմե, ճշմարիտ որդի մ'եղար ինծի իմ կարոտության օրերուս մեջ... քեզ ի պես ներ շատ չեն գտնվիր...

Հոս հիվանդին ձայնը մարելու մոտ երևցավ.

— Զավակներուս ապագան չապահովված կթողում ու կմեկնիմ ու այս ցավը շատ մեծ է հոր մը համար... կուզեմ որ զավակներուս հսկես, Տիգրան... կհասկնա՞ս, զավակներս որբություն չի տեսնան...

Տիգրան իր արցունքը չի կրցավ բռնել ու հեծկլտալով արտասվել սկսավ։

— Վերջին ու գերագույն խնդիրք մ'ալ,— մրմնջեց հիվանդը շնչահատ,— կինս երեսես չի խնդաց մինչև այսօր, իմ մահվամբս այն ալ կարոտ ու... աղքատ կմնա... քսանհինգ տարեկան այրի կթողում ահա զինքը... դուն պաշտպանե անիկա... այս քաղաքը մի՛ նստիր...

Ոգևարին խոսքերն անհասկանալի դարձան, բայց հանկարծ վերջին ճիգ մը ընելով.

— Մի՛ մոռնար, Տի՛գրան, իմ զավակներս քու զավակներդ թող ըլլան ու դուն երջանիկ ըրե Սուրբիկը...

Օրհասականին ձայնը կտրեցավ ու անկից վերջը խղդուկ հոնդյուն մը միայն լսվեցավ. քիչ մ'ատենեն ամեն ինչ վերջացած էր։

Ութ օր վերջը բոլոր Վոսփորի ու Պոյուք-Տերեի մեջ խոսակցությունն երկու դեպքի վրա կկենտրոնանար. այն է Արամ էֆենտիի մահվան ու Խոսրովի կնոջ փախուստին վրա։

Եվգինե ի վերջո Մարեմյանե ձանձրացած, խուվաթ սպասավորի մը հետ սիրահարած ու ամուսնական հարկեն չված էր պարզապես։

Խոսրովի հաջողության աստղը շատոնց ի վեր խավարեր էր, Եվգինեի փախուստը վերջին հարվածն եղավ անոր. իր ընտանեկան արկածները բերնե բերան զրուցվելով իր դիրքին ալ վնաս տվին, ու անոր խոստացված պաշտոնը չի տրվեցավ։ Պաշտոնեն ու ապրուստե զուրկ, տունը կործանած, ամենուն ծաղրին նշավակ դարձած, Խոսրով օր մը մեկնեցավ Պոլսեն առանց մեկու մը ձայն տալու ճիշտ ինչպես որ Եվգինե ալ իր տունեն մեկնած էր։ Ո՛չ ոք կրցավ անոր ո՛ւր երթալն իմանալ, ոմանք կպնդեին թե Ամերիկա կգտնվի նա այժմ ու բաղդատական միսիոնար եղած է, անտանելի աղքատության ու տառապանաց մատնվելե հետո. ուրիշներ կհարեին թե նա իր հայրենիքը խարբերդ դարձած է։

Այսպես հեռացավ այս մայրաքաղաքեն այն երիտասարդն, որ պարտեր գուցե բնավ ոտք չի կոխել հոս. բախտը՝ վայրկյան մը ժպտեցավ անոր իր դառնությունը վերջեն ավելի սաստկությամբ զգացնելու համար։

Իսկ Տիգրան Արամ էֆենտիի մահվանեն մի քանի օր վերջն իր գույքն ու կարասիքը վաճառելե հետո, Սուրբիկի ու անոր զավակացը հետ Ադրիանուպոլիս երթալու համար ճամփա ելավ. վայրահաչ բերաններն այս ուղևորությունն իրենց առջի ամբաստանությանց ապացույց համարեցին։

— Չէի՞ ըսեր ձեզի,— կըսեր այս առթիվ հիսուننոց գիրուկ կինը,— խեղճ մարդուն մահվան պատճառ եղան ու քառասունքին չեն սպասեր անգամ. այս տեսակ սեր տեսնված չէ դեռ. ամեն մարդ շատ բան ըրած է, բայց ամոթը մեկդի թողած չէ աշխարհի առջև։

— Առաջուց ի վեր մարդ չէին սեպեր անոնք,— ավելցուց դրացի խոսակից մը։

Երիտասարդ փաստաբանն երբեք կարևորություն տված չէր այս թունավոր լեզուներուն. նա՝ Ադրիանուպոլսո մեջ երկաթուղվո կայարանին քով, Քարաղաճի դաշտին մեջ առանձին տան մը մեջ կբնակի. ըն-

դարձակ պարտեզ մը ունի զոր կմշակե և ուր կզբոսնու. երբեմն աղքատ ու կարոտ մարդոց դատերը կվարե ձրիաբար. այդ կողմերն ամենքը կճանչնան հարուստ փաստաբանն, ինչպես կանվանեն զինքը բարեմիտ գյուղացիք։

Բայց առջի անփույթ ու զվարթ երիտասարդը մնացած չէ. հիմա մտախոհ ու տրտում մարդ մ'է. մորուք թողած է ու սպիտակ թելեր կանուխեն անոր մազերուն մեջ կտեսնվին։ Խիստ քիչ անգամ անցելույն վրա խոսք կընե։ Արամ էֆենտիի վերջին կամքն հարգած է. անոր զավակներն իր զավակներն եղած են, վասնզի Սուրբիկ իրեն կինն է։

<1886>

ՆԱՐԴԻԿ

Վեպ

Այն առտուն ժամը չորսին, սովորականեն ուշ եկավ խմբագիրը. Օրթագյուղեն քալելով եկած էր համբելով ճամփուն ծառերը, անցնող թրամվայները. տունը՝ Նոյեմի իր աղջիկը հիվանդ անկողինն էր ու չէր կրցած բժիշկ կանչել. տպարանին մեջ որ գրասենյակ էր միանգամայն, իր երեք գրաշարները տեսավ մելամաղձիկ գլուխնին կախած քառակուսի խորշերու վրա, ջուրե զրկված արևահար բույսերու պես. իր օգնականը բացակա էր։

— Ի՞նչ ունիք առջին երեսին համար, պարոն Ատոմ,— հարցուց անանցմե մեկուն։

— Ոչինչ,— պատասխանեց գրաշարը առանց գլուխը վեր տանելու

— Ոչինչը՞ կհրատարակվի՞։

— Մեր բրածը ի՞նչ է արդեն։

Խմբագիրը նեղացավ.

— Պարոն Ատոմ, անհամ խոսքերդ մտիկ ընելու ատեն չունիմ։

Ղալաթիո նեղ, ցեխոտ մեկ փողոցին մեջ, ավերակ շենքի մը ոչ թե մեկ հարկը, այլ ճիշտ տանիքին տակ, խավար և ընդարձակ տեղ մ'էր այս տեղը ուր Նփուատ լույս կտեսներ շորեքշաբթի և շաբաթ օրերը։ Հիմա այդ լույսը երկու փոքրիկ պատուհաններեն, անթափանց դառնալու չափ աղտոտ ապակիներեն անցնելով, փոշիներով ծանրացյալ երկու ծուռ ու լուսավոր սյուներ կկազմեր, որ դուրսեն ու բարձրեն կուգար, գետինը տախտակամածին վրա փակչելու համար։

Անգին տարածվող հարատև մշուշին մեջ շալնյի ձևով երկու գրասեղաններ, որոց երկկողմանի զառիվայր տանիքը քառակուսի բազմա-

թիվ խորշերով ծակծկված Եփրատին գիրերը կպարունակեն, խմբագրին բոլոր գույքը և բոլոր հարստությունը 10, 12, 14 բունբոնոց գիրեր, մաշած, տաշված, իրենց տիրոջ պես կակուղցած կապարի հատիկներ որոնք շողոքորթություն կրուրեն։

Պատերը իրենց վտիտ ու սևաթույր մերկության մեջ տեղ-տեղ միայն սքողված են Եփրատի, Տիգրիսի, Առավոտի չի ծռված թիվերով, տարօրինակ լրագրական սանդուխ մը, որ Գասպար Քաքմաճյանի բոլոր պատմությունը, անկումը, իրագիտության դասի մը ձևով կբացատրեն։

Տպագրելու նյութեն ստակի դարձավ խնդիրը.

— Այսօր ստակ կուզենք,— սկսավ գրաշարը։

— Այսո՞ր, անկարելի է. գալ շաբթու։

— Դիմանալու կարողությունը չունինք,— գոչեցին երեքը մեկեն,— հասկցա՞ք, Գասպար էֆենտի, դիմանալու կարողություն չունինք։

Սեղաննին թողուցին խմբագիրը պաշարելով չորս կողմե։

Ո՞րքան ատեն ի վեր կխաբեր, կխաբխբեր զանոնք, միշտ բաժանորդներե, ծանուցումներե գալիք ստակը անոնց տալու խոստումով ու ինք առնելով շարունակ այդ դրամները։

Այս աղքատության արձաններեն շրջապատված խմբագիրը չի մտածեց այն վայրկյանին իր հավասար կերպով ողորմելի եղող կացությանը, իր հիվանդ զավկին որ անխնամ կմնար երեսի վրա, ու այս մարդիկը մխիթարել ջանաց զորս իր դժբախտությանը, ձախորդությանը կապած էր։

— Տեսնենք, աստված մեծ է. Շամալյանի, Տեմիրճյանի ընկալագրերը ձեզ տամ, գացեք գանձեցեք։

Համոզելով, քաղցրությամբ, ցավակից բարեկամի մը պես խոսեցավ այս մարդոց, ու ամենքը խմբագրական գործերը թողած մեջտեղ դրին զիրենք հալածող ձախորդություններին, և ի դերև ելլող հույսերնուն բոլոր դառնությունը. խմբագիր ու գրաշար չի կար ալ. չքավորությունը ամենքը կմիացներ, կհավասարեցներ այս պահուս։

Ատոմ մտերմացած՝ խմբագրին տան վիճակը հարցուց և Գասպար էֆենտի չի կրցավ իր զավկին հիվանդությունը պահել անոնցմե։ Հիվանդության վրա ամենքը ցավեցան, դարմանող բժիշկը հարցուցին և խմբագիրը դեռ բժիշկ չի կրնալ կանչելը խոստովանեցավ։ Հետո իր խոստումը ի գործ դնելով այս անգամ դողդոջուն ձեռքով մը գործավորներուն երկնցուց գրպանին խորեն հանելով ծալված ընկալագրերը։ Հիմա գրաշարները կզղային այսքան նեղելնուն իրենց խմբագիրը ու իրենց երկնցող քառածալ փոքրիկ թղթերը զիրենք կամչցներ։

— Ձենք ուզեր, Գասպար էֆենտի, դուք առեք։

— Ձէ, չէ՛, դուք ալ շատ նեղն եք։

Եվ այս մթին ու անծանոթ խորշին, այս թշվառության անկյունին մեջ պայքար մը տեղի ունեցավ. մին՝ բռնանալով տալու համար և մյուսները համառելով իրենց մերժմանը վրա. այն ատեն այս խմբագիրը՝ սովորաբար պոռոտախոս ու ցույցի համար ապրող մարդը, այս անհոգ ու անզգա մուրացիկը, այս գերազանցապես անտարբեր մարդը փղձկեցավ և արցունքի կաթիլ մը թրջեց ձեռքը մնացող ընկալագրերը։

Ջուր բերին, քաջալերեցին զինքը.

— Առջի երեսին համար անցյալ օր շրջանավարտ դպրոցական մը ութը սյունակ հոդված մը բերած էր հրատարակության, այն հոդվածը կշարենք, ներքինները Օրազիբեն կառնենք, թերթոնը տպված է արդեն, հազիվ հիսուն տող կպակսի, ան ալ Արամյան օրացույցեն օգտակար խրատներ կառնենք, կամբողջացնենք։

Կդյուրացնեին գրաշարները թերթին աշխատությունը, տեսնելով իրենց տնօրենին անձկությունը. անոր աղեկ օրերը վայելած էին ու նեղության պիտի համբերեին անշուշտ. վատություն չէին կրնար ընել. և խմբագրեն զաղտնի, իրենց մեջ, ճար մը մտածեցին առջի շաբթվան դուրս երթալիք Եփրատները խրկելու համար որոնք փոսթայի ծախք չբլլալուն, հոն մնացեր էին անկյուն մը նետված, փոշիներու տակ։

Քաքմաճյան՝ իրեն ցույց տրված օգնությենեն քաջալերվեցավ, ի բնե լավատես ու հուսալից մարդ էր. միթե Եփրատի առջի օրերը ինքը չէ՞ նորեն այս թերթը հրատարակողը. թե որ քննադատության դարը անցած էր, ուրիշ միջոց պիտի որոներ, ապահովապես պիտի գրտներ, ընդարմացած ընթերցողները ոգևորելու համար։

Այս Քաքմաճյանը, առաջ պարզապես մյուսյու Գասպար, նախ տուներու, հետո ազգ. վարժարաններու մեջ հայերենի, ազգ. պատմության ուսուցիչ, թողած էր այս ապերախտ ասպարեզը թաղյականներու և հոգի բարձուներու հալածանքեն հուսահատ, ինչպես կըսեր ինքը ամեն դեմը ելլողին, քահ-քահ խնդալով այս բառախաղին վրա որ իրը չէր սակայն։

Պատրիարքարանի գրագիր, վաճառականի տոմարակալ եղած էր ատեն մը. հետո ուրիշ միջոց մը չի գտնելով ապրուստի, հարմար միանգամայն յուր շարամիտ ու բամբասանքի տրամադիր ոգվույն, Առավոտի արտոնությունը խնդրեր և առեր էր. լրագրությունը միայն գտնելով դյուրին և անաշխատ արվեստ որ անցյալ նվաստության վրեժը կլուծեր ամենեն։

«Չի պիտի վարանինք երբեք մատնանիշ ընելու ամեն զեղծում, ուր որ ալ հանդիպինք»։ Այսպես կսկսեր նորեկ խմբագիրը և այս խոստումը սպառնալից բան մը ուներ իր մեջ։

Ասպատակելու, քանդելու հայտնի որոշումով այս թերթը կսկսեր հրատարակվիլ։

Առջի թերթն շփոթեցավ. ո՞ւսկեց սկսելու էր. այնքան ըսելիք ուներ և Առավոտը անբավական կերևեր իր պահանջումներուն. հետո ինքզինքը ժողվեց և վեց խմբագրականով Քաքմաճյան ամենուն ալ ըսավ իր ըսելիքը, զորս այնքան երկար ատեն զսպեր և պահեր էր իր փոքրիկ սրտին խորը, շղթեալ կաթսայի մը պես, ու շունչ մը առավ երկար, հաղթություն տանող մարդու գոհունակ ու ազատ շունչը։ Թերթը աղմուկ հանեց. Գասպար Քաքմաճյանի անունը ամենուն բերանն էր շատեր՝ հետաքրքիր տեսնել կուզեին զինքը։

Յուր ազգային տեսությունները ամփոփ պարբերություններով, ջղուտ ոճով գրված, դանակի պես հատու, քացախի պես դառնահամ էին. ութը տուչի մեջ ամբողջ հայոց ազգը դատապարտելու հնարքը կգտներ. հակասություն մը միայն կար որ բնավ չէր հասկցված. այս շատախոս մարդը լակոնական ոճը կսիրեր. սովորաբար երկայրաբանությամբ և խրոխտ բնաբանով մը կսկսեր անհեթեթ եզրակացությամբ մը վերջացնելու համար։

Օր մը Առավոտի մեջ, այժմյան Սիրատին նախահայրը ելավ գրեց. «Սկզբունքը՝ կյանք ու գոյություն կնշանակե. և Խասգյուղի թաղականները սկզբունք չունին, վասնզի ամեն օր իրարու հակառակ որոշումներ կուտան, ուրեմն Խասգյուղի Թաղ. խորհուրդը գոյություն չունի». և կհրավիրեր թաղեցին նոր ընտրություն կատարելու համար։

Եվ հետևյալ օրը Օրթագյուղ փողոցին մեջ ծանոթ մը նշմարելով հեռուեն ձեռքով ոտքով նշան կրներ, կկանչեր կկեցներ մարդը, որուն հետ հազիվ բարև մը փոխանակած էր մինչև այդ պահուն, ու ինդալով ուսին զարնելով, վազեմի բարեկամի մը պես իր բերկրության մասնակից ընել կուզեր զայն։

— Կարդացի՞ր Առավոտը, ջախջախեցի թաղականները։

Այնպես որ ամենքը ջախջախելով, փշրելով, ամբողջ հայոց ազգը ալյուրի վերածած բլայու էր։

Ընթերցողները տրամաբանական նրբությունները չէին հասկնար, բայց Առավոտը կառնեին սիրելով անոր վիճաբանող ու կռվարար հոդվածները և իրիկունները շուկայեն վերադարձին էնաֆները կգնեին զայն անհամբեր, գիտնալու համար թե որի՞ դեմ գրված էր այն օր. մյուս լրագիրները կհարձակեին այս նորեկին վրա ի հարկին խմբագրին անձը, ընտանեկան կյանքը նետելով մեջտեղ ու Քաքմաճյանը ծաղրելի ընելու միջոցներուն մեջ ընտրություն չընելով երբեք։

Ընթերցողները կզվարճանային և Առավոտը կշարունակեր երևիլ. տանը դրացիները նախ զգուշությամբ դիտեցին այս կազեթաճին, որ իրիկունները թուղթերով, լրագիրներու ծրարներով ծանրաբեռնյալ կդառնար տուն ուր անպաշտոն քարոզիչ մը, վռնտված վարժապետ մը սովորաբար հյուր եկած կգտնվեր։

Կինը՝ Ֆուլիկ հանըմ, ատենով վարժուհի մ'էր Քում-Քափուի վարժարանին մեջ ուր մյուսյու Գասպար կդասախոսեր, և տասնևութ տարիի ամուսնութենե մը վերջը մեկ հատիկ աղջիկ զավակ մը միայն եկած էր իրենց առանձնությունը ոգևորելու։

Ֆուլիկ հանըմ նիհար, դյուրաթեք արարած մ'էր, հիմա քառասունի մոտիկ որ գյուղին մեջ կվայելեր էրկանը հարուցած աղմուկին արձագանքը և Առավոտին համբավին կմասնակցեր իբրև կազեթաճին կինը։ Կզգուշանային անոր քով խոսելե, վախնալով, որ հաջորդ օրը լրագիրը չի հրատարակե իրենց բամբասանքն ու սովորական շարախոսությունները։

Խմբագիրը բավական կշահեր ընտանիքը ապրեցնելու չափ, ամառվան ու ձմեռվան գլխարկն ու շրջազգեստը շինելու չափ իր կնոջը ու աղջկան, որ գիշերները իր հոդվածներուն մաքուրը առնելու կաշխատցրներ։

Երկու տարի միայն տևեց այս երջանիկ գոյությունը։ Պատրիարքական փոփոխության մը մեջ, Քաքմաճյան իր հարվածած եպիսկոպոսին ընտրությունը չի կրցավ արգիլել և նորընտիր Պատրիարքը թերթը խափանել տալով պատասխանեց խմբագրին առջի ազգ. տեսությանը, հորում մեծաբան հրապարակագիրը առջի օրեն իրեն դեմ կգինվեր։

Այս առջի հարվածին տակ չընկճեցավ սակայն, այլ իր ամեն բան չափազանցելու տրամադիր մտքովը ինքզինքը լրագրական «նվիրական դատին» զոհը նկատեց, այնպիսի զոհ մը որ ապրելու պետք ունի, վասնզի ընտանյաց տեր է. բարեկամներ օգնության ձեռք կարկառեցին, Մանզումե իր մեծագույն հակառակորդը, այն ատեն հաջողության գեներթը հասած, գովելի վեհանձնություն մը ցույց տվավ հանգանակություն մը բանալով. աղետն ամենեն շատ գրաշարներուն զգալի եղավ. պարապ ու անգործ մնացած խեղճերը՝ գերեզմաններե վտարյալ ուրվականներու պես նիհար ու դժգույն շրջեցան փակ մնացող տպարանին շուրջը։ Յոթն ամիս վերջը Քաքմաճյան Տիգրիսի արտոնությամբ նորեն հրապարակ ելավ, այս անգամ խոհեմ ու շրջահայաց, տեսած պատիժեն խրատյալ։

Օր մը սխալեցավ նորեն։

«Պատ. Քաղաքական ժողովո մեկ սխալը» վերնագրով հոդված մը հրատարակեց ու Տիգրիսի հորդումներն ալ արգիլվեցան. հիմա Եփրատը կհրատարակեր, հայտնելով ամենուն որ սարերը միայն կայծակը կհրավիրեն ու այս անպատեհ փոխաբերությամբ սփոփված որ իր սնապարծության կպատշաճեր, հետզհետե կվարժվեր իր ակամա գործադուլին, գրեթե կսիրեր անոր պատճառած անդորր ծուլությունը։

Այս դադարման օրերուն մեջ, ստակի անձկությունը ավելցած օրն ի բուն կշրջեր Պոլիս, Ղալաթիա, եկեղեցիները ու խաները, ի տես հանելով իր անձը կենդանի պատկերի մը պես, որ հայ լրագրությունը կներկայացներ։

Հոս հոն պարզամիտ գավառացիներ կփնտրեր, կգտներ իր թերթին հավաքածոն առաջարկելու համար իբրև թե հազվագյուտ գրական գանձ մը ծախու հաներ և ձեռքը օդին մեջ երերցնելով ապշած դրսեցիին աչքը խոթելու ձևով, հանդիմանելով զայն, այսպիսի թանկագին բանի մը կարևորությունը չըմբռնելուն համար, կգոչեր.

— Ժամանակակից պատմության էջերն են, զորս տեղ մը չեք կրնար գտնել. ասկից քանի մը տարի ետքը տասը ոսկիի պիտի վաճառեք թե որ ուզեք, բայց ձեզի համար երկու ոսկվո կձդեմ։

Մարդը կվարաներ, ու Քաքմաճյան իր վերջին միջոցը ի գործ կդներ։

— Քրտինքովս, արյունովս գրված են ասոնք, ազգին երեսուն տարվան վաստակավորն եմ, հասկցա՞ր, բարեկամ. գավառացին կամշնար, կվճարեր։

Այս կերպ հնարքներով կապրեցներ տունը, պահելով խրոխտությունը մուրացկանության մեջ. անդադար ծխելով (իր միակ մոլությունը) ու մուխե ամպի մը մեջեն երերցնելով մեծխոսիկ լեզուն, ֆեսը վեր նետած, ճակատը լայն, ամայի. ու մանր աչքերը խոժոռ խոժոռ անթարթ ուղղելով խոսակցին (եթե հարգելու մարդ մը չէր), կարծես թե ըսել ուզեր.

— Դուն ես այս վիճակիս պատճառը։

Ֆուլիկ հանըմ իր խեղճ կինը ընտանի կենդանիի մը պես հնազանդ և համակերպող, վերահաս աղքատության կդիմադրեր, կոկելով, նորելով հիները, ու պարակելով չքավորության զրկումները։ Իր մեկ հատիկ աղջիկը՝ Նոյեմին կուգար կհասներ ճիշտ հորը այս գահավեժ անկման միջոցին իր պատանուհվո ամեն հույսերուն, փափագներուն ոչնչացումը տեսնելու համար։

Վարձով նստած փոքրիկ տուներնին եկեղեցվո ճիշտ դիմն էր. այս դրացիությունը աղջիկին աղոթասեր ու լուսկյաց ոգվույն հարմար էր։

Հայրը իր դժգոհություններով, ադմուկովը կահարեկեր զինքը և ավելի ևս կպարտավորեր մեկուսի և անշշուկ կենալու։

Միակ հաճույքն էր այս աղջկան, իր փոքրիկ սենեկեն որուն բոլոր հորիզոնը եկեղեցվո բարձր պատերովը կսահմանվեր, եկեղեցի եկողները դիտել, ջանալով գուշակել անոնց ժամասիրության պատճառը ու գաղտնիքը. գիտնալով, որ տիկին Շամլյան իր ազուն նշանաուրին համար կուգար, Սուրբիկ տուտուն՝ գյուղին պառավը, տրտնջալու, ամենքը իրենց խնդիրքին համեմատ մոմերու, արծաթ խաչերու, ոսկեթել վարագույրներու խոստումով կաշառելու Նախախնամությունը։ Այսպեսով Նոյեմի մոռնալ, չի տեսնել կուզը իր հորը վրա ծաներացող թշվառությունը, մինչդեռ խմբագիրը հաճույք կզգար կարծես ամեն իրիկուն այս տասնվեց տարու աղջկան հասկցնելով պատմելով իր բոլոր օրվան տառապանքը։

Վերջերը նոր միջոց մը հնարեր էր ստակ շորթելու ամուսնացող երիտասարդներեն։ Առջի Պսակին կամ սուրբ Սարգիսին Պատրիարքարան կվազեր, կարգվելիք անձանց ցուցակը առնելով ընտրություն մը կրներ. հարուստը կգտներ մեջեն և թերթին ճակտին համար հարսանյաց հանդեսին նկարագիրը կուտար Ատոմին որ հետևյալ բանաձևով կվերջանար «երջանիկ ու բարեբաստիկ կյանք մը կմաղթենք նորապսակ ամուսնացողներուն» և կոկիկ ծալքով, կապույտ սիրուն ժապավենով մը զոր Նոյեմի կպարտավորեր հատկապես պատրաստել, Եփրատի այն թիվը տարեկան ընկալագրին կցված հատուկ ցրվիչով կերթար մատուցվելու փեսին գրասենյակը, հարսնիքին երեքշաբթի առտուն։

Թե որ բաժանորդագինը չի գար ինքը կներկայանար գրասենյակ ժպտուն, քաղաքավար, գունաթափ փալթոն կոճկած, բոլորովին պաշտոնական ձևով.

— Արգելք չըլլամ Ձեր զբաղմանց,— կաղաչեմ Ձեր գործը նայեցեք։

Մեղրածորան գգվալից բառերովը, զգույշ և բարեկիրթ վարմունքովը ամշցնելով դիմացինը։

Եվ սեղանին վրա բացված սիկառի տուփ մը նշմարելուն, մտերմանալով տիրոջը հետ.

— Սիկառ մը առնելու թույլ կուտա՞ք։

Մուխին մեջ Քաքմաճյան կխոսեր, չի հուսահատելով ոևէ մերժումե, այլ ավելի ևս քաղցրացնելով լեզուն կհիշեցներ Աստվածաշունչի, Տիգրիսի, Եփրատի անցյալը, միշտ անցյալը, իբրև թե բացակա մարդու մը

իրավունքը պաշտպաններ։ Հետո իրավախոհության կուգար, երկու մեճիտիեով կբավականանար և կմեկներ։

Այսպես կշրջեր փողոցն փողոց, ծխնելույզի մը պես բերանն արձակելով մուխի թանձր ոլորքներ և շարժելով անհամեմատ կերպով երկայն թևերը որոնք կարծես վերջն փակցված էին իր ոսկրուտ ուսերուն. ձեռքերը հաստ, կոպիտ, ավելի գործավորի մի վայելուչ քան թե գրական մարդու, և միշտ կարկառելու ուզելու պատրաստական. երկայն հաստակին վրա փոքրիկ գլուխը հսկա գնդասեղի մը երևույթը կուտար իրեն. քիթը մանավանդ իրմե առաջ կնշմարվեր, ցից ու հառաջապահ, միջամտող ու հետաքրքիր քիթ՝ տիրոջը բոլոր փառասիրությունները, տկարությունները ի ցույց ածելով։

Քաքմաճյան չէր տեսներ այլ կհամբարտար ու կհավաքեր հաջորդ օրվան լուրերը երբ թերթը դադարման մեջ չէր, մանավանդ ամեն գայթակղությունները զորս ժողվելե վերջը կերթար հեղինակները գտնելու, քիչ մը ստակի փոխարեն լռություն խոստանալով և դրամ առնելե վերջը գոհ, երջանիկ, վեր կբարձրացներ պարծենկոտ քիթը և խղճմտանքին վստահ մարդու մը պես կըսեր.

— Ես շանթած ընողներեն չեմ։

Կոտրած, ծռած գրասեղանին վրա կորաքամակ, իր մոլորյալ մտքին անհրաժեշտ եղող սիկառը բերանը, փորձերու սրբագրությունը սկսավ. մերթ ընդ մերթ կընդմիջեր սրբագրությունը լուրերուն շարադրության վրա դիտողություն ընելու համար, չի հավնելով Օրագիրին հայագիտությանը, անոր սխալները ուղղելով։

— Պատվանշան չեն պարգևեր, կշնորհեն. այս մարդիկը հայերեն չպիտի սովրին. տեսե՛ք, տասը տարվան խմբագիր մ'է այս աններելի սխալը գործողը։

Հետո աշխատությունեն ձանձրանալով իր օգնականը հարցուց.

— Գևորգ ո՞ւր մնաց այս ատենս։

Նոր սիկառ մը շինեց ու սերտ ծխելը արդարացուց.

— Մեղմ ծխախոտը վնասակար է։

Կքրտներ այս տանիքին տակ ուր արևուն ջերմությունը շնչառությունը կարգիլեր. հինգ վայրկյան վերջը մեկ կողմ նետեց փորձերը. խոսելու, շաղակրատելու մարմաջեն բռնված՝ Քաքմաճյան Եփրատին համար նոր ծրագիրներ, նոր խորհուրդներ շինեց. թերթը տասը փարայի իջեցնել պզտիկ ծավալով բայց օգտակար պարունակությամբ. թերթոնը վերցնել. ի՞նչ է այս թերթոնը. ֆրանսական վեպը ի՞նչ կհարմարեր մեր բարքերուն. կոմսուհիներու, դքսուհիներու պատմություններ որ մեր երիտասարդաց սրտերը կապականեին. հետո թերթոն բառին չի հավնեցավ, հայերենի կանոնց համաձայն չի գտավ։

Ինքը՝ անավասիկ ինչպես իր թերթը պիտի հրատարակեր. նախ, խմբագրական մը. ի՞նչ նյութի վրա. Քաքմաճյան խորհեցավ, փնտրեց. ազգային խնդիրներու վրա չէր կրնար գրել. ժողովականներուն ծուռ ընթացքը քննադատել մտքեն անգամ չանցուց. կամա ակամա տնտեսական պիտի ըլլար իր հոդվածը, ամենեն առաջ նյութականը. տնտեսական զարգացում մը պետք էր մեզի. խմբագրականեն ետը օրվան լուրերը, դեպքերը, նշանավոր անձանց երթևեկը, Հավասի հեռագրերը. բարձրաձայն կհամբեր նյութերը մատներուն վրա, տողերուն հաշիվը ընելով։

Այս միջոցին իր օգնականը տեսավ, Գալուստյան Գևորգը, որ սանդուխեն վեր կելլեր Աբրահամ աղային հետ, Տեհճյան Մարտիրոս էֆենտիի մեծանուն հայ սեղանավորին, ոչ նվազ մեծանուն սպասավորն, որ խմբագիրը էֆենտիին սենյակը տանելու եկած էր։

— Կուգամ,— ըսավ անոր, և օգնականին դառնալով,— ո՞ւր մնացիր, ի՞նչ լուր։

— Ռուսահայ վաճառական մը եկեր է. շարաթ գիշեր ի նպաստ Նարդիկի ներկայացում կա, ծանուցում պիտի ընենք. երկու ամսեն Տեմիրճյան էլպխին ամուսնությունը։

— Որի՞ հետ։

— Տեմիրճյանին գրագրին հետ։

— Ջրսես որ Շամլյանները պիտի կատղին. Մանչեսթրեն հոս տղանին բերել տալ և չի կրնալ հավնեցնել, սա Տեմիրճյանն ալ գրագրին հանե աղջի՞կը տա. աշխարհք փոխվելու վրա է. Եփրատն ալ պիտի փոխենք։ Իր խորհուրդները, ծրագիրը նորեն պարզեց։

Գևորգ համաձայն էր բոլորովին. ան ալ իր գաղափարները ավելցուց։

— Հայ թատրոնի բարձրացման դատը ձեռք առնենք. աս ալ ազգ. իշխանության դեմ քննադատություն չէ որ արդիլվի, ուզածնուս չափ կգրենք. թատրոն և ոչ պարահանդես. բուռն հոդված մ'ալ գրաբարի դեմ. կտեսնեք, Դասպար էֆենտի, որ խափանման կամ դադարման ամեն պատահականությունեն բոլորովին հեռու եմ. այո՛, կա՛մ գրաբար, կա՛մ աշխարհաբար, խառնուրդ և հրեշային գրականություն չըլլարմին կամ մյուսը։

Քաքմաճյան իրմե ավելի ծայրահեղ մը տեսնելով դեմը վարանեցավ, երիտասարդին երեսը նայեցավ.

— Մի՞ն կամ մյուսը,— հարցուց անոր, գլուխը քերելով,— գրաբարի լավ մասերը առնելո՞ւ ալ հակառակ ես։

— Բոլորովին։

Երիտասարդը իր կլոր կարճ հասակովը հակապատկեր մը կձևացներ խմբագրին երկայն հասակին քով. Թարգմանչաց վարժարանեն շրջանավարտ՝ տարի մը պարապ պտտելեն ետքը, ոչ ոք գնած էր իր ազգային գրականության մեջ ունեցած հմտությունը։

Առջի վաճառականը, որուն ներկայացավ գործ ուզելու համար, անոր ոտանավոր գրելը իմանալուն պես առանց ուրիշ հարցուփորձի ճամփու դրավ զինքը։

Հայկ դյուցազնը, Հոմերոսը, Միլթոնը շար ոգիներու պես ամեն դուռ գոցելու ծառայեցին։

Կեսարացի վաճառական մ'ալ Անատոլու գրվելիք առևտրական նամակի մը նմուշը գրել տվավ իրեն փորձի համար. նորընծա գրագիրը շատ պարզ, շատ հստակ գրած էր ամեն ինչ, բայց առուտուրի մեջ որոշ ու հայտնի բան մը գրելը պակասություն մ'էր. վաճառականին կարծյոքը, մութ, տարտամ, սավերամած գույն մը պետք էր ի հարկին փախուստի ճամփա մը ի պահեստի ունենալու համար. կեսարացին գոհ չի մնաց ու Գերոգ ամեն կողմե հուսակտուր՝ լրագրո մեջ հոդված գրելու ստիպվելով խմբագիր եղավ։

Երկրորդը՝ կեսարացի մը առևտրական նամակի մը նմուշով փորձեց պատանի Գալուստյանին վաճառականական հարմարությունը ու գոհ չի մնաց, նորընծա գրագիրը պարզ ու հստակ գրած էր ամեն ինչ. և կեսարացին կհավատար, իբրև փորձ ռազմագետ, որ ուշիմ գրագիր մը իր նամակին մեջ ամեն գրվելիքը գրելով հանդերձ տարտամ, անորոշ գույն մը ձգելու էր հոն, հարկ եղած ատեն փախուստի, նահանջի ճամփա մը ունենալու համար. ո՛չ, այս տղան շատ կտրուկ, շատ որոշ կգրեր. վաճառականը իր գտած պակասությունը չի ծածկեց բնավ։

— Աղեկ գրված է այս նամակդ, բայց ամեն բան տիպիմաթեա ըսելու է. թե որ զինները իյնան, պետք է որ ազատ ըլլանք ապսպրված ապրանքնիս չառնելու, վնասվելու, կոծանվելու համար վաճառական եղած չենք, կհասկնա՞ս։

Տղան շարադրության այս եղանակին չի կրցավ համոզվիլ. վերջապես առևտրական ասպարեզը չի ժպտեցավ իրեն. շարունակվող անգործությանը մեջ սիրտը նեղացավ, հոդված գրեց, ու խմբագիր եղավ։ Լրագրեն որոշ, կանոնավոր ամսական մը չուներ, բայց իր գտած բաժանորդներուն դրամը ինքը կստանար. անշուշտ հարստանալու համար եկած չէր Եվրատին. բայց հրապարակագրությունը սրտի գոհացում

կուտար իրեն և այս փոշիով, սարդի ոստայններով լեցուն հարկեն կարձակեր դպրոցեն մնացած ծայրահեղ գաղափարներ զորս իրական կյանքի դառնությունն կարդարացներ։

Հիմա իր բարեփոխման ծրագիրը վախ կազդեր Քաքմաճյանին։

— Տակը կամ վրան,— կըսեր երիտասարդը,— լույս կամ խավարմենք բոլորովին աշխարհաբար կհրատարակենք մեր թերթը, իրենց բառերն անգամ պիտի մերժենք, թող իրենք ալ գրաբար թերթ հրատարակեն և ընթերցող գտնեն։

Այս ծանրակշիռ որոշումը տալե առաջ Քաքմաճյան խորհեցավ. սիկառ մը շինեց, վառեց։

Գալուստյան անգամ մը սկսած էր ու չէր կրնար կենալ։

— Ես անցյալ օրվան ներկայացման առթիվ սկզբնավորություն մը ըրած էի, հավնեցա՞ք, Գասպար էֆենտի. դերասանական արվեստը ծաղրելի միմոսություն մը չէ. բարձրագույն բարոյականի և տաղանդի արվեստն է։

Խմբագիրը շատ անգամ ծայրեծայր չէր կարդար իր թերթը։

— Կխորհինք դեռ,— ըսավ երիտասարդին անոր եռանդը չափավորելով,— գուն սա մնացած փորձերը նայե. ես քանի մը տեղ հանդիպելու պարտավորած եմ, տունն ալ հիվանդ ունիմ. աղջի՞կս։

Վերջին բառին վրա հառաչեց, հառաչելու պարտավոր զգալով ինքզինքը։

— Տոքթոր Սիմոնյանը կանչեցեք, շատ ճարտար բժիշկ է, անշուշտ կարևոր բան մը չէ, կանցնի, հոգ մի՛ ընեք, Գասպար էֆենտի։

Խմբագիրը չի կեցավ ալ. սանդուխներեն իջավ ոչ թե ոտքերը տեսնելով միամամ, այլ երկար ժամանակով ստացված վարժությամբ մը, արագ քայլերով շիտակ ճամփեն դեպի կամուրջ կերթար։ Քոնսոլիտ խանին մեջ քոնսոլիտի գինն հասկնալ ուզեց, բայց խլացուցիչ ժխոր մը կասեցուց զինքը։

Ամենքը կպոռային, միավոր, հարյուրավոր, հազարավոր թվանշաններ նետելով օդին մեջ. դուռնեն մինչև երկրորդ հարկը գացող երկաթե սանդուխներուն վրա ամեն ազգե ամեն տարիքե կազմված ամբոխին պայքարը մրրկոտ ծովու մը պես կուտեր կմոնչեր գետնահարկեն մինչև ձեղունը բարձրանալով։ Դուրսեն անոր պարկեշտ երևույթեն ոչ ոք պիտի գուշակեր որ դրամական աշխարհին բոլոր տագնապները, անկումները, մեծությունները այս խանը կերկներ կպահեր իր անզգա որմերուն մեջ։

Ամեն ոք կաճապարեր, ձայներնին խեղդուկ երկու ժամե-ի վեր, մասնակցելնուն համար այս դրամական նվագահանդեսին, վերջին ճիգ

մը ընելով չի կորսվելու հետզհետե բարձրացող այս ահագնալուր եղա-
նակին մէջ ուր թիվերը ձայնանիշերու տեղը բռնած կթվեին։

— Հազար կա։

— Հինգ հազար կա։

— Հինգ հազար ալ կա։

Զեռվրնին շարժելով գլուխնուն վրայն տեսանելի ըլլալու համար բազմութեան մէջ, մեծցնելով թիվերը, առաջարկութիւնները ավելի հրապուրիչ դարձնելու համար. Քաքմաճյան ինքզինքը մոռցավ այս աղմուկին ու անմարմին առուտուրին մէջ. մտածեց որ բաղաքական կարեւոր լուր մը եկած ըլլալու էր այս ասոլճան տակնուվրա ընելու համար խանին հաճախորդները։ Այդ լուրին ի՞նչ ըլլալը ստուգել ուզեց. փիացան հարցուց. տիրող տագնապեն հասատատ ու որոշ գին չիկար. տարբերութիւնները այնքան մեծ և հանկարծական եղած էին, որ ոմանք իրենց գրաֆատունները գոցեր էին վճարման եղանակներուն մէջ այս միջոցը գտնելով ամենեն համառոտը։ Խմբագիրը գոհ մնաց հոս հանդիպելուն և ազատին ամենեն ծանր վայրկյանին հասնելուն համար։

Այս վայրկյանին բոլորովին մոռցած էր հիվանդ զավակը. գանձելիք բաժանորդագիները և Մարտիրոս էֆենտիի հրավերը, հոս մեկ խոսքով հարստացող, աղքատացող մարդոց վիճակը դիտելու զբաղած։

Հանկարծ երկրորդ հարկը տանող երկաթե սանդուխին վրա կանգնած ծանոթ դեմք մը նշմարեց և ամենուն մէջեն սպրդելով անոր քով հասավ։

— Բարև, Ստեփանիկ աղա։

— Բարև։

— Ի՞նչպես, աղե՞կ եք։

Ստեփանիկ աղա կարմրած, ֆեսը վեր, թաշկինակովը սրբելով ճակտին քրտինքները, փոխանակ պատասխանելու իրեն, վարը կեցող մեկու մը կպոռար հինգ մատերը բանալով, կարծես մուր տալու համար։

— Հինգ հազար կա։

— Առի,— պատասխանեցին վարեն։

Հինգ հազար, հինգ հազար ալ, ու վարը կշարունակեր պատասխանել «առի», «առի» խրոխտ շեշտով մը, կարծես թե զայրացնելու համար վերը, ուր վերջին վանկը միայն կհասներ «ոի, ոի» սպառնալից refrain-ի մը պես։

Խմբագիրը կդիտեր զմայլած, աչքերը խոշոր բացած երբոր հիսուն հազարի հասավ ծախածը, Ստեփանիկ աղա կեցավ. հանդարտեցավ, ահագին բեռ մը գացած ըլլալու էր սրտին վրայեն. ֆեսը շտկեց. խոժոռ, բարկացած դեմքը թողուց խմբագրին երեսը նայելու համար. Քաքմաճյան այս բերանացի առուտուրին կհետեր ուշադիր, շունչը զսպած, արդյունքը հասկնալու համար. երբոր տեսավ իր բարեկամը հանդարտած՝ տեսարանը իր կարեւորութիւնը կորսնցուց. մնաս բարով ըսավ. սանդուխներեն վար իջավ. կամուրջին վրա անցագին ուղեցին. տա՞սը փարա. ինչ շնչին գումար քոնսոլիտ խանի միլիոններուն քով. գրպանները խառնեց, փանթալոնին երկու խորշերը բացատական պատասխան տվին. բաճկոնին գրպանները նայեցավ. ոչի՞նչ. վերջին հույսը փալթոյին վրա կենտրոնացավ, իզուր անոր ալ գրպանները նայեցավ, հատակները քննեց և սակայն շատ լավ կհիշեր որ քառորդ մեճիտիե մը և հարյուր փարանոց պիտի ունենար. և անցագինը պահանջող մարդուն քով պզտիկ չի մնալու ջանքով նորեն սկսավ իր անօգուտ խուզարկութիւնը. անշնորհները զինքը կդիտեին. ծանոթներ բարևելով կանցնեին. այո՛, ամենքը կանցնեին. ինքը միայն անշարժ ու զամված կմնար և չէր համարձակեր ետ դառնալ. բայց ո՞ւր էր իր քառորդ մեճիտիեն. հանկարծ խորհնցավ թե կարելի էր առուն Ֆուլիկ հանրմ վերցուցած ըլլար գրպանեն առանց իրեն իմաց տալու. այս շատ հավանական էր. վայրկյանին իր կինը արձակելու անհուն փափագ մը ունեցավ. հետո հիշեց որ քառորդը առջի իրիկուն պարտքի տված էր, իսկ հարյուրնոցին հաշիվը չի գաավ։

Անցագին ուզողը կշարունակեր զինքը դիտել ոտքեն մինչև գլուխը, հին կոշիկեն մինչև յուղոտած ֆեսը, ու այս ապարդյուն փնտռտուրը նկատելով սովորական հնարք մը ձրիաբար անցնելու համար կամուրջը։

Ետ դարձավ վերջապես հեռանալով այս ամոթի վայրեն Ղալաթիո բազմութեան մէջ ոնլերևութանալու համար. իր ճանչվորները կշարունակեին կամուրջեն անցնիլ ազատ համարձակ, իր բերնին չուրերը վազցնելով, որոնց և ոչ մեկեն չի համարձակեցավ տասը փարա ուզել, սպասելով որ բաբեկամի մը ընկերացած ինքը ևս իր կարգին այս անանցանելի գիծը անցնի. ոչ ոք տեսավ որուն հետ այս փորձին ձեռնարկեր ու պարապ գրպաններուն մէջ դեռ թափառող ձեռքերը ընկալագրերուն կհանդիպեին միայն. այն ատեն զայրացավ, տասը փարայի տուրքը անհիմն ու անիրավ գտավ և որոշեց որ առանց զայն վճարելու անցնի կամուրջեն. ի՞նչ կերպով. Ղալաթիո եզերքեն մինչև անցագին ուղելու տեղը տասը կանդունի չափ կրնար հառաջանալ. ատկե պետք էր սահիլ ստվերի մը պես առանց ուշադրություն հրավիրելու. դյուրին, հրապուրիչ երևցավ այս ծրագիրը և ճերմակ շապիկով հոն կեցող սպառնալից ուրվականին դեմ արժանի վրեժխնդրություն մը։

Ոսկեդզյուրի նավակները դիտելու ձև մը առած խմբագիրը անտարբեր, համբաքայլ հառաջացավ աչքին պոչովը դիտելով սպիտակ ուրվա-

կանը, որ իրեն չէր նայեր այս միջոցին. երկու մուրացիկ տղաք ողորմություն ուզեցին իրմէ. հանկարծ կամուրջին քովի երկաթին հենած մարդ մը իրեն պես տասը փարա չի վճարող մը անցագիծեն խույս տվավ բայց ոչ այնքան հաջողությամբ որ պահնորդները չի տեսնեին. երկու ծովային զինվոր եռեւեն հասան ու ետ դարձուցին մարդը։

Քաքմաճյան այս տեսարանեն խրատվեցավ ու ետ դառնալու վրա էր երբ փրկավետ ձայն մը զինքը կանչեց։

— Ի՞նչ կդիտես հոդ։

Խմբագիրը նոր կյանք ստացավ տեսնելով Պասմաճյան Հակոբիկը։

— Ոչինչ. ո՞ր կոդմ, Հակոբիկ էֆենտի։

— Պոլիս։

— Ես ալ. միասին երթանք։

Հակոբիկ վճարեց ստակը. ուշ մնացած էր. կամուրջին կեսեն պատճառ մը առարկեց ու երիտասարդեն զատվելով շուտաքայլ հեռացավ իր բաժանորդները գտնելու համար։

Նախ Զաքմաքճըլար Շամլյաններու վաճառատունը հանդիպեցավ ուր պասմայի ծրարներու ետին պատերը անտես կմնային։ Բեռնակիրներ դրան առջև ձգված վաճառքի հակերը քաշելու կզբաղեին. ներսը պարսիկ վաճառական մը մաս մը ապրանք կսակարկեր հրեայե մը ավելի բծախնդրությամբ. նեղ խանութին մեջ անցնելու տեղ չէր մնացեր. խմբագիրը զգաց որ պատեհ ժամ չէր ստակ ուզելու. ետ դարձավ անկեց Սիրքեճի Տեմիրճյաններուն. հոն հաջողեցավ. գանձապետը դեղնի վրա, ակնոցավոր սիրուն տղա մը, առանց ընդդիմության վճարեց տարեկան բաժանորդագինը. Քաքմաճյան շնորհակալ եղավ ու տեղի անձկության պատճառավ գետնի վրա դիզված երկաթե փողերու վրայեն քալելով, ճշմարիտ լարախաղացի մը ճարտարությամբ հեռացավ։

Ամենեն հուսավետը, Մարտիրոս էֆենտին, վերջի թողած էր, այն մանուկներուն պես որ սիրած կերակուրնին ետքի կպահեն։ Տասը քայլով ինքզինքը Թաշխանի դուռը գտավ, վեր ելավ էֆենտին հարցուց. բազմություն կար։

— Էֆենտին զիս է ուզեր,— ըսավ խմբագիրը,— իմացուցեք. դրան մոտ նորեկ ծառա մը կընդդիմանար այս մուրացիկի զգեստով մարդուն։

Մարտիրոս էֆենտի անկյունը բազմոցին վրա նստած, սովորական անմատչելի անձը չէր. Քաքմաճյան կզարմանար. ո՞ւր էր այն մարդը, որ դրամ բառին դ գիրեն կսկսեր երեսը կախել, հազար առարկություն հարուցանել ստակ չի տալու համար. թերթը կանոնավոր կերպով չէր խրկվեր, լուրերը երկու շաբաթ առաջվան լուրերն էին։

Այսօր ընդհակառակն իր դեմքը չի մթագնեցավ, լուր հարցուց խմբագրեն, գովեստ խոսեցավ Նփրատի վրա. Քաքմաճյան իր առջի սիկառը ուզեց։

— Դուք հոտավետ ծխախոտ ունիք, սիկառ մը կաղաչեմ.— էֆենտին ծխախոտը ներկայացուց և հառաջիկա շաբաթ օրվան ներկայացման առթիվ Նփրատի մեջ գեղեցիկ հոդված մը ուզեց խմբագրեն։

— Անոր համար կանչեցի Ձեզ։

— Գլխուս վրա։

Հիմա այս ազնիվ ընդունելության պատճառը հասկցած էր։ Օսմանիեի թատրոնին առաջին դերասանուհվույն նպաստի ներկայացումն էր։

— Տաղանդավոր աղջիկ մ'է այս դերասանուհին։

Մարտիրոս էֆենտին ազգին արվեստավորները քաջալերելու կոդմըն էր։

— Ի՞նչ է օտար թատրոններու տրված ստակը. մեր ազգային թատրոնը, մեր դերասանները հաղար անգամ օտարեն բարձր են։

Քարմաճյան գիտեր այս ազգային թատրոնի համար ցույց տրված խանդաղատանքին գաղտնիքը, ու էֆենտիին տկարությանցը տեղյակ՝ հիմա կթողուր իր պաշտոնական նստվածքը, սիկառին մուխը ռունգներեն կարձակեր, քրտնած ձիու մը պես, սենեկին կես լույսը անթափանց մառախուղի մը վերածելով. և բարև բռնող ձեռքը քաված, ոտքը ոտքին վրա հանելով, խմբագիրը տեսակցությունը շարունակեց։

Շաբաթ գիշեր Օսմանիեի թատրոնը արտասովոր բազմությամբ կլեցվեր. ահագին gazome'tre մը կարծես այս շենքը, կամ մեծածավալ փեթակ մը, որուն փոքրիկ դռնեն մտնողներուն վերջը չի գար։ Շաբաթե մը ի վեր թատրոնին մուտքին, փողոցի պատերուն, տախտակներուն վրա փակցված դեղին, կարմիր, կանաչ ծանուցումները, լրագրաց հրատարակությունները մեծ գիրերով ՆԱՐԴԻԿի անունը ամեն կոդմ աչքի առջև կդնեն և բազմությունը հրապուրված՝ անընդհատ կուգա գյուղեն, քաղաքեն, հետաքրքիր, տեսնելու համար դերասանուհին, որ իր կատարելիք դերով նույնիսկ իր գոյությունը ի հանդես պիտի բերե։

Քամելիազարդ տիկին պիտի ներկայացվի. պարտիզին մեջ նոր եկող կառքերու թավալումը, խոսակցությունները, տոմսակ ուզողներու ձայնը, անթիվ, թվավոր նստարան, պենեուարի, երրորդ հարկի օթյակ,

աղեկ տեղ մը ընտրելու, շուտ ներս մտնելու ջանքերը՝ բոլորը իրարու կխառնվին։

Ներսը լուսափողփող ու բոլորակ սրահ մը, որուն շուրջը օթյակներու շորս հարկերն կբարձրանան իրարու վրա, դուրս գացող հսկա շոգենավի մը խցիկներուն պես. նոր հասնողները տակավ առ տակավ կտեղավորվին. օթյակներու դուռները անընդհատ կբացվին կգոցվին սաստիկ շառաչմամբ. վերնահարկը, սրահը անհամար գլուխներով կծածկվին. և ամենուն տեղերը որոշող պաշտոնյաներուն ձայները կլսվին շարունակ, տոմսակներուն համաձայն։

— Թիկնաթոռ թիվ 24։

— Նստարան թիվ 37։

Սխալներ տեղի կունենան. իրարու տեղ գրաված ըլլալու բողոքներ կլսվին, և բազմությունը հետզհետե կզետեղվի թատերաբեմին փակ վարագույրին դիմացը. ծանոթներ զիրար կբարևեն գլխով, ձեռքով. մեկը՝ վարագույրին վրայի պատկերին նշանակությունը կհարցունե քովի նստող մարդուն. նվագածուները իրենց գործիքները կներդաշնակեն խժալուր աղմուկով մը ծածկելով բոլոր ձայները և հանդիսատեսներուն անհամբեր մասը ոտից կամ զավազաններու միօրինակ տրոփյունով ներկայացման սկզբնավորությունը կպահանջե. ներկայացվելիք խաղին, անձերուն, դերասաններուն անունները պարունակող փոքրիկ ծանուցումներ ձեռքե ձեռք կշրջին հարցումներու, քննադատությանց տեղի տալով. օթյակներուն մեջ տիկինները վրանոցներն կմերկանան, ձյունաթույր ուսերու, լանջերու, դաստակներու փողփողումը խառնելով եղերքի կարմիր թավիշին։

Տենդոտ, հիվանդագին բան մը կար բոլոր այս բազմության մեջ։

Ամեն ոք, այս ներկայացման գալով, հասարակաց կինը տեսնելու կուգար թատերաբեմին վրա, իր բոլոր հրապույրին ու բոլոր թշվառությանը մեջ։

Այս էր ահա այդ երեկույթին բոլոր ձգողությունը։

Հասարակաց կինը միշտ սովորական ու միշտ հետաքրքրաշարժ բան մըն է։

Անտարբերները կվայելեն, անողորմները կպարսավեն և ողջամիտ անձերը զայն կմեղքնան։

Ժպիտն ու արցունքը դրե՛ք քովե քով, հառաչանքը խառնեցեք զվարթ քահքահներու հետ, այդ է ահա հասարակաց կինը. երիկ մարդիկ

երբեք չպիտի հասկնան այս բազադրությունը, բայց երբեք ալ ազատ ու զերծ չպիտի մնան անոր հեշտալի ազդեցությենեն։

Ի՞նչ սենսակ էակ է այն, որուն կյանքը ասոր անոր կես կամ քառորդ ժամերովը կկազմվի։ Արդյոք գոյություն մը ունի՞ արդյոք։ Արք, հետաքրքիր, հավիտյան պիտի զեգերին այս հարցումներուն շուրջը։

Մարդկային անվերջանալի բարեկենդանին մեջ, հասարակաց կինը մյուս դիմակավորներեն ա՛ռ ասրբերությունն ունի որ, ինքը միայն անպատրվակ, հետամուտ չէ ինքզինքը չճանչցնելու։ Սիրո վաճառականուհին է. իր զգեստը, ձևերը, շարժմունքը, ամեն բան կմատնեն զինքը։ Դիմակ չունի բոլոր դիմակավորներուն մեջ. իր արհեստն ընթեռնելի կերպով գրված է ճակատին վրա. ոչ ոք խաբվելու և զանգատելու իրավունք ունի։

Ավանսենի մը մեջեն Մարտիրոս էֆենտին կբարևեր շուրջը, Գալուստյան Գեորգը որ իր թիկնաթոռեն ոտի վրա ելլելով էֆենտիին, եիբատի պաշտպանին, բարևը կառներ. անդին միևնույն կարգին վրա Պասմաճյան Հակոբիկը, Տեմիրճյաններուն զանձապետ՝ Լևոնը, պելեթաժեն Շամլյան Հովակիմ աղան իր կնոջ ու տղուն Արմենակին հետ. ուրիշ օթյակի մը մեջ Ստեփանիկ աղան, քոնսուլիտ խաղացողն։

Բազմությունը իր ոտից տրոփյունը կավելցներ. վերջապես զանգակը հնչեց. երաժշտությունը խոսակցությունները դադրեցուց և վարագույրը բացվեցավ։ Առաջին արարվածը խորին տպավորություն մը թողուց. ոմանք խաղ՝ն գնահատեցան. ոմանք՝ դերասանուհվույն դաշնակավոր ձայնին. բոլորը՝ անոր մարմնական հրապույրին. կանայք անոր կապույտ թավշե մեծագ՝ն շրջազգեստին հավնեցան։

Նարդիկ սիրո զգացումը իր անհուն, անծայրածիր տեսլականին մեջ արտահայտեց. ամենքը կմաղթեին, որ իրենց ուղղվեր անոր հրավառ շեշտերը և դերասանուհին կարծես այս մաղթանքը արդարացնելու համար բոլոր սրահին վրա կպատցներ իր բորբոքիչ նայվածքը։

Ծափահարություններ, փունջեր, bis, կեցցեի աղաղակ և առաջին արարվածը վերջացավ։

Թատրոնի նորեկներ հասկնալ կուզեին այս գեղեցիկ կնոջ ո՞վ ըլլալը, մանավանդ ո՞ւր բնակիր։

Մեծ մաս մը թողուց իր աթոռները, պարտեզին զովությունը վայելելու համար. օթյակներուն մեջ այցելություններ սկսան։

Վարը, Հակոբիկ՝ իր ընկերը դերասանուհվույն քով տանիլ կառաջարկեր։

— Երթանք Նարդիկը տեսնել, քիչ մ'առաջ «մեկտեղ բեր բարեկամդ» ըսավ ինծի. չուզած բանդ, այնպես չէ՞։

Փոքրահասակ, դուրս ցցված աչքերով երիտասարդ մը, որուն ճաշակավոր հագուստը անձին տգեղությունը կմոռցներ։ Խառնուրդ մը այս տղան, բոլոր գիշերօթիկ վարժարաններու՝ Շահնազարյանի, Ռոպերթ քոլլեճի, Լիսեի, ուսկից ստացած ուսման հետքերը միայն մնացած էին քովը։ Գործի մեջ՝ ճարտար ու հնարամիտ, մարտատունեն հանելիք վաճառքները շուքի մը պես աննշմարելի կերպով անցընելու գաղտնիքը գիտցող. կվաստակեր շատ և շատ կմսխեր. քանի մը հոգի էին ասոնք, քանի մը երիտասարդներ, Պահչե քափուի մեջ, որ մաքսատան պաշտոնյաները կհուսահատեցնեին. տարօրինակ պայքար, ուր ընդհանուր կանոնին հակառակ, փախողը տարած կըլլար հաղթությունը։

Եվ Պասմաճյան Հակոբիկ կփախեր ու կփախցներ. ամառը՝ Պյույուք-Տերեն խոսեցնելով իր մեծածախ զբոսանքներուն և կարճ հասակին վրա, ձմեռը՝ Փերան։

Գեր կիները հատուկ ձգողություն մը ունեին իր փոքրիկ անձին համար և անոնց մեջ կթավալեր, վերջիվերջո կանգ առնելու համար այս դերասանական խումբեն միայն քով, տիկին Մազլմյանի ստվար թևերուն տակ։

Մյուսը՝ Տեմիրճյաններու գանձապետը, վաճառատան գործերու առթիվ ծանոթացած, մտերմացած էր Հակոբին հետ, ինքը՝ կարգի կանոնի տղա, բոլորովին հեռու էր անոր հարաբերությանց հաճույքեն. բայց այս վայրկյանին իր բարեկամին առաջարկությունը երջանկության հրավերի մը պես հնչեց իր ականջին. այսպես շուտով մոտենա՞լ այս բոլոր բազմության պաշտած դիցուհվույն։

— Երթանք,— ըսավ,— բայց ես դերասանուհյաց վարժություն չունիմ։

Թողուցին աթոռին։

— Թե որ մեկը զմեզ տեսնա,— կըսեր Պասմաճյան,— ինծի համար փույթ չէ, բայց դո՞ւն նշանած երիտասարդ։

Եվ կառաջնորդեր նեղ նրբանցքներու ոլորապտույտ ճամփաներու մեջեն ուր հեռու-հեռու դրված կանթեղներուն լույսը օգուտ չուներ։ Այդ տեղերու ծակը ծուկը գիտեր։

Դերասանաց հատկացյալ սրահը խառնաշփոթ տեղ մ'էր, Պիթբազարի և Փերայի վաճառատան զուգավորություն մը. հոս հոն բազմոցի կամ աթոռակի մը վրա զգեստներ, ձեռնոցներ, գլխարկներ, էքսթռեի շիշեր ու երեսի ներկեր։ Ոմանք իրենց դեմքին ավրված գույները կնորոգեին. մին կծերանար, մյուսը իր տարիքը կծածկեր, ուրիշ մը իր մոռացած դերը հիշելու կջանար՝ ինքնիրեն քթին տակ կրկնելով պարբերությունը,

— Եվ Արմանին ընկերացա հենկե մինչև հոս... ու չի հաջողելով շարունակությունը հիշել։

Մեկ քանիներ կխոսեին, կխնդային։

— Ինծի նայի, Միշե՛լ,— կըսեր անոնցմե մին պոռալով,— իրավ որ դուն ապուշի բնական հարմարություն ունիս։

— Կորսվե՛ դուն ալ, հանդիսականներուն պահե անճոռնի կատակներդ,— կպատասխաներ Միշել։

Տիկին Մազլմյան կընդմիջեր.

— Սուս եղեք քիչ մը։

Քորսեին կապերը կքաշեր շարունակ չի կրնալով իր պարարտ մարմինը սեղմել այնքան որ իր մեջքին լայնության անպատեհությունները վերցնե. նույն միջոցին Հակոբիկը տեսավ, օգնության կանչեց։

— Եկո՛ւ, եկո՛ւ, սա կապերը քաշե։

Անդին՝ Ճամպազյան, Արմանի դերը կատարողը, մանկամարդ աղջկան մը հետ կխոսեր։

— Սուտ մըսեր, Սաթենիկ։

— Ես սուտ մուտ չգիտեմ. ամեն բան բացե բաց. կսիրեմ՝ կսիրեմ, չեմ սիրեր՝ չեմ սիրեր։

— Կեցցես, Կապուտ-հազ,— ըսավ անոր Հակոբիկ,— միշտ այդպես անկեղծ եղիր և ոչ ասոնց պես խաբեբա։

Երիտասարդը տիկին Մազլմյանը ցույց կուտար. ամենուն խոսքին, գործին կխառնվեր. դերասանները իր անկարգ ու զվարճաբեր կյանքին սովորական ընկերներն էին. դերասանուհիք քիչ շատ իր սիրուհիները. հոս՝ իր տանը, ընտանյաց մեջն էր կարծես. ամենուն ներքին կյանքը, կապակցությունները գիտեր.

— Ստակներդ առի՞ր, Միշե՛լ,— կհարցներ։

— Ոչ դեռ։

Լևոն ապշեր էր այս անծանոթ մարդոց ու աշխարհին մեջ։

— Ո՞չ դեռ։

Եվ տիկին Մազլմյանին մոտենալով՝

— Դուն ի՞նչպես ես, հանը՛մբս։

Տիկին Մազլմյան իր վրեժը լուծեց.

— Խաբեբաներուն մեծը դուն ես, ո՞ւր է խոստացած փառքիդ։

— Բոլորովին մոռցա, արդեն շատ ալ զբաղյալ էի. գալ ուրբաթ անպատճառ. Նարդիկ, մեկտեղ ես, Լևոնին համար կմտածենք, կաշխատինք։

Զանգակը հնչեց. երաժշտությունը երկրորդ արարվածին նշանը տվավ. հուշարարը՝ տեսարակը ձեռքը իր փայտե տուփին մեջ մտնելու վազեց։

Երկու երիտասարդները բաժնվեցան մինչդեռ Նարդիկ եռանուն կպչուար.

— Անթրաքթին եկեք նորեն։

Ո՛չ. հիմա ուշադրություն չէր ըներ խաղին. ամբողջ սրահը, օթյակները, բազմությունը կցնդեր կանհետանար, մինակ հո՞ն բեմին վրա ձգելով դերասանուհին որուն ժպիտները հատկապես իրեն կուղղվեին, արևեն անջատված ճառագայթներու պես համակ լուսով ողողելով զինքը. կխորհեր իր նշանածի դիրքին, կարգադրված ապագային, որոնք պարտավորություններ կհիշեցնեին. իր խոսեցյալին դեմքը աչքին առջև կբերեր, անոր ալ հրապույրն ու գեղեցկությունը հիշելու ջանք կրներ առանց հաջողելու. քովեն բարեկամը հանգիստ չէր թողուր զինքը.

— Չի՞ խոսիս։

Ի՞նչ խոսեր, երկրորդ դադարին ամենեն առաջ ինք թողուց իր աթոռը, չի կրնալով հանդուրժել սրահին հեղձուցիչ մթնոլորտին։ Պարտեզին մեջ Ստեփանիկ աղան ելավ դեմը։

— Ի՞նչ կրսես սա քոնսոլիտին իյնալուն։

Շահաղեար կարծիք կժողվեր խոսակցությամբ, գաղափար կհասկնար վերջեն ընտրություն մը ընելու համար անոնց մեջեն։

Լևոն պատասխանելու տրամադիր չէր։

— Չեմ գիտեր, չի լսեցի։

Ստեփանիկ աղան կպնդեր.

— Ի՞նչ ըսել է «չի լսեցի». չորս ղուրուշի անկում և դուն տեղեկություն չունի՞ս. ո՞ւր կապրիս կոր, վաճառական չե՞ս դուն։

Խաղացողը կպարսավեր երիտասարդը, հայտնելով, որ վաճառական մը դրամի և արժեթուղթի հրապարակին անտարբեր չի կրնար ըլլալ. ամեն փոխանակություն դրամի, արժեթուղթի կամ վաճառքի, միություն մը կկազմեր և այդ երեք մասերը սերտիվ կապված էին իրարու։

Գալուստյանը տեսավ, անոր ալ կարծիքը հարցուց.

— Պատճառը հայտնի է,— ըսավ օգնական խմբագիրը։

Քաղաքական կացությունը ծանր է. վերջին հեռագիր մը Անգլիո և Ռուսիո մեջ հարաբերությանց խզում մը կհայտներ։

Ստեփանիկ աղան ամենեն առաջ պոռսային մեջ այդ լուրը տուած էր. հուսացածին պես նոր բան մը չի կրցավ իմանալ։

Լևոն հայտնապես կձանձրանար. Նարդիկի սոտ երթալ կուզեր և այս հաճույքը կտանջեր զինքը, կծանրանար սրտին վրա. որոշեց վերջին անթրաքթին երթալ. ներկայացման վերջանալուն մոտ, տարտամ ակնկալություն մը ուներ այս հետաձգումովը։

Պարտեզին քազինոյին մեջ հանդիսականները լեցված էին տեսակ-տեսակ ըմպելիքի գավաթներով ծածկված սեղաններու շուրջը. ամեն ոք իր տպավորությունը, կարծիքը կուտար. սպասավորները ապսպրված ըմպելիքներու անուններ կպոռային պյուֆեի մարդուն հունարեն թիվերով։

— Միայն քոնյա՞ք, տիո շա՞րթրյոզ։

Եվ ձեռքերնին ափսեներ կշրջեն բազմության մեջ սեղաններու մեջեն անցնելով դառնալով անընդհատ։

Լևոն երկու քոնյաք խմեց, զինքը ճնշող անհանգստությունը թոթափելու համար։

Սպասավորները կշարունակեին բարձրաձայն պոռալ, հունարենին խառնելով տաճկերենն ու հայերենը.

— Երկու լիմոնադա, Մարտիրոս էֆենտիի լոճային։

Մարտիրոս էֆենտին ծանոթ էր այս տեղ իբրև ամեն ներկայացումի անպակաս. ավանսենի օթյակը իրեն հատկացյալ էր ուրկե առանց դիտակի օգնության կրնար խաղին հետևիլ։

Երաժշտության ձայնը երկրորդ արարվածին սկսիլը իմացուց. քազինոն հինգ վայրկյանի մեջ պարպվեցավ. ամեն մարդ իր տեղը բռնելու վազեց. Լևոն վարագույրը բացվելեն ետքը իր տեղը եկավ. Մարկրիթ Կոթիեն խնջույքի տեսարան մը կպարզեր որ խեղդուկ հազով մը, բերնեն եկող արյունալի փրփուրով մը կընդհատվեր. և ակամա բաղդատություն մը եկավ միտքը զվարճության և տառապանքի, երջանկության և մահվան այսքան քով-քովի գտնվելուն վրա. Մարկրիթ իր հազի տագնապին նվաղումեն սթափեցավ, թաշկինակով սրբեց բերանը ուր արյունը շրթունքը բոսորագեղ ներկած էր. Լևոն այդ մահագուշակ ու արյունոտ թուքը սիրահոժար պիտի ծծեր, առներ անոր շրթունքներեն. դերասանուհվույն թաշկինակը իր նախանձը շարժեց։

Սրահին մեջ շնչառությունը դադրած, խոր ու անձկալից լռություն մը կտիրեր. Մարկրիթ ինքզինքը գտավ։

— Մի՛ վախնաք,— կրսեր Արմանին,— շատ հեղ կպատահի այս, իրավ որ մեռնելե չեմ վախնար, քեզմե բաժնվելուս համար միայն կսարսափիմ։

Եվ սրահին մեջ Նարդիկի նայվածքը կուգար երիտասարդը փընտրելու, կարծես հասկցնելու համար, որ միայն անոր կուղղվեր այս հայտարարությունը։

Այս վայրկյանին ոչ որ անոր մարմնուն հրապույրը կտեսներ և ուրիշ բան չէր, բայց եթե աննման տաղանդի մը և ահավոր կերպով սրտաճմլիկ տեսարանի մը զորությունը, որ կիշխեր քար կտրած հանդիսականներուն վրա։

Հետո ծափահարություններ անընդհատ, որոտալից գոռ ու գոչում մը, վերնահարկեն մինչև գետնահարկը, ոտքի տրոփյուններ՝ թատրոնին հին շենքը զողացնելով իր բոլոր փայտե կապերուն և ատաղձներուն մեջ։

Վերջի դաղարին ա՛լ չի համբերեց. Հակոբին հետ միասին նորեն անցավ մանվածապատ ու մթին ճամփաներե, ներսը վարագույրին ետին հավաքվեր էին։

Նարդիկ այն պաշտելի հյուծախտավորը չէր, այլ զվարթ վառվռուն աղջիկ մը.

— Ո՞ւր մնացիք։

Լևոն հիվանդագին վիճակին մեջ կուզեր գտնել զայն. ծունկի գալ անոր մատ՝ համբույրներով ծածկելու համար անոր թալկահար ու տասուկ ճակատը։

Այս միջոցին թեթև ձեռք մը ուսին դպավ.

— Բարի եկար։

Լևոն մինչև իր հոգվույն խորը զգաց այս քաղցրահնչյուն ձայնը. դարձավ. Նարդիկն էր. հիմա մութ կարմիր զյուռույե շրջազգեստ մը հագած էր երկրորդ արարվածին պահանջման համեմատ. բաց կուրծքին վրա նետված դանթելի կտհակներն հեշտավետ հովի մը ճերմակ փրփուրներուն պես դուրս կթափեին կարծես ներսի խռովության արտահայտությունը. պալայոզներու վրա բռնված փեշը թատերաբեմին կեսը կծածկեր և Նարդիկ՝ ամեն շարժումին ոտքի փոքրիկ հարվածով կպարտավորեր զայն շտկել, և այսպեսով ցույց կուտար յուր սիրուն փոքրիկ կոշիկները, երբեմն բուռն շարժման մը մեջ նույն գույնով մետաքսյա գուլպայի մը սկզբնավորությունը, որ յուր սրունքներուն կփարեր, կգբրկեր զանոնք, ծառի մը փաթթվող պատատուկ թավիշե մարմանդներու մեղկ ու քաղցր հպումովը։

Երիտասարդը անոր ձեռքը բռնեց, ջերմ, տենդոտ ձեռք մը. աղջիկն մազերուն, մարմնուն բուրումը եկավ իր ռունգներուն, այդ մարմնուն հեշտության ու թաքուն շնորհներուն վրա գաղափար մը, զմայլելի գաղափար մը տալով հիմակուց.

— Ծաղիկներու թագուհին եք այս դիշեր։

Հակոբիկ եկավ հասավ.

— Ահավասիկ պատվերիդ համեմատ այս պարոնը բերի քովդ, կուզե՞ս որ ներկայացնեմ։

Մյուսները Նարդիկին շուրջը բոլորվեցան. պիոա բերեք. Հակոբիկ ամենուն կհրամցներ, մերժողներուն կսպառնար։

— Չէ՞ նե վրադ կթափեմ։

Հետո Արմանին կդառնար.

— Դուն նա՞ս ես կապուտ-հագիդ հետ. բժշկվեցա՞ր,— մյուսը գլխովը բացասական պատասխան կուտար։

Այս քաջառողջ երևույթը իր պատրանքը փարատեց։

Տիկին Մազլումյան իր փառքին հաստատել կջանար։

— Ուրեմն որոշված է ուրբաթ օրվան համար Թաշտելեն երթալնիս։

— Այո՛, հոգիս, որոշված է։

Հակոբիկ համբույրով մը կերաշխավորեր այս խոստումը։

— Թե որ կուզես այս գիշեր ալ ճաշ մը Փերայի մեջ։

Տիկին Մազլումյան Նարդիկը անպատճառ մեկտեղ կուզեր և դերասանուհին չէր կրնար գալ։

— Ինչո՞ւ. և առաջարկությունը ավելի ազդեցիկ դարձնելու համար կավելցներ. Լևոն ալ կաղաչե քեզ որ մեզի հետ գաս։

— Կաղաչեմ,— կըսեր Լևոն։

— Ո՛չ, ո՛չ, չեմ կարող։

Հակոբիկ կվիճեր.

— Ի՞նչ, նորեն սա տեվեն է, տեվեճին է. ո՞վ է քեզ հափշտակողը։

— Խենդ խոսքեր մի՛ ըներ, անհանգիստ եմ այս գիշեր, ուրիշ արգելք չունիմ, գլուխս մի՛ ցավցներ։

— Դուն գիտես, երթանք, Լևոն, ուրբաթ օրվան գոնե ապահովապես խոսք տվիր։

Հակոբիկի վերջին խոսքերուն վրա կմտածեր Լևոն նեղ ճամփաներուն մեջեն վերադառնալով. ու հիմա իր թիկնաթոռեն ավանսենի օթյակը կդիտեր շարունակ փոխանակ թատերաբեմին վրայի ներկայացումը դիտելու. հոն Մարտիրոս էֆենտի կխրոխտար ծավալելով իր խոշոր մարմնույն գոհունակությունը և անտանելի ատելություն մը արծարծելով երիտասարդին սրտին մեջ։

Դերասանուհվո մը կյանքը չգիտնալու չափ միամիտ չըլլալով հանդերձ, միշտ բացառություն մը ենթադրեր էր այս աղջկան համար, որ առաջին օրեն խորին ու անդիմադրելի զմայլանք մը ազդեր էր իրեն. հեռեեն նայելով, մաքրության ու անմեղության մթնոլորտի մը մեջ երևվակայեր էր զայն միշտ, և ահա քառորդ ժամի մը խոսակցության մեջ հարկ կըլլար համոզվիլ և ճանչնալ, թե բացառիկ ու գերագույն էակ

մը նկատված այս կինն և ոչ մեկ կերպով կտարբերեր իր նմաններեն։ Մինանգամայն կմտածեր թե Նարդիկ ինչո՞ւ չընդունեց իրենց հրավերն. իրոք ուրի՞շ մը, մշտակա ու նախանձոտ սիրո՞ղ մը կար այս կնոջ վրա հսկող, թե ոչ անհանգստությունը միայն արգիլեր էր զինքն իրենց հրավերն ընդունելու։ Ինքնիրեն չափեց ու բաղդատեց այս երկու հավանականություններն, և ավելորդ է ըսել, որ իր տկար սիրտն ավելի Նարդիկի հառաջ բերած բարուրանքը իրավացի համարելու կողմն հակեցավ։

Այս մտածմանց մեջ ընկղմած՝ ա՛լ ուշադրություն չդրավ երրորդ արարվածին որ Թատերաբեմին վրա կներկայացվեր։ Այն ատեն միայն սթափեցավ երբ տեսավ վարագույրն իջած ու հանդիսականները գրեթե մեկնած. իր նայվածքը թափուր և սավերամած սրահ մը տեսավ, որ հետզհետե կմթնար. լույսերը կմարեին, թատրոնը ահագին գերեզմանի լռության դատապարտելով. հիմա հիշատակ մը չի կար բոլոր երեկույթեն և իր հոգին ղղրդող աղմուկներեն։

Դուրս ելավ. ժամը վեցն էր, պարտեզին մեջ հապաղողներ միայն մնացեր էին. դրան մոտ քուփե մը կսպասեր, որուն վառ լապտերները արյունացայտ աչքերու պես կշողային մթության մեջ։

Քովեն կին մը անցավ, Նարդիկն էր որ կառքը կմտներ, անիվները դարձան, քուփեն մեկնեցավ, հեռուեն ցույց տալով իր կարմիր լույսերը, և երիտասարդը անհուն պարապության մը մեջ ձգելով։

Դանդաղ ու վարանոտ քայլերով, ձեռքի փոքրիկ լապտերովը լուսավորելով շուրջը, Լեոն կվերադառնար տուն Կետիքփաշայի լայն և ամայի զառիվայրը իջնալով. երկու կողմեն փլած փլփլկած պատեր. տաքի մը առաջման ավերիչ հրդեհեն մնացորդ. և տեղ-տեղ վտիտ, բարձր ու երկայն ծխնելույզներ, ոմանք կանգուն, ոմանք կիսակործան. և այս անշեն ու մոխիրով ծածկած փողոցեն քալելով կհիշեր հրդեհին գիշերը բոլոր այս թաղը, տուները, բոցերու մեջ վիթխարի veilleuse-ի մը պես լուսավորելով բոլոր շրջակայքը, կամ մազերը բռնկած հսկա կին մը, որ այդ բարձունքեն կվազեր կիջնար վար ծովուն մեջ մարելու համար կարծես զինքը սպառող կրակը. այդ գիշերը աչքին առջև էր. ինքն ալ եկած էր հոն բարեկամներու օգնության, և հրդեհին լույսերեն, այրողներուն թոհուբոհեն, ձայներեն, աղաղակներեն՝ այդ սևցած, խանձած ծխնելույզներեն զատ ահավասիկ ոչինչ կար հիմա. և վերադարձ մը ընելով իր անձին, իր սիրտը այրող կրակին հետևանքը՝ շուրջի ավերակներուն ողորմելի երևույթովը կերևար աչքին։

Պոլսո առաջնակարգ վաճառատան մը մեջ գանձապետի կարևոր պաշտոնը կվարեր քսան ոսկի ամսականով. և իր վարպետին աղջկան խոսեցյալն էր. պաշտոնական նշանտուք չի կար, բայց ամուսնությունը որոշված էր, և ասով մեծագույն ասպարեզ մը և նախանձելի վիճակ մը պիտի ստանար. ահա ճիշտ այդ միջոցին էր, երեսունը անցնելե վերջը, հեռու ամեն սիրային արկածե, չի հավատալով, որ սերը կրնա երբեք անդիմադրելի, անակնկալ և ճակատագրային բան մը ըլլալ, ծաղրելով իր բարեկամներեն շատերը, որ իրենց սրտի տկարությունները, դժբախտությունները կբացատրեին, ճիշտ այդ միջոցին ինքն ալ պարզ դիպվածի մը բերմունքով դեմ հանդիման կուգար այնպիսի էակի մը, որ տեսնելուդ չես կրնար չի կենալ, չի դիտել, ետիդ չի դառնալ անոր հեռանալը տեսնելու համար. էակ մը որ անձ մը չէ՞, այլ բոլոր կյանքի անուրջներու անկարելի մարմնացումը, գաղտնիք մը, որուն համար անկարելի է չի հետաքրքրվիլ, ետևեն չի վազել, ժամերով չի շրջիլ փոզոցե փոզոց, թաղե թաղ, թերևս հետը խոսելու հույսը չունենալով, բայց էակ մը զոր սիրտդ անմիջապես կճանչնա, կզատե բազմության մեջ, իբրև թե վաղուց անտի ծանոթ մը, մտերիմ մը ըլլար քեզի, որուն հաճելի եղած բաները գիտես, ճաշակը սիրած ես, և որուն անհաճո երևալու վախը կդողացնե քեզ։

Ահա ինչ որ զգացեր էր երիտասարդը Նարդիկը տեսնելուն. և կխորհեր, որ անհնարին անկարելի դժնդակ բան մը պիտի ըլլար իր հեռացումը այս աղջիկեն, և ասոր համար վտանգի դնե՞լ իր բոլոր ապագան, հույսերը, այո՝ ինչո՞ւ չէ՞. թողուլ նախանձելի վիճակ մը, չքավորության ու նեղության օրեր տե՞սնել. հոժարությամբ, եթե Նարդիկի մոտ պիտի անցնեին այդ օրերը։

Պահ մը իր միտքը կամփոփեր, հիմարություն այն բոլորը. ո՞վ էր այս կինը, որ հանկարծ կուգար իր ճամփուն վրա պատվարի մը պես. ի՞նչ իրավունքով. կարժե՞ր որ դերասանուհիի մը համար բաժնվեր իր որոշյալ ամուսնութենեն, պատվավոր աղջիկ մը զոհել անպատիվ կնոջ մը՝ ինչ որ ալ ըլլար իր հրապույրները. միթե այդ վայելքը չէ՞ր կրնար գնվիլ, ստացվիլ առանց վտանգելու իր կացությունը. այս գաղափարին Լեոն դիմադրեց. այդ վաճառիկ ցանկությունն չէր որ կախտավորեր զինքը. մանկական, գրեթե եղբայրական գորովի կարոտը, պակասը զգացեր էր այս կինը տեսնելով և այդ պակասը ան միայն կարող էր լցնել։

Քում-քափու հասած էր ան Նշանճիի փողոցին մեջ ուր կրնակեր դերասանուհին. իր տանը ճամփուն վրա էր անոր տունը. դրան քով կանգառավ, պատուհանները դիտեց։ Ոչ ձայն, ոչ լույս. մարդ չիկար, դերասանուհին հոն չէր անշուշտ. և մտքովը ո՞ւր ըլլալը փնտրեց, այդ ատեն հիմար գաղափարներ անցան ուղեղին մեջ. կեցած էր հոն, ձեռքի լապ-

տերին լույսը կհատներ սպասելով այդ դրան առջև. հեռուն գիշերապահին հարվածները լսեց. համրեց՝ յոթն էր ժամը, Նարդիկ պառկած էր այս ժամուն, փողոցին մեջ ոտքի ձայներ ականջին եկան. ամչցավ հոն գտնվելուն և ճամփան շարունակեց։

Տեմիրճյան առանց իր գանձապետին հարցնելու գործ չէր ըներ. դիպվածով հարստացեր էր՝ նախ ինքը զարմանալով այս հաջողության վրա. բայց անկե ի վեր ժամանակները փոխված էին, և Տեմիրճյան ոչ թե ստակ շահելու կջանար, այլ ունեցածը ձեռքե չի հանելու. խոհեմ և զգույշ վաճառականի համբավ ուներ զոր իր անբանի վեհերոտությամբ ձեռք բերած էր, Անգլիո հետ գործ մը կըներ և ուրիշ երկրի անուն լսել չէր ուզեր բնավ. իզուր միևնույն վաճառքը Ֆրանսա կամ Պելճիքա ավելի աժան ծախելու պիտի ելլեր իրեն, ինքը գիտցածեն չէր բաժնվեր, լրղալ չի գիտցող նավաբեկյալի մը պես որ ծովուն մեջ առջի ձեռքին դ[illegible]ված փայտից կկապվի և չի համարձակիր զայն թողուլ՝ միշտ խեղդվելու վտանգեն սարսափահար։

Գանձապետը իր խորհրդատուն էր որուն կվստահեր, խոսքին կհավատար հակառակ իր կասկածոտ բնությանը. Լևոն իր վարպետին տակառ կողմերը գիտեր և երբեք անոր ծանոթ համոզման հակառակ կարծիք չէր տար. առաջին փոփոխությունը որ մտած էր մաղազային մեջ, տետրակներուն կրկնատումարի վերածումն էր։ Ինքը այս դրության ինչ ըլլալը չէր գիտեր, բայց եկող գացողին կպարծենար.

— Մեր տետրակները տոպիո են։

Ժամանակ անցնելով գանձապետին կարողության և հավատարմության վրա համոզում գոյացուցած էր և ամեն ինչ անոր տնօրենության տակ ի գործ կդրվեր։ Երիտասարդը մեղմիվ, քիչիկ-քիչիկ կջանար իր վարպետին փերեզակի հոռի գաղափարները ուղղել, և զանի գործի մը մեջ մտցնել. երիտասարդ, եռանդուն տղա՝ ասպարեզ կուզեր նետվիլ արդյունավորելով այդ վաճառատան հին ու պատվավոր անունը և անխախտ վարկը։

Մեկ երկու գործերով անակնկալ շահեր ցուցուց և վարպետը ա՛լ բոլորովին կույր վստահություն մը ունեցավ իր վրա. ամենքը Տեմիրճյանին շահագիտական գործողությանց մեջ մտնելուն կզարմանային, անոր ճարտարությունը դրվատելով և հեգ մարդը, Լևոնեն սորված քանի մը պարբերություններով զինված ամեն տեղ կխոսեր մեծ-մեծ. նոր թեորիներ պարզելով։

— Պետք է,— կըսեր,— որ վաճառական մը միշտ հետամուտ ըլլա, պետքեր փնտրե որպեսզի գոհացում տա անոնց։

— Պետքերը գոհացնե. բայց ո՞ւրկից պիտի փնտրե, հասկնա,— կհարցնեին մյուս վաճառականները շփոթած։

Այն ատեն Տեմիրճյան իր կարգը և բացառիկ կերպով օժտյալ մարդու ձևերը կառներ։

— Ատիկա վաճառականին կարողությանը կապված է, արդարև չի սորվվիր, բնականեն տրված ըլլալու է։

Շամլյան Հովակիմ աղա չէր հասկնար, բայց կհամոզվեր տեսնելով Տեմիրճյանին հաջող գործերը, մինչդեռ իրենները անդարմանելի ձախորդություններու կենթարկվեին շարունակ։

Երբ էլպիս եկավ հասավ, ամուսնանալու առաջարկությունները ամեն կողմե տեղացին. հորը մեկ հատիկ աղջիկը գլխավոր, եթե ոչ միակ ժառանգորդն էր. և շուտ մը հաշիվը կընեին, Տեմիրճյանին մահվան ձգելիք հաշիվը. կնոջը մեկ ութերորդը, եղբորը արու ժառանգորդին բաժինն ալ կհանեին մեջեն, թեև ակամա, բայց ասով հանդերձ նորեն քսան հազար ոսկվո հարստություն մը կմնար։

Եվ հիմակուց կհետաքրքրվեին, Տեմիրճյանին առևտրական գործողություններեն դող կելլեին երբ վաճառականը նոր շահագիտության մը կձեռնարկեր վախնալով որ չի փճացնե իր աղջկան օժիտը. և միջնորդ դնելով ամուսնության առաջարկությունները կներկայացնեին առանց պայմանի ամեն ինչ հորը կամքին թողլով. իսկ վաճառականը կհապաղեր իր պատասխանը, չուզելով իր կենդանության ատենեն ժառանգության պահանջումներու դուռ բանալ և տեսակ մը գերեզմանե փախող ոգիի մը պես իր կորսվելուն՝ ժամ առաջ անհետանալուն փափագողներ ավելցնել։

Վերջեն լուսավոր գաղափար մը հղացեր էր, աղջիկը Լևոնին տալու գաղափարը. այս կերպով վաճառատան շահերը ավելի ևս հոգածության և խնամքի առարկա պիտի ըլլային, և փեսան իբրև իր պաշտոնյան չի պիտի կրնար՝ ստակի վեճ ու խնդիր հարուցանել. տիկին Տեմիրճյան այս ծրագրին քիչ մը դեմ կեցավ, իր մայրենի փառատենչիկ սրտին համար մեծ տեղե առնելու էին աղջիկը. բայց հայրը իր որոշումը հարգել տվավ և այսպես որոշվեցավ էլպիսի ամուսնությունը։

Աղջկան համար փույթ չէր ամուսին ըլլալիք անձին ով ըլլալը. իր սիրտը անհանգիստ թռչուններուն կնմաներ ,որ կսիրեն թռչիլ հոսկե հոն, անդադար նորության մեջ գտնելով հաճույքը. ուսում չուներ. իր պատանությունը ատենի սիրահարության նամակները գրած ատեն մեծագույն տառապանքը կքաշեր. թուղթը ոսկեզօծ, զարդարուն, գեղեցիկ, բայց սկսելու բառեն կշփոթեր ուղղագրության համար և իր բազմաթիվ սիրահարներուն կգրեր.

— Յոգիս, խուշս։

Նամակին անուշահոտ, խորհրդավոր ու արթիսթիկ ծալքերը, երեվույթը, ուղղագրության սխալները, ոճին ռամկությունը կմոռցնեին նամակագրին սիրուն աչքերը, գեղեցիկ մազերը՝ նորատի հարուստ աղջիկի առավելությունը հիշեցնելու համար։

Գիշեր ատեն իրենց Թաշ Վերտիվենի տան պարտեզին դրան քով ժամադրությունները կպատմեին գյուղին մեջ այս անվախ աղջիկին, որ մարդե չէր քաշվեր ու դպրոցին էն գեղեցիկ տղաքներուն հոժարափույթ կնվիրեր իր սերը և համբույրները։

Լևոն ոչինչ գիտեր այս ամենեն և այն կապույտ ժապավենով կապված նամակներու ծրարեն, որ Էլպիս Տեմիրճյանի ննջասենյակին մեջ, անկողնին տակ պահած էր խնամով։

Երբ իր ամուսնության խոսքը հաստատվեցավ, Էլպիս բացավ այս ծրարը որ հիմա դեղնած էջեր, գունատ մելանով բառեր կպարունակեր և տարբեր տարբեր ստորագրություններ. երբեմն անունին առաջին գիրը միայն, երբեմն անունն ու մականունը միասին, ամբողջությամբ. երբեմն ստորագրության տեղ վերջին հայտարարություն մը սիրո, անվերջանալի սիրո. քաղվածք մը կըներ այս ամենեն, չորս տարվան կյանքեն, զաղտնիքներով, համբույրներով, անպեխ սիրահարներով լեցուն, միառմի զատվեր էր որոնցմե, ձանձրանալով բոլորեն ալ, միևնույն խոսքերը, հայտարարությունները լսելով, և հասկնալով, որ այս դպրոցականները ամուսնանալու մարդիկ չեն։

Նորեն ժողվեց ծրարը, նամակները, իրենց սովորական ծալքովը ամփոփեց, մեյ մը այրել ոչնչացնել ուզեց այս ամենը, թե որ մեկու մը ձե՞ռք իյնար, բայց սիրտը չի թողուց, որ այս խորհուրդը գործադրե։

Իր խոսեցյալին հետ միայն սիրահարությամբ չէր սկսած և լավ մը չէր գիտեր անոր հետ ինչպես վարվելու եղանակը։ Լևոն կյուրակե օրերը կուգար միայն, ճշտապահ, որոշյալ ժամին. ցորեկվան ճաշը միասին կընեին ու գիշերը հոն կանցներ. երբեմն պտույտ մը ընելու կելլեին թև թևի և խոսակցությունը կսպառեր իրենց շրթունքին վրա. ոչ սիրո խոսքեր, ոչ ապագայի խորհուրդներ. օտարական այցելու մը՝ ասկե զգույշ չի պիտի ըլլար. երկուքն ալ իրարու լեզվե անտեղյակ՝ իրենց զաղափարներուն մեջ կառանձնանային։

Կյուրակե առտու իր սովորության համեմատ Ծրթագյուղ կերթար Լևոն. Կամուրջեն շոգենավ նստավ և քովի խցիկներեն միույն մեջ դեռ առջի իրիկվան ներկայացման կխորհեր. միտքով կհիշեր կվերլուծեր Նարդիկի դեմքը և զմայլելի կգտներ և անոր քով իր նշանածը աննշան, անհրապույր էակ մը կմնար. Թաշ-Վերտիվեն Տեմիրճյաններուն տան մեջ միևնույն բաղդատությունը կշարունակվեր միտքին մեջ, և Էլպիս ամփոփված մազերովը՝ գլխուն վրա գալարված օձ մը ունեցող աղջկան մը կնմաներ. քալած ատեն հատուկ ջանքով մը կցուցներ կարծես իր ճերմակ գուլպաները, որոնցմե երիտասարդը կգարշեր ականջեն կախած ադամանդե օղերը պարտիզակցի հարսի մը երևույթը կուտային անոր։

Լևոն սովորաբար քիչ խոսող մեկն էր. այն օրը արձանի մը լռությունը պահեց։

Ցորեկվան ճաշեն ետքը բազմություն հավաքվեցավ Տեմիրճյաններուն բնակարանը. նախ վաճառականին փոեֆի ընկերները. Ստեփանիկ աղան, և Շամլյան Հովակիմ էֆենտին, Հովակիմ էֆենտիին տղան Արմենակ, գյուղին թաղականներեն մին՝ Մելքոն էֆենտի իր կնոջ հետ, նիհար կին մը՝ մարած աչքերով, որոնց մեջ վերադարձի իղձերը հայտնի կկարդացվեին։

Ընդունելության սովորական սենյակին մեկ անկյունը, փոեֆաճիները՝ սկսան խաղերնին, և ընդհանուր խոսակցության մեջ ձայներնին կուգար կհասներ ընդմիջելով ամենքը.

— Փիք սեքիզ։

— Սպաթի սեքիզ։

Տեմիրճյանի միակ տկար կողմն էր այս խաղը որ իր աճուրդի, մրցումի ոգևորությամբը զինքը կհափշտակեր. կավելցնեին և ինքն ալ կավելցներ, մոռնալով հաշիվը ու վնասը։

— Մի՛զեռ,— կգոչեր վերջապես համբերությունը հատած, այնպիսի թուղթով մը, որ ապահով վեց ձեռք կկորտեր։ Եվ եթե հաջողեր, հազվագյուտ բացառություն, անվնաս ելլեր միզեռեն, այն ատեն իր բերկրության չափ ու սահման չի կար։

Հիմա նորեն կորսված էր իր փոեֆին նրբությանցը մեջ, մինչդեռ անգին տիկին Մելքոն իր էրիկը կպաշտպաներ անիրավ հարձակումներու դեմ։

— Իմ էրիկս բանկալ գացած օրը հարյուր ղրուշ ավելի հասույթ կըլլա. հասկցա՞ք, մյուսյու Արմենակ։

Թուղթի սեղանեն Ստեփանիկ աղա խոսքի կխառնվեր.

— Իմ քովս ալ եկած ատեն մի՛շտ կկորսնցնեմ. տեսեք ճիշտ այս վայրկենին...

Թաղականը կհեռանար նախապաշարյալ քոնսոլիտճիեն որ ուղուրի, խատեմի չափազանց կարևորություն կուտար։

Իսկ Արմենակը կխոսեր Էլպիսին մորը հետ, իբրև բարեկիրթ տղա, որ ծերերը կհարգէ, գիտէ անոնց հաճելի ըլլալ. Անգլիոյ կյանքեն հատվածներ, հետաքրքրական նյութեր կպատմեր, երբեմն խոսքը ուղղելով Էլպիսին, անոր ալ կարծիքն առնելու համար։

Դուռը զարնվեցավ, նոր հյուրեր եկան, նախ Սուրբիկ տուտուն՝ գյուղին պառավը, շատախոս ու չարախոս կին ուրկէ ամեն ոք և մասնավորապես Ստեփանիկ աղա կսարսափեր իբրև փորձյալ բոլուտսուզ մը, օրիորդ Վասիլիկ Քալեմճյան իր եղբոր Տիգրանին հետ Էլպիսը դիմավորեց։

— Ի՞նչպես ես, աղե՞կ ես, Սուրբիկ տուտու։

— Գեշին գեշը. զաքը ո՞վ աղեկ է քի ես աղեկ ըլլամ։

Հետո օր. Տեմիրճյան Վասիլիկին քովը եկավ. համբուրեցին զիրար, մինչդեռ Տիգրան իր քրոջ քովիկը կեցած՝ այս շրթանց հպումը տեսնելով կխռովեր։

Սուրբիկ տուտուն օրվան լուրերը կբերեր, սովորաբար չարագուշակ և ձախորդ լուրեր։

Հոգնություն առնելե, խահվեն խմելե վերջը իր առջի խոսքը այս եղավ.

— Ֆուլիկ հանըմին աղջիկը հիշ աղեկ չէ՛։ Ամենքը հարցուցին հիվանդը, հիվանդությունը։

— Ո՞ր աղջիկը։

— Մեկ հատ մը ունի, Նոյեմին։

Վասիլիկ ճանչցավ։

— Մեկտեղ դպրոց գացած ենք։

Էլպիս ալ գիտեր, ամեն եկեղեցի երթալուն պատուհանը կտեսներ։

— Հույս չի կա,— կըսեր պառավը, երերցնելով գլուխը,— վերեմ է ըսեր են տոքթորները։

Արմենակ հիվանդին վրա ըսված խոսքերը մտիկ կըներ։

Փոեֆին սեղանեն՝ ձայները կբարձրանային կատաղի, գրգռիչ, ասպարեզ կարդալով իրարու։

— Քառո՜ օն։

Որուն դիմացինը տեղի կուտար վերջապես մեղմ ու խոնարհ ձայնով.

— Փասսո։

Կորսնցունողը կգանգատեր թղթին ձախորդութենեն, ընկերոջը ապիկարութենեն, այս տրտունջներուն պատասխանատու մեկը փնտրելով։

Լևոն հազիվ երկու խոսք արտասաներ էր բոլոր օրը, կնեղանար

այս անմիտ խոսքերուն և մարդերուն մեջ, իրիկվան դեմ բարուրանք մը հևարեց, մորը անհանգստությունը, գիշերը Պոլիս դառնալու համար։

Վաճառականը դիմադրեց, Էլպիս նույնպես աղաչեց Լևոնին որ չերթա, բայց երիտասարդը համառեցավ ու թողուցին որ մեկնի։

Սուրբիկ տուտուն աղեկ գաղափար մը չէր կրնար ունենալ այս սակավախոս ու մարդատյաց տղուն վրա։

— Նշանածդ շատ Ֆիպիր կերևա կոր,— ըսավ Էլպիսին։

Հետո մյուս հյուրերը գացին, իսկ Արմենակ ամենեն վերջը, սպասելով հորը որ փոեֆը վերջացունե։

Տեմիրճյան շահեցավ և այդ վաղանցիկ հաջողությամբն ընկճելով դիմացինները կպոռար հիմա.

— Մաղեթաներ։

Հովակիմ աղա ոսկի ու կես կորսնցուց, Ստեփանիկ աղա չորս մեճիտիե, բայց Տեմիրճյան դեռ իր փափագը առած չէր թուղթեն։

— Ճաշեն ետքը միանանք։

Արմենակ Էլպիսին շուրջը կդառնար, մեծարանքներով, փաղաքուշ խոսքերով։

Լևոն՝ Պոլիս դառնալուն, Նարդիկի տան առջևեն անցավ, անորոշ հույսեր ուներ, դերասանուհին թերևս դրանը առջև կամ պատուհանը նստած պիտի տեսներ. ո՛չ ոք, անցավ, բարկանալով, որ այսպիսի անակընկալ հաճույք մը չէր կրցած վայելել. տունը՝ չի կրցավ մորը երկար բարակ հարցումներուն պատասխանել։

— Նշանածդ ի՞նչպես էր, տիկին Տեմիրճյան ի՞նչպես է, ո՞վ կար, ինչո՞ւ գիշերը չի կեցար նշանածիդ։

— Չեմ գիտեր,— կըսեր երիտասարդը։

— Չէ՞ նե մի նոր բան կա։

— Ի՞նչ նոր բան, խե՞նթ ես, մայրիկ։

Մորը երկյուղը փարատելեն ետքը, ճաշեցին, ժամը մեկ ու կեսին դուրս ելավ։ Ամառվան տաքը՝ փողոցին օդը տաք, անշնչելի կըներ. ամենքը դրան առջև նստած գիշերվան զովությունը կփնտրեին։

Նարդիկի տան առջև երկու հոգի կար. դուռը բաց էր, Լևոնին սիրտը ուժգին բաբախեց. մոտեցավ, դերասանուհին էր, հիսունոց կնկան մը հետ նստած։

— Հրամմեցեք, աթոռ մը տուր, Թե՛յզե։

— Ո՛չ, ներեցեք։

Լևոն կմերժեր առանց ուզելու, նստելու անհուն փափագին հակառակ։

— Այցելություններ ունիք անշուշտ,— կըսեր Նարդիկ,— զորս չեք կրնար թողուլ։

Լևոն շփոթեցավ։

— Բան մը չունիմ։

— Ինչո՞ւ չեք նստիր ուրեմն։

Երիտասարդը առավ աթոռը, մինչդեռ Թեյզեն կդիտեր զինքը մանրակրկիտ քննությամբ։

Մինչև ժամը հինգ խոսեցան առջի օրվան ներկայացումին, ուրբաթ օրվան Ալեմտաղի երթալու ծրագիրին վրա. հետո Լևոն մեկնեցավ. իսկ դերասանուհին հաջորդ գիշեր նորեն գալու խոստում առավ անկեց։

Հետևյալ առավոտ ուշ գնաց վաճառատուն. ճամփան՝ պատուհանը նստած տեսավ Նարդիկը. մազերը թափած, առավոտի շնորհալի անկարգության մեջ. բարևեց անցավ. քայլերը հառաջ չի տարին զինքը. ետին դարձավ. Նարդիկ ալ իրեն կնայեր դեռ և կժպտեր։

Վաճառատան մեջ ամեն ինչ անկարգ անիմաստ թվեցավ իրեն. գրագիրներուն սրդողեցավ. բեռնակիրները չախեց, գործերը կկարգադրեր հապճեպով, վայրկյան մ'առաջ լմնցնելու, դուրս նետվելու փափագով տանջված։ Ներսը երկաթ կկրեին շարունակ, իրարու վրա կդիզեին փութրոելները, որոնց բախման ձայներովը վաճառատունը կթնդար։

Լևոն այն օրվան գանձվելիք փոխանակագիրները աչքե անցուց որոց համար մինչև իրիկուն սպասելու պարտավոր էր, այս սպասելը տաժանելի գերության մը պես եկավ իրեն սրտին. և ոչ իսկ օր մը ազատություն. այս վայրկյանիս բոլոր գանձապետի, տնօրենի դիրքը ազատ մուրացիկի վիճակին հետ պիտի փոխեր։ Այսպես շրջեցավ վաճառատան մեջ, առանց կարենալ աշխատելու, միայն ժամերը մոռնալու ջանքով. իրիկվան դպրոցե արձակվող տղու մը պես դուրս ելավ գրասենյակեն դերասանուհվույն տան առջևեն անցնելու համար միայն. հոն չի պատահեցավ Նարդիկին, դուռը, փողոցը մարդ չիկար, գիշերը ճաշեն վերջը վերադարձավ, առանց հանդպելու Նարդիկին։ Հետևյալ առտու նույնպես Լևոն Տեվեճյանը հիշեց։

Այդ օրը Տեմիրճյաններու գանձապետը կատարյալ հիմարի մը ձևը ուներ. այն սովորաբար քիչ խոսող երիտասարդին, հանդարտ ու պաղարյուն մարդուն տեղ, առանց պատճառի զայրացած կատղած մեկն էր, որ այցելուի, հաճախորդի հետ անգամ հայտնի անհամբերությամբ կխոսեր։

Ժամը 8-ին Շամլյան Արմենակ եկավ հորը կողմե խնդիրք մը ընելու Տեմիրճյանին. վաճառականն իր գանձապետը կանչեց. երկու հազար

ոսկվո ապրանքի վրա Շամլյանները երաշխավոր ըլլալ կառաջարկեին իրեն, կարևոր շահու բաժին մը խոստանալով։

Արմենակ առաջարկության շահավոր կողմերը կպարզեր. ոտքի վրա կեցած, գլխարկը ձեռքը. Լևոն ժամանակ ուզեց մտածելու. Շամըլյան գործին ստիպողական ըլլալը կհայտներ. պայմաններուն վրա վիճեցան քիչ մ'ալ. հարյուրին հինգ շահ կուտար Շամլյան և Լևոն հարյուրին քսան կպահանջեր. միջոց մը խոսակցությունը դառնացավ։

— Ապուշի տե՞ղ դնել կուզեք զիս,— կըսեր Արմենակ։

— Ամենևին. բայց երկու հազար ոսկվո հանձնառության մը տակ դյուրավ չի մտնվիր։

— Ի՞նչ վնաս, քանի որ մեզի երաշխավոր պիտի ըլլաք. կկասկածի՞ք մեր վրա։

— Ամենուն վրա կկասկածիմ։

Տեմիրճյան միջամտեց. Լևոն աչք ըրավ անոր մերժելու համար և վաճառականը՝ չի կրնալը հասկցուց. Արմենակ տեսավ որ օգուտ չունին իր փաստերը, վերջին հուսահատական փորձ մը փորձեց. ստույգը այն էր, որ բուն իսկ իրենց վաճառքն էր, որ օտարի մը նոր գնվելիք ապրանքի մը պես ցույց կուտային Տեմիրճյանին, անոր երաշխավորությամբը հրապարակեն երկու հազար ոսկվո փոխառություն մը ընելու հույսով։

— Դուք գիտեք, ես Մարտիրոս էֆենտիեն առաջ ձեզի գալ ուզեցի. անոր հետ հարյուրին հինգով կրնայի լմնցնել։

Մեկնեցավ, Տեմիրճյան Շամլյաններուն վիճակին վրա տարակույսներ կհայտներ Լևոնին։

— Ի՞նչ է սա երկու հազար ոսկի fելեփիr ապրանքը, խելքս չի հասավ։

— Ոչ ալ իմս։

— Դուն այսօր անհանգստություն մը ունիս վրադ, հիվա՞նդ ես։

Գանձապետը չի պատասխանեց այդ հարցման և Մարտիրոս էֆենտիի վրա դարձուց խոսքը. ո՞վ էր այս մարդը, ուսկի՞ց էր իր հարստությունը. Տեմիրճյան կհիշեր որ տասը տարի առաջ աննշան վաշխառու մ'էր։

Այն իրիկվան վերադարձին Նարդիկի տան չի մոտեցած, միտքեն՝ պիտի տեսնեմ, չի պիտի տեսնեմի գուշակություններ ըրավ. փորձեր կատարեց. ճամփուն վրա իր գտնված տեղեն մինչև սա շենքը թե որ հարյուր քայլե ավելի չըլլար, Նարդիկ պատուհանն պիտի գտնվեր. թե որ հարյուր քայլե ավելի ըլլար հեռավորությունը՝ Նարդիկը պիտի չի տեսներ. և քայլերը կառներ մեծ-մեծ, ամեն ճիգ թափելով, որ հար-

յուր քայլը չանցնի և կարենա այն իրիկուն դերասանուհվույն երեսը տեսնել. այսպես ճամփան շարունակ իր սիրած նյութին խորհելով զբաղեցավ մինչև երանավետ տան մոտ։

Նարդիկ՝ պատուհանն էր. գուշակությունը ճիշտ ելավ. պատուհանը բացվեցավ. խոսեցան։ Ճաշեն ետքը նորեն վերադարձավ և ձեռքը բռնելով անոր իր դողդոջուն ձեռքերուն մեջ, Լևոն երկու օրվան տառապանքը, մահացումը պատմեց։

— Ձե՛մ կրնար զքեզ չի տեսնել. օդը, լույսը ինչպես պետք է ինծի, այնպես քեզ տեսնելու պետք ունիմ։

Դերասանուհին այս խելահեղ սիրույն ունկնդրելով կարբենար։

— Տեսի՛ր ուրեմն զիս ամեն օր։

Գիշերվան զովությունը կուգար առանց մեղմելու իրենց տագնապներուն սաստկությունը. փողոցին լռությունը, առանձնությունը, մութին հետ կշրջապատեին երիտասարդն ու երիտասարդուհին անոնց գաղտնիքը պահել խոստանալով։

Անկե վերջը ամեն գիշեր Լևոն Նարդիկի տունեն անպակաս եղավ։

Իսկյուտարեն Ալեմտաղի տանող ճամփուն վրա, երկու կառքեր կվազեին անիվներեն բարձրացող փոշիին մեջեն. հազիվ արշալույս էր. Ջամլըճայի սարեն տարածվող լեռնադաշտին մեջ շոսեին բիլ գույնը կճշտվեր, օձապտույտ գալարումներով հողին մեղրագույն մակերևույթին վրա։

Մարդ չի կար այսքան կանուխ այս միայնության մեջ, բացի ածուխ բեռնավորված կովի կառքի մը քովեն, հետիոտն, բոպիկ քալող, մուրեն ու արևեն սևցած մարդեն, որ կեսգիշերեն ի վեր քնաշրջիկի մը պես հուշիկ, այս ծույլ կենդանիներուն ետևեն կուգար շարունակ. պահ մը ածխավաճառը կենդանության նշան կուտար, կարթիններ և այս երկար և անծառ ճամփուն վրա, արևին ջերմության տակ չի մնալու ջանքով, իր համբրնթաց կովերը կմշտեր ձեռքի երկար խթանովը, կովերը կցատկեին, խույս տալով խթանին սուր ցավեն, մեկտեղ քաշելով իրենց անտանելի բեռը. հետո քիչ-քիչ կմեղմացնեին ընթացքին, իրենց առջի դանդաղ քալվածքին վերադառնալու համար, մինչդեռ մարդը երբեմն հայհոյելով, երբեմն շողոքորթ գգվանքով իզուր փութացնել կուզեր զանոնք. հետո ինքն ալ իր միօրինակ քալվածքին, կես մրափին մեջ կիյնար նորեն. վերջապես կհեռանային կակուղ հողին վրա բացված վարուն արահետեն, զոր ամառը սայլավարը կնախընտրե պաշտոնական կարծր քարուղիեն։

Առաջին fուփեին մեջ Նարդիկի համբերությունը սպառելու մոտ էր, Իսկյուտարի նավամատույցեն ճամփու ելլելնուն ի վեր սեղմված մնալեն։

— Ձեկա՞նք դեռ։

— Կես ճամփան անգամ չեկանք,— ըսավ Պասմաճյան Հակոբիկ. տիկին Մազլըմյան փոքրիկ կառքին մեջ ճնշված կկենար։

— Ոսկորներս կոտրտեցան,— ըսավ ան ալ։

— Դուն ոսկոր չունիս, բոլոր միս ես։

Խնդացին։

Լևոն Նարդիկի դեմը նստած ծունկ ծունկի գանգատելու մտադիր չէր ճամփուն երկայնությենեն. միայն դերասանուհվույն անհանգստությունը տեսնելով բառ մը ըսելու պետքը զգաց.

— Նեղեցի Ձեզ։

— Ո՛չ, ո՛չ։

Լևոն դռնակեն կդիտեր կառքին ընթացքին հետ, կտոր-կտոր աչքին առջև պարզվող սարահարթին թեթև ելևէջները. ձախ կողմեն՝ հեռուն, լեռներուն շարքը և անոնց կողերը պատռող ձորերուն խոնավ ստվերները. ու աջեն՝ ուսկից ցամաքը հետզհետե, մեղմիվ կխոնարհեր ծովին կհասներ, Սելիմիեյի դեղին զորանոցը քառյակ աշտարակներով. անդին Քատրգյուղն իր շեն ու փայտաշեն տուներով. հետո Ֆեներ-Պահչեի լեզվակը որուն ծայրի սհակը՝ սպիտակ ու մաքուր որ հեռուեն՝ ծովեն ելած ու պուռնուզի մը մեջ փաթթված մարդու կնմաներ. և ավելի անդին Մարմարայի կապույտ ջուրերուն մեջ կղզիներն, Քնալըն՝ շիկորակ բլուր մը. Պուրկազ՝ փոքրիկ ձագուկ մը առջին ձգած. Հալքիի բլուրները իրենց շոճիներու վեղարով և Մեծ կղզին գույնզգույն շքեղ ապարանքներով հպարտացած։

Ճամփան շարունակվեցավ անիվներուն միօրինակ թավալման դղրդյունովը և Հակոբիկի կատակներով խառնված. մինչդեռ Լևոն իր գործը, գրասենյակը կենացը մեջ առաջին անգամ թողած ըլլալու խղճահարությամբ կմտածեր և Նարդիկի մոտ գտած երանությամբը մոռնալու կաշխատեր։

— Ես Մարմարան կսիրեմ,— կըսեր դերասանուհին։

— Ես ալ,— ըսավ Հակոբիկ։

Տիկին Մազլըմյան Մարմարան կատեր։

— Վոսփորը Մարմարային չեմ փոխեր։

— Վոսփորդ ալ կսիրենք, տիկին,— պատասխանեց երիտասարդը։

Խնդալով մարեցան։

— Ուսկից ալ կգտնես,— կըսեր տիկին Մազլումյան, ջանալով քոռ-սեին կապերը թուլցնել։

Վերջապես ծառերու խումբ մը տեսնվեցավ. Տուտուրլը հասան, ճամփուն աջ կողմը պուրակ մը, ձախը՝ հերկված հողեր, քառակուսիներ նոր կամ հինեն հերկվելուն համեմատ տարբերելով իրենց գույներուն մեջ, գույնզգույն պասմայի կտորներե շինված ընդարձակ սավանի մը պես, որ գյուղին շրջակայքը կծածկեր բոլոր, պարտեզներ, որոնք ծառի ոստերով ձևացած ցածուկ պատերով կզատվեին, բանջարեղեններու ածուներ իրենց նեղ ակոսներովը, սրճարան մը դեռ գիշերը գոց. անդին տնակները՝ փայտաշեն ու գեղջուկ բնակարաններ և մզկիթը իր պարզ մինարեովը։

Այս էր Տուտուրլուն, տաճիկ գյուղ ուր կանգ կառնե Ալեմտաղի գացող ամեն կառք, արևակեզ ճամփուն երկարութենեն հոգնած։

Հազիվ առավոտ էր հիմա, արևուն ամփոփ ճառագայթները կելլեին կցրվեին չորս կողմ, լեռներուն և ծառերուն կատարները շողացնելով. ու քիչ-քիչ շոգիացնելով գիշերվան ցողը, որ վճիտ բյուրեղներու պես տերևներու ու ծաղիկներուն վրա տարածված կփայլիլեր։

Գյուղը դեռ քունի հանգարտության, ամայության մեջ էր. մեկ երկու հոգի ախոռներուն դրան մոտ կտեսնվեին ձեռքերնին պղինձե ամաններով. ուրիշ մը աղբյուրեն երեսը կլվար։

Կառքերեն իջան հոն, ծառոց շուքին տակ խոտերուն վրա մոռցված աթոռակները գտան. երկրորդ կառքը անակնկալ կոչնականներ կբերեր, դուրս կհաներ, զոր Հակոբիկ իր փառքի կարգադրելու պաշտոնին մեջ չէր կրնալ մոռնալ, Պոլսո էն ճարտար համբավավոր նվագածուները, երգիչները. Նարգիկ ծափ զարկավ. մինչև հոն երիտասարդը գաղտնի պահած էր ասոնց գալը, կառք մը կուգար կհետևեր իրենց կառքին, բայց հոն գտնվողները չէին կրցած տեսնել։

Դերասանուհին կճանչնար ասոնք՝ Ակոնին, Ճիվանը, Սատրին չորրորդը չի գիտցավ. մարդիկը բարևեցին, խումբ մը կազմեցին, տիկին Մազլումյան կառքի անձուկ անկյունեն ազատած, կսկսեր համարձակ շունչ առնել։

— Էֆ, քիչ մ'ալ անցներ նե պիտի խղդվեի։

Նախաճաշի պատրաստություններ տեսան, ծառերուն զովությունը կպատսպարեր զիրենք ելլող արևին տաքութենեն. գյուղը կարթնար, կշարժեր, եզերը արածելու կտանեին, սրճարանը կբացվեր։

Իրենց պաշարեն մաս մը հանեցին դուրս, գյուղեն մածուն ծախու առին, գետինը ձգված ճերմակ ոփոցի մը վրա նախաճաշիկնին ըրին, կշտացան. հետո Ֆահվեն եկավ, տիկին Մազլումյան հիմա բոլորովին

հանած էր Ֆոռսեն, իր ամենօրյա թշնամին ուրկե չէր կրնար զատվիլ, Լևոն կծխեր խոտին վրա պառկած. Հակոբիկ՝ նարկիլե կքաշեր, աչքերը կիսափակ։

— Թաֆսիմ մը,— ըսավ Ակոնին դառնալով։

Ակոնին Ֆեմենշեն հանեց իր սև լաթե ծածկույթեն, փույթերը դարձուց, թելերը համաձայնեցնելով, հետո սկսավ, մյուսները կունկնդրեին լռիկ, լավ կերակուրե մը հառաջ եկած թմրության մեջ թաղված։

Նվագարանին մեղմ ու դաշն ձայնը՝ տերևոց խարշափյունին մեջ բարձրացավ, աղեղը կերթևեկեր աղյաց վրա, Ակոնին դեմքը կգունավորեր, կկենդանանար իր մատներեն թռչտող ձայնին զորությամբ։

Աղաչավոր շեշտերով կսկսեր. կարծես քաղցրությամբ համոզել լուզեր մեկը, ու գործիքին ձայնը կմեղմանար, կմեղմանար, անլսելի ըլլալու չափ, իբրև թե շունչը սպառեր այս պաղատանաց մեջ։

Նորեն կբարձրանար ձայնը հնչուն, հզոր, հանդիմանական ձևով. սպառնալիքը աղաչանաց կհաջորդեր, հետո նորեն կթուլնար կխոնարհեր, հեզիկ, գլխիկոր իբրև թե ներողություն խնդրեր առջի հպարտության համար։

Եվ ունկնդիրները բառ մը չէին արտասաներ չընդհատելու համար ներդաշնակությունը, որ խաբվելու չափ կնմաներ վերը, ծառին ոստին վրա պահվրտած թռչունի մը ձայնին։

Թաֆսիմն էր այս, ետքը չորսը միացած, մին՝ իր ուտով, մյուսն՝ լավութայով, չորրորդն իր դափով փեշրեվը սկսան։

Նարգիկ սթափեցավ. եղանակը հարցուց, ուշշամ կզարնեին, Լևոն բան մը չէր գիտեր, չէր հարցներ, վերջեն երգերու կարգը եկավ, կիները հրամաններ կուտային, այս երգը կուզեին, իրենք ալ կընկերանային երգիչներուն, հնչեցնելով ծառերուն անխոսիկ արձագանքը, մինչ դեռ նվագածուները կմեղմացնեին իրենց ձայները կանանց թարմ ու քաղցր ձայները լսելի ընել տալու համար։

Գյուղեն իրենց արտը գացողներ կանգ կառնեին ճամփուն վրա, ասոնց շուրջը, մտիկ ընելով այս եղանակներուն, որոնք իրենց արևելքասոնց շուրջը, մտիկ ընելով այս եղանակներուն, որոնք իրենց արևելքցիի մելամաղձոտ ու դանդաղ գոյության կհամապատասխանեին, մինչդեռ Ֆեմենշեն իր սուր, ազդու ձայնը կնետեր օդին մեջ և ուտը իր բամբով անոր ստվար շեշտը կուտար։

Ալեմտաղիի մեջ իրենց գալուստը շփոթություն չի հարույց, շատ տեսեր էին ասոնց պես զվարճանալու եկողներ. ճամփուն վրա հանդիպողներ կկենային վայրկյան մը առջի կառքին մեջի կիներուն նայելու համար և այնչափ միայն, և անտառին մեջ կերթային, ծույլ, դանդաղ, փայտ բերելու։

Հակոբիկ ամենքը կճանչնար այս գյուղացիներուն, ահավասիկ Փարթամ չորպաճին. օտարական մը՝ այս անունը լսելով դառն հեգնություն մը լսել պիտի կարծեր չորպաճիին պատառուն ու ողորմելի հագուստը, երեսյթը տեսնելով. փարթամութենե զատ ամեն բան կար հոն. սա թուխ, սև աչվի երիտասարդը՝ Օղիկենց փեսան, սայլավար մը անցյալ տարի ամուսնացած, Հակոբիկ կբացատրեր այս ամենը. Լևոն հիմա իր վաճառատան կխորհեր, զողալով, որ ծանոթ չի գտնվեր այս կողմերը. բոլոր կյանքին մեջ առաջին անգամ ըլլալով մասնակից կըլլար ասանկ զբոսանքի մը, թողլով բանը գործը. և իր սակավապետ ու աշխատասեր երիտասարդի սովորությունները, իր նշանած անձի վիճակը կբողոքեին կարծես այս գաղտնի և փախստական սիրահարության դեմ։

Հոս չի կեցան շատ, Հակոբիկ ցորեկվան և իրիկվան ճաշին պատրաստություններով զբաղած է, կերակուրները, աղանդերը կորոշե, կովի սայլեր պատրաստել կուտա ճերմակ սավանե ծածկույթով, գահավորակի մը պես որով Դաշտելենն պիտի երթան, և կմեկնին կիները՝ ընկողմանած այս երկար, վրան բաց, տոմինոյի տուփի ձևով կառքերուն մեջ, Հակոբիկ՝ փորձ սայլավարի մը պես անուշ խոսքերով գգվելով հանդարտաքայլ գոմեշներուն ընթացքը, ամեն մեկուն իր անունը տալով,

— Տի՜հ, Պեննեկլի։

Կամ թե՝

— Կյոզյունի սևտիկիմ Քարամանը։

Գյուղացի սայլավարը կխնդար իր բարբառը Հակոբիկի բերնեն լսելով, մինչդեռ գոմեշները զիրենք վարող անծանոթ ձայնեն զարմացած կսկսին վազել անտառին նեղ ու մութ արահետին մեջ մխվելով և իրենց ոստոստումին մեջ սպառնալով կործանել, շրջել ետևնուն ձգված երկար ու ծանր տուփը։ Եվ այս ցնցումներուն, սասանումներուն մեջ Լևոն Նարդիկի մոտը նստած կատատաներ ինքն ալ ուրիշ աշխարհի մը երազներուն մեջ։ Ճիշտ քովեն գաղտուկ՝ կդիտեր դերասանուհվույն մաքուր դիմագիծը, այտին վրա մորթին վարդագույն ներկվող կաթնաթույր փափկությունը. կոնակեն առատ, ոսկեփայլ մազերը վեր ժողված, ծոծրակը կտեսնվեր նուրբ, թեթև աղվամազի մը ստվերին մեջ և ավելի վար շիփակին օձիքեն՝ պարանոցը՝ դողդոջուն, կարծես երջանիկ ձեռքի մը փայփայանաց կարատ, կերթար կմիանար վայելչապանծ, ինքնամատույց կուրծքերուն։

Երիտասարդը իր զմայլման մեջ ինքնիրեն բաղդատություն մը կըներ հոս այս երկու կիներուն մեջ. տիկին Մազլումյան գեր, մսալի, պարպատան լանջով, լայն շրջագեստին ծալքերով, սոնք և փարթամ հրապույրներով լեցնելով բոլոր կառքը ու այս պահուս թիկնահեց երկընցած մեկ կողմեն ցույց կուտար ճերմակ վղին ծրունքը և առույգաբարձ երանաց վայելչությունը։

Մին՝ իր միսի հարուստ և վաճառիկ գեղովը կպանծար, մյուսը իր ձևին, շնորհին վայելչությամբը կիշխեր սիրտերու։

Դաշտելենի աղբյուրին քով, զետինը ծածկող շրջած տերևներուն վրա, անտառին զով ստվերին տակ նստեր էին, օղիի սրվակներու, փոքրիկ բաժակներու և բազմատեսակ աղանդերի շուրջը բլբրվելով։

Առաջ նվագածուներուն տվին օղիով լեցուն գավաթներ, հետո իրենք ալ առին, պզտիկ բաժակները բախելով։

Ջուր բերին աղբյուրեն, երկրորդ օղին Դաշտելենի կենաց առաջարկեց Հակոբիկ. հիմա հիշատակներ կպատմեր անցյալ զվարճություններե քաղված ճիշտ այստեղ, Դաշտելենի աղբյուրին քով. հետո տիկին Մազլումյանի կյանքին խմեց,

— Կենա՜ց, Սուրբիկ,— պոռալով։

— Կենա՜ց, Սուրբի՜կ,— կրկնեց անտառը խորունկեն։

Արձագանքը զիրենք զվարճացուց, Նարդիկ ծառոց բունին փաթթվող մամուռներ ժողվելու ելավ, մյուսներն ալ ցրված հոս հոն բարձրաձայն կպոռային օ՜հ, օ՜հ և անտառը իր լռության մեջ վրդոված, այս զվարճասերներուն հետ ինքն ալ ուրախացած վայրկյան մը կպատասխաներ օ՜հ, օ՜հ, ետ չէր մնար անոնցմե, մռնալով իր ծերությունը։

Օղիին բաժակները նորեն ու նորեն բարձրացան, զարնվեցան իրարու, սիրտերը, գլուխները տաքցնելով, բարեմաղթությունները, կատակներով ընդմիջված։ Նվագածուները՝ գործիքնին ձեռ կառնեին, նախ զարնելով այս ու այն թելին, բաղդատելով հնչումները իրարու հետ։

Յածեն, մեղմիվ ուտը իր թավ ձայնը մեջտեղ կնետեր, պզտիկ եղանակի կտորով մը ու կանգ կառներ. հետո կսկսեր նորեն, ու նորեն կդադրեր, վերջը կշարունակեր եղանակը և հարիչին՝ աղյուս վրա զարնվածքը ունկնդիրներուն սրտին մեջ արձագանք կուտար. ամեն բան կըսեր ու բան մը չէր ըսեր այս երաժշտությունը, իր հոգին սևեր հագնող գեղանի կնոջ մը պես, տխրությունն էր։

Անտառը իր լռության մեջ կթաղվեր, ծառերը անշարժ կմնային իրենց երկարաձիգ արմատներուն վրա, և ուտին ձայնը կբարձրանար, կխոնարհեր, կվարաներ, կամ ազատ համարձակ դուրս կսլանար արաբ նվագարանին գոգ և ուռուցիկ կուրծքեն զոր նվագածուն՝ հառաչանքով լեցուն սիրուհվո մը կուրծքին պես, կսեղմեր իր սրտին վրա։

— Սուզինաք կուզեմ,— պոռաց Նարդիկ։

Սուզինաք նվագեց ուտը և մյուսները ընկերացան. ձայներնին միացուցին։

Նարդիկ ինքը կսպասավորեր, գեղատեսիլ մատուռակ, մեկ ձեռքով վեր ժողվելով շրջազգեստը, գեղեցիկ սրունքները ի տես հանելով, մյուսով օդի բաժակներ հրամցնելով։

Լևոն ամենեն առաջ գինովցավ. բայց իր միտքը պատող թանձր մշուշին մեջեն անհանգիստ խղճմտանքը կսթափեր վայրկյան մը երազի մը պես հիշեցնելով հեռավոր Պոլիսը, իր վաճառատունը, Օրթագյուղ իր նշանածին տունը. վերջը այս բոլորը կանհետանար երբ Նարդիկ իր քովը կուգար ըսելով.

— Իմ կենացս ալ գավաթ մը պիտի խմես,— կպահանջեր, կհրամայեր այս աղջիկը։

Անտառին մեջ առտու երեկո չի կար, այլ մթոռինակ կես լույս մը, որ վերեն ծառոց սաղարթներուն պատռված կապույտեն կուգար։

Երաժիշտները կշարունակեին երգերնին, Հակոբիկ ստակ կնետեր ամենուն, նոր երգեր, եղանակներ ուզելով միշտ։

— Կազել մը, Մա՛դրի։

Հոն ճաշեցին այսպես առանց գիտնալու կերածնին ու խմածնին. հետո իրենց սայլերով դարձան ետ զառիվայր ուղիեն. մութը կթանձրանար. ճամփուն բոլոր երկայնությամբը Պենկալի գույնզգույն կրակներ, ծառերը կլուսավորվեին. և աջեն ձախեն արձակված հրթիռներուն պայթյունը, լուսավոր շավիղները կառքերուն հետ կմոտենային գյուղին։ Ճամփուն տատանումներուն մեջ իրարու վրա կթավալեին կառքին մեջ, հետո կշտկվեին, կելլեին կնստեին, համբույրներու ձայներ՝ երգի ձայներու կխառնվեին երբեմն։

Այսպես ահա կուգային Դաշտելենեն իրենց աղմուկովը, լույսովը արթնցնելով գյուղացին, որ պատուհանը կելլեր հրախաղությունը դիտելու համար, հետո կերթար պառկելու, տեսնելով որ այս երիտասարդները քնանալու միտք չունին և մեծ ծառին տակ այս ամառ գիշերը լուսցնելու կպատրաստվին։

Տեվենյան Մարտիրոս էֆենտիի խանութը Պահչե-Քափու Թաշ խանի մեջ էր. կենտրոն տեղ։ Ուր փոխադրված էր հիմա։ Գործերուն ընդարձակության համեմատ չէր իր կես խավար սենյակը, որ երկու փոքրիկ պատուհանե միայն լույս կառներ։

Բոլոր գրամի պետք ունեցողներու ծանոթ խանութը՝ այս քարաշեն ու ամրափակ սենյակը խոշոր սնտուկի կնմաներ. սալահատակին վրա խսիր մը, լայն ու կոպիտ հյուսկենով խսիր մը փռված էր. մեկ կողմը երկար բաղմոց մը Անատոլուի հաստ ու բրդոտ գորգով մը ծածկված,

անկյունը պատին մեջ հյուսված էր քացան, որուն երկաթյա ծանր դուռը երեք բանալիով կբացվեր։ Հրապարակին ու ազգին մեջ ծանոթ ու հարուստ դրամատերներեն մին էր այս մութ որջին մեջ ամրացած մարդը, կարճ ու գեր իր սնտուկին պես։

Անշնորհ ու անխնամ զգեստներեն, ուռած փորեն, փայլուն աչքեն դատելով, չի ճանչցող մը՝ այս ազգին նշանավոր մարդը հարուստ մեծատան մը մատակարարը պիտի կարծեր։

Ամառը զով էր այս քարանձավին մեջ ու ձմեռը խոնավ. դրան ուղղության վրա գտնվող անկյունը սեղանի քով նստած էր իր երիտասարդ գրագիրը պատին մեջ շինված տոլապե մը անհամար տետրակներ հագրագիրը պատին մեջ շինված տոլապե մը անհամար տետրակներ հանելու, դնելու զբաղած. դուրսը ուրիշ ծառա մը, ակնցի եղբորորդի մը սենյակները մաքրելու ու իրիկունները գոցելու պաշտոնին մեջ իր փորձյալ հավատարմությամբը. ողորմություն ուզողները ներս թող չի տալու համար սպասելով մինչև իրիկուն։ Երբեք Մարտիրոս էֆենտի մինակ չէր մտներ այս սեմեն ներս. ու իր սպայակույտը ուներ. փոքրիկ փերեզակներ, որք իր շնորհիվ վաճառականի տիտղոսը առած էին, դրրսեցի փոլիցաճիներ միշտ իր աջակցությանը կարոտ, որոնք առտուները կշրջապատեին զինքը, մինչև սենյակ տանելու համար. խանը հասնելնուն, օտապաշին ոտքի կելլեր բարև բռնած փեշը փեշին. իր գալուստը կիմացվեր անմիջապես։

— Եկավ, եկավ,— կըսեին իրարու։

Մարտիրոս էֆենտի անտարբեր իր գալուն համար ցույց տրված մեծարանքներուն, հարուցած աղմուկին, համբաքայլ կհառաջանար, իր ճարպալից մարմնույն բեռան տակ ընկճյալ, տոտիկ-տոտիկ կելլեր քարե սանդուխը, որ իր սենյակը կտաներ։

Դրան մոտ եղբորորդին կանգուն, ձեռքերը միացուցած, կվազեր աղային գալը ներսը իմացնելու։

— Բարի լույս, Աբրահամ։

Ու Աբրահամ այս բարի լույսեն շողոքորթված, պատասխանելու անկարող, թեմեննահ մը կըներ գետնեն։

Վերջապես կմտներ ներս ուր զինքը սպասողները ոտքի վրա ելած կընդունեին զինքը, բազմոցին վրա իրեն համար որոշյալ անկյունը կանցներ ու իրեն դիմողները մտիկ կըներ։

Տասնութը տարու էր երբոր Ակնեն Պոլիս եկավ «սարֆութին» ընելու համար. այս դրամի առուտուրը՝ իրենց ընտանեկան մոլությունն էր. ամեն ոք սարաֆ կծներ այս ընտանյաց մեջ. կարգավ, տարիքի ու փորձառության կարգավ, միառմի կուգային մայրաքաղաքը. նորեկները՝ վարժվելու, ծերերը՝ նորեկներուն սորվեցնելու համար արհեստին գաղտ-

նիքը, անընդհատ երթևեկ մը Ակնեն Պոլիս տանող ճամփուն վրա, հաստատամիտ մրջյուններու ուղեորության մը պես։

Աստվածապաշտ կթվեին այս մարդիկ։ Սաղմոսեն տուներ, Ավետարանեն հատվածներ բերնուց գիտեին, օգտակար փաստեր, զորս շահավոր առուտուր մը ի գլուխ հանելու կգործածեին։

Սակավապետ, կծծի, խանի մը սենյակին մեջ պարտկված Տեվեճյանները միշտ հարուստ-աղքատներ մնացած էին, մինչդեռ ուրիշ հայրենակիցներ հաջողության մեջ մոռնալով իրենց առջի խնայող սովորությունները, պոլսեցիի մը պես շռայլ ու մսխող դարձած էին։

Հոս կամ երկիրը, թոնիրին քով կամ տանիքին վրա, առտու կամ իրիկուն, դրամն էր իրենց խոսակցությունն, հաճույքն ու ցավը, սփոփանքն ու հուսահատությունը։

Առնելիքի, գանձման, գատի, տոկոսի, մուրհակի անվերջանալի վեճ մը, որ տունն ու խանութը հավասար կատաղությամբ հառաջ կտարվեր, մին՝ մյուսին գործողությունները քննադատելով, դժգոհ, գանգատող, չի կրնալով երբեք բավականանալ հաճախորդներուն կողոպուտներեն, առնված շահեն, ապահովութենեն կամ գրավեն։

Այս շահամոլ մթնոլորտին մեջ ծնավ ու մեծցավ Մարտիրոս. ուղիղ ընթերցանութենե ավելի չի սորվեցավ երբեք. բայց մանուկ հասակեն սարաֆության բոլոր ծակուծուկը, վարպետությունները սորված հասավ Պոլիս, հորեղբորը Սարգիս աղային քով տեսականը գործնականով կատարելագործելու համար։

Մեծ Նոր խանի մեկ սենյակին մեջ, որ իրենց տունն ու խանութն էր միանգամայն, սպասավորի համեստ դիրքով սկսավ իր աշխատությունը. անկողին շտկեց ու ժողվեց, սենյակը ավլեց ու իրիկունները դրան առջև փոքրիկ երկաթե վառարանին վրա կերակուր եփել սորվեցավ։

Չախ ու ծեծ կերավ հորեղբորմեն, երբոր աղը շատ նետեց կամ պտուկը կրակին վրա մոռնալով այրած ու սեցած սեղան բերավ։

Արյունը՝ մահամերձ ծերուկի մը հանդարտությամբ կսողար իր երակներուն մեջ. հնաշանդությունն ստրուկության կհասներ այս տղուն քով. իր պապը՝ ծեծի ու հանդիմանության շնորհիվ հառաջացած ըլլալը կպատմեր. հայրը նույն կերպով մարդ եղած էր. ինքը բացառություն մ'ըլլալ մտքեն չանցուց. իր հայրը, հորեղբայրը ու պապը դարուս նշանավոր մարդիկն էին իր աչքին ու ըստ այնմ իր հարգանքը ու ակնածությունը անսահման էր։

Խոհարարութենե սկսավ հառաջադիմել մինչև սեղեկի մանչ՝ «օտա ուշալի» ըլլալու աստիճան. խահվե ու շուպուխ կհրամցներ հյուրերուն,

ջուր կբերեր ու սիկառի կրակ կուտար, ու դրան մոտ կսպասեր ձեռքը ձեռքին վրա բարև բռնած մինչև որ հորեղբայրը կանչեր զինքը.

— Ծո տղա, ֆեռս եկու։

Գիրուկ, գեղեցկադեմ տղա էր զոր սենեկին հաճախորդներն շուտով նշմարեցին, ինքն ալ զգաց այն հատուկ ուշադրությունն, որուն առարկա կըլլար. ոմանք պախշիշներ տվին իրեն զորս ընդունեց. առաջարկություններ լսեց որոնցմե իզուր ուզեց խույս տալ։ Հորեղբայրը որուն թերասրտոտ բառերով իր մարդանումները բացատրեց, չի հասկնալ ձևացուց իր խոսած լեզուն։ Ծերուկ կալվածատեր մը՝ հինուց ի վեր խանութին հաճախորդներեն մին, Մարտիրոսին ամենեն ավելի հետամուտ գտնվեցավ. մինչև իրիկուն խանութեն չէր ելլեր. առանց բնավ պետք ունենալու շարունակ փոխ ստակ կառներ, մեծամեծ շահերով վերադարձնելով քիչ օրվան մեջ, խանութը կշահեր այս հաշվեն ու Սարգիս աղա՝ ծերունի կալվածատերին տկարությանցը ուշադրություն չի դարձուց։

Քիչ ատենվան մեջ Մարտիրոս ինքն ալ փոքրիկ գումար մը ժողվեց իր տեսած առատաձեռնություններեն ու իր հաշվույն պզտիկ գործ մը սկսավ հորեղբորմեն գաղտնի. տոկոսով փոխ ստակ կուտար, ութ օրվան մեջ կրկինը ստանալու պայմանավ. այս անհուսալի շահը կըրցավ իրականացնել. փարան փարային ու ստակը ստակին վրա դրավ. երբեք զբոսանքի ու հաճույքի փող մը չի տվավ ու երկու տարի վերջը բավական ստակ դիզած էր։

Այս հաջողությունը իր շահու ծարավը սաստկացուց, այնպես որ, հորեղբորը խանութին մեջ գրեթե խանութ մ'ալ ինք հաստատեց. ճարպիկ ու համոզիչ էր. հաճախորդները միառմի կորզեց. ամենքը հարեցան իրեն երիտասարդի մը քով ավելի վեհանձնություն գտնելու հուսով քան թե անոր կարծրասիրտ աղային մոտ, որ զիրենք անողորմաբար կկողոպտեր։

Այսպես անձայն ու անշշուկ իր հաշիվը հորեղբոր հաշիվեն զատեց ու անոր շուքին տակ մեծցավ ի վնաս հայրենի տոլապին։

Սարգիս աղան զգաց որ իր տակավ առ տակավ պակասող շահերուն ու այս վտանգավոր վիճակին գաղտնիքը եղբորորդվույն քովն էր. իր սենետները մեկայլ տան մնալու կդատապարտվեին. ոչ ոք ստակ մը կվճարեր առջի պարտքերուն համար. խանութին առնելիքները որ սարաֆի մը աչքին պատրաստ դրամեն ավելի նվիրական են, փճանալ կըսպառնային. թշնամին ներսեն էր, այս փոքրիկ վստահության զեղծումը՝ տարապայման կերպով մեծցավ և աններելի ոճրի մը հանգամանքը ունեցավ իր աչքին. իր ուրիշները կողոպտելու միջոցներով լեցուն միտ-

քր չկրցավ ըմբռնել այս խաբեությունը, երբ իրեն դեմ ի գործ կդրվեր։

Խաբելն միայն իբրև ներգործական ճանչցած էր. կրավորական ձևը տեսնելով կատղեցավ. նախ վռնտել մտածեց Մարտիրոսը. հետո խորհեցավ որ հայտնի թշնամությամբ համարձակ հակառակորդ մը պիտի ըլլար իր դեմը. մեղմացավ, իրավախոհություն մը նախամեծար դատեց. Մարտիրոս իր կանխահաս ճարպիկությամբ հայրենի արյունը կհաստատեր. շահու բաժին մը տվավ խանութեն ու դաշնակցությունը պատերազմին առաջքն առավ։

Բայց երբեք անառակությունը դրամ ծախսելու պատճառ մը չեղավ իրեն։

Փերայեն միշտ երկյուղ մը ուներ այս դրսեցին, որ իր քսակին համար փրկավետ եղավ, երբեք չի հաճախեց այն հասարակաց տուներն ուր կյանքը ու դրամը հավասար շռայլությամբ կվատնվին։

Ահա այսպես անցավ իր կենաց մեծագույն մասը. հարստացավ. այն ատեն ամենքը մոռցան իր աղտոտ գործողությունները, ամոթալի անցյալը, մ'այն սնտուկին լեցունությունը հիշելու համար. ոսկվույն փայլը իր խայտառակությանց աղտը աննշմարելի դարձուց։ Տարի մը հինգ ոսկի տվավ Հիվանդանոցին ու Պատրիարքարանը օրհնության կոնդակ մը խրկեց իրեն. լրագիրներն այս բարերարին անունը ամեն կողմ տարածեցին. Ակնեն ընտանիքը կարդաց ու պարծենցավ։

Հայրենիքեն դեռ իր եկեղեցասիրությունը ու բարեպաշտ սովորությունները պահած էր. ամեն կյուրակե եկեղեցին կտեսնեին զինքը սև շուխա սեթրիովը գավթին մեջ կանգնած, հերազուրկ գլուխը բաց փղոսկրե գունտի մը պես փայլուն, ձեռքը համբիչը, քթին տակեն մրմրալով՝ սեղանին կամ դասին մեջ ըսված աղոթքները։

Հիմա կատարելապես մեծ մարդ մ'էր, այսինքն ինչ որ կհասկցվի մեծ մարդ ըսելով հայոց մեջ, ու Մարտիրոս էֆենտի, վասնզի էֆենտի էր հիմա, իր դերը կկատարեր։

Գործի վրա խորհուրդ կուզեին իրմե, վեճերու մեջ իրավարար կկարգեին զինքը իբրև անկաշառ մեկը Ազգին մեջ, ոչ վարչության անդամ էր և ոչ երեսփոխան։

— Ես ատանկ ցույցերե չեմ ախորժիր, ձեռքես եկածին չափ կաշխատիմ, առանց անդամ ըլլալու։ Ու մեկուսի, հպարտ, ազգային գործերու վրա հանդիմանական ձևով իր կարծիքը կուտար այն գործիչներուն, որ կուգային ստակ ուզելու իրմե։

— Ատանկ ժողով չըլլար, ազգը պոշպողաղներու ձեռքը մնացեր է։

Այսպես առանձին, անկախ, ու հզոր իշխանություն մը կըլլար, զոր ամեն ոք կճանչնար ու կհարգեր և թուրքերն ալ կմեծարեին զինքը, անոր գուհիկ մականունը կազնվացնեին, Տեվեճիզատե Մարտիրոս էֆ. կոչելով զինքը։

Մեծ գործերու ձեռնարկած էր հիմա. կարևոր հաստատության մը հացը կհայթայթեր և կհարստանար գողնալով տեսակեն, քանակութենեն, իբրև ճշմարիտ պոլսեցի վաճառական մը, ու հետզհետե լինելով ճշմարիտ իշխան մը, ծախքը մեծցնելով, բազմաթիվ ծառաներով շրջապատյալ ու ձգելով իր Քում-Քափուի տունը ուր իր արդի մեծությունը չէր սղմեր, Օրթագյուղ փոխադրվելու համար։

Շատոնց լրագիրները վսեմափայլ կկոչեին զինքը. ինքն իր երկաթյա քացային կրթնած իբրև անառիկ ամրոցի մը, ալ առաջվան պես սարաֆություն չէր ըներ գրեթե, բայց անհաշվելի առնելիքները անգանձելի մնացած էին և իր հինավուրց վաշխառուի միշտ դյուրազգաց մնացող սիրտը կարյունեին։

Բայց ոչ մեկ թվաբան բաղադրյալ տոկոսի հաշիվ մը իրեն չափ հաջողությամբ պիտի կրնար ընել։

Ստակին շահը, շահը դրամագլխեն ավելի նվիրական բան մը ուներ այս մարդուն համար. դրամագլուխը կորսնցնելու հոժար էր, բայց տոկոսին դպչիլը մահացու մեղք էր։

Ասկից անկից տեսած փոքրիկ վնասներեն զայրացած՝ ապահովություն ապահովության վրա, գրավ գրավի վրա կպահանջեր փոխ ստակ տալու համար։

Եվ հանձնառու կըլլային ամենքը վստահելով այս հարուստ մարդուն, որ իրենց ավանդն ու գրավը յուրացնելու պետք չուներ, հանձնառու կըլլային այս մարդուն բոլոր անիրավ ու անտեղի պայմաններուն։

Իր գործողությունները, ամեն ավանդյալ գրավները ծախու առնելու ձևով տեղի կունենային, հաճախորդները միշտ պարտավոր էին հավատալ իր խոսքին թե գրավները պիտի վերադարձներ եթե իրեն պարտքը հատուցանեին։

Այս խստությունը, այս անվերջանալի պահանջումները, պայմանները, սենետները, ա՛լ ավելի վստահություն կներշնչեին հաճախորդներուն. իրենց ստացվածքին աչք տնկող մարդ մը այնքան դժվարություն չպիտի հարուցաներ քիչ մը ստակ տալու համար, այս համոզմամբ ադամանդները կլեցնեին իր երկաթե սնտուկին մեջ։ Կալվածները յուր հորը անվան կդարձնեին իբրև վերջնականապես ծախված, առանց փոխարեն թուղթ մը, գիր մը առնելու։

— Իմ տետրակիս մեջ գրված է,— կըսեր սարաֆը վեհապանծ, ցույց տալով իր կաշեպատ տումարները, իբրև թե Ավետարանը ցույց տար այս միամիտներուն։

Բայց իր բոլոր հարստությամբը հանդերձ իր վաշխառուի հնավանդ տկարությունը կպահեր միշտ ու երբ դիպվածով մեկը զար իր պարտքը հատուցանելու, այս պարտքը անհավատալի արագությամբ աճած ու բազմապատկած կգտնվեր. հաշիվ ընելու հատուկ եղանակ մը ուներ այս մարդը՝ տոկոսը կհաշվեր նստած տեղեն, մատերուն վրա համրելով անցած ժամանակը։

— Ձիլհիճեե, զիլ'ատե, շավալ։

Եվ այս արաբական ամիսներուն անուններովը ու հասած եզրակացությամբը ապշեցնելով դիմացինը, իբրև թե արաբական տարին 14 ամիսե կազմվեր։

Վերջապես գումարը կորոշվեր, շահը շահին բարդված պարարտ գումար մը, զոր ամբողջապես իր ափին մեջը տեսնելե վերջը միայն կբանար իր սնտուկը. անել հորի մը պես ժամերով փնտրելով, հետո ակամա կարծես տիրոջը վերադարձնելով ձգված ավանդը։ Իսկ թուրք հաճախորդացը հետ միշտ համեստ ու երախտապարտ, կրկնելով մարդուն մեկնած միջոցին իր շնորհակալության ավանդական բանաձևը, ճիշտ այնպես երբ Մեծ Նոր-խանի մեջ հինգնոց մը պարգև կուտային իրեն։

— Պերեքեթ վերսին, էֆենտիմ։

Իբրև կրոնասեր և աստվածավախ մարդ չէր կրնար ամեն զվարճության մասնակցիլ. թատրոն կերթար միայն հինգերորդ արարվածին՝ չարագործներուն պատուհասը, առաքինիներուն երջանկությունը տեսնելու և հրճվելու համար. հոն՝ սիրո տեսարանները զինքը կգայթակղեցնեին, հիշեցնելով իրեն ամեն տարփանքե զուրկ մնացող պատանեկությունն, և գրգռելով իր նախանձաբեկ հոգին. վերջերը ակամա կշարունակեր երթալ ո՛չ ալ բարոյականի հաղթանակը տեսնելու համար թատերաբեմին վրա, այլ կանանց սիրաբորբոք տկարությունները, պարտությունները լսելու, դիտելու, վայելելու համար, տեսակ մը անցյալի պատկեր, որով կվերադառնար իր երիտասարդ տարիներուն։

Այսպես կիներուն նայելու համար միայն հիմա կուգար ներկայացմանց, հետզհետե ավելի ջերմ կուսակից դառնալով թատրոնի, և իր օթյակեն՝ բերանը բաց, զմայլելով Նարդիկի հրապույրներուն վրա, և ապաժամանց ցանկության մը բոլոր դառնությունը զսպելով սրտին մեջ։

Վերջեն չէր կրցած համբերել այս հանդիսատեսի դերին. իր ծանոթներեն մին միջնորդած էր Նարդիկի քով, և Մարտիրոս էֆենտի հոժարությամբ բացած էր իր ամրակուռ քացան, լիաբուռն վատնելու համար հազար կեղեքումներով հավաքված ոսկին։

Գործի մեջ միևնույն հաստատ և հաշվող մարդն էր։ Շաբաթ իրիկունները իր գանձման իրիկունն էր. Մարտիրոս էֆենտի իր պարտատերերուն ցուցակը ձեռքը՝ աչքե կանցներ, անուններին կուտար, ոմանք իրենց պարտքը վճարած էին և ոմանք չէին երևցած դեռ իրիկվան ժամ 9-ին. Շամլյաններեն՝ որոնցմե հազար ոսկվո չափ առնելիք մը ուներ, ոչ ոք եկած էր. Մարտիրոս էֆենտին կասկածոտ կատվի մը պես կմռլտար.

— Ո՞ւր մնացին այս Շամլյանները. ալ համը հոտը փախավ։

Քառորդ ժամ մ'ալ սպասեց. հետո Աբրահամը խրկեց.

— Կես ժամեն Հովակիմ աղան պիտի գա,— պատասխան եկավ։

Մարտիրոս էֆենտի թաց տեղը պառկող մարդ չէր. իր առնելիքին փոխարեն Շամլյաններուն Օրթագյուղի մեջ բնակած տունը իր հոր անվան գրավի առած էր. կարող էր ի հարկին Դամասկոս վերադարձնել բոլոր Շամլյանները և տունը գրավել։

Եռահարկ գեղեցիկ տուն մը, ուր պիտի կրնար ինքը փոխադրվիլ, տան վարձք վճարելե ազատիլ. այո, ըլլալիքը այս էր, ապագան տեսնելու, գուշակելու մեջ մեկ հատիկ էր սարաֆը. այս Շամլյաններուն գործը ձախորդ կերթար, դրամական անձկություններին կավելնար։ Ասկե անկե փոխ ստակ կառնեին միշտ իրենց վճարումները անխափան շարունակելու համար։ Ծանր տոկոսներ կուտային։ Սարաֆը ամեն ինչ կիմանար։ Հովակիմ աղա ներս մտավ տրտում, մտախոհ, բարևեց, հետո դրամի խոսքը բացավ։

— Այս շաբթու մեջ դիս պիտի սեղմես,— սկսավ վաճառականը։

Մարտիրոս էֆենտի՝ իր անկյունին մեջ բոլորած, ամփոփված կկենար նետվելու պատրաստ պոռայի մը նման, առանց մտիկ ընելու ըսած խոսքին։

— Ո՞րչափ ստակ բերիք։

Շամլյան իր դժվար վիճակը կրկին կհայտներ։

— Այս շաբթու...

Սարաֆին դեմքին վրա քիթը երկնցավ մինչև թուշը հասնելու չափ, աչերը ավելի մանրցած։

— Այդ բանը չընես հա՛, կնեղանամ։

Կնեղանար, այո՛. սարաֆը նեղացնելու չէր գար. ահարկու սպառնական բան մը կար այս պարզ խոսքին մեջ «կնեղանամ», որ կգիշատեմ կնշանակեր հոս։

Շամլյան կաղաչեր, պատճառներ կհամբեր, հույսեր կուտար. մյուսը՝ անդրդվելի, հետզհետե կխոժոռցներ դեմքը, խոսքը դառնացնելով. առաջի օրեն երբ ստակ ուզած էին իրմե մինթե չէ՞ր ըսած որ ժամանակին չի պիտի կրնային վճարել. այն ատեն խոսքով երդումով խաբեր էին

զինքը և ահա հիմա ասով երկու շաբաթ կըլլար որ փախուստի դուռնե-
ը կբացվեին. գուշակությունը, կասկածները կիրականանային. ո՛չ, չէր
կրնար սպասել։

Մյուսը՝ կկարմրեր, կքրտներ խստապահանջ դրամատերին դեմը,
խոնարհելով անոր գանգատներուն առջև, որոնք ավելի նախատինքի
կնմանեին։ Գալ շաբթու, գալ շաբթու անպատճառ պիտի վճարեր։

— Ո՞ւսկից,— կհարցներ Մարտիրոս բրտությամբ։

Վաճառականը կպարտավորեր իր բոլոր գործերուն համարը տալ,
գալիք ապրանքներուն, դրամներուն հաշիվը բացատրել. կհիշեցներ նաև
իրենց Օրթագյուղի տունը գրավի դրված պարտքերնուն փոխարեն. վեր-
ջապես տոկոսի նոր հավելում մը եղավ. հաշտվեցան. նախատինքներե
վերջը բարեկամությունը սկսավ։ Մարտիրոս էֆենտիի շրթունքեն հիմա
մեղր կհոսեր, քաղցրությամբ, մտերմությամբ խրատ կուտար Շամլյա-
նին, Արմենակին հարուստ աղջիկ մը գտնելու էր, և Տեմիրճյանին աղ-
ջիկան վրա դարձավ խոսքը։

Հովակիմ աղա իր սիրտը բացավ։

— Իմ բոլոր հույսս ան էր. բայց ետ մնաց։

Մարտիրոս էֆենտի աշխատելու, չի հուսահատելու խորհուրդ
կուտար։

Հովակիմ աղա մեկնեցավ. խորհելով իր տեսած նախատանաց և
մոտավոր ապագային վրա, որ ավելի ևս դժնդակ ու ահավոր կերևար։

Շոգենավին մեջ մարդու հետ չի խոսեցավ. տունը՝ ճաշին տակ լուռ
ու մունջ էր. կմտածեր որ ոչ իսկ այս բնակարանը իրենցն էր այլևս.
իրենց առևտուրին մեջ հազիվ երեք հազար ոսկվո չափ գումար մնա-
ցած էր նախորդ հարստութենեն. ստակի նեղությունը, վաշխառուներու
հարկը կուտեր կհատցներ իր բոլոր աշխատության շահը և վնաս կմը-
նար միշտ. Արմենակին Մանչեսթրի մեջ պարտքերուն վճարումն ալ
դրամագլխին մեկ մասը տարած էր. և մեծ փոխառությամբ մը միայն
իր պատիվն ու անունը մոտալուտ աղետե պիտի կարենար ազատել։

Իր հույսը նորեն դարձավ Տեմիրճյանին հետ խնամության մը վրա.
բան մը չըսավ իր կնոջ ու զավկին. բայց ճաշեն ետքը ելավ փոեֆի
երթալու, և Արմենակին ըսավ որ մեկտեղ գա. ինքնիրեն կմտածեր, որ
ինչո՞ւ իր տղան չի կրնար այն աղջիկին սիրտը շահիլ։

Փոեֆին մեջ կորսնցուց. կորուստ ամեն կողմեն. չար ոգի մը կհա-
լածեր զինքը. բայց այն իրիկուն Արմենակ բավական երկար խոսեցավ
Էլպիսին հետ, գգվելով ողոքելով հարուստ աղջիկը իր ճենթլմենի
ձևերով։

— Անշուշտ, օրիորդ, իրավունք ունիք, օ՛րիորդ։

Էլպիս Եվրոպան չէր սիրեր, Պոլիսեն չէր զատվեր. երիտասարդը
չէր կրնար հակառակ խոսիլ։

— Ճշմարիտ է, օ՛րիորդ. բայց Մանչեսթրը. առաջին վանկը՝ մենք
կշեշտեր սովորապես Մանչեսթր ըսողներուն սխալը հասկցնելու համար։
Ա՜հ, թե որ Անգլիան տեսներ, ապահովապես պիտի հավներ։ Եվ կհա-
մոզեր իրրև թե այս վայրկենին օրիորդ Տեմիրճյանը առնելով Անգլիա
տանել առաջարկեր։

Ոչ ոք սակայն Արմենակի չափ ստույգ և իրական սարսափ կզգար
Մանչեսթրեն. իր Քուին-սթրիթի բնակարանին մեջ ի՞նչ տագնապներու
հիշատակները թողած չէր, ո՞վ ըսավ որ զվարճանալու համար գացեր
էր Անգլիա. այո՛, Շամլյան վաճառատան Ընդհանուր ծախքի հաշվե-
գլխուն մեջ անցուցած էր անգլուհիներու համար վատնած դրամը, հո-
ը թևարկութենեն նոր ազատող երիտասարդի շռայլությունները, հետո
քայքայված առողջությունը դարմանելու համար Փարիզի, Վիեննայի
բժիշկներուն վճարած անհատնում ստակները. այո՛, ստույգ էր այս
ամենը, բայց թե որ տեսնային զինքը, ինչպես ամեն շորեքշաբթի և ուր-
բաթ Պոլսեն թղթատար շոգենավին հասնելուն կվազեր նամակատուն,
գործարանին տիրոջ տրվելիք ստակը Պոլսեն մոռցած ըլլալնուն վա-
խովը սրատրոփ, և նամակը կշռելով գգվելով ձեռքին մեջ, դուրսեն,
վայրկյան մը առաջ գուշակելու համար ակնկալած փոխանակագիրը
կպարունակեր թե ոչ, վանկի կատակե չէին ախորժեր այս անգլիացիներ-
ը, բնավ չէին ախորժեր։ Մինչև Պոլսեն իր հայրը Հովակիմ աղա՝
ծույլ և անփույթ, աճապարելու պետք չէր տեսներ, Ջաբմաքճիլարի խա-
նութին մեջ նստած կբարկանար Արմենակին և այս խոսք չի հասկցող
անգլիացիներուն դեմ, պոռալով.

— Փաթլամիշ չեղան ա՜, գալ փոսթայով թող ըլլա։

Եվ երիտասարդը Անգլիո անթույլատու և աններող սովորության
ենթակա, չի կրնալով իրենց համեստ դրամագլխով ձեռնարկած առևտ-
ուրին բավել, Պոլսեն ցույց տրված անփութության տոկալ, օրն ի
բուն իր գրասենեկին մեջ կծկտած տետրակներու վրա կորաքամակ,
երեսը կպահեր առնելիքվորներեն, որ շաբաթ օրերը կուգային գրասե-
նեկին դրան վրա կապույտ գիրերով նշանակյալ հրավերին համեմատ,
«Վճարմունք՝ շաբաթ օրը ցորեկեն վերջը ժամը 2-են մինչև 4։»

Կպատահեր, որ թղթատարը չի բերեր Պոլսեն կրկին և կրկին պա-
հանջված դրամները, և այն ատեն գերագույն ճիգ մը ընելու կհարկա-
դրվեր. ամենեն անձուկ վայրկյանը իր կյանքին. դուրս կելլեր իր դրա-
մատուներեն վարկի հավելում ուզելու համար, Ճոյրնդ-Սթոք պենքեն Քինկ-

սթրիթի մեջ. հոն կհնչեցներ զանգակը. Մենեյճբոը կընդուներ զինքը, բարեմտութեամբ ունկնդրելով իր պատմութեանց. Պոլսեն այս անգամ դարձյալ որմիզա չէին հասցուցած, բայց ութ օրեն անպատճառ պիտի խրկվեր. ի՞նչպես կարտասաներ, ի՞նչ անկեղծութեամբ, սրտին հոգիին խորեն այս «անպատճառ» բառը և տեսնելով որ Մենեյճբոը կշարունակե ունկնդրել, իրենց վաճառատան պատիվը կհիշեցներ, Շամլյան անունը միշտ անաղարտ և անբիծ մնացած էր և պիտի մնար։ Մենեյճբոը իրենց հաշվրնթացը աչքն անցընելու կերթար և ինքը կսպասեր ընդարձակ և թափուր սենյակի մը մեջ, ուր վառարանին լույսը կցոլար, իր տասնապատիկ մեծցած ստվերը պատե պատ, գետնե գետին կտաներ կբերեր. կքրտներ երիտասարդը այս խոնավ ու ցուրտ սենյակին մեջ, ամեն հոս եկող կքրտներ, սպասելով գալիք պատասխանին, «այո»-ին կամ «ոչ»-ին։

Այս կերպ նեղություններով Մանչեսթրի մեջ ավարտած էր իր կայանքը, որպես պարտ է ընել ամեն պասմանճի վաճառականի տղա, չորս տարվա մեջ Եվրոպիո աղտն ու մուրը, հիվանդությունները հավաքելե վերջը իր ապիկար անձին վրա։

Հաջող ամուսնության մը ակնկալությամբ կդառնար Պոլիս, երկայն, սև, փայլուն գլխարկով, որուն տակեն կարծես իր էսնաֆի փյուսկյուլը դեռ կծածաներ, երկկողմանի ու տափակ մորուքին մեջեն ցույց տալով կզակը՝ ածիլված, մաքուր, կորովի, ճշմարիտ մսակերի կզակ. ալ թողած էր անգլիական ոստանն և փրկված անոր հատուցման անողոք պայմանաժամներեն։

Անտեղի սնապարծության մը համար ուրեմն կգովեր էլպիսին բրիտանական մառախլապատ երկինքն։ Հոժարակամ տեղեկություն կուտար Եվրոպիո ամեն մասերուն վրա. գրական, արվեստական նորությունները կհիշատակեր. Վակնեռի նոր օփեռային և զվիցերական դաստիարակության վրա՝ հավասար դյուրությամբ կճառեր. Տեմիրճյանին Անգլիո երկաթագործության արվեստները կթվեր, կբաղդատեր Պելճիո հետ. Ստեփանիկ աղային արժեթղթոց վրա շահադիտական նոր ծրագիրներ կպարզեր. առիթ, վայրկյան չի փախցնելով իր հմտության ապացույցները տալու ամենուն։

Փոեֆ չեղած իրիկունները նորեն Տեմիրճյաններուն կերթար՝ տիկնոջ հետ, օրիորդին հետ խոսակցելու, քաղաքավար ձևերը, բարեկեցիկ վարմունքը ավելի ևս նրբացնելով, մեծարանքի, փայփայանաց շրջանակի մը մեջ պաշարելով մայրն ու աղջիկը, և շարունակ լռելյայն բաղդատության մը հրավիրելով զանոնք իր անձին և իրենց փնտացուին մեջ։

Ստեփանիկ աղա՝ տիկին Տեմիրճյանի հայտնի կուսակցութենեն

քաջալերված, Արմենակ Շամլյանի պաշտպան կկանգներ, գովեստը շռայլելով։

— Էլմասի պես տղա է։

Այնչափ որ կյուրակե օրերը Լեոնի այցելությունը տանը մեջ անուշադիր կանցներ, անկարևոր կդառնար. Էլպիս՝ Արմենակը մտիկ կըներ, մայրը անով կզբաղեր և չէին բռնադատեր, ստիպեր զինքը կենալու առաջվան պես, երբ գանձապետը գիշերը Պոլիս դառնալու կելլեր։

Օրթագյուղ Պոլսո հայոց Ֆոպուռ Սեն-Ժերմենն է. այն երկու բլուրներեն որք հսկա թռչնո մը պարզված երկու թևերուն պես կբարձրանան ծովեզերքեն, և որոց մեջ բացվող խոնավ ու մթին ձորը մինչև նավամատույցը կհասնի, աջ կողմինն է ազնվական թաղը։— Խոզովակներու պես նեղ, կիրճերու պես երկարաձիգ ու խորտուբորտ փողոցներով, գրեթե քարահատակ սանդուխներով ձևացած թաղ, ուրկե իր անունը՝ Թաշ-Վերտիվեն։

Հպարտ ու մահաբույր հով մը կա այս թաղին մեջ, անշարժության հովը։

Անջատ պարտեզներու մեջ բարձրաբերձ պատերով զատված փայտաշեն, մեծատարած տուներ, որոնք իրարու վրա կնային, իրարմե կզգուշանան, կքաշվին։

Ամայի փողոցներուն մեջ անցուդարձ չիկա ու այս միայնությունը տաճկի թաղերուն լռությունը ու մելամաղձոտությունը կհիշեցնե հեռուեն։

Բայց տուներուն մեջ կյանքը հուզյալ ու արկածալից է միշտ. ներսի եռանդը՝ դուրսի անտարբերության պակասը կլիցնե ու կավելնա. բայց օտարական մը այս հին շենքերը, ամայի թաղը տեսնելով պիտի կարծե թե անոր բնակիչները շատոնց մեկնած են այս տեղերեն։

Բնակիչները իրենց շենքերուն հանդարտ ու հպարտ երևույթը ունին. վազող, աճապարող մարդ չի կա հոն. հանգարտաքայլ, ծանրախոհ ու մտաղբաղ են ամենքը, եթե ոչ նոր, գեթ մաքուր ու կոկիկ հագված, բիչ խոսող, ցած ձայնով, դրացինը անհանգիստ չընելու երկյուղով, այս մարդիկը՝ քաղաքավարությունը ամեն առավելության կնախադասեն։

Չեն կովիր, չեն հայհոյեր. պարոնը կբսեն մեկու մը խոսած ատենին, էֆենտին կբսեն դեմացինին. Օրթագյուղի խանութպաններն անգամ ուրիշ տեղերու մարդոց չեն նմանիր. սրճարանը ուր կիրակի օրերը միայն ոմանք կերթան, ձայն ու ձուն չիկա, խելոք կեցած տղոց վարժարանի մը պես. սպասավորները չեն պոռար բարձրաձայն սպասելիքը ըմպելիքը, լրագիր ընթերցողները կամ խոսակցությունները չի շփոթելու հա-

մար. այլ հուշիկ ու զգույշ կմոտենան քովդ, դավադիր մեկ անցախոս բառը հաղորդելու ձևով, ցած ձայնով կամքդ կիմանան ու կամացուկ մը կգործադրեն։

Օրթագյուղցին իր թաղեն դուրս զբոսանք և հաճույք չունի, կսիրե իր գեղին օդը, դիրքը, ձևը ու բնակիչները. ման գալու համար իր Փանկալթիի պարտեզը ունի, ներկայացմանց համար իր թատրոնը. եկեղեցին ու դպրոցը փոսի մը, գրեթե անդունդի մը մեջ շինված են. հոս՝ անդունդը կլուսավորե բարձունքը. և կոնակը բարձրացող սեպացյալ լերան կուշտին վրա հայոց տունները դեպի իրենց եկեղեցին կծռին, կնային շարունակ։

Օրթագյուղ խոսակցությանց գյուղն է. օրվան դեպքերը, լուրերը կիմացվին կքննադատվին հոն, հասարակաց կարծիք մը կգոյանա իսկույն։

Քաքմաճյան բնակության լավագույն կենտրոնը ընտրած է. իրիկունները տուն դառնալուն իր կնոջմեն կիմանա անցած դարձածը. և հիվանդ զավկին մահճին քով նստած մտիկ կընե օրվան համարատվության. ինքն ալ իր կողմե պատմելու համար իր շան տանջանքը, ամեն ավուր կյանքը։

Սենյակին երկու պատուհաններուն վարագույրները բացված են, դյուրացնելու համար անշուշտ լույսին մուտքը, զոր եկեղեցվույն պատերը կարգիլեն իրենց ներկին դեղին ցոլացումը խրկելով անոր տեղ։

Պզտիկ բարվոքում մը կա այսօր Նոեմիի վիճակին մեջ. մայրը հազար պաղատանոք համոզած է զինքը անկողինեն ելլել. և նորատի աղջիկը հիմա իր սովորական անկյունի բազմոցին վրա է, գլուխը ձգելով բարձերու կույտի մը վրա, զոր մայրը հիվանդին նիհար մարմնույն, ոսկորներուն խնայելու համար դիզած է հատկապես։

Անկեղինը անդին կպահե անեղծ հիվանդին թողած գոգաձև կաղապարը և բարձը անոր հեք գլխուն դրոշմը. մահճակալին քովի սեղանին վրա դրված են դեղերու շիշեր, տուփեր իրենց կուրծքին վրա փոքրիկ նարնջագույն ծանուցումով, կարմիր վերքի մը պես, դեղարանին անունը ու դեղին առնվելուն եղանակը բացատրող, ասոնց հոտերը, քրտինքի բուրում մը առկախ կկենան փակ պատուհաններով բանտարկված օդին մեջ։

Ֆուլիկ հանըմ իր զավկին մոտ կկենա, հետևելով անոր ամեն մեկ շարժումին, շունչին, գուշակելով ամեն կամքը, ու կեղծ զվարթության մը տակ պահելով իր կսկիծը. ձեռքը՝ Նոեմիին ճակտին վրա կերթա միշտ տեսնելու համար ջերմին գալը որ այսօր կուշանա, կուշանա. հույսը կուգա իր մայրական ողորմելի սիրտը բերկրությամբ լեցնելու. չի պիտի գա ջերմը այսօր և չի պիտի գա վաղը, մյուս օր. պիտի փրկվի

զավակը. այս ամենը կուգան իր մտքին առչև իրականացած, զավակը կտեսնե ոտքի ելած, հագված, շքված գեղեցիկ նազելաճեմ հասակովը գյուղին աղջիկներուն նախանձը շարժելով։

Դուռը կզարնեն. Գալուստյան Գևորգն է, որ իր խմբագրապետին աղջկան հիվանդտես կուգա և զվարթ բնավորության ուրախությամբը այս ցավերով լեցուն սենյակին տրտմությունը պահ մը կփարատե։

— Տեսար մի, այսպես քաջ եղիր քիչ մը, ել նստե։

Հիվանդը կժպտի և այս ժպիտը իր այտերուն ոսկերոտիքը դուրս կհանե։

Ֆուլիկ հանըմ լուր կհարցնե։

— Ի՞նչ լուր. ազգային գործերե զզված ես անշուշտ. նվաստություն ու վատություն ամեն կողմ, ահա բոլոր մեր կյանքը. ուրախանալու խնդալու բան չի կա այն կողմը. ուրիշ տեղ նայինք։

Եվ կնայեր հիվանդին անոր նշաձև սիրուն աչքերը դիտելով որոնք հորը ինկած էին, բայց պահելով միշտ միամիտ նայվածքի մը քաղցրությունը, մութ փոսե մը բխող վճիտ ջուրի մը պայծառությանը պես դաստակներուն վրա երակները՝ բաց կապույտով նուրբ մորթին վրա կգծագրեին իրենց առուները, զորս ճերմակ համիզոլին թեզանիքեն կնշմարեր. շրջազգեստը կփակչեր ծունկերուն տեղ-տեղ մատնելով սրունքներուն նիհարությունը, և այս արգահատելի տեսարանը խանդաղատանքով կլեցներ երիտասարդին սիրտը. ո՞վ էր ինքը. աղքատիկ տղա մը, որուն մեծ տիկիններ ու օրիորդներ չէին հաճիր աչք դարձնել. և այս հիվանդագին աղջիկը իր հյուծումով, իր սպառող երիտասարդությամբը կհուզեր իր բանաստեղծի հոգին. գութը սիրո դուռը կբանար. և պաշտել կուզեր այս ոսկերոտին, որ աղջիկ մ'էր, այս տամուկ ճակատը որուն վրա թափող սև մազերը, նոճիներուն սաղարթներուն պես տրտում ու սգավոր ստվեր մը կձգեին։ Խոսեցավ դուրսեն ներսեն. Մեծ Կղզիի զվարճություններեն, Պյոյուք-Տերեի երաժշտություններեն, ամեն մարդ գյուղերը գացեր էին օդափոխության։

— Ի՞նչ երջանիկ են գյուղ գացողներն,— մրմնջեց աղջիկը։

Դառնություն չի կար իր խոսքերուն մեջ, այլ պարզ համակերպություն մը ճակատագրին, անմեղ փափագ մը, որուն անկարելի ըլլալուն կատարյալ գիտակցությունը ուներ. գյո՜ւղ երթալ ամառը, լուսինը երթալ բնակելու պես բան մը իրենց համար։

Գալուստյան կախորժեր հոս, այս հիվանդ հոտող սենյակին մեջ. տրտմությունը իր հրապույրը ունի, ինչպես անդունդը իր ձգողությունը. ու չէր ուզեր մեկնիլ. ուրիշ ատեն ալ եկած էր անուշադիր այս աղջ-

կան, ուրկե աչքը չէր զատվեր և որ փոխադարձաբար զինքը կդիտեր շարունակ։

Հետո մտածեց որ նեղություն չի պատճառե երկարելով այցելությունը. ոտքի ելավ. Ֆուլիկ հանըմ աղաչեց որ նստի. հիվանդին դարձավ անոր կամքը հաբցնելու համար.

— Ջանձրություն չի՞տամ։

— Դուք չի՛ ձանձրանար, մեզի ուրախություն մ'է ձեր գալը. մարդ մարդասանք չունինք. հիվանդին երեսը պաղ է։

Մեղմ ձայնով մը կխոսեր աղջիկը։

— Տեմիրճյաններու հարսնիքը ե՞րբ է,— հարցուց հանկարծ։

— Չեմ գիտեր. կարծեմ թե նոր բաներ կանցնին. Արմենակ գիշեր ցորեկ իրենց տունն է. կարելի է մտրերնին փոխեն ու Արմենակին տան աղջիկնին։

— Իրավունքն է խեղճին, Անդլիայեն մինչև հոս եկավ հատկապես։

Ֆուլիկ հանըմ այս ամուսնության խոսքը կգոցեր.

— Ճա՜նըմ, ուրիշ խոսք չունի՞ք։

— Շատ ուսյալ է կըսեն այս երիտասարդին համար, մյուսյու Գալուստյան, հարցուց Նոեմի, իրա՞վ է։

— Հորը գործերը գրեթե փճացուցած է, այդ գիտեմ. բայց ուսմանը աստիճանեն տեղեկություն չունիմ. վարժարանին մեջ աննշան աշակերտ մ'էր։

— Ուրեմն ավելի իրավունք ունի էլպիսին հետ ամուսնանալու. աղքատության վախը կա, հետո քիչ մը կենալե ետքը,

— Թո՜ղ երջանիկ ըլլա։

Անկե վերջը ուրիշ նյութերու վրա խոսեցան. իրիկվան դեմ Գասպար էֆենտին եկավ, դուռնեն իր զվարթ ձայնին արձագանքը մինչև վեր եկավ։

— Հայրս այս իրիկուն ուրախ է. տեսնենք ի՞նչ ունի. դուք մեզի այսօր առտվընե ի վեր զվարթություն բերիք, անանկ չէ՞, մա՜յր։

— Անանկ է, աղջիկս. մյուսյու Գալուստյանը բարի սիրտ ունի, իր այցելությամբը երջանիկ եղանք այսօր։

Գասպար էֆենտի սենյակեն ներս կմտներ խնդալով։

— Բարև, Գեորգ, ի՞նչպես ես, Նեմի. Մարտիրոս էֆենտին կատղեր է. թատրոնի համար այդչափ սատակ վատնելեն վե՜րջը. կարծեմ թե երեք հարյուր ոսկի՛ն չափ փոխ տված է տնօրենին, առնվազն այդչափ մ'ալ ուրիշի մը տված։

<1891>

[Վեպը այստեղ ընդհատվում է]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կ. Դանիելյան Գրիգոր Զոհրապ 111

Բանաստեղծություններ

Նախանձ 1
Ի սրտակտուր մահ մտերմիս Միսաք Մանուկյանի 3
Հրաժեշտ 4
Նարկիլեն 5
Լուսնալու դեմ 6
Անծանոթը 6
Ջյունը 7
Վառարանը 8
Հարցում 8
Համակերպություն 9
Ոչ ոք 10
Ջատկի առթիվ 10
Հսկում 11
Հպարտություն 11
Տարակույս 12
Եկուր 13

Նովելներ
Խղճմտանքի ձայներ

Փոստալ 14
Ճնշրան 27
Թեֆարիկ 35
Սառա 42
Մաշդաղնե 48
Այրին V 53
Խարիսխը 64
Տալիա 69

Կյանքը ինչպես որ է

Ճիտին պարտքը . . . 75
Երջանիկ մահը . . . 82
Այինկա . . . 87
Դիմակը . . . 93
Ժամին բակը . . . 99
Ճոկո . . . 108
Փոթուրլըն . . . 112
Վերադարձը . . . 120
Արմենիսա . . . 132
Կարծեմ թե . . . 144
Հակորիկ . . . 149

Լուս ցավեր

Անդրշիրմի սէր . . . 156
Լուսահոգին . . . 164
Մամայիդ բարև ըրե . . . 174
Մյուսը . . . 182
Զարուղոն . . . 193
Ռեհան . . . 198
Առջի սեր առջի բարի . . . 202
Կատակ . . . 208
Ֆուրթունա . . . 213
Մեղա՜, տեր . . . 217
Պարահանդեսին վաղորդայնը . . . 222
Կապիկը . . . 234
Զմարադտա . . . 237
Մարապետը . . . 240
Խնդուրը . . . 249

Հեղինակի կազմած ժողովածուներից դուրս մնացած նորավեպերը

Վարդապետին մականունը . . . 252
Կանանց բժիշկը . . . 261
Ներսես . . . 282
Փոթորիկը . . . 293
Սխալ . . . 303
Առաջին զրկանքը . . . 307
Անհավատարիմը . . . 310

Ծանոթ դեմքեր

Գուետ Խաչատուր Միսաքյան . . . 317
Բյուզանդ Քեչյան . . . 318
Եղիա Տեմիրճիպաշյան . . . 322
Հակոբ Գուրջեն . . . 325
Սիպիլ (Զապել Ասատուր) . . . 328
Արփիար Արփիարյան . . . 331
Տոքթոր Գարրիել Սեվյան . . . 333
Թովմաս Թերզյան . . . 337
Կարապետ Գարագաշ . . . 340
Օգսեն Խոճասարյան . . . 342
Հովսեփ Յուսուֆյան . . . 344
Տոքթոր Նազարեթ Տաղավարյան . . . 346
Հարութիւն Մրմրյան . . . 349
Հրանդ Ասատուր . . . 352
Ռեթեոս Պերպերյան . . . 358
Վահան Վարդապետ Տեր-Մինասյան . . . 362
Հովհաննես Նուրյան . . . 364

Առձակ էջեր և տրամախոսություններ

Չինական նամականի . . . 369
Ուղևորություն մը հիշատակներուս մեջ . . . 374
Քոշինաքի . . . 388
Փոքեր . . . 393
Մարգար ախպոր տերտը . . . 394
Էտլվայս . . . 396
Բարերարը . . . 398
Բարեկենդանը . . . 399
Վերջին արևագալը . . . 400
Թիթեռնիկներ . . . 401
Շիշլիի ազգային գերեզմանատունը մեռելոցի կիրակին . . . 404
Բեռին տակ . . . 407
Կորսված խոսքեր . . . 408
«Ապրիմ — մեռնիմ» . . . 411
Կոտրելեն ետքը . . . 414
Գիրեր պատերազմի դաշտեն . . . 416

Քննադատական և հրապարակախոսական հոդվածներ

Անբարոյական գրականություն . . . 425
Տիկին Սիրանույշ . . . 430
Քատը գյուղի թատերական նեղկայացումը . . . 432
Թատրոն . . . 436
Էմիլ Զոլա . . . 438
Ֆրանսուա Քոպպե . . . 442
«Պատվի համար» . . . 444
Էջեր ուղևորի մը օրագրեն . . . 452

Վեպեր

Անհետացած սերունդ մը . . . 506
Նարդիկ . . . 593

ISBN 5—550—00193—4

Литературно-художественное издание

Григор Зограб

СОЧИНЕНИЯ

Стихотворения, повести, новеллы, статьи

Издательство «Хорурдаин грох»

(На армянском языке)
Ереван — 1989

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Գրիգոր Զոհրապ
ԵՐԿԵՐ
Բանաստեղծություններ, վեպեր, նովելներ, հոդվածներ

Խմբ. վարիչ՝ **Ստ. Է. Թոփչյան**
Խմբագիր՝ **Ռ. Մ. Մուրադյան**
Նկարիչ՝ **Մ. Ռ. Սոսոյան**
Գեղ. խմբագիր՝ **Հ. Ս. Մալխասյան**
Տեխ. խմբագիր՝ **Մ. Է. Ճանճուպանյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Զ. Ս. Կարապետյան**

ИБ 6380

Հանձնված է շարվածքի՝ 02. 03. 89 թ.: Ստորագրված է տպագրության՝ 20. 09. 89 թ.: Ֆորմատ՝ 60×84 1/16: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 39,06. պայմ. տպ. մամ., 39,41 պայմ. ներկ. թերթ., 35,2. հրատ. մամ.: Տպարանակ 51000: Պատվեր՝ 650: Գինը՝ 3 ռ. 30 կոպ.:

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան— 9, Տերյան 91:

Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեկապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.